Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորին կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորին հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.



ԳՐՔԱՄՈՒԼ

# М. Булгаков

# ՎԱՐՊԵՏԸ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏԱՆ

---

# ԹԱՏԵՐԱԿԱՆ ՎԵՊ

ՎԵՊԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ 1983

ԳՄԴ 84 Ռ 7
Բ 950

Թարգմանությունը
ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Բուլգակով Մ.
Բ 950 Վարպետը և Մարգարիտան։ Թատերական վեպ (վեպեր)։ Ռուս. թարգմ. Ա. Հովհաննիսյանը.— Եր.։ Սովետ. գրող, 1985.— 616 էջ.

«Վարպետը և Մարգարիտան» սովետական նշանավոր գրող Մ. Ա. Բուլգակովի վերջին և ամենանշանակալի ստեղծագործությունն է՝ Պիղատոսի և Յեշուայի պատմությունը, լուծված որպես մարդու պատասխանատվության բարոյական պրոբլեմ, Վարպետի և Մարգարիտայի սիրո ֆանտաստիկ պատմությունը։

Գրքում զետեղված է նաև «Թատերական վեպը» անավարտ ստեղծագործությունը։

Բուլգակովի գործերը հայերեն լույս են տեսնում առաջին անգամ։

Բ $\frac{4702010200\ (71)}{705\ (01)\ 85}$ 85 «Տ» ԳՄԴ 84 Ռ 7

© «Художественная литература», Москва, 1980.
© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1985

# ՎԱՐՊԵՏԸ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏԱՆ



# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

> ...ո՞վ ես, ի վերջո:
> — Մասնիկն եմ այն ուժի, որ հավիտյան տենչում չարիք, բայց բարիք է գործում միայն։
>
> ԳՅՈԹԵ, «ՖԱՈՒՍՏ»

ԳԼՈՒԽ I

## ԵՐԲԵՔ ԽՈՍՔԻ ՄԻ ԲՌՆՎԵՔ ԱՆԾԱՆՈԹ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ

*Մի անգամ, գարնանը, անասելի շոգ մայրամուտին, Մոսկվայում, Պատրիարքական լճի մոտ երկու քաղաքացի հայտնվեցին։ Նրանցից առաջինը ամառային մոխրագույն զգեստով էր, կարճահասակ, գեր, ճաղատ, բարեձև շլյապան երկծալ բռնած ձեռքում, իսկ խնամքով սափրված դեմքի վրա անբնական չափերի, սև եղջյուրե շրջանակով ակնոց էր կրում։ Երկրորդը թիկնեղ, շեկ, գիսախռիվ, վանդականախշ կեպին ծոծրակին քաշած երիտասարդ էր՝ քառեկավոր վերնաշապիկով, ճմրթված սպիտակ շալվարով ու սև չստերով։*

*Առաջինը ոչ այլ ոք էր, եթե ոչ Միխաիլ Ալեքսանդրովիչ Բեռլիոզը՝ մոսկովյան գրական խոշորագույն, կրճատ ՄԱՍՍՈԼԻՏ կոչվող միավորումներից մեկի վարչության նախագահը և գեղարվեստական հաստափոր ամսագրի խմբագիրը, իսկ նրա երիտասարդ ուղեկիցը բանաստեղծ Իվան Նիկոլաևիչ Պոնիրևն էր, որ գրում էր Անապաստան կեղծանվամբ։*

*Հասնելով նոր-նոր կանաչող լորենիների ստվերին, գրողներն անմիջապես նետվեցին դեպի «Գարեջուր և ջրեր» ցուցանակը կրող, գույնզգույն ներկած կրպակը։*

*Այո, հարկ է ընդգծել մայիսյան այդ սարսափելի երեկոյի առաջին տարօրինակությունը։ Ոչ միայն կրպակի մոտ, այլև Մալայա Բրոննայա փողոցին զուգահեռ ամբողջ ծառուղու վրա ոչ մի մարդ չկար։ Այն ժամին, երբ թվում էր, թե նույնիսկ ուժ չկա*

չնչելու, երբ արևը, Մոսկվան շիկացնելուց հետո, չոր մշուշի միջով գլորվում էր Սադովոյե Կոլցոյից այն կողմ, ու ոչ ոք չեկավ լորենիների տակ, ու ոչ ոք չնստեց նստարանին. ամայի էր ծառուղին։

— Նարզան տվեք,— խնդրեց Բեռլիոզը։

— Նարզան չկա,— պատասխանեց կրպակի կինը և չգիտես ինչու վիրավորվեց։

— Գարեջուր կա՞,— խռպոտ ձայնով տեղեկացավ Անապաստանը։

— Իրիկվան դեմ կբերեն,— պատասխանեց կինը։

— Իսկ ի՞նչ կա,— հարցրեց Բեռլիոզը։

— Ծիրանի ջուր, էն էլ՝ տաք,— ասաց կինը։

— Է՜հ, տվեք, տվեք, տվեք...

Ծիրանի ջրի վրա առատ դեղին փրփուր կապեց, և օդի մեջ վարսավիրանոցի հոտ տարածվեց։ Խմելուց հետո գրողներն սկսեցին զկռտալ, վճարեցին ու նստեցին նստարանին, դեմքով դեպի լիճը, թիկունքով դեպի Բրոննայա։

Այստեղ տարօրինակ երկրորդ բանը կատարվեց, որ միայն Բեռլիոզին էր վերաբերում։ Նրա զկռտոցը հանկարծ կտրվեց, սիրտը խփեց ու մի պահ նվաղեց, ապա տեղն եկավ, բայց մի բութ ասեղ՝ մեջը։ Բացի դրանից, անհիմն, բայց այնպիսի սաստիկ վախ պաշարեց Բեռլիոզին, որ ցանկացավ անհապաղ, առանց ետ նայելու փախչել Պատրիարքական լճից։ Բեռլիոզը շուրջը նայեց տրտմած, չհասկանալով, թե ինչը վախեցրեց իրեն։ Գունատվեց, ճակատը սրբեց թաշկինակով, մտածեց. «Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ։ Նման բան երբեք չէր եղել... սիրտս է անհանգստացնում... շատ եմ հոգնել։ Թերևս ժամանակն է ամեն ինչ գրողի ծոցն ուղարկել և ուղիղ՝ Կիսլովոդսկ...»

Եվ այստեղ տոթակեզ օդը խտացավ նրա դիմաց, ու հյուսվեց այդ օդից խիստ օտարոտի տեսքով մի թափանցիկ քաղաքացի։ Պստլիկ գլխին՝ ժոկեյի գդակ, հագին՝ վանդակավոր, կարճափեշ, նույնպես օդեղեն պիջակ... Քաղաքացու հասակը մեկ սաժեն կլիներ, բայց ուսերը՝ նեղ, անասելի նիհար էր, կերպարանքն էլ՝ նկատի ունեցեք, խնդրեմ, ծաղրական։

Բեռլիոզի կյանքն այնպես էր ընթացել, որ անսովոր երևույթների վարժված չէր։ Ավելի գունատված, նա չռեց աչքերն ու խուճապահար մտածեց. «Չի կարող պատահել...»

Բայց, ավաղ, պատահել էր, և երկարուկ քաղաքացին, որ

թափանցիկ էր, ոտքերը գետնից կտրված, ճոճվում էր նրա դեմ՝ աջ ու ձախ։

Այստեղ այնպիսի սարսափ տիրեց Բեռլիոզին, որ նա փակեց աչքերը։ Իսկ երբ բացեց, տեսավ, որ ամեն ինչ վերջացել է, պատրանքը տարրալուծվել, վանդակավորն՝ անհետացել, դրա հետ միասին բութ ասեղն էլ է դուրս եկել սրտից։

— Փո՜ւհ, սատանա,— բացականչեց խմբագիրը,— գիտես, Իվան, քիչ էր մնացել տոթահար լինեի։ Նույնիսկ տեսլապատրանքի պես մի բան էլ եղավ,— փորձեց քմծիծաղի տալ, բայց աչքերի մեջ դեռևս տագնապն էր թրթռում, և դողում էին ձեռքերը։

Սակայն կամաց-կամաց հանգստացավ, թաշկինակով դեմքը հովհարեց և բավական առույգ ասելով՝ «Դե՜-հ, այսպիսով...», շարունակեց խոսքը, որ ծիրանի ջուր խմելով էր ընդհատվել։

Ինչպես հետագայում իմացան, խոսքը Հիսուս Քրիստոսի մասին էր։ Բանն այն է, որ խմբագիրն ամսագրի հերթական պրակի համար հակակրոնական մի մեծ պոեմ էր պատվիրել բանաստեղծին։ Իվան Նիկոլաևիչն այդ պոեմը հորինել էր, այն էլ բավական կարճ ժամկետում, բայց, ցավոք, դրանով ամենևին չէր գոհացրել խմբագրին։ Իր պոեմի գլխավոր գործող անձին, այն է՝ Հիսուսին, Անապաստանը խիստ սև գույներով էր ներկայացրել, այդուհանդերձ, խմբագրի կարծիքով, ամբողջ պոեմը հարկ էր նորից գրել։ Եվ հիմա ահա խմբագիրը Հիսուսի մասին դասախոսության նման մի բան էր կարդում բանաստեղծին, նրա հիմնական սխալն ընդգծելու նպատակով։ Դժվար է ասել, թե հատկապես ինչն էր Իվան Նիկոլաևիչի ձախողման պատճառը՝ նրա տաղանդի նկարագրական ո՞ւժն արդյոք, թե գրելիք խնդրի մասին կատարյալ անտեղյակությունը, բայց նրա պատկերած Հիսուսը ստացվել էր որպես միանգամայն կենդանի, թեև համակրանք չհարուցող անձ։ Իսկ Բեռլիոզն ուզում էր բանաստեղծին ապացուցել, որ գլխավորն այն չէ, թե ինչպիսին էր Հիսուսը՝ վատը, թե լավը, այլ այն, որ այդ Հիսուս կոչվածը, որպես անձնավորություն, ամենևին գոյություն չի ունեցել աշխարհում և որ նրա մասին եղած բոլոր պատմությունները սովորական հորինվածքներ են, ամենասովորական առասպել։

Հարկ է նշել, որ խմբագիրը կարդացած մարդ էր և խոսքի մեջ շատ հմտորեն վկայակոչում էր հին պատմիչներին, օրինակ, նշանավոր Փիլոն Ալեքսանդրացուն, փայլուն կրթություն ստացած

Հովսեփոս Փլավիոսին, որը երբեք ու մի բառով չի հիշատակել Հիսուսի գոյությունը։ Հանդես բերելով պատկառելի խորագիտակություն, Միխայիլ Ալեքսանդրովիչը բանաստեղծին իմիջիայլոց հայտնեց և այն մասին, որ Տակիտոսի նշանավոր «Տարեգրությունների» տասնհինգերորդ գրքի հատվածը, այն է՝ 44-րդ գլուխը, ուր խոսվում է Հիսուսի մահապատժի մասին, ոչ այլ ինչ է, քան ավելի ուշ շրջանի կեղծված հավելում։

Բանաստեղծը, ում համար խմբագրի հայտնած ամեն ինչը նորություն էր, ուշադրությամբ լսում էր Միխայիլ Ալեքսանդրովիչին, նրա վրա հառած իր ժիր ու կանաչ աչքերը և սոսկ զկռտում էր երբեմն, քթի տակ հայհոյելով ծիրանի ջուրը։

— Արևելյան որևիցե կրոն չկա,— ասում էր Բեռլիոզը,— որտեղ, որպես կանոն, անարատ կույսն աստված լույս աշխարհ չբերեր։ Եվ քրիստոնյաները, նոր որևէ բան չհորինելով, ճիշտ նույն կերպ ստեղծեցին իրենց Հիսուսին, որը երբեք իրական մարդ չի եղել։ Այ, հենց դրա վրա էլ պետք է գլխավոր շեշտը դնել...

Բեռլիոզի հնչեղ տենորը տարածվում էր ամայի ծառուղում, և որքան Միխայիլ Ալեքսանդրովիչը թափանցում էր խորքերը, ուր առանց գլուխը կոտրելու երկյուղի կարող է թափանցել միայն շատ կրթված մարդը, բանաստեղծն ավելի ու ավելի հետաքրքրական, օգտակար բաներ էր իմանում թե եգիպտական Օսիրիսի՝ բարեգութ աստծո և Երկնքի ու Երկրի որդու մասին, թե փյունիկյան աստծո՝ Թամմուզի մասին, թե Մարդուկի մասին, նույնիսկ սակավ հայտնի Վիցլիպուցլի ահեղ աստծու մասին, որին ժամանակին շատ էին մեծարում ացտեկները Մեքսիկայում։

Եվ ահա հենց այն ժամանակ, երբ Միխայիլ Ալեքսանդրովիչը բանաստեղծին պատմում էր, թե ացտեկները Վիցլիպուցլիի արձանիկներն ինչպես էին պատրաստում խմորից, ծառուղու վրա երևաց առաջին մարդը։

Հետագայում, երբ անկեղծ ասած ուշ էր արդեն, տարբեր հիմնարկությունները իրենց ամփոփագրերը ներկայացնում էին, սկսելով այդ մարդու նկարագրությունից։ Դրանց բաղդատումը չի կարող զարմանք չհարուցել։ Այսպես, առաջին ամփոփագրում ասված էր, որ այդ մարդը կարճահասակ էր, ոսկյա ատամներով, աջ ոտքը՝ կաղ։ Երկրորդում՝ թե վիթխարի հասակ ուներ, պլատինե ատամնապսակ, և ձախ ոտքն էր կաղ։ Երրորդը հակիրճ հայտնում էր, որ առանձնահատուկ նշաններ չուներ այդ մարդը։

Ստիպված պիտի խոստովանել, որ այդ ամփոփագրերից և ոչ մեկը բանի պետք չէ։

Նախ և առաջ՝ նկարագրվողի ոչ մի ոտքը կաղ չէր, հասակն էլ ոչ կարճ էր, ոչ միջինից, այլ պարզապես բարձր։ Ինչ վերաբերում է ատամներին, ապա ձախ կողմից պլատինե ատամնաշարք ուներ, աջ կողմից՝ ոսկե։ Հագինը մոխրագույն, թանկարժեք կոստյում էր, ոտքերին՝ արտասահմանյան, կոստյումի գույնին համապատասխան կոշիկներ։ Մոխրագույն բերետը կտրիճավարի ծռել էր ականջի վրա, կռնատակին ձեռնափայտ ուներ, պուդելի մռութ պատկերող սև գլխիկով։ Արտաքինից դատելով՝ քառասունն անց էր։ Բերանը ծուռ էր մի տեսակ։ Խնամքով սափրված էր։ Սևահեր։ Աջ աչքը սև էր, ձախը՝ հայտնի չէ, թե ինչու՝ կանաչ։ Հոնքերը սև էին, բայց մեկը բարձր էր մյուսից։ Մի խոսքով՝ օտարերկրացի։

Անցնելով նստարանի կողքով, որի վրա նստած էին խմբագիրն ու բանաստեղծը, օտարերկրացին հայացքը թեքեց նրանց կողմը, կանգ առավ ու հանկարծ նստեց հարևան նստարանին, զրուցողներից երկու քայլի վրա։

«Գերմանացի է»,— մտածեց Բեռլիոզը։

«Անգլիացի է,— մտածեց Անապաստանը,— տես է՛, չի էլ շոգում ձեռնոցներով»։

Իսկ օտարերկրացին աչքի ածեց բարձրահարկ շենքերը, որոնք քառանկյունաձև շրջանակել էին լիճը, ընդ որում նկատելի էր, որ տվյալ վայրն առաջին անգամ է տեսնում և որ դա հետաքրքրել է նրան։

Հայացքը կանգնեցրեց վերևի հարկերի վրա, որոնց ապակիներին մեջ կուրացուցիչ արտացոլվում էր բեկված և Միխայիլ Ալեքսանդրովիչից ընդմիշտ հեռացող արևը, հետո իջեցրեց ցած, ուր ապակիները իրիկնամուտի մթով էին պարուրվում, ներողամտորեն ծիծաղեց քթի տակ ինչ-որ բանի վրա, աչքերը կկոցեց, ձեռքերը դրեց ձեռնափայտի գլխիկին, ծնոտը՝ ձեռքերին։

— Իվան,— ասում էր Բեռլիոզը,— դու շատ լավ ու ծաղրական ես նկարագրել, օրինակ, Հիսուսի՝ աստծո որդու ծնունդը, բայց համն ու հոտը հենց այն է, որ դեռևս մինչ Հիսուսը մի ամբողջ շարք աստծո որդիք են ծնվել, ասենք, օրինակ, փռյուգիական Ատտիսը, իսկ կարճ ասած, նրանցից ոչ մեկը չի ծնվել և ոչ ոք չի եղել, այդ թվում և Հիսուսը, և անհրաժեշտ է, որ ծննդյան, կամ ասենք, մոգերի գալստյան փոխարեն նկարագրես այդ

ծննդյան առթիվ տարածված անհեթեթ լուրերը... Ոչ չէ, ըստ իր պատմածի, ստացվում է, որ նա իրոք ծնվել է...

Այստեղ Անապաստանը փորձեց, շունչը պահելով, վերջ տալ իրեն տանջող զկռտոցին, բայց դրանից ավելի տանջալի ու բարձրաձայն զկռտաց, ու հենց այդ պահին Բեռլիոզն ընդհատեց իր խոսքը, որովհետև օտարերկրացին հանկարծ ելավ տեղից ու մոտեցավ գրողներին։

Վերջիններս նրան նայեցին զարմացած։

— Ներեցեք ինձ, խնդրում եմ,— ասաց նա օտարերկրացու առոգանությամբ, բայց բառերը չաղավաղելով,— որ անծանոթ լինելով հանդերձ, ինձ թույլ եմ տալիս... բայց ձեր գիտական զրույցի նյութն այնքան հետաքրքիր է...

Այստեղ նա բարեկրթորեն հանեց բերետը, և ընկերներին այլ բան չէր մնում անել, քան թեթևակի ելնել տեղներից ու ողջունել։

«Չէ, ավելի շուտ ֆրանսիացի է...»— մտածեց Բեռլիոզը։

«Լե՞հ...»— մտածեց Անապաստանը։

Անհրաժեշտ է ավելացնել, որ հենց առաջին խոսքից օտարերկրացին նողկալի տպավորություն թողեց բանաստեղծի վրա, իսկ Բեռլիոզին ավելի շուտ դուր եկավ, այսինքն ոչ այնքան դուր եկավ, այլ... ինչպես ասենք... կարծես թե հետաքրքրեց։

— Թույլ կտա՞ք նստել,— քաղաքավարությամբ խնդրեց օտարերկրացին, և գրողները մի տեսակ ակամա հեռացան միմյանցից, օտարերկրացին ճարպկորեն տեղավորվեց նրանց արանքում և անմիջապես խոսակցության մեջ մտավ։

— Եթե սխալ չլսեցի, դուք բարեհաճեցիք ասել, որ Հիսուսը չի՞ եղել երկրի երեսին,— հարցրեց օտարերկրացին, Բեռլիոզը վրա գցելով իր ձախ կանաչ աչքը։

— Ոչ, դուք սխալ չեք լսել,— քաղաքավարությամբ պատասխանեց Բեռլիոզը,— հենց այդպես էլ ասացի։

— Ահ, ինչ հետաքրքիր է,— բացականչեց օտարերկրացին։

«Գրողի տարածն ի՞նչ է ուզում»,— մտածեց Անապաստանն ու խոժոռվեց։

— Իսկ դուք համաձա՞յն էիք ձեր զրուցակցին,— հետաքրքրվեց անծանոթը, դառնալով աջ՝ Անապաստանին։

— Հարյուր ու մե՛կ տոկոսով,— հաստատեց վերջինս՝ սիրում էր պաճուճապատ ու պատկերավոր արտահայտվել։

— Զարմանալի՜ է,— բացականչեց անկոչ զրուցակիցը և, չգիտես ինչու, գողունի չորս կողմը նայելով ու իջեցնելով ձայն

*ձայնը, ասաց.— Կներեք անդրեսության համար, բայց ես այնպես հասկացա, որ դուք, մնացած ամեն ինչից զատ, աստծո՞ւն էլ չեք հավատում։— Նա վախեցած արտահայտություն տվեց աչքերին ու ավելացրեց.— Ներվում եմ, ոչ ոքի չեմ ասի։*

*— Այո, մենք չենք հավատում աստծուն,— թեթևակի ժպիտի արժանացնելով արտասահմանցու երկյուղը, պատասխանեց Բեռլիոզը,— բայց այդ մասին կարելի է լիովին ազատ խոսել։*

*Օտարերկրացին ետ ընկավ նստարանի թիկնակին և, հետաքրքրասիրությունից նույնիսկ ճիչ արձակելով, հարցրեց.*

*— Դուք աթեի՞ստ եք։*

*— Այո, մենք աթեիստ ենք,— ժպտալով պատասխանեց Բեռլիոզը, իսկ Անապաստանը զայրացած մտածեց. «Որտեղի՞ց եկավ-կպավ էս արտասահմանյան փորձանքը»։*

*— Օ՛հ, հրաշալի՛ է,— բղավեց զարմանալի օտարերկրացին և դեսուդեն տարավ գլուխը, մեկ այս, մեկ այն գրողին նայելով։*

*— Մեր երկրում աթեիզմը ոչ մեկին չի զարմացնում,— դիվանագիտորեն քաղաքավարի ասաց Բեռլիոզը,— մեր ազգաբնակչության մեծամասնությունը գիտակցաբար ու վաղուց դադարել է հավատալ աստծո մասին հեքիաթներին։*

*Այստեղ օտարերկրացին այսպիսի մի բան արեց՝ վեր կացավ ու սեղմեց շփոթված խմբագրի ձեռքը, արտասանելով հետևյալ բառերը.*

*— Թույլ տվեք ամբո՛ղջ սրտով շնորհակալություն հայտնել ձեզ։*

*— Իսկ ինչի՞ համար եք նրան շնորհակալություն հայտնում, — աչքերը ճպճպացնելով՝ հարցրեց Անապաստանը։*

*— Շատ կարևոր տեղեկության համար, որը չափազանց հետաքրքրական է ինձ՝ ճանապարհորդիս,— մատը բազմանշանակ վեր պարզելով՝ բացատրեց օտարերկրացի խելառը։*

*Կարևոր տեղեկությունն, ըստ երևույթին, ճանապարհորդի վրա իսկապես ուժեղ տպավորություն գործեց, որովհետև նա աչքերը տագնապահար սահեցրեց տների վրա, ասես յուրաքանչյուր պատուհանում մեկական աթեիստ տեսնելու երկյուղ զգալով։*

*«Ոչ, անգլիացի չէ...»— մտածեց Բեռլիոզը, իսկ Անապաստանը մտածեց. «Որտե՞ղ է նա այսպես վարժ ռուսերեն խոսել սովորել, հետաքրքիրը դա՛ է», ու կրկին մռայլվեց։*

*— Բայց թույլ տվեք հարցնել,— լարված մտորումներից հե-*

տո խոսեց օտարերկրացի հյուրը,— իսկ ինչպե՞ս վարվենք աստծո գոյության ապացույցների հետ, որոնք, ինչպես հայտնի է, ճիշտ և ճիշտ հինգն են։

— Ավա՜ղ,— ափսոսանքով պատասխանեց Բեռլիոզը,— այդ ապացույցներից ոչ մեկը ոչինչ չարժե, և մարդկությունը դրանք վաղուց արխիվ է պահ տվել։ Համաձայն չե՞ք. որ բանականության ասպարեզում աստծո գոյության որևէ ապացույց չի կարող լինել։

— Բրա՜վո,— բացականչեց օտարերկրացին,— բրա՜վո։ Դուք կրկնեցիք այդ առթիվ անհանգիստ ծերուկ Էմանուիլի միտքն ամբողջությամբ։ Բայց ահա թե որն է զվարճալին՝ նա հիմնովին քարուքանդ արեց բոլոր հինգ ապացույցները, իսկ հետո, կարծես ինքն իրեն ծեռ առնելով, իր սեփական վեցերորդ ապացույցը հորինեց։

— Կանտի ապացույցը,— նրբորեն ժպտալով, առարկեց ուսյալ խմբագիրը,— նույնպես անհամոզիչ է։ Եվ զուր չէր Շիլլերն ասում, որ կանտյան դատողություններն այդ հարցի շուրջ միայն ստրուկներին կարող են գոհացնել, իսկ Շտրաուսը պարզապես ծիծաղում էր այդ ապացույցի վրա։

Բեռլիոզը խոսում էր, միևնույն ժամանակ ինքն իրեն մտածում. «Բայց և այնպես, ո՞վ է այս մարդը։ Եվ ինչու՞ է այսպես լավ ռուսերեն խոսում»։

— Բռնես այդ Կանտին ու նման ապացույցների համար մի երեք տարով քշե՜ս Սոլովկի,— միանգամայն անսպասելի մեջ ընկավ Իվան Նիկոլաևիչը։

— Իվա՜ն,— անհարմար զգալով՝ շշնջաց Բեռլիոզը։

Սակայն Կանտին Սոլովկի ուղարկելու առաջարկը ոչ միայն չապշեցրեց օտարերկրացուն, այլ նույնիսկ հիացմունք պատճառեց։

— Ճիշտ այդպես, ճիշտ այդպես,— բղավեց նա, ու Բեռլիոզին ուղղված նրա ձախ կանաչ աչքը փայլատակեց,— ի՜սկը նրա տեղն է դա։ Ախր այն ժամանակ, նախաճաշելիս ասում էի նրան. «Կամքը ձերն է, պրոֆեսոր, անհարիր բան եք հորինել։ Գուցեև խելացի է, բայց խիստ անհասկանալի։ Ձեզ վրա կծիծաղեն»։

Բեռլիոզն աչքերը չռեց։ «Նախաճաշելիս... Կանտի՞ն... Ինչեր է դուրս տալիս»,— մտածեց նա։

— Սակայն,— շարունակեց օտարերկրացին, Բեռլիոզի զար-

մանքից չշփոթվելով ու բանաստեղծին դիմելով,— Նրան Սոլովկի ուղարկելն անհնար է այն պատճառով, որ հարյուր տարուց ավելի նա գտնվում է շատ ավելի հեռավոր վայրերում և ոչ մի կերպ հնարավոր չէ նրան այնտեղից դուրս բերել, հավատացնու՜մ եմ ձեզ։

— Եվ ափսո՜ս,— պատասխանեց բանաստեղծը։

— Ե՛ս էլ եմ ափսոսում,— հաստատեց անծանոթը, աչքը փայլեցնելով ու շարունակեց.— բայց ահա թե ի՛նչն է ինձ անհանգստացնում՝ եթե աստված չկա, ապա հարց է առաջանում. իսկ ո՞վ է կառավարում մարդկային կյանքը և ընդհանրապես ամբողջ կարգուկանոնը երկրիս երեսին։

— Մարդն ինքն է կառավարում,— խոստովանենք՝ ոչ այնքան հստակ այդ հարցին շտապեց զայրացած պատասխանել Անապաստանը։

— Ներող եղեք,— մեղմ պատասխանեց անծանոթը,— կառավարելու համար, այսպես թե այնպես, պետք է որոշ, թեկուզ փոքրինչ պատկառելի ժամանակահատվածի սահմաններում որոշակի ծրագիր ունենալ։ Սակայն թույլ տվեք հարցնել, իսկ ինչպե՞ս կարող է մարդը կառավարել, եթե նա ոչ միայն զրկված է թեկուզ ծիծաղելիորեն կարճ ժամանակահատվածի, է՛, ասենք, մի հազար տարվա համար որևիցե ծրագիր կազմելու հնարավորությունից, այլ չի կարող նույնիսկ իր սեփական վաղվա օրվա համար երաշխավորել։ Եվ իրոք,— այստեղ անծանոթը դարձավ Բեռլիոզին,— պատկերացրեք, օրինակի համար, որ դուք սկսեք տնօրինել, կառավարել ուրիշներին և ձեզ, մի խոսքով, այսպես ասած, բավականություն ստանալ դրանից, ու հանկարծ, ձեր թոքերում... քխը՛... քխը՛... սարկոմա հայտնաբերվի... — օտարերկրացին այստեղ մի անուշ քմծիծաղ տվեց, ասես թոքերի սարկոմայի միտքը հաճույք պատճառեց նրան,— այո, սարկոմա,— աչքերը կատվի պես կկոցելով՝ կրկնեց նա հնչեղ այդ բառը,— և ահա վերջացա՜վ ձեր կառավարումը։ Ոչ մեկի ճակատագիրն այլևս ձեզ չի հետաքրքրում, բացի ձեր սեփականից։ Հարազատներն սկսում են ստեր ասել ձեզ, վատ բան կանխազգալով՝ դուք ձեզ գցում եք ուսյալ բժիշկների, ապա շառլատանների, մեկ-մեկ էլ՝ գրբացների դուռը։ Ինչպես առաջինը և երկրորդը, այնպես էլ երրորդը միանգամայն անիմաստ են, ինքներդ եք հասկանում։ Եվ այդ ամենը ողբերգական ավարտ է ունենում. նա, ով դեռ վերջերս ենթադրում էր, թե ինչ-որ բան է կառավարում, հանկարծ

հայտնվում է մի փայտյա արկղի մեջ անշարժ պառկած, և շրջապատի մարդիկ, հասկանալով, որ այլևս ոչինչ բանի պիտանի չէ այդ պառկածը, այրում են նրան վառարանում։ Ավելի վատ էլ է լինում. քիչ առաջ մարդը պատրաստվում էր Կիսլովոդսկ մեկնել,— այստեղ օտարերկրացին աչքերը կկոցեց. Բեռլիոզին նայելով,— թվում է, թե դատարկ բան է, բայց դա էլ չի կարող անել, որովհետև չգիտես ինչու մեկ էլ սայթաքեց ու ընկավ տրամվայի տա՛կ։ Մի՞թե կասեք, թե ի՛նքն այդպես տնօրինեց։ Ավելի ճիշտ չի՞ լինի մտածել, որ բոլորովին ուրիշ մեկն այդպես տնօրինեց,— և այստեղ անծանոթը տարօրինակ ձևով ծիծաղեց։

Բեռլիոզը մեծագույն ուշադրությամբ էր ունկնդրում սարկոմայի և տրամվայի մասին այդ տհաճ պատմությունը, և զանազան տագնապալի մտքեր սկսեցին տանջել նրան։ «Օտարերկրացի չէ։ Օտարերկրացի չէ.— մտածում էր Բեռլիոզը,— չափազանց տարօրինակ անձնավորություն է... բայց ներեցեք, իսկ ո՞վ է»։

— Ինչպես տեսնում եմ, ուզում եք ծխե՞լ,— անսպասելիորեն Անապաստանին դիմեց անծանոթը,— ի՞նչ ծխախոտ եք գերադասում։

— Ինչ տեսակ ասես, ունե՞ք,— մռայլված հարցրեց բանաստեղծը, որի գլանակները վերջացել էին։

— Ի՞նչ ծխախոտ եք գերադասում,— կրկնեց անծանոթը։

— Ասենք, «Նաշա մարկա»,— չարացած պատասխանեց Անապաստանը։

Անծանոթն անմիջապես գրպանից հանեց ծխատուփը և մեկնեց Անապաստանին։

— «Նաշա մարկա»։

Թե՛ խմբագրին, թե բանաստեղծին ապշեցրեց ոչ այնքան հենց «Նաշա մարկայի» առկայությունը ծխատուփի մեջ, որքան ծխատուփը։ Շատ էր մեծ, զուտ ոսկուց, և բաց անելիս կափարիչի վրա կապույտ ու ճերմակ բոցով փայլատակեց շողակնե եռանկյունին։

Այստեղ գրողները տարբեր բաներ մտածեցին։ Բեռլիոզը՝ «Ո՛չ, օտարերկրացի է», իսկ Անապաստանը՝ «Ա՛յ, սատանան դրան տանի։ Հը՞»։

Բանաստեղծը և ծխատուփի տերը ծխախոտ վառեցին, իսկ չծխող Բեռլիոզը հրաժարվեց։

«Հարկ կլինի այսպես առարկել,— վճռեց Բեռլիոզը,— այո, մարդը մահկանացու է, դրա դեմ ոչ ոք չի էլ վիճում։ Սակայն բանն այն է, որ...»

Այնինչ, չհասցրեց այդ բառերն արտասանել, քանի որ խոսեց օտարերկրացին։

— Այո, մահկանացու է մարդը, բայց դա դեռևս չարիքի կեսն է։ Վատն այն է, որ երբեմն նա հանկարծակի՛ մահկանացու է, ահա թե ո՛րն է խաղը։ Եվ ընդհանրապես չի կարող ասել, թե ինչ պիտի անի այս երեկո։

«Հարցի մի տեսակ անհեթեթ դրվածք...»,— մտմտաց Բեռլիոզն ու առարկեց.

— Դե, այստեղ արդեն չափազանցում կա։ Այսօրվա երեկոն քիչ թե շատ ստույգ հայտնի է ինձ։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ եթե Բրոննայա փողոցում գլխիս աղյուս ընկնի...

— Աղյուսը հենց այնպես և երբեք ոչ մեկի գլխին չի ընկնի,— ազդեցիկ տոնով ընդհատեց անծանոթը։— Մասնավորապես ձեզ, հավատացնում եմ, աղյուսը և ոչ մի դեպքում չի սպառնում։ Դուք այլ մահով կմեռնեք։

— Գուցե գիտե՞ք, թե հատկապես ինչ մահով,— հետաքրքրվեց Բեռլիոզը միանգամայն անկեղծ հեգնանքով, իբրև մի տեսակ անհեթեթ խոսակցության մեջ մտնելով,— ու կասե՞ք ինձ։

— Սիրով,— պատասխանեց անծանոթը։ Նա հայացքով չափեց Բեռլիոզին, ասես պատրաստվում էր կոստյում կարել նրա համար, ատամների արանքից շշնջաց նման մի բան. «Մեկ, երկու... Մերկուրին երկրորդ տան մեջ... լուսինը թաքնվեց... վեցդժբախտություն... երեկո-յոթ...»— և բարձրաձայն ու բերկրալից հայտարարեց։— Ձեր գլուխը կկտրե՛ն։

Անապաստանը վայրենաբար ու չարացած աչքերը չռեց սանձարձակ անծանոթի վրա, իսկ Բեռլիոզը, ծուռ քմծիծաղելով, հարցրեց.

— Իսկ ո՞վ հատկապես։ Թշնամինե՞րը։ Ինտերվենտնե՞րը։

— Ոչ,— պատասխանեց զրուցակիցը,— մի ռուս կին, կոմերիտուհի։

— Հը՛մ...— անծանոթի կատակից բորբոքված, փնչացրեց Բեռլիոզը,— կներեք, այդ մեկը քիչ հավանական է։

— Խնդրում եմ ինձ էլ ներեք,— պատասխանեց օտարերկրացին,— բայց դա այդպես է։ Ի դեպ, կկամենայի հարցնել ձեզ, եթե գաղտնիք չէ, ի՞նչ եք անելու այս երեկո։

— Ոչ մի գաղտնիք։ Հիմա գնալու եմ տուն, Սադովայա փողոց, իսկ հետո, երեկոյան ժամը տասին ՄԱՍՍՈԼԻՏ-ում նիստ է կայանալու, և ես նախագահելու եմ այդ նիստին։

— Ոչ, դա ոչ մի կերպ չի կարող լինել,— համոզված առարկեց օտարերկրացին։

— Իսկ ինչու՞։

— Որովհետև,— պատասխանեց օտարերկրացին և աչքերը կկոցած նայեց երկնքին, որը թրատում էին սև թռչունները՝ երեկոյան զովը կանխազգալով,— որովհետև Աննուշկան արդեն գնել է արևածաղկի ձեթը, և ոչ միայն գնել, այլ նույնիսկ շիշը կոտրել, ձեթն էլ թափել է։ Այնպես որ նիստը չի կայանա։

Այդժամ, ինչ լիովին հասկանալի է, լորենիների ներքո լռություն տիրեց։

— Ներեցեք,— դադարից հետո խոսեց Բեռլիոզը՝ նայելով ցնդաբանող օտարերկրացուն,— ի՞նչ կապ ունի այստեղ արևածաղկի ձեթը... և ի՞նչ Աննուշկա։

— Ասեմ, թե ինչ կապ ունի այստեղ արևածաղկի ձեթը,— հանկարծակի սկսեց Անապաստանը, հավանորեն վճռելով պատերազմ հայտարարել անկոչ զրուցակցին,— քաղաքացի, երբևիցե ձեզ չի՞ վիճակվել հոգեբուժարանում լինել։

— Իվա՛ն...— ցածրաձայն ասաց Միխայիլ Ալեքսանդրովիչը։

Բայց օտարերկրացին ամենևին չնեղացավ և ծիծաղեց անչափ ուրախացած։

— Եղե՛լ եմ, եղե՛լ, այն էլ ոչ մեկ անգամ,— բացականչեց նա, ծիծաղելով, սակայն չծիծաղող աչքը բանաստեղծից չկտրելով,— ու՞ր ասես, չեմ եղել։ Ափսոս միայն, ժամանակ չեղավ պրոֆեսորից հարցնեմ, թե ինչ ասել է շիզոֆրենիա։ Այնպես որ, Իվան Նիկոլաևիչ, ինքներդ կիմանաք նրանից։

— Որտեղի՞ց գիտեք իմ անուն-հայրանունը։

— Ի սեր աստծո, Իվան Նիկոլաևիչ, ձեզ ո՞վ չի ճանաչում,— այստեղ օտարերկրացին գրպանից հանեց «Լիտերատուրնայա գազետա»-ի նախորդ օրվա համարը, և Իվան Նիկոլաևիչը հենց առաջին էջի վրա տեսավ իր նկարը, դրա տակ՝ սեփական բանաստեղծությունները։ Սակայն փառքի և հանրահայտության՝ դեռևս երեկ հրճվանք պատճառող այդ ապացույցն այս անգամ ամենևին չուրախացրեց բանաստեղծին։

— Ինձ կներեք,— ասաց Իվանը, և նրա դեմքը մթնեց,— չե՞ք կարող մի րոպե սպասել։ Մի երկու բան ունեմ ասելու ընկերոջս։

— Օ՜, հաճույքով,— բացականչեց անծանոթը,— այստեղ, լորենիների տակ այնքան լավ է, իսկ ես, ի դեպ, ոչ մի տեղ չեմ շտապում։

— Միշա, գիտես ինչ,— շշնջաց բանաստեղծը, Բեռլիոզին մի կողմ քաշելով,— նա ամենևին էլ տուրիստ չէ, այլ լրտես։ Ռուս տարագիր է, որ սողոսկել է մեզ մոտ։ Փաստաթուղթ հարցրու, թե չէ կգնա...

— Կարծու՞մ ես,— տագնապած շշնջաց Բեռլիոզը և մտածեց. «Բայց չէ՞ որ նա իրավացի է»։

— Ինձ որ հավատա,— նրա ականջին փսփսաց բանաստեղծը,— իրեն հիմարի տեղ է դրել, որ խոսք-մոսք քաշի։ Ձե՞ս տեսնում, ինչպես է ռուսերեն խոսում,— բանաստեղծը աչքի պոչով նայելով էր խոսում, հետևելով, որ անծանոթը չծլկի,— գնանք, բռնենք, թե չէ կփախչի...

Եվ բանաստեղծը, Բեռլիոզի ձեռքը բռնած, քաշեց դեպի նստարանը։

Անծանոթը նստած չէր, այլ կանգնած էր նստարանի մոտ, ձեռքում բռնած մուգ մոխրագույն կազմով ինչ-որ գիրք, բարձրորակ թղթից մի հաստ ծրար և այցետոմս։

— Ներեցեք ինձ, որ թեժ վեճի ընթացքում մոռացա ներկայանալ։ Ահա իմ այցետոմսը, անձնագիրը և խորհրդատվության համար Մոսկվա գալու հրավերը,— ծանրակշիռ տոնով ասաց անծանոթը՝ խորաթափանց հայացքով գրողներին նայելով։

Վերջիններս շփոթվեցին։ «Սատանա՛, ամեն ինչ լսել է...»— մտածեց Բեռլիոզը և բարեկիրթ շարժումով հավաստիացրեց, որ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտություն չկա։ Մինչ օտարերկրացին փաստաթղթերը խմբագրի ձեռքը կխոթեր, բանաստեղծը հասցրեց այցետոմսի վրա տեսնել օտար լեզվով տպագրված «պրոֆեսոր» բառը և ազգանվան առաջին տառը՝ «W»։

— Շատ հաճելի է,— շփոթված ասաց խմբագիրն այդ ընթացքում, և օտարերկրացին փաստաթղթերը գրպանը դրեց։

Փոխհարաբերությունները այսպիսով վերականգնվեցին, և երեքով մեկտեղ կրկին նստեցին նստարանին։

— Պրոֆեսոր, որպես խորհրդատո՞ւ եք հրավիրվել մեզ մոտ,— հարցրեց Բեռլիոզը։

— Այո, որպես խորհրդատու։

— Դուք գերմանացի՞ եք,— տեղեկացավ Անապաստանը։

— Ո՞վ, ե՞ս...— հարցին հարցով պատասխանեց պրոֆեսո-

րը և հանկարծ մտքերի մեջ ընկավ։— Այո, թերևս գերմանացի...— ասաց նա։

— Շատ լավ եք խոսում ռուսերեն,— նկատեց Անապաստանը։

— Օ՜, ընդհանրապես բազմալեզու մարդ եմ ես և շատ ու շատ լեզուներ գիտեմ,— պատասխանեց պրոֆեսորը։

— Իսկ ի՞նչ մասնագիտություն ունեք,— հարցրեց Բեռլիոզը։

— Ես սև մոգության մասնագետ եմ։

«Ա՛յ քեզ բան...»— շամփրեց Միխայիլ Ալեքսանդրովիչի ուղեղը։

— Եվ... և այդ մասնագիտության համա՞ր են ձեզ հրավիրել մեզ մոտ,— կմկմալով հարցրեց նա։

— Այո, դրա համար են հրավիրել,— պատասխանեց պրոֆեսորը և պարզաբանեց։— Այստեղ, պետական գրադարանում հայտնաբերվել են հմայող Հերբերտ Ավրիլակացու բնագրերը՝ տասներորդ դարի։ Եվ ահա պահանջում են, որ վերծանեմ։ Ես միակ մասնագետն եմ աշխարհում։

— Ա-ա՜, Դուք պատմաբա՞ն եք,— մեծ թեթևություն զգալով ու հարգալիր հարցրեց Բեռլիոզը։

— Պատմաբան եմ,— հաստատեց գիտնականը և անտեղի-անհարկի ավելացրեց,— այսօր երեկոյան Պատրիարքական լճում հետաքրքի՜ր պատմություն է լինելու։

Ու վերստին չափազանց զարմացան թե խմբագիրը, թե բանաստեղծը, իսկ պրոֆեսորը երկուսին էլ ձեռքի շարժումով իր կողմը քաշեց, և երբ նրանք, գլուխները կոացրած մոտեցրին, շշնջաց.

— Նկատի ունեցեք, որ Հիսուսը գոյություն ունեցել է։

— Գիտեք ինչ, պրոֆեսոր,— հարկադրված ժպտալով՝ պատասխանեց Բեռլիոզը,— մենք հարգում ենք ձեր հսկայական գիտելիքները, բայց այդ հարցի վերաբերյալ այլ տեսակետ ունենք։

— Ոչ մի տեսակետ էլ պետք չէ՛,— պատասխանեց տարօրինակ պրոֆեսորը,— պարզապես նա գոյություն է ունեցել և ուրիշ ոչինչ։

— Բայց չէ որ որևիցե ապացույց է պետք...— սկսեց Բեռլիոզը։

— Ոչ մի ապացույց էլ պետք չէ,— պատասխանեց պրոֆեսորը և սկսեց խոսել ցածրաձայն, ըստ որում, չգիտես ինչու, նրա ընդգծված առոգանությունը չքացավ։— Ամեն ինչ պարզ է՝ արնագույն աստառով սպիտակ թիկնոցն ուսերին...

## ԳԼՈՒԽ II

## ՊՈՆՏԱՑԻ ՊԻՂԱՏՈՍԸ

Արնագույն աստառով սպիտակ թիկնոցն ուսերին, հեծելակի քստքստան քայլվածքով, գարնանային նիսան ամսու տասնչորսի վաղ առավոտյան Հերովդես Մեծի պալատի երկու թևերի միջև ընկած կամարակապ սյունաշար պատշգամբը ելավ Հրեաստանի կուսակալ Պոնտացի Պիղատոսը։

Աշխարհում ամենից շատ կուսակալն ատում էր վարդայուղի հոտը, և հիմա ամեն բանի մեջ վատ օրվա կանխագուշակում կար, քանի որ այդ հոտը կուսակալին հետապնդել սկսեց այգաբացից։ Կուսակալին թվում էր, թե վարդի բույր են արձակում այգու նոճիներն ու արմավենիները, որ կաշվի և պահակախմբի հոտերի մեջ անիծյալ վարդայուղի շիթն էլ է խառնված։ Պալատի ետևում ընկած կողաշենքերից, ուր տեղավորվել էր կուսակալի հետ Երշալայիմ եկած Տասներկուերորդ Կայծակնազարկ լեգեոնի առաջին կոհորտան, այգու վերին տափարակի վրայով ծուխ քաշվեց պատշգամբ, և այդ դառնավուն ծխին, որ նշանակում էր, թե հարյուրյակների խոհարարները սկսել են ճաշ եփելը, վարդի այդ նույն թանձր շունչը խառնվեց։ Ո՜վ աստվածներ, աստվածներ, ինչի՞ համար եք ինձ պատժում։

«Այո, կասկած չկա։ Նույն, դարձյալ նույն անհաղթելի, զարհուրելի հեմիկրանիան, որից ցավում է մարդու գլխի կեսը։ Ոչ ճար կա, ոչ փրկություն։ Փորձեմ չշարժել գլուխս»։

Շատրվանի մոտ, խճազարդ հատակին արդեն բազկաթոռ էր դրված, և կուսակալն առանց որևէ մեկին նայելու նստեց ու մեկնեց ձեռքը։

Քարտուղարն ակնածանքով այդ ձեռքի մեջ դրեց մագաղաթի գալարը։ Չկարողանալով զսպել դեմքի ցավագին ծամածռումը, կուսակալն աչքի պոչով, թռուցիկ անցավ գրածի վրայով, մագաղաթը ետ տվեց քարտուղարին ու դժվարությամբ ասաց.

— Ամբաստանյալը գալիլեացի՞ է։ Գործն ուղարկե՞լ են չորրորդապետին։

— Այո, կուսակալ,— պատասխանեց քարտուղարը։

— Ի՞նչ է ասում։

— Նա հրաժարվել է եզրակացություն տալ՝ ըստ գործի և ծերակույտի մահվան դատավճիռն ուղարկել է ձեր հաստատմանը,— բացատրեց քարտուղարը։

Կուսակալը ցնցեց այտն ու ցածրաձայն ասաց.

— Բերեք մեղադրյալին։

Եվ անմիջապես երկու լեգեոներ այգու տափարակից վեր բարձրացրեցին ու պատշգամբի սյուների տակ, կուսակալի բազկաթոռի դիմաց կանգնեցրին քսանյոթ տարեկան մի մարդու։ Այդ մարդու հագինը հնամաշ ու պատառոտված, երկնագույն խիտոն էր։ Գլխին ճերմակ փաթթոց կար, ճակատի շուրջ՝ կաշեփոկով, ձեռքերը կապած էին մեջքին։ Ձախ աչքի տակ՝ խոշոր կապտուկ, բերանի եզրին՝ լերդացած արյունով ճանկռվածք։ Նա անհանգիստ հետաքրքրությամբ կուսակալին էր նայում։

Վերջինս լուռ էր, հետո ցածրաձայն հարցրեց արամեերեն.

— Ուրեմն այդ դու՞ ես ժողովրդին հրահրել, որ քանդեն երշալայիմյան տաճարը։

Հարցը տալիս կուսակալը քարի պես անշարժ էր, և միայն շրթունքներն էին հազիվհազ շարժվում՝ բառերն արտասանելիս։ Կուսակալը քարի պես անշարժ էր, որովհետև վախենում էր շարժել դժոխային ցավով կրակվող գլուխը։

Ձեռքերը կապած մարդը մի քիչ առաջ թեքվեց ու ասաց.

— Բարի՛ մարդ։ Հավատա ինձ...

Բայց կուսակալը՝ առաջվա պես անշարժ ու ձայնն ամենևին չբարձրացնելով, տեղնուտեղն ընդհատեց նրան.

— Այդ ի՞նձ ես բարի մարդ կոչում։ Սխալվում ես։ Երշալայիմ քաղաքում բոլորը փսփսում են, որ ես կատաղի հրեշ եմ, և դա միանգամայն ճիշտ է,— ու նույնքան միալար ավելացրեց.— Հարյուրապետ Առնետորսին ինձ մոտ կանչեք։

Բոլորին թվաց, թե պատշգամբը մթնեց, երբ հատուկ հարյուրյակի պետ Մարկոսը՝ Առնետորս մականվամբ, ներկայացավ կուսակալին։

Առնետորսը մի գլուխ բարձր էր լեգեոնի ամենաբարձրահասակ զինվորից և այնքան թիկնեղ, որ բոլորովին ծածկեց նոր ելնող արևը։

Կուսակալը Հարյուրապետին դիմեց լատիներեն։

— Հանցագործն ինձ «բարի մարդ» է կոչում։ Մի րոպեով նրան տարեք այստեղից, բացատրեք, թե ինչպես պիտի խոսել ինձ հետ։ Բայց խեղանդամ չանեք։

Եվ անշարժ կուսակալից բացի բոլորը հայացքով ուղեկցեցին Առնետորս Մարկոսին, որը ձեռքով նշան արեց բանտարկյալին, այսինքն՝ պիտի հետևես ինձ։

Ընդհանրապես, որտեղ էլ հայտնվեր, Առնետորսին բոլո՛րն էին ուղեկցում հայացքով նրա հասակի պատճառով, իսկ նրանք, ովքեր առաջին անգամ էին տեսնում, նաև այն պատճառով, որ հարյուրապետի դեմքն այլանդակված էր՝ ժամանակին նրա քիթը ջնջխվել էր գերմանական լախտի հարվածից։

Խճահատակի վրա կափկափեցին Մարկոսի ծանր կոշիկները, շղթայակապն անաղմուկ հետևեց նրան, սյունաշար պատշգամբում կատարյալ լռություն տիրեց, ու լսվում էր, թե ինչպես են ղողանջում աղավնիներն այգու տափարակում, պատշգամբի տակ, մեկ էլ՝ շատրվանի ջրի դուրեկան ու սեթևեթ երգը։

Կուսակալը կամեցավ ելնել տեղից, քունքը դնել շիթի տակ ու այդպես անզգայանալ։ Բայց գիտեր, որ դա էլ չի օգնի իրեն։

Սյունաշարի տակից այգի բերելով բանտարկյալին, Առնետորսը բրոնզե արձանի պատվանդանի մոտ կանգնած լեգեոնների ձեռքից վերցրեց խարազանն ու, թեթևակի թափ առնելով, զարկեց ձերբակալվածի ուսերին։ Հարյուրապետի շարժումն անփույթ էր ու թեթև, բայց շղթայակապը վայրկենապես գետին տապալվեց, ասես կտրեցին ոտքերը. Նրա շունչը կտրվեց, դեմքի գույնը թռավ ու աչքերն անշարժացան անիմաստ։ Մարկոսը միայն ձախ ձեռքով, հեշտ ու հանգիստ, դատարկ տոպրակի պես վեր բարձրացրեց ընկածին, ոտքի կանգնեցրեց ու սկսեց խոսել քթի մեջ, վատ արտաբերելով արամեերեն բառերը.

— Հռոմեական կուսակալին կոչել իգեմոն։ Ուրիշ խոսքեր չասել։ Կանգնել զգաստ։ Ինձ հասկացա՞ր, թե՝ խփեմ։

Բանտարկյալը ճոճվեց տեղում, բայց տիրապետեց իրեն, գույնը տեղն եկավ, շունչը ետ բերեց ու խռպոտ ձայնով պատասխանեց.

— Ես քեզ հասկացա։ Մի խփիր։

Մեկ րոպե անց նա կրկին կանգնած էր կուսակալի դիմաց։

Հնչեց խամրած, հիվանդ ձայնը.

— Անունդ ի՞նչ է։

— Ի՞մ,— փութով պատասխանեց բանտարկյալը, ամբողջ էությամբ արտահայտելով հասկանալի պատասխանելու, այլև գայրույթ չհարուցելու պատրաստակամություն։

Կուսակալը ցածրաձայն ասաց.

— Իմն ինձ հայտնի է։ Ավելի հիմար մի ձևանա, քան կաս։ Անո՛ւնը։

— Յեշուա,— շտապ-շտապ պատասխանեց բանտարկյալը։

— Մականուն ունե՞ս։

— Հա-Նոցրի։

— Որտեղացի՞ ես։

— Գամաղեցի,— պատասխանեց բանտարկյալը, գլխով ցույց տալով, որ այնտեղ, հեռուներում, իրենից աջ, հյուսիսում, Գամաղա կոչվող մի քաղաք կա։

— Ծագումով, արյամբ ո՞վ ես։

— Ստույգ չգիտեմ,— աշխուժորեն պատասխանեց բանտարկյալը,— ծնողներիս չեմ հիշում։ Ինձ ասել են, որ հայրս ասորի էր...

— Մշտական որտե՞ղ ես ապրում։

— Մշտական կացարան չունեմ,— ամաչելով պատասխանեց բանտարկյալը,— ճամփորդում եմ՝ քաղաքից քաղաք։

— Ավելի կարճ կարելի է ասել, մի խոսքով, թափառաշրջիկ ես,— ասաց կուսակալն ու հարցրեց.— հարազատներ ունե՞ս։

— Ոչ ոք չունեմ։ Մենակ եմ աշխարհում։

— Գրել-կարդալ գիտե՞ս։

— Այո։

— Արամեերենից բացի ուրիշ որևէ լեզու գիտե՞ս։

— Գիտեմ։ Հունարեն։

Ուռած կոպը բարձրացավ, տառապանքի մշուշով պատած աչքը մեխվեց բանտարկյալի վրա։ Մյուս աչքը փակ մնաց։

Պիղատոսը հունարեն խոսեց։

— Ուրեմն, դո՞ւ էիր պատրաստվում ավերել տաճարի շինությունն ու հրահրո՞ւմ էիր ժողովրդին։

Այս խոսքերի վրա բանտարկյալը կրկին աշխուժացավ. աչքերն այլևս վախ չէին արտահայտում, ու նա խոսեց հունարեն.

— Բարի...— բանտարկյալի աչքերում սարսափ երևաց, որովհետև քիչ էր մնացել սխալվեր,— իգեմոն, կյանքումս երբեք մտադիր չեմ եղել տաճարի շինությունն ավերել ու ոչ ոքի չեմ հրահրել այդ անիմաստ գործին։

Ցածրիկ սեղանի վրա հակված և ցուցմունքներն արձանագրող քարտուղարի դեմքին զարմանք հայտնվեց։ Նա բարձրացրեց գլուխը, բայց անմիջապես նորից կռացավ մագաղաթի վրա։

— Հազար ու մի տեսակ մարդիկ են հավաքվում այս քաղաքում տոն օրերին։ Նրանց մեջ լինում են մոգեր, աստղաբաշխներ, գուշակներ ու մարդասպաններ,— միալար խոսում էր կուսակալը,— ստախոսներ էլ են լինում։ Օրինակ, դու ստախոս ես։ Պարզ գրված է՝ հրահրում էր ավերել տաճարը։ Այդ են վկայում մարդիկ։

— Այդ բարի մարդիկ,— սկսեց բանտարկյալն ու շտապշտապ ավելացնելով.— հեգեմոն...— շարունակեց.— ոչինչ չսովորեցին և իմ բոլոր ասածները շփոթել են։ Ընդհանրապես սկսում եմ վախենալ, որ այս խառնաշփոթությունը երկար կտևի։ Եվ ամեն ինչի պատճառը այն է, որ ասածներս ճիշտ չի գրառում նա։

Լռություն տիրեց։ Այժմ արդեն երկու՛ հիվանդ աչք էին մռայլորեն նայում բանտարկյալին։

— Կրկնում եմ, բայց վերջին անգամ, հերիք խելագար ձևանաս, ավազա՛կ,— ասաց Պիղատոսը մեղմ ու միալար,— քո ասածներից քիչ բան է գրված, բայց գրվածն էլ բավական է քեզ կախելու համար։

— Ոչ, ոչ, հեգեմոն,— ամբողջովին համակված համոզելու ցանկությամբ, ասաց բանտարկյալը,— մեկը կա, գնում-գալիս է այծի մագաղաթը ձեռքին ու շարունակ գրում է, գրում։ Սակայն մի անգամ նայեցի այդ մագաղաթին ու սարսափեցի։ Այնտեղ գրված բաներից բացարձակապես ոչ մեկը չեմ ասել։ Խնդրեցի նրան՝ ի սեր աստծո, այրիր քո այդ մագաղաթը։ Բայց նա խլեց ձեռքիցս ու փախավ։

— Ո՞վ է այդ մարդը,— խորշանքով հարցրեց Պիղատոսն ու ձեռքը դիպցրեց քունքին։

— Ղևի Մատթեոսը,— հոժարությամբ բացատրեց բանտարկյալը,— նա մաքսավոր էր, առաջին անգամ նրան հանդիպեցի Բեթփագեի ճանապարհին, այնտեղ, ուր թզենու այգի կա, ճամփեզրին, ու խոսքի բռնվեցինք։ Սկզբում անբարյացակամ վարվեց և նույնիսկ անպատվեց. այսինքն, կարծեց, թե անպատվում է՝ ինձ շուն կոչելով,— բանտարկյալն այստեղ քթի տակ ծիծաղեց,— անձամբ ես այդ կենդանու մեջ ոչ մի վատ բան չեմ տեսնում, որ վիրավորվեմ այդ խոսքից...

Քարտուղարն ընդհատեց արձանագրելն ու ծածուկ մի զարմացած հայացք նետեց, բայց ոչ բանտարկյալի, այլ կուսակալի վրա։

— ... Թեև ինձ լսելով, աստիճանաբար փափկեց,— շարունակեց Յեշուան,— ի վերջո, փողերը շպրտեց ճանապարհի մեջտեղն ու ասաց, որ գալիս է ինձ հետ ճամփորդելու...

Մերկացնելով դեղին ատամները, Պիղատոսը քմծիծաղ տվեց մի այտով և, ամբողջ իրանով քարտուղարի կողմը թեքվելով, ասաց.

— Ո՜վ Երշալայիմ քաղաք։ Ինչե՜ր ասես, չես լսի այստեղ։ Մաքսավորը փողերը շպրտել է ճանապարհի մեջտեղը, լսու՞մ ես։

Չիմանալով ինչ պատասխանել, քարտուղարը հարկ համարեց նույնպես ժպտալ։

— Իսկ նա ասաց, որ հետայսու փողն ատելի է դարձել իր համար,— բացատրեց Յեշուան Ղևի Մատթեոսի արտառոց արարքն ու ավելացրեց։— Եվ այդ օրից դարձավ իմ ուղեկիցը։

Դեռևս բերանը բաց, կուսակալը նայեց բանտարկյալին, ապա արևգակին, որ անշեղորեն վեր էր ելնում ներքևներում, դեպի աջ փռված ձիարշավարանի հեծյալ արձանների վրայով, ու հանկարծ մի նողկալի տառապանքով մտածեց, որ ամենահեշտ բանը կլիներ պատշգամբից վռնդել այս տարօրինակ ավազակին, սոսկ երկու բառ արտասանելով՝ «կախեք դրան»։ Վռնդել նաև պահակախմբին, պատշգամբից գնալ պալատի խորքը, հրամայել մթնեցնել սենյակը, փռվել մահճին, սառը ջուր պահանջել, աղիողորմ ձայնով կանչել Բանգա շանը, նրան բողոքել հեմիկրանիայից։ Եվ թույն խմելու `միտքը մեկեն հրապուրանքով առկայծեց կուսակալի հիվանդ գլխում։

Պղտորված աչքերով նա նայում էր բանտարկյալին ու որոշ ժամանակ լուռ էր, տանջանքով մտաբերելով, թե երշալայիմյան առավոտի անխնա արևի տակ իր դիմաց ինչու է կանգնել բանտարկյալը՝ ծեծից այլանդակված դեմքով, ու էլ ինչ հարցեր պիտի տա ինքը, որոնք պետք չեն և ոչ մեկին։

— Ղևի Մատթեո՞սը,— խռպոտ ձայնով հարցրեց հիվանդն ու փակեց աչքերը։

— Այո, Ղևի Մատթեոսը,— կուսակալի ականջին հասավ բարձր, իրեն տանջող ձայնը։

— Բայց և այնպես, տաճարի մասին ի՞նչ էիր ասում ամբոխին շուկայում։

Թվում էր, թե պատասխանողի ձայնը ծակում է Պիղատոսի քունքը, անասելի տանջանք պատճառում, և այդ ձայնն ասաց.

— Իգեմոն, ես խոսում էի այն մասին, որ կփլվի հին հավատի տաճարն ու կստեղծվի ճշմարտության նոր տաճար։ Այդպես ասացի, որ ավելի հասկանալի լինի։

— Թափառականի մեկը, իսկ ինչու՞ էիր շուկայում ժողովրդի մեջ խռովություն գցում, պատմելով ճշմարտության մասին, որից գաղափար չունես։ Ի՞նչ բան է ճշմարտությունը։

Եվ այստեղ կուսակալը մտածեց. «Ո՜վ իմ աստվածներ։ Բաներ եմ հարցնում նրանից, որոնք պետք չեն դատի ժամանակ... Խելքս ինձ չի ծառայում այլևս...» Ու կրկին նրա աչքին երևաց մուգ հեղուկով լի գավաթը։ «Թու՜յն տվեք ինձ, թու՜յն»։

Ու դարձյալ լսեց ձայնը։

— Ճշմարտությունն ամենից առաջ այն է, որ գլուխդ ցավում է և այնքան սաստիկ, որ փոքրոգությամբ մտածում ես մահվան մասին։ Դու ոչ միայն ինձ հետ խոսելու ուժ չունես, այլև դժվարանում ես նույնիսկ վրաս նայել։ Ու ես հիմա ակամա քո դահիճն եմ դառնում, ու դա ինձ վշտացնում է։ Դու նույնիսկ չես կարող որևէ բան մտածել ու սոսկ երազում ես, որ մոտդ գա քո շունը, ըստ երևույթին, միակ արարածը, ում հետ կապված ես։ Բայց տանջանքդ հիմա կվերջանա, գլխացավդ կանցնի։

Քարտուղարն աչքերը չռեց բանտարկյալի վրա ու կիսատ թողեց գրելիքը։

Պիղատոսը տանջահար աչքերը բարձրացրեց բանտարկյալի վրա ու տեսավ, որ արևն արդեն բավականաչափ վեր է ելել Ձիարշավարանի վրա, որ ճառագայթը սյունաշար է թափանցել ու մոտ է գալիս Յեշուայի ծամոված հողաթափերին և որ սա մի կողմ է քաշվում արևից։

Այդժամ կուսակալը ելավ բազկաթոռից, գլուխը սեղմեց ձեռքերով, ու նրա սափրած, դեղնավուն դեմքին սարսափ գծագրվեց։ Բայց նա իսկույն խեղդեց սարսափը կամքի ուժով և կրկին նստ ընկավ բազկաթոռի մեջ։

Իսկ այդ ընթացքում բանտարկյալը շարունակում էր իր խոսքը, բայց քարտուղարն այլևս ոչինչ չէր արձանագրում, միայն սագի պես վիզը ձգած՝ աշխատում էր ոչ մի բառ բաց չթողնել։

— Ըհը՜, ամեն ինչ վերջացավ,— խոսում էր բանտարկյալը, բարյացակամությամբ նայելով Պիղատոսին,— և ես չափազանց ուրախ եմ դրա համար։ Իգեմոն, խորհուրդ կտայի քեզ առժամանակ թողնել պալատը և ոտքով զբոսնել մոտերքում, մի որևէ տեղ, ասենք, թեկուզ, Ձիթենյաց լեռան այգիներում։ Ամպրոպը...— բանտարկյալը շրջվեց, աչքերը կկոցած, արևին նայելով,— ավելի ուշ կսկսվի, իրիկնադեմին։ Զբոսանքը շատ կօգներ քեզ, իսկ ես հաճույքով կուղեկցեի։ Նոր-նոր մտքեր եկան գլուխս, որոնք կարծում եմ, քեզ կհետաքրքրեն, ու ես սիրով մտքեր կփոխանակեի քեզ հետ, մանավանդ որ շատ խելոք մարդու տպավորություն ես թողնում։

Քարտուղարը մեռելի պես գունատվեց և ցած գցեց մագաղաթի գալարը։

— Ցավն այն է,— շարունակեց շղթայակապն, ու ոչ ոք չէր ընդհատում նրան,— որ խիստ ես գաղտնամիտ ու լիովին կորցրել ես հավատդ մարդկանց նկատմամբ։ Համաձայնիր, չի կարելի, չէ՞. մարդկային բոլոր հետաքրքրությունները շան հետ կապել։ Խղճուկ է կյանքդ, իգեմոն,— և այստեղ խոսողն իրեն թույլ տվեց ժպտալ։

Քարտուղարը հիմա լոկ մի բան էր մտածում՝ հավատա՞ իր ականջներին, թե՞ ոչ։ Ստիպված էր հավատալ։ Այդ ժամանակ փորձեց պատկերացնել, թե բանտարկյալի այդ անլուր հանդգնության առթիվ դյուրաբորբոք կուսակալի զայրույթը հատկապես ինչ արտառոց ձև կընդունի։ Եվ այդ մի բանը քարտուղարը պատկերացնել չէր կարող, թեև լավ ճանաչում էր կուսակալին։

Այդժամ հնչեց կուսակալի խզված, խռպոտ ձայնը.

— Ձեռքերն արձակեք,— ասաց լատիներեն։

Պահակախմբի լեգեոներներից մեկը նիզակը խփեց գետնին, հանձնեց մյուսին, մոտեցավ ու բանտարկյալի ձեռքերի կապը քանդեց։ Քարտուղարը գետնից բարձրացրեց գալարը, որոշեց առայժմ ոչինչ չարձանագրել ու ոչ մի բանի վրա չզարմանալ։

— Խոստովանիր,— ցածրաձայն հարցրեց Պիղատոսը հունարեն,— դու մեծ բժի՞շկ ես։

— Ոչ, կուսակալ, բժիշկ չեմ,— պատասխանեց բանտարկյալը, հաճույքով շփելով ճմլված և ուռած, կարմրած դաստակը։

Պիղատոսն աչքի պոչով, խստությամբ շաղափում էր բանտարկյալին հայացքով, և նրա աչքերն արդեն պղտորված չէին, երևացել էին բոլորին հայտնի կայծերը։

— Ես չհարցրեցի,— ասաց Պիղատոսը,— գուցե լատիներե՞ն էլ գիտես։

— Այո, գիտեմ,— պատասխանեց բանտարկյալը։

Պիղատոսի ընդնավուռ այտերը շառագունեցին, և նա հարցրեց լատիներեն։

— Ինչպե՞ս իմացար, որ ուզում եմ շանը կանչել։

— Շատ պարզ,— պատասխանեց բանտարկյալը լատիներեն,— ձեռքդ տարար օդի միջով,— բանտարկյալը կրկնեց Պիղատոսի շարժումը,— կարծես շոյել էիր ուզում, մեկ էլ՝ շրթունքներդ...

— Այո,— ասաց Պիղատոսը։

Լուռ էին, հետո Պիղատոսը հարց տվեց հունարեն.

— Ուրեմն, բժի՞շկ ես։

— Ոչ, ոչ,— փութով պատասխանեց բանտարկյալը,— հավատա ինձ, բժիշկ չեմ։

— Լավ, լավ։ Եթե ուզում ես գաղտնի պահել, պահիր։ Գործին ուղղակի առնչություն չունի դա։ Ուրեմն, պնդու՞մ ես, որ կոչ չես արել քանդել... կամ հրդեհել, կամ որևէ այլ եղանակով ոչնչացնել տաճարը։

— Իգեմոն, ոչ մեկին կոչ չեմ արել նման բաների, կրկնում եմ։ Մի՞թե ես նման եմ խելապակասի։

— Օ, ո՜չ, դու խելապակասի նման չես,— պատասխանեց կուսակալն ու մի տեսակ սարսափելի ժպտաց,— ուրեմն, երդվիր, որ այդպիսի բան չի եղել։

— Ինչո՞վ ես ուզում, որ երդվեմ,— չափազանց աշխուժացած հարցրեց շղթայազերծը։

— Ասենք, թեկուզ կյանքովդ,— պատասխանեց կուսակալը,— երդվելու ճիշտ ժամանակն է, քանի որ կյանքդ մազից է կախված, իմացիր։

— Իգեմոն, չլինի՞ մտածում ես, թե դու ես կախել մազից,— հարցրեց բանտարկյալը,— եթե այդպես է, ապա շատ ես սխալվում։

Պիղատոսը ցնցվեց և ատամների արանքից պատասխանեց.

— Ես կարող եմ կտրել այդ մազը։

— Այդտեղ էլ ես սխալվում,— լուսավոր ժպիտը դեմքին, ձեռքով արևից պաշտպանվելով, առարկեց բանտարկյալը,— համաձայնիր, որ մազը հաստատապես կարող է կտրել սոսկ նա, ով կախել է։

— Այո, այո,— ժպտալով ասաց Պիղատոսը,— հիմա չեմ կասկածում, որ անգործ ու բերանբաց մարդիկ Երշալայիմում կրնկակոխ հետևել են քեզ։ Չգիտեմ, թե լեզու՞դ ով է կախ տվել, բայց լավ է տվել։ Ի դեպ, ասա տեսնեմ, ճի՞շտ է, որ Երշալայիմ ես մտել Սուզայի դարպասով, էշը հեծած, խաժամուժ ամբոխով շրջապատված, որը ողջունել է քեզ իբրև ինչ-որ մարգարեի,— կուսակալն այստեղ մատնացույց արեց մագաղաթը։

Բանտարկյալը կուսակալին նայեց տարակուսանքով։

— Իգեմոն, ես էշ էլ չունեմ,— ասաց նա։— Երշալայիմ եմ եկել, իրոք, Սուզայի դարպասով, բայց ոտքով, ինձ ուղեկցում էր միայն Ղևի Մատթեոսը և իմ հասցեին որևիցե բան բացականչող մեկը չկար, քանի որ այն ժամանակ ինձ ոչ ոք չէր ճանաչում Երշալայիմ քաղաքում։

— Դու չե՞ս ճանաչում,— շարունակեց Պիղատոսը, բանտարկյալից չհեռացնելով հայացքը,— ոմն Դիսմասի, նաև Հեստասի կամ Բարրաբայի։

— Այդ բարի մարդկանց ես չեմ ճանաչում։

— Իրա՞վ։

— Իրավ։

— Իսկ հիմա ինձ ասա, ի՞նչ ես շարունակ օգտագործում այդ «բարի մարդիկ» բառերը։ Ինչ է, բոլորի՞ն ես այդպես կոչում։

— Բոլորին,— պատասխանեց բանտարկյալը,— աշխարհում չար մարդիկ չկան։

— Առաջին անգամ եմ լսում այդ մասին,— ասաց Պիղատոսը քմծիծաղով,— բայց գուցե վատ գիտեմ կյանքը։ Շարունակությունը կարող եք չգրառել,— դիմեց նա քարտուղարին, թեև վերջինս առանց այդ էլ ոչինչ չէր գրառում, ու շարունակեց խոսել բանտարկյալի հետ։— Որևիցե հունական գրքու՞մ ես կարդացել այդ մասին։

— Ոչ, իմ խելքով եմ հասել դրան։

— Ու դա՞ ես քարոզում։

— Այո։

— Իսկ օրինակ, հարյուրապետ Մարկոսը, նրան Առնետորս են կոչել, բարի՞ է։

— Այո,— պատասխանեց բանտարկյալը,— ճիշտ է, նա դժբախտ մարդ է։ Այն օրից ի վեր, երբ բարի մարդիկ այլանդակեցին նրան, դաժան ու խստասիրտ դարձավ։ Հետաքրքիր է, ո՞վ է խեղանդամել նրան։

— Հաճույքով կարող եմ հայտնել,— պատասխանեց Պիղատոսը,— քանզի վկա եմ եղել։ Բարի մարդիկ հարձակվեցին նրա վրա, ինչպես շներն են հարձակվում արջի վրա։ Գերմանները ճանկեցին նրա վիզը, կպան ձեռքերից, ոտքերից։ Հետևակ երկու հարյուրյակ ծուղակն ընկավ, և եթե հեծելավաշտը, որի հրամանատարը ես էի, չմխրճվեր աջ թևից, մեր փիլիսոփա, քեզ չէր վիճակվի Առնետորսի հետ խոսել։ Դա կատարվեց Իդիստավիզոյի ճակատամարտում, Կուսանաց Հովտում։

— Եթե խոսեի նրա հետ,— հանկարծ ասաց բանտարկյալն անրջանքով,— վստահ եմ, որ խիստ կփոխվեր։

— Ես կարծում եմ,— արձագանքեց Պիղատոսը,— որ լեգեոնի հրամանատարին նվազ հաճույք կպատճառեիր, եթե մտքովդ անցներ նրա սպաներից կամ զինվորներից որևէ մեկի հետ խոսել։ Ի դեպ, հօգուտ բոլորի, նման բան չի էլ կատարվի, և առաջինը ես կհոգամ այդ մասին։

Այդ ժամանակ մի ծիծեռնակ սլացիկ թռիչքով սյունաշար պատշգամբ մտավ, պտույտ գործեց ոսկեզօծ առաստաղի տակ, ցած ճախրեց և, սրածայր թևը համարյա քսելով որմնախորշի պղնձյա արձանի դեմքին, թաքնվեց սյան խոյակի ետևում։ Գուցե մտադրվեց բույն հյուսել այդտեղ։

Ծիծեռնակի թռիչքի ընթացքում կուսակալի՝ ներկայումս հստակ ու թեթևացած ուղեղում մի բանաձև գծագրվեց։ Հետևյալն էր. իգեմոնը քննեց Հա-Նոցրի մականվամբ թափառաշրջիկ փիլիսոփա Յեշուայի գործը և հանցակազմ չգտավ։ Մասնավորապես, նվազագույն կապ անգամ չգտավ Յեշուայի գործողությունների և Երշալայիմ քաղաքում վերջերս կատարված անկարգությունների միջև։ Պարզվեց, որ թափառաշրջիկ փիլիսոփան հոգեկան հիվանդ է։ Այդ իսկ պատճառով Փոքր ծերակույտի արձակած՝ Հա-Նոցրիի մահվան դատավճիռը կուսակալը չի հաստատում։ Բայց նկատի առնելով, որ Հա-Նոցրիի խելագար, ցնորական ճառերը կարող են հուզումների տեղիք տալ Երշալայիմ քաղաքում, կուսակալը Յեշուային արտաքսում է Երշալայիմից և բանտարկում Միջերկրածովյան Վերին Կեսարիայում, այսինքն հենց այնտեղ, ուր գտնվում է կուսակալի աթոռանիստը։

Մնում էր դա թելադրել քարտուղարին։

Ծիծեռնակի թևերը փռփռացին ճիշտ կուսակալի գլխավերևում, թռչունը սուրաց դեպի շատրվանի թասը, ապա թռավ հե-

ռայամ։ Կուսակալն աչքերը բարձրացրեց բանտարկյալի վրա ու տեսավ, որ նրա կողքին փոշե մի սյուն է հորձանում։

— Նրա մասին էլ բան չկա՞,— հարցրեց Պիղատոսը քարտուղարին։

— Ցավոք սրտի, կա,— անսպասելի պատասխանեց քարտուղարը և Պիղատոսին տվեց մագաղաթյա մեկ այլ թերթ։

— Ուրիշ է՞լ ինչ,— հարցրեց Պիղատոսն ու մռայլվեց։

Կարդալուց հետո նրա դեմքն ավելի մռայլվեց։ Մուգ արյունը խուժեց վզի ու դեմքի երակների մեջ, թե մեկ այլ բան կատարվեց, միայն թե նրա մաշկը կորցրեց դեղնությունը, կաս-կարմիր դարձավ, և աչքերն ասես փոս ընկան։

Հավանորեն, պատճառը դարձյալ արյունն էր, որ խուժել էր քունքերն ու բաբախում էր, միայն թե կուսակալի տեսողության հետ ինչ-որ բան կատարվեց։ Այսպես, նրան թվաց, թե բանտարկյալի գլուխը պոկվեց ու լողաց հեռուները և տեղը մեկ այլ գլուխ հայտնվեց։ Այդ ճաղատ գլխին ոսկյա նոսրատամ պսակ էր դրված, ճակատին կլոր, քուքայատ մի խոց կար, որը քայքայել էր մաշկը, անատամ, ներս ընկած բերան, քմահաճ ու կախված ներքևի շրթունք։ Պիղատոսին թվաց, թե պատշգամբի վարդագույն սյուներն ու Երշալայիմի կտուրները չքացան հեռվում՝ այգուց ներքև, և շուրջբոլորը թաղվեց կապրիական այգիների խիտ կանաչների մեջ։ Լսողության հետ նույնպես մի տարօրինակ բան կատարվեց. ասես հեռուներում շեփորներ հնչեցին՝ ոչ բարձր ու ահեղաձայն, և շատ պարզորոշ լսվեց բառերը գոռոզաբար ձգող, ռնգային ձայնը. «Օրենք նորին մեծությանը վիրավորելու մասին...»

Կցկտուր, շփոթ ու անսովոր մտքեր խռնվեցին. «Կործանվե՜ց», ապա՝ «Կործանվեցի՜նք...» Եվ այդ բոլորի հետ լիովին անհեթեթ մի միտք՝ պարտադրաբար, անառարկելիորեն ինչ-որ անմահության մասին,— այն էլ ու՞մ հետ,— ընդ որում անմահությունը չգիտես ինչու անպատմելի տրտմություն էր հարուցում։

Պիղատոսը լարվեց, իրենից վանեց տեսիլքը, հայացքը պատշգամբ բերեց, ու նրա դիմաց վերստին հայտնվեցին բանտարկյալի աչքերը։

— Լսիր, Հա-Նոցրի,— սկսեց կուսակալը, ցեշուային նայելով մի տեսակ տարօրինակ. կուսակալի դեմքն ահեղ էր, բայց աչքերը լի էին տագնապով,— երբևիցե դու որևէ բան ասե՞լ ես մեծն կեսարի մասին։ Պատասխանի՛ր։ Ասե՞լ ես... Թե՞...

չես ասել։— Պիղատոսը փոքր-ինչ ավելի ձգեց «չես» բառը, քան դա սահմանված է դատարանում և հայացքով Յեշուային հղեց ինչ-որ միտք, որ այնքան կուզենար ներշնչել բանտարկյալին։

— Ճշմարտությունն ասելը դյուրին է և հաճելի,— նկատեց բանտարկյալը։

— Ինձ պետք չէ գիտնալ՝ քեզ հաճելի՞, թե տհաճ է ճշմարտությունն ասելը,— չարացած ու խլաձայն պատասխանեց Պիղատոսը։— Սակայն ստիպված կլինես ասել։ Բայց խոսելիս յուրաքանչյուր բառդ ծանրութեթև արա, եթե ոչ միայն անխուսափելի, այլ նաև տանջալի մահ չես կամենում։

Ոչ ոք չգիտե, թե ինչ կատարվեց Հրեաստանի կուսակալի հետ, բայց նա իրեն թույլ տվեց բարձրացնել ձեռքը, իբր արևի ճառագայթից պաշտպանվելու համար, և այդ ձեռքի տակից, ասես վահանի տակից, բանտարկյալին ինչ-որ բան ակնարկող հայացք հղել։

— Եվ այսպես,— ասաց նա,— պատասխանիր, ճանաչու՞մ ես դու ոմն Հուդա Իսկարիովտացու, և հատկապես ի՞նչ ես ասել նրան, եթե ասել ես, կեսարի մասին։

— Բանն այսպես է եղել,— հաճույքով սկսեց պատմել բանտարկյալը,— երեկ չէ անցյալ օրը, երեկոյան, տաճարի մոտ ծանոթացա մի երիտասարդի հետ, որն իրեն կոչեց Հուդա, Իսկարիովտ քաղաքի բնակիչ։ Ինձ իր տուն հրավիրեց, որը Ստորին Քաղաքում է և հյուրասիրեց…

— Բարի՞ մարդ է,— հարցրեց Պիղատոսը, և դիվական կրակ ցոլցլաց նրա աչքերի մեջ։

— Շատ բարի և հետաքրքրասեր մարդ է,— հաստատեց բանտարկյալը,— մեծագույն հետաքրքրություն դրսևորեց իմ մտքերի նկատմամբ, չափազանց սրտաբաց ընդունեց ինձ…

— Կանթեղներ վառեց…— ատամների արանքից, բանտարկյալի տոնով ասաց Պիղատոսը, և նրա աչքերն այդ ժամանակ կայծկլտում էին։

— Այո,— կուսակալի տեղյակությամբ թեթևակի զարմացած, շարունակեց Յեշուան,— խնդրեց, որ տեսակետներս շարադրեմ պետական իշխանության մասին։ Այդ հարցը նրան արտակարգ էր հետաքրքրում։

— Եվ ի՞նչ ասացիր,— հարցրեց Պիղատոսը,— թե՞ կպատաս-

խանես, որ մոռացել ես ասածներդ,— բայց Պիղատոսի ձայնի մեջ անհուսություն կար։

— Ի թիվս այլ բաների, ես ասացի,— պատմում էր բանտարկյալը,— որ ամենայն իշխանություն բռնություն է մարդկանց վրա և որ կգա ժամանակը, երբ չի լինի ոչ կեսարների իշխանություն, ոչ որևիցե այլ իշխանություն։ Մարդը մուտք կգործի ճշմարտության և արդարության թագավորություն, ուր ընդհանրապես ոչ մի իշխանություն անհրաժեշտ չի լինի։

— Հետո՞։

— Հետո էլ ոչինչ,— ասաց բանտարկյալը,— այդ ժամանակ ներս վազեցին մարդիկ, ինձ կապկպեցին և տարան բանտ։

Աշխատելով ոչ մի բառ բաց չթողնել, քարտուղարն արագ-արագ գրում էր մագաղաթի վրա։

— Աշխարհում առավել մեծ և մարդկանց համար առավել հիանալի իշխանություն չի եղել, չկա և երբեք չի լինի, քան Տիբերիոս կայսեր իշխանությունն է,— Պիղատոսի խզված ու հիվանդ ձայնն ուժգնացավ։

Զգիտես ինչու, կուսակալն ատելությամբ էր նայում քարտուղարին ու պահակախմբին։

— Եվ դու՛ չէ, որ պետք է դատես այդ մասին, ցնդած ոճրագործ։— Այստեղ Պիղատոսը բղավեց.— Պահակախումբը դու՛րս տարեք պատշգամբից։— Ու շրջվելով դեպի քարտուղարը, ավելացրեց.— Ինձ մենակ թողեք հանցագործի հետ, սա պետական գործ է։

Պահակախումբը բարձրացրեց նիզակները և, հավասարաչափ դոփելով պայտած մույկերով, պատշգամբից այգի հեռացավ, պահակախմբից հետո դուրս եկավ նաև քարտուղարը։

Պատշգամբի լռությունը որոշ ժամանակ խախտում էր միայն շատրվանի ջրի երգը։ Պիղատոսը տեսավ, թե խողովակի վրա ինչպես է փքվում ջրեղեն ափսեն, թե ինչպես են պոկվում դրա եզրերը, թափվում շիթ առ շիթ։

Առաջինը բանտարկյալը խոսեց.

— Տեսնում եմ՝ ինչ-որ դժբախտություն է պատահել այն պատճառով, որ խոսել եմ իսկարիովտացի այդ պատանու հետ։ Իգեմոն, կանխազգում եմ, որ նրա գլխին փորձանք պիտի գա, և շատ եմ խղճում նրան։

— Ես կարծում եմ,— տարօրինակ քմծիծաղով պատասխանեց կուսակալը,— աշխարհում էլի ինչ-որ մեկը կա, ում հարկ

է, որ ավելի խղճալի, քան Հուդա Իսկարիովտացին, և ում ավելի վատթարն է վիճակված, քան Հուդային։ Ուրեմն, Մարկոս Առնետորսը՝ սառնարյուն ու երդվյալ դահիճը, այն մարդիկ, որոնք ինչպես տեսնում եմ,— կուսակալը ցույց տվեց Յեշուայի այլանդակված դեմքը,— քեզ ծեծել են քարոզներիդ համար, Դիսմաս և Հեստաս ավազակները, որոնք իրենց նմանների հետ չորս զինվոր են սպանել և ի վերջո, կեղտոտ դավաճան Հուդան՝ այս բոլորը բարի՞ մարդիկ են։

— Այո,— պատասխանեց բանտարկյալը։

— Ու կգա՞ ճշմարտության թագավորությունը։

— Կգա, իգեմոն,— համոզված պատասխանեց Յեշուան։

— Երբե՛ք չի գա,— հանկարծ բղավեց Պիղատոսն այնպիսի զարհուրելի ձայնով, որ Յեշուան ետ-ետ գնաց։ Շատ տարիներ առաջ Կուսանաց հովտում Պիղատոսն այդպես էր բղավում իր ձիավորների վրա. «Կոտորի՛ր դրանց։ Կոտորի՛ր դրանց։ Առնետորս Հսկան գերի՛ է ընկել»։ Նա ավելի բարձրացրեց հրամաններ արձակելուց խզված ձայնը, բղավելով այնպես, որ բառերը լսվեն այգում.— Հանցագո՛րծ։ Հանցագո՛րծ։ Հանցագո՛րծ։

Իսկ հետո, ձայնը ցածրացնելով, հարցրեց.

— Յեշուա Հա-Նոցրի, հավատո՞ւմ ես արդյոք որևիցե աստծու։

— Աստված մեկ է,— պատասխանեց Յեշուան,— նրան եմ հավատում։

— Ուրեմն, աղոթի՛ր նրան։ Լա՛վ աղոթիր։ Թեև,— Պիղատոսի ձայնն այստեղ խզվեց,— դա չի օգնի։ Կին չունե՞ս,— չգիտես ինչու, տրտմագին հարցրեց Պիղատոսը, չհասկանալով, թե ինչ է կատարվում իր հետ։

— Չէ, մենակ եմ։

— Ատելի՜ քաղաք,— հայտնի չէ թե ինչու հանկարծ մրմնջաց կուսակալը և ցնցեց ուսերը, ասես մրսեց, և շփեց ձեռքերը, ասես լվաց,— եթե քեզ սրախողխող անեին նախքան Հուդա Իսկարիովտացու հետ հանդիպելդ, իրոք, դա ավելի լավ կլիներ։

— Իգեմոն, գուցե ինձ ազատ արձակեիր,— անսպասելի խնդրեց բանտարկյալը, և տագնապ հաղորդվեց նրա ձայնին,— տեսնում եմ, ինձ սպանել են ուզում։

Պիղատոսի դեմքը ջղաձգվեց, նա Յեշուայի վրա հառեց աչքերի՝ բորբոքված, կարմիր անոթներով պատած սպիտակուցները և ասաց.

— Թշվառական, կարծում ես, թե հռոմեական կուսակալը

ազատ կարծակի մի մարդու, որն ասաց այն, ինչ դու՞ ասացիր։ Ո՜վ աստվածներ, աստվածներ։ Թե՞ մտածում ես, որ պատրաստ եմ քո տե՞ղը գրավել։ Համամիտ չե՜մ քեզ։ Ու լսիր ինձ. Եթե այս պահից թեկուզ մեկ բառ արտասանես, խոսքի բռնվես մեկ-նումեկի հետ, զգուշացի՜ր ինձնից։ Կրկնում եմ՝ զգուշացի՜ր։

— Իգեմոն...

— Լռի՛ր,— բղավեց Պիղատոսը և կատաղի հայացքով հե-տևեց ծիծեռնակին, որը կրկին պատշգամբ էր մտել,— այստե՛ղ եկեք,— բղավեց Պիղատոսը։

Եվ երբ քարտուղարն ու պահակախումբը վերադարձան իրենց տեղերը, Պիղատոսը հայտարարեց, որ հաստատում է Փոքր ծե-րակույտի ժողովում արձակված Յեշուա Հա-Նոցրիի մահվան դատավճիռը, և քարտուղարն արձանագրեց Պիղատոսի ասածը։

Մեկ րոպե անց կուսակալի դիմաց կանգնած էր Մարկոս Առ-նետորսը։ Կուսակալը նրան հրամայեց բանտարկյալին հանձնել գաղտնի ծառայության պետին, միաժամանակ հայտնել կուսա-կալի կարգադրությունը, որպեսզի գաղտնի ծառայության անձնա-կազմին ծանրագույն պատժի սպառնալիքի տակ արգելվի որևէ բանի մասին խոսել Յեշուայի հետ կամ պատասխանել նրա որե-վիցե հարցին։

Մարկոսի նշանով պահակախումբը շրջապատեց Յեշուային և դուրս տարավ նրան պատշգամբից։

Ապա կուսակալի դիմաց կանգնեց բարեկազմ, շիկամորուս, գեղեցկատես մի տղամարդ, որի կրծքին առյուծի մռութներ էին փայլփլում, սաղավարտի կատարին արծվի փետուրներ կային, ոսկյա գամեր՝ սուսերակալին, երեքտակ ներբաններով կոշիկների կաշվե երիզները կապված էին մինչև ծնկները, արնագույն թիկ-նոցը գցել էր ձախ ուսին։ Լեգեոնի հրամանատարն էր՝ լեգատը։ Կուսակալը նրանից հարցրեց, թե հիմա որտեղ է սեբաստական կոհորտան։ Լեգատը հայտնեց, որ սեբաստացիները շրջափակել են ձիարշավարանի դիմացի հրապարակը, որտեղ ժողովրդին պի-տի հայտարարվի հանցագործների դատավճիռը։

Այդժամ կուսակալը կարգադրեց, որ լեգատը հռոմեական կոհորտայից երկու հարյուրյակ առանձնացնի։ Դրանցից մե-կը, Առնետորսի հրամանատարությամբ, պետք է ուղեկցի հան-ցագործներին, մահապատժի հարմարանքներով բեռնված սայ-լերն ու դահիճներին՝ դեպի Լերկ Լեռ, իսկ տեղ հասնելուն պես միանա վերին շրջափակմանը։ Մյուս հարյուրյակը հենց հիմա

պիտի ուղարկվի Լերկ Լեռ և անհապաղ սկսի շրջափակումը։ Միևնույն, այսինքն Լեռը պաշտպանելու նպատակով կուսակալը լեգատին խնդրեց օժանդակ հեծելագունդ ուղարկել՝ սիրիական մի ալա։

Երբ լեգատը հեռացավ պատշգամբից, կուսակալը քարտուղարին հրամայեց պալատ հրավիրել ծերակույտի նախագահին, երկու անդամների և Երշալայիմի տաճարային պահակախմբի պետին, բայց ավելացրեց նաև, որ խնդրում է այնպես հարմարեցնել, որպեսզի մինչ խորհրդակցությունն այդ բոլորի հետ, ինքը կարողանա նախագահի հետ խոսել ավելի շուտ ու առանձին։

Կուսակալի հրամանները կատարվեցին արագ ու ճշգրիտ, և արևը, որ այդ օրերին մի արտակարգ մոլեգնությամբ էր խանձում Երշալայիմը, դեռ չէր հասցրել մոտենալ իր բարձրագույն կետին, երբ այգու տափարակում, սանդուղքները պահպանող մարմարյա երկու սպիտակ առյուծների մոտ հանդիպեցին կուսակալը և ծերակույտի նախագահի պարտականությունները կատարող հրեական քահանայապետ Հովսեփ Կայիափան։

Այգում լռություն էր։ Բայց սյունաշարի տակից ելնելով արևվողող այգու վերին տափարակը, ուր արմավենիներն էին՝ հրեշավոր փղոտների վրա, տափարակը, որտեղից կուսակալի առջև փռվեց նրա համար ատելի այդ ամբողջ քաղաքը՝ իր կախովի կամուրջներով, ամրոցներով ու, ամենագլխավորը, Երշալայիմյան տաճարով, որ աննկարագրելի անճոռնի, մարմարյա մի կույտ էր, տանիքի փոխարեն թևավոր վիշապի ոսկյա թեփուկներով, կուսակալը սուր լսողությամբ հեռվում, ներքևներում, այնտեղ, ուր քարե պարիսպը պալատական այգու ստորին սանդղեվանդներն էր բաժանում քաղաքային հրապարակից, խլածայն բոռոց որսաց, որից վեր մեկ-մեկ թույլ ու նվաղ, ոչ այն է տնքոցներ, ոչ այն է բղավոցներ էին հնչում։

Կուսակալը հասկացավ, որ այնտեղ՝ հրապարակում, արդեն հավաքվել է վերջին անկարգություններով խռովված երշալայիմցիների անհամար ամբոխը, որ այդ ամբոխն անհամբերությամբ սպասում է դատավճռի արձակմանը, և որ այդ ամբոխի մեջ բղավում են անդադրում ջրավաճառները։

Կուսակալն սկսեց նրանից, որ քահանայապետին պատշգամբ հրավիրեց, որպեսզի պատսպարվեն անողոք տապից, բայց Կայիափան քաղաքավարությամբ ներողություն խնդրեց ու բացատրեց, որ չի կարող դա անել։ Պիղատոսը կնգուղը քաշեց ատի-

ճանապար մազաթափ լինող գլխին ու սկսեց խոսակցությունը։ Հունարեն էին խոսում։

Պիղատոսն ասաց, որ ինքը քննել է Ցեշուա Հա-Նոցրիի գործը և հաստատել մահվան դատավճիռը։

Այսպիսով, այսօր կայանալիք մահապատժին դատապարտված են երեք ավազակներ՝ Դիսմասը, Հեստասը, Բարրաբան, նրանցից բացի նաև այդ Ցեշուա Հա-Նոցրին։ Առաջին երկուսը, որոնք մտադրվել են ժողովրդին հրահրել հակակեսարական խռովության, կալվել են ձերբակալվել հռոմեական իշխանության կողմից, հետևաբար նրանց մասին այստեղ խոսք չի լինի։ Իսկ մյուս երկուսը՝ Բարրաբան և Հա-Նոցրին, ձերբակալվել են տեղական իշխանության կողմից և դատապարտել է նրանց Փոքր ծերակույտը։ Համաձայն օրենքի, համաձայն սովորության, երկու հանցագործներից մեկին հարկ կլինի ազատ արձակել ի պատիվ այսօր սկսվող մեծ զատկի տոնի։

Այսպիսով, կուսակալը ցանկանում է իմանալ, թե երկու հանցագործներից որ մեկին է մտադիր ազատել ծերակույտը՝ Բարրաբայի՞ն, թե Հա-Նոցրիին։ Կայիափան գլուխը խոնարհեց ի նշան այն բանի, որ հարցը պարզ է, ու պատասխանեց.

— Ծերակույտը խնդրում է ազատ արձակել Բարրաբային։

Կուսակալը լավ գիտեր, որ քահանայապետը հենց այդպես պիտի պատասխանի, բայց նրա խնդիրն այն էր, որ ցույց տա, թե նման պատասխանն իր զարմանքն է հարուցում։

Պիղատոսն այդ արեց մեծ վարպետությամբ։ Հոնքերը բարձրացան գոռոզ դեմքի վրա, կուսակալն ակնդետ, զարմանքով զննեց քահանայապետին։

— Խոստովանում եմ, այդ պատասխանն ինձ զարմացրեց,— մեղմաձայն սկսեց կուսակալը,— վախենամ, թե թյուրիմացություն կա այստեղ։

Պիղատոսը բացատրում էր։ Հռոմեական իշխանությունը նվազագույնս չի բռնանում տեղական հոգևոր իշխանության իրավունքների վրա, ինչ քաջ հայտնի է քահանայապետին, բայց տվյալ դեպքում բացահայտ սխալն առկա է։ Եվ այդ սխալը շտկելու հարցում հռոմեական իշխանությունն, անշուշտ, շահագրգռված է։

Իրոք, իրենց ծանրությամբ լիովին անհամեմատելի են Բարրաբայի և Հա-Նոցրիի հանցանքները։ Եթե երկրորդը՝ բացահայտ խելագար մի մարդ, մեղավոր է անհեթեթ ճառեր ար-

տապանելում, որոնք Երշալաիմում և մի քանի այլ վայրերում խռովություն են գցել ժողովրդի մեջ, ապա առաջինի մեղքը շատ ավելի ծանր է։ Բավական չէ, որ նա խռովության ուղղակի կոչեր է թույլ տվել իրեն, նաև սպանել է պահակախմբի զինվորներից մեկին, երբ փորձել են ձերբակալել նրան։ Բարրաբան շատ ավելի վտանգավոր է, քան Հա-Նոցրին։

Ելնելով վերը շարադրածից, կուսակալը խնդրում է քահանայապետին վերանայել վճիռը և ազատ արձակել երկու դատապարտյալներից նրան, ով ավելի քիչ վտանգավոր է, որպիսին Հա-Նոցրին է անկասկած։ Այսպիսո՞վ։

Կայիափան ուղիղ Պիղատոսի աչքերին նայեց և մեղմ, բայց հաստատ ձայնով ասաց, որ ծերակույտն ուշի-ուշով է ծանոթացել գործին ու երկրորդ անգամ է հայտնում, որ մտադիր է ազատել Բարրաբային։

— Ինչպե՞ս։ Նույնիսկ իմ երաշխավորությունի՞ց հետո։ Այն մարդու երաշխավորությունից, որի ձայնով հռոմեական իշխանությու՞նն է խոսում։ Քահանայապետ, կրկնիր երրորդ անգամ։

— Եվ երրորդ անգամ հայտնում ենք, որ Բարրաբային ենք ազատում,— մեղմաձայն ասաց Կայիափան։

Ամեն ինչ վերջացած էր, ու այլևս խոսելիք չկար։ Հա-Նոցրին հեռանում էր առհավետ, և կուսակալի ահավոր, դաժան ցավերն ապաքինող մեկը չկար, դրանցից ճար չկար, մահից բացի։ Սակայն հիմա Պիղատոսին այդ միտքը չզարմացրեց։ Անհասկանալի նույն թախիծը, որ պարուրել էր նրան արդեն պատշգամբում, թափանցեց ամբողջ էությունը։ Անմիջապես ջանաց բացատրել դա, և տարօրինակ էր բացատրությունը. մի տարտամ զգացում ուներ կուսակալը, որ դատապարտյալի հետ խոսելիս ինչ-որ բան մինչև վերջ չի ասել, գուցե չի լսել ինչ-որ բան։

Պիղատոսը վանեց այդ միտքը, որն ինչպես գլուխն էր մտել ակնթարթորեն, այդպես էլ չքացավ։ Չքացավ միտքը, իսկ թախիծը մնաց անբացատրելի, որովհետև հո չէր կարող դա բացատրել կայծակի պես փայլատակած և տեղնուտեղը մարած մեկ ուրիշ կարճ միտք. «Անմահություն... եկավ անմահությունը...»։ Ո՞ւմ անմահությունը եկավ։ Դա չհասկացավ կուսակալը, բայց հանելուկային անմահության այդ միտքը ստիպեց նրան սառչել արևայրեաց տեղում։

— Լավ,— ասաց Պիղատոսը,— թող այդպես լինի։

Այստեղ նա շուրջը նայեց, հայացքը տարավ տեսադաշտի

ընկած աշխարհի վրայով ու զարմացավ կատարված փոփոխություններից։ Անհետացավ վարդերով ծանրաբեռնված թուփը, անհետացան վերին սանդղավանդը եզերող նռնենիներն ու նռնենին, և ճերմակ արձանը կանաչի մեջ, նաև՝ կանաչը։ Այդ ամենի փոխարեն բոսորագույն մի խյուս լողաց, ջրիմուռներ ծածանվեցին դրա մեջ, ու շարժվեց խյուսն ինչ-որ տեղ, դրանց հետ միասին շարժվեց և ինքը՝ Պիղատոսը։ Հիմա նրան տանում էր ամենասարսափելի զայրույթը, անզորության զայրույթն էր տանում՝ խեղդելով ու դաղելով։

— Նեղվո՞ւմ եմ ես,— արտաբերեց Պիղատոսը,— նեղվո՛ւմ։ Խոնավ, սառը ձեռքով պոկեց թիկնոցի օձիքի ճարմանդը, և թիկնոցն ընկավ ավազին։

— Տոթ է այսօր, ամպրոպ կա մոտերքում,— պատասխանեց Կայիափան, աչքերը չկտրելով կուսակալի կարմրատակած դեմքից ու կանխազգալով բոլոր տառապանքները, որոնք դեռ սպասվում էին։ «Օ՜, ինչ սարսափելի ամիս էր այս տարվա նիսանը»։

— Ոչ,— ասաց Պիղատոսը,— տոթից չեմ նեղվում, այլ քեզ հետ միասին լինելուց, Կայիափա,— և ժպտաց Պիղատոսը՝ աչքերը կկոցելով ու ավելացրեց.— Պահպանիր քեզ, քահանայապետ։

Քահանայապետի մուգ աչքերը փայլեցին, և իր դեմքին զարմանք գծագրեց նա, ոչ ավելի վատ, քան կուսակալը քիչ առաջ։

— Ինչե՞ր եմ լսում, կուսակալ,— հպարտ ու հանգիստ պատասխանեց Կայիափան,— դու սպառնում ես ինձ՝ կայացրած դատավճռից հետո, որն ի՞նքդ ես հաստատել։ Լինելու՞ բան է։ Մենք վարժվել ենք, որ հռոմեական կուսակալը որևէ բան ասելուց առաջ ծանրութեթև է անում բառերը։ Մեկնումեկը մեզ չլսի՞, իգեմոն։

Պիղատոսն անկենդան աչքերով նայեց քահանայապետին և, ատամները մերկացնելով, ձևացրեց, թե ժպտում է։

— Ի՜նչ ես ասում, քահանայապետ։ Ո՞վ կարող է հիմա մեզ լսել այստեղ։ Մի՞թե ես նման եմ պատանի այն թափառական կրոնախելին, որին այսօր մահապատժի են ենթարկելու։ Ես հո երեխա չե՞մ, Կայիափա։ Գիտեմ, թե ինչ եմ ասում և որտեղ եմ ասում։ Շրջափակված է այգին, շրջափակված է պալատը, այնպես որ մուկն անգամ ճեղք չի գտնի ներս խցկվելու։ Ոչ միայն մուկը, նույնիսկ նա էլ չի կարող սողոսկել, ինչ էր անունը...

*Խաչարբավառացի՛ն։ Ի դեպ, քահանայապետ, ճանաչո՞ւմ ես նրան։ Այո... Եթե այստեղ մտներ, դառնորեն կողջար դրա համար, իհարկե, հավատացա՞ծ ես։ Ուրեմն, իմացած եղիր, որ այսուհետ հանգիստ չես ունենա, քահանայապետ։ Ո՛չ դու, ո՛չ քո ժողովուրդը,— և Պիղատոսը մատնացույց արեց հեռուն, դեպի աջ, այնտեղ, ուր բարձունքի վրա հուրհրատում էր տաճարը,— այդ ե՛ս եմ քեզ ասում՝ Պիղատոս Պոնտացիս, Ոսկենիզակ հեծյալս։*

*— Գիտեմ, գիտեմ,— աներկյուղ պատասխանեց սևամորուս Կայիափան, ու նրա աչքերը փայլատակեցին։ Նա ձեռքերը երկինք կարկառեց ու շարունակեց.— Հրեա ժողովուրդը գիտե, որ ատում ես նրան կատաղի ատելությամբ և շատ տանջանքներ ես նրան պատճառելու, բայց չե՛ս կործանի ամենևին։ Աստված կպաշտպանի։ Ամենազոր կեսարը կլսի՛, կլսի՛ մեզ, կփրկի՛ մեզ բնաջնջող Պիղատոսից։*

*— Օ՜, ո՛չ,— պատասխանեց Պիղատոսը, ամեն բառի հետ թեթևացում, թեթևացում զգալով. այլևս ձևանալու հարկ չկար, բառեր ընտրելու հարկ չկար։— Շա՜տ-շատ ես բողոքել կեսարին ինձնից, և հիմա եկել է ի՛մ ժամը, Կայիափա։ Հիմա լուրն ինձնի՛ց կգնա, այն էլ ոչ թե Անտիոք՝ փոխարքային, ոչ թե Հռոմ, այլ ուղիղ Կապրի, կայսրին՝ անձամբ, լուրն այն մասին, թե ակնհայտ խռովարարներին ինչպես եք մահից փրկում Երշալայիմ քաղաքում։ Ու Երշալայիմը կողողեմ ո՛չ Սողոմոնի լճի ջրով, ինչպես ուզում էի անել ձեր օգտին։ Ո՜չ, ո՛չ ջրով։ Հիշիր, թե ինչպես ձեր պատճառով ստիպված էի հանել կայսերական անվանակիր վահանները պատերից, տեղաշարժել զորքերը, ստիպված էի անձամբ գալ ու տեսնել, թե ինչե՛ր են կատարվում այստեղ։ Հիշիր իմ խոսքը, քահանայապե՛տ։ Ոչ մեկ, ոչ էլ երկու կոհորտա կտեսնես դու Երշալայիմում, չէ՜։ Քաղաքի պատերի տակ կկանգնի Ֆուլմինատի լեգեոնը՝ լրիվ արաբական այրուձին կմոտենա, այն ժամանակ դառնագի լաց ու հեկեկո՜ց կլսես։ Այն ժամանա՛կ կհիշես փրկված Բարրաբային ու կզղջաս, որ մահվան ուղարկեցիր խաղաղ քարոզներ անող փիլիսոփային։*

*Քահանայապետի դեմքը բծերով պատվեց, աչքերը կրակվում էին։ Ժպտաց կուսակալի պես՝ ատամները մերկացրած, և պատասխանեց.*

*— Կուսակալ, հավատո՞ւմ ես հիմա ինքդ քո ասածին։ Չէ՜, չե՛ս հավատում։ Ժողովրդին խռովողը խաղաղությու՛ն չէր բերում Երշալայիմ, չէ՜, և դու, հեծյալ, շատ լավ ես հասկանում։*

Դու ուզում էիր նրան ազատ արձակել, որպեսզի նա ըմբոստացներ ժողովրդին, հավատն անարգեր ու հռոմեական թրերի տակ քաշեր ժողովրդին։ Բայց ես, հրեից քահանայապետս, քանի դեռ կենդանի եմ, չեմ թողնի, որ հավատն անարգեն ու կպաշտպանեմ ժողովրդին։ Լսո՞ւմ ես, Պիղատո՛ս։— Եվ այստեղ Կայիափան սպառնանքով բարձրացրեց ձեռքը։— Ակա՛նջ դիր, կուսակալ։

Կայիափան լռեց, և կուսակալը նորից կարծես ծովի աղմուկ լսեց, որն ալիքվում-հասնում էր Հերովդես Մեծի այգու պարիսպներին։ Այդ աղմուկը բարձրանում էր ներքևից, քսվում կուսակալի ոտքերին, ապա՝ դեմքին։ Իսկ նրա ետևում, պալատի երկու թևերից այն կողմ հնչում էին տագնապի շեփորականչեր, հարյուրավոր ոտքերի ծանր դոփյուն, երկաթի շաչյուն. կուսակալը հասկացավ, որ հռոմեական հետևակը, իր հրամանի համաձայն, արդեն շարժվում է հասնելու խռովարարներին ու ավազակներին սարսափեցնող մինչմահու շքերթին։

— Լսո՞ւմ ես, կուսակալ,— ցածրաձայն կրկնեց քահանայապետը,— մի՞թե կասես, որ այս ամենը,— քահանայապետն այստեղ բարձրացրեց երկու ձեռքերը, և մուգ կնգուղն ընկավ Կայիափայի գլխից,— ողորմելի ավազակ Բարաբան է հարուցել։

Դաստակի հակառակ կողմով կուսակալը սրբեց թաց ու սառը ճակատը, նայեց գետնին, ապա, աչքերը կկոցած՝ երկնքին, տեսավ, որ հրաշեկ գունդը համարյա ճիշտ գլխավերևում է, իսկ Կայիափայի ստվերը կծկվել է առյուծի պոչի մոտ, և ասաց մեղմաձայն ու անտարբեր.

— Օրը ճաշ է դառնում։ Մենք տարվեցինք զրույցով, այնինչ պետք է շարունակել։

Նրբակիրթ դարձվածքներով ներողություն խնդրելով քահանայապետից, հրավիրեց նրան նստել նստարանին, մագնոլիայի ստվերում ու սպասել, մինչև որ ինքը կկանչի վերջին կարճ խորհրդակցությանն անհրաժեշտ մնացած անձանց ու մահապատժին առնչվող մի կարգադրություն ևս կանի։

Կայիափան, ձեռքը սրտին դրած, խոնարհվեց քաղաքավարությամբ ու մնաց այգում, իսկ Պիղատոսը պատշգամբ վերադարձավ։ Այնտեղ իրեն սպասող քարտուղարին հրամայեց այգի հրավիրել լեգեոնի լեգատին, կոհորտայի տրիբունին, ինչպես նաև Փոքր ծերակույտի երկու անդամներին և տաճարային պա-

հակախմբի պետին, որոնք սպասում էին այգու ստորին հաջորդ սանդղեվանդում, շատրվանով կլոր տաղավարում։ Պիղատոսն ավելացրեց, որ ինքը ևս շուտով կգա, ու գնաց պալատի խորքը։

Մինչ քարտուղարը կհավաքեր խորհրդակցության մասնակիցներին, մուգ վարագույրներով արևից ստվերված սենյակում կուսակալը հանդիպեց մի մարդու հետ, որի դեմքը կիսով չափ ծածկված էր կնգուղով, թեև արևի ճառագայթներն այդ սենյակում չէին կարող նրան անհանգստացնել։ Ջափազանց կարճ տևեց այդ հանդիպումը։ Կուսակալը ցածրաձայն մի քանի բառ ասաց այդ մարդուն, որից հետո նա հեռացավ, իսկ Պիղատոսը սյունաշար պատշգամբով այգի գնաց։

Այնտեղ, բոլոր նրանց ներկայությամբ, ում կամենում էր տեսնել, կուսակալը չոր ու հանդիսավոր հաստատեց, որ վավերացնում է Յեշուա Հա-Նոցրիի մահվան դատավճիռը և պաշտոնապես տեղեկացավ Փոքր ծերակույտի անդամներից, թե հանցագործներից որին են բարեհաճում կենդանի թողնել։ Ստանալով պատասխանը՝ Բարրաբային, կուսակալն ասաց.

— Շատ լավ,— և հրամայեց քարտուղարին անմիջապես արձանագրել դա, քարտուղարն ավազի վրայից բարձրացրեց ու նրան տվեց ընկած ճարմանդը, Պիղատոսն ափի մեջ սեղմեց ճարմանդն ու հանդիսավորությամբ ասաց.— Ժա՛մն է։

Այստեղ բոլոր ներկաները ցած իջան մարմարյա լայն աստիճաններով, արբեցնող բուրմունք արձակող վարդերի պատերի միջով, մոտենալով պալատական պարսպին, դարպասին, որը բացվում էր մի մեծ, հարթասալարկ հրապարակի վրա և որի ծայրին երևում էին երշալաիմյան ձիարշավարանի սյուներն ու արձանները։

Հենց որ այգուց հրապարակ ելած խումբը բարձրացավ հրապարակի վրա իշխող քարաշեն ընդարձակ հարթակի վրա, Պիղատոսը, կկոցած կոպերի տրանքից շուրջը նայելով, իր համար պարզեց իրադրությունը։ Այն տարածությունը, որ հենց նոր էր անցել, այսինքն՝ պալատական պարսպից մինչև հարթակ ընկած տարածությունը, դատարկ էր, բայց իր առջև Պիղատոսն այլևս հրապարակ չէր տեսնում. ամբոխն էր կլանել հրապարակը։ Ամբոխը կկլաներ թե հարթակը, թե դատարկ այդ տարածությունը, եթե նրան չզսպեր սեբաստացի զինվորների եռաշարը՝ Պիղատոսից ձախ, և իտուրիական օժանդակ կոհորտայի զինվորներինը՝ Պիղատոսից աջ։

Այսպիսով, Պիղատոսը բարձրացավ հարթակի վրա՝ բռունցքի մեջ մեքենայաբար սեղմելով անհարկավոր ճարմանդը, աչքերը կկոցած։ Կուսակալն աչքերը կկոցել էր ոչ այն պատճառով, որ արևն այրում էր աչքերը, ո՛չ։ Չգիտես ինչու, նա չէր ուզում տեսնել դատապարտյալներին, որոնց, ինչպես քաջ գիտեր, հիմա պիտի հարթակ բարձրացնեին, իրենցից հետո։

Հենց որ արնագույն աստառով սպիտակ թիկնոցը հայտնվեց մարդկային ծովի եզրին խոյացող քարաժայռի բարձունքին, ոչինչ չտեսնող Պիղատոսի ականջներին բախվեց ձայնալիքը. «Հա՜-ա՜-ա՜...»։ Սկզբում մեղմ էր, ծայր էր առել հեռվում, ձիարշավարանի մոտ, ապա որոտաձայն դարձավ ու մի քանի վայրկյան դղրդալով, սկսեց մարել։ «Տեսել են ինձ»,— մտածեց կուսակալը։ Ալիքը չհասավ ստորին կետին և անսպասելիորեն սկսեց կրկին ահագնանալ ու ճոճվելով, վեր բարձրացավ առաջինից, և ինչպես ծովի ալիքի կատարին փրփուրն է եռում, երկրորդի կատարին եռում էին սուլոցներ, որոնց միջից լսվող կանացի հատուկենտ տնքոցներ։ «Նրանց հարթակ բարձրացրեցին...— մտածեց Պիղատոսը,— տնքոցներն էլ նրանից են, որ ամբոխն առաջ մղվելիս մի քանի կին են ճզմել»։

Որոշ ժամանակ կուսակալը սպասեց, գիտենալով, որ ոչ մի ուժ չի կարող ստիպել ամբոխին լռել, քանի դեռ ներսում կուտակվածը չի սպառել ամբոխը և չի լռել իր կամքով։

Ու երբ եկավ այդ պահը, կուսակալը վեր նետեց աջ ձեռքը, և աղմուկի վերջին նշույլն իսկ չքացավ ամբոխի վրայից։

Այդժամ Պիղատոսը, որքան կարող էր, տաք օդ կուտակեց կրծքում ու բացականչեց, և նրա խզված ձայնը գլորվեց հազարավոր գլուխների վրայով.

— Հանու՜ն կեսարի։

Այստեղ մի քանի անգամ նրա ականջներին խփվեց երկաթյա կոտորակված բղավոցը՝ վեր ցցելով նիզակներն ու զինանշանները, կոհորտաների զինվորները բղավեցին սարսափազդու.

— Կեցցե՜ կեսարը։

Պիղատոսը գլուխը վեր բարձրացրեց՝ ուղիղ արևին նայելով։ Նրա կոպերի տակ կանաչ կրակ բռնկվեց, որից ուղեղն էլ կրակվեց, ու ամբոխի վրա սփռվեցին արամեերեն խռպաձայն բառերը.

— Չորս հանցագործներ, որոնք ձերբակալվել են Երշալայիմում սպանության, խռովություն հրահրելու և օրենքներն ու հավատն

*անարգելու համար, դատապարտված են ամոթալի մահապատժի՝ գերանների վրա խաչվելու՛։ Եվ այդ մահապատիժը հիմա ի կատար կածվի Լերկ Լեռան վրա։ Հանցագործների անունները՝ Դիսմա՛ս, Հեստա՛ս, Բարրաբա՛ և Հա-Նո՛ցրի։ Ահա՛ նրանք, ձեր առջև են։*

*Պիղատոսը ձեռքն աջ պարզեց՝ հանցագործներից ոչ մեկին չտեսնելով, բայց իմանալով, որ նրանք այնտեղ են, ուր պիտի լինեն։*

*Ամբոխն արձագանքեց թեթևացման թե զարմանքի տևական մի թնդյունով։ Երբ դա մարեց, Պիղատոսը շարունակեց.*

*— Բայց նրանցից միայն երեքը կենթարկվեն մահապատժի, քանզի, ըստ օրենքի և սովորության, ի պատիվ զատկի տոնի, դատապարտվածներից մեկին, Փոքր ծերակույտի ընտրությամբ ու հռոմեական իշխանության հաստատմամբ, մեծահոգի կեսար կայսրը վերադարձնում է նրա անարգ կյա՛նքը։*

*Պիղատոսը բղավում էր բառերն ու միաժամանակ լսում, թե թնդյունն ինչպես է փոխվում հսկայական լռության։ Այժմ նրա ականջներին չէր հասնում ոչ հոգոց, ոչ շշունչ, նույնիսկ մի պահ եղավ, երբ Պիղատոսին թվաց, թե չորսբոլորն ընդհանրապես անհետացել է ամեն ինչ։ Իր համար ատելի քաղաքը մահացել էր, միայն ինքն էր կանգնած՝ ուղղաձիգ ճառագայթներից խանձված, դեմքը երկինք հառած։ Պիղատոսը մի քիչ էլ ձգեց լռությունը, հետո նորից բղավեց.*

*— Անունը նրա, ում հիմա ազատ կարձակեն ձեր աչքի առաջ...*

*Նա մի դադար էլ տվեց, անունը տալուց առաջ ստուգելով, թե ասելիքն ասե՞լ է, որովհետև գիտեր, որ մեռյալ քաղաքը հարությո՛ւն կառնի բախտավոր այդ մարդու անունն արտասանելուց հետո և այլևս ոչ մի բառ չի լսվի։*

*«Ասելի՞քս, — անձայն շշնջաց Պիղատոսը, — ասել եմ։ Անու՛նը»։*

*Եվ լռած քաղաքի վրա դղրդացնելով «ր» տառը, բղավեց.*

*— Բարրա՛բա է։*

*Այդժամ նրան թվաց, թե արևը, զրնգալով, ճաքեց գլխավերևում ու ականջները կրակով լցրեց։ Այդ կրակի մեջ փոթորկվում էին բղավոցներ, ճիչ, տնքոց, քրքիջ ու սուլոց։*

*Պիղատոսը շուռ եկավ և հարթակի վրայով ետ գնաց դեպի սանդուղքը, չսայթաքելու համար ոտքերի տակ փռված ծածկոցի գույնզգույն խորանարդիկներից բացի ոչնչի չնայելով։ Նա գի-*

տեր, որ հիմա իր նստում, հարթակի վրա պղնձագրամների, արմավի կարկուտ է տեղում, որ ոռնացող ամբոխի մեջ հրմշտվելով՝ մարդիկ միմյանց ուսերին են բարձրանում, սեփական աչքերով տեսնելու համար հրաշքը՝ թե ինչպես արդեն մահվան ճիրաններում գտնվող մարդը դուրս է պրծել այդ ճիրաններից։ Ինչպես լեգեոներներն արձակում են նրա կապերը՝ ակամա հարուցելով հարցաքննությունների ժամանակ հոշոտված ձեռքերի այրող ցավը, ինչպես կնճռոտվելով ու տնքալով, համենայն դեպս ժպտում է նա անիմաստ ու խենթացնող ժպիտով։

Նա գիտեր, որ այդ նույն ժամանակ պահակախումբն արդեն կողքի սանդուղքներին է մոտեցնում ձեռքերը կապած այն երեքին, որպեսզի բռնեն դեպի արևմուտք, քաղաքից դուրս, Լերկ Լեռ տանող ճանապարհը։ Միայն, երբ արդեն հարթակը ետևում էր մնացել, Պիղատոսը բացեց աչքերը, իմանալով, որ հիմա ապահով տեղում է՝ արդեն չէր կարող տեսնել դատապարտվածներին։

Արդեն խաղաղվող ամբոխի տնքոցներին այժմ խառնվել ու լսվում էին մունետիկների զիլձայն կանչերը. որոնցից մի քանիսն արամեերեն, մի քանիսն էլ հունարեն կրկնում էին այն ամենն, ինչ հարթակի վրայից կուսակալն էր բղավել։ Դրանից բացի ականջին հասավ հեծելակի մանրիկ ու արագ, կտկտան դոփյուն և շեփորի կարճ ու զվարթ մի կանչ։ Այդ ձայներին արձագանքեցին շուկայից ձիարշավարանի հրապարակ տանող փողոցի տների տանիքներին ճչացող տղեկների՝ ականջ ծակող սուլոցները և «Հեռո՛ւ քաշվեք» բղավոցները։

Հրապարակի դատարկված տարածության վրա զինանշանը ձեռքին միայնակ կանգնած զինվորը տագնապահար շարժեց զինանշանը, և այդ ժամանակ կուսակալը, լեգեոնի լեգատը, քարտուղարը և պահակախումբը կանգ առան։

Վարգն արագացնելով՝ հրապարակ մտավ հեծելագունդը, որպեսզի խռնված ժողովրդին շրջանցելով, հրապարակը կողքից հատելով, խաղողի որթերով պատած պարսպի տակի նրբանցքով Լերկ Լեռ արշավի կարճ ճանապարհով։

Հեծելագնդի վարգասլաց հրամանատարը՝ տղայի պես փոքրամարմին, խառնածնի պես թխամաշկ մի սիրիացի, Պիղատոսին հավասարվելով, բարակ ձայնով ինչ-որ բան բղավեց ու պատյանից դուրս քաշեց սուրը։ Կատաղած, սևաթույր ու քրտնակոլոլ ձին խրտնեց, ծառս եղավ։ Սուրը՝ պատյանը դնելով,

*հրամանատարը մտրակով շրմփացրեց ձիու վզին, հանգստացրեց և, քառատրոփի անցնելով, արշավեց նրբանցքով։ Նրա ետևից երեքական շարքերով թռան հեծյալները փոշու ամպի միջով, բամբուկե թեթև տեգերի ծայրերը վերուվարվեցին, կուսակալի առջևով սլացան ճերմակ փաթթոցների տակ հատկապես թուխ թվացող դեմքեր՝ զվարթորեն մերկացրած, շլացուցիչ ատամներով։*

*Փոշին երկինք հանելով, հեծելագունդը նրբանցք խուժեց, և Պիղատոսի կողքով վերջինը մի զինվոր սլացավ՝ նրա մեջքին արևից կրակ բռնած շեփորն էր թափահարվում։*

*Փոշուց ձեռքով պաշտպանվելով ու ակամա կնճռոտելով դեմքը, Պիղատոսը շարունակեց ճանապարհը դեպի պալատական այգու դարպասը, նրա ետևից շարժվեցին լեգատը, քարտուղարը և պահակախումբը։*

*Առավոտյան ժամը տասը կլիներ։*

## ԳԼՈՒԽ III

## ՅՈԹԵՐՈՐԴ ԱՊԱՑՈՒՅՑԸ

*— Այո, առավոտյան ժամը տասը կլիներ, մեծարգո Իվան Նիկոլաևիչ,— ասաց պրոֆեսորը։*

*Հենց նոր արթնացած մարդու նման բանաստեղծը դեմքը շփեց ձեռքով ու տեսավ, որ Պատրիարքականի վրա երեկոն է իջել։*

*Լճի ջուրը սևացել էր, ու թեթև մի նավակ արդեն սահում էր լճի վրա, թիերի ճողփյուն էր լսվում ու նավակում նստած ինչ-որ քաղաքացուհու մանրիկ ծիծաղը։ Ծառուղիներում, նստարանների վրա մարդիկ կային, բայց դարձյալ քառանկյունու բոլոր երեք կողմերում, բացի նրանից, ուր մեր զրուցակիցներն էին։*

*Երկինքը Մոսկվայի վրա կարծես գունաթափվել էր, և բարձրում լիովին հստակ երևում էր լիալուսինը՝ բայց դեռևս ոչ ոսկեգույն, այլ սպիտակ։ Շնչելը շատ ավելի հեշտացավ, ու լորենիների տակ ձայները հիմա ավելի փափուկ էին հնչում, երեկոյան երանգով։*

*«Այդ ինչպե՞ս չնկատեցի, որ նա հասցրեց մի ամբողջ պատմվածք հյուսել...— մտածեց Անապաստանը զարմացած,—*

չէ, որ արդեն երեկո է։ Իսկ գուցե ոչ էլ նա պատմեց, այլ ուղղակի ես քնեցի ու այդ ամենը երազո՞ւմ տեսա»։

Բայց պետք է ենթադրել, որ պրոֆեսորը համենայն դեպս պատմեց, այլապես ստիպված պիտի ընդունել, որ միևնույն բանը Բեռլիոզն էլ է տեսել երազում, որովհետև վերջինս, ուշադրությամբ զննելով օտարերկրացու դեմքը, ասաց.

— Ձեր պատմածը չափազանց հետաքրքրական էր, պրոֆեսոր, թեև ամենևին չէր համընկնում ավետարանական պատմություններին։

— Աստված սիրեք,— քթի տակ ներողամտորեն ծիծաղելով, արձագանքեց պրոֆեսորը,— ով-ով, բայց դուք պիտի իմանաք, որ ավետարաններում գրվածներից և ոչ մի բան իրականում երբեք չի կատարվել, և եթե մենք սկսենք վկայակոչել ավետարանները, որպես պատմական սկզբնաղբյուր...— Նա մեկ անգամ էլ քթի տակ ծիծաղեց, և Բեռլիոզը կարկամեց, որովհետև տառացիորեն նույն բանն ինքը Անապաստանին էր ասում, երբ Բրոննայա փողոցով գալիս էին Պատրիարքական լճից։

— Այդպես է,— նկատեց Բեռլիոզը,— բայց վախենում եմ, որ ոչ ոք չի կարող հաստատել, թե այն, ինչ մեզ պատմեցիք, կատարվել է իրականում։

— Օ՜, ոչ։ Այդ մեկը հաստատող կա՜,— սկսելով կոտրատված լեզվով խոսել, չափազանց վստահ պատասխանեց պրոֆեսորը և անսպասելիորեն, խորհրդավոր տեսքով մատով ավելի մոտ կանչեց զրուցակիցներին։

Երկու կողմից նրանք հակվեցին դեպի պրոֆեսորը, և նա ասաց, բայց արդեն առանց որևիցե առոգանության, որը սատանան գիտե, թե ինչու, մե՛կ անհետանում էր, մեկ երևան գալիս։

—Բանն այն է...—այստեղ պրոֆեսորը վախվորած շուրջը նայեց ու սկսեց շշուկով խոսել,— որ ես անձամբ ներկա եմ եղել այդ ամենին։ Պոնտացի Պիղատոսի պատշգամբում էլ եմ եղել, այգում էլ, երբ նա խոսում էր Կայիափայի հետ, հարթակի վրա էլ, բայց միայն գաղտնի, այսպես ասած, ծպտյալ, այնպես որ խնդրում եմ ձեզ՝ ոչ մեկի ոչ մի բառ չասեք ու կատարյալ գաղտնիք թող լինի... Սը՜սս։

Լռություն տիրեց, և Բեռլիոզը գունատվեց։

— Դուք...ինչքա՞ն ժամանակ է Մոսկվայում եք դուք,—բեկված ձայնով հարցրեց նա։

— Հենց նոր, այս րոպեիս եկա Մոսկվա,— շփոթված պատաս-

խանեց պրոֆեսորը և միայն այդ ժամանակ գրողները կռահեցին, ինչպես հարկն է, նրա աչքերին նայել ու համոզվեցին, որ ձախ, կանաչ աչքը միանգամայն խելագուրկ է, իսկ աջը՝ դատարկ է, սև ու մեռյալ։

«Ահա և ամեն ինչ պարզաբանվեց,—շփոթված մտածեց Բեռլիոզը,— մի խելագար գերմանացի է եկել Մոսկվա կամ հենց նոր խելքը թռցրել է Պատրիարքական լճի ափին։ Ա՜յ քեզ պատմություն»։

Այո, իրոք, ամեն ինչ պարզաբանվում էր. թե հույժ տարօրինակ նախաճաշը հանգուցյալ փիլիսոփա Կանտի մոտ, թե խելացնոր խոսքերը արևածաղկի ձեթի և Աննուշկայի մասին, թե կանխագուշակումը, որ իր գլուխը կկտրեն, ու մնացած ամեն բան՝ պրոֆեսորը խելագար էր։

Բեռլիոզն իսկույն գլխի ընկավ, թե ինչ պետք է անել։ Ետ ընկնելով նստարանի թիկնակին, պրոֆեսորի թիկունքից աչքով արեց Անապաստանին՝ իբր, մի հակառակվիր, բայց շշկլված բանաստեղծն այդ նշանները չհասկացավ։

— Այո, այո, այո,— բորբոքված խոսում էր Բեռլիոզը,— ի դեպ, այդ ամենը հնարավոր է։ Նույնիսկ շատ հնարավոր է, թե Պոնտացի Պիղատոսը, թե պատշգամբը, մնացած ամեն ինչը... Իսկ դուք մենա՞կ եք եկել, թե՞ ձեր տիկնոջ հետ։

— Մենակ, մենակ, ես միշտ մենակ եմ,—դառնացած պատասխանեց պրոֆեսորը։

— Իսկ որտե՞ղ են ձեր իրերը, պրոֆեսոր,— շողոմաձայն հարցրեց Բեռլիոզը,— «Մետրոպոլո՞ւմ»։ Որտե՞ղ եք իջևանել։

— Ե՞ս։ Ոչ մի տեղ,— պատասխանեց խելապակաս գերմանացին, կանաչ աչքը տրտմած ու անհեթեթ ման ածելով Պատրիարքական լճի վրայով։

— Ինչպե՞ս։ Իսկ... իսկ որտե՞ղ պիտի ապրեք։

— Ձեր բնակարանում,— հանկարծ լկտիաբար պատասխանեց խելագարն ու աչքով արեց։

— Ես... ես շատ ուրախ եմ,— մրթմրթաց Բեռլիոզը,— բայց, անկեղծ ասած, իմ բնակարանում ձեզ համար անհարմար կլինի... Իսկ «Մետրոպոլում» հիանալի համարներ կան, առաջնակարգ հյուրանոց է...

— Իսկ սատանա նույնպե՞ս չկա,— հանկարծ ուրախ-ուրախ հարցրեց հիվանդը Իվան Նիկոլաևիչին։

— Սատանա էլ...

— Մի հակառակիր,— միայն շրթունքներով շշնջաց Բեռլիոզը՝ ետ ընկնելով դեպի պրոֆեսորի թիկունքը և աչքով-ունքով անելով։

— Ոչ մի սատանա էլ չկա՛,— այդ ամբողջ դատարկաբանությունից շշկլված, բղավեց Իվան Նիկոլաևիչը լիովին անհարկի,— ա՜յ քեզ փորձանք։ Վերջ տվեք ձեր խենթություններին։

Դրա վրա խելագարն այնպես քրքջաց, որ նրանց գլխավերևը տարածվող լորենու վրայից մի ճնճղուկ թռավ։

— Է՜-է՜, սա արդեն անչափ հետաքրքիր է,— ծիծաղից ցնցվելով ասաց պրոֆեսորը,— սա ի՞նչ բան է, ինչի անուն տալիս եմ, ասում եք՝ չկա։— Նա հանկարծակի դադարեց քրքջալ, և ինչ միանգամայն հասկանալի է հոգեկան հիվանդության դեպքում, քրքիջից հետո մյուս ծայրահեղության մեջ ընկավ՝ զայրացավ ու բղավեց խստորեն.— Այդպե՞ս ուրեմն, չկա ու չկա՞։

— Հանգստացեք, հանգստացեք, հանգստացեք, պրոֆեսոր,— մրթմրթաց Բեռլիոզը, վախենալով հիվանդին բորբոքելուց,— մի րոպե նստեք այստեղ, ընկեր Անապաստանի հետ, հիմա վազելով գնամ, մոտ տեղ է, հեռախոսով զանգահարեմ, հետո կուղեկցենք ձեզ, ուր ուզենաք։ Չէ որ դուք անծանոթ եք քաղաքին...

Բեռլիոզի ծրագիրը ճիշտ պիտի համարել. հարկ էր վազել մինչև մոտակա ավտոմատ-հեռախոսը և օտարերկրացիների բյուրո հայտնել այն մասին, որ ահա, այսպես, արտասահմանից եկած խորհրդականը Պատրիարքական լճի ափին է նստած՝ բացահայտ աննորմալ վիճակում։ Ուրեմն, այսպես, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, թե չէ տհաճ բաներ կստացվեն։

— Զանգահարե՞լ։ Ինչ կա որ, զանգահարեք,— տխուր-տրտում համաձայնեց հիվանդը և հանկարծ բուռն կրքով խնդրեց.— բայց հրաժեշտից առաջ աղաչում եմ՝ գոնե հավատացեք, որ սատանան գոյություն ունի։ Ավելին չեմ էլ խնդրում ձեզանից։ Նկատի ունեցեք, որ դրա համար յոթերորդ ապացույցը գոյություն ունի, այն էլ՝ ամենահուսալի։ Եվ դա հիմա կներկայացվի ձեզ։

— Լավ, լավ,—կեղծ քնքշությամբ ասաց Բեռլիոզը և աչքով անելով դառնացած բանաստեղծին, որն ամենևին տրամադիր չէր հսկել խելագար գերմանացուն, շտապեց դեպի այն ելքը Պատրիարքականից, որը Բրոննայա փողոցի և Երմոլաևսկի նրբանցքի անկյունում է։

Իսկ պրոֆեսորը կարծես անմիջապես առողջացավ ու պայծառացավ։

*— Միխայիլ Ալեքսանդրովիչ,— բղավեց նա Բեռլիոզի ետևից։*

*Վերջինս ցնցվեց, շուռ եկավ, բայց հանգստացրեց իրեն, որ իր անուն-հայրանունը պրոֆեսորին հայտնի են այս կամ այն թերթից։ Իսկ պրոֆեսորը, ձեռքերը բերանի մոտ փող գալարած, բղավեց.*

*— Ի՞նչ կհրամայեք, կարգադրեմ հիմա՞ հեռագիր տան Կիև, ձեր ազգականին։*

*Ու վերստին ցնցվեց Բեռլիոզը։ Խելագարը որտեղի՞ց գիտե կիևցի ազգականի գոյությունը։ Չէ որ այդ մասին, հաստատապես, ոչ մի թերթում ոչ մի բան չի գրվել։ Էհե՜-հե՜, իրավացի չէ՞ արդյոք Անապաստանը։ Իսկ եթե կե՞ղծ են այդ փաստաթղթերը... Ա՜հ, որքա՜ն տարօրինակ անձնավորություն է։ Զանգահարե՜լ, զանգահարե՜լ։ Իսկույն և՛թ զանգահարել։ Նրան շատ շու՜տ կհասկացնեն։*

*Եվ այլևս ոչինչ չլսելով, Բեռլիոզը շտապեց զանգահարելու։*

*Այստեղ, հենց Բրոննայա փողոցի ելքի մոտ, նստարանի վրայից խմբագրին ընդառաջ ելավ ճիշտ և ճիշտ այն քաղաքացին, որը քիչ առաջ, արևի լույսի տակ հյուսվել էր տոթակեզ օդից։ Միայն թե հիմա արդեն օդեղեն չէր նա, այլ սովորական, միս ու ոսկորով, և վերահաս մթնշաղի մեջ Բեռլիոզը հստակորեն տեսավ, որ նրա բեղիկները հավի փետուրների նման են, աչքերը՝ մանրիկ, հեգնական ու կիսահարբած, շալվարն էլ վանդակավոր է և այնքան բարձր քշտած, որ երևում են սպիտակ կեղտոտ գուլպաները։*

*Միխայիլ Ալեքսանդրովիչն ընկրկնեց, բայց մխիթարեց իրեն մի՛ նկատառումով, որ դա անմիտ զուգադիպություն է և որ հիմա ընդհանրապես դրա մասին մտածելու ժամանակ չկա։*

*— Քաղաքացի, դռնա՞կն եք փնտրում,— խզված ձայնով հարցրեց այդ վանդակավոր տիպը,— այստեղ համեցեք։ Ուղիղ կգնաք ու կհասնեք ուր պետք է։ Ճամփան ցույց տալու համար մի քառորդ լիտրի փող տայիք... Նախկին խմբավարիս...դրըստվեհ,— ծամածռվելով, այդ անձնավորությունը թափով հանեց ժոկեյի իր գդակը։*

*Բեռլիոզն այլևս չլսեց ուզվոր ու կոտրատվող խմբավարին, մոտ վազեց ու ձեռքը գցեց բռնակին։ Բացելով, արդեն պատրաստվում էր ռելսերն անցնել, երբ կարմիր ու սպիտակ լույս ցողվեց նրա դեմքին՝ ապակյա արկղի մեջ վառվեց «Զգուշացիր տրամվայից» մակագրությունը։*

Տեղնուտեղը հայտնվեց այդ տրամվայը, որը նորաբաց գծով Երմոլաևսկից թեքվում էր Բրոննայա։ Թեքվելով և ուղիղ գիծ դուրս գալով, տրամվայը հանկարծ ներսից լուսավորվեց էլեկտրականությամբ, ճռնչաց ու արագացրեց ընթացքը։

Շրջահայաց Բեռլիոզը, չնայած ապահով էր կանգնած, որոշեց անցնել դռնակի ետևը, ձեռքը դրեց պտուտակին, մի քայլ ետ գցեց։ Եվ իսկույն նրա ձեռքը սոթ տվեց ու պոկվեց, մի ոտքը անդիմադրելիորեն սահեց թեքությամբ դեպի ռելսերն իջնող սալարկի վրայով, որն ասես սառույց լիներ, մյուս ոտքը վեր անկվեց, ու Բեռլիոզը շպրտվեց ռելսերի վրա։

Աշխատելով կառչել ինչ-որ բանից, Բեռլիոզն ընկավ երեսնիվեր, ծոծրակը թեթևակի խփելով գլաքարին, և հասցրեց բարձրում, բայց արդեն չհասկացավ՝ աջից, թե ձախից, տեսնել ոսկեզօծ լուսինը։ Հասցրեց նաև կողքի շրջվել, ակնթարթորեն ոտքերը փորի տակ քաշելով, ու շրջվելիս տեսավ անզսպելի ուժով իր վրա սլացող վագոնավար-կնոջ՝ սարսափից բոլորովին սպիտակած դեմքն ու նրա կարմիր գլխաշորը։ Բեռլիոզը չբղավեց, բայց կանացի աղեկտուր ձայներով նրա շուրջը ծղրտաց ամբողջ փողոցը։ Վագոնավարուհին քաշեց էլեկտրական արգելակը, վագոնը քիթը խրեց հողի մեջ, դրանից հետո վայրկենապես ցնցվեց, և զրնգոց-դղրդոցով պատուհաններից թափվեցին ապակիները։ Այստեղ Բեռլիոզի ուղեղում ինչ-որ մեկը հուսահատ բղավեց՝ «Մի՞թե...»։ Մեկ անգամ էլ, ու վերջին անգամ, ցոլաց լուսինը, բայց արդեն փշուր-փշուր լինելով, ապա մթնեց։

Տրամվայը ծածկեց Բեռլիոզին, և Պատրիարքականի ծառուղու ցանկապատի տակ, սալարկած զառիթափի վրա մի կլոր, մուգ առարկա շպրտվեց։ Զառիթափից գլորվելով՝ ոստոստաց Բրոննայա փողոցի սալարկի վրա։

Բեռլիոզի կտրված գլուխն էր դա։

## ԳԼՈՒԽ IV

## ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Հանդարտվեցին կանացի հիստերիկ ճիչերը, կտրվեցին միլիցիայի սուլիչների ծակող ձայները, սանիտարական երկու մեքենաներից մեկը գլխատված մարմինն ու կտրված գլուխը դիա-

րան տարավ, մյուսը տեղափոխեց ապակու կտորտանքով վիրավորված գեղեցկուհի վագոնավարուհուն, սպիտակ գոգնոցներով դռնապանները սրբեցին ապակու կտորտանքը և արյան լճակների վրա ավազ ցանեցին, իսկ Իվան Նիկոլաևիչը, ինչպես ընկել էր նստարանին, չհասնելով դռնակին, այդպես էլ մնացել էր։

Մի քանի անգամ փորձեց վեր կենալ, բայց ոտքերը չէին ենթարկվում՝ Անապաստանը կարծես կաթվածահար էր եղել։

Առաջին ճիչը լսելուն պես բանաստեղծը նետվեց դեպի դըռնակը և տեսավ, թե գլուխն ինչպես գլորվեց սալարկի վրա։ Դրանից այն աստիճան խելքը կորցրեց, որ ընկնելով նստարանին, ձեռքն այնպես կծեց, որ արյուն եկավ։ Իհարկե, մոռացել էր խելացնոր գերմանացու մասին և աշխատում էր միայն մի բան հասկանալ, թե ինչպես կարող է լինել, որ հենց նոր ինքը խոսում էր Բեռլիոզի հետ, իսկ մեկ րոպե անց՝ գլուխը...

Հուզված մարդիկ էին վազում ծառուղիով, բանաստեղծի մոտով, ինչ-որ բաներ բացականչելով, բայց Իվան Նիկոլաևիչը նրանց խոսքերը չէր ընկալում։

Սակայն նրա մոտ անսպասելիորեն երկու կին բախվեցին, ու նրանցից մեկը՝ սրաքիթ և գլխաբաց, բանաստեղծի ականջի տակ բղավելով ասաց մյուսին.

— Աննուշկան, մեր Աննուշկան։ Սադովայա փողոցից։ Նրա՛ արածն է։ Խանութից արևածաղկի ձեթ էր առել, լիտրանոցը խփել պտուտանին ու ջարդել։ Շորը լրիվ ձեթոտել էր... Հո չէ՞ր անիծում, հո չէ՞ր անիծում։ Էդ խեղճն էլ, վայ թե սոթ է տվել ու ընկել ռելսերին...

Իվանի խեղված ուղեղը կնոջ բղաված բոլոր բառերից միայն մեկից կառչեց. «Աննուշկա»...

— Աննուշկա... Աննուշկա՞...— մրթմրթաց բանաստեղծը՝ տագնապած նայելով չորս կողմը։

«Աննուշկա» բառին ագուցվեցին «արևածաղկի ձեթ», ապա չգիտես ինչու՝ «Պոնտացի Պիղատոս» բառերը։ Պիղատոսին բանաստեղծը դեն դրեց ու սկսեց մի շղթա հյուսել, սկսելով «Աննուշկա» բառից։ Եվ այդ շղթան շատ շուտ հյուսվեց ու իսկույն բերեց-հասցրեց խելագար պրոֆեսորին։

Ներեցե՛ք։ Բայց չէ որ հենց նա ասաց, որ նիստը չի կայանա, որովհետև Աննուշկան թափել է ձեթը։ Եվ, ահավասիկ, չի՛ կայանա նիստը։ Դա բավական չէ, նա ուղղակի ասաց, որ Բեռլիոզի

գլուխը կի՞ն կկտրի։ Այո՛, այո՛, այո՛։ Վագոնավարը կին էր, չէ՞։ Սա ի՞նչ բան է։ Հը՞։

Կասկածի նշույլ իսկ չէր մնացել, որ հանելուկային խորհրդականը վաղօրոք ստույգ գիտեր Բեռլիոզի սարսափելի մահվան ամբողջ պատկերը։ Այդ ժամանակ բանաստեղծի ուղեղը երկու միտք շամփրեց։ Առաջինը՝ «Նա ամենևին էլ խելագար չէ։ Հիմարություն է այս ամենը», և երկրորդը՝ «Չլինի՞ այս ամենը նա սարքեց»։

Բայց թույլ տվեք հարցնել, ինչպե՞ս։

— Է, չէ՛։ Հիմա կիմանանք։

Մեծ ճիգ գործադրելով, Իվան Նիկոլաևիչը բարձրացավ նստարանից և ետ նետվեց, այնտեղ, ուր խոսում էր պրոֆեսորի հետ։ Ու պարզվեց, որ բարեբախտաբար նա դեռ չի գնացել։

Բրոննայա փողոցում արդեն վառվեցին լապտերները, իսկ Պատրիարքականի վրա ոսկե լուսինն էր շողում, և լուսնային, միշտապես խաբուսիկ լույսի տակ Իվան Նիկոլաևիչին թվաց, թե նա կանգնած է՝ թեատակին ոչ թե ձեռնափայտ, այլ սուսեր։

Պաշտոնաթող ծակամուտ-խմբավարը նստած էր նույն տեղում, ուր դեռևս քիչ առաջ Իվան Նիկոլաևիչն էր նստած։ Խմբավարն այժմ քթին էր դրել ակնհայտորեն անհարկի մի պենսնե, որի մի ապակին ընդհանրապես չկար, իսկ մյուսը ճաքած էր։ Վանդակավոր քաղաքացին դրանից դարձել էր առավել նողկալի, քան երբ Բեռլիոզին ճանապարհն էր ցույց տալիս դեպի ռելսերը։

Սարսռող սրտով Իվանը մոտեցավ պրոֆեսորին և նրա դեմքին նայելով համոզվեց, որ այդ դեմքի վրա խելագարության ոչ մի նշան չկա ու չի եղել։

— Խոստովանեք՝ ո՞վ եք դուք,— խլաձայն հարցրեց բանաստեղծը։

Օտարերկրացին խոժոռվեց, նայեց այնպես, կարծես առաջին անգամ էր տեսնում բանաստեղծին, և անբարյացակամորեն պատասխանեց.

— Չի հասկանալ… ռուսերեն խոսի…

— Ինքը չի՛ հասկանում,— մեջ ընկավ նստարանին նստած խմբավարը, չնայած նրան ոչ ոք չէր խնդրել բացատրել օտարերկրացու ասածը։

— Մի ձևանաք,— խստորեն ասաց Իվանն ու սրտի տակ սառնություն զգաց,— հենց նոր հիանալի ռուսերեն էիք խոսում։

Դուք ոչ գերմանացի եք, ոչ էլ պրոֆեսոր։ Դուք մարդասպան եք և լրտե՛ս։ Փաստաթղթե՛րդ,— կատաղած բղավեց Իվանը։

Անեղծվածային պրոֆեսորը խորշանքով ծամռեց առանց այդ էլ ծուռ բերանը և ցնցեց ուսերը։

— Քաղաքացի,— կրկին մեջ ընկավ գարշելի խմբավարը,— ինչո՞ւ եք անհանգստացնում օտարերկրացի տուրիստին։ Դրա համար խստագույն պատասխանատվության կենթարկվեք։— Իսկ կասկածելի պրոֆեսորը, դեմքին՝ ամբարտավան արտահայտություն, շրջվեց ու հեռացավ Իվանից։

Իվանը զգաց, որ գլուխը կորցնում է։ Շնչահեղձ լինելով, դիմեց խմբավարին.

— Է՛յ, քաղաքացի, օգնեք բռնենք հանցագործին։ Դուք պարտավո՛ր եք դա անել։

Խմբավարն անչափ աշխուժացավ, վեր ցատկեց ու բղավեց.

— Ո՞ր մեկն է հանցագործը։ Ո՞ւր է նա։ Արտասահմանյա՞ն հանցագործ է,— խմբավարի մանրիկ աչքերը բերկրալի շողացին,— սա՞։ Քանի որ հանցագործ է, ապա առաջին հերթին պիտի բղավել «օգնեցե՛ք»։ Թե չէ կփախչի։ Դե, եկեք միասին։ Միանգամից,— և այստեղ խմբավարը բացեց բերանը։

Շփոթված Իվանը հավատաց կատակաբան-խմբավարին ու բղավեց «օգնեցե՛ք», իսկ խմբավարը նրան խաբեց, ոչինչ չբղավեց։

Իվանի միայնակ, խռպոտ բղավոցը դրական արդյունք չտվեց։ Երկու օրիորդ մի կողմ նետվեցին, և բանաստեղծը լսեց՝ «հարբա՛ծ է»։

— Ա՛, ուրեմն, դո՞ւ էլ ես նրա հետ,— սաստիկ զայրացած բղավեց Իվանը,— ի՞նչ է, ինձ ձե՞ռ ես առնում։ Թո՛ղ։

Իվանը աջ նետվեց, խմբավարը՝ նույնպես, Իվանը՝ ձախ, այդ սրիկան նույնպես։

— Դիտմա՞մբ ես ոտքի տակ ընկնում,— գազան կտրած, գոչեց Իվանը,— քե՛զ էլ կտամ միլիցիայի ձեռքը։

Իվանը փորձեց բռնել ապիկարի թևքը, բայց վրիպեց ու ոչինչ չբռնեց։ Խմբավարն ասես գետնի տակ էր անցել։

Իվանը փնչացրեց, նայեց հեռուն ու տեսավ ատելի անծանոթին։ Նա արդեն Պատրիարքական նրբանցք էր մտնում, ընդ որում, մենակ չէր։ Առավել քան կասկածելի խմբավարը հասցրել էր միանալ նրան։ Բայց ավելին. երրորդն այդ խմբում չգիտես որտեղից հայտնված մի կատու էր, կրտած խոզի չափ

հսկայական, մրի կամ սերմնագռավի պես սև, հեծելակի կլո-րինճ բեղերով։ Ծոյակը շարժվեց նրբանցքով, ըստ որում կատուն քայլում էր ետևի թաթերի վրա։

Իվանը նետվեց չարագործների ետևից և իսկույն համոզվեց, որ նրանց հասնելը շատ դժվար է լինելու։

Ծոյակը մի վայրկյանում կտրեց նրբանցքն ու հայտնվեց Սպիրիդոնովկայում։ Ինչքան էլ Իվանն արագացնում էր քայլերը, հետապնդվողների և նրա միջև ընկած տարածությունը ամենևին չէր կրճատվում։ Եվ դեռ չէր հասցրել ուշքի գալ բանաստեղծը, երբ խաղաղ Սպիրիդոնովկայից հետո հայտնվեց Նիկիտսկիյի վորոտայի մոտ, ուր նրա վիճակը ծանրացավ։ Այստեղ հրմշտոց էր, Իվանը բախվեց ինչ-որ անցորդների, նրան հայհոյեցին։ Իսկ չարագործների խումբը, ի լրումն այդ ամենի վրճռեց օգտվել բանդիտական նախընտրելի հնարից՝ ցիրուցան փախան։

Խմբավարը մեծ ճարպկությամբ, ընթացքի ժամանակ մխրճվեց Արբատից սլացող ավտոբուսի մեջ ու չքվեց։ Հետապընդվողներից մեկին կորցնելով, Իվանն ուշադրությունը կենտրոնացրեց կատվի վրա ու տեսավ, թե ինչպես այդ արտառոց կատուն մոտեցավ կանգառում կանգնած «Ա» տրամվայի քաշող վագոնի ոտնակին, լկտիաբար ետ հրեց ճղճղացող մի կնոջ, կառչեց բռնակից և նույնիսկ փորձեց տոթի պատճառով բաց թողած պատուհանից տոմսավաճառի բուռը խոթել տասկոպեկանոցը։

Կատվի վարմունքն այնքան ապշեցրեց Նիկոլային, որ նա քարացավ մնաց անկյունադարձի նպարեղենի խանութի մոտ և այստեղ, երրորդ անգամ, բայց ավելի սաստիկ ապշեց տոմսավաճառի վարմունքից։ Վերջինս տրամվայ խցկվող կատվին տեսնելուն պես բղավեց չարացած, նույնիսկ չարությունից ցնցվելով.

— Կատուներին չի՛ կարելի։ Կատուներով արգելվում է։ Փը՛շտ։ Իջի՛ր, թե չէ միլիցիա կկանչեմ։

Ոչ տոմսավաճառին, ոչ ուղևորներին չզարմացրեց գործի բուն էությունը. ոչ թե այն, որ կատուն տրամվայ է խցկվում, ինչ չարյաց փոքրագույնը կլիներ, այլ այն, որ նա պատրաստվում է վճարել։

Պարզվեց, որ այդ կատուն ոչ միայն վճարունակ, այլև կարգապահ կենդանի է։ Տոմսավաճառի առաջին իսկ բղավոցից հետո նա

դադարեցրեց ներխուժումը, իջավ ոտնակից ու նստեց կանգառում, մետաղադրամը բեղերին քսելով։ Բայց հենց որ տոմսավաճառը հջեց պարանը և տրամվայը շարժվեց, կատուն վարվեց այնպես, ինչպես յուրաքանչյուր ոք, ում վռնդում են տրամվայից, բայց և ում, համենայն դեպս, տեղ հասնել է պետք։ Թողնելով, որ երեք վագոնն էլ անցնեն, կատուն ցատկեց վերջինի աղեղին, թաթով կառչեց վագոնի ետնապատից ելնող ինչ-որ կաշեփողկից ու նստեց-գնաց, այդպիսով խնայելով տասկոպեկանոցը։

Ուշքը տալով նողկալի կատվին, Իվանը քիչ էր մնացել կորցներ եռյակի գլխավորին՝ պրոֆեսորին։ Սակայն, բարեբախտաբար, նա չէր հասցրել ճողոպրել։ Իվանը տեսավ մոխրագույն բերետը Բոլշայա Նիկիտսկայա, թե Գերցենի փողոցի սկզբում, ամբոխի մեջ։ Մի ակնթարթում Իվանն էլ հայտնվեց այնտեղ։ Սակայն ոչինչ չհաջողվեց։ Բանաստեղծը քայլերն էլ արագացրեց, սկսեց վազել նույնիսկ՝ անցորդներին դեսուդեն հրելով, և սանտիմետր անգամ չմոտեցավ պրոֆեսորին։

Որքան էլ վրդովված էր Իվանը, այնուամենայնիվ նրան ապշեցրել էր գերբնական այն արագությունը, որով ընթանում էր հետապնդումը։ Քսան վայրկյան էլ չէր անցել, որ Նիկիտսկիյե վորոտայից հետո Նիկոլայ Իվանովիչին արդեն կուրացրեցին Արբատի հրապարակի լույսերը։ Մի քանի վայրկյան ևս, ու ահա ինչ-որ մութ մի նրբանցք հայտնվեց, ծուռումուռ մայթերով, որտեղ Իվան Նիկոլաևիչը շրմփաց գետին ու ծունկը ջարդեց։ Դարձյալ լուսավորված մայրուղի՝ Կրոպոտկինի փողոցը, հետո՝ նրբանցք, հետո՝ Օստոժենկան ու մի նրբանցք ևս՝ մռայլ, գարշելի և քիչ լուսավորված։ Եվ ահա հենց այստեղ Իվան Նիկոլաևիչը վերջնականապես կորցրեց նրան, ով այնքան հարկավոր էր իրեն։ Պրոֆեսորն անհետացել էր։

Իվան Նիկոլաևիչը շփոթվեց, բայց ոչ երկար, որովհետև գլխի ընկավ հանկարծ, որ պրոֆեսորն անպայման պիտի գտնվի №13 շենքում և անպայման 47-րդ բնակարանում։

Մուտքից ներս գցելով իրեն, Իվան Նիկոլաևիչը սլացավ երկրորդ հարկ, անմիջապես գտավ այդ բնակարանը և անհամբերությամբ զանգը խփեց։ Երկար չսպասեց. դուռն Իվանի առաջ բացեց հինգ տարեկան մի աղջնակ և ոչինչ չհարցնելով, իսկույն ինչ-որ տեղ գնաց։

Հսկայական, ծայրաստիճան բարձիթողի, բարձր, կեղտից սևացած առաստաղի պստլիկ ածխալամպով թույլ լուսավորված

*Նախասենյակի պատից կախված էր առանց դողերի մի հեծանիվ, երկաթակապ մեծ սնդուկ էր դրված, կախիչի վերևում ամրացված դարակի վրա ձմեռային փափախ կար, ու դրա երկար ականջները ցած էին կախվել։ Դռներից մեկից այն կողմ, ռադիոապարատից տղամարդկային բարկացած մի ձայն ինչ-որ բաներ էր բղավում չափածո։*

*Իվան Նիկոլաևիչն ամենևին չշփոթվեց անծանոթ տեղում և ուղիղ միջանցք գնաց, դատելով այսպես. «Ինչ խոսք, նա թաքնվել է լոգասենյակում»։ Միջանցքում մութ էր։ Պատերին խփվելով, Իվանը լույսի նվազ շերտ տեսավ դռան տակ, շոշափեց բռնակը և թույլ ուժով իր կողմը քաշեց։ Կեռիկը պոկվեց, և Իվանը հայտնվեց հենց լոգասենյակում ու մտածեց, որ բախտը բերել է։*

*Սակայն բախտն այնպես չբերեց, ինչպես հարկն էր։ Իվանի վրա խոնավ տաքություն փչեց, և սյունակաթսայի մարմրող ածուխների լույսի տակ նա տեսավ պատից կախված մեծ տաշտակներ և ջարդված էմալի սև ու սարսափելի պատերով պատած լոգարանը։ Ուրեմն ահա, այդ լոգարանի մեջ մի մերկ քաղաքացուհի էր կանգնած, ամբողջովին օճառի փրփուրի մեջ, ճիլոպը ձեռքին։ Կարճատես աչքերը կկոցեց ներս խուժած Իվանի վրա և, ակներևաբար, դժոխային լուսավորության պատճառով շփոթելով, ցածրաձայն ու զվարթ ասաց.*

*— Կիրյու՛շկա։ Վե՛րջ տվեք հանաքներին։ Ի՞նչ է, ցնդե՞լ եք... Ֆյոդոր Իվանովիչը հիմա կգա։ Դուրս կորեք իսկույն,— և ճիլոպը թափահարեց Իվանի վրա։*

*Թյուրիմացությունն ակնհայտ էր, և մեղավորն, ինչ խոսք, Իվան Նիկոլաևիչն էր։ Բայց նա չկամեցավ դա ընդունել, և կշտամբանքով բացականչելով՝ «Ա՜խ, փչացած...», չգիտես ինչու, անմիջապես հայտնվեց խոհանոցում։ Այստեղ ոչ ոք չկար, և օջախի վրա, կիսախավարի մեջ շուրջ մեկ տասնյակ հանգած պրիմուսներ էին շարված։ Լուսնի միակ շողը, որ թափանցում էր փոշեկոլոլ, տարիներով չլվացված պատուհանից, աղոտ լուսավորում էր այն անկյունը, ուր փոշու և սարդոստայնի մեջ մոռացված մի սրբապատկեր էր կախված, որի տապանակի ետևից դուրս էին պրծել պսակի երկու մոմի ծայրերը։ Մեծ սրբապատկերի տակ քորոցով կախ էր արած մի ավելի փոքր՝ թղթե սրբապատկեր։*

Ու ոչ ոքի հայտնի չէ, թե այստեղ ինչ միտք պաշարեց Իվանին, միայն թե նախքան ետնամուտք վազելը, նա յուրացրեց այդ մոմերից մեկը, ինչպես նաև թղթե սրբապատկերը։ Այդ իրերն առած, նա թողեց անծանոթ բնակարանը, ինչ-որ բան մրթմրթալով, շփոթված հիշելով, թե քիչ առաջ ինչ ապրեց լոգասենյակում, ակամա ջանալով կռահել, թե ով պիտի լիներ այդ լկտի Կիրյուշկան և արդյո՞ք նրանը չէ ականջավոր այդ զզվելի փափախը։

Ամայի և տրտում նրբանցքում բանաստեղծը չորս կողմը նայեց՝ փախստականին փնտրելով, բայց նա ոչ մի տեղ չէր երևում։ Այդ ժամանակ Իվանը հաստատ ասաց ինքն իրեն.

— Դե իհարկե, նա Մոսկվա գետի ափին է։ Առա՜ջ։

Թերևս հարկ կլիներ հարցնել Իվան Նիկոլաևիչին, թե ինչու է նա ենթադրում, որ պրոֆեսորը հենց Մոսկվա գետի ափին է և ոչ թե մեկ այլ տեղ։ Բայց ցավն այն է, որ հարցնող չկար։ Նողկալի նրբանցքը լիովին ամայի էր։

Շատ կարճ ժամանակից հետո Իվան Նիկոլաևիչին կարելի էր տեսնել Մոսկվա գետի ամֆիթատրոնի գրանիտե աստիճանների վրա։

Հագուստը հանելով, Իվանը խնդրեց հսկել բարեհամբույր մի մորուքավորի, որը փաթաթած ծխախոտ էր ծխում, կանգնած իր պատառոտված սպիտակ բլուզի և քուղերն արձակած, մաշված կոշիկների կողքին։ Հովանալու համար ձեռքերը թափահարելով, Իվանը գլխիվայր նետվեց ջուրը։ Շունչը կտրվեց, այնքան որ սառն էր ջուրը և նույնիսկ մտքով անցավ, որ թերևս չի հաջողվի դուրս պրծնել ջրի երեսը։ Սակայն դուրս գալ հաջողվեց, և շունչը տեղը բերելով ու փնչացնելով, սարսափից կլորացած աչքերով, Իվան Նիկոլաևիչն սկսեց լող տալ նավթի հոտ արձակող սև ջրի մեջ, առափնյա լապտերների բեկբեկված զիգզագների արանքներով։

Երբ ջրակոլոլ Իվանը, աստիճաններով վեր ցատկոտելով, հասավ այնտեղ, ուր մորուքավորի հսկողության տակ էր մնացել նրա հագուստը, պարզվեց, որ հափշտակված է ոչ միայն երկրորդը, այլև առաջինը, այսինքն՝ մորուքավորը։ Ճիշտ այնտեղ, ուր հագուստն էր կիտված, մնացել էին զոլավոր վարտիքը, պատռված տոլստովկան, մոմը, թղթյա սրբապատկերը և մի տուփ լուցկի։ Անզոր կատաղությամբ բռունցքով ինչ-որ մեկին սպառնալով, Իվանը հագավ այն, ինչ մնացել էր։

Այստեղ երկու հանգամանք անհանգստացրին նրան. Նախ, որ

անհետացել էր ՄԱՍՍՈԼԻՏ-ի վկայականը, որից երբեք չէր բաժանվում, ապա այն, որ կհաջողվի՞ իրեն այսպիսի տեսքով անարգել քայլել Մոսկվայի փողոցներում։ Ինչքան չլինի, վարտիք է հագինը... Ճշմարիտն ասած, ում գործն է, բայց և այնպես որևիցե խոչընդոտ կամ հապաղում չառաջանա՞։

Վարտիքի՝ կոճերի մոտ կոճկվող կոճակներն Իվանը պոկեց այն հաշվով, որ այդպիսով վարտիքն ամառային շալվարի տեղ կարող է անցնել, վերցրեց սրբապատկերը, մոմն ու լուցկին և առաջ շարժվեց՝ ինքն իրեն ասելով.

— Դեպի Գրիբոե՛դով։ Ո՛չ մի կասկած, նա այնտե՛ղ է։

Քաղաքն արդեն իրիկնային կյանքով էր ապրում։ Շղթաները զրնգացնելով, փոշի բարձրացնելով, բեռնատարներ անցան, որոնց թափքերին, պարկերի վրա ինչ-որ տղամարդիկ էին պառկած երեսնիվեր։ Բոլոր պատուհանները բաց էին։ Յուրաքանչյուր պատուհանից ներս՝ նարնջագույն լուսամփոփի տակ լույս էր վառվում, և բոլոր պատուհաններից, բոլոր դռներից, բոլոր դարպասատակերից, տանիքներից ու ձեղնահարկերից, նկուղներից ու բակերից դուրս էր հորդում «Եվգենի Օնեգին» օպերայի պոլոնեզի խռպոտ ոռնոցը։

Իվան Նիկոլաևիչի երկյուղը միանգամայն տեղին էր. անցորդներն ուշադրություն էին դարձնում նրա վրա ու ետ-ետ նայում։ Այդ պատճառով էլ վճռեց դուրս գալ մեծ փողոցներից ու տեղ հասնել նրբանցքներով, որտեղ մարդիկ այնքան էլ պնդերես չեն, ու ավելի քիչ հավանական է, թե կկպչեն ոտաբոբիկ մարդուց, ձանձրացնող հարցեր տալով վարտիքի մասին, որը համառորեն չէր ուզում շալվարի նմանվել։

Իվանն այդպես էլ արեց ու խորացավ արբատյան նրբանցքների խորհրդավոր ցանցի մեջ. սկսեց առաջ գնալ պատերի տակով, վախվխելով դեսուդեն նայելով, րոպեն մեկ շրջվելով, ստեպ-ստեպ թաքնվելով մուտքերի մեջ և խուսափելով լուսաֆոր ունեցող խաչմերուկներից, դեսպանական առանձնատների շքեղ դռներից։

Ու նրա այդ դժվարին ճանապարհին, չգիտես ինչու, անտանելիորեն տանջում էր ամենուրեք հնչող երաժշտախումբը, որի նվագակցությամբ մի թանձր բաս երգում էր Տատյանայի հանդեպ տածած իր սիրո մասին։

## ԳԼՈՒԽ V

# ԲԱՆԸ ԲԱՆԻՑ ԱՆՑԱՎ ԳՐԻԲՈԵԴՈՎՈՒՄ

*Հինավուրց, երկհարկանի, բաց դեղնավուն մի տուն կար օղակաձև պուրակի վրա, ցանցառ պարտեզի խորքում, մայթից անջատված թուջե քանդականախշ ցանկապատով։ Տան առջևի ոչ մեծ հրապարակն ասֆալտապատ էր, և ձմռանը այդտեղ ձնաթումբ էր լինում, թին մեջը տնկած, իսկ ամռանը հրապարակը դառնում էր ամառային ռեստորանի մի հոյակապ, պարուսինե ծածկ ունեցող բաժանմունք։*

*Տունը «Գրիբոեդովի տուն» էր կոչվում այն հիմունքով, որ իբր ժամանակին դրա տերը գրողի՝ Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոեդովի մորաքույրն է եղել։ Տեր եղել է նա, թե՝ ոչ, ստույգ չգիտենք։ Որքան հիշում ենք, Գրիբոեդովը որևիցե տնատեր-մորաքույր նույնիսկ չի էլ ունեցել... Բայց և այնպես տունն այդպես էին կոչում։ Ավելին, մոսկովյան մի ստասան պատմում էր, որ իբր թե ա՛յ, այս երկրորդ հարկում, սյունազարդ կլոր դահլիճում, նշանավոր գրողը «Խելքից պատուհաս»-ի հատվածներն է կարդացել օթոցին ընկողմանած այդ նույն մորաքրոջը։ Ասենք, սատանան գիտե, գուցեև կարդացել է, կարևոր չէ։*

*Կարևորն այն է, որ ներկայումս այդ տան տերը հենց նույն ՄԱՍՍՈԼԻՏ-ն էր, որը գլխավորում էր տարաբախտ Միխաիլ Ալեքսանդրովիչ Բեռլիոզը, մինչև իր հայտնվելը Պատրիարքական լճի կողմերում։*

*ՄԱՍՍՈԼԻՏ-ի անդամների օրինակով, տունը ոչ ոք «Գրիբոեդովի տուն» չէր կոչում, այլ բոլորն ուղղակի «Գրիբոեդով» էին ասում։ «Երեկ երկու ժամ քարշ եկա Գրիբոեդովում»։ —«Է, հետո՞»։— «Մի ամսով Յալթա պոկեցի»։— «Կեցցես»։ Կամ՝ «Գնա Բեռլիոզի մոտ, այսօր չորսից հինգը նա ընդունում է Գրիբոեդովում...» ու նման բաներ։*

*Գրիբոեդովում ՄԱՍՍՈԼԻՏ-ն այնպես էր տեղավորվել, որ ավելի լավ ու հարմար պատկերացնել չէր լինի։ Գրիբոեդով մտնող յուրաքանչյուր ոք նախ և առաջ ակամա ծանոթանում էր մարզական զանազան խմբակների հայտարարություններին և ՄԱՍՍՈԼԻՏ-ի անդամների խմբական, նաև անհատական լուսանկարներին, որոնցով (լուսանկարներով) էին պատած երկրորդ հարկ տանող սանդուղքի պատերը։*

*Վերին այդ հարկի առաջին իսկ սենյակի դռան վրա մի խոշոր մակագրություն կար՝ «Ձկնորսաամառանոցային սեկցիա», կողքին էլ կարթն ընկած մի ծածան էր պատկերված։*

*№2 սենյակի դռան վրա ոչ այնքան հասկանալի մի բան էր գրված. «Մեկօրյա ստեղծագործական ուղեգիր։ Դիմել Մ. Վ. Պոդլոժնայային»։*

*Հաջորդ դուռն իր վրա կրում էր հակիրճ, բայց բոլորովին անհասկանալի մակագրություն՝ «Պերելիգինո»։ Հետո արդեն Գրիբոեդովի պատահական այցելուի աչքերն սկսում էին շաղվել մորաքրոջ ընկուզենիայտ դռների վրա սփռված մակագրություններից. «Թղթի հերթի գրանցումը՝ Պոկլյովկինայի մոտ», «Դրամարկղ», «Սկետչիստների անձնական վերջնահաշիվ»...*

*Դեռ ներքևից, բարապանի սենյակի մոտից սկսվող երկարաշունչ հերթը հաղթահարելով, կարելի էր տեսնել «Բնակարանային հարցեր» մակագրությունը մի դռան վրա, որն ամեն վայրկյան բացվում-փակվում էր մարդկանց առաջ։*

*Բնակարանային հարցերից այն կողմ մի շքեղ պլակատ էր բացվում, որի վրա պատկերված էր ժայռ, դրա կատարով ձիավոր էր սլանում՝ այծենակաճով, հրացանն ուսին։ Ներքևում՝ արմավենիներ ու պատշգամբ, պատշգամբում՝ մազափնջով, չափազանց ժիր աչքերով երկինքներին նայող մի երիտասարդ՝ ինքնահոս գրիչը ձեռքին։ Մակագրությունը՝ «Ստեղծագործական լիածավալ արձակուրդներ՝ երկու շաբաթից (պատմվածք-նովել) մինչև մեկ տարի (վեպ, եռագրություն)։ Յալտա, Սուուկ-Սու, Բորովոյե, Ցիխիձիրի, Մախինջաուրի, Լենինգրադ (Ձմեռային պալատ)»։ Այս դռան մոտ նույնպես հերթ կար, բայց ոչ անչափ շատ, մի հարյուր հիսուն մարդ։*

*Ապա գրիբոեդովյան տան քմահաճ ոլորադարձերի, վեր ու վար տանող սանդուղքների կամքով հետևում էին՝ «ՄԱՍՍՈԼԻՏ-ի վարչություն»-ը, № 2, 3, 4, 5 դրամարկղեր»-ը, «Խմբագրական կոլեգիա»-ն, «ՄԱՍՍՈԼԻՏ-ի նախագահ»-ը, «Բիլիարդանոց»-ը, օժանդակ զանազան հիմնարկություններ, և վերջապես սյունազարդ հենց այն դահլիճը, ուր մորաքույրը վայելել էր հանճարեղ ազգականի կատակերգությունը։*

*Յուրաքանչյուր այցելու, եթե իհարկե կատարյալ բթամիտ չէր, Գրիբոեդով ընկնելով, իսկույն կհասկանար, թե ինչքան լավ են ապրում այդ բախտավորները՝ ՄԱՍՍՈԼԻՏ-ի անդամները, ու սև նախանձն իսկույն կսկսեր կրծել նրան։ Անմիջապես էլ եր-*

կինք կհղեր դառը կշտամբանքներ, որ ծնվելիս երկինքն իրեն չէր պարգևել դրական տաղանդ, առանց որի, բնականաբար, երազել անգամ չէր կարող՝ տեր դառնալ ՄԱՍՍՈԼԻՏ-յան անդամատոմսին՝ դարչնագույն, թանկարժեք կաշվի հոտ արձակող, ոսկեզօծ լայն եզրաշերտով, ամբողջ Մոսկվային հայտնի անդամատոմսին։

Ո՞վ ինչ կասի ի պաշտպանություն Նախանձի։ Դա գեշ տեսակի զգացում է, բայց և այնպես հարկ է մտնել նաև այցելուի դրության մեջ։ Չէ որ այն, ինչ տեսնում էր նա վերևի հարկում, դեռևս բոլորը չէր, ամենևին էլ ոչ բոլորը։ Մորաքրոջ տան ներքևի հարկն ամբողջությամբ ռեստորանն էր զբաղեցնում, այն էլ ինչպիսի՜ ռեստորան։ Իրավացիորեն ամենալավագույնն էր համարվում Մոսկվայում։ Եվ ոչ միայն այն պատճառով, որ տեղավորված էր կամարակապ երկու խոշոր դահլիճներում, որոնց առաստաղներին ասորական բաշերով մանուշակագույն նժույգներ էին նկարած, ոչ միայն այն պատճառով, որ յուրաքանչյուր սեղանիկ իր լամպն ուներ՝ ծածկոցով, ոչ միայն այն պատճառով, որ փողոցից առաջին պատահած մարդը չէր կարող այնտեղ սողոսկել, այլ նաև նրա համար, որ իր մթերքի որակով Գրիբոեդովը գերազանցում էր Մոսկվայի ցանկացած ռեստորանը և որ այդ մթերքը բաց էր թողնվում ամենամատչելի, ամենևին ոչ բարձր գնով։

Դրա համար զարմանալի ոչինչ չկա թեկուզ նման մի խոսակցության մեջ, որ ճշմարտապատում այս տողերի հեղինակն է լսել մի անգամ Գրիբոեդովի թուջե ցանկապատի մոտ:

— Ամվրոսի, այսօր որտե՞ղ ես ընթրելու։

— Դա ի՞նչ հարց էր, թանկագին Ֆոկա, իհարկե, այստեղ։ Արչիբալդ Արչիբալդովիչն այսօր ականջիս ասաց, որ մանր սուդակ է լինելու ա՛ նաթյուրել։ Վիրտուո՛զ բան է։

— Ապրելու ձևը գիտես, Ամվրոսի,— հոգոց հանելով պատասխանեց նիհար, թափթփված, վզին չիբան բուսած Ֆոկան վարդաշուրթ հսկային՝ ոսկեմազ, կարմրայտ Ամվրոսի-բանաստեղծին։

— Հատուկ ձև չկա,— առարկեց Ամվրոսին, —կա մարդավարի ապրելու սովորական ցանկություն։ Ֆոկա, դու ուզում ես ասել, որ մանր սուդակ լինում է նաև «Կոլիզեյ»-ում։ Բայց «Կոլիզեյ»-ում սուդակի բաժինն արժե տասներեք ռուբլի տասնըհինգ կոպեկ, իսկ մեզ մոտ՝ հինգ ու հիսուն։ Դրանից բացի,

«Կոլխիդա»-ում սուրճը երեք օրով է մնում, դրանից էլ բացի, ոչ մի երաշխավորություն չունես, թե Թամերլանյան ներանցներից ռեստորան ներխուժած առաջին պատահած երիտասարդը խաղողի ողկույզով չի հասցնի քթամասությունը։ Չէ, ես կտրականապես դեմ եմ «Կոլխիդա»-ին — փորփրելով մեկ թնդում էր խորտիկագետ Ամվրոսիի ձայնը։— Ինձ մի՛ համոզիր, Ֆոկա։

— Ես քեզ չեմ համոզում, Ամվրոսի,— ծղրտում էր Ֆոկան։ —Տանն էլ կարելի է ընթրել։

— Քա՛վ լիցի, — շեփորում էր Ամվրոսին, — պատկերացնում եմ կնոջդ, որը փորձում է ընդհանուր խոհանոցում կաթսայի մեջ մանր սուդակ պատրաստել ա՛ նաթյուղէլ։ Հի՛-հի՛-հի՛... Օրվա՞ր, Ֆոկա,— և երգելով, Ամվրոսին քայլերն ուղղեց պատըշգամբ, ծածկի տակ։

Է՛հ-հո՛-հո՛... Այո, ինչե՛ր են եղել, ինչե՛ր... Մոսկովյան հնաբնակները հիշում են հռչակավոր Գրիբոեդովը։ Ի՞նչ բան էր եփած մանր սուդակի բաժինը։ էժա՛ն բան էր, սիրելի Ամվրոսի։ Հապա ստերլե՛տը, ստերլե՛տը՝ արծաթաջօծ ամանի մեջ, կտոր-կտոր, արանքներում՝ խեցգետնի վզիկներ ու թարմ խավիար։ Հապա շամպինյոնի պյուրեով կոկոտ-հավկի՛թը՝ գավաթների մե՞ջ։ Իսկ կեռնեխի ֆիլեն ձեզ դուր չէ՞ր գալիս։ Գետնասնկո՞վ։ Ծննովական լո՞րը հապա։ Տաս ու հիսուն։ Ջհաշված ջազը, չհաշված բարեկիրթ սպասարկումը։ Իսկ հուլիսին, երբ ամբողջ ընտանիքդ ամառանցում է, և գրական անհետաձգելի գործերը քեզ քաղաքում են պահում, պատշգամբում, փաթաթվող խաղողի ստվերում, ձյունաթույր սփռոցների վրա որպես ոսկե բիծ, պրենտանյեր-արգանակի պնա՞կը։ Հիշո՞ւմ եք, Ամվրոսի։ Հարցնելո՞ւ բան է։ Ձեր շրթունքներից եմ տեսնում, որ հիշում եք։ Ինչ են ձեր մանր սիգե՛րը, սուդակնե՛րը։ Հապա կտցարնե՞րը, հարշնեպնե՞րը, բեկասնե՞րը, վալդշնեպնե՞րն ըստ սեզոնի, լորե՞րը, կաքավնե՞րը։ Կոկորդի մեջ ֆշշացող նարզա՞նը։ Բայց բավական է, դու շեղվում ես, ընթերցող։ Հետևիր ինձ...

Այդ երեկո, ժամը տասն անց կեսին, երբ Բեռլիոզը վախճանվեց Պատրիարքական լճի մոտ, Գրիբոեդովի երկրորդ հարկում լուսավորված էր միայն մի սենյակ, ուր հալումաշ էին լինում տասներկու գրողներ, որոնք հավաքվել էին նիստի և սպասում էին Միխայիլ Ալեքսանդրովիչին։

ՄԱՍՍՈԼԻՏ-ի վարչության սենյակում, աթոռների, սեղանների, նույնիսկ երկու լուսամուտագոգերի վրա նստած մարդիկ

լրջորեն տառապում էին տոթից։ Թարմ օդի և ոչ մի շիթ չէր թափանցում բաց պատուհաններից։ Մոսկվան վերադարձնում էր օրվա ընթացքում ասֆալտի մեջ կուտակված շոգը, և պարզ էր, որ գիշերը թեթևացում չի բերելու։ Մորաքրոջ տան նկուղից, ուր ռեստորանի խոհանոցն էր աշխատում, սոխի հոտ էր գալիս. և բոլորը ծարավ էին, բոլորը նյարդայնացած էին ու բարկացած։

Արձակագիր Բեսկուդնիկովը՝ սուսուփուս, վայելուչ հագնված, ուշադիր, միաժամանակ անըմբռնելի աչքերով մի մարդ, հանեց ժամացույցը։ Սլաքը մոտենում էր տասնմեկին։ Բեսկուդնիկովը մատով խփեց թվացույցին, ցույց տվեց հարևանին՝ բանաստեղծ Դվուբրատսկուն, որը, սեղանին նստած, տաղտուկից ճոճում էր ոտքերը՝ ռետինե ներբաններով, դեղին կոշիկներ էր հագել։

— Էհե՛,— փնթփնթաց Դվուբրատսկին։

— Չլինի տղեն նստել-մնացել է Կլյազմայում,— թավ ձայնով արձագանքեց Նաստասյա Լուկինիշնա Նեպրեմենովան՝ մոսկովյան վաճառականի որբացած դուստրը, որ գրող էր դարձել ու ծովամարտեր պատկերող պատմվածքներ էր գրում «Շտուրման Ժորժ» կեղծանվամբ։

— Ներեցե՛ք,— համարձակորեն սկսեց տարածված սկետչների հեղինակ Զագրիվովը։— Հիմա ես էլ մեծ հաճույքով թեյ կխմեի պատշգամբում, փոխանակ այստեղ խաշվելու։ Նիստը ժամը տասին չի՞ նշանակված։

— Բայց հիմա ի՜նչ լավ է Կլյազմայում,— ներկաներին դրդեց Շտուրման Ժորժը, իմանալով, որ Կլյազմային մերձակա գրողների ամառանոցային Պերելիգինո ավանը բոլորի ցավոտ տեղն է։ — Վայ թե հիմա սոխակներն էլ են երգում։ Ես միշտ ավելի լավ եմ աշխատում քաղաքից դուրս, հատկապես գարնանը։

— Երրորդ տարին է, փող եմ մուծում, որպեսզի բազեդովյան հիվանդությամբ տառապող կնոջս այդ դրախտն ուղարկեմ, բայց դեռ բան չի երևում,— թունայի և դառնագին ասաց նովելիստ Իերոնիմ Պոպրիխինը։

— Նայած ում բախտն ինչպես կբերի,— լուսամտագոգի վրայից բոբռաց քննադատ Աբաբկովը։

Շտուրման Ժորժի փոքրիկ աչքերի մեջ ուրախություն թրթռաց, և, իր կոնտրալտոն մեղմելով, նա ասաց.

— Պետք չի նախանձել, ընկերներ։ Ընդամենը քսաներկու ամառանոց կա, յոթն էլ կառուցվում է, իսկ ՄԱՍՍՈԼԻՏ-ում երեք հազար մարդ ենք։

— Երեք հազար հարյուր տասնմեկ մարդ,— մեջ ընկավ անկյունում նստած ինչ-որ մեկը։

— Ըհը, տեսնում եք,— շարունակեց Շտուրմանը— ի՞նչ անենք։ Բնականաբար ամառանոց ստացել են մեզնից ամենատաղանդավորները...

— Գեներալնե՞րը,— ուղղակի ծեծկռտուքի մեջ շեշտակի մխրճվեց սցենարիստ Գլուխարևը։

Շինծու հորանջելով, Բեսկուդնիկովը դուրս գնաց սենյակից։

— Մեն-մենակ հինգ սենյակ ունի Պերելիգինոյում,— նրա ետևից ասաց Գլուխարևը։

— Լավրովիչը մեն-մենակ վեցն ունի,— ճչաց Դենիսկինը,— ճաշասենյակն էլ՝ կաղնեփայտով պատած։

— Է, հիմա բանը դա չէ, — թնդաց Աբաբկովը,— այլ այն, որ տասնմեկն անց է կես։

Աղմուկ առաջացավ, խռովության պես մի բան էր հասունանում։ Սկսեցին զանգահարել ատելի Պերելիգինո, ընկան ուրիշ ամառանոց, Լավրովիչինը, իմացան, որ Լավրովիչը գետափ է գնացել, դրանից լիովին վհատվեցին։ Լրացուցիչ 930-ով, հենց այնպես զանգահարեցին գեղարվեստականության հանձնաժողով, և, ինչ խոսք, այնտեղ ոչ ոք չկար։

— Նա կարող էր և զանգահարե՜լ,— բղավում էին Դենիսկինը, Գլուխարևը և Կվանտը։

Ա՜հ, իզուր էին բղավում նրանք. Միխայիլ Ալեքսանդրովիչը ոչ մի տեղ չէր կարող զանգահարել։ Գրիբոեդովից հեռու-հեռու, հազարմոմանոց լամպերով լուսավորված վիթխարի դահլիճում, ցինկապատ երեք սեղանների վրա դրված էր այն, ինչ դեռևս քիչ առաջ Միխայիլ Ալեքսանդրովիչն էր։

Առաջին սեղանի վրա մերկ մարմինն էր, լերդացած արյունը վրան, ձեռքը՝ ջարդած, կրծքավանդակը՝ ճմլված, մյուսի վրա գլուխն էր, ատամները՝ փշրված, պղտոր, բաց աչքերով, որոնք չէին վախենում շլացուցիչ լույսից, իսկ երրորդ սեղանի վրա՝ արյունից կոշտացած լաթերի մի կույտ։

Գլխատվածի մոտ կանգնած էին դատաբժշկության պրոֆեսորը, պաթոլոգանատոմն իր օգնականի հետ, հետաքննության ներկայացուցիչները և հիվանդ կնոջ մոտից հեռախոսով կանչ-

ված գրող Ժելդիբինը՝ Միխաիլ Ալեքսանդրովիչ Բեռլիոզի տեղակալը՝ ՄԱՍՍՈԼԻՏ-ի գծով։

Մեքենա էին ուղարկել Ժելդիբինի համար և, առաջին հերթին, հետաքննության ներկայացուցիչների հետ նրան տարել էին սպանվածի բնակարանը (կեսգիշերին մոտ էր դա), ուր կնքել էին հանգուցյալի թղթերը, հետո արդեն բոլորով դիարան էին եկել։

Այժմ սրա հանգուցյալի աճյունի մոտ կանգնածները խորհրդակցում էին. թե ինչպես ավելի լավ կլինի՝ կտրված գլուխը կարե՞ն մարմնի՞ն, թե մարմինը գրիբոեդովյան դահլիճում դնեն, սպանվածին մինչև կզակը պարզապես սև կտորով ծածկելով։

Այո, Միխաիլ Ալեքսանդրովիչը ոչ մի տեղ չէր կարող զանգահարել, և միանգամայն իզուր էին վրդովվել ու բղավում Դենիսկինը, Գլուխարևը, Կվանտն ու Բեսկուդնիկովը։ Ուղիղ կեսգիշերին տասներկու գրողներն էլ թողեցին վերին հարկն ու ռեստորան իջան։ Այստեղ կրկին մտքներում հայհոյեցին Միխաիլ Ալեքսանդրովիչին. պատշգամբի բոլոր սեղանները, բնականաբար, արդեն զբաղված էին, և ստիպված էին ընթրել այդ գեղեցիկ, բայց հեղձուցիչ դահլիճներում։

Եվ ճիշտ կեսգիշերին առաջին դահլիճում ինչ-որ բան դղրդաց, զրնգաց, սփռվեց ու թրթռաց։ Եվ անմիջապես տղամարդկային մի բարակ ձայն բղավեց երաժշտության նվագակցությամբ՝ «Ալելույա՜»։ Գրիբոեդովյան հռչակավոր ջազն էր սկսել նվագել։ Քրտինքով պատած դեմքերն ասես պայծառացան, թվաց, թե կենդանացան առաստաղի վրա նկարած նժույգները, ասես ուժեղացրեցին լամպերի լույսը, և հանկարծ, կարծես շղթայից պոկված, պարեց երկու դահլիճը, նրանցից հետո պատշգամբն էլ պարեց։

Պարեց Գլուխարևը բանաստեղծուհի Տամարա Պոլումեսյացի հետ, պարեց Կվանտը, վիպասան Ժուկոպովը պարեց դեղին հագուստով մի կինոդերասանուհու հետ։ Պարում էին՝ Դրագունսկին, Չերդակչին, փոքրամարմին Դենիսկինը վիթխարի Շտուրման Ժորժի հետ, պարում էր գեղեցկուհի ճարտարապետ Սեմեյկինա-Գալլը, որին ամուր գրկել էր սպիտակ շալվար հագած անհայտ մեկը։ Պարում էին յուրայինները և հրավիրված հյուրերը, մոսկվացիներն ու եկվորները, Կրոնշտադցի գրող Իոհաննը, Ռոստովից եկած ինչ-որ Վիտյա Կուֆտիկ՝ ռեժիսոր էր թերևս, ամբողջ այտը մանուշակագույն որքինով

պատած, պարում էին ՄԱՍՍՈԼԻՏ-ի բանաստեղծական ենթաբաժնի նշանավորագույն ներկայացուցիչները, այսինքն՝ Պավիանովը, Բոգոխուլսկին, Սլադկին, Շպիչկինը և Ադելֆինա Բուզդյակը, պարում էին բոքս սանրվածքով, բամբակով ուռեցրած ուսերով անհայտ մասնագիտության տեր երիտասարդներ, պարում էր շատ տարեց, մորուքավոր, կանաչ սոխի պոչը մորուքի մեջ մնացած մի մարդ, նրա հետ պարողը տարիքն առած, սակավարյունությունից հյուծված մի օրիորդ էր՝ նարնջագույն մետաքսե ճմրթված հագուստով։

Քրտինքի մեջ կորած մատուցողները գարեջրի քրտնապատ գավաթներ էին տանում գլխներից բարձր բռնած, խռպաձայն, ատելությամբ բղավելով. «Կնե՛րե՛ք, քաղաքացի»։ Ինչ-որ տեղից խոսափողի մեջ մի ձայն կարգադրում էր. «Մեկ բաժին Ղարսի խորոված։ Երկու զուբրիկ։ Գոսպոդարական ֆլյակի»։ Բարակ ձայնն արդեն չէր երգում, այլ կաղկանձում էր՝ «Ալելույա՜»։ Ջազի ոսկեգույն ծնծղաների ղնգղնգոցը երբեմն խլանում էր ամանեղենի շխկշխկոցից, որն աման լվացողները թեք հարթությամբ խոհանոց էին իջեցնում։ Մի խոսքով՝ դժոխք։

Ու կեսգիշերին տեսիլք հայտնվեց դժոխքում։ Պատշգամբ ելավ գեղեցկատես, սևակն մի տղամարդ՝ դաշույնաձև մորուքով, ֆրակով, ու արքայական նայվածքով ընդգրկեց իր տիրույթը։ Ասու՛մ, ասու՛մ էին միստիկները, որ ժամանակ կար, երբ այդ գեղեցկատեսը ֆրակ չէր հագնում, այլ կաշվե լայն գոտի էր կապում, որի տակից ատրճանակի կոթեր էին դուրս ցցված, սևաթույր մազերին կարմիր մետաքս էր փաթաթում, ու նրա հրամանատարության ներքո Կարաիբյան ծովում առագաստանավ էր լողում մահատեսիլ սև դրոշակով, ագամագլուխը՝ վրան։

Բայց ո՛չ, ո՛չ։ Ստո՛ւմ են սնաբարբառ-միստիկները, Կարաիբյան ծովեր չկան աշխարհում, ու այդ ծովերում հանդուգն ծովահեններ չեն լողում և չի հետապնդում կորվետը նրանց ու թնդանոթի ծուխը չի սփռվում ալիքի վրա։ Չկա՛ ոչինչ, ոչինչ էլ չի՛ եղել։ Ահա, մի թառամած լորենի կա, թուջե ցանկապատ կա, որից այն կողմ պուրակն է... Եվ հալվում է սառույցը սկահակի մեջ, հարևան սեղանի վրա ինչ-որ մեկի արնակոխ, ցուլի աչքերն են երևում, ու սարսափելի է, սարսափելի... Ո՜վ աստվածներ, իմ աստվածներ, թույն տվեք ինձ, թույն...

Եվ հանկարծ սեղանի վրայից մի բառ թռավ. «Բեռլիոզը»։ Հանկարծ նվագախումբը քանդվեց ու սկվեց, կարծես թե մեկը

յունցքով հարվածեց գլխին. «Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ»։— «Բեռլի՛նը»։ Ու սկսեցին վեր թռչել տեղներից, սկսեցին բղավել...

Այո, վշտի ալիք բարձրացավ Միխայիլ Ալեքսանդրովիչի մասին սարսափելի բոթի հետ։ Ինչ-որ մեկն իրար էր անցել, բղավում էր, որ անհրաժեշտ է հենց հիմա, տեղնուտեղը, առանց դեսուդեն ընկնելու խմբական հեռագիր կազմել և անհապաղ ուղարկել։

Բայց եկեք հարցնենք, ի՞նչ հեռագիր և՝ ո՞ւր։ Եվ ինչո՞ւ ուղարկել։ Իսկապես՝ ո՞ւր։ Եվ ինչ հեռագիր էլ ուզում է լինի, պե՞տք է արդյոք դա նրան, ում ջնջխված ծոծրակն այժմ սեղմված է դիահերձողի ռետինե ձեռքերի մեջ, ում պարանոցն այժմ կեռ ասեղներով է ծակծկում պրոֆեսորը։ Վախճանվել է նա, ու ոչ մի հեռագիր պետք չէ նրան։ Ամեն ինչ վերջացած է, այլևս չծանրաբեռնենք հեռագրատունը։

Այո, վախճանվել է, վախճանվել... Բայց չէ որ մենք ո՛ղջ ենք։

Այո, բարձրացավ վշտի ալիքը, բայց մնաց կատարին, մնաց ու սկսեց իջնել, ինչ-որ մեկն արդեն վերադարձավ իր սեղանի մոտ և սկզբում ծածուկ, հետո էլ բացահայտ օղի խմեց, ուտելիք գցեց բերանը։ Իրոք, թողնենք փչանա՞ հավի մսի դե-վոլյայ կոտլետը։ Ինչո՞վ կարող ենք օգնել Միխայիլ Ալեքսանդրովիչին։ Նրանով, որ քաղցա՞ծ մնանք։ Մենք ողջ ենք, չէ՞։

Հասկանալի է, դաշնամուրը փակեցին բանալիով, նվագախումբը ցրվեց, մի քանի ժուռնալիստ գնացին իրենց խմբագրությունները՝ մահախոսականներ գրելու։ Հայտնի դարձավ, որ դիարանից եկել է Ժելդիբինը։ Նա տեղավորվեց հանգուցյալի աշխատասենյակում, վերևում, և անմիջապես լուր տարածվեց որ հենց նա էլ փոխարինելու է Բեռլիոզին։ Ժելդիբինը ռեստորանից իր մոտ կանչեց վարչության բոլոր տասներկու անդամներին, և Բեռլիոզի աշխատասենյակում շուտափույթ սկսված նիստում ծայր առավ անհետաձգելի հարցերի քննարկումը գրիբոեդովյան դահլիճի հարդարման, աճյունը դիարանից դահլիճ տեղափոխելու, հասարակայնության մուտքն ապահովելու և այդ վշտալի դեպքի հետ կապված այլևայլ բաների մասին։

Իսկ ռեստորանը վերադարձավ իր սովորական գիշերային կյանքին և այդպես էլ կմնար մինչև փակվելը, այն է՝ մինչև առավոտյան ժամը չորսը, եթե չկատարվեր մի բան, արդեն չա-

փազանց արտառոց մի բան, որը ռեստորանի այցելուներին ապշեցրեց ավելի, քան Բեռլիոզի վախճանվելու լուրը։

Առաջինն իրար անցան գրիբոեդովյան տան դարպասի մոտ հերթապահող կառապանները։ Լսվեց, թե ինչպես նրանցից մեկը, նստիքի վրա բարձրացած, բղավեց.

— Օ՜-հո՜։ Մի նայե՜ք, նայե՜ք։

Դրանից հետո, չգիտես որտեղից, թուջե ցանկապատի մոտ մի թույլ կրակ առկայծեց ու սկսեց մոտենալ պատշգամբին։ Սեղանների շուրջ նստածները բարձրացան տեղներից, նայեցին ու տեսան, որ կրակի հետ դեպի ռեստորան է քայլում մի սպիտակ ուրվական։ Երբ մոտենում էր պատատաճաղերին, բոլորն ասես քարացան սեղանների մոտ, աչքները չռած, ստերլետի կտորները՝ պատառաքաղների վրա։ Բարապանը, որ ռեստորանի հանդերձարանից այդ պահին բակ էր դուրս եկել՝ ծխելու, տրորեց գլանակն ու արդեն վազում էր ուրվականի կողմը՝ նրա մուտքը ռեստորան արգելելու ակնհայտ նպատակով, չգիտես ինչու, դա չարեց ու կանգ առավ՝ հիմարավուն ժպիտը դեմքին։

Եվ ուրվականը, պատատաճաղերից անցնելով, անարգել մըտավ պատշգամբ։ Այստեղ բոլորը տեսան, որ ամենևին էլ ուրվական չէ նա, այլ Իվան Նիկոլաևիչ Պոնիրևը՝ հանրահռչակ բանաստեղծ Անապաստանը։

Նա ոտաբոբիկ էր, զոլավոր սպիտակ վարտիքով, պատառոտված սպիտակ տոլստովկայով, որի վրա թղթե սրբապատկեր էր կպցրած գնդասեղով, անհայտ մի սրբի ջնջված պատկերով։ Իվան Նիկոլաևիչը պսակի վառվող մոմ ուներ ձեռքում։ Իվան Նիկոլաևիչի աջ այտին թարմ ճանկռվածք կար։ Պատշգամբում տիրած լռության խորությունը դժվար էր չափել անգամ։ Մատուցողներից մեկի ձեռքում թեքված գավաթից գարեջուրը ծլլում էր հատակին։

Բանաստեղծը գլխից վեր բարձրացրեց մոմն ու բարձրաձայն ասաց.

— Բարաչողո՛ւմ, տղերք,— որից հետո նայեց ամենամոտ սեղանի տակն ու տրտմած բացականչեց.— Չէ՛, նա այստեղ չէ։

Երկու ձայն հնչեց։ Բասն ասաց անողորմ.

— Բանը բանից անցել է։ Սպիտակ տենդ։

Երկրորդը կանացի վախեցած ձայն էր.

— Իսկ ինչպե՞ս է միլիցիան նրան թողել, որ այս տեսքով փողոց դուրս գա։

Իվան Նիկոլաևիչն այս մեկը լսեց ու պատասխանեց.

— Երկու անգամ ուզեցան բռնել, Սկատերտնիում ու այստեղ՝ Բրոննայայի վրա, բայց ցանկապատից թռա ու, չե՞ք տեսնում, այսպես ճղվեց։— Իվան Նիկոլաևիչն այստեղ բարձրացրեց մոմն ու բղավեց. — Գրչեղբայրնե՛ր։ (Նրա խռպոտ ձայնն ամրացավ ու ջերմացավ)։ Ի՛նձ լսեք բոլորդ։ Նա հայտնվե՛լ է։ Անհապաղ բռնեք նրան, թե չէ անպատմելի փորձանքնե՛ր կբերի։

— Ի՞նչ։ Ի՞նչ։ Ի՞նչ ասաց։ Ո՞վ է հայտնվել,— բոլոր կողմերից ձայներ լսվեցին։

— Խորհրդականը,— պատասխանեց Իվանը,— և այդ խորհրդականը հենց նոր Պատրիարքական լճի մոտ սպանեց Միշա Բեռլիոզին։

Ներսի դահլիճից պատշգամբ լցվեց ժողովուրդը, Իվանի կրակի շուրջը ամբոխ հավաքվեց։

— Ներեցեք, ներեցեք, ավելի ստույգ ասեք,— Իվան Նիկոլաևիչի ականջի մոտ մեղմ ու բարեկիրթ մի ձայն հնչեց, — ասացեք, ինչպե՞ս թե սպանեց։ Ո՞վ սպանեց։

— Արտասահմանյան խորհրդակա՛նը, պրոֆեսոր է և լրտես, —շուրջը նայելով պատասխանեց Իվանը։

— Իսկ ի՞նչ էր ազգանունը,— մեղմաձայն հարցրեցին ականջի մոտ։

— Ա՛, ազգանունը, —տրտմագին բացականչեց Իվանը,— թե կիմանայի ազգանունը։ Այցետոմսի վրա լավ չտեսա ազգանունը ... Միայն առաջին «Վե» տառը տեսա, «Վե»-ով էր սկսվում ազգանունը։ Ի՞նչ ազգանուն էր «Վե»-ով,— ձեռքով ճակատը բռնած , ինքն իրեն հարցրեց Իվանը և հանկարծ մրթմրթաց.— Վե, վե, վե։ Վա... Վո... Վաշնե՞ր։ Վագնե՞ր։ Վայնե՞ր։ Վեգնե՞ր։ Վինտե՞ր,— Իվանի գլխի մազերը շարժվեցին լարվածությունից։

— Վո՞ւլֆ,— աղիողորմ ծղրտաց մի կին։

Իվանը զայրացավ։

— Տխմա՛ր,— գոռաց նա՝ աչքերով փնտրելով ծղրտացողին։ —Ի՞նչ կապ ունի այստեղ Վուլֆը։ Վուլֆը ոչ մի մեղք չունի։ Վո... Վո... Չէ։ Այսպես չեմ հիշի։ Գիտեք ինչ, քաղաքացիներ, շտապ զանգեք միլիցիա, թող գնդացրավոր հինգ մոտոցիկլ ուղարկեն պրոֆեսորին բռնելու։ Չմոռանաք ասել, որ հետը երկուսն էլ կան. մեկը լողլող, վանդակավոր... ակնոցը ճաքած...

ու՝ սև կատու, չար։ Ես էլ Գրիբոեդովը կխուսարկեմ... Զգո՞ւմ եմ, որ նա այստեղ է։

Իվանն անհանգիստ վիճակի մեջ ընկավ, դեսուդեն հրեց շրջապատողներին, սկսեց թափահարել մոմը՝ հալվածքը վրան թափելով ու սեղանների տակ նայելով։ Մի բառ լսվեց. «Բժի՜շկ», և ինչ-որ մեկի փաղաքուշ, մսեղ դեմքը՝ սափրված ու պարարտ, եղջրաշրջանակ ակնոցով, հայտնվեց Իվանի դիմաց։

— Ընկեր Անապաստան,— խոսեց այդ դեմքը հոբելյանական ձայնով,— հանգստացե՛ք։ Դուք վշտացած եք բոլորիս կողմից սիրված Միխայիլ Ալեքսանդրովիչի... ոչ, պարզապես Միշա Բեռլիոզի մահվամբ։ Այդ ամենը մենք շատ լավ հասկանում ենք։ Ձեզ հանգիստ է պետք։ Հիմա ընկերները ձեզ կտանեն, անկողին կդնեն, և դուք կմոռանաք...

— Լսիր,— ատամները մերկացրած, նրան ընդհատեց Իվանը, — հասկանո՞ւմ ես, որ պետք է բռնել պրոֆեսորին։ Իսկ դու գլո՞ւխ ես տանում հիմար-հիմար բաներով։ Ապո՛ւշ։

— Ընկեր Անապաստան, ներեցեք,— պատասխանեց դեմքը՝ կարմրելով, ետ քաշվելով ու արդեն զղջալով, որ մեջ ընկավ։

— Չէ, ում ասես կներեմ, բայց քեզ չեմ ների,— անվրդով ատելությամբ ասաց Իվան Նիկոլաևիչը։

Նրա դեմքը ջղաձգվեց, աջ ձեռքից մոմն արագ տարավ ձախ ձեռքը, թափ առավ ու խփեց կարեկից այդ դեմքի ականջին։

Այստեղ գլխի ընկան վրա պրծնել Իվանին, ու վրա պրծան։ Մոմը հանգավ, և դեմքից ցած ընկած ակնոցը վայրկենապես տրորվեց։ Իվանը մարտական սարսափազդու ճիչ արձակեց, որն, ի գայթակղություն բոլորի, նույնիսկ պուրակում լսվեց, և սկսեց պաշտպանվել։ Սեղանների վրայից զնգզնգոցով ամանեղեն թափվեց, կանայք ծղրտացին։

Մինչ մատուցողները սրբիչներով կապկպում էին բանաստեղծին, հանդերձարանում խոսակցություն կայացավ առագաստանավի հրամանատարի և բարապանի միջև։

— Դու տեսա՞ր, որ նա ոտաշորով է,— սառնությամբ հարցրեց ծովահենը։

— Արչիբալդ Արչիբալդովիչ, ախր,— վախվխելով պատասխանեց բարապանը,— ինչպես կարող եմ ներս չթողնել, թե որ ՄԱՍՍՈԼԻՏ-ի անդամ է։

— Դու տեսա՞ր, որ նա ոտաշորով է, — կրկնեց ծովահենը։

— Կներեք, Արչիբալդ Արչիբալդովիչ,— շառագունած ասաց

բարապանը,— Ես ի՞նչ կարող եմ անել։ Հասկանում եմ, պատըշ-գամբում կանայք կան նստած...

— Կանայք այստեղ կապ չունեն, կանանց համար դա մեկ է, — պատասխանեց ծովահենը՝ բարապանին տառացիորեն խանձելով աչքերով, — իսկ միլիցիայի համար մեկ չէ։ Շապիկ-ոտաշորով մարդը միայն մի՛ դեպքում կարող է քայլել Մոսկվայի փողոցներով, եթե միլիցիան է ուղեկցում նրան, և միայն մի՛ տեղ կարող է գնալ՝ միլիցիայի բաժանմունք։ Իսկ դու, եթե բարապան ես, պիտի իմանաս, որ այդպիսի մարդ տեսնելիս պարտավոր ես առանց մի վայրկյան կորցնելու սուլել։ Լսո՞ւմ ես։

Նիսախենթացած բարապանը պատշգամբից եկող տնքոցներ, ջարդվող ամանեղենի ձայն ու կանացի ծղրտոցներ էր լսում։

— Հիմա քեզ ի՞նչ անեմ սրա համար,— հարցրեց ծովահենը։

Բարապանի դեմքի մաշկը տիֆային երանգ ստացավ, աչքերը մարեցին։ Նրան թվաց, թե սև, ներկայումս կողք սանրած մազերը հրակարմիր մետաքսով փաթաթվեցին։ Չքացան պլաստրոնն ու ֆրակը, և կաշվե գոտու տակից երևաց ատրճանակի կոթը։ Բարապանն իրեն կախված պատկերացրեց առագաստակալի կատարից։ Սեփական աչքերով տեսավ իր իսկ դուրս ընկած լեզուն և ուսին կախված անկենդան գլուխը, նույնիսկ նավակողին խփվող ալիքի ճողփյունը լսեց։ Բարապանի ծնկները ծալվեցին։ Բայց այստեղ ծովահենը խղճաց նրան ու հանգցրեց իր այրող հայացքը։

— Տես, հա՛, Նիկոլայ։ Վերջին անգամը լինի։ Այդ տեսակ բարապաններ մեր ռեստորանին ձրի էլ պետք չեն։ Գնա, եկեղեցու պահակ դարձիր։ — Այդ ասելով, հրամանատարը կարգադրեց կտրուկ, հստակ, արագ։— Պանտելեյին կանչի՛ր բուֆետից։ Միլիցիոնե՛ր։ Արձանագրությո՛ւն։ Մեքենա՛։ Հոգեբուժակա՛ն։— Եվ ավելացրեց.— Սուլի՛ր։

Քառորդ ժամ անց ոչ միայն ռեստորանի հասարակությունը, այլ նաև պուրակում, ռեստորանի այգուն նայող տների պատուհաններում հայտնված, անչափ զարմացած մարդիկ տեսան, թե ինչպես Պանտելեյը, բարապանը, միլիցիոները, մատուցողը և բանաստեղծ Ռյուխինը Գրիբոեդովի դարպասից դուրս բերեցին տիկնիկի պես բարուրած մի երիտասարդի, որը, արցունքները կուլ տալով, թքոտում էր, աշխատելով թքել հատկապես Ռյուխինի երեսին, արցունքները խեղդում էին նրան, և նա բղավում էր.

— Սրիկա՛։

Բեռնատար մեքենայի վարորդը՝ չարացած դեմքով, մոտորն էր աշխատեցնում։ Մեքենայի կողքին կառապանը բորբոքում էր ձիուն, մանուշակագույն երասաններով շրմփացնելով ձիու գավակին ու բղավելով.

— Հրե՛ս, պատրաստ է։ Ես գժանոց տարե՛լ եմ։

Չորս կողմը գժվում էր ամբոխը, քննարկելով չտեսնված պատահարը։ Մի խոսքով, նողկալի, զազրելի, հրապուրիչ, խոզավային սկանդալ էր, որը վերջացավ լոկ այն ժամանակ, երբ բեռնատարը Գրիբոեդովի դարպասից դուրս տարավ տարաբախտ Իվան Նիկոլաևիչին, միլիցիոներին, Պանտելեյին և Ռյուխինին։

ԳԼՈՒԽ VI

## ՇԻԶՈՖՐԵՆԻԱ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԱՍՎԵԼ ԷՐ

Գիշերվա ժամը մեկն անց կես էր, երբ սրամորուս, սպիտակ խալաթ հագած մի մարդ մտավ Մոսկվայի մերձակայքում, գետի ափին վերջերս կառուցված հոգեբուժական նշանավոր կլինիկայի ընդունարանը։ Երեք սանիտար աչքները չէին հեռացնում բազմոցին նստած Իվան Նիկոլաևիչից։ Այդտեղ էր նաև ծայրաստիճան հուզված բանաստեղծ Ռյուխինը։ Սրբիչները, որոնցով կապկպել էին Իվան Նիկոլաևիչին, կիտված էին հենց այդ բազմոցի վրա։ Իվան Նիկոլաևիչի ձեռքերն ու ոտքերն ազատ էին։

Տեսնելով ներս մտնողին, Ռյուխինը գունատվեց, հազաց և վեհերոտ ասաց.

— Բարև ձեզ, բժիշկ։

Բժիշկը գլխով ողջունեց Ռյուխինին, բայց ողջունելիս ոչ թե նրան էր նայում, այլ Իվան Նիկոլաևիչին։

Վերջինս նստած էր միանգամայն անշարժ, դեմքը չարացած, հոնքերը կիտած, և բժշկի ներս մտնելիս նույնիսկ չշարժվեց։

— Ահա, բժիշկ,— չգիտես ինչու, խորհրդավոր շշնջոցով սկըսեց Ռյուխինը՝ վախեցած նայելով Իվան Նիկոլաևիչին,— նըշանավոր բանաստեղծ Իվան Անապաստանն է... ահա, տեսնում եք... վախենում ենք, սպիտակ տենդ չի՞ արդյոք...

— Շա՞տ էր խմում,— ատամների արանքից հարցրեց բըժիշկը։

— Ոչ, խմում էր, բայց այնքան չէ, որ...

— Ուտիճներ, առնետներ, սատանի ճտեր կամ վազվզող շըներ չէ՞ր բռնում։

— Ոչ, — ցնցվելով, պատասխանեց Ռյուխինը,— ես նրան երեկ եմ տեսել ու այսօր առավոտյան։ Լիովին առողջ էր...

— Իսկ ինչո՞ւ է վարտիքով։ Անկողնո՞ւց եք հանել։

— Բժիշկ, նա ռեստորան էր եկել այս տեսքով...

— Ըհը, ըհը,— անչափ բավարարված ասաց բժիշկը,— իսկ ճանկռվածքնե՞րն ինչից են։ Կռվե՞լ է մեկնումեկի հետ։

— Ցանկապատից է ընկել, իսկ հետո ռեստորանում խփեց մեկին... ուրիշների էլ...

— Այդպես, այդպես, այդպես,— ասաց բժիշկը և, շրջվելով դեպի Իվանը, ավելացրեց.— Բարև ձեզ։

— Բարև, չարագործ,— չարությամբ ու բարձրաձայն պատասխանեց Իվանը։

Ռյուխինն այն աստիճան շփոթվեց, որ չհամարձակվեց աչքերը բարձրացնել ու բարեկիրթ բժշկին նայել։ Բայց վերջինս ամենևին չվիրավորվեց, այլ սովորական, վարժ շարժումով հանեց ակնոցը, խալաթի փեշը բարձրացնելով, դրեց շալվարի ետևի գրպանն ու հարցրեց Իվանին.

— Քանի՞ տարեկան եք։

— Կորե՛ք-գնացե՛ք բոլորդ էլ գրողի ծոցը, իսկականից,— կոպտաձայն բղավեց Իվանն ու շրջվեց։

— Իսկ ինչո՞ւ եք զայրանում։ Որևէ տհաճ բա՞ն ասացի ձեզ։

— Քսաներեք տարեկան,— բորբոքված սկսեց Իվանը,— և բոլորիդ վրա էլ բողոքելու եմ։ Իսկ քո վրա՝ հատկապես, գարշա՛նք,— առանձնակի դիմեց նա Ռյուխինին։

— Իսկ ինչի՞ համար եք բողոքելու։

— Նրա համար, որ ինձ՝ առողջ մարդուս, բռնել ու զոռով քարշ եք տվել գժանոց, — զայրացած պատասխանեց Իվանը։

Այստեղ Ռյուխինն ուշադրությամբ նայեց Իվանին ու սառեց. խելագարության նշույլ իսկ չկար նրա աչքերի մեջ։ Եթե Գրիբոեդովում պղտորված էին, ապա հիմա նախկինի պես հըստակ էին աչքերը։

«Տե՛ր աստված,— վախեցած մտածեց Ռյուխինը,— իսկապե՞ս որ նորմալ է։ Ա՜յ քեզ բան։ Եվ իսկապես, ինչի՞ համար նրան քարշ տվեցինք այստեղ։ Նորմալ է, նորմալ, միայն ջիթումռութն է ճանկռտված...»

— Դուք գտնվում եք ոչ թե գժանոցում,— հանգիստ ասաց բժիշկը՝ նստելով փայլուն ոտով ճերմակ աթոռակի վրա,— այլ կլինիկայում, ուր ոչ ոք ձեզ չի պահի, եթե դրա հարկը չկա։

Իվան Նիկոլաևիչն անվստահությամբ խեթեց, բայց և այնպես փնթփնթաց.

— Փա՜ռք քեզ, աստված։ Վերջապես խելքը գլխին մեկը գտնվեց այսքան ապուշների միջից, առաջին ապուշն էլ՝ դանդալոշ ու անտաղանդ Սաշկան։

— Ո՞վ է այդ անտաղանդ Սաշկան,— հարցրեց բժիշկը։

— Ո՞վ պիտի, ահա՝ Ռյուխինը, — պատասխանեց Իվանը և կեղտոտ մատը տնկեց Ռյուխինի կողմը։

Վերջինս կրակվեց վրդովմունքից։

«Շնորհակալության փոխարե՜ն էր,— մտածեց դառնացած,— նրա համար, որ կարեկցեցի։ Իսկական գարշա՜նք»։

— Տիպիկ կուլակ՝ իր հոգեբանությամբ,— ասաց Իվան Նիկոլաևիչը, որը, հավանորեն, Ռյուխինին մերկացնելու սաստիկ ցանկություն ուներ,— ընդ որում պրոլետարի անվան տակ խնամքով քողարկվող կուլակ։ Մի նայե՜ք դրա ժանգոտ կերպարանքին ու համեմատեք այն հնչեղ ոտանավորների հետ, որ հորինել է ամսի մեկի առթիվ։ Հե-հե-հե.. «Շողշողացե՜ք» ու «փողփողացե՜ք»..., բայց մի ներսը նայեք, թե ինչ է մտածում... կշշմեք։— Եվ Իվան Նիկոլաևիչը ծիծաղեց չարագույժ։

Ռյուխինը ծանր էր շնչում, կարմրել էր ու լոկ մի բանի մասին էր մտածում, որ օձ է տաքացրել իր կրծքի վրա, որ կարեկցել է մի մարդու, որն իրականում չարասիրտ թշնամի դուրս եկավ։ Գլխավորն էլ այն է, որ ոչինչ անել հնարավոր չէր՝ հո չէ՞ր վիճելու հոգեկան հիվանդի հետ։

— Իսկ ձեզ ինչո՞ւ են բերել այստեղ, մեր մեջ ասած, — հարցրեց բժիշկը, Անապաստանի մերկացումներն ուշադրությամբ լսելուց հետո։

— Գրողը տանի այս ապուշներին։ Բռնեցին, կապկպեցին ինչ-որ քրջերով ու քարշ տվին բեռնատարով։

— Թույլ տվեք ձեզ հարցնել, ինչո՞ւ գնացիք ռեստորան միայն սպիտակեղենով։

— Զարմանալի ոչինչ չկա,— պատասխանեց Իվանը,— գնացել էի Մոսկվա գետում լողանալու, շորերս թռցրին, էս զիբիլը թողեցին։ Հո տկլոր չէի՞ ման գալու Մոսկվայով։ Ինչ կար՝ հագա, որովհետև շտապում էի Գրիբոեդով։

Բժիշկը հարցական նայեց Ռյուխինին, և վերջինս մռայլված մրթմրթաց.

— Ռեստորանն այդպես է կոչվում։

— Ըհը,— ասաց բժիշկը,— իսկ ինչո՞ւ էիք այդպես շտապում։ Գործնական որևէ տեսակցությո՞ւն ունեիք։

— Խորհրդականին բռնելու,— պատասխանեց Իվան Նիկոլաևիչը և տագնապած ետ նայեց։

— Ի՞նչ խորհրդական։

— Բեռլիոզին ճանաչո՞ւմ եք,— հարցրեց Իվանը բազմանշանակ։

— Կոմպոզիտո՞րը։

Իվանը վշտացավ։

— Ի՞նչ կոմպոզիտոր։ Ախ, հա, չէ՛, չէ՛։ Կոմպոզիտորը Միշա Բեռլիոզի ազգանվանակիցն է։

Ռյուխինը ոչ մի բան չէր ուզում ասել, բայց ստիպված էր բացատրել։

— ՄԱՍՍՈԼԻՏ-ի քարտուղար Բեռլիոզն այսօր երեկոյան տրամվայի տակ է ընկել ու մահացել է Պատրիարքական լճի մոտ։

— Ստեր մի՛ փչի, որ չգիտես,— Ռյուխինի վրա զայրացավ Իվանը,— ե՛ս եմ ներկա եղել, ոչ թե դու։ Նա դիտավորյա՛լ գցել տվեց տրամվայի տակ։

— Հրե՞ց։

— Ի՞նչ կապ ունի այստեղ «հրեց»-ը,— համընդհանուր անհասկացողությունից զայրացած, բացականչեց Իվանը,— հրելու պետք չունի՛ նա։ Այնպիսի՛ բաներ կարող է անել, մարդ բեր, որ դիմանա։ Նա վաղօրոք գիտեր, որ Բեռլիոզը տրամվայի տակ է ընկնելու։

— Իսկ ձեզնից բացի որևէ մեկը տեսե՞լ է այդ խորհրդականին։

— Ցավն էլ հենց դա է, որ մենակ ես էի ու Բեռլիոզը։

— Այսպես։ Իսկ ի՞նչ միջոցներ ձեռնարկեցիք այդ մարդասպանին բռնելու համար,— բժիշկն այստեղ շրջվեց ու մի հայացք նետեց սպիտակ խալաթ հագած, քիչ այն կողմ, սեղանի մոտ նստած կնոջը։ Վերջինս մի թերթ թուղթ հանեց և սկսեց լրացնել սյունակների բաց տեղերը։

— Ասեմ՝ ինչ միջոցներ։ Խոհանոցից վերցրեցի մոմը...

— Սա՞,— հարցրեց բժիշկը՝ մատնացույց անելով ջարդված

ժամը, որը սրբապատկերի հետ դրված էր սեղանին, կնոջ դիմաց։

— Հենց դա, և…

— Իսկ սրբապատկե՞րն ինչի համար էր։

— Հա՛, սրբապատկերը…— Իվանը կարմրեց,— ամենից շատ հենց սրբապատկերը վախեցրեց, — նա կրկին մատը պարզեց Օյունինի ուղղությամբ,— բայց բանն այն է, որ նա՝ խորհրդականը, նա, ուղղակի ասենք… չար ոգիների հետ գործ ունի… ու հենց այնպես նրան բռնել չի լինի։

Չգիտես ինչու սանիտարները ձգվեցին և աչք չէին հեռացնում Իվանից։

— Այ-յո՛,— շարունակեց Իվանը,— գործ ունի՛։ Վերջնակա՛ն փաստ է։ Անձամբ խոսել է Պոնտացի Պիղատոսի հետ։ Ինձ այդպես նայելու կարիք չկա։ Ճիշտ եմ ասում։ Ամեն բան տեսել է՝ պատշգամբն էլ, արմավենիներն էլ։ Մի խոսքով, Պոնտացի Պիղատոսի մոտ եղել է, դրա համար երաշխավորում եմ։

— Դե լավ, դե լավ…

— Ուրեմն այսպես, սրբապատկերը կպցրեցի կրծքիս ու վազեցի…

Այստեղ ժամացույցը հանկարծ երկու անգամ զարկեց։

— Էհե՛-ե՛,— բացականչեց Իվանն ու վեր կացավ բազմոցի վրայից,— ժամը երկուսն է, իսկ ես ժամանակ եմ վատնում ձեզ հետ։ Կներեք, որտե՞ղ է հեռախոսը։

— Թողեք մոտենա հեռախոսին,— կարգադրեց բժիշկը սանիտարներին։

Իվանը վրա պրծավ հեռախոսին, իսկ կինն այդ ժամանակ ցածրաձայն հարցրեց Օյունինից.

— Ամուսնացա՞ծ է։

— Ամուրի է,— վախեցած պատասխանեց Օյունինը։

— Արհմիության անդա՞մ է։

— Այո։

— Միլի՜ցիա,— բղավեց Իվանը խոսափողի մեջ,— միլի՜ցիա։ Ընկեր հերթապահ, անմիջապես կարգադրեք, որ գնդացրակիր հինգ մոտոցիկլ ուղարկեն արտասահմանյան խորհրդականին բռնելու։ Ի՞նչ։ Եկեք ինձ վերցրեք, ինքս կգամ ձեզ հետ… Բանաստեղծ Անապաստանն է խոսում գժանոցից… Ո՞րն է ձեր հասցեն,— խոսափողն ափով ծածկելով, շշնջոցով հարցրեց Անապաստանը բժշկին, հետո նորից բղավեց խոսափողի մեջ.

— Լսո՞ւմ եք։ Ալլո... Խայտառակություն է, — հանկարծ բղավեց Իվանը և խոսափողը շպրտեց պատին։ Հետո շրջվեց բժշկի կողմը, ձեռքը պարզեց նրան, չոր-չոր ասաց «ցտեսություն» ու պատրաստվեց գնալ։

— Ներեցեք, իսկ ո՞ւր եք ուզում գնալ,— ասաց բժիշկը՝ ուղիղ Իվանի աչքերին նայելով,— կեսգիշերին, սպիտակեղենով... Դուք ձեզ վատ եք զգում, մնացեք մեզ մոտ։

— Հապա մի թողեք,— ասաց Իվանը սանիտարներին, որոնք խմբվեցին դռան առաջ։— Բաց թողնելո՞ւ եք, թե չէ,— սարսափելի ձայնով բղավեց բանաստեղծը։

Ռյուխինին դող պատեց, իսկ կինը մի կոճակ սեղմեց սեղանիկի վրա, և սեղանիկի ապակյա մակերեսին փայլուն մի տուփ հայտնվեց և մի փակ դեղասրվակ։

— Ուրեմն այդպե՞ս — վայրենի ու հալածված տեսքով շուրջը նայելով, ասաց Իվանը,— դե, լա՛վ։ Մնաք բարով...— և գլուխն առաջ պարզած իրեն գցեց պատուհանի վարագույրի վրա։ Հարվածի ձայն լսվեց, բայց վարագույրի ետևի չջարդվող ապակիները դիմացան, և մի ակնթարթ անց Իվանը թպրտում էր սանիտարների ձեռքերի մեջ։ Նա խռխռացնում էր, փորձում էր կծել, բղավում էր.

— Ուրեմն, ահա՛ թե ինչ տեսակ ապակիներ եք գցել... Թո՛ղ, թո՛ղ, ասում եմ...

Ասեղը փայլեց բժշկի ձեռքում, կինը մի շարժումով պատռեց տոլստովկայի հնամաշ թևքը և կառչեց Իվանի ձեռքից ոչ կանացի ուժով։ Եթերի հոտ տարածվեց, Իվանը թուլացավ չորս մարդու ձեռքերի մեջ, և ճարպիկ բժիշկը, օգտվելով այդ պահից, ասեղը խրեց Իվանի ձեռքի մեջ։ Մի քանի վայրկյան էլ պահեցին Իվանին, հետո նստեցրին բազմոցին։

— Ավազակնե՛ր, — բղավեց Իվանը և վեր թռավ տեղից, բայց նրան նորից տեղը դրեցին։ Տեղնուտեղը նորից վեր թռավ, բայց արդեն ինքը նստեց։ Նա լռեց, վայրի տեսքով շուրջը նայեց, ապա անսպասելի հորանջեց, հետո ժպտաց չար ժպիտով։

— Համենայն դեպս, նստեցրիք,— ասաց նա, մի անգամ էլ հորանջեց, անսպասելիորեն պառկեց, գլուխը դրեց բարձին, բռունցքը, երեխայի պես՝ այտի տակ, քնատ ձայնով, առանց չարության, մրթմրթաց.— Շատ լավ եղավ... Հետո ինքներդ եք փոշմանելու։ Ես զգուշացրեցի, ինչ ուզում եք՝ արեք։ Իսկ

ինձ հիմա ամենից շատ հետաքրքրում է Պոնտացի Պիղատոսը… Պիղատոսը…— այստեղ նա փակեց աչքերը։

— Լոգանք, առանձին հարյուրտասնյոթերորդը և հերթապահ՝ դրան մոտ,— ակնոցը դնելով՝ կարգադրեց բժիշկը։ Այստեղ Ռյուխինը նորից ցնցվեց. անաղմուկ բացվեց սպիտակ դուռը, որից այն կողմ երևաց գիշերային կապույտ լամպերով լուսավորված միջանցքը։ Միջանցքից ռետինե անվակների վրա ներս մտավ մի թախտ, հանդարտված Իվանին վրան դրեցին, տարան միջանցք, և դուռը փակվեց նրա վրա։

— Բժիշկ,— շշունջով հարցրեց ցնցված Ռյուխինը,— ուրեմն, նա իրո՞ք հիվանդ է։

— Օ՜, այո,— պատասխանեց բժիշկը։

— Իսկ ի՞նչ է եղել նրան,— վեհերոտ հարցրեց Ռյուխինը։

Հոգնած բժիշկը նայեց Ռյուխինին և ալարկոտ պատասխանեց.

— Շարժողական ու խոսակցական բորբոքվածություն… զառանցագին մեկնություններ… ըստ երևույթին, բարդ դեպք է… Հարկ է ենթադրել, որ շիզոֆրենիա է։ Ավելացրած՝ ալկոհոլիզմը…

Ռյուխինը ոչինչ չհասկացավ բժշկի ասածներից, բացի նրանից, որ Իվան Նիկոլաևիչի վիճակը, ինչպես երևում է, վատ է, հոգոց հանեց ու հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ է նա շարունակ ինչ-որ խորհրդականի մասին խոսում։

— Հավանաբար, տեսել է մեկին, որը ցնցել է նրա խաթարված երևակայությունը։ Գուցե նաև տեսլապատրանք է ունեցել…

Մի քանի րոպե անց բեռնատարը Ռյուխինին Մոսկվա էր տանում։ Լուսանում էր, և խճուղու դեռ չհանգցրած լապտերների լույսն արդեն անհարկի էր ու տհաճ։ Վարորդը զայրացած էր, որ գիշերը կորավ, ինչքան ուժ ուներ՝ հում էր տվել գազը, և մեքենան դեսուդեն էր շպրտվում շրջադարձերի վրա։

Ահա, անտառն էլ ասես պոկվեց, մնաց հեռուներում, գետը թեքվեց մի կողմ գնաց, զանազան բաներ սուրացին բեռնատարին ընդառաջ. պահատնակներով ցանկապատեր և փայտի կիտուկներ, շատ բարձր սյուներ ու կոճերով պատած ինչ-որ կայմեր, խճաքարի կույտեր, խորը առուներով շերտատված հող, մի խոսքով, զգացվում էր, որ ահա, ուր որ է, կսկսվի Մոսկվան, հենց հիմա շրջադարձից հետո վրա կտա ու կկլանի։

Ռյուխինը ցնցվում էր, թափահարվում, կոճղի կտորը, որի վրա տեղավորվել էր, անընդհատ դուրս էր պրծնում նրա տակից։ Ռեստորանի սրբիչները, որ թափքի մեջ էին գցել մինչ այդ տրոլեյբուսով քաղաք մեկնած միլիցիոններն ու Պանտելեյը, գնում-գալիս էին ոտքերի տակ։ Ռյուխինը փորձեց հավաքել, բայց, չգիտես ինչու, չարացած ֆշշացնելով՝ «Դե, թող կորչեն գրողի ծոցը։ Ինչ եմ իրար անցել տխմարի պես...», դեն շպրտեց ոտքով ու այլևս չնայեց դրանց։

Սարսափելի հոգեվիճակի մեջ էր թափքի վրայի մարդը։ Պարզվում էր, որ գժատուն այցելելը ծանր հետք է թողել նրա մեջ։ Ռյուխինն աշխատում էր հասկանալ, թե ինչն է իրեն տանջում։ Հիշողության մեջ դաջված միջա՞նցքը՝ կապույտ լամպերով։ Այն մի՞տքը, որ խելքից զրկվելուց վատթարագույն դժբախտություն չկա աշխարհում։ Այո, այո, իհարկե, դա ևս։ Բայց չէ՞ որ դա այնպես, ընդհանուր միտք է։ Ինչ-որ ուրիշ բան էլ կա։ Իսկ ի՞նչ։ Վիրավորանք՝ ահա թե ինչ։ Այո, այո, վիրավորական խոսքերը, որոնք Անապաստանն ուղիղ իր երեսին շպրտեց։ Եվ ցավն այն չէ, որ վիրավորական են խոսքերը, այլ՝ որ ճշմարտություն են բովանդակում։

Բանաստեղծն այլևս չէր նայում շուրջը, այլ աչքերը հառած աղտոտ, ցնցվող հատակին, մրթմրթում էր քթի տակ, տնքում՝ ինքն իրեն տանջվելով։

Այո, բանաստեղծություններ... Երեսուներկու տարեկան է ինքը։ Իրոք, հետո՞ ինչ պիտի անի։ Հետո նույնպե՞ս տարեկան մի քանի բանաստեղծություն հորինի։ Մինչև խոր ծերությո՞ւն։ Այո, մինչև խոր ծերություն։ Իսկ ի՞նչ կտան իրեն այդ բանաստեղծությունները։ Փա՞ռք։ «Ի՜նչ տխմարություն։ Գոնե ինքդ քեզ մի խաբիր։ Փառքը երբեք չի տրվում նրան, ով վատ ոտանավորներ է հորինում։ Ինչո՞ւ են դրանք վատ։ Ճի՜շտ ասաց, ճի՜շտ,— անողոքությամբ ինքն իրեն խոստովանեց Ռյուխինը, —գրածներիցս և ոչ մեկին չեն հավատում...»

Նյարդագարության այդ բռնկումից թունավորված, բանաստեղծը ճոճվեց տեղում, հատակն այլևս չէր ցնցվում նրա տակ։ Ռյուխինը բարձրացրեց գլուխն ու տեսավ, որ վաղուց արդեն Մոսկվայում է, և ավելին, որ արշալույսն է բացվում Մոսկվայի վրա, որ ոսկեզօծված է ամպը, որ կանգնած է բեռնատարը՝ ուրիշ մեքենաների շարասյան մեջ խրված, պուրակի շրջադարձի մոտ, և որ իրեն շատ մոտիկ, պատվանդանի վրա մետաղյա մի

մարդ է կանգնած և, գլուխը փոքր-ինչ թեքած, անտարբեր հա-յացքով պուրակին է նայում։

Տարօրինակ մտքեր խռնվեցին հիվանդացած բանաստեղծի գլխում։ «Ահա իսկական հաջողակության օրինակ...— Ռյուխինն այստեղ հասակով մեկ կանգնեց բեռնատարի թափքի վրա և բարձրացրեց ձեռքը, չգիտես ինչու հարձակվելով իր համար հանգիստ կանգնած չուգունե մարդու վրա,—ի՞նչ քայլ արեց կյանքում, ի՞նչ պատահեց նրան. ամեն ինչ հօգուտ նրա եղավ, ամեն ինչ ծառայեց նրա փառքին։ Բայց ի՞նչ է արել նա։ Ես չեմ ըմբռնում... Առանձնահատուկ ինչ-որ բա՞ն կա այս բառերի մեջ. «Հողմը մեգով...»։ Չեմ հասկանում... Բա՛խտը բերեց, բա՛խ-տը,— հանկարծ թունալից եզրահանգում արեց Ռյուխինը և զգաց, որ բեռնատարը շարժվեց տեղից,—կրակեց, նրա վրա կրակեց այդ սպիտակ գվարդիականն ու փշրեց կողը և անմա-հություն ապահովեց...»

Շարասյունն առաջ գնաց։ Կատարելապես հիվանդ և նույնիսկ ծերացած բանաստեղծը ոչ ավել, քան երկու րոպե անց մտավ Գրիբոեդովի պատշգամբը։ Արդեն դատարկվել էր պատշգամբը։ Անկյունում վերջին բաժակն էր խմում ինչ-որ խումբ, որի կենտ-րոնում իրար էր անցել ծանոթ մի կոնֆերանսյե՝ տյուբետեյկա-յով, «Աբրաու»-ի ըմպանակը ձեռքին։

Սրբիչներով բեռնված Ռյուխինին շատ սիրալիր դիմավորեց Արչիբալդ Արչիբալդովիչը և անմիջապես նրան ազատեց այդ անիծյալ լաթերից։ Եթե Ռյուխինն այդքան դառնացած չլիներ կլինիկայում ու բեռնատարի վրա, հավանաբար հաճույք կստա-նար, պատմելով, թե ինչեր եղան բուժարանում, հորինված ման-րամասներով ծաղկեցնելով պատմությունը։ Բայց հիմա սիրտ չուներ, դրանից բացի, որքան էլ նվազ լիներ Ռյուխինի դիտո-ղունակությունը, հիմա, բեռնատարի վրա ունեցած տանջանքնե-րից հետո, նա առաջին անգամ ուշադրությամբ զննեց ծովահենի դեմքը և հասկացավ, որ թեև Անապատանի մասին հարցեր է տա-լիս. նույնիսկ «ա՛յ-յա՛յ-յա՛յ» բացականչում, բայց, ըստ էութ-յան, բացարձակորեն անտարբեր է Անապատանի ճակատագրի նկատմամբ և ամենևին չի խղճում նրան։ «Եվ ապրի՛ ինքը։ Ճի՛շտ է»,— անպատկառ, ինքնախարազանող չարությամբ մտածեց Ռյուխինը և, ընդհատելով շիզոֆրենիայի մասին պատ-մությունը, խնդրեց.

— Արչիբալդ Արչիբալդովիչ, մի քիչ օղի...

Դեմքին կարեկցագին արտահայտություն տվեց ծովահենը, շշնջաց.

— Հասկանում եմ... այս րոպեիս...— և նշան արեց մատուցողին։

Քառորդ ժամ անց Ոյուխինը, կատարյալ միայնության մեջ, նստած էր, կռացած ձկան կտորի վրա, խմում էր բաժակ բաժակի ետևից, հասկանալով և ընդունելով, որ իր կյանքում արդեն ոչ մի բան շտկել չի լինի, և սոսկ կարելի է մոռանալ։

Բանաստեղծն սպառեց իր գիշերը, մինչ մյուսները խնջույքի մեջ էին, և հիմա հասկացավ, որ գիշերը վերադարձնել չի կարելի։ Բավական էր դեմքը լամպից վեր բարձրացնել դեպի երկինք, հասկանալու համար, որ գիշերը գնացել է անդարձ։ Մատուցողները շտապ-շտապ սփռոցներն էին պոկում սեղանների վրայից։ Պատշգամբի մոտերքում վխտացող կատուները վաղորդյան տեսք ունեին։ Օրն անզսպելիորեն գահավիժում էր բանաստեղծի վրա։

ԳԼՈՒԽ VII

## ՎԱՏ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Եթե հաջորդ առավոտյան Ստյոպա Լիխոդեևին ասեին՝ «Ստյոպա, եթե հենց այս րոպեին տեղիցդ չելնես, քեզ կգնդակահարեն», Ստյոպան կպատասխաներ տանջահար, հազիվ լսելի ձայնով. «Գնդակահարեք, ինչ ուզում եք, արեք, բայց վեր չեմ կենա»։

Ոչ թե վեր կենալ, նրան թվում էր, թե չի կարող աչքերը բաց անել, որովհետև եթե բաց անի, կփայլատակի կայծակը և իսկույն կտոր-կտոր կանի գլուխը։ Այդ գլխի մեջ մի ծանր զանգ էր թնդում, ակնախնձորների և կոպերի արանքում հրեղեն-ոսկյա բոլորքներով դարչնագույն պուտեր էին լողում, և ի լրումն այդ ամենի, սիրտը խառնում էր, ըստ որում թվում էր, որ սրտխառնուքը կապված է մի անհայտ պատեֆոնի հնչյունների հետ։

Ստյոպան ջանում էր որևիցե բան հիշել, բայց միայն մի բան էր միտքը գալիս, որ կարծես թե երեկ և հայտնի չէ, թե որտեղ, ինքը կանգնած էր, անձեռոցիկը ձեռքին և փորձում էր համբուրել ինչ-որ մի տիկնոջ, ըստ որում խոստանալով հաջորդ օրը, ճիշտ կեսօրին հյուր գնալ նրան։ Կինը հրաժարվում

էր՝ ասելով. «Ո՛չ, ո՛չ, ես տանը չեմ լինի», իսկ Ստյոպան համառորեն իրենն էր պնդում. «Իսկ ես, միևնույն է, կգա՛մ»։

Թե ինչ կին էր դա, թե ժամը քանիսն է հիմա, թե ամսի քանիսն է և որ ամսի քանիսը՝ Ստյոպան բացարձակապես չգիտեր, և ամենավատն այն էր, որ չէր կարողանում հասկանալ, թե որտեղ է ինքը։ Նա փորձեց գոնե այս վերջին բանը պարզել ու դրա համար ձախ աչքի կոպերը պոկեց իրարից։ Կիսախավարի մեջ ինչ-որ բան աղոտ փայլում էր։ Ստյոպան վերջապես ճանաչեց տրյումոն ու հասկացավ, որ երեսնիվեր պառկած է իր մահճակալին, այսինքն՝ ակնավաճառի այրու նախկին մահճակալին, ննջասենյակում։ Այստեղ նրա գլուխն այնպես շամփրվեց, որ փակեց աչքերն ու տնքաց։

Բացատրենք. Ստյոպա Լիխոդեևը՝ Վարյետե թատրոնի տնօրենը, արթնացել էր առավոտյան իր տանը, հենց այն բնակարանում, որը կիսովի զբաղեցնում էր հանգուցյալ Բեռլիոզի հետ, Սադովայա փողոցին նայող «Ո»-աձև մի մեծ, վեցհարկանի շենքում։

Հարկ է ասել, որ այդ բնակարանը՝ №50-ը, վաղուց արդեն եթե ոչ վատ, ապա, համենայն դեպս, տարօրինակ համբավ ուներ։ Դեռևս երկու տարի առաջ բնակարանի տիրուհին ակնավաճառ դը Ֆուժերի այրին էր։ Աննա Ֆրանցևնա դը Ֆուժերեն՝ հիսնամյա, պատկառելի և շատ գործունյա մի կին, հինգ սենյակից երեքը վարձով էր տալիս կենվորների՝ մեկի ազգանունը, կարծեմ, Բելոմուտ էր, մյուսը կորսված ազգանուն ուներ։

Եվ ահա երկու տարի առաջ բնակարանում անբացատրելի պատահարներ ծայր առան. այդ բնակարանից սկսեցին անհետ չքանալ մարդիկ։

Մի անգամ, հանգստյան օր էր, բնակարանում միլիցիոներ հայտնվեց, նախասենյակ կանչեց երկրորդ կենվորին (որի ազգանունը կորսված էր) և ասաց, որ վերջինիս խնդրում են մի րոպեով մտնել միլիցիայի բաժանմունք և ինչ-որ թուղթ ստորագրել։ Կենվորը կարգադրեց Անֆիսային՝ Աննա Ֆրանցևնայի նվիրված ու վաղեմի աղախնին, զանգահարելու դեպքում հայտնել, որ ինքը տասը րոպե հետո կվերադառնա, և գնաց բարեկիրթ, սպիտակ ձեռնոցներով միլիցիոների հետ։ Բայց նա չվերադարձավ ոչ միայն տասը րոպե հետո, այլ ընդհանրապես երբեք չվերադարձավ։ Ամենազարմանալին այն է, որ նրա հետ միասին, հավանորեն, չքացավ նաև միլիցիոները։

Աստվածավախ, ավելի անկեղծ ասած՝ սնոտիապաշտ Անֆիսան ուղղակի հայտարարեց չափազանց դառնացած Աննա Ֆրանցևնային, որ դա կախարդանք է և որ ինքը շատ լավ գիտե, թե ով է տարել և՛ կենվորին, և՛ միլիցիոներին, միայն թե չի ուզում խոսել գիշերվա կեսին։ Է՛, իսկ ինչպես հայտնի է, բավական է սկսվի կախարդանքը, այլևս դեմն առնել չի լինի։ Երկրորդ կենվորն անհետացավ, որքան հիշում եմ, երկուշաբթի, իսկ չորեքշաբթի ասես գետնի տակն անցավ Բելոմուտը, բայց, ճիշտն ասած, ուրիշ հանգամանքներում։ Առավոտյան, սովորականի պես, եկավ մեքենան՝ նրան աշխատանքի տանելու և տարավ, սակայն ոչ ոքի ետ չբերեց ու այլևս չվերադարձավ։

Տիկին Բելոմուտի վիշտն ու սարսափն անկարելի էր նկարագրել։ Բայց, ավաղ, թե վիշտը, թե սարսափը տևական չեղան։ Այդ նույն գիշեր, վերադառնալով ամառանոցից, ուր, չգիտես ինչու, Անֆիսայի հետ շատ շտապ գնացել էր Աննա Ֆրանցևնան, բնակարանում այլևս չտեսան քաղաքացուհի Բելոմուտին։ Բայց դա դեռ բոլորը չէ. Բելոմուտ ամուսինների զբաղեցրած երկու սենյակների դռներն էլ կնքված էին։

Երկու օր մի կերպ անցավ։ Իսկ երրորդ օրը այդ ամբողջ ժամանակ անքնությամբ տառապող Աննա Ֆրանցևնան կրկին շտապ մեկնեց ամառանոց... Հարկ կա՞ ասելու, որ այլևս չվերադարձավ։

Մենակ մնացած Անֆիսան, մի կուշտ լաց լինելուց հետո, պառկեց քնելու գիշերվա ժամը երկուսին մոտ։ Թե ինչ եղավ հետո, հայտնի չէ, բայց մյուս բնակարաններում ապրողները պատմում էին, որ իբր №50-ից ամբողջ գիշեր ինչ-որ թըխկոց-չխկոց էր լսվում, և որ իբր մինչև առավոտ էլեկտրական լույս էր վառվում ներսում։ Առավոտյան պարզվեց, որ Անֆիսան էլ չկա։

Անհետացածների և անիծյալ բնակարանի մասին շենքում երկար ժամանակ ամեն տեսակ առասպել պատմում էին, ասենք օրինակ, որ այդ նիհար ու աստվածավախ Անֆիսան իբր սմքած կրծքի վրա, եղջերվենու տոպրակի մեջ Աննա Ֆրանցևնային պատկանող քսանհինգ խոշոր ադամանդ էր պահում։ Որ իբր նույն այդ ամառանոցի ցախանոցում, ուր հանկարծ մեկնել էր Աննա Ֆրանցևնան, պատահմամբ հայտնաբերվել են անքանակ գանձեր՝ նույնանման ադամանդներ, նաև ցարական դրոշ-

մի ոսկեդրամներ... Եվ նման կարգի այլևայլ բաներ։ Է՛, ինչ որ չգիտենք, չգիտենք։

Ինչ եղավ, եղավ, բնակարանը դատարկ ու կնքված մնաց միայն մեկ շաբաթ, հետո այստեղ բնակեցվեցին հանգուցյալ Թեոֆիլոզի իր տիկնոջ հետ և այս նույն Ստյոպան, նույնպես տիկնոջ հետ։ Միանգամայն բնական է, որ նզովյալ այդ բնակարանն ընկնելուն պես նրանց ընտանիքներում սատանան գիտե, թե ինչեր սկսվեցին։ Այն է՝ մեկ ամսվա ընթացքում չքացան երկու տիկնայք։ Բայց սրանք՝ ոչ անհետ։ Բեռլիոզի կնոջ մասին պատմում էին, որ նրան տեսնողներ են եղել Խարկովում, ինչ-որ բալետմայստերի հետ, իսկ Ստյոպայի կինն իբր թե հայտնաբերվել է Բոժեդոմկայում, ուր, ըստ պատմածների, Վարյետեի տնօրենը, օգտագործելով իր անհամար ծանոթությունները, կարողացել է սենյակ հաջողացնել նրա համար, բայց մի պայմանով, որ հետրն անգամ չերևա Սադովայա փողոցում...

Եվ այսպես, Ստյոպան տնքաց։ Ուզեց ձայն տալ աղախնին՝ Գրունյային և պիրամիդոն ուզել նրանից, բայց այնուամենայնիվ կարողացավ ըմբռնել, որ հիմարություն կլինի... որ Գրունյան, անշուշտ, պիրամիդոն չունի։ Փորձեց օգնության կանչել Բեռլիոզին, երկու անգամ տնքալով կանչեց՝ «Միշա... Միշա...», սակայն, ինչպես հասկանում եք, պատասխան չստացավ։ Բնակարանում կատարյալ լռություն էր տիրում։

Ոտքի մատները շարժելով, Ստյոպան կռահեց, որ պառկած է գուլպաներով, դողդողացող ձեռքը տարավ կողի վրայով, որոշելու համար՝ շալվարը հագին է, թե՝ ոչ, և որոշել չկարողացավ։

Ի վերջո, տեսնելով, որ լքված է ու միայնակ, որ օգնող մեկը չունի, որոշեց անմարդկային ճիգերի գնով գոնե վեր կենալ։

Ստյոպան իրարից անջատեց սոսնձված կոպերն ու տեսավ, որ տրյումոյի միջից իրեն է նայում գզգզված մազերով, այտուցված, մազակալած մի դեմք՝ այքերն ուռած, օձիքն ու փողկապը վրան կեղտոտ վերնաշապիկով, վարտիքով ու գուլպաներով։

Իրեն այդպես տեսավ տրյումոյի մեջ, իսկ հայելու կողքին տեսավ անծանոթ մի մարդու՝ սև զգեստով, գլխին՝ սև բերետ։

Ստյոպան նստեց մահճակալին և, որքան կարող էր, արյունակալած աչքերը չռեց անծանոթի վրա։

Լռությունը խախտեց այդ անծանոթը, թավ, թանձր ձայնով,

օտարերկրացու առոգանությամբ արտասանելով հետևյալ բառերը.

— Բարի օր, անչափ համակրելի Ստեպան Բոգդանովիչ։

Այպա դադար եղավ, որից հետո, ահավոր ճիգ գործադրելով, Ստյոպան արտաբերեց.

— Ի՞նչ եք ուզում,— ու ինքն էլ զարմացավ իր ձայնի վրա։ «Ինչ» բառն արտասանեց դիսկանտով, «եք»-ը բասով, իսկ «ուզում»-ը՝ ոչ մի կերպ։

Անծանոթը սիրալիր ժպտաց քթի տակ, հանեց ոսկյա, խոշոր, կափարիչի վրա ադամանդե եռանկյունիով ժամացույցը, զանգ զարկեց տասնմեկ անգամ ու ասաց.

— Տասնմե՛կն է։ Ես ուղիղ մեկ ժամ սպասում եմ ձեր արթնանալուն, քանի որ ասացիք՝ ժամը տասին լինեմ ձեզ մոտ։ Ահա և ե՛ս։

Ստյոպան շոշափեց ու գտավ մահճակալի կողքի աթոռի վրա ընկած շալվարը, շշնջաց.

— Ներեցեք...— հազավ ու խռպոտ ձայնով հարցրեց.— Ձեր ազգանունն ի՞նչ է, ներեցեք։

Նա դժվարությամբ էր խոսում։ Յուրաքանչյուր բառն արտասանելիս ինչ-որ մեկն ասեղներ էր խրում նրա ուղեղի մեջ՝ դժոխային ցավ պատճառելով։

— Ինչպե՞ս։ Դուք իմ ազգանո՞ւնն էլ եք մոռացել,— անծանոթն այստեղ ժպտաց։

— Կներեք...— խռխռացրեց Ստյոպան, զգալով, որ խումհարից նոր ախտանշան է ձեռք բերում. նրան թվաց, թե մահճակալի մոտ հատակը չգիտես ուր չքացավ, և որ այս իսկ րոպեին ինքը գլխիվար ցած կգահավիժի տարտարոս՝ սատանայի մոր ծոցը։

— Թանկագին Ստեպան Բոգդանովիչ,— խոսեց այցելուն, խորաթափանց ժպտալով,— և ոչ մի պիրամիդոն ձեզ չի օգնի։ Հին ու իմաստուն կանոնին հետևեք՝ սեպը սեպով կհանեն։ Միակ բանը, որ ձեզ կյանքի կկոչի, երկու բաժակ օղին է, կծու և տաք ուտելիքով։

Ստյոպան խորամանկ մարդ էր և որքան էլ վատառողջ լիներ, գլխի ընկավ՝ քանի որ իրեն տեսել են այդ վիճակում, պետք է ամեն ինչ խոստովանել։

— Անկեղծ ասած,— սկսեց նա, հազիվ դարձնելով լեզուն, —երեկ մի՛ քիչ...

— Այլևս ոչ մի խոսք,— պատասխանեց այցելուն և բազկաթոռով հանդերձ մի կողմ գնաց։

Աչքերը չռելով՝ Ստյոպան տեսավ, որ փոքրիկ սեղանի վրա մատուցարան է դրված, որի վրա կտրատած սպիտակ հաց կա, փոքրիկ սկահակի մեջ՝ մամլած խավիար, ափսեի մեջ՝ թթու դրած սպիտակ սունկ, էլի ինչ-որ բան կաթսայիկի մեջ և, վերջապես, օղի՝ ակնավաճառի այրու ցմփոր գրաֆինի մեջ։ Ստյոպային առանձնապես զարմացրեց այն, որ գրաֆինը քրտնած էր սառնությունից։ Ասենք, հասկանալի էր՝ գրաֆինը դրված էր սառույցով լի թասի մեջ։ Մի խոսքով՝ մաքուր, կարգին սեղան էր։

Անծանոթը թույլ չտվեց, որ Ստյոպայի զարմանքը հիվանդագին չափեր ընդունի և վարժ շարժումով օղի լցրեց նրա բաժակը։

— Իսկ դո՞ւք — ծղրտաց Ստյոպան։

— Հաճույքո՛վ։

Ցնցվող ձեռքով Ստյոպան շրթունքներին մոտեցրեց բաժակը, իսկ անծանոթը մի շնչով կուլ տվեց իր բաժակի պարունակությունը։ Մի կտոր խավիար ծամելով, Ստյոպան մեծ դժվարությամբ հարցրեց.

— Իսկ դուք... մի բան չէի՞ք ուտի։

— Շնորհակալ եմ, ես երբեք չեմ ուտում,— պատասխանեց անծանոթն ու երկրորդ անգամ լցրեց։ Բաց արեցին կաթսայիկը՝ մեջը նրբերշիկ կար, տոմատով։

Եվ ահա աչքերը պարուրած նզովյալ կանաչը հալվեց, արտասանվեցին բառերը, և գլխավորը՝ Ստյոպան ինչ-որ բաներ հիշեց։ Այսինքն, որ բանն երեկ է եղել Սխոդնյայում, սկետչներ հորինող Խուստովի ամառանոցում, ուր և տարել էր Ստյոպային այդ Խուստովը՝ տաքսիով։ Հիշեց նույնիսկ, թե ինչպես էին տաքսի վարձում «Մետրոպոլի» մոտ, ինչ-որ մեկն էլ կար այդ ընթացքում, դերասան էր, թե՝ չէր... արկղիկով պատեֆոն ուներ։ Այո, այո, այո, ամառանոցում էր։ Այդ պատեֆոնից շներ էին ոռնում՝ դա էլ հիշեց։ Միայն տիկինը, ում համբուրել էր ուզում Ստյոպան, չբացահայտված մնաց... սատանան գիտե, թե ով էր, կարծես թե ռադիոյում է աշխատում, գուցեև՝ չէ։

Այսպիսով, երեկվա օրը փոքրիշատե պարզվում էր, բայց Ստյոպային հիմա առավել չափով այսօրվա օրն էր հետաքրքրում, մասնավորապես՝ անծանոթի հայտնվելը ննջասենյակում, այն էլ՝ ուտելիքն ու օղին հետը։ Վատ չէր լինի այդ մի բանը պարզել։

— Հը՞, հուսով եմ՝ ո՞րմա հիշեցի՞ք իմ ազգանունը։

Սակայն Ստյոպան լոկ ժպտաց՝ ամաչելով ու ձեռքերը տարածեց։

— Օհո՜։ Տեսնում եմ, որ օղուց հետո պորտվեյն եք խմել։ Ի սեր աստծո, մի՞թե կարելի է այդպես անել։

— Ես ձեզնից մի բան եմ ուզում հարցնել, միայն թե մեր մեջ մնա,— շողոքորթությամբ ասաց Ստյոպան։

— Օ՜, իհարկե, իհարկե։ Բայց ինքնըստինքյան հասկանալի է, Խուստովի համար ես չեմ երաշխավորում։

— Իսկ մի՞թե դուք ճանաչում եք Խուստովին։

— Երեկ ձեր աշխատասենյակում շատ կարճ տեսա այդ անձնավորությանը, բայց մի թռուցիկ հայացքը նրա դեմքին բավական էր հասկանալու համար, որ նա սրիկա է, խառնակիչ, երկերեսանի և քծնող։

«Միանգամայն ճիշտ է»,— մտածեց Ստյոպան, զարմացած Խուստովի հասցեին այդպիսի հավաստի, ճշգրիտ և հակիրճ բնութագրմամբ։

Այո, երեկվա օրը մաս առ մաս ամբողջանում էր, բայց և այնպես տագնապը չէր լքում Վարյետեի տնօրենին։ Բանն այն է, որ երեկվա այդ օրվա մեջ մի վիթխարի, սև վիհ կար բացված։ Ահա հենց այս բերետով անծանոթին, կամքը ձերը լինի, իր աշխատասենյակում Ստյոպան երեկ ոչ մի կերպ չէր տեսել։

— Սև մոգության պրոֆեսոր Վոլանդ,— ծանրակշիռ ասաց այցելուն, տեսնելով Ստյոպայի դժվար կացությունը, և ամեն ինչ հերթականությամբ պատմեց։

Երեկ ցերեկը Մոսկվա է եկել արտասահմանից, անհապաղ ներկայացել է Ստյոպային և առաջարկել իր գաստրոլները Վարյետեում։ Ստյոպան զանգահարել է Մոսկովյան մարզային համերգային հանձնաժողով և համաձայնեցրել այդ հարցը (Ստյոպան գունատվեց ու ճպճպացրեց աչքերը), պրոֆեսոր Վոլանդի հետ պայմանագիր է կնքել յոթ ելույթի համար (Ստյոպան բացեց բերանը), պայմանավորվել, որ մանրամասները ճշտելու համար այսօր առավոտյան ժամը տասին Վոլանդն իր մոտ կգա... Ահա և եկե՜լ է Վոլանդը։

Եկել է, իրեն դիմավորել է աղախինը՝ Գրունյան, որը բացատրել է, թե ինքն էլ է նոր եկել, որ միայն ցերեկներն է գալիս, որ Բեռլիոզը տանը չէ, իսկ եթե այցելուն ցանկանում է տեսնել Ստեպան Բոգդանովիչին, ապա թող գնա ննջասենյակ։ Ստեպան

Բոգդանովիչն այնքան խորն է քնած, որ աղախինը հանձն չի առնում նրան արթնացնել։ Տեսնելով, թե ինչ վիճակում է Ստե-պան Բոգդանովիչը, պրոֆեսորը Գրունյային ուղարկել է մոտա-կա գաստրոնոմը՝ օղու և ուտելիքի, դեղատուն՝ սառույցի և...

— Թույլ տվեք ձեզ վճարեմ,— կմկմաց վհատված Ստյոպան ու սկսեց դրամապանակը փնտրել։

— Օ՜, դատարկ բան է,— բացականչեց դաստրոլյորը և այ-լևս ոչինչ չկամեցավ լսել։

Այսպիսով, օղին և ուտելիքը հասկանալի դարձան, այդու-հանդերձ Ստյոպան ողորմելի վիճակում էր. բացարձակապես ոչինչ չէր հիշում պայմանագրի մասին և, թեկուզ սպանեին, երեկ այդ Վոլանդին չէր տեսել։ Այո, Խուստովը կար, իսկ Վո-լանդը չկար։

— Թույլ տվեք նայել պայմանագիրը, — կամացուկ խնդրեց Ստյոպան։

— Խնդրեմ, խնդրեմ...

Ստյոպան նայեց թղթին ու քարացավ։ Ամեն բան կարգին էր։ Նախ և առաջ, իր իսկ թափով արված ստորագրությունը։ Ֆի-նանսական տնօրեն Ռիմսկու ձեռագրով, կողքից շեղ մակագրու-թյուն՝ արտիստ Վոլանդին յոթ ելույթի համար հասանելիք երե-սունհինգ հազար ռուբլուց տասը հազար ռուբլի վճարելու թույ-լատրությամբ։ Ավելին՝ Վոլանդի ստացականն իսկ այն մասին, որ նա այդ տասը հազարն արդեն ստացել է։

«Սա ի՞նչ բան է»,— մտածեց տարաբախտ Ստյոպան, և նրա գլուխը պտտվեց։ Հիշողության չարագույժ մթագնումնե՞ր են սկսվում։ Բայց ինքնըստինքյան հասկանալի է, որ պայմանա-գիրը ներկայացնելուց հետո զարմանքի հետագա արտահայտու-թյունները ուղղակի անպատշաճ կլինեին։ Ստյոպան թույլտվու-թյուն խնդրեց հյուրից մեկ րոպեով բացակայել և հենց գուլպա-ներով վազեց նախասենյակ, հեռախոսի մոտ։ Ճանապարհին բը-ղավեց խոհանոցի կողմը.

- Գրո՜ւնյա։

Սակայն ոչ ոք չպատասխանեց։ Այդ ժամանակ Ստյոպան նայեց Բեռլիոզի աշխատասենյակի դռանը, որ հարում էր նախա-սենյակին. և այստեղ, ինչպես ասում են, փայտացավ։ Դռան բռնակին տեսավ թելից կախված զմուռսի վիթխարի կնիքը։ «Բարև՜ ձեզ, — ինչ-որ մեկը թնդաց Ստյոպայի գլխում։— Մե-նակ սա էր պակաս»։ Եվ այստեղ Ստյոպայի մտքերը սուրացին

կրկնակի ռելսերով, սակայն ինչպես լինում է միշտ աղետի ժամանակ, մի կողմի վրա և ընդհանրապես սատանան գիտե, թե ուր։ Ստյոպայի գլխում հունցվող շիլաշփոթը դժվար է նույնիսկ նկարագրել։ Մեկ այս դիվական խաղը՝ սև բերետով, սառը օղիով ու անհավանական պայմանագրով, դա դեռ բավական չէ, հրամեցե՛ք, կնիքն էլ դրան վրա։ Այսինքն, ում ուզում եք ասեք, թե Բեռլիոզն ինչ-որ բան է արել, չի՛ հավատա, իրոք, չի հավատա։ Սակայն կնիքը, ահա։ Այ-յո՜...

Եվ այստեղ Ստյոպայի ուղեղում անչափ տհաճ ու մանրիկ մտքեր խլրտացին այն հոդվածի մասին, որը հակառակի պես վերջերս ինքը Միխաիլ Ալեքսանդրովիչի վզին էր փաթաթում՝ ամսագրում տպագրելու համար։ Հոդվածն էլ, մեր մեջ ասած, ապուշություն էր։ Թե հոդվածն էր անպետք, թե՝ փողը քիչ...

Հոդվածը մտաբերելուց անմիջապես հետո մի հիշողություն ևս գլուխը խուժեց կասկածելի խոսակցության մասին, որը տեղի էր ունեցել, որքան հիշում էր, ապրիլի քսանչորսի երեկոյան, հենց այստեղ, ճաշասենյակում, երբ Ստյոպան ընթրում էր Միխաիլ Ալեքսանդրովիչի հետ։ Այսինքն, ինչ խոսք, բառիս բուն իմաստով այդ խոսակցությունը կասկածելի անվանել չի կարելի (նման խոսակցության Ստյոպան չէր գնա), բայց դա խոսակցություն էր ինչ-որ անհարկի թեմայի շուրջ։ Միանգամայն հանգիստ կարելի էր և այդ խոսակցությունը չսկսել, քաղաքացիներ։ Մինչ կնիքը, անկասկած, այդ խոսակցությունը կարող էր համարվել կատարելապես չնչին մի բան, բայց ահա կնիքից հետո...

«Ախ, Բեռլիո՜զ, Բեռլիո՜զ,— դառնում էր Ստյոպայի գլխում։— Ախր, մարդու գլուխն էլ չի մտնում»։

Բայց տրտմելու երկար ժամանակ չկար, և Ստյոպան հավաքեց Վարյետեի ֆինտնօրեն Ռիմսկու աշխատասենյակի համարը։ Ստյոպայի վիճակը երկիմաստ էր. նախ, օտարերկրացին կարող էր վիրավորվել, որ Ստյոպան ստուգում է իրեն, պայմանագիրը ցույց տալուց հետո ևս, ֆինտնօրենի հետ խոսելն էլ չափազանց դժվար էր։ Իրոք, հո չէ՞ր լինի նրան հարցնել. «Ասացեք, երեկ ես երեսունհինգ հազար ռուբլու պայմանագիր կնքե՞լ եմ սև մոգության պրոֆեսորի հետ»։ Այդպես հարցնել պետք չէ։

— Այո,— լսափողի մեջ հնչեց Ռիմսկու կտրուկ, անդուր ձայնը։

— Բարև ձեզ, Գրիգորի Դանիլովիչ,— ցածրաձայն ասաց Ստյոպան, — Լիխոդեևն է։ Մի գործ կա... հըմ... հըմ... ինձ

մոտ նստած է այդ... է... արտիստ Վոլանդը... Ուրեմն... ես ուզում էի հարցնել, ի՞նչ կա այսօրվա երեկոյի համար...

— Ախ, սև մո՞գը, — պատասխանեց Ռիմսկին,— աֆիշները շուտով կբերեն։

— Ըհը,— թույլ ձայնով ասաց Ստյոպան,— լավ, առայժմ...

— Իսկ դուք շո՞ւտ եք գալու,— հարցրեց Ռիմսկին։

— Կես ժամ հետո,— պատասխանեց Ստյոպան և, խոսափողը կախելով, ձեռքերով սեղմեց այրվող գլուխը։ Ա՛հ, ի՜նչ գեշ պատմություն ստացվեց։ Այս ի՜նչ է կատարվում հիշողությանս հետ, քաղաքացիներ։ Հը՞։

Սակայն նախասենյակում մնալն անհարմար էր, և Ստյոպան տեղնուտեղը պլան կազմեց. ամեն կերպ թաքցնել իր անասելի մոռացկոտությունը, իսկ հիմա առաջին հերթին խորամանկորեն խոսք քաշել օտարերկրացուց, թե նա, իրոք, ինչ է մտադիր այսօր ցուցադրել Ստյոպայի իրավասության տակ գտնվող Վարյետեում։

Այստեղ Ստյոպան թողեց հեռախոսը և շրջվելով, նախասենյակում կախված հայելու մեջ, որը ծույլ Գրունյան երկար ժամանակ չէր մաքրել, պարզ ու հստակ մի տարօրինակ անձնավորություն տեսավ՝ ձողի պես երկար, պենսնեն քթին (ահ, եթե այստեղ լիներ Իվան Նիկոլաևիչը։ Այդ անձնավորությանը նա իսկույն կճանաչեր)։ Իսկ սա արտացոլվեց և անմիջապես չքացավ։ Տագնապած Ստյոպան նայեց նախասենյակի խորքը և երկրորդ անգամ օրորվեց, որովհետև հայելու մեջ չափազանց խոշոր մի սև կատու անցավ ու նույնպես չքացավ։

Ստյոպայի սիրտը կանգ առավ, նա ճոճվեց տեղում։

«Սա ի՜նչ բան է,— մտածեց նա, — չլինի՞ խելքս թռցնում եմ։ Որտեղի՞ց եկան այս պատկերները»։ Մի անգամ էլ նայեց նախասենյակի կողմը և վախեցած բղավեց.

— Գրու՛նյա։ Այս ի՞նչ կատու է մեզ մոտ թրև գալիս։ Որտեղի՞ց հայտնվեց, ինչ-որ մեկն էլ՞ կա։

— Մի անհանգստացեք, Ստեփան Բոգդանովիչ,— արձագանքեց մի ձայն, բայց դա Գրունյայի ձայնը չէր, այլ ննջասենյակի հյուրինը,— դա իմ կատուն է։ Մի հուզվեք։ Իսկ Գրունյան չկա, ես նրան Վորոնեժ ուղարկեցի, ծննդավայրը, քանի որ բողոքում էր, որ արդեն վաղուց արձակուրդ չեք տվել իրեն։

Այդ խոսքերն այնքան անսպասելի էին և անհեթեթ, որ Ստյո-

պան վճռեց, թե սխալ է լսել։ Կատարելապես շշկլված, վազեց Ննջասենյակ և անշարժացավ շեմին։ Նրա մազերը սրսփացին, ճակատին քրտինքի մանրիկ կաթիլներ շարվեցին։

Հյուրն արդեն մենակ չէր ննջասենյակում, ուրիշներ էլ կային։ Երկրորդ բազմոցին նստած էր հենց այն տիպը, որ աչքին էր երևացել նախասենյակում։ Այժմ հստակ երևում էր. փետրանման բեղեր ուներ, պենսնեի մի ապակին պսպղում էր, մյուս ապակին չկար։ Սակայն ավելի ահավոր մի բան կար ննջասենյակում. ակնավաճառի այրու փափկաթոռակին սանձարձակ դիրքով փռվել էր երրորդ մեկը, այն է՝ զարհուրելի չափսի մի սև կատու, մի թաթով օղու ըմպանակը բռնած, մյուսով՝ պատառաքաղը, որի ծայրին հասցրել էր թթու դրած սունկ խրել։

Ննջասենյակի առանց այն էլ թույլ լույսը բոլորովին սկսեց խավարել Ստյոպայի աչքերում։ «Ահա թե ինչպե՞ս են խելագարվում, բանից պարզվում է»,— մտածեց նա և բռնեց դռան շրջանակը։

— Տեսնում եմ, մի փոքր զարմացած եք, հարգարժան Ստեպան Բոգդանովիչ,— հարցրեց Վոլանդը ատամները չխկչխկացնող Ստյոպային,— այնինչ, զարմանալու բան չկա։ Սա իմ շքախումբն է։

Այստեղ կատուն խմեց իր օղին, և Ստյոպայի ձեռքը ցած սահեց շրջանակի վրայով։

— Եվ այդ շքախումբը տե՞ղ է պահանջում,— շարունակեց Վոլանդը,— այնպես որ մեզնից մեկնումեկն ավելորդ է այս բնակարանում։ Եվ ինձ թվում է, որ այդ ավելորդը հենց դուք եք որ կաք։

— Նրա՞նք են, նրա՞նք,— այծի ձայնով երգեց լողլող վանդակավորը, հոգնակի խոսելով Ստյոպայի մասին,— ընդհանրապես վերջին ժամանակներս նրանք սարսափելի խոզավարի են պահում իրենց։ Հարբում են, կապերի մեջ մտնում կանանց հետ՝ օգտագործելով իրենց դիրքը, մատը մատին չեն խփում, ասենք, ոչնչից ոչինչ անել չեն էլ կարող, որովհետև բան չեն հասկանում իրենց հանձնարարված գործից։ Թոզ են փչում ղեկավարության աչքին։

— Պետական մեքենան անտեղի քշել է տալիս,— չարախոսեց նաև կատուն՝ սունկը ծամելով։

Եվ այստեղ կատարվեց չորրորդ ու վերջին հայտնությունը

*բնակարանում, երբ սահելով արդեն համարյա հատակին հասած Ստյոպան թուլացած ձեռքով շրջանակն էր ճանկռտում։*

*Ուղղակի զարդասեղանի հայելու միջից դուրս եկավ փոքրիկ մեկը․ արտասովոր թիկնեղ էր, գլխին՝ կոտելոկ, բերանից դուրս պրծած ժանիքով, որն այլանդակում էր առանց այդ էլ չտեսնըված նողկալի արտաքինը։ Այդ ամենի հետ մեկտեղ՝ նաև կրակի պես շեկ էր։*

*— Ե՛ս,— խոսակցության մեջ մտավ այդ նորը,— ընդհանրապես չեմ հասկանում, թե ինչպես է նա տնօրեն դարձել,— գնալով ավելի ու ավելի քթախոս էր դառնում շեկը.— նա նույնպիսի տնօրեն է, ինչպես ես՝ հովվապետ։*

*— Դու նման չես հովվապետի, Ազազելլո,— վրա բերեց կատուն՝ նրբերշիկ դնելով իր ափսեի մեջ։*

*— Հենց դա էլ ասում եմ.— քթի մեջ ասաց շեկը և, շրջվելով դեպի Վոլանդը, պատկառանքով ավելացրեց.— Թույլ կտա՞ք, մեսսիր, նրան դուրս շպրտել Մոսկվայից գրողի մոր ծոցը։*

*— Փը՛շտ,— հանկարծ բղավեց կատուն, բուրդը ցցելով։*

*Եվ այդ ժամանակ ննջասենյակը պտույտ եկավ Ստյոպայի շուրջը, նա գլուխը խփեց շրջանակին և, գիտակցությունը կորցնելով, մտածեց․ «Ես մեռնում եմ...»*

*Բայց նա չմեռավ։ Թեթևակի բացելով աչքերը, իրեն տեսավ քարե ինչ-որ բանի վրա նստած։ Շուրջն ինչ-որ բան էր աղմկում։ Երբ, ինչպես հարկն է, բացեց աչքերը, տեսավ, որ ծովն է աղմըկում, և որ ավելին՝ ալիքը ճոճվում է ճիշտ իր ոտքերի մոտ, և որ, կարճ ասած, ինքը նստած է ծովապատնեշի ծայրին, և որ իր ներքևում երկնագույն փայլփլուն ծովն է, ետևում՝ սարերի վրա տարածված գեղեցիկ մի քաղաք։*

*Չիմանալով, թե նման դեպքերում ինչ են անում, Ստյոպան կանգնեց ծալվող ոտքերի վրա և ծովապատնեշի վրայով դեպի ափ գնաց։*

*Ծովապատնեշի վրա մի մարդ էր կանգնած, ծխում էր, թքում ծովի մեջ։ Նա Ստյոպային նայեց վայրենի աչքերով ու դադարեց թքել։ Այդ ժամանակ Ստյոպան այսպիսի մի բան արեց․ ծնկի իջավ անծանոթ ծխողի առաջ և ասաց․*

*— Աղաչում եմ, ասացեք, սա ի՞նչ քաղաք է։*

*— Օհո՜,— ասաց անհոգի ծխողը։*

*— Ես հարբած չեմ,— խռպոտաձայն պատասխանեց Ստյո-*

պան.— Ես հիվանդ եմ, ինձ հետ ինչ-որ բան է կատարվել, ես հիվանդ եմ... Որտե՞ղ եմ ես։ Սա ի՞նչ քաղաք է...

— Է՜, Յալտան է...

Ստյոպան կամացուկ հոգոց հանեց, ընկավ կողքի վրա, գլուխը խփելով ծովապատնեշի տաքացած քարերին։

ԳԼՈՒԽ VIII

## ՄԵՆԱՄԱՐՏ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԻՋԵՎ

Ճիշտ հենց այն ժամանակ, երբ Ստյոպան գիտակցությունը կորցրեց Յալտայում, այսինքն ցերեկվա ժամը տասնմեկն անց կեսին մոտ, խոր ու երկար քնից արթնացած Իվան Նիկոլաևիչի գիտակցությունը տեղը եկավ։ Որոշ ժամանակ նա աշխատում էր հասկանալ, թե ինքն ինչպես է ընկել ճերմակ պատերով անծանոթ այդ սենյակը, որտեղ մի տեսակ բացգույն մետաղից պատրաստված զարմանալի գիշերասեղան կար, սպիտակ վարագույր էր կախած, որից այն կողմ արևի առկայությունն էր զգացվում։

Իվանը ցնցեց գլուխը, համոզվեց, որ չի ցավում ու հիշեց, որ ինքը գտնվում է բուժարանում։ Այս մտքին հաջորդեց Բեռլիոզի վախճանի հիշողությունը, բայց այսօր դա չհարուցեց Իվանի սաստիկ հուզմունքը։ Քունն առնելուց հետո Իվան Նիկոլաևիչն ավելի հանգիստ էր դարձել, սկսել էր ավելի հստակ մտածել։ Որոշ ժամանակ անշարժ պառկած մնալով անչափ մաքուր, փափուկ ու հարմար զսպանակավոր մահճակալի մեջ, Իվանն իր կողքին զանգի կոճակ տեսավ։ Առանց անհրաժեշտության ամեն ինչի ձեռք տալու իր սովորությամբ Իվանը սեղմեց կոճակը։ Դրան հաջորդող ինչ-որ մի զանգի կամ երևույթի էր սպասում նա, բայց միանգամայն ուրիշ բան կատարվեց։ Իվանի ոտքերի մոտ մի փայլատ գլան վառվեց, որի վրա գրված էր՝ «Խմել»։ Որոշ ժամանակ անշարժ մնալուց հետո գլանն սկսեց պտտվել, մինչև որ մեկ այլ մակագրություն դուրս պրծավ՝ «Դայակ»։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ հնարամիտ գլանն ապշեցրեց Իվանին։ «Դայակ» մակագրությունը փոխարինվեց «Կանչեք բժշկին» մակագրությամբ։

— Հըմ...— արեց Իվանը, չիմանալով ինչպես վարվել այդ գլանի հետ։ Բայց այստեղ պատահականորեն բախտը բերեց.

«Բուժակուհի» մակագրության վրա նա երկրորդ անգամ սեղմեց կոճակը։ Գլանը կամացուկ զրնգաց ի պատասխան, կանգ առավ, մարեց, և սենյակ մտավ սպիտակ խալաթով գեր ու բարետես մի կին ու ասաց Իվանին.

— Բարի լույս։

Իվանը չպատասխանեց, քանի որ այդ ողջույնը տվյալ պայմաններում անտեղի համարեց։ Իրոք, առողջ մարդուն փակել են բուժարանում, ու դեռ ձևացնում են, թե այդպես է պետք։

Իսկ այդ ընթացքում կինը, չփոխելով դեմքի բարեհամբույր արտահայտությունը, կոճակը մեկ անգամ սեղմելով վեր բարձրացրեց վարագույրը, և մինչև հատակը հասնող լայնահանգույց, թեթև վանդակի արանքից արևը սենյակ խուժեց։ Վանդակից այն կողմ պատշգամբն էր, հետո ոլորուն գետի ափը և գետի մյուս ափին՝ զվարթ սոճուտը։

— Համեցեք լոգանք ընդունելու,— հրավիրեց կինը, և նրա ձեռքերի տակ շարժվեց ներքին պատը, որից այն կողմ հայտնվեց լոգասենյակը և հիանալի կահավորված զուգարանը։

Իվանը, թեև վճռել էր չխոսել այդ կնոջ հետ, չդիմացավ և տեսնելով, թե ջուրը լայն շիթով խշշալով ինչպես է լցվում լոգարանը՝ փայլուն ծորակից, ասաց հեգնանքով.

— Մի տես է՜։ Ոնց որ «Մետրոպոլում»։

— Օ՜, ոչ,— հպարտությամբ պատասխանեց կինը,— շատ ավելի լավ։ Այսպիսի կահավորություն արտասահմանում էլ չկա։ Գիտնականներն ու բժիշկները հատկապես գալիս են նայելու մեր կլինիկան։ Մեզ մոտ ամեն օր ինտուրիստներ են լինում։

«Ինտուրիստ» բառը լսելուն պես Իվանը հիշեց երեկվա խորհրդատուին։ Իվանը մթագնվեց, նայեց հոնքերի տակից և ասաց.

— Ինտուրիստներ... Ո՜նց եք բոլորդ պաշտում ինտուրիստներին։ Իսկ նրանց մեջ, իմիջիայլոց, ինչ տեսակն ասես կա։ Օրինակ, ես երեկ էն տեսակ մեկի հետ ծանոթացա, որ պատմելու չի։

Եվ քիչ էր մնում սկսեր պատմել Պոնտացի Պիղատոսի մասին, բայց իրեն զսպեց, հասկանալով, որ այդ պատմությունները կնոջը պետք չեն, որ, միևնույն է, նա իրեն օգնել չի կարող։

Լողացած Իվան Նիկոլաևիչին անմիջապես տրվեց բառացիորեն այն ամենը, ինչ անհրաժեշտ է տղամարդուն լոգանքից հետո՝ արդուկած վերնաշապիկ, ոտաշոր, գուլպաներ։ Բայց դա

բոլորը չէր, բաց անելով փոքր պահարանի դուռը, կինը ցույց տվեց ներսը և հարցրեց.

— Ի՞նչ եք կամենում հագնել՝ խալա՞թ, թե՝ պիժամա։

Բռնի կերպով նոր կացարան ստացած Իվանը ձեռքերը հազիվ իրար չզարկեց այդ կնոջ սանձարձակությունից և մատը լուռ տնկեց բամբակյա խավոտ, մուգ կարմիր պիժամայի վրա։

Դրանից հետո Իվան Նիկոլաևիչին տարան դատարկ և անաղմուկ միջանցքով և բերեցին վիթխարի չափերի մի աշխատասենյակ։ Որոշելով հեգնաբար վերաբերվել այն ամենին, ինչ կար այդ հիանալի կահավորված շենքում, Իվանը մտքի մեջ տեղնուտեղը աշխատասենյակը կնքեց «ֆաբրիկա-խոհանոց» անվամբ։

Եվ դա տեղին էր։ Այստեղ կային պահարաններ և ապակյա պահարանիկներ՝ նիկելապատ փայլուն գործիքներով։ Արտակարգ բարդ կառուցվածքի բազկաթոռներ կային, մի տեսակ ցմփոր լամպեր՝ պսպղուն կափարիչներով, բազմաթիվ սրվակներ, գազի վառիչներ, էլեկտրալարեր և միանգամայն անծանոթ սարքեր։

Աշխատասենյակում Իվանով զբաղվել սկսեցին երեքը՝ երկու կին և մեկ տղամարդ, բոլորն էլ ճերմակ հագած։ Առաջին հերթին Իվանին տարան մի անկյուն, փոքր սեղանի մոտ, նրանից ինչ-որ բաներ կորզելու բացահայտ մտադրությամբ։ Իվանն սկսեց մտքում քննել կացությունը։ Նրա առջև երեք ճանապարհ կար։ Արտակարգ գայթակղիչ էր առաջինը. հարձակվել այդ լամպերի, զանազան-զարմանազան իրերի վրա և ջարդուփշուր անել ու ցրիվ տալ գրողի մոր ծոցը, դրանով իսկ իր բողոքն արտահայտելով, որ զուր տեղն են իրեն բռնել։ Սակայն այսօրվա Իվանն արդեն զգալիորեն տարբերվում էր երեկվա Իվանից, և առաջին ճանապարհը նրան կասկածելի թվաց՝ մեկ էլ տեսար նրանք հիմնավորապես կհամոզվեն, որ ինքն անզուսպ խելագար է։ Դրա համար Իվանը մերժեց առաջին ճանապարհը։ Երկրորդ ճանապարհը՝ անհապաղ սկսել պատմությունը խորհրդատուի և Պոնտացի Պիղատոսի մասին։ Սակայն երեկվա փորձը ցույց էր տվել, որ այդ պատմությանը չեն հավատում կամ մի տեսակ խեղաթյուրված են հասկանում։ Դրա համար Իվանն այդ ճանապարհից ևս հրաժարվեց, վճռելով ընտրել երրորդը՝ ամփոփվել հպարտ լռությամբ։

Լիովին իրականացնել դա չհաջողվեց, և կամա թե ակամա,

թեև կարճ ու խոժոռ, ստիպված էր պատասխանել մի ամբողջ շարք հարցերի։

Եվ Իվանից բառացիորեն ամեն ինչ դուրս կորզեցին նրա անցյալ կյանքի մասին, ընդհուպ մինչև այն, թե երբ և ինչպես էր հիվանդացել քութեշով տասնհինգ տարի սրանից առաջ։ Իվանի մասին մի ամբողջ էջ գրելուց հետո էջը շրջեցին, և ճերմակ հագած կինն անցավ Իվանի ազգականների մասին իր հարցուփորձին։ Մի ժամավաճառությո՜ւն սկսվեց. ով է մեռել, երբ, իսկ ինչից, չէ՞ր խմում արդյոք, վեներական հիվանդություններ չունի՞ր, և այսպես շարունակ։ Վերջում խնդրեցին պատմել երեկվա դեպքի մասին՝ Պատրիարքական լճի մոտ, բայց շատ հետամուտ չեղան, Պոնտացի Պիղատոսի մասին հայտնելուց չզարմացան։

Այստեղ կինը Իվանին հանձնեց տղամարդուն, և սա Իվանով զբաղվել սկսեց այլ կերպ, արդեն ոչ մի բան չհարցնելով։ Չափեց Իվանի մարմնի ջերմությունը, զարկերակը հաշվեց, նայեց Իվանի աչքերի մեջ, լուսավորելով մի պստլիկ լամպով։ Հետո տղամարդուն օգնության եկավ մեկ այլ կին, և Իվանի մեջքը ծակծկեցին մի բանով, բայց ցավոտ չէր դա, մրճիկի կոթով ինչ-որ նշաններ նկարեցին նրա կրծքի մաշկի վրա, մրճիկներով հարվածեցին ծնկներին, որից Իվանի ոտքերը վեր-վեր էին թռչում, մատը ծակեցին և արյուն վերցրեցին, ծակեցին արմունկի ծալքի մոտ, ձեռքերին ռետինե ապարանջաններ հագցրին...

Իվանը սոսկ դառնորեն քմծիծաղ էր տալիս և մտորում, թե որքան հիմար ու տարօրինակ բան ստացվեց։ Մի լա՜վ մտածեք։ Ուզում էր բոլորին նախազգուշացնել անծանոթ խորհրդատուից սպառնացող վտանգի մասին, պատրաստվում էր նրան բռնել և հասավ միայն մի բանի՝ ընկավ ինչ-որ խորհրդավոր աշխատասենյակ, որպեսզի ամեն տեսակ փուչ բաներ պատմի քեռի Ֆյոդորի մասին, որն օրերով հարբում էր Վոլոգդայում։ Անտանելի՜ հիմարություն։

Վերջապես Իվանին բաց թողեցին։ Նրան ետ ուղեկցեցին իր սենյակը, ուր ստացավ մի գավաթ սուրճ, երկու թերխաշ հավկիթ և վրան կարագ քսած սպիտակ հաց։

Ուտելով և խմելով իրեն առաջարկվածը, Իվանը վճռեց սպասել այս հաստատության մեջ գլխավոր մեկին և այդ գլխավո-

րից արդեն թե ուշադրություն ձեռք բերել իր նկատմամբ, թե արդարություն։

Եվ նրա սպասածը եղավ, այն էլ շատ շուտով, նախաճաշից հետո։ Անսպասելիորեն բացվեց Իվանի սենյակի դուռը, և առհասարակ ժողովուրդ մտավ սենյակ, ամենքն էլ սպիտակ խալաթներով։ Բոլորի առջևից քայլում էր խնամքով, դերասանավարի սափրված, քառասունհինգին մոտ, դուրեկան, բայց շատ սուր աչքերով և նրբակիրթ շարժուձևով մի մարդ։ Ամբողջ շքախումբը ուշադրության և հարգանքի նշաններ էր ցուցաբերում նրա նկատմամբ, և այդ պատճառով նրա մուտքը շատ հանդիսավոր ստացվեց։ «Ոնց որ Պոնտացի Պիղատոսը»,— անցավ Իվանի մտքով։

Այո, անկասկած, գլխավորն էր։ Նա նստեց աթոռակին, բոլորը մնացին կանգնած։

— Բժիշկ Ստրավինսկի,— ներկայացավ նստողն Իվանին ու բարեկամաբար նրան նայեց։

— Ահա, Ալեքսանդր Նիկոլաևիչ,— ցածրաձայն ասաց կոկված մորուքով մեկը և գլխավորին տվեց Իվանի մասին գրոտած թուղթը։

«Մի ամբողջ գործ են կպցրել»,— մտածեց Իվանը։ Իսկ գլխավորը վարժ հայացքով աչքի անցկացրեց թուղթը, մրթմրթաց.«Ըհը, ըհը...» և մի քանի նախադասություն փոխանակեց շրջապատողների հետ սակավ հայտնի լեզվով։

«Լատիներեն էլ է խոսում, Պիղատոսի պես...»,— տրտմությամբ մտածեց Իվանը։ Այստեղ մի բառ ստիպեց նրան ցնցվել, և դա «շիզոֆրենիա» բառն էր, որն, ավաղ, անիծյալ օտարերկրացին երեկ էր արտասանել Պատրիարքական լճի մոտ, իսկ այսօր այստեղ կրկնեց պրոֆեսոր Ստրավինսկին։

«Դա էլ գիտեր, է՞»,— տագնապած մտածեց Իվանը։ Գլխավորն, ըստ երևույթին, իր համար օրենք էր դարձրել համաձայնել ամեն ինչի և ուրախանալ ամեն բանով, ինչ ուզում է ասեին շրջապատողները և արտահայտել դա սոսկ «բարի, բարի...» բառերով։

— Բարի՛,— ասաց Ստրավինսկին, ինչ-որ մեկին վերադարձնելով թուղթը և դիմեց Իվանին.— Դուք բանաստեղ՞ծ եք։

— Բանաստեղծ եմ,— մռայլ պատասխանեց Իվանը և հանկարծ մի տեսակ անբացատրելի նողկանք զգաց պոեզիայի

նկատմամբ, և տեղնուտեղը հիշած սեփական բանաստեղծությունները չգիտես ինչու, անդուր թվացին իրեն։

Դեմքը կնճռոտելով, նա իր հերթին հարցրեց Ստրավինսկուն.

— Դուք պրոֆեսո՞ր եք։

Ի պատասխան Ստրավինսկին պատրաստակամ-քաղաքավարի խոնարհեց գլուխը։

— Եվ դուք այստեղի գլխավո՞րն եք,— շարունակեց Իվանը։

Ստրավինսկին այս անգամ էլ խոնարհվեց։

— Ես պետք է խոսեմ ձեզ հետ,— բազմանշանակ ասաց Իվան Նիկոլաևիչը։

— Դրա համար էլ եկել եմ,— պատասխանեց Ստրավինսկին։

— Ասեմ, բանն ինչ է,— սկսեց Իվանը, զգալով, որ եկել է իր ժամը,— ինձնից խելագար են սարքել, ոչ ոք չի ուզում ինձ լսել...

— Օ՜, ոչ, մենք ձեզ շատ ուշադիր կլսենք,— լրջորեն և հանգստացնելով ասաց Ստրավինսկին,— և ոչ մի դեպքում թույլ չենք տա ձեզնից խելագար սարքեն։

— Ուրեմն, լսեք, որ այդպես է. երեկ երեկոյան Պատրիարքական լճի մոտ խորհրդավոր մի անձնավորության հանդիպեցի, օտարերկրացի էր, թե օտարերկրացի չէր, բայց վաղօրոք գիտեր Բեռլիոզի մահվան մասին և անձամբ տեսել էր Պոնտացի Պիղատոսին։

Շքախումբը լուռ և անշարժ ունկնդրում էր բանաստեղծին։

— Պիղատոսի՞ն։ Պիղատոսին, որը Հիսուս Քրիստոսի ժամանա՞կ է ապրել,— աչքերն Իվանի վրա կկոցելով՝ հարցրեց Ստրավինսկին։

— Հենց նրան։

— Ըհը,— ասաց Ստրավինսկին,— իսկ այդ Բեռլիոզը տրամվայի տա՞կ ընկավ ու մահացավ։

— Ահա հենց նրա վիզն իմ աչքի առաջ կտրեց տրամվայը Պատրիարքականի մոտ, ընդ որում այդ նույն հանելուկային քաղաքացին...

— Պոնտացի Պիղատոսի ծանո՞թը,— հարցրեց Ստրավինսկին, որն ակներևաբար մեծ ըմբռնողության տեր մարդ էր։

— Հենց նա,— հաստատեց Իվանը՝ Ստրավինսկուն ուսումնասիրելով,— ուրեմն, նա նախօրոք ասաց, որ Աննուշկան ձեթը թափել է... Իսկ նա ճիշտ այդտեղ էլ սայթաքեց։ Սրա մասի՞ն

ինչ կասեք,— բազմանշանակ տոնով հարցրեց Իվանը՝ հուսալով մեծ տպավորություն թողնել իր խոսքերով։

Բայց նման տպավորություն չթողեց, և Ստրավինսկին շատ սովորական ձևով հաջորդ հարցը տվեց.

— Իսկ ո՞վ է այդ Աննուշկան։

Այս հարցը մի փոքր վշտացրեց Իվանին, նրա դեմքը ջղաձգվեց։

— Աննուշկան այստեղ բացարձակապես կարևոր չէ,— ասաց նա, հուզվելով,— սատանան գիտե, թե ով է նա։ Ցանցառի մեկը պարզապես, Սադովայա փողոցից։ Կարևորն այն է, որ նա նախօրո՜ք, հասկանում եք, նախօրո՜ք գիտեր ձեթի մասին։ Դուք ինձ հասկանո՞ւմ եք։

— Շատ լավ եմ հասկանում,— լրջորեն պատասխանեց Ստրավինսկին և, դիպչելով բանաստեղծի ծնկանը, ավելացրեց.— մի հուզվեք և շարունակեք։

— Շարունակեմ,— ասաց Իվանը, ջանալով Ստրավինսկու տոնին հարմարվել և արդեն գիտենալով դառը փորձից, որ սոսկ հանգստությունն իրեն կօգնի,— ուրեմն այսպես, այդ սարսափելի տիպը, իսկ նա սուտ է ասում, թե խորհրդատու է, մի արտակարգ ուժ ունի... Օրինակ, եթե նրան հետապնդես, հասնելու ոչ մի հնարավորություն չկա։ Հետը մի զույգ էլ ունի, նույնպես լավ տիպեր են, բայց ուրիշ տեսակի, մի երկարը կա, ջարդված ակնոցով, բացի դրանից անհավանականորեն մեծ մի կատու, որն ինքնուրույն երթևեկում է տրամվայով։ Բացի դրանից,— Իվանին ոչ ոք չէր ընդհատում, և նա խոսում էր ավելի մեծ կրքով ու համոզկերությամբ,— նա անձամբ եղել է Պոնտացի Պիղատոսի պատշգամբում, դրանում ոչ մի կասկած չկա։ Բայց դա ի՞նչ բան է։ Հը՞։ Նրան պետք է անմիջապես ձերբակալել, թե չէ չտեսնված փորձանքներ կբերի։

— Ուրեմն դուք հետամուտ եք լինում, որ նրան ձերբակալե՞ն։ Ես ձեզ ճի՞շտ հասկացա,— հարցրեց Ստրավինսկին։

«Նա խելացի է,— մտածեց Իվանը,— պետք է խոստովանել, որ մտավորականների մեջ նույնպես մեկ-մեկ հազվագյուտ խելքի տեր մարդիկ են լինում։ Դա ժխտել չի կարելի»,— և պատասխանեց.

— Միանգամայն ճիշտ է։ Եվ ինչպե՜ս հետամուտ չլինեմ, ինքներդ մտածեք։ Մինչդեռ ինձ բռնի պահել են այստեղ, աչքս լամպ են խոթում, լողացնում են, քեռի Ֆեդյայի մասին են բաներ

*հարցնում...Իսկ նա վաղուց էն աշխատնում է։ Ես պահանջում եմ, որ անհապաղ դուրս թողնեն ինձ։*

*— Ինչ կա որ, բարի՛, բարի՛— պատասխանեց Ստրավինսկին,— ահա և պարզվեց ամեն ինչ։ Իսկապես, ի՞նչ միտք ունի առողջ մարդուն պահել բուժարանում։ Ես ձեզ անմիջապես դուրս կգրեմ այստեղից, եթե դուք ինձ ասեք, որ նորմալ մարդ եք։ Ոչ թե ապացուցեք, այլ սոսկ ասեք։ Եվ այսպես, դուք նորմա՞լ մարդ եք։*

*Այստեղ կատարյալ լռություն տիրեց, և գիրուկ կինը, որն առավոտյան խնամում էր Իվանին, ակնածանքով նայում էր պրոֆեսորին, և Իվանը մի անգամ էլ մտածեց. «Հաստատ խելոք մարդ է»։*

*Պրոֆեսորի առաջարկը նրան շատ դուր եկավ, սակայն պատասխանելուց առաջ նա շատ-շատ մտածեց, ճակատը կնճռոտելով, և ի վերջո հաստատ ասաց.*

*— Ես նորմալ մարդ եմ։*

*— Բարի՛,— թեթևացած բացականչեց Ստրավինսկին,— իսկ եթե այդպես է, եկեք տրամաբանորեն մտածենք։ Վերցնենք ձեր երեկվա օրը։— այստեղ նա շրջվեց, և նրան անմիջապես տվեցին Իվանի թուղթը։— Փնտրելով անծանոթ մի մարդու, որը ձեզ էր ներկայացել որպես Պոնտացի Պիղատոսի ծանոթը, երեկ դուք հետևյալ գործողությունները եք կատարել,— Ստրավինսկին այստեղ սկսեց ծալել երկար մատները, նայելով մեկ՝ թղթին, մեկ՝ Իվանին,— կրծքից սրբապատկեր եք կախել։ Եղե՞լ է։*

*— Եղել է,— խոժոռված համաձայնեց Իվանը։*

*— Ընկել եք ցանկապատի վրայից, վնասել ձեր դեմքը։ Ճի՞շտ է։ Հայտնվել եք ռեստորանում, վառած մոմը ձեռքներիդ, միայն սպիտակեղենով և ռեստորանում ծեծել եք ինչ-որ մեկին։ Ձեզ այստեղ են բերել կապկպված։ Ընկնելով այստեղ, դուք զանգահարել եք միլիցիա և խնդրել գնդացիրներ ուղարկել։ Հետո փորձել եք ձեզ դուրս նետել պատուհանից։ Ճի՞շտ է։ Հարց է առաջանում. հնարավո՞ր է արդյոք, նման եղանակով բռնել կամ ձերբակալել որևիցե մեկին։ Եվ եթե դուք նորմալ մարդ եք, ապա ինքներդ կպատասխանեք՝ ո՛չ մի դեպքում։ Դուք կամենում եք այստեղից գնա՞լ։ Հրամեցեք։ Սակայն թույլ տվեք հարց տալ ձեզ՝ ո՞ւր եք գնալու այստեղից։*

*— Իհարկե, միլիցիա,— պատասխանեց Իվանն այլևս ոչ*

այնքան հաստատ ու խեթևակի շփոթվելով պրոֆեսորի հայացքից։

— Անմիջապես այստեղի՞ց։

— Ըհը։

— Իսկ չե՞ք մտնի ձեր բնակարանը,— արագ հարցրեց Ստրավինսկին։

— Ախր ժամանակ չկա մտնելու։ Մինչև ես բնակարաններում քարշ գամ, նա կծլկի։

— Այսպես։ Իսկ միլիցիայում ի՞նչ պիտի ասեք առաջին հերթին։

— Պոնտացի Պիղատոսի մասին,— պատասխանեց Իվան Նիկոլաևիչը, և նրա աչքերը պարուրվեցին աղջամուղջային մշուշով։

— Ահա՛, բարի՛,— բացականչեց հնազանդված Ստրավինսկին և դառնալով այն մեկին, որ մորուքավոր էր, կարգադրեց.— Ֆյոդոր Վասիլևիչ, քաղաքացի Անապաստանին դուրս գրեք քաղաք։ Բայց այս սենյակը չզբաղեցնեք, անկողնու սպիտակեղենը կարելի է չփոխել։ Երկու ժամ հետո քաղաքացի Անապաստանը այստեղ կլինի նորից։ Է՛, ինչ,— դիմեց նա բանաստեղծին,— ձեզ հաջողություն չեմ ցանկանա, որովհետև այդ հաջողությանը նվազագույնս անգամ չեմ հավատում։ Շուտով կտեսնվենք։— Եվ ոտքի ելավ, իսկ նրա շքախումբը շարժվեց տեղում։

— Ինչի՞ հիման վրա նորից այստեղ կլինեմ,— տագնապած հարցրեց Իվանը։

Ստրավինսկին ասես սպասում էր այդ հարցին, իսկույն նստեց տեղը և սկսեց.

— Այն հիման վրա, որ հենց ոտաշորով հայտնվեք միլիցիայում և ասեք, որ հանդիպել եք մի մարդու, որն անձամբ ճանաչում է Պոնտացի Պիղատոսին, վայրկենապես ձեզ կբերեն այստեղ ու դուք կհայտնվեք նույն այս սենյակում։

— Ոտաշո՞րն ինչ գործ ունի այստեղ,— շփոթված շուրջը նայելով, հարցրեց Իվանը։

— Գլխավորապես՝ Պոնտացի Պիղատոսը։ Բայց ոտաշորը՝ նույնպես։ Չէ որ պետական սպիտակեղենը մենք կհանենք ձեր վրայից ու ձեր հագուստը կտանք ձեզ։ Իսկ մեզ մոտ ձեզ բերել են ոտաշորով։ Մինչդեռ ամենևին միտք չունեիք մտնել ձեր բնա-

կարանը, թեև ես ակնարկեցի դա։ Դրան կհաջորդի Պիղատոսը... և ամեն բան կլրանա։

Այստեղ տարօրինակ մի բան կատարվեց Իվան Նիկոլաևիչի հետ։ Նրա կամքն ասես մասնատվեց, և նա զգաց, որ թուլացել է, որ խորհրդի կարիք է զգում։

— Ուրեմն, ի՞նչ անեմ,— հարցրեց նա այս անգամ արդեն վեհերոտ։

— Ահա՛, բարի՛,— պատասխանեց Ստրավինսկին,— դա ամենախելացի հարցն էր։ Հիմա ես ձեզ կասեմ, թե, իրոք, ինչ է կատարվել ձեզ հետ։ Երեկ ինչ-որ մեկը ձեզ սաստիկ վախեցրել է և բարկացրել Պոնտացի Պիղատոսի մասին պատմություններով և ուրիշ այլ բաներով։ Եվ ահա դուք, չափազանց նյարդայնացած ու խռովված մի մարդ, շրջել եք քաղաքում՝ պատմելով Պոնտացի Պիղատոսի մասին։ Միանգամայն բնական է, որ ձեզ խելագարի տեղ են դնում։ Ձեր փրկությունը հիմա մեկ բան է՝ կատարյալ հանգստություն։ Եվ դուք անպայմանորեն պետք է մնաք այստեղ։

— Բայց նրան անհրաժեշտ է բռնել,— արդեն աղերսագին բացականչեց Իվանը։

— Շատ լավ, բայց ինչի՞ համար անձամբ վազվզեք։ Գրավոր շարադրեք այդ մարդու դեմ ձեր բոլոր կասկածներն ու մեղադրանքները։ Ավելի հեշտ բան չկա, քան ձեր դիմումն ուղարկել ուր հարկն է, և եթե, ինչպես դուք եք ենթադրում, մենք գործ ունենք հանցագործի հետ, այդ ամենը շատ շուտով կպարզվի։ Բայց միայն մի պայման՝ մի լարեք ձեր ուղեղը և ջանացեք ավելի քիչ մտածել Պոնտացի Պիղատոսի մասին։ Ինչե՞ր ասես չի կարելի պատմել։ Ամեն բանի չէ, որ կարելի է հավատալ։

— Հասկացա՛,— վճռական հայտարարեց Իվանը,— խնդրում եմ ինձ թուղթ և գրիչ տալ։

— Թուղթ կտաք և կարճ մատիտ,— կարգադրեց Ստրավինսկին գեր կնոջը, իսկ Իվանին այսպես ասաց.—բայց այսօր խորհուրդ եմ տալիս չգրել։

— Ոչ, ոչ, այսօր եթե, անպայման այսօր,— անհանգստացած բացականչեց Իվանը։

— Դե լավ։ Միայն չլարեք ձեր ուղեղը։ Այսօր չստացվեց՝ վաղը կստացվի։

— Նա կփախչի՜։

— Օ՜, ոչ,—վստահ առարկեց Ստրավինսկին,— Նա ոչ մի

տեղ չի փախչի, խոստանում եմ ձեզ։ Եվ հիշեք, որ մեզ մոտ այստեղ ձեզ ըստ ամենայնի կօգնեն, իսկ առանց դրա դուք ոչինչի չեք հասնի։ Դուք ինձ լսո՞ւմ եք,— հանկարծ բազմանշանակ հարցրեց Ստրավինսկին և բռնեց Իվան Նիկոլաևիչի երկու ձեռքերը։ Նա երկար, անթարթ նայում էր Իվանի աչքերին, կրկնելով.— Ձեզ այստեղ կօգնեն... դուք ինձ լսո՞ւմ եք... Ձեզ այստեղ կօգնեն... ձեզ այստեղ կօգնե՜ն... Դուք թեթևացու՞մ կզգաք։ Այստեղ խաղա՞ղ է, ամեն ինչ հանգի՞ստ... Ձեզ այստեղ կօգնե՜ն...

Իվան Նիկոլաևիչն անսպասելիորեն հորանջեց, նրա դեմքի արտահայտությունը մեղմացավ։

— Այո, այո,— ասաց կամացուկ։

— Ահա՜, բարի՜,— ըստ իր սովորության ավարտեց զրույցը Ստրավինսկին և ոտքի ելավ,— ցտեսությու՜ն,— նա սեղմեց Իվանի ձեռքը և, արդեն սենյակից դուրս գալով, դարձավ դեպի այն մեկը, որ մորուքավոր էր, և ասաց.— Այո, թթվածին նույնպես փորձեք... և լոգանքներ։

Մի քանի վայրկյան անց Իվանի դիմաց ոչ Ստրավինսկի կար, ոչ շքախումբ։ Պատուհանի ցանցից այն կողմ, միջօրեի արևի տակ սփռված էր բերկրաբեր գարնանային անտառը՝ հանդիպակաց ափին, իսկ ավելի մոտ փայլփլում էր գետը։

## ԳԼՈՒԽ IX

## ԿՈՐՈՎԵՎԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Նիկանոր Իվանովիչ Բոսոյը՝ բնակարանային ընկերության նախագահը Մոսկվայի Սադովայա փողոցի №302/2 տան, ուր բնակվում էր հանգուցյալ Բեռլիոզը, չորեքշաբթի լույս հինգշաբթի գիշերից սկսած, սարսափելի հոգսերի մեջ էր։

Ինչպես արդեն գիտենք, կեսգիշերին տուն եկավ հանձնաժողովը, որի անդամներից մեկն էլ Ժելդիբինն էր, Նիկանոր Իվանովիչին դուրս կանչեցին, հայտնեցին Բեռլիոզի վախճանի մասին ու նրա հետ գնացին №50 բնակարանը։

Այնտեղ հանգուցյալի ձեռագրերի և իրերի կնքումը կատարեցին։ Բնակարանում այդ ժամանակ ոչ Գրունյան կար՝ երթևեկ տնային աշխատողը, ոչ էլ թեթևսոլիկ Ստեփան Բոգդանովիչը։

Հանձնաժողովը Նիկանոր Իվանովիչին հայտարարեց, որ հանգուցյալի ձեռագրերը հանձնաժողովը վերցնում է դասավորելու համար, որ հանգուցյալի բնակտարածությունը, այսինքն՝ երեք սենյակները (ակնագործի այրու նախկին առանձնասենյակը, հյուրասենյակը և ճաշասենյակը) անցնում են բնակընկերության տնօրինությանը, իսկ հանգուցյալի իրերը ենթակա են պահպանման տվյալ բնակտարածության մեջ, մինչև ժառանգների հայտնվելը։

Բեռլիոզի վախճանի լուրը տնով մեկ տարածվեց մի տեսակ գերբնական արագությամբ, և հինգշաբթի առավոտյան ժամը յոթից սկսեցին հեռախոսով զանգահարել Բոսոյին, ապա անձամբ ներկայացան դիմումներով, որոնք հանգուցյալի բնակտարածության նկատմամբ պահանջներ էին բովանդակում։ Եվ երկու ժամվա ընթացքում Նիկանոր Իվանովիչը նմանօրինակ երեսուներկու դիմում ընդունեց։

Դրանց մեջ ամփոփված էին աղերսանքներ, սպառնալիքներ, բանսարկություններ, մատնագրեր, իր հաշվին նորոգում կատարելու խոստումներ, անտանելի նեղվածքի և մեկ բնակարանում ավազակների հետ ապրելու անհնարինության փաստարկումներ։ Ի թիվս այլոց, №31 բնակարանում պելմեններ հափշտակելու և անմիջապես պիջակի գրպանը խոթելու՝ գեղարվեստական ուժով ցնցող մի նկարագրություն կար, կյանքն ինքնասպանությամբ վերջացնելու երկու խոստում և գաղտնի հղիության մեկ խոստովանություն։

Նիկանոր Իվանովիչին դուրս էին կանչում նրա բնակարանի նախասենյակը, թևքն էին բռնում, ինչ-որ բաներ շշնջում, աչքով էին անում ու խոստանում պարտքի տակ չմնալ։

Այդ տանջանքը շարունակվեց մինչև ցերեկվա ժամը մեկը, երբ Նիկանոր Իվանովիչը պարզապես փախավ իր բնակարանից դարպասի մոտ գտնվող վարչության սենյակը, բայց երբ տեսավ, որ այնտեղ ևս իր ճամփան բռնել են, այդտեղից էլ փախավ։ Մի կերպ գլուխն ազատելով նրանցից, ովքեր կրնկակոխ իրեն էին հետևում ասֆալտապատ բակով, Նիկանոր Իվանովիչը թաքնվեց վեցերորդ մուտքում և բարձրացավ հինգերորդ հարկ, ուր և գտնվում էր այդ զզվելի №50 բնակարանը։

Շունչը տեղը բերելով սանդուղքի գլխին, գիրուկ Նիկանոր Իվանովիչը զանգը խփեց, բայց ոչ ոք չբացեց դուռը։ Նա նորից ու նորից զանգը խփեց ու սկսեց մրթմրթալ և քթի տակ հայ-

հոյժել։ Բայց էլի չբացեցին։ Նիկանոր Իվանովիչի համբերությունը հատավ, և նա, գրպանից հանելով բնակվարչությանը պատկանող կրկնակ բանալիների խուրձը, տիրական ձեռքով բաց արեց դուռն ու ներս մտավ։

— Է՜յ, ծառայո՜ղ,— ձայն տվեց Նիկանոր Իվանովիչը կիսախավար նախասենյակում։— Անունդ ի՞նչ էր, Գրո՞ւնյա էր, հա՞։ Տանը չե՞ս։

Ոչ ոք չպատասխանեց։

Այդ ժամանակ Նիկանոր Իվանովիչը կնիքը պոկեց առանձնասենյակի դռան վրայից, պայուսակից հանեց ծալովի մետրն ու քայլ գցեց առանձնասենյակ։

Քայլը գցեց, բայց ապշահար կանգ առավ դռան մեջ և նույնիսկ ցնցվեց։ Հանգուցյալի սեղանի մոտ նստած էր անծանոթ, նիհար ու լողլող մի քաղաքացի, վանդակավոր կարճ պիջակով, ժոկեյի գդակով ու քթակնոցով... Է՜, մի խոսքով նա էր որ կար։

— Դուք ո՞վ կլինեք, քաղաքացի,— վախեցած հարցրեց Նիկանոր Իվանովիչը։

— Բա՜, Նիկանոր Իվանովիչ,— խզված տենորով բղավեց անակնկալ քաղաքացին և, վեր ցատկելով, ողջունեց նախագահին բռնի ու հանկարծակի ձեռքսեղմումով։ Այդ ողջույնն ամենևին չուրախացրեց Նիկանոր Իվանովիչին։

— Ինձ կներեք,— սկսեց նա կասկածանքով,— դուք ո՞վ կլինեք։ Դուք պաշտոնակա՞ն անձ եք։

— Է՜հ, Նիկանոր Իվանովիչ,— սրտաբուխ բացականչեց անծանոթը։— Ի՞նչ ասել է պաշտոնական անձ կամ ոչ պաշտոնական։ Այդ ամենը կախված է նրանից, թե ինչ տեսակետով նայես իրերին, այդ ամենը, Նիկանոր Իվանովիչ, պայմանական է և անկայուն։ Այսօր ես ոչ պաշտոնական անձ եմ, իսկ վաղը, մեկ էլ տեսար՝ պաշտոնակա՜ն։ Իսկ հակառակն էլ է լինում, Նիկանոր Իվանովիչ։ Այն էլ ինչպե՜ս է լինում։

Այդ դատողությունը նվազագույնս չգոհացրեց տնային վարչության նախագահին։ Ի բնե ընդհանրապես կասկածամիտ մարդ լինելով, նա եզրակացրեց, որ իր դիմաց ճամարտակող քաղաքացին հենց ոչ պաշտոնական, ուրեմն և անբան անձ է։

— Վերջն ո՞վ կլինեք դուք։ Ինչպե՞ս է ձեր ազգանունը,— առավել խստությամբ հարցրեց նախագահը և նույնիսկ սկսեց առաջանալ դեպի անծանոթը։

— Իմ ազգանունը,— ամենևին չշփոթվելով խստությունից, պատասխանեց քաղաքացին,— ասենք թե Կորովև է։ Իսկ չե՞ք ուզենա մի բան ուտել, Նիկանոր Իվանովիչ։ Առանց ձևականությունների։ Հը՞։

— Ինձ կներեք,— արդեն զայրանալով՝ ասաց Նիկանոր Իվանովիչը,— ի՜նչ ուտել, ի՜նչ բան։ (Հարկ է խոստովանել, թեև դա անհաճ է, որ մի քիչ կոպիտ բնավորություն ուներ Նիկանոր Իվանովիչը)։— Հանգուցյալի բնակարանում չի թույլատրվում նստել։ Ի՞նչ եք անում այստեղ։

— Հլա մի նստեք, Նիկանոր Իվանովիչ, նստեք,— բոլորովին չկորցնելով իրեն, բղավեց քաղաքացին և իրար անցավ, նախագահին բազկաթոռ առաջարկելով։

Լիովին կատաղած, Նիկանոր Իվանովիչը հրաժարվեց բազկաթոռից ու բղավեց.

— Իսկ ո՞վ եք դուք, ո՞վ։

— Եթե կհաճեք տեղյակ լինել, ես հանդես եմ գալիս որպես թարգմանիչ՝ օտարերկրացի անձնավորությանը կից, որը նստավայր ունի այս բնակարանում,— ներկայացավ իրեն Կորովև անվանած քաղաքացին ու չրխկացրեց դեղին, կեղտոտ կոշիկների կրունկները։

Նիկանոր Իվանովիչը բերանը բացեց։ Ինչ-որ օտարերկրացու առկայությունն այս բնակարանում, այն էլ թարգմանչի հետ, նրա համար ամենակատարյալ անակնկալն էր, և նա բացատրություն պահանջեց։

Թարգմանիչը հաճույքով բացատրեց։ Օտարերկրացի արտիստ պարոն Վոլանդը սիրալիր հրավեր է ստացել Վարյետեի տնօրեն Ստեպան Բոգդանովիչ Լիխոդեևից, գաստրոլների ընթացքում, մոտավորապես մեկ շաբաթ, հյուրընկալվել իր բնակարանում, որի մասին դեռևս երեկ գրել է Նիկանոր Իվանովիչին՝ օտարերկրացուն ժամանակավորապես գրանցելու խնդրանքով, մինչև որ ինքը՝ Լիխոդեևը Յալտա գնա ու վերադառնա։

— Նա ինձ ոչինչ չի գրել,— զարմացած ասաց նախագահը։

— Նիկանոր Իվանովիչ, հապա մի լավ նայեք ձեր պայուսակի մեջ,— քաղցրությամբ առաջարկեց Կորովևը։

Նիկանոր Իվանովիչը, ուսերը ցնցելով, բացեց պայուսակն ու հայտնաբերեց Լիխոդեևի նամակը։

— Այս ինչպե՞ս եմ մոռացել սրա մասին,— ապուշ կտրած նայելով բաց ծրարին, մրթմրթաց Նիկանոր Իվանովիչը։

— Ինչե՛ր ասես չեն լինում, Նիկանոր Իվանովիչ, ինչե՛ր ասես,— խզխզաց Կորովևը,— ցրվածությո՛ւն, ցրվածությո՛ւն և գերհոգնածությու՛ն, արյան ճնշման բարձրացում, մեր թանկագին բարեկամ Նիկանոր Իվանովիչ։ Ինքս էլ եմ սարսափելի ցրված։ Առիթը լինի, մի-մի բաժակ կխմենք, ու ձեզ մի քանի փաստ կպատմեմ իմ կենսագրությունից, ծիծաղից կկոտորվեք։

— Իսկ Լիխոդեևը ե՞րբ է գնում Յալտա։

— Նա արդեն գնացել է, գնացել է,— բղավեց թարգմանիչը,— գիտեք, նա արդեն թռչո՛ւմ է։ Սատանան գիտե, թե որտեղ է նա,— և այստեղ թարգմանիչը հողմաղացի թևերի պես թափահարեց ձեռքերը։

Նիկանոր Իվանովիչը հայտարարեց, որ իրեն անհրաժեշտ է անձամբ տեսնել օտարերկրացուն, բայց մերժում ստացավ թարգմանչից. միանգամայն անհնարին է։ Զբաղված է։ Կատվին է վարժեցնում։

— Կատվին, եթե կամենաք, կարող եմ ցույց տալ,— առաջարկեց Կորովևը։

Դրանից էլ, իր հերթին, Նիկանոր Իվանովիչը հրաժարվեց, իսկ թարգմանիչը ·տեղնուտեղը մի անսպասելի, բայց բավական հետաքրքիր առաջարկություն արեց նախագահին։

Նկատի ունենալով, որ պարոն Վոլանդը ոչ մի կերպ չի կամենում հյուրանոցում ապրել, իսկ նա ընդարձակ ապրուստի սովոր մարդ է, ապա բնակընկերությունը մեկ շաբաթով, քանի դեռ կկայանան Վոլանդի գաստրոլները Մոսկվայում, չի՞ տրամադրի արդյոք նրան ամբողջ բնակարանը, այսինքն հանգուցյալի սենյակները ևս։

— Չէ՞ որ հանգուցյալի համար մեկ է,— շշնջալով խզխզում էր Կորովևը,— ինքներդ համաձայնեք, Նիկանոր Իվանովիչ, հիմա նրա ինչի՞ն է պետք այս բնակարանը։

Նիկանոր Իվանովիչը որոշ տարակուսանքով առարկեց, որ օտարերկրացիները, գիտեք, հարկ է որ «Մետրոպոլում» ապրեն և ոչ ամենևին մասնավոր բնակարաններում...

— Ասում եմ, չէ, սատանան գիտե, թե որքա՜ն քմահաճ մարդ է,— փսփսաց Կորովևը,— չի՛ ցանկանում։ Հյուրանոց չի՛ սիրում։ Ա՛յ, մինչև այստեղ կուշտ եմ այդ ինտուրիստներից,— մտերմաբար տրտնջաց Կորովևը, մատը տնկելով իր ջղուտ պարանոցին,— կհավատաք, հոգիս հանել են։ Կգան... ու կամ լրտեսություն կանեն վերջին շան որդու նման, կամ էլ

*իրենց քմահաճույքներով մարդու նյարդերը կքայքայեն՝ այս բանն այսպես չէ, այն մեկն այնպես չէ... Իսկ ձեր ընկերության համար, Նիկանոր Իվանովիչ, լիակատար օգուտ կլինի և զգալի շահույթ։ Իսկ փողը նրա համար խնդիր չէ,— Կորովևը չորս կողմը նայեց, ապա շշնջաց նախագահի ականջին.— միլիոնատե՛ր է։*

*Թարգմանչի առաջարկը գործնական հստակ իմաստ էր բովանդակում, առաջարկությունը խիստ պատկառելի էր, բայց մի զարմանալի ոչ պատկառելի բան կար թե թարգմանչի խոսելաձևի, թե նրա հագուստի, թե այդ նողկալի բոլորովին անհարկի քթակնոցի մեջ։ Այդ պատճառով անորոշ մի բան կրծում էր նախագահի հոգին, և, այդուհանդերձ, նա որոշեց ընդունել առաջարկը։ Բանն այն է, որ բնակընկերությունն, ավաղ, կարգին պակասորդ ուներ։ Աշնանը պետք էր նավթ գնել շոգեջեռուցման համար, իսկ թե ինչով՝ հայտնի չէր։ Իսկ այդ ինտուրիստի փողերով, թերևս, հնարավոր լիներ տակից դուրս գալ։ Բայց գործնական ու զգուշավոր Նիկանոր Իվանովիչը հայտարարեց, որ ամենից առաջ ինքը ստիպված է այդ հարցը համաձայնեցնել օտարերկրացիների բյուրոյի հետ։*

*— Հասկանում եմ,— ճչաց Կորովևը,— առանց համաձայնեցնելու ինչպե՞ս, անպայմա՛ն։ Ահա հեռախոսը, Նիկանոր Իվանովիչ, ու անմիջապես համաձայնեցրեք։ Իսկ փողի հարցում չքաշվեք,— շշնջոցով ավելացրեց նա, նախագահին իր ետևից քարշ տալով նախասենյակ, հեռախոսի մոտ,— էլ ումի՞ց պետք է վերցնել, եթե ոչ նրանից։ Եթե տեսնեիք, թե ի՜նչ ամառանոց ունի Նիցցայում։ Ասենք, մյուս ամառ, որ գնաք արտասահման, հատկապես ճանապարհը կթեքեք ու կնայեք՝ կշշմե՛ք։*

*Օտարերկրացիների բյուրոյի հետ բանը հեռախոսով կարգավորվեց նախագահին ապշեցրած արտակարգ արագությամբ։ Պարզվեց, որ այնտեղ արդեն գիտեն Լիխոդեևի մասնավոր բնակարանում պարոն Վոլանդի ապրելու մտադրության մասին ու դրա դեմ ամենևին չեն առարկում։*

*— Շա՜տ հրաշալի,— բղավեց Կորովևը։*

*Փոքր-ինչ շփոթված նրա շաղակրատությունից, նախագահը հայտարարեց, որ բնակընկերությունը համաձայն է մեկ շաբաթով №50 բնակարանը տալ արտիստ Վոլանդին, օրավարձը...— Նիկանոր Իվանովիչը մի քիչ կարկամեց ու ասաց.*

— Հինգ հարյուր ռուբլի օրավարձով։

Այստեղ Կորովկը վերջնականապես ապշեցրեց նախագահին։ Գողավարի աչքով անելով Ննջասենյակի կողմը, որտեղից լսվում էին ծանրամարմին կատվի ցատկերի փափուկ թրմփոցները, նա խզխզոցով ասաց.

— Մի շաբաթվա համար, ուրեմն, դուրս է գալիս երեքուկես հազա՞ր։

Նիկանոր Իվանովիչը մտածեց, որ նա դրան կավելացնի. «Այ թե ախորժակ ունեք, հա՜, Նիկանոր Իվանովիչ», բայց Կորովևը բոլորովին այլ բան ասաց.

— Մի՞թե դա գումար է։ Հինգ խնդրեք, նա կտա։

Քթի տակ շփոթված ծիծաղելով, Նիկանոր Իվանովիչը չնկատեց էլ, թե ինչպես հայտնվեց հանգուցյալի սեղանի մոտ, ուր Կորովևը չտեսնված արագությամբ ու ճարտարությամբ երկու օրինակից պայմանագիր սարքեց։ Դրանից հետո պայմանագիրը ձեռքին սլացավ Ննջասենյակ ու ետ եկավ, ընդ որում երկու օրինակի վրա էլ օտարերկրացու լայնակի ստորագրությունը կար արդեն։ Պայմանագիրը ստորագրեց նաև նախագահը։ Այստեղ Կորովևը ստացական խնդրեց հինգ...

— Տառերով, Նիկանոր Իվանովիչ, տառերով... հազար ռուբլու...— և լուրջ գործին մի տեսակ անհարիր բառերով.— ա՛յն, ցվա՛յ, դրա՛յ,— նախագահի առաջ բանկային հինգ նոր կապուկ դրեց։

Հաշվում էլ եղավ, համեմված Կորովևի կատակներով ու առածներով, ասենք, «փողը հաշիվ կսիրի», «մի աչքը՝ լավ, երկուսն՝ ավելի» ու նման այլ բաներ։

Դրամը վերահաշվելուց հետո նախագահը Կորովևից ստացավ օտարերկրացու անձնագիրը ժամանակավոր գրանցման համար, անձնագիրը, պայմանագիրն ու դրամը պայուսակը դրեց և, չկարողանալով իրեն զսպել, ամաչելով փոխտոմս խնդրեց...

— Ասելու բա՞ն էր,— թնդաց Կորովևը,— քանի՞ տոմս եք ուզում, Նիկանոր Իվանովիչ, տասներկո՞ւ, տասնհի՞նգ։

Ապշահար նախագահը բացատրեց, որ սոսկ երկու փոխտոմս է պետք իրեն, իր և Պելագեյա Անտոնովնայի՝ իր տիկնոջ համար։

Կորովևն իսկույն դուրս քաշեց ծոցատետրը և Նիկանոր Իվանովիչի համար ճարպկորեն երկու անձի փոխտոմս գրեց,

առաջին շարքում։ Եվ այդ փոխտոմսը Թարգմանիչը ձախ ձեռքով արագորեն խոթեց Նիկանոր Իվանովիչի մի ձեռքը, իսկ աջով նախագահի մյուս ձեռքի մեջ դրեց ճռճռան ու հաստ մի կապուկ։ Հայացք ձգելով դրա վրա, Նիկանոր Իվանովիչը թունդ կարմրեց ու սկսեց ետ տալու փորձեր անել։

— Այս բանը չի թույլատրվում...— մրթմրթում էր նա։

— Լսել անգամ չեմ ուզում,— ուղիղ նրա ականջի մեջ շշընջաց Կորովևը,— մեզ մոտ չի թույլատրվում, իսկ օտարերկրացիների մոտ թույլատրվում է։ Նիկանոր Իվանովիչ, դուք կնեղացնեք նրան, իսկ դա անհարմար է։ Դուք չարչարվեցիք...

— Խստորեն պատժվում է,— չափազանց կամաց շշնջաց նախագահն ու չորս կողմը նայեց։

— Իսկ ո՞ւր են վկաները,— մյուս ականջին շշնջաց Կորովևը,— ձեզ եմ հարցնում, ո՞ւր են վկաները։ Ի՞նչ եք խոսում։

Եվ այստեղ, ինչպես հետագայում պնդում էր նախագա՚ը, հրաշք կատարվեց. կապուկն ինքն իրեն սահեց պայուսակի մեջ։ Իսկ հետո նախագահը՝ մի տեսակ թուլացած, նույնիսկ ուժասպառ եղած, հայտնվեց սանդուղքների վրա։ Զանազան մտքեր էին փոթորկվում նրա գլխի մեջ։ Պտտահողմի պես անցնում էր և այդ Նիցցայի ամառանոցը, և վարժեցրած կատուն, և այն միտքը, որ վկաներ, իրոք, չկային, և որ Պելագեյա Անտոնովնան կուրախանա փոխտոմսի համար։ Դրանք անկապ, բայց ընդհանրապես հաճելի մտքեր էին։ Եվ այնուամենայնիվ ինչ-որ մի ասեղ ծակծկում էր նախագահի սրտի խորքերը։ Անհանգստության ասեղն էր դա։ Դրանից բացի, հենց սանդուղքի վրա մի միտք շամփրեց նախագահի ուղեղը. «Իսկ ինչպե՞ս էր թարգմանիչն առանձնասենյակ ընկել, եթե դռան վրա կնիք կար դրած։ Եվ ինչպես ինքը՝ Նիկանոր Իվանովիչը, չհարցրեց այդ մասին»։ Որոշ ժամանակ նախագահը ոչխարի պես նայում էր սանդուղքի աստիճաններին, բայց հետո վճռեց թքել դրա վրա ու իրեն չտանջել խրթին այդ հարցով...

Հենց նախագահը գնաց բնակարանից, ննջասենյակից մի թավ ձայն հնչեց.

— Այդ Նիկանոր Իվանովիչն իմ դուրը չեկավ։ Նա խարդախ է ու խաբեբա։ Չի՞ կարելի արդյոք այնպես անել, որ այլևս չգա։

— Մեսսիր, միայն հրամայեցեք...— ինչ-որ տեղից պատասխանեց Կորովևը, բայց ոչ խզված, այլ շատ զինջ ու հնչեղ ձայնով։

Եվ տեղնուտեղը նզովյալ թարգմանիչը հայտնվեց նախասենյակում, մի համար հավաքեց ու սկսեց չգիտես ինչու շատ լալկան ձայնով խոսել հեռախոսով.

— Ալլո։ Պարտքս եմ համարում հայտնել, որ Սադովայա փողոցի թիվ երեք հարյուր երկու/երկու շենքի բնակընկերության նախագահ Նիկանոր Իվանովիչ Բոսոյը վալյուտային սպեկուլյացիայով է զբաղված։ Ներկա մոմենտում նրա թիվ երեսունհինգ բնակարանում, զուգարանի օդափոխության՝ անցքում, լրագրի մեջ փաթաթված չորս հարյուր դոլար կա։ Խոսում է վերոհիշյալ շենքի թիվ տասնմեկ բնակարանի բնակիչ Տիմոֆեյ Կվասցովը։ Բայց աղաչում եմ իմ անունը գաղտնի պահել։ Վախենում եմ վերոհիշյալ նախագահի վրեժխնդրությունից։

Ու կախեց խոսափողը սրիկան։

Թե ինչ եղավ հետո №50 բնակարանում,հայտնի չէ, բայց հայտնի է, թե ինչ կատարվեց Նիկանոր Իվանովիչի տանը։ Իրենց զուգարանի կեռիկը ներսից գցելով, նա պայուսակից հանեց թարգմանչի պարտադրած կապուկը և համոզվեց, որ չորս հարյուր ռուբլի կա կապուկի մեջ։ Նիկանոր Իվանովիչը փողը փաթաթեց լրագրի կտորով ու մտցրեց օդափոխության անցքը։

Հինգ րոպե անց նախագահը նստած էր իրենց փոքրիկ ճաշասենյակում, սեղանի մոտ։ Կինը խոհանոցից բերեց խնամքով կտրատած, վրան առատորեն կանաչ սոխ լցրած մանրաձուկը։ Նիկանոր Իվանովիչը մի ըմպանակ լցրեց, խմեց, երկրորդը լցրեց, խմեց, պատառաքաղով երեք կտոր ձուկ վերցրեց... և այդ ժամանակ զանգը տվեցին, իսկ Պելագեյա Անտոնովնան ներս բերեց գոլորշի արձակող կաթսան, որի վրա նետած մի հայացքով իսկույն կարելի էր կռահել, որ դրա մեջ՝ կրակվող բորշչի խորքերում է գտնվում այն, ինչից համեղ բան աշխարհում չկա՝ ծուծով լի ոսկորը։

Թուքը կուլ տալով, Նիկանոր Իվանովիչը շան պես գռմռաց.

— Կոտորվեք դուք, հա՞։ Ուտել էլ չեն թողնի։ Մարդ չթողնես, ես տանը չեմ, տանը չե՜մ։ Բնակարանի համար ասա, որ իզուր տեղը չխոսեն։ Մի շաբաթ հետո նիստ կանենք...

Կինը վազեց նախասենյակ, իսկ Նիկանոր Իվանովիչը հրահեցուկ լճից շերեփով հանեց ա՜յն՝ երկայնքով մեկ ճաքած ոսկորը։ Եվ այդ րոպեին սենյակ մտան երկու քաղաքացի, նրանց

հետ էր չգիտես ինչու շափաղանց գունատված Պելագեյա Անտոնովնան։ Քաղաքացիներին նայելով, գունատվեց նաև Նիկանոր Իվանովիչն ու վեր կացավ։

— Որտե՞ղ է արտաքնոցը,— մտահոգ հարցրեց առաջինը, որը սպիտակ, չեզոքիք վերնաշապիկով էր։

Ճաշասեղանի վրա ինչ-որ բան շրխկաց (Նիկանոր Իվանովիչը գդալը գցեց մոմլաթին)։

— Այստեղ է, այստեղ,— շուտասելուկով պատասխանեց Պելագեյա Անտոնովնան։

Եվ ներս եկածներն անմիջապես գնացին միջանցք։

— Իսկ ի՞նչ կա,— ցածրաձայն հարցրեց Նիկանոր Իվանովիչը՝ հետևելով ներս եկածներին,— մեր բնակարանում ուրիշ տեսակ բան չի կարող լինել... Իսկ ձեր փաստաթղթերը... կներեք...

Առաջինը՝ քայլելով, փաստաթուղթը ցույց տվեց Նիկանոր Իվանովիչին, իսկ երկրորդը նույն այդ րոպեին հայտնվեց զուգարանում, աթոռակի վրա կանգնած, ձեռքը մտցրած օդափոխության անցքի մեջ։ Նիկանոր Իվանովիչի աչքերը մթնեցին։ Թուղթը հանեցին, բայց կապոցից ոչ թե ռուբլիներ դուրս եկան, այլ անծանոթ փողեր՝ ոչ այն է կապույտ, ոչ այն է կանաչ, ինչ-որ մի ծերունու պատկերով։ Ի դեպ, այդ ամենը Նիկանոր Իվանովիչն այնքան էլ հստակ չտեսավ, նրա աչքերի առաջ ինչ-որ բծեր էին լողում։

— Դոլարներ օդափոխության անցքի մեջ,—մտազբաղ ասաց առաջինն ու մեղմաձայն, քաղաքավարի հարցրեց Նիկանոր Իվանովիչին։—Ձե՞րն է կապոցը։

— Չէ՛,—պատասխանեց Նիկանոր Իվանովիչը սարսափելի ձայնով,— թշնամինե՛րն են թաքուն դրել։

— Պատահում է,— համաձայնեց նա՝ առաջինը, և դարձյալ մեղմաձայն ավելացրեց.— Է՛, ինչ, պետք է մնացածն էլ հանձնել։

— Ես չունեմ։ Չունեմ, աստված վկա, երբեք աչքով տեսած չկամ,—հուսահատ բղավից նախագահը։

Վազեց դեպի պահարանը, դղրդոցով դուրս քաշեց դարակը, դարակից՝ պայուսակը, այդ ընթացքում անկապ-անկապ բղավելով.

— Ահա՛ պայմանագիրը... սրիկա թարգմանիչը թաքուն դրեց... Կորովևը... ակնոցավորը։

Բացեց պայուսակը, նայեց մեջը, ձեռքը ներս մտցրեց։ Նրա դեմքը կապտեց, և պայուսակը ձեռքից ընկավ բորշչի մեջ։ Պայուսակի մեջ ոչինչ չկար. ոչ Ստյոպայի նամակը, ոչ պայմանագիրը, ոչ օտարերկրացու անձնագիրը, ոչ փողը, ոչ փոխտոմսը։ Մի խոսքով, ոչինչ, ծալովի մետրից բացի։

— Ընկերնե՛ր,— մոլեգնած բղավեց նախագահը,— բռնեցեք դրանց։ Մեր տանը սատանա՛ կա։

Եվ տեղնուտեղը չգիտես ինչ երևաց Պելագեյա Անտոնովնայի աչքերին, միայն թե նա, ձեռքերն իրար զարկելով, ճչաց.

— Խոստովանի՛ր, Իվանիչ։ Մի բան կպակսեցնե՛ս։

Նիկանոր Իվանովիչը՝ աչքերն արնակոխ, բռունցքները բարձրացրեց կնոջ գլխի վրա, խռպոտ բղավելով.

— Ո՛ւ, տխմար անտեր։

Այստեղ նա թուլացավ ու ընկավ աթոռին, հավանորեն, որոշելով հնազանդվել անխուսափելիությանը։

Այդ ժամանակ Տիմոֆեյ Կոնդրատևիչ Կվասցովը սանդղահարթակի վրա մեկ ականջը, մեկ աչքն էր հարմարեցնում նախագահի բնակարանի դռան բանալու անցքին, հետաքրքրությունից տանջվելով։

Հինգ րոպե անց բակում գտնվող տան բնակիչները տեսան, թե ինչպես նախագահը, երկու ուրիշ անձանց ուղեկցությամբ, քայլեց ուղիղ դեպի շենքի դարպասը։ Պատմում էին, որ Նիկանոր Իվանովիչի դեմքին գույն չկար, որ նա անցնելիս օրորվում էր հարբածի նման և ինչ-որ բան մրթմրթում։

Եվս մեկ ժամ անց անծանոթ մի քաղաքացի հայտնվեց թիվ տասնմեկ բնակարանում, ճիշտ այն ժամանակ, երբ Տիմոֆեյ Կոնդրատևիչը, հաճույքից շնչակտուր լինելով, մյուս բնակիչներին պատմում էր, թե ինչպես ճզմեցին նախագահին, խոհանոցից Տիմոֆեյ Կոնդրատևիչին մատով դուրս կանչեց նախասենյակ, ինչ-որ բան ասաց ու նրա հետ միասին անհետացավ։

## ԳԼՈՒԽ X

## ԼՈՒՐԵՐ ՅԱԼՏԱՅԻՑ

Այն ժամանակ, երբ Նիկանոր Իվանովիչին այդ փորձանքը պատահեց, նույն այդ Սադովայա փողոցի վրա, №302/2 տնից ոչ հեռու, Վարյետեի ֆինտնօրեն Ռիմսկու աշխատասենյակում

գտնվում էին երկու հոգի՝ Ռիմսկին ինքը և Վարյետեի ադմինիստրատոր Վարենուխան։

Թատրոնի երկրորդ հարկում տեղավորված ընդարձակ աշխատասենյակի երկու պատուհանները նայում էին Սադովայա փողոցին, մյուս պատուհանը, որ գրասեղանի մոտ նստած ֆինտնօրենի ճիշտ ետևում էր, բացվում էր Վարյետեի ամառային այգու վրա, ուր տեղավորված էին զովացուցիչ ջրերի բուֆետները, հրաձգարանը և բացօթյա բեմահարթակը։ Գրասեղանից բացի, աշխատասենյակի կահավորանքն իրենից ներկայացնում էր պատից կախ արած հին ազդագրերի մի տրցակ, մի փոքր սեղանիկ՝ ջրամանով, չորս բազկաթոռ ու մի պատվանդան՝ անկյունում, որի վրա ինչ-որ ներկայացման փոշեպատ ու հին մակետ էր դրված։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ դրանից բացի, աշխատասենյակում ոչ մեծ չափերի, հնամաշ ու ներկը թափած մի անկիզելի պահարան կար, Ռիմսկու ձախ կողմում, գրասեղանի մոտ։

Սեղանի մոտ նստած Ռիմսկու տրամադրությունն առավոտից վատ էր, իսկ Վարենուխան, ընդհակառակն, չափազանց աշխուժացած էր և մի տեսակ առանձնահատուկ ու անհանգիստ գործնական։ Այնինչ, եռանդը սպառելու առիթ չուներ։

Վարենուխան այժմ ֆինտնօրենի աշխատասենյակում թաքնըվել էր փոխտոմս ուզողներից, որոնք թունավորում էին նրա կյանքը, հատկապես ծրագիրը փոխվելու օրերին։ Իսկ այսօր հենց այդպիսի օր էր։

Հեռախոսի զանգը հնչելուն պես, Վարենուխան վերցնում էր խոսափողն ու ստում.

— Ո՞ւմ։ Վարենուխայի՞ն։ Այստեղ չէ։ Թատրոնից դուրս է եկել։

— Խնդրում եմ, մեկ էլ զանգահարիր Լիխոդեևին,— բորբոքված ասաց Ռիմսկին։

— Տանը չի նաև։ Կարպովին էլ ուղարկեցի։ Բնակարանում ոչ ոք չկա։

— Սատանան գիտե, թե ինչ է կատարվում,— ֆշշացրեց Ռիմսկին՝ չրխկացնելով հաշվիչ մեքենան։

Դուռը բացվեց, և հսկիչը ներս բերեց հենց նոր տպագրած լրացուցիչ ազդագրերի կապոցը։ Կանաչ թերթերի վրա կարմիր խոշոր տառերով տպագրված էր.

**Այսօր և ամեն օր Վարյետե թատրոնում**
**ծրագրից դուրս**
**ՊՐՈՖԵՍՈՐ ՎՈԼԱՆԴ**
**սև մոգության սեանսներ լիակատար**
**քողազերծմամբ**

Վարենուխան, որ ազդագիրը գցել էր մակետի վրա, ետ քաշվեց, մի քիչ հիացավ ու հրամայեց հսկիչին՝ անմիջապես բոլոր օրինակներն ուղարկել փակցնելու։

— Լավ է, աչքի ընկնող,— նկատեց Վարենուխան հսկիչի գնալուց հետո։

—Իսկ ինձ այս գործը ծայրաստիճան դուր չի գալիս,— եղջրաշրջանակ ակնոցի միջից չարությամբ ազդագրին նայելով, փնթփնթաց Ռիմսկին,— և ընդհանրապես զարմանում եմ, թե նրան ինչպես են թույլ տվել սա ներկայացնել։

— Չէ, Գրիգորի Դանիլովիչ, մի ասա, շատ նուրբ քայլ է սա։ Սրա ամբողջ համը քողազերծման մեջ է։

— Չգիտեմ, չգիտեմ, այստեղ ոչ մի համ էլ չկա, ու միշտ նա ինչ-որ բաներ է մոգոնում։ Գոնե այդ մոգին ցույց տար։ Դու գոնե նրան տեսե՞լ ես։ Որտեղի՞ց լույս աշխարհ հանեց դրան, սատանան գիտե։

Պարզվեց, որ Վարենուխան նույնպես, ինչպես և Ռիմսկին, չի տեսել մոգին։ Երեկ Ստյոպան («ըստ Ռիմսկու բնորոշման՝ «խելագարի պես») իրեն գցեց ֆինտնօրենի մոտ, պայմանագրի սևագրությունն աղդեն ձեռքին, իսկույն կարգադրեց արտագրել ու փողը վճարել։ Եվ այդ մոգն էլ ծլկեց, ու նրան ոչ ոք չտեսավ, բացի Ստյոպայից։

Ռիմսկին հանեց ժամացույցը, տեսավ, որ երկուսն անց է հինգ րոպե, ու լիովին գազազեց։ Իրավացի էր։ Լիխոդեևը զանգահարել էր ժամը մոտավորապես տասնմեկին, ասել, որ կես ժամ հետո կգա, ու ոչ միայն չէր եկել, այլև բնակարանից էր անհետացել։

— Գործս կանգնած է, չէ՛,— այլևս մռնչում էր Ռիմսկին՝ մատը տնկած չստորագրած թղթերի կիտուկի վրա։

— Չլինի՞ Բեռլիոզի պես տրամվայի տակ է ընկել,— ասաց Վարենուխան, ականջի մոտ բռնած լսափողը, որի մեջ լսվում էին թանձր, երկար ու կատարելապես անհույս ազդանշանները։

— Ու լավ էլ կլիներ...— հազիվ լսելի, ատամների արանքից ասաց Ռիմսկին։

Հենց այդ պահին աշխատասենյակ մտավ համազգեստային բաճկոնով, գլխարկով, սև շրջազգեստով ու չստերով մի կին։ Գոտու վրայի փոքրիկ պայուսակից հանեց սպիտակ մի քառակուսի թերթիկ և տետր ու հարցրեց.

— Այստեղ ո՞րն է Վարյետեն։ Գերկայծակ-հեռագիր ունեք։ Ստորագրեք։

Վարենուխան կնոջ տետրի մեջ ինչ-որ բան խզմզեց և, կնոջ վրա դուռը փակվելուն պես, բացեց քառակուսին։

Կարդալով հեռագիրը, նա աչքերը ճպճպացրեց և քառակուսին տվեց Ռիմսկուն։

Հեռագրի մեջ տպագրված էր հետևյալը. «Յալտայից Մոսկվա։ Վարյետե։ Այսօր տասնմեկն անց կես քրեական հետախուզություն ներկայացել մի շագանակահեր գիշերաշապիկով շալվարով անկոշիկ հոգեկանն իրեն կոչում Լիխոդեև Վարյետեի տնօրեն կայծակ—հեռագիր տվեք Յալտայի քրեական հետախուզություն ուր է տնօրեն Լիխոդեևը»։

— Բարև ձեզ, սա՛ էր պակաս,—բացականչեց Ռիմսկին ու ավելացրեց.— Մի գլխացավանք էլ ավելացավ։

— Կեղծ-Դմիտրի կլինի,—նկատեց Վարենուխան և ասաց խոսափողի մեջ.— Հեռագրատո՞ւն։ Վարյետեի հաշվին։ Ընդունեք գերկայծակ... Լսո՞ւմ եք... «Յալտա, քրեական հետախուզություն... Տնօրեն Լիխոդեևը Մոսկվայում է ֆինտնօրեն Ռիմսկի...»

Անկախ յալտացի ինքնակոչի մասին եղած լուրից, Վարենուխան վերստին սկսեց հեռախոսով որոնել Ստյոպային ամենուրեք և, բնականաբար, ոչ մի տեղ չգտավ։ Հենց այն ժամանակ, երբ Վարենուխան, խոսափողը ձեռքին, մտածում էր, թե էլ ուր կարող է զանգահարել, ներս մտավ միևնույն կինը, որն առաջին կայծակն էր բերել, և նոր ծրար տվեց Վարենուխային։ Շտապ-շտապ բացելով՝ Վարենուխան կարդաց տպագրածն ու սուլեց։

— Է՞լ ինչ կա,— նյարդայնորեն ցնցվելով, հարցրեց Ռիմսկին։

Վարենուխան լուռ նրան տվեց հեռագիրն, ու ֆինտնօրենը այս բառերը տեսավ. «Աղաչում եմ հավատալ Յալտա եմ

շպրտվել Վոլանդի հիպնոսով կայծակ տվեք քրեական հետախուզությունն անձս հաստատելու Լիխոդեևս»։

Ռիմսկին և Վարենուխան, գլուխները միմյանց քսելով, նորից կարդացին հեռագիրը, իսկ կարդալուց հետո լուռ նայում էին իրար աչքերի մեջ։

— Քաղաքացիներ,— հանկարծ բարկացավ կինը,— ստորագրեք, իսկ հետո ինչքան կուզեք՝ լռեք։ Ես կայծակ-հեռագրեր եմ բաժանում։

Վարենուխան, աչքը հեռագրից չկտրելով, շեղակի ստորագրեց տետրի մեջ, և կինն անհետացավ։

— Դու նրա հետ տասնմեկն անց խոսեցիր, չէ՞, հեռախոսով,— կատարյալ տարակուսանքով սկսեց ադմինիստրատորը։

— Է՜, ծիծաղելի բաներ ես ասում,— զիլ ձայնով բղավեց Ռիմսկին,— խոսել եմ, թե չեմ խոսել, նա հիմա չի՛ կարող Յալտայում լինել։ Ծիծաղելի՜ է։

— Հարբած է...— ասաց Վարենուխան։

— Ո՞վ է հարբած,— հարցրեց Ռիմսկին, և կրկին երկուսն էլ անքթիթ նայեցին միմյանց աչքերի մեջ։

Որ Յալտայից հեռագրում էր ինչ-որ ինքնակոչ կամ խելագար, կասկած չկար։ Բայց ահա թե ինչն էր տարօրինակ. յալտացի խաբեբան որտեղի՞ց գիտե Վոլանդի մասին, որը միայն երեկ է եկել Մոսկվա։ Նա որտեղի՞ց գիտե Լիխոդեևի և Վոլանդի միջև եղած կապի մասին։

— «Հիպնոսով...»— կրկնեց Վարենուխան հեռագրի բառը,— Նրան որտեղի՞ց է հայտնի Վոլանդի մասին,— նա ճպճպացրեց աչքերն ու հանկարծ վճռականորեն բղավեց.— չէ՛, չէ՛, դատարկ բան է, դատարկ բա՜ն։

— Որտե՞ղ է իջևանել այդ Վոլանդը, գրողը տանի դրան,— հարցրեց Ռիմսկին։

Վարենուխան հեռախոսով անհապաղ կապվեց օտարերկրացիների բյուրոյի հետ և, ի կատարյալ զարմանս Ռիմսկու, հայտնեց, որ Վոլանդն իջևանել է Լիխոդեևի բնակարանում։ Դրանից հետո հավաքելով Լիխոդեևի բնակարանի հեռախոսի համարը, Վարենուխան երկար ժամանակ լսում էր, թե ինչպես թավաձայն հնչում է լսափողը։ Այդ ազդանշանների արանքից, հեռուներից լսվում էր մի ծանր, մռայլ ձայն, որ երգում էր՝ «... ժայռեր, կացարան իմ...», ու Վարենուխան որոշեց, որ

հեռախոսային ցանցի մեջ ինչ-որ տեղից ռադիոթատրոնի ձայնն է մտել։

— Չի պատասխանում բնակարանը,— ասաց Վարենուխան, խոսափողը լծակին դնելով,— փորձեմ մի անգամ էլ զանգահարել...

Նրա խոսքը կիսատ մնաց։ Դռան մեջ հայտնվեց դարձյալ միևնույն կինը, և երկուսն էլ՝ թե Ռիմսկին, թե Վարենուխան, ընդառաջ ելան տեղներից, իսկ կինը պայուսակից հանեց արդեն ոչ թե սպիտակ, այլ մի տեսակ մուգ թերթիկ։

— Սա արդեն գնալով հետաքրքիր է դառնում,— ատամների արանքից ֆշշացրեց Վարենուխան, հայացքով ուղեկցելով հեռացող կնոջը։ Առաջինը թերթիկը վերցրեց Ռիմսկին։

Լուսանկարչական թղթի մուգ ֆոնի վրա հստակ երևում էին սև ձեռագիր տողերը.

«Ապացույց իմ ձեռագիրը իմ ստորագրությունը Կայծակ հեռագիր տվեք հաստատելով գաղտնի հսկողություն սահմանեք Վոլանդի վրա Լիխոդեև»։

Վարենուխան թատրոններում իր գործունեության քսան տարիների ընթացքում ամեն տեսակ բան տեսել էր, բայց այստեղ զգաց, որ ուղեղը կարծես թաղանթով է պատվում, և նա ոչինչ չկարողացավ արտասանել, բացի առօրյա և ընդ որում միակատար անհեթեթ դարձվածքից.

— Դա չի կարող պատահել։

Իսկ Ռիմսկին այդպես չարեց։ Նա վեր կացավ, բացեց դուռը, բղավեց դրսում, աթոռակի վրա նստած ցրիչ կնոջը.

— Փոստատարներից բացի ոչ ոքի ներս չթողնել,— և աշխատասենյակի դուռը փակեց բանալիով։

Հետո գրասեղանի միջից թերթերի մի խուրձ հանեց և սկսեց մանրամասնորեն համեմատել լուսահեռագրի հաստ, ձախ թեքված տառերը Ստյոպայի մակագրությունների և ոլորազարդերով բեռնված նրա ստորագրությունների հետ։ Սեղանի վրա հակված Վարենուխան տաք-տաք շնչում էր Ռիմսկու այտին։

— Սա նրա ձեռագիրն է,— վերջապես հաստատ ասաց ֆինտնօրենը, իսկ Վարենուխան արձագանքի պես պատասխանեց.

— Նրանն է։

Ուշադրությամբ նայելով Ռիմսկու դեմքին, ադմինիստրատորը զարմացավ այդ դեմքի վրա կատարված փոփոխությամբ։ Առանց այդ էլ նիհար ֆինտնօրենը կարծես ավելի էր նիհարել,

անգամ ծերացել, իսկ եղջրաշրջանակով եզերված նրա աչքերը կորցրել էին իրենց սովորական ծակող արտահայտությունը, ու դրանց մեջ ոչ միայն տագնապ էր հայտնվել, այլ նույնիսկ տխրության պես մի բան։

Վարենուխյան արեց այն ամենն, ինչ սահմանված է մարդուն՝ հսկայական զարմանքի րոպեներին։ Նա և՛ վազվզեց աշխատասենյակում, և՛ երկու անգամ վեր պարզեց ձեռքերը խաչվածի պես, և՛ մի ամբողջ բաժակ դեղնավուն ջուր խմեց ջրամանից, և՛ բացականչեց.

— Չե՜մ հասկանում։ Չեմ հաս-կա-նու՜մ։

Իսկ Ռիմսկին պատուհանից դուրս էր նայում և ինչ-որ բան էր մտածում լարված։ Ֆինտոբենի վիճակը շատ էր դժվարին։ Պահանջվում էր տեղնուտեղը, առանց որևէ քայլ գցելու սովորական բացատրություններ հորինել արտասովոր երևույթների մասին։

Աչքերը կկոցելով, ֆինտոբենը պատկերացրեց Ստյոպային՝ գիշերաշապիկով և անկոշիկ, այսօր ժամը տասնմեկն անց կեսի մոտերքը ինչ-որ չտեսնված, գերարագընթաց ինքնաթիռ բարձրանալիս, ապա նույն Ստյոպային, կրկին տասնմեկն անց կեսին, գուլպաներով կանգնած Յալտայի օդակայանում... սատանան գիտե, թե ինչ բան է սա։

Գուցե այսօր Ստյոպա՞ն չէր խոսում հեռախոսով իր սեփական բնակարանից։ Ոչ, խոսողը Ստյոպան էր։ Ինքը նո՞ր պիտի ճանաչի Ստյոպայի ձայնը։ Ասենք, եթե այսօր Ստյոպան չէր խոսողը, ապա չէ որ ոչ ավելի վաղ, քան երեկ, իրիկնամուտին, Ստյոպան իր աշխատասենյակից հայտնվեց նույն այս աշխատասենյակում, այդ ապուշ պայմանագիրը ձեռքին ու զայրացրեց ֆինտոբենին իր թեթևամտությամբ։ Ինչպե՞ս կարող էր նա մեկնել կամ թռչել, ոչինչ չասելով թատրոնում։ Ասենք, եթե թռչեր էլ երեկ երեկոյան, այսօր կեսօրին տեղ չէր հասնի։ Թե՞ կհասներ։

— Քանի՞ կիլոմետր է մինչև Յալտա,— հարցրեց Ռիմսկին։

Վարենուխյան դադարեցրեց իր վազվզոցն ու բղավեց.

— Մտածե՜լ եմ։ Արդեն մտածե՜լ եմ։ Երկաթուղով մինչև Սևաստոպոլ շուրջ մեկուկես հազար կիլոմետր է։ Մինչև Յալտա ութսուն կիլոմետր էլ ավելացրու։ Բայց օդով, իհարկե, ավելի քիչ կլինի...

Հը՛մ... Այո... Ոչ մի գնացքի մասին խոսք անգամ չի կարող լինել։ Այդ դեպքում՝ հապա ի՞նչ։ Կործանիչ ինքնաթի՞ռ։

Ո՞վ և ի՞նչ կործանիչ ներս կընդունի անկոշիկ Ստյոպային։ Ինչի՞ համար։ Գուցե նա կոշիկները հանել է, Յալտա հասնելուց հետո՞։ Նույն բանը՝ ինչի՞ համար։ Ախր, նրան կոշիկով էլ կործանիչ չեն նստեցնի։ Եվ կործանիչն էլ այստեղ կապ չունի։ Գրված է, չէ, որ ներկայացել է քրեական հետախուզություն ցերեկվա տասնմեկն անց կեսին, իսկ հեռախոսով նա խոսել է Մոսկվայում... մի րոպե հապա...այստեղ Ռիմսկու աչքերի առաջ հայտնվեց իր ժամացույցը... Նա հիշեց, թե որտեղ էին սլաքները։ Զարհուրելի բան է։ Տասնմեկն անց էր քսան րոպե։ Ուրեմն, ի՞նչ է ստացվում։ Եթե ենթադրենք, թե խոսակցությունից մեկ ակնթարթ հետո Ստյոպան սլացել է օդակայան և հասել է, ասենք, հինգ րոպե հետո, ինչ իմիջիայլոց, նույնպես աներևակայելի է, ապա ստացվում է, որ ինքնաթիռն, անմիջապես տեղից պոկվելով, հինգ րոպեում կտրել է ավելի քան հազար կիլոմետր տարածություն։ Հետևաբար, մեկ ժամում նա անցնում է ավելի քան երկու հազար կիլոմե՛տր։ Դա չի կարող պատահել, ուրեմն և նա Յալտայում չէ։

Ի՞նչ է մնում։ Հիպնո՞ս։ Եվ ոչ մի հիպնոս, որը մարդուն հազար կիլոմետր հեռու շպրտի, չկա աշխարհում։ Ուրեմն, նրա աչքին է երևում, որ ինքը Յալտայում է։ Նրա աչքին գուցե և երևում է, իսկ Յալտայի քրեական հետախուզության աչքի՞ն էլ է երևում։ Է՛, ո՛չ, կներեք, նման բան չի լինում... Բայց չէ՞ որ նրանք այնտեղից են հեռագրում։

Ֆինտնօրենի դեմքը տառացիորեն սարսափազդու էր։ Դռան բռնակն այդ ժամանակ դրսից պտտում ու քաշքշում էին, և լսվում էր, թե ինչպես ցրիչ կինը դռան ետևում բղավում է հուսահատ.

— Չի՛ կարելի։ Չե՛մ թողնի։ Կուզեք մորթե՛ք։ Նի՛ստ է։

Ռիմսկին, որքան կարող էր, տիրապետեց իրեն, վերցրեց խոսափողն ու ասաց.

— Գերշտապ խոսակցություն տվեք Յալտայի հետ։

«Խելացի է»,— մտքում բացականչեց Վարենուխան։

Բայց Յալտայի հետ խոսակցություն չկայացավ։ Ռիմսկին դրեց խոսափողն ու ասաց.

— Կարծես դիտմամբ լինի, գիծը փչացավ։

Երևում էր, որ գծի փչանալը, չգիտես ինչու, առանձնապես խիստ է վշտացրել նրան ու նույնիսկ ստիպել մտքերի մեջ

ընկնել։ Որոշ ժամանակ մտորելով, նա նորից ձեռքն առավ խոսափողը, իսկ մյուս ձեռքով սկսեց գրել այն, ինչ ասում էր.

— Գերկայծակ հեռագիր ընդունեք։ Վարյետեն է։ Այու Յալտա, քրեական հետախուզություն։ Այու «Այսօր ժամը տասնմեկն անց կեսի մոտ Լիխոդեևը ինձ հետ խոսել հեռախոսով Մոսկվայում, վերջակետ դրանից հետո աշխատանքի չի ներկայացել և հեռախոսով նրան գտնել չենք կարողանում վերջակետ Ձեռագիրը հաստատում եմ, վերջակետ Նշված արտիստին հետևելու միջոցներ ձեռնարկում եմ Ֆինտնօրեն Ռիմսկի»։

«Շատ խելացի է»,—մտածեց Վարենուխան, սակայն չէր հասցրել մտածել ինչպես հարկն է, նրա ուղեղով անցավ. «Հիմարություն է։ Նա չի կարող Յալտայում լինել»։

Իսկ Ռիմսկին այդ ընթացքում հետևյալն արեց. ստացված բոլոր հեռագրերն ու իր հեռագրի պատճենը խնամքով ծալեց, դրեց ծրարի մեջ, ծրարը սոսնձեց, մի քանի բառ գրեց վրան ու հանձնեց Վարենուխային, ասելով.

— Հենց հիմա, Իվան Սավելևիչ, անձամբ տար։ Թող այնտեղ պարզեն։

«Իսկ այ, սա, իսկապե՜ս, խելացի էր»,— մտածեց Վարենուխան և ծրարը դրեց իր պայուսակի մեջ։ Հետո մի անգամ էլ, համենայն դեպս հավաքեց Ստյոպայի բնակարանի հեռախոսի համարը և ուրախացած ու խորհրդավոր սեսքով աչքով արեց ու դեմքը ծամածռեց։ Ռիմսկին վիզը ձգեց։

— Կարելի՞ է խնդրել արտիստ Վոլանդին,— հաճոյաձայն հարցրեց Վարենուխան։

— Նա զբաղված է,— պատասխանեց լսափողը խզված ձայնով,— իսկ ո՞վ է հարցնում։

— Վարյետեի ադմինիստրատոր Վարենուխան։

— Իվան Սավե՞լևիչը,— բերկրալից բացականչեց լսափողը,— չափազանց ուրախ եմ ձեր ձայնը լսելով։ Ինչպե՞ս է ձեր առողջությունը։

— Մերսի,— զարմացած պատասխանեց Վարենուխան,— իսկ ո՞ւմ հետ եմ ես խոսում։

— Օգնականը, նրա օգնական ու թարգմանիչ Կորովևն է,— խզխզաց լսափողը,— ամբողջովին ձեր տրամադրության տակ եմ, անչա՜փ սիրելի Իվան Սավելևիչ։ Ինչպես կամենաք, այնպես էլ կանեմ։ Լսում եմ։

— Կներեք, ինչ է, Ստեփան Բողդանովիչ Լիխոդեևը հիմա տանը չէ՞։
— Ավաղ, չկա։ Չկա,— բղավում էր լսափողը,— մեկնեց։
— Իսկ ո՞ւր։
— Քաղաքից դուրս, մեքենայով զբոսնելու։
— Ի... ի՞նչ։ Զ... զբոսնելո՞ւ... Իսկ ե՞րբ կվերադառնա։
— Ասաց, որ մի քիչ մաքուր օդ կշնչեմ ու կվերադառնամ։
— Լավ...— շփոթված ասաց Վարենուխան,— մերսի։ Բարի եղեք հայտնել մսյո Վոլանդին, որ նրա ելույթն այսօր երրորդ բաժնում է։
— Լսում եմ։ Ինչպես չէ։ Անպայման։ Շտապ։ Անառարկելիորեն։ Կհայտնեմ,— ընդհատ-ընդհատ ճարճատում էր լսափողը։
— Մնաք բարով,— զարմանալով ասաց Վարենուխան։
— Խնդրում եմ ընդունեք,— ասում էր լսափողը,— իմ ամենալավագույն, ամենաջերմագույն ողջույններն ու ցանկություննե՛րը։ Հաջողություննե՛ր։ Բարիքնե՛ր։ Կատարյալ երջանկությու՛ն։ Ամե՛ն, ամե՛ն ինչ։
— Դե, իհարկե։ Ասում էի, չէ,— բորբոքված բղավեց ադմինիստրատորը,— ոչ մի Յալթա։ Նա քաղաքից դուրս է գնացել։
— Եթե դա այդպես է,— չարացածությունից գունատվելով, խոսեց ֆինտնօրենը,—ապա դա իսկապես խոզություն է, որի նմանը չկա։
Այստեղ ադմինիստրատորը վեր թռավ ու բղավեց այնպես, որ Ռիմսկին ցնցվեց։
— Հիշեցի՛։ Հիշեցի՛։ Պուշկինոյում «Յալտա» չեբուրեկանոց է բացվել։ Ամեն ինչ հասկանալի է։ Գնացել է այնտեղ, հարբել ու հիմա հեռագրեր է տալիս այնտեղից։
— Դա արդեն չափ ու սահմանից դուրս է,— այտը ցնցելով, պատասխանեց Ռիմսկին, ու նրա աչքերի մեջ իսկական ու դաժան չարություն էր վառվում,—է, ինչ, նրա վրա թանկ կնստի այդ զբոսանքը,— այստեղ նա հանկարծ կապ ընկավ ու անվճռական ավելացրեց.— Բայց ինչպես, չէ որ քրեական հետախուզությունը...
— Դատարկ բան է։ Նրա օյիններն են,— ընդհատեց անզուսպ ադմինիստրատորը ու հարցրեց.— Իսկ ծրարը տանե՞մ։
— Անպայման,— պատասխանեց Ռիմսկին։
Ու նորից բացվեց դուռը, և ներս մտավ այն կինը... «Նա

է»,— չգիտես ինչու տրտմությամբ մտածեց Ռիմսկին։ Եվ երկուսն էլ ընդառաջ ելան փոստատարուհուն։

Այս անգամ հեռագրի մեջ հետևյալ խոսքերն էին.

«Շնորհակալ եմ հաստատելու համար շտապ հինգ հարյուր քրեական հետախուզություն իմ անունով վաղը թռչում Մոսկվա Լիխոդեև»։

—Նա խելքը թռցրել է...— թույլ-թույլ ասաց Վարենուխան։

Իսկ Ռիմսկին զրնգացրեց բանալին, անկիզելի պահարանի գզրոցից փող հանեց, հաշվեց հինգ հարյուր ռուբլի, զանգ խփեց, ցրիչին տվեց դրամն ու հեռագրատուն ուղարկեց նրան։

— Ի սե՜ր աստծու, Գրիգորի Դանիլովիչ,— աչքերին չհավատալով, ասաց Վարենուխան,— իմ կարծիքով, իզուր ես փող ուղարկում։

— Փողը ետ կգա,— կամացուկ պատասխանեց Ռիմսկին,— իսկ նա շատ խիստ պատասխան կտա այս պիկնիկի համար,— և ավելացրեց՝ մատնացույց անելով Վարենուխայի պայուսակը.— Գնա, Իվան Սավելևիչ, շտապիր։

Եվ Վարենուխան, պայուսակն առած, դուրս վազեց աշխատասենյակից։

Նա իջավ ներքևի հարկ, երկարապոչ հերթը տեսավ տոմսարկղի մոտ, գանձապահուհուց իմացավ, որ վերջինս մեկ ժամ անց անշլագ է սպասում, որովհետև հասարակությունը , լրացուցիչ ազդագիրը տեսնելուն պես, ուղղակի վրա է տվել, կարգադրեց պահել ու չվաճառել լավագույն երեսուն տեղերն օթյակներում ու պարտերում, տոմսարկղից դուրս վազելով, հենց տեղում, ոտի վրա գլուխն ազատեց պնդերես փոխտոմս ուզողներից և լցվեց իր փոքրիկ աշխատասենյակում, որ գլխարկը վերցնի։ Այդ ժամանակ հեռախոսը ծնգծնգաց։

— Այո,— բղավեց Վարենուխան։

— Իվան Սավելևի՞չն է,—հարցրեց լսափողը գարշելիագույն, ռնգային ձայնով։

— Նա թատրոնում չէ,— բղավում էր արդեն Վարենուխան, բայց լսափողն իսկույն ընդհատեց նրան.

— Իվան Սավելևիչ, ձեզ ապուշի տեղ մի դրեք, այլ լսեք։ Այդ հեռագրերը ոչ մի տեղ մի տարեք ու ոչ ոքի ցույց մի տվեք։

— Դա ո՞վ է խոսում,— թնդաց Վարենուխան,— քաղաքացի, վերջ տվեք ձեր խաղերին։ Հենց հիմա ձեզ կհայտնաբերեն։ Ո՞րն է ձեր համարը։

— Վարենուխա,— պատասխանեց միևնույն զարշելի ձայնը,— քո մայրենի լեզուդ հասկանո՞ւմ ես։ Հեռախոսը ոչ մի տեղ չտանես։

— Ա, ուրեմն դուք չե՞ք հանգստանում,— բղավեց ադմինիստրատորը մոլեգնած,— դե, կտեսնենք։ Պատասխան կտաք սրա համար,— ինչ-որ սպառնալիք էլ բղավեց, բայց լռեց, որովհետև զգաց, որ իրեն ոչ ոք այլևս չի լսում։

Այստեղ աշխատասենյակը մի տեսակ արագ սկսեց մթնել։ Վարենուխան դուրս վազեց՝ իր ետևից դուռը շրխկացնելով և կողքի մուտքով դուրս եկավ ամառային այգի։

Ադմինիստրատորը բորբոքված էր ու եռանդով լի։ Այդ լկտի զանգից հետո նա չէր կասկածում, որ խուլիգանների մի խումբ այլանդակ խաղեր է սարքում և որ այդ խաղերը կապված են Լիխոդեևի անհետացման հետ։ Չարագործներին մերկացնելու ցանկությունը խեղդում էր ադմինիստրատորին և որքան էլ տարօրինակ լիներ, նրա մեջ ծիլ տվեց հաճելի ինչ-որ բանի կանխավայելումը։ Այդպես է լինում, երբ մարդը ձգտում է ուշադրության կենտրոն դառնալ, ցնցող լուր հասցնել ինչ-որ տեղ։

Այգում քամին փչեց ուղիղ ադմինիստրատորի դեմքին և ավազ լցրեց աչքերը, կարծես ճանապարհը կտրելով, կարծես նախազգուշացնելով։ Երկրորդ հարկում պատուհանի շրջանակն այնպես շրխկաց, որ քիչ էր մնում ապակիները փշրվեին, թխկիների և լորիների կատարները տագնապալի խշշացին։ Մթնեց ու զովացավ։ Ադմինիստրատորը տրորեց աչքերն ու տեսավ, որ Մոսկվայի վրա ցածր կախված սողում է դեղնափոր ամպրոպաբեր ամպը։ Հեռվում խուլ գոռոց լսվեց։

Որքան էլ շտապում էր Վարենուխան, անհաղթահարելի մի զգացում տարավ նրան՝ մեկ վայրկյանով ուզեց մտնել ամառային զուգարան, ստուգելու համար, թե մոնտյորն արդյո՞ք ցանցապատել է լամպը։

Վազելով անցնելով հրաձգարանի մոտով, Վարենուխան ընկավ եղրևանու խիտ թփուտների մեջ, ուր գտնվում էր զուգարանի երկնագույն շինությունը։ Պարզվեց, որ մոնտյորը ճշտակատար մարդ է, տղամարդկանց բաժնի առաստաղի տակի լամպը արդեն փաթաթված էր մետաղյա ցանցով, բայց ադմինիստրատորին վշտացրեց այն, որ նույնիսկ նախամպրոպա-

յին մթության մեջ կարելի էր զանազանել, որ պատերն արդեն գրոտած են ածխով ու մատիտով։

— Սա ինչ տեսակ...— ուզում էր ասել ադմինիստրատորը և հանկարծ ետևում մռմռացող մի ձայն լսեց.

— Իվան Սավելևիչ, դո՞ւք եք։

Վարենուխան ցնցվեց, շուռ եկավ ու ետևում տեսավ կարճլիկ ու գիրուկ և, ինչպես թվաց, կատվային արտաքինով մեկին։

— Ես եմ, ինչ,—անբարյացակամությամբ պատասխանեց Վարենուխան։

— Շատ, շատ հաճելի է,— ծղրտան ձայնով պատասխանեց կատվակերպ գիրուկը և, հանկարծ, տարավ-բերեց ու Վարենուխայի ականջին այնպես հասցրեց, որ ադմինիստրատորի գլխից գլխարկը թռավ ու անհետ չքացավ նստելատեղի անցքի մեջ։

Գիրուկի հարվածից ամբողջ զուգարանը մի ակնթարթ լուսավորվեց թրթռուն լույսով, և երկնքում արձագանք տվեց ամպրոպի դղիրդը։ Հետո մի անգամ էլ փայլատակեց, և ադմինիստրատորի դիմաց հայտնվեց երկրորդը՝ փոքրամարմին, բայց ատլետի ուսերով, կրակի պես շեկ, մի աչքը հատ ընկած, ժանիքը բերանից դուրս պրծած մեկն էր։ Այս երկրորդը, հավանորեն, ձախլիկ էր ու հասցրեց ադմինիստրատորի մյուս ականջին։ Ի պատասխան, կրկին երկինքը դղրդաց, և զուգարանի փայտյա տանիքի վրա հորդ անձրև տեղաց։

— Ի՞նչ եք անում, ընկերն...— շշնջաց կիսախենթացած ադմինիստրատորը, իսկույն հասկացավ, որ «ընկերներ» խոսքը չի բռնում հասարակական զուգարանում մարդու վրա հարձակված ավազակներին, խռխռացրեց.— քաղաքա...—գլխի ընկավ, որ այդ անվանն էլ արժանի չեն նրանք, ու երրորդ սարսափելի հարվածը ստացավ հայտնի չէ, թե որ մեկից, այնպես որ արյունը քթից չռռաց տոլստովկայի վրա։

— Պայուսակիդ մեջ ի՞նչ կա, պարազիտ,— զիլձայն բղավեց կատվի նմանը,— հեռագրե՞ր։ Իսկ հեռախոսով քեզ չնախազգուշացրի՞ն, որ դրանք ոչ մի տեղ չտանես։ Քեզ եմ հարցնում, նախազգուշացրի՞ն։

— Նախազգուցա... շացրու... շացրին...— շնչահեղձ լինելով, պատասխանեց ադմինիստրատորը։

— Բայց դու համենայն դեպս վազ տվեցիր, հա՞։ Պայուսակը տուր, տեսնեմ, սրիկա,— նույն ռնգային ձայնով, որ հնչում էր

լսափողի մեջ, բղավեց երկրորդը և ղյայուսակը պոկեց Վարենուխայի ցնցվող ձեռքերից։

Եվ այդ երկուսը բռնեցին ադմինիստրատորի թևատակերից, քարշ տվեցին այգուց դուրս ու միասին սլացան Սադովայա փողոցով։ Ամպրոպը մոլեգնել էր ամբողջ ուժով, ջուրը դղրդոցով ու շաչյունով թափվում էր կոյուղու անցքերի մեջ, ամենուրեք ալիքներ էին պղպջակվում և ուռչում, տանիքներից ջուրը չոռում էր ջրորդանների կողքով, դարպասատակերից փրփրակալած առուներ էին վազում։ Կենդանի ամենայն ինչ սրբվել էր Սադովայայից, և Իվան Սավելևիչին փրկող մեկը չկար։ Պղտոր գետակների մեջ թռչկոտելով ու կայծակներից լուսավորված, ավազակները մի վայրկյանում կիսամեռ ադմինիստրատորին քարշ տալով հասցրեցին №302/2 շենքը, նրա հետ միասին ընկան դարպասատակ, ուր պատին սեղմված, կոշիկներն ու գուլպաները ձեռքներին, ոտաբոբիկ երկու կին էին կանգնած։ Ապա նետվեցին վեցերորդ մուտք և համարյա խելագարված Վարենուխան բարձրացվեց հինգերորդ հարկ ու շպրտվեց Ստյոպա Լիխոդեևի բնակարանի՝ իրեն լավ ծանոթ կիսամութ նախասենյակի հատակին։

Այստեղ երկու ավազակներն էլ չքվեցին, իսկ նրանց փոխարեն նախասենյակում հայտնվեց բոլորովին մերկ մի աղջիկ՝ շիկամազ, կրակվող, ֆոսֆորեղեն աչքերով։

Վարենուխան հասկացավ, որ ամենասարսափելին հենց սա է որ կա իր հետ կատարված ամեն ինչից և, տնքալով, ընկրկեց պատի կողմը։ Իսկ աղջիկը կիպ մոտեցավ ադմինիստրատորին և ձեռքի ափերը դրեց նրա ուսերին։ Վարենուխայի մազերը բիզ-բիզ կանգնեցին, որովհետև նույնիսկ տոլստովկայի սառը, ջրի մեջ կորած հյուսվածքի միջից զգաց, որ այդ ափերն ավելի սառն են, որ սառցի սառնություն ունեն դրանք։

— Արի մի քեզ համբուրեմ,— քնքշորեն ասաց աղջիկը, և ադմինիստրատորի աչքերի առաջ հայտնվեցին շողշողացող աչքերը։ Այդ ժամանակ Վարենուխան ուշագնաց եղավ և համբույրը չզգաց։

ԳԼՈՒԽ XI

## ԻՎԱՆԻ ԵՐԿՎԱՆԱԼԸ

*Գետի հանդիպակաց ափի՝ դեռևս մեկ ժամ առաջ մայիսյան արևով լուսավորված անտառը մթնեց, աղոտացավ ու տարրալուծվեց։*

*Ջուրը, համատարած թաղանթ դարձած, թափվում էր լուսամուտից այն կողմ։ Երկնքում ստեպ-ստեպ թելեր էին բռնկվում, երկինքը պայթում էր, հիվանդի սենյակը ողողվում էր թրթռուն, ահազդու լույսով։*

*Իվանը, մահճակալին նստած, կամացուկ լաց էր լինում՝ պղտոր, փուչիկներով եռացող գետին նայելով։ Ամպրոպի յուրաքանչյուր ճայթյունի հետ նա աղիողորմ հեծկլտում էր և դեմքը ծածկում ձեռքերով։ Իվանի գրոտած թղթերը թափված էին հատակին՝ ամպրոպից առաջ սենյակ խուժած քամին էր թռցրել դրանք։*

*Սարսափելի խորհրդականի մասին դիմում հորինելու՝ բանաստեղծի ջանքերը ոչ մի արդյունք չտվեցին։ Հենց որ մատիտի մի կտոր ու թուղթ ստացավ գիրուկ բուժակուհուց, որի անունը Պրասկովյա Ֆյոդորովնա էր, գործունյա տեսքով շփեց ձեռքերն ու շտապ-շտապ նստեց սեղանիկի մոտ։ Սկիզբը բավական ճարտար շարադրեց.*

*«Միլիցիային։ ՄԱՍՍՈԼԻՏ-ի անդամ Իվան Նիկոլաևիչ Անապաստանից։ Դիմում։ Երեկ երեկոյան հանգուցյալ Մ. Ա. Բեռլիոզի հետ ես գնացի Պատրիարքական լճի...»*

*Եվ բանաստեղծն իսկույն խճճվեց, գլխավորապես «հանգուցյալ» բառի պատճառով։ Միանգամից անհեթեթ բան էր ստացվում՝ ինչպե՞ս թե «հանգուցյալի հետ գնացի»։ Հանգուցյալները չեն քայլում։ Իրոք, մեկ էլ տեսար, խելագարի տեղ դրեցին։*

*Մտածելով այսպես, Իվան Նիկոլաևիչը սկսեց ուղղել գրածը։ Հետևյալը ստացվեց. «...հետագայում հանգուցյալ Մ. Ա. Բեռլիոզի հետ»։ Սա ևս չգոհացրեց հեղինակին։ Ստիպված էր դիմել երրորդ խմբագրմանը, իսկ սա ավելի վատ ստացվեց, քան առաջին երկուսը. «...Բեռլիոզի հետ, որն ընկավ տրամվայի տակ...», այստեղ էլ մեջ ընկավ բոլորովին անհայտ այդ կոմ-*

պոզիտոր-ազգանվանակիցը, ու ստիպված եղավ ավելացնել «...ոչ կոմպոզիտորի...»։

Այդ երկու Բեռլիոզների վրա չարչարվելով, Իվանն ամեն ինչ ջնջեց և վճռեց անմիջապես սկսել շատ ազդու մի բանից, ու գրեց, որ կատուն տրամվայ էր նստում, հետո վերադարձավ կտրված գլխի դրվագին։ Գլուխը և խորհրդականի նախազուշակումը նրան հանգեցրին Պոնտացի Պիղատոսի մասին մտքին, և առավել համոզչության համար Իվանը որոշեց կուսակալի մասին ամբողջ պատմությունը շարադրել լրիվ, ճիշտ այն պահից, երբ նա արնագույն աստառով սպիտակ թիկնոցն ուսերին եկավ Հերովդեսի պալատի սյունաշար պատշգամբ։

Իվանն աշխատում էր եռանդով, ջնջում էր գրածը, նոր բառեր ավելացնում, նույնիսկ փորձեց նկարել Պոնտացի Պիղատոսին, հետո էլ կատվին՝ ետևի թաթերի վրա։ Բայց նկարներն էլ չօգնեցին, ու որքան գնում, այնքան ավելի խճճված ու անհասկանալի էր դառնում բանաստեղծի դիմումը։

Իսկ այն ժամանակ, երբ հեռվից երևաց ահազդու, ծխացող եզրերով ամպն ու ծածկեց անտառը և քամի փչեց, Իվանը զգաց, որ ուժասպառ է եղել, որ դիմումը գլուխ բերել չի կարող, հատակից չբարձրացրեց դեսուդեն ցրիվ եկած թղթերն ու կամացուկ և դառնաղի լաց եղավ։

Բարեսիրտ բուժակուհի Պրասկովյա Ֆյոդորովնան մտավ բանաստեղծի սենյակը ամպրոպի ժամանակ, անհանգստացավ, տեսնելով, որ լաց է լինում, վարագույրը քաշեց, որպեսզի կայծակները հիվանդին չվախեցնեն, հատակից վերցրեց թղթերն ու վազեց բժշկի մոտ։

Վերջինս եկավ, սրսկեց Իվանին ու հավատացրեց նրան, որ այլևս լաց չի լինի, որ հիմա ամեն ինչ կանցնի, ամեն ինչ կփոխվի և ամեն ինչ կմոռացվի։

Բժիշկն իրավացի էր։ Շուտով գետի հանդիպակաց ափի անտառը նախկինը դարձավ։ Մինչև վերջին ծառը գծագրվեց երկնքի տակ, որը մաքրվել ու նախկին լիակատար կապույտն էր ձեռք բերել, իսկ գետը հանգստացել էր։ Տխրությունը կամաց-կամաց անհետացավ սրսկումից անմիջապես հետո, ու հիմա բանաստեղծը պառկել էր հանգիստ ու նայում էր երկնքով մեկ աղեղված ծիածանին։

Այսպես շարունակվեց մինչև երեկո,և նա նույնիսկ չնկատեց,

*թե ինչպես հալվեց ծիածանը, ինչպես տրտմեց ու խամրեց երկինքը, ինչպես սևացավ անտառը։*

*Տաք կաթ խմելուց հետո Իվանը նորից պառկեց ու ինքն էլ զարմացավ, թե ինչպես փոխվեցին իր մտքերը։ Հիշողության մեջ մի տեսակ փափկեց այդ նզովյալ դիվական կատուն, այլևս չէր վախեցնում կտրված գլուխը, ու, վանելով այդ միտքը, Իվանն սկսեց մտածել այն մասին, որ ըստ էության, կլինիկայում ամենևին էլ վատ չէ, որ Ստրավինսկին խելացի ու հռչակավոր մարդ է և որ նրա հետ գործ ունենալը չափազանց հաճելի է։ Դրա հետ մեկտեղ իրիկնային օդն էլ դուրեկան ու թարմ է ամպրոպից հետո։*

*Հիվանդատունը քնում էր։ Անաղմուկ միջանցքներում մարում էին փայլատ ճերմակ լամպերը, դրանց փոխարեն, համաձայն կարգի, վառվում էին թույլ երկնագույն գիշերալամպեր, և դռների ետևում ավելի ու ավելի սակավ էին լսվում բուժակուհիների զգույշ քայլերը միջանցքի ռետինե ուղեգորգի վրա։*

*Այժմ Իվանը պառկած էր անուշ թմբիրի մեջ և նայում էր մեկ առաստաղից մեղմ լույս սփռող լամպին՝ լուսամփոփի տակ, մեկ սև անտառի ետևից ելնող լուսնին, ու զրուցում էր ինքն իր հետ։*

*— Իրոք, ինչի՞ համար ես այդպես հուզվեցի, որ Բեռլիոզն ընկավ տրամվայի տակ,— մտորում էր բանաստեղծը։— Վերջին հաշվով, ինքն էլ, իր գլուխն էլ։ Ճիշտն ասած, ես նրա ի՞նչն եմ՝ քավո՞րը, թե սանահերը։ Եթե, ինչպես հարկն է, քննարկենք այդ հարցը, կստացվի, որ ըստ էության ես նույնիսկ, ինչպես հարկն է, չէի ճանաչում հանգուցյալին։ Ճիշտն ասած, ես ի՞նչ գիտեի նրա մասին։ Ոչ մի բան, բացի նրանից, որ ճաղատ էր ու սարսափելի պերճախոս։ Եվ հետո, քաղաքացիներ,— շարունակեց իր ճառն Իվանը, ինչ-որ մեկին դիմելով,— այս մի բանն էլ պարզենք, բացատրեք, ինչի՞ համար այդպես կատաղեցի այդ հանելուկային, դատարկ ու սև աչքով խորհրդականի, մոգի ու պրոֆեսորի վրա։ Ինչի՞ էր պետք այդ ամբողջ անհեթեթ հետապնդումը՝ ոտաշորով ու մոմը ձեռքիս, հետո էլ՝ ռեստորանի վայրենի տուրուդմբոցը։*

*— Դե, դե, դե,— հանկարծ ինչ-որ տեղից, ոչ այն է՝ ներսից, ոչ այն է՝ ականջի վերևում, խստորեն ասաց նախկին Իվանը նոր Իվանին,— այն մասին, որ Բեռլիոզի գլուխը կկտրեն, չէ [illegible] Ինչպե՞ս չհուզվեմ։*

— Ինչի՞ մասին է խոսքը, ընկերներ,— առարկեց Նոր Իվանը հնօրյա, նախկին Իվանին,— որ գործն այստեղ մաքուր չէ, նույնիսկ երեխային է հասկանալի։ Հարյուրից հարյուր՝ արտասովոր ու հանելուկային անձնավորություն է նա։ Բայց չէ, որ հենց դա է ամենահետաքրքիրը։ Մարդն անձամբ ծանոթ է եղել Պոնտացի Պիղատոսի հետ, ավելի հետաքրքիր է՞լ ինչ է ձեզ պետք։ Եվ Պատրիարքականում այդ տխմարագույն իրարանցումը սարքելու փոխարեն ավելի խելացի չէ՞ր լինի քաղաքավարությամբ հարցուփորձ անել, թե հետո ի՞նչ եղան Պիղատոսն ու այդ ձերբակալված Հա-Նոցրին։

Իսկ ես, սատանան գիտե, թե ինչով զբաղվեցի։ Իսկապես, կարևոր դեպք էր՝ ամսագրի խմբագի՞ր էր ընկել տրամվայի տակ։ Դրանից ի՞նչ, կփակվի՞, ինչ է, ամսագիրը։ Է՛, ինչ կարող ես անել՝ մարդը մահկանացու է և, ինչպես իրավացիորեն ասվել էր, հանկարծակի մահկանացու։ Լա՛վ, աստված հոգին լուսավորի։ Լա՛վ, ուրիշ խմբագիր կլինի, գուցե նույնիսկ նախկինից ավելի պերճախոս։

Մի քիչ ննջելով, Նոր Իվանը նենգորեն հարցրեց հին Իվանին.

— Ուրեմն, իսկ ե՞ս ով եմ դուրս գալիս այդ դեպքում։

— Հիմա՛ր,— ինչ-որ տեղից հստակորեն ասաց մի թավ ձայն, որը Իվաններից ոչ մեկին չէր պատկանում և չափազանց նման էր խորհրդականի բասին։

Չգիտես ինչու չնեղանալով «հիմար» խոսքից, այլ նույնիսկ հաճելի զարմանք ապրելով, Իվանը ժպտաց քթի տակ ու սսկվեց կիսաքուն։ Քունը տիրում էր Իվանին, և նրա աչքերին արդեն երևում էր արմավենին՝ փղոտքի վրա, կատուն էլ անցավ մոտով՝ ոչ սարսափելի, այլ ուրախ, քունն ուր որ է կպատեր նրան, երբ հանկարծ վանդակն անաղմուկ մի կողմ գնաց, և պատշգամբում խորհրդավոր մի կերպարանք հայտնվեց, որ թաքնվում էր լուսնի լույսից, ու մատով սպառնաց Իվանին։

Իվանն, առանց վախի նշույլի, մահճակալի մեջ արմունկներին հենվեց ու տեսավ, որ պատշգամբում տղամարդ է կանգնած։ Եվ այդ տղամարդը, մատը շրթունքներին սեղմելով, շշընջաց.

— Սը՛սսս։

# ՍԵՎ ՄՈԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՔՈՂԱԶԵՐԾՈՒՄԸ

*Ծակ ու դեղին կոտելոկով, տանձաձև մորեգույն քթով, վանդակավոր շալվարով ու լաքած կոշիկներով մի պստլիկ մարդ սովորական երկանիվ հեծանիվը քշելով մտավ Վարյետեի բեմը։ Ֆոքստրոտի հնչյունների տակ մի շրջան արեց, հետո հաղթական ճիչ արձակեց, որից հեծանիվը ծառս ելավ։ Միայն ետևի անվի վրա քշելով, մարդուկը շրջվեց ոտքերն ի վեր, ընթացքի ժամանակ հաջողացրեց անջատել առջևի անիվը և գլորել կուլիսների ետևը, ապա շարունակեց ճանապարհը մի անվի վրա, ոտնակները ձեռքերով պտտելով։*

*Մետաղյա երկար, մեկանիվ ձողի վրա, բարձր թամբին նստած, տրիկոյով և արծաթյա աստղերով ծածկված կարճ շրջազգեստով մի գեր ու շիկահեր կին ելավ բեմ ու պտտվեց շրջանաձև։ Նրան հանդիպելիս, մարդուկը ողջույնի բացականչություններ էր արձակում և կոտելոկը ոտքով հանում գլխից։*

*Վերջապես բեմ մտավ ութ տարեկան, ծերունական դեմքով մի ճուտիկ և դեսուդեն սուրաց տարեցների արանքում իր երկանվով, որի վրա ավտոմեքենայի հսկայական շչակ էր ամրացված։*

*Զանազան պտույտներից հետո, տագնապահարույց թմբկահարի ուղեկցությամբ ամբողջ խումբը քշեց ճիշտ բեմեզրի պռունկը, և առաջին կարգերի հանդիսականները ճչացին ու ետ ընկան, որովհետև հասարակությանը թվաց, թե ամբողջ եռյակը, հեծանիվներով հանդերձ, կգլորվի նվագախմբի փոսը։*

*Բայց հեծանիվները կանգ առան հենց այն պահին, երբ առջևի անիվներն արդեն սպառնում էին ներքև գլորվել՝ երաժիշտների գլխին։ Բարձրաձայն «ա՛պ» բղավելով, հեծանվորդները ցած թռան ու գլուխ տվեցին, ընդ որում շիկահեր կինը հասարակությանն օդային համբույրներ էր հղում, իսկ ճուտիկը ծիծաղաշարժ ազդանշան տվեց իր շչակով։*

*Ծափահարությունները ցնցեցին շենքը, երկնագույն վարագույրը, երկու կողմից հավաքվելով, ծածկեց հեծանվորդներին, «Ելք» մակագրությամբ կանաչ լույսերը հանգան դռների մոտ, և գմբեթի տակ, ճոճաձողերի ոստայնի մեջ արևի պես սպիտակ գնդեր վառվեցին։ Վերջին բաժնին նախորդող ընդմիջումն էր։*

*Միակ մարդը, ում նվազագույնս չէին հետաքրքրում Ջուլլի*

*ընտանիքի հեծանվային տեխնիկայի հրաշքները, Գրիգորի Դանիլովիչ Ռիմսկին էր։ Մեն-մենակ նստած էր իր աշխատասենյակում, կրծում էր բարակ շրթունքներն ու դեմքի վրա ստեպ-ստեպ ջղաձգություն էր գծագրվում։ Լիխոդեևի արտասովոր անհետացմանը գումարվել էր ադմինիստրատոր Վարենուխայի միանգամայն անակնկալ անհետացումը։*

*Ռիմսկուն հայտնի էր, թե նա ուր է գնացել, բայց գնաց ու... ետ չեկավ։ Ռիմսկին ուսերն էր թոթվում ու ինքն իրեն շշնջում.*

*— Բայց ինչի՞ համար։*

*Եվ տարօրինակ բան. ֆինտնօրենի պես գործնական մարդու համար ամենահեշտն, անշուշտ, զանգահարելն էր այնտեղ, ուր գնացել էր Վարենուխան, և իմանալը, թե ինչ պատահեց ադմինիստրատորին, այնինչ մինչև երեկոյան ժամը տասը նա չէր կարողանում իրեն ստիպել, որ զանգահարի։*

*Իսկ տասին, ինքն իր վրա կատարելապես բռնանալով, Ռիմսկին վերցրեց խոսափողը լծակի վրայից ու այստեղ համոզվեց, որ հեռախոսն անշունչ է։ Ցրիչը զեկուցեց, որ շենքում մյուս ապարատներն էլ են փչացել։ Ինչ խոսք, տհաճ, բայց ոչ գերբնական այդ դիպվածը, չգիտես ինչու, վերջնականապես ցնցեց ֆինտնօրենին, բայց միաժամանակ ուրախացրեց նաև. զանգահարելու անհրաժեշտությունը վերացավ։*

*Այն րոպեին, երբ ֆինտնօրենի գլխի վրա վառվեց ու թարթեց կարմիր, ընդմիջման սկիզբն ազդարարող լամպը, ներս մտավ ցրիչն ու հայտնեց, որ օտարերկրացի արտիստն է եկել։ Ֆինտնօրենը, չգիտես ինչու, ջղաձգվեց և այլևս լիովին մթնղած, գնաց կուլիսների ետևը՝ դաստրոլյորին ընդունելու, քանի որ ընդունող ուրիշ մեկը չկար։*

*Միջանցքից, ուր արդեն նախազգուշացնող զանգերն էին ծռծռում, տարբեր պատրվակներով մեծ զգեցարանի կողմն էին նայում հետաքրքրասերները։ Վառվռուն խալաթներով ու չալմաներով աճպարարներն էին, սպիտակ գործած բաճկոնակով լմշկորդը, դիմափոշուց ճերմակած ասմունքողը և գրիմարարը։*

*Ժամանած մեծահռչակը բոլորին զարմացրել էր սքանչելի կարված ու չտեսնված երկար իր ֆրակով ու այն բանով, որ սև կիսադիմակ հագած էր եկել։ Բայց ամենազարմանալին սև մոգի երկու ուղեկիցներն էին. վանդակավոր երկարահասակը, ճաքած պենսնեով և սև, գեր կատուն, որը, ետևի թաթերի վրա*

ընդունարան մտնելով, միանգամայն անբռնազբոս շարժումով նրանց բազմոցին, աչքերը կկոցելով գրիմի անլուսամփոփ լամպերի վրա։

Ռիմսկին աշխատեց ժպիտ գծագրել դեմքին, որից դեմքը թթված ու չար դարձավ, և խոնարհվեց լռակյաց մոգին, որը նստած էր բազմոցին, կատվի կողքին։ Ձեռքսեղմում չեղավ։ Փոխարենը սանձարձակ վանդակավորն ինքը ներկայացավ ֆինտնօրենին, իրեն կոչելով «իրա օգնականը»։ Այդ հանգամանքը զարմացրեց ֆինտնօրենին, այն էլ, դարձյալ տհաճորեն. պայմանագրի մեջ բացարձակապես ոչինչ հիշատակված չէր որևիցե օգնականի մասին։

Գրիգորի Դանիլովիչը՝ խիստ հարկադրված ու չոր տեղեկացավ այդ պատուհաս-օգնականից, թե ուր է արտիստի ապարատուրան։

— Երկնային մեր ադամանդ, անչափ թանկագին պարոն տնօրեն,— խզխզացող ձայնով պատասխանեց մոգի օգնականը,— մեր ապարատուրան միշտ մեզ հետ է։ Ահա՛։ Ա՛յն, ցվա՛յ, դրա՛յ— Եվ կոշտուկապատ մատները պտտելով Ռիմսկու աչքերի առաջ, հանկարծ կատվի ականջի ետևից հանեց Ռիմսկու սեփական ոսկյա ժամացույցը՝ շղթայով, որ մինչ այդ ֆինտնօրենի ժիլետի գրպանում էր, կոճկած պիջակի տակ, շղթան՝ մերակին հագցված։

Ռիմսկին ակամա բռնեց փորը, ներկաները զարմանքի ճիչ արձակեցին, իսկ դռնից ներս նայող գրիմարարը գռմռաց՝ հավանություն տալով։

— Ժամացույցը ձե՞րն է։ Խնդրեմ, ստացեք,— սանձարձակ ժպտալով՝ ասաց վանդակավորն ու կեղտոտ ափի մեջ դրած, Ռիմսկուն տվեց նրա սեփականությունը։

— Սրա պես մեկի հետ տրամվայ չնստե՛ս,— կամացուկ և ուրախ շշնջաց ասմունքողը գրիմարարին։

Բայց կատուն ուրիշի ժամացույցով համարից ավելի ուժեղ տեսարան սարքեց։ Անսպասելիորեն վեր կենալով բազմոցից, ետևի թաթերի վրա մոտեցավ հայելու սեղանիկին, առջևի թաթով հանեց ջրամանի խցանը, ջուր լցրեց բաժակի մեջ, խմեց, խցանը տեղը դրեց և գրիմի լաթով մաքրեց բեղերը։

Այստեղ ոչ ոք նույնիսկ չբացականչեց, միայն բերանները բացեցին, իսկ գրիմարարը հիացած շշնջաց։

— Այ քեզ վարպետություն։

Այստեղ երրորդ անգամ տաղնապալից հնչեցին զանգերը, և բոլորը՝ բորբոքված ու հետաքրքիր համարի կանխավայելումով, դուրս թափվեցին զգեցարանից։

Մեկ րոպե անց հանդիսասրահում հանգան ջահերը, բռնկվեցին բեմեզրի լույսերը, կարմրավուն փայլ ձգելով վարագույրի ստորին մասին, և վարագույրի լուսավորված ճեղքից հասարակության առջև հայտնվեց սափրված դեմքով, ճմրթված ֆրակով ու կեղտոտ շապիկով, գիրուկ ու մանկան պես զվարթ մի մարդ։ Ամբողջ Մոսկվային լավ ծանոթ կոնֆերանսյե ժորժ Բենգալսկին էր։

— Եվ այսպես, քաղաքացիներ,— սկսեց Բենգալսկին, մանկան ժպիտով ժպտալով,— հիմա ձեր առջև հանդես կգա...— այստեղ Բենգալսկին ընդհատեց ինքն իրեն ու խոսեց բոլորովին այլ ինտոնացիաներով.— Ես տեսնում եմ հասարակությունը երրորդ բաժնին ավելի՞ է շատացել։ Այսօր քաղաքի կեսը մեզ մոտ է։ Մի քանի օր առաջ ընկերոջս հանդիպեցի ու ասացի. «Ինչո՞ւ չես գալիս մեզ մոտ։ Երեկ քաղաքի կեսը մեզ մոտ էր»։ Իսկ նա ինձ պատասխանեց. «Ես էլ քաղաքի մյուս կեսում եմ ապրում»։— Բենգալսկին դադար տվեց, սպասելով ծիծաղի պոռթկման, բայց քանի որ ոչ ոք չծիծաղեց, նա շարունակեց.— Եվ այսպես, հանդես կգա օտարերկրացի արտիստ մսյո Վոլանդը՝ սև մոգության սեանսով։ Բայց դե, մենք հասկանում ենք,— այստեղ Բենգալսկին ժպտաց իմաստուն ժպիտով,— որ նման բան աշխարհում ամենևին գոյություն չունի և դա ոչ այլ ինչ է, եթե ոչ սնահավատություն, պարզապես մաեստրո Վոլանդը մեծ վարպետությամբ է տիրապետում ֆոկուսի տեխնիկային, որը և պարզ կլինի ամենահետաքրքիր մասից, այսինքն այդ տեխնիկայի քողազրկումից, և քանի որ բոլորս մեկ մարդու նման կողմ ենք թե տեխնիկային, թե դրա քողազերծմանը, ապա խնդրենք պարոն Վոլանդին։

Վերջացնելով այդ ամբողջ բանդագուշանքը, Բենգալսկին ափերը միմյանց մեջ հագցրեց, ողջունող շարժումով թափահարեց վարագույրի ճեղքի կողմը, որից վարագույրը, կամացուկ խշշալով, բացվեց։

Մոգի մուտքը՝ երկարահասակ օգնականի և ետևի թաթերի վրա բեմ մտած կատվի հետ շատ դուր եկավ հասարակությանը։

— Բազկաթոռ տվեք ինձ,— ոչ բարձրաձայն հրամայեց Վոլանդը, և նույն վայրկյանին, հայտնի չէ՝ ինչպես և որտեղից,

բազկաթոռ հայտնվեց բեմի վրա, և մոգը նստեց,— ասա ինձ, սիրելի Ֆագոտ,— տեղեկացավ Վոլանդը վանդակավոր խեղկատակից, որն, ըստ երևույթին, Կորովևից բացի ուրիշ անվանում էլ էր կրում,— ի՞նչ ես կարծում, մոսկովյան ազգաբնակչությունը նշանակալի փոխվել է, չէ՞։

Մոգը նայեց սսկված, օդից հայտնված բազկաթոռից ապշած հասարակությանը։

— Ճիշտ այդպես, մեսսիր,— ոչ բարձրաձայն պատասխանեց Ֆագոտ-Կորովևը։

— Իրավացի ես։ Ասում եմ, քաղաքաբնակները շատ են փոխվել, արտաքնապես, ի դեպ, քաղաքը՝ նույնպես։ Հագուստների մասին խոսել անգամ պետք չէ, բայց երևան են եկել այդ... ինչպես են ասում... տրամվայներ, ավտոմոբիլներ...

— Ավտոբուսներ,— հարգալից հուշեց Ֆագոտը։

Հասարակությունն ուշադրությամբ լսում էր այդ խոսակցությունը, ենթադրելով, թե դա մոգական ֆոկուսների նախաբանն է։ Կուլիսները լեփ-լեցուն էին արտիստներով և բեմի բանվորներով, ու նրանց դեմքերի մեջ երևում էր Ռիմսկու լարված, գունատ դեմքը։

Բեմի կողքում ծվարած Բենգալսկու կերպարանքն սկսեց տարակուսանք արտահայտել։ Նա մի փոքր բարձրացրեց հոնքը և, օգտվելով դադարից, ասաց.

— Օտարերկրացի արտիստն իր հիացմունքն է արտահայտում Մոսկվայից, որը բարգավաճել է տեխնիկական առումով, ինչպես նաև մոսկվացիներից,— Բենգալսկին այստեղ երկու անգամ ժպտաց, նախ՝ պարտերին, ապա՝ վերնասրահին։

Վոլանդը, Ֆագոտը և կատուն գլուխները դարձրեցին կոնֆերանսյեի կողմը։

— Մի՞թե ես հիացմունք արտահայտեցի,— հարցրեց մոգը Ֆագոտին։

— Բնավ ոչ, մեսսիր, դուք ոչ մի հիացմունք չարտահայտեցիք,— պատասխանեց նա։

— Իսկ ի՞նչ է ասում այս մարդը։

— Նա պարզապես ստեց,— հնչեղ, թատրոնով մեկ հայտնեց վանդակավոր օգնականը և, դառնալով Բենգալսկուն, ավելացրեց.— Շնորհավորում եմ ձեզ, քաղաքացի ստախոս։

Վերնասրահից թեթև ծիծաղ սփռվեց, իսկ Բենգալսկին ցնցվեց ու աչքերը չռեց։

— Բայց ինձ, իհարկե, ոչ այնքան հետաքրքրում են ավտո-բուսները, հեռախոսները և այլ…

— Ապարատուրան,— հուշեց վանդակավորը։

— Միանգամայն ճիշտ է, շնորհակալ եմ,— դանդաղ խոսում էր մոգը թավ բասով,— որքան շատ ավելի կարևոր մի հարց. իսկ այդ քաղաքաբնակները փոխվե՞լ են ներքուստ։

— Այո, դա կարևորագույն հարց է, պարոն։

Կուլիսներում սկսեցին միմյանց նայել և ուսերը թոթվել, Բենգալսկին կանգնած էր կարմրատակած, իսկ Ռիմսկին գունատ էր։ Բայց այստեղ, ասես կռահելով ծայր առնող անհանգստությունը, մոգն ասաց.

— Սակայն մենք խոսքով ընկանք, թանկագին Ֆագոտ, իսկ հասարակությունը ձանձրանալ է սկսում։ Մի որևէ հասարակ բան ցույց տուր սկզբից։

Դահլիճը թեթևացած շարժվեց։ Ֆագոտը և կատուն բեմեզրով շարժվեցին այս ու այն կողմ։ Ֆագոտը մատները չրթացրեց ու կորիճավարի բղավեց.

— Երեք, չորս,— օդից մի կապուկ խաղաթուղթ որսաց և ժապավենաձև արձակեց կատվին։ Կատուն բռնեց ժապավենն ու ետ արձակեց։ Ատլասե օձը ֆռթաց, Ֆագոտը թռչնաձագի պես բացեց բերանը և ծայրեծայր, մեկիկ-մեկիկ կուլ տվեց։

Դրանից հետո կատուն գլուխ տվեց, ետևի աջ թաթը հատակին քսելով ու անհավատալի ծափահարություններ վաստակեց։

— Ի՜նչ վարպետություն, ի՜նչ վարպետություն,— հիացած բղավում էին կուլիսների ետևում։

Իսկ Ֆագոտը մատը տնկեց պարտերի կողմն ու հայտարարեց.

— Հիմակուհիմա, հարգելի քաղաքացիներ, այդ խաղաթղթերը գտնվում են յոթերորդ կարգում, քաղաքացի Պարչևսկու մոտ, երեքռուբլիանոցի և քաղաքացուհի Զելկովայային ալիմենտ վճարելու գործով դատարան կանչվելու ծանուցագրի ճիշտ արանքում։

Պարտերում իրար անցան, սկսեցին վեր կենալ տեղերից և վերջապես, ինչ-որ մի քաղաքացի, որի ազգանունն, իրոք, Պարչևսկի էր, զարմանքից ամբողջովին կարմրատակած, կապուկը հանեց թղթապանակից ու սկսեց թափահարել օդի մեջ, չիմանալով ինչ անել։

— Դա թող ձեզ հիշատակ մնա,— բղավեց Ֆագոտը։— Երեկ

[illegible] իզուր չէիք ասում, որ պոլերը թե չլիներ, ձեր կյան-քը Մոսկվայում լիովին անտանելի կլիներ։

— Հին օյին էր,— լսվեց վերնասրահից,— պարտերում նըս-տածը նրանց խմբից է։

— Այդպե՞ս եք կարծում,— բղավեց Ֆագոտը, աչքը կկոցե-լով դեպի վեր,— այդ դեպքում, դուք էլ եք մեզ հետ, մի խմբից, որովհետև ձեր գրպանում էլ կա։

Վերնասրահում շարժում առաջացավ, և բերկրալից ձայն լսվեց.

— Ճի՛շտ է։ Մո՛տն է։ Այստեղ, այստե՛ղ է... Սպասիր։ Տա-սանոցներ են սրանք։

Պարտերում նստածները շրջեցին գլուխները։ Վերնասրահում մի խուճապահար քաղաքացի իր գրպանում թղթադրամի կապուկ էր հայտնաբերել, բանկային ձևով փաթաթված, կազմի վրա գրված. «Մեկ հազար ռուբլի»։

Հարևանները վրա էին տվել, իսկ նա՝ ապշահար, եղունգով պոկոտում էր կազմը, ջանալով հավաստիանալ՝ իսկակա՞ն տա-սանոցներ են, թե ուրիշ տեսակ, կախարդական։

— Աստված վկա, իսկակա՛ն են։ Տասանոցնե՛ր,— ուրախա-ցած գոռում էին վերնասրահից։

— Ինձ հետ էլ խաղացեք այդ խաղից,— զվարթաձայն խնդրեց մի գիրուկ մարդ պարտերի կենտրոնից։

— Ավեք փլեզիր,— պատասխանեց Ֆագոտը,— բայց ինչու՞ մենակ ձեզ հետ։ Բոլորն էլ հաճույքով կմասնակցեն,— և հրա-մայեց.— Խնդրում եմ վերև նայել... Մե՛կ,— Նրա ձեռքում ատրճանակ հայտնվեց, նա բղավեց.— Երկո՛ւ —Ատրճանակը վեր բարձրացավ։ Նա բղավեց.— Երեք,— փայլատակեց, դըրմ-փաց, և անմիջապես, գմբեթի տակից, ճոճաձողերի արանքներից լողալով, սկսեցին դահլիճ թափվել սպիտակ թղթեր։

Դրանք պտույտ էին տալիս, ցրվում այս ու այն կողմ, լցվում էին վերնասրահ, թափվում նվագախմբի վրա և բեմ։ Մի քանի վայրկյան անց դրամի անձրևը, ավելի ու ավելի վարարելով, հասավ բազկաթոռներին, և հանդիսականներն սկսեցին թըղ-թերը որսալ։

Հարյուրավոր ձեռքեր էին բարձրանում, հանդիսականները թղթերը պահում էին բեմի լույսի վրա ու տեսնում ամենաիսկա-կան ու հավաստի ջրանիշեր։ Հոտը նույնպես որևէ կասկածի տե-ղիք չէր տալիս. հենց նոր տպած թղթադրամի սքանչելիությամբ

անհամեմատելի հոտն էր։ Սկզբում ուրախություն, ապա զարմանք պատեց ամբողջ թատրոնը։ Ամենուրեք հնչում էր «տասանոցնե՞ր, տասանոցնե՞ր» բառը, «ա՜խ, ա՜խ» բղավոցներ էին հնչում և զվարթ ծիծաղ։ Ինչ-որ մեկն արդեն սողում էր շարքերի արանքում, փնտրտելով բազկաթոռների տակ։ Շատերը կանգնած էին նստիքների վրա, որսալով թեթևաշարժ, քմահաճ թղթերը։

Միլիցիոներների դեմքերի վրա կամաց-կամաց տարակուսանք սկսեց գծագրվել, իսկ արտիստներն, առանց ձևականությունների, սկսեցին գլուխները դուրս հանել կուլիսներից։

Դստիկոնից մի ձայն հնչեց. «Ի՞նչ ես խլխլում։ Իմն էր։ Իմ վրա էր գալիս» և մեկ ուրիշ ձայն. «Դե, չբրթբրթես, թե չէ մի հատ որ տվեցի»։ Ու հանկարծ՝ շրմփոց լսվեց։ Տեղնուտեղը դստիկոնում հայտնվեց միլիցիոների սաղավարտը, ինչ-որ մեկին տարան դստիկոնից։

Ընդհանրապես հուզմունքն աճում էր, և, հայտնի չէ, թե այդ ամենն ինչի կվերածվեր, եթե Ֆագոտը չդադարեցներ փողի անձրևը, հանկարծ փչելով օդի մեջ։

Երկու երիտասարդ, բազմանշանակ ու զվարթ հայացքներ փոխանակելով, ելան տեղներից և շարժվեցին ուղիղ դեպի բուֆետ։ Թատրոնը գվվում էր, բոլոր հանդիսականների աչքերը փայլում էին բորբոքված։ Այո, այո, հայտնի չէ, թե այդ ամենն ինչի կվերածվեր, եթե Բենգալսկին ուժ չգտներ իր մեջ ու չշարժվեր տեղից։ Ջանալով ավելի հաստատ տիրապետել իրեն, սովորության համաձայն նա շփեց ձեռքերը և, առավել հնչողություն տալով ձայնին, այսպես ասաց.

— Քաղաքացիներ, ահա, ձեզ հետ միասին մենք հիմա տեսանք այսպես կոչված զանգվածային հիպնոսի մի դեպք։ Զուտ գիտական փորձ էր սա, որ լավագույն ձևով ապացուցում է, որ ոչ մի հրաշք ու մոգություն գոյություն չունի։ Ուրեմն, խնդրենք մաեստրո Վոլանդին՝ մեզ համար քողազերծել այս փորձը։ Քաղաքացիներ, հիմա դուք կտեսնեք, թե ինչպես այս իբր թղթադրամները կչքանան նույնքան հանկարծակի, որքան հայտնվեցին։

Այստեղ նա ծափահարեց, բայց կատարելապես միայնակ, ընդ որում դեմքի վրա վստահ ժպիտ էր խաղում, բայց աչքերի մեջ այդ վստահությունն ամենևին չկար, ավելի շուտ աղերսանք էին արտահայտում աչքերը։

Բենգալսկու ճառը հասարակությանը դուր չեկավ։ Կատարյալ լռություն տիրեց, որն ընդհատեց վանդակավոր Ֆագոտը։

— Սա դարձյալ այնպես կոչված ստախոսության դեպք էր,— հայտարարեց նա այծային բարձր տենորով,— թղթադրամներն իսկական են, քաղաքացիներ։

— Բռա՜վո,— կերկեր բղավեց մի բաս վերևներից։

— Իմիջիայլոց, սա՛,— այստեղ Ֆագոտը մատնացույց արեց Բենգալսկուն,— ինձ ձանձրացրեց։ Առանց հարցնելու, քիթն ամեն տեղ խոթում է, սուտ ու սխալ դիտողություններով փչացնում սեանսը։ Ի՞նչ անենք սրան։

— Գլուխը պոկեք,— խստորեն ասաց ինչ-որ մեկը վերնասրահից։

— Ինչ ասացի՞ք։ Հը՞,— իսկույն արձագանքեց Ֆագոտն այդ խայտառակ առաջարկությանը,— գլուխը պոկե՞նք։ Լավ գաղափար էր։ Բեգեմո՛տ,— բղավեց նա կատվին,— պոկի՛ր։ Ա՛յն, ցվ՛այ, դրա՛յ։

Ու կատարվեց չտեսնված մի բան։ Սև կատվի բուրդը տնկվեց, և նա զարհուրելի մլավեց։ Ապա կծկվեց, գունդ դարձավ և հովազի պես ցատկեց ուղիղ Բենգալսկու կրծքին, ապա մագլցեց գլխի վրա։ Մռլտալով, ուռած թաթերով կպավ կոնֆերանսյեի նոսր մազերին և, վայրենաձայն ճղավելով, երկու պտույտով պոկեց այդ գլուխը, պարանոցն էլ հետը։

Երկուսուկես հազար հոգի մեկ մարդու պես բղավեցին թատրոնում։ Վզի պատառոտված երակներից արյունը շատրվանեց ու լցվեց շապիկի և ֆրակի վրա։ Անգլուխ մարմինը մի տեսակ անհեթեթ քայլեր արեց ու նստեց հատակին։ Դահլիճում լսվեցին կանացի հիստերիկ բղավոցներ։ Կատուն գլուխը տվեց Ֆագոտին, վերջինս մազերից բռնած բարձրացրեց և ցույց տվեց հասարակությանը, և այդ գլուխը թատրոնով մեկ աղեկտուր բղավեց.

— Բժի՜շկ։

— Ամեն տեսակ ապուշ բաներ էլի կասե՞ս,— խստորեն հարցրեց Ֆագոտը լացող գլխին։

— Էլ չեմ անի,— խռխռացրեց գլուխը։

— Ի սեր աստծո, մի չարչարեք նրան,— հանկարծ, ժխորը ծածկելով, կանացի մի ձայն հնչեց օթյակից, և մոգը դեմքն ուղղեց այդ ձայնի կողմը։

— Քաղաքացիներ, ի՞նչ անենք, ներե՞նք նրան,— դահլիճին դիմելով, հարցրեց Ֆագոտը։

— Ներեք, ներեք,— սկզբում հատուկենտ, առավելապես

կանացի ձայներ հնչեցին, հետո տղամարդիկ էլ միացան ու համընդհանուր դարձավ խնդիրքը։

— Ի՞նչ կհրամայեք, մեսիր,— հարցրեց Ցագոտը դիմակավորվածին։

— Ինչ ասեմ,— մտախոհ պատասխանեց նա,— մարդիկ են, էլի։ Փող են սիրում, բայց չէ որ դա միշտ եղել է... Մարդկությունը փող սիրում է, ինչից ուզում է պատրաստված լինի՝ կաշվից, թղթից, բրոնզից կամ ոսկուց։ Է՜, թեթևամիտ են... ինչ արած... երբեմն գութն էլ է նրանց սիրտը շարժում... սովորական մարդիկ են... ընդհանուր առմամբ, հիշեցնում են նախկիններին... բնակարանային հարցն է միայն նրանց փչացրել...— և բարձրաձայն հրամայեց.— Գլուխը հագցրեք։

Խնամքով նշան բռնելով, կատուն գլուխը հագցրեց վզին, և գլուխը ճիշտ տեղը նստեց, ասես ոչ մի տեղ չէր հեռացել։ Եվ գլխավորը՝ պարանոցի վրա նույնիսկ սպի չմնաց։ Կատուն թաթերով թափ տվեց Բենգալսկու ֆրակը և շապիկի օսլայած կուրծքը, և դրանց վրայից չքացան արյան հետքերը։ Նստած Բենգալսկուն Ցագոտը ոտքի կանգնեցրեց, նրա ֆրակի գրպանը մի կապ տասանոց մտցրեց և բեմից դուրս տարավ հետևյալ խոսքերով.

— Չքվեք այստեղից։ Առանց ձեզ ավելի ուրախ կլինի։

Անիմաստ հայացքով շուրջը նայելով և օրորվելով, կոնֆերանսյեն հասավ հրշեջ պահակետին, և այստեղ նրա վիճակը վատացավ։ Նա աղեկտուր բղավեց.

— Գլու՜խս, գլու՜խս։

Ի թիվս այլոց, մոտ վազեց Ռիմսկին։ Կոնֆերանսյեն լալիս էր, օդի մեջ ինչ-որ բան էր որսում ձեռքերով, մրթմրթում.

— Ե՜տ տվեք իմ գլուխը։ Գլու՜խս տվեք։ Բնակարանս վերցրեք, նկարներս վերցրեք, միայն թե գլուխս ե՜տ տվեք։

Ցրիչը վազեց՝ բժիշկ կանչելու։ Փորձեցին Բենգալսկուն պառկեցնել զգեստարանում, բազմոցի վրա, բայց նա սկսեց դիմադրել, կատաղություն իջավ վրան։ Ստիպված էին շտապ օգնություն կանչել։ Երբ տարան դժբախտ կոնֆերանսյեին, Ռիմսկին ետ վազեց բեմ ու տեսավ, որ նոր հրաշքներ են կատարվում բեմի վրա։ Այո, ի դեպ, այդ պահին կամ փոքր-ինչ ավելի շուտ էր եղել, միայն թե մոգն՝ իր խունացած բազկաթոռով հանդերձ չքացել էր բեմից, ընդ որում, հարկ է ասել, որ հասարակությունն ամենևին չէր նկատել դա, կլանված արտակարգ այն բաներով, որ Ցագոտն էր ծավալել բեմի վրա։

Իսկ Ցագոտը, տուժած կոնֆերանսյեին ճամփու դնելուց հետո, հասարակությանը հայտարարեց.

— Հիմակուհիմա, երբ պրծանք այդ զահլատարից, եկեք կանացի խանութ բացենք։

Եվ իսկույն բեմի հատակը ծածկվեց պարսկական գորգերով, հայտնվեցին կողքերից կանաչավուն խողովակներով լուսավորված վիթխարի հայելիներ, իսկ դրանց արանքում՝ ցուցափեղկեր, և աշխուժացած ու ապշահար հանդիսականները տեսան բազմագույն ու բազմատեսակ փարիզյան կանացի հագուստներ։ Սրանք՝ առանձին, իսկ մյուս ցուցափեղկերում երևան եկան կանացի հարյուրավոր գլխարկներ՝ փետրազարդ և անփետուր, ճարմանդներով ու անճարմանդ, հարյուրավոր կոշիկներ՝ սև, սպիտակ, դեղին, կաշվե, ատլասե, եղջերվենու, փոկերով, զարդերով։ Կոշիկների արանքում տուփեր հայտնվեցին ու դրանց մեջ լույսից շողշողացին բյուրեղապակյա սրվակների փայլփլուն նիստերը։ Այծքաղի կաշվից, եղջերվենու, մետաքսե պայուսակների սարեր, իսկ դրանց արանքում՝ դրվագված ոսկուց երկարավուն կույտ-կույտ փոքրիկ տուփեր, որոնց մեջ շրթնաներկ է լինում։

Սատանան գիտե, թե որտեղից մեջտեղ եկած շիկամազ մի դիցուհի՝ երեկոյան սև զգեստով, սկսեց ժպտալ ցուցափեղկերի մոտ տիրուհու ժպիտով։ Ամեն ինչով գեղեցիկ էր նա, եթե տպավորությունը չփչացներ վզի վրայի արտառոց սպին։

Քթի տակ անուշ-անուշ ժպտալով, Ցագոտը հայտարարեց, թե ընկերությունը լիովին անվճար կանացի հին զգեստներն ու կոշիկները փոխանակում է փարիզյան մոդելներով ու փարիզյան կոշիկներով։ Նույն բանը՝ պայուսակների, օծանելիքի և այլնի կապակցությամբ,— ավելացրեց նա։

Կատուն սկսեց ետևի թաթը քսել հատակին, առջևի թաթը քսել, միաժամանակ ինչ-որ շարժումներ անելով, որոնք հատուկ են դուռը բաց անող բարապաններին։

Դիցուհին սակավ հասկանալի, բայց պարտերում նստած կանանց դեմքերից դատելով, խիստ գայթակղեցուցիչ բաներ սկսեց ասել թեև խռպոտ, բայց և քաղցր ձայնով՝ ղատասելով ու Նրգեցեկ։

— Գեռլեն, Շանել համար հինգ, Միցուկո, Նարսիս Նուար, երեկոյան զգեստներ, կոկտեյլ-զգեստներ...

Ցագոտը գալարվում էր, կատուն գլուխ էր տալիս, դիցուհին բաց էր անում ապակյա ցուցափեղկերը։

— Խնդրեմ,— բղավում էր Ցագոտը,— տանից որևիցե ձևականության ու քաշվելու։

Հասարակությունը հուզվում էր, բայց ընև գնալ առայժմ ոչ ոք սիրտ չէր անում։ Բայց, ի վերջո, պարտերի տասներորդ կարգից սևահեր մի կին ելավ ու ժպտալով այնպես, որ իր համար, իբր, բացարձակապես միևնույն է, և ընդհանրապես ինքը թքած ունենա, առաջ եկավ ու կոշքի սանդուղքով ընև բարձրացավ։

— Բռա՞վո,— բացականչեց Ցագոտը,— ողջունում եմ առաջին այցելուին։ Բեգեմոտ, բազկաթոռ տուր։ Սկսենք կոշիկներից, մադամ։

Սևահերը նստեց բազկաթոռին, և Ցագոտն անմիջապես նրա առաջ, գորգի վրա մի ամբողջ կույտ կոշիկ թափեց։

Սևահերը հանեց իր աջ կոշիկը, փորձեց մանուշակագույն մի կոշիկ, քայլեց գորգի վրայով, զննեց կրունկը։

— Իսկ չե՞ն սեղմի,— մտազբաղ հարցրեց նա։

Ի պատասխան Ցագոտը նեղացած բացականչեց.

— Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում,— և կատուն վիրավորանքից մլավեց։

— Ես վերցնում եմ այս զույգը, մսյո,— ասաց սևահերն արժանապատվությամբ, հագնելով ձախ կոշիկը նույնպես։

Սևահեր կնոջ հին կոշիկները շպրտվեցին վարագույրի ետև, այնտեղ գնաց ինքը նույնպես, շիկահեր դիցուհու և Ցագոտի ուղեկցությամբ, որը մոդելային մի քանի զգեստ տարավ հետը, ուսաժապավեններից բռնած։ Կատուն իրար էր անցել, օգնում էր և իր կարևորությունն առավել ընդգծելու համար վզից սանտիմետր էր կախել։

Մեկ րոպե անց վարագույրի ետևից դուրս եկավ սևահեր կինն այնպիսի մի զգեստով, որ ամբողջ պարտերով մեկ հոգոց անցավ։ Անհրկյուղ, զարմանալի կերպով գեղեցկացած կինը կանգ առավ հայելու մոտ, շարժեց մերկացած ուսերը, ծոծրակի վրա ձեռք տվեց մազերին ու թեքվեց, աշխատելով տեսնել մեջքը։

— Ընկերությունը խնդրում է ձեզ ընդունել սա՝ որպես հիշատակ,— ասաց Ցագոտը և սևահերին մեկնեց բաց տուփով մի սրվակ։

— Մերսի,— գոռոզ-գոռոզ պատասխանեց սևահեր կինն ու սանդուղքով իջավ պարտեր։ Մինչ տեղ կհասներ, հանդիսականները վեր էին թռչում, ձեռք էին դիպցնում տուփին։

Եվ այստեղ ահա պատնեշը խորտակվեց ու բոլոր կողմերից բեմ գնացին կանայք։ Ընդհանուր բորբոքված ժխորի, ծիծաղի և հոգոցների միջից տղամարդու ձայն լսվեց. «Ես քեզ թույլ չեմ տա», և կանացի ձայն. «Բոնակա՛լ, քաղքենի՛, ձեռքս մի չարդիր»։ Կանայք անհետանում էին վարագույրի ետևում, այնտեղ թողնում իրենց զգեստները և դուրս գալիս նոր հագուստներով։ Ոսկեզօծ ոտներով աթոռակների վրա կանանց մի ամբողջ շարք էր նստած, որոնք եռանդագին գործին էին խփում նոր կոշիկ հագած ոտքերը։ Ցագոտը ծնկի էր գալիս, բանացնում եղջրյա լեզվակը, պայուսակների և կոշիկների կույտերի տակ կքած կատուն գնում-գալիս էր ցուցափեղկերից՝ աթոռակներն ու ետ, այլանդակված վզով դիցուհին մեկ հայտնվում էր, մեկ անհետանում և բանը հասավ նրան, որ լիովին սկսեց ֆրանսերեն բլբլացնել ու զարմանալին այն էր, որ կես խոսքից նրան հասկանում էին բոլոր կանայք, նույնիսկ նրանք, ովքեր ֆրանսերեն բառ անգամ չգիտեին։

Ընդհանուր զարմանք հարուցեց բեմ սողոսկած մի տղամարդ։ Նա հայտարարեց, որ իր կինը գրիպով հիվանդ է, դրա համար էլ խնդրում է մի բան էլ նրան տալ՝ իր միջոցով։ Ի ապացույց, որ ինքն, իրոք, ամուսնացած է, քաղաքացին պատրաստ էր անձնագիր ներկայացնել։ Հոգատար ամուսնու հայտարարությունը քրքիջով ընդունվեց, Ցագոտը բղավեց, թե հավատում է նրան, ինչպես ինքն իրեն, առանց անձնագրի, և քաղաքացուն հանձնեց երկու զույգ մետաքսե գուլպա, կատուն էլ իր կողմից մի տուփ շրթնաներկ ավելացրեց։

Ուշացած կանայք բեմ էին նետվում, բեմից ցած էին հոսում պարահանդեսային հագուստներով, վիշապազարդ պիժամաներով, զուսպ այցեզգեստներով, մի հոնքի վրա թեքած գլխարկներով երջանիկները։

Այդ ժամանակ Ցագոտը հայտարարեց, որ ուշ ժամի պատճառով խանութը ճիշտ մեկ րոպե հետո փակվում է մինչև վաղը երեկո, և աներևակայելի իրարանցում սկսվեց բեմի վրա։ Կանայք շտապ-շտապ, առանց փորձելու, խլխլում էին կոշիկները։ Մի կին, փոթորկի պես խուժեց վարագույրի ետևը, հանեց գցեց իր կոստյումը և ձեռքն ընկած առաջին իսկ բանը հագավ՝ մետաքսե, վիթխարի ծաղկեփնջերով զարդարված խալաթ էր, դրանից բացի, հասցրեց երկու տուփ օծանելիք էլ վերցնել։

Ուղիղ մեկ րոպե անց թնդաց ատրճանակի կրակոցը, հայե-

լիներն անհետացան, գետնի տակն անցան ցուցափեղկերն ու աթոռակները, գորգը տարրալուծվեց օդի մեջ ճիշտ այնպես, ինչպես և վարագույրը։ Վերջում անհետացավ հին շորերի և կոշիկների սարը, և բեմը վերստին խիստ, դատարկ ու մերկ դարձավ։

Եվ ահա այստեղ գործին խառնվեց մի նոր գործող անձ։

Հաճելի, հնչեղ ու անհողդողդ մի բարիտոն հնչեց №2 օթյակից։

— Քաղաքացի արտիստ, համենայն դեպս, ցանկալի է, որպեսզի դուք անմիջապես հանդիսականների առաջ քողազերծեք ձեր ֆոկուսների տեխնիկան, հատկապես թղթադրամների ֆոկուսը։ Ցանկալի է նաև, որ կոնֆերանսյեին բեմ վերադարձնեք։ Նրա ճակատագիրը հուզում է հանդիսականին։

Բարիտոնի տերը ոչ այլ ոք էր, եթե ոչ այսօրվա երեկոյի պատվավոր հյուր Արկադի Ապոլլոնովիչ Սեմպլեյարովը՝ մոսկովյան թատրոնների ակուստիկ հանձնաժողովի նախագահը։

Արկադի Ապոլլոնովիչն օթյակում էր գտնվում երկու տիկնանց հետ. մեկը տարեց էր, թանկարժեք ու մոդայիկ հագուստով, մյուսը ջահել էր և սիրունիկ, ավելի հասարակ հագնված։ Առաջինն, ինչպես շուտով պարզվեց արձանագրությունը կազմելիս, Արկադի Ապոլլոնովիչի կինն էր, իսկ երկրորդը նրա հեռավոր ազգականուհին՝ Սարատովից եկած և Արկադի Ապոլլոնովիչի ու նրա տիկնոջ բնակարանում ապրող սկսնակ, հույսեր ներշնչող մի դերասանուհի։

— Պարդոն,— պատասխանեց Ֆագոտը,— ես ներողություն եմ խնդրում, այստեղ քողազերծելու բան չկա, ամեն ինչ պարզ է։

— Ոչ, կներեք։ Քողազերծումը միանգամայն անհրաժեշտ է։ Առանց դրա ձեր փայլուն համարները ճնշող տպավորություն են թողնում։ Հանդիսականների մասսան բացատրություն է պահանջում։

— Հանդիսականների մասսան,— Սեմպլեյարովին ընդհատեց լկտի ծաղրածուն,— կարծեմ թե ոչինչ չհայտարարեց, չէ՞։ Բայց նկատի առնելով ձեր խորապես հարգելի ցանկությունը, Արկադի Ապոլլոնովիչ, ես մի քողազերծում կանեմ. թող այդպես լինի։ Սակայն դրա համար թույլ տվեք մի փոքր համար էլ, լա՞վ։

— Ինչու չէ,— հովանավորող տոնով պատասխանեց Արկադի Ապոլլոնովիչը,— բայց անպայման քողազերծմամբ։

— Լսում եմ, լսում եմ։ Եվ այսպես, թույլ տվեք ձեզ հարցնել, Արկադի Ապոլլոնովիչ, որտե՞ղ էիք դուք երեկ երեկոյան։

Այդ անպատեհ, թերևս նույնիսկ անկիրթ հարցը լսելով, Արկադի Ապոլլոնովիչի դեմքն այլայլվեց, շատ խիստ այլայլվեց։

— Երեկ երեկոյան Արկադի Ապոլլոնովիչը ակուստիկ հանձնաժողովի նիստին էր,— շատ գոռոզ տոնով հայտարարեց Արկադի Ապոլլոնովիչի կինը,— բայց ես չեմ հասկանում, թե դա ինչ կապ ունի մոգության հետ։

— Ու՜յ, տիկին,— հաստատեց Ֆագոտը,— բնակա՜ն, դուք չեք հասկանում։ Իսկ նիստի կապակցությամբ դուք կատարյալ մոլորության մեջ եք։ Տնից դուրս գալով, որ մեքենայով գնա այդ նիստին, որն ի դեպ, երեկ նշանակված էլ չէր, Արկադի Ապոլլոնովիչն իր վարորդին ազատ արձակեց ակուստիկ հանձնաժողովի շենքի մոտ, Չիստիե պրուդիում (ամբողջ թատրոնը սսկվեց), իսկ ինքն ավտոբուսով գնաց Ելոխովսկայա փողոց, շրջանային շրջիկ թատրոնի դերասանուհի Միլիցա Անդրեևնա Պոկոբատկոյին՝ հյուր և շուրջ չորս ժամ մնաց այնտեղ։

— Օ՜յ,— տառապագին բացականչեց ինչ-որ մեկը կատարյալ լռության մեջ։

Իսկ Արկադի Ապոլլոնովիչի երիտասարդ ազգականուհին թավաձայն ու սարսափելի քրքջաց։

— Ամեն ինչ հասկանալի է,— բացականչեց նա,— ու ես վաղուց դա կասկածում էի։ Հիմա ինձ համար հասկանալի է, թե այդ անտաղանդն ինչի համար ստացավ Լուիզայի դերը։

Եվ հանկարծ տարավ-բերեց իր կարճ, հաստ ու մանուշակագույն հովանոցը և խփեց Արկադի Ապոլլոնովիչի գլխին։

Իսկ սոսր Ֆագոտը, նույն ինքը՝ Կորովևը, բղավեց.

— Հարգարժան քաղաքացիներ, ահա քողազերծման մի դեպք, որն այնքան համառորեն պահանջում էր Արկադի Ապոլլոնովիչը։

— Ինչպե՞ս համարձակվեցիր ձեռք տալ Արկադի Ապոլլոնովիչին, ապիկա՛ր,— ահեղաձայն հարցրեց Արկադի Ապոլլոնովիչի կինը, վիթխարի հասակով մեկ կանգնելով օթյակում։

Դիվական քրքիջի երկրորդ ալիքը ցնցեց երիտասարդ ազգականուհուն։

— Ով-ով, իսկ ես իրավունք ունեմ ձեռք տալ,— քրքջալով, պատասխանեց նա, և երկրորդ անգամ լսվեց Արկադի Ապոլլոնովիչի գլխից ետ ցատկող հովանոցի չոր ճայթյունը։

— Միլիցիա՜։ Բռնե՜ք դրան,— այնպես սարսափազդու բղավեց Սեմպլեյարովի կինը, որ շատերի սիրտը սառսռաց։

*Այստեղ էլ կատուն ցատկեց բեմեզրի մոտ և հանկարծ թատրոնով մեկ թնդաց մարդկային ձայնով։*

*— Սեանսը վերջացա՜վ։ Մաե՛ստրո։ Մի քայլե՜րգ ցմբացրեք։*

*Կիսացնորված դիրիժորը, առանց իրեն հաշիվ տալու, թե ինչ է անում, թափ տվեց փայտիկը, և նվագախումբը ոչ թե նվագեց, նույնիսկ ոչ թե դղրդացրեց, այլ ըստ կատվի նողկալի արտահայտության՝ մի անհավանական, իր սանձարձակությամբ հավասարը չունեցող քայլերգ ցմրացրեց։*

*Մի պահ թվաց, թե լսելի դարձան ինչ-որ ժամանակ, հարավային աստղերի ներքո, կաֆեշանտանում հնչած քայլերգի սակավ հասկանալի, կիսակույր, բայց և շրխկան բառերը.*

*Նորին գերազանցությունը*
*Սիրում էր ծտեր,*
*Թեև տակ ուներ*
*Սիրուն աղջիկներ։*

*Իսկ գուցեև նման բառեր ամենևին չկային, այլ բառեր էին նույն երաժշտության տակ, ծայրաստիճան անպարկեշտ բառեր։ Կարևորը դա չէ, կարևորն այն է, որ դրանից հետո Վարյետեում բաբելոնյան խառնաշփոթության պես մի բան սկսվեց։ Միլիցիան վազում էր դեպի Սեմպլեյարովի օթյակը, հետաքրքրասերները բարձրացել էին պատնեշի վրա, լսվում էին քրքիջի դժոխային պայթյուններ, մոլեգին բղավոցներ, որոնք խլանում էին նվագախմբի ծնծղաների ոսկյա զրնգոցի տակ։*

*Եվ տեսան մարդիկ, որ բեմը հանկարծակի դատարկվեց և որ խաբեբա Ֆագոտը, ինչպես նաև լկտի կատու Բեգեմոտը ցնդեցին օդում, չքվեցին, ինչպես մինչ այդ չքվել էր մոգը, խունացած պաստառով պատած իր բազկաթոռով։*

## ԳԼՈՒԽ XIII

## ՀԵՐՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

*Եվ այսպես, անծանոթը մատով սպառնաց Իվանին ու շշընջաց. «Սը՜սսս»*

*Իվանը ոտքերը կախեց մահճակալից ու նայեց ուշադիր։ Պատշգամբից սենյակ էր նայում սափրված, թխահեր, սուր քթով,*

անհանգիստ աչքերով, ճակատին կախված մազափնջով մի մարդ, մոտավորապես երեսունութ տարեկան։

Համոզվելով, որ Իվանը մենակ է և ականջ դնելով, խորհրդավոր այցելուն դադարեց զգուշանալ ու սենյակ մտավ։ Այստեղ Իվանը տեսավ, որ հիվանդանոցային զգեստով է եկողը։ Շապիկ-ոտաշոր էր հագին, բոբիկ ոտքերին՝ կոշիկներ, ուսերին դարչնագույն խալաթ կար գցած։

Եկողն աչքով արեց Իվանին, բանալիների խուրձը գրպանը դրեց, շշնջոցով տեղեկացավ՝ «Կարելի՞ է նստել», և, Իվանի գլխի դրական շարժումը տեսնելով, բազկաթոռի մեջ տեղավորվեց։

— Իսկ ինչպե՞ս ընկաք այստեղ,— ենթարկվելով չորչորուկ, սպառնացող մատին, շշնջալով հարցրեց Իվանը,— պատշգամբի վանդակները փակի տակ են, չէ՞։

— Վանդակները փակի տակ են, այո,— հաստատեց հյուրը,— սակայն Պրասկովյա Ֆյոդորովնան սքանչելի, բայց, ավաղ, ցրված կին է։ Մեկ ամիս առաջ նրանից ծածուկ վերցրեցի բանալիները և այդպիսով հնարավորություն ստացա ելնել ընդհանուր պատշգամբ, որն ամբողջ հարկի շուրջ է պտտվում, և այդ եղանակով, երբեմն այցելել հարևաններիս։

— Եթե կարող եք պատշգամբ դուրս գալ, ուրեմն կարող եք նաև փախչել։ Թե՞ բարձր է,— հետաքրքրվեց Իվանը։

— Ոչ,— հաստատ պատասխանեց հյուրը,— ես այստեղից փախչել չեմ կարող ոչ միայն այն պատճառով, որ բարձր է, այլ որովհետև փախչելու տեղ չունեմ։— Եվ դադարից հետո, ավելացրեց.— Ուրեմն, նստա՞ծ ենք։

— Նստած ենք,— պատասխանեց Իվանը, ուշադրությամբ նայելով եկվորի խաժ ու շատ անհանգիստ աչքերին։

— Այո...— հյուրն այստեղ հանկարծ անհանգստացավ,— բայց հուսով եմ, դուք կատաղի չե՞ք։ Թե չէ, գիտեք ինչ, տանել չեմ կարողանում աղմուկ, իրարանցում, բռնություն ու նման կարգի այլ բաներ։ Ինձ համար հատկապես ատելի է մարդկային բղավոցը, լինի դա տառապանքի, կատաղության բղավոց, թե մեկ այլ բղավոց։ Հանգստացրեք ինձ, ասացեք, դուք կատաղի չե՞ք։

— Երեկ, ռեստորանում մեկի մռթին մի լավ հասցրել եմ,— արիաբար խոստովանեց կերպափոխված բանաստեղծը։

— Իսկ հի՞մքը,— խստորեն հարցրեց հյուրը։

— Ճիշտն ասած, առանց հիմքի,— շփոթվելով պատասխանեց Իվանը։

— Խայտառակություն է,— դատապարտեց հյուրն Իվանին և ավելացրեց.— Եվ դրանից բացի, ինչի՞ համար եք այդպես արտահայտվում. հասցրել եմ մոթին։ Չէ՞ որ հայտնի չէ, թե ինչ ունի մարդը՝ մութ, թե դեմք։ Թերևս՝ դեմք, համենայն դեպս։ Այնպես որ, գիտեք ինչ, բռունցքներով... Ոչ, այդ մի բանը թողեք, այն էլ՝ ընդմիշտ։

Այսպես նախատելով Իվանին, հյուրը տեղեկացավ.

— Ձեր մասնագիտությու՞նը։

— Բանաստեղծ եմ,— չգիտես ինչու, դժկամությամբ խոստովանեց Իվանը։

Հյուրը դառնացավ։

— Օ՜հ, բախտս չի բերում,— բացականչեց նա, բայց իսկույն սթափվեց, ներողություն խնդրեց ու հարցրեց.— Իսկ ձեր ազգանունն ի՞նչ է։

— Անապաստան։

— Է՜հ, է՜հ...— ասաց հյուրը, կնճռոտվելով։

— Իսկ ի՞նչ է, իմ բանաստեղծությունները չե՞ք հավանում,— հետաքրքրությամբ հարցրեց Իվանը։

— Սարսափելի կերպով՝ ոչ։

— Իսկ դուք որո՞նք եք կարդացել։

— Ձեր ոչ մի բանաստեղծությունն էլ չեմ կարդացել,— նյարդայնացած բացականչեց այցելուն։

— Իսկ ինչպե՞ս եք ասում։

— Ինչ կա որ,— պատասխանեց հյուրը,— կարծես թե մնացածնեի՞ն չեմ կարդացել։ Աստեղ... գուցե հրաշք լինի։ Լավ, ես պատրաստ եմ հավատալ խոսքին։ Ինքներդ ասացեք, լա՞վն են ձեր բանաստեղծությունները։

— Այլանդակ,—հանկարծ համարձակ ու անկեղծ ասաց Իվանը։

— Այլևս մի գրեք,— աղաչելով խնդրեց հյուրը։

— Խոստանում եմ և երդվում,— հանդիսավորությամբ արտասանեց Իվանը։

Երդումը ձեռքսեղմումով հաստատեցին, և այստեղ միջանցքից մեղմ ոտնաձայն ու ձայներ լսվեցին։

— Սը՜սսս,— շշնջաց հյուրը և դուրս ցատկելով պատշգամբ, փակեց վանդակը։

Ներս նայեց Պրասկովյա Ֆյոդորովնան, հարցրեց, թե ինչպես է իրեն զգում Իվանը և ինչպես է ուզում քնել՝ մթության

[illegible] լույսի տակ։ Իվանը խնդրեց լույսը չհանգցնել, և Պրասկովյա Ֆյոդորովնան հեռացավ, բարի գիշեր մաղթելով հիվանդին։ Եվ երբ ամեն ինչ խաղաղվեց, կրկին եկավ հյուրը։

Շշնջալով հայտնեց Իվանին, որ 119-րդ սենյակը նոր մարդ են բերել. մի գեր մարդ է, կարմրած արտաքինով, որը շարունակ մրթմրթում է օդափոխության անցքի մեջ պահված վալյուտայի մասին և երդվում, որ իրենց տանը, Սադովայա փողոցում սատանա է բնակվել։

— Ինչ խոսքերով ասես, հայհոյում է Պուշկինին և անընդհատ բղավում. «Կուռոլե՛սով, բի՛ս, բի՛ս»,— խոսում էր հյուրը, տագնապած ցնցվելով։ Հանգստանալով, նա նստեց, ասաց.— Ասենք, աստված իր հետ,— ու շարունակեց իր զրույցն Իվանի հետ.— Իսկ ինչի՞ համար եք այստեղ ընկել։

— Պոնտացի Պիղատոսի,— խոժոռված հատակին նայելով, պատասխանեց Իվանը։

— Ի՞՞նչ,— զգուշությունը մոռանալով, բղավեց հյուրը և ինքն իր բերանը ծածկեց ձեռքով,— ապշեցուցիչ զուգադիպություն է։ Աղաչում եմ, պատմեք, աղաչում եմ։

Զգիտես ինչու վստահություն տածելով անծանոթի նկատմամբ, Իվանը, սկզբում կմկմալով ու վախվորած, ապա համարձակություն ձեռք բերելով, սկսեց պատմել Պատրիարքական լճի երեկվա պատմությունը։ Այո, երախտապարտ մի ունկնդիր էր գտել Իվան Նիկոլաևիչը, ի դեմս խորհրդավոր բանալիներ հափշտակողի։ Հյուրն Իվանից խելագար չսարքեց, մեծագույն հետաքրքրություն հանդես բերեց պատմածի նկատմամբ և այդ պատմության զարգացման համեմատ, ի վերջո, սքանչացում ապրեց։ Նա ստեպ-ստեպ ընդհատում էր Իվանին իր բացականչություններով.

— Դե, դե։ Շարունակեք, շարունակեք, աղաչում եմ։ Միայն թե, ի սեր բոլոր սրբությունների, ոչ մի բան բաց չթողնեք։

Իվանը ոչ մի բան բաց չթողեց, նրա համար այդպես պատմելն ավելի հեշտ էր, և նա աստիճանաբար հասավ այն պահին, երբ Պոնտացի Պիղատոսը արնագույն աստառով սպիտակ թիկնոցն ուսերին պատշգամբ ելավ։

Այդ ժամանակ հյուրն աղոթքի շարժումով միացրեց ձեռքերն ու շշնջաց.

— Օ՜, ինչպես եմ կռահել։ Օ՜, ինչպես եմ ամեն ինչ կռահե՜լ։ Բեռլիոզի սարսափելի մահվան նկարագրությանն ունկնդիրը

Հանելուկային մի դիտողությամբ համեմեց, ընդ որում նրա աչքերը չարությամբ փայլեցին։

— Մի բան եմ ափսոսում, որ այդ Թեոֆիլի փոխարեն քննադատ Լատունսկին կամ գրականագետ Մստիսլավ Լավրովիչը չեն եղել,— և կատաղորեն, բայց անձայն բղավեց.— Շարունակեք։

Տոմսավաճառին վճարող կատուն չափազանց զվարճացրեց հյուրին, և նա խեղդվում էր ցածրաձայն ծիծաղից, նայելով, թե ինչպես իր պատմելու հաջողությունից հուզված Իվանը անձայն ցատկոտում է պպզած, բեղերի մոտ քսան կոպեկանոց բռնած կատվի ձևը վերցնելով։

— Եվ ահա,— Գրիբոեդովի դեպքը պատմելուց հետո տրտմած ու մթագնած Իվանը վերջացրեց.— ես հայտնվեցի այստեղ։

Հյուրը կարեկցաբար ձեռքը դրեց խեղճ բանաստեղծի ուսին և այսպես ասաց.

— Դժբա՜խտ բանաստեղծ։ Բայց ամեն ինչում դուք եք մեղավոր, սիրելիս։ Չէր կարելի այդքան սանձարձակ, նույնիսկ մի քիչ էլ լկտի պահել իրեն նրա նկատմամբ։ Ահա և հատուցում եք։ Ու դեռ «շնորհակալություն» պիտի ասեք, որ համեմատաբար էժան եք պրծել։

— Բայց վերջիվերջո, ո՞վ է նա,— բորբոքված թափահարելով բռունցքները, հարցրեց Իվանը։

Հյուրը զննեց Իվանին և հարցով պատասխանեց.

— Իսկ դուք անհանգիստ վիճակի մեջ չե՞ք ընկնի։ Բոլորս այստեղ անհուսալի մարդիկ ենք... Բժիշկ կանչելու, սրսկումների և ուրիշ այլ իրարանցման կարիք չի՞ լինի։

— Ոչ, ոչ,— բացականչեց Իվանը,— ասացեք, ո՞վ է նա։

— Դե լավ,— պատասխանեց հյուրը և ծանրակշիռ ու հատհատ ասաց.— Երեկ Պատրիարքական լճի մոտ դուք հանդիպել եք սատանային։

Ինչպես և խոստացել էր, Իվանն անհանգիստ վիճակի մեջ չընկավ, բայց և այնպես ծայրաստիճան ապշահար էր։

— Դա չի կարող պատահել։ Նա գոյություն չունի՜։

— Ի սեր աստծո։ Ով-ով, բայց դուք այդ բանը չպետք է ասեք։ Ըստ երևույթին, դուք նրանից տուժած առաջիններից մեկն եք։ Նստած եք, ինչպես ինքներդ եք հասկանում, հոգեբուժարանում, և շարունակում եք խոսել, որ սատանա չկա։ Ճիշտն ասած, տարօրինակ է։

Մոլորված Իվանը լռեց։

— Հենց որ սկսեցիք նրան նկարագրել,— շարունակեց Հյուրը,— արդեն սկսեցի կռահել, թե ում հետ զրուցելու հաճույքն եք ունեցել երեկ։ Եվ, հիրավի, զարմացած եմ Բեռլիոզի վրա։ Լավ, դուք, իհարկե, անմշակ մարդ եք,— այստեղ Հյուրը կրկին ներողություն խնդրեց,— բայց նա, որքան լսել եմ իր մասին, համենայն դեպս գոնե ինչ-որ բան կարդացել է։ Այդ պրոֆեսորի առաջին իսկ ճառերը փարատեցին իմ բոլոր երկմտությունները։ Նրան չի կարելի չճանաչել, բարեկամս։ Ասենք, դուք... մի անգամ էլ ինձ կներեք, ես չեմ սխալվում, չէ՞, դուք տգե՞տ մարդ եք։

— Անկասկած,— համաձայնեց անճանաչելի դարձած Իվանը։

— Ահա... չէ որ անգամ դեմքը, որը նկարագրեցիք... տարբեր աչքերը, հոնքե՜րը։ Ներեցեք, գուցե դուք նույնիսկ «Ֆաուստ» օպերա՞ն էլ չեք լսել։

Իվանը չգիտես ինչու սարսափելի շփոթվեց և կրակվող դեմքով ինչ-որ բաներ սկսեց մրթմրթալ Ցալտա, առողջարան կատարած ինչ-որ ուղևորության մասին...

— Ահա, ահա... զարմանալի չէ։ Իսկ Բեռլիոզը, կրկնում եմ, ինձ զարմացնում է։ Նա ոչ միայն կարդացած, այլև շատ խորամանկ մարդ է։ Չնայած ի պաշտպանություն նրա, պետք է ասել, որ Վոլանդը նրանից ավելի խորամանկ մարդուն էլ կարող է մատի վրա խաղացնել։

— Ինչպե՞ս,— իր հերթին նույնպես բղավեց Իվանը։

— Կամաց։

Իվանը ձեռքի ափը թափով խփեց ճակատին ու ասաց խռպոտված ձայնով.

— Հասկացա, հասկացա։ Նրա այցետոմսի վրա «Վ» տառը կար։ Այ-այ-այ, այ քեզ բա՜ն։— Նա լռեց որոշ ժամանակ, խռովված, վանդակից այն կողմ լողացող լուսնին նայելով և ասաց.— Այսպիսով, ուրեմն նա իրո՞ք կարող էր լինել Պոնտացի Պիղատոսի մոտ։ Չէ՞ որ այն ժամանակ նա արդեն ծնված էր։ Իսկ ինձ խելագար են անվանում,— ավելացրեց Իվանը, բարկացած ցույց տալով դուռը։

Մի դառը ակոս գծագրվեց հյուրի շրթունքների մոտ։

— Ճշմարտության աչքերին նայենք,— և հյուրը դեմքը շրջեց ամպի միջով վազող գիշերային լուսատուի կողմը։— Եվ ես, և դուք խելագար ենք, ժխտելու կարիք չկա։ Գիտեք ինչ կա, նա ձեզ ցնցել է, ու դուք խելագարվել եք, քանի որ, ըստ երևույթին,

որա համար նպաստավոր չէր եղել։ Բայց այն, ինչ պատմում եք, անկասկած եղել է իրականում։ Բայց դա այնքան արտասովոր է, որ նույնիսկ Ստրավինսկին՝ հանճարեղ հոգեբույժը, ձեզ չհավատաց, անշուշտ։ Նա ձեզ նայե՞լ է։ (Իվանը գլխով արեց։) Ձեր զրուցակիցը Պիղատոսի մոտ էլ է եղել, Կանտի հետ էլ է նախաճաշել, իսկ այժմ այցելել է Մոսկվա։

— Ախր նա այստեղ սատանան գիտե, թե ինչեր կանի։ Մի կերպ նրան հարկավո՞ր է բռնել,— ոչ այնքան վստահ, բայց և այնպես նոր Իվանի ներսում գլուխ բարձրացրեց նախկին, դեռևս վերջնականապես չպարտված Իվանը։

— Դուք արդեն փորձել եք, ու վերջ տվեք,— հեգնաբար պատասխանեց հյուրը,— մյուսներին նույնպես խորհուրդ չեմ տա փորձել։ Իսկ որ կանի, կասկածի նշույլ անգամ չունենաք։ Ա՛հ, ա՛հ։ Սակայն որքան ցավալի է, որ նրա հետ դուք եք հանդիպել, և ոչ թե ես։ Չնայած ամեն ինչ վառվել է և մոխիր են կապել ածուխները, համենայն դեպս, երդվում եմ, որ հանուն այդ հանդիպման ես կտայի Պրասկովյա Ֆյոդորովնայի բանալիները, քանի որ տալու ուրիշ ոչինչ չունեմ։ Ես աղքատ եմ։

— Իսկ նա ձեր ինչի՞ն է պետք։

Հյուրը երկար ժամանակ թախծում էր ու ցնցվում, բայց ի վերջո խոսեց.

— Տեսնու՞մ եք, ինչ տարօրինակ պատմություն է, ես այստեղ նստած եմ հենց նույն պատճառով, ինչ և դուք, այսինքն Պոնտացի Պիղատոսի պատճառով,— հյուրն այստեղ վախվորած շուրջը նայեց և ասաց.— Բանն այն է, որ մի տարի առաջ ես վեպ գրեցի Պիղատոսի մասին։

— Դուք գրո՞ղ եք,— հետաքրքրությամբ հարցրեց Իվանը։

Հյուրի դեմքը մթնեց, նա բռունցքով սպառնաց Իվանին, ապա ասաց.

— Ես վարպետ եմ,— նա խստահայաց դարձավ, գրպանից հանեց կեղտակոտված դեղին մետաքսաթելերով ասեղնագործած «Վ» տառով մի սև գդակ։ Դրեց գլխին և կիսադեմով ու դիմացից իրեն ցուցադրեց Իվանին, ապացուցելու համար, որ ինքը վարպետ է։— Իր ձեռքերով է նա գործել ինձ համար,— խորհրդավոր ավելացրեց նա։

— Իսկ ձե՞ր ազգանունն ինչ է։

— Ես այլևս ազգանուն չունեմ,— մռայլ արհամարհանքով

պատասխանեց արտասովոր հյուրը,— ես հրաժարվել եմ նրանից. ինչպես և կյանքում ամեն ինչից։ Մոռանանք։

— Գոնե վեպի մասին մի բան ասեք,— քաղաքավարի խնդրեց Իվանը։

— Ինչպես կամենաք։ Իմ պատմությունն, իրոք, այնքան էլ սովորական չէ,— սկսեց հյուրը։

...Կրթությամբ պատմաբան, նա դեռ երկու տարի առաջ աշխատում էր մոսկովյան թանգարաններից մեկում, բացի դրանից զբաղվում էր թարգմանություններով։

— Ի՞նչ լեզվից,— հետաքրքրությամբ հարցրեց Իվանը։

— Ես հինգ լեզու գիտեմ, մայրենի լեզվից բացի,— պատասխանեց հյուրը,— անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն և հունարեն։ Է՜, քիչումիչ էլ իտալերեն եմ կարդում։

— Մի տես է՜,— նախանձով շշնջաց Իվանը։

Ապրում էր պատմաբանը միայնակ, ոչ մի տեղ հարազատ չուներ և համարյա ծանոթներ էլ չուներ Մոսկվայում։ Եվ պատկերացնում եք, մի անգամ հարյուր հազար ռուբլի շահեց։

— Պատկերացրեք իմ զարմանքը,— շշնջում էր սև գդակ դրած հյուրը,— երբ ձեռքս մտցրեցի կեղտոտ սպիտակեղենի զամբյուղն ու տեսա, որ փոխառության վրայի համարը նույնն է, ինչ թերթում տպագրվածը։ Փոխառության տոմսը,— բացատրեց նա,— թանգարանում էին ինձ տվել։

Հարյուր հազար շահելուց հետո Իվանի հանելուկային հյուրն այսպես արեց. գրքեր գնեց, թողեց Մյասնիցկայայի վրայի իր սենյակը...

— Ուու՜, նզովյալ ծակուռ,— գռմռաց հյուրը։

... և Արբատին մերձակա նրբանցքում տան վարձեց իրավունքատիրոջից...

— Գիտե՞ք, թե ինչ ասել է իրավունքատեր,— հարցրեց հյուրն Իվանին և անմիջապես բացատրեց։— Խաբեբաների սակավաթիվ խումբ է դա, որն ինչ-որ մի եղանակով անվնաս է մնացել Մոսկվայում...

Իրավունքատիրոջից երկու սենյակ վարձեց պարտեզ ունեցող փոքրիկ տան նկուղում։ Թողեց ծառայությունը թանգարանում և սկսեց վեպ հորինել Պոնտացի Պիղատոսի մասին։

— Ա՜հ, դա ոսկե դար էր,— աչքերը փայլեցնելով, շշնջում էր պատմողը,— լրիվին առանձին բնակարան, նաև նախասենյակ, այդտեղ էլ մի կոնք, ջրի ծորակով,— չգիտես ինչու առանձ-

ու համառ հպարտությամբ ընդգծեց նա.— փոքրիկ պատուհան-ներ՝ ուղիղ պարտեզի դռնակից նեղ նեղ մայթի վրա։ Դիմացը, չորս քայլի վրա, ցանկապատի տակ՝ եղրևանի, լորենի և թխկի։ Ա՜հ, ա՜հ, ա՜հ։ Ձմռանը պատուհանից խիստ հազվադեպ էի տեսնում որևէ մեկի սև ոտքերն ու լսում ձյան ճռճռոցը ոտքերի տակ։ Եվ վառարանիս մեջ կրակն էր վառվում հավերժորեն։ Բայց հանկարծակի եկավ գարունը, և պղտոր ապակիների միջից տեսա եղրևանու՝ նախ մերկ, ապա կանաչ հագնող թփերը։ Եվ ահա հենց այդ ժամանակ, անցյալ գարնանը, շատ ավելի զմայլելի մի բան կատարվեց, քան հարյուր հազար ռուբլի շահելն է։ Իսկ դա, համաձայնեք, վիթխարի գումար է։

— Ճիշտ է,— ընդունեց ուշադրությամբ լսող Իվանը։

— Ես բացել էի պատուհաններն ու նստած էի երկրորդ, շատ փոքրիկ սենյակում,— հյուրն սկսեց ձեռքերով ցույց տալ,— այսպես... ահա բազմոցը, իսկ դիմացը մեկ ուրիշ բազմոց, արանքում սեղանիկ, վրան՝ սքանչելի գիշերալամպը, իսկ պատուհանին մոտ՝ գրքերը, այստեղ՝ փոքրիկ գրասեղան, իսկ առաջին սենյակում՝ հսկայական սենյակ էր, տասնչորս մետր, գրքեր, գրքեր և վառարանը։ Ահ, ի՜նչ կահավորություն ունեի։

Եղրևանին արտակարգ էր բուրում։ Եվ հոգնածությունից գլուխս դառնում էր թեթև-թեթև, իսկ Պիղատոսը թռչում էր դեպի ավարտ...

— Սպիտակ թիկնոցը, արնագույն աստառը։ Հասկանում եմ,— բացականչեց Իվանը։

— Հենց այդպես։ Պիղատոսը թռչում էր դեպի ավարտ, դեպի ավարտ, և ես արդեն գիտեի, որ վեպի վերջին բառերը սրանք են լինելու. «... Հրեաստանի հինգերորդ կուսակալը՝ հեծյալ Պոնտացի Պիղատոսը»։ Բնական է, դուրս էի գալիս զբոսնելու։ Հարյուր հազարը վիթխարի գումար է, ու ես սքանչելի մոխրագույն կոստյում ունեի։ Կամ՝ գնում էի էժանագին որևէ ռեստորանում ճաշելու։ Արբատի վրա մի սքանչելի ռեստորան կար, չգիտեմ, հիմա գոյություն ունի՞։

Այստեղ հյուրի աչքերը լայն բացվեցին, ու նա շարունակեց շշնջալ, լուսնին նայելով։

— Նրա ձեռքին նողկալի, տագնապահարույց դեղին ծաղիկներ կային։ Սատանան գիտե, թե դրանց ինչ են ասում, բայց, չգիտես ինչու, Մոսկվայում առաջին ծաղիկները դրանք են լինում։ Եվ այդ ծաղիկները շատ հստակ գծագրվում էին նրա դար-

նանային սև վերարկուի վրա։ Նրա ձեռքին դեղին ծաղիկներ կային։ Լավ գույն չէ։ Նա Տվերսկայայից թեքվեց նրբանցք և այստեղ շրջվեց։ Տվերսկայան գիտեք, չէ՞։ Հազարավոր մարդիկ էին գնում Տվերսկայա փողոցով, բայց հավատացնում եմ, որ նա միայն ինձ տեսավ ու նայեց ոչ թե տագնապալից, այլ նույնիսկ կարծես հիվանդագին։ Ու ինձ ապշեցրեց ոչ այնքան նրա գեղեցկությունը, որքան արտասովոր, չտեսնված մենությունն աչքերի մեջ։

Այդ դեղին նշանին հպատակ, ես նույնպես թեքվեցի նրբանցք ու գնացի նրա ետևից։ Մենք քայլում էինք թեք, տաղտկալի նրբանցքով անխոս, ես՝ մի կողմով, իսկ նա՝ մյուս։ Եվ, պատկերացրեք, նրբանցքում կենդանի շունչ չկար։ Ես տանջվում էի, որովհետև ինձ թվաց, թե անհրաժեշտ է նրա հետ խոսել, և անհանգստանում էի, որ բառ անգամ չեմ կարողանա արտասանել, իսկ նա կգնա և ես այլևս երբեք չեմ տեսնի նրան։

Ու, պատկերացրեք, հանկարծ խոսել սկսեց նա.

— Հավանո՞ւմ եք իմ ծաղիկները։

Հստակ հիշում եմ, թե ինչպես հնչեց նրա ձայնը՝ բավականին թավ էր, բայց կերկեր, և որքան էլ անմիտ լինի, թվաց, թե նրբանցքում արձագանք թնդաց ու անդրադարձվեց դեղին, կեղտոտ պատից։ Ես արագ անցա մյուս կողմն ու մոտենալով նրան, պատասխանեցի.

— Ոչ։

Նա ինձ նայեց զարմացած, իսկ ես հանկարծ ու լրիվ անսպասելի հասկացա, որ ամբողջ կյանքիս ընթացքում հենց այս կնոջն եմ սիրել։ Ինչ բան է, չէ՞։ Իհարկե, կասեք, խելագար է։

— Ես ոչինչ չեմ ասում,— բացականչեց Իվանն ու ավելացրեց.— Աղաչում եմ, շարունակեք։

Եվ հյուրը շարունակեց.

— Այո, նա ինձ նայեց զարմացած, իսկ նայելուց հետո այսպես հարցրեց.

— Դուք ընդհանրապե՞ս ծաղիկ չեք սիրում։

Ինձ թվաց, թե նրա ձայնի մեջ թշնամություն կա։ Ես գնում էի նրա կողքով, աշխատելով համաքայլ լինել, և, ի զարմանս ինձ, բոլորովին նեղված չէի զգում։

— Ոչ, ես ծաղիկ սիրում եմ, միայն ոչ այսպիսիք,— ասացի ես։

— Իսկ ի՞նչ։

— Ես վարդ եմ սիրում։

Այստեղ ես զղջացի ասածիս համար, որովհետև նա մեղավոր ժպտաց և իր ծաղիկները շպրտեց առվի մեջ։ Մի քիչ շփոթվեցի և համենայն դեպս ծաղիկները բարձրացրի ու նրան մեկնեցի, սակայն նա, քմծիծաղ տալով, ետ մղեց ծաղիկներն ու դրանք մնացին իմ ձեռքում։

Այսպես որոշ ժամանակ լուռ քայլեցինք, մինչև որ ծաղիկները ձեռքիցս վերցրեց ու շպրտեց սալահատակի վրա, ապա թևանցուկ արեց ինձ, սև ձեռնոց ուներ ձեռքին քաշած, ու մենք քայլեցինք կողք-կողքի։

— Հետո՞,— ասաց Իվանը,— և խնդրում եմ, ոչինչ բաց չթողնեք։

— Հետո՞,— հարցը կրկնեց հյուրը,— է, ինչ, շարունակությունը կարող էիք դուք էլ կռահել։— Նա հանկարծ սրբեց անսպասելի արտասուքը աջ թևքով և շարունակեց.— Սերը դուրս պրծավ մեր առաջ, ինչպես մարդասպանն է դուրս պրծնում գետնի տակից, նրբանցքում, և խփեց երկուսիս էլ միաժամանակ։

Այդպես կայծակն է խփում, այդպես ֆիննական դանակով են խփում։

Իսկ նա, ի դեպ, հետագայում պնդում էր, որ դա այդպես չէ, որ, իհարկե, մենք սիրում էինք միմյանց վաղուց ի վեր, չճանաչելով միմյանց, երբեք չտեսած իրար, ու ապրում էր նա ուրիշ մարդու հետ, ես էլ այն ժամանակ... նրա, անունն ինչ էր...

— Ո՞ւմ հետ,— հարցրեց Անապաստանը։

— Նրա հետ, էլի... նրա հետ...— պատասխանեց հյուրն ու մատները չրթացրեց։

— Դուք ամուսնացա՞ծ էիք։

— Այո, դրա համար էլ չրթացնում եմ... նրա հետ... Վարենկայի, Մանեչկայի... չէ, Վարենկայի... զոլավոր էլ շոր ուներ... թանգարանը... ասենք, չեմ հիշում։

Ահա և նա ասում էր, որ դեղին ծաղիկները ձեռքին այն օրն ինքը դուրս էր եկել, որպեսզի վերջապես ես գտնեմ իրեն, ու եթե դա չկատարվեր, ինքը կթունավորվեր, որովհետև կյանքը փուչ էր իր համար։

Այո, սերը մեզ խոցեց վայրկենապես։ Ես դա գիտեի արդեն հենց նույն օրը, մեկ ժամ անց, երբ քաղաքին անհաղորդ, հայտնվեցինք Կրեմլի պարսպի տակ, գետափին։

Մենք այնպես էինք խոսում, ասես երեկ էինք բաժանվել,

ասես տարիներ ի վեր գիտեինք միմյանց։ Պայմանավորվեցինք հաջորդ օրը հանդիպել նույն տեղում, Մոսկվա գետի մոտ, ու հանդիպեցինք։ Մայիսյան արևն էր լուսավորում մեզ։ Եվ շուտով, շուտով նա դարձավ իմ գաղտնի կինը։

Նա ինձ մոտ էր գալիս ամեն օր, իսկ ես նրան սպասել էի սկսում առավոտից։ Այդ սպասումն արտահայտվում էր նրանում, որ ես սեղանի վրա տեղից տեղ էի դնում առարկանները։ Գալուց տասը րոպե առաջ նստում էի պատուհանի մոտ ու ականջ դնում՝ չթրխկա՞ց արդյոք հին դռնակը։ Եվ ի՜նչ արտառոց բան. մինչ նրան հանդիպելը, հազարից մի մարդ կգար մեր բակը, պարզ ասած, ոչ ոք չէր գալիս, իսկ հիմա ինձ թվում էր, թե ամբողջ քաղաքը բռնել է այս ճանապարհը։ Թրխկում էր դռնակը, խփում էր սիրտս, և պատկերացրեք, դեմքիս բարձրությամբ, պատուհանից անպայման երևում էին ինչ-որ մեկի կեղտոտ սապոգները։ Դանակ-մկրատ սրողն է։ Բայց ու՞մ է պետք այդ սրողը մեր տանը։ Ի՞նչ պետք է սրի։ Ի՞նչ դանակներ։

Նա դռնակից ներս էր մտնում մեկ անգամ, իսկ մինչ այդ սրտի խփոց էի զգում ոչ պակաս, քան տասն անգամ։ Չեմ ստում։ Իսկ հետո, երբ գալիս էր նրա ժամը, և սլաքները կեսօր էին ցույց տալիս, սիրտս այլևս չէր դադարում խփել մինչև այն ժամանակ, երբ առանց թխկոցի, համարյա լռվին անաղմուկ պատուհանիս էին հավասարվում պողպատյա ճարմանդներով ագուցված, սև եղջերվենու վրադիր վարդակապերով կոշիկները։

Երբեմն նա չարաճճիություն էր անում և, կանգնելով երկրորդ պատուհանի մոտ, կոշկաքթով թխկթխկացնում էր ապակին։ Նույն վայրկյանին հայտնվում էի այդ պատուհանի մոտ, բայց կոշիկն անհետանում էր, լույսը փակող սև մետաքսն անհետանում էր, ու ես գնում էի դուռը բացելու։

Ոչ ոք չգիտեր մեր կապի մասին, դրա համար երաշխավորում եմ, չնայած այդպես երբեք չի լինում։ Չգիտեր նրա ամուսինը, չգիտեին ծանոթները։ Հին առանձնատանը, ուր ինձ էր պատկանում այդ նկուղը, ինչ խոսք, գիտեին, տեսնում էին, որ ինչ-որ մի կին մոտս է գալիս, բայց անունը չգիտեին։

— Իսկ ո՞վ է նա,— հարցրեց Իվանը ծայրաստիճան հետաքրքրված սիրային այդ պատմությամբ։

Հյուրը մի շարժում արեց, որ նշանակում էր, թե երբեք և ոչ ոքի չի ասի անունը, և շարունակեց իր պատմությունը։

Իվանին հայտնի դարձավ, որ վարպետը և անծանոթ կինը

միմյանց այնքան բուռն սիրեցին, որ լիովին անբաժան դարձան։ Իվանն արդեն հստակ պատկերացնում էր առանձնատան նկուղի երկու սենյակները, որտեղ միշտ մթնշաղ էր լինում եղևնու և ցանկապատի պատճառով։ Կարմիր, մաշված կահույքը, գրասեղանը, վրան՝ կես ժամը մեկ զանգող ժամացույցը, և գրքերը, ներկած հատակից մինչև ծխապատ առաստաղը շարված գրքերը, նաև՝ վառարանը։

Իվանն իմացավ, որ իր հյուրն ու գաղտնի կինը իրենց կապի առաջին իսկ օրը հանգեցին մի եզրակացության, որ ճակատագիրն է նրանց հանդիպեցրել Տվերսկայայի և Նրբանցքի անկյունում և որ նրանք միմյանց համար են ստեղծված առհավետ։

Հյուրի պատմածից Իվանն իմացավ, թե օրն ինչպես էին անցկացնում սիրահարները։ Կինը գալիս էր ու առաջին հերթին հագնում էր գոգնոցը, և նեղլիկ նախասենյակում, ուր գտնվում էր հենց այն կոնքը, որով չգիտես ինչու հպարտանում էր խեղճ հիվանդը, փայտե սեղանի վրա վառում էր նավթավառը և նախաճաշ պատրաստում, սեղան դնելով առաջին սենյակում։

Մայիսյան ամպրոպների ժամանակ, երբ անլույս պատուհանների մոտով դարպասատակի կողմն էր խշշալով գնում ջուրը, սպառնալով լցվել վերջին կացարանը, սիրահարները վառում էին վառարանը և կարտոֆիլ խորովում։ Կարտոֆիլից գոլորշի էր ելնում, կարտոֆիլի սևացած կեղևը կեղտոտում էր մատները։ Փոքրիկ նկուղում ծիծաղն էր հնչում, պարտեզի ծառերն անձրևից հետո իրենց վրայից թոթափում էին կոտրատված ճյուղեր ու ճերմակ ծաղկեպսակներ։ Երբ վերջացան ամպրոպներն ու վրա հասավ տոթ ամառը, ծաղկամանի մեջ երևացին երկար սպասված, երկուսի կողմից սիրված վարդերը։

Նա, ով իրեն վարպետ էր անվանել, աշխատում էր, իսկ կինը, բարակ, սուր, խարտած եղունգներով մատները խրած մազերի մեջ, կարդում էր գրածը, իսկ կարդալուց հետո ահա այս գդակն էր կարում։ Երբեմն նա պպզում էր ներքևի գրադարակների մոտ կամ աթոռի վրա կանգնում վերևի գրադարակների մոտ և լաթով սրբում հարյուրավոր կազմերի փոշին։ Նա փառք էր խոստանում, խթանում էր նրան և հենց այդ ժամանակ սկսեց վարպետ կոչել։Կինը հասավ Հրեաստանի հինգերորդ կուսակալի մասին արդեն խոստացված այդ վերջին բառերին, երգեցիկ ու բարձրաձայն կրկնում էր իրեն դուր եկած առանձին դարձվածքներ և ասում, որ իր կյանքն է այդ վեպի մեջ։

Վեպն ավարտվեց օգոստոսին, տվեցին մի անծանոթ մեքենագրուհու, որը մեքենագրեց հինգ օրինակից։ Եվ վերջապես հասավ ժամը, երբ ստիպված էր թողնել գաղտնի կացարանն ու կյանք դուրս գալ։

— Ու ես կյանք դուրս եկա, վեպը ձեռքիս, և այդ ժամանակ իմ կյանքը վերջացավ,— շշնջաց վարպետը և գլուխը կախեց, ու երկար ժամանակ օրորվում էր տրտմահարույց սև գդակը, դեղին «Վ» տառով։ Նա շարունակեց իր պատմությունը, բայց փոքր-ինչ անկապ դարձավ դա։ Միայն մի բան կարելի էր հասկանալ, որ Իվանի հյուրի կյանքում ինչ-որ աղետ էր տեղի ունեցել։

— Ես առաջին անգամ էի ընկել գրականության աշխարհը, բայց հիմա, երբ ամեն ինչ արդեն վերջացել է ու փաստ է իմ վախճանը, սարսափով եմ հիշում դրա մասին,— հանդիսավորությամբ շշնջաց վարպետը և բարձրացրեց ձեռքը։— Այո, նա չափազանց զարմացրեց ինձ, ահ, ինչպես զարմացրեց։

— Ո՞վ,— հազիվ լսելի շշնջաց Իվանը, վախենալով ընդհատել հուզված պատմողին։

— Խմբագիրը, ասում եմ, չէ, խմբագիրը։ Այո, ուրեմն նա կարդաց։ Ինձ այնպես էր նայում, կարծես այտս ուռած լիներ լնդաբորբից, աչքերը մի տեսակ շլում էր սենյակի անկյունն ու շփոթված քրքջում նույնիսկ։ Նա անհարկի ճմլում էր ձեռագիրն ու կոկորդային ձայներ հանում։ Ինձ տված հարցերը խելացնոր թվացին։ Վեպի մասին ըստ էության ոչինչ չասելով, նա ինձ հարցնում էր, թե ով եմ ես ու որտեղից եմ հայտնվել, վաղուց եմ գրում արդյոք և իմ մասին ինչու մինչ այս ոչինչ չի լսվել, իմ տեսակետով նույնիսկ լրովին ապուշ մի հարց էլ տվեց. ինձ ո՞վ է գլխի գցել նման տարօրինակ թեմայով վեպ հորինել։

Ի վերջո, նա ինձ ձանձրացրեց, և ես ուղղակի հարցրեցի՝ արդյոք տպագրելու՞ է վեպը, թե՝ ոչ։

Այստեղ նա շշկլվեց, ինչ-որ բան սկսեց մրթմրթալ ու հայտարարեց, որ անձամբ այդ հարցը վճռել ինքը չի կարող, որ իմ ստեղծագործությանը պետք է ծանոթանան խմբագրական կոլեգիայի մյուս անդամները, այն է՝ քննադատներ Լատունսկին և Արիմանը և գրականագետ Մստիսլավ Լավրովիչը։ Խնդրեց անցնել երկու շաբաթից։

Երկու շաբաթ անց եկա, և ինձ ընդունեց մշտապես ստելուց քթի կողմը շղկված աչքերով մի աղջիկ։

— Լապշյոննիկովան է, խմբագրության քարտուղարը,— քմծիծաղով ասաց Իվանը, որը քաջ գիտեր իր հյուրի՝ գայրույթով նկարագրած աշխարհը։

— Թերևս,— ընդհատեց հյուրը,— ուրեմն, նրանից ետ ստացա վեպս, բավականաչափ կեղտոտած ու քրքրված վիճակում։ Աշխատելով աչքերը փախցնել իմ աչքերից, Լապշյոննիկովան հայտնեց, որ խմբագրությունը երկու տարվա նյութերով ապահովված է և որ այդ պատճառով իմ վեպի տպագրության հարցը, ինչպես նա արտահայտվեց, վերանում է։

— Ի՞նչ եմ հիշում դրանից հետո,— քրթմնջաց վարպետը՝ քունքը շփելով,— այո, տիտղոսաթերթի վրա թափված կարմիր ծաղկաթերթեր ու մեկ էլ իմ ընկերուհու աչքերը։ Այո, այդ աչքերը հիշում եմ։

Իվանի հյուրի պատմությունը գնալով ավելի խճճված էր դառնում, ավելի ու ավելի հագենում ինչ-որ կիսատ-պռատ մտքերով։ Խոսում էր շեղահար անձրևի և նկուղային կացարանին տիրած վհատության մասին, այն մասին, որ ինքն ինչ-որ տեղ էլ գնաց։ Շշնջաձայն բղավում էր, որ նրան, ով իրեն պայքարի էր մղում, ամենևին չի մեղադրում, օ՜, ո՛չ, չի մեղադրում։

— Հիշում եմ, հիշում այդ անիծյալ ներդիրը թերթում,— մրթմրթում էր հյուրը՝ երկու մատներով օդի մեջ թերթի էջը նկարելով, և Իվանը հաջորդ խառնիխուռն դարձվածքներից կռահեց, որ ուրիշ մի խմբագիր մեծ հատված էր տպագրել իրեն վարպետ կոչողի վեպից։

Ըստ նրա ասածի, ոչ ավել, քան երկու օր անց մեկ ուրիշ թերթում տպագրվեց քննադատ Արիմանի հոդվածը, որը վերնագրված էր՝ «Թշնամին խմբագրի հովանու ներքո», և ուր ասվում էր, թե Իվանի հյուրը, օգտվելով խմբագրի անփութությունից ու տգիտությունից, փորձ է արել մամուլի էջերը քարշ տալ Հիսուս Քրիստոսի ջատագովությունը։

— Ա՜, հիշում եմ, հիշում եմ,— բացականչեց Իվանը։— Բայց մոռացել եմ ձեր ազգանունը։

— Թողնենք, կրկնում եմ, իմ ազգանունը, այլևս այն գոյություն չունի։ Բանն ազգանունը չէ։ Մեկ օր անց մի ուրիշ թերթում Մստիսլավ Լավրովիչի ստորագրությամբ ուրիշ հոդված հայտնվեց, ուր հեղինակն առաջարկում էր հարվածել, և չեղտակի

*հարվածել պիղատոսականությանը և այն սրբանկարչին, որի միջոցով անցել է մամուլի էջերը քարշ տալ (նորից այս նզովյալ բառակապակցությունը) դա։*

*Այդ «պիղատոսականություն» բառից քարացած, ես բաց արեցի երրորդ լրագիրը։ Երկու հոդված կար այստեղ. մեկը՝ Լատունսկունն էր, իսկ մյուսը ստորագրված էր «Ն. Է.» տառերով։ Հավատացնում եմ ձեզ, որ Արիմանի և Լավրովիչի հորինվածքները կատակ կարող էին համարվել Լատունսկու գրածի համեմատությամբ։ Բավական է ձեզ ասել, որ Լատունսկու հոդվածը վերնագրված էր՝ «Մարտնչող հնածիսականը»։ Ես այնպես էի հափշտակվել իմ մասին հոդվածը կարդալով, որ չնկատեցի, թե ինչպես նա (մոռացել էի դուռը կողպել) կանգնեց իմ առաջ, թաց հովանոցը ձեռքին, լրագրերը նույնպես թաց էին։ Նրա աչքերից կրակ էր ցայտում, ձեռքերը դողում էին ու սառն էին։ Սկզբում նա նետվեց ինձ համբուրելու, ապա խռպոտած ձայնով և ձեռքը սեղանին զարկելով՝ ասաց, որ ինքը կթունավորի Լատունսկուն։*

*Իվանը մի տեսակ շփոթված խոխռացրեց, բայց ոչինչ չասաց։*

*— Վրա հասան միանգամայն անուրախ օրեր։ Վեպը գրված էր, այլևս անելու բան չկար, և մեր երկուսի կյանքը այն էր, որ նստում էինք հատակին փոքրիկ գորգի վրա, վառարանի մոտ և նայում կրակին։ Ի դեպ, հիմա ավելի շատ էինք բաժանվում, քան առաջ։ Նա սկսեց զբոսնելու գնալ։ Իսկ ինձ հետ յուրօրինակ մի բան կատարվեց, ինչպես հաճախ էր եղել իմ կյանքում... Անսպասելիորեն մի ընկեր ունեցա։ Այո, այո, պատկերացրեք, ընդհանրապես ես հակված չեմ մտերմանալ մարդկանց հետ, գրողի տարած մի տարօրինակություն ունեմ՝ մարդկանց դժվար եմ մոտենում, վստահող չեմ, կասկածամիտ եմ։ Եվ պատկերացնում եք, այդուհանդերձ, չնախատեսված, անսպասելի և արտաքնապես սատանան գիտե, թե ում նման որևիցե մեկն անպայմանորեն սիրտս կմտնի, և հենց նա էլ բոլորից շատ դուր կգա ինձ։*

*Ուրեմն, նզովյալ այն ժամանակ, բացվեց մեր պարտեզի դռնակը, օրն էլ հիշում եմ, հաճելի օր էր, աշնանային։ Կինս տանը չէր։ Ու դռնակից ներս մտավ մի մարդ, ինչ-որ գործով բարձրացավ վեր, իմ իրավունքատիրոջ մոտ, հետո պարտեզ իջավ ու մի տեսակ շատ շուտ, ծանոթություն հաստատեց ինձ*

հետ։ Ներկայացավ որպես ժուռնալիստ։ Այնքան շատ նկավ ինձ, պատկերացրեք, որ մինչ այժմ երբեմն հիշում եմ նրան ու կարոտում։ Մեկ, երկու՝ սկսեց ինձ այցելել։ Իմացա, որ ամուրի է, ապրում է մեր կողքը, մոտավորապես նույնանման փոքր բնակարանում, որ նեղվածք է իր համար ու նման բաներ։ Իր տուն, կարծեմ թե, չհրավիրեց։ Կնոջս ծայրաստիճան դուր չեկավ նա։ Բայց ես պաշտպան կանգնեցի նրան։ Կինս ասաց.

— Ինչպես կուզես՝ արա, բայց ասում եմ քեզ, որ այդ մարդն իմ վրա վանող տպավորություն է թողնում։

Ես ծիծաղեցի։ Այո, բայց, ճշմարիտն ասած, ինչո՞վ նա ինձ գրավեց։ Բանն այն է, որ մարդն անհետաքրքիր է առանց իր ներսում, իր տուփի մեջ ունեցած անակնկալի։ Նման անակընկալ իր տուփի մեջ ուներ Ալոիզին (այո, մոռացա ասել, որ իմ նոր ծանոթի անուն-հայրանունը Ալոիզի Մոգարիչ էր)։ Այսինքն, մինչ այդ ոչ մի տեղ չէի հանդիպել և համոզված եմ, որ ոչ մի տեղ էլ չեմ հանդիպի այնպիսի խելքի տեր մարդու, ինչպիսին Ալոիզին ուներ։ Եթե ես չէի հասկանում լրագրային որևէ հոդվածի միտքը, Ալոիզին տառացիորեն մեկ րոպեում բացատրում էր ինձ, ընդ որում ակնհայտ էր, որ այդ բացատրությունը նրա համար դատարկ բան էր։ Նույնը՝ նաև կյանքի երևույթների ու հարցերի նկատմամբ։ Բայց դա քիչ է։ Ալոիզին ինձ հմայեց գրականության հանդեպ ունեցած սիրով։ Նա չհանգստացավ այնքան ժամանակ, մինչև որ համոզեց ինձ իր համար կարդալ վեպս ծայրից ծայր, ընդ որում վեպի մասին մեծ գովասանքով արտահայտվեց, բայց և ապշեցուցիչ ճշգրտությամբ, ասես ներկա լիներ, ասաց այդ վեպին վերաբերող խմբագրի բոլոր դիտողությունները։ Հարյուրից հարյուր դեպքում խփում էր տեղին։ Դրանից բացի, նա կատարելապես ստույգ բացատրեց ինձ, և ես կռահում էի, որ դա անսխալ է, թե ինչու իմ վեպը չէր կարող տպագրվել։ Նա ուղղակի ասում էր. այսինչ գլուխը չի գնա...

Հոդվածները վերջ չունեին։ Առաջինների վրա ծիծաղում էի։ Սակայն որքան շատանում էին դրանք, նույնքան իմ վերաբերմունքն էր փոխվում հոդվածների նկատմամբ։ Երկրորդ փուլը զարմանքի փուլն էր։ Մի հազվագյուտ կեղծ ու անվստահ բան էր զգացվում այդ հոդվածների՝ տառացիորեն յուրաքանչյուր տողի մեջ, չնայած ահեղ ու վստահ տոնին։ Ինձ շարունակ թվում էր, ու ես չէի կարողանում դրանից ազատվել, որ այդ հոդվածների հեղինակները այն չեն ասում, ինչ ուզում են ասել, և որ նրանց

կատաղությունը հենց դրանից է գալիս։ Իսկ հետո, պատկերացրեք, վրա հասավ երրորդ՝ սարսափելի փուլը։ Ո՛չ, դրանցից եկող սարսափը չէր, հասկացե՛ք, այլ սարսափ մեկ ուրիշ, հոդվածներին կամ վեպին բացարձակապես չառնչվող բաների նկատմամբ։ Այսպես, օրինակ, ես սկսեցի վախենալ մթությունից։ Մի խոսքով, վրա հասավ հոգեկան հիվանդության փուլը։ Բավական էր քնելուց առաջ հանգցնեի փոքր սենյակի լամպը, և ինձ կթվար, թե պատուհանից, չնայած փակ էր, ներս է մտնում ինչ-որ ութոտանի հրեշ՝ շատ երկար ու սառը շոշափուկներով։ Ու ստիպված էի լույսի տակ քնել։

Իմ սիրեցյալը շատ էր փոխվել (ութոտանու մասին, ինչ խոսք, նրան չէի պատմել։ Բայց նա տեսնում էր, որ ինձ հետ վատ բան է կատարվում), նիհարել էր ու գունատվել, դադարեց ծիծաղել և շարունակ խնդրում էր ինձ՝ ներել իրեն, որ խորհուրդ տվեց ինձ՝ հատվածը տպագրել։ Նա ասում էր, որ թողնեմ ամեն ինչ ու գնամ հարավ, Սև ծով, այդ ուղևորության վրա ծախսելով այն ամենը, ինչ մնացել էր հարյուր հազարից։

Նա շատ էր պնդում, իսկ ես չվիճելու համար (ինչ-որ բան հուշում էր ինձ, որ Սև ծով գնալ չի վիճակվի) խոստացա մոտ օրերս կատարել նրա խնդիրքը։ Բայց նա ասաց, որ ինքը ինձ համար տոմս կվերցնի։ Այդ ժամանակ հանեցի ամբողջ դրամս, այսինքն շուրջ տասը հազար ռուբլի, և տվեցի նրան։

— Ինչի՞ համար այդքան շատ,— զարմացավ նա։

Ասացի, թե վախենում եմ գողերից ու խնդրում եմ, որ ինքը պահի մինչև մեկնելս կամ դրա նման մի բան։ Վերցրեց դրամը, դրեց պայուսակը, սկսեց համբուրել ինձ ու ասել, որ իր համար ավելի հեշտ կլիներ մեռնել, քան ինձ թողնել մենակ նման վիճակում, բայց որ իրեն սպասում են, որ անհրաժեշտությանն է ենթարկվում և որ վաղը կգա։ Նա աղաչում էր ինձ ոչնչից չվախենալ։

Մթնշաղին էր, հոկտեմբերի կեսերին։ Եվ նա գնաց։ Պառկեցի բազմոցին ու քնեցի, առանց լամպը վառելու։ Արթնացա այն զգացողությունից, որ ութոտանին այստեղ է։ Մթության մեջ խարխափելով, հազիվ կարողացա լամպը վառել։ Գրպանիս ժամացույցը գիշերվա երկուսն էր ցույց տալիս։ Կիսահիվանդ պառկեցի, հիվանդ արթնացա։ Ինձ հանկարծ թվաց, թե աշնանային խավարը կճզմի-կփշրի ապակին, սենյակ կլցվի, ու ես կխեղդվեմ խավարում, ինչպես թանաքի մեջ։ Ես վեր կացա որ-

պես մի մարդ, որն այլևս իրեն չէր տիրապետում։ Բղավեցի, ու մի միտք մտավ ուղեղս՝ վազել մեկնումեկի մոտ, թեկուզ վերև, իմ իրավունքատիրոջ մոտ։ Ինքս ինձ պայքարում էի խելագարի պես։ Ուժ գտա իմ մեջ հասնել վառարանին ու վառել փայտերը։ Երբ փայտերը ճտճտացին ու դռնակը թխկթխկաց, կարծես թե փոքր-ինչ թեթևացա։ Ինձ գցեցի նախասենյակ, այնտեղի լույսն էլ վառեցի, գտա սպիտակ գինու շիշը, բացեցի և սկսեցի գինին խմել շշի բերանից։ Դրանից սարսափը մի քիչ բթացավ, համենայն դեպս այնքան, որ չփախա իրավունքատիրոջ մոտ, այլ ետ եկա վառարանի մոտ։ Բացեցի դռնակը, այնպես որ կրակն սկսեց այրել դեմքս ու ձեռքերս, և շշնջացի․

— Կռահիր, որ փորձանք է եկել գլխիս։ Ե՛կ, ե՛կ, ե՛կ։

Բայց ոչ ոք չեկավ։ Վառարանի մեջ կրակն էր գվվում, պատուհանների ապակիները անձրևն էր մտրակում։ Այդ ժամանակ վերջին բանը կատարվեց։ Սեղանի դարակից հանեցի վեպի ծանր պատճենները և սևագիր տետրերն ու սկսեցի այրել։ Սարսափելի դժվար գործ է դա, որովհետև գրված թուղթը հեշտությամբ չի վառվում։ Եղունգներս կոտրատելով՝ պատառոտում էի տետրերը, ուղղահայաց դնում վառվող փայտերի արանքն ու խաչերկաթով խառնում թերթերը։ Մերթընդմերթ մոխիրը հոգիս հանում էր, կրակը խեղդում էր, բայց ես կռիվ էի տալիս, և վեպը, համառորեն դիմադրելով, այնուամենայնիվ, ոչնչանում էր։ Ծանոթ բառեր էին թրթռում աչքիս առաջ, էջերի վարից վեր անհաղթահարելի դեղնություն էր բարձրանում, բայց բառերը, միևնույն է, երևում էին դեղնության վրա ևս։ Բառերն անհետանում էին սոսկ այն ժամանակ, երբ թուղթը սևանում էր, ու ես խաչերկաթով մոլեգնած ցրիվ էի տալիս թղթերը։

Այդ ժամանակ ինչ-որ մեկն սկսեց կամացուկ թակել պատուհանը։ Սիրտս պոկվեց տեղից, և վերջին տետրը կրակի մեջ թաղելով՝ վազեցի դուռը բացելու։ Աղյուսե աստիճաններ էին տանում նկուղից բակի դուռը։ Սայթաքելով, հասա դռանն ու հարցրեցի․

— Ո՞վ է։

Եվ մի ձայն՝ նրա ձայնը, պատասխանեց․

— Ես եմ։

Չեմ հիշում ինչպես, մի կերպ իջեցրի շղթան ու պտտեցի բանալին։ Մի քայլ ներս գցելուն պես, նա փարվեց ինձ, ողջ

*գլուխ թրջված էր, այտերը թաց, մազերն՝ արձակ, և դողում էր։ Մի բառ կարողացա արտասանել.*

*— Դո՞ւ... դո՞ւ,— և ձայնս կտրվեց, ու մենք ցած վազեցինք։ Նախասենյակում նա հանեց վերարկուն, ու մենք արագ մտանք առաջին սենյակը։ Կամացուկ բղավելով, ձեռքերով վառարանից հանեց ու հատակին գցեց այնտեղ մնացած վերջին փաթեթը, որը կպել էր արդեն ներքևից։ Ծուխն անմիջապես լցվեց սենյակը։ Ես ոտքերով տրորում էի կրակը, իսկ նա ընկավ բազմոցին ու լաց եղավ՝ անզսպելիորեն, ջղաձգվելով։*

*Երբ նա հանդարտվեց, ասացի.*

*— Ես տեսցի այս վեպն ու վախենում եմ։ Ես հիվանդ եմ։ Սարսափելի է։*

*Նա ոտքի ելավ ու ասաց.*

*— Աստված իմ, որքան հիվանդ ես դու։ Հանուն ինչի՞, հանուն ինչի՞։ Բայց ես քեզ կփրկեմ, ես քեզ կփրկեմ։ Ի՞նչ բան է սա, ի՞նչ։*

*Ես տեսա ծխից ու արցունքներից ուռած նրա աչքերը, զգացի, թե ինչպես նրա սառը ձեռքերը ճակատս են շոյում։*

*— Ես քեզ կբուժեմ, կբուժեմ,— շշնջում էր նա՝ ամուր սեղմելով ուսերս,— դու կվերականգնես վեպը։ Ինչո՞ւ, ինչո՞ւ մի օրինակ չպահեցի մոտս։*

*Կատաղությունից բացվել էին նրա ատամները, անհասկանալի ինչ-որ բաներ էր ասում։ Ապա, շրթունքները սեղմած, սկսեց հավաքել և հարթեցնել վառված թերթերը։ Վեպի միջին գլուխներից մեկն էր, չեմ հիշում՝ որը։ Նա խնամքով ծալեց կիսավառված թերթերը, փաթաթեց թղթի մեջ, կապեց ժապավենով։ Նրա բոլոր գործողությունները ցույց էին տալիս, որ նա լի է վճռականությամբ և որ տիրապետել է իրեն։ Գինի ուզեց և խմելուց հետո սկսեց ավելի հանգիստ խոսել։*

*— Ահա այսպես են վարձահատույց լինում ստի համար,— ասում էր նա,— և այլևս չեմ ուզում ստել։ Ես հիմա էլ կմնայի քեզ մոտ, բայց չեմ ուզում դա անել նման եղանակով։ Չեմ ուզում, որ ընդմիշտ նրա հիշողության մեջ մնա, թե ես գիշերով փախա նրանից։ Նա երբեք և ոչ մի չարիք չի գործել իմ նկատմամբ։ Նրան հանկարծ կանչեցին, հրդեհ է բռնկվել իրենց գործարանում։ Բայց շուտով կվերադառնա։ Նրա հետ կբացատրվեմ վաղն առավոտյան, կասեմ, որ ուրիշի եմ սիրում ու կվերադառնամ քեզ մոտ ընդմիշտ։ Պատասխանիր, գուցե չե՞ս ուզում դա։*

— Ե՞ղձ իմ, իմ [illegible],— ասացի նրան,— ես թույլ չեմ տա քեզ այդ բանն անել։ Ինձ հետ մեկտեղ լավ չի լինի, և ես չեմ ուզում, որ կործանվես ինձ հետ։

— Միայն դա՞ է պատճառը,— հարցրեց նա և աչքերը մտանցրեց աչքերիս։

— Միայն դա։

Նա չափազանց աշխուժացավ, փարվեց ինձ, գրկեց վիզս ու ասաց.

— Ես կործանվում եմ քեզ հետ միասին։ Առավոտյան մոտդ կլինեմ։

Եվ ահա, վերջին բանը, որ հիշում եմ իմ կյանքում, նախասենյակից ընկնող լույսի շերտն է և այդ լույսի շերտի մեջ ծածանվող մազափունջը, նրա բերետը և վճռականությամբ լի նրա աչքերը։ Հիշում եմ նաև դրսի դռան շեմի վրա մի սև ուրվապատկեր ու սպիտակ ծածկոցը։

— Ես քեզ կուղեկցեի, բայց այլևս ուժ չունեմ մենակ ետ գալու, ես վախենում եմ։ —

— Մի վախեցիր։Մի քանի ժամ դիմացիր։ Վաղն առավոտյան մոտդ կլինեմ։

Սա նրա վերջին խոսքն էր իմ կյանքում։

— Ըը՜ սսս,— հանկարծ ինքն իրեն ընդհատեց հիվանդն ու բարձրացրեց մատը,— անհանգիստ լուսնյակ գիշեր է այսօր։

Նա թաքնվեց պատշգամբում։ Իվանը լսեց, թե ինչպես անվակները գլորվեցին միջանցքում, ինչ-որ մեկը հեծկլտաց կամ թույլ ճիչ արձակեց։

Երբ ամեն ինչ հանդարտվեց, հյուրը ետ եկավ ու հայտնեց, որ 120-րդ սենյակում կենվոր է հայտնվել։ Բերել են ինչ-որ մեկին, որը խնդրում է ետ տալ իր գլուխը։ Զրուցակիցները տագնապած լռեցին, բայց հանգստանալուց հետո վերսկսեցին ընդհատված պատմությունը։ Հյուրն արդեն բաց էր արել բերանը, բայց գիշերն իրոք որ անհանգիստ գիշեր էր։ Ձայները դեռևս հնչում էին միջանցքում, և հյուրն սկսեց այնքան կամացուկ խոսել Իվանի ականջին, որ այն, ինչ պատմեց, հայտնի դարձավ սոսկ բանաստեղծին, բացի առաջին նախադասությունից.

— Նրա հեռանալուց քառորդ ժամ անց իմ պատուհանը ծեծեցին...

Այն, ինչի մասին պատմում էր հիվանդն Իվանի ականջին,

ըստ երևույթին շատ էր հուզում նրան։ Դեմքը ստեպ-ստեպ ջղաձգվում էր։ Աչքերի մեջ ալեկոծվում ու փոթորկվում էին սարսափն ու մոլեգնությունը։ Պատմողը ձեռքով ցույց էր տալիս լուսնի կողմը, որը վաղուց արդեն հեռացել էր պատշգամբից։ Միայն երբ արդեն չէին լսվում դրսից եկող բոլոր ձայները, հյուրը ետ քաշվեց Իվանից ու քիչ ավելի բարձրաձայն սկսեց խոսել։

— Այո, այսպես ուրեմն, հունվարի կեսերին, գիշերով, այդ նույն վերարկուով, բայց կոճակները կտրված, ցրտից կծկված կանգնած էի իմ բակում։ Ետևում ձնաթմբեր էին, որոնք ծածկել էին եղևանու թփերը, իսկ դիմացը, ներքևում՝ աղոտ լուսավորված և վարագույրներով ծածկված իմ պատուհանները։ Մոտեցա առաջինին և ականջ դրեցի՝ իմ սենյակներում պատեֆոն էին նվագում։ Ուրիշ ոչինչ չլսեցի։ Բայց ոչ մի բան չկարողացա տեսնել։ Մի քիչ էլ կանգնեցի և դռնակով դուրս եկա նրբանցք։ Բուքը պար էր բռնել նրբանցքում։ Ոտքիս տակ ընկած շունը վախեցրեց ինձ, ու ես վազեցի մյուս կողմը։ Ցուրտը և մշտական ուղեկիցս դարձած սարսափն ինձ մոլեգնության էին հասցնում։ Գնալու տեղ չունեի, և ամենահեշտն, իհարկե, տրամվայի տակ նետվելը կլիներ այն փողոցում, դեպի ուր ելնում էր իմ նրբանցքը։ Հեռվից տեսա լույսով լեցուն այդ սառած արկղերն ու լսեցի դրանց նողկալի ղրճոցը սառնամանիքի մեջ։ Բայց, թանկագին իմ հարևան, բանն էլ հենց այն է, որ սարսափը պատել էր մարմնիս յուրաքանչյուր բջիջը։ Եվ ճիշտ այնպես, ինչպես շները, ես տրամվայից էլ էի վախենում։ Այո, այս շենքում իմ հիվանդությունից վատը չկա, հավատացնում եմ ձեզ։

— Բայց չէ որ կարող էիք նրան իմաց տալ,— ասաց Իվանը՝ կարեկցելով խեղճ հիվանդին,— դրանից բացի, չէ՞ որ ձեր փողերը նրա մոտ էին։ Չէ՞ որ նա պահել է, անշուշտ, փողը։

— Կասկած չունենաք, իհարկե, պահել է։ Բայց դուք, հավանորեն, ինձ չե՞ք հասկանում։ Կամ, ավելի ճիշտ, ես եմ կորցրել ինչ-որ բան նկարագրելու իմ երբեմնի ունակությունը։ Իմիջիայլոց, ես այնքան էլ չեմ ափսոսում, քանի որ ինձ այլևս պետք չի գա այդ ունակությունը։ Նրա առաջ,— հյուրը երկյուղածությամբ նայեց գիշերվա խավարին,— մի նամակ կլիներ գժանոցից։ Մի՞թե կարելի է նամակներ գրել, նման հասցե ունենալով։ Հոգեկան հիվա՞նդ։ Դուք կատակում եք, բարեկամս։ Ոչ, նրան դժբա՞խտ դարձնել։ Դրան ընդունակ չեմ։

Իվանը չկարողացավ առարկել, բայց լռումունջ կարեկցում էր հյուրին, վշտակցում նրան։ Իսկ նա հիշողությունների տառապանքից սև դղալով գլուխն էր թափահարում, և այսպես ասաց.

— Խեղճ կին։ Սակայն, ես հույս ունեմ, որ նա մոռացել է ինձ։

— Բայց դուք կարող եք բուժվել...— երկչոտ ասաց Իվանը։

— Ես անբուժելի եմ,— հանգիստ պատասխանեց հյուրը,— երբ Ստրավինսկին ասում է, թե ինձ կյանքի կվերադարձնի, չեմ հավատում նրան։ Նա մարդասեր է և պարզապես ուզում է մխիթարել ինձ։ Ի դեպ, չեմ ժխտում, որ հիմա շատ ավելի լավ եմ ինձ զգում։ Հա, ինչի վրա կանգ առա՞նք։ Սառնամանիքը, այդ թռչող տրամվայները։ Ես գիտեի, որ այս կլինիկան արդեն բացվել է և, ամբողջ քաղաքը ոտքով կտրելով, ճամփա ընկա դեպի այստեղ։ Խելագարություն էր։ Քաղաքից դուրս, հավանորեն, ցուրտը կտաներ ինձ, բայց պատահականությունը փրկեց։ Ինչ-որ բան էր փչացել բեռնատարի մեջ, մոտեցա վարորդին, ուղեկալից չորս կիլոմետր այն կողմ կլիներ, և, ի զարմանս, նա խղճաց ինձ։ Մեքենան այստեղ էր գալիս։ Ու նա բերեց ինձ։ Հեշտ պրծա, ձախ ոտքիս մատներն էին սառել։ Բայց դա բուժեցին։ Եվ ահա չորրորդ ամիսն է՝ այստեղ եմ։ Եվ գիտեք ինչ, գտնում եմ, որ այստեղ շատ լավ է։ Մեծ-մեծ ծրագրեր կազմելու կարիք չկա, թանկագին իմ հարևան, ճիշտ եմ ասում։ Օրինակի համար, ես ցանկանում էի շրջել ամբողջ երկրագունդը։ Է՜, ինչ, բանից պարզվեց, որ դա վիճակված չէ։ Ես տեսնում եմ այդ գնդի մի աննշան կտորը միայն։ Կարծում եմ, որ երկրագնդի վրա եղածի ամենալավագույնը չէ սա, բայց կրկնում եմ, այնքան էլ վատը չէ։ Ահա, ամառը մոտենում է, բաղեղը կբարձրանա պատշգամբում, ինչպես խոստանում է Պրասկովյա Ֆյոդորովնան։ Բանալիներն իմ հնարավորություններն ընդլայնել են։ Գիշերները լուսինը դուրս կգա։ Ա՜հ, ծածկվեց լուսինը։ Զովանում է։ Կեսգիշեր դարձավ։ Ես գնամ։

— Ասացեք, իսկ հետո ի՞նչ եղավ Յեշուայի ու Պիղատոսի բանը,— խնդրեց Իվանը,— աղաչում եմ, ուզում եմ իմանալ։

— Ահ, ո՛չ, ո՛չ,— հիվանդագին ցնցվելով՝ պատասխանեց հյուրը,— առանց սարսուռի չեմ կարողանում հիշել իմ վեպը։

Իսկ Պատրիարքականի ձեր ծանոթն ինձնից ավելի լավ կպատմի։ Շնորհակալություն զրույցի համար։ Ցտեսություն։

Եվ մինչ ուշքի կգար Իվանը, կամացուկ զնգոցով փակվեց վանդակը, և հյուրն անհետացավ։

ԳԼՈՒԽ XIV

## ՓԱՌՔ ԱՔԱՂԱՂԻՆ

*Ինչպես ասում են, նյարդերը չդիմացան, և Ռիմսկին չսպասեց մինչև կազմեն-վերջացնեն արձանագրությունն ու վազեց իր աշխատասենյակը։ Նա նստել էր սեղանի մոտ և բորբոքված աչքերով նայում էր դեմը դրված մոգական տասանոցներին։ Ֆինտնօրենը խելքը կորցնում էր։ Դրսից միալար ժխոր էր լըսվում։ Հասարակությունը ալիք-ալիք Վարյետեի շենքից փողոց էր հորդում։ Ֆինտնօրենի ծայրաստիճան սրված լսողությանը հանկարծ հստակորեն հասավ միլիցիոների սուլիչի դայլայլը։ Ինքնըստինքյան դա երբեք հաճելի ոչ մի բան չի խոստանում։ Իսկ երբ կրկնվեց և նրան օգնության հասավ մեկ ուրիշ՝ ավելի տիրական ու երկարատև սուլոց, իսկ հետո գումարվեց լավ լսվող հըռհըռոց և նույնիսկ հայ-հույ, ֆինտնօրենն իսկույն հասկացավ, որ փողոցում խայտառակ ու նողկալի մի բան էլ է կատարվել։ Եվ որ դա, որքան էլ ուզենար խուսափել դրանից, ամենասերտ կապն ունի սև մոգի և նրա օգնականների տված այդ գարշելի սեանսի հետ։ Դյուրազգաց ֆինտնօրենն ամենևին չէր սխալվել։*

*Սադովայա փողոցի վրա ելնող լուսամուտից դուրս նայելուն պես նրա դեմքը ծամածռվեց, և նա չշշնջաց, այլ ֆշշացրեց.*

*— Այդպես էլ գիտեի՜։*

*Փողոցային հզոր լապտերների վառ լույսի տակ, ներքևում, մայթի վրա տեսավ շապիկանց և մանուշակագույն վարտիքով մի տիկնոջ։ Ճիշտ է, տիկնոջ գլխին գլխարկ կար, իսկ ձեռքին՝ հովանոց։*

*Ծայրաստիճան շփոթված, մեկ պպզող, մեկ որևիցե տեղ փախչել փորձող այդ տիկնոջ շուրջն ամբոխ էր խռնվել ու հենց այն քրքիջն էր արձակում, որից փշաքաղվում էր ֆինտնօրենի մեջքը։ Տիկնոջ մոտ իրար էր անցել մի քաղաքացի, որն իր վրայից*

ամառային վերարկուն էր պոկելով հանում ու ոչ մի կերպ չէր կարողանում ազատել թևը, որի մեջ ձեռքն էր խրվել-մնացել։

Մեկ այլ տեղից՝ ձախ շքամուտքի մոտից բղավոցներ ու ոռ-նաձայն քրքիջ էր լսվում, և, գլուխն այդ կողմը դարձնելով, Գրի-գորի Դանիլովիչը տեսավ երկրորդ տիկնոջը՝ վարդագույն ներք-նազգեստով։ Սալարկից մայթի վրա էր նետվում նա՝ ջանալով թռչել շքամուտքում, բայց դուրս հորդացող հասարակությու-նը փակել էր նրա ճանապարհը, և իր թեթևամտության ու հա-գուստների հանդեպ ունեցած մոլության ողորմելի, զազրելի Ֆագոտի ընկերությունից խաբված զոհը լոկ մի բան էր երազում՝ գետնի տակն անցնել։ Միլիցիոները, օդը սուլոցով պատռելով, նետվեց դեպի տարաբախտը, իսկ միլիցիոների հետևից այնտեղ շտապեցին կեպիներ դրած ու անչափ ուրախ երիտասարդ տղա-ներ։ Հենց նրանք էլ գցել էին այդ հռհռոցն ու հայ-հույը։

Հաստաբեղ ու նիհար կառապանը քշեց հասավ կիսամերկ առաջին տիկնոջը և թափով կանգնեցրեց կմախքացած, ուժա-սպառ ձիուն։ Հաստաբեղի դեմքին բերկրալի քմծիծաղ կար։

Ռիմսկին բռունցքով հարվածեց իր գլխին, թքեց և ետ ընկավ լուսամուտից։

Որոշ ժամանակ նստած էր սեղանի մոտ՝ ականջ դնելով փո-ղոցի աղմուկին։ Տարբեր կետերում սուլոցը հասավ բարձրա-կետին, ապա սկսեց թուլանալ։ Ի զարմանս Ռիմսկու, խայտա-ռակությունը մի տեսակ անսպասելի արագ վերացվեց։

Եկավ գործելու ժամանակը, ստիպված էր պատասխանատ-վության դառը բաժակն ըմպել։ Երրորդ բաժնի ընթացքում հե-ռախոսներն սկսել էին աշխատել, պետք էր զանգահարել, հայտ-նել կատարվածի մասին, օգնություն խնդրել, խաբել, ամեն ինչ գցել Լիխոդեևի վրա, ինքն իրեն արդարացնել և այլն։ Թո՛հ, չա՛ր սատանա։ Դառնացած տնօրենը ձեռքը երկու անգամ դրեց խոսափողին ու երկու անգամ էլ վերցրեց։ Ու հանկարծ, աշ-խատասենյակի մեռելային լռության մեջ ապարատն ինքը խլա-ցուցիչ զրնգաց ուղիղ ֆինտնօրենի դեմքին, և վերջինս ցնցվեց ու սառույց կտրեց։ «Բայց և այնպես նյարդերս կարգին քայքայ-վել են»,— մտածեց նա և վերցրեց լսափողը։ Ու անմիջապես ետ ընկավ, դեմքը՝ թղթից ավելի ճերմակած։ Կանացի մի մեղմ, միաժամանակ շողոմ ու անառակ ձայն շշնջաց լսափողի մեջ.

— Ոչ մի տեղ զանգ չտաս, Ռիմսկի, թե չէ վատ կլինի։

Լսափողն իսկույն համրացավ։ Թիկունքին սարսուռ զգալով,

ֆինտնօրենը դրեց լսափողն ու չգիտես ինչու նայեց իր ետևի պատուհանից դուրս։ Թխկենու ցանցառ և նոսր կանաչով պատած ճյուղերի արանքից նա տեսավ թափանցիկ ամպի միջով սահող լուսինը։ Չգիտես ինչու մեխվելով ճյուղերին, Ռիմսկին նայում էր դրանց, և ինչքան երկար էր նայում, սարսափն այնքան ավելի ու ավելի էր տիրում նրան։

Ճիգ գործադրելով, ֆինտնօրենը վերջապես շրջվեց լուսնային պատուհանից ու վեր կացավ։ Զանգահարելու մասին այլևս խոսք անգամ չէր կարող լինել, և հիմա ֆինտնօրենը մտածում էր միայն մի բանի մասին՝ ինչպես հեռանա թատրոնից հնարավորին չափ շուտ։

Ականջ դրեց. թատրոնի շենքը լուռ էր։ Ռիմսկին հասկացավ, որ ինքը վաղուց մենակ է ամբողջ երկրորդ հարկում, և այդ մտքից մանկական անհաղթահարելի վախ պատեց նրան։ Առանց սարսռալու չէր կարողանում մտածել, որ հիմա ստիպված է լինելու մենակ գնալ դատարկ միջանցքներով և իջնել աստիճաններով։ Տենդագին շարժումով սեղանի վրայից հավաքեց մոգական տասանոցները, դրեց պայուսակն ու հազաց, ինքն իրեն մի քիչ քաջալերելու համար։ Խռպոտ ու թույլ հազ ստացվեց։

Եվ այստեղ նրան թվաց, որ աշխատասենյակի դռան տակից հանկարծ նեխած խոնավության հոտ եկավ։ Դող անցավ ֆինտնօրենի ողնաշարով։ Անսպասելիորեն ժամացույցն էլ զարկեց, կեսգիշեր ազդարարելով։ Նույնիսկ այդ զարկը դող հարուցեց։ Բայց նրա սիրտը վերջնականապես նվաղեց, երբ լսեց, որ դռան փականի մեջ կամացուկ պտտվում է անգլիական բանալին։ Խոնավ ու սառած ձեռքերով պայուսակին կառչած, ֆինտնօրենը զգաց, որ եթե մի քիչ էլ շարունակվի այդ ճռճռոցը բանալու անցքի մեջ, ինքը չի դիմանա և խլացուցիչ կբղավի։

Վերջապես դուռը բացվեց ինչ-որ մեկի ջանքերով, և անաղմուկ աշխատասենյակ մտավ Վարենուխան։ Ինչպես կանգնել էր, այնպես էլ նստեց Ռիմսկին բազկաթոռի մեջ, որովհետև ոտքերը ծալվեցին։ Լիակուրծք շունչ քաշելով, մի տեսակ հաճոյանալով՝ ժպտաց ու կամացուկ արտասանեց.

— Աստվա՛ծ իմ, ինչպես վախեցրիր։

Այո, այդ հանկարծակի հայտնվելուց ով ասես կարող էր վախենալ, այնուամենայնիվ դա մեծ ուրախություն էր միաժամանակ։ Խճճված այս գործի մեջ գոնե մի ծայր երևաց։

— Դե, շուտ արա խոսիր։ Դե՛, դե՛,— խռպոտ ձայնով ասաց Ռիմսկին, կառչելով այդ ծայրից,— ի՞նչ է նշանակում այս ամենը։

— Կներես, խնդրում եմ,— խլաձայն պատասխանեց ներս եկածը՝ դուռը փակելով,— կարծում էի, արդեն գնացել ես։

Եվ Վարենուխան, առանց կեպին հանելու, մոտեցավ բազկաթոռին ու նստեց սեղանի մյուս կողմում։

Հարկ է ասել, որ Վարենուխայի ասածի մեջ մի թեթև տարօրինակություն կար, որն իսկույն խոցեց իր զգայնությամբ աշխարհի ցանկացած լավագույն կայանի երկրաշարժագրի հետ վիճելու ունակ ֆինտնորինին։ Այսինքն՝ ինչպե՞ս թե։ Իսկ ինչու՞ էր Վարենուխան գալիս ֆինտնորենի աշխատասենյակը, եթե ենթադրում էր, որ նա այնտեղ չէ։ Ինքն իր աշխատասենյակը չունի՞։ Սա՝ մեկ։ Երկրորդը. որ մուտքից էլ Վարենուխան շենք մտներ, անխուսափելիորեն պիտի հանդիպեր գիշերային հերթապահներից մեկնումեկին, իսկ նրանց բոլորին հայտնված էր, որ Գրիգորի Դանիլովիչը որոշ ժամանակ դեռ կմնա իր աշխատասենյակում։

Սակայն այդ տարօրինակության շուրջ ֆինտնորենը չուզեց երկար մտածել։ Դրա ժամանակը չէր։

— Իսկ ինչու՞ զանգ չտվեցիր։ Ի՞նչ է նշանակում Յալտայի այդ ամբողջ պատմությունը։

— Ինչ որ ասել էի, դա էր,— ծտտացնելով, ասես ցավող ատամ ուներ, պատասխանեց ադմինիստրատորը,— նրան գտել են Պուշկինոյում, պանդոկում։

— Ինչպե՞ս թե Պուշկինոյում։ Մոսկվայի մո՞տ։ Իսկ հեռագրերը Յալտայի՞ց.

— Ի՞նչ Յալտա, ի՞նչ բան։ Խմացրել է պուշկինցի հեռագրիչին, ու երկուսով սկսել են այլանդակություններ անել, այդ թվում հեռագրեր ուղարկել «Յալտա» նշագրումով։

— Ըհը... Ըհը... Դե լավ, լավ...— ոչ թե ասաց, այլ ասես երգեց Ռիմսկին։ Նրա աչքերը դեղնավուն լույս արձակեցին։ Գլխի մեջ ամբողջացավ Ստյոպայի աշխատանքից խայտառակ կերպով հեռացնելու տոնական պատկերը։ Ազատագրում։ Ֆինտնորենի բաղձալի ազատագրումը Լիխոդեև կոչվող այդ փորձանքից։ Իսկ գուցե Ստեպան Բոգդանովիչը հեռացվելուց էլ վա՞տ մի բանի կարժանանա...— Մանրամասնություններն ասա,— պրես-պապյեն խփելով սեղանին՝ ասաց Ռիմսկին։

Եվ Վարենուխան սկսեց մանրամասնությունները պատմել։ Այնտեղ, ուր ուղարկել էր ֆինտնօրենը, ներկայանալուն պես, անհապաղ ընդունեցին իրեն և մեծագույն ուշադրությամբ լսեցին։ Իհարկե, ոչ ոքի մտքով էլ չանցավ, որ Ստյոպան կարող է Յալթայում լինել։ Բոլորն անմիջապես համաձայնեցին Վարենուխայի ենթադրությանը, որ Լիխոդեևն, ի՜հարկե, Պուշկինոյի «Յալթայում» է։

— Իսկ հիմա՞ որտեղ է նա,— ադմինիստրատորին ընդհատեց հուզված ֆինտնօրենը։

— Էլ որտե՞ղ կարող է լինել, —ծուռ-ծուռ ժպտալով քթի տակ, պատասխանեց ադմինիստրատորը,— բնականաբար, սթափարանում։

— Է՜, է՜։ Ա՜յ, շնորհակալ եմ։

Իսկ Վարենուխան շարունակեց իր պատմությունը։ Ու որքան շատ էր պատմում, ֆինտնօրենի համար այնքան ավելի վառ ծավալում էր ստանում լիխոդեևյան լկտիությունների և այլանդակությունների շղթան, և այդ շղթայի հաջորդ յուրաքանչյուր օղը նախորդից վատ էր ավելի։ Ինչ անուն տալ թեկուզ հարբած պարին, հեռագրիչի հետ գրկախառնված, պուշկինյան հեռագրատան դիմաց փռված բացատում, ումն պարապ-սարապ հարմոնահարի նվագի տակ։ Վախից ծղրտացող ինչ-որ քաղաքացուհիների ետևից վազե՜լը հապա։ Հենց «Յալթայում» բուֆետապանի հետ կռիվ սարքելու փորձը։ Կանաչ սոխն այդ «Յալթայի» հատակին ցրիվ տալը։ Ութ շիշ սեղանի սպիտակ «Այ-Դանիլյա» ջարդելը։ Ստյոպային մեքենա նստեցնել չկամեցող տաքսու վարորդի հաշվիչը կոտրելը։ Ստյոպայի գարշելիություններին վերջ տալ փորձող քաղաքացիներին բանտարկելու սպառնալիքները։ Մի խոսքով, ահավոր, սարսափելի բաներ։

Ստյոպային լավ էին ճանաչում Մոսկվայի թատերական շրջանակներում, ու բոլորը գիտեին, որ տուն թողնելու մարդ չէ նա։ Այդուհանդերձ, այն, ինչ ադմինիստրատորն էր պատմում նրա մասին, անգամ Ստյոպայի համար չափից դուրս շատ էր։ Այո, չափից դուրս։ Նույնիսկ շատ դուրս...

Ռիմսկու ծակող աչքերը սեղանի վրայից մեխվել էին ադմինիստրատորի դեմքին, և որքան ավելի շատ էր խոսում նա, այնքան ավելի մռայլվում էին այդ աչքերը։ Որքան ավելի կենդանի և գունեղ էին դառնում մանրամասները, որոնցով իր պատմությունն էր համեմում ադմինիստրատորը... Նույնքան ավելի

քիչ էր հավատում ֆինտնօրենը պատմողին։ Իսկ երբ Վարենուխան հայտնեց, որ Ստյոպան այն աստիճան էր սանձը թողել, որ փորձեց դիմադրություն ցույց տալ նրանց, ովքեր եկել էին նրան Մոսկվա վերադարձնելու, ֆինտնօրենն արդեն հաստատապես գիտեր, որ այն ամենն, ինչ իրեն պատմում է կեսգիշերին վերադարձած ադմինիստրատորը, սո՛ւտ է։ Սուտ է առաջինից մինչև վերջին բառը։

Վարենուխան Պուշկինո չէր գնացել, Ստյոպան նույնպես Պուշկինոյում չէր եղել։ Չէր եղել հարբած հեռագրիչ, կոտրած ապակի չէր եղել պանդոկում, Ստյոպային պարաններով չէին կապկպել... այդ ամենը չէր եղել։

Հենց որ ֆինտնօրենը մտովի համոզվեց, որ ադմինիստրատորը խաբում է իրեն, սարսափը ոտքերից սողաց նրա մարմինն ի վեր, և երկու անգամ վերստին թվաց ֆինտնօրենին, որ հատակից ջերմախտային նեխած խոնավություն է ելնում։ Ոչ մի վայրկյան աչքը չկտրելով ադմինիստրատորից, որը մի տարօրինակ ձևով կծկվել էր բազկաթոռի մեջ, ամբողջ ժամանակ աշխատում էր դուրս չգալ սեղանի լամպի երկնագույն ստվերի տակից ու մի զարմանալի դիրքով դեմքն էր ծածկել լրագրով՝ իբր իրեն խանգարող լամպի լույսից, ֆինտնօրենը միայն մի բան էր մտածում՝ ի՞նչ է նշանակում այս ամենը։ Ամայի և լուռ շենքում ինչի՞ համար է այդպես լկտիաբար ստում իրեն չափազանց ուշ վերադարձած ադմինիստրատորը։Եվ վտանգի, անհայտ, բայց ահարկու վտանգի գիտակցությունը սկսեց ֆինտնօրենի հոգին կրծել։ Ձևացնելով, թե չի նկատում ադմինիստրատորի խորամանկություններն ու աճպարարությունները լրագրով, ֆինտնօրենը զննում էր նրա դեմքը, համարյա արդեն չլսելով, թե ինչ է մոգոնում նա։ Մի բան կար, որ էլ ավելի անբացատրելի էր, քան պուշկինյան արկածների՝ հայտնի չէ, թե ինչու հորինված պատմությունը, և այդ մի բանը ադմինիստրատորի արտաքինի և շարժուձևի մեջ եղած փոփոխությունն էր։

Որքան էլ նա, դեմքը ստվերելու համար, աչքերին էր քաշում կեպիի բադի կտուց-հովարը, որքան էլ խաղացնում էր լրագիրը, ֆինտնօրենին հաջողվեց մի խոշոր կապտուց տեսնել նրա դեմքի աջ կողմում, ճիշտ քթի մոտ։ Դրանից բացի, սովորաբար լիարյուն ադմինիստրատորի դեմքը հիմա կավճյա հիվանդագին դալկություն ուներ, իսկ վզին, չգիտես ինչու, այս տոթ գիշերին շերտավոր հին վզնոց էր փաթաթված։ Իսկ եթե դրան ավելաց-

ննք ադմինիստրատորի բացակայության ընթացքում ի հայտ եկած շրթունքները լպստելու և ճպճպացնելու նրա նողկալի սովորությունը, ձայնի կտրուկ փոփոխությունը, որը դարձել էր խուլ և կոպիտ, աչքերի գողունի և վախվորած արտահայտությունը, համարձակորեն կարելի էր ասել, որ Իվան Սավելևիչ Վարենուխան անճանաչելի էր դարձել։

Մի ուրիշ բան ևս սաստիկ անհանգստացնում էր ֆինտնորեսնին, բայց հատկապես ինչ՝ չէր կարողանում հասկանալ, որքան էլ լարում էր բորբոքված ուղեղը, որքան էլ ուշադիր էր նայում Վարենուխային։ Մի բան կարող էր նա հաստատել, որ չտեսնված, անբնական ինչ-որ բան կար ադմինիստրատորի և լավ ծանոթ բազկաթոռի այդ միացության մեջ։

— Է, վերջապես կապկպեցին, գցեցին մեքենա,— թնդում էր Վարենուխան՝ լրագրի տակից նայելով և ափով կապտուցը ծածկելով։

Ռիմսկին հանկարծ պարզեց ձեռքը և ասես մեքենայաբար, ափով, միաժամանակ մատները խաղացնելով սեղանի վրա, սեղմեց էլեկտրական զանգի կոճակը և քարացավ։

Դատարկ շենքում անպայման պիտի կտրուկ ազդանշան հնչեր։ Սակայն այդ ազդանշանը չեղավ, և կոճակն անկենդան խրվեց սեղանի մեջ։ Կոճակը մեռած էր, զանգը՝ փչացած։

Ֆինտնորեսնի խորամանկությունը չվրիպեց Վարենուխայի ուշադրությունից, որը ջղաձգվելով հարցրեց, ընդ որում աչքերի մեջ բացահայտ չարախինդ կրակ ցոլաց.

— Ինչի՞ համար ես զանգ տալիս։

— Մեքենայաբար,— խլաձայն պատասխանեց ֆինտնորեսնը, ետ քաշեց ձեռքը և, իր հերթին, անհաստատ ձայնով հարցրեց.— երե՞սդ ինչ է եղել։

— Մեքենան թեքվեց, խփվեցի դռան բռնակին,— պատասխանեց Վարենուխան՝ աչքերը փախցնելով։

«Ստու՜մ է»,— մտովի բացականչեց ֆինտնորեսնը։ Եվ այստեղ հանկարծ նրա աչքերը կլորացան ու լրիվին խելացնոր դարձան, ու նա հայացքը մեխեց բազկաթոռի թիկնակին։

Բազկաթոռի ետևում, հատակի վրա խաչաձև երկու ստվեր կար. մեկը՝ աղոտ և մոխրագույն, մյուսը՝ ավելի թանձր ու սև։ Հատակի վրա հստակորեն երևում էին բազկաթոռի թիկնակի և սրածայր ոտների ստվերները, բայց հատակի վրա թիկնակից

մեր Վարեննուխայի գլխի ստվերը չկար, ինչպես նաև ոտների տակ ադմինիստրատորի ոտքերը չկային։

«Նա ստվեր չի գցում»,— հուսաբեկ ու մտովի բղավեց Ռիմսկին։ Դողը ցնցեց նրան։

Վարեննուխան գողունի ետ նայեց՝ հետևելով Ռիմսկու խելագար հայացքին, բազկաթոռի թիկնակից այն կողմ և հասկացավ, որ մերկացված է։

Նա վեր կացավ բազկաթոռից (նույնն արեց և ֆինտոորենը) և մի քայլ ետ գնաց սեղանից՝ պայուսակը սեղմած ձեռքերի մեջ։

— Գլխի ընկար, անիծյա՛լ։ Միշտ էլ հասկացո՛ղ ես եղել,— չարախինդ ժպտալով ճիշտ ֆինտոորենի երեսին, ասաց Վարեննուխան, անսպասելիորեն բազկաթոռի մոտից ցատկեց դեպի դուռը և արագ ցած իջեցրեց անգլիական փակի կոճակը։ Ֆինտոորենը հուսահատ ետ նայեց՝ նահանջելով դեպի այգին տանող լուսամուտը և լուսնի լույսով ողողված այդ լուսամուտի մեջ տեսավ ապակուն սեղմված մի մերկ աղջկա դեմքն ու նրա ձեռքը, որ ներս էր խցկել օդանցքից և աշխատում էր բացել ներքևի սողնակը։ Վերևինն արդեն բացված էր։

Ռիմսկուն թվաց, թե սեղանի լամպի լույսը մարում է և որ գրասեղանը թեքվում է։ Սառցե մի ալիք ողողեց Ռիմսկուն ոտից գլուխ, բայց, իր բախտից, հաղթահարեց իրեն ու չընկավ։ Մնացած ուժերը բավականացրին, որպեսզի շշնջար ու ոչ թե բղավեր.

— Օգնեցե՛ք...

Վարեննուխան, դուռը հսկելով, ցատկոտում էր դրան մոտ, ստեպ-ստեպ կախված մնալով և ճոճվելով օդի մեջ։ Կորացրած մատները թափահարում էր Ռիմսկու վրա, ֆշշացնում էր ու ճպպացնում՝ աչքով անելով լուսամուտի աղջկան։

Վերջինս սկսեց շտապել, շիկահեր գլուխը մտցրեց օդանցքից ներս, որքան կարող էր մեկնեց ձեռքը, եղունգներով սկսեց ճանկռտել ներքևի սողնակը և ցնցել շրջանակը։ Նրա ձեռքն սկսեց երկարել, ասես ռետինե լիներ, ու ծածկվեց դիակային կանաչով։ Վերջապես մեռյալի կանաչ մատները բռնեցին սողնակի գլխիկը, շրջեցին, և շրջանակն սկսեց բացվել։ Ռիմսկին թույլ ճչաց, հենվեց պատին և պայուսակը վահանի պես բռնեց առջևում։ Նա հասկանում էր, որ իր վերջը եկել է։

Շրջանակը լայն բացվեց, բայց գիշերային զովության ու լորենիների բուրմունքի փոխարեն նկուղի հոտ լցվեց սենյակը։

*Մեռյալ աղջիկը կանգնեց լուսամտագոգին։ Ռիմսկին հստակորեն տեսնում էր նեխման պուտերը նրա կրծքի վրա։*

*Եվ այդ ժամանակ այգուց լսվեց աքաղաղի անսպասելի և զրնգուն կանչը, որ գալիս էր հրաձգարանի ետև ընկած ցածլիկ շինությունից, ուր պահվում էին ներկայացումներին մասնակցող թռչունները։ Վարժեցված ձայնեղ աքաղաղը շեփորում էր, ազդարարելով, որ արևելքից դեպի Մոսկվա է գալիս արշալույսը։*

*Վայրի մի կատաղությունից այլայլվեց աղջկա դեմքը, նա խռպոտաձայն հայհոյանք արձակեց, իսկ Վարենուխան դռան մոտ ծղրտաց և օդի միջից թրմփաց հատակին։*

*Աքաղաղի կանչը կրկնվեց, աղջիկն ատամները չրխկացրեց, և նրա շեկ մազերը բիզ-բիզ կանգնեցին։ Աքաղաղի երրորդ կանչի հետ նա շուռ եկավ ու թռավ գնաց լուսամուտից։ Ու նրա ետևից ցատկոտելով և հորիզոնական դիրքով օդի մեջ ձգվելով, որպես թռչող մի կուպիդոն, գրասեղանի վրայով դանդաղորեն դուրս լողաց Վարենուխան։*

*Ձյան պես ճերմակ, առանց մի հատիկ սև մազի ծերունին, որը դեռևս քիչ առաջ Ռիմսկին էր, մոտ վազեց դռանը, բարձրացրեց կոճակը, բացեց դուռը և վազեց մութ միջանցքով։ Սանդուղքի շրջադարձի մոտ, սարսափից տնքալով, նա շոշափելով գտավ անջատիչը, և սանդուղքը լուսավորվեց։ Աստիճանների վրա ցնցվող, դողդողացող ծերունին ցած ընկավ, որովհետև նրան թվաց, թե վերևից իր վրա փափուկ-փափուկ թրմփաց Վարենուխան։*

*Ցած վազելով, Ռիմսկին տեսավ ճեմասրահում, դրամարկղի մոտ, աթոռի վրա քնած հերթապահին։ Ոտնաթաթերի վրա, նրա մոտով գաղտագողի անցավ Ռիմսկին և դուրս սողոսկեց գլխավոր մուտքից։ Փողոցում մի քիչ թեթևացավ նրա վիճակը։ Ուշքն այնքան եկավ տեղը, որ, գլուխը բռնելով, կարողացավ ըմբռնել՝ գլխարկը մնացել է աշխատասենյակում։*

*Ինքնըստինքյան հասկանալի է, որ ետ չգնաց վերցնելու, այլ շնչասպառ վազեց, լայն փողոցը հատելով, հանդիպակաց անկյունը, կինոթատրոնի մոտ, ուր կարմրավուն աղոտ կրակ էր փայլփլում։ Մեկ րոպեից արդեն այնտեղ էր։ Ոչ ոք չհասցրեց մեքենան բռնել իրենից առաջ։*

*— Լենինգրադյան ճեպընթացին հասնենք, ավել կտամ,— ծանր շնչելով, սիրտը բռնած, ասաց ծերունին։*

— Զբաղված եմ,— ատելությամբ պատասխանեց վարորդն ու շուռ եկավ։

Այդ ժամանակ Ռիմսկին բացից պայուսակը, հանեց հիսուն ռուբլի և առջևի բաց օդանցքից մեկնեց վարորդին։

Մի քանի վայրկյան անց դողդացող ավտոմեքենան փոթորիկի պես սուրում էր Սադովայայի օղակով։ Ուղևորը ցնցվում էր նստիքի վրա, և վարորդի առաջ կախված հայելու բեկորի մեջ Ռիմսկին տեսնում էր մեկ վարորդի բերկրալի աչքերը, մեկ իր խելացնոր աչքերը։

Կայարանի շենքի դիմաց դուրս թռչելով մեքենայից, Ռիմսկին ձայն տվեց սպիտակ գոգնոց կապած և բեռնակրի նշան ունեցող առաջին պատահած մարդուն.

— Առաջին կարգ, մի տեղ, երեսուն տալիս եմ,— ճմրթելով, պայուսակից հանեց տասանոցները,— առաջին չլինի, երկրորդ, դա էլ չլինի, կոշտ վագոն վերցրու։

Գոգնոց կապած մարդը, ետ նայելով լուսավոր թվացույցով ժամացույցին, Ռիմսկու ձեռքից թռցրեց տասանոցները։

Հինգ րոպե անց կայարանի ապակյա գմբեթի տակից անհետացավ ճեպընթացը և կորավ խավարի մեջ։ Գնացքի հետ մեկտեղ անհետացավ նաև Ռիմսկին։

ԳԼՈՒԽ XV

## ՆԻԿԱՆՈՐ ԻՎԱՆՈՎԻՉԻ ԵՐԱԶԸ

Դժվար չէ կռահել, որ կարմրաթուշ կերպարանքով գիրուկ մարդը, որին տեղավորեցին կլինիկայում, №119 սենյակում, Նիկանոր Իվանովիչ Բոսոյն էր։

Սակայն նա անմիջապես չընկավ պրոֆեսոր Ստրավինսկու մոտ, այլ նախապես մի ուրիշ տեղում եղավ։

Այդ ուրիշ տեղից Նիկանոր Իվանովիչի հիշողության մեջ քիչ բան էր մնացել։ Հիշում էր միայն գրասեղանը, պահարանը և բազմոցը։

Այնտեղ խոսակցություն սկսեցին Նիկանոր Իվանովիչի հետ, որի աչքերը մթագնվում էին արյան հորդացումներից ու հոգեկան հուզումներից, բայց խոսակցությունը մի տեսակ տարօրինակ, խառնաշփոթ ստացվեց, ավելի ճիշտ ասած՝ ամենևին չստացվեց։

Նիկանոր Իվանովիչին տրված առաջին իսկ հարցը սա էր.

— Դո՞ւք եք Նիկանոր Իվանովիչ Բոսոյը, Սադովայա երեք հարյուր երկու գիծ երկու շենքի տնային կոմիտեի նախագահը։

Ի պատասխան, Նիկանոր Իվանովիչը, սարսափելի ծիծաղելով, տառացիորեն այսպես ասաց.

— Ես Նիկանորն եմ, իհարկե, Նիկանորը։ Բայց ինչնից ի՞նչ նախագահ, ի՞նչ բան։

— Այսինքն, ինչպե՞ս,— աչքերը կկոցելով, հարցրեցին Նիկանոր Իվանովիչին։

— Էնպես,— պատասխանեց նա,— նախագահ թե որ լինեի, միանգամից պետք է հասկանայի, որ սատանա է։ Թե չէ ի՞նչ։ Ակնոցը ճաքած... շորերը ճղճղված... Ոնց կարող էր թարգմանիչ լինել օտարերկրացու համար։

— Ո՞ւմ մասին եք խոսում,— հարցրեցին Նիկանոր Իվանովիչին։

— Կորովևը,— բղավեց Նիկանոր Իվանովիչը,— մեր հիսուներորդ բնակարանում է տեղավորվել։ Գրեցեք՝ Կորովև։ Նրան անմիջապես պետք է բռնել։ Գրեցեք՝ վեցերորդ շքամուտք։ այնտեղ է։

— Վալյուտան որտեղի՞ց ես վերցրել,— մտերմաբար հարցրեցին Նիկանոր Իվանովիչին։

— Արդար աստված, ամենազոր աստված,— սկսեց Նիկանոր Իվանովիչը,— ամեն բան տեսնում է, իմ ճանապարհն էլ իր մոտ է տանում, տե՜ղն է ինձ։ Ոչ մի անգամ ձեռքիս մեջ չեմ բռնել ու չեմ իմացել, թե ի՞նչ բան է վալյուտան։ Աստված պատժում է ինձ իմ մեղքի համար,— հուզված շարունակեց Նիկանոր Իվանովիչը, մեկ կոճկելով, մեկ արձակելով շապկի կոճակները, մեկ՝ խաչակնքելով,— վերցրե՜լ եմ։ Վերցրե՜լ եմ, բայց մեր սովետական փողով եմ վերցրել։ Փողով գրանցել եմ, չեմ վիճում, եղե՜լ է։ Մեր քարտուղար Պրոլեժնևն էլ ոչինչ, ինքն էլ՝ ոչինչ։ Ճիշտն ասենք, բոլորը գող են տնային վարչությունում։ Բայց վալյուտա չե՛մ վերցրել։

Խնդրեցին իրեն ապուշի տեղ չդնել, այլ պատմել, թե դոլարներն ինչպես են հայտնվել օդափոխման անցքի մեջ, և Նիկանոր Իվանովիչը ծնկի եկավ ու առաջ ճոճվեց, բերանը բացելով, ասես ցանկանալով կուլ տալ պարկետի խորանարդը։

— Ուզո՞ւմ եք,— մնչաց նա,— հող ուտեմ, որ չեմ վերցրել։ Իսկ Կորովևը սատանա է։

Ամենայն համբերություն իր սահմանն ունի, և սեղանի մոտ արդեն ձայնը բարձրացրեցին, Նիկանոր Իվանովիչին ակնարկելով, որ ժամանակն է մարդկային լեզվով խոսել։

Այդ ժամանակ բազմոցով սենյակը ցնցվեց ծնկած վիճակից վեր ցատկած Նիկանոր Իվանովիչի բղավոցից.

— Ահա՛ նա։ Ահա նա, պահարանի ետևի՛ն է։ Քթի տակ ծիծաղու՛մ է։ Ակնոցն էլ քթին... Բռնե՛ք նրան։ Սուրբ ջու՛ր շաղ տվեք սենյակում։

Արյունը չքացավ Նիկանոր Իվանովիչի դեմքի վրայից, դողդողալով նա օդն էր խաչակնքում, շպրտվում դեպի դուռն ու ետ, ինչ-որ աղոթք սկսեց երգել և ի վերջո կատարյալ անմիտ բաներ դուրս տվեց։

Միանգամայն պարզ դարձավ, որ Նիկանոր Իվանովիչը որևիցե խոսակցության պիտանի չէ։ Նրան դուրս տարան, առանձին սենյակում տեղավորեցին, ուր փոքր-ինչ հանգստացավ և միայն աղոթում ու հեծկլտում էր։

Ինչ խոսք, գնացին Սադովայա և մտան №50 բնակարանը։ Ոչ մի Կորովև էլ չգտան այնտեղ, և ոչ մի Կորովևի ոչ ոք էլ չէր ճանաչում շենքում ու չէր տեսել։ Հանգուցյալ Բեռլիոզի և Յալտա մեկնած Լիխոդեևի զբաղեցրած բնակարանը կատարելապես դատարկ էր, և աշխատասենյակում պահարանների վրա իրենց համար կախված էին անվնաս կնքամոմերը։ Այդպես էլ ետ եկան Սադովայայից, ընդ որում նրանց հետ գնաց նաև տնային վարչության շշկլված ու ընկճված քարտուղար Պրոլեժնևը։

Երեկոյան Նիկանոր Իվանովիչին բերեցին Ստրավինսկու կլինիկան։ Այնտեղ նա այնքան անհանգիստ պահեց իրեն, որ ստիպված եղան Ստրավինսկու դեղատոմսով սրսկում կատարել, և միայն կեսգիշերն անց Նիկանոր Իվանովիչը քնեց 119-րդ սենյակում, մերթընդմերթ ծանր, տառապագին մնչոցներ արձակելով։

Բայց որքան խորանում, այնքան ավելի թեթև էր դառնում նրա քունը։ Նա դադարեց շուռումուռ գալ, հանգիստ ու համաչափ շնչեց, ու նրան մենակ թողեցին։

Այդ ժամանակ երազ եկավ Նիկանոր Իվանովիչին, որի հիմքում, անկասկած, նրա այսօրվա ապրումներն էին։ Սկսվեց նրանից, որ Նիկանոր Իվանովիչը տեսավ, իբր ինչ-որ մարդիկ,

ձեռքերին ոսկե շնիփորներ, իրեն մոտեցնում են, այն էլ շատ հանդիսավոր, խոշոր ու լաքապատ մի դռան։ Այդ դռան մոտ ուղեկիցներն իբր տուշ նվագեցին Նիկանոր Իվանովիչի պատվին, հետո մի թավ բաս երկնքից ասաց ուրախ-ուրախ.

— Բարի գալու՜ստ, Նիկանոր Իվանովիչ։ Վալյուտան հանձնե՞ք։

Սայրաստիճան զարմացած Նիկանոր Իվանովիչը վերևում մի սև բարձրախոս տեսավ։

Հետո, չգիտես ինչու, հայտնվեց թատրոնի դահլիճում, ուր ոսկեզօծ առաստաղի տակ բյուրեղապակյա ջահեր էին շողշողում, իսկ պատերին՝ աշտանակներ։ Ամեն բան՝ հարկը պատշաճին, ինչպես ոչ մեծ չափերի, բայց շատ հարուստ թատրոնում։ Բեմ կար, ծածկված թավշյա վարագույրով, որի բալեգույն ֆոնի վրա աստղիկների պես ոսկյա խոշորացված տասանոցների պատկերներ էին սփռված, հուշարարի խցիկ կար և նույնիսկ հասարակություն։

Նիկանոր Իվանովիչին զարմացրեց այն, որ ամբողջ այդ հասարակությունը միասեռ էր՝ տղամարդիկ էին, և բոլորը, չգիտես ինչու, մորուքավոր։ Բացի դրանից, զարմացրեց, որ թատրոնի դահլիճում աթոռներ չկային և ամբողջ այդ հասարակությունը նստած էր հղկված փայլեցրած ու սայթաքուն հատակին։

Նոր ու մեծ հասարակության մեջ շփոթված Նիկանոր Իվանովիչը որոշ ժամանակ տատանվելուց հետո բոլորի օրինակին հետևեց ու ծալապատիկ նստեց պարկետին, տեղ գրավելով շիկամազ ու հաղթանդամ մի մորուքավորի և գունատ ու սաստիկ մազակալած մի քաղաքացու արանքում։ Նստածներից ոչ ոք ուշադրություն չդարձրեց նոր հանդիսականի վրա։

Լսվեց զանգակի մեղմ զնգզնգոցը, դահլիճում լույսը հանգավ, վարագույրը բացվեց ու երևաց լուսավորված բեմը՝ բազկաթոռով, սեղանիկով, որի վրա ոսկյա զանգակ կար և համատարած սև թավշյա հետնավարագույրով։

Կուլիսներից այստեղ դուրս եկավ սմոքինգ հագած մի արտիստ՝ խնամքով սափրված, մազերը կողք սանրած, շատ հաճելի դիմագծերով երիտասարդ էր։ Դահլիճում հասարակությունն աշխուժացավ, և բոլորը շրջվեցին դեպի բեմը։ Արտիստը մոտեցավ խցիկին և ձեռքերը շփեց։

— Նստա՞ծ եք,— փափուկ բարիտոնով հարցրեց նա ու ժպտաց դահլիճին։

— Նստած ենք, նստած,— դահլիճից խմբով պատասխանեցին տենորներն ու բասերը։

— Հըմ...— մտազբաղ սկսեց արտիստը,— ու ինչպե՞ս չեք ձանձրանում, ես չեմ հասկանում։ Բոլոր մարդիկ հիմա մարզավարի քայլում են փողոցներով, վայելում գարնանային արեն ու ջերմությունը, իսկ դուք մնացել եք հատակին նստած այս հեղձուկ սրահում։ Չլինի՞ թե ծրագիրն է այդքան հետաքրքիր։ Ասենք, նայած ում ինչ է դուր գալիս,— փիլիսոփայորեն ավարտեց արտիստը։

Ապա նա փոխեց թե ձայնի երանգը, թե առոգանությունը և ուրախ ու զրնգուն հայտարարեց.

— Եվ այսպես, մեր ծրագրի հաջորդ համարը Նիկանոր Իվանովիչ Բոսոյն է՝ տնային կոմիտեի նախագահ և դիետիկ ճաշարանի վարիչ։ Բեմ հրավիրենք Նիկանոր Իվանովիչին։

Միահամուռ ծափահարությունները պատասխանեցին արտիստին։ Զարմացած Նիկանոր Իվանովիչն աչքերը չռեց, իսկ կոնֆերանսյեն, ձեռքով պաշտպանվելով բեմեզրի լույսից, հայացքով գտավ նրան նստածների մեջ և քնքշորեն բեմ կանչեց մատով։ Եվ Նիկանոր Իվանովիչը, չհիշելով թե ինչպես, հայտնըվեց բեմի վրա։

Ներքևից ու դիմացից նրա աչքերին խփեց գունավոր լամպերի լույսը, որից իսկույն խավարի մեջ կորավ դահլիճը հասարակության հետ միասին։

— Դե, Նիկանոր Իվանովիչ, օրինակ ցույց տվեք մեզ,— մտերմորեն սկսեց երիտասարդ արտիստը,— ու հանձնեք վալյուտան։

Լռություն տիրեց։ Նիկանոր Իվանովիչը շունչը տեղը բերեց և ցածրաձայն ասաց.

— Երդվում եմ աստծով, որ...

Բայց չէր հասցրել արտասանել այդ բառերը, երբ ամբողջ դահլիճում վրդովմունքի բացականչություններ հնչեցին։ Նիկանոր Իվանովիչը շփոթվեց ու պապանձվեց։

— Որքան հասկացա ձեզ,— խոսեց ծրագիրը վարողը,— ուզում էիք երդվե՞լ աստծով, որ վալյուտա չունեք։— Եվ նա կարեկցանքով նայեց Նիկանոր Իվանովիչին։

— Ճիշտ այդպես, չունեմ,— պատասխանեց Նիկանոր Իվանովիչը։

— Լավ,— արձագանքեց արտիստը,— սակայն ներեցեք անհամեստության համար՝ իսկ որտեղի՞ց էր լույս ընկել հայտնաբերված չորս հարյուր դոլարն այն բնակարանի զուգարանում, որի միակ բնակիչները հանդիսանում եք դուք և ձեր կինը։

— Կախարդական էին,— ակնհայտ հեգնանքով ասաց ինչ-որ մեկը դահլիճում։

— Ճիշտ այդպես, կախարդական էին,— երկչոտ պատասխանեց Նիկանոր Իվանովիչը անորոշ հասցեով՝ ոչ այն է, արտիստին, ոչ այն է, մութ դահլիճին, և բացատրեց.— սատանան էր, վանդակավոր թարգմանիչն էր թաքուն դրել։

Ու կրկին զայրույթով հռնդաց դահլիճը։ Իսկ երբ լռություն տիրեց, արտիստն ասաց.

— Ահա թե ինչպիսի լաֆոնտենի առակներ եմ ստիպված լինում լսել։ Չորս հարյուր դոլա՜ր էին թաքուն դրել։ Ահա՝ այստեղ բոլորդ էլ վալյուտայով զբաղվող մարդիկ եք։ Ձեզ եմ դիմում, որպես մասնագետների՝ խելքի մոտ բա՞ն է դա։

— Մենք վալյուտայով չենք զբաղվում,— առանձին նեղացած ձայներ հնչեցին թատրոնում,— բայց դա խելքի մոտ բան չէ։

— Լիովին համամիտ եմ,— հաստատ ասաց արտիստը,— ու ձեզ եմ հարցնում՝ ի՞նչ կարող են թաքուն դնել։

— Երեխա՜,— բղավեց ինչ-որ մեկը դահլիճից։

— Միանգամայն ճիշտ է,— հաստատեց ծրագիրը վարողը,— երեխա, անստորագիր նամակ, թռուցիկ, պայթուցիկ, հազար ու մի բան, բայց ոչ ոք չորս հարյուր դոլար թաքուն չի դնի ոչ մի տեղ, որովհետև նման ապուշ բնության մեջ չկա,— և դիմելով Նիկանոր Իվանովիչին, արտիստն ավելացրեց հանդիմանելով ու տրտում.— Ինձ վշտացրիք, Նիկանոր Իվանովիչ։ Իսկ ես հույս ունեի ձեզ վրա։ Այսպիսով, մեր համարը չստացվեց։

Դահլիճում սուլոց լսվեց Նիկանոր Իվանովիչի հասցեին։

— Նա վալյուտայով զբաղվո՜ղ է,— բղավում էին դահլիճից,— դրա նմանների պատճառով անմեղ տեղը մե՞նք ենք տուժում։

— Մի նախատեք նրան,— մեղմորեն ասաց կոնֆերանսյեն,— նա կզղջա։— Եվ արցունքով լի երկնագույն աչքերը դարձնելով Նիկանոր Իվանովիչի կողմը, ավելացրեց.— Լավ, գնացեք ձեր տեղը, Նիկանոր Իվանովիչ։

Դրանից հետո արտիստը զանգակը խփեց և բարձրաձայն հայտարարեց.

— Ընդմիջո՜ւմ, պարոնայք։

Յնցված Նիկանոր Իվանովիչը, որ իր համար անսպասելիորեն թատերական ինչ-որ ծրագրի մասնակից էր դարձել, հայտնվեց իր տեղում, հատակի վրա։ Այստեղ սիսավ երազում, որ դահլիճն ընկղմվեց կատարյալ խավարի մեջ և որ պատերի վրա դուրս պրծան կարմիր վառվող բառեր. «Հանձնեցե՛ք վալյուտան»։ Հետո նորից բացվեց վարագույրը, և կոնֆերանսյեն հրավիրեց.

— Խնդրում եմ բեմ բարձրանալ Սերգեյ Գերարդովիչ Դունչիլին։

Դունչիլը բարետես, բայց սաստիկ անխնամ արտաքինով, հիսնամյա մի մարդ էր։

— Սերգեյ Գերարդովիչ,— նրան դիմեց կոնֆերանսյեն,— ահա արդեն մեկուկես ամիս նստած եք այստեղ, համառորեն հրաժարվելով հանձնել ձեզ մոտ մնացած վալյուտան, այն ժամանակ, երբ երկիրը դրա կարիքն զգում է, իսկ ձեզ ամենևին պետք չէ, այդուհանդերձ դուք համառում եք։ Դուք կրթված մարդ եք, շատ լավ հասկանում եք այդ ամենն ու չեք կամենում այնուամենայնիվ ընդառաջել մեզ։

— Ցավոք սրտի, ոչինչ անել չեմ կարող, քանի որ այլևս վալյուտա չունեմ,— հանգիստ պատասխանեց Դունչիլը։

— Իսկ ծայրահեղ դեպքում, ադամանդնե՞ր էլ չունեք,— հարցրեց արտիստը։

— Ադամանդներ էլ չունեմ։

Արտիստը գլուխը կախեց ու մտքերի մեջ ընկավ, իսկ հետո ծափ զարկեց։ Կուլիսներից բեմ մտավ միջին տարիքի մի տիկին, հագնված ըստ մոդայի, այն է՝ անօձիք վերարկու և պստլիկ գլխարկ։ Տիկինը հուզված տեսք ուներ, իսկ Դունչիլը նրան նայեց, հոնքն իսկ չշարժելով։

— Ո՞վ է այս տիկինը,— հարցրեց ծրագիրը վարողը Դունչիլին։

— Իմ կինն է,— արժանապատվությամբ պատասխանեց Դունչիլը և նայեց տիկնոջ երկար պարանոցին որոշ խորշանքով։

— Տիկին Դունչիլ, մենք ձեզ անհանգստացրել ենք,— նրան դիմեց կոնֆերանսյեն,— այսպիսի մի առիթով. ուզում էինք ձեզ հարցնել, ձեր ամուսնու մոտ էլի վալյուտա մնացե՞լ է։

— Այն ժամանակ նա բոլորը հանձնեց,— հուզվելով, պատասխանեց տիկին Դունչիլը։

— Լավ,— ասաց արտիստը,— է, ինչ կա որ, եթե այդպես

է, ուղիղն այդպես է։ Եթե ամեն ինչ հանձնել է, ապա հարկ է, որ մենք անհապաղ հրաժեշտ տանք Սերգեյ Գերարդովիչին, ի՞նչ կարող ես անել։ Եթե կամենում եք, Սերգեյ Գերարդովիչ, կարող եք թողնել թատրոնը,— և արտիստը արքայական մի շարժում արեց։

Դունչիլը հանգիստ և արժանապատվությամբ շուռ եկավ ու գնաց դեպի կուլիսները։

— Մի րոպե,— կանգնեցրեց նրան կոնֆերանսյեն,— թույլ տվեք հրաժեշտի առթիվ ձեզ մի համար էլ ցույց տանք մեր ծրագրից,— և կրկին ծափ զարկեց։

Սև լտնավարագույրը բացվեց, ու բեմ մտավ դեռատի մի գեղեցկուհի, պարահանդեսային զգեստով, ձեռքին՝ ոսկյա մատուցարան, որի վրա անուշեղենի ժապավենով եզերված մի հաստ կապուկ կար և ադամանդյա մանյակ, որից կապույտ, դեղին ու կարմիր կրակներ էին ցայտում այս ու այն կողմ։

Դունչիլը մի քայլ ետ գնաց, և նրա դեմքը գունատվեց։ Դահլիճը քարացավ։

— Տասնութ հազար դոլար և մանյակը՝ քառասուն հազար ոսկով,— հանդիսավորությամբ հայտարարեց արտիստը,— Սերգեյ Գերարդովիչը պահել էր Խարկով քաղաքում, իր սիրուհի Իդա Գերկուլանովնա Վորսի բնակարանում, որին մեր դիմաց տեսնելու հաճույքն ունենք և որը սիրալիր կերպով օգնեց հայտնաբերել այս անգին, բայց մասնավոր անձի ձեռքում անօգուտ գանձերը։ Խորին շնորհակալություն, Իդա Գերկուլանովնա։

Գեղեցկուհին ժպտաց՝ ատամները փայլեցնելով, և նրա խիտ արտևանունքները ցնցվեցին։

— Իսկ արժանապատվությամբ լի ձեր կերպարանքի տակ,— Դունչիլին դիմեց արտիստը,— թաքնված է մի անկշտում սարդ ու չտեսնված խաբեբա և սուտասան։ Մեկուկես ամիս բոլորի հոգին հանեցիք ձեր բութ համառությամբ։ Իսկ հիմա գնացեք տուն, և այն դժոխքը, որ ձեր կինը կսարքի ձեր գլխին, թող լինի ձեր պատիժը։

Դունչիլն օրորվեց, և թվում էր, թե ուզում է ցած գլորվել, բայց ինչ-որ մեկի կարեկից ձեռքերը բռնեցին նրան։ Այստեղ ցած ընկավ առջևի վարագույրը և ծածկեց բեմում եղածներին։

Մոլեգին ծափահարությունները ցնցեցին դահլիճն այն աստիճան, որ Նիկանոր Իվանովիչին թվաց, թե ջահերի վրա պար բռնեցին լույսերը։ Իսկ երբ վարագույրը վեր բարձրացավ, բեմի

վրա այլևս ոչ ոք չկար, միայնակ արտիստից բացի։ Ծափահարությունների երկրորդ համազարկը պոկեց նա դահլիճից, գլուխ տվեց ու սկսեց.

— Հանձին այս Դունչիլի, մեր ծրագրում ձեզ համար հանդես եկավ տիպական մի ավանակ։ Չէ որ երեկ բավականություն ունեցա ասելու, որ գաղտնի վալյուտա պահելը անիմաստ գործ է։ Ոչ ոք դա գործածել չի կարող և ոչ մի հանգամանքներում, հավատացնում եմ ձեզ։ Վերցնենք թեկուզ այդ Դունչիլին։ Փառավոր ռոճիկ է ստանում և ոչ մի բանի կարիք չունի։ Սքանչելի բնակարան ունի, կին և գեղեցկուհի սիրուհի։ Բայց չէ՞, փոխանակ սուսուփուս, հանգիստ, առանց որևէ անախորժության ապրելու իր համար, վալյուտան ու քարերը հանձնելով, այդ շահամոլ ապուշը այնուամենայնիվ հասավ նրան, որ մերկացվեց ի տես բոլորի, չհաշված, որ ընտանեկան շատ խոշոր անախորժություն ևս վաստակեց։ Եվ այսպես, ո՞վ է հանձնում։ Ցանկացող չկա՞։ Այդ դեպքում, մեր ծրագրի հաջորդ համարում դրամատիկ հայտնի տաղանդ, հատկապես հրավիրված դերասան Սավվա Պոտապովիչ Կուռոլեսովը հատվածներ կկարդա բանաստեղծ Պուշկինի «Ժլատ ասպետից»։

Խոստացված Կուռոլեսովը չհապաղեց հայտնվել բեմում՝ մարմնեղ ու մսեղ, սափրված տղամարդ էր, ֆրակով և ճերմակ փողկապով։

Առանց որևիցե նախաբանի, մռայլ արտահայտություն տվեց դեմքին, հոնքերը խոժոռեց և անբնական ձայնով, աչքերը գցած ոսկյա զանգակին, սկսեց.

— Ինչպես խելառ ջահելն է սպասում կրակ-տարփուհու հետ իր հանդիպելուն...

Եվ Կուռոլեսովն իր մասին ահագին վատ բաներ պատմեց։ Նիկանոր Իվանովիչը լսում էր, թե Կուռոլեսովն ինչպես խոստովանեց, որ մի դժբախտ այրի, ողբալով ծնկի էր եկել իր առաջ անձրևի տակ, բայց անզգա արտիստի գութը չշարժեց։ Մինչ իր երազը Նիկանոր Իվանովիչը բանաստեղծ Պուշկինի ստեղծագործությունները չգիտեր, բայց իրեն շատ լավ ճանաչում էր և օրական մի քանի անգամ այսպիսի բաներ, օրինակ, ասում էր. «Իսկ բնակարանի վարձը Պու՞շկինն է տալու» կամ «Սանդուղքի լամպն, ուրեմն, Պու՞շկինն է հանել», «Ուրեմն, նավթը Պու՞շկինը պիտի առնի»։

Այժմ, ծանոթանալով այդ ստեղծագործություններից մեկին, Նիկանոր Իվանովիչը տրտմեց, պատկերացրեց ծնկի եկած կնոջը որբերի հետ, անձրևի տակ, ու ակամա մտածեց. «Բայց ինչ պտուղն է այս Կուռոլեսովը, հա՞»։

Իսկ սա, հետզհետե ձայնը բարձրացնելով, շարունակում էր խոստովանել մեղքը և վերջնականապես խճճեց Նիկանոր Իվանովիչին, որովհետև հանկարծ սկսեց դիմել մեկին, որը բեմի վրա չէր ու ինքն իրեն պատասխանում էր այդ բացակայողի փոխարեն, ընդ որում մեկ «միապետ» էր կոչում իրեն, մեկ՝ «բարոն», մեկ՝ «հայր», մեկ՝ «որդի», մեկ «դուք»-ով էր դիմում, մեկ՝ «դու»-ով։

Նիկանոր Իվանովիչը միայն մի բան հասկացավ, որ չար մահով մեռավ արտիստը, բղավելով. «Բանալինե՞րը։ Բանալինե՞րն իմ», դրանից հետո հատակին ընկնելով, խռխռացնելով և զգուշորեն փողկապը պոկելով վզից։

Մեռնելուց հետո Կուռոլեսովը վեր կացավ, թափ տվեց ֆրակի տաբատի փոշին, գլուխ տվեց, կեղծ ժպտալով, և հատուկենտ ծափահարությունների ուղեկցությամբ հեռացավ։ Իսկ կոնֆերանսյեն այսպես ասաց.

— Ձեզ հետ միասին Սավվա Պոտապովիչի հրաշալի կատարմամբ լսեցինք «Ժլատ ասպետը»։ Այդ ասպետը հույս ուներ, որ կայտառ հավերժահարսեր կհավաքվեն իր շուրջը և հաճելի դեռ շատ բաներ կկատարվեն այդ ոգով։ Բայց, ինչպես տեսնում եք, նման բան չկատարվեց, ոչ մի հավերժահարս էլ վազ չտվեց նրա մոտ, մուսաներն էլ նրան տուրք չբերեցին, ոչ մի ապարանք էլ չկառուցեց, այլ ընդհակառակն, շատ վատ վերջացրեց, կաթվածից մեռավ-գնաց գրողի մոր ծոցը՝ վալյուտայով ու քարերով լի իր սնդուկի վրա պառկած։ Զգուշացնում եմ, որ ձեզ հետ նույնպես նման մի բան կկատարվի, եթե ոչ ավելի վատ, թե որ չհանձնեք վալյուտան։

Պուշկինի պոեզիա՞ն այդպիսի տպավորություն թողեց, թե կոնֆերանսյեի պրոզայիկ ճառը, բայց հանկարծ դահլիճից մի ամոթխած ձայն լսվեց.

— Ես վալյուտա եմ հանձնում։

— Շնորհ արեք բեմ բարձրանալ,— քաղաքավարությամբ հրավիրեց կոնֆերանսյեն՝ աչքերը հառած մութ դահլիճին։

Եվ բեմի վրա հայտնվեց կարճահասակ, խարտիշահեր մի

քաղաքացի, որը, դեմքից դատելով, շուրջ երեք շաբաթ չէր սափրվել։

— Ներեցեք, ձեր ազգանունն ի՞նչ է,— հարցրեց կոնֆերանսյեն։

— Կանավկին Նիկոլայ,— ամոթխած պատասխանեց բեմում հայտնվածը։

— Ա՜, շատ հաճելի է, քաղաքացի Կանավկին, հետո՞։

— Հանձնում եմ,— կամացուկ ասաց Կանավկինը։

— Ինչքա՞ն։

— Հազար դոլար և քսան հատ ոսկի տասանոց։

— Բրավո՜։ Ինչ ունեք-չունե՞ք։

Ծրագիրը վարողը հայացքը հառեց ուղիղ Կանավկինի աչքերին, և Նիկանոր Իվանովիչին նույնիսկ թվաց, որ այդ աչքերից ճառագայթներ արձակվեցին՝ ռենտգենյան ճառագայթների պես թափանցելով անցնելով Կանավկինի միջով։ Դահլիճում շունչները պահեցին։

— Հավատու՜մ եմ,— վերջապես բացականչեց արտիստն ու հանգցրեց իր հայացքը,— հավատու՜մ եմ։ Այս աչքերը չեն ստում։ Եվ քանի-քանի անգամ եմ ձեզ ասել, որ ձեր հիմնական սխալը մարդկային աչքերի նշանակությունը թերագնահատելու մեջ է։ Հասկացեք, որ լեզուն կարող է թաքցնել ճշմարտությունը, իսկ աչքերը՝ երբեք։ Ձեզ հանկարծակի հարց են տալիս, դուք նույնիսկ չեք ցնցվում, մի ակնթարթում տիրապետում եք ձեզ ու գիտեք, թե ինչ է պետք ասել ճշմարտությունը թաքցնելու համար, ու անչափ համոզիչ եք խոսում, ոչ մի կնճիռ չի խաղում ձեր դեմքի վրա, բայց, ավա՜ղ, հարցից անհանգստացած ճշմարտությունը հոգու խորքից մի պահ թռչում է աչքերի մեջ, և ամեն ինչ վերջացած է։ Դա նկատվում է, իսկ դուք՝ բռնվում։

Արտասանելով այդ խիստ համոզիչ ճառը՝ այն էլ՝ մեծ ոգեվորությամբ, արտիստը սիրալիր հարցրեց Կանավկինին.

— Իսկ որտե՞ղ են թաքցված։

— Մորաքրոջս՝ Պորոխովնիկովայի մոտ, Պրեչիստենկայում...

— Ա՜։ Դա... սպասեք... Կլավդիա Իլյինիչնայի մոտ, չէ՞։

— Այո։

— Այո, այո, այո, այո։ Փոքրիկ առանձնատուն է, չէ՞։ Դիմացն էլ մի փոքրիկ պարտե՞զ կա։ Ինչպես չէ, գիտե՜մ, գիտե՜մ։ Իսկ այնտեղ որտե՞ղ եք թաքցրել։

— Նկուղում։ էյնեմի տուփի մեջ...

Արտիստը ձեռքերն իրար զարկեց։

— Նման բան տեսած կայի՞ք,— գոչեց նա վշտացած։— Չէ որ այնտեղ կբորբոսնեն, կխոնավանան։ Մի՞թե կարելի է այսպիսի մարդկանց վայլուտա վստահել։ Հը՞։ Իսկակա՜ն երեխաներ են, աստված վկա։

Կանավկինն ինքն էլ հասկացավ, որ համը հանել է և մեղք գործել, ու կախեց իր փռչոտ գլուխը։

— Դրամը,— շարունակեց արտիստը,— պետք է պահվի պետբանկում, հատուկ չոր և լավ պահպանվող սենյակներում և ոչ ամենևին մորաքրոջ նկուղում, ուր, մասնավորապես, առնետները կարող են փչացնել։ Ճշմարիտ եմ ասում, Կանավկին, ամոթ է։ Չէ որ դուք հասուն մարդ եք։

Կանավկինն արդեն չգիտեր ուր չքվեր, և միայն մատով տրորում էր իր բաճկոնի լանջակը։

— Դե լավ,— փափկեց արտիստը,— ով հինը հիշի...— Ու հանկարծ անսպասելիորեն ավելացրեց.— Հա՛, ի դեպ. որ միանգամից լինի, զուր տեղը մեքենան չքշենք դեսուդեն... չէ՞ որ այդ մորաքույրն ինքն էլ ունի։ Հը՞։

Կանավկինը, որ չէր սպասում, թե գործը նման ընթացք կստանա, ցնցվեց, իսկ թատրոնում լռություն տիրեց։

— Է՛, Կանավկին,— մեղմ կշտամբանքով ասաց կոնֆերանսյեն,— ես էլ դեռ գովեցի նրան։ Համեցե՛ք, վերցրեց ու գործը փակեց հենց այնպես։ Հիմարություն է դա, Կանավկին։ Չէ որ հենց նոր ասացի աչքերի մասին։ Երևում է, չէ, որ մորաքույրն էլ ունի։ Հը՞, ինչու՞ եք զուր տեղը մեզ տանջում։

— Ունի՛,— կտրիճավարի բղավեց Կանավկինը։

— Բռավո՜,— բղավեց կոնֆերանսյեն։

— Բռավո՜,— սարսափելի ոռնաց դահլիճը։

Երբ հանդարտվեցին, կոնֆերանսյեն շնորհավորեց Կանավկինին, ձեռքը սեղմեց, առաջարկեց քաղաք՝ տուն տանել մեքենայով, կուլիսների ետևում գտնվող ինչ-որ մեկին հրամայեց նույն մեքենայով գնալ մորաքրոջ տուն և խնդրել նրան բարեհաճել կանացի թատրոն՝ ծրագիր դիտելու։

— Հա, մի բան էի ուզում հարցնել. մորաքույրը չի՞ ասել, թե իր ունեցածը որտեղ է պահում,— հարցրեց կոնֆերանսյեն՝ սիրալիրությամբ գլանակ և վառած լուցկի առաջարկելով Կանավ-

կինին։ Ծխախոտը վառելով, վերջինս մի տեսակ տրամագին քմծիծաղ տվեց։

— Հավատում եմ, հավատում,— հոգոց հանելով պատասխանեց արտիստը,— այդ պառավ ժլատը ազգականին չի, սատանային էլ չի տա, է, ինչ արած. փորձենք մարդկային զգացմունքներ արթնացնել նրա մեջ։ Գուցե դեռևս ոչ բոլոր լարերն են փտել նրա վաշխառուական հոգու մեջ։ Ամենայն հաջողություն, Կանավկին։

Եվ երջանիկ Կանավկինը գնաց։ Արտիստը հարցրեց, թե ուրիշ վալյուտա հանձնել ցանկացողներ չկա՞ն, բայց ի պատասխան լռություն տիրեց։

— Ցնդած մարդիկ եք, աստված վկա,— ուսերը թոթվելով ասաց արտիստը, և վարագույրը ծածկեց նրան։

Լամպերը հանգան, որոշ ժամանակ մութ էր, և խավարի մեջ նյարդային մի տենոր երգում էր հեռվից.

«Ոսկու սարեր կան այնտեղ, ու բոլորին ես եմ տեր»։

Հետո հեռուներից երկու անգամ ծափահարություններ լսվեցին։

— Կանացի թատրոնում ինչ-որ մի կին հանձնում է,— անսպասելի խոսեց Նիկանոր Իվանովիչի շիկամազ, մորուքավոր հարևանը և, հոգոց հանելով, ավելացրեց.— Է՜հ, թե սագերս չէի՛ն լինի։ Սիրելիս, ես կռվան սագեր ունեմ Լիանոզովոյում։ Վախենում եմ առանց ինձ սատկեն։ Կռվող թռչունը նուրբ արարած է, խնամք է պահանջում... Էհ, թե սագերս չէի՛ն լինի։ Պուշկինով բանով ինձ չես զարմացնի,— և նորից հոգոց հանեց։

Այստեղ դահլիճը վառ լուսավորվեց, և Նիկանոր Իվանովիչը երազում տեսավ, որ բոլոր դռներից դահլիճ լցվեցին սպիտակ գլխարկներով ու շերեփները ձեռքներին խոհարարներ։ Խոհարարի աշակերտները դահլիճ քարշ տվեցին սուպով լի մի գուռ և վրան կտրատած սև հաց շարած մի մեծ տեփուր։ Հանդիսականներն աշխուժացան։ Ժրաջան խոհարարները գնում գալիս էին թատերասերների միջով, ամանների մեջ սուպ էին լցնում և հաց բաժանում։

— Ճաշեք, տղերք,— բղավում էին խոհարարները,— ու վալյուտան հանձնեք։ Ինչի՞ համար եք զուր տեղը նստել այստեղ։ Այս շիփոթն ուտելու՞ բան է։ Կգնաք տուն, մի լավ կխմեք, կարգին կուտեք,հրաշալի՜։

— Օրինակի համար, դու, ինչի՞ ես նստել մնացել, հայրիկ,— անմիջականորեն Նիկանոր Իվանովիչին դիմեց մորեգույն վզով

գեր խոհարարը՝ նրան մեկնելով ամանը, ուր հեղուկի մեջ միայնակ լողում էր կաղամբի տերևը։

— Չկա՜։ Չկա՜։ Չունե՜մ,— սարսափելի ձայնով բղավեց Նիկանոր Իվանովիչը,— հասկանու՞մ ես, չկա։

— Չկա՞,— ահարկու բասով ոռնաց խոհարարը,— չկա՞,— կանացի քնքուշ ձայնով հարցրեց նա,— չկա, չկա,— հանգըստացնելով մրմռաց նա՝ դառնալով բուժակուհի Պրասկովյա Ֆյոդորովնան։

Վերջինս կամացուկ ցնցում էր քնի մեջ տնքացող Նիկանոր Իվանովիչի ուսը։ Այդ ժամանակ հալվեցին խոհարարները և փլվեց թատրոնը, վարագույրներով հանդերձ։ Նիկանոր Իվանովիչն արցունքների արանքից տեսավ հիվանդանոցի իր սենյակը և սպիտակ խալաթ հագած երկու հոգու, բայց ամենևին ոչ սանձարձակ խոհարարների, որոնք մարդկանց քիթն էին մտնում իրենց խորհուրդներով, այլ բժշկին և դարձյալ նույն Պրասկովյա Ֆյոդորովնային, որի ձեռքինն աման չէր, այլ ափսե՝ մառլյայով ծածկված, ներարկիչը վրան։

— Ախր սա ի՞նչ բան է,— դառնացած ասում էր Նիկանոր Իվանովիչը, քանի դեռ սրսկում էին նրան,— չունե՜մ, չկա՜։ Թող Պուշկինը վայլուտա հանձնի դրանց։ Չկա՜։

— Չկա, չկա,— հանգստացնում էր բարեգութ Պրասկովյա Ֆյոդորովնան,— թե որ չկա, ուրեմն չկա։

Սրսկումից հետո Նիկանոր Իվանովիչի վիճակը թեթևացավ, ու նա քնեց առանց որևիցե երազատեսության։

Բայց նրա բղավոցների պատճառով անհանգստությունը փոխանցվեց 120-րդ սենյակը, ուր արթնացավ հիվանդը և սկսեց իր գլուխը փնտրել, նաև 118-րդ սենյակ, ուր իրար անցավ անհայտ վարպետը և մատները ջարդջրդեց տրտմագին, լուսնին նայելով, հիշելով կյանքի դառնագին, վերջին աշնանային գիշերը, լույսի շերտը նկուղի դռան տակից և ծածանվող մազերը։

118-րդ սենյակից անհանգստությունը պատշգամբով անցավ Իվանին, և նա արթնացավ ու լաց եղավ։

Բայց բժիշկը շուտով հանգստացրեց վատառողջ ուղեղով բոլոր խռովվածներին, ու նրանք կամաց-կամաց քնեցին։ Բոլորից ուշ նիրհը պատեց Իվանին, երբ արդեն լուսանում էր գետի վրա։ Ամբողջ մարմինը ոռոգած դեղորայքից հետո անդորր իջավ նրա վրա՝ ալիքի պես ծածկելով։ Նրա մարմինը թեթևացավ, իսկ գլուխը պարուրեց նիրհի ջերմ քամին։ Նա քնեց, և վերջին բանը, որ

*տեց արթմնի, թռչունների մինչվաղորդյան ճվճվոցն էր անտառում։ Բայց նրանք շուտով լռեցին, ու երազ տեսավ նա, որ արևն արդեն իջնում էր Լերկ Լեռան վրա, և լեռն այդ օղակված էր կրկնակ շրջափակումով...*

ԳԼՈՒԽ XVI

## ՄԱՀԱՊԱՏԻԺԸ

*Արևն արդեն իջնում էր Լերկ Լեռան վրա, և լեռն այդ օղակված էր կրկնակ շրջափակումով։*

*Հեծելագունդը, որ կեսօրին մոտ կուսակալի ճամփան էր հատել, վարգասլաց հասավ քաղաքի Քեբրոնյան դարպասին։ Ճանապարհն արդեն բացված էր հեծելագնդի համար։ Կապադովկիական կոհորտայի հետևակները այսուայն կողմ էին քշել-սեղմել մարդկանց, ջորիների և ուղտերի խառնիխուռն խմբերը, և հեծելագունդը, արշավելով և փոշու ճերմակ ամպեր երկինք բարձրացնելով, ելավ խաչմերուկ, ուր երկու ճանապարհ էին միանում. Բեթղեհեմ տանող հարավայինը և Յափիե տանող հյուսիս-արևմտյանը։ Հեծելագունդը սլացավ հյուսիս-արևմտյան ճանապարհով։ Նույն այդ կապադովկիացիները ցրված էին ճամփեզրով և ժամանակին ճանապարհից դուրս էին քշում Երշալայիմ՝ տոնին հասնել շտապող բոլոր քարավանները։ Ուղղակի խոտի վրա բացարած իրենց ժամանակավոր շերտավոր վրանները թողած ուխտագնացների ամբոխները կանգնած էին կապադովկիացիների ետևում։ Մեկ կիլոմետրի չափ ճանապարհ կտրելով, հեծելագունդն անցավ Կայծակնազարկ լեգեոնի երկրորդ կոհորտայից և, մեկ կիլոմետր էլ անցնելով, առաջինը մոտեցավ Լերկ Լեռան ստորոտին։ Այստեղ նրանք իջան ձիերից։ Հրամանատարը հեծելագունդը դասակների բաժանեց, ու նրանք օղակեցին ոչ բարձր բլուրի ամբողջ ստորոտը, բարձրանալու միայն մեկ ազատ տեղ թողնելով Յափիեի ճանապարհի կողմից։*

*Որոշ ժամանակ անց հեծելագնդի ետևից բլրին մոտեցավ երկրորդ կոհորտան, մեկ շարք վեր բարձրացավ ու պսակաձև ղակեց սարը։*

*Ի վերջո, տեղ հասավ հարյուրյակը՝ Մարկոս Առնետորսի հրամանատարությամբ։ Հարյուրյակը գալիս էր, երկու շղթայով*

ձգված ճանապարհի եզրերով, իսկ այդ շղթաների մեջտեղով, գաղտնի պահակախմբի հսկողության տակ, սայլի մեջ բերում էին երեք դատապարտյալներին։ Նրանց վզերից սպիտակ տախտակներ էին կախված, որոնցից յուրաքանչյուրի վրա երկու լեզուներով՝ արամեերեն և հուներեն, գրված էր՝ «Ավազակ և խռովարար»։ Դատապարտյալների սայլից հետո ուրիշ սայլեր էին գալիս, բարձված նոր տաշված, խաչաձև կապված սյուներով, պարաններով, բահերով, դույլերով ու կացիններով։ Այդ սայլերի մեջ էին վեց դահիճներ։ Նրանցից հետո, հեծյալ գալիս էին հարյուրապետ Մարկոսը, Երշալայիմի տաճարային պահախմբի պետը և կնգուղավոր այն մարդը, ում հետ Պիղատոսը կարճատև խորհրդակցություն ունեցավ պալատի վարագուրված սենյակում։ Թափորն ավարտվում էր զինվորների շղթայով, իսկ դրանից հետո արդեն գալիս էին շուրջ երկու հազար հետաքրքրասերներ, որոնք չէին վախեցել դժոխային շոգից ու ցանկացել էին ներկա գտնվել հետաքրքիր տեսարանին։

Քաղաքի այդ հետաքրքրասերներին այժմ միացել էին հետաքրքրասեր ուխտագնացները, որոնց անարգել թողել էին հետևել թափորին։ Երթն ուղեկցող մունետիկների զիլձայն բղավոցների ուղեկցությամբ թափորը ձգվեց Լերկ Լեռն ի վեր։ Մունետիկները բղավում էին այն, ինչ Պիղատոսն էր բղավել կեսօրին մոտ։

Հեծելագունդը բոլորին թողեց մինչև երկրորդ շարք, իսկ երկրորդ հարյուրյակն ավելի վեր թողեց միայն նրանց, ովքեր առնչություն ունեին մահապատժի հետ, իսկ հետո արագ տեղաշարժերով ամբոխին ցրեց ամբողջ բլուրի եզրերով, այնպես որ ամբոխը հայտնվեց վերևից՝ հետևակ, ներքևից՝ հեծելակ շրջափակումների արանքում։ Հիմա նրանք կարող էին մահապատիժը տեսնել հետևակների ոչ խիտ շղթայի ետևից։

Եվ այսպես, թափորը սար բարձրանալուց առավել քան երեք ժամ էր անցել, և արևն արդեն իջնում էր Լերկ Լեռան վրա, սակայն շոգը դեռևս անտանելի էր, և երկու օղակումների զինվորները տառապում էին շոգից, տանջվում ձանձրույթից ու սրտանց նզովում երեք ավազակներին, անկեղծորեն շուտափույթ մահ ցանկանալով նրանց։

Բլրի ստորոտում, ազատ թողած ելքի մոտ գտնվող հեծելագնդի փոքրամարմին հրամանատարը՝ ճակատը թաց և քրտինքից մեջքի վրա ձգած սպիտակ շալիկով, սեպ-սեպ մոտենում

էր առաջին զառ... կաշվե գույնի, բուռ-բուռ ջուր էր մեկնում, խմում ու թրջում շուրթերը։ Դրանից հետո փոքր-ինչ թեթևանալով, հեռանում էր ու կրկին սկսում չափչփել գետի պաղաթ ատող փոշոտ ճանապարհը՝ առաջ ու ետ։ Նրա երկար թուրը խփվում էր կաշվե փոկապատ, ճարմանդ կոշիկներին։ Հրամանատարը կամենում էր իր հեծյալներին դիմացկունության օրինակ ցույց տալ, բայց զինվորներին խղճալով, թույլ տվեց գետնի մեջ խրած նիզակներից բուրգեր սարքել և սպիտակ թիկնոցները դրանց վրա գցել։ Անխնա արևից այդ քողարկինների տակ էլ պատսպարվեցին սփրիացիները։ Դույլերն արագ-արագ դատարկվում էին, և տարբեր դասակների հեծելակներ հերթով գնում էին սարի տակ ընկած ձորակը՝ ջրի, ուր թթի վտիտ ծառերի նոսր ստվերի տակ դժոխային այդ շոգի մեջ շունչն էր փչում մի պղտոր առվակ։ Հենց այդտեղ էլ, անկայուն ստվերի տակ հարմարվելով, կանգնած ձանձրանում էին խաղաղված ձիերին՝ պահող ձիապանները։

Զինվորների տանջանքն ու նրանց հիշոցներն ավազակների հասցեին հասկանալի էին։ Կուսակալի երկյուղը խառնակությունների առումով, որ կարող էին տեղի ունենալ մահապատժի ժամանակ իր համար ատելի այդ Երշալայիմ քաղաքում, բարեբախտաբար, չարդարացավ։ Եվ երբ մահապատժի չորրորդ ժամը ծայր առավ, երկու շրջափակումների՝ վերևի հետևակի և ստորոտի հեծելազորի արանքում, բոլոր սպասումներին հակառակ, ոչ մի մարդ չմնաց։ Արևն այրեց ամբոխն ու ետ քշեց Երշալայիմ։ Հռոմեական երկու հարյուրյակների շղթայից այն կողմ հայտնվեցին չգիտես ինչու բլրի գագաթն ընկած երկու անտեր շուն միայն։ Բայց շոգը նրանց էլ էր թուլացրել, ու պառկեցին շները, լեզուները հանած, ծանր շնչելով և ոչ մի ուշադրություն չդարձնելով կանաչալանջ մողեսների՝ միակ արարածների վրա, որոնք չէին վախենում արևից և վազվզում էին շիկացած քարերի և գետնատարած, խոշոր փշերով ինչ-որ բույսերի արանքում։

Ոչ ոք փորձ չարեց փախցնել դատապարտյալներին ոչ զորքով հեղեղված բուն Երշալայիմում, ոչ այստեղ՝ շրջափակված բլրի վրա, և ամբոխը քաղաք վերադարձավ, քանի որ, իրոք. հետաքրքրական և ոչ մի բան չկար այդ մահապատժի մեջ, իսկ քաղաքում երեկոյան սկսվող զատկի մեծ տոնի նախապատրաստություններն էին ընթանում արդեն։

Երկրորդ շարքի հռոմեական հետևակը հեծելակներից ավելի շատ էր տառապում։ Հարյուրապետ Առնետորսը միակ բանը

թույլատրեց զինվորներին՝ հանել սաղավարտները և գլուխները ծածկել ջրով թրջած սպիտակ փաթաթաններով, սակայն կանգնած թողեց զինվորներին, նիզակները բռնած։ Ինքն էլ նույնանման, բայց ոչ թրջած, այլ չոր փաթաթանը գլխին, ետուառաջ էր քայլում դահիճների խմբից ոչ հեռու, չհանելով նույնիսկ շապկին վրադիր առյուծի արծաթյա մռութները, չհանելով կաշվե թրակալը, թուրը և դաշույնը։ Արևն ուղղակի մխվել էր հարյուրապետի վրա, ոչ մի վնաս չպատճառելով նրան, ու նայել չէր լինում առյուծի մռութներին, արևի տակ ասես հալչող արծաթի կուրացուցիչ փայլը աչք էր հոշոտում։

Առնետորսի այլանդակված դեմքը ոչ հոգնություն էր արտահայտում, ոչ դժգոհություն, ու թվում էր, թե հսկա հարյուրապետն ի զորու է այդպես քայլել ամբողջ օրը, ամբողջ գիշերն ու էլի մեկ օր,մի խոսքով, այնքան, ինչքան հարկ կլինի։ Ճիշտ այդպես քայլել, ձեռքերը դրած պղնձյա ճարմանդներով ծանր գոտու վրա, հենց այդպես խստահայաց նայելով մեկ սյուներին ու մահապարտներին, մեկ շղթա կազմած զինվորներին, հենց այդպես անտարբեր, ճտքավոր բրդոտ կոշիկի քթով խփելով ոտքի տակ ընկած, ժամանակից ճերմակած մարդկային ոսկորներին ու մանր քարերին։

Կնգուղավոր այն մարդը տեղավորվել էր գերաններից ոչ հեռու, եռոտանու վրա, ու նստած էր հանդարտ անշարժության մեջ, մեկ-մեկ, ի դեպ, ձանձրույթից ավազը փորփրելով ձեռքի ճյուղով։

Այն, որ ասվեց, թե լեգեոնների շղթայից այն կողմ ոչ մի մարդ չկար, այնքան էլ ճիշտ չէ։ Մի մարդ կար, բայց ուղղակի ոչ բոլորն էին տեսնում նրան։ Նա տեղավորվել էր ոչ այն կողմում, ուր ազատ էր սարը տանող ճանապարհը և որտեղից ամենահարմարն էր հետևել մահապատժին, այլ հյուսիսային կողմում, ուր զառիթափ չէր սարը ու մատչելի, բայց անհարթ էր, ուր փոսեր և խանդակներ կային, ուր ծերպի վրա, երկնքից նզովված անջուր հողին կառչած, գաճաճ ու տկար մի թզենի էր փորձում ապրել։

Աննշան ստվեր անգամ չունեցող այդ ծառի տակ էր տեղավորվել մահապատժի միակ հանդիսականը և ոչ մասնակիցը, քարի վրա նստած էր ամենասկզբից, այսինքն արդեն ավելի քան երեք ժամ։ Այո, մահապատիժը տեսնելու համար նա ընտրել էր ոչ լավագույն, այլ վատագույն դիրքը։ Բայց և այնպես այդ-

տեղից էլ էին երևում սյուները, շղթայի հետևից երևում էին նաև պսպղացող երկու կնոջ Հարությունյանի կրծքին, իսկ դա, ըստ երևույթին, լինելու բավական էր մի մարդու համար, որն ակնհայտորեն ցանկանում էր ամեն կերպ նկատելի մնալ ու խանգարող մեկը չունենալ։

Բայց չորս ժամ առաջ, մահապատիժը սկսելիս, այդ մարդն իրեն ամենևին այդպես չէր պահում ու հեշտորեն կարող էր նկատվել, որից էլ, հավանորեն, հիմա փորձում էր պահվածքը և մեկուսացել։

Այն ժամանակ, հենց որ թափորը, շղթան ևտևում թողած, հասավ սարի գագաթը, նա հայտնվեց առաջին անգամ, այն էլ որպես հատատտապես ուշացած մեկը։ Նա ծանր էր շնչում ու ոչ թե քայլում, այլ վազում էր սարն ի վեր, հրմշտվում էր ու տեսնելով, որ իր առաջ, ինչպես և մնացած բոլորի առաջ, փակվել է շղթան, ձևացնելով, թե չի հասկանում զայրացին բղավոցները, միամիտ մի փորձ արեց զինվորների արանքից ճողոպրելով հասնել անմիջապես մահապատժի տեղը, ուր արդեն սայլերից իջեցնում էին դատապարտյալներին։ Դրա համար նիզակի բութ ծայրով մի ծանր հարված ստացավ կրծքին ու ետ շպրտվեց զինվորներից, բղավելով, բայց ոչ ցավից, այլ հուսալքությունից։ Իրեն հարվածող լեգեոներին նա չափեց մշուշված և ամեն ինչի հանդեպ կատարյալ անտարբեր հայացքով, որպես ֆիզիկական ցավ չզգացող մի մարդ։

Հազալով ու հևասպառ, կուրծքը բռնած, նա վազեց սարի չորս կողմը, ջանալով հյուսիսային կողմում որևիցե ճեղք գտնել, որտեղից կարելի կլիներ անցնել։ Բայց արդեն ուշ էր։ Օղակը գոցվել էր։ Եվ մարդը, վշտից այլայլված դեմքով, ստիպված հրաժարվեց սայլերին հասնելու իր փորձերից, որոնց վրայից արդեն իջեցնում էին սյուները։ Այդ փորձերը ոչինչ չէին տա, բացի նրանից, որ կբռնվեր, իսկ այդ օրը բռնված լինելն ամենևին չէր մտնում նրա ծրագրի մեջ։

Եվ ահա նա հեռացավ դեպի ձորակը, ուր ավելի հանգիստ էր և ոչ ոք չէր խանգարում նրան։

Հիմա, քարին նստած, այդ սևամորուս, արևից ու անքնությունից թարախակալած աչքերով մարդը թախծում էր։ Մերթ հոգոց էր հանում՝ արձակելով թափառումներից քրքրված, երկնագույնից կեղտաճմուռ-մոխրագույն դարձած թալեթն ու մերկացնելով նիզակի հարվածից ճմլված կուրծքը, որի վրայից

Լ՛ճառը քրքինը էր ծորում, մերթ անասելի տանջահար աչքե-րը երկինք էր հառում՝ հետևելով երեք գիշանգղներին, որոնք վա-ղուց արդեն մեծ շրջաններով պտույտ էին տալիս վերևներում, շու-տափույթ խրախճանքի կանխավայելումով, մերթ հուսահատ հա-յացքն էր մխում գետին հողին ու տեսնում շան կիսաքայքայված ցանկն ու չորս կողմը վազվզող մողեսներին։

Մարդու տառապանքներն այնքան մեծ էին, որ ժամանակ առ ժամանակ խոսում էր ինքն իր հետ։

— Ո՛, հիմար եմ ես,— քրթմնջում էր նա՝ հոգու կսկիծով ճռմվելով քարի վրա և թուխ կուրծքը ճանկռոտելով եղունգնե-րով,— հիմա՛ր, անխելք կի՛ն, վախկոտ։ Լեշ եմ ես, և ոչ թե մարդ։

Նա լռում էր, գլուխը կախում, ապա զաղջ ջուր խմելով փայտա-յա տափաշշից, վերստին կենդանանում էր ու ձեռքը մեկ զգում կրծքի վրա, թալլեթի տակ պահած դանակին, մեկ՝ դիմացը, քա-րի վրա, գրչածողիկի և մելանի սրվակի կողքը դրված մագա-ղաթի կտորին։

Այդ մագաղաթի վրա արդեն գրառումներ կային.

«Թռչում են րոպեները, և ես՝ Ղևի Մատթեոս, Լերկ Լեռան վրա եմ, իսկ մահը չկա ու չկա»։

Ապա՝

«Արևն իջնում է, իսկ մահը չկա»։

Հիմա Ղևի Մատթեոսը անհուսորեն այսպես գրեց սուր գրչա-ծողիկով.

«Աստվա՛ծ։ Ինչու՞ ես զայրանում նրա վրա։ Մա՛հ տուր նրան»։

Գրելուց հետո անարցունք հեծկլտաց ու եղունգներով կրկին պլոկեց կրծքի կաշին։

Ղևիի հուսալքության պատճառն այն սարսափելի ձախորդու-թյունն էր, որ բաժին էր ընկել Յեշուային և իրեն, բացի դրա-նից, ահավոր այն սխալը, որ Ղևին էր թույլ տվել, իր կարծի-քով։ Նրանից չէ, անցյալ օրը ցերեկով Յեշուան ու Ղևին գտնվում էին Երշալայիմին մերձակա Բեթանիայում, ուր հյուր էին գնա-ցել մի բանջարանոցատիրոջ, որին չափազանց դուր էին գա-լիս Յեշուայի քարոզները։ Մինչև կեսօր հյուրերն աշխատեցին բանջարանոցում, տանտիրոջն օգնելով, իսկ Երշալայիմ վերա-դառնալ էին պատրաստվում երեկոյան զովով։ Բայց Յեշուան, չգիտես ինչու, շտապեց, ասաց, որ քաղաքում անհետաձգելի գործ ունի և կեսօրին մոտ մենակ գնաց։ Ահա՛, հենց դա էլ Ղևի

Մատթեոսի առաջին սերտն էր։ Ինչո՞ւ, ինչո՞ւ մենակ թողեց նրան։

Երեկոյան Մատթեոսին չվիճակվեց Երշալայիմ գալ։ Անսպասելի ու պարզուկե մի հիվանդություն գետնեց նրան։ Դողացրեց, մարմինը ջերմով պատեց, սկսեց ատամներն իրար զարկել և րոպեն մեկ ջուր ուզել։ Ոչ մի տեղ գնալ չէր կարող։ Բանջարանոցատիրոջ մարագում, տապճակի վրա ընկավ ու մնաց այդպես մինչև ուրբաթ լուսաբաց, երբ հիվանդությունը նույնքան անսպասելի, որքան սկսել էր, թողեց նրան։ Թեև դեռ թույլ էր ու ոտքերը դողդողում էին, աղետի կանխազգացումից տանջվելով՝ նա հրաժեշտ տվեց տանտիրոջը և ուղևորվեց Երշալայիմ։ Այստեղ իմացավ, որ կանխազգացումը չի խաբել իրեն։ Աղետը կատարվել էր։ Ղևին ամբոխի մեջ էր ու լսեց, ինչպես կուսակալը հայտարարեց դատավճիռը։

Երբ դատապարտյալներին սարն էին տանում, Ղևի Մատթեոսը վազում էր շղթայի կողքով, հետաքրքրասերների ամբոխի մեջ, ջանալով աննկատելիորեն որևէ կերպ Յեշուային իմաց տալ թեկուզ այն, որ ինքը՝ Ղևին, այստեղ է, նրա հետ, որ մահ տանող ճանապարհին չի լքել նրան և որ աղոթում է, որպեսզի Յեշուայի մահը հնարավորին չափ շուտ վրա հասնի։ Սակայն Յեշուան, որ նայում էր հեռուները, այնտեղ, ուր տանում էին իրեն, իհարկե, չտեսավ Ղևիին։

Եվ ահա, երբ թափորը կես վերստի չափ ճանապարհ էր անցել, Մատթեոսը, որին հրմշտում էր ամբոխն ուղղակի շղթայի մոտ, պարզ ու հանճարեղ մի միտք հղացավ, և տեղնուտեղը, իր տաքարյունությանը համապատասխան, անեծքներ տեղաց ինքն իր վրա, որ ավելի շուտ չէր անցել դա մտքով։ Զինվորները գընում էին ոչ խիտ շղթա կազմած։ Նրանց արանքներում տեղեր կային։ Մեծ ճարպկության և շատ ստույգ հաշվարկի դեպքում կարելի էր կռանալով խցկվել երկու լեգեոներների արանքից, մի կերպ հասնել սայլին ու ցատկել վրան։ Այդ ժամանակ Յեշուան կփրկվեր տանջանքներից։

Մեկ ակնթարթը բավական էր դանակով Յեշուայի մեջքին հարվածելու համար, բղավելով «Յեշուա՜, ես փրկու՜մ եմ քեզ ու գալիս քեզ հետ։ Ես՛ եմ, Մատթեոսը, քո հավատարիմ և միակ աշակերտը»։

Ու եթե աստված ևս մեկ ազատ ակնթարթ շնորհեր, կարելի կլիներ դանակն իր կուրծքն էլ խրել՝ խուսափելով սյան վրա

տանջամահ լինելուց։ Ասենք, վերջինը քիչ էր անհանգստացնում Ղևիին՝ նախկին մաքսավորին։ Նրա համար մեկ էր, թե ինչպես կմեռնի։ Միայն մի բան էր ուզում, որ կյանքում նվազագույն չարիք գործած Յեշուան ազատվի չարչարանքներից։

Ծրագիրը շատ լավն էր, բայց բանն այն էր, որ Ղևին դանակ չուներ մոտը։ Մետաղադրամ իսկ չուներ։

Ինքն իր վրա կատաղած, նա դուրս պրծավ ամբոխից ու ետ վազեց քաղաք։ Նրա կրակ բռնած գլխում տենդագին մի միտք էր հածում միայն, թե ինչպես հենց հիմա, ինչ եղանակով ուզում է լինի, մի դանակ գտնի քաղաքում և ետ հասնի թափորին։

Քաղաք ներծծվող քարավանների արանքներով վազելով հասավ քաղաքի դարպասին ու իր ձախ կողմում տեսավ կրպակի բաց դուռը, ուր հաց էին վաճառում։ Շիկացած ճանապարհով վազելուց հետո ծանր շնչելով, Ղևին տիրապետեց իրեն, շատ հանգիստ ու լուրջ կրպակ մտավ, ողջունեց վաճառասեղանի մոտ կանգնած տիրուհուն, խնդրեց դարակի վրայից իջեցնել վերևի բոքոնը, որ հայտնի չէ, թե ինչու, բոլորից շատ էր հավանել, և երբ կինը շրջվեց, վաճառասեղանի վրայից լուռ ու արագ վերցրեց այն, որից լավը չէր կարող լինել՝ ածելու պես սրած հացի երկար դանակը, և իսկույն դուրս պրծավ կրպակից։ Մի քանի րոպե անց դարձյալ Յափիե տանող ճանապարհի վրա էր։ Բայց թափորն արդեն չէր երևում։ Նա վազեց։ Երբեմն ստիպված էր լինում ուղղակի բերանքսիվայր փռվել փոշու մեջ և անշարժ պառկել՝ շունչը տեղը բերելու համար։ Եվ այդպես պառկում էր, զարմացնելով ջորիներով ու ոտքով Երշալայիմ գնացող մարդկանց։ Պառկում էր, լսելով, թե ինչպես է բաբախում սիրտը, ոչ միայն կրծքի տակ, այլ նաև գլխի ու ականջների մեջ։ Փոքր-ինչ շունչ առնելով, վեր էր թռչում ու շարունակում վազել, հետզհետե ավելի ու ավելի դանդաղ։ Երբ վերջապես տեսավ հեռվում փոշի արձակող երկարապոչ թափորը, վերջինն արդեն սարի ստորոտին էր։

— Օ՜, աստված...— տնքաց Ղևին, հասկանալով, որ ուշանում է։ Եվ ուշացավ։

Երբ ավարտվեց մահապատժի չորրորդ ժամը, Ղևիի տանջանքը գագաթնակետին հասավ և կատաղություն իջավ նրա վրա։ Վեր կենալով քարի վրայից, նա գետին շպրտեց, ինչպես հիմա էր մտածում, զուր տեղը գողացած դանակը, ոտքով տրորեց

տափաշիշը՝ ջրից փրկված իրեն, գլխից պոկեց գդակը, քաշեց իր ցանցառ մազերից ու սկսեց նզովել իրեն։

Անիծում էր ինքն իրեն, անիմաստ բառեր բղավելով, մռնչում էր ու թքոտում, անարգում հորն ու մորը, որ նման հիմար են լույս աշխարհ բերել։

Տեսնելով, որ նզովքներն ու լուտանքը չեն ազդում և դրանից այրող արևի տակ ոչինչ չի փոխվում, նա սեղմեց չորացած բռունցքները, բարձրացրեց դեպի երկինք, դեպի արևը, որը կամաց-կամաց իջնում էր, ստվերները երկարացնելով ու հեռանալով՝ Միջերկրական ծովն ընկնելու համար, և անհապաղ հրաշք պահանջեց աստծուց։ Նա պահանջում էր, որ աստված իսկույն նեթ մահ ուղարկի Յեշուային։

Բացելով աչքերը, նա համոզվեց, որ բլրի վրա ամեն ինչ անփոփոխ է, բացի նրանից, որ հարյուրապետի կրծքին բոցավառվող կետերը խամրել են։ Արևը ճառագայթներն ուղղել էր մահապատժի ենթարկվողների մեջքերին, որոնք դեմքով նայում էին Երշալայիմին։ Այդ ժամանակ Ղևին բղավեց.

— Նզովում եմ քեզ, աստվա՛ծ։

Խռպոտած ձայնով նա բղավում էր, որ համոզվել է աստծու անարդարության մեջ և այլևս մտադիր չէ նրան հավատալ։

— Դու խու՛լ ես, — մռնչում էր Ղևին,— եթե խուլ չլինեիր, կլսեիր ինձ և տեղնուտեղը կսպանեիր նրան։

Աչքերը կկոցած՝ Ղևին սպասում էր, որ հիմա կրակ կթափվի երկնքից ու կմոխրացնի իրեն։ Նման բան չեղավ, և, կոպերը չբացելով, Ղևին շարունակում էր խայթող ու վիրավորական խոսքեր հղել առ երկինք։ Նա աղաղակում էր իր կատարյալ հիասթափության և այն մասին, որ գոյություն ունեն այլ աստվածներ ու կրոններ։ Այո, մեկ ուրիշ աստված թույլ չէր տա, երբեք թույլ չէր տա, որ Յեշուայի նման մարդը արևախանձ լինեեր սյան վրա։

— Ես սխալվե՛լ եմ,— բղավում էր իսպառ խռպոտած Ղևին, —դու չարիքի աստված ես։ Թե՞ աչքերդ լրիվ ծածկել է տաճարի բուրվառներից ելնող ծուխը, իսկ ականջներդ դադարել են քահանաների շեփորային ձայներից բացի ուրիշ որևէ բան լսելուց։ Դու ամենազոր աստված չես։ Դու սև աստված ես։ Նզովու՛մ եմ քեզ, ավազակների աստված, նրանց հովանավոր ու հոգի։

Այստեղ ինչ-որ բան փչեց Նախկին մաքսավորի դեմքին, ինչ-որ բան խշխշաց նրա ոտքերի տակ։ Մի անգամ էլ փչեց, և այդ ժամանակ, աչքերը բացելով, Ղևին տեսավ, որ իր նզովքների ազդեցության ներքո, թե որևիցե այլ պատճառներով, աշխարհում ամեն բան փոխվել է։ Արևն անհետացել էր առանց հասնելու ծովին, ուր սուզվում էր ամեն երեկո։ Արևը կլանած՝ արևմուտքից երկինքն ի վեր ելնում էր ահեղատես ու անկասկած ամպրոպաբեր մի ամպ։ Եզրերն արդեն ճերմակ փրփուր էին բռնել, ծխի պես սև փորը դեղինն էր թափանցում։ Ամպը թնդում էր կամաց, և ժամանակ առ ժամանակ նրանից կրակե թելեր էին թափվում։ Յափիեի ճանապարհով, Գիոնյան աղքատիկ հովտի վրայով, հանկարծակի բարձրացած քամուց տեղահան արված ուխտագնացների վրանների վրայով փոշու սյուներ էին թռչում։ Ղևին լռեց, ջանալով ըմբռնել, թե հիմա Երշալայիմի վրա պարպվող ամպրոպը որևիցե փոփոխություն կբերի՞ տարաբախտ Յեշուայի ճակատագրում։ Եվ անմիջապես, նայելով ամպը պատառոտող կրակե թելերին, սկսեց խնդրել, որ կայծակը զարկի Յեշուայի սյանը։ Զղջմամբ նայելով մաքուր երկնքին, որը դեռ չէր կլանել ամպը և որտեղ գիշանգղները թևին էին տալիս՝ ամպրոպից փախչելու համար, Ղևին մտածեց, որ խենթի պես շտապեց ինքը, նզովքներ հղելով։ Աստված հիմա չի լսի իրեն։

Հայացքը դարձնելով սարի ստորոտին, Ղևին աչքերը մեխեց այն տեղին, ուր ցրված կանգնած էր հեծելագունդը, ու տեսավ, որ այնտեղ զգալի փոփոխություններ են կատարվել։ Վերևից Ղևիին հաջողվեց լավ տեսնել, թե ինչպես իրար անցան զինվորները, նիզակները հանելով գետնից, ինչպես թիկնոցները մեջքներին գցեցին, ինչպես ձիապանները, սևաթույր ձիերի սանձերից բռնած, վազեվազ մոտեցան ճանապարհին։ Գունդը տեղափոխվում էր՝ դա պարզ էր։ Ձեռքով պաշտպանվելով դեմքին խփող փոշուց, թքոտելով, Ղևին աշխատում էր հասկանալ. ի՞նչ է նշանակում դա, որ հեծելազորը պատրաստվում է հեռանալ։ Հայացքը վեր բարձրացրեց ու տեսավ զինվորական բոսորագույն քղամիդով, դեպի մահապատժի հրապարակը բարձրացող մի կերպարանք։ Եվ այստեղ բերկրալի վախճանի կանխազգացումից նախկին մաքսավորի սիրտը սառույց կտրեց։

Ավազակների տառապանքի հինգերորդ ժամին սար բարձրացողը կոհորտայի հրամանատարն էր, որ Երշալայիմից էր սլացել եկել հանձնակատարի ուղեկցությամբ։ Առնետորսի նշանով զին-

վորնոցի շղթան բաց։ Եվ հարյուրապետը պատվի առավ տրիբունին։ Վերջինս, Անենասին մի կողմ տանելով, ինչ-որ բան շշնջաց նրա ականջին։ Հարյուրապետը երկրորդ անգամ պատվի առավ ու քայլեց դեպի դահիճների խումբը, որոնք նստած էին սյուների մոտ, քարերի վրա։ Իսկ տրիբունը քայլերն ուղղեց դեպի նա, ով եռոտանու վրա էր նստած, և նստածը քաղաքավարությամբ ոտքի ելավ՝ տրիբունին ընդառաջ։ Նրան նա ցածրաձայն ինչ-որ բան ասաց տրիբունը, և երկուսով մոտեցան սյուներին։ Նրանց միացավ նաև տաճարային պահախմբի պետը։

Անենասը, խորշանքով նայելով սյուների տակ, գետնի վրա թափթփված քրջերին, որոնք քիչ առաջ հանցագործների հագուստներն էին և որոնցից հրաժարվել էին դահիճները, մի կողմ կանչեց նրանցից երկուսին ու հրամայեց.

— Իմ ետևի՛ց։

Մոտակա սյան վրայից խռպոտ ու անիմաստ երգ էր լսվում։ Սյունից կախված Հեստասը մահապատժի երրորդ ժամին խելագարվել էր ճանճերից ու արևից և հիմա ինչ-որ բան էր երգում խաղողի մասին, բայց չալմայով ծածկված գլուխը հազվադեպ շարժում էր համենայն դեպս, և այդ ժամանակ ճանճերը ծուլորեն բարձրանում էին նրա դեմքի վրայից ու դարձյալ ետ նստում։

Երկրորդ սյան վրա Դիսմասը մյուս երկուսից ավելի շատ էր տառապում, որովհետև անզգայությունը չէր պատում նրան, և նա գլուխը շարժում էր հաճախակի ու համաչափ, մեկ՝ աջ, մեկ՝ ձախ, ջանալով ականջով խփել ուսին։

Ցեշուան մյուս երկուսից ավելի երջանիկ էր։ Առաջին իսկ ժամին մի քանի անգամ ուշագնաց եղավ, ապա անզգայացավ՝ կախելով կիսարձակ չալմայով գլուխը։ Այդ պատճառով ճանճերն ու տզերը ծածկել էին նրան ամբողջովին, այնպես որ դեմքն անհետացել էր սև, խլրտացող զանգվածի տակ։ Աճուկների, փորի վրա, կռնատակերին նստած էին տռուզ տիզեր ու ծծում էին դեղին մերկացած մարմինը։

Ենթարկվելով կնգուղավոր մարդու ձեռքի շարժումին, դահիճներից մեկը վերցրեց նիզակը, իսկ մյուսը սյանը մոտեցրեց դույլ և սպունգ։ Դահիճներից առաջինը նիզակը բարձրացրեց ու խփեց սյանը խաչաձև ամրացված ձողի վրա ձգված ու պարաններով կապկպված Ցեշուայի մեկ այս, մեկ մյուս ձեռքին։ Դուրս պրծած կողերով մարմինը ցնցվեց։ Դահիճը նիզակի ծայրը քսեց փորին։ Այդ ժամանակ Ցեշուան բարձրացրեց գլու-

խը, և ճանճերը բզզոցով ետ թռան, ու բացվեց դամվածի դեմքը՝ խայթոցներից ուռած, պղտորված աչքերով, անճանաչելի դեմքը։

Կոպերն իրարից պոկելով, Հա-Նոցրին ցած նայեց։ Սովորաբար հստակ նրա աչքերը հիմա մշուշված էին։

— Հա-Նոցրի,— ասաց դահիճը։

Հա-Նոցրին շարժեց ուռած շրթունքները և պատասխանեց խռպոտած ավազակային ձայնով.

— Ի՞նչ ես ուզում։ Ինչու՞ ես մոտեցել ինձ։

— Խմի՛ր,— ասաց դահիճը, և նիզակի ծայրին խրած թրջած սպունգը բարձրացավ Յեշուայի շրթունքների մոտ։ Բերկրանք ցոլաց նրա աչքերում, նա կպավ սպունգին ու ագահորեն սկսեց ներծծել հեղուկը։ Հարևան սյան վրայից լսվեց Դիսմասի ձայնը.

— Անարդարությու՛ն է։ Ես նույնպիսի ավազակ եմ, ինչպես նա։

Դիսմասը լարվեց, բայց շարժվել չկարողացավ, նրա ձեռքերը երեք տեղից պարանի օղակներով կապված էին ձողից։ Նա ներս քաշեց փորը, եղունգներով կառչեց ձողի ծայրերից, գլուխը շրջած պահեց Յեշուայի գերանի կողմը, չարություն էր կրակվում Դիսմասի աչքերի մեջ։

Փոշու ամպը ծածկեց հրապարակը, սաստիկ մթնեց։ Երբ փոշին անցավ, հարյուրապետը բղավեց։

— Երկրորդ սյան վրա չխոսե՛լ։

Դիսմասը լռեց։ Յեշուան պոկվեց սպունգից և, աշխատելով, որ ձայնը սիրալիր ու համոզիչ հնչի, բայց չկարողանալով, խռպոտ ձայնով խնդրեց դահիճին.

— Տուր, թող նա էլ խմի։

Ավելի ու ավելի էր մթնում։ Ամպն արդեն բռնել էր երկնքի կեսը, գնում էր Երշալայիմի վրա, ճերմակ, փրփրացող ամպերը սլանում էին սև հեղուկով ու կրակով լի ամպի առջևից։ Փայլատակեց ու հարվածեց ճիշտ գագաթից վեր։ Դահիճը սպունգը հանեց նիզակի վրայից։

— Փառաբանի՛ր վեհանձն իգեմոնին,— հանդիսավորությամբ շշնջաց նա և թեթևակի ծակեց Յեշուայի սիրտը։ Յեշուան ցնցվեց, շշնջաց.

— Իգեմոնը...

Արյունը վազեց փորի վրայով, ներքևի ծնոտը ջղաձգորեն ցնցվեց, և նրա գլուխը կախ ընկավ։

Ամպրոպի երկրորդ հարվածին դահիճն արդեն ջուր էր տալիս Դիմասին և միննույն խոսքերով.

— Փառաբանի՛ր իգեմոնին,— նրան էլ սպանեց։

Խեղքը թացրած Հիստասը վախեցած բղավեց, հենց որ դահիճը հայտնվեց նրա մոտ, բայց երբ սպունգը դիպավ շրթունքներին, ինչ-որ բան մռլտաց և ատամները խրեց սպունգի մեջ։ Մի քանի վայրկյան անց նրա մարմինն էլ կախ ընկավ, որքան թույլ էին տալիս պարանները։

Կնգուղավոր մարդը քայլում էր դահիճի և հարյուրապետի ետևից, նրան էր հետևում տաճարի պահախմբի պետը։ Կանգ առնելով առաջին սյան մոտ, կնգուղավոր մարդն ուշադրությամբ զննեց արյունաթաթախ Յեշուային, սպիտակ ձեռքով դիպավ ոտնաթաթին և ասաց ուղեկիցներին.

— Մեռած է։

Նույնը կրկնվեց մյուս երկու սյուների մոտ։

Դրանից հետո տրիբունը նշան արեց հարյուրապետին և, շրջվելով, սկսեց իջնել գագաթից տաճարային պահակախմբի պետի և կնգուղավոր մարդու հետ։ Կիսախավար տիրեց, և շանթերն ակոսում էին սև երկինքը։ Հանկարծ երկնքից կրակ ցայտեց, և հարյուրապետի բղավոցը՝ «Շղթան թողնե՛լ», կորավ դղրդյունի մեջ։ Երջանիկ զինվորները, սաղավարտները դնելով, ցած պոկվեցին սարից։ Խավարը պատեց Երշալայիմը։

Տեղատարափը հորդաց հանկարծակի և հարյուրյակին վրա տվեց սարի մեջտեղում։ Ջուրն այն աստիճան սարսափելի գահավիժեց, որ երբ զինվորները ցած էին վազում, նրանց կրնկակոխ արդեն սուրում էին փոթորկվող վտակները։ Զինվորները սայթաքում ու գլորվում էին թրջված կավի վրա, շտապելով հասնել ուղիղ ճանապարհ, որով, ջրաքողի միջից արդեն հազիվհազ երևալով, Երշալայիմ էր գնում մինչև վերջին թելը թրջված հեծելազորը։ Մի քանի րոպե անց ամպրոպի, ջրի և կրակի ծխապատ շփոթի մեջ, սարի վրա մի մարդ էր մնացել միայն։ Թափահարելով ոչ անտեղի գողացած դանակը, լպրծուն խորշերի վրա սայթաքելով, ինչից ասես կառչելով, երբեմն ծնկասող, նա շտապում էր դեպի սյուները։ Մերթ կատարյալ խավարի մեջ էր ընկղմվում նա, մերթ հանկարծ լուսավորվում թրթռուն լույսով։

Վերջապես հասնելով սյուներին, մինչև կոճերը ջրի մեջ, նա լրայից պոկեց-նետեց ծանրացած, ջուր դարձած թալեթը, մնաց միայն շապկով և փարվեց Յեշուայի ոտքերին։ Նա կտրատեց

*սյուների վրայի պարանները, բարձրացավ ներքևի ձողի վրա, գրկեց Յեշուային և ազատեց ձեռքերը վերևի կապանքներից։ Յեշուայի մերկ, թաց մարմինը ընկավ Ղևիի վրա ու գետին տապալեց նրան։ Ղևին անմիջապես կամեցավ շալակն առնել մարմինը, բայց մի միտք կանգնեցրեց նրան։*

*Նա գետնի վրա, ջրի մեջ թողեց ետ ընկած գլխով, այսուայն կողմ տարածված ձեռքերով մարմինը և, կավի խյուսի մեջ դժվարությամբ շարժելով ոտքերը, վազեց դեպի մյուս սյուները։ Նրանց պարաններն էլ կտրատեց, և երկու մարմին գետին տապալվեցին։*

*Անցավ մի քանի րոպե, և սարի գագաթին միայն այդ երկու մարմինն ու երեք դատարկ սյուն մնացին։ Ջուրը խփվում և շուռումուռ էր տալիս մարմինները։*

*Ոչ Ղևին, ոչ Յեշուայի մարմինը սարի գագաթին չէին առնն այդ ժամանակ։*

## ԳԼՈՒԽ XVII

## ԱՆՀԱՆԳԻՍՏ ՕՐԸ

*Ուրբաթ առավոտյան, այսինքն նզովյալ սեանսի հաջորդ օրը, Վարյետեի ծառայողների լրիվ անձնակազմը՝ հաշվապահ Վասիլի Ստեպանովիչ Լաստոչկինը, երկու հաշվետար, երեք մեքենագրուհի, երկու գանձապահ, ցրիչները, սպասավորներն ու հավաքարարները, մի խոսքով, առկա բոլորն իրենց աշխատավայրերում չէին, այլ նստած էին Սադովայայի վրա բացվող լուսամուտների գոգերին ու նայում էին, թե ինչ է կատարվում Վարյետեի պատի տակ։ Այդ պատի տակ հազարավոր մարդկանց երկշարք հերթ էր գնդվել, որի պոչը Կուդրինսկայա հրապարակ էր հասնում։ Թատերական Մոսկվայի քաջ ծանոթ շուրջ երկու տասնյակ վերավաճառողներ էին կանգնած հերթի գլխին։*

*Հերթը շատ անհանգիստ էր պահում իրեն, կողքով անցնող քաղաքացիների ուշադրությունը գրավելով, և զբաղված էր սև մոգության երեկվա չտեսնված սեանսի բորբոքիչ պատմությունները քննարկելով։ Այդ պատմություններն էլ անասելի շփոթության մեջ գցեցին հաշվապահ Վասիլի Ստեպանովիչին, որը երեկվա ներկայացումը չէր դիտել։ Աստված գիտե, թե ինչեր էին*

պատմում սպասարկողները, ի թիվս այլ բաների, թե ինչպես հռչակավոր սեանսի ավարտից հետո որոշ քաղաքացուհիներ անվայելուչ տեսքով վազվզում էին փողոցում ու նման կարգի այլ բաներ։ Համեստ ու սուսուփուս Վասիլի Ստեպանովիչը, բոլոր այդ հրաշքների մասին ասեկոսեները լսելով, սոսկ աչքերն էր ճպճպացնում և բոլորովին չգիտեր, թե ինչ ձեռնարկի, մինչդեռ ինչ-որ բան ձեռնարկել պետք էր, այն էլ հենց ինքը պիտի աներ, քանի որ այժմ Վարյետեի ամբողջ խմբի մեջ ավագն ինքն էր մնացել։

Առավոտյան ժամը տասի մոտ տոմս տենչացողների հերթն այն աստիճան երկարեց, որ լուրերը միլիցիա հասան, և զարմանալի արագությամբ ինչպես հետևակ, այնպես էլ հեծյալ կարգախմբեր ուղարկվեցին, որոնք և որոշ կարգուկանոնի բերեցին հերթը։ Սակայն օձաձև կանգնած կիլոմետրանոց հերթն, ինքնըստինքյան, խիստ գայթակղեցուցիչ էր և Սադովայայի քաղաքացիների կատարյալ զարմանքն էր հարուցում։

Սա՝ դրսում, իսկ Վարյետեի ներսում նույնպես գործերը շատ վատ էին։ Վաղ առավոտից սկսեցին զանգահարել, և անդադար զնգզնգում էին հեռախոսները Լիխոդեևի աշխատասենյակում, Ռիմսկու աշխատասենյակում, հաշվապահությունում, տոմսարկղերում և Վարենուխայի աշխատասենյակում։ Վասիլի Ստեպանովիչը սկզբում ինչ-որ բան պատասխանում էր, պատասխանում էր նաև դանձապահուհին, սպասավորներն էին զանազան բաներ մրթմրթում խոսափողերի մեջ, իսկ հետո բոլորովին դադարեցին պատասխանել, որովհետև այն հարցերին, թե ուր են Լիխոդեևը, Վարենուխան, Ռիմսկին, պատասխանելու բացարձակապես ոչինչ չկար։ Սկզբում փորձեցին գլուխ ազատել «Լիխոդեևը բնակարանում է» խոսքերով, իսկ քաղաքից պատասխանեցին, որ զանգահարել են բնակարան և որ բնակարանն ասել է, թե Լիխոդեևը Վարյետեում է։

Մի հուզված տիկին զանգահարեց, սկսեց Ռիմսկուն պահանջել, խորհուրդ տվեցին զանգահարել նրա կնոջը, ի պատասխան, լսափողը հեկեկալով ասաց, որ հենց ինքն է կինը և որ Ռիմսկին չկա ոչ մի տեղ։ Ինչ-որ անմիտ բան էր սկսվում։ Հավաքարարն արդեն բոլորին պատմել էր, որ գնալով ֆինտնօրենի աշխատասենյակը մաքրելու, տեսել է, որ դուռը կրնկի վրա բաց է, լույսերը վառվում են, այգուն նայող լուսամուտը ջարդված է, բազկաթոռն ընկած է հատակին ու ոչ ոք չկա։

Ժամը տասից քիչ անց Վարյետե ներխուժեց տիկին Ռիմսկայան։ Նա հեկեկում էր և մատները կոտրատում։ Վասիլի Ստեպանովիչը բոլորովին կորցրել էր իրեն ու չգիտեր, ինչ խորհուրդ տա նրան։ Իսկ տասն անց կեսին միլիցիան եկավ։ Առաջին իսկ ու միանգամայն հիմնավոր հարցը հետևյալն էր.

— Ի՞նչ է կատարվում այստեղ, քաղաքացիներ։ Ի՞նչ է պատահել։

Անձնակազմը նահանջեց՝ առաջ մղելով գունատ և հուզված Վասիլի Ստեպանովիչին։ Ստիպված էին իրերն իրենց անուններով կոչել ու խոստովանել, որ Վարյետեի ադմինիստրացիան, ի դեմս տնօրենի, ֆինտնօրենի և ադմինիստրատորի, կորել է ու հայտնի չէ թե ուր, որ երեկվա սեանսից հետո կոնֆերանսյեին տարել են հոգեբուժարան, և որ, կարճ ասած, այդ սեանսն ուղղակի խայտառակ սեանս է եղել։

Հեկեկացող տիկին Ռիմսկայային հնարավորին չափ հանգստացրեցին, տուն ուղարկեցին և առավելապես հետաքրքրվեցին հավաքարարուհու պատմածով, թե ինչ վիճակում է նա գտել ֆինտնօրենի աշխատասենյակը։ Ծառայողներին խնդրեցին իրենց տեղերը գնալ ու գործով զբաղվել, և կարճ ժամանակ անց Վարյետեի շենքում հայտնվեց հետաքննությունը, սրականջ, մկանուտ, ծխախոտի մոխրի գույն և չափազանց խելացի աչքեր ունեցող շան ուղեկցությամբ։ Վարյետեի աշխատողների մեջ անմիջապես փսփսոց տարածվեց, որ շունը ոչ այլ ոք է, եթե ոչ նշանավոր Տուզբուբենը։ Եվ, իրոք, նա էր։ Նրա գործելակերպն ապշեցրեց բոլորին։ Ֆինտնօրենի աշխատասենյակ ներս վազելուն պես շունը գռմռաց՝ մերկացնելով դեղնավուն հրեշավոր ժանիքները, ապա պառկեց փորին և մի տեսակ թախծի, միաժամանակ կատաղության արտահայտությունն աչքերի մեջ, սողաց դեպի ջարդված լուսամուտը։ Հաղթահարելով վախը, հանկարծ ցատկեց լուսամուտագոգին և, սուր մռութը վեր տնկելով, ոռնաց վայրենաձայն ու չարությամբ։ Չէր ուզում իջնել պատուհանից, գռմռում էր, ցնցվում ու փորձում ցած թռչել։

Շանը դուրս բերեցին աշխատասենյակից և բաց թողեցին ճեմասրահ, այստեղից շքամուտքով փողոց ելավ նա ու իրեն հետևողներին բերեց տաքսիների կանգառի մոտ։ Այստեղ հետքը, որով գնում էր, կորցրեց։ Դրանից հետո Տուզբուբենին տարան։

Հետաքննության աշխատակիցները տեղավորվեցին Վարենուխայի աշխատասենյակում, որ և սկսեցին հերթով կանչել Վարյետեի այն աշխատողներին, որոնք երեկվա դեպքերի վկաներն էին եղել սեանսի ժամանակ։ Հարկ է ասել, որ հետաքննությունը յուրաքանչյուր քայլափոխին ստիպված էր լինում չնախատեսված դժվարություններ հաղթահարել։ Թելը շարունակ կտրվում էր։

Ազդագրեր եղե՞լ են։ Եղել են։ Բայց գիշերով դրանց վրա նորերն են փակցրել, ու հիմա ոչ մի հատ չկա, սպանես՝ չկա։ Իսկ որտեղի՞ց հայտնվեց այդ մոգը։ Ո՞վ գիտե։ Ուրեմն, նրա հետ պայմանագիր կնքե՞լ են։

— Պետք է կարծել,— պատասխանում էր հուզված Վասիլի Ստեպանովիչը։

— Իսկ եթե կնքել են, դա պե՞տք է որ անցներ հաշվապահությունով։

— Անկասկած,— հուզվելով, պատասխանում էր Վասիլի Ստեպանովիչը։

— Իսկ ո՞ւր է պայմանագիրը։

— Չկա,— պատասխանում էր հաշվապահը, ավելի ու ավելի գունատվելով և ձեռքերը տարածելով։ Եվ իսկապես, ոչ հաշվապահության մատյաններում, ոչ ֆինտնօրենի, ոչ Լիխոդեևի, ոչ Վարենուխայի մոտ պայմանագրի հետքն անգամ չկար։

Իսկ այդ մոգի ազգանո՞ւնն ինչ էր։ Վասիլի Ստեպանովիչը չգիտե, երեկ նա ներկա չի եղել սեանսին։ Սպասավորները չգիտեն, տոմս վաճառող կինը ճակատը կնճռոտեց, մտածեց, մտածեց, վերջապես ասաց.

— Վո... Վայ թե, Վոլանդ։

Իսկ գուցե ո՞չ Վոլանդ։ Գուցե և ոչ Վոլանդ։ Գուցե, Ֆալանդ։

Պարզվեց, որ օտարերկրացիների բյուրոյում ոչ մի Վոլանդի, ճիշտ այդպես նաև Ֆալանդի՝ մոգի մասին, որևիցե բան չեն լսել։

Ցրիչ Կարպովը հայտնեց, որ իբր այդ մոգն իջևանել է Լիխոդեևի բնակարանում։ Ինչ խոսք, անմիջապես եղան բնակարանում· Այնտեղ ոչ մի մոգ չկար։ Լիխոդեևն՝ ինքը, նույնպես չկար։ Տնային աշխատող Գրունյան չկար, իսկ թե ուր էր կորել՝ ոչ ոք ․գիտեր։ Վարչության նախագահ Նիկանոր Իվանովիչը չկար, Պրոլեժնևը չկար։

Կատարելապես անհեթեթ մի բան էր ստացվում. ադմինիստրացիայի ամբողջ ղեկավարությունը կորել էր, երեկ արտառոց

*խայտառակ սեանս է եղել, իսկ թե ով է դա սարքել և ում դըրդմամբ՝ հայտնի չէ։*

*Մինչ այդ կեսօրը մոտենում էր, երբ պետք է բացվեր տոմսարկղը։ Բայց դրա մասին, իհարկե, խոսք լինել չէր կարող։ Վարյետեի դռանն իսկույն ստվարաթղթի մի մեծ կտոր փակցրեցին հետևյալ մակագրությամբ. «Այսօրվա ներկայացումը հետաձգվում է»։ Հերթի մեջ, գլխից սկսած, հուզումներ ծայր առան, բայց դրանից հետո հերթն, այնուամենայնիվ, սկսեց քայքայվել, և մոտավորապես մեկ ժամ անց Սադովայայում հերթի հետքն անգամ չմնաց։ Հետաքննությունը հեռացավ, որպեսզի իր աշխատանքը շարունակի մեկ այլ տեղում, ծառայողներին արձակեցին՝ թողնելով միայն հերթապահներին, և Վարյետեի դռները փակեցին։*

*Հաշվապահ Վասիլի Ստեպանովիչը շտապ կարգով երկու խնդիր պիտի կարգադրեր։ Նախ, երեկվա դեպքերի մասին զեկույցի պիտի գնար Ներկայացումների և թեթև բնույթի զվարճանքների հանձնաժողով, ապա պետք է մտներ ֆին-համերգային մասնաճյուղ, երեկվա մուտքը՝ 21 711 ռուբլի, հանձնելու համար։*

*Բծախնդիր և ճշտակատար Վասիլի Ստեպանովիչը դրամը փաթաթեց լրագրի մեջ, խաչաձև կապեց հաստ թելով, դրեց պայուսակը և, քաջ գիտենալով հրահանգը, քայլերն ուղղեց ոչ իհարկե դեպի ավտոբուս կամ տրամվայ, այլ տաքսիների կանգառ։*

*Հաստ պայուսակով դեպի կանգառ շտապող ուղևորին տեսնելուն պես երեք մեքենաների վարորդներ մեկը մյուսի ետևից նրա քթի տակ հեռացան դատարկ, ընդ որում, չգիտես ինչու, չարացած ետ-ետ նայելով։*

*Այդ հանգամանքից ապշած հաշվապահը երկար ժամանա կանգնել էր փայտացած, փորձելով կռահել, թե դա ինչ կարող էր նշանակել։*

*Մի երեք րոպե անց դատարկ մեքենա մոտեցավ, և վարորդի դեմքն իսկույն ծամածռվեց ուղևոր տեսնելուն պես։*

*— Մեքենան ազա՞տ է,— զարմացած հազալով՝ հարցրեց Վասիլի Ստեպանովիչը։*

*— Փողը ցույց տվեք,— չարությամբ պատասխանեց վարորդը՝ ուղևորին չնայելով։*

*Ավելի ու ավելի զարմանալով, թանկարժեք պայուսակը թևի*

տակ սեղմելով, Հաշվապահը դրամապանակից մի տասանոց հա-նեց և ցույց տվեց վարորդին։

— Չեմ գնում,— կարճ ասաց նա։

— Ներեցեք...— սկսեց Հաշվապահը, բայց վարորդը նրան ընդհատեց.

— Երեքնոց ունե՞ս։

Լիովին մոլորված Հաշվապահը դրամապանակից երկու հատ երեքանոց հանեց ու ցույց տվեց վարորդին։

— Նստեք,— բղավեց նա ու այնպես խփեց Հաշվիչի բռնա-կին, որ քիչ էր մնում կոտրեր։— Գնացինք։

— Մանր չունե՞ք, ինչ է,— համարձակ հարցրեց Հաշվա-պահը։

— Գրպանս լիքը մանր է,— բղավեց վարորդը, և հայելու մեջ արտացոլվեցին նրա արնակոխ աչքերը,— էսօր երեք դեպք եղել է։ Ուրիշների հետ էլ է եղել։ Մի շան տղա տասնոցը տվեց, չորս ու հիսուն եմ տվել... դուրս եկավ սրիկան։ Մի հինգ րոպե հետո նայեմ, տեսնեմ տասնոցի տեղ՝ նարզանի շշի թուղթ։— Վարորդն այստեղ ոչ տպագրելի մի քանի բառ ասաց։— Էն մյուսը քշել տվեց Զուբովսկայա։ Տասնոց։ Երեք ռուբլի եմ տվել։ Գնաց։ Ձեռս տարա նայեմ, մի հատ մեղու՝ ֆը՜ռռռ, մատս կծեց։ Ես քու...— վարորդը նորից ոչ տպագրելի բառեր մեջ գը-ցեց,— տասնոցն էլ՝ չկա։ Երեկ էդ Վարյետեում (ոչ տպագրելի բառեր) մի իժի ծնունդ ֆոկուսներ է արել տասնոցներով (ոչ տպագրելի բառեր)։

Հաշվապահը քարացավ, կծկվեց ու այնպիսի տեսք ընդունեց, ասես «Վարյետե» բառն իսկ առաջին անգամ էր լսում, և մտքում ասաց. «Այ քեզ բա՜ն...»

Հասնելով ուր հարկն է, տեղը տեղին վճարելով վարորդին՝ Հաշվապահը մտավ շենք և միջանցքով գնաց այն կողմն, ուր վարիչի աշխատասենյակն էր, և ճանապարհին արդեն հասկա-ցավ, որ հարմար ժամանակ չի եկել։ Ներկայացումների հանձնա-ժողովի գրասենյակում իրարանցման պես մի բան էր տիրում։ Հաշվապահի մոտով վազեվազ անցավ գլխաշորը ծոծրակին ըն-կած ու աչքերը չռած ցրիչ կինը։

— Չկա, չկա, չկա, սիրելինե՜րս,— բղավում էր նա, հայտ-նի չէ թե ում դիմելով,— պիջակն ու շալվարը կան, իսկ պիջա-կի մեջ ոչինչ չկա։

Ինչ-որ դռնից ներս մտավ, ու անմիջապես լսվեցին ջարդու-

փշուր եղող ամանեղենի ձայներ։ Քարտուղարուհու սենյակից դուրս վազեց հանձնաժողովի առաջին սեկտորի՝ Հաշվապահին ծանոթ վարիչը, բայց այնպիսի վիճակում էր, որ չճանաչեց Հաշվապահին և անհետ կորավ։

Այդ ամենից ցնցված Հաշվապահը հասավ քարտուղարուհու սենյակին, որը հանձնաժողովի նախագահի աշխատասենյակի նախասրահն էր, և այստեղ վերջնականապես ապշահար եղավ։

Աշխատասենյակի փակ դռան ետևից մի ահեղ ձայն էր հընչում, որն, անկասկած, Պրոխոր Պետրովիչի՝ հանձնաժողովի նախագահի ձայնն էր։ «Տեսնես, ու՞մ է շշպռում»,— մտածեց հուզված Հաշվապահը և, ետ նայելով, ուրիշ բան տեսավ. կաշվե բազկաթոռի մեջ, գլուխը թիկնակին գցած, անզուսպ հեկեկալով, թաց թաշկինակը ձեռքին, ոտքերը համարյա սենյակի մեջտեղը պարզած պառկած էր Պրոխոր Պետրովիչի անձնական քարտուղարուհին՝ գեղեցկուհի Աննա Ռիչարդովնան։

Աննա Ռիչարդովնայի կզակն ամբողջովին քսմսված էր շըրթներկով, իսկ դեղձագույն դեմքի վրայով, արտևանունքներից հոսում էին թրջված ներկի շիթերը։

Տեսնելով, որ ինչ-որ մեկը եկավ, Աննա Ռիչարդովնան վեր ցատկեց, վրա պրծավ Հաշվապահին, կառչեց նրա պիջակի դարձածալերից, սկսեց ցնցել Հաշվապահին ու բղավել.

— Փա՛ռք աստծո։ Գոնե մի քաջը գտնվե՜ց։ Բոլորը ցրիվ եկան, փախա՜ն, բոլորը դավաճանեցի՜ն։ Գնա՛նք, գնա՛նք նրա մոտ, ես չգիտեմ, ինչ անեմ։— Եվ շարունակելով հեկեկալ, Հաշվապահին քարշ տվեց աշխատասենյակ։

Ընկնելով աշխատասենյակ, Հաշվապահն առաջին հերթին ցած գցեց պայուսակը, և նրա գլխի մեջ բոլոր մտքերը ոտնիվեր շրջվեցին։ Եվ հարկ է ասել, ոչ առանց պատճառի։

Ջանգվածեղ թանաքամանով հսկայական գրասեղանի մոտ նստած էր դատարկ կոստյումը և թանաքի մեջ չթաթախած չոր գրչածայրը տանում-բերում էր թղթի վրա։ Կոստյումը փողկապ կապած էր, կոստյումի գրպանից դուրս էր ցցված ինքնահոս գրիչը, բայց օձիքից վեր ոչ վիզ կար, ոչ գլուխ, ինչպես նաև թեզանիքների միջից չէին երևում ձեռքի դաստակները։ Կոստյումը թաղված էր գործի մեջ և բացարձակապես չէր նկատում շուրջը տիրող խառնաշփոթությունը։ Լսելով, որ ինչ-որ մեկը ներս մըտավ, կոստյումը ետ ընկավ թիկնակին, և օձիքից վեր հնչեց Պրոխոր Պետրովիչի՝ Հաշվապահին լավ ծանոթ ձայնը.

— Ի՞նչ է պատահել։ Դռան վրա գրված է, չէ՞, որ չեմ ընդունում։

Գեղեցկուհի քարտուղարուհին ծղրտաց և, մատները կոտրատելով, բղավեց.

— Դուք տեսնու՞մ եք։ Տեսնու՞մ եք։ Նա չկա՜։ Ետ բերեք նրան, ետ բերեք։

Այստեղ ինչ-որ մեկը գլուխը ներս խցկեց դռնից, ճչաց ու ետ փախավ։ Հաշվապահը զգաց, որ ոտքերը դողացին, և նստեց աթոռի ծայրին, բայց չմոռացավ պայուսակը վեր բարձրացնել։ Աննա Ռիչարդովնան ցատկոտում էր հաշվապահի շուրջը, քաշքշում նրա պիջակն ու բղավում.

— Ես նրան միշտ, միշտ զսպում էի, երբ սատանայի անուն էր տալիս։ Ահա՜, այսպես եղավ,— այստեղ գեղեցկուհին վազեց սեղանի մոտ և երաժշտական նուրբ, լացից հետո փոքր-ինչ ռնգային ձայնով բացականչեց.

— Պրոշա, որտե՞ղ եք։

— Ձեզ համար ո՞վ է այստեղ «Պրոշա»,— գոռոզաբար հարցրեց կոստյումը՝ ավելի խորը խրվելով բազկաթոռի մեջ։

— Չի ճանաչում։ Ինձ չի ճանաչում։ Դուք հասկանո՞ւմ եք,
— հեկեկաց քարտուղարուհին։

— Խնդրեմ աշխատասենյակում չհեկեկալ,— արդեն զայրանալով ասաց դյուրաբորբոք զոլավոր կոստյումը և թևքով մի նոր կապ թուղթ քաշեց դիմացը, դրանց վրա մակագրություններ անելու աներկբա նպատակով։

— Չէ՛, չեմ կարող սա տեսնել, չէ՛, չեմ կարող,— ճչաց Աննա Ռիչարդովնան և դուրս վազեց իր սենյակը, իսկ նրանից հետո գնդակի պես դուրս թռավ նաև հաշվապահը։

— Պատկերացնում եք, նստած եմ,— հուզմունքից ցնցվելով պատմում էր Աննա Ռիչարդովնան՝ դարձյալ բռնած հաշվապահի թևքը, — ու մի կատու մտավ ներս։ Սև, խոշոր, ինչ որ բեգեմոտ։ Ինչ խոսք, բղավեցի՝ «փի՜շտ»։ Դուրս փախավ, իսկ նրա փոխարեն ներս մտավ մի հաստլիկ, էլի մի տեսակ կատվային մռութ ուներ, և ասաց. «Քաղաքացուհի, ինչի՞ համար եք այցելուների վրա բղավում՝ «փի՜շտ»։ Եվ ուղիղ պլստաց Պրոխոր Պետրովիչի մոտ, ինչ խոսք, ես՝ նրա ետևից, բղավեցի. «Խելագարվե՞լ եք»։ Իսկ այդ լկտին՝ ուղիղ Պրոխոր Պետրովիչի մոտ, ու նստեց դիմացը, բազկաթոռին։ Դե, սա... նա շատ բարի սիրտ ունի, բայց ջղային մարդ է։ Կատաղեց։ Չեմ վիճում։ Ջղային

Նա՞ էլ, նրան պես աշխատում է, կատաղեց։ «Ինչի՞ համար եք, ասաց, առանց զեկուցելու ներս խցկվում»։ Իսկ այդ լկտին, պատկերացրեք, բազկաթոռի մեջ փռվել ու ժպտալով ասում է. «Իսկ ես, ասաց, եկել եմ մի գործով ձեզ հետ մի քիչ խոսելու»։ Պրոխոր Պետրովիչը նորից կատաղեց. «Ես զբաղված եմ»։ Իսկ նա, պատկերացրեք միայն, պատասխանեց. «Ոչ մի բանով էլ զբաղված չեք...»։ Հը՞, Դե, այստեղ արդեն Պրոխոր Պետրովիչի համբերությունը հատեց, և նա բղավեց. «Սա ի՞նչ բան է։ Դուրս տարեք դրան. սատանան տանի ինձ»։ Իսկ նա, պատկերացրեք, ժպտաց ու ասաց. «Սատանան տանի՞, է, ինչ կա որ, կարելի է»։ Ու, ջրա՜խկ, չէի հասցրել բղավել, տեսնեմ, այդ կատվի մռութովը չկա և նստ... նստած է... կոստյումը... Հեեե՜,— բացելով ամենայն եզրագիծ կորցրած բերանը՝ ոռնաց Աննա Ռիչարդովնան։

Հեկեկոցներից խեղդվելով, նա շունչը տեղը բերեց, սակայն լրիվ անհեթեթ բաներ սկսեց դուրս տալ.

— Ու գրու՜մ է, գրու՜մ է, գրու՜մ է։ Մարդ կխելագարվի՜։ Հեռախոսով խոսո՜ւմ է։ Կոստյո՜ւմը։ Բոլորը ցրիվ եկան փախա՜ն նապաստակների պես։

Հաշվապահը միայն կանգնել ու ցնցվում էր։ Բայց այստեղ ճակատագիրը փրկեց նրան։ Հանգիստ, գործնական քայլերով քարտուղարի սենյակ մտավ միլիցիան, թվով երկու մարդ։ Նրանց տեսնելով, գեղեցկուհին ավելի սաստիկ հեկեկաց՝ ձեռքը թափ տալով աշխատասենյակի կողմը։

— Եկեք չհեկեկանք, քաղաքացուհի,— հանգիստ ասաց առաջինը, իսկ հաշվապահը, զգալով, որ ինքը միանգամայն ավելորդ է այստեղ, դուրս թռավ սենյակից և մի րոպե անց արդեն դրսում էր, թարմ օդում։ Գլուխը մի տեսակ դատարկ էր, դրմբում էր, ինչպես խողովակի մեջ, և այդ դրմբոցի միջից լսվում էին սպասավորների պատմածների պատառիկները սեանսին մասնակցած երեկվա կատվի մասին։ «Է՜-հե՜-հե՜։ Ջինի՞ սա մեր կատվիկն է»։

Հանձնաժողովում բան չհասկանալով, բարեխիղճ Վասիլի Ստեպանովիչը որոշեց գնալ դրա մասնաճյուղը, որ գտնվում էր Վագանկովսկի նրբանցքում։ Եվ իրեն մի քիչ հանգստացնելու համար մինչև մասնաճյուղ ոտքով գնաց։

Ներկայացումների քաղաքային հանձնաժողովը տեղավորված էր ժամանակից ծեփը թափված, բակի խորքում կառուցված

առանձնատունը, և նշանավոր էր ճեմասրահի իր ծիրանաքարե սյուներով։

Այդ օրը սակայն սյուները չէին զարմացնում մասնաճյուղ այցելողներին, այլ այն, թե ինչ էր կատարվում այդ սյուների ներքո։

Մի քանի այցելու արձանացած կանգնել ու նայում էին ներկայացումների մասին հատուկ գրականությամբ բեռնված սեղանիկի մոտ նստած և այդ գրականությունը վաճառող օրիորդին, որը լաց էր լինում։ Տվյալ պահին օրիորդը ոչ մեկին ոչ մի գրականություն չէր առաջարկում և կարեկից հարցերին ի պատասխան միայն ձեռքն էր թափահարում, իսկ այդ ժամանակ թե վերևից, թե ներքևից, թե չորս կողմից, մասնաճյուղերի բոլոր բաժիններից սփռվում էր պատառ-պատառ լինող, ամենաքիչը մի քսան ապարատների հեռախոսազանգը։

Լաց լինելով, օրիորդը հանկարծ ցնցվեց, հիստերիկ ձայնով բղավեց.

— Ահա, նորի՛ց— և անսպասելիորեն երգեց դողդոջ սոպրանոյով.

Փառապանծ դու ծով, սրբազան Բայկալ...

Սուրհանդակը... 

Աստիճանների վրա հայտնված ցրիչը բռունցքով սպառնաց ինչ-որ մեկին և օրիորդի հետ միասին երգեց խղճուկ, խամրած բարիտոնով.

Պանծալի դու նավ, ձկների տակառ...

Ցրիչի ձայնին միացան հեռավոր ձայներ, խմբերգն սկսեց ծավալվել, ու, ի վերջո, երգը թնդաց մասնաճյուղի բոլոր անկյուններում։ Մոտակա №6 սենյակում, ուր տեղավորված էր հաշվային-ստուգման բաժինը, հատկապես առանձնանում էր ինչ-որ մեկի հուժկու, թեթևակի խզացող բասը։ Երգչախմբին նվագակցում էր հեռախոսային ապարատների սաստկացած զնգզնգոցը։

Հեյ, հե՜յ, Բարգուզին... ալիքը սանձիր...—

ոռնում էր ցրիչը սանդուղքի վրա։

Արցունքները հոսում էին օրիորդի դեմքի վրայով, նա փորձում էր սեղմել ատամները, բայց բերանն ինքնըստինքյան էր բացվում, ու նա երգում էր ցրիչից մի օկտավ վեր.

Մասնաճյուղի մունջ այցելուներին ապշեցնում էր այն, որ դռնապան տեղերում ցրված երգիչները շատ ներդաշնակ էին երգում. կարծես ամբողջ երգչախումբը կանգնած էր, աչքը չը-կտրելով անտեսանելի խմբավարից։

Հոգանկովսկի նրբանցքով անցնողները կանգ էին առնում բանկի ճաղաշարի մոտ, զարմանալով մասնաճյուղում տիրող աշխուժությունից։

Հենց առաջին տունը մոտեցավ ավարտին, երգը հանկարծակի մեղմացավ, դարձյալ ասես խմբավարի հրահանգով։ Ցրիչը բարձրաձայն հայհոյեց ու հեռացավ։ Այստեղ բացվեց շքամուտքի դուռը, և մի քաղաքացի հայտնվեց ամառային վերարկուով, որի տակից երևում էին սպիտակ խալաթի փեշերը, նրա հետ էր նաև միլիցիոները։

— Միջոցներ ձեռք առեք, բժիշկ, աղաչում եմ,— հիստերիկ ձայնով բղավեց օրիորդը։

Վազեվազ սանդուղքներին հասավ մասնաճյուղի քարտուղարը և, հավանորեն, ամոթից ու անհարմարության զգացումից գետինը մտնելով, կակազելով, ասաց։

— Գիտեք, բժիշկ, ինչ-որ զանգվածային հիպնոսի դեպք է կատարվում մեզ մոտ... Այնպես որ, անհրաժեշտ է...— Նա խոսքը չավարտեց, բառերը խեղդեցին նրան ու հանկարծ երգեց տենորով.

Շիլկան ու Ներչինսկը...

— Տխմա՛ր,— հասցրեց բղավել օրիորդը, բայց չբացատրեց, թե ու՛մ է ասում. դրա փոխարեն մի բռնի գեղգեղանք արձակեց ու ինքն էլ սկսեց երգել Շիլկայի և Ներչինսկի մասին։

— Տիրապետե՛ք ձեզ։ Դադարեցրե՛ք երգը,— քարտուղարին դիմեց բժիշկը։

Ըստ ամենայնի երևում էր, որ քարտուղարն ինքն էլ ինչ ասես կտար երգը դադարեցնելու համար, սակայն հենց դադարեցնելը չէր կարող, ու երգչախմբի հետ նրբանցքով անցնողների ականջին հասցրեց լուրն այն մասին, որ թավուտներում իրեն ձեռք չտվեց գազանն անկշտում և հրաձիգների գնդակն իրեն չդիպավ։

Երգի տունը վերջանալուն պես օրիորդը բժշկից առաջինն

ստացավ վալերիանի կաթիլներ, իսկ հետո բժիշկը վազեց քար-տուղարի և մյուսների ետևից՝ նրանց էլ խմեցնելու։

— Ներեցեք, ընկերուհի,— Վասիլի Ստեպանովիչը հանկարծ դիմեց օրիորդին,— մի սև կատու չի՞ մտել այստեղ։

— Ի՞նչ կատու,— շփոթված բղավեց օրիորդը,— ավանա՛կ է նստած մեր մասնաճյուղում, ավանա՜կ,— ու դրան ավելաց-նելով.— Թող լսի՛։ Ամեն ինչ կպատմեմ,— իսկապես, պատմեց կատարվածի մասին։

Պարզվեց, որ քաղաքային մասնաճյուղի վարիչը, որն «իս-պառ քայքայել էր թեթևացրած բնույթի զվարճալիքները» (օրիոր-դի խոսքերով ասած), ամեն կարգի խմբակներ կազմակերպե-լու մոլուցքով էր տառապում։

— Ղեկավարության աչքին թո՞զ էր փչում,— բղավում էր օրիորդը։

Մի տարվա ընթացքում վարիչը հասցրել էր կազմակերպել Լերմոնտով ուսումնասիրողների խմբակ, շաշկու-շախմատի, պինգպոնգի և ձիավարության խմբակներ։ Մինչև ամառ պատ-նում էր կազմակերպել քաղցրահամ ջրերում թիավարության և ալպինիստների խմբակներ։

Եվ ահա այսօր, ընդմիջման ժամին, ներս է մտնում նա՝ վարիչը...

— Մի շան որդու թևանցուկ արած,— պատմում էր օրիորդը, —որը հայտնի չէ, թե որտեղից էր երևան եկել, վանդակավոր շալվարով, ակնոցը՝ ճաքած... ու մի անտանելի կերպարանքով։

Եվ տեղնուտեղը, ըստ օրիորդի պատմածի, մասնաճյուղի ճա-շարանում ճաշողներին ներկայացրեց նրան որպես խմբերգային խմբակների կազմակերպման հայտնի մասնագետի։

Ապագա ալպինիստների դեմքերը մթագնեցին, բայց վա-րիչն անմիջապես կոչ արեց բոլորին՝ կորովը չկորցնել, իսկ մաս-նագետը և՛ կատակում էր, և՛ սրամտում, և՛ երդմամբ հավա-տացնում, որ երգեցողությունը շատ քիչ ժամանակ է խլում, իսկ դրա օգուտն, իմիջիայլոց, շատ-շատ է։

Դե, իհա՜րկե, ինչպես հայտնեց օրիորդը, առաջինը մեջ ըն-կան Ֆանովը և Կոսարչուկը՝ մասնաճյուղի ամենահայտնի քծ-նողներն, ու հայտարարեցին, որ գրվում են։ Այստեղ մյուս ծա-ռայողները համոզվեցին, որ երգելուց պրծում չունեն, ստիպված իրենք էլ գրվեցին։ Վճռեցին երգել ընդմիջման ժամին, քանի որ մնացած ամբողջ ժամանակը զբաղված էր Լերմոնտովով ու

շարժվում։ Օրինակ ծառայելու համար վարիչը հայտարարեց, որ իր ձայնը տենոր է, ապա ամեն ինչ ծավալվեց, որպես մի գեշ երազ։ Վանդակավոր մասնագետ-խմբավարը բղավեց.

— Դո-մի-սոլ-դո՜,— առավել ամաչկոտներին դուրս արեց պատուհանների Նանից, ուր նրանք փորձում էին ազատվել երգեցողությունից, Կոսարչուկին ասաց, որ նա բացարձակ լսողություն ունի, նվնվաց, տրտնջաց, խնդրեց հարգել իրեն՝ ծեր խմբավար-երգասերին, կամերտոնը մատներին խփեց, աղաչելով թնդացնել «Փառապանծ ծովը»։

Թնդացրին։ Այն էլ՝ փառավոր։ Վանդակավորն, իսկապես, իր գործը գիտեր։ Առաջին տունը երգեցին պրծան։ Խմբավարն այստեղ ներողություն խնդրեց, ասաց՝ «Մի րոպե բացակայեմ», և ...անհետացավ։ Կարծեցին, որ, իրոք, մի րոպե հետո կվերադառնա։ Բայց անցավ տասը րոպե, իսկ նա չկար։ Բերկրանքը համակեց մասնաճյուղին՝ ուրեմն, թողեց-փախավ։

Ու հանկարծ մի տեսակ իրենք իրենց սկսեցին երկրորդ տունը երգել, բոլորին իր ետևից տարավ Կոսարչուկը, որը գուցեև բացարձակ լսողություն չուներ, բայց բավական հաճելի բարձր տենորով էր երգում։ Երգեցին։ Խմբավարը չկա՛ր։ Ցրվեցին տեղերը, սակայն չէին հասցրել նստել, երբ, հակառակ ցանկության, նորից սկսեցին երգել։ Կանգ առնելու հնար չկար։ Մի երեք րոպե լռում էին ու վերստին թնդացնում, լռում էին ու թնդացնում։ Այստեղ գլխի ընկան, որ փորձանքի մեջ են ընկել։ Վարիչը խայտառակությունից փախավ, փակվեց իր աշխատասենյակում։

Օրիորդի պատմությունն այստեղ ընդհատվեց։ Վալերիանի կաթիլներն ամենևին չէին օգնել։

Քառորդ ժամ անց Վագանկովսկու ճաղաշարին երեք բեռնատար մոտեցան, ու դրանց վրա բեռնվեց մասնաճյուղի ամբողջ անձնակազմը՝ վարիչի հետ։

Հենց որ առաջին բեռնատարը, դարպասի մեջ ճոճվելով, թեքվեց նրբանցք, թափքի մեջ կանգնած ու միմյանց ուսերից բռնած ծառայողները բացեցին բերանները, և ամբողջ նրբանցքը լցվեց հանրահայտ երգի հնչյուններով։ Երկրորդ բեռնատարը միացավ, ապա և երրորդը։ Այդպես էլ գնացին։ Իրենց գործերով շտապող անցորդներ, սոսկ թռուցիկ հայացք էին նետում բեռնատարների վրա, ամենևին չզարմանալով ու ենթադրելով, որ մարդիկ էքսկուրսիա են գնում՝ քաղաքից դուրս։ Իսկապես, քա-

դարից դուրս էին գնում, բայց ոչ թե էքսկուրսիայի, այլ պրոֆեսոր Ստրավինսկու կլինիկա։

Կես ժամ անց գլուխը բոլորովին կորցրած հաշվապահը հասավ համերգային ֆինանսկոմ, հուսալով վերջապես ազատվել սատանական փողերից։ Փորձով արդեն իմաստնացած, նա ամենից առաջ զգուշորեն նայեց երկարավուն սրահից ներս, որ ոսկետառ մակագրություններով փայլատ ապակիների հետև նստած էին ծառայողները։ Անհանգստության կամ անկարգության ոչ մի նշան հաշվապահն այստեղ չտեսավ։ Խաղաղ էր, ինչպես և վայել է կարգին հիմնարկությանը։

Վասիլի Ստեպանովիչը գլուխը մտցրեց այն փոքրիկ պատուհանից ներս, որի վրա գրված էր՝ «Գումարների ընդունում», բարեեց իրեն անծանոթ մի ծառայողի և քաղաքավարի խնդրեց մուտքի օրդեր տալ իրեն։

— Իսկ ինչի՞ համար,— հարցրեց ծառայողը։

Հաշվապահը զարմացավ։

— Գումար եմ ուզում հանձնել։ Ես Վարյետեից եմ։

— Մի րոպե,— պատասխանեց ծառայողը և վայրկենապես ցանցով փակեց ապակու անցքը։

«Տարօրինա՜կ է»,— մտածեց հաշվապահը։ Նրա զարմանքը միանգամայն բնական էր։ Կյանքում առաջին անգամ նման հանգամանքի էր բախվում։ Բոլորին հայտնի է, թե որքան դժվար է փող ստանալը, միշտ կարող են խոչընդոտներ գտնվել դրա համար։ Սակայն հաշվապահի երեսնամյա պրակտիկայում չէր եղել մի դեպք, որ որևիցե մեկը՝ իրավական, թե մասնավոր անձ, դժվարանար դրամ ընդունել։

Բայց վերջապես ցանցը ետ գնաց, և հաշվապահը նորից դեմքը մոտեցրեց փոքրիկ պատուհանին։

— Իսկ շա՞տ է, —հարցրեց ծառայողը։

— Քսանմեկ հազար յոթ հարյուր տասնմեկ ռուբլի։

— Օհո՜,— չգիտես ինչու հեգնաբար պատասխանեց ծառայողը և հաշվապահին մեկնեց մի կանաչ թերթիկ։

Կարգին լավ ծանոթ հաշվապահը շատ արագ լրացրեց թերթիկը և սկսեց արձակել փաթեթի թելը։ Երբ քանդեց իր բեռը, աչքերը շաղվեցին, ինչ-որ բաներ մրմնջաց հիվանդագին։

Աչքերի առաջ օտարերկրյա դրամներ երևացին։ Այստեղ կային կանադական դոլարների, անգլիական ֆունտերի, հոլանդա-

կան գուլդենների, լատվիական լատերի, էստոնական կրոնների, կապուկներ...

— Ահա՛, Վարյետեի աճպարարներից մեկն էլ երևաց,— մի սպառնալի ձայն հնչեց մնչացած հաշվապահի գլխավերևում։ Եվ տեղնուտեղը Վասիլի Ստեպանովիչին ձերբակալեցին։

## ԳԼՈՒԽ XVIII

## ԶԱԽՈՂԱԿ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Ճիշտ այն ժամանակ, երբ փութաջան հաշվապահը տաքսիով սլանում էր, ինքն իրեն գրող կոստյումին հանդիպելու, Մոսկվա հասած կիևյան գնացքի փափուկ տեղատոմսով №9 վագոնից, ի թիվս այլոց, իջավ վայելչատես մի ուղևոր, ֆիբրե փոքրիկ ճամպրուկը ձեռքին։ Այդ ուղևորը ոչ այլ ոք էր, եթե ոչ հանգուցյալ Բեռլիոզի ազգականը՝ տնտեսագետ-պլանագետ Մաքսիմիլիան Անդրեևիչ Պոպլավսկին, որն ապրում էր Կիևում, նախկին Ինստիտուտսկայա փողոցի վրա։ Մաքսիմիլիան Անդրեևիչի Մոսկվա գալու պատճառը երկու օր առաջ, ուշ երեկոյան ստացած հեռագիրն էր՝ հետևյալ բովանդակությամբ.

«Քիչ առաջ իմ գլուխը կտրվեց տրամվայի տակ Պատրիարքականի մոտ։ Թաղումն ուրբաթ, ցերեկվա ժամը երեքին։ Մեկնիր։ Բեռլիոզ»։

Մաքսիմիլիան Անդրեևիչը Կիևի ամենախելացի մարդկանցից մեկն էր համարվում, այն էլ՝ ըստ արժանվույն։ Սակայն նման հեռագիրն ամենախելացի մարդուն էլ կարող է անելանելի դրության մեջ դնել։ Եթե մարդը հեռագիր է տալիս, որ գլուխը կտրվել է, ապա պարզ է, որ մահացու չի կտրվել։ Այդ դեպքում հապա ի՞նչ կապ ունի թաղումը։ Թե՞ նա շատ վատ է ու կանխատեսում է, որ կմեռնի։ Դա հնարավոր է, բայց ծայրաստիճան տարօրինակ է այդ ճշգրտությունը՝ համենայն դեպս, որտեղի՞ց գիտե, որ իրեն թաղելու են ուրբաթ, ցերեկվա ժամը երեքին։ Զարմանալի՜ հեռագիր էր։

Բայց խելացի մարդիկ նրա համար են խելացի, որ պարզեն խճճված բաները։ Շատ պարզ է։ Սխալ է կատարվել, և հեռագիրն աղավաղված են հաղորդել։ Անկասկած, «իմ» բառն այստեղ է ընկել մի այլ հեռագրից «Բեռլիոզի» բառի փոխարեն, որն ընդու-

նել է «Բեռլինգ» տեսակը և ընկել հնագրի վերջը։ Նման ուղղումով հնագրի միտքը պարզ էր դառնում, բայց, ինչ խոսք, ողբերգական։

Երբ հանդարտվեց Մաքսիմիլիան Անդրեևիչի տիկնոջը դարմացրած վշտի պոռթկումը, ազգականն սկսեց Մոսկվա մեկնելու անհապաղ պատրաստություն տեսնել։

Հարկ է Մաքսիմիլիան Անդրեևիչի մի գաղտնիքը բացել։ Անշուշտ, նա ափսոսում էր կնոջ ազգականին, որը զոհվել էր ծաղկուն տարիքում։ Բայց իհարկե, որպես գործնական մարդ, հասկանում էր, որ թաղմանը ներկա գտնվելու առանձնահատուկ ոչ մի անհրաժեշտություն չկա։ Այդուհանդերձ, Մաքսիմիլիան Անդրեևիչը շատ էր շտապում Մոսկվա։ Իսկ բանն ի՞նչ էր։ Մի բան՝ բնակարանը։ Բնակարան Մոսկվայու՞մ։ Դա լուրջ բան էր։ Հայտնի չէ, թե ինչու, բայց Կիևը դուր չէր գալիս Մաքսիմիլիան Անդրեևիչին, և Մոսկվա տեղափոխվելու միտքը վերջին ժամանակներս այն աստիճան էր տանջում նրան, որ սկսել էր նույնիսկ վատ քնել։ Նրան չէին ուրախացնում Դնեպրի գարնանային վարարումները, երբ ծածկելով ցածրադիր ափի կղզյակները՝ ջուրը ձուլվում էր հորիզոնին։ Նրան չէր ուրախացնում ցնցող գեղեցկության այն տեսարանը, որը բացվում էր իշխան Վլադիմիրի հուշարձանի մոտից։ Նրան բերկրանք չէին պատճառում արևի ցոլքերը, որոնք գարնանը պար էին բռնում Վլադիմիրյան բլրի աղյուսե ծառուղիների վրա։ Այդ բաներից ոչ մեկը նա չէր ուզում, մի բան էր ուզում՝ Մոսկվա տեղափոխվել։

Թերթերում տպագրած՝ Կիևի Ինստիտուտսկայա փողոցի բնակարանը Մոսկվայի ավելի փոքր տարածության հետ փոխանակելու հայտարարությունները ոչ մի արդյունք չէին տվել։ Ցանկացողներ չէին լինում, իսկ եթե գտնվում էլ էին, ապա նրանց առաջարկություններն էին անբարեխիղճ լինում։

Հեռագիրը ցնցեց Մաքսիմիլիան Անդրեևիչին։ Դա մի պահ էր, որը ձեռքից բաց թողնելը մեղք կլիներ։ Գործնական մարդիկ գիտեն, որ նման պահերը չեն կրկնվում։

Մի խոսքով, հաշվի չառնելով և ոչ մի դժվարություն, պետք էր կարողանալ ժառանգել ազգականի բնակարանը Սադովայա փողոցի վրա։ Այո, դա բարդ բան էր, շատ բարդ, սակայն այդ բարդությունները հարկ էր հաղթահարել ամեն գնով։ Փորձառու Մաքսիմիլիան Անդրեևիչը գիտեր, որ դրա համար առաջին և պարտադիր քայլը հետևյալ քայլը պիտի լինի. հարկ էր, ինչ

գնով ուզում է լինի, թեկուզ ժամանակավորապես, գրանցվել հանգուցյալ ազգականի երեք սենյակներում։

Ուրբաթ ցերեկը Մաքսիմիլիան Անդրեևիչը ներս մտավ այն սենյակի դռնից, ուր գտնվում էր Մոսկվայի Սադովայա փողոցի №302/2 շենքի տնային վարչությունը։

Նեղլիկ սենյակում, որի պատից գետում խեղդվածներին կենդանացնելու միջոցները պատկերող մի քանի նկարից կազմված հին պլակատ էր կախված, փայտյա սեղանի մոտ լիակատար մենության մեջ միջին տարիքի, չսափրված, տագնապախռով աչքերով մի մարդ էր նստած։

— Կարո՞ղ եմ տեսնել վարչության նախագահին,— քաղաքավարությամբ հարցրեց տնտեսագետ-պլանագետը, շլյապան հանելով և փոքրիկ ճամպրուկը դնելով դատարկ աթոռին։

Շատ պարզ թվացող այդ հարցը, չգիտես ինչու, վշտացրեց նստածին, այնքան, որ դեմքն այլայլվեց նույնիսկ։ Տագնապած աչքերը խեթելով, նա անհասկանալի քրթմնջաց, որ նախագահը չկա։

— Նա իր բնակարանու՞մ է, —հարցրեց Պոպլավսկին,—շատ շտապ գործ ունեմ։

Նստածը դարձյալ շատ անկապ պատասխանեց։ Բայց և այնպես կարելի էր կռահել, որ նախագահը բնակարանում չէ։

— Իսկ ե՞րբ կգա։

Նստածը ոչինչ չպատասխանեց ու մի տեսակ թախծոտ նայեց պատուհանից դուրս։

«Հը՜մ»— ինքն իրեն ասաց խելացի Պոպլավսկին ու քարտուղարի մասին հարցրեց։

Սեղանի մոտ նստած տարօրինակ մարդը լարումից նույնիսկ կարմրատակեց և նորից անհասկանալի բաներ քրթմնջաց, որ քարտուղարն էլ չկա... թե երբ կգա, հայտնի չէ և... որ քարտուղարը հիվանդ է...

«Հը՜մ...— ինքն իրեն ասաց Պոպլավսկին,— բայց որևէ մեկը կա՞ վարչությունում»։

— Ես եմ,— թույլ ձայնով պատասխանեց մարդը։

— Գիտեք ինչ,— ազդեցիկ տոնով սկսեց Պոպլավսկին,— ես հանդիսանում եմ իմ ազգական Բեռլիոզի, որն, ինչպես ձեզ հայտնի է, զոհվել է Պատրիարքականի մոտ, միակ ժառանգը և, օրենքի համաձայն, պարտավոր եմ ընդունել մեր հիսուներորդ բնակարանում գտնվող ժառանգությունը...

— ...ս կուրսի մեջ չեմ ...նկեր,— տրամադրին ընդհատեց մարդը։

— Բայց ներեցեք,— հնչեղ ձայնով ասաց Պոպլավսկին,— դուք վարչության անդամ եք և պարտավոր եք...

Եվ այստեղ ինչ-որ քաղաքացի մտավ սենյակ։ Նրա ներս մտնելուն պես սեղանի մոտ նստածը գունատվեց։

— Վարչության անդամ Պյատնաժկոն դու՞ք եք,— նստածին հարցրեց ներս մտածը։

— Ես եմ,— հազիվ լսելի պատասխանեց սա։

Ներս մտածն ինչ-որ բան շշնջաց նստածի ականջին, և վերջինս, լիովին շփոթված, վեր ելավ աթոռից, և մի քանի վայրկյան անց Պոպլավսկին մենակ մնաց վարչության դատարկ սենյակում։

«Էհ, ինչպիսի՜ բարդացում ստացվեց։ Պե՞տք էր հապա, որ բոլորն էլ միանգամից...»— սրտնեղած մտածում էր Պոպլավսկին՝ ասֆալտապատ բակը հատելով ու շտապելով հասնել № 50 բնակարանը։

Տնտեսագետ-պլանագետի զանգը տալուն պես դուռը բացեցին, և Մաքսիմիլիան Անդրեևիչը մտավ մութ նախասենյակ։ Նրան մի քիչ զարմացրեց այն հանգամանքը, որ հասկանալի չէ, թե ով բացեց դուռը. նախասենյակում ոչ ոք չկար, աթոռին նստած վիթխարի սև կատվից բացի։

Մաքսիմիլիան Անդրեևիչը հազաց, ոտքերը թփթփացրեց, և այդ ժամանակ աշխատասենյակի դուռը բացվեց ու նախասենյակ ելավ Կորովևը։ Մաքսիմիլիան Անդրեևիչը քաղաքավարությամբ, բայց և արժանապատվությամբ գլուխ խոնարհեց ու ասաց.

— Իմ ազգանունը Պոպլավսկի է։ Ես ազգականն եմ...

Չհասցրեց ավարտել խոսքը, և Կորովևը գրպանից հանեց կեղտոտ թաշկինակը, քիթը մեջը մտցրեց ու սկսեց լաց լինել։

— ...հանգուցյալ Բեռլիոզի...

— Ինչպես չէ, ինչպե՜ս չէ,— ընդհատեց Կորովևը՝ թաշկինակը հեռացնելով դեմքից։— Հենց նայեցի ձեզ, կռահեցի, որ դուք եք։— Այստեղ նա սկսեց ցնցվել հեկեկոցներից ու ողբաց. —Ի՜նչ վիշտ է, ինչ վիշտ։ Այս ինչե՞ր են կատարվում։ Հը՞։

— Տրամվա՞յն է գցել տակը,— շշնջալով հարցրեց Պոպլավսկին։

— Լրիվ,— ճչաց Կորովևը, և արցունքները գլոր-գլոր հոսեցին պենսնեի տակից,— լրի՜վ։ Ես վկա էի։ Կհավատա՞ք՝

*խփեց։ Գլուխը թռավ։ Աջ ոտքը՝ շըը՛խկ, կես եղավ։ Ձախը՝ շըը՛խկ, կես եղավ։ Այ թե ինչի են հասցնում այդ տրամվայները։ —Եվ ըստ երևույթին, ուժ չունենալով իրեն զսպել, Կորովկը քիթը կպցրեց հայելու կողքի պատին և սկսեց ցնցվել հեծկլտալուց։*

*Բեռլիոզի ազգականն անկեղծորեն զարմացած էր անծանոթի պահվածքից։ «Ահա՛, ասում են, թե մեր դարում սրտակից մարդիկ չկան»,— մտածեց նա, զգալով, որ իր աչքերն էլ են սկսում քոր գալ։ Սակայն միևնույն ժամանակ մի անդուր ամպիկ իջավ նրա հոգուն և անմիջապես օձաձևի պես մի միտք առկայծեց, թե սրտակից այդ մարդն արդեն չի՞ գրանցվել հանգուցյալի բնակարանում, քանի որ նման օրինակներ էլ էին եղել կյանքում։*

*— Ներեցեք, դուք իմ հանգուցյալ Միշայի ընկե՞րն եք եղել,— հարցրեց նա, թևքով սրբելով ձախ՝ չոր աչքը, իսկ աջով ուսումնասիրելով վշտից ցնցված Կորովևին։ Բայց նա այնպես էր հեկեկում, որ անհնար էր որևէ բան հասկանալ, բացի կրկնվող «շըը՛խկ, կես եղավ» բառերից։ Կուշտ հեծկլտալով, Կորովևը վերջապես պոկվեց պատից ու ասաց.*

*— Չէ, էլ չեմ կարող։ Գնամ մի երեք հարյուր կաթիլ եթերային վալերիան ընդունեմ,— ու արցունքապատ դեմքը դարձնելով Պոպլավսկու կողմը՝ ավելացրեց,— ահա՛, սա էլ ձեր տրամվայները։*

*— Ներեցեք, դո՞ւք եք ինձ հեռագրել,— հարցրեց Մաքսիմիլիան Անդրեևիչը, խիստ լարված մտածելով, թե ով կարող է լինել այս զարմանալի լալկանը։*

*— Նա,— պատասխանեց Կորովևը և մատնացույց արեց կատվին։*

*Պոպլավսկին աչքերը չռեց, ենթադրելով, թե սխալ է լսել։*

*— Չէ, ուժ չունեմ, հնար չունեմ,— քիթը քաշելով, շարունակեց Կորովևը, հենց որ հիշում եմ՝ անիվը ոտքի վրայով… ամեն անիվը մի տասը փութ կկշռի… Շըը՛խկ։ Գնամ, անկողին մտնեմ, քունը կփրկի,— և այստեղ նա անհետացավ նախասենյակից։*

*Իսկ կատուն շարժվեց, աթոռից ցած ցատկեց, կանգնեց ետևի թաթերի վրա, առջևի թաթը կողքին կանթեց, երախը բացեց ու ասաց.*

*— Հը՛, ես եմ տվել հեռագիրը։ Հետո՞ ինչ։*

*Մաքսիմիլիան Անդրեևիչի գլուխն իսկույն պտտվեց, ձեռքերն*

ու ոտքերն ընդարմացան, նա ցած գցեց ճամպրուկն ու նստեց աթոռին, կատվի դիմաց։

— Կարծեմ, մայրենի լեզվով հարցրեցի,— խստորեն ասաց կատուն,— հետո՞ ինչ։

Բայց Պոպլավսկին ոչ մի պատասխան չտվեց։

— Անձնագի՛րդ,— գոռաց կատուն ու պարզեց փափլիկ թաթը։

Ոչինչ չհասկանալով և կատվային աչքերի մեջ կրակվող երկու կայծերից բացի ոչինչ չտեսնելով, Պոպլավսկին գրպանից դաշույնի պես դուրս քաշեց անձնագիրը։ Կատուն հայելու սեղանի վրայից վերցրեց սև հաստ շրջանակով ակնոցը, դրեց մռութին, որից առավել ազդեցիկ դարձավ ու Պոպլավսկու թրթռացող ձեռքի միջից քաշեց անձնագիրը։

«Հետաքրքիր է. ուշագնաց կլինե՞մ, թե՝ ոչ»,— մտածեց Պոպլավսկին։ Հեռվից լսվում էր Կորովևի հեծկլտոցը, ամբողջ նախասենյակը լցվեց եթերայուղի, վալերիանի կաթիլների ու սիրտ խառնող ինչ-որ նողկալիության հոտով։

— Ո՞ր բաժանմունքի կողմից է տրված փաստաթուղթը,— հարցրեց կատուն՝ զննելով էջը։ Պատասխան չեղավ։

— Չորս հարյուր քսաներորդ,— ինքն իրեն ասաց կատուն, թաթը տանելով անձնագրի վրայով, որը շրջված էր բռնել,— հա էլի, իհա՛րկե։ Այդ բաժանմունքը ես գիտեմ։ Այնտեղ ում ասես անձնագիր տալիս են։ Իսկ ես, օրինակ, ձեզ նման մեկին չէի տա։ Ոչ մի դեպքում չէի տա։ Միայն մի անգամ կնայեի դեմքին ու մի վայրկյանում կմերժեի,— կատուն այնքան զայրացավ, որ անձնագիրը շպրտեց հատակին։— Ձեր ներկայությունը հուղարկավորությանը վերացվում է,— պաշտոնական ձայնով շարունակեց կատուն,— նեղություն կրեք մեկնել բնակության վայրը։— Ու թնդաց դռան կողմը.— Ազազե՛լլո։

Նրա կանչի վրա նախասենյակ ընկավ փոքրամարմին, կաղին տվող, սև տրիկոյի մեջ պրկված, կաշվե գոտու արանքը խրած դաշույնով, դեղին ժանիքով, ձախ աչքը հատ ընկած շիկամազ մեկը։

Պոպլավսկին զգաց, որ օդը չի բավականացնում իրեն, վեր ելավ աթոռից ու ետ-ետ գնաց, սիրտը բռնած։

— Ազազելլո, ճանապարհ դիր,— հրամայեց կատուն ու դուրս գնաց նախասենյակից։

— Պոպլավսկի,— քթի մեջ ցածրաձայն ասաց նրա մտածը, —Հուսով եմ, արդեն ամե՞ն ինչ հասկանալի է։

Պոպլավսկին գլխով արեց։

— Անմիջապես վերադարձիր Կիև,— շարունակեց Ազազելլոն, —մտիր մկան ծակն ու սուսուփուս նստիր և Մոսկվայում ունենալիք որևիցե բնակարանի մասին մի երազիր, հասկացա՞ր։

Այդ փոքրամարմին, իր ժանիքով, դաշույնով ու շիլ աչքով Պոպլավսկուն մահու չափ սարսափահար արած մարդը հազիվ տնտեսագետի ուսից լիներ, սակայն գործում էր եռանդուն, հըմտորեն և կազմակերպված։

Նախ և առաջ նա հատակից վերցրեց անձնագիրն ու տվեց Մաքսիմիլիան Անդրեևիչին, իսկ վերջինս գրքույկն ընդունեց անկենդան ձեռքով։ Ապա Ազազելլո կոչվածը մի ձեռքով բարձրացրեց ճամպրուկը, մյուսով բաց արեց դուռը և թևանցուկ անելով Բեռլիոզի ազգականին, նրան դուրս հանեց սանդղահարթակ։ Պոպլավսկին հենվեց պատին։ Առանց որևէ բանալու, Ազազելլոն բացեց ճամպրուկը, միջից յուղոտ թղթի մեջ փաթաթված վիթխարի, տապակած, մի ոտքը կերած հավ հանեց ու դրեց հատակին։ Ապա հանեց երկու ձեռք սպիտակեղենը, ածելի սրելու փոկը, մի գրքույկ ու պատյան, և այդ ամենը ոտքով շպրտեց սանդուղքի բացվածքից ցած, հավից բացի։ Նույն տեղը շպրտվեց նաև դատարկված ճամպրուկը։ Լսվեց, թե ինչպես թրխկաց ներքևում, և, ձայնից դատելով, կափարիչը մի կողմ թռավ։

Ապա այդ շեկ ավազակը բռնեց հավի ոտքից և հավի ամբողջ կողով այնպես ուժեղ ու սաստիկ հարվածեց Պոպլավսկու վզին, որ հավի մարմինը պոկվեց-թռավ, իսկ ոտքը մնաց Ազազելլոյի ձեռքում։ Ամեն ինչ խառնվեց Օբլոնսկիների տանը, ինչպես իրավացիորեն արտահայտվել է նշանավոր գրող Լև Տոլստոյը։ Ճիշտ այդպես էլ նա կասեր տվյալ դեպքում։ Այո՛։ Ամեն ինչ խառնվեց Պոպլավսկու աչքերի առաջ։ Երկարուկ մի կայծ սուրաց աչքերի առջևով, ապա փոխարինվեց սգո ժապավենով, որը մի պահ մթնեցրեց մայիսյան օրը, և Պոպլավսկին ցած թռավ աստիճաններով՝ ձեռքում բռնած անձնագիրը։ Հասնելով շրջադարձին, հաջորդ հարթակի վրա ոտքով ջարդեց պատուհանի ապակին ու նստեց աստիճանի վրա։ Նրա մոտով թռչկոտելով իջավ անոտ հավը և գլորվեց բացվածքից ցած։ Վերևում մնացած Ազազելլոն վայրկենապես կրծոտեց հավի ոտքը և ոսկորը խոթեց տրիկոյի կողագրպանը, վերադարձավ բնակարան և շրխկոցով փակեց դու

ոչ։ Այդ ժամանակ ներքևից վեր բարձրացող մարդու զգույշ ոտնաձայն լսվեց։

Եվս մեկ հարկ ներքև վազելով, Պոպլավսկին նստեց հարթակի փայտյա փոքրիկ նստարանին ու շունչը տեղը բերեց։

Արտասովոր տխուր դեմքով, չեսուչայե հնաոճ կոստյումով, կանաչ ժապավենով ծղոտե հաստ շլյապան գլխին մի պստիկ մարդ, աստիճաններով վեր ելնելով, կանգ առավ Պոպլավսկու մոտ։

— Թույլ տվեք հարցնել, քաղաքացի,— տխրությամբ հարցրեց չեսուչա հագած մարդը,— հիսուներորդ բնակարանը ո՞րն է։

— Ավելի վեր,— հատու պատասխանեց Պոպլավսկին։

— Խորապես շնորհակալ եմ, քաղաքացի,— նույնքան տխուր ասաց մարդուկը և վեր բարձրացավ, իսկ Պոպլավսկին տեղից ելավ ու ցած վազեց։

Հարց է առաջանում. չինի՞ միլիցիա էր շտապում Մաքսիմիլիան Անդրեևիչը, որը ցերեկով իր նկատմամբ վայրի բռնություն գործադրած ավազակների վրա բողոքելու։ Ոչ, ոչ մի դեպքում, վստահ կարելի է ասել։ Գնալ միլիցիա և ասել, թե այսպես ահա, նոր մի ակնոցավոր կատու անձնագիրս էր ստուգում, ապա տրիկո հագած մարդը, դաշույնով... չէ՛, քաղաքացիներ, Մաքսիմիլիան Անդրեևիչն իսկապես խելացի մարդ էր։

Նա արդեն ներքևում էր և ելքի դռան շատ մոտ մեկ ուրիշ դուռ տեսավ, որը տանում էր ինչ-որ խցիկ։ Այդ դռան ապակին ջարդված էր։ Պոպլավսկին անձնագիրը գրպանը դրեց, շուրջը նայեց, հուսալով տեսնել շպրտված իրերը։ Սակայն դրանց հետքն անգամ չկար։ Պոպլավսկին ինքն էլ զարմացավ, թե որքան քիչ դառնացրեց դա իրեն։ Հետաքրքիր ու գրավիչ մեկ այլ միտք էր զբաղեցնում նրան՝ այդ մարդուկի միջոցով մեկ անգամ էլ ստուգել անիծյալ բնակարանը։ Իսկապես. եթե հարցնում էր, թե որտեղ է, ուրեմն առաջին անգամ էր գնում։ Հետևաբար հիմա նա գնում է №50 բնակարանում պահ մտած խմբի ուղիղ ճանկը։ Ինչ-որ բան հուշում էր Պոպլավսկուն, որ այդ մարդը շատ շուտով դուրս կգա տվյալ բնակարանից։ Ոչ մի թաղում, ոչ մի ազգական՝ Մաքսիմիլիան Անդրեևիչն արդեն դիտեր, իսկ Կիև մեկնող գնացքին բավական ժամանակ կար։ Տնտեսագետը շուրջը նայեց ու խցիկից ներս պլստաց։ Այդ ժամանակ վերևներում մի դուռ շրխկաց։ «Նա ներս մտավ», — սիրտը նվաղած,

մտածեց Պոպլավսկին։ Խցիկում զով էր, մկան ու սապոգների հոտ էր գալիս։ Մաքսիմիլիան Անդրեևիչը տեղավորվեց կոճղի պես մի բանի վրա ու որոշեց սպասել։ Հարմար դիրք էր, խցիկից ուղիղ երևում էր վեցերորդ շքամուտքի դուռը։

Սակայն կիևցին ստիպված էր ավելի երկար սպասել, քան ենթադրում էր։ Ամբողջ ժամանակ սանդուղքը չգիտես ինչու ամայի էր։ Լավ լսվում էր, և վերջապես հինգերորդ հարկում մի դուռ թխկաց։ Պոպլավսկին քարացավ։ Այո, նրա քայլերն են։ «Ցած է իջնում»։ Մի հարկ ներքևում դուռ բացվեց։ Քայլերը դադարեցին։ Կանացի ձայն։ Տրտում մարդու ձայն... այո, նրա ձայնն էր։ «Հանգիստ թող, ի սեր Քրիստոսի...»՝ նման մի բան ասաց։ Պոպլավսկու ականջը ապակու ջարդված տեղից դուրս էր ցցված։ Այդ ականջը կանացի ծիծաղ որսաց։ Ցած իջնող արագ ու ճարպիկ քայլեր, և ահա կնոջ մեջքը անցավ նրա մոտով։ Մոմլաթե կանաչ պայուսակը ձեռքին այդ կինը ելավ շքամուտքից։ Իսկ այն մարդուկի մանրիկ քայլերը վերսկսվեցին։ «Տարօրինակ է, նա ետ է գնում բնակարան։ Չլինի՞ նա էլ է այդ ավազակախմբից։ Այո, ետ է գնում։ Ահա վերևում նորից դուռը բացեցին։ Է՜, ինչ, մի քիչ էլ սպասենք»։

Այս անգամ ստիպված չեղավ երկար սպասել։ Դռան ձայն։ Մանրիկ քայլեր։ Քայլերը դադարեցին։ Աղեկտուր ճիչ։ Կատվի մլավոց։ Արագ ու մանրիկ, կոտորակված քայլեր, ներքև, ներքև, ներքև։

Պոպլավսկին սպասածը տեսավ։ Խաչակնքելով և ինչ-որ բան քրթմնջալով, նրա մոտով սուրաց տրտում մարդը՝ առանց շլյապայի, լիովին խելագար հայացքով, ճաղատը ճանկռոտած, շալվարը լրիվ թաց։ Նա սկսեց քաշքշել ելքի դռան բռնակը, սարսափից չհասկանալով, թե որ կողմն է բացվում՝ ներս, թե դուրս, ի վերջո բացեց և դուրս թռավ բակ, արևի տակ։

Բնակարանի ստուգումը կատարված էր, այլևս չմտածելով ոչ հանգուցյալ ազգականի, ոչ բնակարանի մասին, իրեն պաշարած վտանգի մտքից անգամ ցնցվելով, Մաքսիմիլիան Անդրեևիչը միայն երեք բառ շշնջալով՝ «Ամե՛ն ինչ հասկանալի է։ Ամե՛ն ինչ հասկանալի է», դուրս վազեց բակ։ Մի քանի րոպե անց տրոլեյբուսը տնտեսագետ-պլանագետին տանում էր Կիևյան կայարանի ուղղությամբ։

Իսկ մինչ տնտեսագետը նստած էր ներքևում՝ խցիկում, փոքրամարմին մարդուկի գլխին խիստ տհաճ պատմություն եկավ։

Մարդուկը Վարյետեի բուֆետապանն էր՝ Անդրեյ Ֆոկիչ Սոկով անուն-հայրանուն-ազգանունով։ Մինչ Վարյետեում հետաքըննություն էր գնում, Անդրեյ Ֆոկիչը շրջապատի անցուդարձից իրեն հեռու էր պահում, և մի բան էր նկատելի, որ նա ավելի տրտում էր դարձել, քան ընդհանրապես կար, դրանից բացի հարցրել էր ցրիչ Կարպովին, թե որտեղ է իջևանել եկվոր մոգը։

Այսպիսով, հարթակի վրա տնտեսագետից բաժանվելով, բուֆետապանը հասավ հինգերորդ հարկ և խփեց № 50 բնակարանի զանգը։

Դուռն անմիջապես բացեցին, բայց բուֆետապանը ցնցվեց, ետ-ետ գնաց ու միանգամից ներս չմտավ։ Դա հասկանալի էր։ Դուռը բացեց մի աղջիկ, որի հագին ոչինչ չկար, բացի ժանեկահյուս պչրուն գոգնոցից և սպիտակ գլխազարդից։ Ի դեպ, ոսկեհուռ կոշիկներով էր։ Մարմնի անթերի կառուցվածք ուներ, և արտաքին միակ պակասությունը կարելի էր համարել վզի վրայի բոսորագույն սպին։

— Էհ, ներս եկեք, քանի որ զանգ եք տվել,— ասաց աղջիկը՝ բուֆետապանի վրա հառելով կանաչ, անառակ աչքերը։

Անդրեյ Ֆոկիչը հոգոց հանեց, աչքերը ճպճպացրեց և շլյապան հանելով քայլ գցեց նախասենյակ։ Հենց այդ ժամանակ էլ նախասենյակում հեռախոսազանգ լսվեց։ Անամոթ աղախինը, մի ոտքը դնելով աթոռին, լծակից վերցրեց խոսափողն ու ասաց.

— Ալլո։

Բուֆետապանը չգիտեր ուր թաքցնի աչքերը, մի ոտքից մյուսին էր հենվում ու մտածում. «Ա՜յ թե աղախին ունի օտարերկրացին։ Թո՜ւհ, ինչ գարշելի բան է»։ Եվ գարշանքից ազատվելու համար սկսեց աչքերը դեսուդեն գցել։

Մեծ ու կիսամութ ամբողջ նախասենյակը լիքն էր անսովոր իրերով ու հագուստներով։ Այսպես, աթոռի թիկնակին գցած էր հրակարմիր աստառով սգո թիկնոց, հայելու սեղանիկի վրա դըրված էր ոսկյա փայլփլուն երախակալով մի երկար սուսեր։ Արծաթյա երախակալներով երեք սուսեր կանգնեցված էին անկյունում նույնքան սովորական, ասես հասարակ հովանոցներ կամ ձեռնափայտեր լինեին։ Իսկ եղջերուի եղջյուրներից կախված էին արծվի փետուրներով բերետներ։

— Այո՞,— ասում էր աղախինը խոսափողի մեջ,— ինչպե՞ս։ Բարոն Մա՞յգելը։ Լսում եմ։ Այո՛։ Պարոն արտիստն այսօր տանն է։ Այո, ուրախ կլինի ձեզ տեսնել։ Այո, հյուրեր ունենք... Ֆրակ

կամ սև պիջակ։ Ի՞նչ։ Գիշերվա ժամը տասներկուսի մոտ։—
Ավարտելով խոսակցությունը, աղախինը դրեց խոսափողն ու դիմեց բուֆետապանին.— Ի՞նչ եք ուզում։

— Պետք է տեսնեմ քաղաքացի արտիստին։

— Ինչպե՞ս։ Մի՞թե հենց իրեն։

— Իրեն,— պատասխանեց բուֆետապանը տխուր։

— Հարցնեմ,— հավանորեն տատանվելով՝ ասաց աղախինը և բացելով հանգուցյալ Բեռլիոզի աշխատասենյակի դուռը, հաղորդեց.— Ասպետ, մի պստլիկ մարդ է ներկայացել այստեղ ու ասում է, որ իրեն հարկավոր է մեսիրը։

— Է, թող ներս գա,— աշխատասենյակից լսվեց Կորովևի խզված ձայնը։

— Անցեք հյուրասենյակ,— ասաց աղջիկն այնքան սովորական, ասես հագնված էր մարդավարի, կիսաբաց արեց հյուրասենյակի դուռը, իսկ ինքը թողեց նախասենյակը։

Մտնելով այնտեղ, ուր իրեն հրավիրել էին, բուֆետապանը նույնիսկ մոռացավ իր գործի մասին, այն աստիճան ապշեցրեց նրան սենյակի կահավորանքը։ Մեծ լուսամուտների գունավոր ապակիների միջից (անհետ կորած ակնագործի այրու քմահաճույքը) արտասովոր, եկեղեցու լույսի պես լույս էր հորդում։ Հնօրյա վիթխարի բուխարու մեջ, չնայած գարնանային տաք օրվան, փայտեր էին վառվում։ Այնինչ ամենևին շոգ չէր սենյակում, նույնիսկ, ընդհակառակն, ներս մտնողին մի տեսակ նկուղային խոնավություն էր պարուրում։ Բուխարու առջև, վագրի մորթու վրա մի խոշոր սև կատու էր նստած՝ աչքերը հանգիստ կկոցած կրակի վրա։ Սեղան կար, որը տեսնելուն պես աստվածավախ բուֆետապանը ցնցվեց. սեղանը ծածկված էր եկեղեցական դիպակով։ Դիպակե ծածկոցի վրա բազմաթիվ շշեր էին շարված՝ լայնափոր, բորբոսակալած ու փոշոտ։ Շշերի արանքից պսպղում էր մատուցարանը, և անմիջապես երևում էր, որ մատուցարանը մաքուր ոսկուց է։ Բուխարու մոտ, դաշույնը գոտու արանքը խրած փոքրամարմին շիկամազը պողպատյա երկար սուսերի վրա հագցրած մսի կտորներ էր խորովում, և հյութը կաթում էր կրակի վրա, և ծուխը ելնում էր ծխնելույզն ի վեր։ Ոչ միայն խորովվող մսի, այլ նաև մի տեսակ թունդ օծանելիքի և խնկի հոտ էր գալիս, ինչը և Բեռլիոզի վախճանի ու նրա բնակության վայրի մասին թերթերից արդեն տեղյակ բուֆետապանի ուղեղում մի միտք արթնացրեց, թե չլինի՞ հանկարծ եկեղեցական հոգեհան-

գիտ են կատարել Բեռլինի համար, ընդ որում, նման միջոցը իսկույն վանեց իրենից, որպես անհնարին անհեթեթ։

Այդուհանդերձ բուֆետապանն անսպասելիորեն մի թավ բաս լսեց.

— Դե-հ, ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել։

Այստեղ էլ բուֆետապանը ստվերի ներքո հայտնաբերեց նրան, ով պետք էր իրեն։

Սև մորուք փռվել էր մի անընդգրկելի, ցածր, բարձերով բեռնված բազմոցի վրա։ Ինչպես թվաց բուֆետապանին, արտիստի հագին միայն սև շապիկ ոտաշոր կար ու նույնպես սև, սրածայր կոշիկներ։

— Ես,—խղճալի սկսեց բուֆետապանը,— Վարյետե թատրոնի բուֆետի վարիչն եմ...

Արտիստն առաջ պարզեց ձեռքը, որի մատների վրա քարեր էին շողշողում, ասես պատնեշելով բուֆետապանի շրթունքները, և մեծ ավյունով սկսեց խոսել.

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Այլևս ո՛չ մի խոսք։ Ո՛չ մի դեպքում և երբե՛ք։ Մի հատիկ բան չեմ դնի բերանս ձեր բուֆետում։ Հարգելիս, երեկ ես անցնում էի ձեր վաճառասեղանի մոտով ու մինչև հիմա չեմ կարողանում մոռանալ ոչ թառափը, ոչ բրինձա պանիրը։ Թանկագի՛նդ իմ։ Բրինձան կանաչ գույնի չի լինում, ինչ-որ մեկը խաբել է ձեզ։ Հարկ է, որ ճերմակ լինի։ Այո՛, հապա թե՞յը։ Չէ որ դա լվացքաջուր էր։ Սեփական աչքերովս տեսա, թե ինչպես մի փնթի աղջիկ դույլից ձեր վիթխարի ինքնաեռի մեջ հում ջուր էր լցնում, իսկ այդ ընթացքում շարունակում էին վաճառել։ Ոչ, սիրելիս, անկարելի է այդպես։

— Ես ներողություն եմ խնդրում,— խոսեց հանկարծակի այդ հարձակումից շշմած Անդրեյ Ֆոկիչը,— ես այդ գործով չեմ եկել, թառափն էլ այստեղ կապ չունի։

— Այսինքն ինչպե՞ս թե կապ չունի, եթե փչացած է։

— Երկրորդ աստիճանի թարմության թառափ էին ուղարկել, —հայտնեց բուֆետապանը։

— Դա ցնդաբանությու՛ն է, հոգյակս։

— Ի՞նչն է ցնդաբանություն։

— Երկրորդ աստիճանի թարմությունը՝ դա՛ է ցնդաբանություն։ Միայն մեկ թարմություն է լինում՝ առաջին աստիճանի, և վերջին։ Իսկ եթե թառափը երկրորդ աստիճանի թարմություն ունի, ապա դա՛ նշանակում է, որ հոտած է։

*— Ես ներողություն եմ խնդրում...— ուզում էր նորից սկըսել բուֆետապանը՝ չիմանալով գլուխն ինչպես ազատել կշտամբանքի առիթ որոնող արտիստից։*

*— Ներել չեմ կարող,— հաստատ ասաց նա։*

*— Ես այդ գործով չեմ եկել,— լիովին վշտացած, մրմնջաց բուֆետապանը։*

*— Այդ գործով չէ՞,— զարմացավ օտարերկրացի մոգը։— Իսկ է՞լ ինչ գործ կարող էր ինձ մոտ բերել ձեզ։ Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, մասնագիտությամբ ձեզ մոտ մարդկանցից միայն մի նպարավաճառուհու էի ճանաչում, բայց դա վաղուց էր, երբ դուք դեռ լույս աշխարհ էլ չէիք եկել։ Ասենք, ես ուրախ եմ։ Ազազե՛լլո։ Աթոռակ տվեք բուֆետի պարոն վարիչին։*

*Միս խորովողը շուռ եկավ, ընդ որում սարսափեցրեց բուֆետապանին իր ժանիքներով, և նրան մոտեցրեց մուգ կաղնեփայտե, ցածրիկ աթոռակներից մեկը։ Սենյակում նստելու ուրիշ բան չկար։*

*Բուֆետապանը քրթմնջաց.*

*— Խոնարհաբար շնորհակալ եմ,— ու նստեց աթոռակին։ Ետևի ոտն իսկույն ջարդվեց շրխկոցով, և բուֆետապանը, տնքալով, հետույքով ուժգին զարնվեց հատակին։ Ընկնելիս, ոտքով դիպավ դիմացը դրված մյուս աթոռակին ու դրա վրայից շալվարին թափեց կարմիր գինով լի գավաթը։*

*Արտիստը բացականչեց.*

*— Ա՜յ։ Չվնասվեցի՞ք արդյոք։*

*Ազազելլոն բուֆետապանին օգնեց վեր բարձրանալ, մի ուրիշ աթոռակ տվեց։ Բուֆետապանը վշտալի ձայնով հրաժարվեց տանտիրոջ՝ շալվարը հանելու և կրակի առաջ չորացնելու առաջարկից, և անտանելի անհարմար զգալով վրայի թաց սպիտակեղենից ու շալվարից, անվստահությամբ նստեց մյուս աթոռակին։*

*— Ես սիրում եմ ցածր նստել,— սկսեց արտիստը,— ցածր տեղից այնքան վտանգավոր չէ ընկնելը։ Այո, ուրեմն մենք թառափի վրա՞ կանգ առանք։ Հոգյա՜կս։ Թարմությու՜ն, թարմությու՜ն և թարմություն՝ ահա թե ինչը պիտի լինի յուրաքանչյուր բուֆետապանի նշանաբանը։ Ահա, չե՞ք հաճի փորձել...*

*Այստեղ բուխարու բոսորագույն լույսի տակ բուֆետապանի դիմաց շողշողաց սուսերը, և Ազազելլոն ոսկյա սկուտեղի մեջ*

դրեց մի թշշացող կտորը, կիտրոնի հյութ ցողեց վրան և բու-ֆետապանին ոսկյա երկծայր պատառաքաղ տվեց։

— Խոնարհաբար... ես...

— Ոչ, ոչ, փորձեցեք...

Քաղաքավարությունից դրդված, բուֆետապանը մի կտոր դրեց բերանը և իսկույն հասկացավ, որ իսկապես շատ թարմ և գլխավորը՝ արտասովոր համեղ բան է ծամում։ Բայց բուրում-նավետ, հյութեղ միսը ծամելիս բուֆետապանը քիչ էր մնում խեղդվեր ու երկրորդ անգամ ցած ընկներ։ Հարևան սենյակից ներս թռավ մի խոշոր, գորշ թռչուն և թևով կամացուկ քսվեց բու-ֆետապանի ճաղատին։ Երբ նստեց բուխարու կատարը եզերող մարմարին, ժամացույցի կողքին, պարզվեց, որ բու է։ «Տե՜ր իմ աստված,— մտածեց բոլոր բուֆետապանների նման նյարդա-յին Անդրեյ Ֆոկիչը,— այ քեզ բնակարան»։

— Մի գավաթ գինի՞։ Սպիտա՞կ, կարմի՞ր։ Ո՞ր երկրի գինին եք նախընտրում օրվա այս ժամին։

— Խոնարհաբար... ես չեմ խմում...

— Իզուր։ Հրամեցեք մի պարտիա զառ խաղանք։ Թե՞ դուք ուրիշ խաղեր եք սիրում։ Դոմինո՞, թո՞ւղթ։

— Չեմ խաղում,— արդեն հոգնած պատասխանեց բուֆետա-պանը։

— Միանգամայն վատ է,— եզրակացրեց տանտերը,— կամ-քը ձեր լինի, բայց ինչ-որ մի վատ բան կա գինուց, խաղերից, գեղանի տիկնանցից, սեղանի շուրջ զրույցից խուսափող տղա-մարդկանց մեջ։ Այդպիսի մարդիկ կամ ծանր հիվանդ են, կամ ծածուկ ատում են շրջապատողներին։ Ճշմարիտ է, բացառու-թյուններ հնարավոր են։ Ինձ հետ խնջույքի սեղանին նստած մարդկանց մեջ երբեմն զարմանալի սրիկաներ են եղել։ Այսպես, ես լսում եմ ձեր գործը։

— Երեկ դուք բարեհաճեցիք ֆոկուսներ անել...

— Ե՞ս,— զարմացած բացականչեց մոգը,— ողորմացե՜ք։ Մի տեսակ նույնիսկ սազական էլ չէ դա ինձ համար։

— Ներեցեք,— ասաց ապշած բուֆետապանը,— չէ որ, ախր, սև մոգության սեանսը...

— Ահ, այո՜, այո՜։ Թանկագինս։ Մի գաղտնիք հայտնեմ ձեզ. ես ամենևին էլ արտիստ չեմ, պարզապես ուզեցի մոսկվացի-ներին տեսնել զանգվածով, իսկ ամենահարմարը թատրոնն է դրա համար։ Ահա և իմ շքախումբը,— նա գլխով արեց կատվի

կողմը,— սարքեց այդ սեանսը, իսկ ես միայն նստել ու նայում էի մոսկվացիներին։ Սակայն մի այլայլվեք, այլ ասացեք, թե այդ սեանսի կապակցությամբ ի՞նչն է ձեզ ինձ մոտ բերել։

— Գիտե՞ք ինչ, մնացածից բացի առաստաղից փող էլ թափվեց,— բուֆետապանն իջեցրեց ձայնը ու շշկլված շուրջը նայեց,— դե, բոլորն էլ վերցրեցին։ Եվ ահա, մի երիտասարդ եկավ բուֆետ, տասանոցը տվեց, մնացորդը վերադարձրեցի՝ ութ ու հիսուն... Հետո մեկ ուրիշը։

— Դարձյա՞լ երիտասարդ։

— Չէ, տարեց։ Երրորդը, չորրորդը։ Անընդհատ մնացորդը վերադարձնում էի։ Իսկ այսօր դրամարկղը ստուգեցի՝ տեսնեմ, փողի փոխարեն կտրատած թղթեր են։ Հարյուր ինը ռուբլու վնաս են տվել բուֆետին։

— Այ՜-ա՜յ-ա՜յ,— բացականչեց արտիստը,— բայց մի՞թե նրանք կարծել են, թե դրանք իսկական թղթադրամներ են։ Ես չեմ կարող մտածել, թե նրանք գիտակցորեն են դա արել։

Բուֆետապանը մի տեսակ ծուռ ու տրտմագին չորսբոլորը նայեց, բայց ոչինչ չասաց։

— Մի՞թե խաբեբաներ են,— տագնապով հարցրեց մոգը հյուրին,— մի՞թե մոսկվացիների մեջ խաբեբաներ կան։

Ի պատասխան բուֆետապանն այնպես դառնորեն ժպտաց, որ ամենայն կասկած փարատվեց. այո, մոսկվացիների մեջ խաբեբաներ կան։

— Դա ստորությո՜ւն է,— զայրացավ Վոլանդը,— դուք չունևոր մարդ եք... դուք չունևոր մարդ եք, չէ՞։

Բուֆետապանը գլուխը մտցրեց ուսերի մեջ, այնպես որ երևաց, որ նա չունևոր մարդ է։

— Ինչքա՞ն խնայողություն ունեք։

Հարցը տրվեց կարեկից երանգով, բայց և այնպես նման հարցը չի կարելի անփափկանկատ չհամարել։ Բուֆետապանը կարկամեց։

— Երկու հարյուր քառասունինը հազար ռուբլի հինգ խնայդրամարկղերում,— հարևան սենյակից արձագանքեց խզված ձայնը,— տանն էլ, հատակի տակ երկու հարյուր հատ ոսկե տասանոց։

Բուֆետապանն ասես սոսնձվեց իր աթոռակին։

— Դե, իհարկե, դա գումար չէ,— ներողամտաբար ասաց

*Վոլանդն իր հյուրին,— [illegible] ի դեպ, դա էլ, ըստ էության, ձեզ պետք չի գա։ Դուք ե՞րբ եք մեռնելու։*

*Այստեղ արդեն բուֆետապանը վիրավորվեց։*

*— Դա ոչ մեկին հայտնի չէ և ոչ ոքի չի վերաբերում,— պատասխանեց նա։*

*— Չէ մի՛, հայտնի չէ,— աշխատասենյակից լսվեց միևնույն նողկալի ձայնը,— տեսե՛ք, տեսե՛ք՝ Նյուտոնի երկանդամը։ Նա կմեռնի ինն ամիս անց, հաջորդ տարվա փետրվարին. լյարդի քաղցկեղից, ՄՊՀ Առաջին կլինիկայում, չորրորդ հիվանդասենյակում։*

*Բուֆետապանի դեմքը դեղնեց։*

*— Ինն ամիս,— մտայլբաղ հաշվում էր Վոլանդը,— երկու հարյուր քառասունինը հազար... Կլոր հաշվով ամսական ստացվում է քսանյոթ հազա՞ր։ Մի քիչ քիչ է, բայց համեստ ապրուստի կբավականացնի։ Այդ տասանոցներն էլ հետը։*

*— Տասանոցները մանրել չի հաջողվի,— մեջ ընկավ այն նույն ձայնը, սառեցնելով բուֆետապանի սիրտը,— Անդրեյ Ֆոկիչի մահանալուց հետո տունն անմիջապես կքանդեն, և տասանոցները կուղարկվեն Պետբանկ։*

*— Ես ձեզ խորհուրդ էլ չէի տա պառկել կլինիկայում,— շարունակեց արտիստը,— ի՞նչ միտք ունի մեռնել հիվանդասենյակում՝ անհուսալի հիվանդների տնքոցների ու խռխռոցների տակ։ Ավելի լավ չի՞ լինի այդ քսանյոթ հազարով խնջույք սարքեք և, թույն ընդունելով, տեղափոխվեք «մեկ այլ աշխարհ» լարային հնչյունների ներքո, շրջապատված գինովցած գեղեցկուհիներով ու կտրիճ ընկերներով։*

*Բուֆետապանը նստած էր անշարժ ու շատ էր ծերացել։ Սևավուն շրջանակներ օղակեցին նրա աչքերը, այտերը թուլացան և ծնոտը կախ ընկավ։*

*— Սակայն, մենք երազների գիրկն ընկանք,— բացականչեց տանտերը,— անցնենք գործի։ Ցույց տվեք ձեր կտրատած թղթերը։*

*Բուֆետապանը, հուզվելով, գրպանից հանեց կապուկը, բաց արեց ու քարացավ։ Լրագրի կտորի մեջ տասանոցներ էին։*

*— Թանկագինս, դուք իսկապես վատառողջ եք, —ասաց Վոլանդը, ուսերը թոթվելով։*

*Բուֆետապանը, այլայլված ժպտալով, վեր ելավ աթոռակի վրայից։*

*— Իսկ,— կակազեց նա,— իսկ եթե սրանք նորից...*

— Հըմ...— մտքերի մեջ ընկավ արտիստը,— է, այդ ժամանակ նորից եկեք մեզ մոտ։ Համեցե՛ք։ Ուրախ եմ մեր ծանոթության համար։

Անմիջապես աշխատասենյակից դուրս թռավ Կորովևը, կպավ բուֆետապանի ձեռքից, սկսեց թափահարել ու Անդրեյ Ֆոկիչին խնդրել, որ ողջույններ հաղորդի բոլորին, բոլորին։ Որևիցե բան չհասկանալով, բուֆետապանը շարժվեց դեպի նախասենյակ։

— Գելլա, ուղեկցի՛ր,— բղավեց Կորովևը։

Դարձյալ այդ մերկ շիկահերը՝ նախասենյակում։ Բուֆետապանը դռնից դուրս սողոսկեց, ծղրտաց «ցտեսություն» ու քայլեց հարբածի պես։ Մի քանի քայլ ցած իջնելով, նա կանգ առավ, նստեց աստիճանին, հանեց կապուկը, ստուգեց՝ տասանոցները կային։

Այստեղ սանդղահարթակի վրա բացվող բնակարանից դուրս եկավ կանաչ պայուսակով կինը։ Տեսնելով աստիճանի վրա նըստած ու բութ հայացքով տասանոցներին նայող մարդուն, կինը ժպտաց և մտազբաղ ասաց։

— Ինչ տուն է մեր տունն, է՜։ Առավոտից սա՝ էստեղ հարբած։ Սանդուղքի վրա ապակին էլի ջարդել են,— ավելի ուշադիր նայելով բուֆետապանին, ավելացրեց.— է՜-է՜, քաղաքացի, տասանոցների ձեռը կրակն ես ընկել։ Կեսն ինձ տուր։ Հը՞։

— Հանգիստ թողեք ինձ, ի սեր Քրիստոսի,— վախեցավ բուֆետապանն ու պահեց փողը։ Կինը ծիծաղեց.

— Գրողի ծոցը գնաս, ժլա՛տ։ Հանաք արեցի,— ու ցած իջավ։

Բուֆետապանը դանդաղ ոտքի ելավ, ձեռքը վեր տարավ, որ ուղղի շլյապան ու համոզվեց, որ գլխին չէ։ Անասելի չէր ուզում ետ դառնալ, բայց ափսոսում էր շլյապան։ Փոքր-ինչ տատանվելով, համենայն դեպս ետ դարձավ ու զանգը խփեց։

— Է՞լ ինչ եք ուզում,— հարցրեց նզովյալ Գելլան։

— Շլյապաս եմ մոռացել,— շշնջաց բուֆետապանը՝ մատը խփելով ճաղատին։ Գելլան շուռ եկավ, բուֆետապանը մտովի թքեց ու փակեց աչքերը։ Երբ բաց արեց, Գելլան նրան մատուցեց շլյապան և գորշագույն երախակալով սուսերը։

— Իմը չէ,— շշնջաց բուֆետապանը, ետ հրելով սուսերն ու արագ-արագ գլխին դնելով շլյապան։

— Մի՞թե առանց սուսերի էիք եկել,— զարմացավ Գելլան։

Բուֆետապանն ինչ-որ բան մրթմրթաց ու արագ ցած իջավ։ Գլուխը, չգիտես ինչու, ննջվում էր, ու շլյապան շատ էր տաքացնում։ Հանեց և, սարսափից վեր թռչելով, կամացուկ ճչաց։ Ձեռքի մեջ աքաղաղի գզգզված փետուրով թավշյա մի բերետ էր։ Բուֆետապանը խաչակնքեց։ Նույն վայրկյանին բերետը մլավեց, դարձավ սև կատվաձագ ու, ետ ցատկելով Անդրեյ Ֆոկիչի գլխին, բոլոր ճանկերը խրեց ճաղատի մեջ։ Աղեկտուր ճիչ արձակելով՝ բուֆետապանը վազելով ցած գցեց իրեն, իսկ կատվաձագը գլխի վրայից թռավ ու վեր սլացավ աստիճաններով։

Դուրս պրծնելով բակ, բուֆետապանը վազեց դեպի դարպասը և ընդմիշտ թողեց №302/2 սատանայի տունը։

Շատ լավ հայտնի է, թե ինչ եղավ հետո։ Դարպասատակից դուրս վազելով, բուֆետապանը շուրջը նայեց այլայլված, ասես ինչ-որ բան փնտրելով։ Մեկ րոպե անց փողոցի մյուս կողմում էր, դեղատանը։ «Ասացեք, խնդրեմ...» բառերն արտաբերելուն պես, վաճառասեղանի մյուս կողմում կանգնած կինը բացականչեց.

— Քաղաքացի՛, Ձեր գլուխն ամբողջովին ծվատվա՜ծ է...

Հինգ րոպե անց բուֆետապանի գլուխը վիրակապված էր, նա իմացավ, որ լյարդի հիվանդության լավագույն մասնագետներն են համարվում պրոֆեսորներ Բերնադսկին և Կուզմինը, հարցրեց, թե որն է ավելի մոտ ապրում, ուրախությունից ոգևորվեց, երբ իմացավ, որ Կուզմինն ապրում է տառացիորեն մեկ բակ այն կողմ, փոքրիկ ու սպիտակ առանձնատանը, և երկու րոպե անց այդ առանձնատանն էր։ Հին շենք էր, բայց շատ, շա՜տ հարմարավետ։ Բուֆետապանի հիշողության մեջ մնաց, որ առաջինն իրեն ընդառաջ ելավ պառավ դայակը, որը նրա շլյապան էր ուզում վերցնել, բայց քանի որ գլխարկը չկար, դայակը, բերանը լմլմացնելով, ինչ-որ տեղ գնաց։ Նրա փոխարեն, հայելու մոտ, և թվում է, թե կամարի տակ կանգնած միջին տարիքի մի կին հայտնվեց ու իսկույն ասաց, որ կարելի է հերթագրվել միայն ոչ շուտ, քան տասնիննի համար։ Բուֆետապանն անմիջապես կռահեց, թե որն է փրկությունը։ Հանգչող աչքով նայեց կամարից այն կողմ, ուր անկասկած նախասենյակն էր և երեք մարդ էին սպասում, շշնջաց.

— Մահացու հիվանդ եմ...

Կինը տարակուսանքով նայեց բուֆետապանի վիրակապած գլխին, տատանվելով ասաց.

— Է, ինչ արած ...— և կամացուկ ներս թողեց բուֆետապանին։

Նույն վայրկյանին հանդիպակաց դուռը բացվեց, մի ոսկյա քթանոց շողշողաց այստեղ, խալաթ հագած կինն ասաց.

— Քաղաքացիներ, այս հիվանդը առանց հերթի կգնա։

Ու չէր հասցրել բուֆետապանը շարժում անել, որ հայտնվեց պրոֆեսոր Կուզմինի աշխատասենյակում։ Սարսափելի, հանդիսավոր ու բժշկական ոչ մի բան չկար այդ երկարավուն սենյակում։

— Ի՞նչ է պատահել ձեզ,— հաճելի ձայնով հարցրեց պրոֆեսոր Կուզմինը և փոքր-ինչ անհանգստացած նայեց վիրակապված գլխին։

— Նոր հավաստի տեղից իմացա,— պատասխանեց բուֆետապանը, վայրենացած հայացքով նայելով ապակու տակ դրված խմբական լուսանկարին,— որ հաջորդ տարվա փետրվարին ես կմեռնեմ լյարդի քաղցկեղից։ Աղաչում եմ՝ դեմն առեք։

Պրոֆեսոր Կուզմինը ինչպես նստած էր, այնպես էլ ետ ընկավ բազկաթոռի բարձր, կաշվե գոթական թիկնակին։

— Ներեցեք, ձեզ չեմ հասկանում... Ինչ է, դուք բժշկի մո՞տ եք եղել։ Ինչո՞ւ է ձեր գլուխը վիրակապած։

— Ի՞նչ բժիշկ, ի՞նչ բան... Միայն թե տեսնեիք այդ բժշկին ...— նա հանկարծ շխկշխկացրեց ատամները։— Իսկ գլխիս ուշադրություն մի դարձրեք, նշանակություն չունի,— պատասխանեց բուֆետապանը,— գլխի վրա թքած, դա կապ չունի։ Լյարդի քաղցկեղ է, խնդրում եմ՝ դեմն առեք։

— Բայց ներեցեք, ձեզ ո՞վ է ասել։

— Հավատացեք նրան,— կրակոտ տոնով խնդրեց բուֆետապանը,— նա գիտե, գիտե։

— Ոչինչ չեմ հասկանում,— ուսերը թոթվելով և բազկաթոռով ետ մղվելով սեղանից, ասաց պրոֆեսորը։— Նա ինչպե՞ս կարող է իմանալ, թե երբ եք դուք մեռնելու։ Առավել ևս, որ բժիշկ չէ։

— Չորրորդ հիվանդասենյակում, — պատասխանեց բուֆետապանը։

Այստեղ պրոֆեսորը նայեց իր հիվանդին, նրա գլխին, նրա

թաց շալվարին ու մտածեց. «Այդ նա՞ էր պակաս նեղացա՞ծ էլ». Հարցրեց.

— Օղի խմու՞մ եք։

— Երբեք բերանս չեմ առել,— պատասխանեց բուֆետապանը։

Մի քայլ անց նա հանված էր, պառկած մոմլաթապատ սառը թախտին, և պրոֆեսորը լսում էր նրա սրտխփոցը։ Այստեղ՝ հարկ է ասել, բուֆետապանը զգալի չափով զվարթացավ։ Պրոֆեսորն անտարակուսելի տոնով հաստատեց, որ ներկայումս, համենայն դեպս՝ այդ պահին, բուֆետապանը քաղցկեղի որևիցե նախանիշ չունի։ Բայց քանի որ այդպես է... որ վախենում է և շառլատանի մեկը նրան վախեցրել է, ապա պետք է կատարել բոլոր ստուգումները... Պրոֆեսորը թղթի կտորներ էր գրոտում, բացատրելով ուր գնալ, ինչ տանել։ Դրանից բացի, երկտող տվեց պրոֆեսոր-նևրոպաթոլոգ Բուրեին, բուֆետապանին բացատրելով, որ նրա նյարդերը լիովին քայքայված են։

— Ինչքա՞ն վճարեմ, պրոֆեսոր,— մեղմ ու դողդոջ ձայնով հարցրեց բուֆետապանը, հանելով հաստ դրամապանակը։

— Ինչքան ուզում եք,—չոր ու հատու պատասխանեց պրոֆեսորը։

Բուֆետապանը հանեց երեսուն ռուբլի և դրեց սեղանին, իսկ հետո անսպասելիորեն փափուկ, ասես կատվի թաթով էր գործում, տասանոցների վրայից թերթի մեջ փաթաթված զրնգացող մի սյունակ էլ դրեց։

— Իսկ դա՞ ինչ է, — հարցրեց Կուզմինն ու բեղը ոլորեց։

— Մի խորշեք, քաղաքացի պրոֆեսոր,— շշնջաց բուֆետապանը,— աղաչում եմ, քաղցկեղի դեմն առեք։

— Իսկույն ևեթ վերցրեք ձեր ոսկին,— ասաց պրոֆեսորը՝ ինքն իրենով հպարտ,— ավելի լավ կլինեք ձեր նյարդերին հետևեիք։ Վաղն ևեթ մեզը տվեք ստուգման, շատ թեյ մի խմեք և բացարձակապես աղ մի օգտագործեք։

— Սուպի վրա՞ էլ աղ չանեմ,— հարցրեց բուֆետապանը։

— Ոչնչի վրա,— հրամայեց Կուզմինը։

— Է՜հհհ...—տրտմագին բացականչեց բուֆետապանը, զորովանքով նայելով պրոֆեսորին, ոսկիները վերցնելով ու ետ-ետ գնալով դեպի դուռը։

Այդ երեկո պրոֆեսորի հիվանդները շատ չէին, և մթնշաղն

*իջնելուն պես գնաց վերջինը։ Խալաթը հանելով, պրոֆեսորը նայեց այնտեղ, ուր բուֆետապանը տաաանոցներն էր թողել, և տեսավ, որ ոչ մի տասանոց չկա, այլ «Աբրաու-Դյուրսոյի» երեք պիտակ է դրված։*

*— Սատանան գիտե, թե ինչ բան է,— մրթմրթաց Կուզմինը, խալաթի փեշը հատակին քսելով ու թղթերը շոշափելով,— բանից պարզվում է, նա ոչ միայն շիզոֆրենիկ է, այլև խաբեբա։ Բայց չեմ կարողանում հասկանալ, թե նրա ինչի՞ն էր պետք։ Մի՞թե մեզի ստուգման գրությունն։ Օ՜, նա վերարկուն է գողացել։— Եվ նա իրեն գցեց նախասենյակ, դարձյալ խալաթի մի թևը չհանած։— Կսենիա Նիկիտի՛չնա,— զիլձայն բղավեց նախասենյակի դռան մեջ կանգնած,— նայեք, վերարկուները տեղու՞մ են։*

*Պարզվեց, որ բոլոր վերարկուները տեղում են։ Բայց դրա փոխարեն, երբ վերջապես վրայից խալաթը հանելով, պրոֆեսորը վերադարձավ սեղանի մոտ, կարծես մեխվեց պարկետին, հայացքը հառած սեղանին։ Այն տեղում, ուր պիտակներն էին գցած, մի սև որբուկ-կատվաձագ էր նստած, դժբախտ մռութով և մլավում էր կաթով լի ափսեի վրա։*

*— Իսկ սա՞ ինչ բան է, կներեք։ Սա արդեն...— Նա զգաց, թե ինչպես սառեց ծոծրակը։*

*Պրոֆեսորի թույլ և աղեկտուր ճիչի վրա վազելով եկավ Կսենիա Նիկիտիչնան ու լիովին հանգստացրեց նրան, անմիջապես ասելով, որ, իհարկե, հիվանդներից մեկնումեկն է թողել կատվաձագը, որ դա հաճախ լինում է պրոֆեսորների տներում։*

*— Հավանաբար, վատ են ապրում,— բացատրում էր Կսենիա Նիկիտիչնան,— իսկ մեզ մոտ, իհարկե...*

*Սկսեցին մտածել, ենթադրել, թե ով կարող էր թողնել։ Կասկածն ընկավ ստամոքսի խոց ունեցող պառավ կնոջ վրա։*

*— Նա է, իհարկե,— ասում էր Կսենիա Նիկիտիչնան,— մտածել է՝ մեկ է, ես պետք է մեռնեմ, իսկ կատվաձագը մեղք է։*

*— Բայց ներեցեք,— բղավեց Կուզմինը,— իսկ կա՞թն ինչ։ Կա՞թն էլ է նա բերել։ Ափսե՞ն էլ։*

*— Սրվակով բերած կլինի, այստեղ էլ լցրել է ափսեի մեջ,— բացատրեց Կսենիա Նիկիտիչնան։*

*— Համենայն դեպս, հեռացրեք կատվաձագն էլ, ափսեն էլ,— ասաց Կուզմինը և Կսենիա Նիկիտիչնային ուղեկցեց մինչև դուռը։ Երբ շուռ եկավ, իրադրությունը փոխվել էր։*

*Խալաթը մեխին կախելիս, պրոֆեսորը քրքիջ լսեց բակում,*

բնականաբար դուրս նայեց ու շվարեց։ Բակով դիմացի մասնաշենքի կողմն էր վազում շապկանց մի տիկին։ Պրոֆեսորը նույնիսկ գիտեր նրա անուն-հայրանունը՝ Մարյա Ալեքսանդրովնա։ Թրջացողը մի տղա էր։

— Սա ի՞նչ բան է,— արհամարհանքով ասաց Կուզմինը։

Այդ ժամանակ պատից այն կողմ, պրոֆեսորի դասեր սենյակում պատեֆոնը սկսեց «Ալելույա» ֆոքստրոտը նվագել, ու նույն վայրկյանին պրոֆեսորի հունում ճնճղուկի ծլվլոց լսվեց։ Նա շրջվեց ու իր սեղանի վրա խոշոր ու թռչկոտող մի ճնճղուկ տեսավ։

«Հըմ... հանգիստ...— մտածեց պրոֆեսորը,— ներս է ընկել, երբ ես հեռացա պատուհանից։ Ամեն բան կարգին է»,— ինքն իրեն հրամայեց պրոֆեսորը, զգալով, որ ամեն բան կատարելապես կարգին չէ, և, իհարկե, գլխավորապես այդ ճնճղուկի պատճառով։ Ուշադիր նայելով, պրոֆեսորն անմիջապես համոզվեց, որ այդ ճնճղուկն ամենևին էլ սովորական ճնճղուկ չէ։ Զարշելի ճնճղուկը կաղում էր ձախ ոտիկի վրա, բացահայտորեն ձևեր էր թափում, քարշ տալով ոտիկը, գործում էր սինկոպաներով, մի խոսքով՝ պատեֆոնի հնչյունների տակ ֆոքստրոտ էր պարում, ինչպես հարբածը վաճառասեղանի մոտ։ Իրեն անկիրթ էր պահում ըստ կարելվույն, լկտիաբար պրոֆեսորին նայելով աչքի տակով։ Կուզմինի ձեռքն իջավ հեռախոսին, ու նա պատրաստվում էր զանգահարել իր համակուրսեցի Բուրեին, հարցնելու համար, թե ի՞նչ են նշանակում նմանօրինակ ճնճղուկները վաթսուն տարեկան հասակում, նաև՝ երբ հանկարծ պտտվում է գլուխը։

Իսկ ճնճղուկն այդ ընթացքում նստեց ընծայված թանաքամանի վրա, ծրտեց մեջը (չեմ կատակում), ապա վեր թռավ, կախվեց օդի մեջ, հետո թափով, ասես պողպատյա կտուցով, զարկեց 94 թվականի համալսարանական բոլոր շրջանավարտներին պատկերող լուսանկարի ապակուն, փշուր-փշուր արեց ապակին, նոր արդեն պատուհանից դուրս թռավ։ Պրոֆեսորը փոխեց հեռախոսի համարը և Բուրեին զանգահարելու փոխարեն կանգահարեց տզրուկների բյուրո, ասաց, որ պրոֆեսոր Կուզմինն է խոսում և որ խնդրում է շտապ տզրուկներ ուղարկել իր տուն։

Խոսափողը լծակին դնելով, պրոֆեսորը կրկին շրջվեց դեպի գրասեղանն ու անմիջապես ճիչ արձակեց։ Սեղանի մոտ գթության քրոջ գլխաշորով մի կին էր նստած, պայուսակը ձեռքին,

*որի վրա «Տզրուկներ» մակագրությունը կար։ Պրոֆեսորն աղաղակեց, ուշադիր դիտելով նրա բերանը։ Դա տղամարդու բերան էր՝ ծուռ, ականջներին հասնող, մի ժանիքը դուրս ցցված։ Քրոջ աչքերը մեռյալ էին։*

*— Փողերը տանեմ,— տղամարդու բասով ասաց քույրը,— պետք չէ, որ այստեղ ընկած մնան։— Թռչնի թաթով սրբեց պիտակներն ու աստիճանաբար հալվեց օդի մեջ։*

*Անցավ երկու ժամ։ Պրոֆեսոր Կուզմինը նստած էր մահճակալի վրա, ննջասենյակում, ընդ որում տզրուկները կախված էին քունքերից, ականջների ետևից ու պարանոցից։ Կուզմինի ոտքերի մոտ, մետաքսե վերմակի վրա նստել էր ճերմակաբեղ պրոֆեսոր Բուրեն, ցավակցաբար Կուզմինին էր նայում ու մխիթարում, որ այդ ամենը դատարկ բան է։ Դրսում գիշեր էր արդեն։*

*Թե արտասովոր ինչ բաներ եղան հետո Մոսկվայում, այդ գիշեր՝ չգիտենք և, ինչ խոսք, չենք էլ հետաքրքրվի, մանավանդ որ ժամանակն է անցնել այս ճշմարտացի պատմության երկրորդ մասին։ Հետևի՛ր ինձ, ընթերցող։*

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ XIX

## ՄԱՐԳԱՐԻՏԱՆ

*Հետևի՛ր ինձ, ընթերցող։ Ո՞վ է քեզ ասել, թե աշխարհում իսկական, հավատարիմ, հավերժական սեր չկա։ Թող կտրե՛ն ստախոսի գարշելի լեզուն։*

*Հետևի՛ր ինձ, ընթերցող, և միայն ինձ, ու ես քեզ այդպիսի սեր ցույց կտամ։*

*Ո՛չ։ Սխալվում էր վարպետը հիվանդանոցում, այն ժամին, երբ գիշերը կեսգիշեր էր դառնում, Իվանուշկային դառնացած ասելով, թե կինը մոռացել է իրեն։ Դա չէր կարող լինել։ Կինն, իհարկե, չէր մոռացել նրան։*

*Ամենից առաջ բացենք գաղտնիքը, որ վարպետը չկամեցավ հայտնել Իվանուշկային։ Նրա սիրեցյալին կոչում էին Մարգարիտա Նիկոլաևնա։ Այն ամենը, ինչ նրա մասին ասում էր վարպետը թշվառ բանաստեղծին, կատարյալ ճշմարտություն էր։ Նա ճշգրիտ էր նկարագրել իր սիրեցյալին։ Նա գեղեցիկ էր ու խելացի։ Մի բան էլ պետք է ավելացնել դրան՝ վստահաբար կարելի է ասել, որ շատ կանայք ամեն ինչ կտային, որպեսզի իրենց կյանքը փոխարինեին Մարգարիտա Նիկոլաևնայի կյանքով։ Երեսնամյա անզավակ Մարգարիտան կինն էր շատ խոշոր մի մասնագետի, որը նաև պետական նշանակության կարևորագույն հայտնագործություն էր արել։ Նրա ամուսինը երիտասարդ էր, գեղեցկատես, բարի, ազնիվ և պաշտում էր իր կնոջը։ Մարգարիտա Նիկոլաևնան և ամուսինը՝ երկուսով զբաղեցնում էին Արբատին մերձակա նրբանցքներից մեկում, այգու մեջ տեղավորված սքանչելի առանձնատան ամբողջ վերին հարկը։*

Ջմայլելի՜ տեղ։ Յուրաքանչյուր ոք կարող է համոզվել, եթե ցանկանա գնալ այդ այգին։ Թող դիմի ինձ, ես կտամ հասցեն, ճանապարհը ցույց կտամ՝ առանձնատունը մինչ այժմ էլ կանգուն է։

Մարգարիտա Նիկոլաևնան դրամի կարիք չէր զգում։ Մարգարիտա Նիկոլաևնան կարող էր գնել այն ամենն, ինչ դուր գար իրեն։ Նրա ամուսնու ծանոթների մեջ լինում էին հետաքրքրական մարդիկ։ Մարգարիտա Նիկոլաևնան երբեք մատ չէր դիպցրել պրիմուսի։ Մարգարիտա Նիկոլաևնան համատեղ բնակարանում ապրելու սարսափներին ծանոթ չէր։ Մի խոսքով... նա երջանի՞կ էր։ Եվ ո՛չ մի րոպե։ Այն պահից ի վեր, երբ ամուսնացել էր տասնինը տարեկան հասակում և առանձնատուն ընկել, երջանկություն չուներ։ Աստվածնե՜ր իմ, աստվածներ։ Իսկ ի՞նչ էր պետք այդ կնոջը։ Ի՞նչ էր պետք այդ կնոջը, որի աչքերում միշտ մի տեսակ անըմբռնելի կրակ էր վառվում, ի՞նչ էր պետք մի աչքը թեթևակի շիլ այդ վհուկին, որն այն գարնանը միմոզաներով պճնվեց։ Չգիտեմ։ Ինձ հայտնի չէ։ Ակներևաբար, կինը ճիշտ էր ասում, նրան պետք էր նա՝ վարպետը, և ոչ ամենևին գոթական առանձնատունը, ոչ առանձին այգին, ոչ էլ դրամը։ Նա սիրում էր նրան, նա ճիշտ էր ասում։ Նույնիսկ իմ՝ ճշմարտացի պատմողիս, բայց և կողմնակի մարդուս սիրտը ճմլվում է այն մտքից, թե ինչեր ապրեց Մարգարիտան, երբ հաջորդ օրը եկավ վարպետի տնակը, բարեբախտաբար, չհասցնելով խոսել ամուսնու հետ, որը նշված ժամին տուն չէր եկել, ու իմացավ, որ վարպետն այլևս չկա։

Մարգարիտան ամեն ինչ արեց վարպետի մասին որևիցե բան իմանալու համար և , ինչ խոսք, բացարձակապես ոչինչ չիմացավ։ Այդժամ նա վերադարձավ առանձնատուն ու ապրեց իր նախկին տեղում։

— Այո, այո, այո, ճիշտ նույն սխալը,— ասում էր Մարգարիտան ձմռանը, վառարանի մոտ նստած, կրակին նայելով,— ինչու՞ այն գիշեր հեռացա նրանից։ Ինչու՞։ Չէ որ դա խելագարությու՜ն էր։ Ես վերադարձա հաջորդ օրը, ազնվորեն, ինչպես խոստացել էի, բայց արդեն ուշ էր։ Այո, ես վերադարձա չափազանց ուշ, ինչպես թշվառական Ղևի Մատթեոսը։

Բոլոր այդ խոսքերն անհեթեթ էին, իհարկե, որովհետև իսկապես. ի՞նչ կփոխվեր, եթե այն գիշեր նա մնար վարպետի մոտ։

Մի՞թե կփրկեր նրան։ Ծիծաղելի՜ է՝ կբացականչեինք մենք, բայց այդ բանը չենք անի հուսալքության դուռը հասած կնոջ առաջ։

Այդպիսի տանջանքներով Մարգարիտա Նիկոլաևնան ապրեց ամբողջ ձմեռն ու հասավ գարնանը։ Նույն այն ուրբաթ օրը, երբ սև մոգի՝ Մոսկվայում հայտնվելու հետևանքով ամեն կարգի անհեթեթ խառնաշփոթություններ էին կատարվում, երբ ետ՝ Կիև վտարվեց Բեռլիոզի ազգականը, երբ ձերբակալեցին հաշվապահին և բազմաթիվ այլ հիմարագույն ու անհասկանալի բաներ կատարվեցին, Մարգարիտան կեսօրին մոտ արթնացավ լուսանցով առանձնատան կտրաշտարակը եղող իր ննջասենյակում։

Արթնանալով՝ Մարգարիտան չարտասվեց, ինչպես հաճախ էր լինում, որովհետև արթնացավ մի կանխազգացումով, որ այսօր ի վերջո ինչ-որ բան կկատարվի։ Այդ կանխազգացումը որսալով, նա սկսեց հոգու խորքում բորբոքել և ճյուղավորել դա, վախենալով, որ կանխազգացումը լքի իրեն։

— Ես հավատու՜մ եմ,— շշնջում էր Մարգարիտան հանդիսավորությամբ,— ես հավատում եմ։ Ինչ-որ բան կկատարվի՜։ Չի կարող չկատարվել, քանի որ, իրոք, իսկ ինչի՞ համար է ինձ ցմահ տանջանք վիճակված։ Խոստովանում եմ, որ ստել ու խաբել եմ, որ մարդկանցից ծածուկ, գաղտնի կյանքով եմ ապրել, բայց և այնպես չի կարելի դրա համար այսպես դաժանորեն պատժել։ Ինչ-որ բան անպայման կպատահի, որովհետև չի լինում այնպես, որ որևէ բան ձգվի հավերժորեն։ Իսկ դրանից բացի, մարգարեական էր երազս, դրա համար երաշխավոր եմ։

Այսպես էր շշնջում Մարգարիտա Նիկոլաևնան, նայելով արևով ողողվող մուգ կարմիր վարագույրներին, անհանգստությամբ հագնվելով, եռափեղկ հայելու դիմաց կարճ, ոլորած մազերը սանրելով։

Երազը, որ այդ գիշեր տեսել էր Մարգարիտան, իրոք, անսովոր էր։ Բանն այն է, որ ձմեռային իր տանջանքների ընթացքում ոչ մի անգամ վարպետին չէր տեսել երազում։ Գիշերը վարպետը թողնում էր Մարգարիտային, ու կինը չարչարվում էր միայն ցերեկները։ Իսկ այս անգամ տեսավ երազում։

Անծանոթ մի վայր տեսավ Մարգարիտան, հուսահատեցնող, մռայլ, վաղ գարնան ամպամած երկնքի տակ։ Տեսավ այդ ծվեն-ծվեն սուրացող մոխրագույն երկինքը, իսկ դրա տակ՝ սերմնագռավների անձայն երամ։ Ինչ-որ ծուռումուռ կամրջակ։

*Դրա տակ գարնանային պղտոր գետակ, տխուր ու թշվառ, կիսամերկ ծառեր, միայնակ բարդի, իսկ հեռվում ծառերի արանքում, ցանկապատից այն կողմ, գերանակապ մի շինություն. ոչ այն է՝ առանձին խոհանոց էր, ոչ այն է՝ բաղնիք, սատանան գիտե, թե ինչ էր։ Չորս դին ամեն ինչ այնքան անկենդան էր, այնքան վհատեցնող, որ մարդ ուզում էր կախվել կամրջակի մոտ կանգնած այդ բարդու ճյուղից։ Ոչ քամու շնչիկ, ոչ ամպի շարժում, ոչ մի կենդանի արարած։ Դժոխային մի տեղ կենդանի մարդու համար։*

*Եվ ահա, պատկերացրեք, բացվում է այդ գերանակապ շինվածքի դուռը, և հայտնվում է նա։ Բավական հեռու է, բայց հստակ երևում է։ Ցնցոտիների մեջ, չես հասկանում, ինչ է հագել։ Մազերը՝ գզգզված, սափրված չէ։ Աչքերը՝ հիվանդ, տագնապալի։ Նշան է անում իրեն, կանչում է։ Խեղդվելով անկենդան օդի մեջ, Մարգարիտան գուղձերի վրայով վազեց դեպի նա և այդ ժամանակ արթնացավ։*

*«Այս երազը երկուսից միայն մի բան կարող է նշանակել,— ինքն իր հետ խորհում էր Մարգարիտա Նիկոլաևնան,— եթե նա մեռած է ու կանչեց ինձ, ապա նշանակում է, որ եկել էր ինձ տանելու, և ես շուտով կմեռնեմ։ Դա շատ լավ է, որովհետև այդ ժամանակ տանջանքներս կվերջանան։ Կամ՝ նա կենդանի է, այդ դեպքում երազը միայն մի բան կարող է նշանակել, որ նա ինձ հիշեցնու՛մ է իր մասին։ Նա ուզում է ասել, որ մենք դեռ կհանդիպենք։ Այո, շատ շուտով մենք կհանդիպենք»։*

*Գտնվելով այդ նույն բորբոքված վիճակում, Մարգարիտան հագնվեց ու սկսեց ներշնչել իրեն, որ ըստ էության ամեն ինչ շատ հաջող է դասավորվում, իսկ նման բարեհաջող պահերը հարկավոր է որսալ կարողանալ ու օգտվել դրանցից։ Ամուսինը գործուղման էր մեկնել երեք լրիվ օրով։ Երեք լրիվ օր ինքն իր գլխի տերն է, ոչ ոք չի խանգարի իրեն մտածել ինչ կամենա, երազել, ինչ դուր կգա։ Առանձնատան վերին հարկի բոլոր հինգ սենյակները, ամբողջ այդ բնակարանը, որին տասնյակ հազարավոր մարդիկ կնախանձեին Մոսկվայում, լրովին իր տրամադրության տակ է։*

*Այնինչ, լրիվ երեք օր ազատություն ստանալով, Մարգարիտան ընտրեց ոչ լավագույն տեղն այդ շքեղ բնակարանում։ Թեյ խմելուց հետո նա գնաց մութ, անլուսամուտ այն սենյակն, ուր պահվում էին ճամպրուկները և զանազան հնոտիք՝ երկու մեծ պա-*

հագուստների մեջ։ Նա ոստնեց, բաց արեց առաջին պահարանի ներքևի դարակը և մետաքսե կտորտանքի խրձերի տակից հանեց միակ արժեքավոր բանը, որ ուներ կյանքում։ Մարգարիտայի ձեռքում էր դարչնագույն կաշվից հին ալբոմը, որի մեջ վարպետի լուսանկարն էր, խնայողական դրամարկղի գրքույկը, նրա անունով դրված տասը հազար գումարով, ծխախոտի թղթի արանքում տափակած վարդի չորացած թերթեր ու տետրի մի ամբողջ հատված, մեքենագրված և ներքևի եզրն այրված։

Այդ հարստությունն առած իր ննջասենյակը վերադառնալով, Մարգարիտա Նիկոլաևնան եռափեղկ հայելու վրա դրեց լուսանկարն ու մի ժամվա չափ նստած էր, ծնկների վրա պահած կրակից վնասված տետրը, թերթելով ու վերընթերցելով այն, ինչ այրվելուց հետո ոչ սկիզբ ուներ, ոչ վերջ... «Միջերկրական ծովից եկած խավարը ծածկեց կուսակալի ատելի քաղաքը։ Չքացան տաճարը Անտոնիոսի սարսափելի աշտարակին կապող կախովի կամուրջները, խորխորատը կախվեց երկնքից ու պարուրեց ձիարշավարանի պարսպի թևավոր աստվածներին, Հասմոնեի պալատն իր հրակնատներով, շուկաները, քարվանսարաները, նրբանցքները, լճակները... Անհետացավ Երշալայիմը՝ մեծն քաղաքը, կարծես գոյություն չէր ունեցել երկրիս երեսին...»։

Մարգարիտան ուզում էր էլի կարդալ, բայց էլ ոչինչ չկար, ածխացած անհարթ ծոփերիզից բացի։

Արցունքները սրբելով, Մարգարիտա Նիկոլաևնան ցած դրեց տետրը, արմունկները հենեց հայելու սեղանիկին և հայելու մեջ արտացոլված, նստած էր երկար ժամանակ՝ աչքը չկտրելով լուսանկարից։ Հետո արցունքները չորացան։ Մարգարիտան խնամքով դասավորեց իր ունեցվածքը, և մի քանի րոպե անց դրանք վերստին թաղված էին մետաքսյա լաթերի տակ, ու մութ սենյակում շրխկոցով փակվեց կողպեքը։

Մարգարիտա Նիկոլաևնան նախասենյակում վերարկուն էր հագնում զբոսանքի գնալու համար։ Գեղեցկուհի Նատաշան՝ նրա տնային աշխատողը, հարցրեց, թե երկրորդ ճաշատեսակն ինչ պատրաստի, և, պատասխան ստանալով, թե միևնույն է, ինքն իրեն զբաղեցնելու համար զրույցի բռնվեց տանտիրուհու հետ ու սկսեց աստված գիտե, թե ինչեր պատմել, իբր երեկ թատրոնում աճպարարն այնպիսի ֆոկուսներ է ցույց տվել, որ բոլորի բերանը բաց է մնացել, բոլորին երկուական սրվակ արտասահմանյան օծանելիք է բաժանել, գուլպաներ, իսկ հետո, երբ սեանսը

վերջացել է, հասարակությունը փողոց է դուրս եկել, մեկ էլ, ի՜նչ, պարզվել է, որ բոլորը մերկ են։ Մարգարիտա Նիկոլաևնան ընկավ Նախասենյակի հայելու մոտ դրված աթոռին ու քահ-քահ ծիծաղեց։

— Նատաշա։ Ձեզ ամաչու՞մ,—ասաց Մարգարիտա Նիկոլաևնան,— գրագետ, խելացի աղջիկ եք, հերթերի մեջ սատանան գիտե, թե ինչեր են փչում, դուք էլ կրկնում եք։

Նատաշան շառագունեց ու մեծ ոգևորությամբ առարկեց, որ ամենևին չեն փչում, որ ինքն այսօր անձամբ Արբատի վրայի գաստրոնոմում տեսել էր մի քաղաքացուհու, որը խանութ էր եկել կոշիկներով, իսկ երբ կանգնել էր դրամարկղի մոտ մուծելու, կոշիկները չքացել էին ոտքերից ու մնացել էր գուլպաներով։ Աչքերը դուրս էին պրծել։ Կրունկի վրա՝ ծակ։ Իսկ կոշիկները կախարդական էին, հենց այդ սեանսի կոշիկներից։

— Այդպես էլ գնա՞ց։

— Այդպես էլ գնաց,— գոռում էր Նատաշան, ավելի ու ավելի կարմրելով, որ իրեն չեն հավատում,— երեկ գիշեր, Մարգարիտա Նիկոլաևնա, միլիցիան մի հարյուր մարդ է բռնել։ Կանայք այդ սեանսից մենակ վարտիքներով վազել են Տվերսկայա փողոցով։

— Դե, իհարկե, Դարյան է դա պատմել,— ասաց Մարգարիտա Նիկոլաևնան,— վաղուց արդեն նկատել եմ, որ նա սարսափելի փչան է։

Զվարճալի զրույցը Նատաշայի համար հաճելի անակնկալով վերջացավ։ Մարգարիտա Նիկոլաևնան ննջասենյակ գնաց ու ետ եկավ, ձեռքում մի զույգ գուլպա և մի սրվակ օդեկոլոն։ Նատաշային ասելով, որ ինքն էլ է ուզում ֆոկուս ցույց տալ, Մարգարիտա Նիկոլաևնան նրան նվիրեց գուլպաներն էլ, սրվակն էլ և ասաց, որ միայն մի բան է խնդրում՝ գուլպաներով չվազել Տվերսկայայով ու Դարյային ականջ չդնել։ Համբուրվելով, տանտիրուհին և տնային աշխատողը բաժանվեցին։

Տրոլեյբուսի նստարանի հարմար, փափուկ թիկնակին հենված, Մարգարիտա Նիկոլաևնան գնում էր Արբատով և մեկ իր մտքերի հետ էր, մեկ լսում էր, թե ինչ են խոսում իր առջև նստած երկու քաղաքացիները։

Իսկ նրանք մեկ-մեկ երկյուղած շրջվելով՝ մեկնումեկը չի՞ լսում արդյոք, ինչ-որ անմիտ բանի մասին էին փսփսում։ Պատուհանի մոտ նստած հաղթանդամ, մսեղ, խոզի ժիր աչքերով

մարդն իր փոքրամարմին հարևանին ասում էր, որ ստիպված սև ծածկոցով ծածկեցին դագաղը…

— Չի կարող պատահել,— զարմանալով շշնջում էր փոքրամարմինը,— դա մի չլսված բան է… Իսկ Ժելդիբի՞նն ինչ միջոցներ ձեռնարկեց։

Տրոլեյբուսի համաչափ գվվոցի միջից առանձին բառեր էին լսվում պատուհանի մոտից.

— Քրեական հետախուզություն… խայտառակություն… ուղղակի միստիկա՜։

Այդ կցկտուր պատառիկներից Մարգարիտա Նիկոլաևնան մի կերպ կապակցված ինչ-որ բան կազմեց։ Քաղաքացիները փսփսում էին այն մասին, որ այսօր առավոտյան դագաղի միջից գողացել են ինչ-որ հանգուցյալի գլուխը, հանգուցյալի անունը չէին տալիս։ Այդ իսկ պատճառով էլ հիշյալ Ժելդիբինն այդպես անհանգստանում է հիմա։ Տրոլեյբուսում փսփսացող բոլոր այդ մարդիկ նույնպես որևէ առնչություն ունեն կողոպտված հանգուցյալի հետ։

— Կհասցնե՞նք ծաղիկ վերցնել,— անհանգստանում էր փոքրամարմինը, — դիակիզումն, ասում ես, երկուսի՞ն է։

Ի վերջո Մարգարիտա Նիկոլաևնան ձանձրացավ դագաղից գողացված գլխի մասին այդ խորհրդավոր դատարկաբանությունը լսելուց և ուրախացավ, որ իր իջնելու ժամանակն է։

Մի քանի րոպե անց Մարգարիտա Նիկոլաևնան արդեն նստած էր Կրեմլի պատի տակ, նստարաններից մեկի վրա, այնպես, որ տեսներ մանեժը։

Վառ արևի տակ աչքերը կկոցել էր Մարգարիտան, հիշում էր այսօրվա երազը, հիշում էր, թե ինչպես մեկ տարի առաջ, ճիշտ նույն օրը, ճիշտ նույն ժամին, հենց այս նստարանին նստած էր նրա հետ։ Եվ ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, սև պայուսակը դրված էր կողքին, նստարանի վրա։ Այսօր նա չկար իր կողքին, բայց և այնպես Մարգարիտա Նիկոլաևնան նրա հետ էր խոսում մտովի. «Եթե աքսորված ես, ապա ինչու՞ լուր չես տալիս քո մասին։ Չէ որ մարդիկ լուր տալիս են։ Էլ չե՞ս սիրում ինձ։ Չէ, չգիտեմ ինչու չեմ հավատում։ Ուրեմն, աքսորվել ես ու մահացել… Այդ դեպքում, խնդրում եմ քեզ, ազատ թող ինձ, վերջապես ապրելու, օդ շնչելու ազատություն տուր ինձ»։ Մարգարիտա Նիկոլաևնան ինքն էր պատասխանում նրա փոխարեն. «Դու ազատ ես… Մի՞թե ես բռնել եմ քեզ»։ Այդ առարկում էր

նրան. «Չէ, դա ի՞նչ պատասխան էր։ Չէ՛, դու հեռացիր իմ հուշերից, այդ ժամանակ ես ազատ կդառնամ»։

Մարդիկ էին անցնում Մարգարիտա Նիկոլաևնայի մոտով։ Նրա գեղեցկությամբ ու միայնությամբ հրապուրված մի տղամարդ աչքի տակով նայեց վայելուչ հագնված այդ կնոջը։ Հազաց ու նստեց այն նստարանի ծայրին, որի վրա Մարգարիտա Նիկոլաևնան էր նստած։ Սիրտ անելով, սկսեց.

— Այսօր որոշակի լավ եղանակ է...

Սակայն Մարգարիտան այնքան մռայլ նայեց նրան, որ տղամարդը վեր կացավ ու գնաց։

«Ահա և օրինակը— մտովի ասում էր Մարգարիտան նրան, ով տիրում էր իրեն,— իսկապես, ինչու՞ վռնդեցի այդ տղամարդուն։ Ես տաղտուկ եմ ապրում, իսկ այդ կնամոլի մեջ վատ բան չկար, եթե այդ ապուշ «որոշակի» բառը չհաշվենք։ Ինչի՞ համար եմ բուի պես մենակ նստել պատի տակ։ Ինչու՞ եմ կյանքից անջատվել»։

Նա լիովին տրտմեց ու վհատվեց։ Բայց այստեղ հանկարծ սպասումի և հուզմունքի առավոտյան այն նույն ալիքը բախվեց կրծքին։ «Այո՛, կկատարվի»։ Ալիքը երկրորդ անգամ բախվեց, և այստեղ նա հասկացավ, որ դա հնչյունային ալիք էր։ Քաղաքի աղմուկի միջից ավելի ու ավելի հստակորեն էին լսվում թմբուկի մոտեցող բոմբյունները և փոքր-ինչ սխալ նվագող շեփորների հնչյունները։

Առաջինը երևաց այգու ցանկապատի մոտով քայլքով ընթացող հեծյալ միլիցիոները, նրանից հետո՝ երեք հետևակ միլիցիոներներ։ Ապա՝ դանդաղ ընթացող բեռնատարը, որի մեջ երաժիշտներն էին։ Հետո դանդաղ գալիս էր հուղարկավորման նոր-նոր բաց մեքենան, վրան դագաղը՝ ամբողջությամբ ծածկված ծաղկեպսակներով, իսկ հարթակի անկյուններում չորս հոգի էին կանգնած՝ երեք տղամարդ և մեկ կին։ Նույնիսկ տարածության վրա Մարգարիտան զանազանեց, որ հուղարկավորման մեքենայի վրա կանգնած, հանգուցյալին գերեզման ուղեկցող մարդկանց դեմքերը մի տեսակ տարօրինակ շփոթմունք են արտահայտում։ Առանձնապես դա նկատելի էր ավտոկառքի ետևի ձախ անկյունում կանգնած քաղաքացուհու պարագային։ Նրա գնդլիկ այտերը ներսից ասես ավելի էին փքվել ինչ-որ նրբին գաղտնիքից, ուռած աչքերի մեջ երկիմաստ կրակներ էին ցոլցլում։ Թվում էր, թե ուր որ է, քաղաքացուհին չի դիմանա, աչքով կանի հանգուց-

յալին ու կասի. «Այս ասածդ բան տեսե՞լ էիք։ Ուղղակի միստիկա է»։ Նույնքան շփոթված էին նաև մեքենայի ետևից դանդաղորեն քայլող, մոտավորապես երեք հարյուր հուղարկավորների դեմքերը։

Մարգարիտան հայացքով ուղեկցեց թափորը, լսելով, թե հեռվում ինչպես է մարում թրքական մռայլահունչ թմբուկի միևնույն «բում, բում, բում»-ը, և մտածեց. «Ի՜նչ տարօրինակ թաղում էր... Եվ ի՜նչ թախիծ է բերում այդ «բու՜մ»-ը։ Ա՜հ, հոգիս սատանային էլ պիտի կտայի, միայն թե իմանայի, կենդանի է նա, թե՝ ոչ։ Հետաքրքիր է, ու՞մ են թաղում այսպիսի զարմանալի դեմքերով»։

— Միխայիլ Ալեքսանդրովիչ Բեռլիոզին,— կողքից լսվեց տղամարդու փոքր-ինչ ռնգային մի ձայն,— ՄԱՍՍՈԼԻՏ-ի նախագահին։

Զարմացած Մարգարիտա Նիկոլաևնան շրջվեց ու իր նստարանին տեսավ մի քաղաքացու, որը, հավանորեն, անաղմուկ նստել էր այն ժամանակ, երբ Մարգարիտան թափորին էր հետևել տարված, ու հարկ է ենթադրել, մտացրիվ վիճակում իր վերջին հարցը բարձրաձայն էր տվել։

Մինչ այդ թափորն սկսեց կանգ առնել, հավանաբար, առջևում լուսաֆորներն էին կասեցնում ընթացքը։

— Այո,— շարունակեց անծանոթ քաղաքացին,— զարմանալի տրամադրություն ունեն։ Ուղեկցում են հանգուցյալին, բայց միայն մի բան են մտածում. թե ուր կորավ գլուխը։

— Ի՞նչ գլուխ,— հարցրեց Մարգարիտան՝ զննելով անսպասելի հարևանին։ Այդ հարևանը կարճահասակ, կրակի պես շեկ, ժանիքը դուրս պրծած մի մարդ էր, օսլայած ճերմակ շապիկով, ղոլավոր լավորակ կոստյումով, լաքապատ կոշիկներով, գլխին՝ կոտելոկ։ Վառվռուն փողկապ էր կապել։ Զարմանալին այն էր, որ գրպանից, ուր տղամարդիկ սովորաբար թաշկինակ են դնում կամ ինքնահոս գրիչ, հավի կրծոտած ոսկոր էր ցցված։

— Այո, հաճեցեք գիտենալ,— բացատրեց շիկահերը,— այսօր առավոտյան գրիբոեդովյան դահլիճում հանգուցյալի գլուխը դագաղից թռցրել են։

— Ինչպե՞ս կարող է լինել,— ակամա հարցրեց Մարգարիտան, միևնույն ժամանակ հիշելով տրոլեյբուսի շշնջոցը։

— Սատանա՜ն գիտե, թե ինչպես,— սանձարձակ պատասխանեց շիկամազը,— թեև ենթադրում եմ, վատ չէր լինի այդ

մասին Բեգեմոտին հարցնել։ Զտեսնված հաշող թռցրել են։ Ի՞նչ խայտառակություն։ Գլխավորն էլ՝ հասկանալի չէ, թե ում ինչին էր պետք այդ գլուխը։

Որքան էլ իր մտքերով էր զբաղված Մարգարիտա Նիկոլաևնան, այնուամենայնիվ նրան ապշեցրին անծանոթ քաղաքացու տարօրինակ փլոցները։

— Ներեցե՛ք,— հանկարծ բացականչեց նա,— ի՞նչ Բեռլիոզ։ Որ այսօրվա թերթերում...

— Իհարկե, իհարկե...

— Ուրեմն դագաղի ետևից գրողնե՞ր են գնում,— հարցրեց Մարգարիտան ու հանկարծ ատամները բաց արեց։

— Է, բնական է, գրողներ։

— Իսկ դուք դեմքով ճանաչու՞մ եք նրանց։

— Բոլորին՝ առանց բացառության,— պատասխանեց շիկամազը։

— Ասացեք,— խոսեց Մարգարիտան, ու նրա ձայնը խուլ դարձավ,— նրանց մեջ քննադատ Լատունսկին չկա՞։

— Ինչպե՞ս կարող է չլինել,— պատասխանեց շիկամազը,— ահա նա, չորրորդ շարքի եզրին։

— Այն խարտյաշ մազերո՞վը,— աչքերը կկոցելով՝ հարցրեց Մարգարիտան։

— Մոխրի գույն... Տեսնում եք, աչքերը երկինք բարձրացրեց։

— Կաթոլիկ քահանայի նմա՞ն։

— Ըհը՛, ըհը՛։

Մարգարիտան այլևս ոչինչ չհարցրեց, Լատունսկուն էր զննում։

— Ինչպես տեսնում եմ,— ժպտալով ասաց շիկամազը,— դուք ատում եք այդ Լատունսկուն։

— Մի քանիսին էլ եմ ատում,— ատամների արանքից պատասխանեց Մարգարիտան,— բայց հետաքրքիր չէ դրա մասին խոսել։

Այդ ժամանակ թափորն առաջ անցավ, քայլողների ետևից՝ մեծ մասամբ դատարկ ավտոմեքենաները։

— Դե իհարկե, ի՞նչ մի հետաքրքիր բան է, Մարգարիտա Նիկոլաևնա։

Մարգարիտան զարմացավ.

— Դուք ինձ ճանաչու՞մ եք։

Պատասխանի փոխարեն շիկամազը հանեց կոտելոկն ու բռնեց ձեռքում։

«Կատարյալ ավազակի ռեխ ունի», — մտածեց Մարգարիտան, զննելով իր փողոցային զրուցակցին։

— Իսկ ես ձեզ չեմ ճանաչում,— չոր-չոր ասաց Մարգարիտան։

— Որտեղի՞ց պիտի ճանաչեք։ Այնինչ ես ձեզ մոտ եմ ուղարկված մի գործով։

Մարգարիտան գունատվեց ու ընկրկեց։

— Դրանից էլ պետք էր սկսել,— ասաց նա,— ոչ թե ինչ սես դուրս տալ կտրված գլխի մասին։ Դուք ուզում եք ինձ ձերբակալե՞լ։

— Ամենևին,— բացականչեց շիկամազը,— սա ի՞նչ բան է, ուրեմն, եթե խոսում ես, անպայման պետք է ձերբակալե՞ս։ Պարզապես գործ ունեմ ձեզ հետ։

— Ոչինչ չեմ հասկանում, ի՞նչ գործ։

Շիկամազը չորս կողմը նայեց ու խորհրդավոր ասաց.

— Ինձ ուղարկել են, որպեսզի այսօր երեկոյան ձեզ հյուր հրավիրեմ։

— Ի՞նչ եք զառանցում, ի՞նչ հյուր։

— Մի շատ նշանավոր օտարերկրացու՝ հյուր,— բազմանշանակ ասաց շիկամազը, մի աչքը կկոցած։

Մարգարիտան խիստ զայրացավ։

— Մարդկային նոր տեսակ է երևան եկել՝ փողոցային կավատ,— գնալու համար տեղից ելնելով, ասաց նա։

— Շատ շնորհակալ եմ այսպիսի հանձնարարությունների համար,— նեղացած բացականչեց շիկամազը և հեռացող Մարգարիտայի ետևից ասաց.— Հիմա՛ր։

— Սրիկա՛,— պատասխանեց Մարգարիտան շրջվելով և անմիջապես իր ետևից լսեց շիկամազի ձայնը.

— Միջերկրական ծովից եկած խավարը ծածկեց կուսակալին ատելի քաղաքը։ Չքացան տաճարը Անտոնիոսի սարսափելի աշտարակին կապող կախովի կամուրջները... Անհետացավ Երշալայիմը՝ մեծն քաղաքը, կարծես գոյություն չէր ունեցել երկրիս երեսին... Անհետացեք ու կորեք դուք էլ ձեր վառված տետրի ու չորացած վարդերի հետ միասին։ Մենակ նստեք այստեղ, նստարանին ու աղաչեք, որ նա ձեզ ազատ արձակի, թույլ տա օդ շնչել, հեռանա հիշողությունից։

Ճերմակած դեմքով Մարգարիտան ետ եկավ։ Շիկամազը նրան էր նայում, աչքերը կկոցած։

— Ոչինչ չեմ հասկանում,— ցածրաձայն սկսեց Մարգարիտա Նիկոլաևնան,— էջերի մասին դեռ կարելի է իմանալ.. ծածուկ ներս մտնել, նայել... Նատաշան կաշառվա՞ծ է, այո՞։ Բայց ինչպե՞ս կարող էիք իմանալ իմ մտքերը։— Նա դեմքը կնճռոտեց տառապագին ու ավելացրեց։— Ասացեք, ո՞վ եք դուք։ Ո՞ր հիմնարկությունից եք։

— Այ քեզ բան,— մրթմրթաց շիկամազն ու բարձրաձայն ասաց.— Ներեցեք, ես ձեզ ասացի չէ՞, որ ոչ մի հիմնարկությունից էլ չեմ։ Նստեք, խնդրում եմ։

Մարգարիտան անխոս ենթարկվեց, բայց և այնպես, նստելով, մի անգամ էլ հարցրեց.

— Դուք ո՞վ եք։

— Դե լավ, իմ անունը Ազազելլո է, բայց միևնույն է, չէ՞ որ դա ձեզ ոչինչ չի ասում։

— Իսկ ինձ չե՞ք ասի, թե որտեղից իմացաք էջերն ու իմ մտքերը։

— Չեմ ասի,— չոր-չոր պատասխանեց Ազազելլոն։

— Բայց դուք ինչ-որ բան գիտե՞ք նրա մասին,— աղերսագին շշնջաց Մարգարիտան։

— Է, ասենք գիտեմ։

— Աղաչում եմ, միայն մի բան ասեք՝ նա կենդանի՞ է։ Մի տանջեք։

— Կենդանի է, կենդանի,— դժկամությամբ պատասխանեց Ազազելլոն։

— Տե՜ր աստված։

— Խնդրում եմ, առանց հուզմունքի և բացականչությունների,— խոժոռվելով, ասաց Ազազելլոն։

— Ներեցեք, ներեցեք,— մրթմրթաց արդեն հնազանդված Մարգարիտան,— ես, իհարկե, բարկացա ձեզ վրա։ Բայց համաձայնեք, երբ կնոջը փողոցում հրավիրում են ինչ-որ տեղ հյուր... Ես նախապաշարումներից զուրկ եմ, հավատացնում եմ,— Մարգարիտան անուրախ ժպտաց,— բայց երբեք չեմ տեսնում օտարերկրացիների, նրանց հետ շփվելու որևէ ցանկություն չունեմ... ու դրանից բացի, ամուսինս... Իմ դրաման այն է, որ ապրում եմ մեկի հետ, ում չեմ սիրում, բայց նրա կյանքը խաթարելն անվայել բան եմ համարում։ Ես նրանից ոչ մի բան չեմ տեսել, բարությունից բացի...

Ազազելլոն նկատելի հաճույքով ունկնդրեց այս անկապ ճառը և խստորեն ասաց.

— Խնդրում եմ մի րոպե լռել։

Մարգարիտան հնազանդությամբ լռեց։

— Ես ձեզ հրավիրում եմ միանգամայն անվտանգ օտարերկրացու մոտ։ Եվ ոչ մի կենդանի շունչ չի իմանա այդ այցելության մասին։ Այդ մի բանը ես երաշխավորում եմ։

— Իսկ ինչի՞ համար է նա ինձ հրավիրում,— կամացուկ հարցրեց Մարգարիտան։

— Այդ մասին կիմանաք ավելի ուշ։

— Հասկանում եմ... Ես պետք է տրվեմ նրան,— մտազբաղ ասաց Մարգարիտան։

— Կարող եմ ձեզ հավատացնել, որ աշխարհում յուրաքանչյուր կին կերազեր դա,— ժպիտը ծռեց Ազազելլոյի ռեխը,— բայց ես հուսախաբ եմ անելու ձեզ, դա չի լինի։

— Ի՞նչ օտարերկրացի է,— շփոթված բացականչեց Մարգարիտան այնքան բարձրաձայն, որ նստարանի մոտով անցնող մի քանի հոգի գլուխները շրջեցին,— և ի՞նչ շահ ունեմ նրա մոտ գնալու։

Ազազելլոն թեքվեց նրա ականջին ու բազմանշանակ շշնջաց.

— Է՜, շատ մեծ շահ... Դուք կօգտվեք պատեհությունից...

— Ի՞նչ,— բացականչեց Մարգարիտան, և նրա աչքերը կլորացան,— եթե ձեզ ճիշտ եմ հասկանում, դուք ակնարկում եք, որ այնտեղ կարո՞ղ եմ նրա մասին մի բան իմանալ։

Ազազելլոն լուռ գլխով արեց։

— Գալի՜ս եմ,— թափով գոչեց Մարգարիտան ու բռնեց Ազազելլոյի ձեռքը,— գալիս եմ, ու՜ր կամենաք։

Թեթևացած շունչ քաշելով, Ազազելլոն ետ ընկավ նստարանի թիկնակին, մեջքով ծածկելով փայտի վրա խոշոր տառերով փորագրած «Նյուրա» անունը և հեգնաբար ասեց.

— Գլխացավանք ժողովուրդ են այս կանայք,— նա ձեռքերը մտցրեց գրպանները և ոտքերը պարզեց առաջ,— օրինակի համար, ինչու ի՞նձ ուղարկեցին այս գործով։ Թող Բեգեմոտը գար, նա հմայիչ է...

Մարգարիտան, շեղակի ու խղճալի ժպտալով, ասաց.

— Վերջ տվեք մոլորեցնել ու չարչարել ինձ ձեր հանելուկներով... Չէ որ ես դժբախտ մարդ եմ, իսկ դուք օգտվում եք դրանից։ Ինչ-որ արտառոց պատմության մեջ եմ մտնում, բայց երդ-

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.

վում եմ, միայն մի պատճառով, որ ինձ գրավեցիք նրա մասին ասածներով։ Այս բոլոր անհասկանալի բաներից գլուխս պտտվում է...

— Առանց դրամայի, առանց դրամայի,— ծամածռվելով, պատասխանեց Ազազելլոն,— իմ վիճակի մեջ էլ է պետք մտնել։ Հասցնել ադմինիստրատորի քիթումռութին, ազգականին վռնդել տնից, մեկնումեկին թրխկացնել կամ նման կարգի ուրիշ մանրուքներ՝ դա իմ անմիջական մասնագիտությունն է, բայց խոսել սիրահարված կանանց հետ՝ խոնարհ շնորհակալություն։ Չէ որ արդեն կես ժամ ձեզ համոզում եմ։ Ուրեմն, գալի՞ս եք։

— Գալիս եմ,— պատասխանեց Մարգարիտա Նիկոլաևնան պարզ ու հասարակ։

— Այդ դեպքում նեղություն կրեք վերցնել,— ասաց Ազազելլոն և, գրպանից հանելով ոսկյա կլոր մի տուփ, մեկնեց Մարգարիտային, հետևյալ խոսքերով.— պահեք, պահեք, թե չէ անցորդները նայում են։ Սա ձեզ պետք կգա, Մարգարիտա Նիկոլաևնա։ Վերջին կես տարվա ընթացքում դուք վշտից կարգին ծերացել եք։ (Մարգարիտան բռնկվեց, բայց ոչինչ չպատասխանեց, իսկ Ազազելլոն շարունակեց)։ Այսօր երեկոյան, ճիշտ ժամը ինն անց կեսին, նեղություն կրեք լրիվ մերկանալ և այս քսուքով շփել ձեր դեմքն ու ամբողջ մարմինը։ Հետո ինչ ուզում եք արեք, բայց հեռախոսից չհեռանաք։ Ժամը տասին ես ձեզ կզանգահարեմ և, ինչ որ պետք է, կասեմ։ Ստիպված չեք լինի ոչ մի բանի մասին անհանգստանալ, ձեզ կհասցնեն ուր հարկն է և ոչ մի անհանգստություն չեն պատճառի։ Հասկանալի՞ է։

Մարգարիտան լռեց, հետո պատասխանեց.

— Հասկանալի է։ Այս տուփը մաքուր ոսկուց է, ծանրությունից է երևում։ Է՛հ, ես շատ լավ հասկանում եմ, որ ինձ կաշառում են ու ներքաշում մի մութ պատմության մեջ, որի համար թանկ եմ վճարելու։

— Սա ի՞նչ բան է,— համարյա ֆշշացրեց Ազազելլոն,— նորի՞ց։

— Ո՛չ, սպասեք։

— Ետ տվեք քսուքը։

Մարգարիտան ավելի ամուր սեղմեց ձեռքի տուփը և շարունակեց.

— Ոչ, սպասեք... Ես գիտեմ, թե ինչի եմ գնում։ Բայց գնում եմ ամեն ինչի հանուն նրա, որովհետև աշխարհում այլևս ոչ մի

*բանի վրա հույս չունեմ։ Բայց ուզում եմ ձեզ ասել, որ եթե ինձ խորտակեք, ամոթ պիտի լինի ձեզ։ Այո, ամոթ։ Ես կարծում եմ հանուն սիրո,— և, ձեռքով կրծքին զարկելով, Մարգարիտան նայեց արևին։*

*— Ետ տվեք,— չարացած ֆշշացրեց Ազազելլոն,— տվեք ետ, ու գրողի ծոցն այս ամեն ինչը։ Թող Բեգեմոտին ուղարկեն։*

*— Օ՜, ոչ,— բացականչեց Մարգարիտան, անցորդներին զարմացնելով,— համաձայն եմ ամեն ինչի, համաձայն եմ քսուքով շփվելու այդ կատակերգությանը, համաձայն եմ սատանայի ծոցը գնալ։ Չե՛մ տա։*

*— Օհո՜,— հանկարծ գոռաց Ազազելլոն և, աչքերը չռած, այգու ցանկապատին ինչ-որ բան մատնացույց արեց։*

*Մարգարիտան շրջվեց Ազազելլոյի ցույց տված կողմը, բայց առանձնապես ոչինչ չտեսավ այնտեղ։ Երբ դարձավ դեպի Ազազելլոն, կամենալով ստանալ այդ անհեթեթ «օհո՜»-ի բացատրությունը, բացատրություն տվող մեկը չկար։ Մարգարիտա Նիկոլաևնայի խորհրդավոր զրուցակիցն անհետացել էր։ Մարգարիտան ձեռքն արագ մտցրեց պայուսակի մեջ, ուր բղավելուց առաջ պահել էր տուփը, և համոզվեց, որ տուփը տեղում է։ Այդ ժամանակ, ոչ մի բանի մասին չմտածելով, Մարգարիտան Ալեքսանդրովսկի այգուց դուրս վազեց։*

## ԳԼՈՒԽ XX

## ԱԶԱԶԵԼԼՈՅԻ ՔՍՈՒՔԸ

*Թխկենու ճյուղերի արանքից երևում էր երեկոյան մաքուր երկնքում կախված լիալուսինը։ Լորենիներն ու ակացիաները այգու հողը պուտերի խճճված նախշով էին պատել։ Ելուստի եռափեղկ բաց, սակայն վարագուրված պատուհանը էլեկտրական ուժեղ լույսով էր ողողված։ Մարգարիտա Նիկոլաևնայի ննջասենյակում վառվում էին բոլոր լույսերը՝ ի հայտ բերելով կատարյալ խառնիխուռն մի վիճակ։ Մահճակալի վրա, վերմակին թափթփված էին շապիկներ, գուլպաներ ու սպիտակեղեն, իսկ ճմրթված սպիտակեղենն ուղղակի ընկած էր հատակին, իրարանցման մեջ տրորված ծխախոտի տուփի կողքին։ Կոշիկները դրված էին գիշերասեղանիկի վրա, կիսատ խմած սուրճի գավա-*

թի և մոխրամանի մոտ, որի մեջ ծխախոտ էր ծխում, աթոռի թիկնակից կախված էր սև երեկոյան զգեստը։ Սենյակն օծանելիքի բույր էր բռնել, դրանից բացի, ինչ-որ տեղից սենյակ էր թափանցում շիկացած արդուկի հոտը։

Մարգարիտա Նիկոլաևնան նստած էր տրյումոյի առջև, մերկ մարմնի վրա հագած լողախալաթով, եղջերվենու սև կոշիկներով։ Ժամացույցով ոսկյա ապարանջանը դրված էր Մարգարիտա Նիկոլաևնայի առաջ, Ազազելլոյից ստացած տուփի կողքին, և Մարգարիտան աչքը չէր կտրում ժամացույցից։ Մեկ-մեկ նրան սկսում էր թվալ, թե ժամացույցը փչացել է, և սլաքները չեն շարժվում։ Բայց դրանք շարժվում էին, թեև շատ դանդաղ, ասես սոսնձված լինեին, և վերջապես <երկար սլաքը կանգ առավ տասն անց քսանինն րոպեի վրա>։ Մարգարիտա Նիկոլաևնայի սիրտը սաստիկ զարկեց, այնպես որ նա չկարողացավ նույնիսկ միանգամից տուփը ձեռքը վերցնել։ Տիրապետելով իրեն, Մարգարիտան բացեց տուփն ու տեսավ դեղնավուն յուղոտ քսուքը։ Նրան թվաց, թե դրանից ճահճատիղմի հոտ է գալիս։ Մատի ծայրով Մարգարիտան մի քիչ քսուք դրեց ափի մեջ, ընդ որում ճահճախոտերի և անտառի հոտը սաստկացավ, ապա ձեռքի քսուքն սկսեց շփել ճակատին ու այտերին։ Քսուքը հեշտ էր քսվում և, ինչպես թվաց Մարգարիտային, տեղնուտեղը գոլորշիանում էր։ Մի քանի անգամ տրորելուց հետո Մարգարիտան նայեց հայելուն և տուփը ձեռքից գցեց ուղղակի ժամացույցի ապակու վրա, որից ճաքերով պատեց ապակին։ Մարգարիտան փակեց աչքերը, ապա մի անգամ էլ նայեց և անզուսպ քրքջաց։

Եզրերից ունելիով փետած, թել դարձրած հոնքերը խտացել և հավասար սև աղեղների պես եզերել էին կանաչ գույն ստացած աչքերը։ Քթարմատը հատող ուղղաձիգ բարակ կնճիռը, որ հայտնվել էր այն ժամանակ, հոկտեմբերին, երբ անհետացել էր վարպետը, իսպառ չքացել էր։ Չքացել էին քունքերի մոտի դեղնավուն ստվերները և աչքերի պոչերի մոտ հազիվ նկատելի բարակ կնճիռների ցանցերը։ Այտերի մաշկը համաչափ վարդագույն դարձավ, ճակատը՝ ճերմակ ու մաքուր, իսկ վարսավիրանոցային գանգուրներն արձակվեցին։

Երեսնամյա Մարգարիտային հայելու միջից նայում էր ի բնե սևագանգուր, անզուսպ քրքջացող, ատամները մերկացրած քսանամյա մի կին։

Կուշտ քրքջալով Մարգարիտան մի ոստյունով դուրս պրծավ խալաթի միջից և մի լիքը բուռ թեթև, յուղոտ քսուք առնելով, լայն շարժումներով սկսեց շփել մարմնի մաշկը։ Մաշկն անմիջապես վարդագույն դարձավ ու սկսեց կրակվել։ Հետո վայրկենաբար, ասես ասեղ հանեցին ուղեղի միջից, հանդարտվեցին Ալեքսանդրովսկի այգուց հետո ամբողջ երեկո սղոցող քունքերը, ոտքերի և ձեռքերի մկաններն ամրացան, իսկ հետո Մարգարիտայի մարմինը կորցրեց կշիռը։

Նա վեր թռավ ու կախվեց օդի մեջ, գորգից քիչ վերև, հետո դանդաղ ցած սահեց ու կանգնեց հատակին։

— Այ քեզ քսու՜ք։ Այ քեզ քսու՜ք,— բղավեց Մարգարիտան՝ նետվելով բազկաթոռի մեջ։

Շփումները ոչ միայն արտաքնապես փոխեցին նրան։ Հիմա նրա մեջ ամբողջովին, մարմնի յուրաքանչյուր մասնիկի մեջ բերկրանք էր եռ գալիս, որը նա զգում էր մարմնով մեկ ծակծկող պղպջակների նման։ Մարգարիտան իրեն ազատ էր զգում, ազատ ամեն ինչից։ Դրանից բացի, ամենայն հստակությամբ նա հասկացավ, որ կատարվել է հենց այն, ինչ դեռևս առավոտյան կանխազգացումն էր ասում և որ ինքը թողնում է առանձնատունը և իր նախկին կյանքն առհավետ։ Սակայն այդ նախկին կյանքից, այդուհանդերձ, մի միտք առանձնացավ, որ մի տեսակ նոր, արտասովոր, իրեն վեր, օդ քաշող սկզբից առաջ պետք է միայն մի վերջին պարտք կատարել։ Ու նա, ինչպես որ կար՝ մերկ, մերթընդմերթ օդ ելնելով, ննջասենյակից վազեց ամուսնու աշխատասենյակը և, լույսը վառելով, նետվեց դեպի գրասեղանը։ Ծոցատետրից պոկած թերթիկի վրա, մատիտով, առանց ջնջումների, արագ ու խոշոր տառերով երկտող գրեց.

«Ներիր ինձ և որքան հնարավոր է շուտ մոռացիր։ Ես քեզ թողնում եմ առհավետ։ Մի փնտրիր ինձ, ապարդյուն է։ Ինձ պաշարած վշտից ու փորձանքներից ես վհուկ դարձա։ Ժամս եկավ։ Մնաս բարով։ Մարգարիտա»։

Լիովին թեթևացած հոգով Մարգարիտան թռավ, ննջասենյակ եկավ, իսկ նրա ետևից, իրերով բեռնված, ներս վազեց նաև Նատաշան։ Եվ տեղնուտեղը այդ բոլոր իրերը՝ հագուստները վրան փայտյա կախիչները, ժանեկահյուս գլխաշորերը, մետաքսյա կապույտ կոշիկները՝ ձգակապերով ու փոկերով, այդ ամենը թափվեց հատակին, և Նատաշան ազատված ձեռքերն իրար զարկեց։

— Հը՞, լա՞վ է,— բարձրաձայն բղավեց Մարգարիտա Նիկոլաևնան, խռպոտած ձայնով։

— Իսկ ինչպե՞ս,— շշնջաց Նատաշան՝ ետ-ետ գնալով,— դա ինչպե՞ս եք անում, Մարգարիտա Նիկոլաևնա։

— Քսու՛քն է, Քսուքը, քսուքը,— պատասխանեց Մարգարիտան, ցույց տալով ոսկյա շողշողուն տուփն ու հայելու առջև շուռումուռ գալով։

Նատաշան, հատակի վրա ընկած ճմրթված հագուստը մոռացած, վազելով մոտեցավ տրյումոյին և ագահ, կրակվող աչքերը հառեց քսուքի մնացորդի վրա։ Նրա շրթունքներն ինչ-որ բան էին շշնջում։ Նա կրկին շրջվեց դեպի Մարգարիտա Նիկոլաևնան ու ասաց մի տեսակ երկյուղածությամբ.

— Իսկ մա՛շկը։ Մա՛շկը, հը՞։ Մարգարիտա Նիկոլաևնա, ախր ձեր մաշկը լույս է տալիս։— Բայց այստեղ ուշքի եկավ, մոտ վազեց հագուստին, վերցրեց ու սկսեց թափ տալ։

— Թողե՛ք։ Թողե՛ք,— բղավեց Մարգարիտան,— գրողի ծոցը, թողե՛ք ամեն ինչ։ Ասենք, չէ, վերցրեք ձեզ հիշատակ։ Ասում եմ, հիշատակ վերցրեք։ Ինչ կա սենյակում, բոլորը վերցրեք։

Կարծես կիսախելագարված, անշարժ Նատաշան որոշ ժամանակ նայում էր Մարգարիտային, հետո կախվեց նրա վզից, համբուրելով ու բղավելով.

— Ատլասե՛ է։ Լո՛ւյս է տալիս։ Ատլասե՛ է։ Հապա հոնքերը, հոնքե՛րը։

— Վերցրեք բոլոր շորերը, վերցրեք օծանելիքը ու տարեք ձեր սնդուկի մեջ պահեք,— բղավում էր Մարգարիտան,— բայց զարդեղեն չվերցնեք, թե չէ ձեզ գողության մեջ կմեղադրեն։

Նատաշան ձեռքն ընկածը՝ հագուստ, կոշիկ, սպիտակեղեն, հավաքեց կապոց սարքեց ու դուրս վազեց ննջասենյակից։

Այդ ժամանակ նրբանցքի մյուս կողմերից, բաց պատուհանից ներս հորդաց ու սփռվեց մի թնդացող, վիրտուոզ վալս և լսվեց դարպասի մոտ կանգ առած մեքենայի փրթփրթոցը։

— Հիմա Ազազելլոն կզանգահարի,— գոչեց Մարգարիտան, լսելով նրբանցքում տարածվող վալսը,— նա կզանգահարի՛։ Իսկ օտարերկրացին անվտանգ է։ Այո, ես հիմա հասկանու՛մ եմ, որ նա անվտանգ է։

Մեքենան աղմկեց, հեռանալով դարպասի մոտից։ Թրխկաց դռնակը, և ծառուղու սալիկների վրա քայլեր լսվեցին։

«Նիկոլայ Իվանովիչն է, քայլերից ճանաչեցի,— մտածեց

Մարգարիտան,— հրաժեշտի առթիվ պետք է մի շատ ծիծաղելի ու հետաքրքիր բան անել»։

Մարգարիտան թախիծով դեն տարավ վարագույրը և կողքանց նստեց լուսամուտագոգին, ծունկը ձեռքերով գրկած։ Լուսնի լույսը լիզեց նրան աջ կողքից։ Մարգարիտան գլուխը բարձրացրեց դեպի լուսինն ու մտախոհ և բանաստեղծական արտահայտություն տվեց դեմքին։ Քայլերը մեկ-երկու անգամ էլ կոխտացին ու հանկարծ դադարեցին։ Մի քիչ էլ հիանալով լուսնով, հարկը պատշաճին հոգոց հանելով, Մարգարիտան գլուխը թեքեց այգու կողմը և իսկապես տեսավ նույն այդ առանձնատան ներքևի հարկում բնակվող Նիկոլայ Իվանովիչին։ Լուսինը վառ լույսով ողողել էր Նիկոլայ Իվանովիչին։ Նա նստել էր նստարանին, և ամեն ինչից երևում էր, որ հանկարծակի է նստել։ Պենսնեն ծռվել էր մի տեսակ, պայուսակը սեղմել էր ձեռքերի մեջ։

— Ա՜, բարև ձեզ, Նիկոլայ Իվանովիչ,— տխրաձայն ասաց Մարգարիտա Նիկոլաևնան,— բարի երեկո։ Նիստի՞ց եք գալիս։

Նիկոլայ Իվանովիչը ոչինչ չպատասխանեց։

— Իսկ ես,— շարունակեց Մարգարիտան, ավելի շատ թեքվելով այգու կողմը,— ինչպես տեսնում եք, մենակ նստած եմ, տխուր, նայում եմ լուսնին ու վալսը լսում։

Մարգարիտան ձախ ձեռքը տարավ քունքի վրայով, ուղղելով մազափունջը, ապա բարկացած ասաց.

— Դա անքաղաքավարություն է, Նիկոլայ Իվանովիչ։ Համենայն դեպս, ես կին եմ ի վերջո։ Չէ որ անկրթություն է չպատասխանելը, երբ ձեզ հետ խոսում են։

Նիկոլայ Իվանովիչը, որ լուսնի ներքո երևում էր մինչև մոխրագույն ժիլետի վերջին կոճակը, մինչև սեպաձև խարտյաշ մորուքի վերջին մազը, հանկարծ վայրի մի քմծիծաղ տվեց, ելավ նստարանից և, հավանորեն, շփոթմունքից կարկամած, շլյապան հանելու փոխարեն պայուսակը թափահարեց մի կողմի վրա և ծալեց ոտքերը, ասես պատրաստվում էր պչլզապար տալու։

— Ա՛հ, ի՜նչ ձանձրալի մարդ եք, Նիկոլայ Իվանովիչ,— շարունակեց Մարգարիտան,— ընդհանրապես բոլորդ այնպես եք ինձ ձանձրացրել, որ ասել չեմ կարող, և այնքան երջանիկ եմ, որ բաժանվում եմ ձեզնից։ Կորեք գրողի մոր ծոցը։

Այդ ժամանակ Մարգարիտայի ետևում, ննջասենյակում զրնգաց հեռախոսը։ Մարգարիտան թռավ լուսամուտագոգից, և Նիկոլայ Իվանովիչին մոռացած, վերցրեց լսափողը։

— Խոսում է Ազազելլոն,— փնչեց լսափողի մեջ։

— Ներե՛ք, սիրելի՛ Ազազելլո,— բղավեց Մարգարիտան։

— Ժա՛մն է։ Դուրս թռեք,— խոսեց Ազազելլոն, ու նրա ձայնից զգացվում էր, որ Մարգարիտայի անկեղծ, բերկրալի պոռթկումը հաճելի է նրա համար,— երբ կթռչեք դարպասի վրայով, բղավե՛ք. «Անտեսանելի՜ եմ»։ Հետո մի քիչ թռեք քաղաքի վրայով, որպեսզի վարժվեք, հետո՝ դեպի հարավ, քաղաքից դուրս, ուղիղ դեպի գետը։ Ձեզ սպասու՛մ են։

Մարգարիտան դրեց խոսափողը, և այստեղ հարևան սենյակում փայտյա ինչ-որ բան կաղին տվեց ու սկսեց խփվել դռանը։ Մարգարիտան բացեց դուռը, և հատակի խոզանակը, մազերը՝ վեր, պար գալով ներս ընկավ։ Խոզանակը պոչով դոփապար խփեց հատակին, քացի-քացի արեց և նետվեց դեպի լուսամուտը։ Մարգարիտան ծղրտաց հիացմունքից ու հեծավ խոզանակին։ Միայն այստեղ հեծյալ կնոջ մտքով անցավ, որ իրարանցման մեջ մոռացել է հագնվել։ Քառատրոփ մոտեցավ մահճակալին ու ձեռքն ընկած առաջին բանը՝ երկնագույն մի շապիկ վերցրեց։ Դրոշի պես թափահարելով շապիկը, նա դուրս թռավ լուսամուտից։

Մարգարիտան լուսամուտից ցած սահեց ու տեսավ նստարանին նստած Նիկոլայ Իվանովիչին։ Նա կարծես քարացել էր կատարյալ շփոթմունքի մեջ և ականջ էր դրել վերևի հարևանների լուսավորված ննջասենյակից եկող գոչյուններին ու թխկթխկոցներին։

— Մնաք բարո՛վ, Նիկոլայ Իվանովիչ,— բղավեց Մարգարիտա Նիկոլաևնան, պար գալով Նիկոլայ Իվանովիչի առջև։

Վերջինս տնքաց ու նստարանից ցած սահեց, ձեռքերով կառչելով ու գցելով իր պայուսակը։

— Մնացեք բարով առհավե՜տ։ Ես թռչու՜մ եմ,— բղավում էր Մարգարիտան, վալսը խլացնելով։ Այստեղ նա հասկացավ, որ շապիկն իրեն պետք չէ, և չարագույժ քրքիջով շապիկը հագցրեց Նիկոլայ Իվանովիչի գլխին։ Կուրացած Նիկոլայ Իվանովիչը նստարանից շրմփաց ծառուղու աղյուսների վրա։

Մարգարիտան շրջվեց մի վերջին անգամ նայելու առանձնատանը, ուր այնքան երկար էր տառապել, և հուրհրատող լուսամուտի մեջ տեսավ Նատաշայի՝ զարմանքից այլայլված դեմքը։

— Մնաս բարով, Նատաշա,— կանչեց Մարգարիտան ու վեր քաշեց խոզանակը,— անտեսանելի՜ եմ, անտեսանելի՜ եմ,—

ավելի բարձրաձայն բղավեց նա և դեմքին խփվող ճկենու ճյուղերի միջով, դարպասի վրայով թռավ նրբանցք։ Եվ նրա ետևից ճախրեց կատարելապես խենթացած վալսը։

## ԳԼՈՒԽ XXI

## ԹՌԻՉՔԸ

Անտեսանելի՛ ու ազա՛տ։ Անտեսանելի՛ ու ազա՛տ։ Թռչելով իր նրբանցքի վրայով, Մարգարիտան ընկավ մեկ ուրիշը, որ ուղիղ անկյունով հատում էր առաջինը։ Այդ կարկատած-կարկատված, ծուռտիկ ու երկարուկ նրբանցքը, նավթի կրպակի խարխուլ դռնով, ուր մետաղյա գավաթներով նավթ էին վաճառում և միջատների դեմ սրվակներով լուծույթ, Մարգարիտան անցավ մեկ վայրկյանում և այստեղ յուրացրեց, որ նույնիսկ լիակատար ազատ ու անտեսանելի լինելով հանդերձ, այնուամենայնիվ, վայելքի մեջ էլ թեկուզ փոքր-ինչ ողջամիտ պիտի լինել։ Ինչ-որ հրաշքով արգելակելու շնորհիվ միայն նա չջարդվեց անկյունի հին ու թեքված լապտերին և չջախջախվեց մահացու։ Խույս տալով դրանից, Մարգարիտան ավելի ամուր սեղմեց խոզանակը և դանդաղեցրեց թռիչքը՝ զգուշանալով էլեկտրական լարերից ու մայթի լայնքով կախված ցուցանակներից։

Երրորդ նրբանցքն ուղիղ դեպի Արբատ էր տանում։ Այստեղ Մարգարիտան կատարելապես յուրացրեց խոզանակի կառավարումը, հասկացավ, որ դա ենթարկվում է ձեռքերի կամ ոտքերի նվազագույն հպմանը և որ քաղաքի վրայով թռչելիս պետք է շատ ուշադիր լինել ու շատ խենթություններ չանել։ Դրանից բացի, արդեն նրբանցքում միանգամայն պարզ դարձավ, որ անցորդները սավառնորդուհուն չեն տեսնում։ Ոչ ոք վեր չէր տնկում գլուխը, չէր բղավում՝ «նայի՛ր, նայի՛ր», մի կողմ չէր նետվում, չէր ճղճղում և ուշագնաց չէր լինում, չէր քրքջում վայրենաձայն։

Մարգարիտան սավառնում էր անաղմուկ, շատ դանդաղ ու ոչ բարձր, մոտավորապես երկրորդ հարկի բարձրությամբ։ Բայց և դանդաղ թռչելով, շլացուցիչ լուսավորված Արբատ ելնելուն պես, նա թեթևակի վրիպեց և ուսով դիպավ ինչ-որ լուսավորված սկավառակի, որի վրա սլաք էր նկարած։ Դա զայրացրեց Մարգարիտային։ Նա կանգնեցրեց հնազանդ խոզանակը, մի կողմ

Բամ՛, հետո հանկարծակի վրա պրծնելով սկավառակին՝ խոզանակի սեղմով փշուր-փշուր արեց։ Շրխկոցով ցած թափվեց կտորտանքը, անցորդները դեսուդեն փախան, սուլիչի ձայներ լսվեցին. իսկ Մարգարիտան այդ անհարկի արարքից հետո քրքջաց։ «Արբատի վրա հարկ կլինի ավելի զգույշ լինել,— մտածեց Մարգարիտան,— այնտեղ այնքան խճճված բաներ կան, որ գլուխ չեմ հանի»։ Նա սկսեց խուսավարել հաղորդալարերի արանքով։ Մարգարիտայի ներքևում լողում էին տրոլեյբուսների, ավտոբուսների և մարդատար մեքենաների կտուրներ, իսկ մայթերով, ինչպես վերևից թվում էր Մարգարիտային, կեպիների գետեր էին հոսում։ Այդ գետերից վտակներ էին զատվում ու լցվում գիշերային խանութների հրեղեն երախներից ներս։ «Է՜, շիլաշփոթ հո չի,— բարկացած մտածեց Մարգարիտան,— այստեղ շարժվել չի կարելի»։ Նա հատեց Արբատը, բարձրացավ վեր, դեպի չորրորդ հարկերը և թատրոնի անկյունաշենքի վրայի շլացուցիչ փայլփլող բարակ խողովակների մոտով լողաց բարձր շենքերով մի նրբանցք։ Բոլոր պատուհանները բաց էին, և ամենուրեք պատուհաններից ռադիոերաժշտություն էր լսվում։ Հետաքրքրասիրությունից դրդված Մարգարիտան ներս նայեց մի պատուհանից։ Խոհանոց տեսավ։ Երկու պրիմուս թշշում էին սալօջախի վրա, գդալները ձեռքներին երկու կին էին կանգնած դրանց մոտ ու կռվում էին։

— Դուրս գալուց հետո հարկավոր է զուգարանի լույսը հանգցնել, ա՛յ թե ինչ կասեմ ձեզ, Պելագեյա Պետրովնա,— ասաց այն կինը, որի դիմաց ինչ-որ կերակուրով լի կաթսա կար, որից գոլորշի էր ելնում,— թե չէ կգրենք, որ ձեզ արտաքսեն։

— Պակասը դուք չեք,— պատասխանեց մյուսը։

— Երկուսդ էլ պակաս չեք,— հնչեղ ասաց Մարգարիտան՝ լուսամտագոգի վրայից խոհանոց ընկնելով։ Երկու վիճաբանողները դարձան ձայնի վրա և քարացան՝ կեղտոտ գդալները ձեռքներին։ Մարգարիտան զգուշությամբ ձեռքը մեկնեց նրանց արանքով, երկու պրիմուսների ծորակներն էլ փակեց ու հանգցրեց։ Կանայք ճչացին և բերանները բացեցին։ Բայց Մարգարիտան արդեն ձանձրացել էր խոհանոցում ու դուրս թռավ նրբանցք։

Նրբանցքի վերջում նրա ուշադրությունը գրավեց ութհարկանի, ըստ երևույթին հենց նոր կառուցված տան հոյակապ զանգվածը։ Մարգարիտան ներքև իջավ ու, գետնին կանգնելով, տեսավ, որ շենքի ճակատը սև մարմարով է պատած, որ դռները

*լայն են, որ ապակուց այն կողմ երևում են բարապանի ոսկեփայլ գլխարկն ու կոճակները, և որ դռան վրա ոսկետառ մակագրություն կա. «Գրողամի տուն»։*

*Մարգարիտան աչքերը կկոցեց մակագրության վրա, պատկերացնելով, թե ինչ կարող է նշանակել «Գրողամ» բառը։ Հոգնակը թևատակը դնելով, Մարգարիտան շքամուտքից ներս մտավ՝ դռնով դեն հրելով զարմացած բարապանին և վերելակի կողքին, պատի վրա մի վիթխարի սև տախտակ տեսավ, որի վրա սպիտակ տառերով նշված էին բնակարանների համարները և բնակիչների ազգանունները։ Ցուցակը պսակող «Գրողների և Դրամատուրգների տուն» մակագրությունը Մարգարիտային ստիպեց գիշատիչ ու խուլ մի ճիչ արձակել։ Փոքր-ինչ վեր ելնելով օդի մեջ՝ ագահորեն սկսեց ազգանունները կարդալ. Խուստով, Դվուբրատսկի, Կվանտ, Բեսկուդնիկով, Լատունսկի...*

*— Լատո՜ւնսկի,— ծղրտաց Մարգարիտան։— Լատո՜ւնսկի։ Չէ որ սա նա՛ է։ Նա՛ կործանեց վարպետին։*

*Դռան մոտ կանգնած բարապանը, աչքերը չռած և նույնիսկ վեր-վեր ցատկելով, նայում էր սև ցուցանակին, աշխատելով հասկանալ այդ հրաշքը. թե ինչու հանկարծ ծղրտաց բնակիչների ցուցակը։ Իսկ Մարգարիտան այդ ժամանակ սրընթաց վեր էր բարձրանում աստիճաններով, մի տեսակ արբեցած կրկնելով.*

*— Լատո՜ւնսկի, ութսունչո՜րս։ Լատո՜ւնսկի, ութսունչո՜րս։ Ահա, դեպի ձախ՝ 82, դեպի աջ՝ 83, մի քիչ էլ վեր, դեպի ձախ՝ 84։ Այստեղ է։ Ահա և անվանացույցը՝ «Օ. Լատունսկի»։*

*Մարգարիտան ցած թռավ խոզանակից, և նրա կրակվող ներբանները դուրեկան սառնություն առան քարաշար հարթակից։ Մարգարիտան զանգ խփեց մեկ, երկու անգամ։ Բայց ոչ ոք չբացեց։ Մարգարիտան սկսեց ավելի ուժեղ սեղմել կոճակը և ինքն էլ էր լսում Լատունսկու բնակարանում հնչող վրա-վրա զանգերը։ Այո, ութերորդ հարկի №84 բնակարանի բնակիչը մինչև մահ-գերեզման պարտական պիտի լիներ հանգուցյալ Բեռլիոզին, որ ՄԱՍՍՈԼԻՏ-ի նախագահն ընկել էր տրամվայի տակ և որ սգո նիստը նշանակել էին հենց այդ երեկո։ Ծրչանիկ աստղի տակ էր ծնվել քննադատ Լատունսկին։ Դա փրկեց նրան Մարգարիտային հանդիպելուց, որ վհուկ էր դարձել օրը ուրբաթ։*

*Ոչ ոք չէր բացում։ Այդ ժամանակ ամբողջ թափով Մարգարիտան ցած սուրաց հարկերը հաշվելով, ներքև թռավ, փողոց*

... ուղղված և վեր նայելով հաշվեց ու ստուգեց հարկերը դըր-սից, փորձելով գլխի ընկնել, թե որոնք են Լատունսկու բնակարանի պատուհանները։ Անկասկած, շենքի անկյունի հինգ խավար պատուհաններն էին, ութերորդ հարկում։ Համոզվելով դրանում, Մարգարիտան օդ բարձրացավ և մի քանի վայրկյան անց ներս մտավ չլուսավորված սենյակը, ուր արծաթին էր տալիս սոսկ լուսնի լույսի նեղլիկ շերտը։ Մարգարիտան վազեց դրա վրայով, շոշափելով գտավ անջատիչը։ Մի րոպեից ամբողջ բնակարանը լուսավորված էր։ Խոզանակը դրված էր անկյունում։ Համոզվելով, որ տանը ոչ ոք չկա, Մարգարիտան բաց արեց սանդուղքները տանող դուռը և ստուգեց, թե տեղո՞ւմ է անվանացույցը։ Տեղում էր, Մարգարիտան ընկել էր այնտեղ, ուր պետք էր։

Այո, ասում են, որ մինչև հիմա էլ քննադատ Լատունսկին գունատվում է, հիշելով այդ սարսափելի երեկոն և երկյուղածությամբ է տալիս Բեռլիոզի անունը։ Ամենևին հայտնի չէ, թե քրեական ինչպիսի մութ ու գարշելի գործով կնշանավորվեր այդ երեկոն. խոհանոցից վերադառնալիս Մարգարիտայի ձեռքում մի ծանր մուրճ կար։

Մերկ ու անտեսանելի սավառնորդուհին զսպում ու համոզում էր ինքն իրեն, նրա ձեռքերը դողում էին անհամբերությունից։ Ուշադրությամբ նշան բռնելով, Մարգարիտան հարվածեց ռոյալի ստեղներին, և բնակարանով մեկ տարածվեց աղիողորմ առաջին վնգոցը։ Մոլեգնորեն ոռնում էր ըստ ամենայնի անմեղ բեկկերյան կաբինետային գործիքը։ Ստեղները ներս էին ընկնում, ոսկրե մակաշերտերը դեսուդեն էին թռչում։ Գործիքը թնդում էր, կաղկանձում, խռխռացնում էր, զրնգում։ Ատրճանակի կրակոցի պես մուրճի հարվածի տակ տրաքեց փայլեցրած վերին դեկան։ Ծանր շնչելով, Մարգարիտան մուրճով պոկոտում ու ճզմում էր լարերը։ Վերջապես, հոգնելով, նա ընկավ, թրմփաց բազկաթոռի մեջ, շունչը տեղը բերելու համար։

Լողասենյակում ահավոր խշշոցով թափվում էր ջուրը, խոհանոցում՝ նույնպես։ «Կարծես արդեն հատակին է թափվում»,— մտածեց Մարգարիտան և բարձրաձայն ավելացրեց.

— Սակայն նստելու ժամանակը չէ։

Ջուրը խոհանոցից արդեն միջանցք էր վազում։ Բոբիկ ոտքերը ջրի մեջ շլմփացնելով, Մարգարիտան խոհանոցից դույլերով ջուր էր բերում քննադատի աշխատասենյակը և լցնում գրասեղանի դարակների մեջ։ Հետո մուրճով ջարդուփշուր անելով նույն

աշխատասենյակի պատուհանի գոները, նետվեց ննջասենյակ։ Ջարդելով հայելապատ պահարանը։ Նա դուրս քաշեց քննադատի կոստյումը և սուզեց լոգարանի մեջ։ Աշխատասենյակից վերցրած թանաքով լի թանաքամանը շպրտեց ննջասենյակ ու դատարկեց երկտեղանի լավ փափլացրած մահճակալի վրա։ Ավերածությունները, որ կատարում էր, ցունց հաճույք էին պատճառում նրան, բայց դրա հետ մեկտեղ ամբողջ ժամանակ նրան թվում էր, թե արդյունքները մի տեսակ չնչին են։ Դրա համար էլ սկսեց ինչ ասես անել։ Ջարդեց ֆիկուսի ծաղկամանները այն սենյակում, ուր ռոյալն էր դրված։ Դա չվերջացրած, եա գնաց ննջասենյակ և խոհանոցի դանակով կտրտեց սավանները, ջարդեց լուսանկարների ապակիները։ Հոգնություն չէր զգում, և միայն քրտինքն էր առու-առու հոսում նրա վրայից։

Այդ ժամանակ Լատունսկու բնակարանի տակ, №82 բնակարանում դրամատուրգ Կվանտի տնային աշխատողը թեյ էր խմում խոհանոցում, տարակուսած այն առումով, որ վերևից դղրդոց, զրնգոց ու վազվզոցի ձայներ են գալիս։ Վեր՝ առաստաղին նայելով, նա հանկարծ տեսավ, որ աչքի առաջ առաստաղի սպիտակ գույնը մի տեսակ դժգույն-կապտավուն է դառնում։ Բիծը լայնանում էր աչքի առաջ, ու հանկարծ դրա վրա կաթիլներ գոյացան։ Մի երկու րոպե տնային աշխատողը նստած էր այդ երևույթի վրա զարմացած, մինչև որ, ի վերջո, առաստաղից իսկական անձրև թափվեց ու կտկտաց հատակին։ Այստեղ նա վեր թռավ, շիթերի տակ աման դրեց, և դա ամենևին չօգնեց, որովհետև անձրևը տարածվում էր ու սկսել էր տեղալ թե՛ գազօջախի, թե՛ ամանեղենի սեղանի վրա։ Այդ ժամանակ, ծղրտալով, տնային աշխատողը բնակարանից դուրս վազեց սանդուղքի վրա, և տեղնուտեղը Լատունսկու բնակարանում սկսեցին զանգեր հնչել։

— Դե, զանգերը տվեցին, գնալու ժամանակն է,— ասաց Մարգարիտան։ Նա հեծավ խոզանակին, լսելով, թե կանացի մի ձայն ինչպես է բղավում դռան ճեղքից.

— Բաց արեք, բաց արեք։ Դուսյա, բաց արա։ Ջուրը ձեր տա՞նն է թափվում։ Մեր տունն է լցվել։

Մարգարիտան մի մետրի չափ վեր բարձրացավ ու հարվածեց ջահին։ Երկու լամպ պայթեց և կախազարդերը չորս կողմ թռան։ Ճեղքի արանքից բղավոցները դադարեցին, սանդուղքների վրա ոտնաձայներ լսվեցին։ Մարգարիտան լուսամուտից հայտնվեց մյուս կողմում, դուրս լողաց, թեթև թափ առավ և մուրճով

խփեց ապակուն։ Ապակին ծլնգաց, և մարմարով երեսապատած պատի վրայով կտորտանքը հեղեղի պես ցած թափվեց։ Մարգարիտան լողաց դեպի մյուս պատուհանը։ Հեռվում, ներքևում մարդիկ դեսուդեն վազեցին մայթի վրա, մուտքի մոտ կանգնած երկու միլիցիոներից մեկն ազդանշան տվեց ու հեռացավ։ Լատունսկու լուսամուտների հաշիվը փակելով, Մարգարիտան լողաց դեպի հարևան բնակարանը։ Հարվածները հաճախակի դարձան, նրբանցքը լցվեց զրնգոցով ու դղրդոցով։ Առաջին մուտքից դուրս վազեց բարապանը, նայեց վեր, մի փոքր տատանվեց, հավանաբար գլխի չընկնելով, թե ինչ ձեռնարկի, սուլիչը բերանը խոթեց ու մոլեգնած սկսեց սուլել։ Այդ սուլոցի տակ առանձնահատուկ ոգևորությամբ փշրելով ութերորդ հարկի վերջին լուսամուտը, Մարգարիտան իջավ յոթերորդ հարկ ու սկսեց ջարդել այդ հարկի ապակիները։

Մուտքի հայելապատ դռան ետև երկարատև անգործությունից հոգնած բարապանը սուլոցի մեջ ամբողջ հոգին էր ներդրել, ընդ որում ճշգրտորեն հետևում էր Մարգարիտային, կարծես նվագակցելով նրան։ Դադարների ժամանակ, երբ Մարգարիտան լուսամուտից լուսամուտ էր թռչում, նա շունչ էր քաշում, իսկ Մարգարիտայի յուրաքանչյուր հարվածի հետ, թշերն ուռեցնելով, զլում էր՝ շաղափելով գիշերային օդը մինչև երկինք։

Նրա ջանքերը, գումարված կատաղած Մարգարիտայի ջանքերին, մեծ արդյունքներ տվեցին։ Տան ներսում խուճապ էր տիրում։ Դեռևս անվնաս լուսամուտները բացվում էին, մարդկանց գլուխներ էին երևում և տեղնուտեղը թաքնվում, իսկ բաց լուսամուտներն, ընդհակառակն, փակվում էին։ Դիմացի շենքերում պատուհանների լուսավորված ֆոնի վրա մարդկանց մութ ուրվապատկերներ էին հայտնվում, որոնք ջանում էին հասկանալ, թե ինչու առանց որևիցե պատճառի Գրդրամի Նոր շենքում փշրվում են ապակիները։

Նրբանցքում ժողովուրդը վազում էր դեպի Գրդրամի շենքը, իսկ շենքի ներսում, բոլոր աստիճանների վրա, անիմաստ և անօգուտ վերուվար էին անում մարդիկ։ Կվանտի տնային աշխատողը աստիճաններով վազվզողներին բղավում էր, որ ջուրը լցվել է իրենց բնակարանը, իսկ շուտով նրան միացավ Կվանտի բնակարանի տակ գտնվող №80 բնակարանից Խուստովի տնային աշխատողը։ Խուստովների առաստաղից ջուրը թափվում էր խոհանոցում և զուգարանում։ Վերջապես, Կվանտենց խոհանոցի

առաստաղից ծեփի մի խոշոր շերտ պոկվեց ընկավ՝ ջարդուփշուր անելով ամբողջ կեղտոտ ամանեղենը, որից հետո իսկական տեղատարափ սկսվեց, կախկխված թաց կավարի քառեկներից ջուրը չռռում էր, ասես դույլով լցնեին։ Այդ ժամանակ առաջին մուտքի աստիճանների վրա ծայր առան ճիչ-աղաղակները։ Թռչելով չորրորդ հարկի նախավերջին լուսամուտի մոտով, Մարգարիտան ներս նայեց ու տեսավ հակագազը խուճապահար գլխին քաշող մի մարդու։ Մուրճով հարվածելով նրա ապակուն, Մարգարիտան վախեցրեց նրան, և սա սենյակից անհետացավ։

Եվ անսպասելիորեն վայրի ավերածությունը դադարեց։ Ցած սահելով երրորդ հարկ, Մարգարիտան ներս նայեց ծայրի լուսամուտից, որը թեթև, մուգ վարագույրով էր ծածկված։ Սենյակում մի աղոտ լամպ էր վառվում լուսամփոփի տակ։ Ցանցապատ կողերով փոքրիկ մահճակալի մեջ չորս տարեկան մի տղա էր նստած և վախեցած ականջ էր դնում։ Մեծերից ոչ ոք չկար սենյակում։ Հավանորեն, բոլորը դուրս էին փախել բնակարանից։

— Ապակիներն են ջարդում,— ասաց տղան ու կանչեց.— Մամա՜։

Ոչ ոք չարձագանքեց, այդ ժամանակ տղան ասաց.

— Մամա, վախենում եմ։

Մարգարիտան ետ տարավ վարագույրն ու լուսամուտից ներս ճախրեց։

— Վախենում եմ,— կրկնեց տղան ու դողդողաց։

— Մի վախեցիր, փոքրիկ, մի վախեցիր,— ասաց Մարգարիտան՝ աշխատելով փափկացնել քամուց կոշտացած իր ոճրական ձայնը,— երեխաներն էին ապակի ջարդում։

— Պարսատիկո՞վ,— հարցրեց տղան՝ դողոցը դադարեցնելով։

— Պարսատիկով, պարսատիկով,— հաստատեց Մարգարիտան,— իսկ դու քնիր։

— Հա՜, Սիտնիկն է,— ասաց տղան,— նա պարսատիկ ունի։

— Իհարկե, նա է։

Զարանճի հայացքով տղան մի կողմ նայեց ու հարցրեց.

— Մորաքույր, իսկ դու որտե՞ղ ես։

— Ես չկամ,— պատասխանեց Մարգարիտան,— երազիդ մեջ եմ։

— Այդպես էլ կարծում էի,— ասաց տղան։

— Պառկիր,— հրամայեց Մարգարիտան,— ձեռքդ դիր այտիդ տակ, ու ես կգամ երազիդ։

— Լավ, արի, արի,— համաձայնեց տղան և, անմիջապես պառկելով, ձեռքը դրեց այտի տակ։

— Ես քեզ հեքիաթ կպատմեմ,— սկսեց Մարգարիտան և այրվող ձեռքը դրեց տղայի խուզած գլխին,— կար, չկար, աշխարհում մի մորաքույր կար։ Եվ երեխա չուներ, և ընդհանրապես երջանիկ էլ չէր։ Ու ահա սկզբից նա շատ լաց եղավ, իսկ հետո չար դարձավ...— Մարգարիտան լռեց, ձեռքը բարձրացրեց՝ տղան քնած էր։

Մարգարիտան մուրճը կամացուկ դրեց լուսամուտագոգին ու դուրս թռավ պատուհանից։ Շենքի մոտ խառնաշփոթություն էր տիրում։ Փշրված ապակիով ծածկված ասֆալտապատ մայթի վրա վազվզում և ինչ-որ բաներ էին գոռգոռում մարդիկ։ Նրանց արանքներում արդեն երևում էին միլիցիոներները։ Հանկարծակի խփեց զանգը, և Արբատից նրբանցք մտավ հրշեջ կարմիր մեքենան, սանդուղքով...

Բայց մնացածն այլևս չէր հետաքրքրում Մարգարիտային։ Աչալուրջ, որ չկպչի որևէ հաղորդալարի, նա ավելի ամուր սեղմեց խոզանակը և մի վայրկյանում հայտնվեց չարաբաստիկ այդ շենքից վեր։ Նրա ներքևում նրբանցքը մի կողմ թեքվեց ու չքացավ։ Միակ նրբանցքի փոխարեն Մարգարիտայի ներքևում հայտնվեց տանիքների կույտ, որ զանազան անկյունների տակ հատված էր շողշողուն արահետներով։ Այդ ամենն անսպասելիորեն մի կողմի վրա հեռացավ, և լույսերի շղթաներն աղոտացան ու ձուլվեցին։

Մարգարիտան մի անգամ էլ ցնցեց խոզանակը, և այդ ժամանակ տանիքների ամբողջ կույտը գետնի տակն անցավ, իսկ փոխարենը ներքևում հայտնվեց էլեկտրական դողդոջ լույսերի մի լիճ, և այդ լիճը հանկարծ ուղղահայաց վեր ելավ, իսկ հետո հայտնվեց Մարգարիտայի գլխավերևում, ոտքերի տակ էլ լուսինը շողաց։ Հասկանալով, որ գլխիվայր է շուռ եկել, Մարգարիտան կանոնավոր դիրք ընդունեց ու շրջվելուց հետո տեսավ, որ լիճն արդեն չկա, որ այստեղ, իր ետևում, հորիզոնի վրա միայն վարդագույն հրացոլքն է մնացել։ Դա ևս անհետացավ մի վայրկյան անց, ու Մարգարիտան տեսավ, որ մենակ է մնացել իր վերևում ու ձախից սլացող լուսնի հետ։ Մարգարիտայի

Ամպերը վաղուց դեպի ետ ցրվել էին, իսկ լուսնի լույսը սու-լոցով ողողում էր նրա մարմինը։ Այն բանից, որ ներքևում նոր կրակների երկու շարք ձուլվեցին, կրակի անընդմեջ գծեր դարձան և շուտով էլ անհետացան ետևում, Մարգարիտան կռահեց, որ հրեշավոր արագությամբ է թռչում ինքը ու զարմացավ, որ շունչը չի կտրվում։

Մի քանի վայրկյանի ընթացքում շատ ներքևում, երկրի խավարի մեջ էլեկտրական լույսի նոր լիճ բռնկվեց ու սփռվեց ավանորդուհու ներքո, բայց և անմիջապես ոլորվեց պտուտակաձև ու գետնի տակն անցավ։ Եվս մի քանի վայրկյան, ու ճիշտ նույն երևույթը։

— Քաղաքնե՞ր են։ Քաղաքնե՞ր,— ճչաց Մարգարիտան։

Դրանից հետո երկու, թե երեք անգամ ներքևում աղոտ լույս արձակող ինչ-որ կեռ թրեր տեսավ՝ բաց արած սև պատյանների մեջ և կռահեց, որ գետեր են դրանք։

Գլուխը վեր ու ձախ բարձրացնելով, ավանորդուհին զմայլվեց, որ իր վրայով լուսինը խելագարի պես սուրում է դեպի ետ՝ Մոսկվա, միևնույն ժամանակ տարօրինակ կերպով տեղում է մնում, այնպես որ լուսնի վրա հստակ երևում էր հանելուկային ու մութ մի բան՝ վիշապ էր, թե սապատավոր ձիուկ, որ սուր մռութը պարզել էր լքված քաղաքի կողմը։

Այստեղ Մարգարիտային մի միտք համակեց, որ ըստ էության ինքն իզուր է այսպես մոլեգնած քշում խոզանակը։ Որ ինքն իրեն զրկում է որևիցե բան ինչպես հարկն է տեսնելու, թռիչքն ինչպես հարկն է վայելելու հնարավորությունից։ Ինչ-որ բան նրան հուշեց, որ այնտեղ, ուր թռչում է ինքը, կսպասեն իրեն, և որ կարիք չկա ձանձրանալ այսպիսի խելագար արագությունից ու բարձրությունից։

Մարգարիտան խոզանակը թեքեց մազերն ի վար, այնպես որ կոթը վեր ցցվեց, և խիստ դանդաղեցնելով ընթացքը, իջավ դեպի երկիր։ Եվ այդ սահքը, ասես օդային սահնակի վրա, առավելագույն հաճույքը պատճառեց նրան։ Երկիրն ելավ նրան ընդառաջ, ու նրա մինչ այդ տձև ու ... թանձրության մեջ ուրվագծվեցին բոլոր գաղտնիքներն ու սքանչելիքները լուսնյակ գիշերին։ Երկիրը գալիս էր դեպի նա, և Մարգարիտային արդեն պարուրել էր կանաչող անտառների բույրը։ Մարգարիտան ճախրում էր ցողապատ մարգագետնի մշուշների, ապա լճակի վրայով։ Մարգարիտայի ներքևում խմբովի երգում էին գորտերը, իսկ հեռու-

ներում, չգիտես ինչու, նրա սիրտը շատ խռովելով, թխկթխկում էր գնացքը։ Մարգարիտան շուտով տեսավ գնացքը։ Թրթուրի պես դանդաղ սողում էր՝ կայծեր սփռելով օդի մեջ։ Գնացքից անցնելով, Մարգարիտան թռավ ևս մեկ ջրեղեն հայելու վրայով, որի մեջ երկրորդ լուսինը լողաց ոտքերի տակ, ավելի ցած իջավ ու ճախրեց՝ ոտքերը համարյա քսելով վիթխարի սոճիների կատարներին։

Օդը պատռող սուր աղմուկ լսվեց ետևից ու սկսեց հասնել Մարգարիտային։ Ռումբի պես թռչող այդ մարմնի աղմուկին աստիճանաբար միացավ բազում վերստեր տարածվող կանացի քրքիջը։ Մարգարիտան ետ նայեց ու տեսավ, որ իրեն է հասնում անըմբռնելի ու խավար մի առարկա։ Հասնելով Մարգարիտային, ավելի ու ավելի էր ուրվագծվում, երևաց, որ ինչ-որ մեկը թռչում է հեծյալ։ Եվ վերջապես լիովին ուրվագծվեց։ Ընթացքը դանդաղեցնելով՝ Մարգարիտային հասավ Նատաշան։

Բոլորովին մերկ, գզգզված մազերն օդի մեջ ծածանելով, նա թռչում էր մի գիրուկ, կրտած խոզ հեծած, որն առջևի կճղակներով պայուսակ էր բռնել, իսկ ետևի կճղակներով կատաղորեն թրատում էր օդը։ Պնչից կախված, լուսնի լույսի տակ մեկ-մեկ փայլփլող, ապա մարող պենսնեն թռչում էր խոզի կողքով, իսկ շլյապան ստեպ-ստեպ ընկնում էր աչքերին։ Մի լավ զննելուց հետո Մարգարիտան ի դեմս խոզի ճանաչեց Նիկոլայ Իվանովիչին, և այդ ժամանակ նրա քրքիջը թնդաց անտառի վրա՝ խառնվելով Նատաշայի քրքիջին։

— Նատա՛շկա,— խլացուցիչ բղավեց Մարգարիտան,— վրադ քսո՞ւք ես շփել։

— Հոգյա՛կս,— իր ճիչերով սոճու քնած անտառն արթնացնելով, պատասխանեց Նատաշան,— թագուհիս իմ ֆրանսիական, ախր նրա ճաղատին էլ շփեցի, նրան էլ։

— Արքայադու՛ստր,— լացակումած ռռնաց խոզը, քառատրոփ տանելով հեծյալ կնոջը։

— Հոգյա՛կս։ Մարգարի՛տա Նիկոլաևնա,— բղավում էր Նատաշան, արշավելով Մարգարիտայի կողքով,— խոստովանում եմ, քսուքը վերցրել եմ։ Չէ որ մենք էլ ենք ուզում ապրել ու թռչել։ Ներեցեք ինձ, տիրուհի, բայց ես չեմ վերադառնա, ոչ մի դեպքում չեմ վերադառնա։ Ա՛հ, ի՛նչ լավ է, Մարգարիտա Նիկոլաևնա։ Ինձ առաջարկություն էր անում,— Նատաշան սկսեց մատով բոթբոթել մոլորված ու ֆնչացնող խոզի վիզը,— առա-

չարկությո՞ւն։ Ի՞նչ ասած էիր տալիս ինձ, հը՞,— բղավում էր նա՝ թեքվելով խոզի ականջին։

— Աստվածուհի,— ոռնաց նա,— ես չեմ կարող այսքան արագ թռչել։ Կարևոր թղթեր կարող եմ կորցնել։ Նատալյա Պրոկոֆևնա, ես բողոքում եմ։

— Գրողի ծո՛ցը կորիր քո թղթերի հետ միասին,—հանդգնորեն քրքջալով, ճչում էր Նատաշան։

— Ի՞նչ եք ասում, Նատալյա Պրոկոֆևնա։ Մեկնումեկը կլսի մեզ,— աղերսագին ոռնաց խոզը։

Քառատրոփ սլանալով Մարգարիտայի կողքով, Նատաշան քրքջալով նրան պատմեց այն մասին, թե ինչ եղավ առանձնատանը, երբ Մարգարիտա Նիկոլաևնան թռավ դարպասի վրայով։

Նատաշան խոստովանեց, որ այլևս ձեռք չտալով նվիրած իրերից և ոչ մեկին, վրայից հանեց հագուստն ու նետվելով դեպի քսուքը, անմիջապես սկսեց դրանով շփել մարմինը։ Ու նրա հետ կատարվեց նույնը, ինչ և տանտիրուհու հետ։ Այն ժամանակ, երբ բերկրանքից քրքջալով Նատաշան հայելու առաջ սքանչանում էր իր կախարդական գեղեցկությամբ, դուռը բացվեց, և Նատաշայի դիմաց հայտնվեց Նիկոլայ Իվանովիչը։ Նա հուզված էր, ձեռքում բռնել էր Մարգարիտա Նիկոլաևնայի շապիկը, սեփական շլյապան և պայուսակը։ Տեսնելով Նատաշային, Նիկոլայ Իվանովիչը նվաղեց։ Մի քիչ տիրապետելով իրեն՝ ամբողջովին կարմրած, խեցգետինի պես, նա հայտարարեց, որ պարտքն է համարել վերցնել շապիկը, անձամբ բերել...

— Ի՞նչ էիր ասում, սատ՛ը արարած,— ծղրտում ու քրքջում էր Նատաշան,— ինչե՞ր էր ասում, ինչո՞վ էր հրապուրում։ Ի՞նչ փողեր էր խոստանում։ Ասում էր, թե Կլավդիա Պետրովնան ոչինչ չի իմանա։ Ինչ է, կասես, սուտ՞ եմ,—բղավում էր Նատաշան խոզի վրա, իսկ սա միայն մռութն էր դարձնում շփոթված։

Ննջասենյակում մի քիչ չարություն անելուց հետո Նատաշան քսուքով շփեց Նիկոլայ Իվանովիչի ճաղատն ու ինքն էլ ապշահար եղավ զարմանքից։ Ներքևի պատվելի հարևանի դեմքը դարձավ խոզի դունչ, իսկ ձեռքերին ու ոտքերին կճղակներ հայտնվեցին։ Հայելու մեջ իրեն տեսնելով, Նիկոլայ Իվանովիչը աղեկտուր և վայրենաձայն ոռնաց, բայց արդեն ուշ էր։ Մի քանի վայրկյան անց արդեն թամբված, վշտից հեկեկալով, գրողի ծոցն էր թռչում Մոսկվայից։

— Պահանջում եմ իմ սովորական կերպարանքի վերադարձումը,— ոչ այն է մռնչյուն, ոչ այն է աղերսագին խռխռացրեց խոզը,— ես մտադիր չեմ թողել անօրինական խառնաժողովների: Մարգարիտա Նիկոլաևնա, դուք պարտավոր եք զսպել ձեր տնային աշխատողին:

— Ահ, ուրեմն հիմա քեզ համար տնայի՞ն աշխատո՞ղ եմ: Տնայի՞ն աշխատո՞ղ,— ճչում էր Նատաշան՝ խոզի ականջը կսմթելով,— բայց աստվածուհի՞ էի: Ի՞նչ անուն էիր տալիս ինձ:

— Վեներա՛,— լացակումած պատասխանեց խոզը՝ թռչելով քարերի արանքում աղմկող առվակի վրայով ու կճղակներով խշխշացնելով կաղնուտի թփուտները:

— Վեներա՛, Վեներա՛,— հաղթականորեն գոչում էր Նատաշան, մի ձեռքը կողին կանթած, մյուսը դեպի լուսին պարզած.— Մարգարի՛տա: Թագուհի՛: Խնդրեք ինձ համար, որպեսզի թողնեն վհուկ մնամ: Ձեզ համար ամեն ինչ կանեն, ձեզ իշխանություն է տրված:

Ու Մարգարիտան պատասխանեց.

— Լավ, խոստանո՛ւմ եմ:

— Շնորհակալությո՜ւն,— բղավեց Նատաշան ու հանկարծ կտրուկ ու մի տեսակ տխրամած ճչաց.— Հե՛յ: Հե՛յ: Շու՛տ: Շու՛տ: Արագացրու, տեսնե՛մ:— Նա կրունկներով սեղմեց խելացնոր վազքից նիհարած խոզի կողերը, և սա այնպես պոկվեց տեղից, որ վերստին պատռեց օդը, ու մեկ վայրկյան անց Նատաշան արդեն որպես մի սև կետ էր երևում առջևում, հետո բոլորովին անհետացավ ու նրա թռիչքի աղմուկը լռացավ:

Մարգարիտան առաջվա պես դանդաղ թռչում էր ամայի ու անհայտ վայրում, բլրակների վրայով, որոնց վրա հատուկենտ գլաքարեր էին թափված առանձին-առանձին վեր ձգվող վիթխարի սոճիների արանքում: Մարգարիտան թռչում և մտածում էր այն մասին, որ ինքը, հավանորեն, շատ հեռու մի տեղ է Մոսկվայից: Խոզանակն արդեն թռչում էր ոչ թե սոճիների կատարների վրայով, այլ մի կողմը լուսնից արծաթազօծ բների արանքով: Սավառնորդուհու թեթև ստվերը սահում էր գետնի վրա առջևից՝ լուսինը հիմա Մարգարիտայի թիկունքն էր լուսավորում:

Մարգարիտան զգում էր ջրի մոտիկությունն ու կռահում, որ նպատակակետը մոտ է: Սոճիները բաժանվեցին, և Մարգարիտան կամացուկ մոտ թռավ կավճասարի զառիթափին: Զառի-

Թափից ցած, ստվերի մեջ գետն էր ընկած։ Մշուշը կախված էր ու կառչել էր ուղղաձիգ գրանիտի սալի թփերից, իսկ հակադիր ափը հարթ էր, ցածրադիր։ Այնտեղ, ինչ-որ լայնատարածք ծառերի միայնակ խմբի տակ առկայծում էր խարույկի կրակը և երևում էին շարժվող կերպարանքներ։ Մարգարիտային թվաց, թե այնտեղից միալար ու զվարթ ինչ-որ երաժշտության ձայն էր գալիս։ Այն կողմ, որքան աչքը կտրում էր, արծաթացած հարթության վրա ոչ բնակավայրի, ոչ մարդկանց նշույլ անգամ չէր երևում։

Մարգարիտան դարափից ցած թռավ ու արագ իջավ ջրի մոտ։ Օդային արշավից հետո ջուրը քաշում էր նրան։ Խոզանակը դեն նետելով, նա վազեց ու գլխիվայր նետվեց ջուրը։ Նրա թեթև մարմինը նետի պես մխրճվեց ջրի մեջ, և ջրի սյունը շպրտվեց համարյա մինչև լուսինը։ Ջուրը տաք էր, ինչպես բաղնիքում, և, խորքերից դուրս լողալով, Մարգարիտան կուշտ լողացավ այդ գետի մեջ, կատարելապես միայնակ։

Մարգարիտայի կողքին ոչ ոք չկար, սակայն քիչ այն կողմ, թփերի ետև ճողփյուններ ու ֆնչոց էր լսվում, այնտեղ նույնպես ինչ-որ մեկը լողանում էր։

Մարգարիտան վազելով ափ ելավ։ Լողից հետո մարմինը կրակվում էր։ Հոգնածություն բնավ չէր զգում ու բերկրալից պար էր գալիս խոնավ խոտի վրա։ Հանկարծ նա դադարեց պարել և զգուշացավ։ Ֆնչոցն սկսեց մոտենալ և ուռենու թփերի ետևից մի տկլոր գիրուկ դուրս եկավ, մետաքսե սև ցիլինդրը ծոծրակին գցած։ Նրա ոտնաթաթերը տղմապատ էին, այնպես որ թվում էր, թե լողվորը սև կոշիկներ է հագել։ Դատելով նրանից, թե ինչպես էր հևում ու զկռտում, բավականաչափ խմած էր, ինչ է դեպ, հաստատվում էր և նրանով, որ գետը հանկարծ կոնյակի բույր սկսեց արձակել։

Տեսնելով Մարգարիտային, գիրուկն սկսեց ուշադիր նայել, իսկ հետո ուրախացած բացականչեց.

— Ինչպե՞ս թե։ Նրա՞ն եմ արդյոք տեսնում։ Կլոդի՛նա, այդ դո՞ւ ես, անդադրում այրի։

Մարգարիտան ընկրկեց ու պատասխանեց արժանապատվությամբ.

— Կորի գնա գրողի մոր ծո՛ցը։ Ես քեզ ի՞նչ Կլոդինա։ Մի լավ նայիր, թե ում հետ ես խոսում,— և մի պահ մտածելով, իր ճառին երկարաշունչ ու ոչ տպագրելի մի հայհոյանք ավելաց-

րեց։ Այդ ամենը թեթևամիտ գիրուկի վրա սթափեցնող ազդեցություն գործեց։

— Ո՛չ,— կամացուկ բացականչեց նա և ցնցվեց,— մեծահոգաբար ներեցեք, պայծառափայլ թագուհի Մարգո։ Ես սխալվեցի։ Մեղքը կոնյակինն է, անիծյա՛լ լինի։— Գիրուկը չոքեց մի ծնկի վրա, ցիլինդրը կողք տարավ, խոնարհվեց և ռուսերենի ու ֆրանսերենի դարձվածքներն իրար խառնելով, սկսեց մի բանդագուշանք բլբլացնել Փարիզի իր ընկերոջ՝ Գեսսարի արյունահեղ հարսանիքի մասին, կոնյակի մասին, և այն մասին, որ ինքը ճնշված է այդ տխուր սխալի պատճառով։

— Գոնե շալվարդ հագնեիր, շան որդի,— մեղմանալով ասաց Մարգարիտան։

Գիրուկն ուրախացած ժպտաց՝ ատամները բաց, տեսնելով, որ Մարգարիտան չի զայրանում և ոգևորված հայտարարեց, թե տվյալ պահին անշալվար է մնացել սոսկ այն պատճառով, որ ցրվածությունից շալվարը թողել է Ենիսեյ գետի ափին, ուր լողանում էր մինչ այս, սակայն հենց հիմա ինքը կթռչի այնտեղ, լավ է, որ քթի տակ է, ապա, բարեհաճության ու հովանավորության երաշխիք ստանալով, սկսեց ետ-ետ գնալ այնքան, մինչև որ սայթաքեց ու երեսնիվեր ընկավ ջուրը։ Բայց ընկնելիս էլ կարճ այտամորուսներով եզերված դեմքի վրա պահպանեց զմայլանքի ու նվիրվածության արտահայտությունը։

Իսկ Մարգարիտան խլացուցիչ սուլեց և, հեծնելով մոտ սլացած խոզանակը, գետի վրայով տեղափոխվեց հակադիր ափը։ Կավճասարի ստվերն այստեղ չէր հասնում, և ամբողջ ափը լուսինն էր ողողել։

Հենց որ Մարգարիտայի ոտքերը հպվեցին խոնավ խոտին, երաժշտությունն ուռենիների տակ ուժգնացավ, և կայծերի խուրձն առավել հախուռն սլացավ խարույկն ի վեր։ Լուսնի լույսի տակ երևացող նուրբ ու խավոտ փշփշուկներով պատած ուռենիների ճյուղերի տակ երկշարք նստած էին հաստամռութ գորտեր և, ռետինե խաղալիքների պես փքվելով, փայտյա սրինգներով խրոխտ քայլերգ էին նվագում։ Լույս արձակող փտասունկեր էին կախված ճյուղերից, որոնք երաժիշտների առջև դրված նոտաներն էին լուսավորում, գորտերի մռութների վրա խարույկի թրթռուն կրակն էր ցոլցլում։

Քայլերգը նվագում էին Մարգարիտայի պատվին։ Շատ հանդիսավոր ընդունելության արժանացրին նրան։ Թափանցիկ

ջրահարսերը դադա[illegible]ին իրենց շուրջպարը [illegible] է, ջրիմուռները թափահարելով ողջունեցին Մարգարիտային, և կանաչավուն, ամայի գետափին հառաչեցին հնդունները թռչող նրանց ողջույնները։ Տկլոր վհուկները, դուրս թռչելով ուռենիների ետևից, շարք կանգնեցին և սկսեցին ծնկածալ խոնարհվել պալատական շարժուձևով։ Այծոտն մեկը մոտ ցատկեց, ձեռքը համբուրեց, կերպաս փռեց խոտի վրա, հարցրեց, թե արդյոք լավ լողացավ թագուհին, առաջարկեց ընկողմանել ու հանգստանալ։

Մարգարիտան այդպես էլ արեց։ Այծոտնը մի գավաթ շամպայն մատուցեց, Մարգարիտան խմեց և սիրտն իսկույն ջերմացավ։ Տեղեկանալով, թե ուր է Նատաշան, պատասխան ստացավ, որ Նատաշան արդեն լողացել և իր խոզը հեծած թռել է առաջ, Մոսկվա, նախազգուշացնելու համար, որ Մարգարիտան շուտով կժամանի, նաև օգնելու, որ նրա հագուստը պատրաստեն։

Մարգարիտայի կարճատև դադարն ուռենիների տակ նշանավորվեց մի դիպվածով։ Օդի մեջ սուլոց լսվեց և մի սև մարմին, հաստատապես վրիպելով, ջուրը շրմփաց։ Մի քանի վայրկյան անց Մարգարիտային ներկայացավ այտամորուսավոր նույն հաստլիկը, որ այնքան անհաջող ներկայացել էր մյուս ափին։ Ըստ երևույթին, հասցրել էր Դնիպր հասնել, քանի որ ֆրակ էր հագել, բայց թրջված էր ոտից գլուխ։ Կոնյակը երկրորդ անգամ էր դավաճանել նրան. վայրէջք կատարելիս այնուամենայնիվ ջուրն էր ընկել։ Սակայն ցավալի այդ դեպքից հետո էլ ժպիտը չէր կորցրել, ու ծիծաղող Մարգարիտան թողեց, որ ձեռքը համբուրի։

Հետո բոլորն սկսեցին պատրաստվել։ Ջրահարսերը լուսնի լույսի՝ տակ ավարտեցին պարը և տարրալուծվեցին այդ լույսի մեջ։ Այծոտնը հարգալիր հարցրեց, թե Մարգարիտան ինչով է ժամանել գետափ և իմանալով, որ եկել է խոզանակը հեծած, ասաց.

— Օ՜, իսկ ինչու, դա անհարմար է,— երկու ճյուղերից վայրկենապես ինչ-որ կասկածելի հեռախոս հարմարեցրեց և ինչ-որ մեկից պահանջեց այս իսկ րոպեին մեքենա ուղարկել, ինչ և կատարվեց, իրոք, մեկ րոպեում։ Կղզու վրա թրմփաց մի բաց, դեղձանագույն մեքենա, միայն թե վարորդի տեղում սովորական վարորդ չէր նստած, այլ սև, երկարակտուց սերմնագռավ՝ վանդակավոր գլխարկով և լայնեզրան ձեռնոցներով։

[illegible] դատարկվում էր։ Լուսնի ցոլքերի մեջ տարրալուծվեցին բոլոր վհուկները։ Խարույկը մարմրում էր, և ածուխները ճերմակ մոխրով էին պատվում։

Աստամորուսավորն ու այծոտնը օգնեցին Մարգարիտային մեքենա նստել, ու նա ընկողմանեց ետևի լայն նստիքին։ Մեքենան հռնդաց, թռավ ու համարյա մինչև լուսին ելավ, կղզին անհետացավ, գետն անհետացավ, Մարգարիտան սլանում էր Մոսկվա։

ԳԼՈՒԽ XXII

## ՄՈՄԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

***Գետնից շատ բարձր թռչող մեքենայի համաչափ գվվոցը նինջ էր բերում Մարգարիտային, իսկ լուսնի լույսը հաճելի ջերմությամբ պարուրում նրան։ Աչքերը փակելով՝ նա դեմքը պարզեց քամուն և մի տեսակ տրտմությամբ մտածում էր իր թողած անծանոթ գետափի մասին, որը, նախազգում էր, այլևս երբեք չէր տեսնելու։ Այսօրվա երեկոյի բոլոր կախարդանքներից ու հրաշքներից հետո նա արդեն կռահում էր, թե ում մոտ են հյուր տանում իրեն, սակայն դա չէր վախեցնում։ Հույսը, որ իրեն այնտեղ կհաջողվի վերադարձնել իր երջանկությունը, անվախ էր դարձրել նրան։ Ի դեպ, մեքենայի մեջ այդ երջանկության մասին երկար երազել չհաջողվեց։ Սերմնագռավը քաջ գիտեր իր գործը, թե մեքենան էր լավը, միայն թե շուտով, բացելով աչքերը, Մարգարիտան ներքևում տեսավ ոչ թե անտառի խավարը, այլ մոսկովյան կրակների թրթռուն լիճը։ Սև թռչուն-վարորդը թռիչքի ժամանակ քանդեց-հանեց առջևի աջ անիվը, ապա մեքենան վայրէջք կատարեց բացարձակապես ամայի մի գերեզմանոցում, Դորոգոմիլովի շրջակայքում։ Ոչինչ չհարցնող Մարգարիտային իր խոզանակի հետ իջեցնելով մի տապանաքարի մոտ, սերմնագռավը մեքենան ուղղեց դեպի գերեզմանոցից այն կողմ ընկած ձորակը։ Մեքենան դղրդոցով ձորը գլորվեց, այնտեղ էլ խորտակվեց։ Սերմնագռավը հարգալից պատիվ առավ, նստեց անիվի վրա ու թռավ։***

***Տեղնուտեղը մահարձաններից մեկի ետևից սև թիկնոց երևաց։ Լուսնի լույսի տակ փայլեց ժանիքը, և Մարգարիտան***

ճանաչեց Ազազելլոյին: Վերջինս ձեռքի շարժումով հրամայեց Մարգարիտային՝ խոզանակը հեծնել, ինքն էլ ցատկեց իր երկար սուսերի վրա, երկուսով վեր սլացան ու մի քանի վայրկյան անց բոլորից աննկատ իջան Սադովայա փողոցի №302/2 շենքի մոտ:

Երբ խոզանակն ու սուսերը թևերի տակ՝ ուղեկիցներն անցնում էին դարպասատակով, Մարգարիտան այդտեղ տեսավ կեպիով ու երկարաճիտք կոշիկներով, տանջահար մի մարդու, որը, հավանորեն, ինչ-որ մեկին էր սպասում: Որքան էլ թեթև լինեին Մարգարիտայի և Ազազելլոյի քայլերը, միայնակ մարդը լսեց և ցնցվեց անհանգստացած, չհասկանալով, թե ումն է ոտնաձայնը:

Զարմանալի կերպով առաջինին նման երկրորդ մարդուն հանդիպեցին վեցերորդ մուտքի մոտ: Ու նորից կրկնվեց նույն պատմությունը: Քայլեր... Մարդն անհանգստացած շրջվեց ու խոժոռվեց: Իսկ երբ դուռը բացվեց ու փակվեց, նետվեց անտեսանելի մուտք գործողների ետևից, շքամուտքից ներս նայեց, բայց, իհարկե, ոչինչ չտեսավ:

Երրորդը՝ երկրորդի, ասել է, թե նաև առաջինի ճշգրիտ պատճենը, հերթապահում էր երրորդ հարկի սանդղահարթակին: Նա թունդ գլանակ էր ծխում, և Մարգարիտան հազաց նրա կողքով անցնելիս: Ծխողը վեր թռավ նստարանից, որի վրա նստած էր, ասես խոցեցին նրան, անհանգստացած չորս կողմը նայեց, մոտեցավ բազրիքին, ցած նայեց: Մարգարիտան իր ուղեկցի հետ այդ ժամանակ արդեն № 50 բնակարանի դռան մոտ էր: Զանգը չտվեցին, Ազազելլոն իր բանալիով անաղմուկ բացեց դուռը:

Առաջին բանը, որ ապշեցրեց Մարգարիտային, խավարն էր, որի մեջ ընկավ ինքը: Ոչինչ չէր երևում, ասես գետնի տակ լինեին, և Մարգարիտան ակամա կառչեց Ազազելլոյի թիկնոցից՝ սայթաքելուց վախենալով: Բայց այստեղ հեռվում, վերևից ինչ-որ լապտերիկի լույս թրթռաց ու սկսեց մոտենալ: Ազազելլոն քայլելիս Մարգարիտայի թևի տակից հանեց խոզանակը, և սա անձայն չքացավ խավարի մեջ: Սկսեցին բարձրանալ ինչ-որ լայն աստիճաններով, ու Մարգարիտային թվաց, թե դրանք վերջ չունեն: Նրան ապշեցրեց, որ մոսկովյան սովորական բնակարանի նախասենյակում կարող է տեղավորվել այդ անսովոր անտեսանելի, սակայն շատ լավ զգացվող անվերջանալի սանդուղքը: Բայց այստեղ վերելքն ավարտվեց, և Մարգարիտան հասկացավ, որ ինքը կանգնած է հարթակի վրա: Փոքրիկ կրակն

ընդհուպ մոտեցավ, և Մարգարիտան տեսավ երկարահասակ ու սև մի տղամարդու դեմք, որի ձեռքում էլ այդ լապտերիկն էր։ Նրանք, ովքեր այդ օրերին արդեն դժբախտություն ունեցել էին նրա ճանապարհին կանգնել, անգամ լապտերիկի պատրույգի թույլ լույսի տակ, անշուշտ, իսկույն կճանաչեին նրան։ Կորովևն էր, նույն ինքը՝ Ֆագոտը։

Ճշմարիտ է, Կորովևի արտաքինը խիստ փոխված էր։ Թրթռացող լույսն արտացոլվում էր ոչ թե ճաքած պենսնեի, որը վաղուց ժամանակն էր աղբանոց նետել, այլ մոնոկլի մեջ, որի ապակին, ճիշտն ասած, նույնպես ճաքած էր։ Լպիրշ դեմքի վրա բեղիկները գանգրացված էին ու փայլեցված, իսկ Կորովևի սևությունը շատ հասարակ բացատրություն ուներ՝ ֆրակով էր հանդերձված։ Ճերմակին էր տալիս միայն կուրծքը։

Մոգ, խմբավար, կախարդ, թարգմանիչ կամ սատանան գիտե, թե իրականում էլ ինչ, մի խոսքով՝ Կորովևը, խոնարհվեց և լայն շարժումով լապտերիկն օդի մեջ շարժելով, Մարգարիտային հրավիրեց հետևել իրեն։ Ազազելլոն անհետացավ։

«Զարմանալի՜ արտասովոր երեկո է,— զարմացավ Մարգարիտան,— ամեն ինչ սպասում էի, միայն թե ոչ սա։ Էլեկտրականություն չունե՞ն, ինչ է։ Սակայն ամենաապշեցուցիչը այս սենյակի չափերն են։ Ի՞նչ ձևով կարող է այս ամենը տեղավորվել մոսկովյան բնակարանի մեջ։ Ուղղակի ոչ մի կերպ չի կարող»։

Որքան էլ աղոտ լուսավորեր Կորովևի լապտերիկը, Մարգարիտան հասկացավ, որ գտնվում է կատարյալ անծայրածիր, այն էլ մթի մեջ կորած ու առաջին հայացքից անվերջանալի սյունաշար ունեցող մի դահլիճում։ Ինչ-որ փոքրիկ բազմոցի մոտ Կորովևը կանգ առավ, լապտերիկը դրեց ինչ-որ ցածրիկ պատվանդանի վրա, ձեռքի շարժումով Մարգարիտային հրավիրեց նստել, ինքն էլ տեղավորվեց կողքը մի գեղանի դիրքով՝ արմունկը պատվանդանին դրած։

— Թույլ տվեք ներկայանալ ձեզ,— խզխզաց Կորովևը։— Կորովև։ Ձեզ զարմացնում է, որ լույս չկա՞։ Ինչպես, իհարկե, կարծեցիք, խնայողությո՞ւն է։ Ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Թող առաջին իսկ պատահած դահիճը, թեկուզ մեկը նրանցից, ովքեր այսօր, փոքր-ինչ ավելի ուշ, պատիվ կունենան ձեր ծունկը համբուրելու, հենց այս պատվանդանի վրա գլուխս թռցնի, եթե դա այդպես է։ Պարզապես մեսիրը էլեկտրական լույս չի սիրում, և մենք դա

կմիացնենք ամենավերջին վայրկյանին։ Իսկ այդ ժամանակ, հավատացեք, լույսի պակասություն չի լինի։ Թերևս նույնիսկ ավելի լավ կլիներ, որ մի քիչ էլ չլիներ։

Կորովևը Մարգարիտայի դուրը եկավ, ու նրա խոխոջուն շատախոսությունը հանգստացնող ներգործություն ունեցավ կնոջ վրա։

— Ոչ,— պատասխանեց Մարգարիտան,— ամենից շատ ինձ զարմացնում է, թե այս ամենը որտեղ է տեղավորվում։— Նա շարժեց ձեռքը՝ դրանով ընդգծելով գահլիճի անծայրածիրությունը։

— Ամենահասարակ բանն է դա բոլորից,— պատասխանեց Կորովևը։— Նրանց համար, ովքեր քաջ գիտեն հինգերորդ չափումը, դատարկ բան է շինությունը ցանկացած չափերի հասցնելը։ Հարգելի տիրուհի, ձեզ ավելին կասեմ, սատանան գիտե, թե ինչ չափերի։ Ի դեպ, ես,— շարունակեց շաղակրատել Կորովևը,— ճանաչել եմ մարդկանց, որոնք ոչ միայն հինգերորդ չափումի մասին որևիցե պատկերացում չեն ունեցել, այլև ընդհանրապես ոչնչի մասին ոչ մի պատկերացում չեն ունեցել, այդուհանդերձ կատարելագույն հրաշքներ են գործել իրենց կացարաններն ընդլայնելու առումով։ Այսպես, օրինակ, քաղաքաբնակ մեկը, ինչպես պատմել են ինձ, Զեմլյանոյ Վալի վրա երեքսենյականոց բնակարան ստանալով, առանց որևիցե հինգերորդ չափումի և այլ բաների, որոնցից մարդու ուղեղը շաղվում է, վայրկենապես դարձրել է չորսսենյականոց՝ սենյակներից մեկը միջնապատով կիսելով։

Այնուհետև նա փոխանակել է դա երկու առանձին բնակարաններով, Մոսկվայի տարբեր շրջաններում, մեկը՝ երեք, մյուսը՝ երկուսենյականոց։ Համաձայնեք, որ սենյակները դարձան հինգ։ Երեքսենյականոցը նա փոխանակել է երկուական սենյակով երկու առանձին բնակարանների և, ինչպես ինքներդ եք տեսնում, տեր է դարձել վեց սենյակի, որոնք, ճշմարիտ է, կատարելապես խառնիխուռն, ցրիվ են եկած Մոսկվայով մեկ։ Նա արդեն պատրաստվում էր կատարել վերջին ու ամենափայլուն վոլտը, թերթում հայտարարություն տպագրելով, որ Մոսկվայի տարբեր շրջաններում վեց սենյակ Զեմլյանոյ Վալում հինգսենյականոց մեկ բնակարանով է փոխանակում, երբ նրա գործունեությունը, իրենից անկախ պատճառներով, դադարեցվեց։ Հնարավոր է, որ հիմա նա ինչ-որ սենյակ ունի, միայն թե

համարձակվում եմ ձեզ հավատացնել, որ ո՛չ Մոսկվայում, Ա[illegible] այսպիսի մի ծակամուտ մարդ, իսկ դուք բարեհաճում եք խոսել հինգերորդ չափումի մասին։

Մարգարիտան, թեև ամենևին չէր խոսում հինգերորդ չափումի մասին, այլ Կորովևն ինքն էր խոսում, ուրախ-ուրախ ծիծաղելով՝ լսելով բնակարանային ծակամուտի արկածների մասին։ Իսկ Կորովևը շարունակեց.

— Բայց անցնենք գործին, անցնենք գործին, Մարգարիտա Նիկոլաևնա։ Դուք բավական խելացի կին եք և, իհարկե, արդեն կռահել եք, թե ով է մեր տանտերը։

Մարգարիտայի սիրտը զարկեց, ու նա գլխով արեց։

— Դե, լավ,լավ,— ասաց Կորովևը,— մենք բոլոր կարգի թերասությունների և խորհրդավորությունների թշնամի ենք։ Ամեն տարի մեսսիրը մեկ պարահանդես է տալիս։ Դա կոչվում է լիալուսնի գարնանային պարահանդես կամ հարյուր արքաների պարահանդես։ Հը ժողովուրդ չի՞ հավաքվում,— այստեղ Կորովևը այտը բռնեց, ասես ատամը ցավեց,— ասենք, հուսով եմ, ինքներդ կհամոզվեք դրանում։ Ուրեմն այսպես, մեսսիրն ամուրի է, ինչ, իհարկե, ինքներդ եք հասկանում։ Բայց պետք է տիրուհի.— Կորովևը ձեռքերը տարածեց,— համաձայնեք ինքներդ, առանց տիրուհու...

Մարգարիտան լսում էր Կորովևին, աշխատելով ոչ մի բառ բաց չթողնել, նրա սիրտը սառել էր, երջանկության հույսից պտտվում էր գլուխը։

— Ավանդո՛ւյթ է սահմանվել,— շարունակեց Կորովևը,— պարահանդեսի տիրուհին անպայման պետք է Մարգարիտա անունն ունենա, սա՝ մեկ, երկրորդը՝ պետք է տեղացի կին լինի։ Իսկ մենք, ինչպես կհաճեք տեսնել, ճանապարհորդում ենք ու տվյալ պահին գտնվում ենք Մոսկվայում։ Հարյուր քսանմեկ Մարգարիտա հայտնաբերեցինք Մոսկվայում, և կհավատա՞ք,— Կորովևն այստեղ հուսահատորեն զարկեց իր ազդրին,— ոչ մեկը հարմար չէր։ Եվ, վերջապես, երջանիկ ճակատագիրը...

Կորովևը, իրանը թեքելով, քթի տակ արտահայտիչ ժպտաց, ու վերստին սառեց Մարգարիտայի սիրտը։

— Ավելի կարճ,— բղավեց Կորովևը,— շատ կարճ. դուք դեմ չե՞ք այդ պարտականությունը ձեզ վրա վերցնել։

— Դեմ չեմ,— հաստատ պատասխան տվեց Մարգարիտան։

— Վերջացա՛,— ասաց Կորովևը և, լապտերիկը բարձրացնելով, ավելացրեց.— Խնդրում եմ հետևել ինձ։

Նրանք անցան սյուների արանքով և վերջապես հասան մի այլ դահլիճ, ուր, չգիտես ինչու, կիտրոնի ուժեղ հոտ էր գալիս, ուր ինչ-որ խշշոց էր լսվում, և ինչ-որ մի բան քսվեց Մարգարիտայի գլխին։ Նա ցնցվեց։

— Մի վախեցեք,— քաղցրաձայն հանգստացրեց Կորովևը՝ թևանցուկ անելով Մարգարիտային,— Բեգեմոտի պարահանդեսային հնարամտություններն են, ուրիշ ոչինչ։ Եվ, ընդհանրապես, Մարգարիտա Նիկոլաևնա, ձեզ խորհուրդ տալու համարձակություն ունենամ, երբեք և ոչնչից չվախենաք։ Դա խելամիտ բան չէ։ Պարահանդեսը ճոխ է լինելու, չթաքցնեմ ձեզնից։ Մենք կտեսնենք անձանց, որոնց իշխանության ընդգրկումներն իրենց ժամանակին չափազանց մեծ են եղել։ Բայց, իրավ, հենց մտածում ես այն մասին, թե նրանց հնարավորությունները որքա՜ն աննշմար նվազ են՝ համեմատած նրա՛ հնարավորությունների հետ, ում շքախմբում լինելու պատիվն ունեմ, ծիծաղելի է դառնում, նույնիսկ կասեի՝ տխուր։ Բացի դրանից, դուք էլ թագավորական արյուն ունեք։

— Ինչո՞ւ թագավորական արյուն,— վախեցած շշնջաց Մարգարիտան՝ Կորովևին սեղմվելով։

— Ա՜խ, թագուհի,— կայտառությամբ խզխզացնում էր Կորովևը,— արյան հարցերն ամենաբարդ հարցերն են աշխարհում։ Ու եթե հարցուփորձ անենք որոշ նախատատերի և հատկապես նրանց, ովքեր խոնարհ ու հեզ լինելու համբավն էին վայելում, խիստ զարմանալի գաղտնիքներ կբացահայտվեին, հարգելիդ իմ Մարգարիտա Նիկոլաևնա։ Ամենևին մեղք չէի գործի, եթե այս մասին խոսելիս հիշատակեի քմահաճորեն խառնվող խաղաթղթերի մասին։ Բաներ կան, որոնց մեջ կատարելապես անզոր են թե դասային պատնեշները, թե նույնիսկ սահմանները պետությունների միջև։ Ակնարկեմ. տասնվեցերորդ դարում ապրած ֆրանսիական թագուհիներից մեկը, հարկ է ենթադրել, անչափ կզարմանար, եթե մեկնումեկը նրան ասեր, որ բազում տարիներ անց նրա սքանչելի ծոռնծոռնծոռնծոռանը թևանցուկ արած պիտի տանեմ պարահանդեսի դահլիճներով, Մոսկվայում։ Սակայն մենք հասանք։

Կորովևն այստեղ փչեց իր լապտերիկի վրա, և այն անհետացավ նրա ձեռքից, ու Մարգարիտան ինչ-որ մութ դռան

տակից ընկնող լույսի շերտը տեսավ հատակին։ Հենց այդ դուռն էլ կամացուկ բախեց Կորովևը։ Մարգարիտան այստեղ այն աստիճան հուզվեց, որ ատամներն իրար զարկվեցին և մեջքի վրայով սարսուռ անցավ։ Դուռը բացվեց։ Սենյակն այնքան էլ մեծ չէր։ Մարգարիտան տեսավ կաղնեփայտե մի լայն մահճակալ, ճմրթված ու ծալծլված կեղտոտ սավաններով ու բարձով։ Մահճակալի առջև կաղնեփայտե, դրվագանախշ ոտներով սեղան կար, վրան՝ թռչնի ճանկաքաց թաթերի տեսք ունեցող բներով մոմակալ։ Ոսկյա այդ յոթ թաթերի մեջ հաստ մոմեր էին վառվում։ Դրանից բացի, սեղանի վրա շախմատի մեծ տախտակ կար՝ արտակարգ վարպետորեն պատրաստած ֆիգուրներով։ Մաշված փոքրիկ գորգի վրա ցածրիկ նստարան էր դրված։ Մեկ այլ սեղան էլ կար՝ ոսկյա գավաթով և ուրիշ մոմակալով, որի ճյուղերն օձաձև էին։ Սենյակում ծծմբի և կպրի հոտ էր կանգնած, մոմակալների ստվերները խաչվում էին հատակին։

Ներկաներից Մարգարիտան իսկույն ճանաչեց Ազազելլոյին, որը հիմա արդեն ֆրակ էր հագել ու կանգնած էր մահճակալի գլխին։ Զուգված Ազազելլոն արդեն նման չէր այն ավազակին, ում տեսքով Մարգարիտային հայտնվեց Ալեքսանդրովսկի այգում, ու նա Մարգարիտային գլուխ խոնարհեց նրբակիրթ։

Մերկ վհուկը, նույն Գելլան, որ այնպես ամաչեցրել էր Վարյետեի հարգարժան բուֆետապանին, և, ավա՜ղ, նույն ինքը, որին ի մեծ բախտավորություն վախեցրել էր աքաղաղը նշանավոր սեանսի գիշերը, նստած էր մահճակալի մոտ, հատակին գցած գորգի վրա, կաթսայի մեջ ինչ-որ բան խառնելով, որից ծծմբի գոլորշի էր ելնում։

Նրանցից բացի, սենյակում էր նաև շախմատի սեղանի առջև, բարձր աթոռակի վրա նստած մի վիթխարի սև կատու՝ ձախ թաթի մեջ սեղմած շախմատի ձին։

Գելլան տեղից բարձրացավ ու խոնարհվեց Մարգարիտային։ Նույն բանն արեց և կատուն, ցած ցատկելով աթոռակից, սակայն աջ թաթը հատակին քսելիս ցած գցեց ձին ու մտավ մահճակալի տակ փնտրելու։

Այս ամենը սարսափից կարկամած Մարգարիտան մոմերի դավադիր ստվերների մեջ տեսավ մի կերպ։ Նրա հայացքը մահճակալն էր ձգում, որի վրա նստած էր նա, ում դեռ բոլորովին վերջերս խեղճ Իվանը Պատրիարքական լճի մոտ համոզում

էր, թե սատանա գոյություն չունի։ Գոյություն չունեցողն էր նստած մահճակալին։

Երկու աչքը սևեռվեցին Մարգարիտայի դեմքին։ Խորքում ոսկյա կայծ շողացնող, ցանկացած մարդու մինչև հոգու խորքը շաղափող աչը, և դատարկ ու սև, ասեղի նեղ անցքի պես, ամենայն ստվեր ու խավարի անհատակ ջրհորի ելքի պես ձախը։ Վոլանդի դեմքը մի կողմ էր ծռված, բերանի աջ անկյունը կախված էր, սուր հոնքերին զուգահեռ խորը կնճիռներ էին ակոսում բարձր ու մազաթափ ճակատը։ Վոլանդի դեմքի մաշկն ասես առհավետ այրել էր արևը։

Վոլանդը մեկնվել էր անկողնում, երկար գիշերաշապիկ էր հագել միայն՝ կեղտոտ և ձախ ուսը կարկատած։ Մերկ ոտքերից մեկը տակն էր ծալել, մյուսը մեկնել նստարանի վրա։ Այդ թուխ ոտքի ծունկն էլ հենց ծխացող ինչ-որ քսուքով տրորում էր Գելլան։

Վոլանդի բաց, անմազ կրծքին Մարգարիտան տեսավ նաև մուգ քարից վարպետորեն պատրաստված, ոսկյա շղթայից կախ մի բզեզ՝ մեջքի վրա փորագրած գրերով։ Վոլանդի կողքին, անկողնու վրա, ծանր պատվանդանին տարօրինակ, ասես կենդանի, մի կողմից արևով լուսավորված գլոբուս կար։

Մի քանի վայրկյան լռություն տիրեց։ «Նա ուսումնասիրում է ինձ»,—մտածեց Մարգարիտան և կամքի լարումով աշխատեց զսպել ոտքերի դողը։

Ի վերջո Վոլանդը խոսեց, ժպտալով, որից նրա կայծկլտացող աչքն ասես բոցավառվեց.

— Ողջունում եմ ձեզ, թագուհի, և խնդրում եմ ինձ ներել տնային հագուստիս համար։

Վոլանդի ձայնն այնքան թավ էր, որ մի քանի բառեր խըռխռոցի պես հնչեցին։

Վոլանդն անկողնու վրայից վերցրեց երկար սուսերը, կռանալով տարավ-բերեց մահճակալի տակ ու ասաց.

— Դո՛ւրս արի։ Պարտիան հետաձգվո՛ւմ է։ Հյուրն է ժամանել։

— Ոչ մի դեպքում,— հուշարարի պես Մարգարիտայի ականջին անհանգստացած սվսվացրեց Կորովևը։

— Ոչ մի դեպքում...— սկսեց Մարգարիտան։

— Մեսսիր...— շշնջաց Կորովևն ականջին։

— Ոչ մի դեպքում, մեսսիր,— տիրապետելով իրեն, ցածրա-

ձայն, բայց հստակ պատասխանեց Մարգարիտան և ժպտալով ավելացրեց.— Ես աղաչում եմ ձեզ չընդհատել պարտիան։ Կարծում եմ, որ շախմատային ամսագրերը մեծ գումարներ կվճարեին, եթե դա տպագրելու հնարավորությունն ունենային։

Աղաղելլոն կամացուկ ու հավանություն տալով կռնչաց, իսկ Վոլանդը, ուշադրությամբ նայելով Մարգարիտային, կարծես ինչ-որ իրեն նկատեց։

— Այո՛, իրավացի է Կորովևը։ Որքա՜ն քմահաճորեն են խառնվում խաղաթղթերը։ Արյո՜ւնը։

Նա պարզեց ձեռքն ու մատով իր մոտ կանչեց Մարգարիտային։ Վերջինս մոտեցավ՝ բոբիկ ոտքերով հատակը չզգալով։ Վոլանդն իր քարի պես ծանր, միաժամանակ կրակի պես տաք ձեռքը դրեց Մարգարիտայի ուսին, քաշեց դեպի իրեն ու նստեցրեց մահճակալին, իր կողքին։

— Է՛, եթե դուք այդչափ հմայիչ ու սիրալիր եք,— ասաց նա,— իսկ ես ուրիշ ոչինչ բան չէի սպասում, ձևականությունները թողնենք,— նա կրկին թեքվեց մահճակալի եզրին ու բղավեց.— Երկա՞ր պիտի շարունակվի այս խեղկատակությունը մահճակալի տակ։ Դո՛ւրս արի, անիծյալ ծաղրածու։

— Ձին չեմ կարողանում գտնել,— խեղդված ու կեղծ ձայնով մահճակալի տակից պատասխանեց կատուն,— ինչ-որ տեղ է արշավել, փոխարենը մի գորտ է ընկնում ձեռքիս տակ։

— Չե՞ս կարծում արդյոք, թե տոնավաճառի հրապարակում ես գտնվում,— բարկացած ձևանալով, հարցրեց Վոլանդը,— ոչ մի գորտ էլ չկար մահճակալի տակ։ Այդ էժանագին ֆոկուսները պահիր Վարյետեի համար։ Եթե իսկույն եեթ չհայտնվես, կհամարենք, որ հանձնվել ես, անիծյալ դասալիք։

— Ոչ մի դեպքում, մեսսիր,— բղավեց կատուն և նույն ակնթարթին ելավ մահճակալի տակից՝ ձին թաթի մեջ սեղմած։

— Ձեզ եմ ներկայացնում...— սկսեց Վոլանդն ու ինքն իրեն ընդհատեց։— Ոչ, ես տեսնել չեմ կարող այս խայտառակին։ Մի տեսեք, թե ինչ է դարձրել իրեն մահճակալի տակ։

Ետևի թաթերի վրա կանգնած ու փոշոտված կատուն մինչ այդ խոնարհվել էր Մարգարիտայի առջև։ Հիմա կատվի վզին ֆրակի սպիտակ, վարդակապ փողկապ կար, կրծքից փոկով կախ էր արած կանացի սադափե հեռադիտակ։ Դրանից բացի, կատվի բեղերը ոսկեզօծված էին։

— Ախր դա ի՞նչ բան է,— բացականչեց Վոլանդը,— ինչո՞ւ ես բեղերդ ոսկեզօծել։ Ու ի՞նչ ցավդ է փողկապ կապելը, եթե հագիդ շալվար չկա։

— Կատվին շալվար հագնել չի կարելի, մեսիր,— մեծ արժանապատվությամբ պատասխանեց կատուն,— իսկ չէի՞ք հրամայի կոշիկներ էլ հագնել։ Կոշկավոր կատու միայն հեքիաթների մեջ է լինում, մեսիր։ Բայց երբևէ որևիցե մեկին պարահանդեսում տեսե՞լ եք առանց փողկապի։ Ես մտադիր չեմ զավեշտական վիճակի մեջ ընկնել ու վտանգել ինձ, որ վզակոթիս տալով դուրս հանենն։ Յուրաքանչյուր ոք զարդարում է իրեն ինչով կարող է։ Համարեք, որ ասվածը վերաբերում էր հեռադիտակին, մեսիր։

— Իսկ բեղե՞րը...

— Չեմ հասկանում,— չոր-չոր առարկեց կատուն,— ինչի համար այսօր սափրվելիս Ազազելլոն ու Կորովևը կարող էին ճերմակ դիմափոշի ցանել իրենց վրա, և ինչո՞վ է դա լավ ոսկեփոշուց։ Ես փոշի եմ ցանել բեղերիս, ուրիշ ոչինչ։ Այլ խնդիր, եթե սափրվեի։ Սափրված կատուն իսկապես այլանդակ բան է, պատրաստ եմ հազար անգամ համաձայնել։ Բայց ընդհանրապես,— կատվի ձայնն այստեղ վիրավորված բեկվեց,— ես տեսնում եմ, որ իմ նկատմամբ ինչ-որ բծախնդրություններ են կիրառվում, ու տեսնում եմ, որ իմ առջև լուրջ խնդիր է ծառացել՝ ընդհանրապես ներկա լինե՞մ պարահանդեսին։ Ի՞նչ կասեք ինձ այդ առթիվ, մեսիր։

 Եվ կատուն վիրավորանքից այնպես փքվեց, որ թվաց, թե ևս մի վայրկյան, ու կպայթի։

— Ախ, խարդախ, խաբեբա,— գլուխն օրորելով, ասաց Վոլանդը,— ամեն անգամ, երբ նրա պարտիան անհուսալի դրության է հասնում, սկսում է խոսքը կտուրը գցել, կամուրջների վրա գործող ամենավերջին խաբեբայի պես։ Անմիջապես նստիր ու դադարեցրու այդ բառային աղտեղությունը։

— Կնստեմ,— պատասխանեց կատուն, նստելով,— սակայն վերջին բառերի կապակցությամբ առարկություն ունեմ։ Իմ խոսքերն, ինչպես բարեհաճեցիք արտահայտվել տիկնոջ ներկայությամբ, ամենևին էլ աղտեղություն չեն ներկայացնում իրենցից, այլ ձույլ դասավորության սիլլոգիզմների շղթա, որոնք ըստ արժանվույն կգնահատեին այնպիսի գիտակներ, ինչպես

Սեքստոս Էմպիրիկոսը, Մարցիան Կապելլան, մեկ էլ տեսար, նաև ինքը՝ Արիստոտելը։

— Շախ թագավորին,— ասաց Վոլանդը։

— Խնդրեմ, խնդրեմ,— պատասխանեց կատուն ու սկսեց հեռադիտակով նայել տախտակին։

— Այսպիսով,— Մարգարիտային դիմեց Վոլանդը,— դոննա, ձեզ եմ ներկայացնում իմ շքախումբը։ Այս խեղկատակություններ անողը Բեգեմոտ կատուն է։ Ազազելլոյի և Կորովևի հետ արդեն ծանոթացել եք, ներկայացնում եմ իմ աղախին Գելլային։ Ճարպիկ է, հասկացող, և չկա այնպիսի ծառայություն, որ չկարողանա կատարել։

Գեղեցկուհի Գելլան ժպտաց, Մարգարիտայի կողմը դարձրեց իր կանաչին տվող աչքերը, շարունակելով բուռ-բուռ քսուք վերցնել ու դնել Վոլանդի ծնկին։

— Ահա և բոլորը,— վերջացրեց Վոլանդը և խոժոռվեց, երբ Գելլան հատկապես ուժեղ սեղմեց նրա ծունկը,— ինչպես տեսնում եք, ոչ մեծ, խառն ու սովորական հասարակություն է։— Նա լռեց ու սկսեց պտտել դիմացը դրված իր գլոբուսը։ Այնքան վարպետորեն էր պատրաստված, որ կապույտ օվկիանոսները ալիքվեցին դրա վրա, իսկ բևեռի գլխածածկն իսկականի պես էր՝ սառցակալած ու ձնապատ։

Տախտակի վրա այդ ընթացքում խառնաշփոթություն էր տիրում։ Սպիտակ պատմուճանով թագավորը, լիովին հուզված, դոփդոփում էր վանդակի վրա, ձեռքերը վեր պարզելով հուսալքված։ Տեգակիր երեք սպիտակ զինվոր-լանդսկնեխտ շփոթված նայում էին սպային, որը սուսերը ճոճելով, ցույց էր տալիս առաջ, և սև ու սպիտակ կից վանդակների վրա երևում էին Վոլանդի սև հեծյալները՝ փրփրած, սմբակներով վանդակները փորփրող երկու ձիերի վրա։

Մարգարիտային չափազանց հետաքրքրեց ու զարմացրեց այն, որ շախմատի ֆիգուրները կենդանի էին։

Կատուն, հեռադիտակն աչքերից իջեցնելով, կամացուկ բոթեց իր թագավորի մեջքը։ Սա, հուսահատված, դեմքը ծածկեց ձեռքերով։

— Բանդ բուրդ է, թանկագին Բեգեմոտ,— ցածրաձայն ասաց Կորովևը թունոտ ձայնով։

— Դրությունը լուրջ է, բայց ոչ ամենևին անհուսալի,— պատասխանեց Բեգեմոտը,— ավելին՝ ես լիովին վստահ եմ

վերջնական հաղթանակին։ Արժե մի լավ վերլուծել դրությունը։

Այդ վերլուծությունը նա սկսեց կատարել բավական տարօրինակ եղանակով, այն է՝ սկսեց ծամածռություններ անել իր թագավորին, աչքով անել։

— Ոչ մի բան չի օգնում,— նկատեց Կորովևը։

— Այ՛,— բղավեց Բեգեմոտը,— թութակները թռան-ցրիվ եկան, ինչպես և կանխագուշակում էի։

Իսկապես, բազում թևերի աղմուկ լսվեց հեռուներից։ Կորովևն ու Ազազելլոն դուրս վազեցին։

— Ա, գրողը տանի ձեզ, ձեր պարահանդեսային հնարանքներով,— փնչացրեց Վոլանդը, աչքը չկտրելով իր գլոբուսից։

Հենց որ Կորովևն ու Ազազելլոն հեռացան, Բեգեմոտի աչքով անելը սաստկացավ։ Սպիտակ թագավորը վերջապես գլխի ընկավ, թե ինչ են ուզում իրենից, հանկարծ վրայից պոկեց պատմուճանը, նետեց վանդակի վրա ու փախավ տախտակի վրայից։ Թագավորական նետված հանդերձը սպան վրան գցեց ու բռնեց թագավորի տեղը։ Կորովևն ու Ազազելլոն ետ եկան։

— Փչոց էր, ինչպես միշտ,— փնթփնթում էր Ազազելլոն՝ խեթելով Բեգեմոտին։

— Ինձ այդպես թվաց,— պատասխանեց կատուն։

— Է, հետո՞, երկա՞ր է շարունակվելու սա,— հարցրեց Վոլանդը,— շախ թագավորին։

— Հավանորեն, ես սխալ լսեցի, վարպետ իմ,— պատասխանեց կատուն,— թագավորին շախ չկա և չի կարող լինել։

— Կրկնում եմ, շախ թագավորին։

— Մեսիր,— կեղծ-տագնապած տոնով պատասխանեց կատուն,— դուք գերհոգնած եք. թագավորին շախ չկա։

— Թագավորը ժե-երկու վանդակի վրա է,— առանց տախտակին նայելու, ասաց Վոլանդը։

— Մեսիր, ես սարսափած եմ,— բղավեց կատուն՝ սարսափ պատկերելով իր մռութին,— այդ վանդակի վրա թագավոր չկա։

— Ի՞նչ,— տարակուսած հարցրեց Վոլանդը և նայեց տախտակին, ուր թագավորի վանդակի վրա կանգնած սպան շուռ էր եկել ու ձեռքով ծածկել երեսը։

— Ախ, սրիկա,— մտազբաղ ասաց Վոլանդը։

— Մեսի՛ր։ Ես նորից տրամաբանությանն եմ դիմում,— սկսեց կատուն, թաթերը կրծքին սեղմելով,— եթե խաղացողը

շախ է հայտարարում թագավորին, այնինչ թագավորի հետքն անգամ չկա տախտակի վրա, շախը համարվում է անվավեր։

— Դու հանձնվո՞ւմ ես, թե ոչ,— սարսափելի ձայնով բղավեց Վոլանդը։

— Թույլ տվեք մտածել,— խոնարհաբար պատասխանեց կատուն, արմունկները դրեց սեղանին, թաթերը դրեց ականջներին ու սկսեց մտածել։ Երկար մտածեց և վերջապես ասաց.— Հանձնվում եմ։

— Սպանել համառ արարածին,— շշնջաց Ազազելլոն։

— Այո, հանձնվում եմ,— ասաց կատուն,— բայց հանձնվում եմ բացառապես այն պատճառով, որ չեմ կարող խաղալ նախանձ մարդկանց կողմից հալածանքի մթնոլորտում։— Նա վեր կացավ, և շախմատի ֆիգուրները մտան արկղի մեջ։

— Գելլա, ժամանակն է,— ասաց Վոլանդը, և Գելլան չքացավ սենյակից։— Ոտքիս ցավը բռնել է, այս պարահանդեսն էլ՝ մի կողմից,— շարունակեց Վոլանդը։

— Թույլ տվեք ինձ,— կամացուկ խնդրեց Մարգարիտան։

Վոլանդն ուշադիր նայեց նրան ու մոտեցրեց ծունկը։

Լավայի պես տաք խյուսն այրում էր ձեռքերը, բայց Մարգարիտան, առանց կնճռոտվելու, աշխատելով ցավ չպատճառել, տրորում էր նրա ծունկը։

— Մերձավորներս պնդում են, թե սա ռևմատիզմ է,— խոսում էր Վոլանդը՝ աչքը Մարգարիտայից չկտրելով,— բայց ես խիստ կասկած ունեմ, որ ծնկիս այս ցավը մի հմայիչ վհուկ է թողել ինձ հիշատակ, որի հետ մոտիկից ծանոթացա հազար հինգ հարյուր յոթանասունմեկ թվականին, Բրոկենյան լեռներում, Սատանյաց Ամբիոնում։

— Ահ, դա լինելո՞ւ բան է,— ասաց Մարգարիտան։

— Հիմարությո՜ւն։ Մի երեք հարյուր տարի հետո կանցնի։ Ինձ շատ դեղեր են խորհուրդ տվել, բայց ես հին սովորությամբ տատական միջոցների կողմնակից եմ։ Զարմանալի խոտեր է ժառանգություն թողել անպիտան պառավը, իմ տատը։ Ի դեպ, ասացեք, որևիցե բանով չե՞ք տառապում։ Գուցե ինչ-որ տրտմությո՞ւն ունեք, հոգին թունավորող թախի՞ծ։

— Ոչ, մեսսիր, նման բան չկա,— պատասխանեց խելացի Մարգարիտան,— իսկ հիմա, երբ ձեզ մոտ եմ, ինձ լիովին լավ եմ զգում։

— Սրյունը մեծ լուր է,— հայտնի չէ, թե ինչու ուրախացած ասաց Վոլանդը և շարունակեց.— Տեսնում եմ, ձեզ հետաքրքրում է իմ գլոբուսը։

— Օ՜, այո, ես երբեք նման իր չեմ տեսել։

— Լավ իր է։ Անկեղծ ասած, ես չեմ սիրում ռադիոյի վերջին լուրերը։ Դրանց մասին միշտ հայտնում են ինչ-որ աղջիկներ, որոնք անհասկանալի են արտասանում տեղանունները։ Դրանից բացի, յուրաքանչյուր երրորդը թլվատ է, կարծես դիտմամբ են ընտրում այդպիսիներին։ Իմ գլոբուսը շատ ավելի հարմար է, առավել ևս, որ իրադարձությունները ես պետք է ստույգ իմանամ։ Ահա, օրինակ, տեսնո՞ւմ եք երկրագնդի այս կտորը, որի եզրը օվկիանոսն է ողողում։ Նայեք, ահա կրակ է տարածվում։ Այնտեղ պատերազմ է սկսվել։ Եթե մոտիկից նայեք, մանրամասներն էլ կտեսնեք։

Մարգարիտան կռացավ գլոբուսի վրա ու տեսավ, որ երկրագնդի փոքրիկ քառակուսին ընդարձակվեց, բազում գույներ ընդունեց ու վերածվեց կարծես թե ռելյեֆ քարտեզի։ Իսկ հետո նա տեսավ նաև գետի ժապավենը և ափին ընկած ինչ-որ գյուղ։ Սիսեռի մեծությամբ տնակը խոշորացավ ու լուցկու տուփի չափ դարձավ։ Այդ տան տանիքը հանկարծակի և անձայն, սև ծխի քուլայի հետ վեր թռավ, իսկ պատերը փլվեցին, այնպես որ երկհարկանի փոքրիկ տուփից ոչինչ չմնաց, բացի մի կույտից, որից սև ծուխ էր ելնում։ Աչքն ավելի մոտեցնելով, Մարգարիտան տեսավ գետնատարած կանացի փոքրիկ մի մարմին, իսկ նրա կողքին, արյան լճակի մեջ ձեռքերը տարածած պստիկ երեխայի։

— Ահա և վերջ,— ժպտալով ասաց Վոլանդը,— նա չհասցրեց մեղք գործել։ Աբադոննայի աշխատանքն անթերի է։

— Ես չէի կամենա լինել այն կողմում, ում դեմ այդ Աբադոննան է,— ասաց Մարգարիտան,— ո՞ւմ կողմից է նա։

— Որքան ավելի շատ եմ խոսում ձեզ հետ,— սիրալիր պատասխանեց Վոլանդը,— այնքան ավելի շատ եմ համոզվում, որ դուք շատ խելացի եք։ Ես ձեզ հանգստացնեմ։ Բացառիկ անաչառ է, նաև հավասարապես կարեկցում է պատերազմող երկու կողմերին։ Դրա հետևանքով էլ երկու կողմերի համար էլ արդյունքները միշտ միանման են լինում։ Աբադոննա,— ոչ բարձրաձայն կանչեց Վոլանդը, և իսկույն պատի միջից հայտնվեց մռայլ

ակնոցով նիհար մի մարդու կերպարանք։ Այդ ակնոցը չգիտես ինչու Մարգարիտայի վրա այնպիսի ուժեղ տպավորություն գործեց, որ նա, կամացուկ ճչալով, դեմքը կպցրեց Վոլանդի ոտքին։— Ֆի՛, վերջ տվեք,— բղավեց Վոլանդը,— ինչ նյարդային են ժամանակակից մարդիկ։— Նա թափով շրմփացրեց Մարգարիտայի մեջքին, այնպես, որ նրա մարմնով մեկ զրնգոց անցավ։— Չեք տեսնո՞ւմ, որ ակնոցով է։ Դրանից զատ, չի եղել դեպք ու չի էլ լինի, որ Աբադոննան մեկնումեկի դիմաց հայտնվի ժամանակից շուտ։ Վերջապես ես այստեղ եմ։ Դուք իմ հյուրն եք։ Պարզապես կամեցա ձեզ ցույց տալ։

Աբադոննան կանգնած էր անշարժ։

— Իսկ կարելի՞ է, որ նա մի վայրկյանով ակնոցը հանի,— հարցրեց Մարգարիտան, Վոլանդին սեղմվելով ու ցնցվելով, բայց արդեն հետաքրքրությունից։

— Այ, այդ մեկը չի կարելի— լրջորեն պատասխանեց Վոլանդը և Աբադոննային ձեռքով արեց, ու նա անհետացավ։— Ի՞նչ ես ուզում ասել, Ազազելլո։

— Մեսիր,— պատասխանեց Ազազելլոն,— թույլ տվեք. մեզ մոտ երկու կողմնակի անձ կա՝ մի գեղեցկուհի, որը թընկթընկում է և աղաչում, որ իրեն թողնենք տիրուհու հետ, մեկ էլ, ներող կլինեք, իր խոզն է հետը։

— Գեղեցկուհիներն իրենց տարօրինակ են պահում,— նկատեց Վոլանդը։

— Դա Նատաշան է, Նատա՛շան,— բացականչեց Մարգարիտան։

— Լավ, թող մնա տիրուհու հետ։ Իսկ խոզը՝ խոհարարների մոտ։

— Մորթելո՞ւ,— վախեցած ճչաց Մարգարիտան,— ողորմացեք, մեսիր, դա Նիկոլայ Իվանովիչն է, ներքևի բնակիչը։ Թյուրիմացություն է եղել, ձեզ ասեմ, Նատաշան քսուք է քսել նրա ճակատին...

— Ողորմած եղեք,— ասաց Վոլանդը,— ո՞ւմ է պետք և ո՞վ է նրան մորթողը։ Թող նստի խոհարարների հետ։ Համաձայնեք, որ չեմ կարող նրան պարահանդեսի դահլիճ թողնել։

— Չէ՛ մի...— ավելացրեց Ազազելլոն ու զեկուցեց.— Կեսգիշերը մոտենում է, մեսիր։

— Ահ, լավ,— Վոլանդը դիմեց Մարգարիտային.— Այսպի-

սով, համեցեք։ Կանխավ շնորհակալ եմ։ Մի շփոթվեք և ոչնչից մի վախեցեք։ Ջրից բացի ուրիշ ոչինչ մի խմեք, թե չէ կնվաղեք ու ձեզ համար դժվար կլինի։ Ժա՛մն է։

Մարգարիտան վեր ելավ գորգի վրայից, և այդ ժամանակ դռան մեջ հայտնվեց Կորովևը։

## ԳԼՈՒԽ XXIII

## ՍԱՏԱՆԱՅԻ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Կեսգիշերը մոտենում էր, ստիպված էին շտապել։ Մարգարիտան աղոտ էր տեսնում որևէ բան։ Հիշողության մեջ մնացին մոմերը և գունագույն քարերից պատրաստված մի ավազան։ Երբ Մարգարիտան կանգնեց այդ ավազանի հատակին, Գելլան ու նրան օգնող Նատաշան տաք, թանձր ու կարմիր հեղուկ լցրեցին Մարգարիտայի մարմնին։ Շրթունքների վրա աղի համ առավ Մարգարիտան ու հասկացավ, որ իրեն արյունով են լողացնում։ Արյունե թիկնոցը փոխարինվեց մեկ այլ՝ թանձր, թափանցիկ, վարդագույն թիկնոցով, և Մարգարիտայի գլուխը պտտվեց վարդայուղից։ Հետո Մարգարիտային պառկեցրին բյուրեղապակյա մահճի վրա և փայլեցնելու աստիճան սկսեցին շփել նրա մարմինը ինչ-որ խոշոր, կանաչ տերևներով։ Այստեղ ներս ընկավ կատուն և սկսեց օգնել։ Նա պպզեց Մարգարիտայի ոտքերի մոտ ու նրա ոտնաթաթերը շփեց այնպիսի տեսքով, ասես կոշիկ էր մաքրում փողոցում։ Մարգարիտան չի հիշում, թե գունաթափ վարդի տերևներից ով կոշիկ կարեց իր համար և թե այդ կոշիկներն ինչպես իրենք իրենց կոճկվեցին ոսկյա ճարմանդներով։ Ինչ-որ մի ուժ պոկեց Մարգարիտային ու կանգնեցրեց հայելու առաջ, ու նրա մազերի մեջ շողշողաց ադամանդե արքայական թագը։ Ինչ-որ տեղից հայտնվեց Կորովևը և Մարգարիտայի վզից կախեց ծանր շղթայով, ձվածիր շրջանակով սև պուդելի մի ծանր պատկեր։ Այդ զարդարանքն անչափ ծանրաբեռնեց թագուհուն։ Շղթան իսկույն սկսեց հարել պարանոցը, պատկերը ստիպում էր նրան կռանալ։ Սակայն սև պուդելով շղթայի պատճառած անհարմարությունները փոխհատուցվեցին մի բանով՝ այն մեծարանքով, որ ցուցաբերել սկսեցին Կորովևն ու Բեգեմոտը։

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ,— մրթմրթում էր ավազանով սենյակի դռան մոտ կանգնած Կորովևը,— ի՞նչ արած, պետք է, պետք է, պե՛տք։ Թագուհի, թույլ տվեք վերջին խորհուրդը տալ ձեզ։ Տարբեր, օ՜հ, շա՜տ տարբեր հյուրեր կլինեն, սակայն, թագուհի Մարգո, ոչ մեկին ոչ մի առավելություն։ Եթե որևէ մեկը դուր էլ չգա... ես հասկանում եմ, որ, իհարկե, ձեր դեմքի վրա դա չեք արտահայտի... Ո՛չ, ո՛չ, դրա մասին չի կարելի մտածել։ Կնկատի, նույն վայրկյանին կնկատի։ Պետք է սիրել նրան, սիրել, թագուհի։ Դրա համար հարյուրապատիկ վարձահատույց կլինի պարահանդեսի տիրուհին։ Մի բան էլ. ոչ մեկին աչքաթող չանեք։ Թեկուզ աննշան մի ժպիտ, եթե ժամանակ չլինի՝ մի խոսք նետել, թեկուզ գլխի աննշմար շարժում։ Ինչ կամենաք, միայն թե ոչ անուշադրություն։ Դրանից նրանք թոշնում են...

Այստեղ Մարգարիտան Կորովևի և Բեգեմոտի ուղեկցությամբ ավազանով սենյակից քայլեց դեպի կատարյալ խավար։

— Ե՛ս, ե՛ս,— շշնջում էր կատուն,— ե՛ս կտամ ազդանշանը։

— Տուր,— մթության մեջ պատասխանեց Կորովևը։

— Պարահանդե՜ս,— խլացուցիչ ծղրտաց կատուն, և իսկույն Մարգարիտան ճչաց ու մի քանի վայրկյան փակեց աչքերը։ Պարահանդեսը նրա վրա ընկավ միանգամից որպես լույս, դրա հետ մեկտեղ՝ որպես հնչյուն և բուրմունք։ Կորովևի հետ թևանցուկ սլանալով, Մարգարիտան իրեն տեսավ արևադարձային անտառում։ Կարմրակուրծք ու կանաչապոչ թութակները, բաղեղներից կառչած, ցատկոտում էին դրանց վրա և զիլձայն բղավում. «Ես հիացա՜ծ եմ»։ Բայց անտառը շուտով վերջացավ, և դրա բաղնիսային հեղձուկն անմիջապես փոխարինվեց պարահանդեսի սյունազարդ դահլիճի զովությամբ, սյուները միատեսակ դեղնավուն, պսպղուն քարից էին պատրաստված։ Այդ դահլիճը, ինչպես նաև անտառը, լիովին դատարկ էին, և միայն սյուների մոտ անշարժ կանգնած էին մերկանդամ նեգրեր, գլուխներին՝ արծաթյա փաթթոցներ։ Նրանց դեմքերը հուզմունքից կեղտագորշ դարձան, երբ Մարգարիտան դահլիճ սուրաց իր շքախմբով, որի կազմում ինչ-որ տեղից Ազազելլոն էլ էր ավելացել։ Կորովևն այստեղ բաց թողեց Մարգարիտայի ձեռքն ու շշնջաց.

— Ուղի՛ղ վարդակակաչների վրա։

Ճերմակ վարդակակաչների ցածրիկ մի պատ ելավ Մարգարիտայի ընդառաջ, իսկ դրանից այն կողմ նա տեսավ վերևից

քողը, հյուսված անհամար [illegible]ներ և փայլփլուններից, թանչերն ու սև ուլունքը՝ լույսերի դիմաց։ Այդ ժամանակ Մարգարիտան հասկացավ, թե որտեղից էր գալիս պարահանդեսի ձայնը։ Շեփորների թնդյունը գահավիժեց նրա վրա, իսկ ջութակների՝ դրա տակից ելնող վերձիգ սլացքը ցողվեց նրա մարմնին, որպես արյուն։ Հարյուր հիսուն հոգուց բաղկացած նվագախումբը պոլոնեզ էր նվագում։

Նվագախմբի առջև բարձր կանգնած ֆրակավոր մարդը, Մարգարիտային տեսնելով, գունատվեց, ժպտաց ու հանկարծ ձեռքի թափահարումով ոտքի հանեց ամբողջ նվագախումբը։ Ոչ մի վայրկյան նվագը չդադարեցնելով, նվագախումբը հոնչյուններով էր լողացնում Մարգարիտային։ Նվագախմբից վեր կանգնած մարդը շրջվեց ու, ձեռքերը լայն տարածած, գլուխ խոնարհեց, և Մարգարիտան, ժպտալով, ձեռքով արեց նրան։

— Չէ, քիչ է, քիչ,— շշնջաց Կորովևը,— նա ամբողջ գիշեր չի քնի։ Բղավեք նրան. «Ողջունո՛ւմ եմ ձեզ, վալսերի արքա»։

Մարգարիտան գոչեց այդ բառերն ու զարմացավ, որ իր ձայնը, զանգի պես լիահունչ, ծածկեց նվագախմբի ղղրդյունը։ Մարդը երջանկությունից ցնցվեց և ձախ ձեռքը դրեց կրծքին, աջով շարունակելով չափ տալ նվագախմբին սպիտակ գավազանով։

— Քիչ է, քիչ,— շշնջաց Կորովևը,— նայեցեք ձախ, առաջին ջութակներին, և գլխով արեք այնպես, որպեսզի յուրաքանչյուրը մտածի, թե իրեն ճանաչել եք առանձին։ Այստեղ միայն աշխարհահռչակներ են։ Ա՛յ նրան, առաջին նոտակալի մոտ, Վյոտանն է։ Այդպես, շատ լավ է։ Հիմա շարունակենք։

— Դիրիժո՞րն ով է,— թռչելով՝ հարցրեց Մարգարիտան։

— Յոհան Շտրաուսը,— բղավեց կատուն,— և թող ինձ կախեն արևադարձային անտառում, բաղեղներից, եթե որևիցե պարահանդեսի երբևիցե այսպիսի նվագախումբ նվագել է։ Ե՛ս եմ հրավիրել նրան։ Ու նկատի ունեցեք, ոչ մեկը չհիվանդացավ ու ոչ մեկը չհրաժարվեց։

Հաջորդ դահլիճում սյուներ չկային, դրանց փոխարեն մի կողմից կարմիր, վարդագույն, կաթնաճերմակ վարդերի պատն էր, մյուս կողմից՝ ճապոնական բազմաթերթ քամելիաների պատը։ Այդ պատերի միջև արդեն շատրվաններ էին խփում թշշալով, և շամպայն գինին պղպջակներով եռ էր գալիս երեք ավազանների մեջ, որոնցից առաջինը թափանցիկ-մանուշակա-

գույն էր, երկրորդը՝ սուտակագույն, երրորդը՝ վճիտ-բյուրեղյա։ Դրանց շուրջ վառվռում էին ալ կարմիր կոնքակապերով նեգրեր, որոնք արծաթյա շերեփներով ավազաններից գինի էին լցնում ու խոր գավերի մեջ։ Վարդերի պատի մեջ բացվածք կար, և այդտեղ, բեմի վրա իրեն կտոր-կտոր էր անում ծիծեռնակապոչ կարմիր ֆրակ հագած մի մարդ։ Նրա դիմաց անտանելի բարձր որոտում էր ջազ-նվագախումբը։ Մարգարիտային տեսնելուն պես, դիրիժորն այնպես կռացավ Թագուհու առաջ, որ ձեռքերը հատակին կպան, ապա ուղղվեց և խլացուցիչ բղավեց.

— Ալելույա՜։

Նա շրմփացրեց իր ծնկին՝ մեկ, ապա խաչաձև մյուսին՝ երկո՛ւ, ծայրերին նստած երաժշտի ձեռքից խլեց ծնծղան ու հարվածեց։

Թռչելիս, Մարգարիտան տեսավ միայն, որ վիրտուոզ-ջազմենը, Մարգարիտայի թիկունքին փչող պոլոնեզի հետ կռիվ տալով, ծնծղայով խփում է իր երաժիշտների գլուխներին և վերջիններս պպզում են զավեշտական սարսափով բռնված։

Ի վերջո թռան հասան հարթակ, ուր, ինչպես հասկացավ Մարգարիտան, խավարի մեջ իրեն Կորովևն էր դիմավորել լապտերիկով։ Հիմա այս հարթակի վրա աչքերը կուրանում էին բյուրեղապակյա խաղողի ողկույզներից հորդացող լույսից։ Մարգարիտային կանգնեցրին իր տեղում, և նրա ձախ ձեռքի տակ հայտնվեց մեղեսիկե ցածրիկ մի սյուն։

— Ձեռքը կարելի է դրա վրա դնել, եթե շատ դժվար լինի,— շշնջաց Կորովևը։

Սևամորթ մեկը Մարգարիտայի ոտքերի տակ գցեց վրան ոսկեհուռ պուդել զարդակարված մի բարձ, որի վրա, ենթարկվելով ինչ-որ մեկի ձեռքերին, Մարգարիտան դրեց իր ծալած աջ ոտքը։ Մարգարիտան փորձեց շուրջը նայել։ Կորովևն ու Ազազելլոն կանգնած էին նրա մոտ, հանդիսավոր կեցվածքներով։ Ազազելլոյի կողքին՝ ևս երեք երիտասարդ, որոնք Մարգարիտային աղոտ կերպով հիշեցրին Աբադոննային։ Մեջքին ցուրտ էր փչում, շրջվելով՝ Մարգարիտան տեսավ, որ ետևի մարմարե պատից փրփրուն գինի է ցայտում ու լցվում սառցե ավազանը։ Ձախ ոտքի մոտ տաք ու բրդոտ մի բան զգաց։ Բեգեմոտն էր։

Մարգարիտան բարձրում էր, ու նրա ոտքերի տակից ներքև էր իջնում մի վիթխարի գորգապատ սանդուղք։ Ցածում, այնքան հեռվում, ասես Մարգարիտան հեռադիտակով հակառակ

կողմն էր նայում, նա տեսավ բարապանի հսկայական սենյակ՝ խիստ լայնածավալ բուխարիով, որի սառն ու սև երախի մեջ ազատ կարող էր մտնել հինգ տոննանոց բեռնատարը։ Կուրացուցիչ լույսով ողողված սանդուղքը և բարապանի սենյակը դատարկ էին։ Շեփորների ձայնն այժմ Մարգարիտային էր հասնում հեռվից։ Այսպես անշարժ կանգնեցին մի րոպեի չափ։

— Իսկ ո՞ւր են հյուրերը,— Կորովևին հարցրեց Մարգարիտան։

— Կգան, թագուհի, կգան, հիմա կգան։ Պակասություն չեք զգա։ Ու ճշմարիտ, ես կնախընտրեի փայտ ջարդել, քան թե ընդունել նրանց այստեղ, հարթակի վրա։

— Ի՜նչ փայտ ջարդել,— միացավ զրուցասեր կատուն,— ես կուզեի տրամվայի տոմսավաճառ լինել, իսկ այդ գործից վատ ուրիշ ոչինչ չկա աշխարհում։

— Ամեն ինչ վաղօրոք պիտի պատրաստ լինի, թագուհի,— բացատրում էր Կորովևը, աչքը փայլեցնելով փչացած մոնոկլի տակից։— Ավելի վատթար բան չկա, երբ առաջինը եկած հյուրը դեսուդեն է թափառում, չիմանալով, ինչ անել, իսկ նրա օրինական ջադուն փսփսոցով հոգին է հանում, որ բոլորից շուտ են եկել։ Այդպիսի պարահանդեսները աղբանոց պետք է նետել, թագուհի։

— Անկասկած՝ աղբանոց,— հաստատեց կատուն։

— Ոչ ավել, քան տասը վայրկյան է մնացել կեսգիշերին,— ավելացրեց Կորովևը,— հիմա կսկսվի։

Այդ տասը վայրկյանը Մարգարիտային անչափ երկար թվաց։ Ըստ երևույթին, անցել էր արդեն և ոչնչից ոչինչ չէր կատարվել։ Բայց այստեղ հանկարծ ցածում ինչ-որ բան դրմփաց բուխարու մեջ և այդտեղից մի կախաղան դուրս թռավ, կիսաքայքայված աճյունը վրան։ Այդ աճյունը պարանից պոկվեց, հատակին զարնվեց ու դրա միջից մի սևամազ, պատկերք տղամարդ ելավ, ֆրակով ու լաքապատ կոշիկներով։ Բուխարուց դուրս վազեց կիսափտած, ոչ մեծ մի դագաղ, կափարիչը դեն թռավ ու միջից մեկ ուրիշ աճյուն ընկավ հատակին։ Պատկերքը նրբավարությամբ մոտ վազեց, իջեցրեց ծալած թևը, երկրորդ աճյունը դարձավ մերկ ու թեթևսոլիկ կին, սև կոշիկներով, գլխին տընկված սև փետուրներով, և այդ ժամանակ երկուսն էլ՝ տղամարդ ու կին, շտապեցին աստիճաններն ի վեր։

— Առաջիննե՛րը,— բացականչեց Կորովևը,— պարոն Ժակը

տիկնոջ հետ։ Թագուհի, ձեզ եմ ներկայացնում, հետաքրքրագույն տղամարդկանցից մեկը։ Անկոտրում դրամանենգ, պետական դավաճան, բայց շատ կարգին ալքիմիկոս։ Հռչակվել է նրանով,— Մարգարիտայի ականջին շշնջաց Կորովևը,— որ թունավորել է թագավորի սիրուհուն։ Իսկ դա չէ որ ամեն մարդու հետ չի պատահում։ Տեսեք, ի՜նչ գեղեցիկ է։

Գունատված Մարգարիտան՝ բերանը բաց, ցած էր նայում ու տեսավ, թե բարապանի սենյակի կողանցքում ինչպես են անհետանում և՛ կախաղանը, և՛ դագաղը։

— Ես սքանչացած եմ,— աստիճաններով բարձրացող պարոն Ժակի ուղիղ երեսին բղավեց կատուն։

Այդ ժամանակ ներքևում՝ բուխարու միջից հայտնվեց անգլուխ, թևը պոկված մի կմախք, զարկվեց հատակին ու դարձավ ֆրակ հագած տղամարդ։

Պարոն Ժակի տիկինն արդեն ծնկի էր եկել Մարգարիտայի առաջ և, հուզմունքից գունատվելով, համբուրում էր Մարգարիտայի ծունկը։

— Թագուհի,— քրթմնջում էր պարոն Ժակի տիկինը։

— Թագուհին սքանչացած է,— բղավեց Կորովևը։

— Թագուհի...— մեղմաձայն ասաց պատկերքը՝ պարոն Ժակը։

— Մենք սքանչացած ենք,— ոռնաց կատուն։

Աղազելլոյի նրիտասարդ ուղեկիցները, անկենդան, բայց բարեհաճ ժպիտներով արդեն հրհրում էին պարոն Ժակին ու տիկնոջը դեպի շամպայնի գավերը, որ նեգրերն էին մատուցում։ Աստիճաններով վազելով, վեր էր բարձրանում միայնակ ֆրակավորը։

— Կոմս Ռոբերտն է,— շշնջաց Կորովևը Մարգարիտային,— առաջվա պես գրավի՜չ։ Ուշադրություն դարձրեք, թագուհի, ինչ ծիծաղելի է՝ հակառակ դեպքն է. սա էլ թագուհու սիրեկանն էր ու թունավորեց իր կնոջը։

— Մենք ուրախ ենք, կոմս,— բղավեց Բեգեմոտը։

Բուխարու միջից, մեկը մյուսի ետևից, պայթելով ու ջարդջըրդվելով, երեք դագաղ դուրս ընկան, ապա՝ սև թիկնոցով ինչ-որ մեկը, որի մեջքը դանակ խրեց սև երախից դուրս պրծած հաջորդը։ Ներքևում խուլ ճիչ լսվեց։ Բուխարուց դուրս վազեց համարյա լրիվ քայքայված մի դիակ։ Մարգարիտան կկոցեց աչքերը, ինչ-որ մեկի ձեռքը նրա քթին մոտեցրեց սպիտակ աղով սըր-

վակը։ Մարգարիտային թվաց, որ դա Նատաշայի ձեռքն էր։ Աստիճանները բազմամարդ էին դառնում։ Հիմա յուրաքանչյուր աստիճանի վրա հեռվից կատարելապես միանման թվացող ֆրակավորներ էին երևում, նրանց հետ՝ մերկ կանայք, որոնք միմյանցից տարբերվում էին միայն գլխի փետուրների և կոշիկների գույնով։

Կաղին տալով, ձախ ոտքին տարօրինակ փայտյա սապոգ հագած մի տիկին էր մոտենում Մարգարիտային միանձնուհու խոնարհած աչքերով, նիհար ու համեստ, չգիտես ինչու վիզը փաթաթած կանաչ ու լայն ժապավենով։

— Կանա՞չն ով է,— մեքենայաբար հարցրեց Մարգարիտան։

— Սքանչելագույն ու պատկառելագույն տիկին է,— շշնջաց Կորովևը,— ձեզ եմ ներկայացնում՝ տիկին Տոֆանա, արտակարգ ճանաչված էր Նեապոլի, ինչպես նաև Պալերմոյի չքնեղ ու հրապուրիչ բնակչուհիների շրջանում, հատկապես նրանց, ում ձանձրացրել էին ամուսինները։ Թ՛ագուհի, չէ որ լինում է այնպես, որ ամուսինը ձանձրացնում է։

— Այո,— խլաձայն պատասխանեց Մարգարիտան, միաժամանակ ժպտալով երկու ֆրակավորների, որոնք մեկը մյուսի ետևից խոնարհվեցին նրա առաջ՝ համբուրելով ծունկն ու ձեռքը։

— Եվ ահա,— Կորովևը հնար էր գտնում շշնջալ Մարգարիտայի ականջին ու միաժամանակ ձայնել ինչ-որ մեկին.— Հերցո՛գ, մի գավաթ շամպայն։ Ես սքանչացա՛ծ եմ։ Այո, այսպես ուրեմն, տիկին Տոֆանան մտնում էր այդ խեղճ կանանց դրության մեջ և սրվակներով ինչ-որ հեղուկ վաճառում նրանց։ Կինն այդ հեղուկը լցնում էր ամուսնու արգանակի մեջ, սա ուտում էր, շնորհակալություն հայտնում սիրալիրության համար և իրեն հրաշալի զգում։ Ճիշտ է, մի քանի ժամ անց սկսում էր անընդհատ ջուր ուզել, ապա անկողին ընկնում, և մեկ օր անց իր ամուսնուն արգանակ կերցրած նեապոլցի գեղեցկուհին դառնում էր ազատ, ինչպես գարնան քամի։

— Իսկ այդ ի՞նչ է նրա ոտքին,— հարցրեց Մարգարիտան, առանց հոգնելու ձեռքը մեկնելով տիկին Տոֆանային շրջանցող հյուրերին,— և ինչի՞ համար է այդ կանաչը վզին։ Թորշոմա՞ծ է վիզը։

— Ես սքանչացա՛ծ եմ, իշխան,— բղավում էր Կորովևը,

միաժամանակ շշնջալով Մարգարիտային.— Գեղեցիկ միջ է, սակայն բանտում տհաճ բան պատահեց նրան։ Իսկ ոտքին, թագուհի, իսպանական պատժակոշիկ է, ժապավենն էլ՝ սանժ, թե ինչ. երբ բանտապաններն իմացան, որ անհաշող ընտրված շուրջ հինգ հարյուր ամուսիններ առհավետ թողել են Նեապոլն ու Պալերմոն, բորբոքված վիճակում խեղդեցին տիկին Տոֆանային բանտում։

— Որքան երջանիկ եմ, իմ սև թագուհի, որ բարձր պատիվ վիճակվեց ինձ,— միանձնուհու պես շշնջաց Տոֆանան, ջանալով ծնկի գալ։ Իսպանական պատժակոշիկը խանգարում էր նրան։ Կորովևն ու Բեգեմոտը Տոֆանային օգնեցին, որ ոտքի ելնի։

— Ես ուրախ եմ,— պատասխանեց նրան Մարգարիտան, միաժամանակ ձեռքը պարզելով մյուսներին։

Հիմա աստիճաններով ներքևից վերև հոսանք էր ելնում։ Մարգարիտան դադարել էր տեսնել, թե ինչ է կատարվում բարապանի սենյակում։ Նա մեքենայորեն բարձրացնում և իջեցնում էր ձեռքը և շարունակ, ատամները բաց արած, ժպտում էր հյուրերին։ Հարթակի վրա արդեն գվվոց էր տարածվել, Մարգարիտայի թողած պարահանդեսային դահլիճներից ծովի պես երաժշտություն էր հորդում։

— Իսկ ահա սա ձանձրալի կին է,— արդեն չէր շշնջում, այլ բարձրաձայն ասում էր Կորովևը, գիտենալով, որ ձայների ժխորի մեջ իրեն այլևս չեն լսի,— պաշտում է պարահանդեսները, շարունակ երազում է տրտնջալ իր թաշկինակի համար։

Վեր ելնողների մեջ Մարգարիտան հայացքով գտավ նրան, ում ցույց էր տալիս Կորովևը։ Քսան տարեկան, արտակարգ գեղեցիկ կազմվածքով, բայց մի տեսակ անհանգիստ ու ձանձրացնող աչքերով կին էր։

— Ի՞նչ թաշկինակ,— հարցրեց Մարգարիտան։

— Նրան սենեկապանուհի է կցված,— բացատրեց Կորովևը,— և երեսուն տարի շարունակ գիշերները նրա սեղանին թաշկինակ է դնում։ Հենց նա արթնանում է, թաշկինակն արդեն դրված է լինում։ Էլ վառարանն է գցել, էլ գետն է շպրտել, բայց ոչինչ չի օգնում։

— Ի՞նչ թաշկինակ,— շշնջաց Մարգարիտան, բարձրացնելով և իջեցնելով ձեռքը։

— Կապույտ եզրանախշով թաշկինակ։ Բանն այն է, որ երբ նա ծառայում էր սրճարանում, մի անգամ սրճարանատերը նրան

մառան կանչեց, իսկ մի ամիս անց նա տղա ծնեց, տարավ անտառ ու բերանը թաշկինակով խցկեց, իսկ հետո հողի մեջ թաղեց երեխային։ Դատարանում ասաց, որ երեխային կերակրելու բան չուներ։

— Իսկ ո՞ւր է այդ սրճարանատերը,— հարցրեց Մարգարիտան։

— Թագուհի,— հանկարծ մլմլաց կատուն ներքևից,— թույլ տվեք հարցնել ձեզ. իսկ ի՞նչ կապ ունի այստեղ սրճարանատերը։ Չէ որ փոքրիկին նա չի խեղդել անտառում։

Մարգարիտան, չդադարելով ժպտալ և աջ ձեռքը տանել-բերել, ձախի սուր եղունգները խրեց Բեգեմոտի ականջի մեջ ու շշնջաց.

— Եթե մի անգամ էլ քեզ թույլ տաս խոսքի մեջ ընկնել, սրիկա...

Բեգեմոտը մի տեսակ ոչ պարահանդեսավայել ծղրտաց ու խռխռացրեց.

— Թագուհի... ականջս կուռչի... Ի՞նչ կարիք կա պարահանդեսը փչացնել ուռած ականջով... Ես ասում էի իրավաբանորեն... իրավաբանական տեսակետից... Լռում եմ, լռում... Համարեք, թե ես կատու չեմ, այլ ձուկ, միայն թե ականջս թողեք։

Մարգարիտան բաց թողեց ականջը, և ձանձրալի, մռայլ աչքերը հայտնվեցին նրա դիմաց։

— Թագուհի-տիրուհի, ես երջանիկ եմ լիալուսնի մեծ պարահանդեսին հրավիրված լինելու համար։

— Իսկ ես,— նրան պատասխանեց Մարգարիտան,— ուրախ եմ ձեզ տեսնելով։ Շատ ուրախ եմ։ Շամպայն սիրո՞ւմ եք։

— Թագուհի, ի՞նչ եք բարեհաճում անել,— հուսակտուր, բայց անձայն բղավեց Կորովևը Մարգարիտայի ականջին,— կուտակում կառաջանա։

— Սիրում եմ,— աղերսագին ասաց կինը և հանկարծ մեքենայաբար սկսեց կրկնել.— Ֆրիդա, Ֆրիդա, Ֆրիդա։ Օ՜, իմ Թագուհի, անունս Ֆրի՜դա է։

— Ուրեմն այսօր խմեք ու հարբեք, Ֆրիդա, և ոչ մի բանի մասին մի մտածեք,— ասաց Մարգարիտան։

Ֆրիդան երկու ձեռքերը պարզեց Մարգարիտային, բայց Կորովևն ու Բեգեմոտը շատ ճարպկորեն բռնեցին նրա թևատակերից, ու նա կորավ ամբոխի մեջ։

Հիմա ներքևից արդեն պատի պես ժողովուրդ էր ելնում,

ասես գրոհելով հարթակը, որի վրա Մարգարիտան էր կանգնած։ Կանացի մերկ մարմինները բարձրանում էին ֆրակավոր տղամարդկանց արանքներում։ Դեպի Մարգարիտան էին հորդում նրանց թուխ, ճերմակ, սրճագույն և բոլորովին սև մարմինները։ Խարտյաշ, սև, շագանակագույն, վուշի գույն մազերի մեջ, լույսի հեղեղի տակ խաղում ու թրթռում, կայծեր էին արձակում թանկարժեք քարերը։ Եվ ասես ինչ-որ մեկը տղամարդկանց գրոհող շարասյունը լույսի կաթիլներով էր ցողել՝ կրծքերի վրայից լույսի շողքեր էին արձակում ադամանդյա կոճակները։ Այժմ Մարգարիտան ամեն վայրկյան շրթունքների հպում էր զգում ծնկի վրա, ամեն վայրկյան ձեռքն առաջ էր պարզում՝ համբուրել տալու, նրա դեմքը ձգվել ու ողջույնի անշարժ դիմակ էր դարձել։

— Ես սքանչացա՜ծ եմ,— միալար երգում էր Կորովևը,— մենք սքանչացա՜ծ ենք, թագուհին սքանչացա՜ծ է։

— Թագուհին սքանչացա՜ծ է,— ետևում խռնթխռնթում էր Ազազելլոն։

— Ես սքանչացա՜ծ եմ,— ճչում էր կատուն։

— Մարքիզուհի՜ն,— մրթմրթում էր Կորովևը,— ժառանգության համար թունավորել է հորը, երկու եղբայրներին և երկու քույրերին։ Թագուհին սքանչացա՜ծ է։ Տիկին Մինկինան, ա՜հ, ի՜նչ լավիկն է։ Մի քիչ նյարդային է։ Ինչ կարիք կար աղախնի դեմքն այրել մազ փաթաթելու ունելիով։ Իհարկե, նման պայմաններում կմորթեն։ Թագուհին սքանչացա՜ծ է։ Մի վայրկյան ուշադրություն, թագուհի. կայսր Ռուդոլֆը՝ կախարդ և ալքիմիկոս։ Մի ալքիմիկոս ևս՝ կախված է։ Ա՜հ, ահա և նա։ Ա՜հ, ինչ սքանչելի հասարակաց տուն ուներ Ստրասբուրգում։ Մենք սքանչացած ենք։ Մոսկովյան դերձակուհին, մենք բոլորս նրան սիրում ենք անսպառ երևակայության համար, կարի արհեստանոց ուներ և խիստ ծիծաղելի բան էր հորինել. պատի վրա երկու կլոր ծակ էր բացել.

— Իսկ կանայք չգիտեի՞ն,— հարցրեց Մարգարիտան։

— Բոլորն անխտիր գիտեին, թագուհի,— պատասխանում էր Կորովևը,— ես սքանչացա՜ծ եմ։ Քսանամյա այս տղեկը փոքրուց աչքի էր ընկնում տարօրինակ պատրանքներով, երազող էր ու ցնդած։ Մի աղջիկ սիրեց նրան, իսկ սա ինչ անի որ լավ լինի՝ վաճառեց նրան հասարակաց տուն։

Ներքևից գետ էր հեղնում։ Գետի վերջը չէր երևում։ Դրա

ակումբը՝ վիթխարի [illegible] շարունակում էր անել գործը։ Այսպես անցավ մեկ ժամ, անցավ երկու ժամ։ Այստեղ Մարգարիտան սկսեց նկատել, որ իր շղթան ավելի ծանրացավ, քան կար։ Տարօրինակ ինչ-որ բան կատարվեց նաև ձեռքի հետ։ Հիմա, ձեռքը բարձրացնելուց առաջ, Մարգարիտան ստիպված էր լինում կնճռոտել դեմքը։ Կորովևի հետաքրքիր ծանոթությունները այլևս չէին զբաղեցնում Մարգարիտային։ Թե մոնղոլական շեղաչ դեմքերը, թե սպիտակ ու սև դեմքերը դարձան չզանազանվող, մերթընդմերթ միաձուլվում էին, իսկ օդը նրանց արանքներում, չգիտես ինչու, սկսեց շիթ առ շիթ դողդողալ։ Ասեղի պես սուր մի ցավ հանկարծ շամփրեց Մարգարիտայի աջ ձեռքը, և, ատամները սեղմելով, նա արմունկը հենեց սյան վրա։ Այժմ ետևից, դահլիճից ինչ-որ խշխշոց էր գալիս, ասես թևեր էին զարնվում պատին, ու հասկանալի էր, որ այնտեղ պարում են հյուրերի անպատմելի քանակության ամբոխներ, և Մարգարիտային թվում էր, որ այդ արտասովոր դահլիճի մարմարե, խճանկար և բյուրեղապակյա հատակները համաչափ ճոճվում են։

Ոչ Գայ Կեսար Կալիգուլան, ոչ Մեսսալինան արդեն չհետաքրքրեցին Մարգարիտային, ինչպես չհետաքրքրեց թագավորներից, հերցոգներից, ասպետներից, անձնասպաններից, թունավորողներից, կախաղան բարձրացվածներից և կավատուհիներից, բանտապաններից և խաղանենգերից, դահիճներից, մատնիչներից, դավաճաններից, խելագարներից, լրտեսներից, բռնաբարողներից և ոչ մեկը։ Նրանց բոլորի անունները խառնըվել էին գլխի մեջ, դեմքերը խմորվել ու մի վիթխարի բլիթ էին դարձել, և հիշողության մեջ միայն մեկ տանջող դեմք էր մնացել, իսկապես հրաշեկ մորուքով եզերված Մալյուտա Սկուրատովի դեմքը։ Մարգարիտայի ոտքերը ծալվում էին, ամեն րոպե վախենում էր, որ կսկսի լաց լինել։ Ամենավատ տանջանքները աջ ծունկն էր պատճառում, որը համբուրում էին։ Ծունկն ուռել էր, մաշկը՝ կապտել, չնայած Նատաշայի ձեռքը մի քանի անգամ հայտնվել էր ծնկան մոտ, սպունգով ու բուրավետ ինչ-որ բանով տրորել։ Երրորդ ժամի ավարտին Մարգարիտան ցած նայեց միանգամայն անհույս աչքերով և ուրախացած ցնցվեց. հյուրերի հոսքը նվազում էր։

— Պարահանդեսային հավաքի օրենքները միանման են, թագուհի,— շշնջաց Կորովևը,— հոսքը հիմա կսկսի պակասել։

Երդվում եմ, որ վերջին րոպեներն են, դիմանանք։ Ահա բրոկենյան ցոփակյացների խումբը։ Նրանք միշտ վերջինն են գալիս։ Այո, այո, նրա՛նք են։ Երկու հարբած վամպիր... վե՞րջ։ Ահ, չէ՛, մեկն էլ կա։ Չէ՛, երկուսը։

Աստիճաններով բարձրանում էին երկու վերջին հյուրերը։

— Սա կարծես թե նոր է,— ասում էր Կորովևը՝ ապակու տակ աչքերը կկոցած,— ա՛հ, այո, այո։ Մի անգամ Ազազելլոն այցելեց նրան ու կոնյակ խմելիս ականջին մի խորհուրդ շշնջաց, թե ինչպես ազատվի այն մարդուց, որի մերկացումներից չափազանց էր վախենում։ Եվ ահա նա իրենից կախման մեջ գտնվող ծանոթին կարգադրեց աշխատասենյակի պատերին թույն ցողել։

— Անունն ի՞նչ է,— հարցրեց Մարգարիտան։

— Ճիշտն ասած, ինքս էլ չգիտեմ,— պատասխանեց Կորովևը,— պետք է Ազազելլոյին հարցնել։

— Իսկ նրա հե՞տ ով է։

— Դա էլ հենց նրա ամենաճշտակատար ենթարկյալն է։ Ես սքանչացա՜ծ եմ,— բղավեց Կորովևը վերջին երկուսին։

Սանդուղքը դատարկվեց։ Զգուշության համար մի քիչ էլ սպասեցին։ Սակայն բուխարուց այլևս ոչ ոք դուրս չէր գալիս։

Մի վայրկյան անց, չիմանալով, թե ինչպես եղավ, Մարգարիտան հայտնվեց ավազանով այն նույն սենյակում և այնտեղ անմիջապես, լաց լինելով ձեռքի և ոտքի ցավից, փռվեց ուղիղ հատակին։ Բայց Գելլան ու Նատաշան, սփոփելով նրան, տարան արյան ցնցուղի տակ, նորից տրորեցին նրա մարմինը, և Մարգարիտան վերստին կենդանացավ։

— Մի քիչ էլ, մի քիչ էլ, թագուհի Մարգո,— շշնջում էր կողքին հայտնված Կորովևը,— պետք է թռչել անցնել դահլիճներով, որպեսզի հարգարժան հյուրերն իրենց լքված չզգան։

Ու Մարգարիտան նորից դուրս թռավ ավազանով սենյակից։ Վարդակակաչների ետևի բեմի վրա, ուր նվագում էր վալսերի արքայի նվագախումբը, հիմա մոլեգնել էր կապիկների ջազ նվագախումբը։ Վիթխարի, բրդոտ այտամորուսներով գորիլլան, շեփորը ձեռքին, ծանր-ծանր պարելով, դիրիժորություն էր անում։ Մի շարքով նստած էին օրանգուտանգները, որոնք փայլուն շեփորներ էին փչում։ Նրանց ուսերին հեծած զվարթ շիմպանզեները հարմոններ էին նվագում։ Առյուծանման բաշերով երկու գամադրիլ ռոյալների ստեղներին էին հարվածում, և

այդ ռոյալների ձայնը չէր լսվում գիբոնների, մանդրիլների և մակակների թաթերի մեջ եղած սաքսոֆոնների, ջութակների և թմբուկների ղրղոցի, ճղճղոցի և բոմբյունների միջից։ Հայելապատ հատակին անթիվ-անհամար քանակության զույգեր, սանս միաձուլված, ճարտարությամբ և շարժումների անթերիությամբ զարմացնելով, մեկ ուղղությամբ պտտվելով, շարժվում էին սպտի պես՝ սպառնալով ճանապարհին սրբել տանել ամեն ինչ։ Ատլասե կենդանի թիթեռներ էին ճախրում պարող ամբոխների վերևում, աստղերից ծաղիկներ էին թափվում։ Սյունախոյակների վրա, երբ հանգավ էլեկտրականությունը, բռնկվեցին բյուրավոր լուսատտիկներ, իսկ օդի մեջ ճահճային կրակներ լողացին։

Ապա Մարգարիտան հայտնվեց սյունաշարով եզերված հրեշավոր չափերի մի ավազանի մեջ։ Վիթխարի սև Նեպտունը վարդագույն լայն շիթ էր ցայտեցնում երախից։ Շամպայնի արբեցուցիչ հոտն էր ելնում ավազանից։ Այստեղ անբռնազբոս ուրախությունն էր թագավորում։ Կանայք, ծիծաղելով, հանում շպրտում էին կոշիկները, պայուսակները տալիս կավալերներին կամ սավաններ բռնած դեսուդեն վազվզող նեգրերին ու ճչալով, գլխիվայր նետվում էին ավազանի մեջ։ Փրփրադեզ սյուներ էին շպրտվում վեր։ Ավազանի բյուրեղապակյա հատակը կրակվում էր ներքևի լույսից, որը թափանցում էր գինու հաստ շերտը, ու դրա մեջ երևում էին լողացող արծաթավուն մարմիններ։ Ավազանից դուրս էին թռչում լիովին հարբած։ Քրքիջը զրնգում էր սյունաշարի տակ ու թնդում, ինչպես բաղնիքում։

Ամբողջ այդ խառնաշփոթությունից հիշողության մեջ մնաց կատարելապես հարբած, իմաստազուրկ, սակայն իմաստազրկությամբ հանդերձ էլ աղերսող աչքերով կանացի մի դեմք ու հիշվեց մի բառ՝ «Ֆրիդա»։ Մարգարիտայի գլուխն սկսեց պտտվել գինու հոտից, և նա արդեն ուզում էր հեռանալ, երբ կատուն ավազանի մեջ մի տեսարան սարքեց, որը կանգնեցրեց Մարգարիտային։ Բեգեմոտն ինչ-որ հմայություններ արեց Նեպտունի երախի մոտ, և անմիջապես շամպայնի ալիքվող զանգվածը թշշոցով ու հռնդյունով չքացավ ավազանից, իսկ Նեպտունը սկսեց ոչ թշշացող, ոչ փրփրող, մուգ դեղնագույն շիթ վեր նետել։ Կանայք ճիչ ու ծղրտոցով.

— Կոնյա՜կ,— բղավելով, ավազանի եզրից նետվեցին սյուների ետև։ Մի քանի վայրկյան անց ավազանը լիքն էր, և կա-

տուն, երեք անգամ պտույտ տալով օդում, շրմփաց ալիքվող կոնյակի մեջ։ Դուրս լողաց թնչացնելով, փողկապը՝ լաթ դարձած, բեղերի ոսկին ու հեռադիտակը կորցրած։ Բեգեմոտի օրինակին սիրտ արեցին հետևել միայն մի կին, այն հնարամիտ-դերձակուհին ու նրա կավալերը՝ երիտասարդ անծանոթ մի մուլատ։ Երկուսն էլ նետվեցին կոնյակի մեջ, բայց այստեղ Կորովևը թևանցուկ արեց Մարգարիտային, ու նրանք հեռացան լողացողներից։

Մարգարիտային թվաց, թե ինքը մի տեղ թռավ, ուր քարապատ վիթխարի լճակների մեջ ոստրեների սարեր տեսավ։ Հետո թռչում էր ապակյա հատակի վրայով, որի տակ դժոխային հնոցներ էին վառվում, ու դրանց արանքներում դիվական սպիտակազգեստ խոհարարներ էին վազվզում։ Ապա ինչ-որ տեղ, այլևս դադարելով որևիցե բան հասկանալ, մութ նկուղներ տեսավ, ուր ինչ-որ կանթեղներ էին վառվում, ուր աղջիկները շիկացած ածուխների վրա թշթշացող միս էին մատուցում, ուր իր կենացն էին խմում մեծ գավաթներով։ Հետո սպիտակ արջեր տեսավ, որոնք հարմոններ էին նվագում և կամարինսկայա պարում բեմի վրա։ Աճպարար-սալամանդրան, որը չվառվեց բուխարու մեջ... Եվ երկրորդ անգամ նրա ուժերը սկսեցին սպառվել։

— Վերջին պատկերը,— մտահոգված շշնջաց Կորովևը,— և մենք ազատ ենք։

Կորովևի ուղեկցությամբ նա նորից հայտնվեց պարահանդեսի դահլիճում, սակայն այժմ այնտեղ չէին պարում, և հյուրերի անթիվ ամբոխներ խռնվել էին սյուների արանքում՝ ազատ թողնելով դահլիճի կենտրոնը։ Մարգարիտան չէր հիշում, թե ով օգնեց իրեն ելնել դահլիճի այդ ազատ տարածության մեջտեղում հայտնված բարձր պատվանդանին։ Երբ բարձրացավ, ի զարմանս յուր լսեց, որ հեռուներում զանգ է հնչում կեսգիշերի, որը շատ վաղուց անցած պիտի լիներ իր հաշվով։ Հայտնի չէ, թե որտեղից լսվող ժամացույցի վերջին զանգի հետ լռություն իջավ հյուրերի ամբոխների վրա։ Այդ ժամանակ Մարգարիտան նորից տեսավ Վոլանդին։ Նա գալիս էր, Աբադոննայով, Ազազելլոյով, Աբադոննայի նման և մի քանի սև ու երիտասարդ մարդկանցով շրջապատված։ Մարգարիտան հիմա տեսավ, որ իր պատվանդանի դիմաց մեկ այլ պատվանդան էլ է պատրաստված Վոլանդի համար։ Սակայն նա չօգտվեց դրանից։ Մարգա-

թիկնային մաշկերից։ Ու Վոլանդը պարահանդեսի ամենավերջին մեծ մուտքին հայտնվել է նույն տեսքով, ինչ ննջասենյակում էր։ Միևնույն կեղտոտ կարկատած գիշերաշապիկը կախ էր ընկած ուսերից, ոտքերին՝ մաշված չստիկներ։ Վոլանդը սրով էր, բայց մերկացրած այդ սուսերը նա գործածում էր որպես ձեռնափայտ, վրան հենվելով։ Կաղին տալով, Վոլանդը կանգ առավ իր պատվանդանի մոտ, և Ազազելլոն իսկույն նրա դիմաց հայտնվեց մատուցարանը ձեռքին, և այդ մատուցարանի վրա Մարգարիտան տեսավ մարդու կտրված գլուխ, առջևի ատամները ջարդված։ Կատարյալ լռությունը շարունակվում էր, և դա միայն մեկ անգամ ընդհատեց հեռվից եկող, այդ պայմաններում անհասկանալի, կարծես շքամուտքից հնչող զանգի ձայնը։

— Միխայիլ Ալեքսանդրովիչ,— ոչ բարձրաձայն դիմեց Վոլանդը գլխին, ու, Մարգարիտան, սարսռելով, մեռյալ դեմքի վրա տեսավ կենդանի, իմաստով ու տառապանքով լի աչքեր։— Ամեն ինչ կատարվեց, ճիշտ չէ՞,— շարունակեց Վոլանդը, գլխի աչքերին նայելով,— գլուխդ կին կտրեց, նիստը չկայացավ և ապրում եմ ես ձեր բնակարանում։ Սա փաստ է։ Իսկ փաստը աշխարհիս ամենահամառ բանն է։ Բայց այժմ մեզ հետաքրքրում է հետագան, այլ ոչ թե արդեն կատարված փաստը։ Դուք միշտ եղել եք կրքոտ քարոզիչն այն տեսության, որ գլուխը կտրվելիս կյանքը կտրվում է մարդու մեջ, նա փոշի է դառնում և հեռանում դեպ անէություն։ Իմ հյուրերի ներկայությամբ, չնայած հենց նրանք բոլորովին այլ տեսության ապացույցներ են ծառայում, ինձ համար հաճելի է ձեզ հայտնել այն մասին, որ ձեր տեսությունը թե պատկառելի է, թե սրամիտ։ Ասենք, չէ որ բոլոր տեսությունները արժեն մեկը մյուսին։ Դրանց մեջ այնպիսին էլ կա, համաձայն որի, յուրաքանչյուրին պիտի տրվի ըստ իր հավատի։ Ուստի, թող կատարվի դա։ Դուք հեռանում եք դեպ անգոյություն, իսկ ինձ ուրախություն կպատճառի գոյության կենացը խմել այն գավաթից, որին կվերածվեք դուք։— Վոլանդը բարձրացրեց սուսերը։ Տեղնուտեղը գլխի վերնաշերտերը մգացան ու կծկվեցին, ապա կտոր-կտոր թափվեցին, աչքերն անհետացան, և շուտով Մարգարիտան մատուցարանի վրա տեսավ դեղնավուն, զմրուխտյա աչքերով և մարգարտյա ատամներով, ոսկյա ոտի վրա մի գանգ։ Գանգի կափարիչը ետ ընկավ։

— Այս վայրկյանիս, մեսիր,— ասաց Կորովևը, նկատելով

Վոլանդի հարցական հայացքը։— Նա կկանգնի ձեր առաջ։ Այս մեռելային լռության մեջ ես լսում եմ, ինչպես են ճռճռում նրա լաքապատ կոշիկները, և ինչպես է զրնգում ըմպանակը, որ նա սեղանին դրեց, այս կյանքում վերջին անգամ շամպայն խմելով։ Ահա և նա։

Դեպի Վոլանդը քայլելով, դահլիճ մտավ միայնակ նոր մի հյուր։ Արտաքնապես նա ոչնչով չէր տարբերվում բազում այլ հյուր-տղամարդկանցից, բացի մի բանից. հյուրը տառացիորեն ճոճվում էր հուզմունքից, ինչ նույնիսկ հեռվից էր նկատելի։ Այտերին բծեր էին վառվում, աչքերը թրթռում էին՝ լիովին տագնապած։ Հյուրը շշկլված էր, և դա միանգամայն հասկանալի էր. նրան ապշեցրել էր ամեն ինչ, գլխավորապես, իհարկե, Վոլանդի հագուստը։

Սակայն հյուրը գերազանց սիրալիր ընդունելության արժանացավ։

— Ա՜, սիրելի բարոն Մայգել,— բարեհամբույր ժպտալով, Վոլանդը դիմեց հյուրին, որի աչքերը ճակատը թռան,— ես երջանիկ եմ ձեզ ներկայացնել,— Վոլանդը դիմեց հյուրերին,— պատվելիագույն բարոն Մայգելին, որը համերգային հանձնաժողովում աշխատում է որպես օտարերկրացիներին մայրաքաղաքի տեսարժան վայրերին ծանոթացնող։

Այստեղ Մարգարիտան քարացավ, որովհետև հանկարծ ճանաչեց այդ Մայգելին։ Մի քանի անգամ աչքովն էր ընկել Մոսկվայի թատրոններում ու ռեստորաններում։ «Սպասեք...— մտածեց Մարգարիտան,— ուրեմն, նա նույնպե՞ս մեռել է, ինչ է»։ Սակայն բանն իսկույն պարզ դարձավ։

— Սիրելի բարոնը,— շարունակեց Վոլանդն, ուրախ ժպտալով,— այնքան սիրալիր էր, որ իմանալով իմ Մոսկվա ժամանելու մասին, անմիջապես զանգահարեց ինձ՝ իր ծառայությունները առաջարկելով ըստ մասնագիտության, այսինքն տեսարժան վայրերին ծանոթացնելու առումով։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ ես երջանիկ էի նրան ինձ մոտ հրավիրել։

Այդ ժամանակ Մարգարիտան տեսավ, թե ինչպես Ազազելլոն գանգով մատուցարանը տվեց Կորովևին։

— Այո, ի դեպ, բարոն,— հանկարծ մտերմաբար իջեցնելով ձայնը, ասաց Վոլանդը,— լուրեր են տարածվել ձեր չափազանց հետաքրքրասիրության մասին։ Ասում են, որ այդ հետաքրքրասիրությունը, գումարված ձեր ոչ պակաս զարգացած զրուցա-

սիրությանը, համընդհանուր ուշադրություն է սկսել դրավել։ Դեռ ավելին՝ չար լեզուներն արդեն խոսք են թողել. զրպարտիչ ու լրտես։ Եվ էլ ավելին, ենթադրություն կա, թե դա ձեզ տխուր վախճանի կհասցնի ոչ ավելի, քան մեկ ամիս անց։ Ուրեմն այսպես, այդ տանջալից սպասումից ազատվելու համար մենք որոշեցինք օգնության հասնել ձեզ, օգտվելով այն հանգամանքից, որ ինքներդ խնդրեցիք հյուր գալ ինձ, հենց հնարավոր ամեն ինչ թաքուն տեսնելու և ականջ դնելու ստույգ նպատակով։

Բարոնն ավելի գունատվեց, քան Արազոննյան, որն արտաքնապես գունատ էր ի բնե, իսկ հետո տարօրինակ մի բան կատարվեց։ Արազոննյան հայտնվեց բարոնի դիմաց ու մի վայրկյանով հանեց ակնոցը։ Նույն պահին ինչ-որ բան փայլատակեց Ազավելլոյի ձեռքում, ծափ զարկելու պես մի բան շրխկաց, բարոնը կամաց-կամաց ընկավ [illegible], ալ կարմիր արյունը ժայթքեց նրա կրծքից ու լցվեց օսլայած շապիկի և ժիլետի վրա։ Կորովևը գավաթը պահեց ցայտող շիթի տակ ու լցված գավաթը հանձնեց Վոլանդին։ Բարոնի անկենդան մարմինն այդ ժամանակ արդեն ընկած էր հատակին։

— Ես ձեր կենացն եմ խմում, պարոնայք,— ցածրաձայն ասաց Վոլանդը և, գավաթը բարձրացնելով, շրթունքները դիպցրեց գավաթին։

Այդ ժամանակ կերպարանափոխություն կատարվեց։ Չքացան կարկատած շապիկն ու մաշված չստիկները։ Վոլանդը հայտնվեց ինչ-որ սև քղամիդով, պողպատյա սուսերը կողքից կախ։ Նա արագ մոտեցավ Մարգարիտային, գավաթը մոտեցրեց և հրամայաբար ասաց.

— Խմի՛ր։

Մարգարիտայի գլուխը պտտվեց, նա ճոճվեց, բայց գավաթն արդեն շուրթերի մոտ էր, և ինչ-որ ձայներ, թե ում ձայներն էին՝ չզանազանեց, շշնջացին երկու ականջներին.

— Մի վախեցեք, թագուհի... Մի վախեցեք, թագուհի, արյունը վաղուց հողն է անցել։ Իսկ այնտեղ, ուր թափվել է, արդեն խաղողի ողկույզներ են աճում։

Մարգարիտան, առանց աչքերը բացելու, մի կում արեց, և մի անուշ հոսանք անցավ նրա երակներով, ականջները զրնգալ սկսեցին։ Նրան թվաց, թե խլացուցիչ կանչում են աքաղաղները, թե ինչ-որ տեղ քայլերգ են նվագում։ Հյուրերի ամբոխներն աստիճանաբար կորցրեցին իրենց կերպարանքը։ Թե ֆրակա-

վորները, թե՛ կանայք փոշի դարձան։ Մարգարիտայի աչքի առաջ անթեղակիզմամբ պարուրվեց դահլիճը, վրայից դամբարանային հոտ սփռվեց։ Սյուները քայքայվեցին, հանգան լույսերը, ամեն ինչ կծկվեց, ո՛չ շատրվաններ մնացին, ո՛չ վարդակակաչներն ու քամելիաները։ Պարզապես մնաց այն, ինչ կար՝ ակնագործի այրու համեստ հյուրասենյակը, ու դրա կիսաբաց դռան՝ արանքից լույսի մի շերտ էր ընկնում։ Հենց այդ կիսաբաց դռնից էլ ներս մտավ Մարգարիտան։

ԳԼՈՒԽ XXIV

## ՎԱՐՊԵՏԻ ԶԵՐԲԱԶԱՏՈՒՄԸ

Վոլանդի ննջասենյակում ամեն բան նույնն էր, ինչ պարահանդեսից առաջ։ Վոլանդը, շապկանց, նստած էր մահճակալին, միայն թե Գելլան չէր տրորում նրա ոտքը, այլ այնտեղ, ուր առաջ շախմատ էին խաղում, ընթրիքի սեղան էր գցում։ Կոռովևն ու Ազազելլոն, ֆրակները հանած, նստած էին սեղանի մոտ, նրանց կողքին, իհարկե, տեղ էր գրավել կատուն, որը չէր ցանկացել բաժանվել իր փողկապից, թեև սա դարձել էր լիովին կեղտաճմուռ մի լաթ։ Մարգարիտան, ճոճվելով, մոտեցավ սեղանին ու հենվեց դրան։ Այդ ժամանակ Վոլանդը կանչեց նրան, ինչպես այն ժամանակ և մատնացույց արեց կողքը նստել։

— Ի՞նչ է, ձեզ շա՞տ չարչարեցին,— հարցրեց Վոլանդը։

— Օ՜, ոչ, մեսսիր,— պատասխանեց Մարգարիտան, բայց հազիվ լսելի։

— Նոբլեսս օբլիժ՛[1],— նկատեց կատուն և ինչ-որ թափանցիկ հեղուկ լցրեց ըմպանակի մեջ։

— Օղի՞ է,— թույլ ձայնով հարցրեց Մարգարիտան։

Վիրավորանքից կատուն վեր ցատկեց աթոռի վրա։

— Ողորմած եղեք, թագուհի,— խռխռացրեց նա,— մի՞թե ես ինձ թույլ կտայի տիկնոջն օղի լցնել։ Սա մաքուր սպի՛րտ է։

Մարգարիտան ժպտաց ու փորձեց ըմպանակը հեռացնել իրենից։

---

[1] Ծագումը պարտավորեցնում է (ֆր.)

— Հանգիստ խմեք,— ասաց Վոլանդը, և Մարգարիտան անմիջապես ձեռքն առավ բաժակը։— Գելլա, նստիր,— հրամայեց Վոլանդը և բացատրեց Մարգարիտային։— Լիալուսնի գիշերը տոնական գիշեր է, և ես ընթրում եմ մերձավորների և ծառաների նեղ շրջանում։ Այսպիսով, ինչպե՞ս եք ձեզ զգում։ Ինչպե՞ս անցավ այս հոգնեցուցիչ պարահանդեսը։

— Ցնցո՜ղ,— ճռճռաց Կորովևը,— բոլորը հմայված են, սիրահարված, ոչնչացված, որքա՜ն տա՜կտ, որքա՜ն կարողությո՜ւն, հմայք ու փա՜յլ։

Վոլանդը բարձրացրեց բաժակը և խփեց Մարգարիտայի բաժակին։ Մարգարիտան հնազանդորեն խմեց, մտածելով, որ տեղնուտեղը կմնա սպիրտից։ Բայց ոչ մի վատ բան չեղավ։ Կենդանի ջերմություն հոսեց որովայնը, մի փափուկ բան խփեց ծոծրակին, ուժերը վերականգնվեցին, կարծես արթնացավ երկար ու կազդուրիչ քնից, դրանից բացի գայլի ախորժակ բացվեց։ Ու երբ հիշեց, որ երեկ առավոտից ոչինչ չի կերել, քաղցն ավելի սաստկացավ։ Նա սկսեց ագահորեն խավիար ուտել։

Բեգեմոտը մի կտոր անանաս կտրեց, աղ ցանեց, տաքդեղ ցանեց, կերավ ու դրանից հետո այնպիսի ճարտարությամբ կուլ տվեց երկրորդ բաժակ սպիրտը, որ բոլորը ծափահարեցին։

Մարգարիտայի խմած երկրորդ ըմպանակից հետո աշտանակների մոմերն ավելի վառ դարձան, և բուխարու բոցն էլ ավելացավ։ Հարբածության նշույլ անգամ չէր զգում Մարգարիտան։ Ճերմակ ատամներով միսը կրծելով, Մարգարիտան վայելում էր ծորացող հյութը, միաժամանակ նայում, թե Բեգեմոտն ինչպես է մանանեխ քսում ոստրեին։

— Խաղողն էլ վրայից դիր,— կամացուկ ասաց Գելլան՝ բոթելով կատվի կողը։

— Կխնդրեմ ինձ չսովորեցնել,— պատասխանեց Բեգեմոտը,— շատ սեղաններ ենք նստել, մի անհանգստացե՛ք, շատ ենք նստել։

— Ա՜հ, ինչ հաճելի է ընթրելահա այսպես, բուխարին վառ, առանց ձևականությունների,— խզխզացնում էր Կորովևը,— նեղ շրջանով...

— Ոչ, Ֆագոտ,— առարկեց կատուն,— պարահանդեսն իր թափն ու հմայքն ունի։

— Ոչ մի հմայք էլ չունի, ինչպես նաև թափ, իսկ այդ տըխ-

մար արջերն, ինչպես նաև վագրերը՝ թարում, իրենց մռնչյունով քիչ էր մնացել միգրենի հասցնեին ինձ,— ասաց Վոլանդը։

— Լսում եմ, մեսիր,— ասաց կատուն,— եթե դուք գտնում եք, որ թափ չկա, ես էլ անմիջապես նույն կարծիքին կլինեմ։

— Տես, հա՞,— ի պատասխան ասաց Վոլանդը։

— Կատակ արեցի,— հնազանդորեն ասաց կատուն,— իսկ ինչ վերաբերում է վագրերին, ապա ես կկարգադրեմ խորովել դրանց։

— Վագր ուտել չի կարելի,— ասաց Գելլան։

— Դուք կարծու՞մ եք։ Այդ դեպքում խնդրում եմ լսել,— պատասխանեց կատուն, և հաճույքից կնճռոտվելով պատմեց, թե ինչպես մի անգամ տասնինն օր շարունակ թափառում էր անապատում և միակ բանը, որով սնվում էր, իր սպանած վագրի միսն էր։ Բոլորն ուշադրությամբ լսեցին այդ հետաքրքրաշարժ պատմությունը, իսկ երբ Բեգեմոտը վերջացրեց, խմբով բոլորը բացականչեցին։

— Փչո՛ց էր։

— Եվ այս փչոցի մեջ ամենահետաքրքիրն այն էր,— ասաց Վոլանդը,— որ փչոց էր առաջին բառից մինչև վերջինը։

— Ախ, այդպե՞ս։ Փչո՞ց էր,—բացականչեց կատուն, և բոլորը կարծեցին, թե նա կսկսի բողոքել, բայց նա սոսկ ցածրաձայն ասաց.— Պատմությու՛նը մեզ կդատի։

— Ասացեք,— խմելուց հետո կենդանացած Մարգարիտան դիմեց Ազազելլոյին,— այդ նախկին բարոնին դո՞ւք գնդակահարեցիք։

— Բնականաբար,— պատասխանեց Ազազելլոն,— ինչպե՞ս չգնդակահարել նրան։ Անպայման պետք էր նրան գնդակահարել։

— Ես այնպե՜ս հուզվեցի,— բացականչեց Մարգարիտան,— այնքան անսպասելի կատարվեց։

— Դրա մեջ անսպասելի ոչինչ չկա,— առարկեց Ազազելլոն, իսկ Կորովևը սկսեց խզխզալ ու տնքալ։

— Չհուզվե՞լ կլինի։ Իմ ծնկներն սկսեցին ծալվել։ Թրա՛խկ։ Շրա՛խկ։ Բարոնը տապալվեց։

— Քիչ էր մնում, հիստերիկայի մեջ ընկնեի,— ավելացրեց կատուն՝ խավիարի գդալը լպստելով։

— Մի բան է ինձ անհասկանալի,— ասաց Մարգարիտան, և բյուրեղապակու ոսկյա շողերը թրթռացին նրա աչքերի մեջ,—

մի՞թե դրսից այս պարահանդեսի երաժշտությունն ու ընդհանրապես աղմուկը չէր լսվում։

— Իհարկե, չէր լսվում, թագուհի,— բացատրեց Կորովևը,— պետք է այնպես անել, որ չլսվի։ Դա շատ խնամքով է պետք անել։

— Այո այո... Թե չէ բանն այն է, որ աստիճանների վրայի մարդը... Այ, երբ անցնում էինք Ազազելլոյի հետ... Մյուսն էլ մուտքի մոտ... Ես կարծում եմ, որ նա հետևում էր ձեր բնակարանին...

— Ճիշտ է, ճիշտ է,— բղավեց Կորովևը,— ճիշտ է, թանկագին Մարգարիտա Նիկոլաևնա։ Դուք հաստատում եք իմ կասկածները։ Այո, նա հետևում էր բնակարանին։ Մեկ ուզում էի նրան դնել ցրված պրիվատ-դոցենտի տեղ, կամ աստիճանների վրա հալումաշ լինող սիրահարի, բայց ո՛չ, ո՛չ։ Սիրտս մի բան կրծում էր։ Ա՜հ։ Նա հետևում էր բնակարանին։ Մուտքի մոտ կանգնած մյուսն էլ։ Եվ նա, որ դարպասատակին էր, նույնպես։

— Իսկ հետաքրքիր է, եթե գան ձեզ ձերբակալելու՞,— հարցրեց Մարգարիտան։

— Անպայման կգան, սքանչելի թագուհի, անպայման,— պատասխանեց Կորովևը,— սիրտս վկայում է, որ կգան, ոչ հիմա, իհարկե, բայց ժամանակին անպայման կգան։ Բայց ենթադրում եմ, որ հետաքրքիր ոչ մի բան չի լինի։

— Ահ, ես այնպես հուզվեցի, երբ այդ բարոնն ընկավ,— ասաց Մարգարիտան, որ ըստ երևույթին մինչ այժմ ցնցված էր սպանությամբ, որն առաջին անգամ էր տեսնում կյանքում.— Դուք, անկասկած, լա՞վ եք կրակում։

— Հարմար,— պատասխանեց Ազազելլոն։

— Իսկ քանի՞ քայլի վրա,— ոչ այնքան հստակ հարց տվեց Մարգարիտան։

— Նայած թե ինչի վրա,— տեղին պատասխանեց Ազազելլոն,— մի բան է մուրճով խփել քննադատ Լատունսկու ապակիներին և բոլորովին այլ բան՝ ուղիղ նրա սրտին։

— Սրտի՜ն,— բացականչեց Մարգարիտան, չգիտես ինչու իր սիրտը բռնելով,— սրտի՜ն,— կրկնեց նա խլաձայն։

— Դա ի՞նչ քննադատ Լատունսկի է,— հարցրեց Վոլանդը՝ աչքերը կկոցած Մարգարիտայի վրա։

Ազազելլոն, Կորովևը և Բեգեմոտը մի տեսակ ամաչելով

գլուխները կախեցին, իսկ Մարգարիտան, կարմրելով, պատասխանեց.

— Մի քննադատ կա։ Այսօր Երեկոյան ավերակ դարձրեց նրա ամբողջ բնակարանը։

— Այ քեզ բա՜ն։ Իսկ ինչու՞։

— Մեսսիր,— բացատրեց Մարգարիտան,— նա կործանեց մի վարպետի։

— Իսկ ինչու՞ ինքներդ նեղություն կրեցիք,— հարցրեց Վոլանդը։

— Թույլ տվեք ինձ, մեսսիր,— ուրախացած բղավեց կատուն՝ վեր ցատկելով։

— Դե, տե՛ղդ նստիր,— թնդաց Ազազելլոն, վեր կենալով.— ինքս կգնամ հիմա։

— Ոչ՜,— բացականչեց Մարգարիտան,— ո՜չ, աղաչում եմ, մեսսիր, պետք չէ դա։

— Ինչպես կամենաք, ինչպես կամենաք,— պատասխանեց Վոլանդը, իսկ Ազազելլոն նստեց իր տեղը։

— Իսկ ինչի՞ վրա մենք կանգ առանք, թանկագին թագուհի Մարգո,— ասաց Կորովևը,— ա՜խ, այո՝ սիրտը։ Նա խփում է սրտին,— Կորովևն իր երկար մատը պարզեց Ազազելլոյի ուղղությամբ,— ըստ ընտրության, սրտի ցանկացած նախասիրտը կամ ցանկացած սրտախորշը։

Մարգարիտան միանգամից չհասկացավ, իսկ հասկանալուց հետո զարմացած բացականչեց.

— Բայց չէ որ դրանք փակ են։

— Թանկագինս,— խզխզացրեց Կորովևը,— բանն էլ հենց այն է, որ փա՜կ են։ Դրա՛ մեջ է ամբողջ հետաքրքրությունը։ Իսկ բաց առարկային ամեն մեկն էլ կարող է խփել։

Կորովևը սեղանի դարակից ագռավի յոթանոց հանեց, մեկնեց Մարգարիտային, խնդրելով եղունգով նշան անել կետերից մեկը։ Մարգարիտան նշեց վերին աջ անկյունի կետը։ Գելլան խաղաթուղթը դրեց բարձի տակ՝ բղավելով.

— Պատրա՛ստ է։

Ազազելլոն, որ նստած էր մեջքով դեպի բարձը, ֆրակի շալվարի գրպանից հանեց ավտոմատ սև ատրճանակը, փողը դրեց ուսին, և առանց մահճակալի կողմը շրջվելու, կրակեց, զվարթ երկյուղ պատճառելով Մարգարիտային։ Ծակված բարձի տա-

կից հանեցին յոթանոցը։ Մարգարիտայի նշած կետը ծակված էր։

—Չէի ցանկանա հանդիպել ձեզ հետ, երբ ձեր ձեռքին ատրճանակ կա,— սեթևեթանքով նայելով Ազազելլոյին, ասաց Մարգարիտան։ Նա սեր ուներ բոլոր այն մարդկանց նկատմամբ, որոնք որևէ բան լավագույնս են անում։

— Թանկագին թագուհի,— ճչաց Կորովևը,— ես ոչ մեկին խորհուրդ չեմ տա հանդիպել նրա հետ, նույնիսկ եթե ո՛չ մի ատրճանակ էլ չունենա ձեռքում։ Նախկին խմբավարի և երգասերի պատվի խոսք եմ տալիս, որ ոչ ոք չէր շնորհավորի այդ հանդիպողին։

Կատուն մթնգած նստած էր կրակելու փորձի ընթացքում և հանկարծ հայտարարեց.

— Խոստանում եմ գերազանցել յոթանոցի ռեկորդը։

Ի պատասխան, Ազազելլոն ինչ-որ բան գռմռաց։ Բայց կատուն համառում էր ու պահանջեց ոչ թե մեկ, այլ երկու ատրճանակ։ Ազազելլոն շալվարի մյուս գրպանից հանեց երկրորդ ատրճանակը և առաջինի հետ, արհամարհանքով ծամածռելով բերանը, մեկնեց պարծենկոտին։ Յոթանոցի վրա երկու կետ նըշեցին։ Կատուն երկար նախապատրաստվում էր՝ մեջքը բարձին արած։ Մարգարիտան նստել էր, մատներով ականջները փակած և նայում էր բուխարու վրա ննջող բվին։ Կատուն կրակեց երկու ատրճանակից, որից հետո անմիջապես ծղրտաց Գելլան, սպանված բուն ընկավ բուխարու վրայից և փշրված ժամացույցը կանգ առավ։ Գելլան, որի մի ձեռքն արյունաշաղախ էր, եղունգները առնելով խրեց կատվի բրդի մեջ, վերջինս իր հերթին բռնեց նրա մազերից ու, կծիկ դարձած, նրանք գլորվեցին հատակին։ Գավաթներից մեկն ընկավ ցած ու փշրվեց։

— Պոկեք ինձնից այս կատաղած վհուկին,— ոռնում էր կատուն՝ պաշտպանվելով իրեն հեծած Գելլայից։ Կռվողներին բաժանեցին, Կորովևը փչեց Գելլայի վիրավոր մատին, ու մատը լավացավ։

— Ես չեմ կարող կրակել, երբ քթիս տակ խոսում են,—բղավում էր Բեգեմոտը և աշխատում տեղը կպցնել մեջքից պոկած բրդի խոշոր խուրձը։

— Գրազ եմ գալիս,— ասաց Վոլանդը, ժպտալով Մարգարիտային,— որ նա այս խաղը դիտմամբ արեց։ Կարգին կրակում է։

Գեյլան ու կատուն հաշտվեցին և ի նշան հաշտության համբուրվեցին։ Բարձի տակից հանեցին խաղաթուղթը, ստուգեցին։ Ոչ մի նշան, Ազազելլոյի ծակածից բացի, խոցված չէր։

— Չի կարող պատահել,— պնդում էր կատուն՝ աշտանակի լույսի միջով զննելով խաղաթուղթը։

Ջվարթ ընթրիքը շարունակվում էր։ Մոմերը հալվել էին աշտանակների մեջ, սենյակում ալիք-ալիք տարածվում էր բուխարուց ելնող չոր, բուրավետ տաքությունը։ Կշտացած Մարգարիտային երանության զգացում պարուրեց։ Նա նայում էր, թե ինչպես Ազազելլոյի սիգարի կապտագույն օղակները լողում էին բուխարուց ներս, և թե ինչպես կատուն բռնում էր դրանք սուսերի ծայրով։ Ոչ մի տեղ չէր ուզում գնալ, թեև նրա հաշիվներով արդեն ուշ էր։ Դատելով ամեն ինչից, առավոտյան ժամը վեցն էր մոտենում։ Օգտվելով դադարից ,Մարգարիտան դիմեց Վոլանդին ու երկչոտ ասաց.

— Գուցե ես գնամ... Ուշ է։

— Իսկ ու՞ր եք շտապում,— քաղաքավարությամբ, բայց մի քիչ չոր հարցրեց Վոլանդը։ Մյուսները լռեցին, ձևացնելով, թե զբաղված են սիգարի ծխի օղակներով։

— Այո, գնամ, — դրանից լիովին շփոթված, կրկնեց Մարգարիտան ու շրջվեց, ասես ծածկոց կամ թիկնոց փնտրելով։ Մերկությունը հանկարծ սկսեց նեղել նրան։ Վեր կացավ սեղանի մոտից։ Վոլանդը, լուռ, մահճակալի վրայից վերցրեց իր մաշված ու ճարպոտած խալաթը, և Կորովևը դա գցեց Մարգարիտայի ուսերին։

— Շնորհակալ եմ, մեսսիր,— հազիվ լսելի ասաց Մարգարիտան և հարցական նայեց Վոլանդին։ Ի պատասխան նա ժպտաց բարեկիրթ ու անտարբեր։ Սև թախիծը մի տեսակ մեկեն պարուրեց Մարգարիտայի սիրտը։ Նա իրեն խաբված զգաց։ Պարահանդեսի իր ծառայությունների դիմաց, ըստ երևույթին, ոչ ոք և ոչ մի պարգև չէր պատրաստվում նրան առաջարկել, ինչպես և ոչ ոք նրան չէր ստիպում մնալ։ Այնինչ, նրա համար միանգամայն պարզ էր, որ այստեղից այլևս գնալու տեղ չունի։ Թռուցիկ մի միտք, որ ստիպված է առանձնատուն վերադառնալ, հուսալքության ներքին պոռթկում առաջացրեց նրա մեջ։ Իսկ եթե ի՞նք խնդրի, ինչպես գայթակղիչ կերպով խորհուրդ էր տալիս Ազազելլոն Ալեքսանդրովսկի այգում։ «Ոչ, ոչ մի դեպքում», — ասաց ինքն իրեն։

— Մնաք բարով, մեսիր,— բարձրաձայն ասաց նա՝ մտքում ասելով. «Միայն թե դուրս գամ այստեղից, իսկ հետո կհասնեմ Սենին ու ինձ ջուրը կգցեմ»։

— Հապա նստեք,— հանկարծ հրամայաբար ասաց Վոլանդը։ Մարգարիտան այլայլվեց ու նստեց։— Գուցե ինչ-որ բա՞ն եք ուզում ասել հրաժեշտից առաջ։

— Ոչ, մեսիր, ոչինչ,— հպարտությամբ պատասխանեց Մարգարիտան,— բացի նրանից, որ եթե էլի պետք եմ ձեզ, պատրաստ եմ հաճույքով անել այն ամենը, ինչ կամենաք։ Ամենևին չեմ հոգնել և շատ զվարճացա պարահանդեսին։ Այնպես որ, եթե էլի շարունակվեր, ես հաճույքով կտրամադրեի ծունկս, որպեսզի համբուրեին հազարավոր կախաղան հանվածներ ու մարդասպաններ,— Մարգարիտան նայում էր Վոլանդին ասես շղարշի միջից, նրա աչքերն արցունքով էին լցվել։

— Ճշմարի՜տ է։ Դուք լիովի՛ն իրավացի եք,— խուլ ու սարսափելի բղավեց Վոլանդը,— այդպես էլ պե՛տք է։

— Այդպես էլ պե՛տք է,— արձագանքի պես կրկնեց Վոլանդի շքախումբը։

— Մենք ձեզ փորձում էինք, — շարունակեց Վոլանդը, — երբեք և ոչինչ մի խնդրեք։ Երբե՛ք և ոչի՛նչ, հատկապես նրանցից, ովքեր ուժեղ են ձեզանից։ Իրենք կառաջարկեն, իրենք էլ ամեն ինչ կտան։ Նստեցե՛ք, հպարտ կին,— Վոլանդը պոկեց ծանր խալաթը Մարգարիտայի ուսերից, ու նա վերստին հայտնըվեց մահճակալի վրա, նրա կողքին։— Եվ այսպես, Մարգո,— շարունակեց Վոլանդը՝ ձայնը մեղմելով, — ի՞նչ եք ուզում այն բանի դիմաց, որ այսօր տիրուհի եղաք իմ տանը։ Ի՞նչ եք ցանկանում այն բանի դիմաց, որ այս պարահանդեսը մերկ անցկացրեցիք։ Որքա՞ն եք գնահատում ձեր ծունկը։ Ի՞նչ վնասներ են պատճառել իմ հյուրերը, որոնց հենց նոր կախաղան հանվածներ անվանեցիք։ Ասացե՛ք։ Եվ հիմա արդեն ասացեք առանց քաշվելու, քանզի ես եմ առաջարկել։

Մարգարիտայի սիրտը զարկեց, նա ծանր հոգոց հանեց, սկսեց ինչ-որ բան հասկանալ։

— Հը՛, ինչ եղավ, ավելի համարձակ,— քաջալերում էր Վոլանդը,— արթնացրե՛ք ձեր երևակայությունը, խթանե՛ք։ Սոսկ այդ անուղղելի սրիկա-բարոնի սպանության տեսարանին ներկա գտնվելն արժե, որ մարդը պարգևատրվի, հատկապես, եթե այդ մարդը կին է։ Դե՞-հ։

Մարգարիտայի շունչը կտրվեց, և նա արդեն ուզում էր արտասանել նշխրային և հոգու խորքում փայփայած բառերը, երբ հանկարծ զնանավեց, բերանը բացեց ու չռեց աչքերը։ «Ֆրի՜դա, Ֆրի՜դա, Ֆրի՜դա,— ականջների մեջ բղավեց ինչ-որ մեկի ձանձրացնող, աղերսող ձայնը,— Իմ անունը Ֆրի՜դա է»։ Եվ Մարգարիտան, ամեն բառի վրա սայթաքելով, խոսեց.

— Ուրեմն, ես կարո՞ղ եմ մի բան խնդրել։

— Պահանջել, պահանջել, իմ դոննա,— պատասխանեց Վոլանդը, հասկանալով ու ժպտալով,— պահանջել մի՜ բան։

Ախ, որքան հմտորեն ու հստակ ընդգծեց Վոլանդը, կրկնելով Մարգարիտայի «մի բան» բառերը։

Մարգարիտան մի անգամ էլ հոգոց հանեց ու ասաց.

— Ես ուզում եմ, որ Ֆրիդային այլևս չտան այն թաշկինակը, որով նա խեղդել է իր երեխային։

Կատուն աչքերը երկինք հառեց և բարձրաձայն թնչացրեց, բայց ոչինչ չասաց, հավանորեն, հիշելով պարահանդեսին ոլորված ականջը։

— Նկատի առնելով, — սկսեց Վոլանդը՝ քթի տակ ծիծաղելով,— որ ձեր կողմից այդ տխմար Ֆրիդայից կաշառք ստանալու հնարավորությունն, իհարկե, բացառվում է, չէ որ դա անհամատեղելի կլիներ թագուհու ձեր արժանապատվության, ես արդեն չգիտեմ, թե ինչ անեմ։ Թերևս մի բան է մնում՝ փալաս-փուչուս հավաքել ու խցկել ննջասենյակիս բոլոր ճեղքերը։

— Ինչի՞ մասին եք խոսում, մեսսիր,— զարմացավ Մարգարիտան՝ լսելով այդ իրոք անհասկանալի խոսքը։

— Լիովին համաձայն եմ ձեզ հետ, մեսսիր,— խոսակցությանը խառնվեց կատուն,— փալաս-փուչուս,— և զայրացած թաթը զարկեց սեղանին։

— Գթասրտության մասին եմ խոսում,— իր բառերը բացատրեց Վոլանդը՝ Մարգարիտայից չկտրելով կրակվող աչքը։ —Երբեմն միանգամայն անսպասելիորեն ու նենգաբար ամենանեղ անցքերից ներս է խցկվում։ Դրա համար էլ խոսում եմ փալաս-փուչուսի մասին։

— Ես էլ եմ նույնն ասում,— բացականչեց կատուն և համենայն դեպս խույս տվեց Մարգարիտայից, վարդագույն կրեմի մեջ թաթախված թաթերով սուր ականջները բռնած։

— Դուրս կորիր,— ասաց Վոլանդը նրան։

— Ես դեռ սուրճ չեմ խմել,— պատասխանեց կատուն,—

ինչպե՞ս կարող եմ գնալ։ Մեսիր, մի՞թե տոնական գիշերով սեղանի շուրջ եղած հյուրերին երկու կարգի են բաժանում։ Ոմանց՝ առաջին, մյուսներին էլ, ինչպես արտահայտվեց այն թախծոտ ճլատ-բուֆետապանը, երկրո՞րդ կարգի թարմության։

— Լռի՛ր,— հրամայեց նրան Վոլանդը և, դիմելով Մարգարիտային, հարցրեց.— Դատելով ամեն ինչից, դուք բացառիկ բարության տեր մա՞րդ եք։ Բարձր բարոյականության տե՞ր։

— Ոչ,— ճիգով պատասխանեց Մարգարիտան,— ես գիտեմ, որ ձեզ հետ միայն անկեղծ կարելի է խոսել, և անկեղծորեն ասում եմ ձեզ. ես թեթևամիտ մարդ եմ։ Ֆրիդայի համար ձեզ խնդրեցի լոկ այն պատճառով, որ անզգուշություն ունեցա նրան հաստատ հույս տալ։ Նա սպասում է, մեսիր, նա հավատում է իմ հզորությանը։ Ու եթե նա խաբված մնա, ես սարսափելի վիճակի մեջ կընկնեմ։ Ամբողջ կյանքումս հանգիստ չեմ ունենա։ Ինչ կարող ես անել։ Այդպես ստացվեց։

— Ա՜,— ասաց Վոլանդը, — դա՛ հասկանալի է։

— Ուրեմն, կանե՞ք, — կամացուկ հարցրեց Մարգարիտան։

— Ոչ մի դեպքում,— պատասխանեց Վոլանդը,— բանն այն է, թանկագին թագուհի, որ այստեղ մի փոքրիկ շփոթմունք կա։ Յուրաքանչյուր գերատեսչություն իր գործերով պիտի զբաղվի։ Չեմ վիճում, մեր հնարավորությունները բավական մեծ են, դրանք շատ ավելի մեծ են, քան ենթադրում են որոշ, ոչ այնքան խորաթափանց մարդիկ...

— Այո, շատ ավելի մեծ,— չդիմացավ ու ավելացրեց կատուն, հավանորեն հպարտանալով այդ հնարավորություններով։

— Լռի՛ր, գրողը քեզ տանի,— ասաց Վոլանդն ու շարունակեց՝ Մարգարիտային դիմելով։— Բայց ուղղակի ի՞նչ միտք ունի անել այն, ինչ պետք է անի մեկ այլ, ինչպես ասացի, գերատեսչություն։ Այսպիսով, ես դա չեմ անի, այլ ինքներդ կանեք։

— Իսկ մի՞թե իմ անելով կստացվի։

Ազազելլոն շիլ աչքերը հեգնաբար թեքեց դեպի Մարգարիտան և աննկատելի օրորեց շեկ գլուխն ու փնչացրեց։

— Դե արեք էլի, այ քեզ պատիժ,— մրթմրթաց Վոլանդը և, շրջելով գլոբուսը, սկսեց ինչ-որ հատված զննել դրա վրա, ըստ երևույթին, Մարգարիտայի հետ խոսելու ընթացքում մեկ այլ գործով ևս զբաղվելով։

— Հը՞, Ֆրի՛դա,— հուշեց Կորովևը։

— Ֆրի՛դա,— խլացուցիչ ճչաց Մարգարիտան։

Դուռը բացվեց, և գզգզված, մերկ, բայց առանց հարբածության որևէ նշանի կինը, բորբոքված աչքերով սենյակ ընկավ ու ձեռքերը պարզեց դեպի Մարգարիտան, իսկ նա վեհապանծությա՛մբ ասաց.

— Քեզ ներում են։ Այլևս թաշկինակ չեն տա։

Լսվեց Ֆրիդայի ճիչը, նա բերանքսիվայր ընկավ հատակին ու խաչի պես փռվեց Մարգարիտայի առաջ։ Վոլանդը ձեռքը թափահարեց, և Ֆրիդան չքացավ աչքի առաջից։

— Շնորհակալ եմ ձեզնից, մնաք բարով,— ասաց Մարգարիտան ու վեր կացավ։

— Է, ինչ արած, Բեգեմոտ,— խոսեց Վոլանդը,— տոն գիշերով ոչ գործնական մարդու արարմունքի վրա բան չվաստակենք։— Նա դարձավ Մարգարիտային,— այսպես, սա հաշիվ չէր, չէ որ ես ոչինչ չարեցի։ Իսկ ի՞նչ եք ուզում ձե՛զ համար։

Լռություն տիրեց, որ խախտեց Կորովևը, շշնջալով Մարգարիտայի ականջին.

— Ադամանդյա դոննա, սույն անգամ ձեզ խորհուրդ եմ տալիս ավելի ողջամիտ լինել։ Թե չէ ճակատագիրը կարող է երես թեքել։

— Ես ուզում եմ, որ հենց հիմա, այս իսկ վայրկյանին ինձ վերադարձնեն իմ սիրած մարդուն՝ վարպետին,— ասաց Մարգարիտան, ու դեմքն այլայլվեց ջղաձգությունից։

Այստեղ քամի ներխուժեց սենյակ, այնպես որ աշտանակների մոմերի բոցը պառկեց, պատուհանի ծանր վարագույրը մի կողմ գնաց, բացվեց լուսամուտը և բարձր հեռուներում հայտնըվեց լրած, բայց ոչ վաղորդյան, այլ կեսգիշերային լուսինը։ Լուսամուտագոգից հատակին ընկավ գիշերային լույսի կանաչավուն թաշկինակը, ու դրա մեջ հայտնվեց Իվանուշկայի գիշերային հյուրը, որն իրեն վարպետ էր անվանում։ Նա իր հիվանդանոցային հագուստով էր՝ խալաթով, կոշիկներով ու սև գդակով, որից չէր բաժանվում։ Նրա չսափրված դեմքը ցնցվում էր ծամածռված, խելացնոր-վախվորած աչքերը խեթել էր մոմերի բոցերի վրա, իսկ լուսնալույսի հեղեղը փոթորկվում էր նրա շուրջ։

Մարգարիտան իսկույն ճանաչեց նրան, տնքաց, ափերն իրար զարկեց ու մոտ վազեց։ Համբուրում էր ճակատը, շրթունքները, փարվում էր ծակծկող այտերին, ու երկար ժամանակ զսպված արցունքները հիմա առու-առու թափվում էին այտերից։ Միայն մի բառ էր ասում՝ անիմաստ-անիմաստ կրկնելով.

— Նա... դու, դու...

Վարպետը հեռացրեց նրան իրենից և խլաձայն ասաց.

— Մի լացիր, Մարգո, մի տանջիր ինձ։ Ես շատ հիվանդ եմ։ —Նա ձեռքը տարավ լուսամուտագոգին՝ ասես պատրաստվելով ետ ցատկել ու փախչել, հսկաներին նայելով, մերկացրեց ատամները ու բղավեց.— Ես սարսափում եմ, Մարգո։ Նորից սկսվեցին հալյուցինացիաները։

Հեկեկոցը խեղդում էր Մարգարիտային, նա շշնջում էր՝ բառերը կուլ տալով.

— Ոչ, ոչ, ոչ, մի՛ վախենա ոչնչից։ Ես քեզ հե՜տ եմ։ Ես քեզ հե՜տ եմ։

Կորովևը ճարպկությամբ ու աննկատելիորեն աթոռ դրեց վարպետի տակ, ու նա նստեց, իսկ Մարգարիտան ծնկի իջավ, սեղմվեց հիվանդի կողին ու հանդարտվեց այդպես։ Իր հուզմունքով տարված չնկատեց, որ մերկությունը մի տեսակ հանկարծակի վերացավ, հիմա նրա հագին սև մետաքսե թիկնոց կար։ Հիվանդն իջեցրեց գլուխը և սկսեց ցած նայել մռայլ ու ցավագար աչքերով։

— Այո,— լռությունից հետո խոսեց Վոլանդը,— նրան լավ են մշակել։— Հրամայեց Կորովևին.— Ասպետ, այս մարդուն մի բան տուր, թող խմի։

Մարգարիտան դողդողուն ձայնով համոզում էր վարպետին.

— Խմիր, խմիր։ Վախենու՞մ ես։ Ոչ, ոչ, հավատա ինձ, որ քեզ կօգնեն։

Հիվանդն առավ բաժակն ու խմեց պարունակությունը, բայց ձեռքը ցնցվեց, ու դատարկ բաժակը փշրվեց նրա ոտքերի տակ։

— Զարը խափանվե՜ց։ Զարը խափանվե՜ց,— շշնջաց Կորովևը Մարգարիտային,— տեսեք, նա արդեն ուշքի է գալիս։

Իսկապես, հիվանդի հայացքն արդեն այնքան վայրի ու անհանգիստ չէր։

— Բայց դո՞ւ ես, Մարգո,— հարցրեց լուսնեկ հյուրը։

— Մի կասկածիր, ես եմ,— պատասխանեց Մարգարիտան։

— Մի հատ էլ,— հրամայեց Վոլանդը։

Այն բանից հետո, երբ վարպետը կուլ տվեց երկրորդ բաժակը, նրա աչքերը կենդանացան ու իմաստալից դարձան։

— Այ, սա ուրիշ բան էր,— աչքերը կկոցելով, ասաց Վոլանդը,— հիմա խոսենք։ Ո՞վ եք դուք։

— Ես ոչ ոք եմ հիմա,— պատասխանեց վարպետը, և ժպիտը ծռեց նրա բերանը։

— Հիմա որտեղի՞ց եկաք։

— Հիվանդանոցից։ Ես հոգեկան հիվանդ եմ,— պատասխանեց եկվորը։

Մարգարիտան չդիմացավ այս բառերին ու կրկին լաց եղավ։ Հետո, աչքերը սրբելով, բացականչեց.

— Սարսափելի՜ բառեր։ Սարսափելի՜ բառեր։ Մեսսիր, նա վարպետ է, ես ձեզ նախազգուշացնում եմ։ Բուժեք նրան, նա արժե՛։

— Դուք գիտե՞ք, թե հիմա ում հետ եք խոսում,— հարցրեց Վոլանդը եկածին,— ու՛մ մոտ եք գտնվում։

— Գիտեմ,— պատասխանեց վարպետը,— գժանոցի իմ հարևանն այն տղան էր՝ Իվան Անապաստանը։ Ինձ պատմել է ձեր մասին։

— Ինչպես չէ, ինչպես չէ,— պատասխանեց Վոլանդը,— այդ երիտասարդի հետ հանդիպելու հաճույքն ունեցել եմ Պատրիարքական լճի մոտ։ Նա քիչ էր մնում ինձ խելագարեցներ, ապացուցելով, որ ես չկամ։ Բայց դուք հո հավատո՞ւմ եք, որ սա իսկապես ես եմ։

— Ստիպված եմ հավատալ,— ասաց եկվորը,— սակայն ինչ խոսք, շատ ավելի հանգիստ կլիներ ձեզ ընդունել որպես հալյուցինացիայի հետևանք։ Ներեցեք ինձ,— սթափվելով, ավելացրեց վարպետը։

— Է, ինչ արած, եթե ավելի հանգիստ կլինի՝ այդպես համարեք,— քաղաքավարի պատասխանեց Վոլանդը։

— Ոչ, ոչ,— վախեցած ասում էր Մարգարիտան ու ցնցում վարպետի ուսը,— ուշքի՛ եկ։ Քո դիմաց իսկապես նա է։

Կատուն այստեղ էլ մեջ ընկավ։

— Իսկ ես իսկապես հալյուցինացիայի եմ նման։ Ուշադրություն դարձրեք կիսադեմիս՝ լուսնի լույսի տակ, —կատուն մըտավ լուսնի սյան մեջ և էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց նրան խնդրեցին լռել, և նա պատասխանելով.— Լավ, լավ, պատրաստ եմ լռել։ Ես լուռ հալյուցինացիա կլինեմ,— լռեց։

— Ասացեք, իսկ ինչո՞ւ Մարգարիտան ձեզ վարպետ է անվանում,— հարցրեց Վոլանդը։

Նա քթի տակ ծիծաղեց ու ասաց.

— Դա Ներսէի Թուլություն է։ Նա չափազանց բարձր կարծիքի է այն վեպի մասին, որը ես եմ գրել։

— Ինչի՞ մասին է վեպը։

— Վեպը Պոնտացի Պիղատոսի մասին է։

Այստեղ դարձյալ ճոճվեցին ու թրթռացին մոմերի լեզվակները, սեղանի վրա զնգզնգաց ամանեղենը, Վոլանդը որոտաձայն ծիծաղեց, բայց ոչ ոքի չվախեցրեց ու չզարմացրեց այդ ծիծաղով։ Բեգեմոտը չգիտես ինչու ծափահարել սկսեց։

— Ինչի մասի՞ն, ինչի մասի՞ն։ Իմ մասի՞ն,— խոսեց Վոլանդը՝ ծիծաղը դադարեցնելով։— Ու հիմա՞։ Ցնցո՞ղ բան է։ Եվ դուք չէիք կարող ուրիշ թեմա՞ գտնել։ Տվեք, նայեմ,— ափը վեր՝ ձեռքը պարզեց Վոլանդը։

— Ցավոք, դա չեմ կարող անել,— պատասխանեց վարպետը,— որովհետև վառարանն եմ գցել ու այրել։

— Ներեցեք, չեմ հավատում,— պատասխանեց Վոլանդը,— չի կարող պատահել։ Ձեռագրերը չեն վառվում։— Նա դարձավ Բեգեմոտին ու ասաց.— Բեգեմոտ, հապա ինձ տուր վեպը։

Կատուն վայրկենապես վեր թռավ աթոռից, ու բոլորը տեսան, որ նա նստած էր ձեռագրերի հաստ կապոցի վրա։ Վրայի օրինակը կատուն խոնարհվելով տվեց Վոլանդին։ Մարգարիտան դողդողաց ու բղավեց՝ կրկին արտասվելով հուզմունքից.

— Ահա՛ ձեռագրերը։ Ահա՛։

Նա նետվեց դեպի Վոլանդը և զմայլված բացականչեց.

— Ամենազո՛ր է, ամենազո՛ր։

Վոլանդը ձեռքն առավ մատուցված օրինակը, շուռ տվեց, մի կողմ դրեց և լուռ անժպիտ հայացքը հառեց վարպետի վրա։ Բայց վերջինս հայտնի չէ, թե ինչու, անհանգիստ ու տրտում վիճակի մեջ ընկավ, աթոռից ելավ, մատները կոտրատեց ու, դիմելով հեռավոր լուսնին, սկսեց մրմնջալ, ցնցվելով.

— Լուսնյակ գիշերով էլ դադար չունեմ, ինչի՞ համար ինձ անհանգստացրեցիք։ Ո՜վ աստվածներ, աստվածներ...

Մարգարիտան կառչեց հիվանդանոցային խալաթից, փարվեց նրան ու ինքը ևս, տրտմագին ու արտասվախառը, սկսեց մրմնջալ.

— Տեր աստված, դեղերն ինչու՞ չեն օգնում քեզ։

— Ոչինչ, ոչինչ, ոչինչ,— շշնջում էր Կորովևը՝ պտույտ տալով վարպետի շուրջը,— ոչինչ, ոչինչ.. Մի բաժակ ևս, ես էլ կմիանամ ձեզ։

Ու աչքով արեց բաժակը, փայլատակեց լուսնի լույսի տակ,

ու օդնից այդ բաժակը։ Վարպետին իր տեղը նստեցրին, և հիվանդի դեմքը հանգիստ արտահայտություն ստացավ։

— Ըհը, հիմա ամեն ինչ պարզ է,— ասաց Վոլանդը և երկար մատով թխկթխկացրեց ձեռագրին։

— Միանգամայն պարզ է,— հաստատեց կատուն, մոռանալով լուռ հալյուցինացիա դառնալու իր խոստումը,— այս ստեղծագործության գլխավոր գիծը հիմա ինձ համար պարզ է ծայրեծայր։ Ի՞նչ ես ասում, Ազազելլո,— դիմեց նա լուռ Ազազելլոյին։

— Ես ասում եմ,— խնթխնթաց նա,— որ լավ կլիներ քեզ ջրախեղդ անեինք։

— Գթասիրտ եղիր, Ազազելլո,— նրան պատասխանեց կատուն,— և իմ տիրակալին մի հանգեցրու այդ մտքին։ Հավատա ինձ, որ ամեն գիշեր կհայտնվեի ճիշտ նույնպիսի լուսնային հանդերձով, ինչ և խեղճ վարպետը, ու գլխով կանեի քեզ, կկանչեի իմ ետևից։ Ինչքա՜ն վատ կզգայիր, օ՜, Ազազելլո։

— Դե, Մարգարիտա,— կրկին խոսակցության մեջ մտավ Վոլանդը,— ասացեք ամեն ինչ, ձեզ ի՞նչ է պետք։

Մարգարիտայի աչքերը փայլատակեցին, և նա աղերսող հայացքը դարձրեց Վոլանդին.

— Թույլ կտա՞ք խորհրդակցեմ նրա հետ։

Վոլանդը գլխով արեց, և Մարգարիտան, հակվելով վարպետի ականջին, ինչ-որ բաներ շշնջաց։ Լսվեց, թե ինչպես վարպետը պատասխանեց նրան.

— Չէ, ուշ է։ Այլևս ոչինչ չեմ ուզում կյանքում։ Բացի քեզ տեսնելուց։ Բայց նորից քեզ խորհուրդ եմ տալիս՝ թող ինձ։ Դու կկործանվես ինձ հետ։

— Ոչ, չեմ թողնի,— պատասխանեց Մարգարիտան ու դիմեց Վոլանդին.— Խնդրում եմ մեզ կրկին վերադարձնել Արբատի նրբանցքի նկուղը, և որպեսզի լամպը վառվի, և որպեսզի ամեն ինչ լինի, ինչպես եղել է։

Այստեղ վարպետը ծիծաղեց և, գրկելով Մարգարիտայի՝ վաղուց արձակված գանգուրներով գլուխը, ասաց.

— Ախ, մի լսեք խեղճ կնոջը, մեսսիր։ Այդ նկուղում վաղուց արդեն ուրիշ մարդ է ապրում, և ընդհանրապես չի լինում այնպես, որ ամեն ինչ լինի այնպես, ինչպես եղել է։ — Նա այտը դրեց իր ընկերուհու գլխին, գրկեց Մարգարիտային ու սկսեց մրմնջալ.— Խեղճ, խեղճ...

— Չի՞ լինում, ստում եք,— խոսեց Վոլանդը։— Դա ճշմարիտ է։ Բայց մենք կփորձենք։ Եվ ասաց.— Ազազե՛լլո։

Անմիջապես առաստաղից հատակին շրմփաց շշկլված ու խելացնորությանը մոտ մի քաղաքացի՝ մեկ տակ սպիտակեղենով, բայց, չգիտես ինչու, ճամպրուկը ձեռքին և կեպին գլխին։ Այդ մարդը սարսափից ցնցվում էր ու ծնկները ծալում։

— Մոգարի՞չ,— հարցրեց Ազազելլոն երկնքից ընկածին։

— Ալոիզի Մոգարիչ,— պատասխանեց սա՝ դողդողալով։

— Լատունսկու հոդվածն այս մարդու վեպի մասին կարդալուց հետո դու՞ք բողոք գրեցիք նրա վրա, որ անլեգալ գրականություն է պահում իր մոտ,— հարցրեց Ազազելլոն։

Նորահայտ քաղաքացին կապտեց, և զղջման արցունքներ թափվեցին։

— Դուք ուզում էիք նրա սենյակնե՞րը տեղափոխվել,—որքան հնարավոր է ավելի սրտալի հարցրեց Ազազելլոն։

Կատաղած կատվի ֆշշոց լսվեց սենյակում, և Մարգարիտան, ճչալով.

— Իմացի՛ր ինչ վհուկի հետ գործ ունես, իմացի՛ր,— եղունգները խրեց Ալոիզի Մոգարիչի այտերի մեջ։

Իրարանցում առաջացավ։

— Ի՞նչ ես անում,— տառապագին բղավեց վարպետը,— Մարգո, մի խայտառակիր քեզ։

— Բողոքում եմ, դա խայտառակություն չէ,— բղավում էր կատուն։

Մարգարիտային ետ քաշեց Կորովևը։

— Ես լոգարան եմ սարքել, — ատամներն իրար զարկելով, բղավում էր արյունաշաղախ Մոգարիչը և սարսափից ինչ-որ անհեթեթություններ դուրս տալիս,— մենակ սպիտակեցնելը... արջասպը...

— Հը, շատ լավ է, որ լոգարան է սարքել,— հավանություն տալով ասաց Ազազելլոն,— նրան հարկավոր է լոգանքներ ընդունել,— ու բղավեց.— Չքվի՛ր։

Այդ ժամանակ Մոգարիչը շրջվեց գլխիվայր և Վոլանդի ննջասենյակի բաց լուսամուտից դուրս թռավ։

Վարպետը չռեց աչքերը՝ շշնջալով.

— Բայց սա Իվանի պատմածից ավելի թույն բան էր կարծես,— կատարելապես ցնցված, նա շուրջը նայեց և վերջապես ասաց կատվին.— Ներեցեք... դու... դուք... — նա շփոթվեց,

չիմանալով ինչպես դիմել կատվին՝ «դու»-ով, թե՝ «դուք»-ով, — դուք այն նույն կատու՞ն եք, որը տրամվայ էր նստել։

— Ես եմ.— հաստատեց շոյված կատուն ու ավելացրեց.— Հաճելի է լսել, որ այդպես քաղաքավարի եք դիմում կատվին։ Սովորաբար, չգիտես ինչու, կատուներին «դու» են ասում, չնայած և ոչ մի կատու ոչ մեկի հետ բրուդերշաֆտ չի խմել։

— Չգիտես ինչու, ինձ թվում է, որ դուք այնքան էլ կատու չեք,— անվճռական պատասխանեց վարպետը,— միևնույն է, հիվանդանոցում կսկսեն ինձ փնտրել, —երկչոտ ավելացրեց նա՝ Վոլանդին դիմելով։

— Է՛, ինչու պետք է փնտրեն,— հանգստացրեց Կորովևը, ու նրա ձեռքերի մեջ ինչ-որ թղթեր ու գրքեր հայտնվեցին,—ձեր հիվանդության պատմությու՞նն է։

— Այո։

Կորովևը հիվանդության պատմությունը շպրտեց բուխարու մեջ։

— Փաստաթուղթ չկա, մարդն էլ չկա, — գոհացած ասաց Կորովևը— իսկ սա ձեր իրավունքատիրոջ տնային գի՞րքն է։

— Այո-ո...

— Ով է գրանցված այստե՞ղ։ Ալոիզի Մոգա՞րիչը,— Կորովևը փչեց տնային գրքի էջին,— փու՜հ, և նա չկա, ու խնդրում եմ, նկատի առնել, չի էլ եղել։ Իսկ եթե իրավունքատերը զարմանա, ասացեք, որ Ալոիզիին երազում է տեսել։ Մոգա՛րիչ։ Ի՞նչ Մոգարիչ, ի՞նչ բան։ Ոչ մի Մոգարիչ էլ չի եղել։ —Քուղակապ գիրքն այստեղ գոլորշիացավ Կորովևի ձեռքերից։— Եվ ահա գիրքն արդեն իրավունքատիրոջ դարակի մեջ է։

— Դուք ճիշտ ասացիք,— խոսեց վարպետը՝ Կորովևի մաքուր աշխատանքից զարմացած, —որ եթե փաստաթուղթ չկա, մարդն էլ չկա։ Ահա հենց ես էլ չկամ, ես փաստաթուղթ չունեմ։

— Ներողություն եմ խնդրում,— բղավեց Կորովևը,— դա իրոք հալյուցինացիա էր, ահա ձեր փաստաթուղթը, — և Կորովևը վարպետին տվեց փաստաթուղթը։ Հետո նա տարավ-բերեց աչքերն ու քաղցրաձայն շշնջաց Մարգարիտային.— Ահա և ձեր ունեցվածքը, Մարգարիտա Նիկոլաևնա,— ու Մարգարիտային մեկնեց այրված եզրերով տետրակը, չորացած վարդը, լուսանկարը և առանձնահատուկ հոգածությամբ՝ խնայղրամարկղի

գրքույկը,— տասը հազար, ինչպես բարեհաճել եք մուծել, Մարգարիտա Նիկոլաևնա։ Ուրիշի ունեցածը մեզ պետք չէ։

— Ավելի շուտ իմ թաթերը կչորանան, քան թե կդիպչեմ ուրիշի ունեցածին,— փքվելով, պատասխանեց կատուն, պար գալով ճամպրուկի վրա, որպեսզի դրա մեջ սեղմի չարաբաստիկ վեպի բոլոր օրինակները։

— Ահավասիկ և ձեր փաստաթուղթը,— շարունակեց Կորովևը՝ Մարգարիտային մեկնելով փաստաթուղթը, ապա դառնալով Վոլանդին, հարգալիր զեկուցեց.— Վե՛րջ, մեսիր։

— Ոչ, վերջ չէ,— պատասխանեց Վոլանդը՝ աչքը կտրելով գլոբուսից։— Իմ թանկագին դոննա, ո՞ւր կհրամայեք թողնել ձեր շքախումբը։ Անձամբ ինձ նրանք պետք չեն։

Այստեղ բաց դռնից ներս վազեց Նատաշան, առաջվա պես մերկ, ձեռքերն իրար զարկելով ու բացականչեց.

— Երջանիկ եղեք, Մարգարիտա Նիկոլաևնա,— գլխով արեց վարպետին ու նորից դիմեց Մարգարիտային.— Չէ որ ես ամեն ինչ գիտեի, թե ուր եք գնում։

— Տնային աշխատողներն ամեն ինչ գիտեն,— նկատեց կատուն՝ բազմանշանակ բարձրացնելով թաթը,— սխալ բան է մտածել, թե նրանք կույր են։

— Դու ի՞նչ ես ուզում, Նատաշա,— հարցրեց Մարգարիտան,— վերադարձիր առանձնատուն։

— Հոգյակս, Մարգարիտա Նիկոլաևնա,— աղերսագին սկսեց Նատաշան ու ծունկ չոքեց,— խնդրեք նրան,— աչքերը թեքեց Վոլանդի կողմը,— որ ինձ վհուկ թողնի։ Էլ չեմ ուզում առանձնատուն գնալ։ Ոչ ինժեների հետ կամուսնանամ, ոչ տեխնիկի։ Երեկ պարահանդեսին պարոն Ժակն ինձ առաջարկություն արեց։ —Նատաշան բաց արեց սեղմած բռունցքն ու ինչ-որ ոսկեդրամներ ցույց տվեց։

Մարգարիտան հարցական հայացքն ուղղեց Վոլանդին։ Վերջինս գլխով արեց։ Այդ ժամանակ Նատաշան ընկավ Մարգարիտայի վզով, շրխկոցով համբուրեց ու, հաղթական ճիչ արձակելով, պատուհանից դուրս թռավ։

Նատաշայի տեղում հայտնվեց Նիկոլայ Իվանովիչը։ Իր նախկին մարդկային կերպարանքն էր ստացել, բայց սաստիկ մռայլ էր, թերևս զայրացած նույնիսկ։

— Ահա թե ում բաց կթողնեմ առանձնահատուկ հաճույքով,— ասաց Վոլանդը, նողկանքով նայելով Նիկոլայ Իվանովիչին,

—առանձնահատուկ հաճույքով, այնքան որ ավելորդ է նա այստեղ։

— Շատ եմ խնդրում ինձ տեղեկանք տալ,— ապուշ կտրած շուրջը նայելով, բայց մեծ համառությամբ ասաց Նիկոլայ Իվանովիչը,— այն մասին, թե որտեղ եմ անցկացրել նախորդ գիշերը։

— Ի՞նչ նպատակով,— խստորեն հարցրեց կատուն։

— Միլիցիա և տիկնոջս ներկայացնելու նպատակով,— հաստատ ասաց Նիկոլայ Իվանովիչը։

— Սովորաբար մենք տեղեկանք չենք տալիս,— պատասխանեց կատուն, խոժոռվելով,— բայց ձեզ համար, ինչ արած, բացառություն կանենք։

Ու չէր հասցրել Նիկոլայ Իվանովիչը ուշքը տեղ բերել, երբ տկլոր Գելլան արդեն նստած էր գրամեքենայի առաջ, իսկ կատուն թելադրում էր.

— Սրանով հաստատում եմ, որ սույնը ներկայացնող Նիկոլայ Իվանովիչը հիշյալ գիշերն անց է կացրել սատանայի պարահանդեսում, ուր բերված էր որպես փոխադրամիջոց... Գելլա, փակագիծ դիր։ Փակագծի մեջ գրիր «կրտած խոզ»։ Ստորագրությունը՝ Բեգեմոտ։

— Իսկ ամսաթի՞վը.— ծղրտաց Նիկոլայ Իվանովիչը։

— Ամսաթվեր չենք դնում, ամսաթվով թուղթն անօրինական կդառնա,— պատասխանեց կատուն, թափահարեց թուղթը, ինչ-որ տեղից կնիք գտավ, բոլոր կանոնների համաձայն փչեց վրան, թղթի վրա դաջեց «վճարված է» բառը և թուղթը հանձնեց Նիկոլայ Իվանովիչին։ Դրանից հետո Նիկոլայ Իվանովիչն անհետ չքացավ, ու նրա տեղն անսպասելի մի ուրիշ մարդ հայտնվեց։

— Այս մե՞կն ով է,— խորշանքով հարցրեց Վոլանդը, ձեռքով պաշտպանվելով մոմերի լույսից։

Վարենուխան կախեց գլուխը, հոգոց հանեց ու կամացուկ ասաց.

— Թողեք ետ գնամ։ Չեմ կարող վամպիր լինել։ Չէ որ այն ժամանակ Գելլայի հետ քիչ էր մնացել Ռիմսկուն մահու դուռը հասցնեի։ Բայց ես արնախում չեմ։ Բաց թողեք։

— Սա՞ ինչ զառանցանք էր,— դեմքը կնճռոտելով, հարցրեց Վոլանդը։— Ի՞նչ Ռիմսկի, ի՞նչ բան։ Սա՞ ինչ ապուշություն էր։

— Բարեհաճեցեք չանհանգստանալ, մեսիր,— պատասխանեց Ազազելլոն և դիմեց Վարենուխային։ —Հեռախոսով բռնու-

թյուն անել պետք չէ․ Համախոսով սուտ պետք չէ՝ Հասկանալի՞ է։ Այլևս դրանով չե՞ք զբաղվի։

Ուրախությունից ամեն բան խառնվեց Վարենուխայի գլխում, դեմքը փայլեց, ու նա, չիմանալով, թե ինչ է ասում, մրթմրթաց․

— Ամենակարող աստ... այսինքն ուզում էի ասել, ձերդ գե․․ հենց հիմա ճաշից հետո...— Վարենուխան ձեռքերը սեղմում էր կրծքին, պաղատագին Ազազելլոյին էր նայում․

— Լա՛վ, տուն գնա, — պատասխանեց վերջինս, ու Վարենուխան հալվեց․

— Հիմա բոլորդ մենակ թողեք ինձ նրանց հետ,— հրամայեց Վոլանդը, մատնացույց անելով վարպետին ու Մարգարիտային․

Վոլանդի հրամանը վայրկենապես կատարվեց․ Որոշ լռությունից հետո Վոլանդը դիմեց վարպետին․

— Այսպես, ուրեմն, Արբատի նկու՞ղը․ Իսկ ո՞վ պետք է գրի․ Իսկ իղձե՞րը, ոգեշնչու՞մը․

— Ես այլևս իղձեր չունեմ, ոգեշնչում նույնպես չունեմ,— պատասխանեց վարպետը,— չորսբոլորս ոչինչ չի հետաքրքրում ինձ ․նրանից բացի,— նա ձեռքը կրկին դրեց Մարգարիտայի գլխին, —ինձ կոտրեցին, տխուր է, և ես ուզում եմ նկուղ գնալ․

— Իսկ ձեր վե՞պը, Պիղատո՞սը․

— Այդ վեպն ինձ համար ատելի է,— պատասխանեց վարպետը,— շատ բան կրեցի դրա պատճառով․

— Աղաչում եմ քեզ,— լալագին խնդրեց Մարգարիտան,— այդպես մի խոսիր․ Ինչի՞ համար ես ինձ այդպես տանջում․ Չէ՞ որ գիտես, որ ամբողջ կյանքս քո այդ գործի մեջ եմ դրել,— Մարգարիտան, Վոլանդին դիմելով, ավելացրեց․— Մի լսեք նրան, մեսսիր, նա շատ է տանջվել․

— Բայց չէ՞ որ պետք է ինչ-որ բան նկարագրել,— խոսում էր Վոլանդը,— եթե դուք սպառել եք այդ կուսակալին, է՛, սկսեք նկարագրել թեկուզ այդ Ալոիզիին.

Վարպետը ժպտաց․

— Լապշյոննիկովան դա չի տպագրի, դրանից բացի, հետաքրքիր էլ չէ․

— Իսկ ինչո՞վ պիտի ապրեք․ Չէ որ ստիպված կլինենք թշվառ գոյություն քարշ տալ․

— Սիրով, սիրով,— պատասխանեց վարպետը, իր կողմը

քաշեց Մարգարիտային, գրկեց ուսերն ու ավելացրեց.— Նա թեկուզ կգա, կհեռանա ինձնից...

— Չեմ կարծում,— ատամների արանքից ասաց Վոլանդը և շարունակեց.— Ճիշտ այսպես, Պոնտացի Պիղատոսի պատմությունը հորինած մարդը գնում է նկուղ, այնտեղ, լամպի մոտ տեղավորվելու և թշվառ գոյություն քարշ տալու մտադրությա՞մբ։

Մարգարիտան պոկվեց վարպետից ու խոսեց խիստ բորբոքված.

— Այն ամենն, ինչ կարող էի, արեցի, ու նրա ականջին ամենագայթակղեցուցիչ բանը շշնջացի։ Իսկ նա հրաժարվեց դրանից։

— Այն, ինչ շշնջացիք, գիտեմ,— առարկեց Վոլանդը,— բայց դա ամենագայթակղեցուցիչը չէ։ Իսկ ձեզ կասեմ,— ժպտալով՝ դիմեց նա վարպետին, —որ ձեր վեպը դեռ անակնկալներ է բերելու ձեր գլխին։

— Դա խիստ տխրալի է,— պատասխանեց վարպետը։

— Ոչ, ոչ, տխրալի չէ,— ասաց Վոլանդը,— սարսափելի ոչինչ այլևս չի լինի։ Դե-հ, Մարգարիտա Նիկոլաևնա, ամեն ինչ արված է։ Որևէ պահանջ ունե՞ք ինձնից։

— Ինչ եք ասում, օ՜, ինչ եք ասում, մեսսի՜ր։

— Ուրեմն, սա վերցրեք ինձնից ձեզ հիշատակ,— ասաց Վոլանդը և բարձի տակից ադամանդներով ծածկված ոսկյա ոչ մեծ մի պայտ հանեց։

— Ոչ, ոչ, ոչ, ինչի՞ համար։

— Դուք ուզում եք ինձ հետ վիճե՞լ,— ժպտալով հարցրեց Վոլանդը։

Քանի որ թիկնոցը գրպան չուներ, Մարգարիտան պայտը փաթաթեց անձեռոցիկով ու քարկապ գցեց։ Այստեղ մի բան զարմացրեց նրան։ Նայեց պատուհանին, ուր լուսինն էր շողում, և ասաց.

— Ես մի բան չեմ հասկանում... Սա ի՞նչ է, շարունակ կեսգիշեր է ու կեսգիշեր, բայց չէ՞ որ վաղուց առավոտ պիտի լիներ։

— Հաճելի բան է տոնական գիշերը մի քիչ էլ երկարացնելը,— պատասխանեց Վոլանդը։— Դե, երջանկություն եմ ցանկանում

Մարգարիտան աղոթելու պես ձեռքերը պարզեց դեպի Վոլանդը, բայց չհամարձակվեց մոտենալ և կամացուկ բացականչեց.

— Մնաք բարո՛վ։ Մնաք բարո՛վ։

— Ցտեսություն,— ասաց Վոլանդը։

Եվ Մարգարիտան իր սև թիկնոցով, վարպետը՝ հիվանդանոցային խալաթով ելան ակնագործի այրու բնակարանի միջանցքը, ուր մոմ էր վառվում և նրանց էր սպասում Վոլանդի շքախումբը։ Երբ ելնում էին միջանցքից, Գելլան տանում էր ճամպրուկը, որի մեջ վեպն էր և Մարգարիտա Նիկոլաևնայի թեթև ունեցվածքը, իսկ կատուն օգնում էր Գելլային։ Բնակարանի դռան մոտ Կորովևը գլուխ խոնարհեց ու անհետացավ, իսկ մյուսները դուրս եկան՝ ճամփու դնելու աստիճանների վրա։ Սանդուղքը դատարկ էր։ Երբ անցնում էին երրորդ հարկի հարթակով, մի փափուկ բան զրնգաց, բայց ոչ ոք դրա վրա ուշադրություն չդարձրեց։ Վեցերորդ շքամուտքի դռան մոտ Ազազելլոն փչեց վերև, և բակ դուրս գալուն պես, ուր դեռ կանգնած էր ուսինը, առմուտքի վրա տեսան քնած և, ըստ երևույթին, մեռելի պես քնած մի մարդու՝ սապոգներով ու կեպիով, ինչպես նաև մուտքի մոտ կանգնած, լապտերները հանգցրած մի սև մեքենա։ Առջևի ապակու միջից աղոտ կերպով երևում էր սերմնագռավի ուրվագիծը։

Արդեն պատրաստվում էին նստել, երբ Մարգարիտան հուսահատ ու ցածրաձայն բղավեց.

— Աստված իմ, պայտը կորցրի։

— Նստեք մեքենան,— ասաց Ազազելլոն,— և սպասեք ինձ։ Հիմա ետ կգամ, պարզեմ, թե բանն ինչ է։— Եվ շքամուտքից ներս մտավ։

Իսկ բանն ահա թե ինչ էր. ուղեկիցների հետ Մարգարիտայի և վարպետի դուրս գալուց որոշ ժամանակ առաջ, ակնագործի այրու բնակարանի տակի №48 բնակարանից սանդղահարթակ ելավ չորչորուկ մի կին՝ բիդոնն ու պայուսակը ձեռքին։ Դա հենց այն Աննուշկան էր, որն, ի դժբախտություն Բեռլիոզի, չորեքշաբթի օրը արևածաղկի ձեթը շրջել էր դռնակի մոտ։

Ոչ ոք չգիտեր, ասենք հավանորեն, երբեք էլ չի իմանա, թե Մոսկվայում ինչով էր զբաղվում այդ կինն ու ինչ միջոցներով էր գոյությունը պահպանում։ Նրա մասին սոսկ հայտնի էր, որ ամեն օր կամ բիդոնը, կամ պայուսակը, կամ էլ բիդոնն ու պայուսակը ձեռքին, նրան կարելի էր տեսնել կամ նավթի կրպակում, կամ շուկայում, կամ շենքի դարպասի մոտ, կամ աստիճանների

վրա, ավելի հաճախ՝ խոհանոցում այդ №48 բնակարանի, ուր և ապրում էր հիշյալ Աննուշկան։ Դրանից բացի և առավելապես հայտնի էր, որ ուր էլ գտնվեր կամ հայտնվեր, տեղնուտեղը կռիվ-կոտորոց կսկսվեր այդտեղ, նաև, որ «Ժանտախտ» մականունն ուներ նա։

Ժանտախտ-Աննուշկան, չգիտես ինչու, չափազանց վաղ էր արթնանում, իսկ այսօր ինչ-որ բան ոտքի հանեց նրան լուսամութով, սաանիրկուսն անց կլիներ։ Բանալին պտտվեց դռան մեջ, Աննուշկայի քիթը դուրս ցցվեց, ապա ինքն էլ դուրս եկավ ու արդեն պատրաստվում էր ինչ-որ տեղ գնալ, երբ վերևի հարթակում շրխկաց դուռը, ինչ-որ մեկն աստիճաններով ցած գլորվեց ու ընկավ Աննուշկայի վրա, մի կողմ շպրտեց նրան, այնպես որ Աննուշկայի ծոծրակը պատին կպավ։

— Էս ո՞ր գրողի ծոցն ես վռազում ոտաշորով,— դժդժաց Աննուշկան՝ ծոծրակը բռնելով։ Մեկ տակ սպիտակեղենով, ճամպրուկը ձեռքին ու կեպին գլխին մարդը, աչքերը՝ փակ, քնած ու անսովոր ձայնով պատասխանեց Աննուշկային.

— Տաքացուցի՜չ։ Արջա՜սպ։ Մենակ սպիտակեցնե՜լն ինչքան նստեց,— ու, լաց լինելով, թնդաց.— Դո՜ւրս կորի։— Այստեղ նա նետվեց ոչ թե աստիճաններով դեպի ցած, այլ ընդհակառակն՝ ետ, վեր, այնտեղ, ուր տնտեսագետը ոտքով կոտրել էր լուսամուտի ապակին, և, ոտքերն առաջ պարզած, այդ լուսամուտից դուրս թռավ։ Աննուշկան նույնիսկ ծոծրակի ցավը մոռացավ, ճչաց ու ինքն էլ նետվեց դեպի լուսամուտը։ Նա փորով պառկեց հարթակին ու գլուխը դուրս հանեց, բակի լապտերով լուսավորված ասֆալտի վրա մահացու ջախջախված ճամպրուկով մարդուն տեսնելու հույսով։ Սակայն բակի ասֆալտի վրա ոչնչից ոչինչ չկար։

Մնում էր ենթադրել, որ կիսաքուն ու տարօրինակ անձնավորությունը թռչունի պես թռել է շենքից՝ ետևից ոչ մի հետք չթողնելով։ Աննուշկան խաչակնքեց ու մտածեց. «Հա՜, ճիշտ որ համար հիսուն բնակարան։ Մարդիկ զուր տեղը չեն ասում։ Այ քեզ բնակարա՜ն»։

Չէր հասցրել մտածել, երբ վերևի դուռը նորից շրխկաց, ու երկրորդ մեկն սկսեց ցած վազել։ Աննուշկան պատին սեղմվեց ու տեսավ, թե ինչպես բավական պատկառելի, մորուքով, բայց, ինչպես թվաց Աննուշկային, փոքր-ինչ խոճկորային դեմքով մի քաղաքացի, կրնկկին տվեց իր մոտով և, առաջինի նման, շեն-

քից հեռացավ լուսամուտով, նույնպես դարձյալ առանց աս-ֆալտի վրա ցայտքը տալու լինելու մասնակցությանը։ Աննուշկան արդեն մոռացել էր թե, արշավի նպատակը և մնաց աստիճանների վրա, խաչանիշներով, ախուվախ անելով և ինքն իր հետ խոսելով։

Երրորդն՝ անմորուք, սափրված կլոր դեմքով, տոլստովկան հագին, կարճ ժամանակ անց դուրս պրծավ վերևից և ճիշտ նույնպես լուսամուտից դուրս ճախրեց։

Ի պատիվ Աննուշկայի պետք է ասել, որ նա հետաքրքրասեր էր ու որոշեց էլի սպասել, տեսնելու, թե նոր հրաշքներ չե՞ն լինի։ Վերևի դուռը նորից բացեցին, և հիմա վերևից մի ամբողջ խումբ սկսեց իջնել, բայց ոչ վազքով, այլ սովորական, ինչպես բոլոր մարդիկ։ Աննուշկան լուսամուտից ետ վազեց, իջավ իր դռան մոտ, շտապ-շտապ բացեց, պահվեց դռան տակ, և թողած ճեղքի մեջ պսպղաց հետաքրքրությունից բորբոքված նրա աչքը։

Ոչ այն է՝ հիվանդ, ոչ այն է՝ առողջ, այլ տարօրինակ, գու-նատ, մորուքն աճած, սև գդակը գլխին, ինչ-որ խալաթ հագած մեկն անհաստատ քայլերով ցած էր իջնում։ Նրան զգուշորեն թևանցուկ արած տանում էր մի տիկին, որն, ինչպես թվաց Աննուշկային կիսամթի մեջ, սև փարաջա էր հագել։ Կինը կամ ոտաբոբիկ էր, կամ մի տեսակ թափանցիկ, ըստ երևույթին, արտասահմանյան, ծվեն-ծվեն եղած կոշիկներ էր հագել։ Թյո՜, ի՞նչ կոշիկ։ Ախր այդ կինը տկլոր էր։ Հա՛, էլի, փարաջան հագել էր լրիվ տկլոր մարմնի վրա։ «Այ քեզ բնակարա՜ն»։ Աննուշկայի հոգին ցնծում էր կանխավայելումից, թե վաղն ինչեր է պատմելու հարևաններին։

Արտասովոր հագնված կնոջ ետևից գալիս էր լրիվ տկլոր մի կին, ճամպրուկը ձեռքին, իսկ ճամպրուկի մոտով ցատկոտում էր վիթխարի սև կատուն։ Քիչ էր մնում Աննուշկան, աչքերը տրորելով, բարձրաձայն ճչար։

Վերջից իջնում էր կարճահասակ, կաղին տվող, աչքը շիլ մի օտարերկրացի, առանց պիջակի, ֆրակի սպիտակ ժիլետով ու փողկապով։ Ամբողջ այդ խումբը Աննուշկայի մոտով ցած իջավ։ Այստեղ ինչ-որ բան թրխկաց հատակին։ Լսելով, որ ոտնաձայնը մարում է, Աննուշկան օձի պես դուրս սողաց դռան տակից, բիդոնը դեմ արեց պատին, պառկեց հատակին ու սկսեց փըն-տըրտել։ Նրա ձեռքում հայտնվեց անձեռոցիկի մեջ փաթաթ-

ված մի ծանր բան։ Աննուշկայի աչքերը ճակատը թռան, երբ բաց արեց կապը։ Աննուշկան ուղիղ աչքերին մոտեցրեց զարդը, և այդ աչքերը գայլային կրակով բռնվեցին։ Աննուշկայի գլխի մեջ հոդմապտույտ առաջացավ. «Ոչ բա՜ն եմ տեսել։ Ոչ բա՜ն եմ լսել... Ազգականիս մո՞տ։ Թե՞ կտոր-կտոր սղոցեմ... Քարերը հո կարելի է փորել-հանել... Ու հատ-հատ. մեկը՝ Պետրովկա, մյուսը՝ Սմոլենսկի... Ու ոչ բա՜ն եմ տեսել, ոչ բա՜ն եմ լսել»։

Աննուշկան գտածը ծոցը դրեց, բիդոնն առավ և ուզում էր ետ սողոսկել բնակարան, հետաձգելով քաղաք կատարելիք ուղևորությունը, երբ նրա դիմաց, սատանան գիտե թե որտեղից, բսնեց սպիտակ լանջով անպիջակը և կամացուկ շշնջաց.

— Պայտն ու անձեռոցիկը տուր։

— Ի՞նչ պայտ, ի՞նչ անձեռոցիկ,— հարցրեց Աննուշկան, շատ վարպետորեն կեղծելով,— անձեռոցիկ-բան չեմ տեսել։ Քաղաքացի, ինչ է, հո խմա՞ծ չեք։

Ծերմակակուրծքը ավտոբուսի բռնատեղերի պես ամուր և նույնքան սառը մատներով, այլևս ոչինչ չասելով, Աննուշկայի կոկորդը սեղմեց այնպես, որ բացարձակապես դադարեցրեց օդի նվազագույն մուտքը դեպի կուրծք։ Աննուշկայի ձեռքից բիդոնն ընկավ հատակին։ Որոշ ժամանակ Աննուշկային առանց օդի պահելով, պիջակազուրկ օտարերկրացին մատները հեռացրեց նրա վզից։ Օդ կուլ տալով, Աննուշկան ժպտաց։

— Ահ, պայտիկը,— խոսեց նա,— էս րոպեիս։ Ուրեմն, սա ձե՞ր պայտիկն էր։ Ես էլ տեսնեմ, ընկած էր, փաթաթած... Դիտմամբ վերցրեցի, որ ուրիշը չտաներ, թե չէ հետո էլ ու՜ր։

Պայտիկն ու անձեռոցիկն ստանալուց հետո օտարերկրացին սկսեց ոտքերը քստքստացնելով գլուխ տալ Աննուշկային, ամուր սեղմելով ձեռքը և ջերմորեն շնորհակալություն հայտնելով հետևյալ արտահայտություններով, արտասահմանյան սաստիկ առոգանությամբ.

— Խորապես երախտապարտ եմ ձեզ, տիկին։ Այս պայտիկն ինձ համար թանկ է որպես հիշատակ։ Եվ թույլ տվեք գտնելու և պահելու համար երկու հարյուր ռուբլի հանձնել ձեզ։— Եվ նա իսկույն ժիլետի գրպանից հանեց փողն ու տվեց Աննուշկային։

Վերջինս, այլայլված ժպտալով, ծղրտում էր սոսկ.

— Ա՛խ, հոգաչա՜փ շնորհակալ եմ։ Մերսի՜։ Մերսի՜։

Առատաձեռն օտարերկրացին մի թափով սուրաց մի ամբողջ

մինչ սանդուղքը ցած, սակայն վերջնականապես անհետանալուց առաջ, ներքևից, բայց առանց առոգանության, բղավեց.

— Լսի՛ր, պառավ չաղու, եթե մյուս անգամ ուրիշի ապրանքը գտար. միփցիր հանձնիր, ծույլ չլինես

Սանդուղքի վրա այդ ամբողջ խրատանցումից գլխի մեջ զրնգոց ու շփոթ զգալով, Աննուշկան դեռ երկար ժամանակ, իներցիայով շարունակում էր ծղրտալ.

— Մերսի՛։ Մերսի՛։ Մերսի՛,— իսկ օտարերկրացին վաղուց արդեն չկար։

Մեքենան նույնպես չկար բակում։ Մարգարիտային վերադարձնելով Վոլանդի ընծան, Ազազելլոն հրաժեշտ տվեց նրան, հարցրեց, թե հարմա՞ր է նստել, իսկ Գելլան հնչեղ համբուրվեց Մարգարիտայի հետ, կատուն ձեռքը համբուրեց, համփու դնողները ձեռքերը թափահարելով մնաս բարով ասացին մեքենայի անկյունում անկենդան ու անշարժ ընկած վարպետին, ձեռքով արեցին սերմնագռավին, և իսկույն տարրալուծվեցին օդի մեջ՝ հարկ չհամարելով սանդուղքով բարձրանալու նեղությունը կրել։ Սերմնագռավը վառեց լույսերը և դարպասատակում մեռելի պես քնած մարդու կողքով դուրս եկավ դարպասից։ Ու սև, մեծ մեքենայի լույսերը կորան անքուն ու աղմկոտ Սադովայայի մյուս լույսերի մեջ։

Մեկ ժամ անց արբատյան նրբանցքներից մեկի փոքրիկ տան նկուղում, առաջին սենյակում, ուր ամեն ինչ այնպես էր, ինչպես անցյալ տարվա աշնանային սարսափելի գիշերից առաջ, թավշյա սփռոցով ծածկված սեղանի մոտ լուսամփոփով լամպի ներքո, որի կողքին հովտաշուշաններով ծաղկաման էր, նստել էր Մարգարիտան և կամացուկ լաց էր լինում կրած ցնցումներից ու երջանկությունից։ Կրակից խեղված տետրը բացված էր նրա առաջ, իսկ կողքին շարված էր անվթար տետրերի կիտուկը։ Տնակը լուռ էր։ Հարևան փոքրիկ սենյակում, բազմոցի վրա, հիվանդանոցային խալաթով ծածկված խորունկ քնի մեջ էր վարպետը։ Նրա համաչափ շնչառությունն անաղմուկ էր։

Կուշտ լաց լինելուց հետո Մարգարիտան անցավ անվթար տետրերին ու գտավ այն տեղը, որը վերընթեռնում էր Կրեմլի պատի տակ Ազազելլոյին հանդիպելուց առաջ։ Մարգարիտայի քունը չէր տանում։ Նա քնքշորեն շոյում էր ձեռագիրը, ինչպես սիրելի կատվին են շոյում, շուռումուռ էր տալիս ձեռքերի մեջ, չորս կողմից զննելով, մեկ կանգ էր առնում տիտղոսաթերթի

վրա, մեկ ավարտն էր բաց անում։ Հանկարծ մի սարսափելի միտք վրա տվեց, որ այս ամենը կախարդանք է, որ հիմա տետրերը կչքանան աչքի առջևից, որ ինքը կհայտնվի առանձնատան իր ննջասենյակում և որ արթնանալուց հետո ստիպված կլինի գնալ ու ջուրը նետվել։ Սակայն դա վերջին սարսափելի միտքն էր, կրած երկար տառապանքների արձագանքը։ Ոչ մի բան չչքացավ, ամենազոր Վոլանդն, իրոք, ամենազոր էր, ու որքան կամենար, թեկուզ մինչև այգաբաց, Մարգարիտան կարող էր թերթել տետրերը, զննել ու համբուրել, և վերընթերցել այս բառերը.

— Միջերկրական ծովից եկած խավարը ծածկեց կուսակալին ատելի քաղաքը... Այո, խավարը...

ԳԼՈՒԽ XXV

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԿՈՒՍԱԿԱԼԸ ՋԱՆՈՒՄ ՓՐԿԵԼ ՀՈՒԴԱ ԻՍԿԱՐԻՈՎՏԱՑՈՒՆ

Միջերկրական ծովից եկած խավարը ծածկեց կուսակալին ատելի քաղաքը։ Չքացան տաճարը Անտոնիոսի սարսափելի աշտարակին կապող կախովի կամուրջները, խորխորատ կախվեց երկնքից ու պարուրեց ձիարշավարանի պարսպի թևավոր աստվածներին, Հասմոնեի պալատն՝ իր հրակնատներով, շուկաները, քարվանսարաները, նրբանցքները, լճակները... Անհետացավ Երշալայիմը՝ մեծն քաղաքը, կարծես գոյություն չէր ունեցել երկրիս երեսին։ Ամենայն ինչ կլանեց խավարը, որ սարսափահար էր արել կենդանի ամեն բան Երշալայիմում ու դրա մերձակայքում։ Մի արտասովոր թուխպ եկավ ծովի կողմից, գարնանային նիսան ամսու տասնչորսի օրվա վերջին։

Թուխպն իր որովայնով արդեն ծանրացել էր Լերկ Գագաթին, ուր դահիճները մահապարտներին էին խողխողում հապշտապ, ապա ծանրացավ Երշալայիմի տաճարի վրա, տաճարի բլրից ծխահոսքերով ցած սահեց ու հեղեղեց Ստորին քաղաքը։ Թուխպը պատուհաններից խուժեց ներս և ծուռումուռ փողոցներից տները քշեց մարդկանց։ Նա չէր շտապում տալ իր հեղուկը և լույսն էր տալիս։ Ծխակոլոլ սև խյուսը կրակով պատռվելուն պես, անթափանց խավարի միջից վեր էր ճախրում տաճարի հսկա զանգվածը՝ թեփուկավոր իր շողշողուն ծածկով։ Սակայն հանգ-

չում էր վայրկենապես, ու տաճարը թաղվում էր խավար անդունդներում։ Մի քանի անգամ դուրս էր պրծնում անդունդից ու վերստին խորտակվում, և ամեն անգամ այդ խորտակումն աղեղի դղրդյունով էր ուղեկցվում։

Թրթռուն այլ շողարձակումներ անդունդներից դուրս էին մղում տաճարի հանդիպակաց արևմտյան բլրակի վրայի Հերովդես Մեծի պալատը, և սահմռկեցուցիչ, ոսկյա կույր արձանները սև երկինք էին սլրում, ձեռքերն ի վեր պարզած։ Բայց վերստին թաքնվում էր երկնային հուրը, և ամպրոպի ծանր հարվածները ոսկեղեն կուռքերին խավարի գիրկն էին արտաքսում։

Տեղատարափը հորդաց անսպասելիորեն, և այդժամ ամպրոպը մրրիկի փոխվեց։ Ճիշտ այնտեղ, ուր կեսօրին, այգու մարմարե նստարանի մոտ զրուցում էին կուսակալն ու քահանայապետը, թնդանոթազարկի տրաքոցով եղեգնի պես կոտրվեց կիպարիսը։ Ջրափոշու և կարկտի հետ միասին սյունաշար պատշգամբ լցվեցին պոկոտված վարդեր, մագնոլիայի տերևներ, մանր ճյուղեր ու ավազ։ Մրրիկը հոշոտում էր այգին։

Այդ ժամանակ սյունաշարի տակ միայն մի մարդ կար, և այդ մարդը կուսակալն էր։

Այժմ նա նստած չէր բազկաթոռին, այլ պառկած էր մահճին, ուտեստեղենով ու գինու սափորներով բեռնված ոչ մեծ սեղանի մոտ։ Մեկ այլ, դատարկ մահիճ սեղանի մյուս կողմում էր։ Կուսակալի ոտքերի մոտ կարմիր, ասես արյան լճակ էր տարածվել, ու սփռված էին ջարդված սափորի կտորները։ Ծառան, որ ամպրոպից առաջ սեղան էր գցել կուսակալի համար, չգիտես ինչու շշկլվել էր նրա հայացքից. իրար անցել, որ մի բանով չի գոհացրել, և կուսակալը, զայրանալով նրա վրա, սափորը խճապատ հատակին էր զարկել՝ ասելով.

— Մատուցելիս ինչու՞ չես նայում երեսիս։ Չլինի՞ բան-ման ես գողացել։

Աֆրիկացու սև դեմքը մոխրագույն դարձավ, աչքերի մեջ մահվան սարսափ գծագրվեց, նա սրսփաց ու քիչ էր մնացել երկրորդ սափորը ջարդեր, բայց կուսակալի զայրույթը, չգիտես ինչու, անցավ նույնքան արագ, որքան արագ և հայտնվել էր։ Աֆրիկացին նետվեց կտորտանքը հավաքելու և թափվածը սրբելու, բայց կուսակալը ձեռքը թափ տվեց, և աֆրիկացին անհետացավ։ Իսկ լճակը մնաց։

Հիմա, մրրիկի պահին, աֆրիկացին թաքնվել էր խորշի մոտ, ուր պյուխը թեքած սպիտակ մերկ կնոջ արձանն էր, վախենալով անժամանակ երևալ կուսակալի աչքին, միաժամանակ սարսափելով բաց թողնել պահը, երբ իրեն կարող է կանչել նա։

Ամպրոպի կիսախավարում, մահճակին պառկած կուսակալը ինքն էր գինի լցնում գավը, խմում երկար կումերով, մերթընդմերթ ձեռքը տանում էր հացին, մանրում և կուլ տալիս փոքրիկ կտորներով, մեկ-մեկ ոստրե էր ծծում, կիտրոն ծամում ու նորից խմում։

Եթե չլիներ ջրի շառաչը, եթե չլինեին ամպրոպի հարվածները, որոնք, թվում է, սպառնում էին ջնջխել պալատի տանիքը, եթե պատշգամբի աստիճանները մրճահարող կարկտի կտկտոցը չլիներ, կլսվեր, որ կուսակալն, ինքն իրեն, ինչ-որ բան է մըրմընջում։ Եվ եթե երկնային կրակի անկայուն ցոլցլումը մշտական լույսի վերածվեր, դիտողը կարող էր տեսնել, որ կուսակալի՝ վերջին անքնություններից ու գինուց բորբոքված աչքերն անհամբերություն են արտահայտում, որ կուսակալը ոչ միայն նայում է կարմիր լճակի մեջ ընկղմված երկու ճերմակ վարդերին, այլև դեմքը մշտապես շրջում է այգու կողմը, ջրափոշուն և ավազին ընդառաջ, որ նա սպասում է ինչ-որ մեկին, անհամբեր է սպասում։

Որոշ ժամանակ անցավ, կուսակալի աչքերի առաջ ջրի շղարշն սկսեց նոսրանալ։ Որքան էլ մոլեգնած էր մրրիկը, բայց թուլանում էր։ Ճյուղերն այլևս չէին ճարճատում ու չէին թափվում։ Ամպրոպի հարվածներն ու փայլատակումները սակավ դարձան։ Երշալայիմի վրա արդեն լողում էր ոչ թե սպիտակ բոլորքով մանուշակագույն ծածկոցը, այլ սովորական մոխրագույն վերջնապահ մի ամպ։ Ամպրոպը քշվում էր դեպի Մեռյալ ծով։

Հիմա արդեն կարելի էր առանձին-առանձին լսել թե անձրևի խշշոցը, թե ջրի շառաչը, որ թափվում էր ջրորդաններով և այն սանդուղքի աստիճաններով, որով ցերեկը կուսակալն էր գնում՝ հրապարակում դատավճիռը հայտարարելու։ Վերջապես կարկաչեց նաև մինչ այդ խլացված շատրվանը։ Լույսը շատանում էր։ Արևելք սուրացող մոխրագույն շղարշի մեջ կապույտ պատուհաններ երևացին։

Այստեղ հեռվից, արդեն բոլորովին թույլ անձրևի կաթկթոցի միջից կուսակալի ականջին հասան շեփորների կանչեր և

մի քանի հարյուր սմբակների կոփկոփյուն։ Դա լսելով, կուսակալը շարժվեց, և նրա դեմքը կենդանացավ։ Հեծելազորը վերադառնում էր Լերկ Լեռից. դառնալով ձայներից, անցնում էր հենց այն հրապարակով, ուր հայտարարվել էր դատավճիռը։

Վերջապես լսեց կուսակալը երկար սպասված ոտնաձայնը և քստքստոցը անմիջապես պատշգամբի առջև ընկած վերին հարթակ բերող սանդուղքի վրա։

Երկարացրեց վիզը, և նրա աչքերը փայլեցին՝ բերկրանք արտահայտելով։

Մարմարյա երկու առյուծների արանքում երևաց նախ կընգուղավոր մի գլուխ, ապա և ամբողջովին թրջված մի մարդ՝ մարմնին կպած թիկնոցով։ Նույն մարդն էր, որ դատավճռից առաջ փսփսում էր կուսակալի հետ պալատի մթնեցված սենյակում և որը մահապատժի ժամանակ նստած էր եռոտանուն՝ ճյուղը խաղացնելով։

Ջրափոսերի միջով կնգուղավոր մարդը հասավ այգու հարթակը, ոտք դրեց պատշգամբի խճապատ հատակին և, ձեռքը բարձրացնելով, բարձր դուրեկան ձայնով ասաց.

— Թող ողջ լինի կուսակալը և ուրախ։— Եկվորը լատիներեն էր խոսում։

— Աստվածնե՜ր,— բացականչեց Պիղատոսը,— դուք մինչև վերջին թելը թրջված եք։ Ի՞նչ մրրիկ էր։ Հը՞։ Խնդրում եմ անմիջապես ներս գնալ, իմ մոտ։ Շնորհ արեք, փոխվեք։

Եկվորը ետ գցեց կնգուղը՝ բացելով ամբողջովին թաց, ճակատին կպած մազերով գլուխը և, սափրած դեմքին քաղաքավարի ժպիտ գծագրելով, սկսեց հրաժարվել փոխվելուց, հավատացնելով, որ անձրևն իրեն ոչնչով չի կարող վնասել։

— Լսել չեմ ուզում,— պատասխանեց կուսակալը և ծափ զարկեց։ Դրանով կանչեց իրենից թաքնվող ծառաներին ու հրամայեց հոգալ եկվորի պետքերը, որից հետո անմիջապես տաք կերակուր մատուցել։ Մազերը չորացնելու, հագուստն ու կոշիկները փոխելու և ընդհանրապես իրեն կարգի բերելու համար կուսակալի մոտ եկած մարդուն շատ կարճ ժամանակ պետք եկավ, և շուտով նա հայտնվեց պատշգամբում չոր մույկերը ոտքերին, զինվորական չոր, բոսորագույն թիկնոցն ուսերին, մազերը սանրած։

Այդ ժամանակ արևը ետ եկավ Երշալայիմ և նախքան հեռանալն ու Միջերկրական ծովի մեջ թաղվելը, վերջին ճառա-

գայթնակն էր ուղարկում կուսակալին ատելի քաղաքին և ոսկե-զօծ պատշգամբի աստիճանները։ Շատրվանը լիովին կեն-դանացավ ու երգեց ձայնով մեկ, աղավնիները հավաքվեցին ավազի վրա, դունդունում էին, ցատկոտում կոտրատված ճյու-ղերի վրայով, ինչ-որ բաներ կտցահարում թաց ավազի վրա։ Կարմիր լճակը սրբված էր, կտորտանքը՝ հավաքված, սեղանի վրա գոլորշի էր արձակում միսը։

— Ես լսում եմ կուսակալի հրամանները,— ասաց Եկվորը, սեղանին մոտենալով։

— Բայց ոչինչ չեք լսի, մինչև չնստեք ու գինի չխմեք,— սիրալիր պատասխանեց կուսակալը և ցույց տվեց մյուս մահիճը։

Եկվորն ընկողմանեց, ծառան թանձր կարմիր գինի լցրեց նրա գավաթը։ Մյուս ծառան, զգուշորեն կռացած Պիղատոսի ուսի վրա, լցրեց կուսակալի գավաթը։ Դրանից հետո ձեռքի շարժումով նա հեռացրեց երկու ծառաներին։ Մինչ եկվորն ուտում ու խմում էր, Պիղատոսը, կում-կում գինի խմելով, կկոցած աչքերով ուշադիր իր հյուրին էր նայում։ Պիղատոսին ներկայացած մարդը միջին տարիքի էր, շատ հաճելի, կլոր ու մաքուր դեմքով։ Մազերը մի տեսակ անորոշ գույնի էին։ Հիմա, չորանալով, մազերի գույնը բացվում էր։ Եկվորի ազգությունը դժվար էր որոշել։ Հիմնականը, որ բնորոշ էր դեմքին, թերևս բարեհոգության արտահայտությունն էր, ինչ, ի դեպ, խախտում էին աչքերը, ավելի ճիշտ՝ ոչ թե աչքերը, այլ զրուցակցին նա-յելու նրա ձևը։ Եկվորն իր փոքրիկ աչքերը սովորաբար պահում էր կիսախուփ, փոքր-ինչ արտասովոր, ասես ուռած կոպերի տակ։ Այդ ժամանակ աչքերի ճեղքերից անչար խորամանկու-թյունն էր կայծկլտում։ Հարկ է ենթադրել, որ կուսակալի հյու-րը հակված էր հումորի։ Բայց ժամանակ առ ժամանակ, լիովին արտաքսելով կայծկլտուն այդ հումորը աչքերի ճեղքերից, կու-սակալի ներկայիս հյուրը կոպերը լայն բաց էր անում և իր զրուցակցին նայում հանկարծակի ու սևեռ, ասես զրուցակցի քթի վրայի աննկատելի ինչ-որ բիծ արագ զննելու մտումով։ Դա մի ակնթարթ էր տևում, որից հետո կոպերը կրկին իջնում էին, ճեղքերը նեղանում, ու դրանց մեջ սկսում էր պսպղալ բարեհոգությունն ու խորամանկ խելքը։

Եկվորը չհրաժարվեց և երկրորդ գավաթ գինուց, նկատելի

վայելումով մի քանի ումպ կլլեց, խաշած բանջարեղեն վերձեց, մի կտոր միս կերավ։

Կշտանալով, նա գովեց գինին.

— Գերազանց որթ է, կուսակալ, բայց սա «Ֆալերնո» չէ՞։

— «Ցեկուբա» է, երեսուն տարվա,— սիրալիր պատասխանեց կուսակալը։

Հյուրը ձեռքը դրեց սրտին, հրաժարվեց որևէ բան ուտելուց, ասաց, որ կուշտ է։ Այդ ժամանակ Պիղատոսը լցրեց իր գավաթը։ Հյուրը նույնն արեց։ Երկու ճաշողներն էլ իրենց գավաթներից մի քիչ գինի լցրեցին մսի մատուցարանի մեջ, և կուսակալը, գավաթը բարձրացնելով, բարձրաձայն արտասանեց.

— Մեր կեսարի, քո կենա՛ցը, կեսար՝ հռոմեացիների հայր, ամենաթանկագինն ու լավագույնը մարդկանցից։

Դրանից հետո խմեցին գինին, և աֆրիկացիները ուտեստեղենը տարան սեղանի վրայից, թողնելով մրգերն ու սափորները։ Դարձյալ ձեռքի շարժումով կուսակալը հեռացրեց ծառաներին և իր հյուրի հետ մենակ մնաց սյունաշարի տակ։

— Եվ այսպես,— ցածրաձայն սկսեց Պիղատոսը,— ի՞նչ կարող եք ասել ինձ այս քաղաքի տրամադրության մասին։

Նա ակամա հայացքը դարձրեց այնտեղ, ուր այգու սանդղավանդներից այն կողմ, ներքևում, մարմրում էին և՛ սյունաշարերը, և՛ վերջին ճառագայթներից ոսկեզօծված ցածրիկ կտուրները։

— Կուսակալ, ես ենթադրում եմ,— պատասխանեց հյուրը,— որ Երշալայիմում հիմա տրամադրությունը բավարար է։

— Այնպես որ կարելի է երաշխավորել, թե այլևս խռովություններ չե՞ն սպառնում։

— Աշխարհում միայն մի բանի համար կարելի է երաշխավորել,— սիրալիր նայելով կուսակալին, պատասխանեց հյուրը,— մեծն կեսարի հզորության համար։

— Թող երկար կյանք տան նրան աստվածները,— անմիջապես ձայնակցեց Պիղատոսը,— և ընդհանուր խաղաղություն։— Նա լռեց ու շարունակեց.— Այնպես որ ենթադրում եք, թե հիմա կարելի՞ է զորքերը դուրս հանել։

— Ես ենթադրում եմ, որ Կայծակնաղարկի լեգեոնը կարող է գնալ,— պատասխանեց հյուրը և ավելացրեց.— Լավ կլիներ, եթե հրաժեշտից առաջ շարանց կատարեր քաղաքում։

— Շատ լավ միտք է,— հավանություն տվեց կուսակալը,—

վաղը չէ մյուս օրը կարձակեմ նրանց, ինքս էլ կգնամ, և երդ-վում եմ ձեզ տասներկու աստվածների խնջույքով, մեր Հայ-րենյաց ու օջախի հովանավոր պայերով եմ երդվում, շատ բան կտայի այդ բանն այսօր անելու համար։

— Կուսակալը չի՞ սիրում Երշալայիմը,— բարեսրտությամբ հարցրեց հյուրը։

— Գթասիրտ եղեք,— ժպտալով, բացականչեց կուսակալը,— սրանից ավելի անհուսալի տեղ աշխարհում չկա։ Էլ չեմ ասում բնության մասին։ Ես ամեն անգամ դառնում եմ հիվանդ, երբ ստիպված եմ լինում այստեղ գալ։ Բայց դա դեռ մի ցավ է։ Իսկ այս տոները՝ մոգերը, կախարդները, հմայողները, ուխտավորների այս ամբոխները... Ֆանատիկոսնե՜ր, ֆանատիկոսնե՜ր։ Ինչ արժեր լոկ այդ փրկիչը, որին նրանք հանկարծ սպասել սկսեցին այս տարի։ Ամեն րոպե սպասում ես միայն, որ ստիպված ես լինելու ամենատհաճ արյունահեղության ականատեսը դառնալ։ Ամբողջ ժամանակ վերադասավորել զորքերը, մատնագրեր ու բանսարկություններ կարդալ, ընդ որում դրանցից կեսն էլ հենց քո մասին է գրված։ Համաձայնեք, որ դա տխրալի բան է։ Օ՜, եթե կայսերական ծառայությունը չլիներ...

— Այո, տոներն այստեղ ծանր են անցնում,— համաձայնեց հյուրը։

— Ամբողջ հոգով ցանկանում եմ, որ դրանք շուտ վերջանան,— թափով ավելացրեց Պիղատոսը։— Վերջապես հնարավորություն կունենամ Կեսարիա վերադառնալ։ Կհավատա՞ք, արդյոք, Հերովդեսի այս ցնորական շինությունը,— կուսակալը ձեռքը թափ տվեց սյունաշարի երկարությամբ, այնպես որ պարզ դարձավ ,որ պալատի մասին է խոսում,— հաստատապես խելագարեցնում է ինձ։ Չեմ կարողանում այստեղ գիշերել։ Աշխարհն ավելի արտառոց ճարտարապետություն չի տեսել։ Այո, բայց դառնանք գործերին։ Ամենից առաջ, այդ նզովյալ Բարրաբան ձեզ չի՞ անհանգստացնում։

Հյուրն այստեղ իր առանձնահատուկ հայացքը հառեց կուսակալի երեսին։ Բայց վերջինս թախծոտ աչքերով հեռուներն էր նայում՝ խարշանքով կնճռոտվելով և դիտելով քաղաքի մի մասը, որ ընկած էր ներքևներում և հանգչում էր իրիկնամուտի մեջ։ Մարեց և հյուրի հայացքը, և նրա կոպերն իջան։

— Պետք է կարծել, որ Բարը հիմա ցառան պես անվտանգ

է դարձել,— խոսեց հյուրը, և մանրիկ կնճիռներ երևացին նրա կլոր դեմքին։— Այժմ նրան հարմար չէ ընդվզելը։

— Շա՞տ է հանրաճանաչ,— հարցրեց Պիղատոսը՝ քթի տակ ժպտալով։

— Կուսակալն, ինչպես միշտ, ճշգրիտ է հասկանում հարցը։

— Բայց, համենայն դեպս,— մտայնոտ նկատեց կուսակալը, և սև քարե մատանիով բարակ, երկար մատը վեր բարձրացավ,— հարկ կլինի...

— Օ՜, կուսակալը կարող է վստահ լինել, որ քանի դեռ ես Հրեաստանում եմ, Բարը քայլ անգամ չի դցի, որպեսզի կրընկակոխ չհետևեն նրան։

— Հիմա ես հանգիստ եմ, ինչպես, ի դեպ, միշտ հանգիստ եմ, երբ դուք այստեղ եք։

— Կուսակալը չափազանց բարի է։

— Իսկ հիմա խնդրում եմ հայտնել ինձ մահապատժի մասին,—ասաց կուսակալը։

— Հատկապես ի՞նչն է հետաքրքրում կուսակալին։

— Ամբոխի կողմից վրդովմունքի արտահայտության փորձեր չեղա՞ն։ Գլխավորը դա է, իհարկե։

— Ոչ մի,— պատասխանեց հյուրը։

— Շատ լավ։ Ինքնե՞րդ հաստատեցիք, որ մահացավ։

— Կուսակալը վստահ կարող է լինել դրանում։

— Իսկ ասացեք... սյուներից կախելուց առա՞ջ նրանց խմելիք տվեցին։

— Այո։ Բայց նա,— հյուրն այստեղ աչքերը փակեց,— հրաժարվեց խմելը։

— Ո՞վ հատկապես,— հարցրեց Պիղատոսը։

— Ներեցե՛ք, իգեմոն,— բացականչեց հյուրը,— Ես չասացի՞։ Հա-Նոցրին։

— Խելագա՛ր,— ասաց Պիղատոսը, չգիտես ինչու, ծամածռվելով։ Նրա ձախ աչքի տակ թրթռաց ջիղը,— մեռնել արևի այրվածքներից։ Ինչի՞ համար հրաժարվել մի բանից, որ օրենքով է առաջարկվում։ Ի՞նչ ասաց հրաժարվելով։

— Նա ասաց,— աչքերը վերստին փակելով՝ պատասխանեց հյուրը,— որ շնորհակալություն է հայտնում ու չի մեղադրում, որ իր կյանքը խլեցին։

— Ու՞մ,— խլաձայն հարցրեց Պիղատոսը։

— Իգեմոն, այդ մեկը նա չասաց։

Չփորձե՞ց որևէ բան քարոզել զինվորների ներկայությամբ։

— Ոչ, իգեմոն, այս անգամ նա սակավախոս էր։ Միակ բանը, որ ասաց. այն էր, թե մարդկային արատների մեջ ամենագլխավորներից մեկը վախկոտությունն է համարում ինքը։

— Ինչի՞ համար դա ասվեց,— հանկարծակի խզված ձայն լսեց Հյուրը։

— Հասկանալ չէր լինի։ Ընդհանրապես, նա իրեն տարօրինակ էր պահում, ինչպես, ասենք, և միշտ։

— Ո՞րն էր տարօրինակությունը։

— Նա շարունակ փորձում էր շրջապատող մարդկանց աչքերի մեջ նայել և շարունակ ժպտում էր մի տեսակ շփոթված ժպիտով։

— Ուրիշ ոչի՞նչ,— հարցրեց խռպոտած ձայնը։

— Ուրիշ ոչինչ։

Իր գավաթը գինի լցնելիս կուսակալը սափորը խփեց գավաթին։ Մինչև հատակը խմելով, խոսեց.

— Բանը հետևյալն է. չնայած և մենք չենք կարող, համենայն դեպս տվյալ պահին, նրա որևիցե երկրպագուներից կամ հետևորդներից հայտնաբերել, այդուհանդերձ չի կարելի երաշխավորել, որ այդպիսիք չկան բոլորովին։

Հյուրն ուշադրությամբ լսում էր գլուխը կախած։

— Եվ ահա, որևէ անակնկալից խուսափելու համար,— շարունակեց կուսակալը,— ես ձեզ խնդրում եմ անհապաղ և առանց որևիցե աղմուկի մահապատժի ենթարկված երեքի մարմիններն էլ վերացնել երկրի երեսից և գաղտնի ու սուսուփուս թաղել, որպեսզի նրանց մասին այլևս ձայն-ծպտուն չլինի։

— Լսում եմ, իգեմոն,— ասաց Հյուրը և վեր կացավ՝ շարունակելով.— Գործի բարդությունից և պատասխանատվությունից ելնելով՝ թույլ տվեք մեկնել անմիջապես։

— Ոչ, դեռ նստեք,— ասաց Պիղատոսը՝ ձեռքի շարժումով կանգնեցնելով իր հյուրին,— ևս երկու հարց կա։ Երկրորդը՝ Հրեաստանի կուսակալին կից գաղտնի ծառայության պետի պաշտոնում ծանրագույն աշխատանքի ձեր վիթխարի վաստակներն ինձ հաճելի հնարավորություն են ընձեռում զեկուցել այդ մասին Հռոմում։

Հյուրի դեմքն այստեղ վարդագույն դարձավ, նա վեր կացավ, խոնարհվեց կուսակալին և ասաց.

— Ես լոկ իմ պարտքն եմ կատարում կայսերական ծառայության մեջ։

— Սակայն ձեզ կխնդրեի,— շարունակեց իշխանը,— որ եթե առաջարկեն տեղափոխվել այստեղից, պաշտոնի բարձրացումով, հրաժարվեք դրանից ու այստեղ մնաք։ Ոչ մի գնով չէի կամենա ձեզնից բաժանվել։ Թող ձեզ մի այլ եղանակով պարգևատրեն։

— Ես երջանիկ եմ ծառայել ձեր իշխանության ներքո, իգեմոն։

—Դա շատ հաճելի է ինձ համար։ Այսպիսով, երրորդ հարցը։ Վերաբերում է այդ, անունն ինչ էր... Հուդա Իսկարիովտացուն։

Հյուրը հենց այստեղ կուսակալի վրա հառեց իր հայացքը և, ինչպես հարկն է, իսկույն հանգցրեց։

— Ասում են, թե նա,— ձայնը ցածրացնելով, շարունակեց կուսակալը,— իբր թե փող է ստացել այն բանի համար, որ այդպես սրտաբաց ընդունել է իր տանն այդ խելագար փիլիսոփային։

— Ստանալու է,— Պիղատոսին ցածրաձայն ուղղեց գաղտնի ծառայության պետը։

— Իսկ մե՞ծ է գումարը։

— Դա ոչ ոք չի կարող իմանալ, իգեմոն։

— Անգամ դու՞ք,— իր զարմանքով հաճոյախոսելով հյուրին, ասաց իգեմոնը։

— Ավաղ, անգամ ես,— հանգիստ պատասխանեց նա,— բայց որ այդ փողը նա կստանա այսօր երեկոյան՝ դա գիտեմ։ Այսօր նրան կանչել են Կայիափայի պալատը։

— Ա՜խ, Իսկարիովտացի ագա՜հ ծերուկ,— ժպտալով, Նկատեց կուսակալը,— նա ծերուկ է, չէ՞։

— Կուսակալը երբեք չի սխալվում, բայց այս անգամ սխալվեց,— սիրալիր պատասխանեց հյուրը,— Իսկարիովտացի այդ մարդը երիտասարդ է։

— Ասացեք խնդրեմ։ Նրա բնութագիրն ինձ կարո՞ղ եք ներկայացնել։ Ֆանատիկո՞ս է։

— Օ՜, ոչ, կուսակալ։

— Այդպես։ Ուրիշ է՞լ ինչ։

— Շատ է գեղեցիկ։

— Ուրի՞շ։ Գուցե որևէ մոլությու՞ն ունի։

— Դժվար է, այդքան ստույգ բոլորի մասին իմանալ այս միլիոնանոց քաղաքում, կուսակալ...

— Օ՜, ոչ, ոչ, Ափրանիոս։ Մի՛ նսեմացրեք ձեր արժանիքները։

— Կուսակալ, նա մի մոլություն ունի։— Հյուրն աննշմար դադար տվեց։— Փողի մոլություն։

— Իսկ ինչո՞վ է զբաղվում։

Ափրանիոսն աչքերը վեր բարձրացրեց, մտածեց ու պատասխանեց.

— Իր ազգականներից մեկի լումայափոխ կրպակում է աշխատում։

— Ախ այդպես, այդպես, այդպես, այդպես։— Կուսակալն այստեղ լռեց, շուրջը նայեց՝ ոչ ոք չկա՞ պատշգամբում, ապա ցածրաձայն ասաց.— Ուրեմն, ահա, թե բանն ինչ է. այսօր տեղեկություններ եմ ստացել, որ այս գիշեր նրան մորթելու են։

Հյուրն այստեղ ոչ միայն իր հայացքը նետեց կուսակալի վրա, այլ նույնիսկ մի քիչ պահեց, որից հետո պատասխանեց.

— Կուսակալ, դուք չափազանց գովասանքով արտահայտվեցիք իմ մասին։ Ըստ իս, ես արժանի չեմ ձեր զեկույցին։ Ես այդ տեղեկությունները չունեմ։

— Դուք արժանի եք բարձրագույն պարգևի,— պատասխանեց կուսակալը,— բայց այդպիսի տեղեկություններ կան։

— Համարձակվում եմ հարցնել, իսկ ումի՞ց են այդ տեղեկությունները։

— Թույլ տվեք առայժմ դա չասել, առավել ևս, որ դրանք պատահական են, մութ և ոչ արժանահավատ։ Սակայն ես պարտավոր եմ ամեն ինչ կանխատեսել։ Այդպիսին է իմ պաշտոնը, իսկ ամենից առաջ ես պարտավոր եմ հավատալ իմ կանխազգացողությանը, քանզի երբեք ինձ չի խաբել դա։ Իսկ տեղեկությունն այն է, որ Հա-Նոցրիի գաղտնի ընկերներից մեկը, այդ մաքսավորի հրեշավոր դավաճանությունից զայրացած, պայմանավորվում է իր համախոհների հետ այս գիշեր սպանել նրան, իսկ դավաճանության դիմաց ստացած փողը գցել քահանայապետի տուն՝ հետևյալ երկտողով. «Վերադարձնում եմ նզովյալ փողը»։

Գաղտնի ծառայության պետն այլևս իր անսպասելի հայացքները չէր նետում հեգեմոնի վրա և շարունակում էր լսել նրան՝ աչքերը կկոցած, իսկ Պիղատոսը շարունակում էր.

— Պատկերացրեք, քահանայապետի համար արդյո՞ք հաճելի կլինի տոն գիշերով նման ընծա ստանալը։

— Ոչ միայն տհաճ,— ժպտալով, պատասխանեց Հյուրը,— այլ ես ենթադրում եմ, կուսակալ, որ դա շատ մեծ խայտառակություն կառաջացնի։

— Ես էլ եմ այդ կարծիքին։ Ահա դրա համար էլ խնդրում եմ ձեզ զբաղվել այդ գործով, այսինքն բոլոր միջոցները ձեռնարկել Հուդա Իսկարիովտացուն պահպանելու համար։

— Իգեմոնի հրամանն ի կատար կածվի,— խոսեց Աֆրանիոսը,— բայց ես պետք է հանգստացնեմ իգեմոնին. չարագործների մտադրությունը չափազանց դժվար իրագործելի է։ Մտածելու՞ բան է,— խոսելով, Հյուրը շրջվեց ու շարունակեց.— հետևել մարդուն, մորթել, իմանալ նաև, թե որքան է ստացել, փողը Կայիափային վերադարձնելու հնարն էլ գտնել, և այդ ամենը մի գիշերու՞մ։ Այսօ՞ր։

— Եվ այնուամենայնիվ նրան կմորթեն այսօր,— համառորեն կրկնեց Պիղատոսը,— ես կանխազգացում ունեմ, ասում եմ ձեզ։ Չի եղել մի դեպք, որ կանխազգացումս ինձ խաբի.— այստեղ ջղաձգվեց կուսակալի դեմքը, և նա թեթևակի շփեց ձեռքերը։

— Լսում եմ,— հնազանդորեն պատասխանեց Հյուրը, վեր կացավ, ուղղվեց ու հանկարծ հարցրեց խստորեն.— Ուրեմն, կմորթե՞ն, իգեմոն։

— Այո,— պատասխանեց Պիղատոսը.— և ամբողջ հույսը բոլորին զարմացնող ձեր ճշտակատարության վրա է։

Հյուրն ուղղեց թիկնոցի տակի ծանր գոտին ու ասաց.

— Պատիվ ունեմ, ողջություն և ուրախություն եմ ցանկանում։

— Ա՛հ, հա,— ոչ բարձրաձայն բացականչեց Պիղատոսը,— բոլորովին մոռացել էի։ Չէ որ ձեզ պարտք եմ...

Հյուրը զարմացավ։

— Իրոք ,կուսակալ, դուք ինձ ոչինչ պարտք չեք։

— Ինչպես թե չեմ Երշալայիմ մտնելիս հիշու՞մ եք մուրացկանների ամբոխը... ես ուզում էի նրանց փող շպրտել, մոտս չկար, և ձեզնից վերցրեցի։

— Օ՜, կուսակալ, դա աննշան բան էր։

— Աննշան բաներն էլ հարկ է հիշել։

Այստեղ Պիղատոսը շրջվեց, բարձրացրեց ետևում դրված

րակալթոռին գցած թիկնոցը, տակից կաշվի մի տոպրակ վերցրեց ու մեկնեց հյուրին։ Վերջինս, ընդունելով, խոնարհվեց և պահեց թիկնոցի տակ։

— Ես սպասում եմ,— խոսեց Պիղատոսը,— թաղման, ինչպես նաև Հուդա Կիրիաթացու այդ գործի մասին զեկույցին այսօր գիշեր, լսո՞ւմ եք, Աֆրանիոս, այսօր։ Պահակախմբին կկարգադրվի արթնացնել ինձ, ձեր գալուն պես։ Ես ձեզ սպասում եմ։

— Պատիվ ունեմ,— ասաց գաղտնի ծառայության պետը և, շուռ գալով, հեռացավ պատշգամբից։ Լսվում էր, թե ինչպես է խշխշում հարթակի ավազը նրա ոտքերի տակ, հետո լսվեց կոշիկների կտկտոցը սյուների արանքի մարմարի վրա։ Հետո չքացան նրա ոտքերը, իրանը և, ի վերջո, կնգուղն էլ անհետացավ։ Այստեղ միայն կուսակալը տեսավ, որ արևն արդեն չկա և մթնշաղն է իջել։

## ԳԼՈՒԽ XXVI

# ԹԱՂՈՒՄԸ

Գուցե հենց այդ մթնշաղն էր պատճառը, որ կուսակալի արտաքինը կտրուկ փոխվեց։ Նա կարծես միանգամից ծերացավ, կորացավ, դրանից բացի տագնապախառը դարձավ։ Մի անգամ նա ետ նայեց ու, չգիտես ինչու, ցնցվեց՝ հայացքը նետելով դատարկ բազկաթոռին, որի վրա թիկնոցն էր գցած։ Մոտենում էր տոնական գիշերը, երեկոյան ստվերներն իրենց խաղերն էին սկսել, և, հավանորեն, հոգնած կուսակալի աչքին երևաց, թե ինչ-որ մեկը նստած է դատարկ բազկաթոռին։ Վախկոտություն հանդես բերելով՝ թիկնոցը շարժելով, կուսակալը թողեց դա ու արագ-արագ գնաց-եկավ պատշգամբում՝ մեկ ձեռքերը շփելով, մեկ մոտ վազելով սեղանին ու գավաթը վերցնելով, մեկ կանգ առնելով և հատակի խճանկարին նայելով անիմաստ, ասես ջանալով ինչ-ինչ գրեր կարդալ դրա վրա։

Այսօր արդեն երկրորդ անգամ թախիծ էր իջնում վրան։ Շփելով քունքը, ուր առավոտյան դժոխային ցավից լոկ մի բութ, թեթևակի կսկծացող հիշողություն էր մնացել, կուսակալը շա-

բանակ ջանում էր հասկանալ, թե ինչն է իր հոգեկան տառապանքների պատճառը։ Եվ շուտ հասկացավ, սակայն փորձեց խաբել իրեն։ Նրա համար պարզ էր, որ այսօր ցերեկն ինչ-որ բան անդառնալիորեն կորցրել է, և հիմա այդ կորսվածը ցանկանում է ուղղել մի տեսակ մանր ու ողորմելի, գլխավորապես ուշացած գործողություններով։ Իսկ ինքնախաբեությունն այն էր, որ կուսակալը աշխատում էր ներշնչել իրեն, որ ներկայիս՝ Երեկոյան այդ գործողությունները ոչ պակաս կարևոր են, քան առավոտյան դատավճիռը։ Բայց դա ամենևին չէր հաջողվում կուսակալին։

Պատույտներից մեկի ժամանակ նա կտրուկ կանգ առավ և սուլեց։ Սուլոցին ի պատասխան, թավ հաչոց թնդաց, և այգուց պատշգամբ ցատկեց մոխրագույն բրդով, ոսկեզօծ թիթեղիկներով պատած վզկապով, սրաչանիչ շունը։

— Բանգա, Բանգա,— կամացուկ կանչեց կուսակալը։

Շունն ելավ ետևի թաթերի վրա, իսկ առջևի թաթերն իջեցրեց տիրոջ ուսերին ու քիչ էր մնում ցած գլորեր նրան, այտը լիզեց։ Կուսակալը նստեց բազկաթոռին, Բանգան, լեզուն հանած ու ընդհատ շնչելով, պառկեց տիրոջ ոտքերի մոտ, ըստ որում շան ուրախ աչքերը նշանակում էին, որ վերջացել է ամպրոպը միակ բանն աշխարհում, որից սարսափում էր անվախ շունը, միաժամանակ և այն, որ ինքը նորից այստեղ է, այն մարդու կողքին, որին սիրում է, հարգում ու համարում ամենահզորն աշխարհում, տիրակալը բոլոր մարդկանց, ինչի շնորհիվ շունն իրեն էլ էր համարում արտոնյալ, բարձրագույն և առանձնահատուկ էակ։ Սակայն ոտքերի մոտ պառկելով ու նույնիսկ ոչ թե տիրոջը, այլ աղջամուղջվող այգուն նայելով, շունն իսկույն հասկացավ, որ տիրոջ գլխին փորձանք է եկել։ Դրա համար փոխեց դիրքը, վեր կացավ, կողքից մոտեցավ և առջևի թաթերն ու գլուխը դրեց կուսակալի ծնկներին, թիկնոցի փեշերը թաց ավազով կեղտոտելով։ Բանգայի գործողությունները, հավանորեն, պետք է նշանակեին, թե նա սփոփում է իր տիրոջը և դժբախտությունը պատրաստ է դիմավորել նրա հետ միասին։ Նա փորձում էր սա արտահայտել թե տիրոջ կողմը ծռած աչքերով, թե զգուշորեն ցցած ականջներով։ Երկուսով, միմյանց սիրող և շունը, և մարդը պատշգամբում այսպես դիմավորեցին տոնական գիշերը։

Այդ ժամանակ կուսակալի հյուրը մեծ հոգսերի մեջ էր։ Հե-

ռանալով պատշգամբի առջևի վերին հարթակից, սանդուղքով իջավ այգու հաջորդ սանդղևանդը, աջ թեքվեց ու հասավ պալատի տարածքում տեղավորված զորանոցներին։ Այս զորանոցներում էլ բնակարանավորված էին այն երկու հարյուրյակները, որոնք կուսակալի հետ Երուսաղեմ էին եկել՝ տոներին, ինչպես նաև կուսակալի գաղտնի ծառայությունը, որի հրամանատարն այդ հյուրն էր։ Զորանոցներում հյուրը քիչ ժամանակ անցկացրեց, տասը րոպեից ոչ ավելի, բայց այդ տասը րոպեն անցնելուց հետո զորանոցի բակից երեք սայլ դուրս եկան՝ բարձված բահերով, քլունգներով ու ջրի տակառով։ Սայլերն ուղեկցում էին մոխրագույն թիկնոցներով տասնհինգ հեծյալ։ Նրանց ուղեկցությամբ սայլերը պալատի տարածքից դուրս ելան ետևի դարպասից, արևմուտք թեքվեցին, դուրս եկան քաղաքի պարսպի դարպասից և գնացին արահետով, նախ դեպի Բեթլեհեմի ճանապարհը, ապա դրանով հյուսիս, հասան Քեբրոնյան դարպասի խաչմերուկին և այդ ժամանակ շարժվեցին Յաֆիեի ճանապարհով, որով ցերեկն անցնում էր մահապատժի դատապարտվածների թափորը։ Այդ ժամանակ արդեն մութ էր, և հորիզոնի վրա երևաց լուսինը։

Սայլերի և ուղեկցող խմբի գնալուց անմիջապես հետո պալատի տարածքից ելավ նաև կուսակալի հյուրը՝ ձի նստած, գորշագույն, մաշված խիտոնով ծպտված։ Հյուրն ուղևորվեց ոչ թե քաղաքից դուրս, այլ քաղաք։ Որոշ ժամանակ անց նրան կարելի էր տեսնել Անտոնիոսի ամրոցին մոտենալիս, որը հյուսիսում էր գտնվում, մեծ տաճարին անմիջապես կպած։ Ամրոցում նույնպես շատ կարճ ժամանակ մնաց հյուրը, ապա նրա հետքը հայտնաբերվեց Ստորին Քաղաքում, նրա ծուռումուռ և խճճված փողոցներում։ Հյուրն այստեղ եկավ արդեն ջորի հեծած։

Քաղաքը լավ ճանաչող հյուրը հեշտությամբ գտավ այն փողոցը, որն իրեն պետք էր։ Հունական էր կոչվում փողոցը, քանի որ այդտեղ էին գտնվում մի քանի հունական կրպակներ, այդ թվում և մեկը, որտեղ գորգեր էին վաճառում։ Հենց այդ կրպակի մոտ էլ հյուրը կանգնեցրեց ջորին, իջավ ու դարպասի օղից կապեց կենդանուն։ Կրպակն արդեն փակ էր։ Հյուրը կրպակի մուտքի մոտի դռնակից ներս մտավ ու ընկավ ոչ մեծ, քառակուսի մի բակ, որի դիմացից ու կողքերից մարագներ էին շինված։ Բակում, անկյունի մոտից թեքվելով, հյուրը հայտնը-

վեց բնակելի տան քարաշեն բարեկարգ պատշգամբի մոտ ու շուրջը նայեց։ Թե՛ տանը, թե՛ մարագներում լույս չկար, ճրագ չէին վառել։ Հյուրը ցածրաձայն կանչեց.

— Նիսա՜։

Այդ կանչի վրա դուռը ճռռաց, և երեկոյան կիսախավարի մեջ, պատշգամբի վրա մի երիտասարդ կին հայտնվեց, առանց գլխաշորի։ Նա կանգնած պատշգամբի ճաղերի վրայից՝ անհանգստացած նայելով, ցանկանալով իմանալ, թե ով է եկել, ճանաչելով, սիրալիր ժպտաց, գլուխը թափահարեց, ձեռքով արեց.

— Մենա՞կ ես,— ցածրաձայն, հունարեն հարցրեց Ափրանիոսը.

— Մենակ եմ,— շշնջաց պատշգամբի կինը։— Ամուսինս առավոտյան Կեսարիա գնաց,— կինն այստեղ շրջվեց դռան կողմն ու շշնջալով ավելացրեց.— Բայց աղախինը տանն է։— Մի շարժում էլ արեց, որ նշանակում էր՝ «ներս եկեք»։ Ափրանիոսը ետ նայեց ու ոտքը դրեց քարե աստիճաններին։ Դրանից հետո կինն էլ, նա էլ անհետացան տնակի ներսում։

Այդ կնոջ մոտ Ափրանիոսը շատ քիչ մնաց՝ հինգ րոպեից ոչ ավելի։ Դրանից հետո նա թողեց տունն էլ, պատշգամբն էլ, կնգուղն ավելի խոր քաշեց աչքերին և փողոց ելավ։ Այդ ժամանակ տներում արդեն վառվում էին կանթեղները, նախատոնական հրմշտոցը դեռևս շատ մեծ էր, և Ափրանիոսն ու իր ջորին կորան անցորդների ու հեծյալների հոսանքի մեջ։ Նրա հետագա ուղին ոչ ոքի հայտնի չէ։

Իսկ կինը, որին Նիսա կոչեց Ափրանիոսը, մենակ մնալով, սկսեց հագուստը փոխել, ընդ որում շատ էր շտապում։ Բայց որքան էլ դժվար լիներ նրա համար մութ սենյակում իրեն անհրաժեշտ բաները գտնելը, կանթեղը չվառեց ու չկանչեց աղախնին։ Միայն այն բանից հետո, երբ պատրաստ էր ու գլխին մուգ քող էր գցված, տնակում լսվեց նրա ձայնը.

— Եթե ինձ հարցնող եղավ, ասա, որ հյուր գնացի Էնանտայենց տուն։

Մթության մեջ լսվեց ծեր աղախնի փնթփնթոցը.

— Էնանտայե՞նց։ Ա՜խ, այդ Էնանտան։ Ամուսինդ արգելեց, չէ՞։ Նրանց տուն գնալ։ Կավատուհի է քո այդ Էնանտան։ Ամուսնուդ կասեմ, կիմանաս...

— Դե, դե, դե, սո՛ւս մնա,— պատասխանեց Նիսան և ըստ-

վերի պես դուրս սահեց տնից։ Ազախինը, փնթփնթալով, փակեց պատշգամբ տանող դուռը։ Նիսան ելավ իր տնից։

Ճիշտ այդ ժամանակ Ստորին Քաղաքի մի այլ նրբանցքից, ոլոր-մոլոր, աստիճաններով քաղաքային լճակներից մեկի վրա իջնող նրբանցքից, անդուռ-անլուսամուտ կողմով փողոցին, իսկ լուսամուտներով բակին նայող խղճուկ տնակի դռնակից դուրս եկավ մորուքը խնամքով խուզած, ուսերին ընկնող սպիտակ մաքուր կեֆիով, նոր, երկնագույն, տոնական, ծոփքերը ցած կախված թալիֆը հագին մի երիտասարդ, ճռճռացող նոր մույկերը ոտքերին։ Արծվաքիթ ու գեղեցիկ, մեծ տոնի առթիվ հագած-կապած երիտասարդը քայլում էր առույգ, առաջ անցնելով տուն՝ տոնական ընթրիքի շտապող անցորդներից, նայում էր, թե ինչպես են լուսավորվում պատուհաններն իրար ետևից։ Երիտասարդը գնում էր այն ճանապարհով, որը շուկայի մոտով տանում էր քահանայապետ Կայիափայի պալատը, որ գտնվում էր տաճարի բլրի ստորոտին։

Որոշ ժամանակ անց նրան կարելի էր տեսնել Կայիափայի պալատի դարպասից ներս մտնելիս։ Եվս փոքր-ինչ անց՝ այդ բակից հեռանալիս։

Պալատ այցելելուց հետո, ուր արդեն բոցավառվում էին կանթեղներն ու ջահերը, ուր տոնական իրարանցում էր տիրում, երիտասարդն ավելի առույգ, ավելի զվարթ էր գնում ու ետ էր շտապում Ստորին Քաղաք։ Ճիշտ այն անկյունադարձի վրա, ուր փողոցը ձուլվում էր շուկայի հրապարակին, եռացող ամբոխի և հրմշտոցի մեջ նրանից առաջ անցավ ասես պարաքայլ ընթացող, թեթևամարմին մի կին, սև քողն իջեցրած ուղիղ աչքերին։ Գեղեցկատես երիտասարդից առաջ անցնելիս այդ կինը մի ակնթարթ ետ գցեց քողը, մի հայացք նետեց երիտասարդի վրա, բայց ոչ միայն չդանդաղեցրեց քայլերը, այլ արագացրեց, կարծես ջանալով թաքնվել նրանից ումից առաջ էր անցել։

Երիտասարդը ոչ միայն նկատեց այդ կնոջը, ոչ, ճանաչեց նրան, իսկ ճանաչելուց հետո ցնցվեց, կանգ առավ՝ տարակուսած նրա թիկունքին նայելով և անմիջապես վազեց, որ հասնի նրան։ Սափորը ձեռքին մի անցորդի հազիվ ցած չգլորելով, երիտասարդը հասավ կնոջը և, հուզմունքից ծանր շնչելով, ձայն տվեց նրան.

— Նիսա՛։

*Կինը շրջվեց, կկոցեց աչքերը, ընդ որում դեմքի վրա սառը վրդովմունք երևաց, և չոր-չոր պատասխանեց հունարեն.*

*— Ախ, այդ դո՞ւ ես, Հուդա։ Միանգամից չճանաչեցի։ Ասենք, դա լավ է։ Մենք մի նշան ունենք՝ նա, ում չեն ճանաչում, կհարստանա...*

*Այնքան հուզվելով, որ սիրտն սկսեց թպրտալ, ինչպես թռչունը սև քողի տակ, Հուդան հարցրեց կերկեր շշնջոցով, վախենալով, որ անցորդները չլսեն.*

*— Այս ու՞ր ես գնում, Նիսա։*

*— Իսկ ինչի՞դ է պետք՝ իմանաս,– պատասխանեց Նիսան՝ քայլերը դանդաղեցնելով ու գոռոզաբար Հուդային նայելով։*

*Այդ ժամանակ Հուդայի ձայնի մեջ մանկական ինչ-ինչ երանգներ լսվեցին, նա սկսեց շփոթված շշնջալ.*

*— Բայց ինչպե՞ս... Չէ որ մենք պայմանավորվել էինք։ Ես ուզում էի քո մոտ գալ։ Ասացիր, որ ամբողջ երեկո տանն ես լինելու...*

*— Ահ, ոչ, ոչ,— պատասխանեց Նիսան և քմահաճորեն առաջ բերեց ներքևի շրթունքը, որին Հուդային թվաց, թե նրա դեմքը, ամենագեղեցիկ դեմքը, որ երբևէ տեսել էր կյանքում, ավելի գեղեցկացավ,— ձանձրացել եմ։ Տոնը ձերն է, իսկ ի՞նձ ինչ կհրամայես անել։ Նստեմ ու լսեմ, թե ինչպես ես հոգոցներ հանում պատշգամբո՞ւմ։ Դրանից բացի, վախենա՞մ էլ, որ աղախինն այդ մասին կպատմի ամուսնուս։ Ոչ, ոչ, ես էլ որոշեցի քաղաքից դուրս գալ՝ սոխակների դայլայլ լսելու։*

*— Ինչպե՞ս թե քաղաքից դուրս,— հարցրեց իրեն կորցրած Հուդան,— մենա՞կ։*

*— Իհարկե մենակ,— պատասխանեց Նիսան։*

*— Թույլ տուր ուղեկցեմ քեզ,— շունչը տեղը բերելով, խնդրեց Հուդան։ Նրա մտքերը շաղվեցին, աշխարհում ամեն ինչ մոռացավ և աղերսագին հայացքով նայում էր Նիսայի երկնագույն, իսկ հիմա սև թվացող աչքերին։*

*Նիսան ոչինչ չպատասխանեց և արագացրեց քայլերը։*

*— Ինչու՞ ես լռում, Նիսա,— լալագին հարցրեց Հուդան՝ քայլերը հարմարեցնելով նրան։*

*— Իսկ ինձ համար ձանձրալի չի՞ լինի քեզ հետ,— հանկարծ հարցրեց Նիսան և կանգ առավ։ Հուդայի մտքերն այստեղ լիովին շաղվեցին։*

*— Դե լավ,— ի վերջո փափկեց Նիսան,— գնանք։*

— Իսկ ո՞ր, ո՞ր։

— Սպասիր... մտնենք այս բակն ու պայմանավորվենք, թե չէ վախենում եմ ծանոթներից մեկնումեկը հանդիպի, հետո էլ կասեն, թե սիրեկանիս հետ փողոցում էի։

Եվ այստեղ Նիսան ու Հուդան չքացան շուկայից։ Նրանք քչփչում էին ինչ-որ բակի դարպասատակում կանգնած։

— Գնա ձիթենու կալվածքը,— շշնջում էր Նիսան՝ քողն աչքերին քաշելով և դեմքը շրջելով դարպասատակ մտած, դույլը ձեռքին մի մարդուց,— Գեթսեմանի, Կեդրոնից այն կողմ, հասկացա՞ր։

— Այո, այո, այո։

— Ես առաջ կգնամ,— շարունակում էր Նիսան,— բայց դու ետևիցս չգաս, այլ ինձնից բաժանվիր։ Ես առաջ կանցնեմ... Գետակը որ անցար... գիտե՞ս, քարայրը որտեղ է։

— Գիտեմ, գիտեմ...

— Ձիթապտղի մամլիչի մոտով կբարձրանաս վեր ու կթեքվես քարանձավ։ Ես այնտեղ կլինեմ։ Միայն թե չհամարձակվես հենց հիմա գալ ետևիցս, համբերություն ունեցիր, սպասիր այստեղ։— Եվ այս խոսքերի հետ Նիսան ելավ դարպասատակից, ասես չէր էլ խոսել Հուդայի հետ։

Հուդան որոշ ժամանակ կանգնեց մենակ, աշխատելով ժողովել ցաքուցրիվ մտքերը։ Այդ թվում և այն միտքը, թե ինչպես է բացատրելու իր բացակայությունը հարազատների հետ տոնական ընթրիքից։ Հուդան կանգնել և ինչ-որ սուտ էր հորինում, սակայն հուզմունքից ինչպես հարկն է ոչինչ չհորինեց ու չնախապատրաստեց, և նրա ոտքերն իրենք իրենց, կամքից անկախ դուրս տարան նրան դարպասատակից։

Հիմա նա փոխեց իր ճանապարհը, արդեն Ստորին Քաղաք չէր շտապում, այլ դարձավ հակառակ՝ Կայիափայի պալատը տանող ուղղությամբ։ Հուդան հիմա վատ էր տեսնում չորս կողմը։ Տոնակատարությունն արդեն քաղաք էր մտել։ Հուդայի շուրջ հիմա պատուհաններում ոչ միայն լույսեր էին շողշողում, այլև փառաբանություններ էին հնչում արդեն։ Վերջին ուշացածները շտապեցնում էին գրաստներին, մտրակում ու բղավում էին նրանց վրա։ Ոտքերն իրենք էին տանում Հուդային, և նա չնկատեց, թե ինչպես իր մոտով անցան Անտոնիոսի սարսափազդու, մամռակալած աշտարակները, ոչ մի ուշադրություն չդարձրեց հռոմեական հեծելապարեկի վրա, որի ջահը տագնա-

պայի լույսով ողողեց իր ճանապարհը։ Աշտարակն անցնելուց հետո Հուդան շրջվելով տեսավ, որ տաճարի վերևում, ահավոր բարձրության վրա երկու վիթխարի հնգամոմ վառվեց։ Բայց դրանք էլ աղոտ տեսավ Հուդան, նրան թվաց, թե Երշալայիմի վրա չտեսնված չափերի տասը կանթեղներ շողշողացին, որոնք մրցում էին Երշալայիմի վրա ավելի ու ավելի վեր ելնող միակ կանթեղի՝ լուսնի կանթեղի լույսի հետ։ Հիմա Հուդան ոչ մի բանի հետ գործ չուներ, նա շտապում էր դեպի Գեթսեմանի դարպասը, ուզում էր ավելի շուտ դուրս գալ քաղաքից։ Ժամանակ առ ժամանակ նրան թվում էր, թե իր առջևում, անցորդների դեմքերի և թիկունքների արանքում, հայտնվում է պարաքայլ մարմինը, տանում է իր հետևից։ Բայց դա խաբկանք էր՝ Հուդան հասկանում էր, որ Նիսան շատ առաջ է անցել իրենից։ Հուդան վազեվազ անցավ լումայափոխների կրպակների մոտով, վերջապես հասավ Գեթսեմանի դարպասին։ Անհամբերությունից այրվելով, համենայն դեպս այստեղ ստիպված էր հապաղել։ Ուղտեր էին մտնում քաղաք, նրանցից հետո սիրիական զինվորական պարեկը, որին Հուդան նզովեց մտքում...

Բայց ամեն բան վերջ ունի։ Անհամբեր Հուդան արդեն քաղաքի պարսպից դուրս էր։ Ձախ կողմում նա տեսավ մի փոքրիկ գերեզմանոց, դրա մոտ՝ ուխտագնացների մի քանի շերտավոր վրաններ։ Հատելով լուսնի լույսով ողողված փոշոտ ճանապարհը, Հուդան շտապեց դեպի Կեդրոնյան գետակը, որպեսզի կտրի-անցնի։ Ջուրը մեղմ խոխոջում էր Հուդայի ոտքերի տակ։ Քարից քար ցատկելով, նա վերջապես ելավ Գեթսեմանյան հակադիր ափն ու մեծ ուրախությամբ տեսավ, որ այգիների վերևով գնացող ճանապարհն այստեղ ամայի է։ Ոչ հեռվում արդեն երևում էր ձիթենու կալվածքի կիսավեր դարպասը։

Հեղձուկ քաղաքից հետո Հուդային ապշեցրեց գարնանային գիշերվա արբեցնող բույրը։ Այգու ցանկապատի վրայից հորդում էր գեթսեմանյան բացատների մրտենիների և ակացիաների բույրերի ալիքը։

Ոչ ոք չէր պահպանում դարպասը, ոչ ոք չկար այդտեղ, ու մի քանի րոպե անց Հուդան արդեն վազում էր սաղարթախիտ, վիթխարի ձիթենիների խորհրդավոր ստվերների ներքո։ Ճանապարհը տանում էր դեպի սար, Հուդան բարձրանում էր ծանր շնչելով, խավարից ստեպ-ստեպ ընկնելով լուսնային զարդա-

նախշ գորգերի վրա, որոնք հիշեցնում էին այն գորգերը, որ տեսել էր Նիսայի խանդոտ ամուսնու կրպակում։ Որոշ ժամանակ անց, Հուդայի ձախ կողմում, բացատի վրա երևաց ձիթապտղի մամլիչը՝ քարե ծանր անիվով և զանազան տակառների կույտը։ Այգում ոչ ոք չկար։ Գործերը վերջացրել էին մայրամուտին։ Այգում կենդանի շունչ չկար, և հիմա Հուդայի գլխավերևում ղողանջում ու դայլայլում էին սոխակների երգչախմբերը։

Հուդայի նպատակակետը մոտ էր։ Նա գիտեր, որ աջից, մթության մեջ հիմա կսկսի լսել քարայրում թափվող ջրի մեղմ ճլճլոցը։ Այդպես էլ եղավ, լսեց։ Օդն ավելի զովացավ։

Այդ ժամանակ նա դանդաղեցրեց քայլերն ու ցածրաձայն կանչեց.

— Նիսա՜։

Սակայն Նիսայի փոխարեն, ձիթենու հաստ բնից պոկվելով, ճանապարհի վրա ցատկեց մի ամրակազմ տղամարդ, և ինչ-որ բան փայլատակեց նրա ձեռքում ու իսկույն մարեց։

Հուդան ետ շպրտվեց ու թույլ բղավեց.

— Ա՜խ։

Երկրորդ մարդը կտրեց նրա ճամփան։

Առաջինը, որ դիմացից էր, հարցրեց Հուդային.

— Ինչքա՞ն ստացար նոր։ Խոսիր, եթե ուզում ես կյանքդ պահպանել։

Հուդայի սրտում հույս շողաց։ Նա աղեկտուր ճչաց.

— Երեսուն արծաթ։ Երեսուն արծաթ։ Ինչ որ ստացել եմ՝ մոտս է։ Ահա փողերը։ Վերցրեք, բայց կյանքս ինձ բաշխեք։

Դիմացի մարդը Հուդայի ձեռքից ակնթարթորեն խլեց տոպրակը։ Եվ այդ նույն պահին Հուդայի թիկունքում կայծակի պես շողաց դաշույնը և հարվածեց սիրահարի կողի տակ։ Հուդան առաջ շպրտվեց և ծռմռված մատներով ձեռքերը օդ պարզեց։ Դիմացի մարդը դաշույնը պարզած դիմավորեց նրան ու մինչև դաստակը խրեց Հուդայի սիրտը։

— Նի... սա...— ոչ թե իր բարձր ու անարատ, երիտասարդ ձայնով, այլ թավ ու խաթարված ձայնով ասաց Հուդան և այլևս ոչ մի հնչյուն չարտաբերեց։ Նրա մարմինն այնպես ուժգին զրմփաց գետնին, որ թնդաց գետինը։

Այդ ժամանակ երրորդ կերպարանքը հայտնվեց ճանապարհի վրա։ Երրորդը կնգուղավոր թիկնոցով էր։

— Մի՛ հապաղեք,— հրամայեց երրորդը։ Մարդասպաններն արագ փաթաթեցին տոպրակը կաշվի կտորի մեջ, երկտողի հետ, որ երրորդը տվեց, խաչաձև կապեցին թելով։ Երկրորդը կապոցը ծոցը դրեց, իսկ հետո երկու մարդասպաններն էլ ճանապարհի վրայից մի կողմ նետվեցին, և խավարը կլանեց նրանց ձիթենիների արանքում։ Իսկ երրորդը պպզեց սպանվածի մոտ ու նայեց նրա դեմքին։ Ստվերի տակ դեմքը նայողին ներկայացավ կավճի պես սպիտակ և մի տեսակ ոգեշունչ գեղեցիկ։ Մի քանի վայրկյան անց ողջերից ճանապարհի վրա ոչ ոք չկար։ Անշունչ մարմինն ընկած էր՝ ձեռքերը տարածած։ Ձախ ոտնաթաթն ընկել էր լուսնի բծի մեջ, այնպես որ երևում էր մույկի յուրաքանչյուր փոկը։

Ամբողջ Գեթսեմանի այգին այդ ժամանակ ղողանջում էր սոխակների դայլայլից։ Թե ուր գնացին Հուդային սպանած երկուսը՝ չգիտե ոչ ոք, սակայն կնգուղավոր երրորդ մարդու ճանապարհը հայտնի է։ Թողնելով արահետը, նա խորացավ ձիթենիների մեջ, դեպի հարավ շարժվելով։ Նա մագլցեց այգու ցանկապատի վրայով, գլխավոր մուտքից հեռու, հարավային ծայրում, այնտեղ, ուր ընկել էին շարվածքի վերևի քարերը։ Շուտով նա Կեդրոնի ափին էր։ Այդ ժամանակ նա մտավ ջուրը և որոշ ժամանակ ջրի միջով էր գնում, մինչև որ հեռվում տեսավ երկու ձիերի ու դրանց մոտ կանգնած մարդու ուրվապատկերները։ Ձիերը նույնպես կանգնած էին գետակի մեջ։ Ջուրը հոսում էր՝ ողողելով նրանց սմբակները։ Ձիապանը նստեց ձիերից մեկին, կնգուղավոր մարդը ցատկեց մյուսին, ու երկուսն էլ դանդաղ գնացին գետակով, և լսվում էր, թե ինչպես են չրխկչրխկում քարերը ձիերի սմբակների տակ։ Հեծյալները հետո դուրս եկան ջրից, բարձրացան երշալաիմյան ափը և դանդաղ գնացին քաղաքի պարսպի տակով։ Այստեղ ձիապանը բաժանվեց, առաջ արշավեց ու աչքից կորավ, իսկ կնգուղավոր մարդը կանգնեցրեց ձին, իջավ ձիուց ամայի ճանապարհի վրա, հանեց իր թիկնոցը, շուռ տվեց աստառը վեր, թիկնոցի տակից հանեց հարթ, անփետուր սաղավարտը, դրեց գլխին։ Հիմա թամբին թռավ զինվորական քղամիդով և կարճ թուրը կողքից մի մարդ։ Նա ձգեց երասանը և հեծելազորային կրակոտ ձին թռավ վարգասլաց՝ թափահարելով հեծյալին։ Հեծյալը մոտենում էր Երշալաիմի հարավային դարպասին։

Տարպասի կամարի տակ խրխռում ու ցատկոտում էին ջահերի բոցերը։ Կայծակնաղարկ լեգեոնի երկրորդ Հարյուրյակի պահակ զինվորները, քարե նստարաններին նստած, զառ էին խաղում։ Տեսնելով քաղաք մտնող զորականի, զինվորները վեր թռան տեղներից, զորականը ձեռքով ողջունեց նրանց և քաղաք մտավ։

Քաղաքը ողողված էր տոնական լույսերով։ Բոլոր պատուհանների մեջ կանթեղների կրակն էր ցոլցլում, և բոլոր կողմերից աններդաշնակ խմբերգ դարձած փառաբանություններ էին լսվում։ Մեկ-մեկ փողոցին նայող պատուհաններից ներս նայելով, Հեծյալը կարող էր տեսնել տոնական սեղանների շուրջ նստած մարդկանց, այծի միսը և գինու գավաթները՝ դալար խոտերով լի մատուցարանների միջև։ Մի կամացուկ երգ սուլելով, Հեծյալն անշտապ վարգով անցնում էր Ստորին Քաղաքի փողոցներով դեպի Անտոնիոսի աշտարակը, հազվադեպ նայելով տաճարի վրա բոցավառվող, աշխարհում չտեսնված հնգամոմերին կամ լուսնին, որը կախված էր հնգամոմերից ավելի բարձր։

Հերովդես Մեծի պալատը ոչ մի մասնակցություն չուներ զատկի գիշերվա տոնախմբությանը։ Պալատի՝ հարավ նայող օժանդակ սենյակներում, ուր տեղավորվել էին հռոմեական կոհորտայի սպաները և լեգեոնի լեգատը, լույսեր էին վառվում, այնտեղ ինչ-որ շարժում ու կյանք էր զգացվում, իսկ դիմացի՝ գլխավոր մասում, ուր պալատի միակ և ակամա կենվորը՝ կուսակալն էր ապրում. այդ մասն իր սյունաշարերով և ոսկյա արձաններով ասես կուրացել էր շատ վառ լուսնի ներքո։ Այստեղ, պալատի ներսում, խավարն ու լռությունն էր թագավորում։ Եվ կուսակալն, ինչպես ասել էր Աֆրանիոսին, ներս գնալ չկամեցավ։ Նա հրամայեց անկողին գցել պատշգամբում, հենց այնտեղ, ուր ճաշել էր, իսկ առավոտյան հարցաքննությունն էր վարել։ Կուսակալը պառկեց մահճին, բայց քունը չցանկացավ մոտ գալ նրան։ Մերկացած լուսինը բարձր կախված էր մաքուր երկնքում, և կուսակալն աչքերը չէր կտրում նրանից մի քանի ժամ շարունակ։

Մոտավորապես կեսգիշերին քունն ի վերջո գթաց իգեմոնին։ Ջղաձգորեն հորանջելով, կուսակալն արձակեց թիկնոցի կոճակներն ու դեն շպրտեց, հանեց շապիկն օղակող, պատենավոր պողպատյա դաշույնով լայն գոտին, դրեց մահճի կող-

քին գտնվող բազկաթոռի վրա, հանեց մույկերն ու մեկնվեց։ Բանգան անմիջապես բարձրացավ մահճակալի վրա ու պառկեց կողքին, գլուխ-գլխի, և կուսակալը, ձեռքը գցելով շան վզին, վերջապես փակեց աչքերը։ Այդ ժամանակ միայն քնեց և շունը։

Մահիճը կիսախավարի մեջ էր, լուսնից սյունով ծածկված, բայց առմուտքի աստիճաններից անկողին էր ձգվում լուսնային ժապավենը։ Ու հենց որ կուսակալը կորցրեց կապն այն ամենի հետ, ինչ շրջապատում էր նրան իրականում, անմիջապես շարժվեց լուսարձակ ճանապարհով ու վեր ելավ դրանով դեպի լուսինը։ Նա նույնիսկ ծիծաղեց երազում երջանկությունից, քանի որ ամեն ինչ սքանչելի ու անկրկնելի ստացվեց թափանցիկ ու երկնագույն ճանապարհին։ Նա քայլում էր Բանգայի ուղեկցությամբ, իսկ կողքից գալիս էր թափառական փիլիսոփան։ Մի շատ խրթին ու կարևոր բանի շուրջ էին վիճում, ընդ որում ոչ մեկը չէր կարողանում հաղթել մյուսին։ Ոչ մի հարցում համամիտ չէին, և դրանից նրանց վեճը հատկապես հետաքրքրական էր ու անվախճան։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այսօրվա մահապատիժը զուտ թյուրիմացություն էր. ահա և փիլիսոփան, որն այդչափ անհավանականորեն անհեթեթ բան էր հորինել, թե իբր բոլոր մարդիկ բարի են, քայլում էր կողքից, հետևաբար նա կենդանի էր։ Եվ, անշուշտ, լիովին սարսափելի բան կլիներ մտածելն անգամ այն մասին, որ նման մարդուն կարելի է մահապատժի ենթարկել։ Մահապատիժ չէ՛ր եղել։ Չէ՛ր եղել։ Ահա թե որն էր լուսնի սանդուղքով այդ վերձիգ ուղևորության հրաշալիքը։

Ազատ ժամանակն այնքան էր, որքան պետք էր, ամպրոպը միայն իրիկնադեմին կլինի, և վախկոտությունն, աներկբայորեն, ամենասարսափելի արատներից մեկն է։ Այդպես էր ասում Յեշուա Հա-Նոցրին։ Ոչ, փիլիսոփա, ես առարկում եմ, դա ամենասարսափելի՛ արատն է։

Ահա, օրինակ, չվախեցավ, չէ՞, Հրեաստանի ներկայիս կուսակալը, լեգեոնի նախկին տրիբունն այն ժամանակ, Կուսանաց Հովտում, երբ կատաղած գերմանները քիչ էր մնացել հոշոտեին Առնետորս-Հսկային։ Բայց ողորմացեք ինձ, փիլիսոփա։ Մի՞թե դուք, ձեր խելքով հանդերձ, թույլ եք տալիս մտածել, որ կեսարի դեմ հանցանք գործած մարդու պատճառով իր պաշտոնը կխորտակի Հրեաստանի կուսակալը։

— Այո, այո,— տնքում ու երազի մեջ հեծկլտում էր Պիղատոսը։

Իհարկե, կխորտակի։ Առավոտյան դեռևս չէր խորտակի, իսկ հիմա, գիշերով, ծանրութեթև անելով ամեն ինչ, համաձայն է խորտակել։ Նա ամեն քայլի կդիմի՝ բացարձակապես անմեղ, խելացնոր երազողին ու բժշկին մահապատժից ազատելու համար։

— Հիմա մենք միշտ միասին կլինենք,— երազում նրան ասում էր ցնցոտիապատ թափառական-փիլիսոփան, որ հայտնի չէ, թե ինչ եղանակով կանգնել էր ոսկենիզակ հեծյալի ճանապարհին։

Քանի որ մեկը նա է, այդտեղ է և մյուսը։ Կհիշեն ինձ, իսկույն ևեթ քեզ էլ կհիշեն։ Ինձ՝ ընկեցիկիս, անհայտ ծնողների զավակիս, և քեզ՝ աստղագուշակ-թագավորի և ջրաղացպանի դստեր՝ գեղեցկուհի Փիլայի որդուն։

— Այո, բայց չմոռանաս, հիշիր ինձ, աստղագուշակի որդուս,— քնի մեջ խնդրում էր Պիղատոսը։ Եվ քնի մեջ կողքից քայլող էն-Սարիդցի մուրացկանի գլխի դրական շարժումը վաստակելով, Հրեաստանի դաժան կուսակալը ուրախությունից լալիս ու ծիծաղում էր քնի մեջ։

Այդ ամենը լավ էր, բայց նույնքան սարսափելի էր իգեմոնի արթնացումը։ Բանգան լուսնահաչ տվեց, և սլկուն, ասես յուղով փայլեցրած, երկնագույն ճանապարհը խորտակվեց կուսակալի առաջ։ Նա բացեց աչքերը, և առաջին բանը որ հիշեց՝ դա այն էր, որ մահապատիժը եղել է։ Առաջին բանը, որ արեց կուսակալը, սովորական շարժումով Բանգայի վզակապից կառչելն էր, հետո հիվանդ աչքերով սկսեց լուսինը փնտրել ու տեսավ, որ նա մի քիչ թեքվել է և արծաթազօծվել։ Տհաճ ու տագնապած մի լույս էր խաթարում նրա լույսը, որ խաղում էր պատշգամբում, ուղիղ աչքերի դիմաց։ Հարյուրապետ Առնետորսի ձեռքում վառվում ու ծուխ էր արձակում ջահը։ Ձեռքին ջահ բռնածը վախով ու չարությամբ աչքերը խեթել էր ցատկի պատրաստված վտանգավոր գազանի վրա։

— Հանգիստ, Բանգա,— հիվանդ ձայնով ասաց կուսակալը և հազաց։ Ձեռքով պաշտպանվելով բոցից, նա շարունակեց.— Գիշերով էլ, լուսնի ներքո էլ հանգիստ չունեմ։ Ո՜վ աստվածներ։ Ձեր պաշտոնն էլ է վատ, Մարկոս։ Խեղանդամ եք դարձնում զինվորներին...

Անտանելի զարմանքով Մարկոսը կուսակալին էր նայում, և նա սթափվեց։ Կիսաքուն արտասանած անտեղի խոսքերը սքողելու համար կուսակալն ասաց.

— Հարյուրապետ, մի նեղացիր, իմ վիճակը, կրկնում եմ, ավելի վատ է։ Ի՞նչ եք ուզում։

— Գաղտնի ծառայության պետն է եկել ձեզ մոտ,— հանգիստ հայտնեց Մարկոսը։

— Կանչեք, կանչեք,— կոկորդը հազով մաքրելով, հրամայեց կուսակալը և բոբիկ ոտքերը քստքստացնելով սկսեց մույկերը փնտրել։ Բոցը խաղաց սյուներն ի վեր, հարյուրապետի պայտած կոշիկները կտկտացին խճահատակի վրա։Հարյուրապետն այգի եկավ։

— Լուսնի ներքո էլ հանգիստ չունեմ,— ատամները կրճըտացնելով՝ ինքն իրեն ասաց կուսակալը։

Պատշգամբում հարյուրապետի փոխարեն հայտնվեց կնգուղավոր մարդը։

— Բանգա, հանգիստ,— ցածրաձայն ասաց կուսակալը և սեղմեց շան ծոծրակը։

Նախքան խոսել սկսելը, Աֆրանիոսը, իր սովորության համաձայն, շուրջը նայեց և ստվերի տակ մտավ, ու, համոզվելով, որ Բանգայից բացի, պատշգամբում ավելորդ մեկը չկա, ցածրաձայն ասաց.

— Կուսակալ, խնդրում եմ ինձ դատի տալ։ Դուք իրավացի էիք։ Ես չկարողացա պահպանել Հուդա Իսկարիովտացուն, նրան սպանեցին։ Խնդրում եմ դատի տալ ինձ և պաշտոնանկ անել։

Աֆրանիոսին թվաց, թե իրեն չորս աչքեր են նայում՝ շան և գայլի։

Աֆրանիոսը քղամիդի տակից հանեց արյունից կոշտացած տոպրակը՝ երկու կնիքով կնքված։

— Ահա, փողերով այս տոպրակը մարդասպանները գցել են քահանայապետի տունը։ Տոպրակի վրայի արյունը Հուդա Իսկարիովտացու արյունն է։

— Հետաքրքիր է, ինչքա՞ն է մեջը,— հարցրեց Պիղատոսը, հակվելով տոպրակի վրա։

— Երեսուն արծաթ։

Կուսակալը քթի տակ ծիծաղեց ու ասաց.

— Քիչ է։

Աֆրանիոսը լուռ էր։

— Որտե՞ղ է սպանվածը։

— Այդ մեկը չգիտեմ,— հանգիստ արժանապատվությամբ պատասխանեց մարդը, որ երբեք չէր բաժանվում իր կնգուղից,— այսօր առավոտյան կսկսենք փնտրել։

Կուսակալը ցնցվեց՝ թողնելով մույկի փոկը, որ ոչ մի կերպ չէր կոճկվում։

— Բայց դուք հաստատապե՞ս գիտեք, որ նա սպանված է։

Կուսակալը չոր պատասխան ստացավ։

— Տասնհինգ տարի Հրեաստանում եմ աշխատում, կուսակալ։ Ծառայությունս սկսել եմ Վալերիոս Գրատոսի օրոք։ Ինձ համար պարտադիր չէ տեսնել դիակը՝ ասելու համար, թե մարդը սպանված է, և ահա, զեկուցում եմ ձեզ, որ նա, ում կոչում էին Հուդա, եկած Իսկարիովտ քաղաքից, մի քանի ժամ առաջ սպանված է։

— Ներեցեք ինձ, Աֆրանիոս,— պատասխանեց Պիղատոսը,— ինչպես հարկն է չեմ արթնացել, դրա համար էլ ասացի դա։ Ես վատ եմ քնում,— կուսակալը քթի տակ ծիծաղեց,— և ամբողջ ժամանակ երազումս լուսնի ճառագայթ եմ տեսնում։ Պատկերացրեք այնքան ծիծաղելի է։ Իբր ես զբոսնում եմ այդ ճառագայթի վրայով։ Այսպես, ես կուզեի իմանալ ձեր ենթադրություններն այս գործի առթիվ։ Որտե՞ղ եք մտադիր փնտրել նրան։ Նստեցեք, գաղտնի ծառայության պետ։

Աֆրանիոսը խոնարհվեց, բազկաթոռը մոտ քաշեց մահճակալին ու նստեց՝ թուրը շրխկացնելով։

— Ես մտադիր եմ նրան փնտրել Գեթսեմանի այգում, ձիթապտղի մամլիչից ոչ հեռու։

— Այսպես, այսպես։ Իսկ ինչո՞ւ հատկապես այնտեղ։

— Իգեմոն, իմ նկատառումներով, Հուդան սպանված է ոչ Երշալայիմի ներսում, ոչ էլ քաղաքից շատ հեռու։ Նրան սպանել են Երշալայիմի մերձակայքում։

— Իր գործի կարկառուն գիտակներից մեկն եմ համարում ձեզ։ Ի դեպ, չգիտեմ, թե բանն ինչպես է Հռոմում, սակայն գաղութներում ձեզ հավասարը չկա։ Բացատրեցեք, ինչո՞ւ։

— Ոչ մի դեպքում ինձ թույլ չեմ տալիս մտածել այն մասին,— ցածրաձայն խոսում էր Աֆրանիոսը,— որ Հուդան կասկածելի ինչ-որ մարդկանց ձեռքն ընկներ քաղաքի ներսում։ Փողոցում գաղտնաբար սպանել չի լինի։ Ուրեմն, խաբեությամբ

*նրան պիտի հրապուրեին-տանեին որևէ մի նկուղ։ Բայց ծառայությունն արդեն փնտրել է նրան Ստորին Քաղաքում և, անկասկած, կգտնեն։ Բայց նա քաղաքում չէ, դա ես երաշխավորում եմ։ Եթե նրան սպանեին քաղաքից հեռու, փողերով այս կապոցն այդքան շուտ չէին կարող գցել։ Նա սպանված է քաղաքի մերձակայքում։ Կարողացել են նրան դուրս քաշել քաղաքից։*

*— Չեմ ըմբռնում, թե ինչ եղանակով կարելի էր դա անել։*

*— Այո, կուսակալ, ամբողջ գործի մեջ դա ամենախրթին հարցն է, և ես նույնիսկ չգիտեմ՝ ինձ կհաջողվի՞ դա լուծել։*

*— Իսկապես, հանելուկային է։ Տոնական գիշերը հավատացյալը հայտնի չէ թե ինչու քաղաքից դուրս է գալիս, թողնելով դատկի ընթրիքը, և այնտեղ սպանվում։ Ո՞վ և ինչո՞վ կարող էր նրան հրապուրել։ Արդյո՞ք կին չի արել դա,— հանկարծ ոգևորված հարցրեց կուսակալը։*

*Աֆրանիոսը պատասխանեց հանգիստ և ծանրակշիռ։*

*— Ոչ մի դեպքում, կուսակալ։ Այդ հնարավորությունն իսպառ բացառվում է։ Հարկ է դատել տրամաբանորեն։ Ո՞վ էր շահագրգռված Հուդայի վախճանով։ Թափառաշրջիկ ինչ-ինչ ցնորամիտներ, ինչ-որ մի խմբակ, ուր ամենից առաջ ոչ մի կին չի եղել։ Ամուսնանալու համար, կուսակալ, դրամ է պահանջվում, մարդ լույս աշխարհ բերելու համար՝ նույնպես, բայց կնոջ օգնությամբ մարդ սպանելու համար շատ մեծ գումար է պետք և ոչ մի թափառական այդ գումարը չունի։ Այս գործում կին չի եղել, կուսակալ։ Ավելին կասեմ, սպանության նման մեկնությունը լոկ կարող է հետքը կորցնել, խանգարել հետաքննությանն ու խճճել ինձ։*

*— Տեսնում եմ, որ դուք միանգամայն իրավացի եք, Աֆրանիոս,— խոսեց Պիղատոսը,— և ես ինձ թույլ տվեցի սոսկ ենթադրությունս հայտնել։*

*— Որն, ավաղ, սխալ էր, կուսակալ։*

*— Բայց ի՞նչ, ուրեմն ի՞նչ այդ դեպքում,— բացականչեց կուսակալը՝ անհագ հետաքրքրությամբ զննելով Աֆրանիոսի դեմքը։*

*— Ենթադրում եմ, որ հենց փողն է պատճառը։*

*— Հոյակապ միտք է։ Բայց ո՞վ և ինչի՞ համար կարող էր նրան փող առաջարկել գիշերը, քաղաքից դուրս։*

*— Օ՜, ո՜չ, կուսակալ, ո՛չ այդպես։ Միայն մեկ ենթադրու-*

թյուն ունեմ, և եթե դա ճիշտ չէ, թերևս ուրիշ բացատրություններ չգտնեմ,— Աֆրանիոսը ավելի մոտ հակվեց դեպի կուսակալը և շշնջաձայն վերջացրեց խոսքը.— Հուդան կամեցել է իր փողը թաքցնել մեկուսի, միայն իրեն հայտնի տեղում։

— Շատ նուրբ բացատրություն է։ Ըստ երևույթին, բանն այդպես էլ եղել է։ Հիմա ես ձեզ հասկանում եմ, նրան ոչ թե մարդիկ են հրապուրել-տարել, այլ իր սեփական միտքը։ Այո, այո, դա այդպես է։

— Այդպես է։ Հուդան կասկածամիտ էր։ Փողերը թաքցնում էր մարդկանցից։

— Այո, դուք ասացիք, Գեթսեմանի այգում։ Իսկ թե ինչու հենց այնտեղ եք մտադիր նրան փնտրել, այդ մեկը, ճիշտն ասած, չեմ հասկանում։

— Օ՜, կուսակալ, շատ պարզ է։ Ոչ ոք իր փողը չի թաքցնի ճանապարհների վրա, արձակ ու ամայի տեղերում։ Ոչ Հեբրոն ոչ Բեթանիա տանող ճանապարհների վրա Հուդան չի եղել։ Նա պիտի լիներ պաշտպանված, ծառերով շրջապատված. աչքից հեռու տեղում։ Շատ պարզ բան է։ Իսկ նման տեղ Գեթսեմանից բացի, Երշալայիմի շրջակայքում չկա։ Նա հեռու գնալ չէր կարող։

— Դուք կատարելապես համոզեցիք ինձ։ Ուրեմն, հիմա ի՞նչ պետք է անել։

— Անմիջապես կսկսեմ փնտրել մարդասպաններին, որոնք հետևել են Հուդային քաղաքից դուրս, իսկ ինքս այդ ընթացքում, ինչպես արդեն ձեզ զեկուցեցի, դատի կգնամ։

— Ինչի՞ համար։

— Իմ պահախումբը երեկոյան աչքից փախցրել է նրան շուկայում, այն բանից հետո, երբ նա թողել է Կայիափայի պալատը։ Թե ինչպես է դա եղել, չեմ ըմբռնում։ Նման բան դեռ չի եղել իմ կյանքում։ Նա հսկողության տակ է առնվել մեր խոսակցությունից անմիջապես հետո։ Սակայն շուկայի շրջակայքում նա ինչ-որ տեղ է ծլկել, այնպիսի մի արտառոց պտույտ տալով, որ անհետ կորել է։

— Այսպես։ Հայտարարում եմ, որ հարկ չեմ համարում ձեզ դատի տալ։ Դուք արել եք ամեն ինչ ըստ կարելվույն, և աշխարհում ոչ ոք,— կուսակալն այստեղ ժպտաց,— չէր կարող ձեր արածից ավելին անել։ Տույժի ենթարկեք լրտեսներին, որոնք կորցրել են Հուդային։ Սակայն այս դեպքում ևս, նախա-

զգուշացնում եմ ձեզ, ես չեմ կամենա, որ տույժը թեկուզ փոքրինչ խիստ լինի։ Վերջիվերջո, մենք ամեն բան արեցինք այդ սրիկայի մասին հոգալու համար։ Հա, մոռացա հարցնել,— կուսակալը ճակատը շփեց,— իսկ ինչպե՞ս են հաջողացրել նրանք փողերը Կայիափայի մոտ գցել։

— Ուրեմն, այսպես, կուսակալ... Դա առանձնապես բարդ բան չէ։ Վրիժառուները Կայիափայի պալատին են մոտեցել ետևից, այնտեղից, որ նրբանցքն է իշխում ետնաբակի վրա։ Ծրարը նրանք շպրտել են ցանկապատի վրայից։

— Ծրարո՞վ։

— Այո, ճիշտ այնպես, ինչպես և ենթադրում էիք, կուսակալ։ Ասենք, ահա,— Աֆրանիոսն այստեղ պոկեց ծրարի կնիքը և պարունակությունը ցույց տվեց Պիղատոսին։

— Աստված սիրեք, ինչ եք անում, Աֆրանիոս, ախր կնիքները հաստատ տաճարային կնիքներ են։

— Չարժե, որ կուսակալն իրեն անհանգստացնի այդ հարցով,— պատասխանեց Աֆրանիոսը՝ ծրարը փակելով։

— Մի՞թե բոլոր կնիքները կան ձեզ մոտ,— ծիծաղելով հարցրեց Պիղատոսը։

— Այլ կերպ չի կարող լինել, կուսակալ,— առանց ծիծաղի նշույլի, շատ խիստ պատասխանեց Աֆրանիոսը։

— Պատկերացնում եմ, թե ինչ է եղել Կայիափայի տանը։

— Այո, կուսակալ, դա շատ մեծ հուզմունք առաջացրեց։ Նրանք ինձ անմիջապես հրավիրեցին։

Նույնիսկ կիսախավարի մեջ երևաց, թե ինչպես են փայլում Պիղատոսի աչքերը։

— Դա հետաքրքիր է, հետաքրքիր...

— Կուսակալ, համարձակվում եմ առարկել, հետաքրքիր չէր։ Ձանձրալիագույն և խիստ հոգնեցուցիչ մի գործ։ Իմ հարցին, թե Կայիափայի պալատում որևէ մեկին փող չի՞ վճարվել, անառարկելի տոնով պատասխանեցին, որ նման բան չի եղել։

— Ա՛խ, այդպե՞ս է, ինչ արած, չի վճարվել, ուրեմն, չի վճարվել։ Ավելի դժվար կլինի մարդասպաններին գտնելը։

— Միանգամայն ճիշտ է, կուսակալ։

— Այո, Աֆրանիոս, ահա թե ինչ անցավ մտքովս հանկարծ. իսկ նա անձնասպան չի՞ եղել։

— Օ՜, ոչ, կուսակալ,— զարմանքից նույնիսկ ետ ընկնելով

*թիկնակին՝ պատասխանեց Աֆրանիուսը,— Ներեցեք ինձ, սակայն դա միանգամայն անհավանական է։*

*— Ա՜հ, այս քաղաքում ամեն ինչ հավանական է։ Պատրաստ եմ վիճել, որ ամենակարճ ժամանակից այդ լուրերը կպտտվեն քաղաքով մեկ։*

*Աֆրանիուսն այստեղ կուսակալի վրա նետեց ի՛ր հայացքը, մտածեց ու պատասխանեց.*

*— Կարող է պատահել, կուսակալ։*

*Ըստ երևույթին, կուսակալը չէր կարողանում ազատվել Իսկարիովտացի այդ մարդու սպանության խնդրից, թեև ամեն ինչ արդեն պարզից պարզ էր, ու հարցրեց նույնիսկ թեթևակի երազկոտ տոնով.*

*— Իսկ ես կկամենայի տեսնել, թե ինչպես էին սպանում նրան։*

*— Նա սպանված է մեծ ճարտարությամբ, կուսակալ,— պատասխանեց Աֆրանիուսը՝ փոքր-ինչ հեգնաքար նայելով կուսակալին։*

*— Իսկ որտեղի՞ց գիտեք։*

*— Բարեհաճեցեք ուշադրություն դարձնել տոպրակի վրա, կուսակալ,— պատասխանեց Աֆրանիուսը,— ես երաշխավորում եմ, որ Հուդայի արյունը շատրվանի պես է գցել։ Ապրածս կյանքի ընթացքում, կուսակալ, ինձ վիճակվել է սպանվածներ տեսնել։*

*— Այնպես որ, ինչ խոսք, նա վեր չի՞ կենա։*

*— Ոչ, կուսակալ, նա վեր կկենա,— փիլիսոփայորեն ժպտալով, պատասխանեց Աֆրանիուսը,— երբ Ամենափրկչի շեփորը, որին սպասում են բոլորը, կհնչի նրա վրա։ Սակայն դրանից շուտ նա չի վեր կենա։*

*— Բավական է, Աֆրանիուս։ Այդ հարցը պարզ է։ Անցնենք թաղմանը։*

*— Մահապատժի ենթարկվածները թաղված են, կուսակալ։*

*— Օ՜, Աֆրանիուս, ձեզ դատի տալը հանցագործություն կլինի։ Դուք արժանի եք բարձրագույն պարգևի։ Ինչպե՞ս եղավ։*

*Աֆրանիուսն սկսեց պատմել ու պատմեց, թե ինչպես այն ժամանակ, երբ ինքը զբաղվում էր Հուդայի գործով, գաղտնի ծառայության խումբը, իր օգնականի հրամանատարությամբ, հասել է բլուրին, երբ իջել է երեկոն։ Գագաթին մարմիններից*

մեկը չի հայտնաբերել։ Պիղատոսը ցնցվեց, ասաց խռպոտաձայն.

— Ախ, ինչպես չկանխատեսեցի այդ բանը։

— Չարժե անհանգստանալ, կուսակալ,— ասաց Աֆրանիոսն ու շարունակեց պատմելը.— Դիսմասի և Հեստասի մարմինները, որոնց աչքերը գիշատիչ թռչունները կտցահարել էին, վերցրել են անմիջապես ու շտապել երրորդ մարմինը փնտրելու։ Հայտնաբերել են շատ շուտով։ Ինչ-որ մեկը...

— Ղևի Մատթեոսը,— ոչ հարցական, այլ ավելի շուտ հաստատաբար ասաց Պիղատոսը։

— Այո, կուսակալ...

Ղևի Մատթեոսը թաքնվել էր Լերկ Գագաթի հյուսիսային լանջի քարայրում, սպասելով մութն ընկնելուն։ Յեշուա Հա-Նոցրիի մերկ մարմինը նրա հետ էր։ Երբ պահախումբը քարայր մտավ ջահերով, հուսալքություն ու կատաղություն պատեց Ղևիին։ Նա բղավում էր, որ ոչ մի հանցանք չի գործել և որ յուրաքանչյուր ոք, օրենքի համաձայն, իրավունք ունի թաղել մահապատժի ենթարկված հանցագործին, եթե ցանկանում է։ Ղևի Մատթեուն ասում էր, որ չի կամենում բաժանվել այդ մարմնից։ Նա բորբոքված էր, անկապ բաներ էր բղավում, մեկ խնդրում էր, մեկ սպառնում ու նզովում...

— Ստիպված եղաք բռնե՞լ,— մռայլված հարցրեց Պիղատոսը։

— Ոչ, կուսակալ, ոչ,— խիստ հանդարտեցնող տոնով պատասխանեց Աֆրանիոսը,— հաջողվեց հանգստացնել հանդուգն խելագարին, բացատրելով, որ մարմինը թաղվելու է։

Ասվածը գիտակցելով, Ղևին հանդարտվեց, բայց հայտարարեց, որ ոչ մի տեղ չի գնա և ցանկանում է մասնակցել թաղմանը։ Նա ասաց, որ չի գնա, նույնիսկ եթե սպանեն իրեն, այդ նպատակի համար անգամ առաջարկում էր հացի դանակը, որ հետն էր։

— Նրան վռնդեցի՞ն,— խեղված ձայնով հարցրեց Պիղատոսը։

— Ոչ, կուսակալ, ոչ։ Իմ օգնականը նրան թույլ է տվել մասնակցել թաղմանը։

— Ձեր օգնականներից ո՞ր մեկն է ղեկավարել այդ գործը,— հարցրեց Պիղատոսը։

— Թուղմայոսը,— պատասխանեց Ափրանիոսն ու ավելացրեց տագնապած.— Գուցե նա սխա՞լ է թույլ տվել։

— Շարունակեք,— պատասխանեց Պիղատոսը,— սխալ չի եղել։ Ափրանիոս, ես ընդհանրապես սկսում եմ մի քիչ շփոթվել, ըստ երևույթին գործ ունեմ մի մարդու հետ, որը երբեք սխալներ չի անում։ Այդ մարդը դուք եք։

Ղևի Մատթեոսին նստեցրին սայլի մեջ, մահապատժի ենթարկվածների մարմինների հետ և մի երկու ժամ հետո հասան ամայի կիրճը, Երշալայիմից հյուսիս։ Փոխնիփոխ աշխատելով, խումբը մեկ ժամվա ընթացքում խոր փոս փորեց և երեք մահապատժի ենթարկվածներին թաղեց այդ փոսի մեջ։

— Մերկանդա՞մ։

— Ոչ, կուսակալ, այդ նպատակի համար խումբն իր հետ խիտոններ էր վերցրել։ Թաղվողների մատներին օղեր հագցվեցին։ Յեշուային՝ մեկ մատնեք ակոսած, Դիսմասինը՝ երկու, Հեստասինը՝ երեք։ Տարբերիչ նշանը հայտնի է Թուղմայոսին։

— Ախ, եթե ես կանխատեսեի,— կնճռոտվելով, խոսեց Պիղատոսը։— Չէ որ ես պետք է տեսնեի այդ Ղևի Մատթեոսին...

— Նա այստե՛ղ է, կուսակալ։

Պիղատոսը, աչքերը լայն բաց արած, որոշ ժամանակ Ափրանիոսին էր նայում, իսկ հետո այսպես ասաց.

— Շնորհակալություն եմ հայտնում ձեզ այս գործի կապակցությամբ արված ամեն ինչի համար։ Խնդրում եմ, վաղն ինձ մոտ ուղարկել Թուղմայոսին, նախօրոք նրան հայտնելով, որ ես գոհ եմ իրենից, իսկ ձեզ, Ափրանիոս,— կուսակալն այստեղ սեղանին դրված գոտու գրպանից մի մատանի հանեց ու տվեց գաղտնի ծառայության պետին,— խնդրում եմ սա ընդունել ի հիշատակ։

Ափրանիոսը խոնարհվեց՝ ասելով.

— Մեծ պատիվ է, կուսակալ։

— Թաղումը կատարած խմբին խնդրում եմ պարգևներ տալ։ Հուդային աչքից փախցրած լրտեսներին՝ նկատողություն։ Իսկ Ղևի Մատթեոսին՝ հիմա ինձ մոտ։ Ինձ հարկավոր են Յեշուայի գործի մանրամասները։

— Լսում եմ, կուսակալ,— պատասխանեց Ափրանիոսը և

սկսեց ետ-ետ գնալ՝ խոնարհվելով, իսկ կուսակալը ծափ զարկեց ու բղավեց.

— Ինձ մոտ եկեք, այստե՛ղ։ Կանթեղ բերեք պատշգամբ։

Աֆրանիոսն արդեն հեռանում էր այգում, իսկ Պիղատոսի ետևը ծառաների ձեռքերին արդեն կրակներ էին ցոլցլում։ Կուսակալի դիմաց, սեղանի վրա երեք կանթեղ հայտնվեց, և լուսնյակ գիշերն իսկույն նահանջեց այգի, ասես Աֆրանիոսն էր հետ տարավ։ Աֆրանիոսի փոխարեն պատշգամբ մտավ անծանոթ, փոքրամարմին ու նիհար մի մարդ, ամդահա հարյուրապետի հետ։ Վերջինս, որսալով կուսակալի հայացքը, անմիջապես ետ գնաց այգի ու անհետացավ։

Կուսակալն ուսումնասիրում էր պատշգամբ եկած մարդուն ագահ ու մի քիչ վախեցած աչքերով։ Այդպես են նայում նրան, ում մասին շատ են լսել, ում մասին իրենք էլ են մտածել և ով, ի վերջո, հայտնվել է։

Քառասունին մոտ կլիներ այդ մարդը՝ սևացած, ցնցոտիապատ, չորացած ցեխով պատած, նայում էր գայլի պես, հոնքերի տակից։ Մի խոսքով, շատ էր անհրապույր ու ավելի շուտ նման էր քաղաքային մուրացկանի, որոնցից շատ կան խռնված տաճարի տափարակի վրա կամ աղմկաշատ ու աղտոտ Ստորին Քաղաքի շուկաներում։

Լռությունը երկար տևեց, և խախտվեց Պիղատոսի մոտ բերվածի տարօրինակ պահվածքով։ Նրա դեմքն այլայլվեց, նա ճոճվեց և եթե կեղտոտ ձեռքը չգցեր սեղանի եզրին՝ ցած էր ընկնելու։

— Քեզ ի՞նչ եղավ,— հարցրեց Պիղատոսը։

— Ոչինչ,— պատասխանեց Ղևի Մատթեոսը և այնպիսի շարժում արեց, կարծես բան կուլ տվեց։ Նրա լղարիկ, մերկ ու կեղտոտ վիզն ուռչեց ու նորից իջավ։

— Պատասխանիր, ի՞նչ եղավ քեզ,— կրկնեց Պիղատոսը։

— Հոգնել եմ,— պատասխանեց Ղևին ու մռայլված նայեց հատակին։

— Նստիր,— ասաց Պիղատոսը և մատնացույց արեց բազկաթոռը։

Ղևին անվստահությամբ կուսակալին նայեց, շարժվեց բազկաթոռի կողմը, վախեցած խեթեց ոսկյա բռնակներին ու նստեց ոչ թե բազկաթոռին, այլ կողքը՝ հատակին։

— Բացատրիր, ինչու՞ չնստեցիր բազկաթոռին,— հարցրեց Պիղատոսը։

— Կեղտոտ եմ, կկեղտոտեմ,— ասաց Ղևին, ցած նայելով։

— Հիմա քեզ ուտելու բան կտան։

— Չեմ ուզում ուտել,— պատասխանեց Ղևին։

— Ի՞նչ կարիք կա ստել,— ցածրաձայն հարցրեց Պիղատոսը,— չէ որ ամբողջ օրը, գուցեև ավելի երկար ժամանակ ոչինչ չես կերել։ Դե լավ, մի ուտի։ Քեզ կանչել եմ, որ ինձ ցույց տաս մոտդ եղած դանակը։

— Զինվորները մոտիցս վերցրեցին, երբ այստեղ էին բերում,— պատասխանեց Ղևին ու ավելացրեց մռայլաձայն։— Վերադարձրեք, ես պետք է տամ տիրոջը, դանակը գողացել եմ։

— Ինչի՞ համար։

— Պարանները կտրատելու համար,— պատասխանեց Ղևին։

— Մարկոս,— բղավեց կուսակալը, և հարյուրապետը սյունաշար մտավ։— Ինձ տվեք նրա դանակը։

Հարյուրապետը գոտու վրայի երկու պատյաններից մեկից հանեց հացի կեղտոտ դանակն ու հանձնեց կուսակալին, իսկ ինքը հեռացավ։

— Իսկ ումի՞ց ես վերցրել դանակը։

— Հեբրոնյան դարպասի մոտի հացի կրպակից, քաղաք մտնելուն պես, ձախ կողմում է։

Պիղատոսը նայեց լայն շեղբին, չգիտես ինչու՝ մատով փորձեց, թե սուր է արդյոք, և ասաց.

— Դանակի համար մի անհանգստացիր, կվերադարձնեն կրպակի տիրոջը։ Իսկ հիմա ինձ ուրիշ բան է պետք. ցույց տուր մագաղաթը, որ մոտդ ես պահում և ուր գրված են Յեշուայի խոսքերը։

Ղևին ատելությամբ նայեց Պիղատոսին և ժպտաց այնպիսի չար ժպիտով, որ դեմքն այլանդակվեց կատարելապես։

— Ուզում եք ամե՞ն ինչ վերցնել։ Նաև վերջին բա՞նը, որ ունեմ,— հարցրեց նա։

— Ես քեզ չասացի՝ տուր,— պատասխանեց Պիղատոսը,— ես ասացի՝ ցույց տուր։

Ղևին ձեռքը տարավ ծոցն ու հանեց մագաղաթագալարը։ Պիղատոսը վերցրեց, բաց արեց, փռեց լույսերի մեջտեղում և, աչքերը կկոցած, սկսեց ուսումնասիրել մելանով գրված դժվար-

ընթեռնելի նիշերը։ Հեշտ չէր հասկանալ այդ ծուռումուռ տողերը, և Պիղատոսը կնճռոտվում էր ու հակվում մագաղաթին՝ մատը տանելով տողերի վրայով։ Համենայն դեպս, նրան հաջողվեց պարզել, որ գրվածն իրենից ներկայացնում է առանձին ասույթների, ինչ-որ ամսաթվերի, կենցաղային նշումների և բանաստեղծական դրվագների չկապակցված շղթա։ Ինչ-որ բաներ կարդաց Պիղատոսը. «Մահ չկա... Երեկ գարնանային քաղցր պտուղ կերանք...»։

Լարումից դեմքը ծամռելով, Պիղատոսն աչքերը կկոցած կարդում էր. «Մենք կտեսնենք կենաց ջրի մաքուր գետը... Մարդկությունն արևին կնայի թափանցիկ բյուրեղի միջով...»

Պիղատոսն այստեղ ցնցվեց։ Մագաղաթի վերջին տողերում նա զանազանեց՝ «... առավելագույն արատը... վախկոտությունն է»։

Պիղատոսը ոլորեց մագաղաթը և կտրուկ շարժումով տվեց Ղևիին։

— Վերցրու,— ասաց նա և մի քիչ լռելուց հետո ավելացրեց.— Ինչպես տեսնում եմ, գրասեր մարդ ես, ու կարիք չկա, որ մեն-մենակ թափառես մուրացկանի շորերով, անտուն-անտեղ։ Կեսարիայում մի մեծ գրադարան ունեմ, ես շատ հարուստ եմ և ուզում եմ քեզ ծառայության վերցնել։ Կդասավորես ու կպահպանես պապիրուսները, կուշտ կլինես ու հագնված։

Ղևին վեր կացավ ու պատասխանեց.

— Ոչ, ես չեմ ուզում։

— Ինչու՞,— հարցնելիս կուսակալի դեմքը մթնեց,— տհա՞ճ եմ ես քեզ, վախենու՞մ ես ինձնից։

Միևնույն գեշ ժպիտն աղավաղեց Ղևիի դեմքը, ու նա ասաց.

— Ոչ, որովհետև դու՛ կվախենաս ինձնից։ Քեզ համար այնքան էլ հեշտ չի լինի երեսիս նայել այն բանից հետո, որ սպանեցիր նրան։

— Լռիր,— պատասխանեց Պիղատոսը,— փող վերցրու։

Ղևին մերժողաբար թափահարեց գլուխը, իսկ կուսակալը շարունակեց.

— Գիտեմ, դու քեզ Յեշուայի աշակերտն ես համարում, բայց ասեմ քեզ, որ ոչինչ չես յուրացրել, ինչ քեզ սովորեցրել է նա։ Քանզի, եթե այդպես լիներ, անպայման ինչ-որ բան կվերցնեիր ինձնից։ Նկատի ունեցիր, որ մահվանից առաջ նա ասել է, որ ոչ ոքի չի մեղադրում,— Պիղատոսը նշանակալի

շարժումով բարձրացրեց մատը, Պիղատոսի դեմքը ցնցվում էր։— Նա ինքն էլ անպայման որևիցե բան կվերցներ։ Դու դաժան ես, իսկ նա դաժան չէր։ Ո՞ւր ես գնալու։

Ղևին հանկարծ մոտեցավ սեղանին, երկու ձեռքերով հենվեց վրան և, բոցավառվող աչքերով կուսակալին նայելով, շշնջաց.

— Իմացիր, հեգեմոն, որ Երշալայիմում ես պետք է սպանեմ մեկին։ Ուզում եմ սա քեզ ասել, որպեսզի իմանաս, որ արյուն դեռ թափվելու է։

— Ես նույնպես գիտեմ, որ դեռ թափվելու է,— պատասխանեց Պիղատոսը,— քո ասածով ինձ չզարմացրեցիր։ Ինչ խոսք, ի՞նձ ես ուզում սպանել։

— Քեզ սպանել ինձ չի հաջողվի,— պատասխանեց Ղևին, ատամները մերկացրած ժպտալով,— այնքան հիմար մարդ չեմ, որ հույս ունենամ, բայց ես սպանելու եմ Հուդա Իսկարիովտացուն, դրան եմ նվիրելու կյանքիս մնացած օրերը։

Կուսակալի աչքերի մեջ այստեղ բավականություն գծագրվեց և, մատով իր մոտ կանչելով Ղևի Մատթեոսին, ասաց.

— Այդ բանն անել քեզ չի հաջողվի, նեղություն մի կրիր։ Այս գիշեր Հուդային արդեն սպանել են։

Ղևին ետ ցատկեց սեղանի մոտից՝ վայրենահայաց չորս կողմը նայելով ու ճչաց.

— Ո՞վ է արել։

— Նախանձ մի եղիր,— ատամները բացած պատասխանեց Պիղատոսն ու շփեց ձեռքերը,— վախենում եմ, որ քեզնից բացի նա ուրիշ երկրպագուներ էլ ունի։

— Ո՞վ է արել,— շշնջաձայն կրկնեց Ղևին։

Պիղատոսը պատասխանեց նրան.

— Ե՛ս եմ արել։

Ղևին բացեց բերանը, ցնցված նայեց կուսակալին, իսկ սա ասաց.

— Իհարկե, արվածը շատ քիչ բան է, բայց և այնպես ես եմ արել։— Ու ավելացրեց.— Հը՞, հիմա արդեն բան կվերցնե՞ս։

Ղևին մտածեց, կամաց-կամաց հանդարտվեց և վերջապես ասաց.

— Կարգադրիր մի կտոր մաքուր մագաղաթ տան ինձ։

*Անցավ մեկ ժամ։ Դևին պալատում չէր։ Հիմա լուսաբացի լռությունը խախտում էր լոկ ժամապահների կամացուկ ոտնաձայնը այգում։ Լուսինն արագ գալկանում էր, երկնքի մյուս եզրին երևում էր վաղորդյան աստղի ճերմակավուն կետը։ Կանթեղները շատ վաղուց էին մարել։ Մահճին պառկած էր կուսակալը։ Ձեռքն այտի տակ դրած, նա քնած էր և շնչում էր անձայն։ Կողքին քնած էր Բանգան։*

*Նիսան ամսու տասնհինգի լուսաբացն այսպես դիմավորեց Հրեաստանի հինգերորդ կուսակալ Պոնտացի Պիղատոսը։*

ԳԼՈՒԽ XXVII

## №50 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱԽՃԱՆԸ

*Երբ Մարգարիտան հասավ գլխի վերջին «... Նիսան ամսու տասնհինգի լուսաբացն այսպես դիմավորեց Հրեաստանի հինգերորդ կուսակալ Պոնտացի Պիղատոսը» բառերին, լույսը բացվեց։*

*Լսվում էր, թե ինչպես բակում, ուռենու և լորենու ճյուղերի մեջ իրենց վաղորդյան աշխույժ զրույցն են սկսել ճնճղուկները։*

*Մարգարիտան ելավ բազկաթոռից, ձգմգվեց ու նոր միայն զգաց, թե որքան է ջարդված մարմինը և ինչպես է ուզում քնել։ Հետաքրքրական է նշել, որ Մարգարիտայի հոգին կատարյալ հանգիստ էր։ Մտքերը խառնիխուռն չէին, ամենևին ցնցված չէր, որ գիշերն անց է կացրել գերբնական եղանակով։ Նրան չէին հուզում հիշողությունները, որ ինքը եղել է սատանայի պարահանդեսին, որ մի հրաշքով վարպետն իրեն է վերադարձվել, որ մոխրից հառնել է վեպը, որ կրկին ամեն ինչ իր տեղում է նրբանցքի նկուղում, որտեղից արտաքսվել էր զրպարտիչ Ալոիզի Մոգարիչը։ Մի խոսքով, Վոլանդի հետ ունեցած ծանոթությունը հոգեկան որևէ խաթարում չէր պատճառել նրան։ Ամեն ինչ այնպես էր, կարծես այդպես էլ պիտի լիներ։ Նա գնաց հարևան սենյակը, համոզվեց, որ վարպետը քնած է խոր ու հանգիստ քնով, հանգցրեց զուր տեղը վառվող սեղանի լամպը, ինքն էլ մեկնվեց դիմացի պատի տակ դրված, հին ու պատռված սավանով ծածկված փոքրիկ բազմոցին։ Մի րոպե անց նա քնած էր ու այդ առավոտ ոչ մի երազ չտեսավ։ Լուռ էին նկուղի*

սենյակները, լուռ էր իրավունքատիրոջ փոքրիկ տնակն ամբողջովին, և ձայն չկար խուլ նրբանցքում։

Բայց այդ ժամանակ, այսինքն շաբաթ լուսաբացին, քնած չէր մոսկովյան հիմնարկություններից մեկի ամբողջ մի հարկը, և բոլոր լուսամուտները, որ նայում էին ասֆալտապատ մեծ հրապարակին, ուր հատուկ մեքենաները դանդաղորեն, հոնդյունով շարժվելով գետինն էին մաքրում խոզանակներով, վառվում էին լիալույս, հատելով ծագող արևի լույսը։

Ամբողջ հարկը զբաղված էր Վոլանդի գործի հետաքննությամբ, և լամպերն ամբողջ գիշեր վառվում էին տասը աշխատասենյակներում։

Ճշմարիտն ասած, գործն արդեն երեկվանից՝ ուրբաթ օրվանից էր պարզվել, երբ ստիպված էին փակել Վարյետեն, ադմինիստրացիայի անհետացման ու ամեն կարգի այլանդակությունների պատճառով, որ տեղի էին ունեցել սև մոգության նշանավոր սեանսի ժամանակ։ Սակայն բանն այն է, որ շարունակ ու անընդմեջ նորանոր նյութեր էին հասնում անքուն հարկսրաժինը։

Կատարելապես ակնհայտ դիվականությամբ զանազանվող, այն էլ հիպնոսական ինչ-ինչ աճպարարություններով ու բացարձակապես որոշակի քրեականությամբ ուղեկցվող այդ արտասովոր գործը հետաքննողներն այժմ Մոսկվայի տարբեր վայրերում կատարված բազմակողմանի ու խճճված դեպքերից միասնական մի կծիկ պետք է գնդեին։

Առաջին մարդը, որ ստիպված էր լինել էլեկտրականությամբ ողողված անքուն հարկում, Արկադի Ապոլլոնովիչ Սեմպլեյարովն էր՝ Ակուստիկ հանձնաժողովի նախագահը։

Ուրբաթ օրը, ճաշից հետո, Կամեննի կամրջի մոտ գտնվող նրա տանը հեռախոսազանգ հնչեց. և տղամարդու մի ձայն լսափողի մոտ խնդրեց Արկադի Ապոլլոնովիչին։ Ապարատին մոտեցած Արկադի Ապոլլոնովիչի կինը մռայլ ձայնով պատասխանեց, որ Արկադի Ապոլլոնովիչը վատառողջ է, պառկել է՝ ննջելու և մոտենալ չի կարող։ Սակայն Արկադի Ապոլլոնովիչն այնուամենայնիվ ստիպված եղավ մոտենալ ապարատին։ Այն հարցին, թե որտեղից են զանգահարում Արկադի Ապոլլոնովիչին, լսափողի ձայնը շատ կարճ պատասխանեց, թե որտեղից։

— Այս վայրկյանիս... հիմա.... այս րոպեիս...— թոթովեց Ակուստիկ հանձնաժողովի նախագահի՝ սովորաբար՛ շատ

գոռոզամիտ կինը և նրա սև սուրաց ննջասենյակ, վեր կացնելու համար Արկադի Ապոլլոնովիչին մահճակալից, որի վրա պառկած էր նա, դժոխային տանջանքներ ապրելով, երեկվա սեանսը և գիշերային խայտառակությունը վերհիշելով, որն ուղեկցվեց նրա սարատովցի ազգականուհուն բնակարանից դուրս վռնդելով։

Ճշմարիտ է, ոչ մի վայրկյան անց, ոչ էլ նույնիսկ մի րոպե անց, այլ քառորդ րոպե անց, ձախ ոտքին հագած մեկ կոշիկով, միայն սպիտակեղենով, նա արդեն ապարատի մոտ էր, և կմկըմում էր.

— Այո, ես եմ... Լսում եմ, լսում եմ...

Նրա կինը, որ այդ պահերին մոռացել էր ի դեմ հավատարմության նողկալի բոլոր հանցանքները, որոնց մեջ մերկացվել էր տարաբախտ Արկադի Ապոլլոնովիչը, վախեցած դեմքը դուրս էր հանել միջանցքի դռնից, օդի մեջ թափահարում էր մյուս կոշիկն ու շշնջում.

— Կոշիկդ հագիր, կոշիկդ... Ոտքերդ կմրսեցնես,— և ի պատասխան Արկադի Ապոլլոնովիչը, բոբիկ ոտքը թափ տալով կնոջ վրա, աչքերի մեջ՝ գազանային արտահայտություն, քրթմընջում էր խոսափողի մեջ.

— Այո, այո, այո, իհարկե, հասկանում եմ... Հիմա դուրս կգամ։

Ամբողջ երեկոն Արկադի Ապոլլոնովիչն անցկացրեց այդ նույն հարկում, ուր հետաքննությունն էր գնում։ Ծանր խոսակցություն էր, անտանելիագույն խոսակցություն, քանի որ ստիպված էր ամենայն շիտակությամբ պատմել ոչ միայն այդ գարշելի սեանսի և օթյակի տուրուդմբոցի մասին, այլ միաժամանակ, ինչ, իսկապես, անհրաժեշտ էր, և Ելոխովսկայա փողոցի Միլիցա Անդրեևնա Պոկոբատկոյի, և սարատովցի ազգականուհու, և շատ այլ բաների մասին, որոնք Արկադի Ապոլլոնովիչին անպատմելի տանջանքներ էին պատճառում։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Արկադի Ապոլլոնովիչի՝ կրթված ու զարգացած, այլանդակ սեանսի ականատես եղած մարդու, բանիմաց ու մասնագետ վկայի ցուցմունքները, որը շատ լավ նկարագրեց թե հենց իրեն՝ դիմակավորված խորհրդավոր մոգին, թե նրա երկու սրիկա-օգնականներին, որը շատ լավ հիշում էր, որ մոգի ազգանունը հենց Վոլանդ է, զգալի չափով առաջ տարան քննությունը։ Իսկ Արկադի Ապոլլոնովիչի ցուց-

մունքների համադրումն այլոց ցուցմունքների հետ, որոնց թվում էին նաև սեանսից հետո տուժած որոշ տիկնայք (մանուշակագույն ներքնազգեստով այն մեկը, որ ապշեցրել էր Ռիմսկուն և, ավաղ, շատերը) և ցրիչ Կարպովը, ում ուղարկում էին Սադովայա փողոցի №50 բնակարանը, իրոք, անմիջապես պարզեցին այն տեղն, ուր հարկ էր փնտրել բոլոր այդ արկածների մեղավորին։

№50 բնակարանում եղան, այն էլ ոչ մեկ անգամ, ու ոչ միայն զննեցին չափազանց բծախնդրությամբ, այլ նաև թխկթխկացրեցին պատերը, զննեցին բուխարիների ծխնելույզները, թաքստարաններ որոնեցին։ Սակայն այդ բոլոր միջոցառումները որևէ արդյունք չտվեցին, բնակարան կատարած և ոչ մի այցելության ժամանակ այդտեղ ոչ ոքի հայտնաբերել չհաջողվեց, թեև միանգամայն հասկանալի էր, որ բնակարանում ինչ-որ մեկը կա, չնայած այն բանին, որ բոլոր այն անձինք, ովքեր այսպես կամ այնպես պարտավոր էին տնօրինել Մոսկվա եկած օտարերկրյա արտիստների հետ կապված հարցերը, վճռականապես ու կտրականապես հաստատում էին, որ ոչ մի սև մոգ Վոլանդ Մոսկվայում չկա և լինել չի կարող։

Բացարձակապես ոչ մի տեղ նա չէր գրանցվել ժամանելիս, ոչ մեկին իր անձնագիրը կամ որևէ այլ փաստաթուղթ, համաձայնագիր ու պայմանագիր չէր ցույց տվել. և ոչ ոք նրա մասին ոչինչ չէր լսել։ Համերգային հանձնաժողովի ծրագրային բաժնի վարիչ Կիտայցևը երդում-պատառ էր լինում, որ անհետացած Ստյոպա Լիխոդեևը որևէ Վոլանդի ներկայացման և որևէ ծրագիր իրեն հաստատման չի ուղարկել և այդ Վոլանդի գալստյան մասին իրեն՝ Կիտայցևին, չի զանգահարել։ Այնպես որ իր՝ Կիտայցևի համար լրովին անհայտ է ու անհասկանալի, թե Վարյետեում նման սեանս թույլատրել ինչպես կարող էր Ստյոպան։ Իսկ երբ ասում էին, որ Արկադի Ապոլլոնովիչն իր աչքերով է տեսել այդ մոգին սեանսի ժամանակ, Կիտայցևը լոկ ձեռքերն էր տարածում և աչքերը երկինք բարձրացնում։ Եվ արդեն Կիտայցևի աչքերից կարելի էր տեսնել ու համարձակորեն ասել, որ նա բյուրեղապակու պես մաքուր է։

Այդ նույն Պրոխոր Պետրովիչը՝ համերգային գլխավոր հանձնաժողովի նախագահը...

Ի դեպ. նա իր կոստյումի մեջ վերադարձավ անմիջապես այն բանից հետո, երբ միլիցիան նրա աշխատասենյակը մտավ, ի

մոլեգին ցնծություն Աննա Ռիչարդովնայի և ի մեծ տարակուսանք զուր տեղը ոտքի հանված միլիցիայի։ Ի դեպ, մի բան էլ. իր մոխրագույն, զոլավոր կոստյումի մեջ վերադարձած Պրոխոր Պետրովիչը լիովին հավանություն տվեց բոլոր մակագրություններին, որ կոստյումն էր թողել իր կարճատև բացակայության ընթացքում։

... ուրեմն, այն նույն Պրոխոր Պետրովիչը ամենակտրական եղանակով ոչինչ չգիտեր ոչ մի Վոլանդի մասին։

Կամքը ձերը լինի, բայց մի անհեթեթ բան էր ստացվում. հազարավոր հանդիսականներ, Վարյետեի ամբողջ անձնակազմը, վերջապես Սերգեյ Ապոլլոնովիչ Սեմպլեյարովը՝ գերկրթվածագույն մի մարդ, տեսել էին այդ մոգին, ինչպես նաև նրա երիցս նզովյալ ընթերականերին, այնինչ ոչ մի տեղ նրան գտնելու նվազագույն հնարավորություն չկար։ Իսկ ի՞նչ եղավ, թույլ տվեք ձեզ հարց տալ. գետնի տա՞կն անցավ իր զզվելի սեանսից հետո, թե՞, ինչպես ոմանք են պնդում, ամենևին էլ Մոսկվա չի եկել։ Բայց եթե ընդունենք առաջինը, ապա, գետնի տակ անցնելիս, նա իր հետ է տարել Վարյետեի ադմինիստրացիայի ղեկավարությունը՝ լրիվ, իսկ եթե երկրորդը, ապա չի՞ ստացվում արդյոք, որ չարաբաստիկ թատրոնի ադմինիստրացիան ինքը, նախապես որևէ գարշելի գործ անելով (միայն հիշեք աշխատասենյակի կոտրած լուսամուտը և Տուզբուբենի վարքը), անհետ չքացել է Մոսկվայից։

Հարկ է պատշաճը հատուցել նրան, ով գլխավորում էր հետաքննությունը։ Անհետացած Ռիմսկուն գտան շշմեցուցիչ արագությամբ։ Բավական էր Տուզբուբենի գործելակերպը կինոթատրոնի մոտի տաքսիների կանգառում համադրել ժամանակի որոշ կետերի հետ, ինչպես ասենք, երբ է վերջացել սեանսը և հենց երբ կարող էր անհետանալ Ռիմսկին, որպեսզի անհապաղ հեռագիր տրվեր Լենինգրադ։ Մեկ ժամ անց եկավ պատասխանը (ուրբաթ իրիկնադեմին), որ Ռիմսկին հայտնաբերված է «Աստորիա» հյուրանոցի չորս հարյուր քսաներորդ համարում, չորրորդ հարկում, այդ օրերին Լենինգրադ՝ գաստրոլների մեկնած մոսկովյան թատրոններից մեկի ռեպերտուարային բաժնի վարիչի համարի կողքին, հենց այն համարում, ուր, ինչպես հայտնի է, մոխրաերկնագույն, ոսկեզօծ կահույք կա և սքանչելի լոգասենյակ։

«Աստորիայի» չորս հարյուր քսաներորդ համարի հագուս-

*…ւեզնի պահարանում թաքնվելիս հայտնաբերված Ռիմսկին անմիջապես ձերբակալվել էր և հենց Լենինգրադում հարցաքննվել։ Որից հետո հեռագիր եկավ Մոսկվա, թե Վարյետեի ֆինտնօրենը անմեղունակ վիճակի մեջ է, որ խելքը գլխին պատասխաններ չի տալիս հարցերին ու չի ցանկանում պատասխանել, սոսկ մի բան է խնդրում, որ իրեն թաքցնեն զրահապատ խցիկում ու զինված պահակ կարգեն վրան։ Մոսկվայից հեռագրով հրամայվեց՝ Ռիմսկուն պահախմբի ուղեկցությամբ Մոսկվա հասցնել, որի հետևանքով ուրբաթ երեկոյան Ռիմսկին և մեկնեց պահախմբի ուղեկցությամբ, երեկոյան գնացքով։*

*Հենց ուրբաթ երեկոյան դեմ Լիխոդեևի հետքն էլ գտան։ Բոլոր քաղաքները հեռագրեր էին ուղարկվել Լիխոդեևի մասին հարցումներով, և Յալթայից պատասխան ստացվեց, որ Լիխոդևը Յալթայում էր, բայց ինքնաթիռով Մոսկվա է թռել։*

*Միակ մարդը, ում հետքը չհաջողվեց գտնել, Վարենուխան էր։ Նրանց բացառությամբ ամբողջ Մոսկվային հայտնի թատերական նշանավոր ադմինիստրատորն ասես գետնի տակն էր անցել։ Այդ ընթացքում ստիպված եղան զբաղվել նաև Մոսկվայի տարբեր վայրերում, Վարյետե թատրոնից դուրս, կատարված դեպքերով։ Ստիպված էին պարզաբանել «Փառապանծ ծով» երգող աշխատակիցների արտասովոր դեպքը ( ի դեպ, պրոֆեսոր Ստրավինսկուն հաջողվեց նրանց խելքի բերել երկու ժամվա ընթացքում, ենթամաշկային ինչ-որ սրսկումների միջոցով), այլ անձանց կամ հիմնարկություններին դրամի անվան տակ սատանան գիտե, թե ինչեր ներկայացրած անձանց, ի վերջո դրանց հետևանքով տուժած մարդկանց առնչվող դեպքերը։*

*Ինչպես հասկանալի է ինքնըստինքյան, ամենատհաճ, այդ բոլոր դեպքերից ամենախայտառակ ու անլուծելի դեպքը հանգուցյալ գրականագետ Բեռլիոզի գլխի հափշտակման դեպքն էր, կատարված օրը ցերեկով, ուղղակի Գրիբոեդովյան դահլիճում դրված դագաղից։*

*Տասներկու մարդ էին իրականացնում հետաքննությունը, ասես շյուղի վրա հավաքելով Մոսկվայով մեկ տարածված այդ բարդ գործի նզովյալ հանգույցները։*

*Քննիչներից մեկը եկավ պրոֆեսոր Ստրավինսկու կլինիկան և առաջին հերթին խնդրեց իրեն ներկայացնել այն անձանց ցուցակը, ովքեր կլինիկա էին ընդունվել վերջին երեք օրերի ընթացքում։ Այդ եղանակով հայտնաբերվեցին Նիկանոր Իվանովիչ*

Բոսոյը և տարաբախտ կոնֆերանսյեն, որի գլուխը պոկել էին։ Ասենք, նրանցով քիչ զբաղվեցին։ Հիմա արդեն պյուրին էր հաստատել, որ այդ երկուսը խորհրդավոր մեծի գլխավորած միևնույն ավազակախմբի զոհերն են։ Բայց ահա Իվան Նիկոլաևիչ Անապաստանը ծայրաստիճան հետաքրքրեց քննիչին։

Իվանուշկայի 117-րդ սենյակի դուռը բացվեց ուրբաթ իրիկնադեմին, և սենյակ մտավ կլորերես, հանդարտ և մեղմ վարվելաձևով մի երիտասարդ, որ ամենևին նման չէր քննիչի, այդուհանդերձ, Մոսկվայի լավագույն քննիչներից մեկն էր։ Նա տեսավ մահճակալին պառկած, գունատված և ամքած երիտասարդի, որի աչքերի մեջ չորսբոլորը կատարվող ամեն ինչի նկատմամբ անտարբերություն էր գծագրված, որոնք հառվում էին մեկ հեռուները՝ շրջապատից վեր, մեկ՝ հենց սեփական խորքերը։

Քննիչը սիրալիր ներկայացավ ու ասաց, որ եկել է Իվան Նիկոլաևիչի մոտ, նախանցյալ օրը Պատրիարքական լճի մոտ կատարված դեպքերի մասին զրուցելու։

Օ՜, ինչպես կցնծար Իվանը, եթե քննիչը նրա մոտ ավելի շուտ հայտնվեր, թեկուզ ասենք, լույս հինգշաբթի գիշերը, երբ Իվանը՝ մոլեգնած ու կրքոտաբար ձգտում էր, որ լսեն իր պատմությունը Պատրիարքական լճի դեպքերի մասին։ Հիմա կատարվել էր խորհրդավոր ձերբակալմանը սատար լինելու նրա երազանքը, արդեն ինչ-որ մեկի մոտ շտապելու կարիքը չուներ, մոտն էին եկել հենց նրա համար, որ լսեին պատմածը, թե ինչ կատարվեց չորեքշաբթի երեկոյան։

Սակայն, ավաղ, Իվանուշկան բոլորովին փոխվել էր այն ժամանակաընթացքում, որ անցել էր Բեռլիոզի վախճանի պահից։ Նա պատրաստ էր հաճույքով ու քաղաքավարի պատասխանել քննիչի բոլոր հարցերին, բայց անտարբերությունն զգացվում էր թե Իվանի հայացքի, թե նրա խոսելաձևի մեջ։ Բանաստեղծին այլևս չէր հուզում Բեռլիոզի ճակատագիրը։

Մինչ քննիչի գալը Իվանուշկան պառկած ննջում էր, ու նրա աչքի առջևով որոշ տեսիլքներ էին անցնում։ Այսպես, նա տեսավ արտասովոր, անհասկանալի, անիրական մի քաղաք՝ մարմարի խոշոր զանգվածներով, մաշված սյունաշարերով, արևի տակ փայլփլող տանիքներով, Անտոնիոսի սև ու մռայլ, դաժան աշտարակով, արևմտյան բլրի վրա մինչև կտուրը այգու համարյա արևադարձային կանաչության մեջ թաղված և այդ

կանաչից վեր մայրամուտի մեջ կրակվող բրոնզե արձաններով պալատը, նա տեսավ հինավուրց քաղաքի պարիսպների տակով քայլող հռոմեական զրահավոր հարյուրյակները։

Նինջի մեջ Իվանի դիմաց հայտնվեց բազկաթոռի մեջ անշարժացած, սափրված, ջղաձիգ դեղին դեմքով մի մարդ, արնագույն աստառով սպիտակ թիկնոցը հագին, որ ատելությամբ նայում էր փարթամ ու օտար այգուն։ Տեսավ Իվանը նաև անտառազուրկ դեղին սարը՝ մարմիններից ազատված սյուներով։

Իսկ Պատրիարքական լճի մոտ կատարվածը բանաստեղծ Իվան Անապաստանին այլևս չէր հետաքրքրում։

— Ասացեք, Իվան Նիկոլաևիչ, իսկ դուք ինչքան հեռու էիք գտնվում դռնակից, երբ Բեռլիոզն ընկավ տրամվայի տակ։

Հազիվ նկատելի անտարբեր մի քմծիծաղ չգիտես ինչու շարժեց Իվանի շրթունքները, և նա պատասխանեց.

— Ես հեռու էի։

— Իսկ այդ վանդակավորն անմիջապես դռնակի մո՞տ էր։

— Ոչ, նա նստած էր նստարանին, քիչ հեռվում։

— Դուք լա՞վ եք հիշում, որ նա չմոտեցավ դռնակին այն պահին, երբ Բեռլիոզն ընկավ։

— Հիշում եմ։ Չմոտեցավ։ Նա փռված նստած էր։

Սրանք քննիչի վերջին հարցերն էին։ Դրանից հետո նա վեր կացավ, ձեռքը մեկնեց Իվանուշկային, շուտափույթ ապաքինում ցանկացավ և հույս հայտնեց, որ շուտով կրկին կկարդա նրա բանաստեղծությունները։

— Ոչ,— ցածրաձայն պատասխանեց Իվանը,— ես այլևս բանաստեղծություն չեմ գրելու։

Քննիչը քաղաքավարի ժպտաց քթի տակ, իրեն թույլ տվեց վստահություն հայտնել, որ բանաստեղծը ներկայումս փոքրինչ դեպրեսիվ վիճակի մեջ է, բայց դա շուտով կանցնի։

— Ոչ,— պատասխանեց Իվանը, նայելով ոչ թե քննիչին, այլ հեռուները՝ հանգչող երկնակամարին,— երբեք չի անցնի։ Բանաստեղծությունները, որ գրում էի, վատ բանաստեղծություններ են, ու ես հիմա հասկացա դա։

Քննիչը հեռացավ Իվանուշկայի մոտից՝ հույժ կարևոր նյութ ստանալով։ Դեպքերի թելը վերջից սկիզբ կծկելով, վերջապես հաջողվեց հասնել այն ակունքին, որից ծայր էին առել բոլոր դեպքերը։ Քննիչը չէր կասկածում, որ այդ դեպքերը սկսվել են Պատրիարքական լճի մոտ կատարված սպանությունից։ Ի՞հար-

կի, ոչ Իվանուշկան, ոչ այդ վանդակավորը ՄԱՍՍՈԼԻՏ-ի տարաբախտ նախագահին չեն հրել տրամվայի տակ, նրա, այսպես ասած, ֆիզիկական անկմանը անիվների տակ ոչ ոք չի նպաստել։ Սակայն քննիչը համոզված էր, որ Բեռլիոզը տրամվայի տակ է նետվել (կամ ընկել է նրա տակ) հիպնոսացված վիճակում։

Այո, նյութ շատ կար արդեն, և հայտնի էր արդեն, թե ում և որտեղ պիտի բռնել։ Բայց բանն էլ հենց այն էր, որ ոչ մի կերպ բռնել չէր կարելի։ Երիցս նզովյալ №50 բնակարանում, անկասկած, հարկ է կրկնել, ինչ-որ մեկը կար։ Ժամանակ առ ժամանակ այդ բնակարանը կամ խզված, կամ ռնգային ձայնով պատասխանում էր հեռախոսազանգերին, երբեմն բնակարանում բացում էին լուսամուտը, ավելին՝ պատեֆոնի հնչյուններ էին լսվում այնտեղից։ Այնինչ, ամեն անգամ, երբ գնում էին, բացարձակապես ոչ ոք չէր լինում ներսում։ Իսկ այնտեղ եղել էին ոչ մեկ անգամ արդեն, օրվա տարբեր ժամերի։ Դա քիչ է, ցանցով էին շրջել բնակարանում՝ ստուգելով բոլոր անկյունները։ Հսկում էին ոչ միայն այն ճանապարհը, որ բակ էր տանում՝ դարպասատակից. այլև հետնամուտքը, դա էլ է քիչ, տանիքի վրա, ծխնելույզների մոտ պահախումբ էր կարգված։ Այո, №50 բնակարանը չարություններ էր անում, իսկ դրա դեմ անկարելի էր որևէ բան անել։

Գործն այսպես ձգվեց մինչև ուրբաթ լույս շաբաթ կեսգիշեր, երբ երեկոյան զգեստ ու լաքապատ կոշիկներ հագած բարոն Մայգելը հանդիսավոր կերպով №50 բնակարանը գնաց, որպես հյուր։ Լսվեց, թե ինչպես բարոնին ներս թողեցին բնակարան։ Դրանից ուղիղ տասը րոպե անց, առանց որևէ զանգի, մտան բնակարան, բայց ոչ միայն տանտերերին չգտան, այլև, որ արդեն բոլորովին արտառոց էր, բարոն Մայգելի հետքն անգամ չհայտնաբերեցին։

Ուրեմն, ինչպես և ասվեց, գործն այսպես ձգվեց մինչև շաբաթ լուսաբաց։ Այստեղ նոր և շատ հետաքրքիր տվյալներ ավելացան։ Մոսկովյան օդակայանում վայրէջք կատարեց Ղրիմից ժամանած վեցտեղանի մարդատար ինքնաթիռը։ Ի թիվս այլ ուղևորների, մի տարօրինակ ուղևոր էլ իջավ։ Երիտասարդ քաղաքացի էր, երեսի մազերն աճած, մի երեք օր չլվացված, բորբոքված ու վախեցած աչքերով, առանց իրերի և փոքր-ինչ արտառոց հագնված։ Քաղաքացու գլխին փափախ կար, գիշե-

բաշլիկի վրայից այծենակաշ էր հագել, ոտքերին՝ կապույտ, կաշվե, հենց նոր գնված չուստեր։ Հենց որ հեռացավ սանդուղքից, որով իջնում էին ինքնաթիռի խցիկից, նրան մոտեցան։ Այդ քաղաքացուն արդեն սպասում էին, ու որոշ ժամանակ անց Վարյետեի անմոռաց տնօրենը՝ Ստեպան Բոգդանովիչ Լիխոդեևը, կանգնեց հետաքննության առաջ։ Նա նոր տվյալներ ավելացրեց։ Հիմա պարզ դարձավ, որ Վոլանդը Վարյետե է թափանցել արտիստի անվան տակ, հիպնոսելով Ստյոպա Լիխոդեևին, իսկ հետո հնար է գտել այդ նույն Ստյոպային Մոսկվայից շպրտել աստված գիտե, թե քանի կիլոմետր հեռու։ Նյութն այսպիսով ավելացավ, բայց գործը դրանից չթեթևացավ, այլ թերևս նույնիսկ ծանրացավ մի քիչ, քանի որ ակնհայտ էր դառնում, որ այնքան էլ հեշտ չի լինելու բռնելը մի անձնավորության, որն այն տեսակ խաղեր է անում, որոնցից մեկի զոհը Ստեպան Բոգդանովիչն էր դարձել։ Իմիջիայլոց, Լիխոդեևը, սեփական խնդրանքով, բանտարկվեց հուսալի խցիկում, և հետաքննության առաջ կանգնեց Վարենուխան, որը հենց նոր ձերբակալվել էր իր բնակարանում, ուր վերադարձել էր համարյա երկու օրուգիշեր անհայտ բացակայությունից հետո։

Չնայած Ազազելլոյին տված՝ այլևս չստելու խոստման, ադմինիստրատորը հենց ստից սկսեց։ Թեև, ասենք, դրա համար նրան շատ խիստ պետք չէ դատապարտել։ Չէ որ Ազազելլոն նրան արգելել էր ստել ու գռեհկություններ թույլ տալ հեռախոսով, իսկ տվյալ դեպքում ադմինիստրատորը խոսում էր առանց այդ ապարատի օգնության։ Աչքերը փախցնելով. Իվան Սավելևիչը հայտարարեց, որ հինգշաբթի ցերեկը Վարյետեի իր աշխատասենյակում մեն-մենակ խմել է ու հարբել, որից հետո ինչ-որ տեղ է գնացել, իսկ թե ուր՝ չի հիշում, ինչ-որ տեղ էլի ստարկա է խմել, իսկ թե որտեղ՝ չի հիշում, մի տեղ ընկել-մնացել է ցանկապատի տակ, իսկ թե որտեղ՝ չի հիշում նորից։ Սոսկ այն բանից հետո, երբ ադմինիստրատորին ասացին, որ իր հիմար ու անխոհեմ վարմունքով խանգարում է կարևոր գործի հետաքննությանը և դրա համար, ինչ խոսք, պատասխան կտա, Վարենուխան հեկեկաց և դողդողացող ձայնով ու չորս կողմը նայելով շշնջաց, որ ստում է բացառապես սարսափից, վախենալով Վոլանդի ավազակախմբի վրեժխնդրությունից, ում ձեռքերում արդեն եղել է և որ խնդրում, աղաչում, երազում է զրահապատ խցիկում փակի տակ լինել։

— Թո՛հ, սատանան տանի Գլուխներն է, մտել այդ գրահապատ խցիկն ու դուրս չի գալիս,— մրթմրթաց քննությունը վարողներից մեկը։

— Նրանց շատ խիստ են վախեցրել այդ սրիկաները,— ասաց այն քննիչը, որ այցելել էր Իվանուշկային։

Վարենուխային համոզեցրեցին՝ որքան կարող էին, ասացին, որ կհսկեն նրան առանց որևիցե գրահապատ խցիկի, և տեղնուտեղը պարզվեց, որ ոչ մի տարկա չի խմել նա ցանկապատերի տակ, այլ որ երկու հոգի ծեծել են իրեն, մեկը՝ ժանիքը դուրս պրծած ու շիկամազ, մյուսը՝ հաստլիկ...

— Հա, կատվի նմա՞ն էր։

— Այո, այո. այո,— սարսափից կիսամեռ ու վայրկյանը մեկ չորս կողմը նայելով շշնջաց ադմինիստրատորը և հետագա մանրամասնությունները պատմեց, թե ինչպես շուրջ երկու օր գոյություն է քարշ տվել №50 բնակարանում, որպես տեղ ցույց տվող-վամպիր, որը քիչ էր մնացել ֆինտնօրեն Ռիմսկու կործանման պատճառը դառնար...

Այդ ժամանակ ներս մտցրեցին լենինգրադյան գնացքով բերված Ռիմսկուն։ Սակայն սարսափից ցնցվող, հոգեպես խանգարված այդ ալեհեր ծերուկը, ի դեմս որի շատ դժվար էր ճանաչել նախկին ֆինտնօրենին, ոչ մի կերպ չէր ուզում ճշմարտությունն ասել և այդ տեսակետից շատ համառը դուրս եկավ։ Ռիմսկին պնդում էր, որ ոչ մի Գելլայի իր աշխատասենյակի լուսամուտի մեջ չի տեսել գիշերը, նույնպես և Վարենուխային, այլ պարզապես վատ է զգացել իրեն և Լենինգրադ է գնացել՝ ոչինչ չհիշելով։ Հարկ չկա ասել, որ հիվանդ ֆինտնօրենն իր ցուցմունքներն ավարտեց գրահապատ խցիկում բանտվելու խնդրանքով։

Աննուշկան ձերբակալվեց այն ժամանակ, երբ փորձ էր անում Արբատի հանրախանութի գանձապահուհուն տասը դոլարանոց թղթադրամ տալ։ Աննուշկայի պատմածը Սադովայայի տան լուսամուտից դուրս թռչող մարդկանց և պայտիկի մասին, որն Աննուշկան, ըստ նրա ասածի, վերցրել էր միլիցիա ներկայացնելու համար, ուշադրությամբ ունկնդրվեց։

— Պայտիկն իսկապե՞ս ոսկյա էր, ադամանդաշար,— հարցրեցին Աննուշկային։

— Ուրեմն, ես ադամա՞նդ չեմ տեսել,— պատասխանեց Աննուշկան։

— Բայց նա ձեզ տասանոցնե՞ր տվեց, ինչպես ասացիք։

— Ուրեմն, ես տասանո՞ց չեմ տեսել,— պատասխանեց Աննուշկան։

— Լավ, իսկ դրանք ե՞րբ դարձան դոլարներ։

— Չեմ իմանում, ի՛նչ դոլար, ի՛նչ բան, ոչ մի դոլար էլ չեմ տեսել,— ճղճղալով պատասխանում էր Աննուշկան,— մենք մեր իրավունքի տերն ենք։ Մեզ փող են բաշխել, դրանով չիթ ենք առնում...— և այստեղ սկսեց անմիտ բաներ դուրս տալ, թե ինքը պատասխան չի տալու տնային վարչության փոխարեն, որը հինգերորդ հարկում սատանա է բնակեցրել, և օրուարև չունեն դրանից։

Քննիչն այստեղ գրիչը թափ տվեց Աննուշկայի վրա, որովհետև բոլորին կարգին ձանձրացրել էր, և կանաչ թղթի վրա նրա համար անցաթուղթ գրեց, որից հետո, ի գոհություն ընդհանուրի, Աննուշկան անհետացավ այդ շենքից։

Հետո մի ամբողջ շարք մարդիկ եկան ու անցան, նրանց թվում նաև Նիկոլայ Իվանովիչը, որ հենց նոր էր ձերբակալվել, բացառապես իր խանդոտ կնոջ հիմարության երեսից, որն առավոտյան կողմ միլիցիա էր հայտնել, թե ամուսինն անհետացել է։ Նիկոլայ Իվանովիչն այնքան էլ չզարմացրեց հետաքննությանը, սեղանին դնելով խեղկատակային տեղեկանքն առ այն, որ ժամանակ է անցկացրել սատանայի պարահանդեսում։ Իր պատմածների մեջ, թե ինչպես Մարգարիտա Նիկոլաևնայի տկլոր տնային աշխատողին իր վրա մեջքին առած օդով տարել է սատանան գիտե, թե որ տեղերը, գետում լողանալու և դրան նախորդած՝ Մարգարիտա Նիկոլաևնայի մերկ վիճակում լուսամուտի մեջ հայտնվելու մասին, Նիկոլայ Իվանովիչը փոքր-ինչ հեռացավ ճշմարտությունից։ Այսպես օրինակ, նա հարկ չհամարեց հիշել այն մասին, որ ինքը հայտնվեց ննջասենյակում, ցած նետված գիշերաշապիկը ձեռքին, և որ Նատաշային Վեներա կոչեց։ Նրա ասածով ստացվում էր, որ Նատաշան դուրս է թռել լուսամուտից, թամբել իրեն ու քշել է Մոսկվայից հեռու...

— Բռնությանն անձնատուր եղած՝ ստիպված էի ենթարկվել,— պատմեց Նիկոլայ Իվանովիչը և իր բարբաջանքն ավարտեց այդ մասին կնոջը ոչ մի խոսք չհայտնելու խնդրանքով։ Ինչ և խոստացան նրան։

Նիկոլայ Իվանովիչի ցուցմունքները հնարավորություն տվեցին պարզել, որ Մարգարիտա Նիկոլաևնան, ինչպես նաև նրա

տնային աշխատող Նատաշան անհետ կորել են։ Միջոցներ ձեռնարկվեցին նրանց որոնելու համար։

Այսպես, ոչ մի վայրկյան չընդհատվող հետաքննությամբ նշանավորվեց շաբաթ օրվա առավոտը։ Քաղաքում այդ ժամանակ ծայր առան ու տարածվեցին միանգամայն անասելի լուրեր, որոնց մեջ ճշմարտության աննշմար չափը ղունազարդված էր ամենաճոխ ստերով։ Խոսում էին այն մասին, որ Վարյետեում սեանս է եղել, որից հետո բոլոր երկու հազար հանդիսականները փողոց են թափվել մորև մերկ վիճակում, որ կախարդական ձևի կեղծ թղթադրամների տպարան են հայտնաբերել Սադովայա փողոցում, որ մի ավազակախումբ գողացել է համերգային մասնաճյուղի հինգ ղեկավարների, բայց որ միլիցիան անմիջապես գտել է բոլորին, ուրիշ շատ բաներ, որոնք նույնիսկ կրկնելու ցանկություն չկա։

Մինչդեռ օրը ճաշ էր դառնում, և այդ ժամանակ այնտեղ, ուր հետաքննությունն էր գնում, հեռախոսազանգ հնչեց։ Սադովայայից հայտնում էին, որ անիծյալ բնակարանը նորից կենդանության նշաններ է ցույց տվել։ Ասվեց, որ ներսից բացել են պատուհանները, որ դաշնամուրի ու երգի ձայներ են լսվել, և որ տեսել են լուսամուտագոգին նստած և արևի տակ տաքացող սև կատվին։

Շոգ օրվա ժամը չորսին մոտ քաղաքացիական հագուստով մի մեծ խումբ տղամարդիկ իջան երեք մեքենաներից Սադովայա փողոցի №302/2 շենքին չհասած։ Տեղ հասած մեծ խումբն այստեղ երկու փոքր խմբերի բաժանվեց, ընդ որում մեկը դարպասատակով բակ մտավ և ուղիղ վեցերորդ շքամուտքը գնաց, իսկ մյուսը բաց արեց սովորաբար մեխված, հետնամուտքը տանող փոքրիկ դռնակը, և երկուսն էլ, տարբեր սանդուղքներով, սկսեցին բարձրանալ դեպի №50 բնակարանը։

Այդ ժամանակ Կորովևն ու Ազազելլոն, ընդ որում Կորովևն իր սովորական հագուստով և ոչ ամենևին տոնական ֆրակով, նստած էին բնակարանի ճաշասենյակում, նախաճաշն էին ավարտում։ Վոլանդը, սովորության համաձայն, ննջասենյակում էր, իսկ թե որտեղ էր կատուն՝ հայտնի չէր։ Բայց դատելով խոհանոցից լսվող կաթսաների չխկչխկոցից, կարելի էր ասել, որ Բեգեմոտը հենց խոհանոցում է և, սովորության համաձայն, իր չարություններն է անում։

— Իսկ այդ ի՞նչ ոտնաձայներ են լսվում սանդուղքի վրա,— հարցրեց Կորովևը՝ խաղացնելով գդալը սև սուրճի բաժակի մեջ։

— Գալիս են մեզ ձերբակալելու,— պատասխանեց Ազազելլոն և մի ըմպանակ կոնյակ խմեց։

— Ա՜ա, լա՜վ, լա՜վ,— ի պատասխան ասաց Կորովևը։

Շքամուտքով բարձրացողներն այդ ժամանակ արդեն երրորդ հարկի սանդղահարթակում էին։ Երկու ջրմուղագործ բնբնում էին շոգեջեռուցման հարմոնի վրա։ Բարձրացողները ջրմուղագործների հետ նշանակալի հայացքներ փոխանակեցին։

— Բոլորը տանն են,— շշնջաց ջրմուղագործներից մեկը, մուրճով թխկթխկացնելով խողովակը։

Այդ ժամանակ առջևից գնացողը թիկնոցի տակից բացահայտորեն հանեց սև մաուզերը, իսկ կողքից բարձրացող մյուսը՝ կեռիկները։ Ընդհանրապես, №50 բնակարանը գնացողները պատրաստված էին ինչպես հարկն է։ Նրանցից երկուսի գրպաններում բարակ, մետաքսե արագ բացվող ցանցեր կային։ Մեկ ուրիշի մոտ օղաթոկ կար, մյուսի մոտ՝ մառլայե դիմակներ և քլորոֆորմի սրվակներ։

Մի վայրկյանում բացվեց №50 բնակարանի մուտքի դուռը, և բոլոր բարձրացողները հայտնվեցին նախասենյակում, իսկ այդ ժամանակ խոհանոցում շրխկացող դուռը ցույց տվեց, որ հետնամուտքից եկող մյուս խումբը նույնպես տեղ է հասել ժամանակին։

Այս անգամ, եթե ոչ կատարյալ, ապա ինչ-որ հաջողություն առկա էր։ Վայրկենապես բոլոր սենյակներում մարդիկ ցրվեցին և ոչ մի տեղ ոչ մեկին չգտան, բայց փոխարենը՝ ճաշասենյակում հայտնաբերեցին, ըստ երևույթին, հենց նոր թողած նախաճաշի մնացորդներ, իսկ հյուրասենյակում, բուխարու վրա, բյուրեղապակյա սափորի կողքին նստած էր վիթխարի սև կատուն։ Թաթերի մեջ պրիմուս էր բռնել։

Կատարյալ լռության մեջ հյուրասենյակ մտածները բավական երկար ժամանակ զննում էին այդ կատվին։

— Ը՜մմ, այո՜... իսկապես զարմանալի է,— շշնջաց եկածներից մեկը։

— Չարություն չեմ անում, ոչ մեկին չեմ անհանգստացնում, պրիմուսս եմ նորոգում,— անբարյացակամորեն խոժոռված, ասաց կատուն,— նաև պարտքս եմ համարում նախազգուշացնել, որ կատուն վաղեմի և անձեռնմխելի կենդանի է։

— Արտակարգ մաքուր են աշխատում,— շշնջաց եկածներից մեկը, իսկ մյուսը բարձրաձայն և հստակ ասաց.

— Դե՛-հ, անձեռնմխելի որովայնախոս կատու, այստեղ համեցեք։

Մետաքսյա ցանցը բացվեց ու առաջ շպրտվեց, բայց նետողն, ի կատարյալ զարմանս բոլորի, վրիպեց ու միայն սափորը որսաց, որը տեղնուտեղը փշրվեց զրնգոցով։

— Ռեմիզ,— բղավեց կատուն,— ուռա՜,— և այստեղ, մի կողմ դնելով պրիմուսը, ետևից քաշեց բրաունինգը։ Վայրկենապես պահեց ամենամոտ կանգնածի վրա, բայց վերջինիս ձեռքից կրակ ցայտեց ավելի շուտ, քան կատուն կհասցներ կրակել, և մաուզերի կրակոցի հետ կատուն գլխիվայր ցած շրմփաց բուխարու վրայից՝ թաթից գցելով բրաունինգը և շպրտելով պրիմուսը։

— Ամեն ինչ վերջացած է,— նվաղ ձայնով ասաց կատուն և նվաղուն տեսքով փռվեց արյան լճակի մեջ,— մի վայրկյանով հեռացեք ինձնից, թույլ տվեք հրաժեշտ տամ երկրին։ Օ՜, իմ բարեկամ Ազազելլո,— տնքաց կատուն՝ արյունաքամ լինելով,— ո՞ւր ես։— Կատուն հանգչող աչքերն ուղղեց ճաշասենյակի դռան ուղղությամբ,— օգնության չեկար դու ինձ անհավասար մարտի պահին։ Դու լքեցիր թշվառ Բեգեմոտին, փոխարինելով նրան մի բաժակ, ճիշտ է, շատ լավ, կոնյակով։ է, ի՜նչ արած, քո խղճին թող մնա իմ մահը, իսկ ես քեզ ժառանգում եմ իմ բրաունինգը...

— Ցանցը, ցանցը, ցանցը,— անհանգստացած շշնջացին կատվի շուրջ կանգնածները։ Բայց ցանցը, սատանան գիտե թե ինչու, խճճվել էր մեկի գրպանում և դուրս չէր գալիս։

— Միակ բանը, որ կարող է փրկել մահացու վիրավոր կատվին,— խոսեց կատուն,— մի կում բենզինն է...— Եվ օգտվելով խառնաշփոթությունից, մռութը դրեց պրիմուսի կլոր անցքին և բենզին խմեց։ Անմիջապես արյունը դադարեց հոսել առջևի ձախ թաթի տակից։ Կատուն վեր ցատկեց ողջ ու առույգ, պրիմուսը կռնատակն առնելով ետ թռավ բուխարու վրա, իսկ այնտեղից, պաստառները պատառոտելով, մագլցեց պատի վրայով ու երկու վայրկյան անց ներս եկածների վերևում էր, մետաղյա վարագուրակալին նստած։

Վայրկենապես ձեռքերը կառչեցին վարագույրից ու վարագուրակալի հետ մեկտեղ պոկեցին-գցեցին, որից արևը ներ-

խումեց ստվերված սենյակը։ Բայց ոչ խարդախորեն կենդանացած կատուն, ոչ պրիմուսը ցած չընկան։ Պրիմուսից չբաժանվելով, կատուն հնար գտավ ցատկել օդի մեջ ու նստել սենյակի կենտրոնում կախված ջահին։

— Ըյարա՛ն,— բղավեցին ներքևում։

— Մենամարտի՛ եմ կանչում,— բղավեց կատուն՝ ճոճվող ջահի վրա թռչելով գլուխների վրայով, և այստեղ նրա թաթերի մեջ կրկին հայտնվեց բրաունինգը, իսկ պրիմուսը նա տեղավորեց ջահի ճյուղերի արանքում։ Կատուն նշան բռնեց և, ճոճանակի պես թռչելով եկածների գլուխների վրայով, կրակ բաց արեց։ Տրաքոցները ցնցեցին բնակարանը։ Հատակին թափվեցին ջահի բյուրեղապակյա կտորները, աստղաձև ճաքեց բուխարու վրայի հայելին, սփռվեց ծեփի փոշին, կրակված պարկուճները ցրիվ եկան հատակին, փշրվեցին պատուհանների ապակիները, ծակված պրիմուսի միջից սկսեց բենզին թափվել։ Հիմա արդեն կատվին կենդանի բռնելու մասին խոսք լինել չէր կարող, և եկածները մաուզերներից կատաղորեն և դիպուկ կրակում էին կատվի գլխին, փորին, կրծքին ու մեջքին։ Կրակոցները խուճապ առաջացրին բակում։

Բայց կրակոցները երկար չտևեցին և, ինքնըստինքյան, աստիճանաբար դադարեցին։ Բանն այն է, որ ոչ կատվին, ոչ եկածներին դա ոչ մի վնաս չհասցրեց։ Ոչ ոք ոչ միայն սպանված, այլև վիրավորված չէր, բոլորն, այդ թվում և կատուն, լիովին անվնաս էին մնացել։ Եկածներից մեկը, վերջնականապես դա ստուգելու համար, հինգ փամփուշտ արձակեց անիծյալ կենդանու գլխին, որին կատուն պատասխանեց մի ամբողջ պահունակով։ Ու նույն բանը՝ ոչ մեկի վրա դա ոչ մի տպավորություն չգործեց։ Կատուն գնում-գալիս էր ջահի վրա, որի ճոճքը կամաց-կամաց նվազում էր, չգիտես ինչու փչելով բրաունինգի փողի մեջ ու թքելով ափին։ Ներքևում լուռ կանգնածների դեմքերին լիակատար տարակուսանքի արտահայտություն երևաց։ Դա միակ դեպքն էր, կամ՝ մեկը միակ դեպքերից, երբ կրակոցները անիսկական ստացվեցին։ Իհարկե, կարելի էր ընդունել, որ կատվի բրաունինգը խաղալիքի պես մի բան է, բայց եկածների մաուզերների մասին նույնն ասել չէր կարելի և ոչ մի կերպ։ Իսկ կատվի առաջին վերքը, որի առթիվ, պարզ է, նվազագույն կասկած անգամ չէր մնացել, ոչ այլ ինչ էր, քան ան-

պարարություն ու կեղտոտ ձևացում, ճիշտ նույնպես և բենզին խմելը։

Կատվին բռնելու մի փորձ էլ արեցին։ Օդապսպրյան գցեցին, որ կապ ընկավ ճյուղերից մեկին, և ջահը պոկվեց։ Ջահի հարվածը հատակին, թվում է, թե ցնցեց ամբողջ շենքը, բայց ոչինչ չստացվեց։ Ներկաների վրա փշուրներ սփռվեցին, իսկ կատուն օդով թռավ ու նստեց բուխարու հայելու ոսկեզօծ շրջանակի վրա, բարձր, առաստաղի տակ։ Նա ոչ մի տեղ չէր պատրաստվում ծլկել, նույնիսկ, ընդհակառակն, համեմատաբար անվտանգ տեղ նստած, մի նոր ճառ սկսեց...

— Ես բացարձակապես չեմ հասկանում,— խոսում էր նա վերևից,— ինձ հետ այսքան կոպիտ վարվելու պատճառները...

Եվ այստեղ այդ ճառը հենց սկզբից ընդհատեց հայտնի չէ, թե որտեղից հնչող ծանր ու բամբ մի ձայն.

— Ի՞նչ է կատարվում բնակարանում։ Ինձ խանգարում են աշխատել։

Մեկ ուրիշ՝ տհաճ ու ռնգային ձայն պատասխանեց.

— Դե, իհարկե, Բեգեմոտն է, սատանան տանի դրան։

Երրորդ՝ խզխզան ձայնն ասաց.

— Մեսսի՛ր։ Շաբաթ է։ Արևը մայր է մտնում։ Մեր գնալու ժամանակն է։

— Ներեցեք, էլ չեմ կարող զրուցել,— ասաց կատուն հայելու վրայից,— մեր գնալու ժամանակն է։ — Նա շպրտեց իր բրաունինգը և ջարդեց լուսամուտի երկու ապակիները։ Ապա բենզին շփեց ցած, և այդ բենզինն ինքն իրեն բռնկվեց՝ բոցի ալիք նետելով մինչև առաստաղ։

Կրակը մի տեսակ արտասովոր բռնկվեց, արագ ու սաստիկ, ինչպես չի լինում նույնիսկ բենզինի դեպքում։ Իսկույն ևեթ ծուխ արձակեցին պաստառները, վառվեց պոկված վարագույրը հատակին և սկսեցին մարմանդ այրվել փշրտված լուսամուտների շրջանակները։ Կատուն զսպանակվեց, մլավեց, հայելու վրայից ցատկեց լուսամտագոգին ու անհետացավ իր պրիմուսով հանդերձ։ Դրսից կրակոցներ լսվեցին։ Ակնագործի այրու պատուհանների բարձրության վրա հակահրդեհային երկաթյա ելարանին նստած մարդը կրակ բաց արեց կատվի վրա, երբ սա լուսամտագոգից լուսամտագոգ էր ցատկում, դեպի, ինչպես արդեն ասվել է, «Ո»-աձև կառուցված շենքի անկյունի ջրորդանը։ Այդ ջրորդանի վրայով կատուն տանիք բարձրացավ։

*[illegible]ները հսկող պահախումբն այնտեղ, ցավոք սրտի, նույնպես ապարդյուն կրակ բաց արեց կատվի վրա, և կատուն [illegible] քաղաքը ողողված մայր մտնող արևի մեջ։*

*Բնակարանում այդ ժամանակ պարկետը բռնկվեց եկածների ոտքերի տակ, և կրակի մեջ, այն տեղում, ուր շինծու վերքով ընկած էր կատուն, ավելի ու ավելի թանձրանալով, հայտնվեց նախկին բարոն Մայգելի՝ ծնոտը վեր ցցված, ապակյա աչքերով դիակը։ Նրան դուրս տանելու հնարավորություն այլևս չկար։ Ցատկոտելով պարկետի վառվող խորանարդիկների վրայով, ձեռքերով թփթփացնելով ծխացող ուսերն ու կրծքերը, հյուրասենյակում գտնվողները նահանջեցին աշխատասենյակ ու նախասենյակ։ Նրանք, ովքեր սեղանատանն էին և ննջասենյակում, դուրս վազեցին միջանցքով։ Վազեվազ եկան նաև խոհանոցում գտնվողները, իրենց գցեցին նախասենյակ։ Հյուրասենյակն արդեն կրակ ու ծուխ էր բռնել։ Ինչ-որ մեկը հասցրեց հավաքել հրշեջ խմբի հեռախոսի համարը, կարճ բղավելով խոսափողի մեջ.*

*— Սադովայա, երեք հարյուր երկու գիծ երկու։*

*Այլևս հապաղել չէր կարելի։ Բոցը նախասենյակ ժայթքեց։ Շնչելը դժվարացավ։*

*Կախարդված բնակարանի լուսամուտներից ծխի առաջին քուլաները ելնելուն պես, բակում լսվեցին մարդկային աղեկտուր ճիչեր.*

*— Հրդե՜հ, հրդե՜հ, վառվու՜մ ենք։*

*Շենքի տարբեր բնակարաններում մարդիկ սկսեցին բղավել խոսափողերի մեջ.*

*— Սադովայա՜, Սադովայա՜, երեք հարյուր երկու գիծ երկո՜ւ։*

*Այն ժամանակ, երբ Սադովայայի վրա լսվեցին քաղաքի տարբեր մասերից սլացող կարմիր երկար մեքենաների՝ սիրտ սարսռեցնող զանգերի հարվածները, բակում վազվզող մարդիկ տեսան, թե ինչպես ծխի հետ հինգերորդ հարկի լուսամուտից դուրս թռան, ինչպես երևաց, տղամարդու երեք մուգ ուրվական և մերկ կնոջ մեկ ուրվական։*

ԳԼՈՒԽ XXVIII

## ԿՈՐՈՎԵՎԻ ԵՎ ԲԵԳԵՄՈՏԻ ՎԵՐՋԻՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

*Ուրվականներ էին արդյոք դրանք, թե Սադովայայի չարաբախտ շենքի սարսափահար բնակիչների աչքին երևացին, իհարկե, ստուգապես ասել չի կարելի։ Եթե ուրվականներ էին, ո՞ւր գնացին անմիջապես, նույնպես ոչ ոք չգիտե։ Թե որտեղ բաժանվեցին, նույնպես ոչինչ չենք կարող ասել, բայց գիտենք, որ Սադովայայի հրդեհից մոտավորապես քառորդ ժամ անց, Սմոլենսկի շուկայի Տորգսինի հայելապատ դռան մոտ հայտնվեց երկարահասակ, վանդակավոր կոստյումով մի քաղաքացի, հետը՝ մի սև, խոշոր կատու։*

*Ճարպկորեն սողոսկելով անցորդների արանքից, քաղաքացին բացեց խանութի դրսի դուռը։ Բայց այստեղ փոքրամարմին, ոսկրոտ ու ծայրաստիճան անբարյացակամ բարապանը կտրեց նրա ճանապարհը և զայրացած ասաց.*

*— Կատուների հետ չի՛ կարելի։*

*— Ներեցեք,— խզխզաց երկարահասակը և կոշտուկապատ ձեռքը ծանր լսողի պես տարավ ականջին,— ասում եք, կատուների հե՞տ։ Իսկ ո՞ւր է ձեր տեսած կատուն։*

*Բարապանը չռեց աչքերը և ոչ առանց պատճառի. քաղաքացու ոտքերի մոտ արդեն ոչ մի կատու էլ չկար, իսկ դրա փոխարեն նրա ետևից գլուխն էր ցցել և խանութ մտնել էր փորձում պատռված կեպիով մի գիրուկ, որը մռութով իսկապես մի քիչ նման էր կատվի։ Գիրուկի ձեռքին պրիմուս կար...*

*Հաճախորդների այդ զույգը չգիտես ինչու դուր չեկավ մարդատյաց բարապանին։*

*— Մեզ մոտ առևտուրը միայն վալյուտայով է, — խռխռացրեց նա՝ զայրացած նայելով փրչոտ, ասես ցեցը կերած, գորշաճերմակ հոնքերի տակից։*

*— Թանկագինս, — խզխզաց երկայնահասակը՝ ջարդված պենսնեի տակից աչքը փայլեցնելով,— իսկ ձեզ որտեղի՞ց է հայտնի, որ վալյուտա չունեմ։ Դուք դատում եք հագուստի՞ց։ Երբեք չանեք դա, խիստ թանկագին պահապան։ Կարող եք սխալվել, այն էլ չափազանց խիստ։ Մի անգամ էլ վերընթերցեք թեկուզ նշանավոր խալիֆ Հարուն-ալ-Ռաշիդի պատմությունը։ Բայց տվյալ դեպքում ժամանակավորապես մի կողմ դնելով այդ*

պատմությունը, ուզում եմ ձեզ ասել, որ կբողոքեմ վարիչին և այնպիսի բաներ կպատմեմ ձեր մասին, որ հանկարծ ստիպված չլինե՛ք թողնել հայելապատ այս դռների արանքի ձեր պահակետը։

— Գուցե իմ պրիմուսի մեջ լիքը վայլուտա կա, — բորբոքված խոսակցության մեջ մտավ նաև կատվակերպ, շարունակ խանութ խցկվել ցանկացող գիրուկը։ Ետևից արդեն հրմշտում ու զայրանում էր հասարակությունը։ Ատելությամբ ու կասկածանքով նայելով արտառոց զույգին, բարապանը ճանապարհ տվեց, և մեր ծանոթները՝ Կորովևն ու Բեգեմոտը, հայտնվեցին խանութում։

Առաջին հերթին այստեղ նրանք իրենց շուրջը նայեցին, ապա հնչեղ ձայնով, որ լսվեց տառացիորեն անկյուններում, Կորովևը հայտարարեց.

— Հիանալի՜ խանութ է։ Շատ, շա՜տ լավ խանութ է։

Վաճառասեղանների մոտ կանգնած մարդիկ շրջվեցին և չգիտես ինչու զարմացած նայեցին խոսողին, թեև նա բոլոր հիմքերն ուներ խանութը գովաբանելու։

Շքեղագույն ծաղկանախշով հարյուրավոր թոփ չթեր էին երևում դարակների վրա։ Դրանցից այն կողմ դարսված էին միտկալներ, շիֆոն և ֆրակի մահուդեղեն։ Խորքերն էին գնում կոշիկի տուփերի կույտակները, և մի քանի քաղաքացուհի, ցածրիկ աթոռակներին նստած, աջ ոտքը հին, մաշված կոշիկի մեջ, նոր, փայլուն կոշիկով ձախը մտազբաղ թփթփացնում էին փոքրիկ գորգին։ Խանութի խորքերում երգում ու նվագում էին պատեֆոնները։

Սակայն թողնելով այդ հրաշալիքները, Կորովևը և Բեգեմոտը գնացին ուղիղ դեպի ուտելեղենի և հրուշակեղենի կից բաժինները։ Շատ ազատ ու հանգիստ էր այստեղ, գլխաշորերով ու բերետներով քաղաքացուհիները վաճառասեղանների մոտ խռնված չէին, ինչպես չթի բաժնում։ Եղջրաշրջանակ ակնոցով, չճմրթված ու անբիծ ժապավենով նոփ-նոր շլյապան գլխին, այնպես սափրված, որ դեմքը կապտին էր տալիս, մանուշակագույն վերարկուով և կաշվե դեղին ձեռնոցներով կարճլիկ, կատարելապես քառակուսի մի մարդ կանգնած էր վաճառասեղանի մոտ և ինչ-որ բաներ էր բարբառում հրամայաբար։ Մաքուր սպիտակ խալաթով և կապույտ գլխարկով վաճառողը սպասարկում էր մանուշակագույն հաճախորդին։ Անչափ սուր դանակով, որը շատ նման էր Ղևի Մատթեոսի գողացած դանակին, նա արծաթավուն երանգով օձանման

կաշին հանում էր յուղալի, արտասվող մոխրագույն սաղմոնի վրայից։

— Այս բաժինն էլ է հոյակապ,— հանդիսավորությամբ ընդունեց Կորովևը,— օտարերկրացին էլ է համակրելի,— Նա բարյացակամությամբ մատնացույց արեց մանուշակագույն մեջքը։

— Չէ, Ֆագոտ, չէ,— մտազբաղ պատասխանեց Բեգեմոտը, —սխալվում ես, բարեկամս։ Իմ կարծիքով, մանուշակագույն ջենտլմենի դեմքի վրա ինչ-որ բան պակասում է։

Մանուշակագույն թիկունքը ցնցվեց, բայց, հավանորեն, պատահմամբ, քանի որ օտարերկրացին հո չէր կարող հասկանալ այն, ինչ ռուսերեն խոսում էին Կորովևն ու նրա ուղեկիցը։

— Կյա՞ֆ է,— խստորեն հարցնում էր մանուշակագույն գնորդը։

— Առաջնակարգ,— պատասխանում էր վաճառողը՝ դանակի սուր ծայրը խաղացկուն շարժելով կաշվի տակ։

— Կյաֆ կսիրյեմ, վատ չսիրյեմ,— խստորեն ասում էր օտարերկրացին։

— Իհարկե,— պատասխանում էր վաճառողը՝ խանդավառ։

Այստեղ մեր ծանոթները հեռացան օտարերկրացուց ու նրա սաղմոնից դեպի հրուշակեղենի վաճառասեղանի ծայրը։

— Այսօր շոգ է,— դիմեց Կորովևը ջահել, կարմրաթուշ վաճառողուհուն և ոչ մի պատասխան չստացավ նրանից։— Ի՞նչ արժե մանդարինը,— այդ ժամանակ հարցրեց նրան Կորովևը։

— Կիլոն երեսուն կոպեկ,— պատասխանեց վաճառողուհին։

— Ամեն ինչ թանկացավ,— հոգոց հանելով, նկատեց Կորովևը,— է՜հ, է՜հ...— Նա մի քիչ էլ մտածեց ու հրավիրեց իր ուղեկցին.— Բեգեմոտ, կեր։

Գիրուկն իր պրիմուսը դրեց թևի տակ, առավ բուրգի վերևի մանդարինը և տեղնուտեղը, կաշին էլ հետը խժռելով, երկրորդը վերցրեց։

Վաճառողուհուն մահացու սարսափ տիրեց։

— Հո չեք ցնդել,— բղավեց նա՝ շառագունությունը կորցնելով, — չե՛կը տվեք։ Չե՛կը, —ու ձեռքը գցեց անուշեղենի ունելին։

— Հոգյակս, սիրելիս, սիրունիկս,— խզխզաց Կորովևը՝ պառկելով վաճառասեղանին և աչքով անելով վաճառողուհուն,— հետներս վալյուտա չկա այսօր... ինչ արած։ Բայց երդվում եմ ձեզ, որ մյուս անգամ, երկուշաբթի օրվանից ոչ ուշ, լրիվ կան-

*խանի կվճարենք։ Այստեղից հեռու չենք, Սադովայայից ենք, ուր Ջիմա հրդեհ է։*

*Երրորդ մանդարինը կուլ տալուց հետո Բեգեմոտը թաթը կոխեց շոկոլադե սալիկների հնարամիտ շինվածքի մեջ, քաշեց տակի սալիկներից մեկը, որից, ինչ խոսք, փուլ եկավ բուրգը, և ապա փաթթոցաթղթի հետ միասին խժռեց։*

*Ձկնեղենի բաժնի վաճառողներն ասես քարացան՝ դանակները ձեռքներին, մանուշակագույն օտարերկրացին շրջվեց դեպի թալանչիները, և տեղնուտեղը հայտնի դարձավ, որ Բեգեմոտն իրավացի չէ. մանուշակագույն դեմքի վրա ոչ թե ինչ-որ բան էր պակասում, այլ ընդհակառակն, ավելի շուտ ավելորդ բան կար՝ կախ ընկած այտերն ու խլվլան աչքերը։*

*Բոլորովին դեղնած վաճառողուհին տխրաձայն բղավեց խանութով մեկ.*

*— Պալո՜սիչ։ Պալո՜սիչ։*

*Ջթի բաժնի հասարակությունն այդ բղավոցի վրա մոտ վազեց, իսկ Բեգեմոտը հեռացավ հրուշակեղեն գայթակղություններից և թաթը մտցրեց «Կերչի տառեխ, ընտիր» գրությունը կրող տակառի մեջ, մի զույգ տառեխ հանեց, կուլ տվեց՝ դուրս թքելով պոչերը։*

*— Պալոսի՜չ,— կրկնվեց հուսակտուր ճիչը հրուշակեղենի վաճառասեղանի ետևից, իսկ ձկնեղենի վաճառասեղանի ետևից գոռաց այծմորուքավոր վաճառողը։*

*— Այդ ի՞նչ ես անում, սրիկա։*

*Պավել Իոսիֆովիչն արդեն շտապում էր դեպքի վայր։ Դա մի պատկառելի տղամարդ էր՝ վիրաբույժի պես սպիտակ ու մաքուր խալաթով, ծոցագրպանից դուրս ցցված մատիտով։ Ըստ երևույթին, Պավել Իոսիֆովիչը փորձառու մարդ էր։ Բեգեմոտի բերանի մեջ երրորդ տառեխի պոչը տեսնելով, նա վայրկենապես գնահատեց իրադրությունը, բացարձակապես ամեն ինչ հասկացավ ու, լկտիների հետ որևէ վիճաբանություն չսկսելով, ձեռքը թափ տվեց հեռվում կանգնած ինչ-որ մեկին հրամայելով.*

*— Սուլի՛ր։*

*Հայելապատ դռներից Սմոլենսկու անկյունը դուրս թռավ բարապանը և չարագույժ սուլոցներ արձակեց։ Հասարակությունը սկսեց շրջապատել սրիկաներին, և այդ ժամանակ գործին խառնվեց Կորովևը։*

*— Քաղաքացինե՛ր,— բարձր ու դողդոջ ձայնով բղավեց նա,*

— այս ի՞նչ է կատարվում։ Հը՞։ Թույլ տվեք ձեզ հարցնել այդ մասին։ Խեղճ մարդը,— Կորովևը դող մտցրեց ձայնի մեջ ու ցույց տվեց Բեգեմոտին, որի դեմքն անմիջապես լալագին արտահայտություն ստացավ,— խեղճ մարդը օրնիբուն պրիմուսներ է նորոգում, սովածացել է... իսկ վալյուտա նրան որտեղի՞ց։

Սովորաբար զուսպ ու հանգիստ Պավել Իոսիֆովիչն ի պատասխան բղավեց խստաձայն.

— Այդ բաները վերջացրե՛ք,— և ձեռքը թափ տվեց հեռուներն արդեն անհամբերությամբ։ Դռան մոտ սուլոցներն ավելի սաստկացան։

Բայց Կորովևը, չշփոթվելով Պավել Իոսիֆովիչի ելույթից, շարունակեց.

— Որտեղի՞ց՝ հարց եմ տալիս բոլորին. Քաղցից ու ծարավից հալումաշ է եղել նա։ Շոգում է։ Լա՛վ, թշվառականը մի համ մանդարին փորձեց։ Այդ մանդարինի եղած-չեղած գինն էլ՝ երեք կոպեկ։ Ու ահա սուլում են արդեն, ինչպես գարնանը՝ սոխակներն անտառում, անհանգստացնում են միլիցիային գործից կտրելով նրանց։ Իսկ նրան կարելի՞ է։ Հը՞,— և այստեղ Կորովևը մատնացույց արեց մանուշակագույն հաստլիկին, ինչից նրա դեմքին սաստիկ տագնապ գծագրվեց,— ո՞վ է նա։ Հը՞։ Որտեղի՞ց է եկել։ Ինչի՞ համար։ Ի՞նչ է, նրա կարո՞տն էինք քաշում։ Ի՞նչ է, մենք հրավիրե՞լ ենք նրան։ Իհա՛րկե,— ծաղրաբար ծռելով բերանը՝ կոկորդով մեկ բղավում էր նախկին խմբավարը,— տեսեք-տեսե՛ք, մանուշակագույն տոնական կոստյում է հագել, ուռել-փքվել է սաղմոնից, գրպանները լիքը վալյուտա է, իսկ մերո՞նց, մերո՞նց։ Ես դառնացած եմ, ինձ պաշե՛ք։ Պաշե՛ք։ Պաշե՛ք,— ոռնաց Կորովևը, ինչպես խաչեղբայրը հին հարսանիքներին։

Հիմարագույն , անտակտ և, հավանորեն, քաղաքականապես վնասակար այդ խոսքերը ստիպեցին սարսռալ Պավել Իոսիֆովիչին, բայց, որքան էլ տարօրինակ լինի, խռնված հասարակության աչքերից երևում էր, որ շատ մարդկանց մեջ դա կարեկցանք էր առաջացրել։ Իսկ երբ Բեգեմոտը պատառոտված կեղտոտ թևքն աչքերին դրեց ու ողբերգական ձայնով բղավեց.

— Շնորհակալ եմ, հավատարիմ ընկեր, պաշտպան կանգնեցիր տուժած մարդուն,— հրաշք տեղի ունեցավ։ Չափազանց օրինավոր, սուսուփուս, աղքատիկ, բայց մաքուր հագնված մի ծերուկ, որ հրուշակեղենի բաժնում նշենու երեք կարկանդակ էր գնել, հանկարծ կերպարանափոխվեց։ Նրա աչքերի մեջ մարտա-

կան կրակներ վառվեցին, նա կաս-կարմիր կտրեց, կարկանդակների փաթեթը հատակին շպրտեց և բղավեց.

— Ճի՛շտ է,— մանկական բարակ ձայնով։ Ապա առավ մատուցարանը ,դեն ածելով Բեզեմոտի փլեցրած շոկոլադե էյֆելյան աշտարակի մնացորդները, թափահարեց, ձախ ձեռքով օտարերկրացու գլխից պոկեց շլյապան, իսկ աջով մատուցարանը թափով շրմփացրեց օտարերկրացու ճաղատ գլխին։ Այնպիսի մի ձայն տարածվեց, ինչպիսին լինում է, երբ բեռնատարից գետին են շպրտում թերթավոր երկաթը։ Հաստլիկը, սպիտակելով, երեսնիվեր ընկավ ու նստեց կերչյան տառեխի տակառի մեջ՝ տառեխի աղաջրի շատրվան հանելով։

Անմիջապես երկրորդ հրաշքը կատարվեց։ Տակառն ընկած մանուշակագույնը մաքուր ռուսերենով, առանց առոգանության որևէ նշույլի, բղավեց.

— Սպանեցի՜ն։ Միլի՜ցիա։ Ավազակները ինձ սպանեցի՜ն, — հավանորեն ցնցումի հետևանքով հանկարծ տիրապետել էր մինչ այդ իրեն անծանոթ լեզվին։

Այդ ժամանակ ընդհատվեց բարապանի սուլոցը, և հուզախռով գնորդների բազմության մեջ երևացին մոտեցող միլիցիոներների սաղավարտները։ Սակայն նենգ Բեգեմոտը, ինչպես բաղնիքում ցնցուղով ջրում են թախտը, պրիմուսից բենզինով ջրեց հրուշակեղենի վաճառասեղանը, և բենզինն ինքն իրեն վառվեց։ Բոցը վեր թռավ ու շարժվեց վաճառասեղանի երկարությամբ՝ խժռելով մրգերի զամբյուղների թղթյա գեղեցիկ ժապավենները։ Վաճառողուհիները ծղրտոցով սկսեցին փախչել վաճառասեղանների ետևից ու հենց որ նրանք դուրս պրծան, բոցավառվեցին լուսամուտների կտավե վարագույրներն ու հատակի վրա վառվեց բենզինը։ Հասարակությունը, իսկույն հուսակտուր ճիչեր արձակելով, հրուշակեղենի բաժնից ետ շպրտվեց, ոտքի տակ տալով այլևս ավելորդ Պավել Իոսիֆովիչին, իսկ ձկնեղենի բաժնից, իրենց սրած դանակները բռնած, իծաշարուկ դեպի հետնամուտքի դուռը փախան վաճառողները։ Մանուշակագույն քաղաքացին, դուրս պրծնելով տակառից, ոտից գլուխ տառեխի լորձերով պատած, վաճառասեղանին դրված սալմոնի վրայից գլորվելով հետևեց նրանց։ Զրնգացին ու ցած թափվեցին ելքի հայելապատ դռան փեղկերի ապակիները, որ գլուխներն ազատող մարդիկ փշրեցին, և երկու սրիկաները՝ թե Կորովևը, թե բկլիկ Բեգեմոտը ինչ-որ տեղ անհետացան, իսկ թե ուր՝ անկարելի էր հասկանալ։ Հետո

արդեն, Սմոլենսկու Տորգսինի հրդեհն սկսվելու ականատեսները պատմում էին, իբր թե երկու խուլիգաններն էլ թռան վեր, առաստաղի տակ և իբր երկուսն էլ այնտեղ պայթեցին մանկական փուչիկների պես։ Իհարկե, կասկածելի է, որ բանն իրոք այդպես լիներ, բայց ինչ չգիտենք՝ չգիտենք։

Բայց գիտենք, որ Սմոլենսկու վրա կատարվածից ճիշտ մեկ րոպե անց թե՛ Բեգեմոտը, թե՛ Կորովևը հայտնվեցին արդեն զբոսայգու մայթին, ճիշտ գրիբոեդովյան մորաքրոջ տան դիմաց։ Կորովևը կանգ առավ ճաղաշարի մոտ ու սկսեց խոսել.

— Բա՜։ Չէ որ սա գրողների տունն է։ Գիտես ինչ, Բեգեմոտ, ես անհագին լավ ու գովական բաներ եմ լսել այս տան մասին։ Բարեկամս, ուշադրություն դարձրու այս տան վրա։ Հաճելի է մտածել, որ այս ծածկի տակ ծվարել ու հասունանում է տաղանդների անհամար մի բազմություն։

— Ինչպես արքայախնձորները ջերմոցներում,— ասաց Բեգեմոտը և սյունաշար կրեմագույն շենքով ավելի լավ հիանալու համար ելավ չուգունե ճաղաշարի բետոնե հիմքին։

— Միանգամայն ճիշտ է,— իր անբաժան ուղեկցի հետ համաձայնեց Կորովևը— և մի անուշ երկյուղ է տիրում սրտիդ, երբ մտածում ես, որ այս տանը հիմա հասունանում է «Դոն Կիխոտի» կամ «Ֆաուստի» կամ էլ, սատանան ինձ տանի, «Մեռյալ հոգիների» ապագա հեղինակը։ Հը՞։

— Սարսափելի է մտածելն անգամ,— հաստատեց Բեգեմոտը։

— Այո, —շարունակեց Կորովևը,— զարմանալի բաներ կարելի է ակնկալել այս տան ջերմոցներում, որն իր ծածկի տակ է միավորել մի քանի հազար ճգնավորների, որոնք վճռել են իրենց կյանքն անմնացորդ նվիրել Մելպոմենեին, Պոլիհիմնիային և Թալիային ծառայելուն։ Պատկերացնում ես, ինչ աղմուկ կբարձրանա, երբ նրանցից մեկնումեկը որպես սկիզբ ընթերցող հասարակությանը ներկայացնի «Ռևիզորը» կամ, վատթարագույն դեպքում, «Եվգենի Օնեգինը»։

— Ու շատ սովորական,— վերստին հաստատեց Բեգեմոտը։

— Այո,— շարունակեց Կորովևը և մտազբաղ բարձրացրեց մատը,— բա՛յց։ Բայց՝ ասում եմ ես ու կրկնում՝ բա՛յց։ Եթե այդ ջերմոցային քնքուշ բույսերի վրա որևիցե միկրոօրգանիզմ չհարձակվի, չսղոցի արմատից, եթե չփտեն նրանք։ Իսկ այդպես լինում է արքայախնձորների հետ։ Օյ-օյ-օյ, այն էլ ինչպե՜ս։

— Ի դեպ,— հարցրեց Բեգեմոտը՝ կլոր գլուխը ներս խցկելով

ճաղաշարի անցքից,— իսկ ի՞նչ են անում նրանք պատշգամբում նստած։

— Ճաշում են,— բացատրեց Կորովևը,— դրան ավելացնեմ, թանկագինս, որ այստեղ շատ լավ ու ոչ թանկ ռեստորան կա։ Իսկ ես, ի դեպ, ինչպես հեռավոր ճանապարհորդությունից առաջ ամեն մի տուրիստ, ցանկություն ունեմ ուտել և մի մեծ գավաթ սառցասառը գարեջուր խմել։

— Ես նույնպես,— պատասխանեց Բեգեմոտը, և երկու սրիկաները ասֆալտապատ արահետով, լորենիների տակով քայլեցին դեպի վերահաս փորձանքը չզգացող ռեստորանը։

Սպիտակ կարճ գուլպաներով, նույնպես սպիտակ, պոչիկավոր բերետը գլխին մի գունատ, սրտնեղած քաղաքացուհի էր նստած վիեննական աթոռի վրա, պատշգամբի մուտքի անկյունում, այնտեղ, ուր պատատաճաղի կանաչի մեջ մուտքի անցք կար բացված։ Նրա դիմաց, խոհանոցի սովորական սեղանի վրա գրասենյակային հաստ գիրք կար, որի մեջ քաղաքացուհին, հայտնի չէ, թե ինչ պատճառներով, գրանցում էր ռեստորան մտնողների ազգանունները։ Հենց այդ քաղաքացուհին էլ կանգնեցրեց Կորովևին և Բեգեմոտին։

— Ձեր վկայականնե՞րը,— նա զարմացած նայում էր Կորովևի պենսնեին, ինչպես նաև Բեգեմոտի պրիմուսին ու նրա պատռված արմունկին։

— Հազար ներողություն եմ խնդրում, ի՞նչ վկայական,— զարմացած հարցրեց Կորովևը։

— Դուք գրողնե՞ր եք,— իր հերթին հարցրեց քաղաքացուհին։

— Հարկավ,— արժանապատվությամբ պատասխանեց Կորովևը։

— Ձեր վկայականնե՞րը,— կրկնեց քաղաքացուհին։

— Սքանչելիդ իմ...— քնքշորեն սկսեց Կորովևը։

— Ես սքանչելի չեմ,— նրան ընդհատեց քաղաքացուհին։

— Օ՜, հազար ափսոս,— հիասթափված ասաց Կորովևն ու շարունակեց.— Է՛, ինչ արած, եթե չեք կամենում սքանչելի լինել, ինչ անչափ հաճելի կլիներ, կարող եք չլինել։ Այսպես ուրեմն, համոզվելու համար, որ Դոստոևսկին գրող է, պե՞տք է արդյոք վկայական պահանջել նրանից։ Վերցրեք ցանկացած հինգ էջը նրա ցանկացած վեպից, և առանց որևիցե վկայականի կհամոզվեք, որ գործ ունեք գրողի հետ։ Ենթադրում եմ նաև, որ

նա ոչ մի վկայական էլ չի ունեցել։ Ի՞նչ ես կարծում, —Բեգեմոտին դիմեց Կորովևը։

— Գրազ կգամ, որ չի ունեցել, — պատասխանեց Բեգեմոտը՝ պրիմուսը դնելով սեղանին, գրքի կողքին և ձեռքով սրբելով մրոտ ճակատի քրտինքը։

— Դուք Դոստոևսկին չեք,— խոսեց Կորովևի ասածներից շշկլված քաղաքացուհին։

— Է, ի՞նչ իմանաս, ի՞նչ իմանաս,— պատասխանեց նա։

— Դոստոևսկին մահացել է,— ասաց քաղաքացուհին, բայց մի տեսակ ոչ շատ վստահ։

— Բողոքու՜մ եմ.— խանդավառված բացականչեց Բեգեմոտը —Դոստոևսկին անմա՜հ է։

— Քաղաքացիներ, ձեր վկայականները, —ասաց քաղաքացուհին։

— Ի սեր աստծո, վերջիվերջո, սա ծիծաղելի է,— անձնատուր չէր լինում Կորովևը,— ամենևին էլ վկայականով չի որոշվում գրողը, այլ նրանով, թե ինչ է գրում։ Ի՞նչ գիտեք, թե ինչ հղացումներ են պարփակում իմ գլխի մեջ։ Կամ, այս գլխի մեջ,— և նա մատնացույց արեց Բեգեմոտի գլուխը, որի վրայից անմիջապես հանեց կեպին, կարծես նրա համար, որ քաղաքացուհին կարողանա ավելի լավ զննել։

— Ճանապարհ տվեք, քաղաքացիներ,— արդեն նյարդայնանալով, ասաց նա։

Կորովևն ու Բեգեմոտը մի կողմ քաշվեցին և ճանապարհ տվեցին մոխրագույն կոստյումով, ամառային անփողկապ սպիտակ շապիկի օձիքը պիջակի վրա լայն-լայն փռած մի գրողի, որի թևատակին լրագիր կար։ Գրողը սիրալիր գլխով արեց քաղաքացուհուն, շտապ ինչ-որ բան խզմզեց իրեն մատուցված գրքի մեջ ու գնաց պատշգամբ։

— Ավա՜ղ, ո՛չ մենք, ո՛չ մենք,— տխուր ասաց Կորովևը,— այլ նա կխմի այդ սառցասառը գարեջրի գավաթը, որ մենք՝ խեղճ թափառականներս, այնպես երազում էինք երկուսով, տխուր ու դժվարին է մեր վիճակը, և ես չգիտեմ ինչ անել։

Բեգեմոտը միայն դառնացած տարածեց ձեռքերը և կեպին դրեց կլոր, խիտ, կատվի բրդին շատ նման մազերով ծածկված գլխին։ Եվ այդ պահին ցածրաձայն, բայց տիրական մի ձայն հնչեց քաղաքացուհու գլխավերևում։

— Ներս թողեք, Սոֆիա Պավլովնա։

Գիրքը և մուտքը հսկող քաղաքացուհին ապշեց. պատուհանի կանաչի մեջ հայտնվեց ֆրակի ճերմակ լանջը և ծովահենի սեպաձև մորուքը։ Նա սիրալիր նայում էր կասկածելի երկու գլխաններին, նույնիսկ ավելին, հրավիրող շարժումներ էր անում։ Արչիբալդ Արչիբալդովիչի հեղինակությունը մի բան էր, որ լրջորեն էր զգացվում նրա տնօրինած ռեստորանում, և Սոֆիա Պավլովնան հնազանդորեն հարցրեց Կորովևին.

— Ինչ է ձեր ազգանունը։

— Պանաև,— քաղաքավարի պատասխանեց նա։ Քաղաքացուհին գրանցեց այդ ազգանունը և հարցական հայացքը բարձրացրեց Բեգեմոտի վրա։

— Սկաբիչևսկի,— ծղրտաց նա, չգիտես ինչու իր պրիմուսը ցույց տալով։ Սոֆիա Պավլովնան դա էլ գրանցեց և գիրքը հրեց հաճախորդների առաջ, որպեսզի ստորագրեն։ Կորովևը «Պանաև» ազգանվան դիմաց գրեց «Սկաբիչևսկի», իսկ Բեգեմոտը «Սկաբիչևսկու» դիմաց գրեց «Պանաև»։ Լիովին զարմացնելով Սոֆիա Պավլովնային, Արչիբալդ Արչիբալդովիչը, հմայիչ ժպտալով, հյուրերին տարավ պատշգամբի հակադիր ծայրի լավագույն սեղանիկի մոտ, այնտեղ, ուր ամենաթանձր ստվերն էր ընկած, այն սեղանիկի մոտ, ուր զվարթ արևն էր շողշողում պատուհանաճաղի կանաչի անցքի միջից։ Իսկ Սոֆիա Պավլովնան, զարմանքից աչքերը ճպճպացնելով, երկար ժամանակ ուսումնասիրում էր անսպասելի հաճախորդների թողած տարօրինակ նշանները գրքի մեջ։

Արչիբալդ Արչիբալդովիչը մատուցողներին զարմացրեց ոչ պակաս, քան Սոֆիա Պավլովնային։ Նա անձամբ ետ քաշեց աթոռը սեղանիկից, հրավիրելով Կորովևին նստել, աչքով արեց մեկին, ինչ-որ բան շշնջաց մյուսին, ու երկու մատուցող իրար անցան նոր հյուրերի շուրջը, որոնցից մեկը պրիմուսը դրեց հատակին, գույնը գցած իր կոշիկի մոտ։ Սեղանիկի վրայից անմիջապես անհետացավ դեղին բծերով պատած հին սփռոցը, օդում խշխշացող օդի մեջ թպրտաց բեդուինի բուռնուսի պես ձյունաճերմակ նորը, իսկ Արչիբալդ Արչիբալդովիչը արդեն կամացուկ, բայց չափազանց արտահայտիչ շշնջում էր՝ թեքված Կորովևի ուղիղ ականջին.

— Ինչո՞վ եմ ձեզ պատվելու։ Ջուրգել ունեմ հատուկ... ճարտարապետների համագումարից եմ պոկել...

— Դուք... ըմ... ընդհանրապես ուտեստեղեն տվեք մեզ... ըմ...— բարեհաճությամբ մոմռաց Կորովկը՝ փռվելով աթոռի վրա։

— Հասկանում եմ,— աչքերը փակելով, բազմանշանակ պատասխանեց Արչիբալդ Արչիբալդովիչը։

Տեսնելով, թե ռեստորանի շեֆն ինչպես է վերաբերում խիստ կասկածելի հաճախորդներին, մատուցողները թողեցին ամենայն կասկած և լրջորեն գործի անցան։ Մեկն արդեն վառած լուցկի մոտեցրեց Բեգեմոտին, որը գրպանից հանեց ծխախոտի մնացորդն ու բերանը խոթեց, մյուսը մոտ վազեց, զնգզնգացնելով կանաչ ապակեղենն ու սպասքների մոտ դնելով փոքրիկ գավաթներ, լաֆիտի բաժակներ ու բարակ ըմպանակներ, որոնցով այնքան լավ է խմվում նարզանը... ոչ, առաջ անցնելով ասենք... այնքան լավ էր խմվում նարզանը գրիբոեդովյան անմոռաց պատշգամբի պարուսինե ծածկի տակ։

— Կաքավի ֆիլե կարող եմ հյուրասիրել,— երգեցիկ մռմռում էր Արչիբալդ Արչիբալդովիչը։ Ծաքած պենսնեով հյուրը լիովին հավանություն էր տալիս առագաստանավի հրամանատարի առաջարկներին և բարյացակամորեն նրան էր նայում անօգուտ ապակու միջից։

Հարևան սեղանիկի մոտ ճաշող արձակագիր Պետրակով-Սուխովեյը տիկնոջ հետ, որը խոզի էսկալոպն էր վերջացնում, բոլոր գրողներին հատուկ դիտողականությամբ նկատեց Արչիբալդ Արչիբալդովիչի սիրաշահումները, և շատ ու շատ զարմացավ։ Իսկ նրա կինը՝ շատ հարգելի մի տիկին, պարզապես նույնիսկ խանդեց ծովահենին և անգամ գդալը չխկչխկացրեց... իբր, սա ի՞նչ բան է, մեզ սպասեցնում են... պաղպաղակը մատուցելու ժամանակն է։ Բանն ի՞նչ է։

Սակայն մի հմայիչ ժպիտ ուղարկելով Պետրակովային, Արչիբալդ Արչիբալդովիչը մատուցող ուղարկեց նրանց մոտ, իսկ ինքը չթողեց իր թանկագին հյուրերին։ Ա՜հ, խելացի էր Արչիբալդ Արչիբալդովիչը։ Իսկ դիտողունա՜կ, թերևս ոչ պակաս, քան իրենք՝ գրողները։ Արչիբալդ Արչիբալդովիչը գիտեր և Վարյետեի սեանսի մասին, և այդ օրերի մյուս բազում դեպքերի մասին, լսել էր, բայց ի հակադրություն մյուսների, ականջի մոտով բաց չէր թողել ոչ «վանդակավոր» բառը, ոչ «կատու» բառը։ Արչիբալդ Արչիբալդովիչն իսկույն կռահեց, թե ովքեր են իր այցելուները։ Իսկ կռահելուց հետո, բնականաբար, վեճի չբռնվեց նրանց հետ։ Իսկ ահա, ինչ ասես Սոֆիա Պավլովնային։ Խելքի մոտ բա՞ն է՝

այդ երկուսի ճանապարհը կտրել, որ պատշգամբ չբարձրանան։ Ասենք, ինչ պահանջես նրանից։

Գդալը գոռոզավարի շարժելով սերուցքային հալվող պաղպաղակի մեջ, Պետրակովան դժգոհ աչքերով նայում էր, թե ինչպես խեղկատակի հագուստները վրաները քաշած այդ երկուսի դիմաց սեղանիկն, ասես կախարդանքով, բեռնվում է ուտեստեղենով։ Փայլելու աստիճան լվացված սալաթի թերթերն արդեն ցցված էին թարմ խավիարի սկահակի միջից... մի ակնթարթ, ու հատկապես մոտեցված առանձին սեղանիկի վրա հայտնվեց արծաթյա քրտնած տակառիկը...

Սոսկ համոզվելով, որ ամեն ինչ հարկը պատշաճին է արված, սոսկ այն ժամանակ, երբ մատուցողների ձեռքերում թև առած եկավ փակ տապակը, որի մեջ ինչ-որ բան էր փթփթում, Արչիբալդ Արչիբալդովիչն իրեն թույլ տվեց լքել հանելուկային երկու այցելուներին, այն էլ կանխապես շշնջալով նրանց.

— Ներեցե՛ք։ Մի րոպեով։ Անձամբ գլուխ քաշեմ կաքավներին։

Նա ետ ցատկեց սեղանիկի մոտից ու չքացավ ռեստորանի ներսի դռան ետևում։ Եթե որևիցե դիտող կարողանար հետևել Արչիբալդ Արչիբալդովիչի հետագա գործողություններին, անկասկած, դրանք փոքր-ինչ հանելուկային կթվային նրան։

Շեֆն ամենևին էլ խոհանոց չգնաց՝ գլուխ քաշելու կաքավներին, այլ իջավ ռեստորանի պահեստ։ Բաց արեց իր բանալիով, փակվեց, սառույց լցրած արկղի միջից զգուշորեն, որ թեզանիքները չկեղտոտի, երկու ծանր ու խոշոր թառափ հանեց, թերթերով փաթաթեց, խնամքով կապեց թելով ու մի կողմ դրեց։ Ապա հարևան սենյակում ստուգեց, թե տեղում է արդյոք մետաքսյա աստառով իր ամառային վերարկուն և շլյապան, և միայն դրանից հետո գնաց խոհանոց, ուր խոհարարը ջանասիրությամբ առանձնացնում էր ծովահենի՝ հյուրերին խոստացած ֆիլեները։

Հարկ է ասել, որ Արչիբալդ Արչիբալդովիչի բոլոր գործողությունների մեջ տարօրինակ կամ հանելուկային որևէ բան չկար և նման գործողությունները տարօրինակ կարող էր համարել լոկ մակերեսային դիտողը։ Արչիբալդ Արչիբալդովիչի արարքները միանգամայն տրամաբանորեն բխում էին նախորդ ամեն ինչից։ Վերջին դեպքերի մասին գիտենալը, գլխավորապես՝ Արչիբալդ Արչիբալդովիչի բացառիկ նրբազգացությունը գրիբոեդովյան ռեստորանի շեֆին հուշեցին, որ իր երկու հաճախորդների ճաշը

*թեև առատ ու փառահեղ է լինելու, բայց խիստ կարճատև։ Ու նախկին ծովահենին երբեք չխաբած նրբազգացությունն այս անգամ էլ չդավաճանեց։*

*Այն ժամանակ, երբ Կորովևն ու Բեգեմոտը մոսկովյան սքանչելի սառը, կրկնակի կտված օղու երկրորդ բաժակն էին դատարկում, պատշգամբում հայտնվեց քրտնած և հուզված խրոնիկյոր Բոբա Կանդալուպսկին, որը հայտնի էր Մոսկվայում իր զարմանալի ամենատեղյակությամբ, ու անմիջապես նստեց Պետրակովների սեղանին։ Հաստափոր պայուսակը դնելով սեղանին, Բոբան անմիջապես շրթունքները մտցրեց Պետրակովի ականջի մեջ ու սկսեց ինչ-որ շատ գայթակղեցուցիչ բաներ փըսփըսալ։ Հետաքրքրասիրությունից նվաղած տիկին Պետրակովան իր ականջը ևս մոտեցրեց Բոբայի ուռած, յուղոտ շրթունքներին։ Իսկ սա, մեկ-մեկ գողունի շուրջը նայելով, փսփսում ու փսփսում էր, ու կարելի էր լսել առանձին, ահա այսպիսի բառեր։*

*— Պատվո՜վս եմ երդվում։ Սադովայայի վրա, Սադովայայի վրա՜,— Բոբան ավելի իջեցրեց ձայնը,— փամփուշտները չեն սպանում։ Փամփուշտնե՜րը... փամփուշտները... բենզի՛նը, հրդե՛հ... փամփուշտնե՜րը...*

*— Այ, այդ ստախոսներին, որոնք զզվելի լուրեր են տարածում,— բարկացած ու քիչ ավելի բարձրաձայն, քան կկամենար Բոբան, կոնտրալտոյով թնդաց տիկին Պետրակովան,— ա՛յ, դրանց է պետք բան հասկացնել։ Բայց ոչի՜նչ, կարգի կհրավիրեն նրանց։Ինչպիսի՜ վնասակար ստեր։*

*— Ինչ ստե՜ր, Անտոնիդա Պորֆիրևնա,— բացականչեց գրողի տիկնոջ չհավատալուց վշտացած Բոբան ու նորից փսփսաց. — Ասում եմ ձեզ, փամփուշտները չեն սպանում... Իսկ հիմա հրդեհ է... Նրանք օդի միջով... օդո՜վ, — Բոբան փսփսում էր, չկասկածելով, որ նրանք, ում մասին պատմում է, նստած են իր կողքին, հաճույք ստանալով նրա փսփսոցից։ Ասենք, այդ հաճույքը շուտով ընդհատվեց։ Ռեստորանի ներսի մուտքից արագ-արագ պատշգամբ մտան գոտկատեղերին ձիգ գոտիներ կապած երեք տղամարդ, կաշվե սռնապաններով, ատրճանակները ձեռքներին։ Առջևից եկողը զրնգուն ու սարսափազդու բղավեց.*

*— Տեղից չշարժվե՛ք։— Ու անմիջապես երեքն էլ կրակ բացարեցին պատշգամբում, նշան բռնած Կորովևի և Բեգեմոտի գլուխներին։ Երկու գնդակահարվողներն էլ իսկույն ևեթ հալվեցին օդում, իսկ պրիմուսից կրակի սյուն ելավ ուղիղ ծածկին։*

Ասես սև եզրերով մի բաց երախ հայտնվեց ծածկի վրա ու սկսեց տարածվել բոլոր կողմերով։ Կրակը, դուրս պրծնելով ծածկի միջից, բարձրացավ մինչև գրիբոեդովյան տան տանիքը։ Երկրորդ հարկի խմբագրության սենյակի պատուհանին դրված թղթապանակները հանկարծ բռնկվեցին, ապա վարագույրը կպավ, և այստեղ կրակը ոռնալով, ասես ինչ-որ մեկը բորբոքում էր, սյուն առ սյուն թափանցեց մորաքրոջ տան ներսը։

Մի քանի վայրկյան անց գրոսայգու չուգունե ճաղաշարի կողմը տանող ասֆալտապատ արահետով, որով չորեքշաբթի երեկոյան ոչ մեկից չհասկացված դժբախտության առաջին բանբերը՝ Իվանուշկան էր եկել, հիմա վազում էին ճաշը կիսատ թողած գրողները, մատուցողները, Սոֆիա Պավլովնան, Բոբան, Պետրակովան, Պետրակովը։

Ժամանակին կողքի մուտքից դուրս գալով, ոչ մի տեղ չփախչելով ու չշտապելով, ինչպես մի նավապետ, որը պարտավոր է այրվող առագաստանավը վերջինը լքել, հանգիստ կանգնած էր Արչիբալդ Արչիբալդովիչը՝ մետաքսյա աստառով ամառային վերարկուն հագին, թառափի երկու գերանները թևի տակ։

## ԳԼՈՒԽ XXIX

## ՎԱՐՊԵՏԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏԱՅԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՈՐՈՇՎԱԾ Է

Արևը մայր մտնելիս, քաղաքից բարձր-բարձր, Մոսկվայի ամենագեղեցիկ, շուրջ հարյուր հիսուն տարի առաջ կառուցված շենքերից մեկի պատշգամբում գտնվում էին երկու հոգի. Վոլանդը և Ազազելլոն։ Ներքևից, փողոցից նրանք չէին երևում, քանի որ անհարկի հայացքներից նրանց ծածկում էր գիպսե սկահակներով ու գիպսե ծաղիկներով զարդարված բազրիքը։ Բայց քաղաքը տեսանելի էր նրանց՝ համարյա ծայրեծայր։

Վոլանդը նստած էր ծալովի աթոռակի վրա, իր սև թիկնոցը հագին։ Նրա երկար ու լայն սուսերն ուղղահայաց տնկված էր պատշգամբի երկու ճաքած սալերի արանքում, այնպես որ արևի ժամացույց էր ստացվել։ Սուսերի ստվերը դանդաղորեն ու անկանգ երկարում էր, մոտ սողալով սատանայի հագած սև կոշիկներին։ Սուր կզակը ծնոտին հենած, աթոռակի վրա կծկված և մի ոտքը տակը ծալած Վոլանդն անքթիթ նայում էր պալատ-

ների, վիթխարի շենքերի և մանր-մունր, քանդման դատապարտված հյուղակների անընդգրկելի կույտերին։ Իր ժամանակակից հանդերձից, այսինքն՝ պիջակից, կոտելոկից, լաքապատ կոշիկներից հրաժարված Ազազելլոն, Վոլանդի պես սև հագած, անշարժ կանգնած էր իր տիրակալից ոչ հեռու, ճիշտ նրա նման աչքը չկտրելով քաղաքից։

Վոլանդն սկսեց խոսել.

— Ինչ հետաքրքիր քաղաք է, այդպես չէ՞։

Ազազելլոն շարժվեց ու հարգալից պատասխանեց.

— Մեսսիր, ինձ ավելի շատ Հռոմն է դուր գալիս։

— Այո, դա ճաշակի խնդիր է, — պատասխանեց Վոլանդը։

Որոշ ժամանակ անց կրկին հնչեց նրա ձայնը.

— Իսկ ինչի՞ց է այդ ծուխն այնտեղ, զբոսայգու վրա։

— Գրիբոեդովն է վառվում,— պատասխանեց Ազազելլոն։

— Հարկ է ենթադրել, որ այդ անբաժան զույգը՝ Կորովևն ու Բեգեմոտն այնտե՞ղ են եղել։

— Ոչ մի կասկած չկա դրանում, մեսսիր։

Կրկին լռություն տիրեց, և պատշգամբում գտնվող երկուսն էլ նայում էին, թե ինչպես արևմուտք ուղղված պատուհաններում, վիթխարի ղանգվածների վերին հարկերում կրակվեց կոտորակված կուրացուցիչ արևը։ Վոլանդի աչքը կրակվում էր այնպես, ինչպես այդ լուսամուտներից մեկը, թեև Վոլանդը թիկունքով էր նստած դեպի վերջալույսը։

Բայց այստեղ ինչ-որ բան ստիպեց Վոլանդին հայացքը շրջել քաղաքից և ուշադրությունը դարձնել իր ետևում, տանիքի վրա գտնվող կլոր աշտարակին։ Դրա պատի միջից դուրս եկավ ցնցոտիապատ, կավի մեջ թաթախված, խիտոնը հագին, ինքնակար մույկերով, սևամորուք մեկը։

— Բա՜,— բացականչեց Վոլանդը՝ ծաղրաբար նայելով եկածին,— բոլորից քիչ քեզ կարելի էր հանդիպել այստեղ։ Ինչի՞ համար ես շնորհ արել, անկոչ, սակայն կանխատեսված հյուր։

— Քեզ մոտ եմ եկել, չարի ոգի և ստվերների տիրակալ,— պատասխանեց եկածը՝ հոնքերի տակից անբարյացակամորեն նայելով Վոլանդին։

— Եթե եկել ես ի՛նձ մոտ, ապա ինչո՞ւ չես ողջունում ինձ, նախկին մաքսավոր,— խստությամբ խոսեց Վոլանդը։

— Որովհետև ողջույնդ չեմ ցանկանում,— հանդգնորեն պատասխանեց եկածը։

— Բայց ստիպված ես հաշտվել դրա հետ,— առարկեց Վոլանդը. և քմծիծաղը ծռեց նրա բերանը,— չհասցրեցիր հայտնվել տանիքի վրա ու իսկույն արդեն մի անհեթեթություն դուրս տվեցիր, և ես քեզ կասեմ, թե ինչով արտահայտվեց դա. ձայնիդ ելևէջներով։ Բառերդ այնպես արտասանեցիր, կարծես թե չես ընդունում ստվերները, ինչպես և չարը։ Այնքան բարի չե՞ս լինի մտածել մի հարցի շուրջ. ի՞նչ պիտի աներ քո բարին, եթե գոյություն չունենար չարը, ու ի՞նչ տեսք կունենար երկիրը, եթե դրա վրայից անհետանային ստվերները։ Չէ՞ որ ստվերներն առաջանում են առարկաներից ու մարդկանցից։ Ահա իմ սուսերի ստվերը։ Բայց լինում են ծառերի և կենդանի արարածների ստվերներ։ Չե՞ս ուզում արդյոք պլոկել ամբողջ երկրագունդը, սրբելով դեն նետել բոլոր ծառերն ու կենդանի ամեն ինչ՝ անխառն լույսով սքանչանալու քո երևակայության պատճառով։ Դու հիմար ես։

— Ես քեզ հետ չեմ վիճի, ծեր սոփեստ,— պատասխանեց Ղևի Մատթեոսը։

— Դու ինձ հետ չես կարող վիճել այն պատճառով, ինչ արդեն հիշատակեցի՝ հիմար ես,— պատասխանեց Վոլանդը և հարցրեց.
—Դե, կարճ ասա, մի հոգնեցրու ինձ, ինչի՞ համար ես հայտնվել։

—Նա է ուղարկել ինձ։

— Ի՞նչ է հրամայել հաղորդել, ստրուկ։

— Ես ստրուկ չեմ,— ավելի չարանալով, պատասխանեց Ղևի Մատթեոսը,— ես նրա աշակերտն եմ։

— Ես ու դու տարբեր լեզուներով ենք խոսում, ինչպես միշտ,— պատասխանեց Վոլանդը,— բայց բաները, որոնց մասին խոսում ենք, դրանից չեն փոխվում։ Այսպիսով...

— Նա կարդաց վարպետի երկը,— սկսեց Ղևի Մատթեոսը,— և խնդրում է քեզ, որպեսզի հետդ վերցնես վարպետին ու նրան հանգիստ ընծայես։ Մի՞թե դա դժվար է քեզ համար անել, չարի ոգի։

— Ինձ համար ոչինչ դժվար չէ անել,— պատասխանեց Վոլանդը,— ու քեզ լավ հայտնի է դա։— Նա լռեց ու ավելացրեց.
—Իսկ ինչու՞ նրան չեք վերցնում ձեզ մոտ, լույսի թագավորություն։

— Նա լույսի չի արժանացել, նա հանգստի է արժանացել,
—տխրաձայն ասաց Ղևին։

— Հաղորդիր, որ կկատարվի,— պատասխանեց Վոլանդը և

ավելացրեց, ըստ որում նրա աչքը բռնկվեց։— Ու անհապաղ հեռացիր ինձնից։

— Նա խնդրում է, որ կնոջը, ով սիրել ու տառապել է նրա պատճառով, նույնպես վերցնեք,— առաջին անգամ աղերսաձայն դիմեց Ղևին Վոլանդին։

— Առանց քեզ ո՞չ մի կերպ չէինք կռահի դա։ Հեռացի՛ր։

Դրանից հետո Ղևի Մատթեոսն անհետացավ, իսկ Վոլանդը մոտ կանչեց Ազազելլոյին ու հրամայեց.

— Թռիր նրանց մոտ և ամեն ինչ դասավորիր։

Ազազելլոն հեռացավ պատշգամբից, և Վոլանդը մենակ մնաց։ Բայց նրա մենությունը երկար չտևեց։ Պատշգամբի սալերի վրա ոտնաձայն ու աշխույժ ձայներ լսվեցին, և Վոլանդի դիմաց կանգնեցին Կորովևն ու Բեգեմոտը։ Բայց այժմ հաստլիկի պրիմուսը չկար, նա բեռնված էր ուրիշ առարկաներով։ Այսպես, թևի տակ էր դրել ոսկեզօծ շրջանակով մի ոչ մեծ բնանկար, թևին գցած էր կիսով չափ այրված խոհարարի խալաթը։ Մյուս ձեռքում մի ամբողջ սաղմոն կար՝ կաշին ու պոչը վրան։ Կորովևի ու Բեգեմոտի վրայից խանձահոտ էր գալիս, Բեգեմոտի մռութը մրոտ էր, իսկ կեպիի կեսը՝ վառված։

— Սալյու՜տ, մեսսիր,— բղավեց անդադրում զույգը, և Բեգեմոտը թափահարեց սաղմոնը։

— Շա՜տ սիրուն եք,— ասաց Վոլանդը։

— Մեսսիր, պատկերացրեք,— բորբոքված և ուրախ բղավեց Բեգեմոտը,— ինձ դիակողոպտիչի տեղ են դրել։

— Դատելով հետդ բերած առարկաներից,— պատասխանեց Վոլանդը, նայելով բնանկարին,— հենց դիակողոպտիչ ես որ կաս։

— Հավատում եք արդյոք, մեսսիր...— սրտալի ձայնով սկսեց Բեգեմոտը։

— Ոչ, չեմ հավատում,— կարճ պատասխանեց Վոլանդը։

— Մեսսիր, երդվում եմ, ես հերոսական ճիգեր արեցի ինչ հնարավոր էր փրկելու համար, և ահա այն ամենն, ինչ հաջողվեց պահպանել։

— Ավելի լավ է, ասա, թե ինչի՞ց կրակ բռնեց Գրիբոեդովը,—հարցրեց Վոլանդը։

Երկուսն էլ՝ Կորովևն ու Բեգեմոտը, ձեռքերը տարածեցին, աչքերը երկինք հառեցին, իսկ Բեգեմոտը բղավեց.

— Չեմ հասկանում, խաղաղ, միանգամայն սուսուփուս նըստած, բան էինք ուտում...

— Ու հանկարծ՝ թրա՛խկ, թրա՛խկ,— միացավ Կորովևը,— կրակոցներ։ Սարսափից խելագարված, ես ու Բեգեմոտը մեզ գցեցինք զբոսայգի, հետապնդողները՝ մեր ետևից, նետվեցինք դեպի Տիմիրյազև։

— Բայց պարտքի զգացումը,— հանդես եկավ Բեգեմոտը,— հաղթահարեց մեր ամոթալի սարսափն, ու մենք ետ եկանք։

— Ահ, ե՛տ գնացիք,— ասաց Վոլանդը,— դե, իհարկե, այդ ժամանակ շենքը վառվեց ամբողջովին։

— Ամբողջովին,— ցավով հաստատեց Կորովևը,— այսինքն տառացիորեն ամբողջովին, մեսսիր, ինչպես բարեհաճեցիք դիպուկ արտահայտվել։ Միայն խանձողներ մնացին։

— Ես նետվեցի նիստերի դահլիճ,— պատմում էր Բեգեմոտը,— այն սյուներովը, մեսսիր, հուսալով որևիցե արժեքավոր բան դուրս բերել։ Ա՛հ, մեսսիր, իմ կինը, եթե միայն կին ունենայի, քսան անգամ այրի պիտի մնար։ Բայց բարեբախտաբար, մեսսիր, ամուսնացած չեմ, և ձեզ ուղղակի կասեմ՝ երջանիկ եմ, որ ամուսնացած չեմ։ Ահ, մեսսիր, կարելի՞ է արդյոք ամուրի ազատությունը փոխարինել ճնշող լուծով։

— Էլի սկսեցիր դատարկ բանե՛ր դուրս տալ,— նկատեց Վոլանդը։

— Լսում եմ ու շարունակում,— պատասխանեց կատուն,— այո, ահա բնանկարը։ Ուրիշ ոչինչ հնարավոր չէր դահլիճից դուրս բերել, բոցը խփեց ուղիղ երեսիս։ Վազ տվեցի պահեստ, սաղմոնը փրկեցի։ Վազեցի խոհանոց, խալաթը փրկեցի։ Մեսսիր, ես գտնում եմ, որ արել եմ այն ամենն, ինչ կարողացել եմ, ու չեմ հասկանում, թե ինչով է բացատրվում ձեր դեմքի սկեպտիկ արտահայտությունը։

— Իսկ ի՞նչ էր անում Կորովևն այն ժամանակ, երբ դու դիակողոպուտով էիր զբաղված,— հարցրեց Վոլանդը։

— Ես հրշեջներին էի օգնում, մեսսիր,— պատասխանեց Կորովևը՝ ցույց տալով պատռված շալվարը։

— Ահ, եթե այդպես է, ապա, ինչ խոսք, ստիպված են նոր շենք կառուցել։

— Շենքը կկառուցվի, մեսսիր,— պատասխանեց Կորովևը,— համարձակվում եմ հավաստացնել ձեզ։

— Է, ինչ արած, մնում է ցանկալ, որ նախկինից ավելի լավը լինի,— նկատեց Վոլանդը։

— Այդպես էլ կլինի, մեսիր,— ասաց Կորովևը։

— Ինձ հո հավատացեք,— ավելացրեց կատուն,— ես իսկական մարգարե եմ։

— Համենայն դեպս, մենք ներկայացել ենք, մեսիր,— զեկուցեց Կորովևը,— և սպասում ենք ձեր կարգադրություններին։

Վոլանդը ելավ աթոռակից, մոտեցավ ճաղաշարին ու երկար ժամանակ լուռ էր, մենակ, թիկունքն արած իր շքախմբին, հեռուներն էր նայում։ Հետո հեռացավ պռնկից, նորից նստեց իր աթոռակին ու ասաց.

— Ոչ մի կարգադրություն չի լինի, դուք կատարեցիք այն ամենն, ինչ կարող էիք, և ձեր ծառայությունների կարիքն առայժմ չունեմ։ Կարող եք հանգստանալ։ Շուտով վրա կհասնի ամպրոպը, վերջին ամպրոպը, կլրացնի այն ամենն, ինչ պետք է լրացնել, ու մենք ճամփա կընկնենք։

— Շատ լավ, մեսիր,— պատասխանեցին երկու խեղկատակներն ու մտան պատշգամբի մեջտեղում գտնվող կենտրոնական կլոր աշտարակի ետևը։

Ամպրոպը, որի մասին ասում էր Վոլանդը, արդեն կուտակվում էր հորիզոնի վրա։ Սև ամպը ելավ արևմուտքում ու կիսով չափ հատեց արևը։ Հետո լրիվ ծածկեց։ Պատշգամբում զովություն տիրեց։ Եվս որոշ ժամանակ անց մթնեց։

Արևմուտքից եկած այդ խավարը ծածկեց վիթխարի քաղաքը։ Անհետացան կամուրջները, պալատները։ Ամեն ինչ չքացավ, ասես երբեք չէր եղել աշխարհիս երեսին։ Երկնքով մեկ հրեղեն մի թել սլացավ։ Հետո քաղաքը ցնցվեց հարվածից։ Դա կրկնվեց, ու ծայր առավ ամպրոպը։ Վոլանդը դադարեց տեսանելի լինել ամպրոպի աղջամուղջի մեջ։

ԳԼՈՒԽ XXX

## ԺԱ՛ՄՆ Է, ԺԱ՛ՄԸ

— Գիտես,— ասում էր Մարգարիտան,— երեկ գիշեր հենց քնեցիր, ես կարդում էի Միջերկրական ծովից եկած խավարի մասին..., և այդ կուռքերը, ա՛հ, ոսկյա կուռքերը։ Չգիտեմ ինչու

*դրանք ինձ հանգիստ չեն տալիս շարունակ։ Ինձ թվում է, որ Հիմա էլ է անձրև գալու։ Զգու՞մ ես, ինչպես է զովանում։*

*— Այս ամենը լավ է ու դուրեկան,— պատասխանում էր վարպետը՝ ծխելով և ծուխը ձեռքով ցրելով,— և այդ կուռքերը, աստված իրենց հետ, բայց թե հետո ինչ է ստացվելու՝ բոլորովին անհասկանալի է։*

*Այս խոսակցությունը գնում էր արևամուտին, հենց այն ժամանակ, երբ Վոլանդին ներկայացավ Ղևի Մատթեոսը պատշգամբում։ Նկուղի պատուհանը բաց էր, և եթե մեկնումեկը ներս նայեր, կզարմանար, թե որքան տարօրինակ տեսք ունեն խոսողները։ Մարգարիտայի մերկ մարմնի վրա սև թիկնոց էր դցված, իսկ վարպետը հիվանդանոցային իր ներքնաշորերով էր։ Դա նրանից էր, որ Մարգարիտան բացարձակապես ոչինչ չուներ հագնելու, քանի որ բոլոր իրերը մնացել էին առանձնատանը, ու թեև այդ առանձնատունը շատ մոտ էր, իհարկե, խոսք լինել չէր կարող, որ գնար ու այնտեղից իրերը վերցներ։ Իսկ վարպետը, որի բոլոր զգեստները գտան պահարանի մեջ, ասես ոչ մի տեղ էլ չէր գնացել, պարզապես չէր ցանկանում հագնվել, Մարգարիտայի առաջ այն միտքը զարգացնելով, որ ուր որ է կատարելագույն մի հիմարություն կսկսվի։ Ճիշտ է, առաջին անգամ սափրվել էր, աշնանային այն գիշերից հետո (կլինիկայում նրա երեսի մազերը մեքենայով էին խուզում)։*

*Սենյակը նույնպես տարօրինակ տեսք ուներ, ու այդ քաոսի մեջ որևէ բան հասկանալը շատ էր դժվար։ Գորգի վրա թափված էին ձեռագրերը, բազմոցի վրա էլ կային։ Բազկաթոռի վրա մի գիրք էր ընկած, կռնակը՝ վեր։ Կլոր սեղանի վրա պատրաստի ճաշ էր դրված, ուտեստեղենի արանքներում մի քանի շիշ կար։ Թե որտեղից էին այդ կերակուրներն ու խմիչքները, ոչ Մարգարիտային էր հայտնի, ոչ վարպետին։ Արթնանալով, այդ ամենն արդեն սեղանի վրա տեսան։*

*Մինչև շաբաթ օրվա վերջալույսը քնելով, թե վարպետը և թե նրա ընկերուհին իրենց կատարյալ կազդուրված էին զգում, և միայն մի բան էր զգալ տալիս երեկվա արկածների մասին։ Երկուսի ձախ քունքն էլ թեթևակի տքում էր։ Իսկ հոգեկան առումով երկուսն էլ շատ մեծ փոփոխություններ էին կրել, ինչպես կհամոզվեր յուրաքանչյուր ոք, ով կարողանար ականջ դնել նրանց խոսակցությանը նկուղի սենյակում։ Սակայն ականջ դնող և ոչ մեկը չկար։ Այս փոքրիկ բակը հենց նրանով էր լավ, որ միշտ*

դատարկ էր։ Օրըստօրե ավելի ու ավելի կանաչող լորենիներն ու ուռիները գարնանային բույրը սփռում էին դրսում, և ծայր առնող քամին այդ բույրը ներս էր բերում։

— Թու՛հ, գրողը տանի,— անսպասելիորեն բացականչեց վարպետը,— խելքի մոտ բա՞ն է սա, ախր,— Նա ծխախոտը հանգցրեց մոխրամանի մեջ և գլուխը սեղմեց ձեռքերով,— չէ, լսի՛ր, չէ որ դու խելացի մարդ ես և խելագար չես եղել։ Դու լրջորե՞ն ես համոզված, որ մենք երեկ հյուր ենք եղել սատանային։

— Միանգամայն լրջորեն,— պատասխանեց Մարգարիտան։

— Իհարկե, իհարկե,— հեգնաբար ասաց վարպետը,— հիմա, ուրեմն, մի խելագարի փոխարեն երկուսը կան։ Ամուսինն էլ, կինն էլ։— Նա ձեռքերը երկինք բարձրացրեց և բղավեց.— Չէ՛, սատանան գիտե, թե սա ինչ բան է, սատանան, սատանան, սատանա՜ն։

Պատասխանի փոխարեն Մարգարիտան ընկավ բազմոցին, քրքջաց, թափահարեց մերկ ոտքերը և նոր ապա ճչաց.

— Օյ, մեռա՜։ Օյ, մեռա՜։ Մենակ տեսնես, թե ո՛ւմ ես նման։

Կուշտ քրքջալուց հետո, մինչ վարպետը ամոթահար կձգմգեր հիվանդանոցային իր ոտաշորը, Մարգարիտան լրջացավ։

— Նոր դու ակամա ճշմարտությունն ասեցիր,— սկսեց նա, —սատանա՛ն գիտե, թե ինչ, և, հավատա ինձ, սատանա՛ն ամեն ինչ կդասավորի։— Նրա աչքերը հանկարծ կրակվեցին, նա վեր թռավ, պար եկավ տեղում ու սկսեց բղավել.— Որքան երջանիկ եմ, որքան երջանիկ եմ, որքա՜ն երջանիկ եմ ես, որ գործարքի մեջ մտա նրա հետ։ Օ՜, սատանա, սատանա։ Սիրելիս, ստիպված եք լինելու ապրել վհուկի հետ։— Դրանից հետո նա վրա պրծավ վարպետին, գրկեց վիզը և սկսեց համբուրել նրա շրթունքները, քիթը, այտերը։ Չհարդարած, սև մազերի ալիքները ծածանվում էին վարպետի վրա, և նրա այտերն ու ճակատը շառագունեցին համբույրներից։

— Իսկ դու իսկապես դարձել ես վհուկի նման։

— Չեմ էլ ժխտում,— պատասխանեց Մարգարիտան,— ես վհուկ եմ ու շատ գոհ եմ, որ այդպես է։

— Դե, լավ,— խոսեց վարպետը,— վհուկ ես, վհուկ էլ մնա։ Շատ փառավոր է ու հոյակապ։ Ուրեմն, ինձ հափշտակել են բուժարանից։ Էլի շատ հաճելի է։ Այստեղ են վերադարձրել, ընդունենք սա էլ... Ենթադրենք նույնիսկ, որ մեզ չեն փնտրի, բայց հանուն ամենայն սրբության ասա ինձ, ինչո՞վ և ինչպե՞ս

պիտի ապրենք։ Այս մասին խոսելով, քո մասին եմ մտածում, հավատա ինձ։

Այդ պահին փոքրիկ պատուհանից երևացին բթածայր կոշիկներ և բարակ կոլերով շալվարի ներքևի մասը։ Ապա այդ շալվարը ծնկծալվեց, և ինչ-որ մեկի հաստ հետույքը ծածկեց ցերեկվա լույսը։

— Ալոիզի, տա՞նն ես,— շալվարի վերևներում, պատուհանից դուրս հարցրեց մի ձայն։

— Ահա՛, սկսվում է, —ասաց վարպետը։

— Ալոի՞զին,— հարցրեց Մարգարիտան, մոտենալով պատուհանին,— նրան երեկ ձերբակալեցին։ Իսկ ո՞վ է հարցնողը։ Ձեր ազգանունն ի՞նչ է։

Նույն վայրկյանին ծնկներն ու հետույքն անհետացան ու լսվեց, թե ինչպես շրխկաց դռնակը, որից հետո ամեն ինչ կարգավորվեց։ Մարգարիտան ընկավ բազմոցին և այնպես քրքջաց, որ աչքերից արցունքներ հոսեցին։ Բայց երբ հանդարտվեց, դեմքը սաստիկ փոխվեց, նա խոսեց լրջորեն և խոսելով ցած սահեց բազմոցից, ծնկաչոք մոտ սողաց վարպետին և, նրա աչքերին նայելով, սկսեց գլուխը շոյել։

— Ինչպե՜ս ես տառապել, ինչպե՜ս ես տառապել, խե՜ղճ իմ։ Մենակ ես գիտեմ։ Տե՜ս, սպիտակ թելեր կան գլխիդ վրա ու մրջտական ակոս՝ շրթունքներիդ մոտ։ Միակս, հոգիս, ոչ մի բանի մասին մի մտածիր։ Անչափ շատ ես ստիպված եղել մտածել, իսկ հիմա ե՛ս եմ քո փոխարեն մտածելու։ Ես էլ ես երաշխավորում եմ քեզ, որ ամեն ինչ փայլուն ու լավ կլինի։

— Ես ոչնչից էլ չեմ վախենում, Մարգո,— հանկարծ պատասխանեց վարպետը և բարձրացրեց գլուխն ու երևաց նրան այնպիսին, ինչպիսին էր, երբ հորինում էր մի բան, որ երբեք չէր տեսել, բայց ինչի մասին հաստատ գիտեր, որ եղել է,— ու չեմ վախենում, որովհետև արդեն ամեն բան տարել եմ։ Ինձ շատ են վախեցրել և էլ ոչնչով չեն կարող վախեցնել։ Բայց ես քե՛զ եմ խղճում, Մարգո, ահա թե որն է գաղտնիքը, ահա, թե ինչու շարունակ միևնույն բանն եմ պնդում։ Ուշքի՛ եկ։ Ինչի՞ համար ես կործանում կյանքդ՝ հիվանդ ու աղքատ մեկի հետ։ Ետ գնա ձեր տուն։ Քեզ խղճում եմ, դրա համար էլ ասում եմ։

— Ահ, դու, դու՜,— գզգզված գլուխն օրորելով, շշնջում էր Մարգարիտան,— ա՜հ, թերահավատ ու դժբախտ մարդ։ Քո

պատճառով երեկ ամբողջ գիշեր դողդողացել եմ մերկ ու տկլոր, կորցրել եմ իմ էությունը և նորով փոխարինել, մի քանի ամիս նստել եմ մութ սենյակում ու միայն մի բանի մասին մտածել՝ Երշալաիմի վրա մոլեգնած ամպրոպի, աչքերս արտասուքից կուրացել են, իսկ հիմա, երբ երջանկություն է իջել մեզ վրա, ինձ վռնդու՞մ ես։ է, ինչ արած, կգնամ, կգնամ, բայց իմացիր, որ դաժան մարդ ես դու։ Նրանք ամայացրել են քո հոգին։

Դառը քնքշություն համակեց վարպետի սիրտը և հայտնի չէ, թե ինչու նա արտասվեց՝ գլուխը թաղած Մարգարիտայի մազերի մեջ։ Մարգարիտան, լաց լինելով, շշնջում էր նրա ականջին, ու մատները թրթռում էին վարպետի քունքերի վրա։

— Այո, թելեր, թելեր, աչքերիս առաջ ձյուն է իջնում գլխիդ, ա՜խ, իմ, իմ բազմաչարչա՜ր գլուխ։ Մի տես, ինչ աչքեր ունես։ Անապա՜տն է դրանց մեջ... Իսկ ուսերդ, ուսե՜րդ՝ բեռան տակ... խեղանդամել են, խեղանդամել,— Մարգարիտայի խոսքն անկապ էր դառնում, Մարգարիտան ցնցվում էր լացից։

Այդժամ վարպետը սրբեց աչքերը, ծնկների վրայից բարձրացրեց Մարգարիտային, ինքն էլ ելավ ու հաստատ ասաց.

—Բավական է։ Դու ինձ ամաչեցրիր։ Երբեք այլևս փոքրոգություն չեմ անի ու չեմ անդրադառնա այդ հարցին, հանգիստ մնա։ Գիտեմ, որ երկուսս էլ մեր հոգեկան հիվանդության զոհն ենք, որը, միգուցե, ես եմ քեզ փոխանցել... Ինչ կա որ, միասին էլ կկրենք։

Մարգարիտան շրթունքները մոտեցրեց վարպետի ականջին ու շշնջաց.

— Երդվում եմ քո կյանքով, երդվում եմ քո կռահած աստղագուշակի որդով, ամեն ինչ լավ կլինի։

— Դե, ուրեմն, լավ, լավ,— պատասխանեց վարպետը և ծիծաղելով ավելացրեց.— Ինչ խոսք, երբ մարդիկ լիովին կողոպտված են, ինչպես ես ու դու, նրանք փրկություն են որոնում անդրկոզմյան ուժերի մեջ։ Ինչ կա որ, համաձայն եմ այնտեղ փնտրել։

— Ահա, ահա, հիմա դու նախկինն ես, ծիծաղու՞մ ես,— պատասխանեց Մարգարիտան,— ու գրողի ծո՜ցը կորիր քո գիտուն բառերով։ Անդրկողմյան կամ ոչ անդրկողմյան՝ մեկ չէ՞ արդյոք։ Ես ուտել եմ ուզում։

Եվ նա, վարպետի ձեռքը բռնած, քարշ տվեց սեղանի մոտ։

— Ես համոզված չեմ, որ այս ուտելիքը հիմա գետնի տակը

չի անցնի կամ լուսամուտից դուրս չի թռչի,— լիովին հանգստացած, ասաց նա։

— Չի թռչի։

Եվ հենց այդ պահին ռնգային մի ձայն լսվեց պատուհանից.

— Խաղաղություն ձեզ։

Վարպետը ցնցվեց, իսկ արտասովորին արդեն վարժված Մարգարիտան բացականչեց.

— Ազազե՛լլոն է սա։ Ա՜հ, ի՜նչ հաճելի է, ի՜նչ լավ է,— և շշնջալով վարպետին.— Ահա տեսնում ես, տեսնում ես, մեզ չեն լքում,— նետվեց դուռը բացելու։

— Գոնե մի բան գցիր վրադ,— բղավեց վարպետը նրա ետևից։

— Թքել եմ դրա վրա,— պատասխանեց Մարգարիտան արդեն միջանցքից։

Եվ ահա Ազազելլոն արդեն գլուխ խոնարհելով ողջունում էր վարպետին՝ շիլ աչքը շողացնելով, իսկ Մարգարիտան բացականչում էր.

— Ահ, ինչքա՜ն գոհ եմ։ Ես երբեք այսքան ուրախ չեմ եղել կյանքում։ Բայց կներեք, Ազազելլո, որ մերկ եմ։

Ազազելլոն խնդրեց չանհանգստանալ, հավատացրեց, որ տեսել է ոչ միայն մերկ կանանց, այլև նույնիսկ լրիվ մաշկազերծ կանանց, սիրահոժար նստեց սեղանի մոտ, նախօրոք վառարանի կողքի անկյունում կարմիր դիպակով փաթաթված մի կապոց դնելով։

Մարգարիտան կոնյակ լցրեց Ազազելլոյին, և նա հաճույքով խմեց։ Վարպետը, աչքը նրանից չկտրելով, սեղանի տակ մեկ-մեկ ծածուկ կսմթում էր ձախ ձեռքի դաստակը։ Բայց այդ կսմթոցները չէին օգնում։ Ազազելլոն չէր հալվում օդի մեջ, և, ճշմարիտն ասած, դրա ոչ մի անհրաժեշտությունը չկար։ Շիկավուն մազերով, կարճահասակ այդ մարդու մեջ սարսափելի ոչինչ չկար, եթե չհաշվենք հատ ընկած աչքը, բայց չէ որ դա լինում է նաև առանց որևէ կախարդանքի, մենակ հագուստն այնքան էլ սովորական չէր՝ թիկնոց էր թե փարաջա, բայց եթե լրջորեն մտածենք, դա էլ է լինում։ Կոնյակը նա նույնպես վարժ էր խմում, ինչպես բոլոր կարգին մարդիկ, ըմպանակը՝ լրիվ, առանց ուտելու։ Այդ նույն կոնյակից վարպետի գլուխը խշշաց, ու նա սկսեց մտածել.

«Չէ, Մարգարիտան իրավացի էր։ Իհարկե, իմ դիմաց նստած է սատանայի դեսպանորդը։ Չէ որ հենց ինքս նախանցյալ գիշեր,

ոչ ուշ, ապացուցում էի Իվանին, որ Պատրիարքականի վրա Նա հենց սատանային է հանդիպել, իսկ հիմա չգիտես ինչու վախեցել եմ այդ մտքից ու սկսել ինչ-որ բաներ դուրս տալ հիպնոսողների և հալյուցինացիաների մասին։ Գրողը տանի, ի՜նչ հիպնոսող, ի՜նչ բան»։

Նա սկսեց զննել Ազազելլոյին ու համոզվեց, որ նրա աչքերի մեջ հարկադրյալ մի բան կա, ինչ-որ միտք, որը մինչև որոշ ժամանակ ներսում է պահում։ «Հենց այնպես չի այցելել նա, այլ հայտնվել է ինչ-որ հանձնարարությամբ»,— մտածեց վարպետը։

Դիտողունակությունը նրան չդավաճանեց։

Խմելով երրորդ ըմպանակ կոնյակը, որ Ազազելլոյի վրա ոչ մի ազդեցություն չէր գործում, այցելուն այսպես սկսեց.

— Բայց հարմար նկուղ է, գրողն ինձ տանի։ Միայն մի հարց է առաջանում։ Ի՞նչ անել այս նկուղում։

— Նույնն էլ ես եմ ասում,— ծիծաղելով, պատասխանեց վարպետը։

— Ինչո՞ւ եք ինձ անհանգստացնում, Ազազելլո,— հարցրեց Մարգարիտան,— մի կե՛րպ։

— Ի՜նչ եք ասում, ի՜նչ եք ասում,— գոչեց Ազազելլոն,— մտքովս անգամ չէր անցնում ձեզ անհանգստացնել։ Ես էլ եմ ասում՝ մի կե՛րպ։ Այո. Քիչ էր մնացել մոռանայի, մեսսիրը բարևում էր ձեզ, նաև հրամայեց ասեմ, որ հրավիրում է ձեզ իր հետ ոչ մեծ մի զբոսանք կատարել, եթե իհարկե ցանկանում եք։ Ի՞նչ կասեք։

Սեղանի տակ Մարգարիտան ոտքով հրեց վարպետին։

— Մեծ հաճույքով,— պատասխանեց վարպետը՝ ուսումնասիրելով Ազազելլոյին, իսկ վերջինս շարունակեց.

— Մենք հուսով ենք, որ Մարգարիտա Նիկոլաևնա՞ն ևս չի հրաժարվի դրանից։

— Ես հաստատապես չեմ հրաժարվի,— պատասխանեց Մարգարիտան, և նրա ոտքը նորից դիպավ վարպետի ոտքին։

— Սքանչելիագույն բան է, —բացականչեց Ազազելլոն,— ա՜յ, սիրում եմ։ Մեկ երկու, և վերջ։ Ոչ թե այն ժամանակվա պես, Ալեքսանդրովսկի այգում։

— Ա՜հ, մի հիշեցրեք, Ազազելլո։ Այն ժամանակ ես հիմար էի։ Ասենք, ինձ չի էլ կարելի խստորեն դատել դրա համար՝ ամեն օր չես հանդիպում սատանայի։

— Հարկավ,— հաստատեց Ազազելլոն,— եթե ամեն օր լիներ, հաճելի կլիներ։

— Ինձ էլ է արագությունը դուր գալիս,— ասում էր Մարգարիտան բորբոքված,— արագությունն է դուր գալիս և մերկությունը։ Ինչպես մաուզերի կրակոց՝ թրա՜խկ։ Ահ, ինչպես է նա կրակում,— բղավեց Մարգարիտան՝ դիմելով վարպետին,— յոթանոցը բարձի տակ, և ցանկացած կետը...— Մարգարիտան սկսում էր հարբել, որից նրա աչքերը կրակվեցին։

— Նորից մոռացա,— ճակատին խփելով, գոչեց Ազազելլոն, —շատ եմ հոգնած։ Մեսիրը ձեզ նվեր է ուղարկել,— այստեղ նա դիմեց անմիջականորեն վարպետին,— մի շիշ գինի։ Խնդրում եմ նկատի ունենալ, սա նույն գինին է, որ Հրեաստանի կուսակալն էր խմում։ Ֆալեռնոյի գինի է։

Լիովին բնական է, որ այդպիսի հազվադյուտ բանը Մարգարիտայի և վարպետի մեծ ուշադրությանն արժանացավ։ Դագաղի մուգ կերպասի միջից Ազազելլոն դուրս քաշեց ամբողջովին բորբոսապատ մի սափոր։ Գինուց հոտ քաշեցին, լցրեցին գավաթների մեջ, գինու միջից նայեցին ամպրոպից առաջ պատուհանից անհետացող լույսը։ Տեսան, թե ինչպես ամեն ինչ արյան գույնով է ցողվում։

— Վոլանդի կենացը,— բացականչեց Մարգարիտան՝ բաժակը բարձրացնելով։

Երեքն էլ շրթունքները հպեցին գավաթներին և մեկական խոշոր ումպ խմեցին։ Նախաամպրոպային լույսն իսկույն սկսեց հանգչել վարպետի աչքերի մեջ, նրա շունչը կտրվեց, զգաց, որ վախճանը մոտենում է։ Տեսավ նաև, թե ինչպես մեռելի պես գունատված Մարգարիտան, անօգնականորեն ձեռքերն իր կողմը պարզած, գլուխը զցում է սեղանի վրա, իսկ հետո սահում-ընկնում հատակին։

— Թունավորի՜չ,— հասցրեց դեռ բղավել վարպետը։ Նա ուզեց սեղանի վրայից վերցնել դանակը, Ազազելլոյին խփելու համար, բայց ձեռքն անզորությամբ սահեց սփռոցի վրայով, նկուղում վարպետին շրջապատող ամեն ինչ սև գույնով ողողվեց, իսկ հետո լիովին անհետացավ։ Նա ընկավ երեսնիվեր, և, ընկնելով, քունքի մաշկը պատռեց՝ գրասեղանի անկյունին խփելով։

Երբ թունավորվածները հանդարտվեցին, Ազազելլոն գործի անցավ։ Առաջին հերթին դուրս թռավ պատուհանից և մի քանի վայրկյանից այն առանձնատանն էր, ուր ապրում էր Մարգարիտա

*Նիկոլաևնան։ Մշտապես ճշտապահ ու բծախնդիր Ազազելլոն ցանկանում էր ստուգել՝ ամեն ինչ կատարվա՞ծ է, ինչպես հարկն է։ Ամեն բան տեղը տեղին էր։ Ազազելլոն տեսավ, թե ինչպես մռայլված, ամուսնու վերադարձին սպասող կինը դուրս եկավ իր ննջասենյակից, հանկարծակի գունատվեց, սիրտը բռնեց, և անօգնական բղավեց.*

*— Նատա՜շա։ Ով կա... այստեղ եկեք, — ընկավ հյուրասենյակի հատակին, չհասած աշխատասենյակ։*

*— Ամեն ինչ կարգին է,— ասաց Ազազելլոն։ Մի վայրկյան անց նա գետնատարած սիրահարների մոտ էր։ Մարգարիտան ընկած էր՝ դեմքը գորգի մեջ։ Իր երկաթյա ձեռքերով Ազազելլոն տիկնիկի պես շրջեց նրան, երեսով դեպի ինքը և ակնապիշ դեմքին նայեց։ Ազազելլոյի աչքի առաջ թունավորվածի դեմքը փոխվում էր։ Անգամ ամպրոպային վրահաս աղջամուղջի մեջ երևում էր, թե ինչպես է անհետանում նրա ժամանակավոր վհուկային շլակնությունը և դիմագծերի դաժանությունն ու կատաղությունը։ Հանգուցյալի դեմքը պայծառացավ և, վերջապես, փափկեց, և ատամների բացվածքն էլ գիշատիչ չէր, այլ ուղղակի կանացի նահատակային բացվածք։ Այդ ժամանակ Ազազելլոն ուժով բացեց նրա ճերմակ ատամներն ու մի քանի կաթիլ հենց այն գինուց լցրեց, որով թունավորել էր։ Մարգարիտան հոգոց հանեց, սկսեց վեր կենալ առանց Ազազելլոյի օգնության, նստեց ու թույլ ձայնով հարցրեց.*

*— Ինչի՞ համար, Ազազելլո, ինչի՞ համար։ Ինձ ի՞նչ արեցիք դուք։*

*Նա տեսավ պառկած վարպետին, ցնցվեց ու շշնջաց.*

*— Այս մի բանը ես չէի սպասում... մարդասպա՜ն։*

*— Չէ՛ է՛, չէ՛,— պատասխանեց Ազազելլոն,— հիմա նա վեր կկենա։ Ահ, ինչո՞ւ եք այդքան նյարդային։*

*Մարգարիտան իսկույն հավատաց նրան, այնքան որ համոզիչ էր շեկ դևի ձայնը։ Մարգարիտան վեր թռավ՝ ուժեղ և ողջ, ու օգնեց գինին խմեցնել ընկածին։ Աչքերը բաց անելով, վարպետը նայեց մռայլադեմ և ատելությամբ կրկնեց իր վերջին խոսքը.*

*— Թունավորի՛չ...*

*— Ա՛խ։ Վիրավորանքը սովորական պարգևն է՝ լավ գործի դիմաց,— պատասխանեց Ազազելլոն,— մի՞թե դուք կույր եք։ Շուտ արեք, բացեք ձեր աչքերը։*

Վարպետն այստեղ վեր կացավ, կենդանի ու պայծառ հայացքով շուրջը նայեց և հարցրեց.

— Իսկ ի՞նչ է նշանակում այս նոր բանը։

— Սա նշանակում է,— պատասխանեց Ազազելլոն,— որ ձեր ժամն է։ Ամպրոպն արդեն դղրդում է, լսու՞մ եք։ Մթնում է։ Ձիերը հողն են փորում սմբակներով, ցնցվում է փոքրիկ այգին։ Հրաժեշտ տվեք նկուղին, շուտ հրաժեշտ տվեք։

— Ա՜, հասկացա,— ասաց վարպետը, շուրջը նայելով,— դուք մեզ սպանեցիք, մենք մեռած ենք։ Ա՜հ, որքա՜ն խելացի է։ Որքա՜ն ժամանակին։ Հիմա ես ձեզ հասկացա։

— Ա՜հ, ողորմած եղեք,— պատասխանեց Ազազելլոն,— ձե՞զ եմ արդյոք լսում։ Չէ որ ձեր ընկերուհին վարպետ է անվանում ձեզ, չէ որ դուք մտածում եք, ինչպե՞ս կարող եք մեռած լինել։ Մի՞թե իրեն կենդանի համարելու համար պետք է անպայման նստել նկուղում, հագին մեկ տակ շապիկ և հիվանդանոցային ոտաշոր ունենալով։ Դա ծիծաղելի է։

— Ես հասկացա ամեն բան, ինչ ասացիք,— գոչեց վարպետը,— մի շարունակեք։ Հազարապատիկ իրավացի եք։

— Մեծն Վոլա՜նդը,— նրան ձայնակցեց Մարգարիտան,— մեծն Վոլա՜նդը։ Նա շատ ավելի լավ է մտածել, քան ես։ Միայն թե վեպը, վեպը,— բղավում էր նա վարպետին,— ուր էլ թռչես, վեպը վերցրու քեզ հետ։

— Հարկ չկա,— պատասխանեց վարպետը— անգիր եմ հիշում։

— Բայց դու ոչ մի բառ... ոչ մի բառ չե՞ս մոռանա վեպից,— հարցնում էր Մարգարիտան՝ փարվելով սիրեցյալին և արյունը սրբելով ճղված քունքի վրայից։

— Մի անհանգստացիր։ Հիմա ես երբեք և ոչինչ չեմ մոռանա,— պատասխանեց նա։

— Այդ դեպքում՝ կրա՜կ,— գոչեց Ազազելլոն,— կրակ, որից սկիզբ է առել ամեն ինչ և որով ավարտում ենք ամեն ինչ։

— Կրա՜կ,— սարսափաձայն բղավեց Մարգարիտան։ Նկուղի փոքրիկ պատուհանը շրխկաց, քամին վարագույրը մի կողմ շպրտեց։ Երկնքում կարճ ու զվարթ որոտ թնդաց։ Ազազելլոն ճանկերը բաց ձեռքը մտցրեց վառարանը, դուրս քաշեց ծխացող խանձողը և վառեց սեղանի սփռոցը։ Հետո վառեց բազմոցի վրա թափված հին լրագրերի կապուկը, ապա ձեռագիրն ու պատուհանի վարագույրը։ Առաջիկա արշավով արդեն արբեցած վարպետը

գրադարակի վրայից ինչ-որ գիրք շպրտեց սեղանի վրա, բայց արդեն թերթերը՝ կրակ բռնած սփռոցի վերևում, և գիրքը բոցավառվեց խաղացկուն կրակով։

— Այրվի՛ր, նախկին կյանք, այրվի՛ր։

— Այրվի՛ր, տառապանք,— բղավում էր Մարգարիտան։

Բոսորավուն սյուներն արդեն տարուբերվում էին սենյակում, ու ծխի հետ մեկտեղ դռնից դուրս ընկան երեք հոգի, քարե սանդուղքով վեր ելան ու հայտնվեցին բակում։ Առաջինը, որ տեսան այնտեղ ֆրամուսաքարտիրոջ՝ գետնին նստած խոհարարուհին էր, նրա զիմաց սփռված էր շաղ եկած կարտոֆիլն ու մի քանի կապ սոխ։ Խոհարարուհու վիճակը հասկանալի էր։ Մառանի մոտ երեք սև նժույգ էին վրնջում՝ դոփդոփելով և հողի շատրվաններ վեր հանելով։ Առաջինը ձիու վրա ցատկեց Մարգարիտան, ապա Ազազելլոն, վերջում՝ վարպետը։ Խոհարարուհին, տնքալով, ձեռքն ուզում էր բարձրացնել, խաչ հանելու համար, բայց Ազազելլոն թամբի վրայից սպառնաձայն բղավեց.

— Ձեռքդ կկտրեմ,— նա սուլեց, և նժույգները, լորենու ճյուղերը ջարդելով, վեր սուրացին ու մխրճվեցին ցածրընթաց սև ամպի մեջ։ Նկուղի պատուհանից անմիջապես սև ծուխ ժայթքեց։ Ներքևից լսվեց խոհարարուհու թույլ ողորմելի ճիչը.

— Վառվեցի՜նք...

Նժույգներն արդեն սլանում էին Մոսկվայի տանիքների վրայով։

— Ես ուզում եմ հրաժեշտ տալ քաղաքին,— բղավեց վարպետն Ազազելլոյին, որն արշավում էր առջևից։ Որոտը կուլ տվեց վարպետի ասածի ավարտը։ Ազազելլոն գլխով արեց, ու ձին թողեց քառատրոփի։ Թռչողներին ընդառաջ մի ամպ էր սուրում, բայց դեռ անձրև չէր ցայտեցրել։

Նրանք թռչում էին զբոսայգու վրայով, տեսնում էին, թե ինչպես են վազվզում մարդկային փոքրիկ կերպարանքները՝ անձրևից թաքնվելով։ Ընկան առաջին կաթիլները։ Նրանք թռան-անցան ծխի վրայով՝ այն ամենն, ինչ մնացել էր Գրիբոեդովից։ Նրանք թռչում էին քաղաքի վրայով, որն արդեն մթությամբ էր պատվում։ Նրանցից վեր կայծակներն էին բռնկվում։ Հետո տանիքներին կանաչը փոխարինեց։ Սոսկ այդ ժամանակ հորդաց անձրևը և թռչողներին դարձրեց երեք վիթխարի պղպջակ՝ ջրի մեջ։

Մարգարիտան արդեն ծանոթ էր թռիչքի զգացողությանը, իսկ վարպետը՝ ոչ, ու նա զարմացավ, թե որքան արագ հասան նպա-

տակակետին, Նրան, ում ուզում էր հրաժեշտ տալ, քանի որ այլևս ոչ մեկը չուներ հրաժեշտ տալու։ Անձրևի շղարշի միջից նա իսկույն ճանաչեց պրոֆեսոր Ստրավինսկու կլինիկան, գետը և իր այնքան լավ ուսումնասիրած անտառը հանդիպակաց ափին։ Նրանք իջան բացատի թփուտների մեջ, կլինիկայից ոչ հեռու։

— Ես ձեզ կսպասեմ այստեղ,— բղավեց Ազազելլոն՝ վահանաձև բռնած ձեռքերը, մեկ կայծակներով լուսավորված, մեկ չքանալով մոխրագույն շղարշի մեջ,— հրաժեշտ տվեք, բայց շուտ։

Վարպետը և Մարգարիտան ցած թռան թամբերից և ջրաստվերների պես ցոլցլալով, թռան կլինիկայի այգու միջով։ Մի վայրկյան ևս անց վարպետը սովոր ձեռքով ետ տարավ 117-րդ սենյակի պատշգամբի վանդակը։ Մարգարիտան նրան էր հետևում։ Անտեսանելի և աննկատ, ամպրոպի դղրդյունի և ոռնոցի ժամանակ նրանք մտան Իվանուշկայի սենյակ։ Վարպետը կանգ առավ մահճակալի մոտ։

Իվանուշկան պառկած էր անշարժ, ինչպես և այն ժամանակ, երբ առաջին անգամ ամպրոպին էր հետևում անդորրի իր տանը։ Սակայն չէր արտասվում, ինչպես այն ժամանակ։ Երբ ինչպես հարկն է զննեց պատշգամբից իր սենյակ խուժած մութ ստվերը, բարձրացավ տեղից, պարզեց ձեռքերն ու ասաց բերկրանքով.

— Ա՜, դուք եք։ Իսկ ես շարունակ սպասում, սպասում եմ ձեզ։ Ահա և դուք, հարևան։

Ի պատասխան վարպետն ասաց.

— Ես այստեղ եմ։ Բայց ցավոք սրտի ձեզ հարևան լինել այլևս չեմ կարող։ Ես թռչում եմ առհավետ և ձեզ մոտ եմ եկել սոսկ հրաժեշտ տալու։

— Ես դա գիտեի, ես կռահում էի,— կամացուկ պատասխանեց Իվանն ու հարցրեց.— Դուք նրան հանդիպեցի՞ք։

— Այո,— ասաց վարպետը,— ես եկել եմ ձեզ հրաժեշտ տալու, որովհետև դուք միակ մարդն էիք, ում հետ խոսել եմ վերջին ժամանակներս։

Իվանուշկան պայծառացավ ու ասաց.

— Լավ է, որ այստեղ եկաք։ Չէ որ ես իմ խոսքի տերն եմ, ոտանավորներ այլևս չեմ գրելու։ Հիմա ինձ ուրիշ բան է հետաքրքրում,— Իվանուշկան ժպտաց և խելացնոր աչքերով նայեց վարպետի կողքով, ինչ-որ կետի,— ուրիշ բան եմ ուզում գրել։ Քանի դեռ պառկած եմ այստեղ, գիտեք, շատ բան եմ հասկացել։

Վարպետը հուզվեց այդ խոսքերից ու, նստելով Իվանուշկայի անկողնու եզրին, ասաց.

— Այ, դա լավ է, լա՛վ է։ Շարունակությունը գրեք նրա մասին։

Իվանուշկայի աչքերը բռնկվեցին։

— Իսկ մի՞թե դուք չեք գրելու,— այստեղ նա գլուխը կախեց ու մտազբաղ ավելացրեց.— Ախ, հա... ինչեր եմ հարցնում,— Իվանուշկան հատակին էր նայում խեթ-խեթ, վախեցած էր նայում։

— Այո, —ասաց վարպետը, և նրա ձայնն Իվանուշկային անծանոթ ու խուլ թվաց,— ես այլևս չեմ գրելու նրա մասին։ Ուրիշ բանով զբաղված կլինեմ։

Ամպրոպի աղմուկը պատռեց հեռավոր մի սուլոց։

— Լսու՞մ եք,— հարցրեց վարպետը։

— Ամպրոպն է որոտում...

— Ոչ, ինձ են կանչում, ժամն է,— բացատրեց վարպետն ու վեր կացավ անկողնու վրայից։

— Սպասե՛ք։ Մի բառ էլ,—խնդրեց Իվանը,— իսկ դուք գտա՞ք այն կնոջը։ Նա ձեզ հավատարի՞մ էր մնացել։

— Ահա նա,— պատասխանեց վարպետն ու մոտենալով պատը։ Ճերմակ պատից առանձնացավ սավերլված Մարգարիտան և մոտեցավ անկողնին։ Նա նայում էր պառկած պատանուն, ու նրա աչքերի մեջ թախիծ էր կարդացվում։

— Խե՛ղճ, խե՛ղճ,— անձայն շշնջաց Մարգարիտան ու կռացավ անկողնու վրա։

— Ինչ գեղեցի՛կ է,— առանց նախանձի, բայց տխրությամբ ու մի տեսակ հանդարտ զորովով խոսեց Իվանը,— մի տես է, ինչ լավ եղավ ձեր բանը։ Իսկ իմը՝ չէ,— այստեղ նա մտածեց ու մտախոհ ավելացրեց.— Չնայած, գուցե իմն էլ...

— Ձերն էլ, ձերն էլ,— շշնջաց Մարգարիտան ու ավելի կռացավ պառկածի վրա,— հիմա ես կհամբուրեմ ձեր ճակատը, ու ձեզ համար ամեն ինչ կլինի այնպես, ինչպես պետք է... ինձ հավատացեք, ես արդեն ամեն ինչ տեսել եմ, ամեն ինչ գիտեմ։

Պառկած պատանին գրկեց նրա պարանոցը, և Մարգարիտան համբուրեց նրան։

— Մնաս բարով, աշակերտ,— հազիվ լսելի ասաց վարպետն ու սկսեց հալվել օդի մեջ։ Նա չքացավ, նրա հետ միկտեղ Մարգարիտան էլ չքացավ։ Պատշգամբի վանդակը փակվեց։

Իվանուշկան անհանգիստ վիճակի մեջ ընկավ։ Նա նստեց անկողնում, տագնապած չորս դին նայեց, նույնիսկ տնքաց, ինքն իր հետ խոսեց, ոտքի ելավ։ Ամպրոպն ավելի սաստիկ մոլեգնեց և, ըստ երևույթին, խռովեց նրա հոգին։ Նրան հուզեց նաև այն, որ իր դռնից այն կողմ, արդեն մշտական լռությանը սովոր լսողությամբ անհանգիստ ոտնաձայն ու խուլ խոսակցություն որսաց։ Արդեն նյարդայնանալով ու ցնցվելով, ձայն տվեց.

— Պրասկովյա Ֆյոդորովնա։

Պրասկովյա Ֆյոդորովնան արդեն սենյակ էր մտնում, Իվանուշկային նայելով հարցական ու տագնապած։

— Ի՞նչ։ Ի՞նչ է պատահել,— հարցրեց նա,— ամպրո՞պն է անհանգստացնում։ Ոչինչ, ոչինչ... Հիմա ձեզ կօգնենք։ Հիմա բժշկին կկանչեմ։

— Ոչ, Պրասկովյա Ֆյոդորովնա, պետք չէ բժշկին կանչել,— ասաց Իվանուշկան՝ անհանգիստ աչքերով նայելով ոչ թե Պրասկովյա Ֆյոդորովնային, այլ պատին,— առանձնապես բան չի պատահել ինձ։ Հիմա արդեն հասկանում եմ, մի վախեցեք։ Ավելի լավ է ինձ ասեք,— սրտաբուխ խնդրեց Իվանը,— իսկ ի՞նչ է կատարվել հիմա կողքի հարյուրտասնութերորդ սենյակում։

— Տասնութու՞մ,— հարցը կրկնեց Պրասկովյա Ֆյոդորովնան, ու նրա աչքերը թրթռացին,— բան էլ չի պատահել։— Բայց նրա ձայնը կեղծ էր, Իվանուշկան իսկույն նկատեց դա և ասաց.

— Է՜, Պրասկովյա Ֆյոդորովնա։ Այնքան ճշմարտախոս կին եք... Կարծում եք, մոլուցքի մե՞ջ կընկնեմ։ Չէ, Պրասկովյա Ֆյոդորովնա, չի լինի։ Ավելի լավ է, ուղղակի ասեք։ Չէ որ պատի միջից ես ամեն ինչ զգում եմ։

— Ձեր հարևանը նոր վախճանվեց,— շշնջաց Պրասկովյա Ֆյոդորովնան, անզոր՝ հաղթահարելու իր ճշմարտախոսությունն ու բարությունը, և վախեցած նայեց Իվանուշկային, որն ամբողջովին կայծակի լույսով էր պարուրվել։ Սակայն Իվանուշկային սարսափելի ոչինչ չպատահեց։ Նա լոկ բազմանշանակ բարձրացրեց մատը և ասաց.

— Ես այդպես էլ գիտեի։ Հավատացնում եմ ձեզ, Պրասկովյա Ֆյոդորովնա, որ հիմա մի ուրիշ մարդ էլ վախճանվեց քաղաքում։ Նույնիսկ գիտեմ, թե ով,— Իվանուշկան այստեղ խորհրդավոր ժպտաց,— մի կի՜ն։

ԳԼՈՒԽ XXXI

## ՎՈՐՈԲՅՈՎՅԱՆ ՍԱՐԵՐԻ ՎՐԱ

*Ամպրոպն անհետ չքացավ, և ամբողջ Մոսկվայի վրա կամար կապած, երկնքում բազմագույն ծիածանն էր տարածվել և ջուր էր խմում Մոսկվա գետից։ Բարձունքի վրա, բլրի կատարին, երկու պուրակների միջտեղում երեք մութ ստվերներ էին երևում։ Վոլանդը, Կորովևը և Բեգեմոտը, թամբած սև նժույգներ հեծած, նայում էին գետից այն կողմ սփռված քաղաքին, արևմուտքին նայող հազարավոր լուսամուտների մեջ փայլփլող կոտրակված արևին, Կուսանաց մենաստանի մեղրաբլիթե աշտարակներին։*

*Օդի մեջ խշշոց լսվեց, և Ազազելլոն, որի թիկնոցի սև փեշին կպած սուրում էին վարպետը և Մարգարիտան, նրանց հետ միասին իջավ սպասողների խմբի մոտ։*

*— Ստիպված էինք ձեզ անհանգստացնել, Մարգարիտա Նիկոլաևնա և ձեզ՝ վարպետ,— որոշ լռությունից հետո խոսեց Վոլանդը,— բայց դուք ինձնից չպետք է դժգոհ լինեք։ Չեմ կարծում, թե զղջաք սրա համար։ Է՛, ինչ,— դիմեց նա միայն վարպետին, —հրաժեշտ տվեք քաղաքին։ Ժա՛մն է,— Վոլանդը սև ձեռնոցով ձեռքը պարզեց այնտեղ, ուր անքանակ արևներ գետից այն կողմ ապակի էին հալեցնում, ուր այդ արևներից վեր, օրվա ընթացքում շիկացած քաղաքի մշուշը կար, ծուխն ու գոլորշին։*

*Վարպետը ցած նետվեց թամբից, թողեց նստածներին ու վազեց դեպի բլրակի զառիթափը։ Սև թիկնոցը գետնի վրայով քարշ էր գալիս նրա ետևից։ Վարպետն սկսեց քաղաքին նայել։ Առաջին վայրկյաններին կսկծացնող մի տրտմություն պարուրեց սիրտը, բայց շատ արագ փոխարինվեց մի անուշ տագնապով, թափառական գնչուի հուզմունքով։*

*— Առհավե՜տ։ Իմաստավորել է պետք սա,— շշնջում էր վարպետը և լիզում չորացած, ճաքճքած շրթունքները։ Նա սկսեց ականջ դնել և ճշգրիտ արձանագրել այն ամենն, ինչ կատարվում էր հոգու ներսում։ Ինչպես թվաց նրան, իր հուզմունքը վերածվում էր խորունկ ու սաստիկ վիրավորանքի զգացումի։ Սակայն անկայուն էր դա, չքացավ ու փոխարինվեց հպարտ անտարբերությամբ, իսկ սա՝ մշտնջենական անդորրի կանխազգացումով։*

*Հեծյալների խումբը վարպետին էր սպասում լուռ։ Հեծյալների խումբը նայում էր, թե ինչպես սև երկար մարմինը զառիթափի*

սյունկին ձեռքերն է թափահարում, մերթ բարձրացնում է գլուխը, ասես ջանում է հայացքը շպրտել ամբողջ քաղաքի վրայով, մերթ կախում գլուխը՝ ասես ուսումնասիրելով ոտքի տակի տրորված, ճմռթված խոտերը։

Լռությունը խախտեց ձանձրացած Բեգեմոտը։

— Մե՛տր, թույլ տվեք արշավից առաջ սուլեմ ի հրաժեշտ,— ասաց նա։

— Կարող ես տիկնոջը վախեցնել,— պատասխանեց Վոլանդը, —բացի դրանից, մի մոռանա, որ այսօրվա քո բոլոր այլանդակությունններն արդեն վերջացել են։

— Ահ, ոչ, ոչ, մեսսիր,—արձագանքեց Մարգարիտան, որն ամազոնուհու պես էր նստած թամբին՝ կողքանց, մինչև գետին կախված քղանցքի սրածայր տուտը,— թույլ տվեք, թող սուլի։ Հեռու ճանապարհից առաջ տրտմություն է իջել վրաս։ Ճիշտ չէ՞ արդյոք, մեսսիր, դա լիովին բնական է, նույնիսկ երբ մարդ գիտե, որ այդ ճանապարհի վերջում իրեն երջանկություն է սպասում։ Թող նա ծիծաղեցնի մեզ, թե չէ վախենում եմ արցունքով ավարտվի սա և ամեն բան կփչանա ճանապարհից առաջ։

Վոլանդը գլխով արեց Բեգեմոտին, վերջինս չափազանց աշխուժացավ, ցած նետվեց թամբից, մատները բերանը խոթեց, թշերը ուռեցրեց ու սուլեց։ Մարգարիտայի ականջները զրնգացին։ Նրա ձին ծառս եղավ, պուրակի ծառերից չոր ճյուղեր թափվեցին, ագռավների և ճնճղուկների երամներ թռան վեր, փոշու սյունը գնաց գետի կողմը ու երևաց, թե ինչպես նավակայանի մոտով անցնող գետային տրամվայի մի քանի ուղևորների կեպիները ջուրն ընկան։ Վարպետը ցնցվեց սուլոցից, բայց չշրջվեց, այլ ավելի անհանգիստ սկսեց թափահարել ձեռքերը՝ երկինք բարձրացնելով, ասես սպառնալով քաղաքին։ Բեգեմոտը հպարտ-հպարտ շուրջը նայեց։

— Չեմ վիճում, սուլվեց,— ներողամտորեն նկատեց Կորովևը,— իսկապես սուլվեց, բայց եթե անկողմնակալ խոսենք, շատ միջակ սուլվեց։

— Ես հո խմբավար չեմ, —արժանապատվությամբ ու փքվելով պատասխանեց Բեգեմոտը և անսպասելիորեն աչքով արեց Մարգարիտային։

— Հապա թողեք, ե՛ս փորձեմ հին սովորությամբ,— ասաց Կորովևը, ձեռքերը շփելով, փչեց մատների վրա։

*— Բայց տես հա՜, տես հա՜,—ձիու վրայից լսվեց Վոլանդի ահեղ ձայնը,— առանց խեղկատակ բաների։*

*— Հավատացեք, մեսսիր,— պատասխանեց Կորովևը և ձեռքը սրտին դրեց,— կատակով, բացառապես կատակով...— Այստեղ նա հանկարծ վեր ձգվեց, ասես ռետինե լիներ, աջ ձեռքի մատներին մի տեսակ բարդ դասավորություն տվեց, պտուտակի պես ոլորվեց, ապա հանկարծակի ետ ոլորվելով՝ սուլեց։*

*Մարգարիտան այդ սուլոցը չլսեց, բայց տեսավ այն ժամանակ, երբ ինքն ու իր կրակոտ նժույգը մի տասը սաժեն հեռու շպրտվեցին։ Նրա կողքին արմատախիլ եղավ կաղնին, ու գետինը ճաքերով պատեց մինչև գետը։ Գետափի մի հսկայական շերտ, նավակայանով ու ռեստորանով հանդերձ, գետն իջավ։ Ջուրը եռաց, վեր շպրտվեց, և դիմացի կանաչ ու ցածրադիր ափը հանեց գետային ամբողջ տրամվայը, բացարձակապես անվնաս ուղևորներով։ Մարգարիտայի խրխնջացող նժույգի ոտքերի տակ ընկավ Ֆագոտի սուլոցից սպանված ագռավը։ Այդ սուլոցը վախեցրեց վարպետին։ Նա բռնեց գլուխն ու ետ վազեց իրեն սպասող ուղեկիցների մոտ։*

*— Դե, ուրեմն,— իր նժույգի բարձրությունից նրան դիմեց Վոլանդը,— բոլոր հաշիվները մաքու՞ր են։ Հրաժեշտը կայացա՞վ։*

*— Այո, կայացավ,— պատասխանեց վարպետը և, հանգստանալով, Վոլանդի դեմքին նայեց ուղիղ ու համարձակ։*

*Եվ այդ ժամանակ շեփորականչի պես սարերի վրայով գլորվեց Վոլանդի սարսափելի ձայնը.*

*— Ժա՜մն է, —ու Բեգեմոտի հատու սուլոցն ու քրքիջը։*

*Նժույգները պոկվեցին, և հեծյալները վեր սուրացին ու սլացան։ Մարգարիտան զգում էր, թե իր կատաղի նժույգն ինչպես է կրծում ու ձգում երասանակը։ Վոլանդի թիկնոցը փքվեց ամբողջ հեծելախմբի գլխավերևում, այդ թիկնոցով սկսեց ծածկվել իրիկնամուտի երկնակամարը։ Երբ մի ակնթարթ սև ծածկույթը կողմ քաշվեց, Մարգարիտան, արշավելով, շրջվեց ու տեսավ, որ ետևում ոչ միայն գույնզգույն աշտարակներն ու դրանց վրայով պտույտ տվող սավառնակը չկա, այլ վաղուց չկա քաղաքն իսկ, որ գետնի տակ էր անցել ու մշուշ թողել՝ ի հիշատակ։*

ԳԼՈՒԽ XXXII

## ԹՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆ

*Աստվածնե՜ր, աստվածնե՜ր իմ։ Որքան տրտում է իրիկնային երկիրը։ Որքան խորհրդավոր են ճահիճների վրա փռված մշուշները։ Ով թափառել է այդ մշուշների մեջ, ով շատ է տառապել մահից առաջ, ով ճախրել է այս երկրի վրայով, ուժից վեր բեռն ուսերին, նա՛ գիտե։ Հոգնա՛ծը գիտե դա։ Ու առանց ափսոսանքի նա թողնում է երկրի մշուշները, նրա ճահիճներն ու գետերը, թեթև սրտով նա հանձնվում է մահվան ձեռքը, գիտենալով, որ լոկ դա <հանգիստ կբերի իրեն։>*

*Կախարդական սև նժույգներն իսկ հոգնել էին ու դանդաղ էին տանում հեծյալներին, և անխուսափելի գիշերը նրանց հետապնդել սկսեց։ Թիկունքում գիշերն զգալով, խաղաղվեց նույնիսկ անդադրում Բեգեմոտը, և, ճանկերը խրած թամբի մեջ, թռչում էր լուռ ու լուրջ, թավամազ պոչը պարզած։ Գիշերն սկսեց սև ծածկոց փռել անտառների ու մարգագետինների վրա, գիշերը տըրտում ճրագներ վառեց հեռու ներքևներում, որոնք արդեն անհետաքրքիր ու անհարկի էին թե Մարգարիտայի, թե վարպետի համար, օտար ճրագներ էին։ Գիշերը հասնում էր հեծելախմբին, սփռվում էր նրանց վրա վերևից ու մեկ այստեղ, մեկ այնտեղ՝ թախծոտ երկնքում աստղերի ճերմակ պուտեր էր շաղ տալիս։*

*Գիշերը թանձրանում էր, սուրում նրանց մոտով, ճանկում արշավողների թիկնոցներն ու, պոկելով ուսերից, պատրանքները մերկացնում։ Եվ երբ Մարգարիտան հանդիպակաց զով քամու տակ աչքերը բացում էր, տեսնում էր, թե ինչպես են փոխվում դեպի նպատակակետը թռչող բոլորի կերպարանքները։ Իսկ երբ անտառի պռնկից նրանց ընդառաջ սկսեց բարձրանալ բոսորագույն լիալուսինը, բոլոր պատրանքներն անհետացան, ճահիճը թափվեցին, մշուշների մեջ թաղվեց կախարդական անկայուն հագուստը։*

*Ի դեմս նրա, որը հիմա թռչում էր անմիջապես Վոլանդի կողքով, վարպետի ընկերուհու աջ կողմից, հազիվ թե հիմա ճանաչեին Կորովև-Ֆագոտին՝ խորհրդավոր և որևիցե թարգմանության կարիք չունեցող խորհրդականին կից ինքնակոչ թարգման-*

չէր։ Նրա փոխարեն, որը կրկեսային պատառոտված հագուստով հեռացավ Վորոբյովյան սարերից Կորովև-Ֆագոտ անվան տակ, երասանի ոսկյա շղթան կամացուկ զրնգացնելով հիմա սլանում էր մուգ մանուշակագույն մի ասպետ՝ մռայլագույն և երբեք չժպտացող դեմքով։ Նա կզակը հենել էր կրծքին, չէր նայում լուսնին, չէր հետաքրքրվում ներքում տարածված երկրով, նա իր մտքերի հետ էր՝ Վոլանդի կողքով թռչելով։

— Նա ինչո՞ւ այդպես փոխվեց,— քամու սուլոցի տակ կամացուկ հարցրեց Մարգարիտան Վոլանդին։

— Այս ասպետը ժամանակին անհաջող կատակ արեց, — պատասխանեց Վոլանդը՝ Մարգարիտային դարձնելով աղոտ առկայծող աչքով իր դեմքը,— լույսի և խավարի մասին խոսելիս հորինած նրա բառախաղն այնքան էլ լավը չէր։ Եվ դրանից հետո ասպետը ստիպված եղավ ավելի շատ ու երկար կատակի տալ, քան ինքն էր ենթադրում։ Բայց այսօր այնպիսի գիշեր է, երբ հաշիվներ են մաքրվում։ Ասպետն իր հաշիվը վճարել ու փակել է։

Գիշերը պոկել էր նաև Բեգեմոտի թավամազ պոչը, վրայից պլոկել էր բուրդն ու գունդ-գունդ ցրիվ տվել ճահիճների մեջ։ Նա, որը խավարի իշխանին զվարճացնող կատու էր, այժմ նիհար մի պատանի էր, դև-մանկլավիկ, լավագույն ծաղրածուն, որ երբևիցե եղել է աշխարհում։ Հիմա խաղաղվել էր նա նույնպես ու սլանում էր անաղմուկ, երիտասարդ դեմքը պարզած լուսնի հորդացող լույսին։

Բոլորի կողքից, զրահների պողպատը փայլեցնելով, թռչում էր Ազազելլոն։ Լուսինը նրա դեմքն էլ էր փոխել։ Անհետ չքացել էր անհեթեթ այլանդակ ժանիքը, ծռակնությունը կեղծ էր եղել։ Ազազելլոյի երկու աչքերն էլ նույնն էին, դատարկ ու սև, իսկ դեմքը սպիտակ էր, սառը։ Ազազելլոն այժմ թռչում էր իր իսկական դեմքով, որպես անջուր անապատի դև, դև-մարդասպան։

Մարգարիտան իրեն տեսնել չէր կարող, բայց նա լավ տեսնում էր, թե ինչպես է փոխվել վարպետը։ Նրա մազերն այժմ ճերմակին էին տալիս լուսնի ներքո, ծոծրակի վրա գնդված էին որպես հյուս, ու դա ծածանվում էր քամուց։ Երբ վարպետի ոտքերի վրայից քամին ետ տարավ թիկնոցը, Մարգարիտան նրա բոտֆորտների վրա տեսավ խթանների մեկ հանգչող, մեկ շողացող աստղիկները։ Դև-պատանու նման վարպետը սլանում էր, աչքը չկտրելով լուսնից, սակայն ժպտում էր լուսնին, որպես լավ ծա-

*նոթ ու սիրելի մեկին, և 118-րդ սենյակում ձեռք բերած սովորության համաձայն, ինքն իրեն ինչ-որ բան էր մրմնջում։*

*Եվ վերջապես Վոլանդը թռչում էր նույնպես իր իսկական կերպարանքով։ Մարգարիտան չէր կարող ասել, թե ինչից է պատրաստված նրա ձիու երասանը, ու մտածում էր, որ հնարավոր է, թե լուսնաշղթաներ են դրանք, նժույգը՝ խավարի զանգված է սոսկ և նժույգի բաշը՝ ամպ, իսկ հեծյալի խթանները՝ աստղերի ճերմակ պուտեր։*

*Այսպես երկար թռչում էին լռության մեջ, մինչև որ ներքևում տեղանքը սկսեց փոխվել։ Թախծալի անտառները կորան երկրային խավարի մեջ ու իրենց հետ տարան նաև գետերի աղոտ շեղբերը։ Ցածում երևացին ու սկսեցին փայլ արձակել գլաքարերը, իսկ դրանց արանքներում սևին տվեցին վիհերը, ուր չէր թափանցում լուսնի լույսը։*

*Վոլանդն իր նժույգի ընթացքը դանդաղեցրեց քարաշատ, մռայլ ու հարթ մի գագաթի վրա, և այդ ժամանակ հեծյալները քայլքի անցան, լսելով, թե ձիերն ինչպես են պայտերով ճզմում խիճն ու քարերը։ Լուսինը կանաչ ու վառ գույնով էր ողողել տափարակը, և Մարգարիտան այդ ամայությում շուտով նկատեց մի բազկաթոռ ու դրա մեջ նստած մարդու սպիտակ ուրվապատկերը։ Հնարավոր է, որ այդ նստածը խուլ էր կամ չափազանց ընկղմված իր մտորումների մեջ։ Նա չէր լսում, թե ինչպես է ցնցվում քարաշատ հողը ձիերի ծանրության տակ, և հեծյալները, չանհանգստացնելով նրան, մոտենում էին բազկաթոռին։*

*Լուսինը լավ էր օգնում Մարգարիտային, ավելի լավ էր լուսավորում, քան էլեկտրական լավագույն լապտերը, ու Մարգարիտան տեսավ, որ նստածը, ում աչքերը կույր էին թվում, մանրիկ շարժումներով ձեռքերն է շփում և այդ չտեսնող աչքերը հառել է լուսնի սկավառակին։ Հիմա արդեն Մարգարիտան տեսնում էր, որ քարեղեն ծանր բազկաթոռի կողքին, որի վրա ինչ-որ կայծեր էին ցոլցլում լուսնից, պառկած է մուգ, վիթխարի, սրականջ մի շուն և ճիշտ նույնպես, ինչպես իր տերը, տագնապած նայում է լուսնին։*

*Նստածի ոտքերի մոտ ջարդված սափորի կտորտանք էր թափված և սևակարմիր, չչորացող մի լճակ էր տարածվում։*

*Հեծյալները կանգնեցրին իրենց ձիերը։*

*— Ձեր վեպն ընթերցել են,— սկսեց Վոլանդը, դառնալով վարպետին,— ու լոկ մի բան են ասել, որ, ցավոք սրտի, ավարտ-*

ված չէ։ Այսպես ուրեմն, ես կամեցա ձեզ ցույց տալ ձեր հերոսին։ Շուրջ երկու հազար տարի նա նստած է այս հարթ տեղում ու քնած է, բայց երբ լիալուսին է լինում, ինչպես տեսնում եք, նրան անքնությունն է տանջում։ Տանջում է ոչ միայն նրան, այլ նաև նրա հավատարիմ պահապանին՝ շանը։ Եթե ճշմարիտ է, որ վախկոտությունը ծանրագույն արատն է, ապա թերևս շունն այդտեղ մեղք չունի։ Միակ բանը, որից երկյուղում էր անվախ շունը, ամպրոպներն էին։ է, ինչ արած, նա, ով սիրում է, պետք է բախտակիցը դառնա նրա, ում սիրում է։

— Ի՞նչ է ասում նա,— հարցրեց Մարգարիտան, ու նրա կատարելապես հանգիստ դեմքը կարեկցանքի մշուշով պատվեց։

— Նա միևնույն բանն է ասում,— հնչեց Վոլանդի ձայնը,— նա ասում է, որ լուսնյակ գիշերին էլ հանգիստ չունի և որ վատ պաշտոնի տեր է ինքը։ Այդպես է ասում նա միշտ, երբ չի քնում, իսկ երբ քնում է, միևնույն բանն է տեսնում՝ լուսնի ճանապարհը, և ուզում է քայլել այդ ճամփով ու զրուցել ձերբակալված Հա-Նոցրիի հետ, որովհետև, ինչպես պնդում է նա, ինքն ինչ-որ բան չի ասել այն ժամանակ, վաղուց, գարնանային նիսան ամսու տասնչորսին։ Բայց ավաղ, չգիտես ինչու, այդ ճանապարհը ելնել նրան չի հաջողվում ու ոչ ոք չի գալիս նրա մոտ։ Այդ ժամանակ, ինչ արած, ստիպված է լինում ինքն իր հետ խոսել։ Ասենք, որևէ զանազանություն պետք է, և նա լուսնի մասին իր ճառին հաճախ ավելացնում է, թե աշխարհում առավելապես ատում է իր անմահությունն ու անլուր հռչակը։ Նա պնդում է, թե հաճույքով իր ճակատագիրը կփոխանակեր ցնցոտիապատ Ղևի Մատթեոսի ճակատագրով։

— Տասներկու հազար լուսին՝ մի ժամանակ եղած մեկ լուսնի փոխարեն, չափազանց շատ չէ՞ արդյոք,— հարցրեց Մարգարիտան։

— Ֆրիդայի պատմությունը կրկնվո՞ւմ է,— հարցրեց Վոլանդը,— սակայն, Մարգարիտա, այստեղ ձեզ նեղություն մի տվեք։ Ամեն բան ճիշտ կլինի, դրա վրա է կառուցված աշխարհը։

— Բաց թողեք նրան,— հանկարծ խլացուցիչ բղավեց Մարգարիտան այնպես, ինչպես բղավում էր այն ժամանակ, երբ վհուկ էր, ու այդ բղավոցից մի քար պոկվեց սարերից և խորշերի վրայով անդունդը գլորվեց՝ սարերը թնդացնելով դղրդյունով։ Սակայն Մարգարիտան չէր կարող ասել, անկման դղրդյուն էր դա,

թե դիվական քրքիջի դղիրդը։ Ինչ էլ լիներ, Վոլանդը ծիծաղում էր Մարգարիտային նայելով և ասում.

— Պետք չէ բղավել սարերում, միևնույն է, Նա փլուզումների վարժված է, ու դա չի անհանգստացնում նրան։ Հարկ չկա, որ խնդրեք Նրա համար, Մարգարիտա, որովհետև Նրա համար արդեն խնդրել է Նա, ում հետ այնպես ձգտում է զրուցել Նստածը, —Վոլանդն այստեղ վերստին դարձավ վարպետին ու ասաց.— է, ինչ, հիմա ձեր վեպը կարող եք ավարտել մեկ նախադասությամբ։

Վարպետը կարծես արդեն սպասում էր դրան, մինչ անշարժ կանգնած, նայում էր նստած կուսակալին։ Նա ձեռքերը կլորացրեց խոսափողի պես ու բղավեց այնպես, որ արձագանքը ոստոստաց-թռավ անմարդաբնակ ու անանտառ սարերի վրայով.

— Ազա՜տ է։ Ազա՜տ է։ Նա սպասու՜մ է քեզ։

Սարերը վարպետի ձայնը որոտ դարձրեցին, ու հենց այդ որոտն էլ խորտակեց սարերը։ Ժայռեղեն անիծյալ պատերն ընկան։ Մնաց միայն տափարակը՝ քարեղեն բազկաթոռով։ Սև վիհից վեր, ուր անհետացան պատերը, բոցավառվեց անեզր քաղաքը, որից վեր կուռքերն էին փայլփլում, հազարավոր այդ լուսինների հետ փարթամորեն աճած այգուց էլ վեր։ Ուղիղ դեպի այդ այգին ձգվեց կուսակալի փափագած լուսնի ճամփան, և առաջինը վազելով ճանապարհ նետվեց սրականջ շունը։ Արնագույն աստառով ճերմակ թիկնոցն ուսերին մարդը վեր կացավ բազկաթոռից ու ինչ-որ բան բղավեց խռպոտ, կերկեր ձայնով։ Հասկանալ չէր կարելի, լալիս է նա, թե ծիծաղում, ու թե ինչ է բղավում։ Միայն երևաց, որ իր հավատարիմ պահապանի ետևից լուսնի ճանապարհով գլխապատառ ինքն էլ վազեց։

— Ես գնամ այնտե՞ղ, նրանց ետևից,— անհանգստացած հարցրեց վարպետը՝ երասանը ձգելով։

— Ոչ,— պատասխանեց Վոլանդը,— ի՞նչ կարիք կա ընկնել մի բանի ետևից, որն արդեն ավարտված է։

— Այդ դեպքում, ուրեմն, այնտե՞ղ,— հարցրեց վարպետը, շրջվեց ու ետ ցույց տվեց, այնտեղ, ուր թիկունքում հյուսվում էր մենաստանի բլիթակերպ աշտարակներով, ապակիների մեջ փշուր-փշուր եղած արևով պատած, քիչ առաջ թողած քաղաքը։

— Դարձյալ ոչ,— պատասխանեց Վոլանդը, և նրա ձայնը թանձրացավ ու հոսեց ժայռերի վրայով,— ռոմանտի՜կ վարպետ։ Նա, ում այնպես փափագում է տեսնել ձեր հորինած հերոսը,

ուրին հենց նոր ազատ արձակեցինք, կարդացել է ձեր մեկը—Վոլանդն այստեղ դարձավ Մարգարիտային.— Մարգարիտա Նիկոլաևնա, չի կարելի չհավատալ այն բանին, որ վարպետի համար դուք ջանում էիք լավագույն ապագա հորինել, բայց, իրավ, այն, ինչ առաջարկում եմ ձեզ, և այն, ինչ Յեշուան է խնդրել հենց ձեզ համար, ձեզ համար շատ ավելի լավ է։ Թողեք նրանց իրար հետ,— խոսում էր Վոլանդը՝ իր թամբից թեքված վարպետի թամբին ու ցույց տալով հեռացած կուսակալի ետևից,— չխանգարենք նրանց։ Ու գուցե ինչ-որ մի եզրակացության հանգեն,— Վոլանդն այստեղ ձեռքը թափ տվեց Երշալայիմի կողմը, ու քաղաքը հանգավ։

— Այնտեղ նույնպես,— Վոլանդը թիկունքը մատնացույց արեց,— ի՞նչ եք անելու նկուղում։ — Այստեղ հանգավ ապակու մեջ բեկված արևը։— Ինչի՞ համար,—շարունակեց Վոլանդը համոզիչ ու մեղմ,— օ՜, եռիցս ռոմանտիկ վարպետ, մի՞թե չեք ուզում ձեր ընկերուհու հետ ցերեկը քայլել նոր-նոր ծաղկող բալենիների տակ, իսկ երեկոյան ունկնդրել Շուբերտի երաժշտությունը։ Արդյո՞ք ձեզ համար հաճելի չի լինի մոմերի լույսի ներքո գրել սագի փետուրներով։ Արդյո՞ք չեք ուզում, Ֆաուստի նման, նստել թորանոթի մոտ, հուսալով, որ ձեզ կհաջողվի նոր հոմունկուլուս կերտել։ Այնտե՜ղ, այնտե՜ղ։ Այնտեղ արդեն ձեզ է սպասում տունն ու ծեր ծառան, մոմերն արդեն վառվում են, իսկ շուտով կհանգչեն, որովհետև անմիջապես այգաբացը կդիմավորեք։ Ա՜յս ճանապարհով, վարպետ, ա՜յս։ Մնաք բարո՜վ։ Ժա՜մն է մեր։

— Մնաք բարո՜վ,— մեկ բղավոցով Վոլանդին պատասխանեցին Մարգարիտան և վարպետը։ Այդ ժամանակ սև Վոլանդը, որևէ ճանապարհ չընտրելով, անդունդը նետվեց, իսկ նրա ետևից աղմուկ-աղաղակով գահավիժեց նրա շքախումբը։ Չորս կողմը ոչ ժայռ կար, ոչ տափարակ, ոչ լուսնի ճանապարհ, ոչ էլ Երշալայիմ։ Անհետացան նաև սև նժույգները։ Վարպետը և Մարգարիտան տեսան խոստացած այգաբացը։ Այգը բացվեց անմիջապես, կեսգիշերային լուսնից հետո։ Վարպետն իր ընկերուհու հետ վաղորդյան առաջին շողերի ցոլցլանքի մեջ գնում էր քարաշեն, մամռապատ կամրջակով։ Անցավ կամրջակը։ Գետակը մնաց հավատարիմ սիրահարների ետևում, ու նրանք գնում էին ավազապատ ճանապարհով։

— Անձայնությունն ունկնդրիր,— ասում էր Մարգարիտան

*վարպետին, և ավազը խշխշում էր նրա բոբիկ ոտքերի տակ,— լսիր ու վայելիր այն, ինչ քեզ շտվեցին կյանքում՝ լռությունը։ Տես, ահա, առջևում քո հավիտենական տունն է, որը քեզ՝ իբրև պարգև են տվել։ Ես արդեն տեսնում եմ վենետիկյան լուսամուտը և պատատվող խաղողը, որ մինչև տանիք է հասնում։ Ահա քո տունը, քո հավերժական տունը։ Ես գիտեմ, երեկոյան քեզ հյուր կգան նրանք, ում դու սիրում ես, ումով հետաքրքրվում ես և ով քեզ չի վրդովեցնի։ Նրանք կնվագեն քեզ համար, նրանք կերգեն քեզ համար, դու կտեսնես, թե ինչ լույս է լինում սենյակում, երբ վառվում են մոմերը։ Դու կքնես՝ գլխից դնելով քո ճարպոտած ու հավերժական գդակը, դու կքնես՝ ժպիտը շրթունքներիդ։ Քունը քեզ կկազդուրի, կսկսես իմաստուն դատել։ Իսկ ինձ վռնդել արդեն չես կարող։ Քո քունը ես պիտի հսկեմ։*

*Այսպես էր ասում Մարգարիտան, վարպետի հետ քայլելով դեպի իրենց հավերժական տունը, և վարպետին թվում էր, թե Մարգարիտայի բառերը կարկաչում են ճիշտ այնպես, ինչպես կարկաչում ու խոխոջում էր ետևում թողած գետակը, և վարպետի հիշողությունը՝ անհանգիստ, ասեղներով ծակծկված հիշողությունն սկսեց մարել։ Ինչ-որ մեկն ազատ էր արձակում վարպետին, ինչպես ինքը հենց նոր ազատ արձակեց իր իսկ ստեղծած հերոսին։ Այդ հերոսը հեռացավ անդունդը, հեռացավ անվերադարձ՝ կիրակի լույս գիշերը թողություն ստացած թագավորաստղագուշակի որդին, Հրեաստանի հինգերորդ, դաժան կուսակալ Պոնտացի Պիղատոսը հեծյալը։*

## ՎԵՐՋԱԲԱՆ

*Բայց և այնպես ինչ եղավ հետո՞ Մոսկվայում։ այն պահից սկսած, երբ շաբաթ երեկոյան, մայրամուտին Վոլանդը հեռացավ մայրաքաղաքից՝ իր շքախմբի հետ անհետանալով Վորոբյովյան սարերից։*

*Այն մասին, որ երկար ժամանակ ամենաանհավանական լուրերի անախորժ ժխորն էր թնդում մայրաքաղաքով մեկ, որը շատ արագ փոխադրվեց նաև գավառների հեռավոր ու խուլ անկյունները, հարկ չկա խոսել, իսկ այդ լուրերը նույնիսկ զզվելի է կրկնել։*

*Ճշմարտացի այս տողերը գրողն անձամբ, Թեոդոսիա գնալիս,*

ընացքում մի պատմություն լսեց այն մասին, որ Մոսկվայում թատրոնից երկու հազար սասայիրսն տկլոր մարդ է դուրս նկել ու այդ տեսքով տները ցրվել տաքսիներով։

«Սատանա...» շշնջոցը լսվում էր կաթի հերթերի մեջ, տրամվայներում, խանութներում, բնակարաններում, խոհանոցներում, հեռավոր ուղևորության ու ամառանոցային գնացքների մեջ, կայարաններում ու կիսակայարաններում, ամառանոցներում ու լողափերում։

— —

Առավել զարգացած ու կրթված մարդիկ մայրաքաղաք այցելած սատանայի մասին այդ պատմություններին, հասկանալի է, ոչ մի մասնակցություն չէին ունենում, նույնիսկ ծիծաղում էին նրանց վրա և փորձում խելք հասկացնել պատմողներին։ Սակայն փաստն այնուամենայնիվ, ինչպես ասում են, մնում է փաստ,և դրանից առանց բացատրության օձիք ազատել չի կարելի ոչ մի կերպ. ոմանք եղել էին մայրաքաղաքում։ Թեկուզ սոսկ Գրիբոեդովից մնացած ածխակույտերը և շատ այլ բան չափազանց պերճախոս կերպով էին հաստատում դա։

Զարգացած մարդիկ հետաքննության տեսակետի կողմը բռնեցին. իրենց արվեստին հոյակապ տիրապետող հիպնոսողների և որովայնախոսների մի հրոսախումբ է գործել։

Թե Մոսկվայում, թե նրա սահմաններից շատ հեռուներում հրոսախումբը բռնելու անհապաղ և եռանդուն միջոցներ, ինչ խոսք, ձեռնարկվեցին, սակայն, ցավոք սրտի, ոչ մի արդյունք չեղավ։ Իրեն Վոլանդ կոչողն իր բոլոր արբանյակների հետ անհետացել էր և ոչ այլևս Մոսկվա վերադարձավ, ոչ էլ ընդհանրապես որևէ տեղ ու որևէ կերպ իրեն դրսևորեց։ Միանգամայն բնական է, որ ենթադրություն ծագեց, թե նա արտասահման է փախել, բայց այնտեղ նույնպես ոչ մի տեղ չնշվեց նրա գոյությունը։

Նրա գործով հետաքննությունը երկար տևեց։ Չէ որ ինչ էլ լինի, հրեշավոր գործ էր։ Չխոսելով արդեն կրակ տված չորս շենքերի և խելագարության հասցված հարյուրավոր մարդկանց մասին, սպանվածներ էլ կային։ Երկուսի մասին ստուգապես կարելի է ասել. Բեռլիոզի և Օտարերկրացիներին Մոսկվայի տեսարժան վայրերին ծանոթացնող բյուրոյի այդ տարաբախտ աշխատակցի՝ նախկին բարոն Մայգելի մասին։ Չէ որ նրանք սպանված էին։ Երկրորդի այրված ոսկորները հայտնաբերվեցին Սադովայա փողոցի №50 բնակարանում, հրդեհը հանգցնելուց

Հետո։ Այո, կային զոհեր, և այդ զոհերը հետաքննություն էին պահանջում։

Բայց Լլի զոհեր կային ու արդեն այն բանից հետո, երբ Վոլանդը թողեց մայրաքաղաքը, այդ զոհերը դարձան, որքան էլ տխուր չինի, սև կատուները։

Խաղաղ, մարդուն հավատարիմ ու նվիրված այդ կենդանիներից ջուրջ հարյուր հատ գնդակահարվել կամ ղանազան եղանակներով ոչնչացվել էին երկրի տարբեր տեղերում։ Մեկուկես տասնյակ կատուներ, երբեմն սաստիկ խեղանդամված տեսքով, տարբեր քաղաքներում ներկայացվել էին միլիցիայի բաժանմունքներ։ Օրինակ, Արմավիրում, կատարելապես անմեղ այդ կենդանիներից մեկը միլիցիա էր բերվել ինչ-որ քաղաքացու կողմից, առջևի թաթերը կապված վիճակում։

Քաղաքացին այդ կատվին հետևել էր այն պահին, երբ կենդանին գողունի տեսքով (ի՞նչ կարող ես անել, որ կատուներն այդպիսի տեսք ունեն։ Դա նրանից չէ, որ կատուներն արատավոր են, այլ որովհետև վախենում են, թե իրենցից ավելի ուժեղ արարածներից որևէ մեկը՝ շները կամ մարդիկ, որևիցե վնաս կամ վիրավորանք չպատճառեն իրենց։ Թե մեկը, թե մյուսը ամենևին դժվար չէ անել, բայց, հավատացնում եմ, դա պատիվ չի բերում։ Այո, չի բերում), այո, ուրեմն, գողունի տեսքով կատուն չգիտես ինչու պատրաստվում էր կռատուկի թփերի մեջ մտնել։

Ընկնելով կատվի վրա և վզից պոկելով փողկապը՝ կատվին կապկպելու համար, քաղաքացին թունալից ու սպառնագին մրթմրթացել էր.

— Ը՜ը։ Ուրեմն հիմա էլ մեզ մոտ՝ Արմավիր եք ժամանել, պարոն հիպնոսող։ Բայց էստեղ ձեզնից վախեցող չկա։ Համր չձևանա՛ք։ Արդեն հասկացել ենք, թե ի՛նչ պտուղ եք։

Քաղաքացին կատվին միլիցիա էր տարել՝ խեղճ կենդանուն քարշ տալով կանաչ փողկապով կապկպած առջևի թաթերից, ու թեթև աքացիներով աշխատել էր, որ կատուն անպայման հետևի թաթերի վրա քայլի։

— Վերջ տվեք,— բղավել էր քաղաքացին, տղեկների սուլոցների տակ,— վերջ տվեք հիմար ձևանալ։ Բան դուրս չի գա։ Բարի եղեք քայլել, ինչպես բոլորը։

Սև կատուն միայն աչքերն էր պտտում։ Ի բնե խոսելու շնորհից զուրկ, ոչնչով չէր կարողանում արդարանալ։ Խեղճ կենդանին իր փրկությամբ պարտական էր առաջին հերթին՝ միլիցիային, իսկ

բացի դրանից, իր տիրուհուն՝ մի հարդարման պատառ այրու Կատուն բաժանմունք հասցնելուն պես, այնտեղ համոզվեցին, որ քաղաքացուց սպիրտի սաստիկ հոտ է գալիս, որի հետևանքով էլ նրա ցուցմունքներն իսկույն կասկածի տակ առնվեցին։ Մինչ այդ, պառավը, հարևաններից իմանալով, որ իր կատվին տարել են, վազ տվեց բաժանմունք ու ժամանակին հասավ։ Ամենադրվական հանձնարարականները տվեց կատվին, բացատրեց, որ ճանաչում է նրան հինգ տարի, այն ժամանակից ի վեր, երբ դեռ կատվաձագ էր, երաշխավորում է, ինչպես ինքն իրեն, որ ոչ մի վատ բան չի նկատվել նրա կողմից ու երբեք Մոսկվա չի գնացել նա։ Ինչպես ծնվել է Արմավիրում, այնպես էլ մեծացել է այնտեղ ու սովորել մուկ բռնել։

Կատվի կապերն արձակվեցին, ու նա վերադարձվեց տիրոջը, ճիշտ է, մեծ վիշտ կրելով ու գործնականում իմանալով, թե ինչ ասել է սխալ և զրպարտություն։

Կատուներից բացի, աննշան որոշ տհաճություններ ունեցան մարդկանցից ոմանք։ Մի քանի ձերբակալություններ եղան։ Ի թիվս այլոց, կարճ ժամանակով ձերբակալվածներից էին Լենինգրադում՝ քաղաքացիներ Վոլմանը և Վոլպերը, Սարատովում, Կիևում և Խարկովում՝ երեք Վոլոդիններ, Կազանում՝ Վոլոխը, իսկ Պենզայում, արդեն բացարձակապես հայտնի չէ, թե ինչու, քիմիական գիտությունների թեկնածու Վետչինկևիչը... Ճշմարիտ է, վերջինս վիթխարի հասակ ուներ, շատ թուխ էր ու սևահեր։

Դրանից բացի, տարբեր տեղերում բռնվեցին ինը Կորովիններ, չորս Կորովկին և երկու Կարավաև։

Ոմն քաղաքացու կապկպված իջեցրին սևաստոպոլյան գնացքից, Բելգորոդ կայարանում։ Այդ քաղաքացին մտքով անցել էր իր հետ գնացող ուղևորներին խաղաթղթերի ֆոկուսներով զբաղեցնել։

Յարոսլավլում, ճիշտ ճաշի ժամին, ռեստորանում մի քաղաքացի էր հայտնվել պրիմուսը ձեռքին, որ նոր էր վերցրել նորոգման կետից։ Նրան տեսնելուն պես, երկու բարապաններն էլ թողել էին իրենց պահակետերը հանդերձարանում ու փախել, նրանց ետևից ռեստորանից փախել էին բոլոր այցելուններն ու ծառայողները։ Ընդ որում գանձապահուհու մոտից անհասկանալի եղանակով անհետացել էր ամբողջ մուտքի դրամը։

Ուրիշ շատ բաներ էլ եղան, հիշել չի լինի։ Մտքերի մեծ խմորում տեղի ունեցավ։

Կրկին ու կրկին արժանին պետք է հատուցել հետաքննությանը։ Ամեն ինչ արվեց ոչ միայն հանցագործներին բռնելու, այլև նրանց գործած բոլոր արարքները բացատրելու համար։ Եվ այդ ամենը բացատրվեց, ու այդ բացատրությունները չի կարելի չընդունել թե որպես խելամիտ, թե որպես անառարկելի։

Հետաքննության ներկայացուցիչները և փորձառու հոգեբույժները պարզեցին, որ հանցագործ ավազակախմբի անդամները, կամ գուցե նրանցից մեկը (այս առումով կասկածանքը գերազանցապես ընկավ Կորովևի վրա) հանդիսացել են չտեսնված ուժի տեր հիպնոսողներ, որոնք ի զորու են եղել իրենց երևցնել ոչ այնտեղ, ուր իսկապես գտնվելիս են եղել, այլ կարծեցյալ, տեղաշարժված դիրքերում։ Դրանից բացի, նրանք ազատ կերպով ներշնչել են իրենց հետ շփված մարդկանց, թե որոշ իրեր կամ մարդիկ գտնվում են այնտեղ, ուր իսկապես չեն եղել նրանք, և ընդհակառակն, տեսադաշտից հեռացրել են այն առարկաներն ու մարդկանց, որոնք իսկապես առկա են եղել տվյալ տեսադաշտում։

Նման բացատրությունների լույսի ներքո բացարձակապես ամեն ինչ հասկանալի է, նույնիսկ քաղաքացիներին առավելապես զարմացրած, կատվի՝ թվում է, թե բոլորովին չբացատրվող անխոցելիությունը, որին գնդակոծել էին №50 բնակարանում, նրան կալանքի տակ վերցնելու փորձերն անելիս։

Ջահի վրա, բնականաբար, ոչ մի կատու էլ չի եղել ու մրտքովն էլ չի անցել պատասխան կրակ բաց անել, կրակել են դատարկ տեղի վրա, այն ժամանակ, երբ Կորովևը, ներշնչելով, թե կատուն անկարգություններ է անում ջահի վրա, կարող էր ազատորեն գտնվել կրակողների ետևում, ծամածռություններ անելով ու հաճույք ստանալով ներշնչելու իր հսկայական, սակայն հանցավոր նպատակներով կիրառվող կարողությունից։ Իհարկե, հենց նա էլ կրակ է տվել բնակարանը՝ թափելով բենզինը։

Ինչ խոսք, Ստյոպա Լիխոդեևը ոչ մի Յալտա էլ չի թռել (նման բանը նույնիսկ Կորովևի ուժի բանը չէ) ու այնտեղից հեռագրեր չի ուղարկել։ Այն բանից հետո, երբ Կորովևի՝ աղ դրած սունկը պատառաքաղին խրած կատվի ֆոկուսից վախեցած, ուշագնաց է եղել ակնագործի այրու բնակարանում, մնացել է այնտեղ պառկած, մինչև որ Կորովևը, նրան ձեռ առնելով, թաղիքե շլյապան գլխին է դրել և ուղարկել մոսկովյան օդակայան, Ստյոպային դիմավորող քրեական հետախուզության ներկայացուցիչնե-

րին վաղօրոք ներշնչելով, թե Ստյոպան իջնում է Սևաստոպոլից վայրէջք կատարած ինքնաթիռից։

Ճշմարիտ է, Յալտայի քրեական հետախուզությունը հաստատում էր, որ ընդունել է ոտաբոբիկ Ստյոպային և Ստյոպայի վերաբերյալ հեռագրերը Մոսկվա ուղարկել է, բայց հեռագրերի որևէ պատճեն գործերի մեջ որևէ կերպ չհայտնաբերվեց, որից էլ ցավալի, բայց միանգամայն անխոցելի եզրակացություն արվեց, որ հիպնոսող հրոսախումբն ընդունակ է հիպնոսել վիթխարի տարածությունների վրա, ընդ որում ոչ միայն առանձին անձանց, այլև մարդկանց ամբողջ խմբերի։ Այդ պայմաններում հանցագործները կարող էին խելագարեցնել ամենակայուն հոգեկան կառուցվածք ունեցող մարդկանց։

Էլ ինչ ասենք այնպիսի մանր-մունր բաների մասին, ինչպիսին խաղաթղթերի կապուկն է՝ պարտերում նստած մեկի գրպանում կամ անհետացող կանացի զգեստները, կամ մլավող բերետն ու այդ բնույթի այլևայլ բաներ։ Նման կատակներ կարող է սարքել միջին կարգի ցանկացած պրոֆեսիոնալ-հիպնոսող՝ ցանկացած բեմի վրա, այդ թվում նաև կոնֆերանսյեի գլուխը պոկելու հեշտ ու հասարակ ֆոկուսը։ Խոսող կատուն նույնպես դատարկ բան է։ Մարդկանց այդպիսի կատու ներկայացնելու համար բավական է տիրապետել որովայնախոսության տարրական հիմունքներին, ու դժվար թե որևէ մեկը կասկածի, որ Կորովևի արվեստը նշանակալի չափով գերազանցում էր այդ հիմունքները։

Այո, բանն այստեղ ամենևին էլ խաղաթղթի կապուկները չեն, Նիկանոր Իվանովիչի պայուսակի միջի կեղծ նամակները չեն։ Դատարկ բաներ են դրանք։ Նա՝ Կորովևը, տրամվայի տակ քշեց Բեռլիոզին, անխուսափելի մահվան։ Նա խելագարության հասցրեց թշվառ բանաստեղծ Իվան Անապաստանին, նա Պոնիրևին ստիպեց անրջել ու տանջալի երազների մեջ տեսնել հինավուրց Երշալայիմը և արևախանձ, անջուր Լերկ Լեռը՝ սյուների վրա երեք գամվածներով։ Նա և նրա հրոսախումբը ստիպեցին Մոսկվայից անհետանալ Մարգարիտա Նիկոլաևնային ու նրա տնային աշխատող Նատաշային։ Ի դեպ, այդ գործով հետաքննությունն առանձնահատուկ ուշադրությամբ զբաղվեց։ Պահանջվում էր պարզել՝ մարդասպանների և հրդեհիչների խո՞ւմբն էր արդյոք հափշտակել այդ կանանց, թե՞ նրանք կամավոր էին փախել հանցագործների հետ։ Հիմնվելով Նիկոլայ Իվանովիչի անհեթեթ ու խառնիխուռն ցուցմունքների վրա և ուշադրության առնելով

Մարգարիտա Նիկոլաևնայի՝ ամուսնուն թողած տարօրինակ ու խելացնոր երկտողը, մի երկտող, ուր նա գրել էր, թե հեռանում է վհուկ դառնալու, նկատի առնելով այն հանգամանքը, որ Նատաշան անհետացել էր՝ բոլոր հագուստները տեղում թողնելով, հետաքննությունն եկավ այն եզրակացության, որ տանտիրուհին և տնային աշխատողը ուրիշ շատերի նման հիպնոսվել են և այդ վիճակում հափշտակվել հրոսախմբի կողմից։ Ծնվեց նաև, ըստ երևույթին, միանգամայն ճշմարիտ մի միտք, որ հանցագործներին գրավել է երկու կանանց գեղեցկությունը։

Սակայն մի բան, որ բացարձակապես անորոշ մնաց հետաքննության համար, այն դրդապատճառն էր, որը հրոսախմբին ստիպել էր հոգեբուժական կլինիկայից հափշտակել իրեն վարպետ անվանող հոգեկան հիվանդին։ Այդ մեկը պարզել չհաջողվեց, ինչպես և չհաջողվեց ձեռքի տակ ունենալ հափշտակված հիվանդի ազգանունը։ Այդպես էլ չքվեց նա՝ ընդմիշտ անկենդան մականվամբ. «Առաջին մասնաշենքի հարյուրտասնութերորդ համար»։

Այսպիսով, համարյա ամեն ինչ բացատրվեց, և ավարտվեց հետաքննությունն, ինչպես ընդհանրապես ավարտվում է ամեն ինչ։

Անցավ մի քանի տարի, և մարդիկ սկսեցին մոռանալ թե Վոլանդին, թե Կորովևին, թե մնացյալին։ Շատ փոփոխություններ կատարվեցին նրանց կյանքում, ովքեր տուժել էին Վոլանդից ու նրա արբանյակներից, և որքան էլ մանր ու աննշան լինեն այդ փոփոխությունները, համենայն դեպս, հարկ է դրանք նշել։

Ժորժ Բենգալսկին, օրինակ, բուժարանում երեք ամիս անցկացնելուց հետո, ապաքինվեց և դուրս եկավ, սակայն ստիպված էր թողնել ծառայությունը Վարյետեում, այն էլ ամենաթեժ ժամանակ, երբ հասարակությունը գլուխ էր կոտրում տոմսերի համար. սև մոգության ու դրա պսակազերծման հիշողությունը շատ դիմացկուն դուրս եկավ։ Բենգալսկին թողեց Վարյետեն, քանի որ հասկացավ, որ ամեն երեկո երկու հազար մարդու դիմաց կանգնելը, անխուսափելիորեն ճանաչվելն ու մշտապես ծաղրական հարցեր ունկնդրելը, թե ինչպե՞ս է ավելի լավ՝ գլուխն ուսերի՞ն, թե առանց գլխի, չափազանց տանջալի բան է։

Այո, դրանից բացի, կոնֆերանսյեն կորցրեց իր զվարթության զգալի չափը, որ այնքան անհրաժեշտ է նրա մասնագիտությանը։ Տհաճ ու ճնշող մի սովորություն մնաց, ամեն գարնան, լիալուս-

նի ժամանակ անհանգիստ վիճակի մեջ էր ընկնում, հանկարծակի բռնում էր վիզը, վախեցած չորս կողմն էր նայում ու լաց լինում։ Այդ նոպաներն անցնում էին, բայց դրանց անկայունությամբ նախկին գործով զբաղվել չէր լինի, և կոնֆերանսային հանգստի անցավ ու սկսեց ապրել իր խնայողություններով, որոնք, ըստ նրա համեստ հաշվարկների, տասնհինգ տարի պիտի բավականացնեին։

Նա հեռացավ ու երբեք այլևս չհանդիպեց Վարեննուխային, որը համընդհանուր հռչակ ու սեր էր ձեռք բերել անգամ թատերական ադմինիստրատորների շրջանում՝ անհավանական իր պատրաստակամությամբ և քաղաքավարությամբ։ Փոխառմանրի սիրահարներն, օրինակ, նրան այլ կերպ չէին անվանում, քան բարերար-հայրիկ։ Ինչ ժամանակ և ով ասես Վարյետե զանգահարելիս լսափողի մեջ միշտ կլսեր փափուկ, բայց տրտում ձայնը. «Ես ձեզ լսում եմ», իսկ Վարեննուխային հեռախոսի մոտ հրավիրելու խնդրանքին ի պատասխան միևնույն ձայնը փութով կպատասխաներ. «Ինչո՞վ կարող եմ ծառայել»։ Բայց իր քաղաքավարության երեսից հո չէ՞ր տառապում Իվան Սավելևիչը։

Ստյոպա Լիխոդեևին այլևս չի վիճակվում հեռախոսով խոսել Վարյետեում։ Կլինիկայից դուրս գալուց անմիջապես հետո, ուր նա ութ օր էր անցկացրել, նրան տեղափոխեցին Ռոստով, ուր նպարեղենի մի մեծ խանութի վարիչի պաշտոնում նշանակում ստացավ։ Լուրեր են պտտվում, թե նա բոլորովին թողել է պորտվեյն խմելն ու միայն հաղարջի պտուկներով թրմած օղի է խմում, որից շատ է կազդուրվել։ Ասում են, որ լռակյաց է դարձել ու խուսափում է կանանցից։

Ստեփան Բոգդանովիչի հեռացումը Վարյետեից Ռիմսկուն այն բերկրանքը չպատճառեց, որ այնպես սաստիկ երազում էր մի քանի տարի շարունակ։ Կլինիկայից և Կիսլովոդսկից հետո թափահարվող գլխով զառամյալ ծերուկ ֆինտնօրենը Վարյետեից հեռանալու դիմում տվեց։ Հետաքրքիրն այն է, որ դիմումը Վարյետե բերեց Ռիմսկու կինը։ Գրիգորի Դանիլովիչն իր մեջ ուժ չգտավ նույնիսկ ցերեկով լինել այն շենքում, ուր տեսել էր լուսնի լույսով ողողված պատուհանի ճաքած ապակին և ներքևի սողնակին մոտեցող երկար ձեռքը։

Վարյետեից ազատվելով, ֆինտնօրենն ընդունվեց Զամոսկվորեչյեի տիկնիկային թատրոն։ Այս թատրոնում այլևս ստիպված չէր ակուստիկայի գործերով հանդիպել հարգարժան Արկադի

Ապոլլոնովիչ Սեմպլեյարովի հետ։ Վերջինիս շատ շտապ Բրյանսկ տեղափոխեցին ու նշանակեցին սնկամթերման կետի վարիչ։ Մոսկվացիներն այժմ աղ դրած ագարիկոն ու ճերմակ սունկ են ուտում և շատ են գովում, և չափազանց ուրախ են այդ տեղափոխության համար։ Անցած-գնացած բան է, և կարելի է ասել, որ Արկադի Ապոլլոնովիչն ակուստիկայից գլուխ չէր հանում, և որքան էլ ջանում էր բարելավել, ակուստիկան ինչպիսին կար, այդպես էլ մնում էր։

Արկադի Ապոլլոնովիչից զատ, թատրոնի հետ կապերը խզած անձանց թվին պետք է դասել նաև Նիկանոր Իվանովիչ Բոսոյին, թեև սա ոչնչով կապված չէր թատրոնների հետ, բացի իր սիրուց առ ձրի տոմսերը։ Նիկանոր Իվանովիչը ոչ միայն ոչ մի թատրոն չի գնում՝ ոչ փողով, ոչ ձրի, այլ նույնիսկ այլայլվում է թատերական ամեն մի խոսակցության դեպքում։ Թատրոնից զատ ոչ թե նվազ, այլ առավել չափով նա ատեց բանաստեղծ Պուշկինին և տաղանդավոր արտիստ Սավվա Պոտապովիչ Կուրոլեսովին։ Վերջինիս այն աստիճան, որ անցյալ տարի, թերթի մեջ սևով եզերված հայտարարություն տեսնելով այն մասին, որ Սավվա Պոտապովիչն իր կարիերայի ծաղկման գագաթնակետին կաթվածահար է եղել, Նիկանոր Իվանովիչն այնպես շառագունեց, որ քիչ էր մնացել ինքն էլ գնար Սավվա Պոտապովիչի ետևից, ու թնդաց. «Տե՛ղն էր դրան»։ Ավելին, հենց նույն երեկոյան, Նիկանոր Իվանովիչը, հանրածանոթ արտիստի մահվան պատճառով ծանր հիշողությունների շարանով պարուրված, մեն-մենակ, Սադովայան լուսավորող լուսնի ընկերակցությամբ սաստիկ հարբեց։ Ու ամեն բաժակի հետ նրա առջև երկարում էր ատելի կերպարանքների նզովյալ շղթան, ու այդ շղթայի մեջ էին թե՛ Սերգեյ Գերարդովիչ Դունչիլը, թե՛ պչրուհի Իդա Գերկուլանովնան, թե՛ կռվան սագերի այն շիկամազ տերը, թե՛ անկեղծ Նիկոլայ Կանավկինը։

Լավ, իսկ սրա՞նք ինչ եղան։ Աստծո՛ւ սիրուն։ Ոչինչ էլ չեղան, և լինել չէին կարող, քանի որ իրականում երբեք չեն եղել նրանք, ինչպես չի եղել նաև բարետես արտիստ-կոնֆերանսյեն, թատրոնը՝ նույնպես, ծերուկ կծծի Պորոխովնիկովի՝ վալյուտան մառանում փտեցնող հորաքույրն էլ, և ինչ խոսք, ոսկյա շեփորներ ու լկտի խոհարարներ էլ չեն եղել։ Այդ բոլորը Նիկանոր Իվանովիչը միայն երազում էր տեսել, պիղծ Կորովևի ազդեցության ներքո։ Այդ երազի մեջ ընկած միակ կենդանի մարդը հենց արտիստ Սավվա Պոտապովիչն էր, նա էլ մեջ էր ընկել սոսկ այն

պատճառով, որ Նիկանոր Իվանովիչի հիշողության մեջ էր մեխվել ռադիոյով ունեցած իր հաճախակի ելույթների պատճառով։ Նա եղել էր, իսկ մյուսները՝ ոչ։

Այսպես, գուցե, Ալոիզի Մոգա՞րիչն էլ չէր եղել։ Օ՜, ոչ։ Նա ոչ միայն եղել էր, այլ հիմա էլ գոյություն ունի, այն էլ հենց այն պաշտոնում, որից հրաժարվեց Ռիմսկին, այսինքն Վարյետեի ֆինտնօրենի պաշտոնում։

Վոլանդին այցելելուց մոտավորապես մեկ օրուգիշեր անց, Վյատկայի մատույցներում ինչ-որ տեղ ուշքի գալով գնացքում, Ալոիզին համոզվեց, որ ուղեղը մթագնած վիճակում չգիտես ինչու Մոսկվայից մեկնելով, մոռացել է շալվարը հագնել, բայց փոխարենը, հասկանալի չէ, թե ինչու, գողացել է իրավունքատիրոջ՝ իրեն բացարձակապես պետք չեկող տնային գիրքը։ Ուղեկցողին հսկայական գումար վճարելով, նրանից մի հին ու ճարպոտած շալվար ձեռք բերեց և Վյատկայից ետ եկավ։ Բայց իրավունքատիրոջ տնակն, ավաղ, էլ չգտավ։ Կրակն ամբողջապես կլանել էր նրա հնոտիքը։ Սակայն Ալոիզին արտակարգ ձեռներեց մարդ էր, երկու շաբաթ անց արդեն ապրում էր Բրյուսովսկի նրբանցքում, մի հրաշալի սենյակում, իսկ մի քանի ամսից արդեն նստած էր Ռիմսկու աշխատասենյակում։ Եվ ինչպես առաջ Ռիմսկին էր տանջվում Ստյոպայի ձեռքին, այնպես էլ հիմա Վարենուխան էր տառապում Ալոիզիի երեսից։ Իվան Սավելևիչն այժմ մի բան է երազում, որ այդ Ալոիզիին Վարյետեից քշեն աչքից հեռու մի տեղ, որովհետև ինչպես երբեմն փսփսում է Վարենուխան մտերմիկ շրջապատում, «Ալոիզիի նման սրիկա իբր կյանքում չի տեսել և իբր այդ Ալոիզիից ինչ ասես սպասելի է»։

Ասենք, գուցե և ադմինիստրատորն անաչառ չէ։ Ալոիզիի վրա ոչ մութ, ոչ էլ ընդհանրապես որևիցե գործ չի նկատվել ,եթե չըհաշվենք, իհարկե, բուֆետապան Սոկովի փոխարեն մեկ ուրիշին նշանակելը։ Իսկ Անդրեյ Ֆոկիչը մահացավ լյարդի քաղցկեղից ՄՊՀ Առաջին կլինիկայում, Վոլանդի Մոսկվայում հայտնվելուց ինն ամիս անց...

Այո, անցավ մի քանի տարի, և խամրեցին այս գրքում ճըշմարտացի նկարագրված դեպքերն ու մարեցին հիշողության մեջ։ Սակայն ո՜չ բոլորի, սակայն ո՜չ բոլորի։

Ամեն տարի, հենց հայտնվում է գարնանային տոնական լիալուսինը, իրիկնադեմին Պատրիարքական լճի լորենիների տակ երեսուն կամ երեսունն անց մի մարդ է երևում։ Շիկավուն մա-

ւկրով, կանաչ աչքերով, համեստ հագնված մի մարդ։ Պատմության և փիլիսոփայության ինստիտուտի աշխատակից պրոֆեսոր Իվան Նիկոլաևիչ Պոնիրևն է դա։

Հասնելով լորենիների տակ, նա միշտ նստում է այն նստարանին, որի վրա նստած էր այն երեկո, երբ բոլորի կողմից մոռացված Բեռլիոզն իր կյանքում վերջին անգամ տեսավ կոտորակված լուսինը։

Լուսինը հիմա լրիվ, իրիկնադեմին՝ սպիտակ, ապա ոսկեգույն, վիշապաձիուկը վրան, լողում է նախկին բանաստեղծի՝ Իվան Նիկոլաևիչի գլխավերևում և միևնույն ժամանակ կանգնած է մի տեղում, իր բարձունքում։

Իվան Նիկոլաևիչին ամեն ինչ հայտնի է, նա ամեն ինչ գիտե և հասկանում է։ Նա գիտե, որ երիտասարդ տարիքում հանցագործ հիպնոսողների զոհն է դարձել, բուժվել է դրանից հետո և ապաքինվել։ Բայց գիտե նմանապես, որ ինչ-ինչ բաներ հաղթահարել չի կարողանում։ Չի կարողանում հաղթահարել այս գարնանային լիալուսինը։ Հենց գալիս է ժամանակը, հենց խոշորանալ ու ոսկով լցվել է սկսում լուսատուն, որ մի ժամանակ երկու հնգամոմից վեր էր կախված, Իվան Նիկոլաևիչն անհանգիստ է դառնում, նյարդայնանում է, կորցնում է քունն ու ախորժակը, սպասում է մինչև լրիվ դառնա լուսինը։ Եվ երբ հայտնվում է լիալուսինը, ոչինչ չի կարող Իվան Նիկոլաևիչին տանը նստած պահել։ Իրիկնադեմին նա դուրս է գալիս ու գնում Պատրիարքական լճեր։

Նստարանին նստած Իվան Նիկոլաևիչն այլևս բացեիբաց խոսում է ինքն իր հետ, ծխում է, կկոցած աչքերով նայելով մեկ լուսնին, մեկ՝ իր համար անմոռանալի դռնակին։

Մեկ կամ երկու ժամ այսպես է անցկացնում Իվան Նիկոլաևիչը։ Հետո ելնում է տեղից, ու միշտ միևնույն ճանապարհով, Սպիրիդոնովկայայով, աչքերը՝ դատարկ ու չտեսնող, գնում է Արբատյան նրբանցքները։

Նա անցնում է նավթի կրպակի մոտով, թեքվում այնտեղ, ուր կախված է գազի հին, ծռված լապտերը և ծածուկ մոտենում ցանկապատին, որից այն կողմ տեսնում է փարթամ, բայց դեռևս անսաղարթ այգին, իսկ այգու մեջ՝ գոթական առանձնատունը, մի կողմը, ուր եռափեղկ ապակեպատ ելուստն է՝ լուսնով ողողված, մյուս կողմը՝ մթան մեջ։

Պրոֆեսորը չգիտե, թե ինչն է իրեն քաշում ցանկապատի մոտ

և ով է ապրում այդ առանձնատանը, բայց գիտե, որ լիալուսնի ժամանակ ինքն իրեն հաղթահարելը միտք չունի։ Դրանից բացի, նա գիտե, որ ցանկապատից այն կողմ, այգում անխուսափելիորեն կտեսնի միևնույն բանը։

Նա կտեսնի նստարանին նստած տարեց ու սպիտակահեր, փոքրիկ մորուքով և պենսնեով, փոքր-ինչ խոճկորային դիմագծերով մի մարդու։ Իվան Նիկոլաևիչն առանձնատան այդ բնակչին միշտ տեսնում է միևնույն անրջական դիրքում, հայացքը լուսնին հառած։ Հայտնի է Իվան Նիկոլաևիչին, որ լուսնով հիանալուց հետո նստածն անպայման աչքերը կտանի ելուստի լուսամուտներին ու կհառի դրանց վրա, ասես սպասելով, որ հիմա կբացվեն և լուսամուտագոգին կհայտնվի արտասովոր մի բան։

Հետագա ամեն ինչը Իվան Նիկոլաևիչն անգիր գիտե։ Այստեղ պետք է անպայման ավելի խորը թաքնվել ցանկապատի ետևում, քանի որ նստածը հենց հիմա կսկսի անհանգիստ շուռումուռ տալ գլուխը, աչքերը ման ածելով ինչ-որ բան որսալ օդի մեջ, անպայմանորեն զմայլված ժպտալով, իսկ հետո հանկարծ մի անուշ տրտմությամբ ձեռքերն իրար կզարկի, ապա արդեն ուղղակի և բավական բարձրաձայն կսկսի խոսել քթի տակ.

— Վենե՛րա։ Վենե՛րա... Է՜հ, հիմա՛ր ես, հիմա՛ր ես...

— Աստվածնե՛ր իմ, աստվածնե՛ր,— կսկսի շշնջալ Իվան Նիկոլաևիչը, ցանկապատի տակ թաքնված, բոցկլտացող աչքերը չկտրելով խորհրդավոր անծանոթից,— ահա ևս մի լուսնի զոհ... Այո, սա ևս մի զոհ է, ինձ նման։

Իսկ նստածը կշարունակի իր մենախոսությունը.

— Է՜հ, հիմա՛ր ես, հիմա՛ր ես։ Ինչո՞ւ չթռա նրա հետ։ Ինչի՞ց վախեցա, ծեր ավանակ։ Տեղեկա՛նք հաջողացրեցի։ Է՜հ, դե դիմացիր հիմա, ծե՛ր բթամիտ։

Այսպես կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ առանձնատան մութ կողմում կճրխկա պատուհանը, ճերմակավուն մի բան կերևա պատուհանի մեջ ու կանացի տհաճ ձայն կլսվի.

— Նիկոլայ Իվանովիչ, որտե՞ղ եք։ Այս ի՞նչ քմահաճություններ են։ Ուզում եք մալարիա՞ ընկնել։ Եկեք թեյ խմելու։

Այստեղ նստածն, իհարկե, ուշքի կգա ու կեղծ ձայնով կպատասխանի.

— Օդ ուզեցա շնչել, օդ, հոգյակս։ Շատ լավ օդ է։

Եվ այստեղ նա կելնի նստարանից, բռունցքը գաղտնի թափ

կտա ներքևում փակվող պատուհանի վրա և ոտքերը քարշ տալով տուն կգնա։

— Ստու՛մ է նա, ստու՛մ է։ Ո՛վ աստվածներ, ինչպե՛ս է ստում,— ցանկապատից հեռանալով կմրմնջա Իվան Նիկոլաևիչը,— ամենևին էլ օդը չի քաշում նրան այգի, գարնանային այս լիալուսնի ժամանակ նա ինչ-որ բան է տեսնում լուսնի վրա և այգում՝ վերևում։ Ահ, շատ բան կտայի նրա գաղտնիքի մեջ թափանցելու համար, որպեսզի իմանայի, թե ի՞նչ Վեներա է նա կորցրել և հիմա ձեռքերով ապարդյուն ափլփում է օդի մեջ՝ փորձելով բռնել։

Եվ պրոֆեսորը տուն է վերադառնում այլևս լիովին հիվանդ։ Կինը ձևացնում է, թե չի նկատում ամուսնու վիճակը ու շտապեցնում է նրան, որ պառկի քնելու։ Սակայն ինքը չի պառկում և գիրքը ձեռքին նստում է լամպի մոտ, տրտմագին աչքերով քնածին նայում։ Կինը գիտե, որ լուսադեմին Իվան Նիկոլաևիչն արթնանալու է տանջահար բղավոցով, սկսելու է արտասվել և շուռումուռ գալ անկողնում։ Դրա համար էլ կնոջ առջև, լամպի տակ, սփռոցի վրա վաղօրոք պատրաստված ասեղն է դրված՝ սպիրտի մեջ և թանձր թեյագույն դեղանոթը։

Ծանր հիվանդի հետ կապված կինն այժմ ազատ է և աներկյուղ կարող է քնել։ Իվան Նիկոլաևիչը հիմա կքնի մինչև առավոտ երջանիկ դեմքով ու կտեսնի կնոջն անհայտ, բայց ինչ-որ վսեմ ու երջանիկ երազներ։

Լիալուսնի գիշերը գիտնականին արթնացնում ու աղիողորմ բղավոցի է հասցնում միևնույն բանը։ Նա տեսնում է անբնական անքիթ մի դահճի, որը, վեր թռչելով ու մի տեսակ տնքալով, նիզակը խրում է սյանը գամված ու բանականությունը կորցրած Հեստասի սիրտը։ Սակայն այնքան սարսափելի չէ դահիճը, որքան երազի անբնական լուսավորությունը, որ բխում է ինչ-որ ամպից, որը եռ է գալիս ու կործվում երկրի վրա, ինչպես լինում է միայն տիեզերական աղետների ժամանակ։

Սրսկումից հետո ամեն ինչ փոխվում է քնածի առջև։ Անկողնուց դեպի լուսամուտ ձգվում է լայն լուսնարահետը, ու այդ ճանապարհն է ելնում արնագույն աստառով սպիտակ թիկնոցն ուսերին մի մարդ և սկսում քայլել դեպի լուսինը։ Նրա կողքով գնում է պատառոտված խիտոնով ու այլանդակված դեմքով մի երիտասարդ։ Քայլողները տաքացած խոսում են ինչ-որ բանի մասին, վիճում են, ցանկանում համաձայնության գալ մի խնդրում։

— Աստվածնե՜ր իմ, աստվածնե՜ր,— գոռոզ դեմքը իր ուղեկցին դարձրած ասում է թիկնոցավոր այն մարդը,— ի՜նչ գռեհիկ մահապատիժ էր։ Բայց խնդրում եմ, ասա ինձ,— այստեղ դեմքի գոռոզ արտահայտությունը աղերսական է դառնում,— չէ որ չի եղել մահապատիժ։ Աղաչում եմ քեզ, ասա՝ չի՞ եղել։

— Իհարկե, չի եղել,— պատասխանում է ուղեկիցը խռպոտաձայն,— աչքիդ է երևացել։

— Ու դու կարող ես երդվե՞լ,— շողոքորթելով խնդրում է թիկնոցակիր մարդը։

— Երդվում եմ,— պատասխանում է ուղեկիցը, ու նրա աչքերը ժպտում են չգիտես ինչու։

— Ինձ այլևս ոչինչ պետք չէ,— խզված ձայնով ճչում է թիկնոցակիր մարդը և ելնում է վեր ու վեր, դեպի լուսինը՝ ետևից տանելով իր ուղեկցին։ Նրանց ետևից գնում է հանգիստ ու փառահեղ վիթխարի սրականջ շունը։

Այդժամ եռ է գալիս լուսնարահետը, դրանից ժայթքում է լուսնագետն ու ողողում չորսբոլորը։ Լուսինն իշխում է ու խաղում, լուսինը պար է գալիս ու կատակում։ Այդ ժամանակ հորձանքից գոյանում է անասելի գեղեցկության տեր մի կին և ձեռքից բռնած Իվանին ընդառաջ է բերում վախվորած շուրջը նայող, մազակալած երեսով մի մարդու։ Իվան Նիկոլաևիչն անմիջապես ճանաչում է նրան։ Հարյուր տասնութերորդ համարն է, իր գիշերային հյուրը։ Իվան Նիկոլաևիչը քնի մեջ ձեռքերը պարզում է դեպի նա և լարված հարցնում.

— Ուրեմն, սրանով էլ ավարտվե՞ց։

— Սրանով էլ ավարտվեց, աշակերտ իմ,— պատասխանում է հարյուրտասնութերորդ համարը, իսկ կինը մոտենում է Իվանին և ասում.

— Իհարկե, սրանով։ Ամեն ինչ ավարտվեց ու ամեն ինչ ավարտվում է... Եվ ես կհամբուրեմ ձեր ճակատը, ու ձեզ համար ամեն ինչ կլինի այնպես, ինչպես պետք է։

Նա կռանում է Իվանի վրա ու համբուրում նրա ճակատը, և Իվանը ձգվում է դեպի նա և աչքերը հառում նրա աչքերին, սակայն կինն ընկրկում է և իր ուղեկցի հետ հեռանում դեպի լուսինը։

Այդ ժամանակ լուսինն սկսում է մոլեգնել, լույսի հեղեղներ պարպում ուղիղ Իվանի վրա, լույսը շաղ է գալիս չորսբոլորը, սենյակի մեջ լուսնահեղեղ է սկսվում, լույսը ճոճվում է, բարձրա-

նում վեր ու վեր, ծածկում է անկողինը։ Ահա այդ ժամանակ էլ քնում է Իվան Նիկոլաևիչը երջանկադեմ։

Առավոտյան նա արթնանում է լուռումունջ, բայց կատարելապես հանգիստ ու առողջ։ Նրա բզկտված հիշողությունը՝ հանդարտվում է, ու մինչև հաջորդ լիալուսին պրոֆեսորին չի անհանգստացնի ոչ ոք։ Ո՛չ Հեստասին սպանող անքիթ դահիճը, ո՛չ Հրեաստանի հինգերորդ· դաժան կուսակալ Պոնտացի Պիղատոսը հեծյալ։

*1929—1940*

# ԹԱՏԵՐԱԿԱՆ ՎԵՊ
## /ՀԱՆԳՈՒՅՑԱԼԻ ՆՈԹԵՐ/



# ՆԱԽԱԲԱՆ

*Ընթերցողին նախազգուշացնում եմ, որ այս նոթերի հորինման հետ որևիցե առնչություն չունեմ և որ դրանք իմ ձեռքն են ընկել բավական տարօրինակ ու տխրառիթ հանգամանքներում։*

*Սերգեյ Լեոնտևիչ Մակսուդովի ինքնասպանության օրն իսկ, որ անցյալ տարվա գարնանը կատարվեց Կիևում, ստացա անձնասպանի վաղօրոք ուղարկած հաստափոր փաթեթը և մի նամակ։*

*Փաթեթում այս նոթերն էին, իսկ նամակը զարմանալի բովանդակություն ուներ։*

*Սերգեյ Լեոնտևիչը հայտնում էր, որ հեռանալով կյանքից, ինձ է նվիրում իր նոթերը, որպեսզի ես՝ իր միակ ընկերը, շտկեմ և իմ անունով լույս ընծայեմ։*

*Տարօրինակ, բայց և մինչմահու ցանկություն։*

*Մեկ տարի շարունակ փնտրում էի Սերգեյ Լեոնտևիչի ազգականներին կամ մտերիմներին։ Ապարդյո՛ւն։ Մինչմահու նամակում նա չէր ստել՝ այս աշխարհում ոչ ոք չուներ։*

*Եվ ես ընդունում եմ ընծան։*

*Մի բան էլ կա. ընթերցողին հայտնում եմ, որ անձնասպանը կենդանության օրոք ոչ դրամատուրգիայի, ոչ թատրոնների հետ որևիցե առնչություն չի ունեցել, եղել ու մնացել է «Նավագնացության լրաբեր» թերթի համեստ աշխատակից, սոսկ մի անգամ հանդես գալով որպես արձակագիր, այն էլ անհաջող. Սերգեյ Լեոնտևիչի վեպը չի տպագրվել։*

*Այսպիսով, Մակսուդովի նոթերն իրենցից ներկայացնում են*

ներկայության, այն էլ, ավա՜ղ, հիվանդ ներկայության պատուղ Սերգեյ Լեոնտևիչը տառապում էր մի հիվանդությամբ, որ բավական անդուր անվանում ունի՝ մելամաղձախտ։

Ես, որ լավ գիտեմ Մոսկվայի թատերական կյանքը, երաշխավորությ‌ան բեռ եմ ստանձնում, որ ոչ այդպիսի թատրոններ, ոչ էլ նման մարդիկ, որոնք պատկերված են հանգուցյալի ստեղծագործության մեջ, ոչ մի տեղ չկան ու չեն եղել։

Ի վերջո, երրորդն ու վերջինը՝ նոթերի վրա իմ աշխատանքը եղել է այն, որ վերնագրել եմ դրանք, ապա ոչնչացրել բնաբանը, որը հավակնոտ, անհարկի ու տհաճ թվաց ինձ։

Բնաբանը սա էր՝

«Հատուցանել յուրաքանչյուր ըստ գործս իւրեանց...»

Եվ բացի դրանից, կետադրության նշաններ եմ դրել այնտեղ, ուր հարկ է եղել։

Սերգեյ Լեոնտևիչի ոճը չեմ ուղղել, թեև բացահայտ թափթփված ոճ է։ Ասենք, ինչ պահանջես մի մարդուց, որն իր նոթերի ավարտի վերջակետը դնելուց երկու օր հետո գլխիվայր ցած է նետվել Ցեպնոյ կամրջից։

Եվ այսպես...

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԳԼՈՒԽ I

## ԱՐԿԱԾՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

Ապրիլի 29-ին ամպրոպը ողողել էր Մոսկվան, և դյութիչ էր դարձել օդը, և մեղմել էր հոգիս մի տեսակ, ու ապրելն իմաստ ուներ։

Նոր, մոխրագույն կոստյումս հագած, բավական վայելուչ վերարկուով քայլում էի մայրաքաղաքի կենտրոնական փողոցներից մեկով դեպի այնտեղ, ուր երբեք չէի եղել։ Պատճառն անսպասելի ստացված մի նամակ էր, որ գրպանումս էր։ Ահա.

«Մեծարգո Սերգեյ Լեոնտևիչ։

Ծայրաստիճան կկամենայի ծանոթանալ Ձեզ հետ, միաժամանակ նաև պայմանավորվել մի խորհրդավոր գործի կապակ-

ցությամբ, որ կարող է շատ ու շատ հետաքրքիր լինել Ձեզ համար։

Եթե Դուք ազատ եք, երջանիկ կլինեի Ձեզ հանդիպել Անկախ Թատրոնի Ուսումնական բեմի շենքում, չորեքշաբթի, ժամը 4-ին։

Ողջույններով՝ Կ. Իլչին»։

Նամակը գրված էր մատիտով մի թղթի վրա, որի ձախ անկյունում տպագրված էր.

«Կսավերի Բորիսովիչ Իլչին,
Անկախ Թատրոնի Ուսումնական
բեմի ռեժիսոր»:

Իլչինի անունն առաջին անգամ էի լսում, չգիտեի, որ գոյություն ունի Ուսումնական բեմ։ Անկախ Թատրոնի մասին լսել էի, գիտեի, որ նշանավոր թատրոններից մեկն է, բայց այնտեղ երբեք չէի եղել։

Նամակը չափազանց հետաքրքրեց ինձ, առավել ևս, որ այն ժամանակ ընդհանրապես որևէ նամակ չէի ստանում։ Պիտի ասեմ, որ ես «Նավագնացություն» թերթի հասարակ աշխատակից եմ։ Այն ժամանակ ապրում էի մի վատ, բայց առանձին սենյակում՝ Կրասնիյե Վորոտայի մերձակայքում, Խոմուտովսկի նրբանցքի մոտ, յոթերորդ հարկ։

Եվ այսպես, քայլում էի՝ ներշնչելով թարմացած օդն ու մտածելով, թե կայծակը նորից կխփի, նաև, թե Կսավերի Իլչինն ինչպես է իմացել իմ գոյության մասին, ինչպես է գտել տեղս և ինչ գործ կարող է ունենալ ինձ հետ։ Բայց որքան էլ մտմտում էի, վերջինը հասկանալ չկարողացա և ի վերջո հանգեցի այն մտքին, որ Իլչինն ուզում է ինձ հետ սենյակ փոխանակել։

Անշուշտ, հարկ էր Իլչինին գրել, որպեսզի ինքը գա մոտս, եթե գործ ունի ինձ հետ, բայց պետք է ասել, որ ամաչում էի իմ սենյակից, պայմաններից ու շրջապատող մարդկանցից։ Ընդհանրապես ես տարօրինակ մարդ եմ ու մի քիչ վախենում եմ մարդկանցից։ Պատկերացրեք, ներս է մտնում Իլչինը և տեսնում բազմոցը՝ պաստառը ճղված, զսպանակը դուրս ցցված, սեղանին կախված լամպի լուսամփոփը լրագրից է, կատուն է դեսուդեն շրջում, խոհանոցից էլ Աննուշկայի լուտանքներն են լսվում։

Ներս մտա թուջե քանդականախշ դարպասով, տեսա կրպակը, ուր սպիտակահեր մի մարդ կրծքանշաններ և ակնոցի շրջանակներ էր վաճառում։

Լոք տվեցի արդեն բարակող, պղտոր առվակի վրայով և կանգ առա դեղնագույն մի շենքի դիմաց ու մտածեցի, որ սա կառուցված է շատ վաղուց, երբ դեռ ոչ ես, ոչ Իլյինը աշխարհ չէինք եկել։

Ոսկետառ սև ցուցանակն ազդարարում էր, որ Ուսումնական բեմն այստեղ է։ Ներս մտա, և փոքրիկ մորուքով, կանաչ լամպակներով բաճկոնը հագին կարճահասակ մի մարդ անմիջապես փակեց ճամփաս։

— Քաղաքացի, ո՞ւմ եք ուզում,— կասկածանքով հարցրեց նա և ձեռքերը տարածեց, ասես հավ էր ուզում բռնել։

— Ռեժիսոր Իլյինին պիտի տեսնեմ,— ասացի, ջանալով, որ ձայնս ամբարտավան հնչի։

Մարդը չափազանց փոխվեց, այն էլ՝ աչքիս առաջ։ Ձեռքերն իջեցրեց կողերին ու ժպտաց կեղծ ժպիտով։

— Կսավերի Բորիսովիչի՞ն։ Ա՛յս իսկ րոպեիս։ Խնդրեմ, ձեր վերարկուն։ Կրկնակոշիկ չունե՞ք։

Մարդը վերարկուս այնպիսի հոգածությամբ ընդունեց, կարծես եկեղեցական թանկարժեք հանդերձ լիներ։

Ես բարձրացա թուջե աստիճաններով, հարթաքանդակների վրա տեսա սաղավարտակիր զինվորների կիսադեմեր ու սարսափազդու թրեր՝ դրանց տակ, հոլանդական հնամենի վառարաններ, ոսկու պես փայլեցրած օդելույզներով։

Շենքը լուռ էր, ոչ մի տեղ ոչ ոք չկար, լամպակներով մարդն էր սոսկ քարշ գալիս ետևիցս, ու շրջվելով տեսնում էի, որ իմ ներկայությամբ նա ցուցաբերում է ուշադրություն, հավատարմություն, սիրո, բերկրանքի լուռ նշաններ՝ այն առթիվ, որ եկել եմ, ու թեև ետևիցս է գալիս, բայց ղեկավարում է ինձ, տանելով այնտեղ, ուր գտնվում է միայնակ, հանելուկային Կսավերի Բորիսովիչ Իլյինը։

Ու հանկարծ մթնեց, վառարանները կորցրեցին իրենց յուղոտ, ճերմակին տվող փայլը, խավարը միանգամից վրա տվեց՝ դրսում աղմկեց երկրորդ ամպրոպը։ Ես բախեցի դուռը, ներս մտա և աղջամուղջի մեջ վերջապես տեսա Կսավերի Բորիսովիչին։

— Մակսուդով,— ասացի արժանապատվությամբ։

Այդ պահին, Մոսկվայից այն կողմ՝ հեռուներում կայծակը պատռեց երկինքը, ֆոսֆորային լույսով մի ակնթարթ լուսավորելով Իլյինին։

29— Մ. Բուլգակով

*— Այդ դու՞ք եք, սիրարժան Սերգեյ Լեոնտևիչ,— խորամանկ ժպտալով ասաց Իլչինը։*

*Այստեղ Իլչինը, մեջքս գրկած, ինձ տարավ նստեցրեց ճիշտ այնպիսի մի բազմոցի, ինչպիսին իմ սենյակում է։ Զսպանակը նույնիսկ ճիշտ այնտեղից էր դուրս ցցված, որտեղից իմ բազմոցինը՝ մեջտեղից։*

*Ընդհանրապես, մինչև օրս էլ չգիտեմ, թե դա ինչ սենյակ էր, ուր կայացավ ճակատագրական հանդիպումը։ Բազմո՞ցն ինչի համար էր։ Այդ ի՞նչ քրքրված նոտաներ էին ընկած հատակին, սենյակի մի անկյունում։ Կշեռքն ու նժարնե՞րն ինչի համար էին դրված լուսամուտին։ Իլչինն ինչո՞ւ էր այդ սենյակում սպասում ինձ և ոչ թե ասենք հարևան դահլիճում, որի խորքում, ամպրոպի աղջամուղջի մեջ աղոտ գծագրվում էր դաշնամուրը։*

*Եվ ամպրոպի գոռոցի ներքո Կսավերի Բորիսովիչը չարագույժ արտասանեց.*

*— Ես կարդացի ձեր վեպը։*

*Ցնցվեցի։*

*Բանն այն է...*

ԳԼՈՒԽ II

## ՋՂԱԳԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՊԱ

*Բանն այն է, որ «նավագնացության» ընթերցողի համեստ պաշտոնը վարելով, ես ատեցի իմ այդ պաշտոնը և գիշերները, երբեմն մինչև լուսաբաց, վեպ էի գրում իմ ձեղնահարկում։*

*Վեպը ծնունդ առավ մի գիշեր, երբ արթնացա տխուր երազից։ Երազիս տեսել էի իմ հարազատ քաղաքը, ձյուն էր, ձմեռ, քաղաքացիական պատերազմ... Երազիս մի անձայն բուք անցավ դեմովս, ապա երևաց հին դաշնամուրը՝ կողքին մարդիկ, որոնք այլևս չկան այս աշխարհում։ Երազիս ինձ ապշեցրեց իմ մենությունը, ինքս ինձ խղճացի։ Եվ արթնացա՝ արցունքն աչքերիս։ Լույս վառեցի՝ սեղանի վրա կախված փոշոտ լամպը։ Լամպը լուսավորեց իմ թշվառությունը՝ էժանագին թանաքաման, մի քանի գիրք, հին լրագրերի կապուկ։ Ձախ կողս ցավում էր զսպանակից, սիրտս սարսափն էր պատել։ Զգացի, որ հիմա կըմեռնեմ սեղանի մոտ, մահվան ողորմելի սարսափն այն աստիճան*

ստորացրեց ինձ, որ անցյալի, տագնապով շուրջս նայեցի, օգնություն և պաշտպանություն փնտրելով մահից։ Ու այդ օգնությունը գտա։ Կամացուկ մլավեց կատուն, որին օրերս էի գտել պարպատի տակ։ Կենդանին անհանգստացավ։ Մի վայրկյան անց նա արդեն նստել էր լրագրերի վրա, ինձ էր նայում կլոր աչքերով, հարցնում. ի՞նչ է պատահել։

Միագույն, լղար կենդանին շահագրգռված էր, որ ոչինչ չպատահի։ Իրոք, ո՞վ պիտի կերակրեր այդ ծեր կատվին։

— Սա չղջիկություն նոպա է,— բացատրեցի կատվին,— արդեն բուն է դրել մեջս, կխորանա ու հոգիս կհանի։ Բայց դեռևս կարելի է ապրել։

Տունը քնած էր։ Լուսամուտից դուրս նայեցի։ Հինգ հարկերում ոչ մի պատուհան լուսավորված չէր, ես հասկացա, որ սա տուն չէ, այլ բազմահարկ մի նավ, որ սավառնում է անշարժ ու սև երկնքի տակ։ Շարժման գաղափարն ինձ զվարճացրեց։ Ես հանգստացա, կատուն էլ հանգստացավ, փակեց աչքերը։

Այսպես սկսեցի վեպ գրել։ Ես նկարագրեցի քնած բուքը։ Ջանացի պատկերել, թե լուսամփոփի լույսի տակ ինչպես է փայլ տալիս դաշնամուրի կողը։ Բան դուրս չեկավ։ Բայց սկսեցի համառել։

Ցերեկն աշխատում էի մի՛ բան անել. որքան հնարավոր է, քիչ ուժ վատնել իմ հարկադիր աշխատանքի վրա։ Գործն անում էի մեքենայաբար, այնպես, որ գլուխս ազատ մնա։ Յուրաքանչյուր հարմար առիթով աշխատում էի գործը թողնել՝ հիվանդության պատրվակով։ Իհարկե, ինձ չէին հավատում, և կյանքս տհաճ դարձավ։ Բայց ամեն ինչի դիմանում էի ու կամաց-կամաց վարժվեցի։ Այնպես, ինչպես անհամբեր պատանին է սպասում ժամադրության, ես սպասում էի գիշերվա ժամը մեկին։ Անիծյալ բնակարանն այդ ժամին էր հանդարտվում։ Ես նստում էի սեղանի մոտ... Աչառու կատուն նստում էր լրագրերի վրա, բայց վեպը նրան արտակարգ հետաքրքրեց, ու նա ջանում էր լրագրի էջերից նստել գրված էջերի վրա։ Եվ ես բռնում էի նրա շլինքից և տեղը դնում։

Մի գիշեր էլ բարձրացրեցի գլուխս և զարմացա։ Իմ նավը ոչ մի տեղ չէր սավառնում, տունը կանգնած էր իր տեղում և լրիվ լուսացել էր։ Լամպը ոչինչ չէր լուսավորում, պնդերես ու անտանելի էր դարձել։ Հանգցրեցի լամպը, և նողկալի սենյակն իմ դեմ կանգնեց՝ լուսաբացին։ Ասֆալտապատ բակում զողավո-

րի, անշշուկ քայլքով անցուդարձ էին անում խայտաբղետ կատուները։ Թղթի վրա յուրաքանչյուր տառը կարելի է տեսնել առանց որևիցե լամպի։

— Աստվա՜ծ իմ, Ապրի՜լ է,— բացականչեցի ես՝ չգիտես ինչու վախենալով և խոշոր տառերով գրեցի՝ «Վերջ»։

Վե՛րջ ձմռանը, վե՛րջ բքին, վե՛րջ ցրտին։ Ձմռան ընթացքում ես կորցրեցի սակավաթիվ ծանոթներիս, հագուստս մաշեցի կարգին, հիվանդացա հոդացավով ու փոքր-ինչ վայրենացա։ Բայց ամեն օր սափրվում էի։

Այս ամենի շուրջ մտորելով, կատվին թողեցի բակ, ետ եկա ու քնեցի, կարծեմ, ամբողջ ձմռան ընթացքում առաջին անգամ՝ առանց երազների։

Վեպը պետք է երկար ժամանակ ուղղել։ Հարկավոր է շատ տեղեր ջնջել, հարյուրավոր բառեր փոփոխել։ Մեծ, սակայն անհրաժեշտ գործ է։

Բայց և այնպես, գայթակղություն համակեց ինձ, և առաջին վեց էջն ուղղելով, վերադարձա մարդամեջ։ Հյուրեր կանչեցի։ Երկու ժուռնալիստ էին «Նավագնացությունից»՝ ինձ պես աշխատավոր մարդիկ, իրենց կանանց հետ և երկու գրող։ Մեկը երիտասարդ էր, որն ինձ ապշեցնում էր անըմբռնելի ճարպկությամբ պատմվածքներ գրելով, մյուսը՝ տարիքն առած, ընկած-ելած մարդ էր, որն ավելի լավ ճանաչելուց հետո սարսափելի սրիկա դուրս եկավ։

Մի երեկոյի ընթացքում կարդացի վեպիս համարյա մեկ քառորդը։

Կանայք այնպես էին բթացել ընթերցումից, որ խղճի խայթ զգացի։ Բայց ժուռնալիստներն ու գրողները դիմացկուն մարդիկ դուրս եկան։ Նրանց կարծիքները եղբայրաբար անկեղծ էին, բավական խիստ, և, ինչպես հիմա եմ հասկանում, ճշմարտացի։

— Լեզու՜ն,— բղավեց գրողը (նա, որ սրիկա դուրս եկավ)։
—Գլխավորը լեզու՜ն է։ Լեզուդ բանի պետք չէ։

Նա մի մեծ գավաթ օղի խմեց, սարդին կուլ տվեց։ Երկրորդ գավաթը լցրեցի։ Դա էլ խմեց, մի կտոր երշիկով։

— Փոխաբերությու՜նը,— բղավեց նա, ծամելով։

— Այո,— քաղաքավարի հաստատեց երիտասարդ գրողը,— լեզուն աղքատիկ է։

Ժուռնալիստները բան չասացին, բայց կարեկցաբար գլխով արեցին, խմեցին։ Տիկնայք գլխով չէին անում, չէին խոսում,

իսպառ հրաժարվեցին հատկապես իրենց համար գնված պորտվեյնից և օղի խմեցին։

— Ինչպե՞ս կարող է աղքատիկ չլինել,— գոչեց տարեցը,— փոխաբերություն չունի, նկատի ունեցեք, խնդրեմ։ Առանց դրա մե՞րկ է։ Տկլո՞ր։ Տկլո՞ր։ Դա մի մոռացեք, մեր տղա։

«Մեր տղան» հաստատապես ինձ էր վերաբերում։ Ես սառեցի։

Ցրվելուց առաջ պայմանավորվեցին կրկին մոտս գալ։ Եվ մի շաբաթ անց նորից եկան։ Երկրորդ կտորը կարդացի։ Երեկոն նշանավորվեց նրանով, որ տարեց գրողը անսպասելի և իմ կամքին հակառակ հետս բրուդերշաֆտ խմեց ու սկսեց ինձ «Լեոնտիչ» կոչել։

— Լեզուդ բանի պետք չէ, բայց հետաքրքի՞ր է։ Հետաքրքի՞ր է, սատանան քեզ քերքրի (այսինքն՝ ինձ),— բղավում էր տարեցը, ուտելով Դուսյայի պատրաստած դոնդողը։

Երրորդ երեկոյին նոր մարդ երևաց։ Նույնպես գրող էր, չար ու մեֆիստոֆելյան դեմքով, ձախ աչքը՝ շիլ, չսափրված։ Ասաց, որ վեպը վատն է, բայց ցանկություն հայտնեց լսել չորրորդ և վերջին մասը։ Մարդաթող մի կին էլ կար և տուփով կիթառը հետը մի մարդ։ Սույն երեկոյից ինձ համար օգտակար շատ բան քաղեցի։ «Նավագնացության» իմ համեստ ընկերներն ընտելացան աճ տված հասարակությանը և իրենց կարծիքն էլ հայտնեցին։

Մեկն ասաց, որ տասնյոթերորդ գլուխը ձգձգված է, որ Վասենկայի կերպարը բավականաչափ ցայտուն չի գծագրված։ Թե մեկը, թե մյուսը իրավացի էին։

Չորրորդ և վերջին ընթերցումը կայացավ ոչ թե իմ, այլ հըմտորեն պատմվածքներ հորինող երիտասարդ գրողի մոտ։ Այստեղ արդեն շուրջ քսան մարդ կար, և ես ծանոթացա գրողի տատի հետ։ Շատ հաճելի պառավ էր, որին մի բան էր խանգարում՝ վախի արտահայտությունը ամբողջ երեկո չգիտես ինչու չէր լքում նրան։ Բացի դրանից, տեսա սնդուկի վրա քնած դայակին։

Վեպն ավարտվեց։ Ու այստեղ ծայր առավ աղետը։ Բոլոր լսողները մեկ մարդու պես ասացին, որ իմ վեպը տպագրվել չի կարող այն պատճառով, որ ցենզուրան չի թողնի։

Առաջին անգամ էի լսում այդ բառը, և նոր միայն գլխի ընկա, որ վեպը հորինելիս ոչ մի անգամ չեմ մտածել, կթողնե՞ն տպագրել, թե՝ ոչ։

Սկսողը մի տիկին էր (հետո իմացա, որ նույնպես մարդաթող էր)։ Նա այսպես ասաց․

— Ասացեք, Մախսուդով, իսկ ձեր վեպը կթողնե՞ն...

— Չէ՛, չէ՛, չէ՛,— բացականչեց տարեց գրողը։— Ոչ մի դեպքում «Կթողնեն»-ի մասին խոսք անգամ չի կարող լինել։ Պարզապես ոչ մի հույս չկա։ Մեր տղա, կարող ես չանհանգստանալ, չեն թողնի։

— Չե՛ն թողնի,— խմբով արձագանքեց սեղանի մյուս ծայրը։

— Լեզուն...— սկսեց նա, որը կիթառահարի եղբայրն էր, բայց տարեցն ընդհատեց։

— Գրողի ծո՛ցը լեզուն,— գոչեց նա, պնակի մեջ սալաթ դնելով։— Բանը լեզուն չէ։ Մեր տղեն վատ, բայց հետաքրքիր վեպ է գրել։ Դու դիտողականություն ունես, խորամանկ։ Տե՛ս է, ով ինչ ունի։ Բոլորովին չէի սպասում, բայց... բովանդակությունը։

— Ը՛մմ, բովանդակությունը...

— Հենց բովանդակությու՜նը,— դայակին անհանգստացնելով բղավում էր տարեցը,— դու գիտե՞ս, ինչ է պահանջվում... Չգիտե՞ս։ Ըհը՛։ Բա՞...

Նա աչքով էր անում, միաժամանակ խմում։ Հետո գրկեց ու պաչեց ինձ, բղավելով․

— Քո մեջ մի տեսակ անդուր բան կա, հավատա ինձ։ Ի՛նձ հո հավատա։ Բայց ես քեզ սիրում եմ։ Սպանես էլ, սիրում եմ։ Խորամանկ մարդ է սրիկան, տակետա՛կ։ Հը՞։ Ի՞նչ։ Չորրորդ գլխին ուշադրություն դարձրե՞լ եք։ Ինչ էր ասում նա հերոսուհու՞ն։ Բա՞...

— Նախ և առաջ, այդ ի՛նչ խոսքեր են...— ուզում էի սկսել, խիստ նեղվելով նրա ընտանեվարությունից։

— Ամենից առաջ պռոշտի արա,— բղավեց տարեց գրողը,— չե՞ս ուզում։ Իսկույն երևաց, թե ինչ ընկեր ես։ Չէ, ախպերս, դու հասարակ մարդ չես։

— Իհարկե, հասարակ մարդ չէ,— հարեց երկրորդ մարդաթող կինը։

— Նախ և առաջ...— կրկին սկսեցի չարացած, բայց դրանից բան դուրս չեկավ։

— Ոչ մի նախ և առաջ,— բղավեց տարեցը,— այլ դոստոևշչինա կա քո մեջ։

Այո՛։ Դե լավ, ինձ չես սիրում, աստված քեզ կների, չեմ նեղանում։ Բայց մենք բոլորով քեզ սիրում ու քո բարին ենք ուզում։— Նա մատնացույց արեց կիթառահարի եղբորը և ինձ անծանոթ, կաս-կարմիր դեմքով մեկ ուրիշ մարդու, որը ներս մտնելով ներողություն խնդրեց ուշանալու համար, բացատրելով որ Կենտրոնական բաղնիք էր գնացել։— Եվ քեզ ուղղակի ասում եմ,— շարունակեց տարեցը,— քանի որ սովոր եմ ճիշտ խոսքը երեսին շպպացնել. Լեոնտի՛չ, այդ վեպդ առած, մտքովդ էլ չանցնի որևէ տեղ խցկվել։ Գլխիդ փորձանք կբերես, հետո մենք պիտի տանջվենք, տառապանքդ տեսնելով։ Ինձ հավատա՛։ Ես մեծ ու դառը փորձ ունեմ։ Կյանքը գիտե՛մ։ Ըհը՛, տեսեք,— նեղացած բղավեց նա, բոլորին վկա կանչելով ձեռքի շարժումով,— տեսեք, գայլի աչքերով վրաս է նայում։ Դա էլ շնորհակալությունն էր լավ վերաբերմունքի դիմաց։ Լեոնտի՛չ,— նա այնպես ծղրտաց, որ վարագույրի ետևում դայակն ելավ սնդուկի վրայից,— հասկացի՛ր։ Հասկացիր, որ այնքան էլ մեծ չեն քո վեպի գեղարվեստական արժանիքները... (այդ պահին բազմոցի վրայից կիթառի մեղմ ակորդ հնչեց)... որպեսզի դրա համար Գողգոթա բարձրանաս։ Հասկացի՛ր։

— Հ-հասկացի՛ր, հասկացի՛ր, հասկացի՛ր...—դուրեկան տենորով երգեց կիթառահարը։

— Եվ ականջ դիր ինձ,— բղավեց տանտերը,— թե որ հիմա պոռշտի չանես, վեր կկենամ, կգնամ, կթողնեմ ընկերական շրջապատը, քանի որ ինձ նեղացրիր։

Անասելի տանջանքներ ապրելով՝ նրան պաչեցի։ Երգչախումբը այդ ժամանակ կարգին ծավալվել էր, և ձայներից վեր, յուղալի ու նուրբ լողում էր տենորը.

— Հ-հասկացի՛ր, հասկացի՛ր...

Կատվի պես աննկատ սողոսկեցի սենյակից, ծանր ձեռագիրը՝ կռնատակիս։

Կարմիր, արցունքածոր աչքերով դայակը կռացած ջուր էր խմում խոհանոցի ծորակից։

Հայտնի չէ, թե ինչու մի ռուբլիանոց մեկնեցի դայակին։

— Կորեք, գնացե՛ք,— չարացած ասաց դայակը, ետ մղելով ռուբլին,— գիշերվա ժամը չորսն է։ Դժոխքի տանջանք է, ուրիշ ոչինչ։

Հեռվից խմբերգը ճեղքեց ծանոթ մի ձայն.

— Իսկ ո՞ւր է նա։ Փախա՞վ։ Բռնեք նրան։ Տեսնում եք, չէ՞, ընկերներ...

Բայց մոմլաթապատ դուռն արդեն փակվել էր, ու ես վազում էի՝ առանց ետ նայելու։

ԳԼՈՒԽ III

## ԻՄ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

— Այո, սարսափելի է,— ինքս ինձ ասացի իմ սենյակում, — ամեն ինչ սարսափելի է։ Ե՛վ այդ սալաթը, և՛ դայակը, և՛ տարեց գրողը, և՛ անմոռաց «Հասկացիր»-ը, ընդհանրապես ամբողջ կյանքս։

Դրսում տնքում էր աշնան քամին, շխկշխկում էր տանիքի պոկված թիթեղը, ապակիների վրա անձրևն էր սողում՝ առուառու։ Դայակով ու կիթառով այն երեկոյից հետո շատ դեպքեր եղան, բայց այնքան անտանելի, որ գրել անգամ չեմ ուզում։ Ամենից առաջ վրա պրծա վեպն ստուգելու այն տեսակետից, որ այսինքն՝ կթողնե՞ն, թե՝ չեն թողնի։ Ու պարզ դարձավ, որ չեն թողնի։ Տարեցը միանգամայն իրավացի էր։ Ինձ թվում էր, թե դա է բղավում վեպի յուրաքանչյուր տողը։

Վեպն ստուգելով, վերջին փողերս ծախսեցի երկու հատված արտագրելու վրա և տարա մի հաստափոր ամսագրի խմբագրություն։ Երկու շաբաթ անց հատվածները ետ ստացա։ Ձեռագրի անկյունում գրված էր «Չի համապատասխանում»։ Եղունգի մկրատով կտրելով այդ մակագրությունը, նույն հատվածները տարա մեկ ուրիշ հաստափոր ամսագիր և երկու շաբաթ անց ետ ստացա ճիշտ ու ճիշտ նույն մակագրությամբ. «Չի համապատասխանում»։

Դրանից հետո մեռավ կատուն։ Նա դադարեց ուտել, քաշվեց մի անկյուն ու մլավում էր, ինձ կատաղության հասցնելով։ Դա շարունակվեց երեք օր։ Չորրորդ օրը նրան գտա անկյունում, կողքի պառկած անշարժ։

Դռնապանից բահ վերցրի և կատվին թաղեցի մեր շենքի ետևի ամայուտում։ Բացարձակապես միայնակ մնացի երկրիս երեսին, բայց խոստովանեմ, որ հոգուս խորքում ուրախացա։ Ի՜նչ բեռ էր ինձ համար այդ դժբախտ կենդանին։

Իսկ հետո սկսվեցին աշնան անձրևները, կրկին ցավեց ուսս և ձախ ծունկս։

Բայց ամենավատը դա չէր, այլ որ վերքն էր վատ։ Իսկ եթե վատն էր, ապա նշանակում էր, որ կյանքս մոտենում է վախճանին։

Ամբողջ կյանքս «Նավագնացությունո՞ւմ» աշխատեի։ Ծիծաղո՞ւմ եք, ինչ է։

Ամեն գիշեր պառկում էի, աչքերս հառած սև խավարին ու կրկնում. «Սարսափելի է»։ Եթե ինձ հարցնեիք, թե ի՞նչ եք հիշում «Նավագնացությունում» աշխատած ժամանակի մասին, մաքուր խղճով կպատասխանեի՝ ոչի՛նչ։

Կեղտոտ կրկնակոշիկներ՝ կախարանի տակ, ինչ-որ մեկի երկարականջ թաց փափախը՝ կախարանի վրա, ուրիշ ոչինչ։

— Սարսափելի է՜,— կրկնում էի ես, լսելով ,թե ինչպես է զրնգում գիշերային լռությունն իմ ականջներում։

Անքնությունն իրեն զգացնել տվեց մի երկու շաբաթ անց։

Տրամվայով գնացի Սամոտեչնայա-Սադովայա փողոց, ուր տներից մեկում, համարն, իհարկե, խիստ գաղտնի եմ պահում, ապրում էր զբաղմունքի բերումով զենք կրելու իրավունք ունեցող մի մարդ։

Թե ինչ հանգամանքներում ենք ծանոթացել, կարևոր չէ։

Բնակարան մտնելով, բարեկամիս գտա բազմոցին պառկած։ Մինչ նա թեյ կտաքացներ խոհանոցում՝ պրիմուսի վրա, բացեցի նրա գրասեղանի ձախ դարակը և թռցրեցի բրաունինգը, ապա կուշտ թեյ խմեցի ու եկա տուն։

Երեկոյան ժամը իննին մոտ էր։ Տուն հասա։ Ամեն ինչ ամեն անգամվա պես էր։ Խոհանոցից ոչխարի տապակած մսի հոտ էր գալիս. միջանցքում հավերժական, ինձ լավ հայտնի մշուշն էր, որի մեջ առաստաղի աղոտ լույս էր տալիս լամպը։ Մտա սենյակս։ Լույսը բռնկվեց վերևում, և սենյակը տեղնուտեղն ընկղմվեց խավարի մեջ։ Լամպն այրվեց։

— Մեկը մեկի վրա, և ամեն ինչ՝ չափազանց ճիշտ,— ասացի խստորեն։

Հատակի վրա, անկյունում վառեցի նավթավառը։ Թղթի կտորի վրա գրեցի. «Սույնով հայտնում եմ, որ այսինչ սիստեմի № (համարը մոռացել եմ) բրաունինգը գողացել եմ Պարֆյոն Իվանովիչ (գրեցի ազգանունը, փողոցը, տան համարը, ամեն բան՝

*տեղը տեղին)։ Ստորագրեցի, պառկեցի հատակին, նավթավառի մոտ։ Մահվան սարսափը պատեց ինձ։ Զարհուրելի բան է մեռնելը։ Այդ ժամանակ պատկերացրեցի մեր միջանցքը, ոչխարի միսն ու Պելագեյա տատին, տարոցին և «Նավագնացությունը», ինքս ինձ ուրախացրեցի այն մտքից, թե ինչպես են աղմուկ-աղաղակով ջարդելու սենյակիս դուռն ու զանազան բաներ։*

*Փողը դրեցի ջունքիս, մատս անհաստատ տարա ձգանին։ Այդ ժամանակ ներքևից լսեցի շատ ծանոթ հնչյուններ, խռպոտ նվագեց նվագախումբը և գրամոֆոնի տենորը երգեց.*

Կվերադարձնի՞ սակայն աստված բոլորն ինձ:

*«Տե՞ր աստված։ «Ֆա՜ուստը»,— մտածեցի ես։— Իրոք, ճիշտ ժամանակին էր սա։ Բայց սպասեմ Մեֆիստոֆելի մուտքին։ Վերջին անգամ։ էլ երբեք չեմ լսելու»։*

*Նվագախումբը մեկ անհետանում էր հատակի տակ, մեկ դուրս լողում, բայց տենորը բղավում էր ավելի ու ավելի ուժգին.*

Անիծում եմ կյանքը, հավատ ու գիտությունները բոլոր:

*«Հիմա, հիմա,— մտածում էի ես,—բայց ի՜նչ արագ է երգում...»։*

*Տենորը հուսակտուր բղավեց, ապա դղրդաց նվագախումբը։*

*Դողացող մատս իջավ ձգանի վրա, և այդ պահին մի դղրդյուն խլացրեց ինձ, սիրտս փորս ընկավ, ինձ թվաց, թե բոցը նավթավառից առաստաղ թռավ, ցած դրեցի ատրճանակը։*

*Որոտը շարունակվեց։ Ներքևից բասի հզոր ձայն լսվեց։*

*— Ահա և ե՜ս։*

*Շրջվեցի դռան կողմը։*

## ԳԼՈՒԽ IV

## ՍՈՒՐ ՈՒՆԵՄ ԿՈՂՔԻՍ

*Դուռը թակում էին։ Տիրաբար, իրար վրա։ Ատրճանակը խոթեցի շալվարիս գրպանը և թույլ ձայնով կանչեցի.*

*— Մտեք։*

*Դուռը բացվեց, և ես սարսափից քարացա հատակի վրա։ Նա՛ էր, ոչ մի կասկած, Նա էր։ Կիսախավարի մեջ, վերևից ինձ վրա հայտնվեց տիրական քթով և բարձր հոնքերով մի դեմք։ Ստվերները խաղում էին, ու ինձ թվաց, թե քառակուսի ծնոտի տակ ցըց-*

ված է սև մորուքի դաշույնը։ Բերետը ծուռ քաշած էր ականջին։ Ճիշտ է, փետուրը չկար։

Կարճ ասած, իմ դեմ կանգնած էր Մեֆիստոֆելը։ Այդ ժամանակ տեսա, որ նա վերարկուով է, փայլուն ու խորը կրկնակոշիկներով, թևի տակ էլ պայուսակ ուներ։ «Բնական է,— անցավ մտքովս,— ուրիշ տեսքով նա չէր կարող քայլել Մոսկվայում, քսաներորդ դարում»։

— Ռուդոլֆի,— ասաց չար ոգին տենորով և ոչ թե բասով։

Ի դեպ, կարող էր և չներկայանալ։ Ես նրան ճանաչեցի։ Իմ սենյակում էր այն ժամանակվա գրական աշխարհի ամենաանհնարու մարդկանցից մեկը՝ «Հայրենիք» միակ մասնավոր ամսագրի խմբագիր-հրատարակիչ Իլյա Իվանովիչ Ռուդոլֆին։

Վեր կացա հատակից։

— Իսկ հնարավոր չէ՞ լույս վառել,— հարցրեց Ռուդոլֆին։

— Ցավոք, չեմ կարող,— պատասխանեցի ես,— քանի որ լամպն այրվել է, իսկ ուրիշը չունեմ։

Խմբագրի կերպարը ընդունած չար ոգին իր սովորական անսպասելիություններից մեկն արեց՝ իսկույն էլեկտրական լամպ հանեց պայուսակից։

— Դուք մի՞շտ եք լամպ պահում ձեզ մոտ,— զարմացա ես։

— Ոչ,— խստությամբ բացատրեց ոգին,— հասարակ զուգադիպություն է, հենց նոր խանութում էի։

Երբ սենյակը լուսավորվեց, և Ռուդոլֆին հանեց վերարկուն, ես ճարպկորեն սեղանից վերցրի ատրճանակը զողանալու խոստովանությամբ երկտողը, իսկ ոգին ձևացրեց, թե չնկատեց։

Նստեցինք։ Լուռ էինք։

— Դուք վե՞պ եք գրել,— ի վերջո խստորեն հարցրեց Ռուդոլֆին։

— Որտեղի՞ց գիտեք։

— Լիկոսպաստովն ասաց։

— Գիտեք ինչ...— սկսեցի ես (Լիկոսպաստովն այն տարեցն է),— ես, իրոք... բայց... մի խոսքով, վատ վեպ է։

— Այսպե՜ս,— ասաց ոգին և ուշադիր նայեց ինձ։

Պարզվեց, որ մորուք չունի։ Ստվերների խաղն էր։

— Ցույց տվեք,— հրամայաբար ասաց Ռուդոլֆին։

— Ոչ մի դեպքում,— պատասխանեցի ես։

— Ցույց տը-վեք,— վանկ առ վանկ ասաց Ռուդոլֆին։

— Ցենզուրան չի թողնի...

— Ցույց տվեք։

— Գիտեք ինչ, վեպը ձեռագիր է, ես վինթի ձեռագիր ունեմ, որը սովորական փաստիկի պես է ստացվում, իսկ...

Եվ այստեղ ինքս էլ չնկատեցի, թե ձեռքերս ինչպես բացեցին դարակը, ուր դրված էր չարաբաստիկ վեպը։

— Ցանկացած ձեռագիր կարդում եմ տպագրածի պես,— պարզաբանեց Ռուդոլֆին,— մասնագիտական բան է...— Եվ տետրերը հայտնվեցին նրա առաջ։

Մի ժամ անցավ։ Ես նստած էի նավթավառի մոտ, իսկ Ռուդոլֆին կարդում էր վեպը։ Հազար ու մի բան անցավ մտքովս։ Նախ, մտածում էի Ռուդոլֆի մասին։ Հարկ է ասել, որ Ռուդոլֆին երևելի խմբագիր էր և նրա ամսագրին ընկնելը հաճելի ու պատվավոր էր համարվում։ Ինձ պետք է ուրախացներ այն հանգամանքը, որ խմբագիրն է ինձ մոտ եկել՝ թեկուզև Մեֆիստոֆելի տեսքով։ Բայց, մյուս կողմից, վեպը կարող էր նրան դուր չգալ, իսկ դա տհաճ բան կլիներ... Բացի դրանից, զգում էի, որ ամենահետաքրքիր տեղում ընդհատված ինքնասպանությունը հիմա արդեն չի կատարվի, հետևաբար վաղվանից սկսած վերստին կհայտնվեմ փորձանքների հորձանուտում։ Բացի դրանից, պետք էր թեյ առաջարկել, իսկ ես կարագ չունեի։ Ընդհանրապես, գլուխս շիլաշփոթ էր, ըստ որում, զուր տեղը գողացված ատրճանակն էլ իր հերթին էր գալիս մեջ ընկնում։

Մինչ այդ, Ռուդոլֆին կլանում էր էջը էջի ետևից, իսկ ես ապարդյուն ճգնում էի իմանալ, թե վեպն ինչ տպավորություն է գործում նրա վրա։ Ռուդոլֆի դեմքը ոչնչից ոչինչ չէր արտահայտում։

Երբ նա ակնոցի ապակիները սրբելու համար ընդմիջում տըվեց, արդեն ասածս հիմարություններին մեկն էլ ավելացրի.

— Իսկ Լիկոսպաստովն ի՞նչ է ասել իմ վեպի մասին։

— Ասել է, որ վեպը բանի պետք չէ,— սառը պատասխանեց Ռուդոլֆին ու շրջեց էջը («Ի՜նչ սրիկա մարդ է Լիկոսպաստովը։ Փոխանակ ընկերոջն օգնելու և այլն...»)

Գիշերվա ժամը մեկին թեյ խմեցինք, իսկ երկուսին Ռուդոլֆին կարդաց վերջին էջը։

Ցուցամուտ եկա՝ բազմոցին նստած։

— Այսպիսի բանե՜ր,— ասաց Ռուդոլֆին։

Լուռ նստած էինք։

— Տոլստոյին եք ընդօրինակում,— ասաց Ռուդոլֆին։

*Ես վայրացա․*

*— Հատկապես ո՞ր Տոլստոյին,— հարցրի ես,— Տոլստոյ շատ կա... Ալեքսեյ Կոնստանտինովիչի՞ն արդյոք՝ նշանավոր դրողին, արտասահմանում արքայազն Ալեքսեյին բռնած Պյոտր Անդրեևիչի՞ն, դրամահավաք Իվան Իվանովիչի՞ն, թե՞ Լև Նիկոլաևիչին։*

*— Որտե՞ղ եք սովորել։*

*Ստիպված եմ մի փոքրիկ գաղտնիք բացել։ Բանն այն է, որ համալսարանում երկու ֆակուլտետ եմ ավարտել ու թաքցրել եմ դա․*

*— Միջնակարգ դպրոց եմ ավարտել,— հազալով ասացի ես։*

*— Ահա՛ թե ինչ,— ասաց Ռուդոլֆին ու թեթևակի ժպտաց շրթունքներով։ Հետո հարցրեց․— Շաբաթական քանի՞ անգամ եք ածիլվում։*

*— Յոթ անգամ։*

*— Ներեցեք անհամեստությունս,— շարունակեց Ռուդոլֆին,— իսկ ի՞նչ եք անում, որ մազերն այդպես ուղիղ են բաժանվում։*

*— Բրիոլին եմ քսում։ Թույլ տվեք հարցնել, ինչի՞ համար է այս բոլորը...*

*— Ի սեր աստծո,— պատասխանեց Ռուդոլֆին,— հենց այնպես։— Եվ շարունակեց․— Հետաքրքիր է։ Մարդն ավարտել է միջնակարգ դպրոցը, ամեն օր սափրվում է և պառկել է հատակին՝ նավթավառի մոտ։ Դուք բարդ մարդ եք։— Ապա նա կտրուկ փոխեց ձայնը և սկսեց խիստ խոսել․— Գլավլիտը ձեր վեպը չի թողնի և ոչ ոք չի տպագրի։ Վեպը չեն ընդունի ոչ «Զորիում», ոչ էլ «Ռասսվետում»։*

*— Գիտեմ,— հաստատ ասացի ես։*

*— Եվ այնուամենայնիվ ես այս վեպը ձեզնից վերցնում եմ,— խստությամբ ասաց Ռուդոլֆին (սիրտս սկսեց անհամաչափ խփել),— ու ձեզ կվճարեմ (այստեղ նա մի զարհուրելի աննշան գումար ասաց, չեմ հիշում, թե որքան) մամուլի դիմաց։ Վաղը վեպը մեքենագրված կլինի։*

*— Չորս հարյուր էջ է,— բացականչեցի ես խռպոտ ձայնով։*

*— Մաս-մաս կանեմ,— երկաթյա ձայնով ասաց Ռուդոլֆին,— և տասներկու մեքենագրուհի վաղը երեկոյան դեմ կվերջացնեն գործը։*

*Ըմբոստանալս թողեցի և որոշեցի ենթարկվել Ռուդոլֆիին։*

*— Արտագրությունը՝ ձեր հաշվին,— շարունակեց Ռուդոլֆին,*

իսկ ես միայն գլխով էի անում, տիկնիկի պես,— հետո, հարկ կլինի երեք բառ ջնջել առաջին, յոթանասունմեկերորդ և երեքհարյուրերկուերորդ էջերում։

Նայեցի տետրերիս մեջ ու տեսա, որ առաջին բառը «Հայտնություն» է, երկրորդը՝ «հրեշտակապետներ», իսկ երրորդը՝ «ատատանա»։ Հնազանդությամբ երեքն էլ ջնջեցի, ճիշտ է, ուզում էի ասել, որ պարզունակ ջնջումներ են, բայց նայեցի Ռուդոլֆին ու սուս մնացի։

— Հետո,— շարունակեց Ռուդոլֆին,— ինձ հետ կգաք Գլավլիտ։ Ըստ որում, խոնարհաբար խնդրում եմ, այնտեղ որևիցե խոսք չասեք։

Բայց և այնպես վիրավորվեցի։

— Եթե գտնում եք, որ ես կարող եմ որևիցե բան ասել...— սկսեցի ծամծմել արժանապատվությամբ,— ապա կարող եմ տանն էլ նստել։

Ռուդոլֆին ոչ մի ուշադրություն չդարձրեց վրդովմունքի այս փորձի վրա և շարունակեց.

— Ոչ, դուք չեք կարող տանը նստել, այլ կգաք ինձ հետ։

— Ի՞նչ պիտի անեմ այնտեղ։

— Կնստեք աթոռին.— հրամայեց Ռուդոլֆին,— և ինչ որ կասեն, կպատասխանեք քաղաքավարի ժպիտով...

— Բայց...

— Իսկ խոսելը՝ ես կխոսեմ,— ավարտեց Ռուդոլֆին։

Ապա նա մաքուր թուղթ խնդրեց, մատիտով ինչ-որ բան գրեց, որքան հիշում եմ, մի քանի կետ էր բովանդակում դա։ Ինքը ստորագրեց, ստիպեց ինձ էլ ստորագրել, հետո խշխշան երկու թղթադրամ հանեց գրպանից, տետրերս դրեց պայուսակը և չքացավ սենյակից։

Ամբողջ գիշեր չքնեցի, քայլում էի սենյակում, թղթադրամները պահում էի լույսին, նայում, սառը թեյ խմում և պատկերացնում գրախանութների վաճառասեղանները։ Ահագին ժողովուրդ էր մտնում խանութ, հարցնում ամսագրի մասին։ Տներում, լամպերի լույսի տակ նստած էին մարդիկ, կարդում էին պրակը, ոմանք՝ բարձրաձայն։

Աստվա՜ծ իմ։ Ի՜նչ հիմարություն, ի՜նչ հիմարություն։ Բայց այն ժամանակ համեմատաբար ջահել էի, պետք չէ ծիծաղել վրաս։

ԳԼՈՒԽ V

## ԱՐՏԱՍՈՎՈՐ ԴԵՊՔԵՐ

Գողանալը դժվար չէ։ Տեղը գնելն է բարդ գործ։ Պատյանով ատրճանակը գրպանս դրած, եկա ընկերոջս մոտ։

Սիրտս ճմլվեց, երբ դեռևս դռան հետևից լսեցի նրա բղավոցները.

— Մամաշա։ Է՞լ ով...

Լսվեց նրա պառավ մոր խուլ ձայնը.

— Ջրմուղից մարդ էր եկել։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեցի ես՝ վերարկուս հանելով։

Ընկերս չորս կողմը նայեց ու շշնջաց.

— Ատրճանակս են թռցրել այսօր... Սրիկաներ...

— Ա՜յ-յա՜յ-յա՜յ,— ասացի ես։

Պառավ մայրը փոքրիկ բնակարանում դեսուդեն ընկած, սողում էր միջանցքի հատակին, այս ու այն զամբյուղի մեջ նայելով։

— Մամաշա, անմիտ բան է։ Բավական է հատակներին փըռվեք։

— Այսօ՞ր,— հարցրեցի ես ուրախ-ուրախ։ (Նա սխալվում էր, ատրճանակը կորել էր երեկ, բայց չգիտես ինչու նրան թվում էր, թե երեկ գիշեր դեռևս տեսել է դարակում)։

— Իսկ ո՞վ է եկել ձեր տուն։

— Ջրմուղից,—բղավում էր ընկերս։

— Պարֆյոնշա, նա աշխատասենյակ չի մտել,— վախվորած ասում էր մայրը,— ուղիղ գնաց ծորակի կողմը...

— Ա՜խ, մամաշա։ Ա՜խ, մամաշա։

— Էլ ոչ ոք չի՞ եկել։ Իսկ երե՞կ ով է եկել։

— Երեկ էլ ոչ ոք չի եկել։ Մենակ դուք, ուրիշ ոչ ոք։

Եվ ընկերս հանկարծ աչքերը չռեց վրաս։

— Ներեցեք,— ասացի ես արժանապատվությամբ։

— Ա՜հ, ի՜նչ նեղացկոտ մարդիկ եք, այդ ինտելիգենտներդ,— բացականչեց ընկերս։— Հո չե՞մ կարծում, թե դուք եք թռցրել։

Եվ տեղնուտեղը վազեց նայելու, թե որ ծորակին է մոտեցել ջրմուղից եկած մարդը։ Ըստ որում, մայրը ներկայացնում էր այցելուին և նույնիսկ ընդօրինակում նրա առոգանությունը։

— Այ, այսպես մտավ,— ասում էր պառավը,— ասաց «բարև ձեզ»... գլխարկը կախեց ու գնաց...

— Ո՞ւր գնաց։

Պառավը, շրմուղից եկածին նմանեցնելով, գնաց խոհանոց, ընկերս շտապեց նրա ետևից, ես մի կեղծ շարժում արեցի, իբր հետևում եմ նրանց, անմիջապես վերադարձա աշխատասենյակ, բրաունինգը դրեցի սեղանի ոչ թե ձախ, այլ աջ դարակը և գնացի խոհանոց։

— Որտե՞ղ եք պահում ատրճանակը,— կարեկցաբար հարցրեցի նրան աշխատասենյակում։

Ընկերս բացեց ձախ դարակն ու ցույց տվեց դատարկ տեղը։

— Չեմ հասկանում,— ուսերս թոթվելով ասացի ես,— իրոք, հանելուկային պատմություն է։ Այո, պարզ է, որ թռցրել են։

Ընկերս վերջնականապես այլայլվեց։

— Բայց և այնպես, կարծում եմ, որ չեն գողացել,— որոշ ժամանակ անց ասացի ես,— որովհետև եթե ոչ ոք չի եկել, հապա ո՞վ կարող էր գողանալ։

Ընկերս պոկվեց տեղից ու նայեց նախասենյակում կախ արած հին շինելի գրպանները։ Այնտեղ ոչինչ չկար։

— Ըստ երևույթին, գողացել են,— մտածկոտ ասացի ես,— ստիպված եք միլիցիա հայտնել։

Ընկերս տնքալու պես մի բան արեց։

— Մեկ ուրիշ տեղ չէի՞ք կարող դրած լինել։

— Ես միշտ նույն տեղն եմ դնում,— նյարդայնացած բղավեց ընկերս, ի ապացույց բացելով միջտեղի դարակը։ Հետո շրթունքներով ինչ-որ բան փսփսաց, բացեց ձախը, նույնիսկ ձեռքը ներս մտցրեց, ապա քաշեց տակի դարակը, իսկ հետո, արդեն անհծելով, բացեց աջը։

— Այ քեզ բա՛ն,— խզխզալով ասաց նա, ինձ նայելով։— Այ քեզ բա՛ն... Մամաշա՛... Գտնվե՜ց։

Նա արտակարգ երջանիկ էր այդ օրը և ինձ ճաշի պահեց։

Խղճիս ծանրացած ատրճանակի հարցը վերացնելով, մի քայլ ևս կատարեցի, որ կարելի է համարձակ համարել՝ աշխատանքս թողնցի «Նավագնացության լրաբերում»։

Ես անցնում էի մեկ ուրիշ աշխարհ, այցելում էի Բուդոլֆիին և սկսեցի հանդիպել գրողների, որոնցից մի քանիսը խոշոր համբավ ունեին արդեն։ Բայց այդ ամենը հիմա մի տեսակ ջնջվել է հիշողությունից, անձուկից բացի ուրիշ ոչինչ չթող-

նելով, այդ ամենը մոռացել եմ։ Սակայն մի բան չեմ կարող մոռանալ՝ իմ ծանոթությունը Ռուդոլֆիի հրատարակիչ Մակար Ռվացկու հետ։

Բանն այն է, որ Ռուդոլֆին ամեն ինչ ուներ՝ և՛ խելք, և՛ ըմբռնողություն, և՛ նույնիսկ որոշ բազմագիտություն, միայն մի բան չուներ՝ դրամ։ Այնինչ Ռուդոլֆիի մոլեգին սերն իր գործի նկատմամբ նրան մղում էր ամեն կերպ հաստափոր ամսագիր հրատարակելուն՝ ինչ գնով ուզում է լինի։ Առանց դրա, կարծում եմ, նա կմեռներ։

Այդ իսկ պատճառով մի անգամ հայտնվեցի տարօրինակ մի շենքում, Մոսկվայի բուլվարներից մեկում։ Ինչպես բացատրել էր Ռուդոլֆին, այստեղ էր գտնվում հրատարակիչ Ռվացկին։ Ինձ ապշեցրեց այն, որ մուտքի ցուցանակը ազդարարում էր, թե սա «լուսանկարչական պիտույքների բյուրո» է։

Առավել տարօրինակ էր, որ լուսանկարչական որևիցե պիտույք, բացառությամբ լրագրի մեջ փաթաթված չթի ու մահուդի մի քանի կտորի, այստեղ չկար։

Շենքով մեկ մարդիկ էին վխտում։ Բոլորը՝ վերարկուներով և շլյապաներով, աշխուժորեն խոսում էին իրար հետ։ Երկու խոսք լսեցի թռուցիկ՝ «մետաղալար» և «բանկա»։ Անչափ զարմացա, բայց ինձ ևս նայեցին զարմացած հայացքներով։ Ասացի, որ գործով Ռվացկու մոտ եմ գնում։ Անհապաղ և շատ հարգալիր ինձ ուղեկցեցին տախտակյա միջնորմից այն կողմ, ուր իմ զարմանքը բարձրագույն աստիճանի հասավ։

Ռվացկու գրասեղանի վրա կիտված էին մանրաձկան տուփեր։

Բայց ինքը՝ Ռվացկին, առավել ևս դուր չեկավ ինձ, քան նրա հրատարակչության մանր ձկները։ Ջորշորուկ, նիհար, կարճահասակ մարդ էր Ռվացկին, «նավագնացությունում» բլուզների վարժված իմ աչքի համար խիստ տարօրինակ հագնված։ Այցեզգեստով, զոլավոր տաբատով, կեղտոտ, օսլայած օձիքով, օձիքին՝ կանաչ փողկապ, փողկապի վրա էլ՝ սուտակե քորոց։

Ռվացկին ինձ զարմացրեց, իսկ ես Ռվացկուն վախեցրեցի, ավելի ճիշտ վշտացրեցի, երբ բացատրեցի, թե եկել եմ նրա հետ պայմանագիր ստորագրելու՝ իր հրատարակած ամսագրում իմ վեպը տպագրելու համար։ Բայց և այնպես նա շուտով սթափվեց, վերցրեց իմ բերած պայմանագրի երկու օրինակները, հանեց ինքնահոսը, համարյա չկարդալով երկուսն էլ ստորագրեց և երկու օրինակն էլ ձեռքս խոթեց ինքնահոսի հետ։ Այն է, գրիչը

գործի էի դնելու, երբ հանկարծ նայեցի «Աստրախանյան ընտիր մանրաձուկ» մակագրությամբ և ուռկանի մոտ շալվարը քշտած ձկնորսի նկարով տուփերին և մի կսկծալի միտք պաշարեց ուղեղս։

— Դրամն ինձ հենց հիմա՞ կտան, ինչպես գրված է պայմանագրում,— հարցրեցի ես։

Ովացկին համակ քաղաքավարի և անուշ մի ժպիտ դարձավ։ Հազաց ու ասաց.

— Ուղիղ երկու շաբաթից, այժմ մի փոքր խոչընդոտ կա...

Ես ցած դրեցի գրիչը։

— ...կամ մի շաբաթից,— փութկոտ ասաց Ովացկին,— իսկ ինչո՞ւ չեք ստորագրում։

— Ուրեմն, այն ժամանակ էլ կստորագրենք պայմանագիրը,— ասացի ես,— երբ խոչընդոտը վերանա։

Ովացկին դառը ժպտաց, գլուխն օրորելով։

— Դուք ինձ չե՞ք վստահում,— հարցրեց նա։

— Ի՞նչ եք ասում։

— Վերջապես, չորեքշաբթի,— ասաց Ովացկին։— Եթե դուք դրամի կարիք ունեք։

— Ցավոք սրտի, չեմ կարող։

— Կարևորը պայմանագիրը ստորագրելն է,— լրջմտորեն ասաց Ովացկին,— իսկ դրամը կարելի է նույնիսկ երեքշաբթի...

— Ցավոք սրտի, չեմ կարող։— Ու մի կողմ հրեցի պայմանագրերը և կոճակս կոճկեցի։

— Մի՛ րոպե, ա՛հ, ինչ մարդ եք,— բացականչեց Ովացկին։— Հետո էլ ասում են, թե գրողները գործնական ժողովուրդ չեն։

Եվ հանկարծ նրա գունատ դեմքին թախիծ իջավ, տագնապած շուրջը նայեց, բայց ներս վազեց մի երիտասարդ և Ովացկուն տվեց սպիտակ թղթի մեջ փաթաթած ստվարաթղթե տոմսակ։ «Տոմս է, պլացքարտով,— մտածեցի ես,— նա ինչ-որ տեղ է գնում...»։

Հրատարակչի այտերը կարմրեցին, աչքերը փայլատակեցին՝ չէի կարծում, թե նման բան կարող է լինել։

Կարճ ասած, Ովացկին ինձ տվեց պայմանագրում նշված գումարը, իսկ մնացածի դիմաց մուրհակներ գրեց։ Կյանքումս առաջին և վերջին անգամ ինձ տված մուրհակ ունեի ձեռքիս։ (Ինչ-որ տեղ գնացին մուրհակի թուղթ բերելու, այդ ընթացքում սպասում էի, նստած արկղների վրա, որոնք կոշկի կաշվի սուր

հոտ էին արձակում)։ Ինքնասիրությունս շոյված էր, որ մուրհակներ ունեմ։

Հետագա երկու ամիսը թռել է իմ հիշողությունից։ Հիշում եմ միայն, որ վրդովմունքս հայտնեցի Ռուդոլֆիին, որ նա ինձ ուղարկեց Օվացկու պես մեկի մոտ, որ պղտոր աչքերով ու սուտակե քորոցով հրատարակիչ չի լինում։ Հիշում եմ նաև, թե ինչպես նվաղեց սիրտս, երբ Ռուդոլֆին ասաց. «Մուրհակները ցույց տվեք տեսնեմ», ու ինչպես տեղն ընկավ, երբ ատամների արանքից ասաց. «Ամեն բան կարգին է»։ Բացի դրանից, երբեք չեմ մոռանա, թե ինչպես գնացի առաջին մուրհակի դիմաց դրամ ստանալու։ Սկսվեց նրանից, որ «Լուսանկարչական պիտույքների բյուրո» ցուցանակը գոյություն չուներ, փոխարենը «Բժշկական տուփերի արհեստանոց» ցուցանակն էր։

Ներս մտա ու ասացի.

— Ես պետք է տեսնեմ Մակար Բորիսովիչ Օվացկուն։

Շատ լավ հիշում եմ, թե ինչպես ծալվեցին ոտքերս, երբ ինձ պատասխանեցին, որ Մ. Բ. Օվացկին... արտասահմանում է։

Ա՜խ իմ սիրտ, ա՜խ իմ սիրտ... Իմիջիայլոց, հիմա դա կարևոր չէ։

Նորից կարճ կապեմ. փայտյա միջնորմից այն կողմ նստած էր Օվացկու եղբայրը։ (Օվացկին արտասահման էր գնացել ինձ հետ պայմանագիր կնքելուց տասը րոպե հետո՝ հիշու՞մ եք պլացքարտը)։ Արտաքինով իր եղբոր կատարյալ հակապատկերն էր Ալոիզի Օվացկին՝ ատլետի կազմվածք ուներ, մռայլ աչքեր, և մուրհակի դիմաց վճարեց։

Մեկ ամիս անց, կյանքն անիծելով, երկրորդ մուրհակով դրամ ստացա արդեն պաշտոնական ինչ-որ հիմնարկությունում, ուր բողոքարկվում են մուրհակները (նոտարի գրասենյակ էր, թե՝ բանկ, ցանցապատ փոքրիկ լուսամուտներ կային)։

Երրորդ մուրհակի ժամանակ խելոքացել էի, երկրորդ Օվացկու մոտ եկա ժամկետից երկու շաբաթ առաջ և ասացի, որ հոգնել եմ։

Օվացկու մռայլ եղբայրն առաջին անգամ աչքերը դարձրեց իմ կողմն ու մրթմրթաց.

— Հասկանում եմ։ Իսկ ինչու՞ սպասեք ժամկետին։ Կարող եք հիմա էլ ստանալ։

Ութ հարյուր ռուբլու փոխարեն չորս հարյուր ստացա և

թեթևության մեծ զգացումով Ռվացկուն տվեցի երկարավուն երկու թուղթ։

Ա՜խ, Ռուդոլֆի, Ռուդոլֆի։ Շնորհակալ եմ և՛ Մակարի, և՛ Սլոխդիի համար։ Ի դեպ, առաջ չընկնենք, հետո ավելի վատ է լինելու։

Ի դեպ, վերարկու գնեցի։

Եվ վերջապես եկավ օրը, երբ դաժան սառնամանիքին եկա հենց այդ նույն շենքը։ Երեկո էր։ Հարյուր մոմանոց լամպն անտանելի աչք էր ծակում։ Լամպի տակ, միջնորմից այն կողմ Ռվացկիներից ոչ ոք չկար (հարկ կա՞ ասելու, որ երկրորդն էլ էր գնացել)։ Այդ լամպի տակ, վերարկուն հագին նստած էր Ռուդոլֆին, իսկ նրա առջև, սեղանի վրա, հատակին ու սեղանի տակ դրված էին ամսագրի նոր-նոր տպագրած մոխրա-երկնագույն գրքույկները։ Օ՜, ակնթարթ։ Այժմ դա ծիծաղելի է, բայց այն ժամանակ ավելի երիտասարդ էի։

Ռուդոլֆիի աչքերը փայլում էին։ Պետք է ասել, իր գործը նա սիրում էր։ Իսկական խմբագիր էր։

Գոյություն ունեն այդպիսի երիտասարդներ, և դուք, իհարկե, նրանց հանդիպել եք Մոսկվայում։ Այդ երիտասարդները լինում են ամսագրերի խմբագրություններում՝ համարի լույս ընծայման պահին, բայց գրող չեն։ Նրանք երևում են բոլոր գլխավոր փորձերին բոլոր թատրոններում, բայց դերասան էլ չեն։ Նրանք լինում են նկարիչների ցուցահանդեսներում, բայց իրենք չեն նկարում։ Օպերային պրիմադոննաներին նրանք ազգանունով չեն կոչում, այլ անուն-հայրանունով։ Նմանապես, անուն-հայրանունով են կոչում պատասխանատու պաշտոններ զբաղեցնող անձանց, թեև անձամբ ծանոթ չեն նրանց։ Մեծ թատրոնում, պրեմիերայի ժամանակ, խցկվելով յոթերորդ և ութերորդ կարգերի արանքներով, սիրալիր ձեռքով են անում դստիկոնում նստած որևէ մեկին, «Մետրոպոլում» նստում են հենց շատրվանի մոտի սեղանին, և գույնզգույն լամպերը լուսավորում են նրանց լայն փողքերով շալվարները։

Նրանցից մեկը նստած էր Ռուդոլֆիի դիմաց։

— Է՜, հավանեցի՞ք հերթական պրակը,— հարցրեց Ռուդոլֆին նրան։

— Իլյա՜ Իվանիչ,— սրտառուչ բացականչեց երիտասարդը, ձեռքում խաղացնելով ամսագիրը։— Հիանալի պրակ է, բայց, Իլյա Իվանիչ, թույլ տվեք ամենայն անկեղծությամբ ձեզ ասել.

մենք՝ ձեր ընթերցողները, չենք հասկանում, թե ձեր ճաշակով հանդերձ, ինչպես եք տեղ տվել Մակսուդովի այդ գործին։

«Ա՛յ քեզ բան»,— մտածեցի ես, փայլատակելով։

Բայց Ռուդոլֆին դավադիր տեսքով աչքով արեց ինձ ու ասաց.

— Իսկ ի՞նչ կա որ։

— Աստվա՛ծ սիրեք,— բացականչեց երիտասարդը։— Չէ որ նախ... Դուք թույլ կտա՞ք անկեղծ լինել, Իլյա Իվանովիչ։

— Խնդրեմ, խնդրեմ,— պայծառացած ասաց Ռուդոլֆին։

— Նախ և առաջ, տարրական անգրագիտություն է... Ես հանձն եմ առնում քսան տեղ ընդգծել, ուր պարզապես շարահյուսական կոպիտ սխալներ կան։

«Հենց հիմա պետք է մեկ էլ կարդալ»,— մտածեցի ես նվաղած։

— Հապա ո՞ճը,— բղավեց երիտասարդը։— Տե՛ր աստված, ի՞նչ սարսափելի ոճ է։ Բացի ասածներից, այդ ամենը էկլեկտիկ է, ընդօրինակում, մի տեսակ անատամ։ էժան փիլիսոփայություն է, թռուցիկ մակերեսայնություն... Վատ է, տափակ, Իլյա Իվանովիչ։ Բացի դրանից, նա ընդօրինակում է...

— Ո՞ւմ, — հարցրեց Ռուդոլֆին։

— Ավերչենկոյին,— բացականչեց երիտասարդը՝ շուռումուռ տալով, խաղացնելով պրակը և մատով կտրելով միմյանց կպած թերթերը։— Ամենասովորական Ավերչենկոյին։ Ահա՛ ցույց տամ ձեզ։— Այստեղ երիտասարդն սկսեց փնտրել ամսագրի էջերում, ընդ որում ես, սագի պես վիզս ձգած, հետևում էի նրա ձեռքերին, բայց նա, ցավոք, փնտրածը չգտավ։

«Տանը կգտնեմ»,—մտածեցի ես։

— Տանը կգտնեմ,— խոստացավ երիտասարդը,— պրակը փչացվել է, Իլյա Իվանովիչ, աստված վկա։ Նա պարզապես անգրագետ է։ Ո՞վ է նա։ Որտե՞ղ է սովորել։

— Ասում է, թե ծխական դպրոց է ավարտել,— աչքերը փայլեցնելով՝ պատասխանեց Ռուդոլֆին,— սակայն, ինքներդ հարցրեք։ Խնդրեմ, ծանոթացեք։

Կանաչ, ներխած բորբոս պատեց երիտասարդի այտերին, իսկ աչքերը լցվեցին անմեկնելի սարսափով։

Ես գլուխ տվեցի երիտասարդին, նա բացեց ատամները, տառապանքն այլայլեց նրա դուրեկան դիմագծերը։ Հոգով հա-

[illegible]ց ու գրպանից դուրս քաշեց թաշկինակը, և ես տեսա, որ [illegible]ն արյունոտվեց։ Քարացա։

— Ձեզ ի՞նչ պատահեց,— բղավեց Ռուդոլֆին։

— Մեխ էր,— պատասխանեց երիտասարդը։

— Դե, ես գնացի,— ասացի շոր-շոր, ջանալով չնայել երիտասարդին։

— Պրակները վերցրեք։

Ես վերցրեցի հեղինակային օրինակների կապոցը, սեղմեցի Ռուդոլֆիի ձեռքը, գլխով արեցի երիտասարդին,— ընդ որում նա, թաշկինակը այտին սեղմած, ցած գցեց ամսագիրն ու ձեռնափայտը,— ետ-ետ գնացի դեպի դուռը, արմունկով կպա սեղանին ու դուրս եկա։

Ձյուն էր գալիս, տոնածառի խոշոր ձյուն։

Հարկ չկա նկարագրել, թե ինչպես ամբողջ գիշեր նստեցի գրքի վրա, վեպը կարդալով տարբեր տեղերից։ Ուշագրավ է, որ վեպը մերթ դուր էր գալիս, ապա իսկույն զարշելի էր թվում։ Լուսադեմին սոսկում էի նրանից։

Անմոռաց են հաջորդ օրվա դեպքերը։ Առավոտյան ինձ մոտ եկավ հաջողությամբ կողոպտված ընկերս, որին նվիրեցի մի օրինակ, իսկ երեկոյան գնացի երեկույթի, որ մի խումբ գրողներ էին կազմակերպել կարևորագույն իրադարձության առթիվ՝ արտասահմանից բարեհաջող ժամանել էր նշանավոր գրող Իզմայիլ Ալեքսանդրովիչ Բոնդարևսկին։ Հանդիսությունը բազմապատկվել էր նաև նրանով, որ ենթադրվում էր միաժամանակ հարգանք մատուցել մեկ ուրիշ նշանավոր գրողի՝ Չինաստան կատարած ուղևորությունից վերադարձած Եգոր Ագապյոնովին։

Մեծ հուզմունքի մեջ էի թե՛ հագնվելիս, թե՛ այդ երեկույթին գնալիս։ Այսպես թե այնպես, ինձ համար դա այն նոր աշխարհն էր, դեպի ուր ձգտում էի։ Այդ աշխարհը պիտի բացվեր իմ առաջ, ըստ որում ամենալավագույն կողմով՝ երեկույթին պիտի ներկա լինեին գրականության առաջնակարգ ներկայացուցիչները, գրականության սերուցքն՝ ամբողջությամբ։

Եվ իրոք, երբ մտա բնակարան, բերկրալի ոգևորություն էի ապրում։

Աչքովս ընկած առաջին մարդը երեկվա նույն երիտասարդն էր, որ ականջը պատռել էր մեխով։ Ես ճանաչեցի նրան...

Ինձ տեսնելով՝ ուրախացավ, ասես հարազատը լիներ և ևր-

կար սեղմում էր ձեռքս, ավելացնելով, որ ամբողջ գիշեր կարդացել է վեպս և որ գործը սկսել է հավանել։

— Ես նույնպես ամբողջ գիշեր կարդացել եմ,— ասացի նրան,— բայց այլևս չեմ հավանում։

Ջերմ զրույցի բռնվեցինք, ընդ որում երիտասարդն ինձ հայտնեց, որ դոնդողով թառափ են տալու, ընդհանրապես ուրախ էր ու հուզված։

Շուրջս նայեցի՝ Նոր աշխարհն ինձ ներս էր թողնում, և այդ աշխարհը դուր էր գալիս։ Հսկայական բնակարան էր, սեղանի շուրջ քսանհինգ սպասք կար դրված։ Բյուրեղապակու մեջ կրակներ էին թռչկոտում, անգամ սև խավիարի մեջ կայծեր էին շողշողում։ Կանաչ, թարմ վարունգները հիմարավուն ուրախ մտքեր էին առաջացնում ինչ-որ դաշտահանդեսների, չգիտես ինչու փառքի և այլ բաների մասին։ Տեղնուտեղը ինձ ծանոթացրին անչափ հայտնի մի հեղինակի՝ Լեսոսեկովի և նովելներ գրող Տունսկու հետ։ Տիկնայք քիչ էին, բայց համենայն դեպս կային։

Լիկոսպաստովը խոնարհ ու հեզ էր, և ես մի տեսակ իսկույն զգացի, որ նա մյուսներից մեկ աստիճան ցած կլինի, որ անգամ սկսնակ, խարտիշահեր Լեսոսեկովի հետ չի կարելի նրան համեմատել, էլ չասենք, իհարկե, Ագապյոնովի կամ Իզմայիլ Ալեքսանդրովիչի մասին։

Լիկոսպաստովը մարդկանց միջով մոտեցավ ինձ, մենք ողջույններ փոխանակեցինք։

— Է՛, ինչ արած,— չգիտես ինչու հոգոց հանելով, ասաց Լիկոսպաստովը,— շնորհավորում եմ։ Ի սրտե շնորհավորում եմ։ Եվ ճիշտն ասեմ, ճարպի՛կն ես, ախպերս։ Ձեռքս կտրել կտայի, որ քո վեպը տպագրել չի կարելի, ուղղակի անհնար է։ Խելքիս չի պառկում, թե Ռուդոլֆին ոնց ես հաջողացրել։ Բայց կանխազգում եմ, որ հեռուն կգնաս։ Նայողն էլ կկարծի, թե ինչ սուսիկ-փուսիկ մարդ է... Բայց աստված հեռու տանի սուսիկ...

Լիկոսպաստովի շնորհավորանքներն այստեղ ընդհատվեցին շքամուտքից լսվող բարձր զանգերով, և տանտիրոջ պարտականությունները կատարող քննադատ Կոնկինը (այդ ամենը կատարվում էր նրա բնակարանում) բացականչեց. «Նա՛ է»։

Եվ իրոք, Իզմայիլ Ալեքսանդրովիչն էր։ Նախասենյակում լսվեց մի հնչեղ ձայն, ապա՝ պաչպչոցներ, և սեղանատուն մտավ փոքրահասակ մի քաղաքացի, ցելուլոիդե օձիքով, բաճկոնով։

Այդ մարդը շփոթված էր. հեզ ու քաղաքավարի և, չգիտես ինչու, փոխանակ նախասենյակում թողնելու, ձեռքում էր պահել թավշյա բոլորքով և քաղաքացիական կլոր նշանից մնացած փոշոտ հետքով գլխարկը։

«Սա ի՞նչ բան է, այստեղ մի շփոթություն կա...»— մտածեցի ես. ներս եկած մարդու տեսքը բոլորովին չէր բռնում առողջ քրքիջին և «կարկանդա՞կ» բառին, որ լսվեց նախասենյակից։

Պարզվեց, որ շփոթություն էր։ Նրանից հետո, քնքշությամբ գրկած հյուրի մեջքը, ներս ընկավ բարձրահասակ, ամրակազմ ու գեղեցկադեմ մի տղամարդ, խուճուճ ու հարդարված բացգույն մորուքով, սանրված գանգուրներով։

Ներկա գտնվող արձակագիր Ցիպլկովը, ում մասին Ռուդոլֆին ականջիս ասել էր, թե սաստիկ առաջադիմում է, հիանալի էր հագնված (ընդհանրապես բոլորն էին լավ հագնված), բայց Ցիպլկովի կոստյումը համեմատել անգամ չէր կարելի Իզմայիլ Ալեքսանդրովիչի հագածի հետ։ Բարձրորակ կտորից և փարիզյան առաջնակարգ դերձակի կարած դարչնագույն կոստյումը պիրկ գրկում էր Իզմայիլ Ալեքսանդրովիչի սլացիկ, թեև փոքրինչ գեր կազմվածքը։ Օսլայած սպիտակեղեն, լաքած կոշիկներ, մեղեսիկե ճարմանդներ։ Մաքուր, սպիտակ, թարմ, պայծառ, ուրախ, պարզ ու հասարակ էր Իզմայիլ Ալեքսանդրովիչը։ Նրա ատամները փայլեցին և, մի հայացքով ընդգրկելով խնջույքի սեղանը, նա բացականչեց.

— Հա՛։ Սատանե՛ք։

Եվ տեղնուտեղը մի թեթևակի ծիծաղ պոկվեց, ծափեր լսվեցին ու համբույրներ։ Ոմանց ձեռքով ողջունեց Իզմայիլ Ալեքսանդրովիչը, ոմանց հետ համբուրվեց խաչաձև, ոմանց առջև էլ կատակով ետ ընկրկեց, դեմքը ծածկելով սպիտակ ափով, ասես կուրացավ արևից, ընդ որում փռթկացրեց։

Հավանաբար ուրիշի տեղ դնելով, ինձ երեք անգամ համբուրեց, և Իզմայիլ Ալեքսանդրովիչից կոնյակի, օդըկոլոնի և սիգարի հոտ եկավ։

— Բակլաժանո՜վ,— բացականչեց Իզմայիլ Ալեքսանդրովիչը, մատնացույց անելով առաջինը ներս մտածին։— Ներկայացնում եմ։ Բակլաժանովն իմ ընկերն է։

Բակլաժանովը ժպտաց տանջահար և օտար, մեծ հասարա-

կությունից շփոթված, գլխարկը կախից ձեռքին էլեկտրալամպ բռնած դիցուհու շոկոլադագույն արձանիկից։

— Ինձ հետ քարշ տվեցի բերեցի,— շարունակեց Իզմայիլ Ալեքսանդրովիչը,— տանը նստա՞ծ ինչ պիտի աներ։ Ներկայացնում եմ. հրաշալի մարդ է և մեծագույն բազմագիտակ։ Եվ հիշեցեք իմ խոսքը՝ ամենաուշը, մի տարի անց բոլորիս գրպանն է դնելու։ Ա՛յ սատանա, էդ գլխա՞րկդ ինչու դրանից կախեցիր։ Բակլաժանո՞վ։

Բակլաժանովն այրվում էր ամոթից և արդեն ուզում էր ծանոթանալ, բայց բան չստացվեց, որովհետև սկիզբ առավ տեղավորման շրջապտույտը և արդեն նստոտողների արանքներով սահեց-անցավ փայլուն, փումփուշ կուլեբյական*։

Միանգամից համերաշխ, ուրախ ու կայտառ խնջույք սկսվեց։

— Կարկանդակը համը հանեց,— լսեցի Իզմայիլ Ալեքսանդրովիչի ձայնը։— Բակլաժանով, ախր ինչի՞ կարկանդակ կերանք իրար հետ։

Բյուրեղապակու զրնգոցն ականջ էր շոյում, թվում էր, թե ջահի լույսերն ավելացրեցին։ Երրորդ բաժակից հետո բոլորի հայացքն ուղղվեց Իզմայիլ Ալեքսանդրովիչի կողմը։ Խնդրանքներ հնչեցին. «Փարիզի մասի՛ն։ Փարիզի մասի՛ն»։

— Է՛, օրինակ, եղանք ավտոմեքենաների ցուցահանդեսում,— պատմում էր Իզմայիլ Ալեքսանդրովիչը,— բացումը, ամեն բան՝ տեղը տեղին, մինիստրը, ժուռնալիստներ, ճառեր... ժուռնալիստների մեջ կանգնած էր էդ խաբեբան, Սաշկա Կոնդյուկովը... Դե, ֆրանսիացին, իհարկե, ճառ էր ասում... վռազ-վռազ սարքած... Բնական է, շամպայն։ Նայեմ, տեսնեմ, Կոնդյուկովս թշերն ուռեցրել է ու հազիվ էինք աչք թարթել, սկսեց փսխել։ Ձորս կողմը տիկիններ են, մինիստրը։ Իսկ սա, էս շան որդին... Թե ինչ էր աչքին երևացել, մինչև հիմա էլ չեմ կարողանում հասկանալ։ Ահագին խայտառակություն էր։ Մինիստրն, իհարկե, ձևացրեց, թե ոչինչ չի նկատում, բայց էլ չնկատե՞լ մնաց... Ֆրակը, ցիլինդրը, շալվարը, հազար ֆրանկ արժենան... Բոլորը՝ ոտից գլուխ... Է՛, դուրս տարան, ջուր խմացրին, մի կողմի վրա ճամփեցին...

— Էլի՛։ Էլի՛,— թղավում էին սեղանակիցները։

Այդ ժամանակ արդեն սպիտակ գոգնոցով սպասուհին թա-

---

* Կերակրատեսակ

*ռափ էր մատուցում։ Ջնգղնգոցն ուժեղացավ, արդեն ձայներ լին լսվում։ Բայց ես անչափ շատ էի ուզում իմանալ Փարիզի մասին, և զնգզնգոցի, չխկչխկոցի ու բացականչությունների միջից որսում էի Իզմայիլ Ալեքսանդրովիչի պատմածները։*

*— Բակլաժանո՞վ։ Ինչու՞ չես ուտում...*

*— Էլի՜, խնդրու՜մ ենք,— բղավում էր երիտասարդը, ծափ զարկելով։*

*— Հետո՞ ինչ եղավ։*

*— Է՜, հետո էդ երկու սրիկաները դեմ-դիմաց են գալիս Շանզելիզեում, քիթ-քթի։ Տեսարա՜ն։ Նա չի էլ հասցնում ուշքի գալ, էս սրիկա կատկինը վերցնի ու թքի ուղիղ դրա ռեխին...*

*— Ա՜յ-յա՜յ-յա՜յ։*

*— Այո... Բակլաժանո՜վ։ Մի քնի, սատանի մեկը... էդպիսի բաներ, և ջղայնությունից դա էլ, կ-կատաղածի մեկն է, վրիպում է ու թքում մի տիկնոջ, բոլորովին անծանոթ տիկնոջ գլխարկին։*

*— Շանզելիզեու՞մ։*

*— Բա՜ն ասացիր։ Էնտեղ դա սովորական է։ Իսկ էդ կնոջ մենակ գլխարկը երեք հազար ֆրանկ արժի։ Դե, իհարկե, մի պարոն ձեռնափայտով՝ դրա մռթին... Մի խայտառակ սկանդալ։*

*Այդ ժամանակ անկյունում ինչ-որ բան տրաքեց, և դեղին աբրաուն լույս տվեց իմ դիմաց, նեղլիկ բաժակի մեջ։ Հիշում եմ, խմում էինք Իզմայիլ Ալեքսանդրովիչի կենացը։*

*Ու կրկին լսեցի Փարիզի մասին։*

*— Առանց շփոթվելու դա հարցնում է նրան. «Ինչքա՞ն»։ Սա էլ՝ խ-խարդա՜խ,— Իզմայիլ Ալեքսանդրովիչը նույնիսկ կկոցեց աչքերը։— «Ութ հազար»՝ ասում է։ Նա էլ, թե «Ստացեք»։ Ու հանում է ձեռքը, դրան էն բանից է ցույց տալիս։*

*— Գրանդ-օպերայու՞մ։*

*— Բա՜ն ասացիր։ Թքել է նա Գրանդ-օպերայի վրա։ Էդտեղ էլ երկու մինիստր, երկրորդ կարգում նստած։*

*— Իսկ նա՞, նա՞ ինչ,— քրքջալով հարցրեց ինչ-որ մեկը։*

*— Իհարկե, մեր ուշունց տվեց։*

*— Տե՜ր աստված։*

*— Է, երկուսին էլ դուրս տարան, էնտեղ դա սովորական բան է...*

*Ննջույքը թեժացավ։ Սեղանի վրա արդեն լողում, դարսդարսվում էր ծուխը։ Արդեն ոտքիս տակ մի փափուկ ու լպրծուն բան*

շոշափեցի և կռանալով տեսա, որ սաղմոնի կտոր է, իսկ թե ինչպես էր ընկել ոտքի տակ՝ չիմացա։ Քրքիչը խլացնում էր Իզմայիլ Ալեքսանդրովիչի բառերը, և փարիզյան հետագա ապշեցուցիչ պատմությունները ինձ անհայտ մնացին։

Չէի հասցրել, ինչպես հարկն է, խորհել արտասահմանյան կյանքի տարօրինակությունների վրա, երբ զանգն ազդարարեց Եգոր Ագապյոնովի ժամանումը։ Արդեն խառնիխուռն վիճակ էր։ Հարևան սենյակից դաշնամուրի ձայն էր լսվում, մեկը մեղմ ֆոքստրոտ էր նվագում, և ես տեսա, թե ինչպես է դոփդոփում իմ երիտասարդը, իրեն սեղմած մի տիկնոջ։

Եգորը Ագապյոնովը ներս մտավ աշխույժ, ներս մտավ թափով, ու նրա ետևից մի չինացի եկավ՝ փոքրիկ, չոր-չոր, դեղնավուն, շրջանակը սև ակնոցով։ Չինացուց հետո՝ դեղին հագուստով մի տիկին և ամրակազմ, մորուքավոր մի տղամարդ, Վասիլի Պետրովիչ անունով։

—Իզմաշան էստե՞ղ է,— բացականչեց Եգորը և փութաց Իզմայիլ Ալեքսանդրովիչի կողմը։

Վերջինս ցնցվեց հրճվագին ծիծաղից, բղավեց.

— Հա՛։ Եգո՛ր...— և մորուքն իջեցրեց Ագապյոնովի ուսին։

Չինացին փաղաքուշ ժպտում էր բոլորին, բայց ոչ մի հնչյուն չարձակեց, ինչպես և հետագայում չարձակեց։

— Ծանոթացեք չինացի ընկերոջս հետ,— գոռաց Եգորը, Իզմայիլ Ալեքսանդրովիչի հետ պաչպչվելուց հետո։

Բայց գնալով աղմուկը շատացավ, խառնվեցին իրար։ Հիշում եմ, պարում էին սենյակում, դորգի վրա, դրա համար էլ անհարմար էր։ Բաժակով սուրճը դրված էր գրասեղանին։ Վասիլի Պետրովիչը կոնյակ էր խմում։ Տեսա բազմոցի մեջ քնած Բակլաժանովին։ Շատ թունդ ծխել էին։ Ու մի տեսակ պարզ դարձավ, որ տուն գնալու ժամանակն է արդեն։

Եվ բոլորովին անսպասելի խոսքի բռնվեցի Ագապյոնովի հետ։ Ես նկատեցի, որ հենց բանը մոտեցավ գիշերվա ժամը երեքին, նա սկսեց անհանգստության ինչ-որ նշաններ ցույց տալ։ Եվ մի քանիսի հետ խոսակցություն սկսեց, ըստ որում, որքան հասկացա, ծուխ ու մշուշի մեջ հաստատ մերժումներ ստացավ։ Գրասեղանի մոտ, բազմոցի մեջ ընկղմված սուրճ էի խմում, չհասկանալով, թե հոգիս ինչու է կսկծում և ինչու Փարիզը մեկեն մի տեսակ տխուր երևաց, այնպես որ հանկարծ այլևս չուզեցա այդ քաղաքում լինել։

Այդ ժամանակ վրաս խոնարհվեց մի լայն դեմք. հսկայական ակնոցով։ Ագապյոնովն էր։

— Մակսուդո՞վ,— հարցրեց նա։

— Այո։

— Լսել եմ, լսել եմ,— ասաց Ագապյոնովը։— Ռուդոլֆին է ասել։ Ասում են, վե՞պ եք տպագրել։

— Այո։

— Ասում են, թունդ վեպ է։ Ո՛խ, Մակսուդով,— հանկարծ շշնջաց Ագապյոնովը աչքով անելով։— Ուշադրություն դարձրեք այն պերսոնաժին... Տեսնու՞մ եք։

— Մորուքո՞վը։

— Այո, այո, աներձագս է։

— Գրո՞ղ է,— հարցրեցի ես՝ զննելով Վասիլի Պետրովիչին, որը, տագնապալի-քնքուշ ժպիտը դեմքին, կոնյակ էր խմում։

— Ո՛չ։ Կոոպերատոր է, Տետյուշիից... Մակսուդով, ժամանակ մի կորցրեք,— շշնջում էր Ագապյոնովը,— կփոշմանեք։ Այնպիսի ապշեցուցիչ տի՛պ է որ։ Ձեր գործին անհրաժեշտ մարդ է։ Մի գիշերվա ընթացքում կարող եք նրանից մի տասը պատմըվածք քամել և յուրաքանչյուրը կարգին գնով վաճառել։ Իխտիոզա՛վր է։ Բրոնզե դար։ Ապշեցուցիչ պատմություններ է անում։ Պատկերացնու՞մ եք, թե ինչեր է տեսել իր Տետյուշիում։ Բռնեք նրան, թե չէ ուրիշները կխլեն ու կաղտոտեն։

Վասիլի Պետրովիչը, զգալով, որ խոսքն իր մասին է, ժպտաց առավել տագնապալի ու խմեց։

— Ամենալավագույնը... Ա՛յ քեզ միտք,— խռխռացնում էր Ագապյոնովը։— Հիմա կծանոթացնեմ ձեզ... Դուք ամուրի՞ եք,— տագնապով հարցրեց նա։

— Ամուրի եմ...— ասացի ես, աչքերս չռելով Ագապյոնովի վրա։

Նրա դեմքին բերկրանք երևաց։

— Հիանալի է։ Կծանոթանաք ու նրան կտանեք ձեր տուն, գիշերելու։ Ա՛յ քեզ միտք։ Որևիցե բազմոց ունե՞ք։ Բազմոցին կքնի, բան էլ չի պատահի։ Իսկ երկու օր հետո կգնա։

Ցփոթմունքից պատասխանելու ոչինչ չգտա, բացի մի բանից.

— Ես մի՛ բազմոց ունեմ...

— Լա՞յն է,— տագնապով հարցրեց Ագապյոնովը։

Բայց [illegible] խելքս գլուխս էր եկել։ Եվ ճիշտ ժամա-

նակին, քանի որ Վասիլի Պետրովիչն արդեն սկսել էր շուտամուտ գալ, ծանոթանալու անհնազանդ պատրաստակամությամբ, իսկ Ագապյոնովն սկսել էր ձեռքից քաշել։

— Ներեցեք,— ասացի ես,— ցավոք սրտի, ոչ մի դեպքում չեմ կարող նրան վերցնել։ Ես ապրում եմ միջանցիկ սենյակում, ուրիշի բնակարանում, իսկ վարագույրի ետև քնում են տանտիրուհու երեխաները (ուզում էի ավելացնել, որ նրանք քութեշով հիվանդ են, հետո որոշեցի, որ դա ստի ավելորդ կուտակում կլինի, բայց և այնպես ավելացրի)... և նրանք քութեշով հիվանդ են։

— Վասիլի՛,— բղավեց Ագապյոնովը,— քութեշով հիվանդացե՞լ ես։

Կյանքում քանիցս ինձ վիճակվել է «ինտելիգենտ» բառը լսել իմ հասցեին։ Չեմ վիճում, գուցեև վաստակել եմ այդ տխուր կոչումը։ Բայց այստեղ, այնուամենայնիվ, հավաքեցի բոլոր ուժերս, և դեռ չէր հասցրել Վասիլի Պետրովիչը աղերսող ժպիտով պատասխանել «հիվան...», երբ ես հաստատ ասացի Ագապյոնովին.

— Կտրականապես հրաժարվում եմ հետս վերցնել նրան։ Չեմ կարող։

— Մի կերպ, հը՞,— կամացուկ շշնջաց Ագապյոնովը։

— Չեմ կարող։

Ագապյոնովը կախեց գլուխը, ծամծմեց շրթունքները։

— Բայց ներեցեք, չէ՞ որ նա ձե՛զ մոտ է եկել։ Որտե՞ղ է իջևանել։

— Ինձ մոտ, էլ որտե՞ղ, գրողը տանի դրան,— տրտմագին ասաց Ագապյոնովը։

— Է՞ հետո՞...

— Զոքանչս է քրոջ հետ եկել այսօր, հասկացեք, սիրելի բարեկամ, այդ չինացին էլ մի կողմից... Ո՞ր սատանի քամին է բերում այս աներձագներին,— հանկարծ ավելացրեց Ագապյոնովը։— Մնայիր Տեղյուշիում, էլի՛...

Ու Ագապյոնովը հեռացավ ինձնից։

Չգիտեմ ինչու, մի տարտամ տագնապ իջավ վրաս և, Կոնկինից բացի ոչ ոքի հրաժեշտ չտալով, թողեցի բնակարանը։

## ԳԼՈՒԽ VI

# ԱՂԵՏԸ

*Այո, այս գլուխը կարծես թե ամենակարճը կլինի։ Լուսադեմին զգացի, որ մեջքովս դող անցավ։ Հետո կրկնվեց։ Կծկվեցի, գլուխս քաշեցի վերմակի տակ, մի քիչ թեթևացա, բայց միայն մի րոպե։ Հանկարծ շոգեցի, կրկին մրսեցի այն աստիճան, որ ատամ ատամի էր գալիս։ Ջերմաչափ ունեի։ 38,8 ցույց տվեց։ Ուրեմն՝ հիվանդացել էի։*

*Արդեն առավոտյան կողմ փորձեցի քնել և մինչև հիմա հիշում եմ այդ առավոտը։ Աչքերս փակում էի թե չէ, վրաս էր խոնարհվում ակնոցավոր մի դեմք ու փնթփնթում. «Տա՞ր», իսկ ես մի բան էի կրկնում. «Չէ, չե՞մ տանի»։ Վասիլի Պետրովիչը ոչ այն է երազիս էր գալիս, ոչ այն է. իրոք, տեղավորվել էր իմ սենյակում, ըստ որում, սարսափելին այն էր, որ կոնյակը լցնում էր ի՛ր բաժակը, բայց խմում էի ես։ Փարիզը բոլորովին անտանելի դարձավ։ Գրանդ-օպերան, և այնտեղ ինչ-որ մեկն այն բանից է ցույց տալիս։ Մատները ծալում, ցույց է տալիս ու ձեռքն իջեցնում նորից։ Ծալում է, ցույց տալիս...*

*— Ես ճշմարտությունն եմ ուզում ասել,— մրթմրթացի ես, երբ արդեն գզլոտ ու անլվա վարագույրից այն կողմ տարածվեց ցերեկը,— կատարյալ ճշմարտությունը։ Ես երեկ տեսա նոր աշխարհը, և այդ աշխարհը գարշելի էր։ Ես չեմ գնա այնտեղ։ Դա օտար աշխարհ է։ Նողկալի աշխարհ է։ Խիստ գաղտնի պիտի մնա սա, սու՛սս։*

*Շրթունքներս արտասովոր շուտ չորացան։ Հայտնի չէ, թե ինչու կողքս դրեցի ամսագրի պրակը, պետք է կարծել՝ կարդալու նպատակով։ Բայց ոչինչ չկարդացի։ Ցանկացա մի անգամ էլ ջերմաչափ դնել, բայց չդրեցի։ Ջերմաչափը կողքիս աթոռին էր, բայց չեմ իմանում ինչու պիտի գնայի ուրիշ տեղերից բերելու։ Հետո լիովին ինքնամոռաց վիճակի մեջ ընկա։ «Նավագնացության» աշխատակցի դեմքը հիշում եմ, իսկ բժշկի դեմքը տարրալուծվել է։ Մի խոսքով, գրիպ էր։ Մի քանի օր ջերմի մեջ տապակվեցի, հետո տաքությունս իջավ։ Դադարեցի տեսնել Շանզելիզեն, և ոչ ոք չէր թքում տիկնոջ գլխարկին, Փարիզն էլ չէր ձգվում հարյուր վերստի վրա։*

*Ուտել ուզեցա, և բարի հարևանուհիս՝ վարպետի կինը, մասա-*

ջուր եփեց ինձ համար։ Մսաջուր խմեցի կոթը կոտրած գավաթից, փորձեցի կարդալ սեփական ստեղծագործությունս, բայց մի տասը տող կարդացի ու թողեցի ողջ գործը։

Մոտավորապես տասներկուերորդ օրն առողջ էի։ Ինձ զարմացրեց, որ Ռուդոլֆին չէր եկել, թեև երկտող էի գրել նրան, որ մոտս գա։

Տասներկուերորդ օրը դուրս եկա տնից, գնացի «Բժշկական տուփերի արհեստանոց» և դռան վրա մի մեծ կողպեք տեսա։ Դրանից հետո նստեցի տրամվայ և երկար ճամփա կտրեցի։ Թուլությունից բռնել էի շրջանակն ու արտաշնչում էի սառած ապակու վրա։ Եկա այնտեղ, ուր ապրում էր Ռուդոլֆին։ Զանգ տվեցի։ Չբացեցին։ Էլի զանգ տվեցի։ Մի ծերուկ բաց արեց դուռն ու վրաս նայեց զզվանքով։

— Ռուդոլֆին տա՞նն է։

Ծերուկը նայեց իր հողաթափերի քթերին ու պատասխանեց.

— Չկա։

Իմ հարցերին, թե ուր է գնացել, երբ կգա, նույնիսկ անհեթեթ այն հարցին, թե «Արհեստանոցի» դռանն ինչու է կողպեք կախած, ծերուկը մի տեսակ տատամսում էր, տեղեկանալով, թե ով եմ, ինչ մարդ եմ։ Ամեն ինչ բացատրեցի, անգամ վեպի մասին պատմեցի։ Այն ժամանակ ծերուկն ասաց.

— Մի շաբաթ առաջ նա գնաց Ամերիկա։

Ինձ սպանեք, թե գիտեմ՝ ուր չքացավ Ռուդոլֆին և ինչու անհետացավ։ Ու՞ր թռավ ամսագիրը, ի՞նչ կատարվեց «Արհեստանոցի» հետ, ի՞նչ Ամերիկա, ինչպե՞ս գնաց, չգիտեմ և երբեք չեմ իմանա։ Ով էր այդ ծերուկը, սատանան գիտե։

Գրիպից առաջացած թուլության ազդեցության տակ իմ սմքած ուղեղում նույնիսկ միտք ծագեց, թե արդյո՞ք այս ամենը երազում չեմ տեսել, այսինքն՝ թե՛ իրեն՝ Ռուդոլֆիին, թե՛ տպագրված վեպը, թե՛ Շանզելիզեն, թե՛ Վասիլի Պետրովիչին, թե՛ մեխով պատռված ականջը։ Բայց տուն դառնալուն պես սենյակումս գտա ինն երկնագույն պրակ։ Տպագրվել էր վեպը։ Տպագրվել էր։ Ահա՛։

Ցավոք սրտի, ամսագրում տպագրված հեղինակներից ոչ որի չէի ճանաչում։ Այնպես որ ոչ մեկից չէի կարող տեղեկանալ Ռուդոլֆիի մասին։

Մի անգամ էլ «Արհեստանոց» գնալով համոզվեցի, որ այն-

տեղ ոչ մի արհեստանոց չկա, այլ մի սրճարան է՝ մոմլաթապատ սեղանիկներով։

Չէ, դուք ինձ բացատրեք, թե ուր կորան մի քանի հարյուր պրակները։ Որտե՞ղ են։

Նման հանելուկային բան, ինչպիսին այս վեպի և Ռուդոլֆի հետ կապված դեպքն է, կյանքումս երբեք չի պատահել։

ԳԼՈՒԽ VII

Տարօրինակ այդ հանգամանքներում ամենախելացին կլիներ պարզապես մոռանալ այդ ամենը և այլևս չմտածել թե՛ Ռուդոլֆի, թե՛ նրա հետ անհետացած ամսագրի պրակների մասին։ Այդպես էլ արեցի։

Թեև դա ինձ չէր ազատում ապրելը շարունակելու դաժան անհրաժեշտությունից։ Ստուգեցի իմ անցյալը։

— Այսպիսով,— ասացի ինքս ինձ, մարտյան բուք ու բորանին նավթավառի մոտ նստած,— ես եղա հետևյալ աշխարհներում։

Առաջին աշխարհը՝ համալսարանական փորձասենյակում, որտեղից հիշում եմ արտածծիչ պահարանը և փորձանոթները՝ ամրակալների վրա։ Այդ աշխարհը ես թողեցի քաղաքացիական կռիվների ժամանակ։ Չվիճենք, թեթևամիտ գտնվեցի՞, թե՝ ոչ։ Անհավանական արկածներից հետո (թեև, ինչու՞ անհավանական՝ քաղաքացիական կռիվների ժամանակ ո՞վ չի ունեցել անհավանական արկածներ), մի խոսքով, դրանից հետո ես հայտնըվեցի «Նավագնացությունում»։ Ի՞նչ պատճառներից դրդված։ Չթաքցնե՛նք։ Գրող դառնալու միտք էի փայփայում։ Հետո՞ ինչ։ Թողեցի «Նավագնացության» աշխարհը ևս։ Եվ, ճշմարիտն ասած, իմ դիմաց բացվեց աշխարհը, դեպի ուր ձգտում էի, և ա՜յ քեզ փորձանք, իսկույն անտանելի թվաց։ Հենց պատկերացնում եմ Փարիզը, ջղաձգություն է անցնում մարմնովս և չեմ կարողանում դռնից ներս մտնել։ Բոլորի մեղավորն այդ գրողի տարած Վասիլի Պետրովիչն էր։ Նստեր-մնար Տետյուշիում, էլի՜... Եվ որքան էլ տաղանդավոր է Իզմայիլ Ալեքսանդրովիչը, բայց դե շա՜տ նողկալի է Փարիզում։ Այսպես ուրեմն, ստացվեց, որ ես մնացի ինչ-որ մի դատարկության մե՞ջ։ Ճիշտ այդպես։

Է՜, ինչ կա որ, նստիր ու երկրորդ վեպը հորինիր, եթե այդ

գործին ես կպել, երեկույթների էլ կարող ես չգնալ։ Բանը երեկույթները չեն, անհամությունը հենց այն էր, որ բացարձակապես չգիտեի, թե ինչի մասին պետք է լինի այդ երկրորդ վեպը։ Ի՞նչ հայտնել մարդկությանը։ Ցավն էլ հենց դա էր։

Իմիջիայլոց, վեպի մասին։ Նայենք ճշմարտության աչքերին։ Վեպը ոչ ոք չէր կարդացել։ Չէր էլ կարող կարդալ, քանի որ անհետացել էր Ռուդոլֆին, հաստատապես չհասցնելով տարածել պրակը։ Ընկերս, ում մի օրինակ նվիրել էի, նույնպես չէր կարդացել։ Հավաստացնում եմ ձեզ։

Այո, ի դեպ, ես վստահ եմ, որ այս տողերը կարդալով, շատերն ինձ ինտելիգենտ կկոչեն ու նևրաստենիկ։ Առաջինի շուրջ չեմ վիճում, իսկ երկրորդի առթիվ լրջորեն զգուշացնում եմ, որ դա մոլորություն է։ Նևրաստենիայի նշույլ անգամ չունեմ։ Եվ ընդհանրապես, նախքան այդ խոսքը շպրտելը, պիտի ստույգ իմանալ, թե ինչ բան է նևրաստենիան, նաև՝ լսել Իզմայիլ Ալեքսանդրովիչի պատմածները։ Բայց սա՝ մի կողմ։ Ամենից առաջ պետք էր ապրել, իսկ դրա համար պետք էր դրամ վաստակել։

Այսպիսով, վերջ տալով մարտյան շաղակրատությանը, գնացի վաստակելու։ Կյանքն այստեղ բռնեց իմ օձիքից ու որպես անառակ որդի կրկին ետ բերեց «Նավագնացություն»։ Քարտուղարին ասացի, որ վեպ եմ գրել։ Դա նրան չհուզեց։ Մի խոսքով, պայմանավորվեցի, որ ամսական չորս ակնարկ պիտի գրեմ, դրա դիմաց ստանալով օրենքին համապատասխան վարձատրություն։ Այսպիսով, նյութական որոշ հիմք գծագրվում էր։ Պլանս այն էր, որ հնարավորին չափ շուտ թոթափեի այդ ակնարկների բեռը և գիշերները նորից գրեի։

Առաջին մասը կատարեցի, իսկ երկրորդից սատանան գիտե, թե ինչ ստացվեց։ Ամենից առաջ գնացի գրախանութները և ժամանակակիցների ստեղծագործություններ գնեցի։ Ուզում էի իմանալ, թե ինչ են գրում, ինչպես են գրում, որն է այդ արհեստի խորհրդավոր գաղտնիքը։

Գնելիս միջոցներ չխնայեցի, վերցնելով շուկայում հենց նոր երևան եկած ամենալավագույնը։ Առաջին հերթին ձեռք բերեցի Իզմայիլ Ալեքսանդրովիչի գործերը, Ագապյոնովի գրքույկը, Լեսոսեկովի երկու վեպը, Ֆլավիան Ֆիալկովի պատմըվածքների երկու ժողովածուն և ուրիշ շատ բաներ։ Ամենից առաջ, իհարկե, վրա պրծա Իզմայիլ Ալեքսանդրովիչի գրածներին։ Տհաճ կանխազգացումը խայթեց ինձ, կազմին նայելուն

պես։ Գրքույկը կոչվում էր «Փարիզյան կամիթներ»։ Առաջին կամիթից մինչև վերջինը՝ բոլորը ծանոթ դուրս եկան։ Ճանաչեցի և անիծյալ Կոնդյուկովին, ում սիրտը խառնել էր ավտոմեքենաների ցուցահանդեսում, և այն երկուսին, որ կռվել էին Շանզելիզեում (բանից պարզվեց, մեկը Պոմադկինն էր, մյուսը՝ Շերստյաննիկովը), և Գրանդ-օպերայում այն բանը ցույց տվող կովարարին։ Ճշմարտությունը ստիպում է խոստովանել, որ Իզմայիլ Ալեքսանդրովիչը գրում էր անսովոր փայլով և իմ մեջ Փարիզի նկատմամբ ինչ-որ սարսափելի զգացում բուն դրեց։

Ինչպես պարզվեց, Ագապյոնովը հասցրել էր պատմվածքների գրքույկը լույս ընծայել երեկույթից հետո անցած ժամանակամիջոցում՝ «Տետյուշիական հոմմոզ*»։ Դժվար չէր կռահել, որ չէր հաջողվել Վասիլի Պետրովիչին որևէ տեղ գիշերելու ուղարկել, նա մնացել էր Ագապյոնովի մոտ, և վերջինիս էլ վիճակվել էր օգտագործել անօթևան աներձագի պատմությունները։ Ամեն ինչ հասկանալի էր, «հոմմոզ» անհասկանալի բառից բացի։

Երկու անգամ ձեռնարկեցի կարդալ Լեսոսեկովի «Կարապներ» վեպը, երկու անգամ կարդացի մինչև քառասունչորրորդ էջը և սկսեցի կարդալ սկզբից, որովհետև մոռանում էի, թե ինչ է եղել սկզբում։ Դա ինձ լրջորեն վախեցրեց։ Գլխումս մի անճոռնի բան էր կատարվում. ես դադարել կամ դեռևս չէի կարողանում հասկանալ լուրջ գործերը։ Եվ մի կողմ դնելով Լեսոսեկովին, անցա Ֆիալկովին, նույնիսկ Լիկոսպաստովին և այստեղ անակնկալի դեմ առա։ Կարդալով պատմվածքներից մեկը, ուր նկարագրված էր ոմն ժուռնալիստ (պատմվածքը վերնագրված էր՝ «Կենվորն ըստ օրդերի»), ես ճանաչեցի պատառոտված բազմոցը՝ դուրս ցցված զսպանակով, ծծաթուղթը սեղանի վրա... Այլ կերպ ասած, պատմվածքում նկարագրված էի... ես։

Նույն շալվարը, ուսերի մեջ քաշ արած գլուխը և գայլի աչքերը... է՛, մի խոսքով, ես էի։ Բայց երդվում եմ կյանքում ինձ համար ամենաթանկ բաներով՝ անարդարացի եմ նկարագրված։ Ամենևին էլ խորամանկ չեմ, ոչ էլ ագահ, նենգ, խաբեբա, կարիերիստ, և այդ պատմվածքում եղած բարբաջանքի պես բաներ երբեք չեմ ասել։ Լիկոսպաստովի պատմվածքը կարդալուց հետո

---

* Բույսերի հիվանդություն։

անասելի տխուր էի, այդուհանդերձ որոշեցի ավելի խիստ նայել ինքս ինձ կողմնակի աչքերով, և այդ որոշման համար շատ եմ պարտական Լիկոսպաստովին։

Բայց և այնպես, իմ անկատարության առթիվ ունեցած տրտմությունս ու մտածմունքս, ճշմարիտն ասած, ոչինչ էին՝ համեմատած այն սարսափելի գիտակցության, որ ես ոչինչ չքաղեցի ամենալավագույն գրողների գրքույկներից, այսպես ասած, ուղիներ չհայտնաբերեցի, առջևում լույսեր չտեսա և ամեն ինչից զզվեցի։ Ու որդի պես սիրտս սկսեց կրծել վատթարագույն մի միտք, որ ինձնից ոչ մի գրող էլ դուրս չի գա։ Եվ տեղնուտեղը բախվեցի առավել սարսափելի մի մտքի, որ... իսկ եթե ստացվի Լիկոսպաստովի նմա՞ն։ Հանդգնելով, ավելին ասեմ՝ իսկ եթե հանկարծ նույնիսկ Ագապյոնովի նմա՞ն։ Հոմմո՞զ։ Ի՞նչ ասել է հոմմոզ։ Ում են պետք այդ ջաֆրերը։ Տակից գլուխ հիմարություն է, հավատացնում եմ ձեզ։

Ակնարկներից դուրս, բավական ժամանակ էի անցկացնում բազմոցի վրա զանազան գրքույկներ կարդալով, որոնք, ձեռք բերելուն զուգընթաց, դարսում էի ոտքը կոտրած գրադարակի վրա, սեղանին և պարզապես անկյունում։ Սեփական ստեղծագործությանս հետ այսպես վարվեցի. մնացած ինն օրինակները և ձեռագիրը դրեցի սեղանի դարակում, կողպեցի բանալիով և որոշեցի երբեք, այլևս երբեք չանդրադառնալ դրանց։

Մի անգամ ինձ բուքն արթնացրեց։ Մարտը բքառատ էր ու մոլեգնում էր, թեև արդեն՝ վերջին շնչում։ Եվ կրկին, ինչպես այն անգամ, արթնացա արցունքն աչքերիս։ Որքա՜ն թույլ էի, ա՜խ, որքան թույլ։ Ու նորից՝ այդ նույն մարդիկ, և նորից հեռավոր քաղաքը, և դաշնամուրի կողը, և կրակոցները, նաև ձյան վրա տապալված ինչ-որ մեկը։

Այդ մարդիկ ծնվում էին երազներում, ելնում էին երազներից և հաստատապես հիմնավորվում իմ խցում։ Պարզ էր, որ նրանցից բաժանվելն այնքան էլ հեշտ բան չէր։ Բայց ի՞նչ անեի։

Սկզբնական շրջանում պարզապես զրուցում էի նրանց հետ և, այնուամենայնիվ, ստիպված եղա պրակը հանել դարակից։ Այդ ժամանակ ինձ սկսեց թվալ, որ սպիտակ էջից գունավոր ինչ-որ բան է առաջ գալիս։ Ուշադիր զննելով, աչքերս կկոցելով, համոզվեցի, որ դա պատկեր է։ Ավելին, որ այդ պատկերը հարթ չէ, այլ եռաչափ։ Փոքրիկ արկղի պես, որի մեջ, տողերի արանքից է երևում, լույս է վառվում, ու շարժվում են հենց

այն մարդուկները, որոնք նկարագրված են վեպում։ Ի՜նչ հրաշալի խաղ էր դա, և ես քանիցս ափսոսացի, որ կատուն այլևս կենդանի չէ և չկա մեկը, որ ցույց տար, թե ինչպես էջի վրա, փոքրիկ սենյակում մարդիկ են շարժվում։ Համոզված եմ, որ կենդանին կմեկներ թաթն ու կսկսեր ճանկռոտել էջը։ Պատկերացնում եմ, թե ինչ հետաքրքրասիրություն կվառվեր կատվային աչքերում, թաթն ինչպե՜ս կճանկռոտեր տառերը։

Որոշ ժամանակ անց գրքույկի միջի արկղիկն սկսեց հնչել։ Հստակ լսում էի դաշնամուրի հնչյունները։ Ճիշտ է, եթե մեկնումեկին ասեի այդ մասին, հարկ է ենթադրել, որ ինձ խորհուրդ կտային բժշկի դիմել։ Կասեին, թե նվագում են ներքևի հարկում և հնարավոր է նույնիսկ՝ ասեին, թե հատկապես ինչ են նվագում։ Բայց ես ուշադրություն չէի դարձնի այդ խոսքերին։ Ո՜չ, ո՜չ։ Դաշնամուր են նվագում իմ սեղանի վրա, այստե՛ղ է հնչում ստեղների այդ մեղմ ղողանջը։ Բայց դա քիչ է։ Երբ տունը սւսկվում է և ներքևում ամենևին էլ ոչինչ չեն նվագում, ես լսում եմ, թե ինչպես բուք ու բորանի միջով թափանցում է և՛ տրտմագին, և՛ չարասիրտ հարմոնը, իսկ հարմոնին միանում են թե՛ զայրացած, թե՛ տխուր ձայներ ու տնքում են, տնքում։ Օ՜, ոչ։ Հատակի տա՜կ չէ։ Ինչու՞ է հանգչում փոքրիկ սենյակը, էջերի վրա ինչու՞ է ի հայտ գալիս ձմռան իրիկունը Դնեպրի վրա, ինչու՞ են հայտնվում ձիու մռութներ, իսկ դրանց վերևում՝ փափախ դրած մարդկանց դեմքեր։ Ու տեսնում եմ ես սուրսուր թրեր ու լսում եմ հոգեհան սուլոց։

Ահա շնչակտուր վազում է մի մարդուկ։ Ծխախոտի ծխի միջից հետևում եմ նրան, լարում եմ տեսողությունս ու տեսնում. մարդուկի հետևում փայլատակեց կրակոցը, նա, ախ քաշելով, ընկնում է բերանքսիվայր, ասես սուր դանակով դիմացից սրտին խփեցին։ Նա պառկած է անշարժ և գլխից հոսում-տարածվում է մի սև լճակ։ Իսկ վերևում լուսինն է, իսկ հեռվում՝ գյուղի տրտում, կարմրավուն ճրագները։

Ամբողջ կյանքում կարելի էր այդ խաղը խաղալ, նայել էջին... Իսկ ինչպե՞ս հաստատագրել այդ մարդուկներին։ Այնպես, որ այլևս ոչ մի տեղ չգնան։

Եվ մի գիշեր որոշեցի այդ կախարդական արկղիկը նկարագրել։ Ինչպե՞ս նկարագրել։

Շատ պարզ։ Ինչ տեսնում ես՝ գրիր, իսկ ինչ չես տեսնում՝ հարկ չկա գրել։ Ահա՝ պատկերը բոնկվում է, պատկերը գունա-

փորձում էր։ Ինձ դո՞ւր է գալիս Զաքարյանը։ Ուրեմն այսպես. Ես էլ գրում եմ՝ պատկեր առաջին։ Տեսնում եմ՝ երեկո է, վառվում է լամպը, լուսամփոփի ծույքն եմ տեսնում։ Դաշնամուրի վրա բացված են նոտաները։ «Ֆաուստ» են նվագում։ Հանկարծ «Ֆաուստը» դադարում է, բայց կիթառն է սկսում նվագել։ Ո՞վ է նվագում։ Ահա նա, դռնից ներս է մտնում, կիթառը ձեռքին։ Լսում եմ՝ մեղմ երգում է։ Գրում եմ՝ մեղմ երգում է։

Այո, պարզվում է, որ սքանչելի խաղ է։ Պետք չէ գնալ ոչ երեկույթի, ոչ էլ թատրոն է պետք գնալ։

Մի երեք գիշեր զբաղվեցի, խաղալով առաջին պատկերի հետ ու երրորդ գիշերվա ավարտին հասկացա, որ պիես եմ հորինում։

Ապրիլ ամսին, երբ ձյունը բակից անհետացավ, առաջին պատկերը մշակված էր։ Իմ հերոսները թե շարժվում էին, թե քայլում էին, թե խոսում։

Ապրիլի վերջին էլ հենց եկավ Իլչինի նամակը։

Եվ այժմ, երբ արդեն ընթերցողին հայտնի է վեպի պատմությունը, կարող եմ շարունակել այն պահից, երբ հանդիպեցի Իլչինին։

## ԳԼՈՒԽ VIII

## ՈՍԿԵ ՆԺՈՒՅԳԸ

— Այո՛,— խորամանկ ու խորհրդավոր կկոցելով աչքերը, կրկնեց Իլչինը,— ձեր վեպը ես կարդացել եմ։

Աչքերս չորս արած նայում էի իմ զրուցակցին, որի կերպարանքը մերթ թրթռուն պայծառանում էր, մերթ աղոտանում։ Դրսում չռռում էր ջուրը։ Կյանքումս առաջին անգամ ընթերցող էի տեսնում իմ դիմաց։

— Իսկ ինչպե՞ս եք գտել։ Գիտեք ինչ... Պրակը...— նկատի ունեի վեպը։

— Գրիշա Այվազովսկուն ճանաչու՞մ եք։

— Ոչ։

Իլչինը վեր քաշեց հոնքերը, զարմացավ։

— Գրիշան Միաբանների Կոհորտայի գրական բաժնի վարիչն է։

— Ի՞նչ Կոհորտա։

Իլչինն այնքան զարմացավ, որ սպասեց կայծակին՝ ինձ ուշադիր զննելու համար։

Կայծակը թռավ ու մարեց, և Իլչինը շարունակեց։

— Կոհորտան թատրոն է։ Երբե՞ք չեք եղել այնտեղ։

— Ոչ մի թատրոնում էլ չեմ եղել։ Գիտեք, ես վերջերս եմ եկել Մոսկվա։

Ամպրոպի ուժը պակասեց, և օրն սկսեց իր տեղը գալ։ Ես տեսա, որ մի ուրախ զարմանք եմ առաջացնում Իլչինի մեջ։

— Գրիշան խանդավառված էր,— չգիտես ինչու, ավելի խորհրդավոր ասաց Իլչինը,— և պրակն ինձ տվեց։ Հրաշալի վեպ է։

Չիմանալով, թե նման դեպքերում ինչ են անում, գլուխ տվեցի Իլչինին։

— Իսկ գիտե՞ք, ինչ միտք եկավ ուղեղս,— շշնջաց Իլչինը, խորհրդավորությունից կկոցելով ձախ աչքը։— Այդ վեպից դուք պետք է պիես սարքեք։

«Նախասահմանու՛մն ճակատագրի»,— մտածեցի ես ու ասացի.

— Գիտեք, ես արդեն սկսել եմ գրել։

Իլչինն այն աստիճան զարմացավ, որ սկսեց աջ ձեռքով քորել ձախ ականջը և ավելի ուժեղ կկոցել աչքերը։ Նույնիսկ թվում է, թե սկզբում չհավատաց նման զուգադիպությանը, բայց տիրապետեց իրեն։

— Հիանալի է, հիանալի։ Անպայման շարունակեք, ոչ մի վայրկյան կանգ չառնեք։ Միշա Պանինին ճանաչու՞մ եք։

— Ոչ։

— Մեր գրական բաժնի վարիչն է։

— Ը՜հը՛...

Իլչինը շարունակեց. քանի որ ամսագրում տպագրված է վեպի միայն մեկ երրորդը, իսկ շարունակությունն իմանալը ծայր անհրաժեշտություն է, ես պետք է այդ շարունակության ձեռագիրը կարդամ իրեն ու Միշային, ինչպես նաև Եվլամպիա Պետրովնային։ Եվ փորձով համոզված, այլևս չհարցրեց ճանաչու՞մ եմ, թե՝ ոչ, այլ բացատրեց, որ այդ կինը ռեժիսոր է։

Իլչինի բոլոր նախագծումները մեծագույն հուզմունք պատճառեցին ինձ։

Իսկ նա շշնջում էր.

— Դուք պիեսը կդրեք, իսկ մենք կբեմադրենք։ Հիանալի՜ բան կլինի։ Չէ՞։

Կուրծքս ուռչում էր, ես արբեցած էի ցնծակվա ամպրոպից, ինչ-ինչ կանխազգացումներից։ Իսկ Իլչինը խոսում էր.

— Եվ գիտեք՝ ինչեր ասես, որ չեն լինում, հանկարծ հաջողվի ծերուկին էլ կուարել... Հը՞։

Իմանալով, որ ծերուկին ես չեմ ճանաչում, նույնիսկ գլուխն օրորեց ու նրա աչքերի մեջ գրվեց. «Ա՜յ քեզ բնության ղավակ»։

— Իվան Վասիլևի՜չը,— շշնջաց նա։— Իվան Վասիլևի՜չը։ Ինչպե՞ս։ Դուք չե՞ք ճանաչում նրան։ Չե՞ք լսել, որ նա գլխավորում է Անկախ թատրոնը։— Եվ ավելացրեց.— Այ քեզ բա՜ն...

Ամեն ինչ պտույտ տվեց գլխիս մեջ, շրջապատող աշխարհն ինչ-որ բանով հուզում էր ինձ։ Ասես վաղեմի երազներում տեսել էի այդ աշխարհը, և ահա այդտեղ էի հիմա։

Իլչինի հետ դուրս եկանք սենյակից, անցանք բուխարիով դահլիճը, և արբեցած հիացմունքի աստիճան ինձ դուր եկավ այդ դահլիճը։ Երկինքը պարզվեց ու հանկարծ մի շող ընկավ հատակին։ Հետո անցանք տարօրինակ դռան մոտով և տեսնելով իմ հետաքրքրությունը, Իլչինը, գայթակղիչ կերպով մատով կանչելով, ինձ ներս տարավ։ Ոտնաձայնը մարեց, վրա հասավ անձայնություն և ստորգետնյա լիակատար խավար։ Ուղեկցիս փրկարար ձեռքը դուրս քաշեց ինձ, երկարավուն կտրվածքում արհեստական լույս երևաց՝ ուղեկիցս մեկ ուրիշ վարագույր բացեց, ու մենք հայտնվեցինք շուրջ երեք հարյուր տեղանոց փոքրիկ հանդիսասրահում։ Առաստաղի տակ ջահի երկու լամպերն էին աղոտ վառվում, վարագույրը բաց էր, բեմը՝ վիհի պես խորը։ Բեմը հանդիսավոր էր, հանելուկային ու դատարկ։ Անկյունները կորած էին խավարի մեջ, իսկ մեջտեղում, թեթևակի փայլելով, ծառս եղած մի ոսկե նժույգ էր կանգնած։

— Հանգստյան օր է,— հանդիսավոր, ինչպես տաճարում, շշնջում էր Իլչինը, հետո հայտնվեց մյուս ականջիս մոտ ու շարունակեց.— երիտասարդությունը պիեսը կընդունի, շատ լավ կլինի։ Դուք մի նայեք, որ դահլիճը փոքր է երևում, իրականում մեծ է, իսկ տոմսերն այստեղ, իմիջիայլոց, լրիվ վաճառվում են։ Իսկ եթե հաջողվի ծերուկին համոզել, ապա, ինչու՞ չէ, մեծ բեմի վրա ինչու՞ չպիտի գնա պիեսը։ Հը՞։

«Նա գայթակղեցնում է ինձ,— մտածում էի, և սիրտս նվա-

*ղում ու ցնցվում էր կանխազգացումներից,— բայց ինչո՞ւ բոլորովին ուրիշ բան է խոսում նա։ Ճիշտն ասած, կարևորը տոմսերի լրիվ վաճառքը չէ, կարևորն այդ ոսկե նժույգն է, և չափազանց հետաքրքիր է խիստ հանելուկային ծերուկը, որին պետք է համառությամբ կոտրել ու համոզել, որպեսզի պիեսը գնա...»։*

*— Այս աշխարհը իմն է...— շշնջացի ես, չնկատելով, որ բարձրաձայն եմ խոսում։*

*— Հը՞։*

*— Ոչինչ, հենց այնպես։*

*Իլչինից բաժանվեցի, ընդ որում երկտող տանելով նրանից.*

Պատվարժան Պյոտր Պետրովիչ.
բարի եղեք «Սև ձյան» հեղինակին անպայման
տեղ դասավորել «Ֆավորիտի» համար:

Ի սրտե՝ Ձեր Իլչին:

*— Սա կոչվում է փոխտոմս,— բացատրեց Իլչինը, և ես հուզմունքով թողեցի շենքը, հետս տանելով կյանքումս առաջին փոխտոմսը։*

*Այդ օրվանից կյանքս կտրուկ փոխվեց։ Ցերեկը տենդագին աշխատում էի պիեսի վրա, ըստ որում ցերեկվա լույսի տակ էջերից այլևս պատկերներ չէին ելնում, արկղիկը տարածվեց, հասավ Ուսումնական բեմի չափսերին։*

*Երեկոյան անհամբեր սպասում էի հանդիպմանը ոսկե նժույգի հետ։*

*Չեմ կարող ասել՝ «Ֆավորիտ» պիեսը լա՞վն էր, թե՞ վատ։ Ասենք, դա ինձ չէր էլ հետաքրքրում։ Բայց մի տեսակ անբացատրելի թովչանք կար այդ ներկայացման մեջ։ Հենց որ պըստլիկ դահլիճում հանգչում էր լույսը, բեմի ետևներում սկսվում էր երաժշտությունը, և արկղիկ էին մտնում XVIII դարի զգեստներ հագած մարդիկ։ Ոսկե նժույգը կանգնած էր բեմի եզրին, գործող անձինք երբեմն դուրս էին գալիս ու նստում ձիու սըմբակների մոտ կամ բուռն խոսակցության բռնվում նրա մռթի տակ, իսկ ես հաճույք էի վայելում։*

*Դառն զգացում էր պարուրում ինձ, երբ ավարտվում էր ներկայացումը և արդեն հարկ էր լինում փողոց դուրս գալ։ Շատ էի ուզում ճիշտ նույնպիսի կապա հագնել, ինչպիսին դերա-*

սաններն էին հագնում ու մասնակից դառնալ գործողությանը։ Օրինակ, թվում էր, թե շատ լավ կլիներ, եթե հանկարծ դուրս գայի կողքից, մի հսկայական, կճատ, հարբածի քիթ կպցրած, դարչնագույն կապայով, ձեռնափայտով ու ծխատուփը ձեռքիս, և շատ ծիծաղելի մի բան ասեի և այդ ծիծաղելին հորինում էի՝ նստած հանդիսականների խիտ շարքի մեջ։ Սակայն ուրիշի հորինած ծիծաղելին ուրիշներն էին արտասանում, և դահլիճը ժամանակ առ ժամանակ ծիծաղում էր։ Ոչ մինչ այդ, ոչ էլ դրանից հետո կյանքումս նման որևիցե բան չի եղել, որն ավելի մեծ հաճույք պատճառեր ինձ։

«Ֆավորիտին» ներկա եղա երեք անգամ, «Ուսումնական բեմի ադմինիստրատոր» ցուցանակով փոքրիկ լուսամուտի ետև նստած մռայլ ու ինքնամփոփ Պյոտր Պետրովիչի զարմանքը հարուցելով, ըստ որում առաջին անգամ երկրորդ կարգում էի նստած, երկրորդ անգամ՝ վեցերորդ, երրորդ անգամ՝ տասնմեկերորդ կարգում։ Իսկ Իլյինը շարունակում էր կանոնավորապես երկտողեր տրամադրել, ու ես մի պիես էլ նայեցի, ուր հանդես էին գալիս իսպանական զգեստներով, և մի դերասան այնքան հոյակապ ու ծիծաղելի խաղաց ծառայի դերը, որ հաճույքից ճակատիս քրտինքի մանր կաթիլներ երևացին։

Վերջապես եկավ մայիսը, և մի երեկո վերջապես ի մի եկանք թե՛ Եվլամպիա Պետրովնան, թե՛ Իլյինը, թե՛ Միշան, թե՛ ես։ Գնացինք մի նեղլիկ սենյակ, Ուսումնական բեմի այդ նույն շենքում։ Պատուհանն արդեն բաց էր, և քաղաքն իրեն զգացնել էր տալիս շչակներով։

Պարզվեց, որ Եվլամպիա Պետրովնան արքայական տիկին է, արքայական դեմքով և ադամանդյա ականջօղերով, իսկ Միշան զարմացրեց ինձ իր ծիծաղով։ Նա սկսում էր ծիծաղել հանկարծակի՝ «ա՛հ, ա՛հ, ա՛հ», ըստ որում այդ ժամանակ բոլորն ընդհատում էին խոսակցությունն ու սպասում։ Իսկ երբ վերջացնում էր, հանկարծ ծերանում էր, սսկվում։

«Ի՞նչ սգվոր աչքեր ունի,— սկսեցի երևակայել իմ հիվանդագին սովորության համաձայն։— Ժամանակին նա սպանել է իր ընկերոջը մենամարտում, Պյատիգորսկում,— մտածում էի ես,— իսկ հիմա այդ ընկերը գիշերները երազին է գալիս, լուսնի լույսի տակ գլխով է անում լուսամուտից»։ Միշան ինձ շատ դուր եկավ։

Թե՛ Միշան, թե՛ Իլյինը, թե՛ Եվլամպիա Պետրովնան հան-

դես բերեցին իրենց արտասովոր համբերությունը, և ես մի շնչով կարդացի վեպի այն մասը, որը տպագրվածի շարունակությունն էր։ Հանկարծ, խղճի խայթ զգալով, կանգ առա, ասելով, որ շարունակությունն ինքնըստինքյան հասկանալի է։ Ուշ էր։

Ունկնդիրների միջև խոսակցություն կայացավ, ու թեև նրանք մայրենի լեզվով էին խոսում, ոչինչ չհասկացա, այնքան որ հանելուկային էր։

Միշան սովորություն ուներ որևիցե բան քննարկելիս դեսուդեն ընկնել սենյակում, երբեմն անսպասելի կանգ առնելով։

— Օսիպ Իվանի՞չը,— կամացուկ հարցրեց Իլյինը, աչքերը կկոցելով։

— Ոչ մի դեպքում,— պատասխանեց Միշան ու հանկարծ ծիծաղից թուլացավ։ Ծիծաղեց, պրծավ, կրկին հիշեց սպանվածին ու ծերացավ։

— Ընդհանրապես ավագները...— սկսեց Իլյինը։

— Չեմ կարծում,— մրթմրթաց Միշան։

Հետո լսեցի. «Բայց չէ որ մենակ Գալինով, մեկ էլ այդ օժանդակներով այնքան էլ...» (Եվլամպիա Պետրովնան էր)։

— Ներեցեք,— կտրուկ խոսեց Միշան և սկսեց ձեռքով օդը թրատել,— ես վաղուց եմ պնդում, որ այդ հարցը թատրոնում դնելու ժամանակն է։

— Իսկ Սիվցև Վրաժե՞կը (Եվլամպիա Պետրովնա)։

— Ասենք դեռ հայտնի չէ, թե Հնդկաստանն ինչպես կվերաբերվի այս գործին,— ավելացրեց Իլյինը։

— Միանգամից լրի՛վ դնեինք պտտվողին,— կամացուկ շշնջաց Իլյինը,— երաժշտությամբ, բանով կգնա՞ր...

— Սի՛վցև,— բազմանշանակ ասաց Եվլամպիա Պետրովնան։

Այստեղ իմ դեմքին հավանորեն լիակատար հուսահատություն իջավ, որովհետև ունկնդիրները թողեցին իրենց անհասկանալի զրույցը և դիմեցին ինձ։

— Սերգեյ Լեոնտևիչ,— ասաց Միշան,— թախանձագին խնդրում ենք, որպեսզի պիեսը պատրաստ լինի օգոստոսից ոչ ուշ... Մեզ շատ, շատ է պետք, որպեսզի թատերաշրջանը սկսելուց առաջ պիեսը հնարավոր լինի ընթերցել։

Չեմ հիշում, թե ինչպես վերջացավ մայիսը։ Իմ հիշողու-

թյունից ջնջվել է նաև Հունիսը. բայց Հուլիսը հիշում եմ։ Արտասավոր շոգ էր։ Մերկ, սավանով փաթաթված նստած, պիես էի հորինում։ Գնալով ավելի ու ավելի դժվար էր դառնում։ Իմ արկղիկը վաղուց այլևս չէր հնչում, վեպը խամրել ու ընկած էր անկենդան, կարծես նաև՝ ոչ սիրելի։ Գունավոր մարդուկները չէին շարժվում սեղանի վրա, ոչ ոք օգնության չէր գալիս Աշխերիս առաջ հիմա կանգնում էր Ռումինական բեմի արկղիկը՝ Հերոսները մնացան ու բեմ մտան սահուն և շատ կայտառ, բայց, ըստ երևույթին, այնքան հավանեցին ոսկե նժույգի կողքին լինելը, որ ոչ մի տեղ գնալ մտադիր չէին, և դեպքերը ծավալվում էին, իսկ ծայրը չէր երևում։ Հետո շոգը թուլացավ, ապակյա սափորը, որից եռացրած ջուր էի խմում, դատարկվեց, հատակին էլ մի ճանճ էր լողում։ Անձրև եկավ, վրա հասավ օգոստոսը։ Այդ ժամանակ նամակ ստացա Միշա Պանինից։ Նա հարցնում էր պիեսի մասին։

Ես սիրտ արեցի և գիշերը դադարեցրի դեպքերի ընթացքը։ Պիեսը տասներեք պատկեր ուներ։

## ԳԼՈՒԽ IX

## ՍԿՍՎԵՑ

Գլուխս վեր բարձրացնելիս վերևում տեսնում էի լույսով լեցուն մի փայլատ գունդ, կողքիս՝ արծաթյա, հսկայական չափսերի պսակ էր՝ ապակյա պահարանում, ժապավեններով ու մակագրությամբ. «Սիրելի Անկախ Թատրոնին, մոսկովյան երդվյալ ...» (մի բառը ծալված էր). դիմացս տեսնում էի դերասանների ժպտացող դեմքեր, որոնք մեծ մասամբ փոփոխվում էին։

Հեռվից լռություն էր գալիս, մեկ-մեկ ինչ-որ միաբան, թախծալի երգ էր լսվում, ապա մի անուշ աղմուկ, ինչպես բաղնիքում։ Այնտեղ ներկայացում էր գնում, քանի դեռ կարդում էի իմ պիեսը։

Ճակատս անընդհատ սրբում էի թաշկինակով ու դիմացս տեսնում թիկնեղ, ամրակազմ մի տղամարդու, որ խնամքով ածիլված էր, գլխին առատ մազեր ուներ։ Նա կանգնած էր դռան մեջ ու աչքը չէր կտրում ինձնից, կարծես ինչ-որ բան էր մտմտում։

Միայն նա մնաց հիշողությանս մեջ, մնացած ամեն ինչ թրթռում էր, պսպղում ու փոփոխվում։ Բացի դրանից, անփոփոխ էր պսակը՝ բոլորից հստակ դա եմ հիշում։ Ահա և ընթերցումը, բայց արդեն ոչ Ուսումնական, այլ Գլխավոր բեմում։

Գիշերով տուն գնալիս, ես շրջվեցի, որ նայեմ, թե որտեղ եմ։ Քաղաքի կենտրոնում, այնտեղ, ուր թատրոնի կողքին նպարեղենի խանութն է, իսկ դիմացը՝ «Գոտիներ և սեղմիրաններ», կանգնած էր ոլնչով աչքի չընկնող մի շենք, նման կրիայի, փայլատ, խորանարդաձև լապտերիկներով։

Հաջորդ օրն այդ շենքն ինձ ներկայացավ ներսի աշնանային աղջամուղջում։ Հիշում եմ, քայլում էի զինվորական մահուդի փափուկ գորգի վրայով մի բանի շուրջ, որն, ինչպես ինձ թվում էր, հանդիսասրահն էր, և ահագին ժողովուրդ էր իմ կողքով ետուառաջ անում։ Սկսվում էր թատերաշրջանը։

Քայլեցի անաղմուկ գորգի վրայով ու հասա չափազանց հաճելի կահավորված մի առանձնասենյակ, ուր տեսա տարօց, դուրեկան մի մարդու, ածիլված դեմքով և ուրախ աչքերով։ Նա էլ հենց պիեսների ընդունման բաժնի վարիչն էր՝ Անտոն Անտոնովիչ Կնյաժևիչը։

Կնյաժևիչի գրասեղանի վրա կախված էր վառ, ուրախ մի պատկեր... Հիշում եմ, վարագույրը վառ կարմիր ծոպքեր ուներ, իսկ վարագույրից այն կողմ բաց կանաչ, բերկրալի այգի էր։ •

— Ա՜, ընկեր Մակսուդով,— սիրալիր բացականչեց Կնյաժևիչը, գլուխը մի կողմ թեքելով։— Մենք սպասում, սպասում ենք ձեզ։ Խոնարհաբար խնդրում եմ, նստեցեք, նստեցեք։

Եվ ես նստեցի անչափ հաճելի, կաշվե մի բազկաթոռի մեջ։

— Լսել եմ, լսել եմ, լսել եմ ձեր պիե՜սը,— ժպտալով խոսում էր Կնյաժևիչը և այդ ընթացքում չգիտես ինչու տարածում ձեռքերը։— Հիանալի պիե՛ս է։ Ճիշտ է, այդպիսի բաներ մենք երբեք չենք բեմադրել, իսկ սա մեկ էլ տեսար վերցրեցինք, ու կբեմադրենք էլ, ու կբեմադրենք էլ...

Որքան շատ էր խոսում Կնյաժևիչը, նույնքան ուրախ էին դառնում նրա աչքերը։

Մի քիչ էլ խոսելով ինձ հետ, Կնյաժևիչը զանգ խփեց։

— ... և սարսափելի կհարստանաք,— շարունակեց Կնյաժևիչը։— Կառքով ման կգաք։ Այո՛, այո՛, կառքո՜վ։

«Բայց և այնպես,— մտածում էի ես,— քարդ մարդ է այս Կնյաժևիչը, շատ բարդ...»։

Եվ որքան շատ էր ուրախանում Կնյաժևիչը, ի զարմանս ինձ, ես ավելի էի լարվում։

— Հիմա մենք ձեզ կուղարկենք Գավրիիլ Ստեպանովիչի մոտ, այսպես ասած ուղիղ Նրա ձեռքը կհանձնենք, ուղիղ ձեռքը... Սքանչելագույն մարդ է մեր Գավրիիլ Ստեպանովիչը... Մեր-ջյո՞ւն անգամ չի տրորի։ Մրջյո՞ւն։

Բայց զանգի վրա ներս եկած կանաչ լամբակներով մարդն այսպես բարբառեց.

— Գավրիիլ Ստեպանովիչը դեռևս թատրոն չի ժամանել։

— Չի ժամանել, ուրեմն կժամանի,— առաջվա պես խնդալից ձայն տվեց Կնյաժևիչը,— կես ժամ էլ չի քաշի, կժամանի։ Իսկ դուք, քանի գործ չկա, զբոսնեք թատրոնում, նայեք, հիացեք, թեյ խմեք բուֆետում և բուտերբրոդներ, բուտերբրոդներ կերեք, մի խնայեք, մի վշտացրեք մեր բուֆետապան Երմոլայ Իվանովիչին։

Ու ես գնացի թատրոնում զբոսնելու։ Մահուդի վրայով քայլելը ֆիզիկական հաճույք էր պատճառում ինձ, ուրախացնում էր նաև ամենուրեք տիրող խորհրդավոր կիսախավարն ու լռությունը։

Կիսախավարի մեջ մի ծանոթություն էլ ունեցա։ Մոտավորապես իմ տարիքի, նիհար, բարձրահասակ մի մարդ մոտեցավ ինձ ու ներկայացավ.

— Պյոտր Բոմբարդով։

Բոմբարդովն Անկախ Թատրոնի դերասան էր, ասաց, որ լսել է իմ պիեսը և, իր կարծիքով, դա լավ պիես է։

Առաջին իսկ պահից, չգիտես ինչու, մտերմացա Բոմբարդովի հետ։ Նա ինձ վրա շատ խելոք, դիտողունակ մարդու տպավորություն թողեց։

— Ձե՞ք ուզում արդյոք նայել դիմանկարների մեր պատկերաշարը ճեմասրահում,— հարգալից հարցրեց Բոմբարդովը։

Շնորհակալություն հայտնեցի առաջարկության համար, և մենք մտանք վիթխարի ճեմասրահ, նույնպես ծածկված մոխրագույն մահուդով։ Ճեմասրահի միջնորմներին մի քանի շարք դիմանկարներ ու մեծացված լուսանկարներ էին կախված, ձվաձև ոսկեզօծ շրջանակների մեջ։

Առաջին շրջանակից մեզ նայեց յուղաներկով նկարված երեսնամյա մի կին, զմայլուն աչքերով, լավ գանգրացրած մազափնջով, լանջաբաց։

— Սառա Բեռնար,— բացատրեց Բոմբարդովը։

Փառաբանված դերասանուհու կողքի շրջանակում բեղավոր մի մարդու լուսանկարն էր։

— Անդրեյ Պախոմովիչ Սևաստյանով, թատրոնի լուսավորման սարքերի վարիչը,— քաղաքավարի ասաց Բոմբարդովը։

Սևաստյանովի հարևանին ինքս ճանաչեցի՝ Մոլյերն էր։

Մոլյերից հետո տեղադրված էր մի տիկին, թեք դրած ափսեանման, պստլիկ գլխարկով, կրծքի վրա նետով ամրացրած գլխաշորով ու ժանեկազարդ թաշկինակով, որ տիկինը պահել էր ձեռքում, ճկույթը վեր ցցած։

— Լյուդմիլա Սիլվեստրովնա Պրյախինա, մեր թատրոնի դերասանուհիներից,— ասաց Բոմբարդովը, ըստ որում աչքերի մեջ ինչ-որ կրակ ցոլաց։ Բայց խեթ-խեթ վրաս նայելով, Բոմբարդովը ոչինչ չավելացրեց։

— Ներեցեք, իսկ սա՞ ով է,— զարմացա ես, նայելով դաժան մի դեմքի, դափնետերևները գանգուր մազերի մեջ։ Մարդը պատմուճան ուներ հագին, ձեռքին՝ հնգալար քնար։

— Ներոն կայսրը, — ասաց Բոմբարդովը, և նրա աչքը վերստին փայլեց ու հանգավ։

— Իսկ ինչու՞....

— Իվան Վասիլևիչի հրամանով,— ասաց Բոմբարդովը, պահպանելով դեմքի անշարժությունը։— Ներոնը երգիչ է եղել և դերասան։

— Այո, այո, այո...

Ներոնից հետո տեղադրված էր Գրիբոեդովը, Գրիբոեդովից հետո Շեքսպիրը՝ ծալովի, օսլայած օձիքով, նրանից հետո ոմն Պլիսով, որն, ինչպես պարզվեց, թատրոնի պտտվող բեմի վարիչն է, քառասուն տարի ի վեր։

Ապա գալիս էին Մոչալովը, Ժիվոկինին, Գոլդոնին, Բոմարշեն, Ստասովը, Շչեպկինը, Մետեռլինկը։ Իսկ հետո շրջանակի միջից ինձ նայեց ուլանական խիստ թեք դրած մի կիվեր*, դրա տակ՝ ազնվականի դեմք, ֆիկսատուար** քսած բեղեր, հեծելազորային գեներալի ոտնոցներ, կարմիր դարձածալ, փամփշտակալ։

— Հանգուցյալ գեներալ-մայոր Կլավդիի Ալեքսանդրովիչ Կոմարովսկի-Էշապպար դը Բիոնկուր, նորին մեծության լեյբ-գըվարդիական գնդի հրամանատար։

---

* Հեծելազորային գլխարկ

** Մազերի օծանելիք

Իմ տեղնուտեղը, տեսնելով իմ հետաքրքրությունը, Բոմբարդովը պատմեց.

— Նրա պատմությունը խիստ արտասովոր է։ Մի անգամ Պիտերից Մոսկվա է գալիս երկու օրով, ճաշում է Տեստովի մոտ, իսկ երեկոյան ընկնում մեր թատրոնը։ Դե, բնական բան է, նստում է առաջին կարգում, նայում... Չեմ հիշում, ինչ պիես էր խաղալիս եղել, բայց ականատեսները պատմում են, որ այն տեսարանում, ուր անտառ էր պատկերված, գեներալի հետ ինչ-որ բան է կատարվում... Անտառը՝ վերջալույսին, թռչունները քնելուց առաջ ծլվլում են, բեմի ետևում ժամկոչը ժամերգության զանգերն է խփում հեռավոր գյուղում... Նայեն ու տեսնեն, որ գեներալը նստել ու բատիստե թաշկինակով աչքերն է սրբում։

Ներկայացումից հետո գնում է Արիստարխ Պլատոնովիչի մոտ։ Կապելդիները հետո պատմել են, որ առանձնասենյակ մտնելով, գեներալը խուլ ու սարսափելի ձայնով ասել է. «Սովորեցրեք, ասացեք՝ ինչ անեմ»։ Դրանից հետո Արիստարխ Պլատոնովիչի հետ երկար փակվել-մնացել են...

— Ներեցեք, իսկ ո՞վ է այդ Արիստարխ Պլատոնովիչը, — հարցրեցի ես։

Բոմբարդովը զարմացած նայեց ինձ, բայց և իսկույն ջնջեց զարմանքը երեսից ու բացատրեց.

— Մեր թատրոնի գլուխ երկու տնօրեն կա կանգնած՝ Իվան Վասիլևիչը և Արիստարխ Պլատոնովիչը։ Ներեցեք, դուք մոսկվացի չե՞ք։

— Ոչ, ես՝ ոչ։ Շարունակեք, խնդրեմ։

— ... փակվել ու թե ինչ են խոսել, հայտնի չէ, բայց հայտնի է, որ հենց գիշերով գեներալը հեռագիր է ուղարկել Պետերբուրգ, այսպիսի բովանդակությամբ. «Նորին մեծությանը։ Հակում զգալով դերասան դառնալու ձերդ մեծության Անկախ Թատրոնում, ամենահլու կերպով պաշտոնաթողություն եմ հայցում։ Կոմարովսկի Բրոնկուր»։

Ես ախ քաշեցի ու հարցրեցի.

— Հետո՞ ինչ է եղել։

— Մի շիլաշփոթ է ստացվել, որ նմանը չես գտնի,— պատասխանեց Բոմբարդովը։— Ալեքսանդր Երրորդին հեռագիրը հանձնել են գիշերվա ժամը երկուսին։ Հատկապես արթնացրել են։ Սա էլ շապիկ-ոտաշորով, մորուքով, խաչը վզին... ասել է.

«Դեսը տվեք։ Ի՞նչ է եղել իմ էշապպարին»։ Կարդացել ու երկու րոպե բան չի կարողացել ասել, միայն կաս-կարմիր է կտրել ու ֆոֆսացրել։ Հետո ասել է. «Մատիտ տվեք»։ Եվ տեղնուտեղը մակագրել է հեռագրի վրա. «Էլ իգնուֆոզը չերևա Պետերբուրգում։ Ալեքսանդր»։ Ու պառկել է քնելու։

Իսկ գեներալը հաջորդ օրն այցեզգեստով, շալվարով ուղիղ փորձի է եկել։

Մակագրությունը ծածկել են լաքով, իսկ հեղափոխությունից հետո ձեռագիրը հանձնել են թատրոնին։ Դուք կարող եք դա տեսնել հազվագյուտ իրերի մեջ, թանգարանում։

— Իսկ նա ի՞նչ դերեր է խաղացել,— հարցրեցի ես։

— Թագավորների, զորավարների և հարուստ տների սենեկապանների,— պատասխանեց Բոմբարդովը,— գիտեք էլի, մեզ մոտ ամենից շատ Օստրովսկի է լինում, վաճառականներ, բաներ... իսկ հետո երկար ժամանակ «Խավարի թագավորություն» են խաղացել... Է՛, բնական բան է, մեզ մոտ շարժումը, հասկանում եք, էլի... Իսկ նա ամեն ինչ տակից գլուխ գիտեր. տիկնոջը թաշկինակ տալ, թե գինի լցնել, ֆրանսերեն կատարյալ խոսում էր, ֆրանսիացիներից լավ... Մի մոլություն էլ է ունեցել՝ սարսափելի սիրում է բեմի ետևում ճնճղուկների ձայներ հանել։ Երբ պիեսներ էին լինում, որտեղ գործողությունը գարնանն էր կատարվում, գյուղում, նա միշտ նստել է կուլիսներում, սանդուղքների վրա ու սոխակի պես երգել։ Այսպիսի տարօրինակ բաներ։

— Ո՛չ։ Ես ձեզ հետ համաձայն չեմ,— տաքացած բացականչեցի ես։— Ձեր թատրոնում այնքան լավ է, որ գեներալի տեղը ես լինեի, նույն կերպ կվարվեի...

— Կարատիգին, Տալյոնի,— թվարկում էր Բոմբարդովը, դիմանկարից դիմանկար տանելով ինձ,— Եկատերինա Երկրորդ, Կառուզո, Ֆեոֆան Պրոկոպովիչ, Իգոր Սևերյանին, Բատիստինի, Եվրիպիդես, կանացի հագուստների արհեստանոցի վարիչ Բոբիլյովա...

Բայց այդ ժամանակ անաղմուկ վազքով ճեմասրահ վազեց մեկը նրանցից, ովքեր կանաչ լամբակներով են լինում և շշուկով զեկուցեց, որ Գավրիիլ Ստեպանովիչը ժամանել է թատրոն։ Բոմբարդովը կես խոսքի վրա կանգ առավ, ամուր սեղմեց ձեռքս, ըստ որում հանելուկային խոսքեր արտասանեց կամացուկ.

— Պինդ կացեք,— և կիսախավարը կլանեց-սալրավ նրան։

*Իսկ ես գնացի լամբակներով մարդու ետևից, որը շորորալով վազում էր առջևից, մերթ-մերթ մատով կանչելով ինձ ու հիվանդագին ժպտալով։*

*Լայն միջանցքի պատերին, յուրաքանչյուր տասը քայլի վրա հանդիպում էին էլեկտրական վառվող գրություններ. «Լռություն Այստեղ փորձ է»։*

*Ոսկեզօծ պենսնեով և դարձյալ կանաչ լամբակներով մի մարդ, որը նստած էր բազկաթոռին, շրջանաձև այդ միջանցքի ծայրին, տեսնելով, որ ինձ բերում են, վեր թռավ տեղից, խուլ կանչաց «Բարի ողջույն» և մի կողմ քաշեց թատրոնի ոսկեկար «Ա. Թ.» անվանագրով ծանր վարագույրը։*

*Ես ինձ պատ մի վրանում։ Առաստաղը ծածկող կանաչ մետաքսը շառավիղներով տարածվում էր կենտրոնից, ուր վառվում էր բյուրեղապակյա լապտերը։ Այստեղ փափուկ, մետաքսապատ կահույք էր դրված։ Եվս մի վարագույր, որից այն կողմ փայլատ ապակու դուռ կար։ Պենսնեն դրած իմ նոր ուղեկցողը դռանը չըմոտեցավ, այլ ձեռքով արեց, որ նշանակում էր «Թակեցեք, խնդրեմ», և տեղնուտեղը չքվեց։*

*Ես կամացուկ բախեցի, բռնեցի արծվի գլխի ձևով պատրաստված արծաթազօծ բռնակը, ֆշշաց օդալից զսպանակը և դուռն ինձ ներս մղեց։ Դեմ առա վարագույրի, խճճվեցի, դեն քաշեցի...*

*Շատ շուտով ես այլևս չե՛մ լինի, չե՛մ լինի։ Ես վճռել եմ, բայց և այնպես դա սարսափելի բան է... Բայց մեռնելիս ես կհիշեմ առանձնասենյակն, ուր ինձ ընդունեց թատրոնի նյութական միջոցների կառավարիչ Գավրիիլ Ստեպանովիչը։*

*Ներս մտնելուս պես ձախ անկյունում դրված հսկայական ժամացույցը ղողանջեց ու մեղուեղո նվագեց։*

*Զանազան կրակներ դիպան աչքերիս։ Կանաչ կրակ՝ գրասեղանից, այսինքն ավելի ճիշտ ոչ թե սեղանից, այլ բյուրոյից, այսինքն ոչ թե բյուրոյից, այլ ինչ-որ շափազանց բարդ մի կառուցվածք էր դա՝ տասնյակ դարակներով, նամակների համար հորիզոնական բաժանմունքներով, արծաթյա դյուրաթեք, ոտքի վրա մեկ ուրիշ լամպով, սիգարների համար էլեկտրական հրահանով։*

*Դժոխային կարմիր կրակ՝ պալիսանդրե սեղանից, որի վրա երեք հեռախոս էր դրված։ Աննշմար սպիտակ մի բոց՝ փոքրիկ սեղանիկից, վրան արտասահմանյան տափակ գրամեքենա, չոր-*

րորդ հեռախոսը և ոսկերիչ ճիշճիկի տեցակ, «Ա. Թ.» գերբով։ Առաստաղից անդրադարձող կրակ…

Առանձնասենյակի հատակը պատված էր մահուդով, բայց ոչ զինվորական, այլ բիլիարդի սեղանի մահուդով, իսկ դրա վրա գցած էր մի վերջոկ հաստությամբ բալեգույն գորգ։ Հսկայական մի օթոց՝ բարձերով, կողքին՝ թուրքական ղալյանը։ Դրսում, Մոսկվայի կենտրոնում օրը ցերեկ էր, բայց ոչ մի շող, ոչ մի հնչյուն առանձնասենյակ չէր թափանցում երեք տակ վարագուրված լուսամուտից։ Այստեղ հավերժական իմաստուն գիշերն էր, այստեղից կաշվի, սիգարի, օծանելիքի հոտ էր գալիս։ Տաքացած օդը շոյում էր դեմքս ու ձեռքերս։

Ոսկեզօրոշմ սեկով պաստառված պատից կախված էր արտիստական սանրվածքով, կկոցած աչքերով, վեր ոլորած բեղերով և ձեռքին լոռնետ բռնած մի մարդու մեծադիր լուսանկարը։ Ես կռահեցի, որ դա Իվան Վասիլևիչն է կամ Արիստարխ Պլատոնովիչը, բայց թե այդ երկուսից որ մեկը, չգիտեի։

Պատվող աթոռակի վրա կտրուկ իմ կողմը շուռ եկավ մի կարճահասակ մարդ, ֆրանսիական սև ու փոքրիկ մորուքով, ներքև այես դեպի աչքերը տնկված բեղերով։

— Մակսուդով,— ասացի ես։

— Ներեցեք,— պատասխանեց նոր ծանոթս բարձր տենորով և ցույց տվեց, որ հիմա, իբր, հիմա կարդամ վերջացնեմ այս ճուղթը և…

…Նա կարդաց վերջացրեց, ցած գցեց պենսնեն՝ սև լարից կախ, տրորեց հոգնած աչքերը և, մեջքով շուռ գալով դեպի գրասեղանը, աչքերը հառեց վրաս, առանց բան ասելու։ Ուղղակի և բացահայտ աչքերիս էր նայում, ուշադիր զննելով ինձ, ինչպես նոր, քիչ առաջ ձեռք բերած մեխանիզմն են զննում։ Նա չէր թաքցնում, որ ուսումնասիրում է ինձ, նույնիսկ աչքերը կկոցեց։ Ես փախցրեցի աչքերս՝ չօգնեց, սկսեցի շուռումուռ գալ օթոցի վրա… Վերջապես մտածեցի՝ «է՛-հեե՛…» և ինքս էլ, ճիշտ է, մեծ ճիգ բանեցնելով, աչքերս հառեցի իր աչքերին՝ ի պատասխան։ Այդ ընթացքում, չգիտես ինչու, տարտամ դժգոհություն էի զգում Կնյաժևիչի նկատմամբ։

«Ինչ տարօրինակ բան է, —մտածում էի ես,— թե՞ կույր է այդ Կնյաժևիչը… մրջյուն… մրջյուն… չգիտե՛մ… չգիտե՛մ… Մետաղյա, խորն ընկած փոքրիկ աչքեր, աչքերում՝ երկաթյա կամք, դիվական համարձակություն, անհողդողդ վճռականու-

թյուն...ֆրանսիական մորուք... մրցո՞ւմ ինչու չի տրվի... Սա սարսափելի նման է Դյումայի հրացանակիրների առաջնորդին... Անունն ինչ էր: Մոռացել եմ, դրողը տանի»:

Հետագա լռությունն անտանելի դարձավ, և դա ընկճում էր Գավրիիլ Ստեպանովիչը: Նա չգիտես ինչու ծիր-միր ծպտաց ու հանկարծ սեղմեց ծունկս:

— Է, ի՞նչ, ուրեմն պայմանագի՞ր ենք ստորագրում.— սկսեց նա:

Մի պտույտ աթոռակի վրա, ետ պտույտ, և Գավրիիլ Ստեպանովիչի ձեռքին պայմանագիր հայտնվեց:

— Միայն թե չգիտեմ, առանց Իվան Վասիլևիչի հետ համաձայնեցնելու, ինչպե՞ս ստորագրեմ...— Եվ այստեղ Գավրիիլ Ստեպանովիչը մի թռուցիկ, ակամա հայացք նետեց դիմանկարի վրա:

«Ըհը՜, փառք աստծո... հիմա արդեն գիտեմ, որ Իվան Վասիլևիչն է»,— մտածեցի ես:

— Մի փորձանք չլինի՞,— շարունակեց Գավրիիլ Ստեպանովիչը:— Դե, գուցե ձեզ համար:— Նա ժպտաց բարյացակամորեն:

Այդ ժամանակ առանց թակոցի բացվեց դուռը, վարագույրը մի կողմ քաշվեց, և ներս մտավ հարավային տիպի տիրական դեմքով մի տիկին, ինձ նայեց: Ես գլուխ տվեցի, ասացի «Մակ-սուդով»:

Տիկինն ամուր, տղամարդավարի սեղմեց ձեռքս, պատաս-խանեց.

— Ավգուստա Մենաժրակի,— նստեց աթոռակին, կանաչ ջեմպրի գրպանից հանեց ոսկյա ծխափողը, ծխախոտ վառեց ու սկսեց կամացուկ թխկթխկացնել գրամեքենայի ստեղները:

Ես կարդացի պայմանագիրը, անկեղծ եմ ասում՝ չհասկացա և չաշխատեցի էլ հասկանալ:

Ուզում էի ասել. «Խաղացեք իմ պիեսը, ինձ ոչինչ էլ պետք չէ, բացի նրանից, որ իրավունք տրվի ինձ ամեն օր գալ այստեղ, մի երկու ժամ պառկել այս օթոցին, ներծծել ծխախոտի մեղրա-բույրը, լսել ժամացույցի զողանջն ու անրջել»:

Բարեբախտաբար, նման բան չասացի:

Հիշողությանս մեջ մնաց, որ պայմանագրում հաճախ էին հանդիպում «եթե» և «քանզի» բառերը և որ յուրաքանչյուր կետ սկսում էր այս խոսքերով. «Հեղինակն իրավունք չունի»:

Հեղինակն իրավունք չուներ իր պիեսը տրամադրել Մոսկվա քաղաքի մեկ ուրիշ թատրոնի։

Հեղինակն իրավունք չուներ իր պիեսը տրամադրել Լենինգրադ քաղաքի մեկ ուրիշ թատրոնի։

Հեղինակն իրավունք չուներ իր պիեսը տրամադրել ՌՍՖՍՀ որևիցե քաղաքի թատրոնի։

Հեղինակն իրավունք չուներ իր պիեսը տրամադրել ՌՍՍՀ որևիցե քաղաքի թատրոնի։

Հեղինակն իրավունք չուներ տպագրել իր պիեսը։

Հեղինակն իրավունք չուներ ինչ-որ բաներ պահանջել թատրոնից, իսկ թե ինչ՝ մոռացել եմ (21-րդ կետ)։

Հեղինակն իրավունք չուներ բողոքել ինչ-որ բանի դեմ, իսկ թե ինչի, դարձյալ չեմ հիշում։

Իմիջիայլոց, մի կետ խախտում էր այդ փաստաթղթի միօրինակությունը, 57-րդ կետն էր։ Սկսվում էր այսպես. «Հեղինակը պարտավորվում է»։ Համաձայն այդ կետի, հեղինակը պարտավորվում էր «անվերապահ ու անհապաղ իր պիեսում կատարել ուղղումներ, փոփոխություններ, ավելացումներ կամ կրճատումներ, եթե դիրեկցիան, կամ ինչ-որ հանձնաժողովներ, կամ հիմնարկություններ, կամ կազմակերպություններ, կամ միավորումներ, կամ առանձին անձինք, որոնք օժտված են անհրաժեշտ իրավասությամբ, կպահանջեն այդպիսիք, սույնի դիմաց չպահանջելով ոչ մի վարձատրություն, բացի նրանից, որպիսին նշված է 15-րդ կետում»։

Ուշադրություն դարձնելով այս կետի վրա, տեսա, որ այնտեղ, «վարձատրություն» բառից հետո դատարկ տեղ է։

Այդ տեղը հարցականներեն ընդգծեցի եղունգով։

— Իսկ ի՞նչ վարձատրություն ընդունելի կհամարեիք ձեզ համար,— հարցրեց Գավրիիլ Ստեպանովիչը, աչքն ինձնից չըկտրելով։

— Անտոն Անտոնովիչ Կնյաժևիչն ասաց,— ասացի ես,— որ ինձ երկու հազար ռուբլի կտան...

Զրուցակիցս հարգալից ցած խոնարհեց գլուխը։

— Այո,— ասաց նա, լռեց ու ավելացրեց։— Է՜հ, դրա՛մ, դրա՛մ։ Ինչքա՜ն չարիք կա աշխարհում դրամի պատճառով։ Մենք բոլորս հենց մի գլուխ դրամի մասին ենք մտածում, իսկ հոգու մասին մեկնումեկը մտածե՞լ է։

Իմ դժվար կյանքի ընթացքում ես այնքան էի խորթացել նման

իրատների, որ խոստովանում եմ, շփոթվեցի... Մտածեցի՝ «Իսկ ո՞վ գիտե, գուցեև Կնյաժևիչն իրավացի է... պարզապես ես եմ ըթացել ու կասկածամիտ դարձել...» Հանուն քաղաքավարության հոգոց հանեցի, իսկ զրուցակիցս իր հերթին հողոցով պատասխանեց ինձ, հետո հանկարծ ժիր-ժիր աչքով արեց, որ բոլորովին չէր բռնում հոգոցին ու մռեռմիկ շշնջաց.

— Ջրս հարյուր ռուբլի։ Հը՞։ Միայն ձեզ համար։ Հը՞։

Պիտի խոստովանել, որ վշտացա։ Բանն այն է, որ ոչ մի կոպեկ փող չունեի, և մեծ հույսեր էի կապում այդ երկու հազարի հետ։

— Իսկ գուցե հնարավոր է հազար ութ հարյու՞ր, — հարցրեցի ես։— Կնյաժևիչն ասում էր...

— Ժողովրդականություն է փնտրում,— դառը պատասխանեց Գավրիիլ Ստեփանովիչը։

Այդ ժամանակ դուռը թակեցին և կանաչ լամբակներով մի մարդ ներս մտավ, սպիտակ անձեռոցիկով ծածկված մատուցարանով։ Մատուցարանի վրա արծաթյա սրճաման կար, կաթի աման, ճենապակյա երկու գավաթ, դրսից՝ նարնջագույն, ներսից՝ ոսկեզօծ, երկու բուտերբրոդ հատիկավոր խավիարով, երկուսը՝ նարնջագույն թափանցիկ զուրգելով, երկուսը՝ պանրով, երկուսը՝ սառը ռոստբիֆով։

— Ծրարը տարա՞ք Իվան Վասիլևիչին,—ներս եկածին հարցրեց Ավգուստա Մենաժրակին։

Սրա դեմքն այլայլվեց ու մատուցարանը թեքվեց։

— Ավգուստա Ավդեևնա, ես բուֆետ վազեցի, իսկ Իգնուտովը ծրարը վազելով տարավ,— ասաց նա։

— Ես ձե՛զ կարգադրեցի և ոչ թե Իգնուտովին,— ասաց Մենաժրակին,— Իվան Վասիլևիչին ծրարներ տանելը Իգնուտովի գործը չէ։ Իգնուտովը հիմարի մեկն է, մի բան կխառնի, այնպես չի ասի... Ի՞նչ է, դուք ուզում եք, որ Իվան Վասիլևիչի ջերմությունը բարձրանա՞։

— Սպանել է ուզում,— սառն ասաց Գավրիիլ Ստեփանովիչը։

Մատուցարանով մարդը կամացուկ տնքաց և ցած դրեց գդալը։

— Պակի՞նն ուր էր այն ժամանակ, մինչև ընացել-մնացել էիք բուֆետում,— հարցրեց Ավգուստա Ավդեևնան։

— Պակինը վազեց մեքենայի,— բացատրեց հարցապնդվողը,

— Ես բուֆետ վազեցի, Իպնոսովին ասացի՝ վազ տուր Իվան Վասիլևիչի մոտ…

— Իսկ Բոբկո՞վը։

— Բոբկովը վազեց տոմսերի։

— Դրեք այստեղ,— ասաց Ավգուստա Ավդեևնան, մի կոճակ սեղմեց ու պատի միջից սեղանի պես տախտակ դուրս թռավ։

Լամբակներով մարդն ուրախացավ, իջեցրեց մատուցարանը, հետույքով դեն տարավ վարագույրը, ոտքով բացեց դուռն ու դուրս պրծավ։

— Հոգու մասի՞ն մտածեք, Կլյուկվին, հոգու՛, — նրա ետևից կանչեց Գավրիիլ Ստեպանովիչը և դեպի ինձ շրջվելով, ասաց մտերմիկ.— Չորս հարյուր քսանհինգ, հը՞։

Ավգուստա Ավդեևնան մի կտոր բուտերբրոդ կծեց և սկսեց կամացուկ թխկթխկացնել մի մատով։

— Իսկ գուցե հազար երե՞ք հարյուր։ Ճիշտն ասած, անհարմար է, բայց հիմա դրամ չունեմ, դերձակին պիտի տամ…

— Ա՞յս կոստյումն է կարել,— հարցրեց Գավրիիլ Ստեպանովիչը, շալվարս ցույց տալով։

— Այո։

— Վատ էլ կարել է, հա՛, սրիկան,— նկատեց Գավրիիլ Ստեպանովիչը։— Վզակոթին հասցրեք ու վերջ։

— Բայց, գիտեք ինչ…

— Մեզ մոտ,— նեղվելով ասաց Գավրիիլ Ստեպանովիչը,— դեպքեր էլ չեն եղել, որ պայմանագիր կնքելիս հեղինակներին փող տանք, բայց դե, ձեզ համար․․ չորս հարյուր քսանհինգ։

— Հազար երկու հարյուր,— ավելի ստույգ պատասխանեցի ես,— առանց դրա տակից դուրս չեմ գա… դժվար են պայմանները…

— Իսկ դուք չե՞ք փորձել ձիարշավարանում խաղալ,— կարեկցաբար հարցրեց Գավրիիլ Ստեպանովիչը։

— Ոչ,— ափսոսանքով պատասխանեցի ես։

— Մեր դերասաններից մեկն էլ ծանր պայմանների մեջ էր, գնաց ձիարշավարան, և, պատկերացրեք, մեկուկես հազար շահեց։ Իսկ մեզնից վերցնելը միտք չունի։ Բարեկամաբար եմ ասում՝ շատ վերցնեք, կկորչեք։ Է՛հ, դրա՛մ, դրա՛մ։ Եվ ու՞մ է պետք այդ դրամը։ Ահավասիկ, ես չունեմ, և այնքան թեթև է հոգիս, այնպես հանգիստ…— Եվ Գավրիիլ Ստեպանովիչը շուռ տվեց գրը-

պանը, ուր իրոք դրամ չկար, այլ բանալիներ. կապույտ էր՝ շղթայիկով։

— Հավար,— ասացի ես։

— Է՛, գրողը ծոցն ամեն ինչ,— թափով բացականչեց Գավրիիլ Ստեպանովիչը։— Հետո թող գլուխս էլ կտրեն, բայց ձեզ հինգ հարյուր ռուբլի կտամ։ Ստորագրե՛ք։

Ես ստորագրեցի պայմանագիրը, ըստ որում Գավրիիլ Ստեպանովիչը բացատրեց, որ ինձ տրվելիք դրամը կանխավճար է, որը պիտի մարեմ առաջին իսկ ներկայացումից։ Պայմանավորվեցինք, որ այսօր կստանամ յոթանասունհինգ ռուբլի, երկու օր անց հարյուր ռուբլի, ապա շաբաթ օրը ևս հարյուր, մնացածը՝ տասնչորսին։

Աստվա՜ծ իմ։ Ի՜նչ պրոզայիկ, ի՜նչ վհատեցուցիչ թվաց ինձ փողոցն առանձնասենյակից հետո։ Անձրև էր մաղմղում, փայտ բարձած սայլը խցկվել մնացել էր դարպասի մեջ, սայլապանը գոռում էր ձիու վրա սարսափելի ձայնով, քաղաքացիները քայլում էին եղանակից դժգոհ դեմքերով։ Ես շտապում էի տուն, աշխատելով չտեսնել տխուր իրականության պատկերները։ Անձկալի պայմանագիրը պահել էի սրտիս մոտ։

Իմ սենյակում տեսա ընկերոջս (տես՝ ատրճանակի պատմությունը)։

Թաց ձեռքերով ծոցիցս հանեցի պայմանագիրը, բղավեցի.

— Կարդացեք։

Ընկերս կարդաց պայմանագիրը և, ի մեծ զարմանս ինձ, զայրացավ վրաս.

— Սա ի՞նչ հիմար գիր է։ Դրում գլուխ, էս ի՞նչ եք ստորագրել,— հարցրեց նա։

— Դուք թատրոնի գործերից ոչինչ չեք հասկանում, ուրեմն և մի խոսեք,— զայրացա նաև ես։

— Սա ի՞նչ բան է. «պարտավորվում է, պարտավորվում է», իսկ նրանք թեկուզ մի բան պարտավորվո՞ւմ են,— փնթփնթաց ընկերս։

Ես սկսեցի տաքացած պատմել, թե ինչ է պատկերասրահը, ինչ հոգի մարդ է Գավրիիլ Ստեպանովիչը, հիշատակեցի Սաշա Բեռնարին և գեներալ Կոմարովսկուն։ Ուզում էի ասել, թե ինչպես է հնչում ժամացույցի մենուետը, ինչպես է գոլորշի արձակում սուրճը, ինչպես մեղմ, խորհրդավոր են հնչում քայլերը մահուդի վրա, բայց ժամացույցն իմ գլխում էր, ինքս էի տեսնում և՛

ոսկյա ծխախոտը, և՛ դժոխային կրակը էլեկտրական վառարանում, և՛ անգամ Ներոն կայսրին, բայց ոչ մի բան ասել չկարողացա։

— Այնտեղ Ներո՞նն է պայմանագրեր կազմում,— վայրագորեն սրամտեց ընկերս։

— Է՛, դուք էլ,— գոչեցի ես ու ետ խլեցի պայմանագիրը։

Որոշեցինք նախաճաշել, Դուսյայի եղբորն ուղարկեցինք խանութ։ Աշնանային անձրև էր գալիս։ Ի՞նչ խոզապուխտ էր, ի՛նչ կարագ։ Երջանի՛կ պահեր։

Մոսկովյան կլիման հայտնի է իր քմահաճությամբ։ Երկու օր անց հրաշալի, ամռան պես տաք օր էր։ Ու ես շտապում էի Անկախ Թատրոն։ Քաղցր զգացումով, հարյուր ռուբլի ստանալիքս ակնկալելով, մոտեցա թատրոնին և մնջտեղի դռան վրա մի համեստ ազդագիր տեսա։ Կարդացի.

Ընթացիկ թատերաշրջանում նախատեսված խաղացանկ.

Էսքիլես— «Ագամեմնոն»

Սոփոկլես— «Փիլոկտետես»

Լոպե դե Վեգա— «Ֆենիզայի ցանցերը»

Շեքսպիր— «Լիր արքա»

Շիլլեր— «Օռլեանի կույսը»

Օստրովսկի— «Աշխարհից անտեղյակ»

Մաքսուդով— «Սև ձյուն»

Բերանս բաց արած, կանգնել էի մայթին, և զարմանում եմ, թե այդ ժամանակ դրամապանակս ինչու չհանեցին։ Ինձ հրմշտում էին, անդուր-անդուր բաներ ասում, իսկ ես կանգնել-մնացել էի, զննելով ազդագիրը։ Հետո մի կողմ քաշվեցի, որ տեսնեմ, թե ազդագիրն ինչ տպավորություն է գործում անցնող-դարձող քաղաքացիների վրա։

Պարզվեց, որ ոչ մի տպավորություն։ Եթե չհաշվենք ազդագրին հայացք նետած երեք-չորս հոգու, կարելի է ասել, որ ոչ ոք էլ չկարդաց։

Բայց հինգ րոպե էլ չէր անցել, երբ հարյուրապատիկ վարձահատույց եղա սպասումիս դիմաց։ Թատրոնի կողմ եկողների հոսանքում պարզորոշ տեսա Եգոր Ագապյոնովի խոշոր գլուխը։ Նա դեպի թատրոն էր գալիս մի ամբողջ շքախմբով, որի մեջ երևաց Լիկոսպաստովը՝ ծխամորճն ատամների արանքում և անծանոթ մեկը՝ գեր ու դուրեկան դեմքով։ Վերջինը՝ մի քաֆր էր, որ դեսուդեն էր վազվզում ամառային արտասովոր դեղին վե-

բարկում և չգիտես ինչու գլխորայ։ Ես ավելի խորը մտա որմնախորշի մեջ, ուր կանգնած էր կույր արձանը և սկսեցի նայել։

Խումբը հավասարվեց արզապրին ու կանգ առավ։ Չգիտեմ ինչպես նկարագրեմ, թե ինչ կատարվեց Լիկոսպաստովի հետ։ Նա առաջինը կանգ առավ ու կարդաց։ Ժպիտը դեռևս խաղում էր նրա դեմքին, դեռևս ինչ-որ անհեկդոտի բառեր էին արտասանում նրա շրթունքները։ Ահա նա հասավ «Ֆենիքսայի ցանցերին»։ Հանկարծ Լիկոսպաստովը գունատվեց, կարծես մեկեն ծերացավ։ Նրա դեմքին իսկական սարսափ երևաց։

Ագապյոնովը կարդաց, ասաց. «Հը՛մ»...

Գեր անծանոթը ճպճպացրեց աչքերը... «Նա ուզում է հիշել, թե որտեղ է լսել իմ ազգանունը...»

Քաֆրն սկսեց անգլերեն հարցնել, թե ինչ են տեսել իր ուղեկիցները։ Ագապյոնովն ասաց. «Աֆիշ, աֆիշ...» և սկսեց օդի մեջ քառանկյունի գծել։ Քաֆրը գլուխն էր թափահարում, ոչինչ չհասկանալով։

Հասարակությունն անցնում էր հորձանք տալով, մերթընդմերթ ծածկելով այդ խմբի գլուխները։ Խոսքերը մեկ հասնում էին ինձ, մեկ կորչում փողոցի աղմուկի մեջ։

Լիկոսպաստովը շրջվեց Ագապյոնովի կողմն ու ասաց.

— Չէ, դուք տեսա՞ք, Եգոր Նիլիչ։ Սա ի՞նչ բան է։—Նա թախծոտ չորս կողմը նայեց։— Խեղքները թացրե՛լ են սրանք...

Քամին քշեց տարավ նախադասության ավարտը։

Լսվում էին կամ ագապյոնովյան բասի, կամ լիկոսպաստովյան տենորի պատառիկները։

— ...Որտեղի՞ց լույս ընկավ նա... Ախր հենց ես եմ նրան գտել... Նա՛ է հա, նա՛ է... հու, հու, հու... զարհուրելի տիպ է...

Ես դուրս եկա որմնախորշից և քայլեցի ուղիղ դեպի կարդացողները։

Լիկոսպաստովն առաջինը տեսավ ինձ, և ինձ զարմացրեց այն փոփոխությունը, որ կատարվեց նրա աչքերի մեջ։ Լիկոսպաստովյան աչքերն էին, բայց դրանց մեջ մի տեսակ նոր, խորթ բան կար, մեր միջև ինչ-որ անդունդ էր ընկած...

— Է՛, ախպերս,— բացականչեց Լիկոսպաստովը,— է՛, ախպերս։ Զգացված եմ, չէի սպասում։ Էսքիլես, Սոփոկլես ու դու՝ Թե ոնց ես սարքել, չգիտեմ, բայց հանճարեղ բան է սա։ Դե,

հիմա, իհարկե, կսկսես չճանաչել մտերիմներիդ։ Մե՛նք ուր, Շեքսպիրների հետ ընկերություն անե՛լն ուր։

— Արի էլ հիմար-հիմար բաներ մի ասա,— երկչոտ ասացի ես։

— Ըհը՛, տեսա՞ր, խոսք ասել չի լինի։ Դու քո աստված։ Ես քեզ չարիք չեմ ուզում։ Արի, մի պաչվենք, մեր տղա։— Եվ ես զգացի Լիկոսպաստովի՝ կարճ մետաղալարով ծածկված այտի հպումը։

— Ծանոթացե՛ք։

Ու ես ծանոթացա գեր մարդու հետ, որն աչքը չէր կտրում ինձնից։ Սա ասաց. «Կրուպպ»։

Ծանոթացա նաև քաֆրի հետ, որը շատ երկար մի նախադասություն արտասանեց, կոտրատված անգլերենով։ Քանի որ դրանից բան չհասկացա, քաֆրին ոչինչ չասացի։

— Իհարկե, Ուսումնակա՞ն բեմում պիտի խաղան, —ուզեց իմանալ Լիկոսպաստովը։

— Չգիտեմ,—պատասխանեցի ես, — ասում են, թե Գլխավորում...

Վերստին գունատվեց Լիկոսպաստովը և տրտմագին նայեց պայծառ երկնքին։

— Ինչ կա որ,— խռպոտ ասաց նա,— աստված տա։ Հու՛պ տուր, հու՛պ տուր։ Գուցե այստեղ հաջողություն ունենաս։ Վեպից բան դուրս չեկավ, ով գիտե, գուցե պիեսից դուրս գա։ Միայն թե չգոռոզանաս։ Հիշիր, ընկերներին մոռանալուց ավելի վատ բան չկա։

Կրուպպը նայում էր ինձ ու չգիտես ինչու ավելի ու ավելի մտազբաղ էր դառնում, ըստ որում նկատեցի, որ առավել ուշադրությամբ ուսումնասիրում է իմ մազերն ու քիթը։

Պետք էր բաժանվել։ Ճնշող բան էր։ Ձեռքս սեղմելով, Եգորը տեղեկացավ, թե իր գիրքը կարդացե՞լ եմ։ Վախից սառույց կըտրեցի և ասացի, որ չեմ կարդացել։ Հիմա էլ Եգորը գունատվեց։

— Էլ ի՛նչ կարդալ,— սկսեց Լիկոսպաստովը,— ժամանակակից գրականություն կարդալու ժամանակ չունի նա... Դե, լավ, կատակ եմ անում, կատակ...

— Կարդացեք,— ծանրակշիռ ասաց Եգորը,— լավ գիրք է ստացվել։

Ես մտա դատիկոնի շքամուտքը։ Փողոցին նայող լուսամուտը բաց էր։ Կանաչ լամբակներով մի մարդ լուսամուտն էր սրբում

յաթով։ Դրոշների գլուխները լողացին-անցան փայլատ ապակու ետևում, լավեց Լիկոսպաստովի ձայնը.

— Գլուխ ես ջարդում, գլուխ ես ջարդում էշի պես... Ցավալի է։

Աղդագիրն ամեն բան տակնուվրա էր արել գլխումս և միայն մի բան էի զգում, որ, ըստ էության, իմ պիեսը, մեր մեջ ասաց, չափազանց վատն է և որ մի բան պետք է ձեռնարկել, բայց թե ինչ՝ հայտնի չէ։

...Եվ ահա միջանցքում, հաճելի կիսախավարում, իմ դեմ ելավ հենց այն ամրակազմ մարդը, որն ընթերցման ժամանակ կանգնած էր դռան մեջ։ Շիկահեր էր, վճռական դեմքով և անհանգիստ աչքերով։ Ձեռքին մի ուռած պայուսակ կար։

— Ընկեր Մակսուդո՞վ,— հարցրեց շիկահերը։

— Այո, ես եմ...

— Թատրոնով մեկ ժող եմ փնտրում,— սկսեց նոր ծանոթս, —թույլ տվեք ներկայանալ՝ ռեժիսոր Ֆոմա Ստրիժ։ Այնպես որ ամեն բան կարգին է։ Մի հուզվեք և մի անհանգստացեք՝ ձեր պիեսը լավ ձեռքերում է։ Պայմանագիրը ստորագրե՞լ եք։

— Այո։

— Հիմա դուք մերն եք,— վճռական շարունակեց Ստրիժը, նրա աչքերը փայլեցին,— ինչ անեիք, որ լավ լիներ՝ պայմանագիր կնքեիք մեզ հետ ձեր ապագա ամբողջ արտադրանքի համար։ Ցմա՛հ։ Որպեսզի բոլորը մեզ մոտ գա։ Եթե կամենում եք, հենց հիմա գլուխ կբերենք։ Թքելուց հեշտ գործ է։— Եվ Ստրիժը թքեց թքամանի մեջ։— Ուրեմն, պիեսը բեմադրելու եմ ես։ Երկու ամսում գործը գլուխ կբերենք։ Դեկտեմբերի տասնհինգին գլխավոր փորձը ցույց կտանք։ Շիլլերը մեզ չի ուշացնի։ Շիլլերի բանը հեշտ է...

— Ներեցեք,— վախվխելով ասացի ես,— իսկ ինձ ասացին, որ Եվլամպիա Պետրովնան պիտի բեմադրի...

Ստրիժն այլայլվեց.

— Ի՞նչ Եվլամպիա Պետրովնա, ի՞նչ բան,— խիստ հարցրեց նա ինձ։— Ոչ մի Եվլամպիա։— Նրա ձայնը մետաղյա դարձավ։ — Եվլամպիան այստեղ կապ չունի, Իլչինի հետ նա «Բակի տնակ»-ն է դնում։ Հաստատ պայմանավորվածություն ունեմ Իվան Վասիլևիչի հետ։ Իսկ թե մեկնումեկը սկսի փորփրել, ապա Հնդկաստան կգրեմ։ Պատվիրա՞ծ, թե բանն էդտեղ է հասել,— սպառ-

նագին գոչեց Ստրիժը, չգիտես ինչու անհանգստանալով։— Օրինակն ինձ ցույց տվեք,— հրամայեց նա ինձ, մեկնելով ձեռքը։

Բացատրեցի, որ օրինակը դեռ չի արտագրված։

— Բա էս ի՞նչ էին դրանք մտածում,—վրդովված չորս կողմը նայելով՝ գոչեց Ստրիժը։— Դուք Պոլիկսենա Տորոպեցկայայի մոտ՝ նախաբաղնիքում եղե՞լ եք։

Ոչինչ չհասկացա և միայն ապուշ կտրած նայեցի Ստրիժին։

— Չե՞ք եղել։ Այսօր նա հանգստանում է։ Վաղը ներ մի օրինակ վերցրեք ու գնացեք նրա մոտ, իմ անունից գործեք։ Համարձա՛կ։

Այստեղ շատ նրբակիրթ, թլվատ ու նրբակազմ մի մարդ հայտնվեց մեր կողքին և ասաց քաղաքավարի, բայց հաստատուն.

— Ֆոմա Սերգեևիչ, խնդրում եմ փորձասրահ եկեք։ Սկսում ենք։

Եվ Ֆոման պայուսակը թևի տակ դրեց ու անհետացավ, հրաժեշտին բղավելով.

— Վաղն եեթ՝ նախաբաղնիք։ Իմ անունից։

Իսկ ես մնացի կանգնած ու դեռ երկար կանգնել էի։

ԳԼՈՒԽ X

## ՏԵՍԱՐԱՆՆԵՐ ՆԱԽԱԲԱՂՆԻՔՈՒՄ

Գլխի՛ ընկա։ Գլխի՛ ընկա։ Իմ պիեսը տասներեք պատկեր ուներ։ Սենյակումս նստած, դիմացս բռնել էի արծաթյա հին ժամացույցը և ինքս ինձ բարձրաձայն կարդում էի պիեսը, հավանորեն շատ զարմացնելով պատից այն կողմ գտնվող հարևանիս։ Յուրաքանչյուր պատկերն ավարտելիս՝ նշում էի անում թղթի վրա։ Երբ կարդացի, վերջացրի, պարզվեց, որ ընթերցումը տևում է երեք ժամ։ Ես կռահեցի նաև, որ ներկայացումներն ընդմիջումներ են ունենում, որոնց ընթացքում հասարակությունը բուֆետ է գնում։ Ընդմիջումների ժամանակն էլ ավելացնելով, հասկացա, որ իմ պիեսը մի երեկոյի ընթացքում չի լինի ներկայացնել։ Այդ հարցին առնչվող գիշերային տանջանքները հանգեցրին մեկ պատկեր հանելուն։ Դրանով ներկայացումը կրճատվեց քսան րոպեով, բայց դրությունը չփրկվեց։

Հիշեցի, որ ընդմիջումներից բացի դադարներ էլ են լինում։ Այսպես, օրինակ, կանգնած է դերասանուհին և արտասանելով ուղղում է ծաղկամանի ծաղիկները։ Խոսելը չի խոսում, բայց ժամանակը հո անցնում է։ Հետևաբար, տեքստը տան մեջ քթի տակ կարդալը մի բան է, իսկ բեմից արտասանելը՝ բոլորովին այլ։

Պետք էր լլի ինչ-որ բաներ դուրս գցել պիեսից, իսկ թե ինչ՝ հայտնի չէր։ Ամեն ինչ կարևոր էր թվում ինձ, իսկ բացի դրանից, բավական էր այս կամ այն բանը նկատի առնել՝ արտաքսման, երբ դժվարությամբ սարքված շինությունն ամբողջովին սկսում էր ցրիվ գալ, և երազում տեսնում էի, որ թափվում են քիվերն ու փուլ են գալիս պատշգամբները, և երազներն այդ մարգարեական էին։

Այդ ժամանակ վտարեցի գործող անձանցից մեկին, որից մի պատկեր ծռվեց, կողք թողվեց, հետո լրիվին դուրս թռավ ու մնաց տասնմեկ պատկեր։

Հետագայում որքան էլ գլուխ ջարդեցի, որքան էլ ծխեցի, ոչ մի բան կրճատել չկարողացա։ Ձախ քունքս ամեն օր ցավում էր։ Հասկանալով, որ այլևս բան դուրս չի գա, որոշեցի գործը թողնել իր բնական ընթացքին ու ճամփա ընկա Պոլիկսենա Տորոպեցկայայի մոտ։

«Ոչ, առանց Բոմբարդովի յոլա չեմ դնա...»— մտածում էի ես։ .

Եվ Բոմբարդովը շատ օգնեց ինձ։ Նա բացատրեց, որ թե երկրորդ անգամ արդեն խոսքի մեջ ընկած այդ Հնդկաստանը, թե նախաբաղնիքը ամենևին էլ վառանցանք չեն և որ ես ճիշտ եմ լսել։ Այժմ վերջնականապես պարզվեց, որ Անկախ Թատրոնի գլուխ են կանգնած երկու տնօրեն՝ Իվան, ինչպես արդեն գիտեի, Վասիլևիչը և Արիստարխ Պլատոնովիչը...

— Ասացեք, ի դեպ, ինչու՞ այն առանձնասենյակում, ուր ես պայմանագիր ստորագրեցի, միայն մի դիմանկար էր՝ Իվան Վասիլևիչինը։

Այստեղ սովորաբար շատ ճարտար Բոմբարդովի լեզուն կապ ընկավ.

— Ինչո՞ւ... Ներքևո՞ւմ... Հըմ... Հըմ... Արիստարխ Պլատոնովիչը... նա... այնտեղ... նրա նկարը վերևում է...

Ես հասկացա, որ Բոմբարդովը դեռևս չի վարժվել ինձ, ամաչում է։ Դա պարզ էր նրա խառնաշփոթ պատասխանից։ Եվ այլևս հարցեր չտվեցի փափկանկատությամբ... «Այս աշ-

խարհը հմայում է, բայց և լի է հանելուկներով...», մտածում էի ես։

Հնդկաստա՞նը։ Շատ պարզ՝ Արիստարխ Պլատոնովիչը ներկայումս գտնվում է Հնդկաստանում, և Ֆոմսն պատրաստվում է նրան պատվիրած նամակ ուղարկել։ Ինչ վերաբերում է նախաբաղնիքին, այս դա դերասանական կատակ է։ Դիրեկտորական վերևի առանձնասենյակի ընդունարանին, ուր աշխատում էր Պոլիկսենա Վասիլևնա Տորոպեցկայան, անուն էին դրել և կպել էր։ Տորոպեցկայան Արիստարխ Պլատոնովիչի քարտուղարուհին էր...

— Իսկ Ավգուստա Ավդեևնա՞ն։

— է, բնական է, Իվան Վասիլևիչինը։

— Ըհը՛, ըհը՛...

— Ըհը՛ն՝ ըհը՛,— մտազբաղ ինձ նայելով ասաց Բոմբարդովը,— բայց ես ձեզ շատ եմ խորհուրդ տալիս՝ աշխատեք լավ տպավորություն թողնել Տորոպեցկայայի վրա։

— Ես չեմ կարողանում։

— Ոչ, աշխատեցեք։

Ոլորած ձեռագիրը բռնած, ես բարձրացա թատրոնի վերին հարկաբաժինը և հասա այնտեղ, ուր ըստ ցուցումների, Նախաբաղնիքն էր գտնվում։

Նախաբաղնիքից առաջ մի սրահ կար՝ բազմոցով. այստեղ կանգ առա, մի քիչ հուզվեցի, ուղղեցի փողկապս, մտածեցի, թե ինչպես լավ տպավորություն թողնեմ Պոլիկսենա Տորոպեցկայայի վրա։ Եվ ինձ թվաց, թե Նախաբաղնիքից հեկեկոցներ եմ լսում։ «Սխալվում եմ»,— մտածեցի ես ու մտա Նախաբաղնիք, ըստ որում իսկույն պարզվեց, որ ամենևին էլ չեմ սխալվում։ Ես կռահեցի, որ դեղին գրասեղանի մոտ նստած ալ կարմիր ջեմպրով և դեմքի հոյակապ գույնով տիկինը հենց Պոլիկսենա Տորոպեցկայան է և հենց նա էլ հեծկլտում է։

Արցունքները հոսում էին Տորոպեցկայայի այտերով, նա մի ձեռքում ճմրթում էր թաշկինակը, մյուսով խփում գրասեղանին։ Ջեյլոտ, խոշորամարմին, կամաչ լամբակներով մի մարդ, վշտից ու սարսափից մոլորված աչքերով, կանգնել էր սեղանի մոտ, ձեռքերով օդը թրատելով։

— Պոլիկսենա Վասի՛լևնա, —հուսահատությունից վայրենացած ձայնով բղավում էր նա։— Պոլիկսե՞նա Վասիլևնա։ Դեռ չե՞ն ստորագրել։ Վաղը կստորագրեն։

— Սառնությո՞ւն է,— բացականչեց Պոլիկսենա Տրոպեցկայան։— Դուք սա՞ռն եք զգում, Դեմյան Կուզմիչ։ Սա՞ռն։

— Պոլիկսե՞նա Վասիլևնա։

— Այդ ներքևինները Արիստարխ Պլատոնովիչի տակ դավեր են նյութում, օգտվելով, որ նա Հնդկաստանում է, իսկ դուք օգնել եք նրանց։

— Պոլիկսե՞նա Վասիլևնա,— սարսափելի ձայնով գոռաց մարդը։— Ի՞նչ եք ասում։ Այսինքն որ ես իմ բարերարի տակ...

— Ոչի՞նչ չեմ ուզում լսել,— բղավեց Տրոպեցկայան։— Ամեն ինչ սու՞տ է, անարգ սուտ։ Ձեզ կաշառե՞լ են։

Այս մեկը լսելով, Դեմյան Կուզմիչը բղավեց.

— Պոլի... Պոլիկսե՞նա...— ու հանկարծ ինքն էլ սկսեց հեծկլտալ զարհուրելի, խուլ, կաղկանձուն բասով։

Իսկ Պոլիկսենան ձեռքը թափ տվեց, որպեսզի շրմփացնի սեղանին, շրմփացրեց և փոքրիկ սկահակից դուրս ցցված դրչածայրը խրեց ափի մեջ։ Այստեղ Պոլիկսենան կամացուկ ծղրտաց, վեր թռավ գրասեղանի մոտից, ընկավ բազկաթոռին ու սկսեց ոտքերը գետնին խփել՝ արտասահմանյան կոշիկներ էր հագել, ճարմանդներին ապակյա գոհարներով։

Դեմյան Կուզմիչը նույնիսկ չբղավեց, այլ մի տեսակ որսվայնաձայն ռռնոց արձակեց.

— Տե՞ր աստված։ Բժի՞շկ,— և դուրս նետվեց։ Նրանից հետո ես նույնպես նախասրահ դուրս նետվեցի։

Մի րոպե անց իմ մոտով մի մարդ վազեց, մոխրագույն կոստյումով, վիրակապը և սրվակը ձեռքին, ու թափով մտավ նախաբաղնիք։

Ես լսեցի նրա ճիչը.

— Սիրելի՞ս։ Հանգստացե՞ք։

— Ի՞նչ է պատահել,— նախասրահում շշուկով հարցրեցի Դեմյան Կուզմիչին։

— Հրամեցեք,— բարբառաց Դեմյան Կուզմիչը, վրաս հառելով հուսալքված, արցունքակալած աչքերը,— ուղարկեցին ինձ հանձնաժողով՝ մերոնց ուղեգիրը բերելու, Սոչիի համար, հոկտեմբերին... ինչ ասեմ, չորս ուղեգիր տվին, իսկ Արիստարխ Պլատոնովիչի բարեկամի համար, չեմ իմանում ինչու, մոռացել էին ստորագրել հանձնաժողովում... Ասացին, թե վաղը տասներկուսին արի... Հիմա էլ, հրամեցեք, ես տա՞կ եմ քանդում։— Եվ Դեմյան Կուզմիչի ռառապագին աչքերից երևում էր, որ նա

մաքուր մարդ է, ով մի դավ էլ չի նյութել և դավերով ընդհանրապես չի զբաղվում։

Նախաքաղնիքից մի թույլ «ա՞յ» լսվեց, և Դեմյան Կուզմիչը նախասրահից ցրիվ եկավ ու անհետ չքացավ։ Մի տասը րոպե անց հեռացավ նաև բժիշկը։ Որոշ ժամանակ նստեցի սրահի բազմոցին, մինչև որ նախաքաղնիքից գրամեքենայի կտկտոց լսվեց, համարձակություն առա ու ներս մտա։

Պոլիկսենա Տորոպեցկայան, հարդարված ու խաղաղված, գրասեղանի մոտ նստած մեքենագրում էր։ Ես գլուխ տվեցի, ջանալով, որ դա հաճելի և միաժամանակ արժանապատվությամբ լի խոնարհում լինի և արժանավայել ու հաճելի ձայնով սկսեցի խոսել, որից, ի զարմանս ինձ, ձայնս խեղված հնչեց։

Բացատրելով, որ ես այսինչն եմ, իսկ Ֆոման ինձ այստեղ է ուղարկել պիեսը թելադրելու համար, Պոլիկսենայից հրավեր ստացա նստել ու սպասել։ Այդպես էլ արեցի։

Նախաքաղնիքի պատերին բազմաթիվ լուսանկարներ, դագեռոտիպեր ու պատկերներ կային, որոնց մեջ փշխում էր սերթուկով ու յոթանասունական թվականների այտամորուսներով, ներկայանալի մի տղամարդու մեծ, յուղաներկ դիմանկարը։ Ես կռահեցի, որ դա Արիստարխ Պլատոնովիչն է, բայց չհասկացա, թե ով էր այն օդեղեն սպիտակ օրիորդը կամ տիկինը, որը դուրս էր նայում Արիստարխ Պլատոնովիչի ետևից ու ձեռքում թափանցիկ ծածկոց ուներ բռնած։ Այդ հանելուկն այն աստիճան տանջեց ինձ, որ պատշաճ պահ ընտրելով, հազացի ու հարցրեցի։

Հետևեց դադար, որի ընթացքում Պոլիկսենան հայացքը վրաս սևեռեց, ասես զննում էր ինձ ու վերջապես պատասխանեց, բայց մի տեսակ հարկադրված.

— Դա Մուսան է։

— Ա-ա՜,— ասացի ես։

Կրկին տկտկաց մեքենան, իսկ ես սկսեցի պատերին նայել ու համոզվեցի, որ յուրաքանչյուր նկարում կամ պատկերում Արիստարխ Պլատոնովիչն է այլևայլ մարդկանց հետ։

Այսպես, մի դեղնած հին նկար պատկերում էր Արիստարխ Պլատոնովիչին՝ անտառի եզրին։ Արիստարխ Պլատոնովիչը աշնանային, քաղաքի հագուստով էր, երկարաճիտք կրկնակոշիկներով ու ցիլինդրով։ Իսկ նրա ուղեկիցն արխալուղով էր, փամփշտակալով ու երկփողանի հրացանով։ Ուղեկցի դեմքը, պենսնեն, սպիտակած մորուքն ինձ ծանոթ թվացին։

Պոլիկսենա Տորոպեցկայան այստեղ հիանալի մի հատկություն ցուցաբերեց՝ միաժամանակ մեքենագրում և ինչ-որ կախարդական ձևով տեսնում էր, թե ինչ է կատարվում սենյակում։ Ես նույնիսկ ցնցվեցի, երբ նա առանց հարցի սպասելու ասաց.

— Այո, այո, Արիստարխ Պլատոնովիչն է Տուրգենևի հետ, որսատեղում։

Նույն կերպ իմացա, որ Սլավյանսկի բազարի մուտքի մոտ, երկձի կառքի կողքին կանգնած երկու մուշտակավորները Արիստարխ Պլատոնովիչն ու Օստրովսկին են։

Չորս հոգի սեղանի շուրջ, իսկ ետևում՝ ֆիկուս. Արիստարխ Պլատոնովիչը, Պիսեմսկին, Գրիգորովիչը և Լեսկովը։

Հաջորդ նկարի մասին հարցնելն ավելորդ էր. ոտաբաց, երկար շապիկով ծերունին, ձեռքերը խրած գոտկի տակ, փունջ-փունջ հոնքերով, անխնամ մորուքով և ճաղատ՝ ոչ այլ ոք էր, եթե ոչ Լև Տոլստոյը։ Արիստարխ Պլատոնովիչը կանգնած էր նրա դիմաց, ծղոտե տափակ գլխարկով և չեսուչայի ամառային բաճկոնով։

Բայց ջրաներկ մյուս նկարն ինձ ապշեցրեց ծայրաստիճան։ «Չի կարող պատահել»,— մտածեցի ես։ Աղքատիկ սենյակում, բազկաթոռին նստած էր երկար-երկար, թռչնային քթով մի մարդ, հիվանդ ու տագնապած աչքերով, հյուծված այտերին ուղիղ փնջերով թափված մազերով, նեղ ու բացգույն, փողքներիզներով տաբատը հագին, քառակուսի քթով կոշիկներով, կապույտ բաճկոնով։ Ձեռագիրը՝ ծնկներին, սեղանին՝ մոմն աշտանակի մեջ։

Տասնվեց տարեկանի մոտ մի երիտասարդ, դեռևս առանց այտամորուսների, բայց միևնույն գոռոզ քթով՝ մի խոսքով, անկասկած Արիստարխ Պլատոնովիչը՝ բաճկոնակով, կանգնած էր, ձեռքերով հենված սեղանին։

Աչքերս չռեցի Պոլիկսենայի վրա, իսկ նա չոր-չոր պատասխանեց.

— Այո՛, այո՛։ Գոգոլն Արիստարխ Պլատոնովիչին կարդում է «Մեռած հոգիների» երկրորդ մասը։

Մազերս շարժվեցին գլխիս վրա, ասես ինչ-որ մեկը փչեց ետևից ու մի տեսակ ինքնըստինքյան բերանիցս ակամա թռավ.

— Իսկ քանի՞ տարեկան է Արիստարխ Պլատոնովիչը։

Անպարկեշտ հարցիս համապատասխան պատասխան ստացա, ընդ որում Պոլիկսենայի ձայնի մեջ մի թրթիռ զգացվեց.

— Արիստարխ Պլատոնովիչի նման մարդկանց համար տարիք գոյություն չունի։ Ըստ երևույթին, ձեզ շա՞տ է զարմացնում, որ Արիստարխ Պլատոնովիչի գործունեության ընթացքում շատերն են հնարավորություն ունեցել օգտվելու նրա ընկերակցությունից։

— Ի սե՜ր աստծո,— գոչեցի ես վախեցած։— Միանգամայն հակառակը... Ես...— Բայց այլևս խելքը գլխին բան չասացի, որովհետև մտածեցի. «Իսկ ի՞նչ՝ հակառակը... Ինչե՞ր եմ դուրս տալիս»։

Պոլիկսենան լռեց, ու ես մտածեցի, «Ոչ, ինձ չհաջողվեց նրա վրա լավ տպավորություն թողնել, ավա՜ղ, դա պարզ է»։

Այդ ժամանակ դուռը բացվեց, աշխույժ քայլվածքով նախաբաղնիք մտավ մի տիկին, և նայելուն պես ճանաչեցի Լյուդմիլա Սիլվեստրովնա Պրյախինային՝ պատկերասրահից։ Տիկնոջ հագին նույնն էր, ինչ և այնտեղ՝ թե՛ գլխաշորը, թե՛ նույն թաշկինակը ձեռքում, միևնույն ձևով էլ բռնել էր, ճկույթը վեր ցցած։

Ես մտածեցի, որ վատ չէր լինի փորձել նրա վրա ես լավ տպավորություն թողնել, ճիշտ է, զուգընթացաբար, ու քաղաքավարի գլուխ տվեցի, բայց մի տեսակ աննկատ անցավ դա։

Ներս վազելով, տիկինն սկսեց գեղգեղուն ծիծաղել ու բացականչեց.

— Ո՜չ, ո՜չ։ Մի՞թե չեք տեսնում։ Մի՞թե չեք տեսնում։

— Իսկ ի՞նչ կա որ,— հարցրեց Տորոպեցկայան։

— Արեգա՜կը, արեգա՜կը,— բացականչեց Լյուդմիլա Սիլվեստրովնան՝ խաղացնելով թաշկինակը և մի քիչ էլ նույնիսկ պար գալով։— Ուշ ամա՜ռ է, ուշ ամա՜ռ։

Պոլիկսենան Լյուդմիլա Սիլվեստրովնային նայեց խորհրդավոր աչքերով ու ասաց.

— Այստեղ մի անկետա պիտի լրացնել։

Լյուդմիլա Սիլվեստրովնայի ուրախությունն իսկույն ընդհատվեց, և դեմքն այնքան փոխվեց, որ նկարով հիմա ոչ մի դեպքում չէի ճանաչի։

— Ի՞նչ անկետա։ Ա՜խ, աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ։ (Ես արդեն ձայնն էլ չճանաչեցի)։— Հենց նոր ուրախանում էի արեգակով, կենտրոնացել էի ինքս իմ մեջ, ինչ-որ բան էի ամփոփել, հատիկ էի

աճեցրել, հազիվհազ հնչեցին լարերը, ես դողում էի, կարծես սաճար... և ահա՛... Դե, ավեք, ավեք տեսնեմ։

— Բղավելու հարկ չկա, Լյուդմիլա Սիլվեստրովնա,— ցածրաձայն նկատեց Տրոպեցկայան։

— Ես չե՛մ բղավում։ Ես չե՛մ բղավում։ Եվ ոչինչ չե՛մ տեսնում։ Գարշելի է տպագրած...— Պրյախինան աչքերը տարավբերեց դորշագույն հարցաթերթիկի վրայով և հանկարծ ետ մղեց դա։— Ա՜խ, ինքներդ գրեցեք, ինքներդ։ Ես ոչինչ չեմ հասկանում այս գործերից։

Տրոպեցկայան թոթվեց ուսերը, վերցրեց գրիչը։

— Դե հա՛, Պրյա՛խինա, Պրյա՛խինա,— նյարդայնացած գոչեց Լյուդմիլա Սիլվեստրովնան,— հա՛ Լյուդմիլա Սիլվեստրովնա։ Եվ բոլորն էլ գիտեն, ոչինչ չեմ թաքցնում։

Տրոպեցկայան երեք բառ գրանցեց հարցաթերթիկում ու հարցրեց.

— Ե՞րբ եք ծնվել։

Այս հարցը Պրյախինայի վրա զարմանալի ներգործություն ունեցավ. այտոսկրերի վրա կարմիր բծեր երևացին, ու նա հանկարծ սկսեց շշնջալ.

— Սո՛ւրբ աստվածածին։ Սա ի՞նչ բան է։ Չեմ հասկանում, թե ո՞ւմ է դա պետք։ Ինչո՞ւ։ Ինչի՞ համար։ Դե, լավ, լավ։ Ծնվել եմ մայիսին, մայիսին։ Է՞լ ինչ է պետք։ Ի՞նչ։

— Տարեթիվն է պետք,— մեղմաձայն ասաց Տրոպեցկայան։

Պրյախինայի աչքերը ծռվեցին քթի կողմը, և ուսերն սկսեցին ցնցվել։

— Օ՛հ, ինչպե՜ս կուզենայի,— շշնջաց նա,— որպեսզի Իվան Վասիլևիչը տեսներ, թե դերասանուհուն ինչպե՜ս են չարչարում փորձից առաջ...

— Չէ, Լյուդմիլա Սիլվեստրովնա, այսպես չի լինի,— պատասխանեց Տրոպեցկայան,— հարցաթերթիկը տարեք տուն և ինքներդ լրացրեք, ինչպես կամենաք։

Պրյախինան, բերանը ծամածռելով, խլեց թուղթն ու սկսեց խոթել պայուսակի մեջ։

Այդ ժամանակ զրնգաց հեռախոսը, և Տրոպեցկայան հատու բղավեց.

— Այո՛։ Ո՛չ, այ ընկեր։ Ի՞նչ տոմսեր։ Այստեղ ոչ մի տոմս չկա... Ի՞նչ։ Քաղաքացի։ Ջուր տեղը զբաղեցնում եք։ Այստեղ ոչ մի տո... Ի՞նչ։ Ա՜խ։— Տրոպեցկայան կաս-կարմիր կտրեց։—

Ա՜խ, ներեցեք։ Ձայնից չճանաչեցի։ Այո, իհարկե, իհարկե։ Ուղղակի հսկիչի մոտ կլինեն։ Նաև ծրագրերը, ես կկարգադրեմ, որ թողնեն։ Իսկ Ֆեոֆիլ Վլադիմիրովիչը չի՞ գալու։ Շա՜տ ենք ափսոսում։ Շա՜տ։ Հաջողություն, ամենայն հաջողություն ձեզ։

Շփոթված Տորոպեցկայան կախեց ընկալուչն ու ասաց.

— Ձեր պատճառով կոպտեցի ոչ նրան, ում պետք էր։

— Ա՜խ, թողեք, թողեք այդ ամենը,— ջղագրգիռ բացականչեց Պրյախինան։— Կործանվա՜ծ է հատիկը, փչացա՜ծ է օրը։

— Այո,— ասաց Տորոպեցկայան,— խմբի վարիչը խնդրեց, որ անցնեք իր մոտ։

Թեթևակի շառագույն անցավ Պրյախինայի այտերով, նա գոռոզաբար վեր քաշեց հոնքերը։

— Իսկ ինչո՞ւ եմ նրա պետքը եկել։ Անչա՜փ հետաքրքիր է։

— Հանդերձապահուհի Կորոլկովան է ձեզնից բողոքել։

— Ի՞նչ Կորոլկովա, ի՞նչ բան,— գոչեց Պրյախինան։— Դա՞ ով է։ Ա՜հ, հիշեցի, հիշեցի։ Ինչպես կարելի է մոռանալ,— և Լյուդմիլա Սիլվեստրովնան այնպես ծիծաղեց, որ մարմնովս սարսուռ անցավ՝ վույոցով և առանց շրթունքները բացելու,— ինչպե՞ս կարելի է մոռանալ այդ Կորոլկովային, որն իմ փեշը փչացրեց։ Ի՞նչ է, չարախոսե՞լ է իմ հասցեին։

— Նա բողոքում է, որ դուք չարությունից ճմկտել եք իրեն զգեստարանում, վարսավիրների ներկայությամբ,— քնքշորեն ասաց Տորոպեցկայան, ըստ. որում. նրա բյուրեղապակյա աչքերը մի պահ շողշողացին։

Տորոպեցկայայի բառերի առաջացրած տպավորությունն ապշեցրեց ինձ։ Հանկարծ Պրյախինան լայն ու շեղակի բացեց բերանը, ինչպես ատամնաբույժի մոտ, և աչքերից երկու առվակ արցունք ցայտեց։ Ես կուչ եկա բազկաթոռի մեջ ու չգիտես ինչու ոտքերս վեր բարձրացրեցի։ Տորոպեցկայան սեղմեց զանգի կոճակը, և դռնից իսկույն ներս խցկվեց Դեմյան Կուզմիչի գլուխը ու վայրկենապես անհետացավ։

Իսկ Պրյախինան բռունցքը սեղմեց ճակատին և սկսեց բղավել սուր, բարձր ձայնով.

— Ուզում են իմ գլուխն ուտե՜լ։ Տե՜ր աստված։ Տե՜ր աստված։ Տե՜ր աստված։ Սո՜ւրբ աստվածածին, գոնե դու տես, թե ինչ են անում ինձ հետ այս թատրոնում։ Ստո՜ր Պելիկան։ Իսկ Գերասիմ Նիկոլաևիչը դավաճա՞ն է։ Պատկերացնում եմ, թե ինչե՞ր է դուրս տվել իմ մասին Սիվցև Վրաժեկում։ Բայց ես

կընկնե՛մ Իվան Վասիլևիչի ոտքերը։ Կաղաչեմ, որ լսի՛ ինձ...— Նրա ձայնը մարեց ու խզվեց։

Այդ ժամանակ դուռը թափով բացվեց, ներս վազեց նույն բժիշկը։ Նրա ձեռքին սրվակ ու փոքրիկ գավաթ կար։ Ոչ որի և ոչինչ չհարցնելով, նա սովոր շարժումով սրվակից գավաթի մեջ լցրեց պղտոր հեղուկը, բայց Պրյախինան խռպոտ բղավեց.

— Թողե՛ք ինձ։ Թողե՛ք ինձ։ Սառը մարդիկ,— ու դուրս վազեց։

Նրան հետևեց բժիշկը, բացականչելով՝ «Սիրելի՛ս», իսկ բժշկի հետևից դուրս թռավ չգիտես որտեղից ընկած Դեմյան Կուզմիչը, այս ու այն կողմ դոփդոփելով հոգատար տառապող ոտքերով։

Բացված դռան արանքից լսվեց ստեղների ճողփյուն, և հեռավոր մի ձայն կրքոտ երգեց.

— «...և աշխարհի թագուհին կլի՛... ի... ի...— ձայնը լայնացավ, ուժգին ծավալվեց,— նե... ես՛...» — բայց դուռը փակվեց ու ձայնը մարեց։

— Դեհ, ես ազատվեցի, սկսենք,— ասաց Տորոպեցկայան, մեղմորեն ժպտալով։

ԳԼՈՒԽ XI

## ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՄ ԹԱՏՐՈՆԻ ՀԵՏ

Տորոպեցկայան կատարելապես էր տիրապետում մեքենագրության արվեստին։ Երբեք նման բան չէի տեսել։ Պետք չէր թելադրել ոչ կետադրական նշանները, ոչ էլ կրկնել, թե ով է խոսում։ Այն աստիճան ընտելացա, որ ետուառաջ ճեմելով նախաբաղնիքում, դադար էի տալիս, մտածում, ապա ասում. «Չէ՛, սպասեք...», փոխում էի գրածը, սկսեցի ամենևին չհիշեցնել, թե ով է խոսում, մրթմրթում էի ու բարձրաձայն խոսում, բայց ինչ էլ անեի, Տորոպեցկայայի ձեռքերի տակից դուրս էր գալիս պիեսի՝ համարյա առանց ջնջումների, կատարելապես հավասար էջը, առանց մեկ հատիկ քերականական սխալի։ Տեղնուտեղը կարելի էր տպարան ուղարկել։

Մենք տպում էինք հեռախոսազանգերի նվագակցության ներքո։ Սկզբնական շրջանում դրանք խանգարում էին ինձ, բայց

Հետո այնպես վարժվեցի, որ սկսեց դուր գալ։ Պոլիկսենյան կանչահարողների հախից գալիս էր անսովոր ճարպկությամբ։ Նա միանգամից բղավում էր.

— Այո՛։ Ա՛յ ընկեր, արագ խոսեք։ Ես զբաղված եմ։ Այո՞։

Նման ընդունելությունից լարի մյուս ծայրին գտնվող ընկերը շփոթվում էր, սկսում խելքին փչածը դուրս տալ և վայրկենապես կարգի հրավիրվում։

Տորոպեցկայայի գործունեության շրջանակը լափազանց ծավալուն էր։ Հեռախոսազանգերից համոզվեցի։

— Այո,— ասում էր Տորոպեցկայան։— Ոչ, դուք սխալ եք զանգահարում։ Ես ոչ մի տոմս չունեմ... Ես քեզ կզնդակահարեմ։ (Սա ինձ էր ասում, կրկնելով արդեն մեքենագրած դարձվածքը)։

Նորից զանգ։

— Բոլոր տոմսերն արդեն վաճառված են,— ասում էր Տորոպեցկայան,— ես փոխտոմս չունեմ... Դրանով ոչինչ չես ապացուցի (ինձ)։

«Հիմա եմ սկսում հասկանալ, թե ինչ քանակությամբ ձրի թատրոն գնալ ցանկացողներ կան Մոսկվայում,— մտածում էի ես։— Եվ տարօրինակ բան՝ նրանցից ոչ ոք չի փորձում ձրի երթևեկել տրամվայով։ Ճիշտ նույնպես էլ նրանցից ոչ ոք չի մտնի խանութ ու խնդրի, որ իրեն ձրի մի տուփ ձուկ տան։ Ինչո՞ւ են գտնում, որ թատրոն գնալիս չպետք է վճարել»։

— Այո, այո,— բղավում էր Տորոպեցկայան խոսափողի մեջ։— Կալկաթա, Փենջաբ, Մադրաս, Ալոգաբադ... Ոչ, հասցեն չենք տալիս։ Հետո՞,— ասում էր ինձ։

— Ես թույլ չեմ տա, որ նա իսպանական սերենադներ երգի իմ հարսնացուի լուսամուտի տակ,— խանդավառված ասում էի ես, վազվզելով նախարաղնիքում։

— Լուսամուտի տակ...— կրկնում էր Տորոպեցկայան։

Բայց առ բայց գրամեքենան զրնգում էր։ Կրկին՝ հեռախոսը։

— Այո։ Անկախ Թատրոնն է։ Ես ոչ մի տոմս չունեմ։ Լուսամուտի տակ...

— Լուսամուտի տակ,— ասում էի ես։— Երմակովը կիթառը նետում է հատակին և դուրս գալիս պատշգամբ։

— Այո։ Անկախն է։ Ես ոչ մի տոմս չունեմ... Պատշգամբ։

— Աննան նետվում է... ոչ, պարզապես գնում է նրա ետևից։

— Գնում է... Այո՞։ Ա՛հ, այո։ Ընկեր Բուռավլև, ձեր ասա-ծները կլինեն Ֆիլյայի մոտ, դրանենցուցում։ Հաջողություն։

— **Անհա.** նա ինքնասպանություն կգործի Բախտին. Չի գործի։

— Այո, բարև ձեզ։ Այո, նրա Հ... Հետո՝ Անդամանյան կրդ-գինեն։ Ցավոք սրտի հասցեն տալ չեմ կարող։ Ալբերտ Ալբերտո-վիչը... Չի գործի...

Պետք է բառ արժանվույն գնահատել Պոլիկսենա Տորոպեց-կայային՝ իր գործը գիտեր։ Նա մեքենագրում էր ասես մատով, երկու ձեռքով։ Հենց գնում էր հեռախոսը, մեքենագրում էր մի ձեռքով, մյուսով վերցնում ընկալուչն ու բղավում.

— Կայլիությունը չի հավանել, ինքնազգացողությունը լավ է...

Դեմյան Կուզմիչը հաճախ էր ներս մտնում, մոտ էր վազում դրասեղանին, ինչ-որ թղթեր տալիս։ Տորոպեցկայան աջ աչքով կարդում էր, կնիքներ դնում, ձախով մեքենագրում. «Հարմոնն ուրախ նվագում է, բայց դրանից...»

— Չէ, սպասեք, սպասեք,— գոչում էի ես,— չէ, ոչ ուրախ, այլ ինչ-որ խորոխտ... կամ թե չէ, սպասեք...— Այնուհ կարած նայում էի պատին, չիմանալով, թե ինչպես է նվագում հար-մոնը։

Այդ ընթացքում Տորոպեցկայան երեսին փիմափողի էր քսում, հեռախոսով ասում ոմն Միսսիի, որ սեզոնիրանը կոճկելու թան-թիկները Ալբերտ Ալբերտովիչը կվերցնի Վիեննայում։ Զանազան մարդիկ էին հայտնվում նախասրահում, և սկզբնական շրջա-նում ամաչում էի թելադրել նրանց ներկայությամբ։ Թվում էր, թե միակ մերկն եմ հագնվածների միջև, բայց շուտով վարժվեցի։

Գնում-գալիս էր Միշա Պանինը և ամեն անգամ մոտով անցնելիս՝ ի քաջալերումն սեղմում էր նախաբազուկս ու ներս մտնում մի դռնով, որից այն կողմ, ինչպես արդեն իմացա, գտնվում էր նրա վերլուծական առանձնասենյակը։

Մի տարեց, մռայլ ու խոժոռ մարդ էլ եկավ, նստեց բազմո-ցին, աչքի անցկացրեց լրագիրը, որից ավելի մռայլվեց ու գնաց։

Եկավ լավ սափրված, հռոմեական անկումային կիսադեմով և ներքևի շրթունքը քմահաճորեն դուրս ցցած Իվան Ալեքսանդրո-վիչ Պոլտորացկին՝ ռեժիսորական միավորման նախագահը։

— Միլ պարդոն։ Արդեն երկրորդ գործողությո՞ւնն եք տպա-գրում։ Հոյակապ է,— բացականչեց նա ու ներս մտավ մյուս դռնով, ծաղրաբար ծալելով ոտքերը, որպեսզի ցույց տա, թե

*աշխատում է շաղմկել։ Դուռը բացվելիս լսվում էր, թե ինչպես է նա խոսում հեռախոսով։*

*— Ինձ համար մեկ է... Ես նախապաշարմունք չունեմ... Նույնիսկ ինքնատիպ բան է դա՝ ձիարշավարան են եկել վարտիքներով։ Բայց Հնդկաստանը չի ընդունի... Բոլորի համար միատեսակ է կարել՝ և՛ իշխանի, և՛ ամուսնու, և՛ բարոնի... Կատարյալ վարտիքներ են, թե գույնով, թե ձևով... Իսկ դուք ասեք, որ շալվար է պետք։ Գործ չունեմ։ Թող վերափոխեն։ Գրողի ծոցն ուղարկեք նրան։ Ի՞նչ է ստեր դուրս տալիս։ Պետյա Դիտրիխն այդպիսի կոստյումներ չի կարող նկարել։ Նա շալվար է նկարել, լսքիզները սեղանիս վրա են։ Պետյան... Նրբակիրթ է, թե նրբակիրթ չէ, ինքն էլ է շալվար հագնում։ Փորձված մարդ է։*

*Օրվա թեժ պահին, երբ մազերս փետելով, աշխատում էի պատկերացնել, թե ինչպես ավելի ճիշտ արտահայտեմ, որ ահա... մարդն ընկնում է... ատրճանակը ցած գցում... արյունը հոսո՞ւմ է, թե չի հոսում...— նախաբաղնիք մտավ մի ջահել, համեստ հագնված դերասանուհի և բացականչեց.*

*— Բարև ձեզ, Պոլիկսենա Վասիլևնա, հոգյակս։ Ձեզ համար ծաղիկներ եմ բերել։*

*Նա համբուրեց Պոլիկսեննային և գրասեղանին դրեց դեղնավուն չորս աստղածաղիկ։*

*— Իմ մասին Հնդկաստանից որևէ բան չկա՞։*

*Պոլիկսենան պատասխանեց, որ կա, և դարակից մի հաստ ծրար հանեց։ Դերասանուհին ալեկոծվեց։*

*— «Ասացեք Վեշնյակովային,— կարդաց Տորոպեցկայան,— որ ես վճռել եմ Կսենիայի դերի խնդիրը...»։*

*— Ա՜խ, հետո՞, հետո՞,— գոչեց Վեշնյակովան։*

*— «Պրասկովյա Ֆյոդորովնայի հետ Գանգեսի ափին էինք, և այնտեղ միտք հղացա։ Բանն այն է, որ Վեշնյակովան չպետք է մտնի մեջտեղի դռնից, այլ կողքից, այնտեղ, ուր դաշնամուրն է։ Թող չմոռանա, որ վերջերս է զրկվել ամուսնուց և մեջտեղի դռնից չի մտնի հանուն և ոչ մի բանի։ Նա քայլում է միանձնուհու պես, աչքերը ցած գցած, ձեռքին՝ դաշտային երիցուկի փնջիկ, ինչ և տիպական է յուրաքանչյուր այրու համար...»։*

*— Աստվա՜ծ իմ։ Որքա՜ն ճշմարտացի է։ Որքա՜ն խորը,— գոչեց Վեշնյակովան։— Ճշմարտացի՜։ Ահա թե ինչու էր անհարմար այդ մեջտեղի դուռը...*

— Սպասեցեք,— շարունակեց Տրոպեցկայան,— էլի բան կա,— ու կարդաց.— «Ասենք Վեշնյակովան թող դուրս գա որտեղից ուզում է։ Ես կգամ, այն ժամանակ ամեն ինչ պարզ կլինի։ Գանգեսն ինձ դուր չեկավ. ըստ իս, այդ գետին ինչ-որ բան պակասում է...»։ Դե, սա ձեզ չի վերաբերում,— նկատել տվեց Պոլիկսենան։

— Պոլիկսենա Վասիլևնա,— սկսեց Վեշնյակովան,— գրեցեք Արիստարխ Պլատոնովիչին, որ ես անչափ, անչափ շնորհակալ եմ։

— Լավ։

— Իսկ չի՞ կարելի, որ անձամբ գրեմ նրան։

— Ոչ,— պատասխանեց Պոլիկսենան,— նա ցանկություն է հայտնել, որ ինձնից բացի իրեն ոչ ոք չգրի։ Դա նրան կհուզեր իր մտորումների ժամանակ։

— Հասկանում եմ, հասկանում եմ,— գոչեց Վեշնյակովան, և պաչպչելով Տրոպեցկայային, հեռացավ։

Ներս մտավ միջին տարիքի, գեր, եռանդուն մի մարդ և դեռ դռան մեջ, ուրախությունից շողալով, բացականչեց.

— Նոր անեկդոտ լսե՞լ եք։ Ա՛, մեքենագրո՞ւմ եք։

— Ոչինչ, ընդմիջում ենք արել,— ասաց Տրոպեցկայան, և գեր մարդն, ըստ երևույթին, անեկդոտով համակված, բերկրանքից փայլելով, կռացավ Տրոպեցկայայի կողմը։ Ըստ որում ձեռքերով մատղկանց էր կանչում իր շուրջը։ Անեկդոտը լսելու ներկայացավ Միշա Պանինը, նաև Պոլտորացկին, հետո ինչ-որ մեկը։ Գլուխները խոնարհվեցին սեղանի վրա։ Ես լսեցի. «Եվ այդ ժամանակ ամուսինը վերադառնում է հյուրասենյակ...»։ Գրասեղանի մոտ ծիծաղեցին։ Գիրուկը մի քիչ էլ շշնջաց, որից հետո Միշա Պանինի ծիծաղի նոպան բռնեց՝ «Ահ, ա՛հ, ա՛հ...»։ Պոլտորացկին բղավեց «Հոյակա՛պ է», իսկ գեր մարդը երջանիկ-երջանիկ քրքջաց և անմիջապես դուրս վազեց, բղավելով.

— Վասյա՛։ Վասյա՛։ Սպասիր։ Լսե՞լ ես։ Նոր անեկդոտ եմ ծախում։

Բայց նրան չհաջողվեց անեկդոտը Վասյային ծախել, որովհետև Տրոպեցկայան ետ կանչեց։

Պարզվեց, որ Արիստարխ Պլատոնովիչը գիրուկի մասին էլ է գրել։

— «Հաղորդեցեք Ելագինին,— կարդում էր Տրոպեցկայան,— որ ամենից շատ նա պետք է վախենա արդյունքը ներկայացնելուց, որին շատ է հակվում նա միշտ»։

*Ելագինն այլայլվեց ու նայեց նամակին։*

*— «Ասացեք նրան,— շարունակեց Տորոպեցկայան,— որ գեներալի տան երեկույթի տեսարանում նա չպետք է անմիջապես ողջունի գնդապետի տիկնոջը, այլ նախօրոք պտտվի սեղանի շուրջբոլորը, շփոթված ժպտալով։ Նա օղու գործարան ունի և հանուն ոչ մի բանի անմիջապես չի ողջունի, այլ...»։*

*— Չեմ հասկանում,— խոսեց Ելագինը,— ներեցեք, չեմ հասկանում։— Ելագինը պտտվեց սենյակով մեկ, ասես ինչ-որ բանի շուրջ։— Չէ, այդ բանը չեմ զգում։ Ինձ համար չէ... Գնդապետի կինը նրա դիմաց է, իսկ նա չգիտես ինչու պիտի... Չեմ զգում։*

*— Դուք ուզում եք ասել, որ Արիստարխ Պլատոնովիչից ավելի լա՞վ եք հասկանում այդ տեսարանը,— ոչնչացնող ձայնով հարցրեց Տորոպեցկայան։*

*Այդ հարցը չշփոթեցրեց Ելագինին։*

*— Չէ, ես դա չեմ ասում։— Նա շառագունեց։— Բայց ինքներդ դատեք...— Ու նա կրկին պտտվեց սենյակում։*

*— Ես կարծում եմ, որ պետք է Արիստարխ Պլատոնովիչի ոտքն ընկնել, որ նա Հնդկաստանից...*

*— Ինչ եք մի գլուխ՝ ոտքն ընկնել, հա՛ ոտքն ընկնել...— հանկարծ բոռաց Ելագինը։*

*«Է՛-հե՜, ապրի տղան»,— մտածեցի ես։*

*— Ավելի լավ է, լսեք, թե ինչ է գրում Արիստարխ Պլատոնովիչը։— Ու կարդաց.— «Ասենք թող անի իր ուզածի պես։ Ես կգամ, և պիեսը բոլորի համար պարզ կդառնա»։*

*Ելագինն ուրախացավ և այնպիսի մի օյին խաղաց։ Ձեռքը տարավ մի այտի, ապա մյուսի վրայով և ինձ թվաց, թե աչքիս առաջ այտամորուսներ բուսեցին։ Ապա հասակը փոքրացրեց, գոռոզաբար ուռեցրեց ռունգերը և ատամների արանքից ասաց այն բոլորը, ինչ իր մասին գրված էր նամակում, այդ ընթացքում մազեր պոկոտելով երևակայական այտամորուսներից։*

*«Ի՜նչ դերասան է»,— մտածեցի ես։ Հասկացա, որ Արիստարխ Պլատոնովիչին է պատկերում։*

*Տորոպեցկայայի դեմքը կաս-կարմիր կտրեց, նա սկսեց ծանր շնչել։*

*— Ես ձեզ կխնդրեմ...*

*— Ասենք...— ատամների արանքից խոսեց Ելագինը, ուսերը թոթվեց, իր բնական ձայնով ասաց.— Չեմ հասկանում,— և*

դուրս գնաց։ Ես տեսա, թե ինչպես նախասենյակում ևս մի պտույտ գործեց նա, տարակուսանքով ուսերը թոթվեց ու անհետացավ։

— Ահ, այս միջինները,— սկսեց Պոլիկսեննան։— Ոչ մի որբություն։ Լսեցի՞ք, թե ինչպես են խոսում։

— Ք՞հը՛մ,— պատասխանեցի ես, չիմանալով, թե ինչ ասեմ և գլխավորը՝ չհասկանալով, թե ինչ ասել է «միջին»։

Առաջին օրվա ավարտին պարզ դարձավ, որ նախաբաղնիքում պիեսը չի կարելի մեքենագրել։ Պոլիկսեննային երկու օրով ազատեցին իր անմիջական պարտականություններից և մեզ երկուսիս տեղափոխեցին կանացի զգեցարաններից մեկը։ Դեմյան Կուզմիչը, փնչացնելով, գրամեքենան քարշ տվեց այնտեղ։

Ուշ ամառը նահանջեց և տեղը զիջեց թաց աշնանը։ Պատուհաններից մոխրագույն լույս էր թափանցում։ Ես նստում էի օթոցին, պատկերս՝ հայելապատ պահարանին, իսկ Պոլիկսեննան՝ աթոռակին։ Ես ինձ մի տեսակ երկհարկանի էի զգում։ Վերևի հարկում անկանոն խառնաշփոթություն էր, որը պետք էր կարգի բերել։ Պիեսի պահանջկոտ հերոսները արտասովոր հոգս էին պատճառում հոգուս։ Յուրաքանչյուրը պահանջում էր հարկավոր խոսքեր. յուրաքանչյուրն աշխատում էր առաջին տեղը գրավել, ետ մղելով մյուսներին։ Պիես ուղղելն արտակարգ հոգնեցուցիչ գործ է։ Վերին հարկն աղմկում ու իրար էր անցնում գլխիս մեջ ու խանգարում էր վայելել ներքևինի հաճույքը, ուր հաստատված, կայուն անդորր էր թագավորում։ Փոքրիկ անուշեղենի տուփի նման զգեցարանի պատերից արհեստական ժպիտը դեմքերին նայում էին չափազանց փարթամ շուրթերով կանայք, աչքերի տակ՝ ստվերներ։ Այդ կանայք կրինոլին կամ ֆիժմա էին հագել։ Նրանց արանքներում լուսանկարներից ատամ էին փայլեցնում տղամարդիկ, ցիլինդրները ձեռքներին։ Նրանցից մեկը հաստ էպոլետներ ուներ ուսերին։ Գինովցած, հաստ քիթը կախ էր ընկած շրթունքին, այտերն ու վիզը ծալքերով էին ակոսված։ Ի դեմս նրա չճանաչեցի Սլագինին, մինչև որ Պոլիկսեննան չասաց, որ նա է։

Ես նայում էի լուսանկարներին, օթոցից ելնելով ձեռք էի տալիս չվառվող լապտերիկներին, դիմափոշու դատարկ տուփին, ներշնչում էի ինչ-որ ներկի հազիվ որսալի հոտը և Պոլիկսեննայի գլանակների հաճելի բույրը։ Այստեղ լուռ էր, և այդ լռությունը խանգարում էր սոսկ գրամեքենայի կտկտոցն ու նրա

մայմ զանգերը, մեկ էլ հատակն էր ճռճռում երբեմն։ Բաց դըռնից երևում էր, թե ինչպես մերթ ընդ մերթ ոտնաթաթերի վրա անցնում էին չորուցամաք արտաքինով տարեց կանայք, օսլայած շրջազգեստների կույտեր տանելով։

Այս միջանցքի մեծ լռությունը հազվադեպ խախտվում էր հեռվից եկող երաժշտության պայթյուններով և ահարկու գոչյուններով։ Հիմա ես գիտեի, որ հին միջանցքների, ելարանների ու աստիճանների ոլոր-մոլոր խորքերից այն կողմ, բեմի վրա փորձում են «Ստեպան Ռազին» պիեսը։

Մենք սկսեցինք մեքենագրել ժամը տասներկուսին, իսկ երկուսին ընդմիջումն էր։ Պոլիկսենան գնաց իր սենյակը՝ տնտեսության գլուխ քաշելու, իսկ ես գնացի թեյարան։

Այնտեղ հասնելու համար ես պիտի թողնեի միջանցքն ու դուրս գայի սանդուղքների մոտ։ Եվ անմիջապես խախտվեց լռության հմայքը։ Աստիճաններով ելնում-իջնում էին դերասանուհիներ և դերասաններ, սպիտակ դռան ետևում զրնգում էր հեռախոսը, մեկ ուրիշ հեռախոս ներքևից պատասխանում էր նրան։ Ներքևում հերթապահում էր Ավգուստա Մենաժրակիի վարժեցրած ցրիչներից մեկը։ Ապա՝ միջնադարյան երկաթյա դարպաս, դրանից այն կողմ խորհրդավոր աստիճաններ և, ինչպես ինձ թվաց, անսահման բարձր աղյուսե մի կիրճ՝ հանդիսավոր, կիսախավար։ Այս կիրճում վեր էին ելնում պատերին թեք հենած մի քանի շերտ դեկորացիաներ։ Դրանց փայտե սպիտակ շրջանակների վրա երևում էին պայմանական խորհրդավոր մակագրություններ՝ «I ձ. ետև», «Իշխ. թիկն.», «Ննջասենյակ, 3-րդ գործ.»։ Աջ կողմս լայն, բարձր, ժամանակից սևացած դարպաս էր, մեջտեղում բացված դռնակով, վրան՝ հրեշավոր մի կողպեք, ու ես իմացա, որ դա բեմ է տանում։ Նույնպիսի դարպաս կար ձախ կողմս, որ բակ էր ելնում, և այստեղից բանվորները կրում էին դեկորացիաները, որոնք տեղ չէին արել կիրճում։ Ոտս միշտ կախ էի գցում կիրճում, որպեսզի միայնության մեջ անձնատուր լինեմ անուրջների, իսկ դա հեշտ էր, քանի որ հազիվ թե մեկնումեկը դիմացդ ելներ դեկորացիաների արանքի նեղ արահետի վրա, ուր կողք-կողքի անցնելու համար շրջվել էր պետք։

Երկաթյա դռան վրայի՝ օձի մեղմ սուլոցով օդը ծծող զսպանակը դուրս թողեց ինձ։ Ռտնաձայնս անհետացավ, ես գորգի վրա էի, պղնձյա առյուծի գլխից ճանաչեցի Գավրիիլ

Ստեպանովիչի առանձնասենյակի նախադուռ և դարձյալ զին-վորական նույն մահուդի վրայով գնացի այնտեղ, ուր մարդիկ չէին երևում, ձայներ էին լսվում՝ թեյարան։

Առաջինն աչքովս ընկավ հաստափոր փայլուն ինքնաեռը վաճառասեղանի ետևում, ապա կարճահասակ, տարիքն առած մի մարդ, կախ ընկած բեղերով, ճաղատ, և այն աստիճան տխուր աչքերով, որ խղճահարություն ու հուզմունք էր համակում յուրաքանչյուրին, ով դեռ չէր վարժվել նրան։ Տրտմագին հոգոց հանելով, տխուր մարդը կանգնած էր վաճառասեղանի մյուս կողմում և նայում էր կետայի խավիարով ու բրինզա պանրով բուտերբրոդների կույտին։ Դերասանները մոտենում էին բուֆետին, վերցնում այդ ուտելիքը, և այդժամ բուֆետապանի աչքերն արցունքով էին լցվում։ Նրան չէր ուրախացնում ոչ դրամը, որ վճարում էին ուտելիքի դիմաց, ու գիտակցումն այն բանի, թե ինքը կանգնած է մայրաքաղաքի լավագույն վայրում, Անկախ Թատրոնում։ Ոչինչ չէր ուրախացնում նրան, նրա սիրտը հավանորեն ցավում էր, երբ միտքն էր գալիս, որ մատուցարանի վրա եղած-չեղածն ահա կուտեն, վիթխարի ինքնաեռն ամբողջությամբ կխմեն։

Արցունքառատ աշնան լույսն էր թափանցում երկու պատուհանից, բուֆետից այն կողմ վառվում էր վարդակակաչի ձև ունեցող լամպը, երբեք չհանգչելով, անկյունները կորած էին հավերժական աղջամուղջում։

Ես ամաչում էի սեղանների շուրջ նստած անծանոթ մարդկանցից. վախենում էի մոտենալ թեև մոտենալ ուզում էի։ Սեղանների շուրջ խուլ քրքջոց էր լսվում, ամենուրեք ինչ-որ բան էին պատմում։

Մի բաժակ թեյ խմելուց և բրինզայով բուտերբրոդ ուտելուց հետո գնացի թատրոնի մյուս տեղերը։ Ամենից շատ սիրել էի այն տեղը, որը կրում էր «գրասենյակ» անվանումը։

Սա խիստ տարբերվում էր թատրոնի մյուս տեղերից, քանի որ միակ աղմկոտ տեղն էր, որ ուր, այսպես ասած, փողոցի կյանքն էր ներս հորդում։

Գրասենյակը երկու մասից էր բաղկացած. առաջինը նեղլիկ մի սենյակ էր, դեպի ուր այնքան անսովոր սանդուղքներ էին բարձրանում բակից, որ առաջին անգամ թատրոն մտնող յուրաքանչյուր ոք անպայման ընկնում էր։ Առաջին սենյակում նստում էին երկու ցրիչ՝ Կատկովը և Բակվալինը։ Նրանց դիմաց, սեղա-

նիկի վրա երկու հեռախոս կար, և այդ հեռախոսները համարյա երբեք չէին լռում՝ զանգ զանգի վրա։

Շատ շուտ հասկացա, որ հեռախոսներով զանգահարում են միևնույն մարդուն և այդ մարդը գտնվում է կից սենյակում, որի դռանը ցուցանակ էր կախված.

Ներքին կարգականոնի վարիչ
Ֆիլիպ Ֆիլիպովիչ Տուլումբասով

Տուլումբասովից ավելի մեծ համբավ Մոսկվայում ոչ ոք չուներ և հավանաբար երբեք էլ չի ունենա։ Ինձ թվում էր, թե ամբողջ քաղաքը հեռախոսներով վրա է տվել Տուլումբասովին, և մերթ Կատկովը, մերթ Բակվալինը Ֆիլիպ Ֆիլիպովիչին միացնում էին իր հետ խոսելու ծարավի մարդկանց հետ։

Մեկնումեկն ասել է ինձ, թե՝ երազումս եմ տեսել, որ իբր Հուլիոս Կեսարը մի քանի տարբեր գործ միաժամանակ անելու ընդունակություն է ունեցել, օրինակ, ինչ-որ բան կարդալ ու լսել ինչ-որ մեկին։

Այստեղ վավերացնում եմ, որ Հուլիոս Կեսարն ամենաողորմելի ձևով գլուխը կկորցներ, եթե նրան Ֆիլիպ Ֆիլիպովիչի տեղը դնեին։

Բացի այն երկու ապարատներից, որոնք զնգզնգում էին Բակվալինի և Կատկովի ձեռքերի տակ, իր՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչի առջև ևս երկու հատ կար, իսկ հնագույն ձևի մեկ ուրիշն էլ կախված էր պատից։

Թարթիչահեր, լիքը-լիքը, դուրեկան, կլորերես մարդ էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը, արտակարգ շարժուն աչքերով, որոնց խորքում հանգչում էր բոլորին անհայտ, գաղտնի, ըստ երևույթին հավերժական, անդարմանելի թախիծ։ Նա նստում էր արգելապատից այն կողմ, չափազանց հարմարավետ անկյունում։ Ցերեկ թե գիշեր Ֆիլիպ Ֆիլիպովիչի սենյակում երեկո էր լինում, կանաչ ծածկոցով լամպը՝ վառ։ Ֆիլիպ Ֆիլիպովիչի դիմաց, գրասեղանին չորս օրացույց էր տեղադրված, ծայրեծայր գրոտած, օրինակ, այսպիսի խորհրդավոր գրերով. «Պրյախ. 2, պարտ. 4», «13 առ. 2», «Մոն. 77727» և նման բաներ։

Նույնտիպի նշաններով լցում էին նաև բացված հինգ ծոցատետր՝ սեղանի վրա։ Ֆիլիպ Ֆիլիպովիչի գլխավերևում կախված էր զորշ արջի խրտվիլակ, որի աչքերի մեջ էլեկտրական լամպեր էին դրված։ Ֆիլիպ Ֆիլիպովիչն արտաքին աշխարհից մեկուսաց-

ված էր արգելապատով, և օրվա ցանկացած ժամին այդ արգելապատի վրա փռված ընկած էին լինում ամենաբազմազան հագուստներով մարդիկ։ Այստեղ, Ֆիլիպ Ֆիլիպովիչի դեմով անցնում էր ամբողջ երկիրը, վստահ կարելի է ասել, այստեղ, նրա դիմաց էին բոլոր դասակարգերի, խմբերի, շերտերի, դավանանքի, սեռի, տարիքի մարդիկ։ Աղքատիկ հագնված, քրքրված գլխարկներով ինչ-որ քաղաքացուհիների փոխարինում էին զինվորականներ՝ տարբեր գույնի լամպակներով, զինվորականները տեղները զիջում էին լավ հագնված տղամարդկանց, կղբենու օձիքներով և օսլայած վերնաշապիկներով։ Օսլայածների մեջ երբեմն-երբեմն երևում էր չթե շեղօձիք վերնաշապիկ, խռիվ գանգուրներ, վրան՝ կեպկա։ Շքեղ մի տիկին, կզաքիսի մորթին ուսերին։ Ականջակալներով գլխարկ, աչքի տակը՝ կապտած։ Իգական սեռի դեռահաս, դիմափոշի քսած քթիկով։ Ճամճային կոշիկներով մի մարդ, հագին շույկա*, գոտին վրան կապած։ Եվս մի զինվորական, մեկ շեղանկյունի։ Ածիլված մեկը, վիրակապած գլխով։ Դողդողացող ծնոտով, մեռելի աչքերով և ընկերուհու հետ չգիտես ինչու ֆրանսերեն խոսող պառավ, ընկերուհու հագին էլ՝ տղամարդու կրկնակոշիկներ։ Քուրք։

Նրանք, ովքեր չէին կարողանում փորով պառկել արգելապատին, խռնվում էին ետևում, մեկ-մեկ վեր բարձրացնելով ճմրթված երկտողերը, մեկ-մեկ էլ երկչոտ ձայն տալով. «Ֆիլիպ Ֆիլիպովիչ»։ Մերթընդմերթ արգելապատը պաշարած ամբոխի մեջ էին մխրճվում կանայք կամ տղամարդիկ՝ առանց վերնազգեստի, հենց այնպես, վերնաշապիկներով կամ բաճկոններով, և ես հասկանում էի, որ դրանք Անկախ Թատրոնի դերասանուհիներն ու դերասաններն են։

Բայց ով էլ մոտենար արգելապատին, բոլորը, նվազագույն բացառությամբ, ունենում էին շողոմ տեսք, ժպտում էին քըծնանքով։ Բոլոր եկողները խնդրում էին Ֆիլիպ Ֆիլիպովիչին, բոլորը կախում ունեին նրա պատասխանից։

Երեք հեռախոսները զրնգում էին, երբեք չդադարելով, իսկ երբեմն էլ փոքրիկ առանձնասենյակը զնգզնգոցով էին լցնում երեքը միաժամանակ։ Ֆիլիպ Ֆիլիպովիչին դա ամենևին չէր շփոթեցնում։ Աջ ձեռքով վերցնում էր աջ կողմի ընկալուչը, դնում էր ուսին և սեղմում այտով, ձախով վերցնում էր մյուս

* Տղամարդու մահուդե վերնազգեստ։

ընկալուչը և սեղմում ձախ ականջին, ապա աջն ազատելով վերցնում էր իրեն պարզված երկտողերից մեկն ու սկսում խոսել երեքի հետ մեկտեղ՝ ձախ, աջ հեռախոսով, հետո այցելուի հետ, հետո կրկին ձախ, աջ, այցելուի հետ։ Աջով, այցելուին, ձախով, աջով, աջով։

Անմիջապես երկու ընկալուչն էլ գցում էր լծակներին և քանի որ ազատվում էին երկու ձեռքերն էլ, ապա երկու երկտող էր վերցնում։ Դրանցից մեկը ետ տալով, վերցնում էր դեղին ընկալուչը, մի պահ լսում, ասում. «Վաղը երեքին զանգահարեք», ընկալուչը տեղն էր դնում, այցելուին ասում. «Ոչինչ չեմ կարող»։

Որոշ ժամանակ անց սկսեցի հասկանալ, թե ինչ են խնդրում Ֆիլիպ Ֆիլիպովիչից։ Նրանից տոմս էին խնդրում։

Նրանից տոմս էին խնդրում ամենաբազմազան ձևերով։ Կային այնպիսիք, որոնք ասում էին, թե եկել են Իրկուտսկից, մեկնում են գիշերով և չեն կարող գնալ՝ «Անօժիտը» չտեսած։ Ինչ-որ մեկն ասում էր, որ էքսկուրսավար է, Յալտայից, ինչ-որ պատվիրակության ներկայացուցիչ։ Ինչ-որ մեկը, ոչ էքսկուրսավար, ոչ սիբիրցի և ոչ մի տեղ էլ չէր գնում, պարզապես ասում էր.

— Պետուխով, հիշո՞ւմ եք..

Դերասանուհիներն ու դերասաններն ասում էին.

— Ֆի՛լյա, ա՛յ Ֆիլյա, դասավորիր...

Մեկ ուրիշն ասում էր.

— Ցանկացած գնով, գինն ինձ համար մեկ է...

— Քսանութ տարի ճանաչելով Իվան Վասիլևիչին.— հանկարծ սվսվացնում էր մի պառավ, որի բերետի վրա ցեցը ծակ էր բացել,— ես վստահ եմ, որ նա չի մերժի ինձ...

— Ոտքի վրա կտամ,— միանգամից, անսպասելի ասում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը և առանց սպասելու շշկլված պառավի հաջորդ խոսքին, նրան մեկնում թղթի ինչ-որ կտոր։

— Մենք ութ հոգի ենք,— սկսում էր պնդակազմ մեկը և նորից հաջորդ խոսքերը սառում-մնում էին շրթունքներին, քանի որ Ֆիլյան արդեն ասում էր.

— Ազատ տեղերից,— ու մի թուղթ մեկնում։

— Ինձ Ամոլդ Ամոլդովիչն է ուղարկել,— սկսում էր ինչ-որ երիտասարդ, որ հագնված էր շքեղ երևալու հավակնությամբ։

«Ոտքի վրա կտամ»,— մտովի հուշում էի ու սխալվում։

— Ոչինչ չեմ կարող,— հանկարծ պատասխանում էր Ֆիլյան, մեն մի անգամ աչք սահեցնելով երիտասարդի դեմքի վրայով։

— Բայց Անոլդ...

— Չեմ կարող։

Եվ երիտասարդն անհետանում էր, ասես գետնի տակն անցնելով։

— Ես և կինս...— սկսում էր գիրուկ մի քաղաքացի։

— Վաղվա՞,— հարցնում էր Ֆիլյան հատու և արագ։

— Բարի։

— Տոմսարկղ,— բացականչում էր Ֆիլյան և գիրուկը, հըրմըշտելով, մի կողմ էր գնում, ձեռքին՝ թղթի կտոր, իսկ Ֆիլյան այդ ընթացքում արդեն բղավում էր խոսափողի մեջ. «Ո՛չ, Վա՛ղը», միաժամանակ ձախ աչքով կարդալով իրեն տված երկտողը։

Որոշ ժամանակ անց ես հասկացա, որ նա ամենևին չի ղեկավարվում մարդկանց արտաքին տեսքով և ինչ խոսք, ոչ էլ ճարպոտած թղթերով։ Կային համեստ, անգամ աղքատիկ հագնըված մարդիկ, որոնք ինձ համար անսպասելի, անվճար երկու տեղ էին ստանում չորրորդ կարգում և կային լավ հագնված ոմանք, ովքեր հեռանում էին ձեռնունայն։ Մարդիկ բերում էին հսկայական, գեղեցիկ մանդատներ Աստրախանից, Եվպատորիայից, Վոլոգդայից, Լենինգրադից և դրանք չէին ազդում կամ կարող էին ազդել միայն հինգ օր անց առավոտյան, իսկ մեկ-մեկ գալիս էին համեստ, սուսուփուս մարդիկ և բոլորովին չէին խոսում, այլ միայն ձեռք էին մեկնում արգելապատից այն կողմ և անմիջապես տեղ ստանում։

Կամաց-կամաց հասկացա, որ դիմացինս մարդկային կատարյալ իմացությամբ օժտված մեկն է։ Հասկանալով հուզվեցի ու սրտիս տակ սառնություն զգացի։ Այո, իմ դիմաց մեծագույն սրտագետ էր նստած։ Նա մարդկանց ճանաչում էր մինչև նվիրական խորքերը։ Կռահում էր նրանց թաքուն ցանկությունները, նրան հայտնի էին մարդկանց կրքերը, արատները, գիտեր ամեն բան, ինչ գաղտնի էր, նաև բարին էր ճանաչում։ Իսկ գլխավորը՝ նրանց իրավունքները գիտեր։ Նա գիտեր, թե ով և երբ պիտի գա թատրոն, ով իրավունք ունի չորրորդ կարգում նստել և ով պետք է խռնվի վերին շարքերում, նստի սանդուղքներին՝ ցնորական մի հույսով, որ հանկարծ ինչ-որ կախարդանքով տեղ կազատվի իր համար։

Ես հասկացա, որ Ֆիլիպ Ֆիլիպովիչի դպրոցը մեծագույն դպրոց էր։

Ասենք, ինչպես չճանաչեր մարդկանց, երբ նրա մոտով ծառայության տասնհինգ տարիների ընթացքում անցել էին տասնյակ հազարավոր մարդիկ։ Այդ թվում՝ ինժեներներ, վիրաբույժներ, դերասաններ, կինկազմակերպիչներ, զեղծարարներ, տնային տնտեսուհիներ, մեքենավարներ, ուսուցիչներ, մեցցո-սոպրանոներ, կառուցողներ, կիթառահարներ, գրպանահատներ, ատամնաբույժներ, հրշեջներ, անորոշ զբաղմունքի դիցուհիներ, լուսանկարիչներ, պլանագետներ, օդաչուներ, պուշկինագետներ, կոլտնտեսության նախագահներ, գաղտնի պչրուհիներ, ձիարշավարանի հեծյալներ, մոնտյորներ, վաճառողուհիներ, ուսանողներ, վարսավիրներ, կոնստրուկտորներ, նախկին տնատերեր, թոշակառու կանայք, գյուղական դասատուներ, գինեգործներ, թավջութակահարներ, աճպարարներ, մարդաթող կանայք, սրճարանի վարիչներ, պոկեր խաղացողներ, հոմեոպաթներ, նվագակցողներ, գրամոլներ, կոնսերվատորիայի հսկիչներ, քիմիկոսներ, դիրիժորներ, թեթև ատլետներ, շախմատիստներ, լաբորանտներ, խաբեբաներ, հաշվապահներ, շիզոֆրենիկներ, համտեսողներ, մանիկյուր անողներ, հաշվետարներ, նախկին հոգևորականներ, սպեկուլյանտներ, լուսատեխնիկներ։

Ֆիլիպ Ֆիլիպովիչի ինչի՞ն էին պետք թղթի կտորները։

Իր դիմաց հայտնվածի առաջին խոսքերն ու մի հայացքը բավական էին, որպեսզի իմանար, թե ինչի իրավունք ունի, և Ֆիլիպ Ֆիլիպովիչը պատասխանում էր, և այդ պատասխանները միշտ անսխալ էին։

— Ես,—հուզվելով, ասում էր մի տիկին,— երկու տոմս գնեցի «Դոն Կառլոսի» համար, դրեցի պայուսակս, տուն եմ գալիս...

Բայց Ֆիլիպ Ֆիլիպովիչն արդեն սեղմել էր զանգի կոճակը և, այլևս տիկնոջը չնայելով, ասում էր.

— Բակվալին։ Երկու տոմս են կորցրել... Կա՞րգը։

— Տասնմե...

— Տասնմեկերորդ կարգում, նե՛րս կթողնեք։ Կնստեցնե՛ք։ Կստուգե՛ք։

— Լսում եմ,— գոռում էր Բակվալինը, և տիկինն այլևս չկար, ու մեկ ուրիշն էր պառկում արգելապատին, խզխզացնում, թե վաղը մեկնում է։

— Այսպիսի բան չի լինի,— չարացած պնդում էր մի տիկին

և նրա աչքերը փայլատակում էին։— Նա արդեն տասնվեց տարեկան է։ Մի նայեք, որ կարճ շալվար է հագել...

— Տիկին, մենք չենք նայում, թե ով ինչ շալվար է հագել,— մեղմաձայն պատասխանում էր Ֆիլյան,— ըստ օրենքի մինչև տասնհինգ տարեկան երեխաների մուտքն արգելված է։ Նստիր էստեղ, հիմա...— միաժամանակ մտերմաձայն ասում էր սափրված մի դերասանի։

— Ներեցեք,— բղավում էր կռվարար տիկինը,— հենց քթիս տակ երեք փոքրիկներ ներս թողեցին երկար շորերով։ Ես կբողոքե՛մ։

— Այդ փոքրիկները, տիկին,— պատասխանում էր Ֆիլյան,— կոստրոմացի լիլիպուտներ էին։

Կատարյալ լռություն էր տիրում։ Տիկնոջ աչքերը խամրում էին, այդժամ Ֆիլյան, ատամները բացած, այնպես էր ժպտում, որ տիկինը ցնցվում էր։ Արգելապատի մոտ միմյանց հրմշտող մարդիկ քրքջում էին չարախինդ։

Գունատված դեմքով, տառապյալ, մթագնած աչքերով մի դերասան հանկարծ կողքից ընկնում էր արգելապատին, շշնջում.

— Գլուխս ահավոր ցավում է...

Ֆիլյան, չզարմանալով, չշրջվելով, ձեռքը ետ էր տանում, բացում պատի փոքրիկ պահարանը, շոշափելով մի տուփ վերցնում, միջից մի ծրար հանում, մեկնում էր տառապյալին, ասում.

— Ջրով խմիր... լսում եմ, քաղաքացուհի...

Քաղաքացուհու աչքերն արցունքով էին լցվում, գլխարկն իջնում էր ականջին։ Տիկնոջ վիշտը մեծ էր։ Նա քիթը մաքրում էր կեղտոտ թաշկինակով։ Բանից պարզվում է, որ երեկ այդ նույն «Դոն Կառլոսից» տուն է եկել, մեկ էլ ինչ տեսնի՝ պայուսակը չկա։ Իսկ պայուսակում հարյուր յոթանասունհինգ ռուբլի փող կար, դիմափոշու տուփը և թաշկինակ։

— Վատ է, քաղաքացուհի, շատ վատ,— խստաձայն ասում էր Ֆիլյան,— փողը պետք է խնայդրամարկղում պահել, ոչ թե պայուսակի մեջ։

Տիկինն աչքերը չռում էր Ֆիլյայի վրա։ Նա չէր սպասում, որ իր վշտի նկատմամբ այդքան քարսիրտ կգտնվեին։

Բայց Ֆիլյան տեղնուտեղը կոգոռոցով քաշում էր սեղանի դարակը և մեկ վայրկյան անց ճմրթված, մետաղյա դեղնած հավերժահարսով պայուսակը հայտնվում էր տիկնոջ ձեռքում։ Տիկինը երախտագիտության խոսքեր էր քրթմնջում։

— Հանգուցյալին բերեցին, Ֆիլիպ Ֆիլիպովիչ,— զեկուցում էր Բակվալինը։

Նույն րոպեին լամպը հանգավ, դարակները դղրդոցով փակվեցին, վերարկուն շտապ-շտապ հագնելով Ֆիլյան ամբոխը ճեղքեց, դուրս եկավ։ Հմայվածի պես հետևեցի նրան։ Գլուխս պատին ղարկելով աստիճանադարձի վրա, բակ ելա։ Գրասենյակի դռան մոտ կարմիր ժապավենով փաթաթված մի բեռնատար էր կանգնած, իսկ բեռնատարի մեջ, փակ աչքերով աշնանային երկնքին նայող մի հրշեջ էր պառկած։ Սաղավարտը շողշողում էր ոտքերի մոտ, իսկ գլխի մոտ եղևնու ճյուղեր էին դրված։ Ֆիլյան առանց գլխարկի, հանդիսավոր տեսքով կանգնած էր բեռնատարի մոտ և ինչ-որ անձայն հրամաններ էր տալիս Կուսկովին, Բակվալինին և Կլյուկվինին։

Բեռնատարն ազդանշան տվեց և փողոց ելավ։ Տեղնուտեղը թատրոնի մուտքից տրոմբոնների սուր ձայներ հնչեցին։ Ժողովուրդն ալարկոտ զարմանքով կանգ առավ, կանգ առավ նաև բեռնատարը։ Թատրոնի մուտքի մոտ երևում էր մորուքավոր, վերարկու հագած մի մարդ, որը թափահարում էր դիրիժորական փայտիկը։ Նրան հնազանդ՝ մի քանի փայլուն շեփոր բարձր ձայներով թնդացնում էին փողոցը։ Հետո ձայները կտրվեցին նույնքան հանկարծակի, որքան սկսվել էին և ոսկե փողերն ու շեկ այծմորուքն անհետացան մուտքի մեջ։

Կուսկովը թռավ-ելավ բեռնատար, երեք հրշեջ կանգնեցին դագաղի անկյուններում, և Ֆիլյայի «բարի ճանապարհ» ժեստի հետ բեռնատարը շարժվեց դեպի դիակիզարան, իսկ Ֆիլյան գրասենյակ վերադարձավ։

Հսկայական քաղաքի կյանքը բաբախում էր, ամենուրեք ալիքներ էին՝ վրա կտան կամ ետ կդնան։ Երբեմն առանց որևէ էական պատճառի նվազում էր Ֆիլյայի հաճախորդների ալիքը, և Ֆիլյան իրեն թույլ էր տալիս հետ ընկնել թիկնաթոռի մեջ, կատակել մեկնումեկի հետ, ընդարմանալ։

— Քեզ մոտ են ուղարկել ինձ,— ասում էր մի ուրիշ թատրոնի դերասան։

— Մարդ են գտել ուղարկելու, խորո՛վ,— պատասխանում էր Ֆիլյան, միայն այտերով ծիծաղելով (Ֆիլյայի աչքերը երբեք չէին ծիծաղում)։

Ներս մտավ շատ գեղեցիկ մի տիկին, հիանալի կարված

վերարկուով, ուսերին՝ սևագորշ աղվեսի մորթի: Ցիլյան սիրալիր ժպտաց տիկնոջն ու բղավեց.

— Բոնժուր, Միսսի:

Տիկինն ուրախ-ուրախ ծիծաղեց ի պատասխան: Տիկնոջ ետևից երերուն քայլերով գրասենյակ մտավ նավաստու գլխարկով յոթնամյա մի մանչուկ, արտակարգ ամբարտավան արտաքինով, սոյայի շոկոլադը վրա-գլխին քսմսված, եղունգի երեք հետք աչքի տակին: Մանչուկը մեղմ զկռտում էր որոշակի ընդմիջումներով: Մանչուկից հետո՝ գեր ու դառնացած մի տիկին:

— Ցու՛յ, Ալիյոշա,— բացականչեց նա գերմաներեն առոգանությամբ:

— Ա՜, ողջույն,— բացականչեց Ցիլյան, ձեռք մեկնելով մանչուկին:

Սա՝ զկռտալով, գլուխ տվեց ու ոտքերն իրար խփեց:

— Ցու՛յ, Ալիյոշա,— շշնջաց Ամալյա Իվանովնան:

— Ամալյա Իվանովնա,— կամացուկ և սպառնագին ասաց մանչուկը, տակնահան բռունցք թափ տալով Ամալյա Իվանովնայի վրա:

— Ցու՛յ, Ալիյոշա,— կամացուկ ասաց Ամալյա Իվանովնան:

— Աչքիդ տակ այդ ի՞նչ է եղել,— հարցրեց Ցիլյան:

— Ժորժի հետ եմ կռվել,— զկռտալով մրմնջաց մանչուկը, գլուխը կախելով:

— Ցու՛յ, Ալիյոշա,— սոսկ շրթունքներով և բացարձակապես մեխանիկորեն շշնջաց Ամալյա Իվանովնան:

— Սէ դոմմաժ*,— բղավեց Ցիլյան և սեղանից շոկոլադ հանեց:

Մանչուկի՝ շոկոլադից պղտորված աչքերը մի րոպե վառվեցին կրակով, նա վերցրեց շոկոլադը:

— Ալիյոշա, այսօր տասնիշոռս հատ կերել ես,— վախվխելով շշնջաց Ամալյա Իվանովնան:

— Սուտ մի խոսեք, Ամալյա Իվանովնա,— կարծելով թե կամաց է խոսում, ղժղժաց մանչուկը:

— Ցիլյա, դուք ինձ լրիվ մոռացել եք, գարշելի,— մեղմաձայն բացականչեց տիկինը:

* Ցավալի է (ֆր):

— Նոն, մադամ, ինպոսիբլը,— բղավեց Ցիլյան,— Մե լե դաֆֆեր Թուժուր*։

Տիկինը ծիծաղում էր կարկաչուն, ձեռնոցով խփում Ցիլյայի ձեռքին։

— Գիտեք ինչ,— ոգևորված ասաց տիկինը,— մեր Դարյան այսօր կարկանդակ է թխել, եկեք ընթրենք։ Հա՞։

— Ավեք պլեզիր**,— բացականչեց Ցիլյան և տիկնոջ պատվին վառեց արջի աչքերը։

— Ինչպե՞ս վախեցրիք ինձ, զզվելի Ցիլկա,— բացականչեց տիկինը։

— Ալյոշա։ Տես, ինչ առճ է։ Ոնց կենդանի,— կեղծ-կեղծ հիացավ Ամալյա Իվանովնան։

— Թողեք,— գոռաց մանչուկն ու դուրս պրծավ արգելապատի կողմը։

— Ցու՛յ, Ալյոշա...

— Արգումինին էլ ձեզ հետ բերեք,— բացականչեց սաստ ոգևորությամբ համակված տիկինը։

— Իլ ժու***։

— Թող ներկայացումից հետո գա,— ասաց տիկինը, մեջքն անելով Ամալյա Իվանովնայի կողմը։

— Ժե տրանսփոր լյուի****։

— Դե, սիրելիս, ուրեմն այդպես։ Հա, Ցիլենկա, մի խնդիրք ունեմ։ Չե՞ք կարող «Դոն Կառլոսից»-բանից դասավորել մի պառավ կնոջ համար։ Հը՞։ Թեկուզ վերևներում, հը՞, գանձա։

— Կար անո՞ղը։

— Ի՜նչ նողկալի մարդ եք,— բացականչեց տիկինը։— Ինչու՞ անպայման կար անող։ Նա պրոֆեսորի այրի է և հիմա...

— Սպիտակեղեն է կարում,— կարծես երազի մեջ ասաց Ցիլյան, ծոցագրպանում գրելով. «Կար անող։ Մի. կող. յար. 13-ին»։

— Իսկ ինչպե՞ս կռահեցիք,— գեղեցկանալով, բացականչեց տիկինը։

---

* Ոչ, տիկին, անկարելի է։ Ես անընդհատ գործի մեջ եմ (ֆր.)։
** Հաճույքով (ֆր.)։
*** Խաղում է (ֆր.)։
**** Ես կբերեմ իրեն (ֆր.)։

— Ցիլիա Ցիլիպովիչ, դիրեկցիայում հեռախոսի մոտ են կանչում ձեզ,— բղավեց Բակլայինը։

— Հիմա։

— Ես էլ ամուսնուս կզանգահարեմ,— ասաց տիկինը։

Ցիլյան դուրս թռավ սենյակից, իսկ տիկինը վերցրեց ընկալուչը, հավաքեց համարը։

— Վարիչի առանձնասենյա՞կն է։ Հը՞, ի՞նչ կա։ Իսկ ես Ցիլյային մեզ մոտ կանչեցի այսօր, կարկանդակ ուտելու։ Ոչինչ, ոչինչ, մի ժամի չափ քնիր։ Հա, Արզումինին էլ խնդրեց գալ... է, անհարմար զգացի... Դե, ցտեսություն, գանձս... Իսկ ինչու՞ է ձայնդ մի տեսակ տխուր։ Լավ, համբուրում եմ։

Սեղմված բազմոցի մոմլաթե թիկնակին ու աչքերս փակած, ես երազում էի. «Օ՜, ինչ աշխարհ է... հաճույքի, հանգստի աշխարհ...»։ Ինձ ներկայանում էր այդ անծանոթ տիկնոջ բնակարանը։ Չգիտես ինչու, թվում էր, որ դա հսկայական բնակարան է, որ սպիտակ, փիթխարի նախասենյակի պատին ոսկյա շրջանակի մեջ նկար կա, որ բոլորի սենյակներում պսպղում է հատակը, որ միջին սենյակում դաշնամուր կա, որ մեծ գոր...

Իմ անուրջները հանկարծ ընդհատեց կամացուկ մի տնքոց և որովայնային աղմուկ։ Աչքերս բացեցի։

Մանչուկը, մահու չափ գունատ, աչքերը ճակատը թռած, նստած էր բազմոցին, ոտքերը հատակին չռած։ Տիկինը և Ամալյա Իվանովնան նետվեցին նրա կողմը։ Տիկինը գույնը թռցրեց։

— Ալյոշա,— բղավեց տիկինը։— Քեզ ի՞նչ եղավ։

— Ցու՜յ, Ալյոշա։ Կեզ ի՞նչ էլավ,— բացականչեց Ամալյա Իվանովնան։

— Գլուխս ցավում է,— թրթռացող, թույլ բարիտոնով պատասխանեց մանչուկը, և գլխարկն աչքերին ընկավ։ Հանկարծ նա թշերն ուռեցրեց և ավելի շատ գունատվեց։

— Օ՜, տեր աստված,— բղավեց տիկինը։

Մի քանի րոպե անց բակ խուժեց բաց տաքսամոտորը, որի մեջ կանգնած այս կողմն էր թռչում Բակլայինը։

Մանչուկին, բերանը թաշկինակով սրբելով, թևանցուկ դուրս տարան գրասենյակից։

Օ՜, գրասենյակի հրաշալի աշխարհ։ Ցի՜լյա։ Մնաք բարով։ Շուտով ես չեմ լինի։ Դուք ևս հիշեցեք ինձ։

## ՍԻՎՑԵՎ ՎՐԱԺԵԿ

*Ինքս էլ չնկատեցի, թե ինչպես Տորոպեցկայայի հետ ավարտեցինք պիեսը մեքենագրելը։ Ու դեռ չէի հասցրել մտածել, թե հետո ինչ պիտի լինի, երբ ճակատագիրն ինքը հուշեց։ Կլյուկվինը նամակ բերեց։*

«Խորապես ճարգելի
Լեոնտի Սերգեևիչ...»

*Գրողը տանի, ինչու՞ են նրանք ուզում, որ ես Լեոնտի Սերգեևիչ լինեմ։ Հավանորեն, ավելի հարմա՞ր է արտասանել, քան Սերգեյ Լեոնտևիչ... Ինչևէ, կարևոր չէ։*

«...Դուք պետք է Ձեր պիեսը կարդաք Իվան Վասիլևիչի համար: Ուստի անհրաժեշտ է, որ գաք Սիվցև Վրաժեկ, երկուշաբթի, ամսույս 13-ին, ցերեկվա ժամը 12-ին:

Ձեզ անչափ նվիրված՝
Ֆոմա Ստրիժ»:

*Ես չափազանց հուզվեցի, հասկանալով, որ բացառիկ կարևոր նամակ է սա։*

*Որոշեցի այսպես՝ օսլայած օձիք, կապույտ փողկապ. մոխրագույն կոստյում։ Վերջինի խնդիրը դժվար չէր որոշել, քանի որ միակ խելքը գլխինը մոխրագույն կոստյումս էր։*

*Ինձ պետք է պահեմ քաղաքավարի, բայց արժանապատվությամբ, և աստված մի արասցե, առանց հաճոյանալու նշույլի։*

*Տասներեքը, լավ հիշում եմ, հաջորդ օրն էր, և առավոտյան թատրոնում հանդիպեցի Բոմբարդովին։*

*Նրա խրատները խիստ տարօրինակ թվացին ինձ։*

*— Հենց որ մեծ, մոխրագույն տունն անցնեք,— ասաց Բոմբարդովը,— կթեքվեք ձախ՝ մի փոքրիկ նրբանցք։ Հետո արդեն հեշտ կգտնեք։ Թուջե դարպաս կա, փորագրություններով, սյունաշարով տուն է։ Փողոցի կողմից մուտք չկա, անկյունով կթեքվեք, բակի կողմից։ Այդտեղ մի մարդ կտեսնեք, քուրքը հագին, նա ձեզ կհարցնի. «Ինչո՞ւ եք եկել», դուք նրան միայն մի բառ կասեք՝ «Նշանակված է»։*

— Դա նշանակա՞ն է,— հարցրեցի ես։— Իսկ եթե այդ մարդը չլինի՞։

— Կլինի,— սառնությամբ ասաց Բոմբարդովը և շարունակեց։— Թեքվելուց հետո, քուրքը հագած մարդու ուղիղ դիմաց կտեսնեք մի ավտոմեքենա, առանց անիվների, դոմկրատի վրա, կողքին մի դույլ ու մի մարդ, որը լվանում է ավտոմեքենան։

— Դուք այսօր այնտեղ եղե՞լ եք,— հուզված հարցրեցի ես։

— Ես այնտեղ մեկ ամիս առաջ եմ եղել։

— Ուրեմն, որտեղի՞ց գիտեք, որ մարդը պետք է ավտոմեքենան լվանա։

— Որովհետև նա ամեն օր դա լվանում է. անիվները հանած։

— Իսկ Իվան Վասիլևիչը ե՞րբ է նստում այդ մեքենան։

— Երբեք չի նստում։

— Ինչու՞։

— Նստի, ու՞ր գնա։

— Ասենք թե թատրոն։

— Իվան Վասիլևիչը թատրոն է գալիս տարեկան երկու անգամ, գլխավոր փորձերին, այդ ժամանակ էլ վարձում են կառապան Դրիկինին։

— Այ քեզ բա՜ն։ Կառապանն ու՞մ է պետք, երբ մեքենա կա։

— Իսկ եթե վարորդը սրտի պայթյուն ստանա ու մեռնի, ավտոմեքենան էլ առնի ու մի որևէ լուսամուտ փշրելով ներս ընկնի, այն ժամանա՞կ ինչ կհրամայեք։

— Ներեցեք, իսկ եթե ձի՞ն կատաղի ու կառքը փախցնի։

— Դրիկինի ձին չի կատաղի։ Նա միայն քայլում է։ Դույլով մարդու ուղիղ դիմացը դուռ կա։ Կմտնեք ու կբարձրանաք փայտյա սանդուղքով։ Ու մի դուռ էլ կա։ Կմտնեք։ Այդտեղ կտեսնեք Օստրովսկու սև կիսանդրին։ Իսկ դիմացը սպիտակ սյուներ ու սեփ-սև վառարան, որի մոտ պպզած կլինի վալենկաներով մի մարդ՝ վառարանը վառելիս կլինի։

Ես ծիծաղեցի։

— Դուք համոզվա՞ծ եք, որ նա անպայման կլինի և անպայման պպզած։

— Անպայման,— չոր-չոր պատասխանեց Բոմբարդովը, առանց ծիծաղի նշույլի։

— Հետաքրքիր կլինի՝ ստուգել։

— Ստուգեք։ Նա տագնապով կհարցնի։ «Ու՞ր եք գնում», իսկ դուք կպատասխանեք...

*— Նշանակվա՞ծ է։*

*— Ըհը՛։ Այդ ժամանակ նա կասի. «Վերարկուն այստեղ հանեք», ու դուք կմտնեք նախասենյակ, ձեր դեմ կելնի բուժակ կինն ու կհարցնի՝ «Ինչու՞ եք եկել», դուք էլ կպատասխանեք...*

*Ես գլխով արեցի։*

*— Իվան Վասիլևիչն առաջին հերթին կհարցնի, թե ով է եղել ձեր հայրը։ Ո՞վ է եղել։*

*— Փոխնահանգապետ։*

*Բոմբարդովը կնճռոտեց դեմքը։*

*— Է՜... չէ, այդ մեկը հարմար չէ։ Ոչ, ոչ։ Կասեք՝ բանկում էր աշխատում։*

*— Այդ մեկն արդեն ինձ դուր չի գալիս։ Ինչու՞ պիտի ստեմ առաջին իսկ վայրկյանից։*

*— Որովհետև դա կարող է նրան վախեցնել, իսկ...*

*Ես միայն աչքերս ճպճպացրեցի։*

*— ... Իսկ ձեզ համար մեկ է՝ բանկ, թե մի ուրիշ բան... Ապա նա կհարցնի, թե ինչպես եք գնահատում հոմեոպաթիան։ Դուք էլ կասեք, թե որոշակի կաթիլներ եք ընդունել անցյալ տարի և շատ օգնել է։*

*Այդ ժամանակ զանգերը խփեցին, Բոմբարդովն սկսեց շտապել՝ փորձի պիտի գնար, և հետագա հորդորները կրճատ շարադրեց։*

*— Միշա Պանինին չեք ճանաչում, ծնվել եք Մոսկվայում,— շտապեցնելով հայտնում էր Բոմբարդովը,— Ցոմայի մասին կասեք, որ նա ձեր դուրը չի եկել։ Երբ կսկսեք պիեսի մասին խոսել, մի առարկեք։ Մի կրակոց կա երրորդ գործողության մեջ, այդ տեղը չկարդաք...*

*— Ինչպե՞ս չկարդամ, երբ նա ինքնասպան է լինում...*

*Զանգերը կրկին խփեցին։ Բոմբարդովը վազեց կիսախավարի կողմը, հեռվից լսվեց նրա թույլ բղավոցը։*

*— Կրակոցի տեղը չկարդա՜ք։ Հարբուխ չունե՜ք։*

*Բոմբարդովի հանելուկներից լիովին շվարած, ճիշտ կեսօրին ես Սիվցև Վրաժեկի նրբանցքում էի։*

*Բակում քուրքով տղամարդ չկար, բայց հենց Բոմբարդովի ասած տեղում գլխաշորով մի կնիկ էր կանգնած։ Նա հարցրեց.*

*— Ի՞նչ եք ուզում,— ու կասկածանքով նայեց վրաս։*

*«Նշանակված է» խոսքը լիուլի գոհացրեց նրան, և ես թեքվեցի։ Ճիշտ նշված տեղում կանգնած էր սրճագույն մեքենան,*

և մի մարդ թափքն էր սրբում լաթով։ Մեքենայի մոտ դույլ կար և ինչ-որ մի շիշ։

Հետևելով Բոմբարդովի ցուցումներին, անսխալ գնացի ու հասա Օստրովսկու կիսանդրուն։ «Է՜-է՜...»,— մտածեցի ես, հիշելով Բոմբարդովին՝ վառարանում ճարճատում էին սոճու փայտերը, բայց պպղած մեկը չկար։ Բայց չէի հասցրել քթիս տակ ծիծաղել, երբ բացվեց կաղնեփայտի, հնամենի, լաքապատ մուգ դուռը և ներս մտավ խաչերկաթը ձեռքին ու կարկատած վալենկաներով մի ծերուկ։ Ինձ տեսնելով, վախեցավ ու սկսեց աչքերը ճպճպացնել։

— Ի՞նչ եք ուզում, քաղաքացի,— հարցրեց նա։

— Նշանակված է,— պատասխանեցի, ըմբոշխնելով մոգական խոսքի ուժը։

Ծերուկի գույնը տեղն ընկավ. և նա խաչերկաթը թափ տվեց մյուս դռան կողմը։ Այնտեղ հնամենի մի լամպ էր վառվում, առաստաղից կախ։ Հանեցի վերարկուս, պիեսը դրեցի թևիս տակ, բախեցի դուռը։ Մյուս կողմում իսկույն լսվեց բացվող շղթայի ձայնը, ապա բանալին շրջվեց դռան մեջ ու մի կին դուրս նայեց սպիտակ գլխաշորով ու սպիտակ խալաթով։

— Ի՞նչ եք ուզում,— հարցրեց նա։

— Նշանակված է,— պատասխանեցի։

Կինը մի կողմ քաշվեց, ներս թողեց և ուշադրությամբ նայեց ինձ։

— Դրսում ցո՞ւրտ է,— հարցրեց նա։

— Ոչ, լավ եղանակ է, համարյա ամառ,— պատասխանեցի ես։

— Հարբուխ չունե՞ք,— հարցրեց կինը։

Ես ցնցվեցի, հիշելով Բոմբարդովին, և ասացի.

— Չէ, չունեմ։

— Այս դուռը թակեք ու ներս մտեք,— խստությամբ ասաց կինը և հեռացավ։

Նախքան մուգ, մետաղյա շերտերով շրջանակված դուռը թակելը, չորս կողմս նայեցի։

Սպիտակ վառարան, ինչ-որ վիթխարի պահարաններ։ Անանուխի և էլի մի տեսակ դուրեկան խոտի բույր կար։ Կատարյալ լռություն էր, որը հանկարծ ընդհատվեց ժամացույցի խզխզան զարկերով։ Տասներկու անգամ խփեց, հետո տագնապով կուկու արեց պահարանի ետևում։

Ես թակեցի դուռը, սեղմեցի հսկայական, ծանր օղը և ներս մտա մեծ ու լուսավոր մի սենյակ։

Ես հուզվում էի, համարյա ոչինչ չտեսա, բացի բազմոցից, որի վրա նստած էր Իվան Վասիլևիչը։ Ճիշտ նույն տեսքն ուներ, ինչ և դիմանկարում, միայն քիչ ավելի թարմ ու ջահել։ Նրա սև, թեթևակի ճերմակած բեղերը շատ գեղեցիկ վեր էին ոլորած։ Կրծքի վրա, ոսկյա շղթայով կախված էր լոռնետը։ Իվան Վասիլևիչն ինձ զարմացրեց իր ժպիտի գրավչությամբ։

— Շատ հաճելի է,— խոսեց նա՝ մի քիչ թլվատ,— նստեցեք, խնդրեմ։

Ու ես նստեցի թիկնաթոռին։

— Ձեր անուն, հայրանունը,— քնքշորեն ինձ նայելով հարցրեց Իվան Վասիլևիչը։

— Սերգեյ Լեոնտևիչ։

— Շատ հաճելի է։ Դե, դե, ինչպե՞ս եք, Սերգեյ Պաֆնուտևիչ։— Եվ քնքշությամբ ինձ նայելով, Իվան Վասիլևիչը մատներով թմբկահարեց սեղանը, որի վրա մաշված մատիտ կար ու մի բաժակ ջուր, չգիտես ինչու վրան թղթի կտոր դրած։

— Խորապես շնորհակալ եմ, լավ։

— Մրսածություն չե՞ք զգում։

— Ոչ։

Իվան Վասիլևիչը մի տեսակ տնքտնքաց ու հարցրեց.

— Իսկ ձեր հայրիկի առողջությու՞նն ինչպես է։

— Հայրս մահացել է։

— Սարսափելի բան է,— պատասխանեց Իվան Վասիլևիչը,— իսկ ու՞մ դիմեցիք։ Ո՞վ է բուժել։

— Ստույգ չեմ կարող ասել, բայց կարծեմ պրոֆեսոր... պրոֆեսոր Յանկովսկին։

— Իզուր,— արձագանքեց Իվան Վասիլևիչը,— պետք էր պրոֆեսոր Պլետուշկովին դիմել, այն ժամանակ ոչինչ էլ չէր լինի։

Դեմքիս ափսոսանքի արտահայտություն տվեցի, որ չենք դիմել Պլետուշկովին։

— Իսկ ավելի լավ կլիներ... հըմ... հըմ... հոմեոպաթներին դիմեիք,— շարունակեց Իվան Վասիլևիչը,— բոլորին անխտիր օգնում են, ուղղակի անհավատալի է,— այստեղ նա մի թռուցիկ հայացք նետեց բաժակի վրա,— հոմեոպաթիային հավատո՞ւմ եք։

«Բոմբարդովն այցելությո՞ւն մարդ է»,— մտածեցի ես ու սկսեցի անորոշ բաներ ասել։

— Մի կողմից, իհարկե... անձամբ ես... թեև շատերը չեն էլ հավատում...

— Իզո՛ւր,— ասաց Իվան Վասիլևիչը։— Տասնհինգ կաթիլ, ու դուք դադարում եք որևիցե բան զգալ։— Եվ նա կրկին տնքտնքաց ու շարունակեց,— Սերգեյ Պանֆիլիչ, իսկ ձեր հայրիկն ո՞վ էր։

— Սերգեյ Լեոնտևիչ,— քնքշորեն ասացի ես։

— Շատ ու շատ ներողություն,— բացականչեց Իվան Վասիլևիչը։— Ո՞վ էր ձեր հայրիկը։

«Ոչ մի սուտ էլ չեմ ասի»,— մտածեցի ես ու ասացի.

— Նա փոխնահանգապետի պաշտոն էր վարում։

Այս տեղեկությունը սրբեց Իվան Վասիլևիչի ժպիտը։

— Այդպես, այդպես, այդպես,— մտահոգ ասաց նա, լռեց, թմբկահարեց սեղանն ու ասաց.— դե՛հ, սկսենք։

Ես բաց արեցի ձեռագիրը, հազացի, ընդարմացա, մի անգամ էլ հազացի ու սկսեցի կարդալ։

Կարդացի վերնագիրը, ապա գործող անձանց երկար ցուցակը և անցա առաջին գործողության ընթերցմանը։

— «Կրակներ հեռվում, ձյունով ծածկված բակ, կողաշենքի դուռը։ Այստեղից խուլ լսվում է «Ֆաուստը», որ նվագում են դաշնամուրով...»

Երբևէ ձեզ վիճակվե՞լ է դեմառդեմ պիես կարդալ մեկնումեկին։ Հավատացնում եմ՝ շատ դժվար բան է։ Մեկ-մեկ աչքերս բարձրացնում, Իվան Վասիլևիչին էի նայում, ճակատս սրբում թաշկինակով։

Իվան Վասիլևիչը բացարձակապես անշարժ նստել ու անքթիթ ինձ էր նայում լոռնետով։ Ինձ չափազանց շփոթեցնում էր այն հանգամանքը, որ նա ոչ մի անգամ չժպտաց, թեև արդեն առաջին պատկերում ծիծաղելի տեղեր կային։ Դերասանները շատ էին ծիծաղում ընթերցման ժամանակ, իսկ մեկն այնքան ծիծաղեց, որ արցունք եկավ աչքերից։

Իվան Վասիլևիչն, այնինչ, ոչ միայն չէր ծիծաղում, այլ նույնիսկ դադարեց տնքտնքալ։ Եվ ամեն անգամ, երբ վեր էի բարձրացնում հայացքս, տեսնում էի միևնույն բանը՝ վրան հառած ոսկյա լոռնետ և դրա մեջ՝ անթարթ աչքեր։ Ի հետևանք,

ինձ սկսեց թվալ, որ այդ ծիծաղելի տեղերն ամենևին էլ ծիծաղելի չեն։

Այսպես հասա առաջին գործողության ավարտին ու անցա երկրորդին։ Լիակատար լռության մեջ սոսկ իմ միալար ձայնն էր լսվում. այնպես էր, կարծես տիրացուն հանգուցյալի վրա ավետարան է կարդում։

Մի տեսակ անտարբերություն պաշարեց ինձ ու ցանկություն՝ փակել հասա տետրը։ Ինձ թվում էր, թե Իվան Վասիլևիչն անհեղաձայն կասի. «Երբևիցե կվերջանա՞ այս ամենը»։ Ձայնս խռպոտեց, երբեմն կոկորդս մաքրում էի հազալով, մեկ տենորով էի կարդում, մեկ թավ բասով, նույնիսկ անգամ անսպասելիորեն ձայնս աքլորի պես խզվեց, բայց դա ևս ոչ մեկիս ծիծաղը չհարուցեց, ո՛չ Իվան Վասիլևիչի, ո՛չ էլ իմ։

Որոշ թեթևացում զգացվեց սպիտակազգեստ կնոջ հանկարծակի երևան գալով։ Նա ներս մտավ անաղմուկ, Իվան Վասիլևիչը փութով նայեց ժամացույցին։ Կինը մի գավաթ տվեց Իվան Վասիլևիչին։ Իվան Վասիլևիչը դեղը բերանն առավ, վրան ջուր խմեց, բաժակը տեղը դրեց, ծածկեց կափարիչով ու կրկին նայեց ժամացույցին։ Կինը հին ռուսական ոճով գլուխ խոնարհեց Իվան Վասիլևիչին և դոռոզ-դոռոզ դուրս գնաց։

— Դեհ շարունակեք,— ասաց Իվան Վասիլևիչը, և ես նորից սկսեցի կարդալ։ Հեռվից լսվեց կու-կու։ Հետո վարագույրներից այն կողմ զրնգաց հեռախոսը։

— Ներեցեք,— ասաց Իվան Վասիլևիչը,— կարևորագույն գործով ինձ են կանչում հիմնարկությունից... Այո,— լսվեց նրա ձայնը վարագույրների ետևից,— այո... հըմ... հըմ... բոլորն այդ շայկայի գործերն են։ Հրամայում եմ այդ ամենը խստագույնս գաղտնի պահել։ Երեկոյան ինձ մոտ մի հավատարիմ մարդ է լինելու, և մենք ծրագիր կմշակենք...

Իվան Վասիլևիչը վերադարձավ, և մենք հասանք հինգերորդ պատկերի ավարտին։ Եվ այստեղ, վեցերորդի սկզբին, ապշեցուցիչ մի դեպք կատարվեց։ Ականջիս պոչով լսեցի՝ ինչ-որ տեղ մի դուռ շրխկաց, լսվեց մի տեսակ բարձր ու, ինչպես ինձ թվաց, կեղծ լաց, ոչ թե այն դուռը, որից ես ներս մտա, այլ ըստ երևույթին ներքին սենյակները տանող դուռ բացվեց և սենյակ ընկավ, պետք է ենթադրել, սարսափից դիվոտած, ճարպակալած ու բծավոր մի կատու։ Իմ կողքով շպրտվեց դեպի շղարշե վարագույրը, կպավ դրան ու վեր մագլցեց։ Շղարշը չդիմացավ

կատվի ծանրությանը, և վարագույրի վրա անմիջապես անցքեր բացվեցին։ Շարունակելով պատառոտել վարագույրը, կատուն բարձրացավ մինչև վերջ ու այնտեղից չորս կողմը նայեց գազազած տեսքով։ Իվան Վասիլևիչը ցած դցեց լոռնետը, ու սենյակ ընկավ Լյուդմիլա Սիլվեստրովնա Պրյախինան։ Նրան տեսնելուն պես կատուն փորձեց ավելի վեր բարձրանալ, բայց արդեն հասել էր առաստաղին։ Կենդանին պոկվեց կլորակ քիվից ու, անշարժացած, կախվեց վարագույրից։

Պրյախինան ներս ընկավ աչքերը փակած, ափի մեջ ճմրթած ու թաց թաշկինակը ճակատին դրած. մյուս ձեռքում՝ ժանեկազարդ, չոր ու մաքուր մեկ ուրիշ թաշկինակ։ Երբ հասավ սենյակի մեջտեղը, ծնկեց մի ոտքի վրա, գլուխը խոնարհեց ու ձեռքն առաջ պարզեց, ինչպես գերին է թուրը հանձնում հաղթողին։

— Ես չեմ շարժվի այստեղից, իմ ուսուցի՛չ, մինչև որ պաշտպանություն չգտնեմ,— ճղճղալով բացականչեց Պրյախինան։— Պելիկանը դավաճան է։ Աստված ամեն բան տեսնում է, ամե՜ն բան։

Այստեղ շղարշը պոռթվեց, և կատվի վերևում կեսարշինանոց մի անցք գոյացավ։

— Փը՛շտ...— հանկարծ հուսահատ բղավեց Իվան Վասիլևիչը և ծափ զարկեց.

Կատուն ցած սահեց, մինչև տակ պատռելով վարագույրը և դուրս պրծավ սենյակից, իսկ Պրյախինան հեկեկաց որոտաձայն ու, աչքերը ձեռքերով փակած, բղավեց արցունքախեղդ.

— Ի՞նչ եմ լսում։ Ի՞նչ եմ լսում։ Մի՞թե իմ ուսուցիչն ու բարերարն ինձ վռնդում է։ Աստվա՜ծ իմ։ Աստվա՜ծ իմ։ Դո՜ւ վկա եղիր։

— Ձեր շուրջը նայեք, Լյուդմիլա Սիլվեստրովնա,— մոլեգնած բղավեց Իվան Վասիլևիչը. իսկ դռան մեջ երևաց պառավը, որն իր հերթին գոռաց.

— Մի՛լոչկա։ Ե՛տ արի։ Օտար մարդ կա...

Այստեղ Լյուդմիլա Սիլվեստրովնան բացեց աչքերն ու տեսավ իմ մոխրագույն կոստյումը՝ մոխրագույն բազմոցի մեջ։ Նա աչքերը չռեց ինձ վրա, և, ինչպես ինձ թվաց, արցունքները վայրկենապես չորացան նրա դեմքին։ Վեր ցատկեց, շշնջաց. «Տե՜ր աստված...» ու դուրս չքվեց։ Տեղնուտեղն անհետացավ նաև պառավը, դուռը փակվեց։

Լուռ նստեցինք՝ ես ու Իվան Վասիլևիչը։ Երկար դադարից հետո նա մատներով թմբկահարեց սեղանը։

— Դե՞, ինչպե՞ս էր, հավանեցի՞ք,— հարցրեց նա ու տրտմությամբ ավելացրեց,— գրողի ծոցը գնաց վարագույրը։

Մի քիչ էլ լռեցինք։

— Ձեզ, իհարկե, ապշեցնու՞մ է այս տեսարանը,— հարցրեց Իվան Վասիլևիչը և տնքտնքաց։

Ես ևս տնքտնքացի ու շուռումուռ եկա թիկնաթոռի մեջ, վճռականապես չիմանալով, ինչ պատասխանել՝ տեսարանն ինձ ամենևին չէր ապշեցրել։ Ես շատ լավ հասկացա, որ սա Նախաբաղնիքում եղած այն տեսարանի շարունակությունն էր, և որ Պրյախինան կատարեց Իվան Վասիլևիչի ոտքերն ընկնելու իր խոստումը։

— Մենք սա փորձում էինք,— հանկարծ հայտնեց Իվան Վասիլևիչը,— իսկ դուք հավանորեն մտածեցիք, թե պարզապես սկանդա՞լ է։ Լավ է, չէ՞։ Հը՞։

— Հիանալի է։

— Մենք սիրում ենք այսպես երբեմն-երբեմն հիշողության մեջ թարմացնել որևիցե տեսարան... Հըմ... Հըմ... էտյուդները շատ կարևոր են... Իսկ Պելիկանի մասին ասածին չհավատաք։ Պելիկանը խիստ անձնուրաց և խիստ օգտակար մարդ է...— Իվան Վասիլևիչը տրտմությամբ նայեց վարագույրին ու ասաց.

— Դեհ, շարունակենք։

Շարունակել չէինք կարող, քանի որ ներս մտավ հենց այն պառավը, որը երևացել էր քիչ առաջ։

— Մորաքույրս է, Նաստասյա Իվանովնան,— ասաց Իվան Վասիլևիչը։ Ես գլուխ տվեցի։ Հաճելի պառավն ինձ նայեց քընքշությամբ, նստեց ու հարցրեց.

— Ինչպե՞ս է ձեր առողջությունը։

— Խոնարհաբար շնորհակալ եմ,— գլուխ տալով՝ պատասխանեցի ես,— միանգամայն առողջ եմ։

Լռեցինք, ընդ որում մորաքույրն ու Իվան Վասիլևիչը նայեցին վարագույրին ու դառը հայացքներ փոխանակեցին։

— Ինչու՞ եք բարեհաճել Իվան Վասիլևիչի մոտ։

— Լեոնտի Սերգեևիչը,— արձագանքեց Իվան Վասիլևիչը,— պիես է բերել մոտս։

— Ո՞ւմ պիեսը,— հարցրեց պառավը, ինձ նայելով տխուր աչքերով։

— Լեոնտի Սերգեևիչն ինքն է պիես հորինել։

— Իսկ ինչու՞,— տագնապած հարցրեց Նաստասյա Իվանովնան։

— Ինչպե՞ս թե ինչու... Հըմ... Հըմ...

— Մի՞թե պիես չկա այլևս,— սիրալիր-հանդիմանական հարցրեց Նաստասյա Իվանովնան։— Ի՜նչ լավ պիեսներ կան։ Քանի՜-քանիսը։ Որ սկսեն խաղալ, քսան տարում էլ չեն կարող բոլորը խաղալ։ Ինչու՞ եք անհանգստանում, հորինում։

Նա այնքան համոզիչ էր խոսում, որ պատասխան չգտա։ Բայց Իվան Վասիլևիչը թմբկահարեց մատներով ու ասաց.

— Լեոնտի Լեոնտևիչը ժամանակակից պիես է հորինել։

Այստեղ պառավն անհանգստացավ։

— Մենք իշխանության դեմ խռովություն չենք անում,— ասաց նա։

— Իսկ ինչի՞ համար՝ խռովություն անել,— պաշտպանեցի ես։

— Իսկ «Լուսավորության պտուղները» ձեզ դուր չե՞ն գալիս, — տագնապած-վախեցած հարցրեց Նաստասյա Իվանովնան։— Ի՜նչ լավ պիես է, չէ՞,— Միլոչկայի համար էլ դեր կա...— Նա հոգոց հանեց ու վեր ելավ։— Խնդրեմ ողջույնս հաղորդեք ձեր հայրիկին։

— Սերգեյ Սերգեևիչի հայրիկը մահացել է,— հայտնեց Իվան Վասիլևիչը։

— Աստված հոգին լուսավորի,— ասաց պառավը քաղաքավարի,— նա երևի չգիտե, որ պիեսներ եք հորինում։ Իսկ ինչի՞ց է մահացել։

— Պետք եղած բժշկին չեն հրավիրել,— հայտնեց Իվան Վասիլևիչը,— Լեոնտի Պաֆնուտևիչն ինձ պատմեց այդ վշտալի պատմությունը։

— Ձեր անունն ի՞նչ է, մի տեսակ գլխի չեմ ընկնում,— ասաց Նաստասյա Իվանովնան,— մեկ՝ Լեոնտի, մեկ՝ Սերգեյ։ Մի՞թե հիմա թողնում են անուններն էլ փոխել։ Մեզ մոտ մեկն ազգանունը փոխել է, դե հիմա գնա ու գտիր, թե ով է, ով չէ։

— Ես Սերգեյ Լեոնտևիչն եմ,— խռպոտ ձայնով ասացի ես։

— Հազար անգամ կներեք,—բացականչեց Իվան Վասիլևիչը, —ես շփոթեցի։

— Լավ, չխանգարեմ ձեզ,— ասաց պառավը։

— Հարկավոր է կատվին քթակել,— ասաց Իվան Վասիլևի-

լը,— դա կատու չէ, այլ ավազակ։ Ընդհանրապես ավազակները մեր հոգին հանում են,— նկատեց նա մտերմաբար,— այլևս չգիտենք, թե ինչ անենք։

Վրահաս աղջամուղջի հետ եկավ և աղետը։

Ես կարդացի.

— «ԲԱԽՏԻՆ (Պետրովին)— Դե, մնաս բարով։ Շատ շուտով դու կգաս իմ ետևից...

ՊԵՏՐՈՎ— Ի՞նչ ես անում։

ԲԱԽՏԻՆ (կրակում է քունքին, ընկնում։ Հեռվում լսվում է հարմո...)»

— Դա արդեն իզուր է,— բացականչեց Իվան Վասիլևիչը։— Ինչի՞ է պետք։ Դա պիտի ջնջել առանց վայրկյան անգամ հապաղելու։ Ասացեք խնդրեմ, ինչու՞ կրակել։

— Բայց նա պետք է ինքնասպան լինի,— հազալով, նկատեցի ես։

— Շատ էլ լավ կանի։ Թող լինի և թող դաշունահար լինի։

— Բայց, տեսեք, քաղաքացիական պատերազմի ժամանակ է կատարվում դեպքը... այլևս դաշույն չէին օգտագործում...

— Ոչ, օգտագործում էին,— առարկեց Իվան Վասիլևիչը,— ինձ պատմել է այդ... անունն ինչ էր... մոռացել եմ... որ օգտագործում էին... Այդ կրակոցը ջնջեք...

Ես լուռ մնացի, ցավալի սխալ գործելով ու կարդացի շարունակությունը.

— «...հարմոնի ձայն և առանձին կրակոցներ: Կամրջի վրա երևում է մի մարդ՝ հրացանը ձեռքին: Լուսինը...»

— Աստվա՜ծ իմ,— բացականչեց Իվան Վասիլևիչը։— Կրակոցնե՜ր։ Դարձյալ կրակոցներ։ Սա ի՜նչ փորձանք է։ Գիտեք ինչ, Լեո... Գիտեք ինչ, դուք այդ տեսարանը ջնջեք, ավելորդ է։

— Այս տեսարանը,— ասացի ես, աշխատելով որքան հնարավոր է փափուկ խոսել,— ես գլխավորն էի համարում... Այստեղ, գիտեք...

— Կատարյալ մոլորություն է դա,— ընդհատեց Իվան Վասիլևիչը։— Այդ տեսարանը ոչ միայն գլխավոր չէ, այլ բոլորովին պետք չէ։ Ինչի՞ է պետք։ Ձեր այդ, անունն ի՞նչ է...

— Բախտինը։

— Այո, այո... այո, այո, ուրեմն նա դաշույնով խփում է իրեն այնտեղ հեռվում,— Իվան Վասիլևիչը ձեռքը թափ տվեց

շատ հեռու, մի կողմի վրա,— իսկ մեկ ուրիշը տուն է գալիս և ասում մորը. «Բեխտեևը դաշույնով խփեց իրեն»։

— Բայց մայր չկա,— ասացի ես, պաշտահար նայելով կափարիչով բաժակին։

— Անպայման պետք է։ Դուք կմտցնեք։ Դժվար բան չէ։ Սկզբում թվում է, թե դժվար է՝ մայր չկար և հանկարծ կա, բայց դա մոլորություն է, շատ հեշտ բան է դա։ Եվ ահա պառավը լացուկոծ է անում տանը, իսկ նա, ով լուրը բերել է... Իվանով կոչեք նրան...

— Բայց ախր Բախտինը հերոսն է։ Նա մենախոսություններ ունի կամրջի վրա... Ես ենթադրում էի...

— Իսկ նրա բոլոր մենախոսությունները Իվանովը կասի... Լավ մենախոսություններ ունեք, պետք է պահպանել դրանք։ Իվանովն էլ հենց կասի. «Պետյան ահա դաշույնով ինքնասպան եղավ և մահից առաջ ասաց այսպես-այսպես, այսպես-այսպես և այսպես-այսպես...»։ Շատ ուժեղ տեսարան կլինի։

— Իվան Վասիլևիչ, բայց ինչպե՞ս անենք, չէ՞ որ կամրջի վրա ես մասսայական տեսարան ունեմ... այստեղ միմյանց են բախվում զանգվածները...

— Իսկ նրանք թող բեմի ետևում բախվեն։ Մենք դա չպետք է տեսնենք և ոչ մի դեպքում։ Սարսափելի բան է, երբ նրանք բեմի վրա են բախվում։ Ձեր բախտից է, Սերգեյ Լեոնտևիչ,— ասաց Իվան Վասիլևիչը, միակ անգամ տեղն ընկնելով,— որ դուք ոմն Միշա Պանինի ճանաչելու պատիվը չունեք։— Ես սառույց կտրեցի։ — Ձեզ ասեմ, որ դա զարմանալի անձնավորություն է։ Մենք նրան սև օրվա համար ենք պահում, հանկարծ որ մի բան պատահի, այդ ժամանակ էլ գործի կդնենք... Պիեսի նըման մի բան էլ նա էր ձեռք գցել, կարելի է ասել, լավությո՜ւն էր արել՝ «Ստենկա Ռազին»։ Գալիս եմ թատրոն, դեռ չհասած, հեռվից լսում եմ՝ պատուհանները բաց էին, դղրդյուն, սուլոց, բղավոց, հայհոյանք, ու կրակում են մի գլուխ։ Քիչ էր մնացել ձին խրտներ, կարծեցի թե թատրոնում խռովություն է։ Սարսափելի մի բան։ Բանից դուրս եկավ, որ Ստրիժն է փորձում։ Ավգուստա Ավդեևնային ասացի. «Այս ի՞նչ եք անում, ասացի։ Դուք ուզում եք, հարցրեցի, որ անձամբ ի՞նձ գնդակահարեն։ Ասենք թե այդ Ստրիժը բռնեց ու կրակ տվեց թատրոնը, հո իմ գլուխը չե՞ն շոյի, այդպես չէ՞»։ Ավգուստա Ավդեևնան, այնքան որ անձ-

նազո՜հ կին է, պատասխանեց. «Մորթեցեք ինձ, Իվան Վասիլևիչ, այդ Սորիժի հետ ոչինչ անել չեմ կարող։ Այդ Սորիժը մեր թատրոնում ժանտախտ է որ կա։ Հենց նրան մի վերստի վրա տեսնեք, փախեք որքան հնարավոր է հեռու»։— (Ես սառույց կտրեցի)։— Դե, իհարկե, այս ամենը ոմն Արիստարխ Պլատոնիչի օրհնությամբ է կատարվում, փառք աստծո, նրան էլ չեք ճանաչում... Իսկ դուք՝ կրակոցնե՞ր։ Այդ կրակոցների երեսից գիտե՞ք ինչ կարող է լինել։ Դե՛հ, շարունակենք։

Եվ մենք շարունակեցինք։ Ու երբ մութն արդեն ընկավ, խռպոտ ձայնով արտասանեցի.

— Վերջ։

Եվ շուտով սարսափ ու հուսալքում պաշարեց ինձ և թվաց, թե մի տնակ եմ սարքել, որի տանիքը փլվեց ներս մտնելու պես։

— Շատ լավ է,— ասաց Իվան Վասիլևիչը, դրանից հետո,— հիմա պետք է սկսեք աշխատել այս նյութի վրա։

Ուզում էի բղավել. «Ինչպե՞ս»։

Բայց չբղավեցի։

Եվ Իվան Վասիլևիչը, ավելի ու ավելի տաքանալով, սկսեց մանրամասն պատմել, թե ինչպես աշխատեն այդ նյութի վրա։ Պիեսում եղած քրոջը հարկ էր դարձնել մայր։ Բայց քանի որ քույրը փեսացու ուներ, իսկ հիսունհինգամյա մայրը (Իվան Վասիլևիչը տեղնուտեղը կնքեց նրան՝ Անտոնինա), ինչ խոսք, փեսացու ունենալ չէր կարող, ապա իմ պիեսից մի ամբողջ դեր դուրս թռավ, գլխավորը՝ դեր, որն ինձ շատ էր դուր գալիս։

Մթնշաղը սենյակ էր սողոսկում։ Եկավ բուժակ կինը, և Իվան Վասիլևիչը դարձյալ ինչ-որ կաթիլներ խմեց։ Հետո մի կնճռապատ պառավ սեղանի լամպը բերեց և իրեկոն դարձավ երեկո։

Գլխիս մեջ շիլաշփոթ առաջացավ։ Քունքերիս մեջ մուրճեր էին զարկում։ Քաղցից ներսս տակնուվրա էր լինում և մերթընդմերթ աչքերիս առջև օրորվում էր սենյակը։ Բայց գլխավորն այն է, որ կամրջի վրայի տեսարանը դուրս թռավ, դրա հետ մեկտեղ՝ իմ հերոսը։

Ոչ, ճշմարիտն ասած, ամենագլխավորն այն է, որ ըստ երևույթին, ինչ-որ թյուրիմացություն էր կատարվում։ Աչքերիս դեմ հանկարծ դուրս լողաց ազդագիրը, որի վրա պիեսն արդեն նշված էր, գրպանիս մեջ խշխշում էր, ինչպես ինձ թվաց՝ պիեսի համար

ստացած վերջին, չծախսած տասանոցը, Յոմա Ստրիժն իբր ետեվում կանգնած հավատացնում էր, որ պիեսը բաց կթողնի երկու ամիս հետո, իսկ այստեղ լիովին պարզ էր, որ ընդհանրապես ոչ մի պիես էլ չկա և որ դա կրկին պիտի հորինել ամենասկզբից մինչև վերջ։ Վայրի շուրջպարով գիմացս պար էին բռնել Միշա Պանինը, Եվլամպիան, Ստրիժը, նախարարնիքի նկարները, բայց պիես չկար։

Բայց հետո կատարվեց արդեն բոլորովին չնախատեսված և նույնիսկ, ինձ թվում է, անիմաստ մի բան։

Ցույց տալով (և շատ լավ ցույց տալով), թե ինչպես է դաշունահար լինում Բոխտինը, որին Իվան Վասիլևիչը հաստատուն կերպով Բեխտեև կնքեց, նա հանկարծ տնքտնքաց ու այսպիսի մի ճառ սկսեց.

— Այ, եթե այսպիսի մի պիես հորինեիք... Վիթխարի փողեր կաշխատեիք մի վայրկյանում... Հոգեբանական խորը դրամա... Դերասանուհու ճակատագիր... իբր թե ինչ-որ թագավորությունում ապրում է մի դերասանուհի, և ահա թշնամիների խումբը նրան հալածում է, հետապնդում, օրուարև չի տալիս... Իսկ նա միայն աղոթքներ է հղում իր թշնամիների համար...

«Եվ սկանդալներ է սարքում»,— հանկարծ անսպասելի չարության պոռթկումով մտածեցի ես։

— Աղոթքներ առ աստվա՞ծ, Իվան Վասիլևիչ։

Այս հարցը մտահոգեց Իվան Վասիլևիչին։ Նա տնքտնքաց ու պատասխանեց.

— Աստվա՞ծ... Հըմ... հըմ... Ոչ, ոչ մի դեպքում։ Մի գրեք՝ աստված... Ոչ թե աստծուն, այլ... արվեստին, որին նա անասելի խորությամբ է նվիրված։ Իսկ նրան հալածում է չարագործների մի խումբ, իսկ այդ խմբին հրահրում է ոմն մի կախարդ՝ Ջեռնոմորը։ Դուք գրեք, որ նա Աֆրիկա է գնացել և իշխանությունը հանձնել ոմն Իքս տիկնոջ։ Սարսափելի կին է։ Նստած է գրասեղանի մոտ և ամեն ինչի ի վիճակի է։ Եթե նրա հետ թեյ խմելու նստեք, ուշադիր եղեք, ապա թե ոչ այնպիսի մի շաքար կգցի ձեր թեյի մեջ, որ...

«Տե՜ր աստված, նա Տորոպեցկայայի մասին է ասում»,— մտածեցի ես։

— ... որ մի կում չարած, ոտքներդ կմեկնեք։ Այդ տիկինը, մեկ էլ սարսափելի չարագործ Ստրիժը... այսինքն... մի ռեժիսոր...

նստել, բութ հայացքով Իվան Վասիլևիչին էի նայում։ Ժպիտն աստիճանաբար անհետացավ նրա դեմքից, և ես հանկարծ տեսա, որ նրա աչքերը ամենևին էլ սիրալիր չեն։

— Ինչպես երևում է, դուք համառ մարդ եք,— ասաց նա խիստ մռայլ ու ճպճպացրեց շրթունքները։

— Ոչ, Իվան Վասիլևիչ, բայց ես պարզապես հեռու եմ արտիստական աշխարհից և...

— Իսկ դուք ուսումնասիրեք այդ աշխարհը։ Դա շատ հեշտ է։ Մեր թատրոնում այնպիսի գործող անձինք կան՝ նայեք ու հիանաք։ Մեկուկես գործողություն միանգամից պատրաստ կլինի։ Այնպիսի մարդիկ են գնում-գալիս, որ անընդհատ սպասում ես, որ կամ սապոգներ կթռցնեն զգեստարանից, կամ ֆիննական դանակ կխրեն թիկունքդ։

— Սարսափելի բան է, — ասացի ես հիվանդ ձայնով ու շոշափեցի քունքս։

— Ես տեսնում եմ, որ դա ձեզ չի հրապուրում... Դուք համառ մարդ եք։ Այնուամենայնիվ, ձեր պիեսն էլ է լավը,— բարբառեց Իվան Վասիլևիչը, քննաբար ինձ նայելով,— հիմա մնում է միայն հորինել ու ամեն բան կարգին կլինի....

Ծալվող ոտքերով, գլխիս մեջ՝ աղմուկ, ես դուրս ելա ու չարացած նայեցի սև Օստրովսկուն։ Ինչ-որ բան էի մրթմրթում, ցած իջնելով ճռճռացող փայտյա աստիճաններով, և ատելի դարձած պիեսը կախ էր գցում ձեռքերս։

Բակ դուրս գալիս, քամին պոկեց տարավ գլխարկս, ես հասա բռնեցի ջրափոսի մեջ։ Երկարատև ամռան հետքն անգամ չէր մնացել։ Անձրևը շփշփում էր շեղ շիթերով, ոտքի տակ՝ ճլմփոց, թաց տերևներ էին պոկվում այգու ծառերից։ Ջուրն օձիքիցս ներս էր լցվում։

Անմիտ-անմիտ նզովքներ փնթփնթալով կյանքի, իմ հասցեին, ես քայլում էի, անձրևի ցանցի մեջ աղոտ վառվող լապտերներին նայելով։

Մի նրբանցքի անկյունում, կրպակում թույլ լույս էր առկայծում։ Թերթերը, սեղմված աղյուսով, թրջվում էին վաճառասեղանի վրա, և չգիտես ինչու գնեցի «Մելպոմենայի դեմքը» ամսագիրը. շապիկին՝ նկարված մի տղամարդ, կիպ տրիկոյով, փետուրը գլխարկի կողքը խրած, կեղծ, ներկած աչքերով։

Զարմանալիորեն գարշելի թվաց ինձ իմ սենյակը։ Ջրից ուռած պիեսը շպրտեցի հատակին, նստեցի սեղանի մոտ և ձեռ-

քով սեղմեցի քունքս, որպեսզի հանգստանա։ Մյուս ձեռքով պոկոտում էի սև հացի կտորներ ու ծամում։

Ձեռքս քունքից վերցնելով, սկսեցի թերթել խունացած «Մելպոմենայի դեմքը»։ Ֆիժմաներով մի դիցուհի երևաց, մի վերնագիր՝ «Ուշադրություն դարձնել», մեկ ուրիշը՝ «Կապը կտրած տենոր դի գրացիան», և հանկարծ աչքովս ընկավ իմ ազգանունը։ Այն աստիճան զարմացա, որ նույնիսկ գլուխս պտտվեց։ Ահա նորից ու նորից իմ ազգանունը, հետո էլ՝ Լոպե դե Վեգա։ Կասկած չկար՝ իմ առջև դրված էր «Ոտքը վերմակի չափով» ֆելիետոնը և այդ ֆելիետոնի հերոսը ես էի։ Մոռացել եմ, թե դրա էությունը որն էր։ Աղոտ հիշում եմ, որ այսպես էր սկսվում։

«Պառնասում տխուր էր։

— Էս ոնց որ թե նոր մարդ չկա, հա՞,— հորանջելով ասաց Ժան Բատիստ Մոլիերը։

— Հա՛, տխուր բան է,— ձայն տվեց Շեքսպիրը...»։

Հիշում եմ՝ հետո բացվում էր դուռն ու ներս էի մտնում ես՝ սևամազ երիտասարդս, շատ հաստ դրաման թևատակիս։

Իմ վրա ծիծաղում էին, կասկած չկար, չարաչարորեն ծիծաղում էին բոլորը։ Ե՛վ Շեքսպիրը, և՛ Լոպե դե Վեգան, և՛ կծու Մոլիերը, որն ինձ հարցնում էր, թե «Տարտյուֆի» նման որևէ բան հո չե՞մ գրել, և՛ Չեխովը, ում ըստ իր գրքերի համարում էի խիստ նրբանկատ մարդ, բայց բոլորից ճարպիկ ձեռ էր առնում ֆելիետոնի հեղինակը, որի անունը Գելխեղդ էր։

Հիմա հիշելիս ծիծաղս գալիս է, բայց անսահմանորեն չարացած էի։ Ետուառաջ էի քայլում սենյակում, զգալով, որ անմեղ տեղը վիրավորված եմ՝ իզուր, հենց այնպես։

Գելխեղդին սպանելու վայրենի տենչը խառնվում էր տարակուսանքով լի մտորումներին, թե ինչով եմ ես մեղավոր։

— Ազգագիրն է պատճառը,— շշնջում էի ես։— Բայց ե՞ս եմ դա հորինել։ Ա՛ռ, հա քեզ,— շշնջում էի ես, ու աչքիս երևում էր, թե ինչպես արնակոլոլ Գելխեղդը փռվում է հատակին, իմ դիմաց։

Այդ ժամանակ ծխամորճի քարացած մրի հոտ եկավ, դուռը ճռռաց, և սենյակում հայտնվեց Լիկոսպաստովը՝ թրջված թիկնոցով։

— Կարդացի՞ր,— հարցրեց նա ուրախ-ուրախ։— Շնորհավորում եմ, ախպերս, լավ ձգել են, հա՛։ Ինչ արած, ինչ որ բրթես, էն կխրթես։ Հենց տեսա, եկա մոտդ, ասի՝ պետք է ընկերոջն

այցելել։— Եվ նա մեխից կախ արեց իր տախտակ կտրած թիկնոցը։

— Ո՞վ է այդ Գելխեղդը,— խուլ ձայնով հարցրեցի ես։

— Ինչի՞դ է պետք։

— Ահ, դու գիտե՞ս...

— Դու ինքդ էլ ես նրան ճանաչում։

— Ոչ մի Գելխեղդ չեմ ճանաչում։

— Ինչպե՞ս չես ճանաչում։ Ես ինքս եմ ծանոթացրել... Հիշու՞մ ես փողոցում... այն ծիծաղելի ազդագիրը... Սոփոկլեսը...

Այստեղ ես հիշեցի մտազբաղ գիրուկին, որ մազերիս էր նայում... «Սև մազե՜ր...»։

— Այդ շուն-շան որդուն ի՞նչ եմ արել,— զայրացած հարցրեցի ես։

Լիկոսպաստովն օրորեց գլուխը։

— Է, լավ բան չի, ախպերս, լավ չի։ Ոնց որ տեսնում եմ, զառոզությունը լրիվ տվել է գլուխդ։ Սա ի՞նչ բան է, ուրեմն քո մասին ոչ ոք բան ասելու իրավունք չունի՞։ Առանց քննադատության ապրել չի լինի։

— Դա ի՞նչ քննադատություն է։ Նա ձեռ է առնում... Ո՞վ է նա։

— Նա դրամատուրգ է,— պատասխանեց Լիկոսպաստովը,— հինգ պիես է գրել։ Կարգին էլ մարդ է, իզուր ես բարկանում։ Դե, իհարկե, մի քիչ ցավը եկել է... Բոլորի համար էլ ցավալի է...

— Բայց չէ՞ որ ես չեմ հնարել ազդագիրը։ Մի՞թե ես եմ մեղավոր, որ դրանց խաղացանկում Սոփոկլես ու Լոպե դե Վեգա կա... և...

— Բոլոր դեպքերում դու Սոփոկլես չես,— չարախնդությամբ ասաց Լիկոսպաստովը։ —Ախպերս, ես քսանհինգ տարի գրում եմ, — շարունակեց նա,— բայց և այնպես սոփոկլեսների շարքը չդասվեցի...— Նա հոգոց հանեց։

Ես զգացի, որ Լիկոսպաստովին պատասխանելու բան չունեմ։ Ոչի՜նչ։ Ասեմ այսպես՝ «Չդասվեցիր, որովհետև վատ գրեցիր, իսկ ես՝ լա՞վ»։ Ձեզ եմ հարցնում, կարելի՞ է այսպես ասել, կարելի՞ է։

Ես լռեցի, իսկ Լիկոսպաստովը շարունակեց.

— Ինչ խոսք, այդ ազդագիրը խռովեց հասարակությանը։ Արդեն շատերն են ինձ հարցուփորձ արել։ Վշտացնում է այդ ազդագիրը։ Է՜, ինչ ասեմ, վիճելու չեմ եկել, այլ իմանալով քո

երկրորդ փորձանքի մասին, ենել եմ սիրտիկլու, ընկեր մարդ ես՝ խելք-խելքի տալու...

— Ի՞նչ փորձանք, ինչ բան։

— Ինչպե՞ս թե, Իվան Վասիլևիչը պիեսը չի հավանել,— ասաց Լիկոսպաստովը և նրա աչքերը փայլեցին,— ասում են՝ այսօ՞ր ես կարդացել։

— Ի՞նչ գիտեք։

— Խոսք ու զրույցով լի՜ է աշխարհը,— հուզված հանելով ասաց Լիկոսպաստովը, որ ընդհանրապես սիրում էր առակներով ու առածվածքներով խոսել։ —Նաստասյա Իվանովնա Կոլդիբաևային ճանաչու՞մ ես։— Եվ առանց պատասխանի սպասելու շարունակեց։ — Պատվարժան տիկին է, Իվան Վասիլևիչի մորաքույրն է։ Ամբողջ Մոսկվան է նրան հարգում, ժամանակին նրան պաշտում էին։ Նշանավոր դերասանուհի էր։ Իսկ մեր տանն ապրում է դերձակուհի Աննա Ստուպինան։ Նա այսօր Նաստասյա Իվանովնայի մոտ էր, հենց նոր տուն եկավ։ Նաստասյա Իվանովնան է նրան պատմել։ Ասել է, որ այսօր Իվան Վասիլևիչի մոտ մի նոր մարդ է եկել, պիեսն է կարդացել, սև-սև մարդ է եղել բզեզի պես (ես իսկույն գլխի ընկա, որ դու ես)։ Ասել է, որ Իվան Վասիլևիչը չի հավանել։ Բա՞։ Ախր ես քեզ այն ժամանակ ասում էի, չէ՞, հիշու՞մ ես, որ կարդում էիր։ Ասում էի, որ երրորդ գործողությունը մակերեսային է արված, անլուրջ, կներես, քո օգտին եմ ասում։ Չլսեցիր ինձ։ Դե, Իվան Վասիլևիչն էլ իր գործը հո գիտի, նրանից հեշտ պրծում չկա, իսկույն հասկացել է՛, իսկ եթե նրա դուրը չի եկել, ուրեմն պիեսը չի գնա։ Դուրս է գալիս, որ դու կմնաս՝ ազգագիրը ձեռքումդ կանգնած։ Մարդիկ կծիծաղեն՝ էս էլ քեզ Եվրիպիդե՜ս։ Հա՛, Նաստասյա Իվանովնան ասել է, որ Իվան Վասիլևիչին կոպտել ես, թե ինչ, վշտացրել ես մարդուն։ Նա սկսել է քեզ խորհուրդներ տալ, իսկ դու, ասում է Նաստասյա Իվանովնան, ի պատասխան փրթփրթացել ես։ Դու ինձ կներես, բայց դա չափից դուրս է։ Շատ ես առաջ ընկնում։ Այնքան էլ մի արժեքավոր բան չէ <Իվան Վասիլևիչի համար> քո պիեսը, որ սկսես փրթփրթացնել...

— Գնանք ռեստորան,— կամացուկ ասացի ես,— չեմ ուզում տանը նստել։ Չեմ ուզում։

— Հասկանում եմ։ Էն էլ ո՜նց եմ հասկանում,— բացականչեց Լիկոսպաստովը։— Հաճույքով։ Միայն թե...— Նա անհանգստությամբ խառնշտեց դրամապանակը։

— Ես ունեմ։

Մի կես ժամ հետո նստած էինք «Նեապոլ» ռեստորանում, լուսամուտի մոտ, կեղտոտ սփռոցը առաջներս։ Թարետես, խպրտլշահեր մատուցողն իրար էր անցել, սեղանին դնելով զանազան բաներ. խոսում էր փաղաքուշ, վարունգին ասում էր «պստլիկ վարունգներ», խավիարին՝ «հասկանալի է՝ խավիար», և նրանից այնպիսի տաքություն ու անդորր էր գալիս, որ անգամ մոռացվեց, թե փողոցում անթափանց խավար է, նույնիսկ չէր էլ թվում, թե Լիկոսպաստովն օձ է։

ԳԼՈՒԽ XIII

## ԵՍ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՄ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ավելի վատ բան չկա, ընկերներ, քան վհատությունն ու անվստահությունը սեփական անձիդ նկատմամբ։ Հենց դա էլ ինձ հանգեցրեց մի մտքի՝ արդյոք պե՞տք չէ իրոք քույր-հարսնացուն փոխարինել մորով։

«Հո նա չի՞ կարող հենց այնպես, զուր տեղը խոսել,— մրթմրթում էի ինքս ինձ։ —Չէ որ այս գործերից հասկանում է»։

Եվ գրիչը ձեռքս առնելով, սկսեցի գրոտել թուղթը։ Անկեղծորեն խոստովանում եմ, ափեղ-ցփեղ բան դուրս եկավ։ Ամենագլխավորն այն էր, որ այդ անկոչ մորը՝ Անտոնինային, այնքան ատեցի, որ հենց երևում էր թղթի վրա, ատամներս սեղմում էի։ Իհարկե, ոչ մի բան էլ չէր ստացվի։ Մարդ պետք է սիրի իր հերոսներին։ Եթե այդպես չէ, ոչ ոքի խորհուրդ չեմ տա գրիչ վերցնել՝ հաստատ գիտցեք, շատ մեծ անախորժություններ կունենաք։

— Հաստա՛տ գիտցեք,— խռպոտաձայն ասացի և, բզիկ-բզիկ անելով թուղթը, խոսք տվեցի թատրոն չգնալ։ Տանջալիորեն դժվար էր իրականացնելը։ Բոլոր դեպքերում ես ուզում էի իմանալ, թե սրա վերջն ինչ է լինելու։ «Չէ, թող իրենք ինձ կանչեն», —մտածում էի ես։

Սակայն անցավ մեկ օր, հաջորդը, երեք օր, մի շաբաթ՝ չեն կանչում։ «Երևի ճիշտ էր սրիկա Լիկոսպաստովը,— մտածում էի ես,— պիեսը չի գնա։ Սա էլ քեզ ազդագիր ու «Ֆենիդայի ցանցերը»։ Ա՜խ, բախտս ոնց չի բերում»։

Աշխարհի երեսից լավ մարդիկ չեն կտրվել՝ ասեմ Լիկոսպաստովի նման։ Մի անգամ էլ դուռս ծեծեցին ու ներս մտավ Բոմբարդովը։ Ես այնքան ուրախ էի նրան տեսնելով, որ աչքերս կսկծացին։

— Այս ամենը այսպես էլ պետք է լիներ,— խոսեց Բոմբարդովը, նստած լուսամուտագոգին, ոտքով ջեռուցման մարտկոցին խփելով,— այդպես էլ եղավ։ Ես ձեզ զգուշացրեցի, չէ՞։

— Բայց, Պյոտր Պետրովիչ, մի լավ մտածեք,— բացականչեցի ես։— Ինչպե՞ս չկարդալ կրակոցը։ Ինչպե՞ս չկարդալ։

— Կարդացիք, պրծաք, չէ՞։ Խնդրեմ,— չոր-չոր ասաց Բոմբարդովը։

— Ես իմ հերոսից չեմ բաժանվի,— չարությամբ ասացի ես։

— Չէիք էլ բաժանվի...

— Ինչպե՞ս։

Եվ ես, թուքս կուլ տալով, Բոմբարդովին ամեն բան պատմեցի. և՛ մոր մասին, և՛ Պետյայի մասին, որը պիտի տեր կանգներ հերոսի՝ ինձ համար թանկագին մենախոսություններին, և՛ դաշույնի մասին, որն ամենից շատ էր ինձ հանել հավասարակշռությունից։

— Ի՞նչ կասեք նման ծրագրերի մասին,— բորբոքված հարցրեցի ես։

— Բանդագուշանք է,— չգիտես ինչու շուրջը նայելով, ասաց Բոմբարդովը։

— Է՛, հետո՞...

— Հետո էլ պետք չէր վիճել,— ցածրաձայն ասաց Բոմբարդովը,— այլ պատասխանել այսպես. «Շատ շնորհակալ եմ, Իվան Վասիլևիչ, ձեր ցուցումների համար, կաշխատեմ անպայման կատարել»։ Չի կարելի առարկել, հասկանո՞ւմ եք, թե՝ չէ։ Սիվցև Վրաժեկում չեն առարկում։

— Այսինքն՝ ինչպես թե։ Երբեք ոչ ոք չի՞ առարկում։

— Ոչ ոք և երբեք,— հատ-հատ արտասանեց Բոմբարդովը, —չի առարկել, չի առարկում և չի առարկի։

— Ինչ էլ նա ասի՞։

— Ինչ էլ ասի։

— Իսկ եթե նա ասի, որ իմ հերոսը պիտի գնա Պենզա՞։ Կամ թե՝ այդ մայր Անտոնինան պիտի կախվի՞։ Կամ թե որ նա կոնտրալտո է երգու՞մ։ Կամ թե այս վառարանը սև գույնի՞ է։ Ի՞նչ պիտի պատասխանեմ։

— Որ վարագույրը սև գույնի է։
— Իսկ բեմի վրա ի՞նչ կստացվի։
— Սպիտակ, մի սև բծով։
— Հրեշավո՜ր, շլվա՜ծ բան է...
— Ոչինչ, ապրում ենք,— պատասխանեց Բոմբարդովը։
— Թույլ տվեք։ Մի՞թե Արիստարխ Պլատոնովիչը չի կարող ոչինչ ասել նրան։
— Արիստարխ Պլատոնովիչը չի կարող ոչինչ ասել նրան, քանի որ Արիստարխ Պլատոնովիչը Իվան Վասիլևիչի հետ չի խոսում հազար ութ հարյուր ութսունհինգ թվականից։
— Ինչպե՞ս կարող է պատահել։
— Նրանք գժտվել են հազար ութ հարյուր ութսունհինգ թվականին և այն ժամանակից ի վեր ոչ հանդիպում, ոչ էլ նույնիսկ հեռախոսով են խոսում միմյանց հետ։
— Գլուխս պտտվում է։ Իսկ թատրոնն ինչպե՞ս է տեղը կանգնած մնում։
— Ինչպես տեսնում եք, մնում է, այն էլ հիանալի։ Նրանք սահմանազատել են ոլորտները։ Եթե ասենք, Իվան Վասիլևիչը հետաքրքրվել է ձեր պիեսով, ապա Արիստարխ Պլատոնովիչը դրան այլևս մոտ չի գա, և հակառակը։ Ստացվում է, որ հող չկա, որի վրա բախվեն նրանք։ Դա շատ իմաստուն սիստեմ է։
— Տե՜ր աստված։ Հակառակի պես էլ Արիստարխ Պլատոնովիչը Հնդկաստանում է։ Եթե նա այստեղ լիներ, կդիմեի նրան...
— Հը՛մ...— ասաց Բոմբարդովը և լուսամուտից ներս նայեց։
— Ախր, չի կարելի գործ ունենալ մի մարդու հետ, որը ոչ ոքի չի լսում։
— Ոչ, նա լսում է։ Նա լսում է երեք մարդու. Գավրիիլ Ստեպանովիչին, մորաքույր Նաստասյա Իվանովնային և Ավգուստա Ավդեևնային։ Ահա երեք մարդ երկրագնդի վրա, որոնք կարող են ազդեցություն ունենալ Իվան Վասիլևիչի վրա։ Եթե նշված անձնավորություններից բացի որևիցե մեկը մտքին դնի ազդել Իվան Վասիլևիչի վրա, ապա կհասնի միայն նրան, որ Իվան Վասիլևիչը հակառակը կանի։
— Բայց ինչու՞։
— Նա ոչ ոքի չի վստահում
— Ախր դա սարսափելի բան է։

— Յուրաքանչյուր մեծ մարդ իր ֆանտազիաներն ունի,— հաշտվողաբար ասաց Բոմբարդովը։

— Լավ, ես հասկացա ու կարծում եմ, որ դրությունն անհույս է։ Եթե այնպես է, որ պիեսը, բեմ բարձրանալու համար, անհրաժեշտ է աղճատել այնպես, որ ամենայն իմաստ կորչի, ուրեմն պետք չէ, որ բարձրանա։ Ես չեմ ուզում, որ հասարակությունը մատով ցույց տա ինձ, տեսնելով, թե ինչպես քսանեբորդ դարի մարդը, ձեռքին՝ ատրճանակ, դաշույնը խրում է փորը։

— Հասարակությունը մատով չէր ցույց տա, որովհետև ոչ մի դաշույն էլ չէր լինի։ Ձեր հերոսն ատրճանակով ինքնասպան կլիներ, ինչպես յուրաքանչյուր խելքը գլխին մարդ։

Ես սսկվեցի։

— Եթե դուք ձեզ սուսուփուս պահեիք,— շարունակեց Բոմբարդովը,— ականջ դնեիք խորհուրդներին, համաձայնեիք թե՛ դաշույնին, թե՛ Անտոնինային, ապա ոչ մեկը, ոչ էլ մյուսը չէին լինի։ Ամեն բան իր ճանապարհը, իր կարգն ու սարքն ունի։

— Այդ ի՞նչ կարգ ու սարք է։

— Միշա Պանինը գիտի,— մեռելային ձայնով պատասխանեց Բոմբարդովը։

— Ուրեմն հիմա ամեն ինչ կորա՞վ,— անձկությամբ հարցրեցի ես։

— Մի քիչ դժվար է, դժվար,— տխուր պատասխանեց Բոմբարդովը։

Մի շաբաթ էլ անցավ, թատրոնից ոչ մի լուր չկար։ Վերքս աստիճանաբար սկսեց փակվել, և անտանելի միակ բանը «Նավագնացության լրաբեր» այցելելն էր ու ակնարկներ հորինելու անհրաժեշտությունը։

Բայց հանկարծ... Օ՜, այս նզովյալ բառը։ Հավերժ հեռանալով, ես ինձ հետ եմ տանում անհաղթահարելի, փոքրոգի երկյուղն այդ բառի հանդեպ։ Ես դրանից վախենում եմ ճիշտ այնպես, ինչպես «անակնկալ» բառից, ինչպես «ձեզ հեռախոսի մոտ են կանչում», «հեռագիր ունեք» կամ «ձեզ առանձնասենյակ են հրավիրում» բառերից։ Ես շատ լավ գիտեմ, թե ինչ է հետևում դրանց։

Այսպիսով, հանկարծ և բացարձակապես անսպասելի իմ դռան շեմին հայտնվեց Դեմյան Կուզմիչը, ոտքերը քսքսացնելով գլուխ տվեց և ինձ հանձնեց հրավեր՝ վաղը ցերեկվա ժամը չորսին բարեհաճել թատրոն։

Վաղը անձրև չէր գալիս։ Վաղը աշնանային լավ սառնամանիք օր էր։ Կրունկներով ասֆալտը թխկթխկացնելով, հուզվելով, թատրոն էի գնում։

Առաջինը, որ աչքիս ընկավ, կառապանի ձին էր, ռնգեղջյուրի պես բսած, և չորչորուկ մի ծերունի՝ նստիքին։ Ես հայտնի չէ, թե ինչու, վայրկենապես հասկացա, որ դա Դրիկինն է։ Դրանից ավելի շատ հուզվեցի։ Թատրոնի ներսում ինձ զարմացրեց որոշ իրարանցում, որն արտահայտվում էր ամեն ինչում։ Ֆիլյայի գրասենյակում ոչ ոք չկար, իսկ նրա բոլոր հաճախորդները, այսինքն ավելի ճիշտ, նրանցից առավել համառները խռնված էին բակում, ցրտից կծկված, և մերթընդմերթ լուսամուտից ներս էին նայում։ Մի քանիսը նույնիսկ թխկթխկացնում էին ապակին, բայց ապարդյուն։ Ես բախեցի դուռը, որը մի փոքր բացվեց, ճեղքից երևաց Բակվալինի աչքը, ու ես լսեցի Ֆիլյայի ձայնը.

— Անմիջապես ներս թողեք։

Եվ ինձ ներս թողեցին։ Բակի տառապյալները փորձեցին ետևիցս ներս անցնել, բայց դուռը փակվեց։ Ցած ընկնելով աստիճանից, բարձրացվեցի Բակվալինի օգնությամբ ու մտա գրասենյակ։ Ֆիլյան իր տեղում չէր նստած, այլ առաջին սենյակում։ Ֆիլյան նոր փողկապ էր կապել, այսօրվա պես հիշում եմ՝ պուտերով, Ֆիլյան մի տեսակ արտասովոր մաքուր էր սափրված։

Նա ողջունեց ինձ մի տեսակ հատուկ հանդիսավորությամբ, բայց որոշ տրտմության երանգով։ Թատրոնում մի բան էր կատարվում, կարևոր (ես զգացի, ինչպես հավանորեն զգում է ցուլը, որին սպանդանոց են տանում) բան, ուր, պատկերացնում եք, գլխավոր դերը ես եմ խաղում։

Դա զգացվեց անգամ Ֆիլյայի կարճ խոսքից, որ նա մեղմ ու հրամայական ուղղեց Բակվալինին.

— Վերարկու՛ն վերցրեք։

Ինձ զարմացնում էին ցրիչներն ու հսկիչները։ Նրանցից ոչ մեկը տեղում չէր նստած, բոլորն անհանգիստ, անիրազեկ մարդուն բացարձակապես անհասկանալի շարժման վիճակում էին։ Այսպես, Դեմյան Կուզմիչը մանրիկ-մանրիկ վազ տվեց իմ մոտով, առաջ անցավ ու անաղմուկ բարձրացավ դստիկոն։ Հազիվ էր նա անհետացել տեսադաշտից, երբ դստիկոնից դուրս եկավ ու ցած վազեց Կուսկովը, դարձյալ՝ մանրիկ-մանրիկ և

դարձյալ անհետացավ։ Վարի կիսախավար ճեմասրահում քրտրտացրեց Կլյուկվինը և հայտնի չէ թե ինչու քաշեց լուսամուտներից մեկի վարագույրը, մյուսները բաց թողնելով և անհետ չքացավ։

Բակլավինը սուրաց իմ մոտով, պինվորական մահուդի վրայով է անհետացավ թեյարանում, իսկ թեյարանից դուրս վազեց Պակինն ու անհետացավ հանդիսասրահում։

— Խնդրեմ, վերև բարձրանանք, ինձ հետ,— ասում էր Ֆիլյան, քաղաքավարի ուղեկցելով ինձ։

Մենք վեր էինք ելնում։ Ինչ-որ մեկն էլ անաղմուկ սուրաց իմ մոտով և բարձրացավ վերնահարկ։ Ինձ սկսեց թվալ, թե չորս կողմս մեռյալների ստվերներ են վազվզում։

Երբ մենք լուռ ու համր մոտենում էինք արդեն նախաբաղնիքի դռանը, այդտեղ կանգնած տեսա Դեմյան Կուզմիչին։ Բաճկոնակ հագած ինչ-որ մեկը այն է, պիտի ներս գցեր իրեն դռնից, բայց Դեմյան Կուզմիչը կամացուկ բղավեց ու խաչվեց դռանը, և այդ մեկը ետ շպրտվեց ու լուծվեց աստիճանների վրա, կիսախավարի մեջ։

— Ներս թողնել,— շշնջաց Ֆիլյան ու անհետացավ։

Դեմյան Կուզմիչը վրա ընկավ դռանը, դուռն ինձ ներս թողեց... ես մի դուռ ու ես հայտնվեցի նախաբաղնիքում, ուր կիսախավար չէր։ Տորոպեցկայայի գրասեղանին վառվում էր լամպը։ Տորոպեցկայան չէր մեքենագրում, այլ նստած՝ լրագրին էր նայում։ Գլխով արեց ինձ։

Իսկ դիրեկցիայի առանձնասենյակը տանող դռան մոտ կանգնած էր Մենաժրակին՝ կանաչ ջեմպրը հագին, գոհարե խաչը վզին ու փայլուն բանալիների մեծ խուրձը լաքապատ կաշվե գոտկից կախ։

Նա ասաց. «Այստեղ», և ես ներս ընկա վառ լուսավորված մի սենյակ։

Առաջին բանը, որ աչքիս ընկավ, կարելյան կեչուց թանկարժեք կահույքն էր, ոսկե զարդանախշերով, նույնպիսի մի վիթխարի գրասեղան և սև Օստրովսկին՝ անկյունում։ Առաստաղից կախ հուրհրատում էր ջահը, պատերին հուրհրատում էին լապտերները։ Այստեղ աչքիս երևաց, որ դիմանկարների սրահից եկան դիմանկարներն ու շարժվեցին դեպի ինձ։ Ճանաչեցի Իվան Վասիլևիչին՝ բազմոցին նստած, կլոր սեղանիկի առջև, որի վրա սկահակով մուրաբա էր դրված։ Ճանաչեցի Կնյաժևիչին,

*դիմանկարներով մի քանիսին էլ ճանաչեցի, այդ թվում արտակարգ վայելչատես մի տիկնոջ, ալ կարմիր բլուզով, աստղերի պես սփռված կոճկազարդ դարչնագույն ժակետով, վրայից՝ սամույրի մորթի։ Փոքրիկ գլխարկը թեք դրված էր տիկնոջ սպիտակող մազերին, նրա աչքերը փայլում էին սև հոնքերի տակ, փայլում էին և մատները, որոնց վրա գոհարե ծանր մատանիներ կային։*

*Ի դեպ, սենյակում կային նաև դեմքեր, որոնք պատկերասրահ չէին մտել։ Բազմոցի ետևը կանգնած էր այն նույն բժիշկը, որը նոպայի ժամանակ փրկեց Միլոչկա Պրյախինային, նույն ձևով ձեռքում բռնած գավաթը, իսկ դրան մոտ կանգնած էր բուֆետապանը, վշտի նույն արտահայտությունը դեմքին։*

*Սենյակի մի ծայրում կլոր ու մեծ սեղան կար, ծածկված չտեսնված սպիտակ ծածկոցով։ Լույսերը ցոլցլում էին բյուրեղապակու և հախճապակու վրա, լույսերը մռայլ արտացոլվում էին նարզանի շշերի վրա, ինչ-որ կարմիր բան ընկավ աչքովս, կարծես թե կետայի խավիար էր։ Բազկաթոռների մեջ ընկողմանած մեծ հասարակությունը ներս մտնելուս պես իրար եկավ, և ի պատասխան ինձ գլուխներ խոնարհվեցին։*

*— Ա՜, Լեո...— այն է պիտի սկսեր Իվան Վասիլևիչը։*

*— Սերգեյ Լեոնտևիչ,— արագ վրա բերեց Կնյաժևիչը։*

*— Այո... Սերգեյ Լեոնտևիչ, համեցեք։ Խոնարհաբար խնդրում եմ, նստեցեք։— Եվ Իվան Վասիլևիչն ամուր սեղմեց ձեռքս։— Ձե՞ք բարեհաճի մի կտոր բան վերցնել։ Գուցե հաճեք ճաշել կամ նախաճաշե՞լ։ Խնդրեմ, առանց ձևականությունների։ Մենք կսպասենք։ Մեր Երմոլայ Իվանովիչը կախարդ է, բավական է մի բան ասես նրան, և... Երմոլայ Իվանովիչ, որևէ բան կունենա՞նք ճաշելու։*

*Կախարդ Երմոլայ Իվանովիչն ի պատասխան այսպես վարվեց. աչքերը թոցրեց ճակատին, ապա ետ բերեց տեղն ու աղերսող հայացքն ուղղեց ինձ։*

*— Կամ գուցե որևիցե խմի՞չք,— շարունակում էր ինձ հյուրասիրել Իվան Վասիլևիչը։— Նարզա՞ն։ Սիտրո՞։ Լոռամրգի օշարա՞կ։ Երմոլայ Իվանովիչ,— խստությամբ ասաց Իվան Վասիլևիչը։— Մեր լոռամրգի պաշարները բավարա՞ր են։ Խնդրում եմ ձեզ, խստագույնս հետևել դրան։*

*Երմոլայ Իվանովիչն ի պատասխան ամաչկոտ ժպտաց ու կախեց գլուխը։*

— Երմոլայ Իվանովիչն, իմիջիայլոց, հըմ... հըմ... մոգ է։ Ամենաօրհասական ժամանակ նա ամբողջ թատրոնը սովից փրկեց թառափ ձկնով։ Այլապես բոլորը կկոտորվեին, մինչև վերջին մարդը։ Դերասանները նրան պաշտում են։

Երմոլայ Իվանովիչը հպարտացավ նկարագրված խիզախությամբ, ընդհակառակը, մի մռայլ ստվեր իջավ նրա դեմքին։

Հստակ, հատուկ, հնչեղ ձայնով ես հայտնեցի, որ թե՛ նախաճաշել եմ, թե՛ ճաշել, և անառարկելի ձևով հրաժարվեցի նարզանից էլ, լիմոնադից էլ։

— Այդ դեպքում, գուցե կարկանդա՞կ։ Երմոլայ Իվանովիչն ամբողջ աշխարհին հայտնի է իր կարկանդակներով...

Բայց ես ավելի հնչեղ ու բարձրաձայն (հետագայում Բոմբարդովը ներկաների պատմածը ներկայացրեց ինձ, ասելով. «Համա թե ձայն էր, հա՛, ասում են»։ «Ի՞նչ ձայն»։ «Խուպոտ, չար, բարձր...») կարկանդակներից էլ հրաժարվեցի։

— Ի դեպ, կարկանդակների մասին,— հանկարծ թավշաձայն խոսել սկսեց արտակարգ նրբագեղ, հիանալի հագնված ու սանրված մի խարտյաշ տղամարդ, որ նստած էր Իվան Վասիլևիչի կողքը,— հիշում եմ, մի առիթով հավաքվել էինք Պրուշևինի մոտ։ Եվ անսպասելի եկավ մեծն իշխան Մաքսիմիլիան Պետրովիչը։ Մի լավ քրքջացինք... Պրուշևինին ճանաչում եք, չէ՞, Իվան Վասիլևիչ։ Ես ձեզ հետո կպատմեմ այդ ծիծաղելի դեպքը։

— Ես ճանաչում եմ Պրուշևինին,— պատասխանեց Իվան Վասիլևիչը,— մեծագույն խաբեբա է։ Հարազատ քրոջը մերկ ու տկլոր թողեց... Դեհ...

Այստեղ դուռը ներս թողեց պատկերասրահ մուտք չգործած ևս մի մարդու՝ Միշա Պանինին։ «Այո՛, նա սպանել է...»,— մտածեցի ես, նայելով Միշայի դեմքին։

— Ա՛, մեծարգո Միխայիլ Ալեքսեևիչ,— բացականչեց Իվան Վասիլևիչը, ձեռքերը պարզելով ներս մտնողի կողմը։— Համեցե՛ք, համեցե՛ք։ Խնդրեմ, բազկաթոռին։ Թույլ տվեք ձեզ ծանոթացնել,— Իվան Վասիլևիչն իմ կողմը շրջվեց, —սա մեր թանկագին Միխայիլ Ալեքսեևիչն է, որ կարևորագույն գործեր է կատարում մեզ մոտ։ Իսկ սա...

— Սերգեյ Լեոնտևիչը,— ուրախ-ուրախ վրա բերեց հնյաժևիչը։

— Հենց նա է որ կա։

Ոչինչ չասելով, որ մենք արդեն ծանոթ ենք և չհրաժարվելով այդ ծանոթությունից, ես ու Միշան պարզապես ձեռք սեղմեցինք։

— Պեհ, սկսենք,— հայտարարեց Իվան Վասիլևիչը, և բոլոր աչքերը սևեռվեցին վրաս, որից ես մի տեսակ ցնցվեցի։— Ո՞վ է ուզում կարծիք հայտնել։ Իպոլի՛տ Պավլովիչ։

Այստեղ արտակարգ վայելչատես և մեծ ճաշակով հագնված մի մարդ՝ սևաթույր խոպոպներով, մոնոկլը դրեց աչքին ու ինձ վրա հառեց հայացքը։ Ապա մի բաժակ նարզան լցրեց, խմեց, բերանը սրբեց մետաքսյա թաշկինակով, տատանվեց՝ մեկն էլ խմի՞, խմեց երկրորդ բաժակն ու այդժամ սկսեց խոսել։

Նա հրաշալի, փափուկ, շինծու ձայն ուներ՝ համոզիչ ու սրտի խորքը թափանցող։

— Ձեր վեպը, Լե... Սերգեյ Լեո՞նտևիչ։ Այդպես չէ՞։ Ձեր վեպը շատ, շատ լավն է... Նրանում... է... ինչպե՞ս ասել,— այստեղ հռետորը աչքը գցեց մեծ սեղանին, որի վրա նարզանի շշերն էին, և Երմոլայ Իվանովիչը տեղնուտեղը շորորալով մոտեցավ ու նոր շիշ մատուցեց նրան,— հագեցած է հոգեբանական խորությամբ, արտակարգ ճշմարտացի են գծագրված գործող անձինք... է՛... ինչ վերաբերում է բնության նկարագրությանը, ապա այստեղ դուք հասել եք, ես կասեի, համարյա տուրգենևյան բարձրության։— Այստեղ նարզանը թշշաց բաժակի մեջ, և հռետորը խմեց երրորդ բաժակն ու հոնքի մի շարժումով մոնոկլը աչքից ցած կախեց։— Այդ հարավային բնության նկարագրությունները,— շարունակեց նա,— է՛... աստղալից գիշերները, ուկրաինական... ապա աղմկող Դնեպրը... է՛... ինչպես էր արտահայտվում Գոգոլը... է՛... Հիանալի է Դնեպրը, ինչպես հիշում եք... իսկ ակացիայի բուրմունքը... այդ ամենը վարպետորեն եք արել...

Ես նայեցի Միշա Պանինին՝ հալածական տեսքով կծկվել էր բազկաթոռի մեջ, և նրա աչքերը սարսափելի էին։

— Հատկապես... է՛... տպավորիչ է պուրակի այդ նկարագրությունը... արծաթափայլ սաղարթը կաղամախու... հիշու՞մ եք։

— Մինչև հիմա էլ աչքիս առջև են Դնեպրի վրա այդ գիշերային պատկերները, երբ մենք ներկայացումների էինք գնացել,— ասաց կոնտրալտո տիկինը՝ սամույրի մորթիներով։

— Ի դեպ, այդ ուղևորության մասին,— արձագանքեց Իվան Վասիլևիչի մոտ նստած բասը և ծիծաղեց,— խիստ հետաքրքիր

բան ստացվեց այն ժամանակ գեներալ-նահանգապետ Դուխասովի հետ։ Դուք նրան հիշու՞մ եք, Իվան Վասիլևիչ։

— Հիշում եմ։ Սարսափելի որկրամոլ էր,— պատասխանեց Իվան Վասիլևիչը։— Բայց շարունակեք։

— Հաճոյախոսություններից բացի ոչինչ... է՜... չի կարելի ասել ձեր վեպի հասցեին... բայց... դուք ինձ կներեք... բեմն իր օրենքներն ունի։

Իվան Վասիլևիչը մուրաբա էր ուտում, հաճույքով լսելով Իպոլիտ Պավլովիչի ճառը։

— Ձեզ չի հաջողվել պիեսում վերարտադրել ձեր հարավի, այդ տոթակեզ գիշերների ամբողջ բուրմունքը։ Դերերը ստացվել են հոգեբանորեն ոչ լիարժեք գծագրված, որը և հատկապես ազդել է Բախտինի դերի վրա...— Հռետորն այստեղ չգիտես ինչու շատ վիրավորվեց, նույնիսկ շրթունքներով փրթփրթացրեց։— Պ... ս... և ես... է... է՜... չգիտեմ,— Հռետորը մոնոկլի եզրով տկտկացրեց տետրը, ու ես տեսա, որ իմ պիեսն է դա։— Սա չի կարելի խաղալ... ներեցեք,— արդեն բոլորովին վշտացած ավարտեց նա,— կներեք։

Այստեղ մեր հայացքները հանդիպեցին, և խոսողն իմ հայացքում, ենթադրում եմ, զայրույթ ու զարմանք կարդաց։

Բանն այն է, որ իմ վեպում ոչ ակացիա կար, ոչ արծաթափայլ կաղամախի, ոչ աղմկող Դնեպր, ոչ... մի խոսքով, նման և ոչինչ չկար։

«Նա չի կարդացել, նա չի՜ կարդացել իմ վեպը,— գլուխս գվվում էր,— այնուամենայնիվ, իրեն թույլ է տալիս խոսե՞լ այդ մասին։ Նա ինչ-որ բան է դուրս տալիս ուկրաինական գիշերների մասին... Ինչու՞ են ինձ այստեղ կանչել»։

— Է՞լ ով է ցանկանում արտահայտվել,— բոլորին նայելով՝ ժիր-ժիր հարցրեց Իվան Վասիլևիչը։

Հետևեց լարված լռություն։ Ոչ ոք չէր կամենում արտահայտվել։ Միայն անկյունից մի ձայն լսվեց.

— Էխո-խո՜...

Գլուխս շրջեցի և անկյունում տեսա գեր ու տարեց մի մարդու, մուգ բլուզով։ Նրա դեմքն աղոտ կերպով հիշում էի դիմանկարից... Նրա աչքերը մեղմ էին, դեմքն ընդհանրապես ձանձրույթ, վաղեմի ձանձրույթ էր արտահայտում։ Երբ նայեցի, նա փախցրեց աչքերը։

— Դուք ուզու՞մ եք բան ասել, Ֆյոդոր Վլադիմիրովիչ,— դան դիմեց Իվան Վասիլևիչը։

— Ոչ,— պատասխանեց նա։

Լռությունը տարօրինակ բնույթ ընդունեց։

— Իսկ գուցե ձե՞զ ինչ-որ բան է պետք...— ինձ դիմեց Իվան Վասիլևիչը։

Ամենևին ոչ հնչեղ, ամենևին ոչ առույգ, ամենևին ոչ հստակ ձայնով՝ ինքս էլ եմ դա հասկանում, այսպես ասացի.

— Որքան հասկացա, իմ պիեսը հարմար չէ, և ես խնդրում եմ վերադարձնել։

Չգիտես ինչու, այս խոսքերը հուզմունք հարուցեցին։ Բազկաթոռները շարժվեցին, հետևից ինչ-որ մեկը թեքվեց ականջիս ու ասաց.

— Ոչ, իսկ ինչու՞ եք այդպես ասում։ Ներեցեք։

Իվան Վասիլևիչը նայեց մուրաբային, ապա զարմանքով՝ շուրջը նստածներին։

— Հըմ... հըմ...— նվ թմբկահարեց մատներով։— Մենք բարեկամաբար ենք ասում, որ ձեր պիեսը խաղալ, նշանակում է սարսափելի վնաս հասցնել ձեզ։ Սարսափելիագույն վնաս։ Հատկապես եթե գործը վերցնի Ֆոմա Ստրիժը։ Դուք ինքներդ կյանքից կզզվեք ու ինչ կանիծեք...

Դադարից հետո ես ասացի.

— Այդ դեպքում խնդրում եմ պիեսը վերադարձնել ինձ։

Եվ այստեղ Իվան Վասիլևիչի աչքերում հստակ կերպով չարություն տեսա։

— Պայմանագիր ունենք, բան ունենք,— հանկարծ ինչ-որ տեղից լսվեց մի ձայն, և այստեղ բժշկի թիկունքի ետևից երևաց Գավրիիլ Ստեպանովիչի դեմքը։

— Բայց ձեր թատրոնը չի ուզում խաղալ պիեսը, էլ ձեր ինչի՞ն է պետք։

Այստեղ ինձ մոտեցավ պենսնեով, խիստ շարժուն աչքերով մի դեմք և բարձր ու նվազ տենորով ասաց.

— Մի՞թե դուք պիեսը կտանեք Շլիպպեի թատրոնը։ Ի՞նչ պիտի խաղան այնտեղ։ Է՛, բեմի վրա կքայլեն կտրիճ սպաներ։ Ու՞մ է պետք։

— Գոյություն ունեցող օրենքների և պարզաբանումների հիման վրա պիեսը չի կարելի տանել Շլիպպեի թատրոն, պայ-

մանագիր կա, բան կա,— ասաց Գավրիիլ Ստեփանովիչը և դուրս ելավ բժշկի թիկունքի հետևից։

«Ի՞նչ է կատարվում այստեղ։ Ի՞նչ են ուզում նրանք»,— մտածեցի ես հանկարծ և կյանքումս առաջին անգամ սարսափելի շնչահեղձություն զգացի։

— Ներեցեք,— խուլ ձայնով ասացի ես,— չեմ հասկանում։ Դուք չեք ուզում պիեսը բեմադրել, բայց և ասում եք, որ ուրիշ թատրոն տանել չեմ կարող։ Ի՞նչ անենք։

Այս խոսքերը զարմանալի ներգործություն ունեցան։ Սամույրներով տիկինը վիրավորված հայացք փոխանակեց բազմոցին նստած բասի հետ։ Բայց ամենից սարսափելին Իվան Վասիլևիչի դեմքն էր։ Ծպիտն անհետացել էր, անքթիթ ինձ էին նայում չար, կրակ կտրած աչքերը։

— Մենք ուզում ենք ձեզ փրկել ահավոր վնասից,— ասաց Իվան Վասիլևիչը։— Անկյունից ձեզ դարանած անխուսափելի վտանգից։

Կրկին լռություն տիրեց և դարձավ այնքան տանջալի, որ այլևս անհնար էր դիմանալ։

Մատով մի քիչ փորփրելով բազկաթոռի պաստառը, ես վեր կացա ու հրաժեշտ տվեցի։ Ինձ գլխի շարժումով պատասխանեցին բոլորը, բացի Իվան Վասիլևիչից, որ ինձ էր նայում զարմանքով։ Կողքանց հասա դռանը, սայթաքեցի, դուրս եկա, գլուխ տվեցի Տորոպեցկայային, որը մի աչքով «Իզվեստիան» էր նայում, մյուսով՝ ինձ, Ավգուստա Մենաժրակիին, որն այդ հրաժեշտն ընդունեց խստությամբ, ու դուրս եկա։

Թատրոնը թաղված էր աղջամուղջի մեջ։ Թեյարանում սպիտակ պուտեր երևացին՝ ներկայացումից առաջ սեղանիկներին ծածկոցներ էին գցում։

Հանդիսասրահի դուռը բաց էր, մի քանի վայրկյան կանգ առա ու ներս նայեցի։ Ամբողջ բեմը բաց էր, ընդհուպ մինչև խորքի աղյուսե պատը։ Վերևից իջնում էր կանաչ, թավշապատ տաղավարը, կողքի վիթխարի, բաց դարպասից բանվորները, մրջյունների նման, բեմ էին մտցնում սպիտակ սյուներ։

Մեկ րոպե անց արդեն թատրոնում չէի։

Քանի որ Բոմբարդովը հեռախոս չուներ, հենց նույն երեկո նրան հեռագիր ուղարկեցի, հետևյալ բովանդակությամբ. «Եկեք հոգեհացի։ Առանց ձեզ կխենթանամ, չեմ հասկանում»։

Այս հեռագիրն ինձնից չէին ուզում ընդունել և ընդունեցին

*սոսկ այն բանից հետո, երբ ես սպառնացի դիմել «Նավագնացության լրաբեր»։*

*Հաջորդ օրը երեկոյան Բոմբարդովի հետ սեղան էինք նստել Վերոհիշյալ վարպետի կինը բլիթներ էր մատուցում։*

*Բոմբարդովին դուր եկավ հոգնհաց տալու իմ միտքը, դուր եկավ նաև կատարելապես կարգի գցած սենյակը։*

*— Ես հիմա հանգստացա,— ասացի այն բանից հետո, երբ իմ հյուրը հագեցրեց սկզբնական քաղցը,— և ցանկանում եմ միայն մեկ բան՝ իմանալ, թե դա ինչ էր։ Պարզապես ինձ հետաքրքրությունն է տանջում։ Այդպիսի զարմանալի բաներ դեռ երբեք չեմ տեսել։*

*Բոմբարդովն ի պատասխան գովեց բլիթները, աչք ածեց սենյակն ու ասաց.*

*— Սերգեյ Լեոնտևիչ, դուք պետք է ամուսնանաք։ Ամուսնանաք մի բարետես, քնքուշ կնոջ կամ օրիորդի հետ։*

*— Այդ խոսակցությունն արդեն Գոգոլը նկարագրել է,— պատասխանեցի ես,— չկրկնվենք, հա՞։ Ասացեք ինձ, դա ի՞նչ բան էր։*

*Բոմբարդովն ուսերը թոթվեց։*

*— Առանձնապես ոչինչ չկար, Իվան Վասիլևիչի խորհրդակցությունն էր թատրոնի ավագանու հետ։*

*— Շատ բարի։ Ո՞վ է այդ սամույրներով տիկինը։*

*— Մարգարիտա Պետրովնա Տավրիչեսկայան, մեր թատրոնի դերասանուհին, որն ավագագույնների կամ հիմնադիրների կազմում է։ Հայտնի է նրանով, որ հանգուցյալ Օստրովսկին հազար ութ հարյուր ութսունհինգ թվականին դիտելով Մարգարիտա Պետրովնայի խաղը (նրա դերյուտն է եղել), ասել է. «Շատ լավ է»։*

*Ապա իմ զրուցակցից իմացա, որ սենյակում բացառապես եղել են հիմնադիրները, որոնք հույժ արտահերթ կարգով կանչվել են նիստի՝ իմ պիեսի առիթով, և որ Դրիկինին զգուշացրել են նախորդ օրը, և որ նա երկար-երկար մաքրել է ձիուն ու կառքը լվացել կարբոլաթթվով։*

*Հարցնելով մեծն իշխան Մաքսիմիլիան Պետրովիչից և որկրամոլ գեներալ-նահանգապետից պատմողի մասին, իմացա, որ դա ամենաերիտասարդն է հիմնադիրների մեջ։*

*Հարկ է ասել, որ Բոմբարդովի պատասխաններն աչքի էին ընկնում բացահայտ զսպվածությամբ և զգուշավորությամբ։*

Նկատելով դա, ես աշխատեցի այնպես վրա տալ հարցերով, որ բոլոր դեպքերում իմ հյուրից ստանամ ոչ սոսկ ձևական ու չոր պատասխաններ, ինչպես, ասենք, «ծնվել է այսինչ թվականին, անուն-հայրանունը սա է», այլ որոշ բնութագրումներ։ Մինչև հոգուս խորքն ինձ հետաքրքրում էին դիրեկցիայի սենյակում այն ժամանակ հավաքված մարդիկ։ Այդ բնութագրումներից, ինչպես ենթադրում էի, պետք է որ հյուսվեր այդ հանելուկային նյութին նրանց վարմունքի բացատրությունը։

— Ուրեմն այդ Գոռնոստաևը (գեներալ-նահանգապետի մասին պատմողը) լա՞վ դերասան է,— հարցրեցի ես, գինի լցնելով Բոմբարդովին։

— Ըհը-ը՛,— պատասխանեց Բոմբարդովը։

— Ոչ, ըհը-ն քիչ է։ Այ, օրինակ, Մարգարիտա Պետրովնայի մասին հայտնի է, որ Օստրովսկին ասել է. «Շատ լավ է»։ Արդեն բռնելու մի պստլիկ տեղ կա։ Իսկ ի՞նչ է ըհը-ն։ Գուցե Գոռնոստաևն ինչ-որ բանո՞վ է հռչակ ձեռք բերել։

Բոմբարդովը տակևանց մի զգուշավոր հայացք նետեց վրաս, մի տեսակ ծամծմեց.

— Ինչ ասեմ ձեզ այդ առթիվ... Հըմ...— ու դատարկելով իր բաժակն, ասաց.— այ, օրինակ, բոլորովին վերջերս Գոռնոստաևն ամենքին զարմացրեց նրանով, որ իր հետ հրաշք կատարվեց...— Եվ այստեղ նա սկսեց բլիթի վրա յուղ լցնել ու այնքան դանդաղ լցրեց, որ բացականչեցի.

— Ի սեր աստծո, մի երկարացրեք։

— Հիանալի գինի է «Նապարեուլին»,— այնուամենայնիվ մեջ գցեց Բոմբարդովը, փորձելով իմ համբերությունը և շարունակեց այսպես։— Չորս տարի առաջ էր, վաղ գարնանը, և այն ժամանակ Գերասիմ Նիկոլաևիչը ուրախ էր ու հուզված մի ուրիշ տեսակ՝ այսօրվա նման հիշում եմ։ Ըստ երևույթին այդ ուրախության վերջը բարին չէր։ Ինչ-որ պլաններ էր սարքում, ինչ-որ տեղ ձգտում, նույնիսկ ջահելացել էր։ Իսկ նա, ասեմ ձեզ, թունդ սիրում է թատրոնը։ Հիշում եմ, այն ժամանակ մի գլուխ ասում էր. «էհ, մի քիչ ետ եմ մնացել, առաջ, պատահում էր, հետևում էի Արևմուտքի թատերական կյանքին, պատահում էր, ամեն տարի արտասահման էի գնում, դե, բնական է, ամեն բանի տեղյակ էի լինում, թե ինչ է կատարվում Գերմանիայի, Ֆրանսիայի թատրոնում։ Ֆրանսիան ի՜նչ է։ Պատկերացրեք, նույնիսկ Ամերիկա հասա՝ թատերական նվաճումների ուսումնա-

սիրելու նպատակով։ «Ոչ այդպես է,— ասում էին նրան,— դիմում տվեք ու գնացեք»։ Քմծիծաղ էր տալիս փափուկ ու մեղմ մի ժպիտով։ «Ոչ մի դեպքում,— պատասխանում էր,— հիմա այն ժամանակը չէ, որ դիմում տաս։ Մի՞թե ես թույլ կտամ, որպեսզի պետությունն իմ երեսից արժեքավոր վալյուտա վատնի։ Ավելի լավ է, թող որևէ մի ինժեներ կամ տնտեսվար գա»։

Իսկական, պինդ մարդ է։ Է՜հ...— Բոմբարդովը գինու միջից նայեց լամպի լույսին, մի անգամ էլ գովեց գինին։— Էհ, մի ամիս անցավ, արդեն իսկական գարուն էր։ Այդ ժամանակ էլ հենց փորձանքը վրա տվեց։ Մի անգամ Գերասիմ Նիկոլաևիչը գալիս է Ավգուստա Ավդեևնայի աշխատասենյակը, լուռ կանգնում։ Ավգուստա Ավդեևնան նայում է նրան. տեսնում, որ երեսին գույն չի մնացել, անձեռոցիկի պես ճեփ-ճերմակ է, աչքերի մեջ էլ՝ սուգ։ «Ձեզ ի՞նչ է եղել, Գերասիմ Նիկոլաևիչ», «Ոչինչ,— պատասխանում է,— ուշադրություն մի դարձրեք»։ Մոտենում է լուսամուտին, մատներով թմբկահարում ապակին, սկսում ինչ-որ շատ տխուր ու սարսափելի ծանոթ բան սուլել։ Ավգուստա Ավդեևնան ականջ է դնում, պարզվում է՝ Շոպենի սգո քայլերգն է։ Չի դիմանում, սիրտը տնքում է մարդկայնորեն ու ձեռ չի քաշում. «Ի՞նչ է եղել։ Բանն ի՞նչ է»։ Գերասիմ Նիկոլաևիչը շրջվում է նրա կողմը, ծուռ ժպտում ու ասում. «Երդվեք, որ ոչ ոքի չեք ասի»։ Բնական բան է, տեղնուտեղը երդվում է։ «Ես նոր բժշկի մոտ էի և նա գտավ, որ թոքերի սարկոմա ունեմ»։ Շուռ է գալիս ու դուրս գնում։

— Այ քեզ բա՜ն...— կամացուկ ասացի ես և հոգիս պղտորվեց։

— Ասե՛լ կուզի.— հաստատեց Բոմբարդովը։— Դեհ, Ավգուստա Ավդեևնան անմիջապես, երդում վերցնելով, ասում է Գավրիիլ Ստեպանովիչին, սա՝ Իպոլիտ Պավլովիչին, սա՝ կնոջը, կինը՝ Եվլամպիա Պետրովնային։ Կարճ ասած, երկու ժամ անց դերձականոցի աշկերտներն անգամ գիտեին, որ Գերասիմ Նիկոլաևիչի գեղարվեստական գործունեությունն ավարտված է և որ թեկուզ հենց հիմա կարելի է պսակ պատվիրել։ Թեյարանում երեք ժամ անց դերասաններն արդեն քննարկում էին, թե ում կտան Գերասիմ Նիկոլաևիչի դերերը։

Մինչ այդ Ավգուստա Ավդեևնան հեռախոսով զանգահարում ու գնում է Իվան Վասիլևիչի մոտ։ Ուղիղ երեք օր անց Ավգուստա Ավդեևնան զանգահարում է Գերասիմ Նիկոլաևիչին և ասում.

«Հիմա գալիս եմ ձեզ մոտ»։ Ու ճիշտ ու ճիշտ գալիս է։ Գերասիմ Նիկոլաևիչը պառկած է լինում օթոցին, չինական խալաթով, մահու չափ գունատ, բայց հպարտ ու հանգիստ։

Ավգուստա Ավդեևնան գործունյա կին է, և ա՛ռ հա, սեղանին է շպպացնում կարմիր գրքույկն ու չեկը։ Գերասիմ Նիկոլաևիչը ցնցվում է ու ասում. «Դուք բարի մարդիկ չեք։ Ձե՞ր որ ես չէի ուզում դա։ Ի՞նչ միտք ունի ստարության մեջ մեռնել»։ Ավգուստա Ավդեևնան համառում է և իսկական քարտուղար։ Մեռնողի խոսքերին ուշք չի դարձնում ու բղավում է. «Ցադե՜յ»։ Իսկ Ցադեյը Գերասիմ Նիկոլաևիչի հավատարիմ, նվիրված ծառան է։ Տեղնուտեղը հայտնվում է Ցադեյը։

— Գնացքը մեկնում է երկու ժամ հետո։ Գերասիմ Նիկոլաևիչին ծածկոց տվեք։ Սպիտակեղե՛նը։ Ժամացո՛ւյցը։ Նեսեսե՛րը։ Մեքենան այստեղ կլինի քառասուն րոպե հետո։

Դատապարտվածը հոգոց է հանում լուռ, թափ տալիս ձեռքը։

— Մի տեղ կա, Շվեյցարիայում է, սահմանի վրա, թե Շվեյցարիայում չէ, մի խոսքով՝ Ալպերում...— Բոմբարդովը շփեց ճակատը,— մի խոսքով, կարևոր չէ։ Ծովի մակերևույթից երեք հազար մետր բարձրության վրա, աշխարհահռչակ պրոֆեսոր Կլիի բարձրլեռնային առողջարանը։ Այնտեղ գնում են միայն ծայրահեղ դեպքում՝ կամ դես, կամ դեն։ Ավելի վատ չի լինում, բայց հրաշքներ էլ են պատահում։ Բաց պատշգամբում կատարներն ի տես, Կլին պառկեցնում է այդպիսի անհույսներին, սարկոմատինայի ինչ-որ ներարկումներ է անում, ստիպում թթվածին շնչել, և լինում է, որ Կլիին հաջողվում է մեկ տարով երկարաձգել մահը։

Հիսուն րոպե անց Գերասիմ Նիկոլաևիչին, իր ցանկությամբ, անց են կացնում թատրոնի մոտով, և Դեմյան Կուզմիչը հետո պատմում էր, որ տեսել է, թե ինչպես նա բարձրացրել է ձեռքն ու օրհնել թատրոնը, հետո մեքենան գնացել է Բելոռուսական-Բալթիական կայարան։

Հետո ամառը վրա հասավ ու լուր տարածվեց, թե Գերասիմ Նիկոլաևիչը վախճանվել է։ Է՛, ասացին, խոսեցին, ցավակցեցին... Բայց ամռանը դերասաններն արդեն ճամփի վրա էին, սկսվել էր շրջագայությունը... այնպես որ առանձնապես մեծ վիշտ չապրեցին... Սպասում էին, որ ուր որ է կբերեն Գերասիմ Նիկոլաևիչի աճյունը... Մինչ այդ դերասանները դեսուդեն գնա-

ցին, թատերաշրջանն ավարտվեց։ Բայց ասեմ ձեզ, որ մեր Պլիսովը...

— Դա ո՞րն է, այն սիրուն-սիրուն բեղավո՞րը,— հարցրեցի ես,— պատկերասրահում կա, չէ՞։

— Նա է որ կա,— հաստատեց Բոմբարդովը և շարունակեց.— Այսպես ուրեմն, գործուղում ստացավ Փարիզ՝ թատերական մեքենաներն ուսումնասիրելու համար։ Ինչ որ պետքն է, անմիջապես փաստաթղթերն առավ ու գնաց։ Պետք է ասեմ, որ Պլիսովը մի ահավոր աշխատող է և իր պտտվող բեմի վրա տառացիորեն սիրահարված։ Նրան չափազանց նախանձում էին։ Բոլորի համար էլ հաճելի է Փարիզ գնալ... «Այ քեզ բախտավո՜ր»,— ասում էին բոլորը։ Բախտավոր էր, թե ոչ, առավ իր փաստաթղթերն ու Փարիզի ճամփան բռնեց ճիշտ այն ժամանակ, երբ Գերասիմ Նիկոլաևիչի մահվան լուրը տեղ հասավ։ Պլիսովը մի ուրիշ տեսակ մարդ է, և կարողացավ Փարիզում եղած ժամանակ նույնիսկ Էյֆելյան աշտարակը չտեսնել։ Էնտուզիա՜ստ մարդ է։ Ամբողջ ժամանակն անցկացրեց բեմատակի խորշերում, ինչ պետք էր, ուսումնասիրեց, լապտերներ գնեց, ամեն բան կարգին-սարքին կատարեց։ Վերջապես, արդեն պետք էր վերադառնալ։ Այստեղ Պլիսովը որոշում է զբոսնել Փարիզում, թեկուզ մի թեթև դիտել քաղաքը՝ հայրենիք վերադառնալուց առաջ։ Քայլում է, քայլում, ավտոբուսներ նստում, գերազանցապես բացատրվելով բոբռոցով և ի վերջո գազանի պես սովածացած, հասնում մի տեղ, սատանան գիտե, թե որտեղ։ «Արի մտնեմ այս փոքրիկ ռեստորանը, մտածում է, մի բան ուտեմ»։ Ներս է մտնում՝ լույսեր են վառվում։ Զգում է, որ կենտրոնից հեռու տեղ է, ըստ երևույթին ամեն բան էլ էժան է։ Ներս է մտնում։ Իսկապես՝ միջակ մի ռեստորան։ Նայում է, ու ոնց կանգնած էր, այդպես էլ քարանում, մնում է։

Տեսնում է՝ սեղանի մոտ, սմոկինգը հագին, լամբակ-ծաղկակալով, նստած է հանգուցյալ Գերասիմ Նիկոլաևիչը, նրա հետ ինչ-որ երկու ֆրանսուհիներ, ըստ որում վերջիններս ծիծաղից կոտորվում են։ Իսկ նրանց դիմաց սեղանին, սառույցով լի ամանի մեջ մի շիշ շամպայն է դրված ու մրգեր-բաներ։

Պլիսովն ուղղակի երերում է մուտքի հենասյան մոտ։ «Չի կարող պատահել,— մտածում է նա։— Աչքիս է երևում։ Գերասիմ Նիկոլաևիչը չի կարող այստեղ լինել ու քրքջալ։ Նա միայն մի տեղ կարող է լինել՝ Նովոդևիչյեում»։

Կանգնած, աչքերը չռում է հանգուցյալին սարսափելի նման այդ մարդու վրա, իսկ սա ելնում է տեղից, ընդ որում, դեմքին ասես մի տեսակ տագնապ է լինում։ Պլիսովին նույնիսկ թվում է, թե նա կարծես դժգոհ է իր հայտնվելուց, բայց հետո պարզվում է, որ Գերասիմ Նիկոլաևիչը պարզապես զարմացել է։ Եվ Գերասիմ Նիկոլաևիչը, իսկ նա ինքն էր որ կար, մի բան է շշնջում իր ֆրանսուհիներին, և վերջիններս հանկարծ անհետանում են։

Պլիսովն ուշքի է գալիս միայն այն ժամանակ, երբ Գերասիմ Նիկոլաևիչը պաշպշում է իրեն։ Գերասիմ Նիկոլաևիչին լսելով, Պլիսովը միայն բացականչում է. «Ա՛ռ, հա՛…»։ Եվ իրոք, արմանք-զարմանք բաներ…

Գերասիմ Նիկոլաևիչին այդ Ալպերն են հասցնում այնպիսի վիճակում, որ Կլին գլուխն է օրորում միայն, ասում է՝ «Հըմ…»։ Է՛, Գերասիմ Նիկոլաևիչին պառկեցնում են պատշգամբում։ Սրսկում են այդ դեղանյութը. Թ-թվածնի բարձ։ Սկզբում հիվանդըն ավելի է վատանում, այնքան վատանում, որ, ինչպես հետո խոստովանեցին Գերասիմ Նիկոլաևիչին, վաղվա օրվա մասին Կլին ունենում է ամենատհաճ ենթադրություններ։ Քանի որ սիրտը չէր դիմանում։ Բայց և այնպես վաղվա օրը բարեհաջող է անցնում։ Սրսկումը կրկնում են։ Վաղը չէ մյուս օրն ավելի է լավանում։ Իսկ հետո՝ ուղղակի մարդու հավատ չի գալիս։ Գերասիմ Նիկոլաևիչը նստում է թախտին, ապա ասում. «Արի, մի հատ ման գամ էս»։ Ոչ միայն ասիստենտների, այլ հենց իր՝ Կլիի աչքերն են չռվում։ Կարճ ասած, մեկ օր էլ հետո Գերասիմ Նիկոլաևիչը քայլում է պատշգամբում, դեմքը շառագունած, ախորժակը՝ բաց… ջերմաստիճանը՝ 36,8, զարկերակը՝ կարգին, ցավերի հետքն իսկ չի մնում…

Գերասիմ Նիկոլաևիչը պատմում էր, որ իրեն նայելու էին գալիս հարևան գյուղերից։ Քաղաքներից բժիշկներ էին գալիս։ Կլին զեկուցում տվեց, բղավում էր, որ նման դեպքեր հազար տարին մեկ են լինում։ Ուզում էին Գերասիմ Նիկոլաևիչի դիմանկարը զետեղել բժշկական ամսագրերում, բայց ինքը կտրականապես հրաժարվեց. «Աղմուկ-աղաղակ չեմ սիրում»։

Իսկ Կլին այդ ընթացքում Գերասիմ Նիկոլաևիչին ասում է, որ նա այլևս Ալպերում անելիք չունի և որ ինքը Գերասիմ Նիկոլաևիչին ուղարկում է Փարիզ, որպեսզի այնտեղ հանգստանա իր կրած ցնցումներից։ Ահա այսպես էլ Գերասիմ Նիկոլաևիչը

հայտնվում է Փարիզում։ Իսկ ֆրանսուհիները, ասում է Գերասիմ Նիկոլաևիչը, փարիզցի երկու ջահել, սկսնակ բժշկուհիներ են, որոնք պատրաստվում են իր մասին հոդված գրել։ Ահա, այսպիսի բաներ։

— Այո, ապշեցուցիչ է,— նկատեցի ես,— այնուամենայնիվ, ես չեմ հասկանում, իսկ նա ինչպե՞ս դուրս պրծավ նեղ վիճակից։

— Հրաշքն էլ հենց դա է,— պատասխանեց Բոմբարդովը,— պարզվում է, որ առաջին իսկ սրսկման ազդեցության տակ Գերասիմ Նիկոլաևիչի սարկոման սկսել է ներծծվել ու ներծծվել է։

Ես ձեռքերս իրար զարկեցի։

— Ասացեք, տեսնեմ,— բացականչեցի ես։— Ախր այդպես երբեք չի լինում։

— Հազար տարին մի անգամ լինում է,— հայտնեց Բոմբարդովը և շարունակեց.— բայց դեռ սպասեք, բոլորը չեմ ասել։ Աշնանը Գերասիմ Նիկոլաևիչը վերադարձավ նոր կոստյումով, գիրացած, արևառ՝ փարիզյան բժիշկները Փարիզից հետո նրան օվկիանոսի ափ էին ուղարկել։ Թեյարանում մերոնք ուղղակի խումբ-խումբ կախվում էին Գերասիմ Նիկոլաևիչից, լսելով նրա պատմությունները օվկիանոսի, Փարիզի, ալպիական բժիշկների և ուրիշ-ուրիշ բաների մասին։ Է՛, թատերաշրջանը սովորականի պես հունի մեջ մտավ, Գերասիմ Նիկոլաևիչը խաղում էր, և կարգին էր խաղում, այսպես ձգվեց մինչև մարտ։ Իսկ մարտին, մեկ էլ տեսանք, Գերասիմ Նիկոլաևիչը «Լեդի Մակբեթի» փորձի եկավ ձեռնափայտով։ «Ի՞նչ է պատահել»։ «Բան չէ, չգիտեմ ինչու, ցոտկատեղս ծակում է»։ Է, ծակում է, ծակում է։ Կծակի, կանցնի։ Բայց չի անցնում։ Գնալով ավելի է ծակում...— Կապույտ լույս՝ չի օգնում... Անքնություն ունի, մեջքի վրա չի կարողանում քնել։ Սկսեց ոտքի վրա նիհարել։ Պանտոպոն։ Չի օգնում։ Դե, իհարկե, տարան բժշկի։ Եվ պատկերացրեք...

Բոմբարդովը մի ճարտար դադար տվեց ու աչքերին՝ այնպիսի արտահայտություն, որ մարմնովս սարսուռ անցավ։

— Եվ պատկերացրեք... Բժիշկը նայում է նրան, տրորում, աչքերը ճպճպացնում... Գերասիմ Նիկոլաևիչը նրան ասում է. «Բժիշկ, մի երկարացրեք, ես կնիկ չեմ, գլխովս շատ բան է անցել, էլի՞ դա է»։ Դա՛ է,— խռպոտ բղավեց Բոմբարդովը և բաժակը գլուխը քաշեց։— Սարկոման վերսկսվել էր։ Թափանցել էր աջ երիկամն ու սկսել կրծել Գերասիմ Նիկոլաևիչին։ Բնական բան է, սենսացիա։ Փորձերը՝ գրողի ծոցը, Գերասիմ Նի-

կոլաևիչին՝ տուն։ Բե, այս անգամ արդեն ավելի հեշտ էր։ Հիմա արդեն հույս կար։ Դարձյալ երեք օրվա ընթացքում՝ անձնագիր, տոմս՝ դեպի Ալպեր, Կլիի մոտ։ Սա Գերասիմ Նիկոլաևիչին հարազատի պես է դիմավորում։ Հապա ի՞նչ։ Գերասիմ Նիկոլաևիչի սարկոման աշխարհահռչակ ռեկլամ էր պրոֆեսորի համար։ Դարձյալ պատշգամբ, դարձյալ սրսկում՝ և նույն պատմությունը։ Մեկ օր անց ցավը մեղմանում է, երկու օր անց Գերասիմ Նիկոլաևիչը քայլում է պատշգամբում, իսկ երեք օր անց խնդրում՝ Կլիին՝ կարելի՞ է, որ խաղը թենիս խաղա. Առողջարանում թե ի՞նչ է կատարվում՝ խելքի մոտ բան չէ։ Հիվանդները Կլիի մոտ են գալիս էշելոններով։ Կողքն, ինչպես պատմում էր Գերասիմ Նիկոլաևիչը, սկսում են երկրորդ մասնաշենքը կառուցել։ Կլին՝ որքան էլ զուսպ, օտարերկրացի, երբ անգամ համբուրվում է Գերասիմ Նիկոլաևիչի հետ, և հարկը պատշաճին նրան հանգստանալու է ուղարկում. միայն թե այս անգամ Նիցցա, ապա Փարիզ, իսկ հետո՝ Սիցիլիա։

Եվ կրկին աշնանը վերադարձավ Գերասիմ Նիկոլաևիչը,— մենք էլ հենց նոր լինք եկել Դոնբաս կատարած շրջագայությունից,— թարմ, առողջ, միայն կոստյումն էր ուրիշ, նախորդ աշնանը շոկոլադագույն էր, իսկ հիմա՝ մոխրագույն, մանր վանդակավոր։ Երեք օր պատմեց Սիցիլիայի մասին և թե ինչպես բուրժուաները ռուլետկա էին խաղում Մոնտե-Կառլոյում։ Ասաց, որ նողկալի տեսարան է. Դարձյալ թա ներաշրջան և գարնան գլուխ դարձյալ նույն պատմությունը. միայն թե ուրիշ տեղում։ Ախտադարձություն, բայց արդեն ձախ ծնկան տակ։ Նորից՝ Կլի, հետո՝ դեպի Մադեյրա, հետո, վերջում՝ Փարիզ։

Բայց հիմա արդեն սարկոմայի բռնկումների առթիվ հուզումներ համարյա չեն լինում։ Բոլորի համար պարզ է, որ Կլին գտել է փրկության միջոցը։ Պարզվել է, որ սրսկումների ազդեցության տակ տարեցտարի սարկոմայի կայունությունն իջնում է, և Կլին հույս ունի, նույնիսկ վստահ է, որ ևս երեք-չորս շրջան, ու Գերասիմ Նիկոլաևիչի օրգանիզմն ինքը կսկսի դիմադրել սարկոմայի՝ նոր բռնկում տալու փորձերին։ Եվ իրոք, նախանցյալ տարի հայմորյան խոռոչում միայն թեթև ցավերի ձևով հանդես եկավ, և իսկույն անհետացավ Կլիի մոտ։ Բայց հիմա արդեն Գերասիմ Նիկոլաևիչի նկատմամբ խստագույն ու անդադրում հսկողություն կա, և ցավեր ունի, թե չունի, մեկ է, տարին նրան ուղարկում են։

*— Հրա՞շք է,— ասացի ես, չգիտես ինչու ախ քաշելով։*

*Այդ ընթացքում մեր խնչույքը թեժացավ, ինչպես ասում են, գլուխներս մշուշվեց «Նապարեուլիից», ծայր առավ ավելի կենդանի, և գլխավորը՝ ավելի անկեղծ զրույց։ «Դու շատ հետաքրքիր, գիտողունակ, չար մարդ ես,— մտածում էի Բոմբարդովի մասին,— և չափազանց դուր ես գալիս ինձ, բայց և խորամանկ ես ու ծածկամիտ, ու քեզ այդպիսին է դարձրել քո կյանքը թատրոնում...»*

*— Մի եղեք այդպիսին,— հանկարծ խնդրեցի ես հյուրին։— Ասացեք ինձ. չէ որ խոստովանում եմ ձեզ, որ ծանր է վիճակս... Մի՞թե իմ պիեսն այդքան վատն է։*

*— Ձեր պիեսը,— ասաց Բոմբարդովը,— լավ պիես է։ Եվ վերջ։*

*— Իսկ ինչու՞, իսկ ինչու՞ տեղի ունեցավ ինձ համար տարօրինակ ու սարսափելի այդ ամեն ինչը առանձնասենյակում։ Պիեսը նրանք չհավանեցի՞ն։*

*— Ոչ,— հաստատաձայն ասաց Բոմբարդովը,— ընդհակառակն։ Այդ ամենը կատարվեց հենց այն պատճառով, որ պիեսը նրանք հավանել էին։ Եվ հավանել էին չափազանց։*

*— Բայց Իպոլիտ Պավլովիչը...*

*— Ամենից շուտ պիեսը դուր է եկել հենց Իպոլիտ Պավլովիչին,— մեղմ. բայց ծանրակշիռ, հատ-հատ ասաց Բոմբարդովը և նրա աչքերում, ինձ թվաց, թե կարեկցանք զգացի։*

*— Ինչպե՞ս կարելի է...— շշնջացի ես։*

*— Չէ, պետք չէ։ Ուղղակի դուք չգիտեք, թե ինչ բան է թատրոնը։ Աշխարհում բարդ մեքենաներ կան, բայց թատրոնը բոլորից բարդն է...*

***— Խոսե՛ք։ Խոսե՛ք,— բղավեցի ես ու բռնեցի գլուխս։***

***— Պիեսն այն պատճառով է դուր եկել, որ անգամ խուճապ է առաջացրել,— սկսեց Բոմբարդովը,— դրանից էլ հենց ամեն բան կատարվեց։ Հենց ծանոթացան պիեսի հետ, իսկ ավագներն իմացան այդ մասին, իսկույն գերաբաշխում նշեցին նույնիսկ։ Բախտինը նշանակեցին Իպոլիտ Պավլովիչի համար. Պետրովը մտադրվեցին Վալենտին Կոնրադովիչին տալ։***

***— Որ... Վալ... դա այն...***

***— Այո, այո... նա է։***

***— Բայց ներեցեք,— նույնիսկ չբղավեցի, այլ ոռնացի ես։— Ախր...***

— Այո, այո,— ասաց հավանաբար կես խոսքից ինձ հասկացող Բոմբարդովը։— Իպոլիտ Պավլովիչը վաթսունմեկ տարեկան է, Վալենտին Կոնրադովիչը՝ վաթսուներկու... Ձեր ամենատարեց հերոսը՝ Բախտինը, քանի՞ տարեկան է։

— Քսանյոթ։

— Ը՜հը՜-ըհը՜։ Ինչ ասեմ, հենց որ ավագներին ուղարկեցին պիեսի օրինակները, նկարագրել անգամ չեմ կարող ձեզ, թե ինչ կատարվեց։ Այդպիսի բան չէր եղել մեր թատրոնում՝ ամբողջ հիսուն տարվա գոյության ընթացքում։ Նրանք բոլորն էլ ուղղակի վիրավորվեցին։

— Ո՞ւմ վրա. Դերաբաշխողի՞ վրա։

— Ո՛չ։ Հեղինակի։

Ինձ մնում էր միայն չռել աչքերս, այդպես էլ արեցի, իսկ Բոմբարդովը շարունակեց.

— Հեղինակի։ Ոսկասես՝ ավագների խումբը դատում էր այսպես. մենք խաղում ենք, ծարավի ենք դերերի, մենք՝ հիմնադիրներս, ուրախ կլինեինք ցուցադրել մեր ողջ վարպետությունը ժամանակակից պիեսում և... խնդրեմ՝ բարև, ասածս բարին։ Գալիս է մի մոխրագույն կոստյում ու պիես բերում, որի գործող անձինք ջահել-ջուհուլ են։ Ուրեմն, մենք դա խաղալ չե՞նք կարող։ Սա ի՞նչ բան է, հեղինակը հանաքո՞վ է պիեսը բերել։ Հիմնադիրներից ամենակրտսերը՝ Գերասիմ Նիկոլաևիչը, հիսունյոթ տարեկան է։

— Ես ամենևին էլ չեմ ակնկալում, որ իմ պիեսը հիմնադիրները խաղան,— բղավեցի ես։— Թող ջահելները խաղան։

— Ի՜նչ խելոք բան էր,— բացականչեց Բոմբարդովն ու դեմքին դիվական արտահայտություն տվեց։— Ուրեմն, թող Արգունինը, Գալինը, Ելագինը, Բլագոսվետլովը, Ստրենկովսկին դուրս գան, գլուխ տան, հա՞։ Բռա՜վո։ Բի՜ս։ Ուռա՜։ Մի դեսը նայեք, բարի մարդիկ, թե ինչ հոյակապ ենք խաղում։ Իսկ հիմնադիրներն, ուրեմն, պիտի նստեն ու շփոթված ժպտան, հա՞, ուրեմն մենք, տեսնում եք, այլևս պետք չենք, հա՞։ Ուրեմն, արդեն կարելի է մեզ՝ անկելանոց, հա՞։ Հի՜-հի՜-հի՜։ Լա՜վ է։ Լա՜վ է։

— Ամեն ինչ հասկանալի է,— ջանալով նույնպես բղավել դիվական ձայնով, բղավեցի ես։— Ամե՜ն ինչ հասկանալի է։

— Չհասկանալու ինչ կա որ,— ընդհատեց Բոմբարդովը։— Իվան Վասիլևիչը ձեզ ասաց, չէ՞, որ պետք է հարսին մայր

դարձնել, այն ժամանակ կխաղար Մարգարիտա Պետրովնան կամ Նաստասյա Իվանովնան...

— Նաստասյա Իվանովնա՞ն...

— Դուք թատերական մարդ չեք,— վիրավորական ժպիտով արձագանքեց Բոմբարդովը, բայց թե ինչու վիրավորվեց, չբացատրեց։

— Միայն մի բան ասեք,— հախուռն կերպով ասացի ես,— նրանք Աննայի դերն ու՞մ էին ուզում տալ։

— Բնական բան է, Լյուդմիլա Սիլվեստրովնա Պրյախինային։ Այստեղ, չգիտես ինչու, կատաղություն իջավ վրաս։

— Ի՛ի՞նչ։ Ինչ ասացի՞՞ք։ Լյուդմիլա Սիլվեստրովնայի՞՞ն։— Ես վեր թռա սեղանի մոտից։— Ծիծաղում եք վրաս. հա՞։

— Իսկ ի՞նչ է եղել,— զվարթ հետաքրքրությամբ հարցրեց Բոմբարդովը։

— Նա քանի՞ տարեկան է։

— Իսկ դա, ինձ կներեք, ոչ ոք չգիտի։

— Աննան տասնինը տարեկան է։ Տասնի՛նը։ Հասկանու՞մ եք։ Բայց նույնիսկ դա չէ ամենագլխավորը։ Գլխավորն այն է, որ նա չի կարող խաղալ։

— Աննա՞։

— Ոչ թե Աննա. այլ ընդհանրապես ոչինչ չի կարող։

— Ներեցեք։

— Ոչ, դուք ներեցեք։ Մի դերասանուհի, որն ուզում էր ճնշված ու վիրավորված մարդու լաց ներկայացնել և այնպես ներկայացրեց, որ կատուն դիվոտեց և վարագույրը պատառոտեց, ոչինչ չի կարող խաղալ։

— Կատուն տխմար կատու է,— իմ կատաղությունից հաճույք ստանալով,արձագանքեց Բոմբարդովը,— նա սրտի ճարպակալում ունի, միոկարդիտ և նևրասթենիա։ Գիշեր-ցերեկ անկողնին նստած, մարդու երես չի տեսնում, է՛, բնական բան է, վախեցել է։

— Կատուն նևրասթենիկ է, համաձայն եմ,— բղավեցի ես։— Բայց ճշմարիտ զգացողություն ունի և հիանալի հասկանում է բեմից։ Նա կեղծությունը որսաց։ Հասկանու՞մ եք, նողկալի կեղծությունը։ Նա ցնցված էր։ Ընդհանրապես, ի՞նչ էր նշանակում այդ ամբողջ օյինբազությունը։

— Վրիպակ էր ստացվել,— պարզաբանեց Բոմբարդովը

— Այսինքն։

— Մեր լեզվով վրիպակ է կոչվում յուրաքանչյուր խառնաշփոթություն, որը կատարվում է բեմի վրա։ Դերասանն է հանկարծ տեքստը շփոթում, կամ վարագույրը ժամանակին չեն փակում, կամ...

— Հասկացա, հասկացա....

— Տվյալ դեպքում երկուսն են վրիպել՝ և՛ Ավգուստա Ավդեևնան, և՛ Նաստասյա Իվանովնան։ Առաջինը, ձեզ թողնելով Իվան Վասիլևիչի մոտ, Նաստասյա Իվանովնային չի զգուշացրել, որ այնտեղ կլինեք։ Իսկ երկրորդը, նախքան Լյուդմիլա Սիլվեստրովնային ասպարեզ արձակելը, չի ստուգել՝ Իվան Վասիլևիչի մոտ մարդ կա՞, թե՝ ոչ։ Թեև, իհարկե, Ավգուստա Ավդեևնան ավելի քիչ է մեղավոր՝ Նաստասյա Իվանովնան խանութ էր գնացել՝ սնկի...

— Հասկանալի է, հասկանալի,— ասացի ես, ջանալով մեֆիստոֆելյան քրքիջ արտաբերել,— ամեն ինչ միանգամայն հասկանալի է։ Ուրեմն այսպես, ձեր Լյուդմիլա Սիլվեստրովնան խաղալ չի կարող։

— Ներեցեք։ Մոսկվացիները պնդում են, որ ժամանակին նա հիանալի է խաղացել։

— Սուտ են ասում ձեր մոսկվացիները,— բղավեցի ես։— Նա պատկերացնում է լաց ու վիշտ, իսկ աչքերից չարություն է թափվում։ Նա պար գալով բացականչում է. «Ուշ ամա՞ն է», իսկ աչքերն անհանգիստ են։ Նա ծիծաղում է, իսկ լսողի մարմինը փշաքաղվում է, ոնց որ շապկի տակից նարզան լցնեն մարդու վրա։ Նա դերասանուհի չէ։

— Բայց և այնպես նա երեսուն տարի ուսումնասիրում է Իվան Վասիլևիչի նշանավոր տեսությունը՝ մարմնավորման մասին։

— Չգիտե՛մ այդ տեսությունը։ Ըստ իս, տեսությունը նրան չի օգնել։

— Գուցե դուք կասեք, թե Իվան Վասիլևիչն էլ դերասան չէ։

— Օ՜, ոչ։ Ոչ։ Հենց որ նա ցույց տվեց, թե ինչպես Բախտինը դաշունահարում է իրեն, ես շշմեցի՝ նրա աչքերը մեռելի աչք դարձան։ Նա ընկավ օթոցին, ու ես տեսա մորթվողը։ Որքան կարելի է դատել այդ կարճ տեսարանով, իսկ դատել կարելի է, ինչպես մեծ երգչին կարելի է ճանաչել նրա երգած մի դարձվածքով, նա մեծագույն երևույթ է բեմի վրա։ Կտրականապես

միայն մի բան չեմ կարող հասկանալ, թե ինչ է նա ասում պիեսի բովանդակության առթիվ։

— Իմաստուն բաներ է ասում միշտ։

— Դաշու՞յնը։

— Հասկացեք, որ հենց դուք նստել ու բաց եք արել ատամը. նա այլևս դադարել է ձեզ լսել։ Այո՛, այո՛։ Նա մտածել է, ինչպես բաժանել դերերը, ինչպես անել, որ հիմնադիրները դերեր ունենան, ինչպես անել, որպեսզի նրանք կարողանան խաղալ ձեր պիեսն՝ առանց վնաս հասցնելու իրենց... Իսկ դուք ինչ-որ կրակոցներ եք սկսել կարդալ։ Ես տասը տարի աշխատում եմ մեր թատրոնում, և ինձ ասել են, որ մեր թատրոնում միակ անգամ կրակել են հազար ինն հարյուր մեկ թվականին, այն էլ չափազանց անհաջող։ Այդ... մոռացել եմ... ում պիեսում... հայտնի հեղինակ է... լավ, կարևոր չէ... մի խոսքով երկու ջղային հերոս լեզվակռիվ են տվել միմյանց հետ՝ ժառանգության պատճառով, մինչև որ նրանցից մեկն ատրճանակով թխկացրել է մյուսին, այն էլ վրիպել... Է՛, քանի որ դեռ սովորական փորձեր են եղել, օգնականը կրակոց է սարքել ծափ զարկելով, իսկ գլխավոր փորձին կուլիսներում կրակել է իսկականից։ Է՛, Նաստասյա Իվանովնան վատ է զգացել իրեն՝ կյանքում ոչ մի անգամ կրակոց չի լսել, իսկ Լյուդմիլա Սիլվեստրովնան հիստերիկա է սարքել։ Եվ դրանից հետո կրակոցները դադարել են։ Պիեսում փոփոխություն են արել, հերոսը չի կրակել, այլ թափահարել է ցնցուղն ու բղավել. «Կապանեմ քեզ, սրիկայի մեկը». և դոփել ոտքերով, որից պիեսը միայն շահել է, համաձայն Իվան Վասիլևիչի կարծիքի։ Հեղինակը սաստիկ վիրավորվել է թատրոնից և երեք տարի չի խոսել տնօրենի հետ, բայց Իվան Վասիլևիչն անհողդողդ է մնացել։

Գինովցած գիշերը գնալով խորանում էր, իմ պոռթկումները՝ մեղմվում, և ես այլևս աղմուկով չէի առարկում Բոմբարդովին, այլ ավելի շատ հարցեր էի տալիս։ Բերաններումս կրակ էր վառվում աղի կարմիր խավիարից ու սաղմոնից հետո, մենք ծարավ էինք հագեցնում թեյով։ Սենյակը լցված էր կաթնագույն ծխով, բաց օդանցքից խփում էր սառը-սառը օդի շիթը, բայց չէր թարմացնում, մրսեցնում էր։

— Ասացեք ինձ, ասացեք,— խնդրում էի ես խուլ, թույլ ձայնով,— եթե պիեսը ոչ մի կերպ չի դասավորվում նրանց հա-

մար, այդ դեպքում ինչու՞ չեն ուզում, որ ես ուրիշ թատրոն տանեմ պիեսը։ Նրանց ինչի՞ն է պետք։ Ինչի՞ն։

— Լա՛վ ասացիք։ Ինչպե՞ս թե ինչին։ Շա՞տ հետաքրքիր կլիներ մեր թատրոնի համար, որ հարևանները նոր պիես բեմադրեն, որն ըստ երևույթին հաջողություն էլ կունենա։ Որ ի՞նչ։ Դուք ինքներդ չե՞ք գրել պայմանագրում, թե պիեսն ուրիշ թատրոնի չեք տա։

Աչքերիս առաջ սկսեցին թռչկոտել «Հեղինակն իրավունք չունի» բազմաթիվ հրեղեն-կանաչ մակագրություններ և «եթե»-ի նման բառեր... ու պարագրաֆների խորամանկ ուրվագծերը, հիշեցի կաշեպատ առանձնասենյակը, թվաց, թե օծանելիքի հոտ առա։

— Անիծյալ լինի նա,— խոսնացի ես։

— Ո՞վ։

— Անիծյալ լինի նա։ Գավրիիլ Ստեպանովիչը։

— Արժի՛վ մարդ է,— բացականչեց Բոմբարդովը, փայլեցնելով բորբոքված աչքերը։

— Այնպես էլ սուսիկ-փուսիկ է, հոգուց էլ խոսում է մի գլուխ...

— Մոլորությու՛ն է, զառանցանք, անհեթեթություն, դիտողականության բացակայություն,— բղավում էր Բոմբարդովը, նրա աչքերը կրակվում էին, կրակվում էր գլանակը, ծուխը դուրս էր հորդում ռունգերից։ — Արժի՛վ է, կոնդո՛ր։ Նա նստած է ժայռին, քառասուն կիլոմետր շրջագծով ամեն բան տեսնում է։ Եվ հենց մի կետ է երևում, շարժվում, նա վեր է ճախրում ու հանկարծ քարի պես ցած նետվում։ Աղեկտուր ճիչ, խռխռոց... և ահա նա արդեն երկինք է սուրում, զոհն իր հետ տանելով...

— Դուք բանաստեղծ եք, դրողը ձեզ տանի,— խռխռացի ես։

— Իսկ դուք,— նրբորեն ժպտալով, շշնջաց Բոմբարդովը,— չար մարդ եք։ Է՛հ, Սերգեյ Լեոնտևիչ, կանխազգում եմ, որ ձեր բանը դժվար է լինելու...

Նրա խոսքերը խայթեցին ինձ։ Ես գտնում էի, որ ամենևին էլ չար մարդ չեմ, բայց իսկույն հիշեցի նաև Լիկոսպաստովի խոսքերը գայլի ժպիտի մասին...

— Ուրեմն,— հորանջելով ասացի ես,— ուրեմն, իմ պիեսը չի՞ գնա։ Ուրեմն, ամեն ինչ կորա՞ծ է։

Բոմբարդովն ակնապիշ վրաս նայեց և իր համար անսպասելի ջերմությամբ ասաց.

— Պատրաստվեցեք ամեն ինչի դիմանալ։ Ձեզ չեմ խաբի։ Պիեսը չի գնա։ Միայն եթե հրաշք լինի...

Մոտենում էր աշնանային, պղվելի, մառախլապատ լուսաբացը։ Բայց չնայած, որ սեղանին գարշելի թերմացքներ էին, պնակներում՝ ծխախոտի մնացորդների շեղջեր, այդ ամբողջ այլանդակության մեջ ես մի անգամ էլ, ըստ երևույթին վերջին մի ալիքի կատարն ելած, սկսեցի մենախոսել ոսկե նժույգի մասին։

Իմ ունկնդրին ուզում էի պատկերել, թե ինչպես են շողում պեծերը նժույգի ոսկյա գավակին, ինչպես է շնչում բեմն իր հոտով ու սարսուռով, ինչպես է ծիծաղն անցնում դահլիճով... Բայց գլխավորը դա չէր։ Ոգևորության պահին փշրելով պնակը, ես մոլեգնաբար ջանում էի Բոմբարդովին համոզել, որ նժույգը տեսնելուն պես իսկույն հասկացա թե՛ բեմը, թե՛ մեծագույն բոլոր գաղտնիքները։ Որ ուրեմն, վաղուց ի վեր, գուցե դեռ մանկուց, իսկ գուցեև դեռ չծնված, ես արդեն անրջանք, տարտամ կարոտ ունեի բեմի հանդեպ։ Եվ ահա՛, եկա։

— Ես նոր եմ,— բղավում էի ես,— նո՛ր եմ։ Ես անխուսափելի եմ, ես եկե՛լ եմ։

Այստեղ ինչ-որ անիվներ պտույտ տվին այրվող ուղեղիս մեջ, ու դուրս պրծավ Լյուդմիլա Սիլվեստրովնան, ունոցը դրեց, թափահարելով ժանեկազարդ թաշկինակը։

— Նա չի կարող խաղալ,— ոխակալ մոլուցքով խոխոացրի ես։

— Բայց ներեցեք... Հո չի կարելի...

— Խնդրում եմ, չհակաճառել ինձ,— խստորեն ասացի ես,— դուք արդեն վարժվել եք, իսկ ես նոր եմ, իմ հայացքը սուր է ու թարմ։ Ես նրան ոտից գլուխ տեսնում եմ...

— Բայց և...

— Եվ ոչ մի տե... տեսություն ոչնչով չի օգնի։ Իսկ այնտեղ մի կարճլիկ կճատը կա, չինովնիկ է խաղում, ձեռքերը սպիտակ են, ձայնը՝ խռպոտ, բայց նրան տեսություն հարկավոր չէ... Իսկ այն մյուսը, որ մարդասպան է խաղում. սև ձեռնոցներով... Նրան տեսություն պետք չէ։

— Արգոմինը...— ծխի ծածկույթի ետևից ականջիս հասավ խուլ ձայնը։

— Ոչ մի տեսություն էլ չի լինում,— վերջնականապես ընկղմվելով ինքնավստահության մեջ, բղավում էի ես, նույնիսկ

ատամներս էի կրճտացնում, և բոլորովին անսպասելի տեսա, որ մոխրագույն պիջակիս վրա յուղի մեծ լաքա կա, վրան կպած սոխի կտորով։ Շփոթված շուրջս նայեցի։ Գիշերվա հետքն անգամ չէր մնացել։ Բոմբարդովը հանգցրեց լամպը, և կապույտի մեջ բոլոր առարկաներն սկսեցին ի հայտ գալ՝ ամբողջ այլանդակությամբ հանդերձ։

Գիշերը հոշոտված էր, գիշերն անցավ։

## ԳԼՈՒԽ XIV

## ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՀՐԱՇԱԳՈՐԾՆԵՐԸ

Զարմանալի կառուցվածք ունի մարդուս հիշողությունը։ Մեկ էլ թվում է, թե այս ամենն այնքան էլ վաղուց չի եղել, այնինչ դեպքերը կուռ ու հերթականությամբ վերականգնելու ոչ մի հնարավորություն չկա։ Շղթայից կտրվել են օղակները։ Դեսից-դենից հիշում ես, մի՛ բան է ուղղակի բռնկվում աչքիդ առջև, իսկ մնացածը փշուր-փշուր է եղել, ցրիվ եկել ու հիշողության մեջ սոսկ մոխիր է և ինչ-որ անձրև։ Այո, ի դեպ, մոխիր է որ կա։ Անձրև՞։ Անձրև՞։ Էհ, ուրեմն, այդ գինովցած գիշերից հետո նոյեմբեր ամիսն էր։ Իհարկե, անձրև էր գալիս, բայց ձյան հետ մեկումեջ։ Պետք է ենթադրել, որ Մոսկվան գիտեք։ Այնպես որ նկարագրելու հարկ չկա։ Չափազանց վատ են մոսկովյան փողոցները նոյեմբերին։ Հիմնարկություններում էլ է վատ։ Բայց դա դեռ չարյաց փոքրագույնն է։ Վատ է, երբ տանը լավ չէ։ Ասացեք տեսնեմ, ինչպես հանեմ լաքան հագուստի վրայից։ Այսպես էլ փորձեցի, այնպես էլ, սրանով էլ, նրանով էլ՝ զարմանալի բան է, օրինակ, բենզինով թրջում ես ու հրաշալի արդյունք է տալիս, լաքան խամրում է, խամրում ու անհետանում։ Մարդը երջանիկ է, քանի որ ոչինչ այնպես չի տանջում, ինչպես հագուստի վրայի լաքան։ Թափթփված, գեշ բան է, նյարդ է քայքայում։ Պիջակը կախ ես անում մեխից, առավոտյան արթնանում՝ լաքան մնացել է տեղում և մի քիչ բենզինի հոտ է գալիս։ Միևնույն բանը՝ եռացրած ջրից, բացգույն թեյից. օդեկոլոնից հետո։ Սատանի գործ է։ Սկսում ես զայրանալ, ինքդ քեզ ուտել, բայց ինչ արած։ Չէ, ըստ երևույթին, ով իր հագուստի վրա լաքա է թողել, ապա դրա հետ պիտի քայլի այնքան ժա-

ժամանակ, մինչև չփտի ու դեն չշպրտի այդ կոստյումը։ Հիմա ինձ համար մեկ է, բայց ուրիշներն են մեղքս գալիս, ուզում եմ, որքան հնարավոր է, քիչ լինեն այդպիսիք։

Եվ այսպես, լաքան էի հանում ու չհանեցի, հետո, հիշում եմ՝ մի գլուխ կտրտվում էին կոշիկիս քուղերը, հագում էի ու ամեն օր գնում «Լրաբեր», տառապում էի խոնավությունից ու անքնությունից և կարդում՝ ինչ ձեռքս ընկներ, աստված գիտե, թե ինչ։ Իսկ հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ շուրջս մարդ չմնաց։ Լիկոսպաստովը չգիտես ինչու գնացել էր Կովկաս, ընկերոջս, ում ատրճանակն էի թողել, Լենինգրադ տեղափոխեցին՝ աշխատանքի, իսկ Բոմբարդովը երիկամներով հիվանդացավ ու նրան հիվանդանոց տարան։ Մեկ-մեկ գնում էի տեսության, բայց նա, իհարկե, Թատրոնի մասին խոսք ու զրույցի գլուխ չուներ։ Եվ նա, հարկավ, հասկանում էր, որ ինչ-ինչ, բայց «Սև ձյան» հետ կատարված դեպքից հետո այդ թեմային անդրադառնալու հարկ չկա, իսկ երիկամներին՝ կարելի է, որովհետև այստեղ, համենայն դեպս, հնարավոր են ամեն կարգի սփոփանքներ։ Այդ իսկ պատճառով երիկամների մասին էլ խոսում էինք, կատակի տալով, բայց մի տեսակ տխուր էր ամեն ինչ։

Ի դեպ, ամեն անգամ Բոմբարդովին տեսնելիս հիշում էի Թատրոնի մասին, բայց իմ մեջ բավականաչափ կամք էի գտնում, որ ոչինչ չհարցնեմ։ Ինքս ինձ երդվեցի ընդհանրապես չմտածել Թատրոնի մասին, բայց դա, անշուշտ, անհեթեթ երդում էր։ Մտածելն արգելել չի կարելի։ Բայց Թատրոնի մասին հարցուփորձ անել կարելի է։ Եվ դա՛ արգելեցի ինքս ինձ։

Իսկ Թատրոնը կարծես մահացել էր և ձայն ու ծպտուն չէր հանում։ Այնտեղից ոչ մի լուր չէր գալիս։ Կրկնում եմ, մարդկանցից էի հեռացել։ Շրջում էի բուկինիստների կրպակներում և ժամանակ առ ժամանակ պպզում կիսախավարում, քիթս կոխած փոշեկոլոլ ամսագրերի մեջ, և հիշում եմ, հրաշալի մի նկար տեսա... Հաղթակա Յարը...

Մինչ այդ անձրևները դադարեցին, և միանգամայն անսպասելի սառնամանիքը վրա տվեց։ Իմ ձեռնահարկի լուսամուտին եղյամը նախշ կապեց, և, լուսամուտի մոտ կանգնած, քսան կոպեկանոցը շնչով տաքացնելով ու դրանով դաջելով սառցակալած ապակին, հասկացա, որ պիեսներ գրելն ու դրանք չխաղալը անհնար բան է։

*Սակայն երեկոները հատակի տակից լսվում էր միևնույն վալսը (ինչ-որ մեկը սովորում էր նվագել), և այդ վալսը պատկերներ էր ծնում արկղիկի մեջ՝ բավական տարօրինակ ու հազվադեպ։ Այսպես, օրինակ, ինձ թվում էր, թե ներքևում ափիոն ծխողների որջ է և անգամ մի բան էր հորինվում, որը ես մտովի լկտիաբար «երրորդ գործողություն» անվանեցի։ Ճիշտ այսպես՝ կապույտ ծուխ, անհամաչափ դեմքով մի կին, ֆրակ հագած մեկը՝ ծխով թունավորված, ու ետևից գողունի նրան մոտեցող մի մարդ, կիտրոնագույն դեմքով, շեղ աչքերով, ֆիննական սրած դաշույնը ձեռքին։ Դանակի հարված, արյան վտակ։ Զառանցո՞ւմ եք, ինչպես տեսնում եք։ Փույթ չէ։ Բա՞ն։ Եվ ո՞ւր տանել այն պիեսը, որ նման երրորդ գործողություն ունի։*

*Չգրեցի էլ մտածածս։ Հարց է առաջանում, և առաջին հերթին, իհարկե, հենց իմ գլխում է առաջանում՝ ինչո՞ւ մի մարդ, որ ինքն իրեն թաղում է ձեռնահարկում՝ խոշոր անհաջողության մատնված, դրան ավելացրած նաև, որ մելամաղձոտ է (այդ մի բանը ե՛ս եմ հասկանում, չանհանգստանաք) ինքն իր վերջը տալու երկրորդ փորձը չի անում։*

*Ուղղակի խոստովանեմ. առաջին փորձը մի տեսակ զարշանք առաջացրեց այդ բռնի գործողության նկատմամբ։ Եթե խոսքն ինձ է վերաբերում։ Բայց իսկական պատճառն, ինչ խոսք, դա չէր։ Ամեն բան իր ժամանակն ունի։ Ի դեպ, այս թեմայով էլ չխորանանք։*

*Ինչ վերաբերում է արտաքին աշխարհին, ապա, համենայն դեպս, լիովին կտրվել նրանից անհնար է, և նա իրեն իմացնել էր տալիս, որովհետև այն ժամանակաընթացքում, երբ ես Գավրիիլ Ստեպանովիչից մեկ հիսուն, մեկ հարյուր ռուբլի էի ստանում, բաժանորդագրվեցի թատերական երեք ամսագրի և «Երեկոյան Մոսկվա» լրագրի։*

*Եվ այդ ամսագրերի համարները ստացվում էին ավելի կամ պակաս ճշտությամբ։ Աչքի անցկացնելով «Թատերական նորություններ» բաժինը, մեկ էլ տեսար իմ ծանոթների մասին լուրեր էի հանդիպում։*

*Այսպես, դեկտեմբերի 15-ին կարդացի. «Հայտնի գրող Իզմայիլ Ալեքսանդրովիչ Բոնդարևսկին ավարտում է «Մոնմարտրյան դանակներ» պիեսը՝ տարագիրների կյանքից։ Ըստ տեղեկությունների, հեղինակը պիեսը ներկայացնելու է Հին թատրոն»։*

*Տասնյոթին բաց արեցի թերթը և հետևյալ լուրն ընկավ աչ-*

քով. «Հայտնի գրող Ե. Ագաֆոնովը լարված աշխատում է «Աներձագը» կատակերգության վրա, Միաբանների Կոհորտայի Թատրոնի պատվերով»։

Քսաներկուսին տպագրված էր. «Դրամատուրգ Կլինկերը մեր թղթակցի հետ ունեցած զրույցի ընթացքում հայտնեց իր պիեսի մասին, որը նա մտադիր է ներկայացնել Անկախ Թատրոնի։ Ալբերտ Ալբերտովիչը հայտնել է, որ պիեսն իրենից ներկայացնում է Կասիմովոյի մերձակայքում քաղաքացիական պատերազմի լայնարձակ մի կտավ։ Պայմանականորեն պիեսը կոչվում է «Գրոհ»։

Իսկ հետո ասես կարկուտի պես վրա տվեցին՝ և 21-ին, և 24-ին, և 26-ին։ Թերթը, և երրորդ էջին՝ արտակարգ մռայլ դեմքով ու ասես ինչ-որ մեկին հարու տվող մի երիտասարդի պղտոր պատկերն ու հաղորդագրություն, որ դա Ի. Ս. Պրոկն է։ Դրամա։ Ավարտում է երրորդ գործողությունը։

Ժվենկո Օնիսիմ։ Անբակոմով։ Ջորս, հինգ գործողություն։

Հունվարի երկուսին ես վիրավորվեցի։

Տպագրված էր. «Կոնսուլտանտ Մ. Պանինը Անկախ Թատրոնում հրավիրել է մի խումբ դրամատուրգների խորհրդակցություն։ Թեման՝ Անկախ Թատրոնի համար ժամանակակից պիեսի ստեղծումը»։

Նյութը վերնագրված էր՝ «Ժամանակն է, վաղուց ժամանակն է», և դրա մեջ ափսոսանք ու կշտամբանք էր արտահայտված Անկախ Թատրոնի հասցեին, որ նա՝ բոլոր թատրոնների մեջ միակը, մինչև այժմ դեռ չէր բեմադրել մեր ժամանակաշրջանն արտացոլող և ոչ մի ժամանակակից պիես։

«Այնինչ,— գրում էր թերթը,— հենց նա, առավելապես նա՝ Անկախ Թատրոնը, ինչպես և ոչ մեկը, ի վիճակի է արժանի ձևով բացահայտել ժամանակակից դրամատուրգի պիեսը, եթե այդ բացահայտմանը ձեռնամուխ լինեն այնպիսի վարպետներ, ինչպիսիք են Իվան Վասիլևիչը և Արիստարխ Պլատոնովիչը»։

Ապա հետևում էր արդարացի կշտամբանք նաև դրամատուրգների հասցեին, որոնք մինչև օրս ժամանակ չէին գտել Անկախ Թատրոնին արժանի երկ ստեղծել։

Ինքս ինձ հետ խոսելու սովորություն ձեռք բերեցի։

— Ներեցեք,— նեղացած ուռեցնելով շրթունքներս, մրթմրթացի ես,— ինչպե՞ս թե ոչ ոք պիես չի գրել։ Իսկ կամո՞ւրջը։ Իսկ հարմո՞նը։ Արյունը՝ տրորված ձյան վրա՞։

Բուքը սուլում էր դրսում, ինձ թվում էր, թե դրսի բքի մեջ դարձյալ նույն անիծյալ կամուրջն է, որ Հայմոնը երգում է, ու լսվում են չոր կրակոցներ։

Թեյը սառչում էր բաժակի մեջ, թերթի էջից ինձ էր նայում այտամորուսներով մի դեմք։ Ներքևում տպագրված էր հեռագիրը, որ Արիստարխ Պլատոնովիչն էր ուղարկել խորհրդակցությանը. «Մարմնով Կալկաթայում, հոգով՝ ձեզ մոտ»։

— Մի տես է՞, կյանքն ինչպես է այնտեղ եռում, թշշում, ինչպես ամբարտակի վրա,— շշնջում էի ես հորանջելով,— իսկ ես կարծես թաղած լինեմ։

Գիշերը չքանում է, չքանում է և վաղվա օրը, չքանում են բոլոր այն օրերը, որոնք վիճակված են քեզ, և ոչինչ չի մնա՝ անհաջողությունից բացի։

Կաղալով, հիվանդ ծունկս շփելով, ես քարշ էի գալիս օթոցի կողմը, հանում էի պիջակս, սրթսրթում ցրտից, լարում ժամացույցը։

Այսպես անցան շատ գիշերներ, բոլորն էլ հիշում եմ, բայց մի տեսակ ի մի եկած՝ ցուրտ էր լինում։ Իսկ ցերեկներն ասես ջնջվել են հիշողությունիցս՝ ոչինչ չեմ հիշում։

Այսպես շարունակվեց մինչև հունվարի վերջը, և ահա հստակ հիշում եմ մի երազ, որ տեսա քսանմեկի լույս քսանմեկի գիշերը։

Վիթխարի դահլիճ՝ պալատում, ու իբր ես գնում եմ այդ դահլիճով։ Մոմակալների վրա այրվում են ծխառատ մոմեր՝ ծանրը, ճարպոտ, ոսկեզօծ։ Հագնված եմ արտառոց. ոտքերիս՝ կիպ տրիկո, մի խոսքով, ես միր դարում չեմ, այլ տասնհինգերորդ։ Գնում եմ դահլիճով, իսկ գոտկիցս դաշույն է կախված։ Երազի ամբողջ թովչանքն այն չէր, որ ես ակնհայտ տիրակալ էի, այլ հենց այդ դաշույնը, որից բացեիբաց վախենում էին դռների մոտ կանգնած պալատականները։ Գինին չի կարող այնպես արբեցնել, ինչպես այդ դաշույնը, և ժպտալով, ոչ, երազիս մեջ ծիծաղելով, անաղմուկ քայլում էի դեպի դռները։

Երազն այն աստիճան սքանչելի էր, որ, արթնանալով, ես դեռ որոշ ժամանակ ծիծաղում էի։

Եվ այստեղ դուռը թակեցին, ու պատառոտված ոտնամաններս քստքստացնելով, վերմակը վրաս գցած մոտեցա, և հարևանուհու ձեռքը ներս մտավ ճեղքից ու ինձ ծրար տվեց։ Դրա վրա փայլում էին «Ա. Թ.» ոսկյա տառերը։

Ես պատռեցի ծրարը, ահա հիմա էլ, թեք պատռված, առջևս

է դրված (ու ես դա կտանեմ ինձ հետ)։ Ծրարի մեջ դարձյալ գոթական ոսկյա տառերով մի թուղթ կար, և Ֆոմա Ստրիժի խոշոր, հաստ ձեռագրով գրված էր.

**«Թանկագին Սերգեյ Լեոնտևիչ։**

**Անմիջապես եկեք թատրոն։ Վաղը ժ. 12-ին սկսում եմ «Սև ձյուներ» փորձել։**

**Ձեր՝ Ֆ. Ստրիժ»։**

Ես նստեցի օթոցին, չեղակի ժպտալով, ապուշ կտրած թղթին նայելով ու մտածելով դաշույնի, ապա չգիտես ինչու Լյուդմիլա Սիլվեստրովնայի մասին, նայելով մերկ ծնկներիս։

Մինչ այդ դուռը թակում էին արիաբար և կայտառ։

— Մտեք,— ասացի ես։

Այդժամ սենյակ մտավ Բոմբարդովը։ Գունատ, թեթևակի դեղնած, հիվանդությունից հետո ավելի բարձրահասակ թվացող և հենց հիվանդությունից փոխված ձայնով նա ասաց.

— Արդեն գիտե՞ք։ Ես հատկապես անցա ձեզ մոտ։

Եվ նրա դիմաց կանգնելով իմ ողջ մերկությամբ ու չքավորությամբ, հատակի վրայով քարշ տալով հին վերմակս, համբուրեցի նրան, ձեռքիցս ցած գցելով թուղթը։

— Ինչպե՞ս կարող էր այսպես լինել,— հարցրեցի ես, կռանալով դեպի հատակը։

— Նույնիսկ ե՛ս չեմ կարող դա հասկանալ,— պատասխանեց իմ թանկագին հյուրը,— ոչ ոք չի հասկանա և նույնիսկ երբեք չի իմանա։ Կարծում եմ, որ Պանինն ու Ստրիժն են արել։ Բայց թե ինչպես են արել՝ հայտնի չէ։ Որովհետև դա վեր է մարդկային ուժերից։ Կարճ ասած, հրաշք է։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ XV

Ամբողջ պատերով մեկ ձգված, բարակ, մոխրագույն օձի պես, հայտնի չէ թե մինչև ուր, հատակի վրա ձգվում էր պատյան հագցրած էլեկտրական լարը։ Դրանից սնվում էր պստլիկ մի լամպ, պատերի մեջտեղում դրված սեղանի վրա։ Լամպը ճիշտ այնքան լույս էր տալիս, որպեսզի լուսավորեր սեղանին

դրած մի թերթ թուղթն ու թանաքամանը։ Թղթի վրա նկարած էր կճատ մի մռութ, մռութի մոտ ընկած էր նարնջի դեռևս թարմ կճեպը, դրված էր ծխախոտի մնացորդներով լի մոխրամանը։ Ջրամանն աղոտ էր փայլում՝ լուսավորված շրջանից դուրս էր դրված։

Պարտերն այնպես էր ընկղմված խավարի մեջ, որ դրսից ներս եկողները սկսում էին առաջ շարժվել շոշափելով, բազկաթոռների թիկնակներից բռնած, մինչև որ աչքները վարժվում էին։

Բեմը բաց էր, վերևից թույլ լուսավորված շարժական սոֆիտով։ Բեմի վրա մի պաստ էր կանգնեցված, ետևի կողմը դեպի դահլիճ դարձրած, ընդ որում վրան գրած էր՝ «Գայլեր և ոչխարներ-2»։ Բազկաթոռ կար, գրասեղան, երկու աթոռակ։ Բազկաթոռին նստած էր շեղօձիք շապիկն ու պիջակը հագին մի բանվոր, իսկ աթոռակին՝ մի երիտասարդ, շալվարով, պիջակով, բայց գոտին վրայից կապած, որից քարշ էր արած գեորգիևյան դաստապանածոպով թուրը։

Դահլիճում տոթ էր, դրսում արդեն վաղուց լիակատար մայիս էր։

Փորձի ընդմիջում էր. դերասանները գնացել էին բուֆետ՝ նախաճաշելու։ Իսկ ես մնացել էի։ Վերջին ամիսների դեպքերն իրենց զգացնել էին տալիս, մի տեսակ ծեծված էի զգում ինձ, անընդհատ ուզում էի մի տեղ նստել ու մնալ երկար, անշարժ։ Նման վիճակն, իմիջիայլոց, ընդմիջվում էր նյարդային եռանդի պոռթկումներով, երբ ցանկություն էր լինում շարժվել, բացատրել, խոսել ու վիճել։ Եվ ահա, ներկայումս նստած էի առաջին վիճակում։ Լամպի կափարիչի տակ թանձր շերտավորվում էր փոշին, ներծծվում կափարիչի մեջ, ապա գնում կորչում վերևներում։

Մտքերս պտտվում չէին միայն մի բանի՝ իմ պիեսի շուրջ։ Այն իսկ օրվանից, երբ վճռական նամակն ինձ ուղարկեց Ֆոմա Ստրիժը, կյանքս անճանաչելիորեն փոխվեց։ Ասես թե նորից ծնվեց մարդը, ասես նրա սենյակն էլ ուրիշ դարձավ, չնայած միևնույն սենյակն էր, ասես նրան շրջապատող մարդիկ ևս այլ կերպ դարձան, և նա՝ այդ մարդը, Մոսկվա քաղաքում հանկարծ գոյության իրավունքն ստացավ, իմաստ ձեռք բերեց և նույնիսկ նշանակություն։

Բայց մտքերս գամված էին միայն մի բանի՝ պիեսին, որն իրենով էր լցրել ամբողջ ժամանակս, անգամ երազներս, քանի

որ տեսնում էի արդեն բեմադրված, ինչ-որ աննման դեկորացիաներով, տեսնում էի հանված խաղացանկից, տեսնում էի ձախողված կամ հսկայական հաջողություն ձեռք բերած։ Այս դեպքերից երկրորդում, հիշում եմ, պիեսը խաղում էին թեք փայտամածների վրա, ուր ավազ քաշողների պես սփռված էին դերասանները և խաղում էին, ձեռքներին՝ լապտերներ. բոլորն մեկ երգ ասելով։ Չգիտես ինչու, հեղինակն էլ էր այդտեղ, դեսուդեն էր քայլում խախուտ գերանների վրայով նույն ազատությամբ, ինչպես ճանճը պատի վրայով, իսկ ներքևում լորենիներ էին ու խնձորենիներ, քանի որ պիեսը խաղում էին հուզված, գրգռված հասարակությամբ լեցուն մի այգում։

Առաջին դեպքում ամենից հաճախ այսպիսի տարբերակ էի տեսնում. գլխավոր փորձին գնալիս հեղինակը մոռացել է շալվարը հագնել։ Առաջին քայլերը փողոցում նա անում է շփոթված, մի տեսակ հույս ունենալով, որ կհաջողվի աննկատ սպրդել և նույնիսկ արդարացում էր պատրաստում անցնող-դարձողների համար՝ մի որևէ բան հենց նոր ընդունած լոգանքի մասին և որ շալվարն, իբր, կուլիսների ետևում է մնացել։ Բայց գնալով դրությունը վատթարանում էր, և խեղճ հեղինակը լղոզվում էր մայթին, փնտրում լրագրավաճառին, իսկ նա չկար, ուզում էր վերարկու գնել, փող չուներ, թաքնվում էր շքամուտքում ու հասկանում, որ գլխավոր փորձից ուշացել է...

— Վանյա,—կամացուկ լսվեց բեմից։— Դեղինը տու՛ր...

Ճիշտ բեմի պռնկին գտնվող վերին թատերահարկի ծայրի օթյակում մի բան վառվեց, օթյակից շեղակի ընկավ լայնաշուրթ ճառագայթը, բեմի հատակին վառվեց դեղին շրջանը, սողաց, մեկ իր մեջ առնելով մաշված պաստառով, արմնկակալների թափված ոսկեջրով բազկաթոռը, մեկ՝ փայտյա աշտանակը ձեռքին բռնած, գզուզ բուտաֆորին։

Որքան ընդմիջումն ավարտին էր մոտենում, բեմն այնքան ավելի շարժուն էր դառնում։ Բեմի վերևներում, բարձր-բարձր, անհամար շարքերով կախ արած հսկա կտավները հանկարծ կենդանացան։ Դրանցից մեկը վեր էր ելնում և միանգամից բաց անում հազարմոմանոց լամպերի աչք կուրացնող շարքը։ Մյուսը, չգիտես ինչու, ընդհակառակը, ցած էր իջնում, բայց, հատակին չհասած, բարձրանում էր, կուլիսներում երևում էին մութ ստվերներ, դեղին ճառագայթը քաշվում էր, ներծծվելով

օթյակի մեջ։ Մի տեղ հարվածում էին մուրճերով։ Նրանց քաղաքացիական շալվարով, բայց կոշկախթաններով մի մարդ ու քայլեց-անցավ բեմով։ Ապա ինչ-որ մեկը, կռացած բեմի հատակին, ձեռքերը բերանին փող արած, բղավեց հատակի վրա։

— Գնո՜ւմ ենք, Տուր, տեսնեմ։

Այդժամ, համարյա անձայն, բեմի վրա եղած-չեղածը սկսեց մի կողմի վրա գնալ։ Ահա շարժվեց բուտաֆորը՝ իր աշտանակով հանդերձ, լողացին-անցան բազկաթոռն ու սեղանը։ Ինչ-որ մեկը, ընթացքին հակառակ, ներս վազեց շրջան, հավասարակշռությունը պահպանելով պար եկավ, ուղղվեց ու գնաց։ Գվվոցը սաստկացավ, և գնացած կահավորանքի տեղը բռնելով, երևացին տարօրինակ ու բարդ փայտյա շինվածքներ՝ չներկած շեղ աստիճաններ, գերաններ ու տախտակամածներ։ «Կամուրջըն է գալիս»,— մտածում էի ես և չգիտեի ինչու միշտ հուզվում, երբ տեղադրվում էր կամուրջը։

— Գնո՜ւմ ենք։ Ստո՛պ,— բղավում էին բեմի վրա։— Գնո՜ւմ, ե՜տ տուր։

Կամուրջը տեղադրվում էր։ Ապա, հոգնած աչքերիս լույս շպրտելով, մերկանում էին ցմփոր լամպերը, կրկին ծածկվում, և կոշտուկոպիտ ներկված կտավն իջնում էր վերևից, տեղադրվում շեղակի։ «Պահակատունն է...»,— մտածում էի ես, խճճվելով բեմի երկրաշարժության մեջ, նյարդայնանալով, աշխատելով տեղը բերել, թե ինչ տեսք կունենա այդ ամենը, երբ ուրիշ պիեսների՝ ձեռքներն ընկած հավաքովի բաներից պատրաստված ցանկապատի փոխարեն վերջապես իսկական կամուրջ կպատրաստեն։ Կուլիսներում կրակվում էին խոշորաչ, հովաթիթեղներով լուսարձակները, ներքևից բեմը ողողվում էր լույսի տաք ու կենդանի ալիքով։ «Բեմեզրի լույսերը տվեց...»։

Խավարի մեջ աչքերս կկոցում էի այն կերպարանքի կողմը, որ վճռական քայլերով մոտենում էր ռեժիսորական սեղանին։

«Ռոմանուսն է գալիս, ուրեմն հիմա ինչ-որ մի բան կկատարվի...»,—մտածում էի ես, ձեռքով պաշտպանվելով լամպի լույսից։

Եվ իսկապես, մի քանի վայրկյան անց դիխավերևումս երևաց երկճյուղ մորուքը, կիսախավարի մեջ, կայծկլտացին դիրիժոր Ռոմանուսի բորբոքված աչքերը։ Ռոմանուսի լամբակին փայլատակում էր «Ա.Թ.» տառերով հոբելյանական կրծքանշանը։

— Սէ նոն է վէրո, է բէն տրովատո*, իսկ գուցեև ավելի ուժեղ,— սովորականի պես սկսում էր Ռոմանուսը, նրա աչքերը պտույտ էին տալիս այրվելով, ինչպես գայլի աչքերը՝ տափաստանում։ Ռոմանուսը զոհ էր փնտրում, չգտնելով, նստում էր կողքս։

— Սա ձեր դուրը գալի՞ս է։ Հա՞,— աչքերը կկոցելով, ինձ էր հարցնում Ռոմանուսը։

«Քաշելու է, հա՛, հիմա ինձ զրույցի մեջ է քաշելու»,— մտածում էի ես, կուչուձիգ լինելով լամպի մոտ։

— Չէ, բարի եղեք, ձեր կարծիքն ասեք,— աչքերով շաղափելով ինձ, ասում էր Ռոմանուսը,— ձեր կարծիքն առավել քան հետաքրքիր է, որովհետև դուք գրող եք և անտարբեր չեք կարող գտնվել մեզ մոտ կատարվող այլանդակություններին ի տես։

«Ի՛նչ ճարպկությամբ է իր ուզածն անում...»,— մարմինս քոր գալու աստիճան տրտմած, մտածում էի ես։

— Տրոմբոնով խփել կոնցերտմայստրի, դեռ ավելին՝ կնոջ մեջքի՞ն,— մոլեգնությամբ հարցնում էր Ռոմանուսը։— Ո՛չ, ո՛չ։ Ես ձեր իմացածներից չեմ։ Երեսունհինգ տարի բեմի վրա եմ ու այդպիսի բաներ դեռ չեմ տեսել։ Ստրիժը կարծում է, թե երաժիշտները խոզեր են ու նրանց կարելի է խորդանո՞ց քշել։ Հետաքրքիր է, թե ի՞նչ բան է սա գրողական տեսակետից։

Այլևս լռության տալ չէր լինում։

— Իսկ ի՞նչ է եղել։

Ռոմանուսը հենց դրան էր սպասում։ Զիլ ձայնով, ջանալով, որ լսեն բեմեզրի մոտ հետաքրքրությամբ խռնվող բանվորները, Ռոմանուսն ասում էր, որ Ստրիժը երաժիշտներին խցկել է բեմի խորշը, ուր ոչ մի կերպ նվագել հնարավոր չէ հետևյալ պատճառներով. առաջինը՝ նեղվածք է, երկրորդը՝ մութ է, իսկ երրորդը՝ դահլիճում ոչ մի հնչյուն չի լսվում, չորրորդն էլ՝ ինքը կանգնելու տեղ չունի, երաժիշտներն իրեն չեն տեսնում։

— Ճիշտ որ, կան մարդիկ,— սուր ձայնով հայտարարում էր Ռոմանուսը,— ովքեր երաժշտությունից այնքան են հասկանում, որքան որոշ կենդանիներ...

«Այ, գրողը քեզ տանի, հա՛»,— մտածում էի ես։

— ... որոշ մրգերից։

Ռոմանուսի ջանքերը հաջողությամբ պսակվեցին՝ էլեկտրա-

---

* Եթե նույնիսկ ճշմարիտ էլ չէ, ապա լավ է գտնված (իտալ.)։

տեխնիկական խցիկից քրքջոց լսվեց, մի գլուխ դուրս ցցվեց խցիկից։

— Ճիշտ որ, նման անձինք ոչ թե ռեժիսուրայով պիտի զբաղվեն, այլ կվաս վաճառեն Նովոդևիչյե գերեզմանատան մոտ...— ցնղգնղում էր Ռոմանուսը։

Քրքջոցը կրկնվում էր։

Ապա պարզվում էր, որ Սորիժի թույլ տված այլանդակությունները իրենց արդյունքն են տվել։ Միության մեջ տրոմբոնահարը գործիքով այնպես է խփել կոնցերտմայստեր Աննա Անուֆրիևնա Դինժինի մեջքին, որ...

— ...ռենտգենը ցույց կտա, թե վերջն ինչ կլինի։

Ռոմանուսն ավելացնում էր, որ կարելի է կողեր ջարդել ոչ թե թատրոնում, այլ գարեջրատանը, որտեղ էլ, ի դեպ, ոմանք ստանում են իրենց արտիստական կրթությունը։

Մոնտյորի ցնծագին դեմքը փայլում էր խցիկի ճեղքից, բերանը պոռթվում էր ծիծաղից։

Բայց Ռոմանուսը պնդում էր, որ բանն այսպես չի վերջանա։ Աննա Անուֆրիևնային սովորեցրել է, թե ինչ պիտի անել։ Փառք աստծո, մենք սովետական պետության մեջ ենք ապրում, հիշեցնում էր Ռոմանուսը, արհմիության անդամների կողերը կոտրելու հարկ չկա։ Աննա Անուֆրիևնային սովորեցրել է դիմում գրել տեղկոմին։

— Ճիշտ է, ձեր աչքերից եմ տեսնում,— շարունակում էր Ռոմանուսը, հայացքը վրաս սևեռած ու աշխատելով որսալ ինձ լույսի շրջանակում,— որ լիակատար վստահություն չունեք, թե տեղկոմի մեր նշանավոր նախագահը երաժշտությունից այնքան լավ է գլուխ հանում, որքան Ռիմսկի-Կորսակովը կամ Շուբերտը։

«Այ քեզ տի՛պ»,— մտածում էի ես։

— Ներեցեք...— ջանալով խիստ խոսել, սկսում էի ես։

— Ոչ, ոչ, անկեղծ լինենք,— բացականչում էր Ռոմանուսը, ձեռքս սեղմելով։— Դուք գրող եք։ Եվ հիանալի հասկանում եք, որ հազիվ թե Միտյա Մալոկրոշեչնին, թեկուզ քսանապատիկ նախագահ էլ լինի, հոբոյը տարբերի թավջութակից կամ Բախի ֆուգան «Ալիլույա» ֆոքստրոտից։

Այստեղ Ռոմանուսը ուրախություն էր հայտնում, որ լավ է դեռ մտերմագույն ընկերը...

— ... և բաժակակիցը...

Էլեկտրական խցիկում տենորով քրքջացողին միանում էր խռպոտ մի բաս։ Խցիկի վրա արդեն երկու գլուխ էր ցնծում։

— ...Անտոն Կալոշինը Մալոկրոշեչնում օգնում է գլուխ հանել արվեստի հարցերից։ Իմիջիայլոց, դա մի խրթին բան չէ, քանզի մինչև թատրոն գալը Անտոնն աշխատել է հրշեջ խմբում, ուր շեփոր էր նվագում։ Իսկ թե չլիներ Անտոնը, Ռոմանուսը երաշխավորում է, որ ոմն ռեժիսոր շատ հանգիստ կշփոթեր «Ռուսլանի» նախերգանքը ամենասովորական «Սրբոցն հանգուցելոցի» հետ...

«Այս մարդը վտանգավոր է,—մտածում էի ես, նայելով Ռոմանուսին,— լուրջ վտանգավոր է։ Նրա դեմ պայքարի միջոց չկա»։

...Թե Կալոշինը չէր լինի, մեզ մոտ կարող էին երաժշտին ստիպել նվագել՝ գլխիվայր կախված վերևի շարժական սոֆիտից, առավել ևս, որ Իվան Վասիլևիչը թատրոնում չի երևում, բայց և այնպես թատրոնը ստիպված կլինի Աննա Անուֆրիևնային վճարել փշրտված կողերի դիմաց։ Ռոմանուսը նրան խորհուրդ է տվել միություն էլ գնալ, իմանալ, թե այնտեղ ինչպես են նայում այնպիսի բաների, որոնց մասին իսկապես կարելի է ասել. «Սէ, նոն է վէրո, է բեն տրովատո, գուցեև ավելի ուժեղ»։

Ետևից լսվում էին փափուկ քայլեր, մոտենում էր փրկությունը։

Սեղանի մոտ կանգնում էր Անդրեյ Անդրեևիչը։ Անդրեյ Անդրեևիչը ռեժիսորի առաջին օգնականն էր թատրոնում, և նա էր վարում «Սև ձյուն» պիեսը։

Անդրեյ Անդրեևիչը՝ քառասուն տարեկան, գեր, ամրակազմ, խարտիշահեր մի մարդ, աշխույժ, խիստ փորձառու աչքերով, իր գործը լավ գիտեր։ Իսկ դա դժվար գործ էր։

Անդրեյ Անդրեևիչը՝ մայիսի կապակցությամբ ոչ թե սովորական մուգ կոստյում և դեղին կիսակոշիկներ, այլ սատինե կապույտ վերնաշապիկ ու բրեզենտե դեղնավուն կոշիկներ հագած, կռնատակին՝ մշտական թղթապանակը, մոտեցավ սեղանին։

Ռոմանուսի աչքը կրակվեց առավել ուժգին, և դեռ Անդրեյ Անդրեևիչը չէր հասցրել թղթապանակը տեղավորել լամպի տակ, երբ սկանդալ բորբոքվեց։

Սկսվեց Ռոմանուսի ասածից։

— Ես վճռականապես բողոքում եմ երաժիշտների նկատմամբ,

ընտությունների դեմ և խնդրում եմ արձանագրել այն, ինչ կատարվում է։

— Ի՞նչ բռնություններ,— պաշտոնական ձայնով հարցրեց Անդրեյ Անդրեևիչը և մի թեթև շարժեց հոնքը։

— Եթե մեզ մոտ բեմադրվում են պիեսներ, որոնք ավելի շատ օպերայի են նման...— սկսեց Ռոմանուսը, բայց գլխի ընկավ, որ հեղինակը հենց այստեղ նստած է, և շարունակեց՝ իմ կողմն ուղղված մի ժպիտ ծամածռելով դեմքին,— որը և ճիշտ է։ Քանզի մեր հեղինակը գիտե երաժշտության ամբողջ նշանակությունը դրամայի մեջ... Այպա... ես խնդրում եմ նվագախմբին տեղ հատկացնել, որտեղ նա չկարողանա նվագել։

— Նրան տեղ է հատկացված խորշում,— ասաց Անդրեյ Անդրեևիչը, ձևացնելով, թե բաց է անում թղթապանակը շտապ գործով։

— Խորշու՞մ։ Իսկ գուցե ավելի լավ կլինի հուշարարի խցիկու՞մ։ Կամ՝ արհեստանոցու՞մ։

— Դուք ասացիք, որ բեմատակում չի կարելի նվագել։

— Բեմատակո՞ւմ,— ղժղժաց Ռոմանուսը։— Եվ կկրկնեմ, որ չի կարելի։ Թեյարանում նույնպես չի կարելի, ի գիտություն ձեզ։

— Ի գիտություն ձեզ, ես ինքս գիտեմ, որ թեյարանում չի կարելի,— ասաց Անդրեյ Անդրեևիչը և նրա մյուս հոնքը շարժվեց։

— Դո՛ւք գիտեք,— պատասխանեց Ռոմանուսը և համոզվելով, որ Ստրիժը դեռևս պարտերում չէ, շարունակեց.— քանզի դուք հին աշխատող եք և հասկանում եք արվեստից, ինչ չի կարելի ասել մեր որոշ ռեժիսորների մասին...

— Այնուամենայնիվ դիմեցեք ռեժիսորին։ Նա ստուգել է հնչողությունը...

— Հնչողությունը ստուգելու համար պետք է ունենալ ապարատի պես մի բան, որի օգնությամբ կարելի է ստուգել, օրինակ՝ ականջ։ Բայց եթե փոքր ժամանակ ինչ-որ մեկի...

— Ես հրաժարվում եմ նման տոնով շարունակել խոսակցությունը,— ասաց Անդրեյ Անդրեևիչը և փակեց թղթապանակը։

— Ինչպիսի՞ տոն։ Ինչպիսի՞ տոն,— զարմացավ Ռոմանուսը։— Ես դիմում եմ գրողին, թող նա հաստատի վայրույթն այն առթիվ, թե մեզ մոտ ինչպես են խեղանդամում երաժիշտներին։

— Մի՛ րոպե...— սկսեցի ես, տեսնելով Անդրեյ Անդրեևիչի զարմացած հայացքը։

— Ոչ, ոչ, ներեցեք,— բղավեց Ռոմանուսը Անդրեյ Անդրեևիչի կողմը։— Եթե օգնականը, որ պարտավոր է հինգ մատի պես իմանալ բեմը...

— Կխնդրեմ ինձ չսովորեցնել, թե ինչպես պիտի իմանալ բեմը,— ասաց Անդրեյ Անդրեևիչը և կտրեց թղթապանակի կապը։

— Հարկ է լինում, հարկ է լինում,— թունոտ ծիծաղելով՝ խռխռացրեց Ռոմանուսը։

— Ես կարձանագրեմ ձեր ասածները,— ասաց Անդրեյ Անդրեևիչը։

— Եվ ես ուրախ կլինեմ, որ արձանագրեք։

— Կխնդրեմ, ինձ հանգիստ թողեք։ Դուք կազմալուծում եք աշխատակիցներին փորձի ժամանակ։

— Խնդրում եմ այդ բառերն էլ մտցրեք,— ֆալցետով բղավեց Ռոմանուսը։

— Խնդրում եմ չբղավել։

— Ես էլ եմ խնդրում չբղավել։

— Խնդրում եմ չբղավել,— աչքերը փայլեցնելով արձագանքեց Անդրեյ Անդրեևիչը և հանկարծ կատաղությամբ բղավեց։— Էյ, ո՞վ կա վերևում, ի՞նչ եք անում այդտեղ,— ու ելարանի վրայով բեմ թռավ։

Կարգերի միջով արդեն շտապ-շտապ գալիս էր Ստրիժը, իսկ նրա ետևից մութ ուրվագծերով երևացին դերասանները։

Ստրիժի հետ սկանդալի սկիզբը հիշում եմ։

Ռոմանուսը նրան ընդառաջ շտապեց, մտավ թևը ու սկսեց խոսել.

— Ֆոմա։ Ես գիտեմ, որ դու գնահատում ես երաժշտությունը և որ քո մեղքով չի, և ես խնդրում եմ ու պահանջում եմ, որ օգնականը չհամարձակվի ծաղրածանակի ենթարկել երաժիշտներին։

— Էհե՜յ, վերևում ո՞վ կա, — բեմի վրա բղավում էր Անդրեյ Անդրեևիչը։— Բոբիլևն ու՞ր է։

— Բոբիլևը ճաշում է, —մի խուլ ձայն լսվեց վերևներից։

Դերասաններն օղակեցին Ռոմանուսին ու Ստրիժին։

Շոգ էր, մայիս էր։ Արդեն հարյուրավոր անգամներ այդ մարդիկ, որոնց դեմքերը հանելուկային էին թվում կիսախավարում, լուսամփոփներից վեր, դիմաներկ էին քսում, վերամարմնավորվում, հուզվում, սպառվում... Նրանք հոգնել էին թատերաշրջանի ընթացքում, նյարդայնացել, կամակորություն էին անում, միմ-

յանց ձեռ առնում։ Ռոմանուսը վիթխարի և հաճելի զվարճանք էր պատճառում։

Հաղթանդամ, կապտաչ Սկավրովսկին ուրախությամբ ձեռքերն էր շփում ու մրթմրթում.

— Այսպես. այսպես... Վրա՛ տուր։ Արդա՞ր ասված։ Օսկար, ինչ ունես, չունես, ասա դրան։

Այդ ամենն իր գործը տեսավ։

— Կխնդրեմ ինձ վրա չբղավել,— հանկարծ թնդաց Ստրիժը և պիեսը շմփացրեց սեղանին։

— Դու՛ ես բղավում,— ծղրտաց Ռոմանուսը։

— Ճի՞շտ է։ Արդա՞ր ասված,— զվարճանում էր Սկավրոնսկին, քաշքշելով մեկ Ռոմանուսին.— Օսկար, ճիշտ է, մեր կողերը մեզ համար թանկ են էս ներկայացումներից,— մեկ՝ Ստրիժին.— իսկ ի՞նչ է, դերասանները երաժիշտներից վա՞տ են։ Ցոմա, ուշք դարձրու էս փաստի վրա։

— Հիմա մի կռվա լինե՞ր,— հորանջելով ասաց Ելագինը,— ոչ թե փորձ... Եվ ե՞րբ է վերջանալու այս վեճուկռիվը։

Վեճուկռիվը մի որոշ ժամանակ ևս շարունակվեց, բղավոցները գալիս էին լամպն օղակած շրջանակից, և ծուխը վեր էր բարձրանում։

Բայց ինձ այլևս չէր հետաքրքրում վեճուկռիվը։ Սրբելով քրտնած ճակատս, ես կանգնած էի բեմեզրի մոտ, նայում էի, թե ինչպես մակետի արհեստանոցի նկարչուհի Ավրորա Գոսյեն, չափիչ ձողաքանոնը դնելով հատակին, քայլում էր շրջանի եզրով։ Գոսյեի դեմքը հանգիստ էր, թեթևակի տխուր, ատամները՝ սեղմած։ Գոսյեի բացգույն մազերը մեկ բռնկվում էին, ճիշտ կարծես կրակվելով, երբ նա կռանում էր բեմեզրի պռնկին, մեկ հանգչում ու դառնում էին մոխրի պես։ Ու ես մտորում էի, որ այն ամենն, ինչ հիմա կատարվում է, որ ձգվում է այսպես տանջալի, ամեն ինչ իր ավարտը կունենա...

Մինչ այդ, վեճուկռիվը դադարեց։

— Սկսենք, տղերք։ Եկեք սկսենք,— բղավում էր Ստրիժը։— ժամանակ ենք կորցնում։

Պատրիկեևը, Վլադիչինսկին, Սկավրոնսկին արդեն քայլում էին բեմի վրա, բուտաֆորների արանքներով։ Բեմ բարձրացավ նաև Ռոմանուսը։ Նրա երևան գալն անհետևանք չմնաց։ Նա մոտեցավ Վլադիչինսկուն և մտահոգ հարցրեց, թե չի՞ գտնում

*արդյոք Վլադիչինսկին, որ Պատրիկեևը շատ-շատ է չարաշահում զավեշտական հնարները, որի հետևանքով հասարակությունը կսկսի ծիծաղել հենց այն պահին, երբ Վլադիչինսկու կարևորագույն դարձվածքի պահն է. «Իսկ ո՞ւր կհրամայեք կորչեմ-գնամ։ Ես միայնակ եմ, հիվանդ»։*

*Վլադիչինսկին մահու չափ գունատվեց, ու մեկ րոպե անց և դերասանները, և՛ բանվորները, և՛ բուտաֆորները շարք էին բռնել բեմեզրին, լսելով, թե ինչպես են միմյանց վարկաբեկում վաղեմի թշնամիներ Վլադիչինսկին ու Պատրիկեևը։ Վլադիչինսկին ատլետիկ կազմվածքով, ի ծնե գունատ, իսկ հիմա ավելի սպրդնած չարությունից, բռունցքները սեղմած և ջանալով, որ հուժկու ձայնը սարսափելի հնչի, առանց Պատրիկեևին նայելու, ասում էր։*

*— Ընդհանրապես ես կզբաղվեմ այս հարցով։ Վաղուց ժամանակն է ուշադրություն դարձնել ծաղրածուների վրա, որոնք ողորմելի շտամպներով խաղալով, խայտառակում են թատրոնի պատիվը։*

*Կոմիկ դերասան Պատրիկեևը, որ բեմի վրա ծիծաղելի երիտասարդներ էր ներկայացնում, իսկ կյանքում արտակարգ ճարպիկ էր, արագաշարժ ու պնդակազմ, աշխատեց դեմքին արհամարհական, միաժամանակ սարսափելի արտահայտություն տալ, որից նրա աչքերը թախիծ արտահայտեցին, իսկ դեմքը՝ ֆիզիկական ցավ։ Նա խռպոտաձայն պատասխանեց.*

*— Կխնդրեմ չմոռանալ։ Ես Անկախ Թատրոնի դերասան եմ և ոչ թե կինոխալտուրշչիկ, ինչպես դուք։*

*Ռոմանուսը կանգնած էր կուլիսներում, գոհունակությամբ փայլեցնելով աչքերը, վիճողների ձայնը խլացրեց Ստրիժի բղավոցը դահլիճից։*

*— Անմիջապես դադարեցրե՛ք։ Անդրեյ Անդրեևիչ, շտապ զանգ տվեք Ստրոևին։ Ո՞ւր է նա։ Դուք խափանում եք իմ արտադրական պլանը։*

*Անդրեյ Անդրեևիչը սովոր ձեռքով սեղմեց օգնականի պոստի վահանակի կոճակը և հեռու-հեռուներում՝ թե՛ կուլիսներից այն կողմ, թե՛ բուֆետում, թե՛ ճեմասրահում տագնապալի ու բարձր զնգզնգաց զանգը։*

*Իսկ Ստրոևը, որ նախարարնիքում զրույցի էր բռնվել Տորոպեցկայայի հետ, այդ ժամանակ մեկումեջ ցատկելով աստիճաններից, հանդիսասրահ էր շտապում։ Նա բեմ մտավ ոչ թե դահ-*

լիճից, այլ կողքից, բեմի դարպասից, ծածուկ մոտեցավ պոստին, այդտեղից, կամացուկ զնգզնգացնելով քաղաքացիական կոշիկների հագած խթանները, կանգնեց՝ վարպետորեն ձևացնելով, թե այստեղ ներկա է վաղուց, շատ վաղուց։

— Ո՞ւր է Սարոնը,— ոռնում էր Սարիժը։— Զա՛նգ տվեք, զա՛նգ։ Պահանջում եմ դադարեցնել վեճը։

— Զանգ եմ տալիս,— պատասխանեց Անդրեյ Անդրեևիչը։ Այդ պահին շրջվեց ու տեսավ Սարոնին։ — Ես ձե՛զ եմ շտապ զանգում,— խստորեն ասաց Անդրեյ Անդրեևիչը, և տեղնուտեղը զրնգոցն ընդհատվեց թատրոնում։

— Ի՞նչ,— արձագանքեց Սարոնը։— Ի՞նձ ինչու եք շտապ զանգ տալիս։ Տասը րոպե կլինի այստեղ եմ, եթե ոչ քառորդ ժամ... առնվազն... Մամա... միա...— Նա հազաց, մաքրելով կոկորդը։

Անդրեյ Անդրեևիչը խոր ներշնչեց, բայց ոչինչ չասաց, այլ միայն նայեց բազմանշանակ։ Ներշնչած օդն օգտագործեց, որպեսզի բղավի.

— Ավելորդ մարդկանց խնդրում եմ թողնել բեմը։ Սկսում ենք։

Ամեն բան հանդարտվեց, բուտաֆորները գնացին, դերասանները ցրվեցին իրենց տեղերը։ Կուլիսներում Ռոմանուսը շշուկով շնորհավորեց Պատրիկեևին, որ նա արիաբար ու արդարացիորեն պատասխանեց Վլադիչինսկուն, ում արդեն վաղուց հարկն է շշպռել։

## ԳԼՈՒԽ XVI

## ԲԱՐԵՀԱՋՈՂ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Հունիսին շոգն ավելի սաստկացավ, քան մայիսին։

Հիշողությանս մեջ դա է մնացել, մնացածը զարմանալի կերպով ջնջվել գնացել է։ Ասենք, ինչ-որ պատառիկներ պահպանվել են։ Այսպես, հիշում եմ դրիկինյան կառքը թատրոնի շքամուտքի մոտ, իրեն՝ Դրիկինին, բամբակած կապույտ կաֆտանով, նստիքին բազմած և այդ կառքի մոտով անցնող վարորդների զարմացած դեմքերը։

Ապա հիշում եմ մի մեծ դահլիճ, ուր խառնիխուռն աթոռներ էին դրված և դրանց վրա դերասաններ էին նստած։ Իսկ մահու-

դով ծածկված սեղանի մոտ՝ Իվան Վասիլևիչը, Ֆոմա Ստրիժը և ես։

Այդ ժամանակաընթացքում ես մտերիմ ծանոթացա Իվան Վասիլևիչի հետ և կարող եմ ասել, որ այդ ամբողջ ժամանակը հիշում եմ որպես խիստ լարված ժամանակ։ Նրանից էր, որ ամբողջ ջանքերս ի գործ էի դրել, որպեսզի Իվան Վասիլևիչի վրա լավ տպավորություն թողնեմ, ու գլխացավանքս շատ-շատ էր։

Օրը մեջ մոխրագույն կոստյումս տալիս էի Դուսյային՝ արդուկելու և կանոնավոր վճարում էի դրա համար։

Ինչ-որ դարպասի ետև ընկած մի խարխուլ խցիկ գտա, որն ասես ստվարաթղթից էր շինված, ու պնդակազմ մի մարդուց, որի մատներին ադամանդե երկու մատանի կար, քսան հատ օսլայած օձիք գնեցի և ամեն օր թատրոն գնալիս նորն էի հագնում։ Բացի դրանից, ոչ թե դարպասների ետևներից, այլ պետական վաճառատնից գնեցի վեց վերնաշապիկ՝ չորսը սպիտակ, մեկը՝ բաց մանուշակագույն գծերով, մյուսը՝ կապտավուն քառակուսիներով, նաև տարբեր գույն ու նախշով ութ փողկապ։ Անգլխարկ մարդուց, որը հաշվի չառնելով, թե ինչ եղանակ է, նստում էր քաղաքի կենտրոնի մի անկյունադարձում, վրան կոշկակաքուղեր քաշ արած վաճառասեղանի կողքին, ձեռք բերեցի երկու տուփ կոշիկի դեղին քսուք, և առավոտները մաքրում-յուղում էի դեղին կոշիկներս, Դուսյայից վերցնելով խոզանակը, հետո կոշիկներս շփում էի խալաթիս փեշերով։

Այդ անասելի, հրեշավոր ծախսերը հանգեցրին նրան, որ ես երկու գիշերվա ընթացքում «Լոտ» վերնագրով մի փոքրիկ պատմվածք հորինեցի և, պատմվածքը գրպանս դրած, փորձերից ազատ ժամերին գնում էի շաբաթաթերթերի, լրագրերի խմբագրություններ, փորձելով վաճառել այդ պատմվածքը։ Սկսեցի «Նավագնացության լրաբերից», որտեղ պատմվածքը հավանեցին, բայց հրաժարվեցին տպագրել բացարձակապես բանական այն հիմնավորմամբ, որ պատմվածքը գետագնացության հետ ոչ մի առնչություն չունի։ Երկար ու տխուր կլինի, որ պատմեմ, թե ինչպես էի այցելում խմբագրություններ և թե ինչպես էին ինձ մերժում։ Հիշում եմ միայն, որ ամենուրեք ինձ մի տեսակ անբարյացակամ էին ընդունում։ Հիշողությանս մեջ հատկապես մնացել է մի գեր մարդ՝ պենսնեով, որը ոչ միայն վճռականապես մերժեց իմ ստեղծագործությունը, այլև խրատի պես մի բան կարդաց գլխիս։

— Ձեր պատմվածքում զգացվում է աչքով անելու հակում, —ասաց գեր մարդը, և ես տեսա, որ նա ինձ է նայում զարշանքով։

Հարկ է, որ արդարանամ։ Գեր մարդը սխալվում էր։ Աչքով անելու և ոչ մի բան չկար պատմվածքում, բայց պետք է խոստովանել (հիմա դա կարելի է ասել), որ այդ պատմվածքը տխուր էր, անհեթեթ ու գլխավորը մատնում էր հեղինակին՝ ոչ մի պատմվածք էլ նա չէր կարող գրել. դրա շնորհքը չուներ։

Այնուամենայնիվ հրաշք տեղի ունեցավ։ Պատմվածքը գրպանումս երեք շաբաթ Վառվարկայում, Վոզդվիժենկայում, Չիստիե պրուդիում, Ստրաստնոյ բուլվարում, հիշում եմ, անգամ Պլյուշչիխայում լինելուց հետո ստեղծագործությունս վաճառեցի Մյասնիցկայայի վրա, Զլատոուստինսկի նրբանցքում, եթե չեմ սխալվում, հինգերորդ հարկում նստած ինչ-որ մի մարդու, որն այտին մի մեծ խալ ուներ։

Դրամն ստանալով և սարսափելի ճեղքվածքը խցկելով, ես վերադարձա թատրոն, առանց որի արդեն չէի կարող ապրել, ինչպես թմրամոլն առանց մորֆիի։

Ծանր սրտով պիտի խոստովանեմ, որ բոլոր ջանքերս ի դերև ելան և ի սարսափ ինձ նույնիսկ հակառակ արդյունք տվեցին։ Տառացիորեն օրն օրի վրա ես ավելի ու ավելի քիչ էի դուր գալիս Իվան Վասիլևիչին։

Հիմար բան կլինի կարծել, թե բոլոր հաշվարկները կառուցել էի դեզին կոշիկներիս վրա, որոնց երեսին գարնան արևն էր անդրադարձվում։ Ոչ։ Խորամանկ ու բարդ մի համակցություն էր դա, որի մեջ, օրինակ, այսպիսի մի հնար էր մտնում՝ ճառեր ասել մեղմ, խորունկ և սրտագին ձայնով։ Այդ ձայնը միանում էր ջիտակ, ազնիվ հայացքին, շրթունքների վրա թեթևակի (ամենևին ոչ շողոքորթ, այլ բարեհոգի) ժպիտով։ Ես հիանալի սանրված էի, սափրված այնպես, որ ափի հակառակ երեսով այտս շփելիս նվազագույն անողորկություն չէր զգացվում, հակիրճ, խելոք, հարցի գիտակցությամբ զարմացնող դատողություններ էի արտաբերում, և ոչինչ չէր ստացվում։ Սկզբնական շրջանում Իվան Վասիլևիչն, ինձ հանդիպելիս, ժպտում էր, ապա նա սկսեց ավելի ու ավելի սակավադեպ ժպտալ և վերջապես բոլորովին դադարեց ժպտալ։

Այդ ժամանակ ես սկսեցի գիշերները փորձեր անել։ Վերցնում էի փոքրիկ հայելին, նստում էի դիմացը, ինձ տեսնում ու սկսում խոսել.

— Իվան Վասիլևիչ։ Գիտեք բանն ինչ է, ըստ իս, դաշույնն օգտագործել չի կարելի...

Եվ ամեն ինչ ընթանում էր շատ ու շատ լավ։ Երթունքներիս պար էր գալիս պատշաճ ու համեստ ժպիտ, հայելու միջից աչքերս նայում էին թե՛ շիտակ, թե՛ խելացի, ճակատս հարթ էր, վարսաքաժանս սպիտակ թելի պես բացված՝ սև գլխիս վրա։ Այդ ամենը չէր կարող արդյունք չտալ, բայց և այնպես ավելի ու ավելի վատ էր ստացվում։ Ես ուժասպառ էի լինում, նիհարեցի և մի քիչ ինքնահոսի թողեցի հագուստս։ Ինձ թույլ տվեցի միևնույն օձիքը կրել երկու անգամ։

Մի գիշեր որոշեցի ստուգում անցկացնել և առանց հայելուն նայելու արտասանեցի իմ մենախոսությունը, իսկ հետո գողունի շարժումով աչք թեքեցի, ստուգելու համար նայեցի հայելուն ու սարսափեցի։

Հայելուց ինձ էր նայում մի դեմք՝ կնճռոտած ճակատով, դուրս ցցված ատամներով, այնպիսի աչքերով, որոնց մեջ երևում էր ոչ միայն անհանգստություն, այլ նաև հետին միտք։ Բռնեցի գլուխս, հասկացա, որ հայելին ինձ փորձանքի մեջ գցեց ու խաբեց, ու հայելին շպրտեցի հատակին։ Եվ եռանկյունի մի կտոր դուրս թռավ հայելուց։ Ասում են, վատ նշան է, երբ հայելի է կոտրվում։ Իսկ ի՞նչ ասել այն խելագարի մասին, որն ինքն է կոտրում իր հայելին։

— Հիմա՜ր, հիմա՜ր,— գոչեցի ես, և քանի որ թլվատում եմ, ինձ թվաց, թե գիշերվա լռության մեջ կռկռացին ագռավները։— Ուրեմն, քանի դեռ հայելուն էի նայում, լավն էի, բավական էր հեռանայի, հսկողությունն անհետացավ և դեմքս ընկավ մտքիս իշխանության տակ և... ա՜, գրողն ինձ տանի։

Ես չեմ կասկածում, որ իմ հուշերը, եթե միայն ընկնեն որևէ մեկի ձեռքը, այնքան էլ հաճելի տպավորություն չեն թողնի ընթերցողի վրա։ Նա կմտածի, թե իր առջև խորամանկ, երկերեսանի մարդ է, որն ինչ-ինչ շահերից դրդված ձգտում էր Իվան Վասիլևիչի վրա լավ տպավորություն թողնել։

Մի շտապեք պարսավել։ Ես հիմա կասեմ, թե շահը որն էր։ Իվան Վասիլևիչը համառորեն ու հետևողականորեն աշխատում էր պիեսից հանել այն իսկ տեսարանը, որտեղ ինքնասպան եղավ Բախտինը (Բեխտեևը), որտեղ լուսինը փայլում էր, որտեղ հարմոն էին նվագում։ Այնինչ, ես գիտեի, որ այդժամ պիեսը կդադարեր գոյություն ունենալ, իսկ պիեսը պետք է որ

գոյություն ունենար, որովհետև գիտեի, որ նրա մեջ ճշմարտություն կա։ Իվան Վասիլևիչին ներկայացրած բնութագրումները չափազանց պարզ էին։ Այո, խոստովանեմ, դրանք ավելորդ էին։ Մեր ծանոթության առաջին օրերին ես նրան ուսումնասիրեցի ու հասկացա, որ Իվան Վասիլևիչի հետ որևիցե պայքար անհնար է։ Ինձ մնում էր միակ ճանապարհը. այնպես անել, որ նա ինձ լսեր։ Բնականաբար, դրա համար պետք է, որ իր դիմաց հաճելի մեկին տեսներ։ Ահա թե ինչու էի նստում հայելու դիմաց։ Ես ջանում էի փրկել կրակոցը, ես ուզում էի, որպեսզի լսեն, թե ինչ սարսափելի է երգում հարմոնը կամրջի վրա, երբ ձյան վրա, լուսնի ներքո տարածվում է արյան լճակը։ Ես ուզում էի, որ տեսնեն սև ձյունը։ Ուրիշ ոչինչ չէի ուզում։

Եվ կրկին կոկոաց ագռավը։

— Հիմար։ Հարկ էր հիմնականը հասկանալ։ Ինչպե՞ս կարելի է դուր գալ մի մարդու, եթե նա ինքը քեզ դուր չի գալիս։ Իսկ դու ի՞նչ ես կարծում։ Որ դու ոմն մեկի՞ն ես խաբելու։ Ինքդ նրա դեմ որոշ բաներ ունենաս ու աշխատես նրա մեջ համակրա՞նք առաջացնել քո նկատմամբ։ Դա երբեք չի ստացվի, որքան էլ ծամածռես հայելու դիմաց։

Իսկ Իվան Վասիլևիչն իմ դուրը չէր գալիս։ Չհավանեցի նաև մորաքույր Նաստասյա Իվանովնային, անչափ չհավանեցի և Լյուդմիլա Սիլվեստրովնային։ Իսկ չէ որ դա զգացվու՞մ է։

Դրիկինի կառքը նշանակում էր, որ Իվան Վասիլևիչը գալիս էր թատրոն՝ «Սև ձյան» փորձերից։

Ամեն օր կեսօրին սարսափից ժպտալով, կրկնակոշիկները ձեռքում բռնած Պակինը ժիր-ժիր ու վազեվազ մտնում էր պարտեզ։ Նրա ետևից քայլում էր Ավգուստա Ավդեևնան, վանդականախշ շալը ձեռքին։ Ավգուստա Ավդեևնայի ետևից՝ Լյուդմիլա Սիլվեստրովնան, ընդհանուր տեսքով ու ժանեկազարդ թաշկինակով։

Պարտերում Իվան Իվանովիչը հագնում էր կրկնակոշիկները, հարմար նստում ռեժիսորական սեղանի մոտ, Ավգուստա Ավդեևնան Իվան Վասիլևիչի ուսերին էր գցում շալը, և բեմի վրա սկսվում էր փորձը։

Այդ փորձի ընթացքում ռեժիսորական սեղանից ոչ հեռու տեղ բռնած Լյուդմիլա Սիլվեստրովնան ինչ-որ բաներ էր գրանցում տետրի մեջ, երբեմն հիացմունքի մեղմ բացականչություններ արձակելով։

Այստեղ ժամանակն է բացատրվելու պատճառն իմ այդ անբարյացակամության, որ ես հիմարավարի ջանում էի կոծկել, ամեններին էլ շալը կամ կրկնակոշիկները չէին, նույնիսկ Լյուդմիլա Սիլվեստրովնան էլ չէր, այլ այն, որ հիսունհինգ տարի ռեժիսորական աշխատանքով զբաղվող Իվան Վասիլևիչը հայտնագործել էր լայնորեն հայտնի և ընդհանուրի կարծիքով հանճարեղ տեսություն այն մասին, թե դերասանն ինչպես պիտի նախապատրաստի իր դերը։

Ես ոչ մի րոպե չեմ կասկածում, որ տեսությունն, իրոք, հանճարեղ էր, բայց այդ տեսության կիրառումը գործնականում ինձ հուսահատության դուռը հասցրեց։

Գլխովին պատասխանատու եմ, որ եթե մի օտարից եկած նոր մարդ բերեին փորձի, նա մեծագույն զարմանք կապրեր։

Իմ պիեսում Պատրիկեևը խաղում էր ստորին աստիճանավորի դեր, սիրահարված իր նկատմամբ ոչինչ չտածող մի կնոջ։

Դերը ծիծաղելի էր, և Պատրիկեևն ինքն արտասովոր ծիծաղելի էր խաղում, օրըստօրե ավելի ու ավելի լավ։ Նա այնքան լավն էր, որ ինձ սկսեց թվալ, թե դա Պատրիկեևը չէ, այլ հենց այն աստիճանավորը, որին ես էի հորինել, որ Պատրիկեևը գոյություն է ունեցել այդ աստիճանավորից ավելի առաջ և ինչ-որ հրաշքով նրան ճանաչել եմ։

Հենց դրիկինյան կառքը հայտնվեց թատրոնի մոտ, իսկ Իվան Վասիլևիչին փաթաթեցին շալով, սկսվեց աշխատանքը Պատրիկեևի հետ։

— Դե՛հ, սկսենք,— ասաց Իվան Վասիլևիչը։

Պարտերում տիրեց ակնածալից լռություն, և հուզվող Պատրիկեևը (իսկ հուզումը նա արտահայտում էր այսպես. աչքերը ցանում էին լացակումած) դերասանուհու հետ խաղաց սիրո բացատրության տեսարանը։

— Այսպե՞ս,— ասաց Իվան Վասիլևիչը, աչքերն արագ-արագ փայլեցնելով լոռնետի ապակիների միջից,— դա մի բան չէր։

Ներքուստ ախ քաշեցի և որովայնիս մեջ ինչ-որ բան կտրըվեց։ Ես չէի պատկերացնում, որ գոնե մի աննշան չափով կարելի է ավելի լավ խաղալ հատվածը, քան դա արեց Պատրիկեևը։ «Եվ թե նա հասնի դրան,— մտածեցի ես, հարգանքով նայելով Իվան Վասիլևիչին,— կասեմ, որ իսկապես հանճարեղ է»։

— Դա մի բան չէր,— կրկնեց Իվան Վասիլևիչը,— սա՞ ինչ

էլ Ջանսպան օյիններ ու համատարած չափազանցում։ Ինչպե՞ս է նա վերաբերվում այդ կնոջը։

— Սիրում է նրան, Իվան Վասիլևիչ։ Ա՜խ, ինչ է սիրում,— բղավեց Ֆոմա Ստրիժը, որը և սարքել էր այդ ամբողջ տեսարանը։

— Այսպես,— պատասխան տվեց Իվան Վասիլևիչը և կրկին դիմեց Պատրիկեևին։— Իսկ դուք մտածե՞լ եք, թե ի՞նչ բան է կրակոտ սերը։

Ի պատասխան, Պատրիկեևն ինչ-որ բաներ խռխռացրեց բեմից, բայց թե ինչ՝ անհնար էր գլխի ընկնել։

— Կրակոտ սերը,— շարունակեց Իվան Վասիլևիչը,— այն է, որ տղամարդն ամեն ինչի պատրաստ է հանուն իր սիրեցյալի։— Եվ հրամայեց.— Մի հեծանիվ բերեք այստեղ։

Իվան Վասիլևիչի հրամանը Ստրիժի հիացմունքն առաջացրեց, և նա անհանգիստ բղավեց.

— Է՜յ, բուտաֆորներ։ Հեծանի՜վ։

Բուտաֆորը բեմ գլորեց մի հին հեծանիվ, ներկը թափած շրջանակով։ Պատրիկեևը լացակումած դրան նայեց։

— Սիրահարն ամեն ինչ անում է հանուն իր սիրեցյալի,— հնչեղ խոսում էր Իվան Վասիլևիչը,— ուտում է, խմում է, քայլում, հեծանիվ քշում...

Հետաքրքրությունից ընդարմացած, ես նայեցի Լյուդմիլա Սիլվեստրովնայի մոմլաթապատ տետրին ու տեսա, որ մանկական ձեռագրով նա գրում է. «Սիրահարն ամեն ինչ անում է հանուն իր սիրեցյալի...»։

— ... ահա այսպես, բարի եղեք հեծանիվ քշել ձեր սիրելի աղջկա համար,— կարգադրեց Իվան Վասիլևիչը և անանուխով մի բլիթ կերավ։

Աչքս չէի կտրում բեմից։ Պատրիկեևը մի կերպ մագլցեց հեծանիվը, սիրեցյալի դերը կատարող դերասանուհին նստեց բազկաթոռին, փորին սեղմած վիթխարի լաքապատ պայուսակը։ Պատրիկեևը պտտեց ոտնակները և անհաստատ քշեց բազկաթոռի չորսբոլորով, մի աչքը գցած հուշարարի խցիկին, ուր վախենում էր գլորվել, մյուսը՝ դերասանուհուն։

Դահլիճում ժպիտներ երևացին։

— Չեղավ, բոլորովին չեղավ,— նկատեց Իվան Վասիլևիչը, երբ Պատրիկեևը կանգ առավ։— Ինչո՞ւ եք աչքերդ չռել բուտաֆորի վրա։ Նրա համա՞ր եք քշում։

Պատրիկեևը նորից քշեց, այս անգամ երկու աչքն էլ հառած գերասանուհու վրա, չկարողացավ պտույտ տալ ու մտավ կուլիսների ետևը։

Երբ ղեկը բռնած նրան ետ դարձրին, Իվան Վասիլևիչն այս մեկն էլ ճիշտ չգտավ, և Պատրիկեևը քշեց երրորդ անգամ, գլուխը դարձրած դերասանուհու կողմը։

— Սարսափելի՜ է,— զառնությամբ ասաց Իվան Վասիլևիչը։— Մկանները լարված են, դուք ձեզ չեք հավատում։ Թուլացրեք մկանները, մի ձգվեք։ Գլուխն անբնական է, ձեր գլխին մարդ չի հավատում։

Պատրիկեևը քշեց անցավ, գլուխը՝ ձախ, ունքերի տակից նայելով։

— Դատա՞րկ եք քշում, դատա՞րկ, ձեր ընթացքը տոգորված չէ ձեր սիրեցյալով։

Եվ Պատրիկեևը կրկին քշեց։ Մի անգամ նա անցավ, ձեռքերը կանթած ու կտրիճի պես սիրեցյալին նայելով։ Ղեկը դարձնելով մի ձեռքով, նա կտրուկ շրջվեց ու քշեց դերասանուհու վրա, անվադողով կեղտոտելով նրա շրջազգեստը, իսկ դերասանուհին ճչաց վախեցած։ Ճչաց նաև Լյուդմիլա Սիլվեստրովնան՝ պարտերում։ Տեղեկանալով, թե արդյոք չի՞ վնասվել դերասանուհին և նրան բժշկական որևիցե օգնություն պետք չէ՞, և իմանալով, որ սարսափելի ոչինչ չի եղել, Իվան Վասիլևիչը Պատրիկեևին նորից կարգադրեց քշել, և նա բազմիցս շրջաններ արեց, մինչև որ ի վերջո Իվան Վասիլևիչը հարցրեց, թե չի՞ հոգնել արդյոք։ Պատրիկեևը պատասխանեց, որ չի հոգնել, բայց Իվան Վասիլևիչն ասաց, թե տեսնում է, որ Պատրիկեևը հոգնել է և նրան ազատ թողեցին։

Պատրիկեևին փոխարինեց հյուրերի խումբը։ Ես դուրս եկա բուֆետ՝ ծխելու և երբ վերադարձա, տեսա, որ դերասանուհու ձեռքի պայուսակն ընկած է ցած, իսկ նա նստել է հատակին, ձեռքերը դրած տակը, ճիշտ այնպես, ինչպես և նրա չորս հյուրերը, երեքը՝ տղամարդ, մյուսն էլ այն նույն Վեշնյակովան, որի մասին գրել էին Հնդկաստանից։ Նրանք բոլորը ջանում էին արտասանել այն դարձվածքները, որոնք տվյալ տեղում պահանջվում էին ըստ պիեսի, բայց ոչ մի կերպ չէին կարողանում շարունակել, որովհետև Իվան Վասիլևիչը ամեն անգամ ընդհատում էր որևիցե բան ասողի, բացատրելով, թե որն է անճշտությունը։ Ե՞վ հյուրերի, և՞ Պատրիկեևի սիրեցյալի՝ պիեսի հերո-

սուհու դժվարությունները կրկնապատկվում էին, քանի որ ամեն րոպե ցանկանում էին ձեռքները տակներից հանել ու որևէ ժեստ անել։

Տեսնելով իմ զարմանքը, Սորիժը շշուկով բացատրեց, որ դերասանները Իվան Վասիլևիչի կողմից զրկված են դիտավորյալ, որպեսզի վարժվեն իմաստ ներդնել բառերի մեջ և ոչ թե օգնեն իրենց ձեռքերով։

Այդ նոր զարմանալի բաներից ստացած տպավորություններով լեփ-լեցուն, փորձից տուն էի վերադառնում, խորհելով այսպես.

— Այո, այս ամենը զարմանալի է։ Բայց զարմանալի է սոսկ նրա համար, որ այս գործում ես անգետ եմ։ Յուրաքանչյուր արվեստ իր օրենքները, գաղտնիքներն ու հնարներն ունի։ Օրինակ, վայրենում ծիծաղելի և տարօրինակ կթվա, որ մարդը խոզանակով ատամներն է մաքրում, բերանը կավիճ լցրած։ Անիրազեկ մարդուն տարօրինակ կթվա, որ բժիշկը, փոխանակ իսկույն ձեռնամուխ լինելու գործողությանը, հիվանդի հետ բազմաթիվ անհասկանալի բաներ է անում, օրինակ՝ արյունը քննության է վերցնում և նման այլ բաներ...

Ամենից շատ բաղձում էի հաջորդ փորձին տեսնել հեծանվի պատմության ավարտը, այսինքն տեսնել, թե Պատրիկեևին կհաջողվի՞ քշել «նրա համար»։

Բայց հաջորդ օրը հեծանվի մասին ոչ ոք ծպտուն էլ չհանեց, ու ես տեսա ուրիշ, ոչ պակաս զարմանալի բաներ։ Նույն Պատրիկեևը պետք է ծաղկեփունջ տար սիրեցյալին։ Դրանից էլ սկսվեց, ժամը տասներկուսից մինչև չորսը։

Ընդ որում, ծաղկեփունջ էր տալիս ոչ միայն Պատրիկեևը, այլ հերթով բոլորը, գեներալ խաղացող Ելագինը, և նույնիսկ Ադալբերտը, որ բանդիտների խմբի պարագլուխ էր խաղում։ Դա չափազանց զարմացրեց ինձ։ Բայց Ֆոման այստեղ ևս հանգստացրեց ինձ, բացատրելով, որ Իվան Վասիլևիչը գործում է ինչպես միշտ, արտակարգ իմաստուն, բազմաթիվ մարդկանց միանգամից սովորեցնելով բեմական այս կամ այն հնարը։ Եվ իրոք, Իվան Վասիլևիչը զասն ուղեկցում էր նաև ուսանելի պատմություններով այն մասին, թե ինչպես պետք է տիկնանց ծաղկեփունջ մատուցել և ով ինչպես է մատուցել։ Տեղնուտեղը իմացա, որ ամենից լավ դա անում էին նույն այն „Կոմարովսկի-Բիոնկուրը (Լյուդմիլա Սիլվեստրովնան ճչաց,

խախտելով փորձի կարգը. «Ախ, այո, այո, Իվան Վասիլևիչ, մոռանալ չեմ կարող») և իտալական մի բարիտոն, որին Իվան Վասիլևիչը ճանաչելիս է եղել Միլանում, 1889 թվականին։

Ճիշտ է, չճանաչելով այդ բարիտոնին, ես կարող եմ ասել, որ ծաղկեփունջ ամենից լավ մատուցում էր ինքը՝ Իվան Վասիլևիչը։ Նա ոգևորվեց, բեմ բարձրացավ և մի տասներեք անգամ ցույց տվեց, թե ինչպես պիտի հանձնել այդ հաճելի նվերը։ Ընդհանրապես, ես սկսեցի համոզվել, որ Իվան Վասիլևիչը զարմանալի և իսկապես հանճարեղ դերասան է։

Հաջորդ օրն ուշացա փորձից և երբ եկա, տեսա, որ բեմի վրա, կողք-կողքի աթոռներին նստած են Օլգա Սերգեևնան (հերոսուհու դերակատարը) և Վեշնյակովան (հյուր կինը), և Ելագինը, և Վլադիչինսկին, և Ագալբերտը և մի քանի անծանոթներ, ու Իվան Վասիլևիչի «մեկ, երկու, երեք» հրամանով, գրպաններից հանում են անտեսանելի դրամապանակներ, համրում են անտեսանելի դրամներ ու ետ դնում։

Երբ ավարտվեց այդ էտյուդը (իսկ դրա առիթն, ինչպես հասկացա, այն էր, որ Պատրիկեևն այդ պատկերում փող է հաշվում), սկսվեց մեկ ուրիշ էտյուդ։ Անդրեյ Անդրեևիչն ահագին ժողովուրդ հավաքեց բեմի վրա, և սրանք, աթոռների վրա նստած, սկսեցին անտեսանելի գրիչներով, անտեսանելի սեղանների ու թղթերի վրա նամակներ գրել ու ծրարել (դարձյալ Պատրիկեևը)։ Գաղտնիքն այն էր, որ նամակը պետք սիրային լիներ։

Այդ էտյուդը նշանավորվեց մի թյուրիմացությամբ՝ նամակ գրողների մեջ սխալմամբ բուտաֆոր էր ընկել։

Իվան Վասիլևիչը, քաջալերելով բեմ ելնողներին ու դեմքով վատ ճանաչելով այդ տարի օժանդակ կազմը նոր ընդունվածներին, օդային նամակ հորինելու մեջ ներքաշեց բեմի կողքը կանգնած պատանի, գիսախռիվ մի բուտաֆորի։

— Իսկ ձե՞զ ինչ,— նրա վրա բղավեց Իվան Վասիլևիչը,— ձեզ առանձի՞ն հրավեր պիտի ուղարկեմ։

Բուտաֆորը նստեց աթոռին և բոլորի հետ սկսեց գրել օդում և թքոտել մատները։ Իմ կարծիքով, նա մյուսներից վատ չէր անում, բայց այդ ընթացքում մի տեսակ շփոթված ժպտում էր ու կաս-կարմիր էր կտրել։

Դա հարուցեց Իվան Վասիլևիչի բղավոցը.

— Իսկ դա՞ ինչ չարաճճի է ծայրում նստած։ Ազգանունն,

ի՞նչ է։ Գուցե նա կրկե՞ս է ուզում ընդունվե՞լ։ Սա ի՛նչ անլրջություն է։

— Նա բուտաֆոր է, Իվան Վասիլևիչ, բուտաֆո՛ր,— տնքաց Ֆոման և Իվան Վասիլևիչը հանդարտվեց, իսկ բուտաֆորին ազատ արձակեցին։

Եվ օրերն անցան անխոնջ աշխատանքով։ Ես շատ ու շատ բան տեսա։ Տեսա, թե ինչպես բեմի վրա դերասանների ամբոխը, առաջնորդվելով Լյուդմիլա Սիլվեստրովնայի կողմից (որն, ի դեպ, պիեսում զբաղված չէր), բղավոց-ճղավոցով վազում էին բեմով մեկ, հպվելով անտեսանելի պատուհաններին։

Բանն այն է, որ այդ նույն պատկերում, ուր և ծաղկեփունջն էր, և Նամակը, մի տեսարան կար, երբ իմ հերոսուհին մոտ էր վազում պատուհանին, տեսնելով հեռավոր հրացոլքը։

Դա էլ առիթ էր տվել մի մեծ էտյուդի։ Այդ էտյուդը ծավալվեց անտեսանելի չափով և, անկեղծ ասած, հոգեկան ամենամռայլ տրամադրության հասցրեց ինձ։

Իվան Վասիլևիչը, որի տեսության մեջ էր մտնում իմիջիայլոց այն հայտնագործությունը, թե փորձերի ժամանակ տեքստը ոչ մի դեր չի խաղում, և որ պիեսում բնավորություններ պիտի ստեղծել, խաղալով սեփական տեքստով, բոլորին հրամայեց վերապրել այդ հրացոլքը։

Այդ իսկ պատճառով էլ պատուհանի կողմը վազող յուրաքանչյուր ոք բղավում էր այն, ինչ հարկ էր համարում բղավել։

— Ա՜խ, աստված իմ։ Աստվա՜ծ իմ,— ամենից շատ այսպես էին բղավում։

— Որտե՞ղ է վառվում։ Ի՞նչ է եղել,— բացականչում էր Ադալբերտը։

Տղամարդկանց ու կանանց ձայներ էին լսվում, որոնք բղավում էին.

— Փրկվեցե՛ք։ Ո՞ւր է ջուրը։ Ելիսե՛ևն է վառվում (սատանան գիտե, թե էլ ինչ)։ Փրկեցե՛ք, փրկեցեք երեխաների՛ն։ Սա պայթյո՛ւն է։ Հրշեջնե՛ր կանչեք։ Մենք կործանվա՛ծ ենք։

Այս ամբողջ գոռգոռոցը ծածկում էր Լյուդմիլա Սիլվեստրովնայի ճղճղան ձայնը. նա արդեն բոլորովին անհեթեթ բաներ էր բղավում.

— Օ՜, աստված իմ։ Օ՜, ամենակարող աստված։ Ինչ են լինելու իմ սնդուկները։ Իսկ ադամանդնե՛րս, իսկ իմ ադամանդնե՛րը...

Ամպի պես մթնած նայում էի ձեռքերը կոտրատող Լյուդմի-լա Սիլվեստրովնային և մտածում, որ իմ պիեսի հերոսուհին միայն մի բան է ասում.

— Տեսեք... Գրացուլքը...— և ասում է հոյակապ, որ ինձ ամենևին էլ հետաքրքիր չէ սպասել, մինչև հրացուլքը վերապրել կսովորի պիեսին չմասնակցող Լյուդմիլա Սիլվեստրովնան։ Վայրենի բղավոցները ինչ-որ սնդուկների մասին, որոնք պիեսի հետ որևէ առնչություն չունեն, այն աստիճան ջղայնացրին ինձ, որ դեմքս սկսեց ցնցվել։

Իվան Վասիլևիչի հետ պարապմունքների երրորդ շաբաթին հուսալքություն պաշարեց ինձ։ Երեք պատճառ կար։ Նախ, ես թվաբանական հաշվումներ արեցի ու սարսափեցի։ Մենք երրորդ շաբաթն էինք փորձում, և անընդհատ միևնույն պատկերը։ Իսկ պիեսը յոթ պատկեր ուներ։ Ուրեմն, եթե երեքական շաբաթ գցենք ամեն պատկերին...

— Օ՜, տեր աստված,— շշնջում էի ես, անքնությունից շուռու-մուռ գալով տանը, բազմոցին։— Երեք անգամ յոթ... քսանմեկ շաբաթ կամ հինգ... այո, մեկ էլ տեսար վեց ամիս։ Իսկ իմ պիեսը ե՞րբ բեմ կելնի։ Մի շաբաթ անց սկսվում է մեռյալ սե-զոնը և մինչև սեպտեմբեր փորձեր չեն լինի։ Տե՜ր աստված։ Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր...

Գիշերը շտապ լուսաբացին էր հասնում։ Լուսամուտը բաց էր, բայց զով չէր գալիս։ Ես փորձերին գնում էի ծանր գլխացա-վով, դեղնել ու սմքել էի։

Իսկ հուսահատության երկրորդ պատճառն ավելի լուրջ էր։ Այս տեսրին ես կարող եմ վստահել իմ գաղտնիքը. սկսեցի կասկածել Իվան Վասիլևիչի տեսությանը։ Այո՛։ Սարսափելի է ասելը, բայց դա այդպես է։

Չարագույժ կասկածներն սկսեցին հոգիս կրծել առաջին շաբաթվա վերջում։ Երկրորդի վերջում ես արդեն գիտեի, որ իմ պիեսի համար այդ տեսությունը, ըստ երևույթին, կիրառելի չէ։ Պատրիկեևը ոչ միայն ծաղկեփունջն ավելի լավ մատուցել, նա-մակ գրել կամ սեր բացատրվել չսկսեց։ Ո՜չ։ Նա դարձավ մի տեսակ բռնազբոսիկ ու չոր և ամենևին ոչ ծիծաղելի։ Իսկ ամենագլխավորը՝ հանկարծակի հարբուխ կպավ։

Երբ վերջին հանգամանքի մասին տխրամած հայտնեցի Թոմբարդովին, նա քմծիծաղ տվեց ու ասաց.

— Է՜, նրա հարբուխը շուտով կանցնի։ Նա իրեն արդեն լավ է

ղյում. Թե երեկ, թե այսօր ակումբում բիլիարդ էր խաղում։ Երբ կփորձենք կվերջացնենք այդ պատկերը, նրա հարբուխն էլ կանցնի։ Դուք սպասեցեք՝ ուրիշներն էլ են հարբուխով հիվանդանալու։ Եվ ամենից շուտ, կարծում եմ, Ելագինը։

— Ահ, գրողը տանի,— բղավեցի ես, սկսելով հասկանալ։

Բոմբարդովի կանխագուշակումն այստեղ էլ իրականացավ։ Մի օր հետո փորձից անհետացավ Ելագինը, և Անդրեյ Անդրեևիչը արձանագրության մեջ նրա մասին գրեց. «Ազատված է փորձից։ Հարբուխ»։ Նույն փորձանքը Ադալբերտին էլ հասավ։ Նույն մակագրությունն՝ արձանագրության մեջ։ Ադալբերտից հետո՝ Վեշնյակովսկուն։ Ես կրճատացնում էի աատամնիսա, իմ հաշվումների մեջ մեկ ամիս էլ ավելացնելով հարբուխի համար։ Բայց չէի զատապարտում ոչ Ադալբերտին, ոչ Պատրիկեևին։ Իսկապես, ավազակների պարապլուխն ինչո՞ւ պիտի ժամանակ կորցնի գոյություն չունեցող հրդեհի վրա՝ չորրորդ պատկերում, երբ նրա ավազակային ու իրեն հարկավոր գործերը նրան աշխատանքի մեջ էին ներառնում երրորդ, ինչպես նաև հինգերորդ պատկերներում։

Եվ մինչ այդ Պատրիկեևը, ղարեջուր խմելով, բիլիարդ էր խաղում մարկյորի[*] հետ, Ադալբերտը Շիլլերի «Ավազակներն» էր փորձում Կրասնայա Պրեսնյայի ակումբում, որտեղի թատերական խմբակն էր ղեկավարում։

Այո, այդ տեսությունն, անկասկած, կիրառելի չէր իմ պիեսի համար, այլ հավանորեն՝ վնասակար։ Չորրորդ պատկերում երկու գործող անձանց միջև վեճն իր ետևից մի դարձվածք էր բերել. «Ես քեզ մենամարտի կկանչեմ»։

Եվ գիշերով քանիցս սպառնացել եմ ինքս իմ ձեռքերը կտրել, երիցս նզովյալ այդ դարձվածքը գրելու համար։

Այդ դարձվածքը լսելուն պես Իվան Վասիլևիչը խիստ աշխուժացավ և կարգադրեց մարզասուսերներ բերել։ Ես գունատվեցի։ Եվ երկար նայում էի, թե ինչպես Վլադիչինսկին ու Բլագոսվետլովը սուսեր սուսերի են զարկում և դողում էի այն մտքից, որ Վլադիչինսկին Բլագոսվետլովի աչքը հանելու է։

Իվան Վասիլևիչն այդ ընթացքում պատմում էր, թե ինչպես Կոմարովսկի-Բիոնկուրը մենամարտել է մոսկովյան քաղաքագլխի որդու հետ։

---

* Բիլիարդ խաղալիս հաշիվ պահող անձ։

*Բայց բանը քաղաքագլխի այդ անիծյալ որդին չէր, այլ այն, որ Իվան Վասիլևիչն ավելի ու ավելի համառորեն սկսեց ինձ առաջարկել թերթով մենամարտի տեսարան գրել իմ պիեսում։*

*Ես դա ընդունեցի որպես ծանր կատակ, և ինչպիսի՜ք էին իմ զգացումները, երբ նենգ ու դավադիր Ստրիժն ասաց, թե խնդրում է, որ մենամարտի տեսարանը մի շաբաթ հետո «սևագիր վիճակում լինի»։ Այստեղ ես վեճի բռնվեցի, բայց Ստրիժը համառ կանգնեց իր ասածին։ Վերջնական կատաղության հասցրեց ինձ նրա գրառումը ռեժիսորական գրքում։ «Այստեղ մենամարտ է լինելու»։*

*Եվ մեր հարաբերությունները փչացան։*

*Տրտմած, վրդովված, գիշերները կողքից կողք էի շուռ գալիս։ Ես վիրավորված էի զգում ինձ։*

*— Ինչպե՞ս չէ, Օստրովսկու պիեսում մենամարտեր մեջ չէր գցի,— մրթմրթում էի ես,— չէր թողնի, որ Լյուդմիլա Սիլվեստրովնան ոռնա սնդուկների մասին։*

*Եվ Օստրովսկու նկատմամբ մանր նախանձի զգացումը տանջում էր դրամատուրգին։ Բայց այս ամենը վերաբերում էր, այսպես ասած, մասնավոր դեպքի՝ իմ պիեսին։ Ավելի կարևոր բան կար։ Անկախ Թատրոնի նկատմամբ սիրուց տոչորված, այժմ արդեն գամված նրան, ինչպես տիզը ոչխարին, երեկոները գնում էի ներկայացումների...**

* Վեպի ձեռագիրն այստեղ ընդհատվում է։

## ՎԵՐՋԱԲԱՆ

Այս գրքում զետեղված են Մ. Բուլգակովի... «Թատերական վեպը» ...և «Վարպետը և Մարգարիտան» վեպը, որը հրատարակվում է հեղինակի՝ կենդանության օրոք կատարված վերջին խմբագրմամբ։

Միխայիլ Աֆանասևիչ Բուլգակովը, ծնված 1891 թվականին, վախճանվեց Հայրենական մեծ պատերազմից քիչ առաջ. ծանր ու տանջալի հիվանդությունից՝ երիկամների սկլերոզից։ Հիսունն էլ չլրացրեց։ Վախճանվեց իր տաղանդի ծաղկման շրջանում, որի վկայությունը վերջին գիրքն է՝ «Վարպետը և Մարգարիտան»։ Արդեն մահացու հիվանդ և որպես բժիշկ հաստատ գիտենալով, որ իր օրերը հաշված են, վերջին ուղղումներն էր անում ձեռագրում, թելադրելով դրանք կնոջն ու ընկերոջը՝ Ելենա Սերգեևնա Բուլգակովային։

Բուլգակովի կենդանության օրոք լույս էին տեսել նրա «Սպիտակ գվարդիա» վեպի առաջին մասը, ֆանտաստիկ և սատիրական արձակի գիրքը, «Պատանի բժշկի նոթեր» պատմվածքների շարքը և լրագրային բազմաթիվ ֆելիետոնները, որոնք գլխավորապես տպագրվել էին մամուլում նէպի առաջին տարիներին։

Տարբեր ժամանակներում թատերական բեմերում բեմադրվել էին նրա դրամատիկ մի շարք երկերը, այդ թվում՝ Գոգոլի «Մեռած հոգիների» դասական բեմականացումը և «Սպիտակ գվարդիայի» մոտիվներով գրված «Տուրբինների օրերը» պիեսը, որոնք երկար ժամանակ ՄԽԱՏ-ի խաղացանկում էին։

Մնացածը՝ «Վերջին օրեր», «Իվան Վասիլևիչը», «Փախուստ» պիեսները, «Սպիտակ գվարդիա» վեպի երկրորդ մասը, «Պարոն դը Մոլիերի կյանքը», «Թատերական վեպ» և «Վարպետը և Մարգարիտան» վեպերը տպագրվեցին 50—60-ական թվականներին, և այդ հրապարակումներով Բուլգակովի տաղանդն ընթերցողների գիտակցության մեջ գրավեց իր արժանավոր տեղը, որ կարիք չի զգում ոչ թերադասման, ոչ գերադասման։

*1973 թ. «Խուդոժեստվեննայա լիտերատուրա» հրատարակչությունը (Մոսկվա) լույս ընծայեց Մ. Ա. Բուլգակովի «Սպիտակ գվարդիա», «Թատերական վեպ» և «Վարպետը և Մարգարիտան» վեպերի միհատորյակը Կ. Սիմոնովի նախաբանով, վերնագրված՝ «Միխայիլ Բուլգակովի երեք վեպերի մասին»։ «Սպիտակ գվարդիա» վեպին առնչվող հատվածի կրճատմամբ նյու[illegible] հարմար ենք գտնում զետեղել դա որպես վերջաբան։ (Ծան. հրատ.)։*

...«Թատերական վեպը» մի գիրք է, որն ավարտին չի հասցված՝ առանց որևիցե կասկածի:

Եվ բանը սոսկ այն չէ, որ «Հանգուցյալի նոթեր» ենթավերնագիրն ունի և ընդհատվում է նախադասության կեսից՝ նման ավարտը գրական հնարանք էլ կարող էր լինել, դրա օրինակները կան: Բանն այն է, որ կան մի շարք մարդկանց վկայություններ, որոնք հենց իր՝ Բուլգակովի ասածներից գիտեին թե՛ այն, որ նա պատրաստվում է շարունակել պատումը, թե՛ նույնիսկ՝ ինչ նոր տեսարաններ ու գլուխներ էին հղացված:

Սակայն, այդուհանդերձ, «Թատերական վեպից» ես, օրինակ, անավարտության դառը զգացողությունը չունեմ:

Իմ պատկերացմամբ, դա ընդհանրապես ավելի շատ վեպ չէ, այլ 20-ականների ավարտի և 30-ականների սկզբի մոսկովյան թատերական կյանքից առնված մերթ սատիրական, մերթ հումորիստական պատկերներ:

Եվ գրված են այնպիսի մի փայլով ու հումորով, որ, անշուշտ, ցավալի է միանգամից կանգ առնելը, հաջորդ պատկերի փոխարեն հանկարծ բազմակետը տեսնելով: Բայց ներքինակային հղացման անավարտության զգացողությունը չկա: Պարզապես այդ հղացումն իրականացված է պատումի ավելի քիչ տարածության վրա, սյուժետային զարգացումների ավելի պակաս քանակությամբ, քան, հավանորեն, ենթադրվել էր սկզբում:

«Թատերական վեպի» անավարտությունն, ինչպես ինձ է թվում, արտաքին բնույթի ինչ-ինչ պատճառներով չի բացատրվում, այլ իր ներքին պատճառն ունի. Բուլգակովը պահանջ էր զգում վերադառնալ իր այն գլխավոր աշխատանքին, որն ընդհատել էր և որն ավարտելու անհրաժեշտությունն էր զգում՝ «Վարպետը և Մարգարիտան» վեպին:

Եվ Բուլգակովը դա կարող էր անել, առանց իր վրա բռնանալու, քանի որ այն ամենն, ինչի համար գրվում էր «Թատերական վեպը», մինչ այդ գրված տեսարաններում, ըստ էության, արդեն արտացոլված էր:

Խոշոր տաղանդների և մեծ արվեստի վսեմ սկզբունքների բախումը ներթատերական այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են մարդկային և դերասանական սնափառությունը, ծիրադրումը ներհակությունների առջև, սերնդափոխության անխուսափելիության չըմբռնումը, աշառությամբ ու նախակրթանքով պայմանավորված պայքարը հանուն դերի, և շատ այլ բան, որոնք ցածրացնում, երկինքներից գետին են իջեցնում թատրոնի մեծ հրաշքը՝ այս ամենը Բուլգակովը կարողացել էր բավականաչափ լայնորեն պատկերել վեպի՝ արդեն գրված գլուխներում:

Ըստ որում, և սա հարկ է ընդգծել, որ նա ոչ միայն թատրոնն ընդհանրապես կրքոտ սիրով սիրող, այլ փաստորեն իրական Մոսկովյան Գեղարվեստական թատրոնը սիրող մեկն էր. մի թատրոն, որի հետ և որի ներսում աշխատում էր և որի հրաշալի դերասանների՝ իր ընկերների համար գլուխ գլխի ետևից բարձրաձայն կարդում էր «Թատերական վեպը»:

«Թատերական վեպի» սատիրական էջերը հուսախաբություն չեն թատրոնից, այլ ծաղրանք, երբեմն խիստ զայրացած ծաղրանք այն ամենի նկատմամբ, ինչ խանգարում է թատրոնին լինել այն հրաշքը, որպիսին հարկ է որ լինի վեպի հերոսի՝ դրամատուրգ Մաքսուդովի զգացումներով և միաժամանակ զգացված ա-

քեռում, իսկ ի դեմս հերոսի, տվյալ դեպքում լիակատար հիմքն ունենք տեսնելու հենց իրեն՝ Բուլգակովին:

«Վարպետը և Մարգարիտան» վեպը Բուլգակովի վերջին գիրքը դարձավ: Եվ գրված է այնպես, որ ասես հեղինակը, կանխազգալով, թե դա իր վերջին ստեղծագործությունն է, ցանկացել է դրա մեջ անմնացորդ ներդնել իր սատիրական աչքի ամբողջ սրությունը, երևակայության հախուռնությունը, հոգեբանական դիտողականության ուժը:

Ճարպկությունը, որով իրագործել է դա Բուլգակովը, կառուցելով իր վեպի արտառոց շինությունը, ընթերցելիս տեղ-տեղ նույնիսկ չափազանց է թվում, իսկ անցումները մեկից մյուսին՝ սատիրայից հոգեբանական արձակին, հոգեբանական արձակից ֆանտաստիկային, երբեմն այնչափ կտրուկ են, որ սկսում են թվալ որպես կարեր՝ պատումի հենքում: Այս գրքում մի տեսակ անզսպելիություն կա, խոշոր տաղանդի մինչմահու շլացուցչություն, որը հոգու խորքում զգում էր իրեն մնացած կյանքի ողջ կարճությունը:

«Վարպետը և Մարգարիտան» մեկն է այն անհանգիստ գրքերից, որոնց մեջ տարբեր մարդկանց տարբեր բաներ են դուր գալիս, և ավելացնեմ՝ տարբեր բաներ դուր չեն գալիս. ոմանք կարդալիս մեկն ընդունում են, մյուսը՝ վիճարկում, երրորդին չեն համաձայնում...

Վեպն ընթերցելուց հետո իմ երախտապարտ հիշողության մեջ, օրինակ, ամենից խոր մխրճվեց Հրեաստանի հռոմեական կուսակալ Պոնտացի Պիղատոսի մեկ օրվա մասին անողոք սառույց պատմությունը, որը մի վեպ է վեպի մեջ, հոգեբանական գործ երևակայականի մեջ:

Աշխարհի բոլոր գրականությունները քիչ էջեր չեն նվիրել մի փաստի, որն, ըստ երևույթին, այս կամ այն կերպ ընկել է այն ժամանակաշրջանի հերձվածողներից մեկի, հրեական կանոնական կրոնի դեմ խռովարարներից մեկի կյանքի ու վախճանի մասին քրիստոնեական առասպելների հիմքում: Քրիստոնեական առասպելների պատմական հավաստի հիմքն իր վրա է բևեռել շատ գրողների ուշադրությունը, որոնք իրենց աշխարհայացքով համոզված աթեիստներ են եղել: Նրանց թվում էր Անատոլի Ֆրանսը: Նրանց թվում էր նաև Բուլգակովը: Պատահականորեն չհիշատակեցի Ֆրանսին: Նրա փոքրիկ պատմվածքը Պոնտացի Պիղատոսի մասին, որը ի ծերության, գործերից ազատ, փորձում է հիշել այն աղքատ քարոզչի անունը, ում մահապատժի վավերացումը ստիպված եղավ տալ հեռավոր Հրեաստանում, ինչ-որ բանով մոտ է պատմական զգացողությանը, որով նույն այդ թեմային է մոտենում Միխայիլ Բուլգակովը:

Նրա վեպը վեպի մեջ՝ աղքատ քարոզիչ Յեշուայի պատմությունն է, ում Պիղատոսն ավելի շուտ հակված է փրկել, քան մահվան դատապարտել, սակայն հանգամանքների ճնշման տակ այնուամենայնիվ ուղարկում է խաչվելու: Մասշտաբների տեսակետից այդ դեպքն ընդամենը մի փոքրիկ դրվագ է Պիղատոսի պաշտոնավարման մեջ, և Բուլգակովը դա զգացնել է տալիս անխնա ռեալիզմով: Սակայն հռոմեական կուսակալի համար պատմականորեն աննշան այդ դրվագը նրա կյանքում դառնում է հոգեբանական մի ուղենիշ: Չնայած այն դաժան դարում իր դաժան պարտականություններին, արդարության զգացումով և բարին չարից զանազանելու ունակությամբ օժտված Պիղատոսը ներքուստ համակրում է աղքատ քարոզիչ Յեշուային՝ մարդկային բարի էության ուժի հանդեպ իր միամիտ, սակայն բարոյական աննողդողդ հավատով: Բայց մատնիչների կողմից

գրպարտված Յեշուային փրկելու՝ Պիղատոսի ցանկությունը բախվում է իրականացնելու անհնարինությանը, չնայած Հրեաստանում ունեցած նրա իշխանությունը թվում է թե վիթխարի չափերին:

Հրեաստանում գտնվելու ընթացքում ծառայողական աննշան դրվագն այդպես Պիղատոսի համար ճակատագրական մի պահ է դառնում, բացահայտելով նրա բարոյական թուլությունը:

Պիղատոսի և Յեշուայի մասին Բուլգակովի պատումի մեջ խոսվում է երկրային գործերի ու երկրային մարդկանց մասին: Բուլգակովը սկզբունքայնորեն հեռու է պատմական մակերեսային համաբանություններից: Նա միշտ խորշում էր գրական այդ էժանություններից: Սակայն մարդկանց վարմունքի նրա հոգեբանական վերլուծությունն այնպիսին է, որ «Վարպետը և Մարգարիտան» վեպի այդ գլուխներում ոչ միայն պատմական շարադրանքն է մեր առջև, այլ նաև բարոյական մի դիլեմմա, որ ընթերցողին ստիպում է մտածել, թե ինչ բան է արիությունն ու վախկոտությունը և թե որտեղ և ինչպես է մեր կյանքում որոշվում մեկի կամ մյուսի չափը:

Ես մանրամասն կանգ առա վեպի այն էջերի վրա, որոնք ինձ համար բուլգակովյան արձակի գագաթն են: Բայց նրա գիրքը շատ է ու բազմաղեմ, և ես առանց դժվարության պատկերացնում եմ այլ ընթերցողների, որոնց համար վեպի լավագույն էջերը կդառնան ոչ թե Պիղատոսի և Յեշուայի պատմությունը, այլ Վարպետի հանդեպ Մարգարիտայի սիրո ֆանտաստիկ, միաժամանակ դառը- երկրային պատմությունը՝ այնքան երջանիկ ու այնքան տարաբախտ, թե երջանկությամբ, թե դժբախտությամբ այնքան ուժեղ, որ վեպի էջերով սուրացող սատանան ինքն ի զորու չէ ոչ օգնել, ոչ խանգարել այդ սիրուն:

Առանց դժվարության պատկերացնում եմ նաև այնպիսի ընթերցողների, որոնց համար վեպի բարձրակետը կդառնա ոչ թե ֆանտաստիկան, այլ հումորիստական ու սատիրական այն էջերը, ուր Բուլգակովը ծաղրում է քաղքենիությունը, գռեհկությունը, հարմարվողականությունը, ընչաքաղցությունը:

Ի դեպ, «Վարպետը և Մարգարիտան» ընթերցելիս ավագ սերնդի մարդկանց աչքին իսկույն զարնում է, որ Բուլգակովի սատիրական դիտարկումների գլխավոր ասպարեզը 20-ական թվականների ավարտի մոսկովյան քաղքենիական, այդ թվում մերձգրական ու մերձթատերական միջավայրն է, ինչպես այն ժամանակ էին ասում՝ «նէպի զկտոցներով» հանդերձ:

Հարկ է ավելացնել, որ այն ժամանակների մեկ այլ Մոսկվա, դիտարկումների մեկ այլ, առավել լայն ասպարեզ համարյա չի զգացվում վեպում: Եվ դա մեկն է օրինակներից, որոնք խոսում են արդիականության վրա գրողի ունեցած հայացքի սահմանափակության մասին: Մենք երբեմն տատանվում ենք «հայացքի սահմանափակություն» բառերն արտասանել, խոսելով խոշոր տաղանդի մասին. Եվ՝ իզուր: Քանի որ այդ բառերը, տաղանդը չնսեմացնելով, իրականությունն են արտացոլում, օգնում են հասկանալ գրականության պատմության մեջ գրողի իսկական տեղը:

Բուլգակովն իր վեպը հասցրեց ավարտին, վերջակետը դրեց, և այդ առումով «Վարպետը և Մարգարիտան» ավարտուն ստեղծագործություն է: Սակայն, ինչպես արդեն ասացի, հղացված պատումը հասցնելով ավարտին, Բուլգակովը մինչև իր կյանքի վերջին օրերը անդրադառնում ու անդրադառնում էր գրվածին, հավանորեն, ներքուստ դեռևս իր աշխատանքը ավարտված չհամարելով:

Դժվար է ասել, թե ինչ տեսք կունենար այս վեպը, եթե տասներկու տարի տևեն ձգված աշխատանքը սրբագրության վրա շարունակվեր ու շարունակվեր: Գուցե վեպի մեջ շտկվեին որոշ անհամաչափություններ, գուցե մինչև վերջ չմտածված ինչ-ինչ բաներ ամբողջականության կամ ջնջվեին որոշ բաներ, ուրիշ իրենց վրա ինքնահայտնության անհամաչափ, ավելորդ շռայլության կնիքն են կրում: Գուցեև այդպես է: Պետք է ասել, որ մեզ էր թողել հանգուցյալ գրողը, որո-շակի հիմքեր տալիս է այդպիսի ենթադրությունների համար: Ես սակայն չար-ժե այդ ենթադրություններին շատ էլ ավելի տեղ տալ, հաշվի առ այդունան-դեռ, գլխավոր զգացումը, որ ունենում ես Բուլգակովի այս վերջին աշխատանքն ընթերցելիս, երախտագիտությունն է նրա տաղանդի ուժի ու շռայլության հան-դեպ:

«Մոսկվա» ամսագրի էջերում «Վարպետը և Մարգարիտան» վեպը տպագր-վելուց հետո ստեղծագործության, իսկ դրա կապակցությամբ նաև Բուլգակովի ստեղծագործության մասին մեր մամուլում բազմաթիվ հոդվածներ տպագրվե-ցին:

Արտահայտված տեսակետների ու գնահատումների ամբողջ բազմազանու-թյամբ հանդերձ, նշում եմ, չհանդիպեցի մի հոդվածի, ուր բացասաբար գնա-հատվեր այդ գիրքը ժամանակակից ընթերցողի առօրյայի մեջ մտցնելու փաստը:

Որոշ հոդվածներում քննվում ու քննադատվում էին հեղինակի փիլիսոփայա-կան հայացքները, երբեմն ավելորդ բորբոքվածությամբ, բայց ավելի հաճախ՝ պատմական պատշաճ օբյեկտիվությամբ, ելնելով ճշմարիտ այն տեսակետից, որ ինչպես չի կարելի ծմահանորեն լավացնել կամ վատացնել պատմությունը, չարժե նաև եռինե թվով, անգամ ամենաբարի նպատակներով, ուղղել աշխար-հայացքը բարդ և հակասական մի գրողի, որը երեսուն տարի առաջ թողել է այս աշխարհը, շարունակելով ու չտեսնելով այն ամենը, ինչով այն ժամանակներից հետո ավարտվել է մեզ մեր սեփական կենսափորձը:

Ուրիշ հոդվածներում դրսևորվում էր անպատեհ մի ցանկություն՝ Բուլգա-կովին մեր գրականության ընդհանուր պատմական պրոցեսներից դուրս, անգամ վեր դնել:

Բուլգակովի հանդեպ իմ սերն ինձ ստիպում է բավականաչափ պարզությամբ ասել, որ նմանօրինակ համակրանքը չունեն կարծեցյալ այն բարյացակամների նկատմամբ, որոնք ձգտում են նրա մեծարմանը մերը անչափավոր մակդիրների դիմելով, մեկ Բուլգակովին հակադրելով իր մյուս ժամանակակիցներին, որոնք իրենց գրքերով օրինաչափորեն մեր գրականության փառքն են կազմել:

Բուլգակովի գրած լավագույն ամեն ինչը նույնպես մասնիկն է այն խոշոր ամբողջի, որը, ի մի եկած, կոչվում է սովետական գրականություն:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԻՄՈՆՈՎ

1973 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Վարպետը և Մարգարիտան . . 3
Թատերական վեպ . . 445
Վերջաբան (Կ. Սիմոնով) . . 611


---


Միխաիլ Բուլգակով

ՎԱՐՊԵՏԸ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՎԵՊ

Михаил Булгаков
МАСТЕР И МАРГАРИТА.
ТЕАТРАЛЬНЫЙ РОМАН
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

*Խմբագիր՝* Գ. Գ. Խաչատրյան
*Նկարիչ՝* Ա. Ի. Յարալյան
*Գեղ. խմբագիր՝* Վ. Ա. Հարությունյան
*Տեխ. խմբագիր՝* Վ. Գ. Ավագյան
*Վերստուգող սրբագրիչ՝* Մ. Գ. Ստեփանյան

ИБ № 4878.

*Հանձնված է շարվածքի 5. 09. 84։ Ստորագրված է տպագրության 07. 01. 85։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ Գրքի սովորական։ Տպագրություն՝ բարձր։ 32,34 պայմ. տպ. մամ., 30,9 հրատ. մամ. Տպաքանակ 30000։ Պատվեր 2461։ Գինը՝ 2 ռ. 20 կոպ.։*

*«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։*
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

*ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան Ալավերդյան փող № 65։*

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** [Գրքամոլ Նախաձեռնության](http://www.grqamol.am) կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «[Գրքամոլ](http://www.grqamol.am)»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ,* բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com) հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**
URL: [www.grqamol.am](http://www.grqamol.am), e-mail: [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com)

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.